

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԲՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
ԳԻՐԸ 2**

**ԵՐԵՎԱՆ
«ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2011**

ՀՏԴ- 316(479.25):330(479.25):06
ԳՄԴ- 60.55(2Հ)+65(2Հ)
Ս 783

Երաշխավորված է հրատարակության
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
տնտեսագիտության թեկնածու
տնտեսագիտության թեկնածու

**Յուրի Սուվարյան
Վարդան Բոստանջյան
Բենիամին Եղիազարյան
Ռոբերտ Սարինյան
Վիլեն Խաչատրյան
Ալվարդ Չատիկյան
Հայկ Մարկոսյան**

**Ժողովածուի պատասխանատու խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր**

ՎԱԼԴԻՍԻՐ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ս 783

Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները
Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի
նյութեր). գիրք 2 / Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան.- Եր.:
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011.- 392 էջ:

Գիտաժողովը նվիրվել է Արցախի և ՀՀ անկախության 20-ամյակին
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում
անցկացված «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները
Հայաստանի Հանրապետությունում» թեմայով հանրապետական գիտաժողովի
մասնակիցների զեկուցումներն ու հոդվածները:

ՀՏԴ- 316(479.25):330(479.25):06
ԳՄԴ- 60.55(2Հ)+65(2Հ)

ISBN 978-5-8080-0912-7

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2011

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Յ. ՍՈՒՎԱՐՅԱՆ, Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ	Գիտության ֆինանսավորում. միջազգային փորձը և բարեփոխման գերակայությունները	7
Ա. ԱԲԴՈԼԼԱԿԻ	Նավթային եկամուտների երկակի ազդեցությունը Իրանում և Նորվեգիայում	17
Վ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ	Ապահովագրական շուկայի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում	24
Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	ՀՀ ներդրումային քաղաքականության վերլուծություն 1998-2010թթ. համար	30
Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	Ներդրումային միջավայրի էությունը և տնտեսական բովանդակությունը	35
Ք. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	ՀՀ բիզնես միջավայրից սովերային եկամուտների բացահայտման և գնահատման հիմնական մոտեցումները արտահանվող արտադրության դիվերսիֆիկացման համատեքստում	37
Ք. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	Վերազգային հանցավոր կազմակերպությունները տնտեսական հարաբերությունների համակարգում	42
Վ. ԲՈՍՏԱՆՁՅԱՆ, Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ	Բյուջետային գործընթացի կատարելագործման և ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները	45
Թ. ԳԵՎՈՐԳՅԱՆ	Փողերի լվացումը՝ որպես հարկերից խուսափելու հետևանք	48
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ	Հարկման սկզբունքների և գործառույթների շուրջ	51
Մ. ԴՈՒԴԱՆԳԻ	Ներդրումների ներգրավման հեռանկարները ԻԻՀ Գոլեստան տարածաշրջանում	57
Ա. ԹԱՍԱԶՅԱՆ	Հանրային ծառայություններ մատուցող սուբյեկտների շահութաբերության կարգավորման հիմնական սկզբունքները և մոտեցումները	64
Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Կառավարչական հաշվառման և ներքին վերահսկողության փոխազդեցության, առկա և հնարավոր խնդիրների և դրանց լուծման տարբերակների առաջադրման հարցերի շուրջ	70
Շ. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Կայուն ֆինանսական համակարգը՝ որպես բարձր ֆինանսական միջնորդության երաշխիք	74
Վ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ	Փողը և միջին ձեռնարկատիրության հարկման մոտեցումները	79
Վ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ	Հարկային բեռի հաշվարկման մեթոդաբանական մոտեցումները	84
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ՀՀ սովերային տնտեսության տեսամեթոդաբանական գնահատման հիմքերը արտերկրյա փորձի համատեքստում	89
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Օֆշորները՝ որպես միջազգային հարկային պլանավորման արդյունավետ գործիք	94
Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Արտաքին պետական պարտքի կազմի ու կառուցվածքի դինամիկան. 2001-2010թթ. տվյալների ամփոփում	96
Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Արտաքին պետական պարտքի կառավարման գրավականը հանքարդյունաբերությունն է	100

Ա. ԴԱՄԲԱՐՅԱՆ	Ֆինանսական հաստատություններում ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառումը՝ որպես ՓԼԱՖ կանխարգելման կարևոր հիմնասյուն	105
Հ. ՍԱԿԱՐՅԱՆ	Հարկային եկամուտների միտումների վերլուծությունը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում	109
Թ. ՍԱՆԱՍԵՐՅԱՆ	Միջազգային ֆինանսական ճգնաժամի երկրորդ ալիքը և նրա ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա	114
Թ. ՍԱՆԱՍԵՐՅԱՆ	Տնտեսական մրցակցության պաշտպանություն ^օ , թե ^օ հակամենաշնորհային քաղաքականություն	120
Լ. ՍԱՆՈՒՉԱՐՅԱՆ	Մեծ Բրիտանիայի հարկային համակարգը	126
Ա. ՍԱՅԱԴՅԱՆ	Զարգացող երկրների փորձը հիփոթեքային վարկավորման ոլորտում	131
Է. ՍԱՆԱՍՅԱՆ	Հայաստանի տնտեսությունը. ճգնաժամի մարտահրավերներ և հակաճգնաժամային քաղաքականության հեռանկարներ	138
Ն. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ	Բանկի իրացվելիության նորմատիվները և դրանց դերը բանկի ֆինանսական կայունության ապահովման գործընթացում	144
Գ. ՏԵՐ-ԵՍԱՅԱՆ	Հարկային քաղաքականության կատարելագործման և հարկային վարչարարության բարելավման հիմնական մոտեցումները	149
Գ. ՏԵՐ-ԵՍԱՅԱՆ	Հարկային բեռի տնտեսագիտական բովանդակությունը	153
И. АКОПЯН	Взаимосвязь амортизационной и налоговой политики в постсоциалистических странах	158

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հ. ԱՎԱԳՅԱՆ	Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը	163
Հ. ԱՎԱԳՅԱՆ	Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղղություններն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում	176
Ի. ԱԼԵԶՍԱՆՅԱՆ	Կաթի իրացման բնագավառում ստեղծված վիճակն ու գնագոյացման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում	186
Վ. ԱԼԵԶՍԱՆՅԱՆ	Գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները (Արագածոտնի մարզի օրինակով)	193
Է. ԲԱԲԱՅԱՆ	ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում բնօգտագործման և բնապահպանության տնտեսագիտական հիմնահարցերի շուրջ	197
Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ	ԱՄՆ-ի տնտեսական ճգնաժամը	202
Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ	ՀՀ տնտեսական ճգնաժամը. ՀՀ տնտեսական զարգացման հիմնախնդիրները ճգնաժամի պայմաններում	205
Ա. ԴԱՎԹՅԱՆ	Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության միջազգային փորձը	208
Ա. ԴԱՎԹՅԱՆ	Փոքր, միջին և խոշոր ձեռնարկությունների համագործակցության շրջանակները և համեմատական բնութագիրը	211
Ս. ԴԱԶԱՐՅԱՆ, Է. ԴԱԶԱՐՅԱՆ, Լ. ԱԶԱՏՅԱՆ	ՀՀ գյուղատնտեսության հեռանկարային զարգացման միջոցառումները	217
Է. ԴԱԶԱՐՅԱՆ, Հ. ԾՊՆԵՑՅԱՆ	Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական մեծածախ շուկայի ձևավորման հիմնախնդիրները	223

Է. ՂԱԶԱՐՅԱՆ, Հ. ԾՊՆԵՑՅԱՆ	Հայաստանի Հանրապետությունում կարտոֆիլի ապրանքայնության մակարդակի և կարտոֆիլաբուծության արդյունավետության բարձրացման խնդիրները 229
Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Գործադիր իշխանության ձևավորման ու գործունեության արտասահմանյան փորձը 233
Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	ՀՀ գործադիր իշխանության կառավարման մարմինների կազմակերպական կառուցվածքային մոդելը 238
Ե. ՀԱԿՈԲՅԱՆ	ՀՀ ՋՕԸ-ներում ոռոգման ջրի սակագների փոփոխության և կորուստների դինամիկայի ուսումնասիրությունը 241
Ն. ՀՈՎԱԿԱՆՅԱՆ	ՓՄՁ-ների արտահանման ներուժի գնահատման մեթոդաբանություն 245
Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Ձեռնարկատիրական միջավայրի գնահատականը ՀՀ-ում 251
Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում. մարտահրավերներ և հեռանկարներ 255
Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ՀՀ գյուղատնտեսության զարգացման ուղղությունները, ագրո-վերամշակման կազմակերպությունների և գյուղտնտեսավարողների հարաբերությունների խորացումն ու զարգացումը 258
Թ. ՍԱՆՈՒԿՅԱՆ	ՀՀ բիզնես միջավայրի վրա ազդող հիմնական գործոնների բնութագիրը . 262
Թ. ՍԱՆՈՒԿՅԱՆ	ՀՀ հարկային բեռի արդարացի բաշխման մոտեցումները 266
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Միջազգային փորձը և ինովացիոն ոլորտի կարգավորման օրենսդրական խնդիրները ՀՀ-ում 270
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Հետազոտական և ինովացիոն գործունեության գնահատման քանակական մեթոդները և ցուցանիշները 277
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Ա. ՀՈՎԱԿԻՍՅԱՆ	ՀՀ ինովացիոն-տեխնոլոգիական փոխանցման ներուժի վերլուծություն և գնահատում 280
Լ. ՍԱՐԳՍՅԱՆ	Արտահանման և տնտեսական աճի փոխկապվածությունը Հայաստանում 288
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ	Արտահանման քաղաքականության փոփոխությունը 294
Ա. ДАНИЕЛЯН	Влияние финансово-экономического кризиса на малое и среднее предпринимательство в РА 297
Ա. ЗАТИКЯН, Ա. ДАНИЕЛЯН	Малое и среднее предпринимательство как объект управления в условиях финансово-экономического кризиса в РА 300
Թ. ՕԳԱՆՅԱՆ	Создание и становление свободной экономической зоны в Армении 304
Թ. ՕԳԱՆՅԱՆ	Роль государства в распределении инвестиций и стимулировании инноваций РА 307
Ի. ԹԱՐԱՆՅԱՆ, Դ. ՇԱՄՇՅԱՆ	Источники финансирования транспортных проектов Армении в условиях кризиса 310

ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հ. ԹԵՐԶՅԱՆ	ՀՀ էներգետիկ անվտանգությունը հետճգնաժամային սոցիալ-տնտեսական զարգացումների համատեքստում 319
Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի հարկման հիմնախնդիրները տարբեր բիզնես մոդելներում 322
Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Էլեկտրոնային առևտրի հարկման ամերիկյան փորձը 325

Թ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Էլեկտրոնային առևտրի հիմնախնդիրները	330
Ա. ՄԱԿԱՐՅԱՆ	Ճգնաժամի սոցիալական ազդեցության գնահատման մոտեցումները ՀՀ-ում	333
Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆ	Կառավարչական որոշումների աջակցման տեղեկատվական ապահովումը	336
Հ. ՄԱՐԿՈՍՅԱՆ	Էլեկտրոնային ձեռնարկատիրության պետական կարգավորման հիմնախնդիրները ժամանակակից տնտեսական պայմաններում	339
Ա. ՄԻՍԱԿՅԱՆ	Եկամուտ հասկացության և դրա բաշխման հարցի շուրջ	343
Ա. ՄԻՍԱԿՅԱՆ	Բնակչության եկամուտների անհավասարության գնահատման եղանակները և դրանց առանձնահատկությունները ՀՀ-ում	346
Տ. ՄԿՐՏՉՅԱՆ	ՀՀ տնային տնտեսությունների ավանդների կառուցվածքը, դրա փոփոխման միտումներն ու վերջինիս վրա ազդող գործոնները	351
Տ. ՄԿՐՏՉՅԱՆ	Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտների, վերջնական սպառման ծախսերի և խնայողությունների փոխառնչությունը	356
Շ. ՊՈՂՈՍՅԱՆ	Ուղղակի մարքեթինգի վիճակը Հայաստանի Հանրապետությունում	362

ՏԵՍԱԿԱՆ ԴԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ն. ԱԳՈՆՅ	Հասարակության զարգացման ժամանակակից կոնցեպցիաները	369
Բ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ	Բազմակողմ գիտակցված գործունեության հասարակություն. գաղափարը և ձևավորման հիմնախնդիրները	373
Բ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Անդրադարձ Հայաստանում տնտեսական զարգացման խնդիրներին ու պայմաններին	377
Հ. ՄԱՐԿՈՍՅԱՆ	Էլեկտրոնային ձեռնարկատիրություն. պատմական ակնարկ	379
Б. ЕГИАЗАРЯН, Б. ГАБРИЕЛЯН	Самооценка личности и его влияние на виды мотивации	385

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՆԿԱՎԱ ակադեմիկոս

ՎԼԱԴԻՍԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՆԿԱՎԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
ՆԿԱՎԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆեսոր*

ՎԻԼԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ՆԿԱՎԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, տ. գ. թ., դոցենտ*

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

տ. գ. դ.

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտության ֆինանսավորման հիմնախնդիրները շատ մեծ կարևորություն ունեն գիտական հետազոտությունների և տնտեսության զարգացման գործում, ահա թե ինչու դրանք բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում են: Դեռևս 1997թ. Էտզկովիցի (Etzkowitz¹) կողմից առաջարկվեց Եռակի պարույրի մոդելը (Triple Helix model), որի հիմնական գաղափարախոսությունը կառուցվում էր ակադեմիա-պետություն-գործարար հատվածների եռակողմ և բազմաֆունկցիոնալ փոխհամագործակցության վրա: Հետագայում այս մոդելը զարգացվեց Լեյդեսդորֆի կողմից (Jones-Evans, 1997, Leydesdorff, 1996, 1997²), որտեղ գծային զարգացման փոխարեն առաջարկվեց պարույրի տեսք ունեցող զարգացման գաղափարը: Այս նորամուծական մոդելի միջոցով ապահովվում էր երեք ինստիտուցիոնալ միավորների՝ մասնավոր, պետական հատվածների և ակադեմիական համակարգի համագործակցությունը գիտելիքի կապիտալացման տարբեր փուլերում:

Այս խնդրի լուծման համար բավական հետաքրքիր մոտեցում է առաջարկվում Գեբհարթի կողմից (Gebhart, 1996³), ըստ որի խնդիրը հնարավոր է կարգավորել ակադեմիական հետազոտողներին ձեռնարկատիրական ունակություններով օժտելու ճանապարհով, որի արդյունքում հետազոտողը միաժամանակ ձեռք է բերում կառավարչի հմտություններ և ապահովում է իր կատարած աշխատանքների տեխնոլոգիական և առևտրայնացման փուլերը: Մեկ այլ տարբերակ է առաջարկվում նաև Կոմպոդալլ՝Օրտոյի կողմից (Campodall'Orto 1996)⁴, որն առաջ է քաշում տեխնոլոգիական տրանսֆեր կամ տեղափոխում ապահովող գործակալությունների գաղափարը (technology transfer agency): Այս գործակալությունները կդառնան այն միջնորդ օղակը, ովքեր տեխնոլոգիան կվերածեն առևտրայնացված արտա-

¹ Etzkowitz, H., Academic-Industry Relations: A Sociological Paradigm for Economic Development, in Leydesdorff, H., Van den Besselaar, P., (Eds.), Evolutionary Economics and Chaos Theory: New directions in technology studies.

² Leydesdorff, H., Etzkowitz, H., *Emergence of a Triple Helix of University-Industry-Government Relations*, Science and Public Policy, 1996. Leydesdorff, H., Etzkowitz H., (Eds.), *A triple Helix of University-Industry-Government relations*. The future location of Research, Book of Abstracts, Science Policy Institute, State University of New York, 1997. Jones-Evans, D., Entrepreneurial Universities - Cases of Good Practices from the Republic of Ireland, International Conference: Technology Policy and Less Developed Research and Development Systems in Europe, UNU-INTECH, International Conference, Seville, 18-20 October 1997.

³ Gebhardt, C., Etzkowitz, H., *Regional innovation Organiser: a quasi-public role for transnational corporations and universities*, in Management and New Technology, COST A3, Madrid, 1996.

⁴ Campodall'Orto, S., Ghiglione, B., *The Technology Transfer Process within the New Innovation Models*, in *Managing Technological Knowledge Transfer*, EC-Social Sciences COST A3, vol. 4, EC Directorate General, Science, research and Development, Bruxelles, 1997.

դրանքի և կաջակցեն այն գիտնականներին, ովքեր չեն կարող ապահովել իրենց գիտական արդյունքների կիրառական կողմը կամ դրանց վերջնական արտադրանքի վերածելու գործընթացը:

Այս հիմնախնդիրը խիստ արդիական է նաև Հայաստանում՝ գիտության ֆինանսավորման բարեփոխումներ իրականացնելու և գիտությունից մինչև տնտեսության զարգացում ընկած շղթայում առկա խնդիրները լուծելու համար:

Համառոտ անդրադարձ կատարենք Հայաստանի գիտության ֆինանսավորման ներկա իրավիճակին և հիմնախնդիրներին, քանի որ առանց իրական պատկերն ունենալու բավականին դժվար է ներկայացնել խնդրի լուծման այլընտրանքային մոտեցումներ՝ հիմք ընդունելով համաշխարհային պրակտիկայում գոյություն ունեցող արդյունավետ լուծումների ստեղծագործական տեղայնացման կամ ընդօրինակման անհրաժեշտությունը:

Հայտնի է, որ ներկայումս մեր երկրում գիտության պետական ֆինանսավորումն իրականացվում է երեք եղանակներով՝ բազային, ծրագրանպատակային և թեմատիկ-մրցութային (դրամաշնորհային):

Ուսումնասիրելով Հայաստանում գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների քանակը և դրանց հատկացվող ֆինանսական միջոցները կամ գիտատեխնիկական աշխատանքների ծավալը՝ նկատում ենք, որ ըստ գերատեսչությունների մեկ աշխատողի հաշվով գիտատեխնիկական աշխատանքների ծավալը խիստ տարբերվում է (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների քանակը, աշխատանքների ծավալը և աշխատողների թվաքանակը՝ ըստ նախարարությունների և գերատեսչությունների, 2010թ.¹

	Կազմակերպությունների քանակը, միավոր	Գիտատեխնիկական աշխատանքների ծավալը, մլն դրամ	Աշխատողների թվաքանակը, մարդ	Աշխատանքի արտադրողականությունը
(1)	(2)	(3)	(4)	(3)/(4)
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	13	2302.5	1119	2.1
ՀՀ առողջապահության նախարարություն	10	141.7	208	0.7
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	4	699.6	244	2.9
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	8	212.4	337	0.6
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	8	957.7	1646	0.6
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2	83.7	69	1.2
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	31	4103.3	2810	1.5
Այլ	5	210.8	125	1.7
Ընդամենը	81	8711.7	6558	1.3

Գիտատեխնիկական աշխատանքների ընդհանուր ծավալը և դրանց բաշխվածությունը, ըստ առանձին ուղղությունների, ներկայացված են աղյուսակ 2-ում և գծապատկեր 1-ում:

Առանձին ուղղություններով կատարված ծախսերի վերլուծությունը ցույց է տալիս, որ գիտատեխնիկական աշխատանքների ամենամեծ մասը բաժին է ընկնում գիտահետազոտական աշխատանքներին (70-79%), որոնց հաջորդում են նախագծակոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքները (ավելի քան 10%), մյուս ուղղությունները միասին վերցրած չեն գերազանցում 10%-ի սահմանագիծը:

¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար-հուլիսին, էջ 184:

Գիտատեխնիկական աշխատանքների ծավալի բաշխվածությունը ըստ ուղղությունների, 2004-2010թթ.¹

ա) ընդամենը

(մլն դրամ և %)

	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Գիտահետազոտական	3472.1	4161.6	4372.9	4847.0	5480.6	6361.4	6903.2
Նախագծակոնստրուկտորական և տեխնոլոգիական	802.2	562.6	864.1	942.6	1304.5	1940.2	1052.6
Փորձնական նմուշների (արտադրանքի) խմբերի պատրաստում	177.9	257.9	237.0	294.5	308.6	293.7	232.1
Շինարարության համար նախագծային աշխատանքներ	68.0	323.2	261.5	294.6	92.4	24.3	21.5
Գիտատեխնիկական ծառայություններ	397.4	553.1	771.1	594.9	669.4	802.5	502.3
Ընդամենը	4917.6	5858.4	6506.6	6973.6	7855.5	9422.1	8711.7
Ընդամենը (%)	100%	100%	100%	100%	100%	100%	100%
Գիտահետազոտական	70.6%	71.0%	67.2%	69.5%	69.8%	67.5%	79.2%
Նախագծակոնստրուկտորական և տեխնոլոգիական	16.3%	9.6%	13.3%	13.5%	16.6%	20.6%	12.1%
Փորձնական նմուշների (արտադրանքի) խմբերի պատրաստում	3.6%	4.4%	3.6%	4.2%	3.9%	3.1%	2.7%
Շինարարության համար նախագծային աշխատանքներ	1.4%	5.5%	4.0%	4.2%	1.2%	0.3%	0.2%
Գիտատեխնիկական ծառայություններ	8.1%	9.4%	11.9%	8.5%	8.5%	8.5%	5.8%

բ) մեկ կազմակերպության հաշվով


(մլն դրամ)

	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Գիտահետազոտական	37.3	40.8	43.3	54.5	66.0	76.6	85.2
Նախագծակոնստրուկտորական և տեխնոլոգիական	8.6	5.5	8.6	10.6	15.7	23.4	13.0
Փորձնական նմուշների (արտադրանքի) խմբերի պատրաստում	1.9	2.5	2.3	3.3	3.7	3.5	2.9
Շինարարության համար նախագծային աշխատանքներ	0.7	3.2	2.6	3.3	1.1	0.3	0.3
Գիտատեխնիկական ծառայություններ	4.3	5.4	7.6	6.7	8.1	9.7	6.2
Ընդամենը	52.9	57.4	64.4	78.4	94.6	113.5	107.6

Գծապատկեր 1

Գիտատեխնիկական աշխատանքների ծավալի բաշխվածությունը ըստ ուղղությունների, 2004-2010թթ.

(մլն դրամ)



¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար-հունիսին, էջ 185 և ՀՀ սոցիալական վիճակը 2009թ., էջ 186:

Ուսումնասիրելով գիտատեխնիկական աշխատանքներն ըստ տեսակների՝ նկատում ենք, որ ամենամեծ մասնաբաժինն ունեն կիրառական հետազոտությունները, որոնք 2004թ. համեմատությամբ 2010թ. գրեթե կրկնապատկվել են, որը լուրջ առաջընթաց է այն պարզ պատճառով, որ այս աշխատանքները հետագայում պետք է առևտրայնացվեն և կիրառվեն տնտեսության մեջ: Այնուհետև, ամենամեծ մասնաբաժինն ունեն գիտատեխնիկական մշակումները, որոնք միայն 2010թ. են ավելի քիչ եղել, քան հիմնարար աշխատանքները:

Սա նշանակում է, որ հիմնարար գիտության դիրքերը 2009 և 2010թթ. ամրապնդվել են և 2004-2007թթ. ընկած տարեկան ֆինանսավորման համեմատ կրկնակի ավելացել: Սակայն, ըստ վիճակագրական տեղեկությունների, գիտահետազոտական կազմակերպությունները կարևորում են կիրառական հետազոտությունները: Դրա արդյունքում հնարավոր է ապահովել առավել մեծ առաջընթաց, և միջոցների այսպիսի բաշխվածությունը խոսում է այն մասին, որ 2004-2010թթ. ընթացքում գերակա են համարվել կիրառական բնույթի հետազոտությունները:


Աղյուսակ 3

Գիտատեխնիկական աշխատանքների ծավալի բաշխվածությունն ըստ աշխատանքների տեսակների, 2004-2010թթ.¹

	(մլն դրամ և %)						
	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Հիմնարար	1041.5	1034.1	921.3	1073.7	962.1	1987.5	2150.9
Կիրառական հետազոտություններ	2430.6	3127.5	3451.6	3256.3	4518.5	4373.9	4752.4
Գիտատեխնիկական մշակումներ	1048.1	1143.7	1362.6	1481.1	1705.5	2258.2	1306.1
Գիտատեխնիկական ծառայություններ	397.4	553.1	771.1	1162.5	669.4	802.5	502.3
Ընդամենը	4917.6	5858.4	6506.6	6973.6	7855.5	9422.1	8711.7
Ընդամենը (%)	100%	100%	100%	100%	100%	100%	100%
Հիմնարար	21.2%	17.7%	14.2%	15.4%	12.2%	21.1%	24.7%
Կիրառական հետազոտություններ	49.4%	53.4%	53.0%	46.7%	57.5%	46.4%	54.6%
Գիտատեխնիկական մշակումներ	21.3%	19.5%	20.9%	21.2%	21.7%	24.0%	15.0%
Գիտատեխնիկական ծառայություններ	8.1%	9.4%	11.9%	16.7%	8.5%	8.5%	5.8%

Գծապատկեր 2

Գիտատեխնիկական աշխատանքների ծավալի բաշխվածությունն ըստ աշխատանքների տեսակների, 2004-2010թթ.



¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար-հունիսին, էջ 184 և ՀՀ սոցիալական վիճակը 2009թ., էջ 187:

Թեև ֆինանսական միջոցների կեսից ավելին ուղղվում է կիրառական նշանակության հետազոտություններին, սակայն առաջանում են հարցեր, թե որքանով են այդ կիրառական հետազոտությունների արդյունքներն առևտրայնացվում և որ շուկաներում են օգտագործվելու՝ ներքին, թե՞ միջազգային: Այս հարցերի պատասխանը կարելի է ստանալ գյուտերի և արդյունաբերական նմուշների արտոնագրման վերաբերյալ տեղեկատվությունից (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Արտոնագրային գործունեության ցուցանիշները, 2004-2009թթ.¹

		(միավոր)					
		2004	2005	2006	2007	2008	2009
Ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը		144	231	214	147	239	168
Ներկայացված արդյունաբերական նմուշների հայտերի քանակը		41	20	28	18	24	35
Ներկայացված ապրանքային նշանների հայտերի քանակը		1855	1449	1439	1477	1443	1707
Ներկայացված ֆիրմային անվանումների հայտերի քանակը		3370	3058	3694	4655	4111	3954
Տրվել է	գյուտի արտոնագիր	159	126	213	165	127	156
	օգտակար մոդելի արտոնագիր	11	20	27	11	11	30
	արդյունաբերական նմուշի արտոնագիր	23	44	17	25	13	23
	ապրանքային նշանի վկայագիր	1095	1271	1098	1167	1189	1297

Պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ նշվում է, որ տրվել են գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշի արտոնագրեր և այլն, սակայն թե այդ արտոնագրերի որ մասն է հետագայում առևտրայնացվել, այսինքն՝ օգտագործվել արտադրական գործընթացներում կամ վաճառվել, հայտնի չէ, նման վիճակագրությունը, ցավոք, բացակայում է:

Աղյուսակ 5

Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի բաշխվածությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2004-2009թթ.²

	Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսեր	այդ թվում՝				
		Բյուջետային միջոցներ (պետական և համայնքային)	սեփական միջոցներ	պատվիրատուի միջոցներ	օտարերկրյա միջոցներ	այլ միջոցներ
2004	100	51.8	2.7	35.5	9.2	0.7
2005	100	53.9	2.2	37.2	5.7	1.1
2006	100	53.8	3.0	29.8	11.4	2.0
2007	100	55.6	1.4	29.6	12.5	1.0
2008	100	60.3	0.8	32.6	1.9	4.5
2009	100	59.9	1.3	29.3	4.2	5.2

Վերլուծելով հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի բաշխվածությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ նկատելի է, որ ամենամեծ մասնակցությունը հետազոտությունների և մշակումների վրա կատարվում է բյուջետային միջոցներից, որոնք կազմում են ընդհանուր ֆինանսավորման 50-60%-ը, այսինքն՝ պետությունը մնում է գիտության առաջընթացն ապահովող լուրջ գործընկեր: Բավական մեծ մասնաբաժին ունեն նաև պատվիրատուների միջոցները, որոնք կազմում են ծախսվող միջոցների հաջորդ խոշոր խումբը և 2004-2009թթ. ընթացքում տատանվել են 1436.9-2486.9 մլն դրամի շրջանակներում: Մյուս աղբյուրն օտարերկրյա միջոցներն են, որոնք ամենաշատն են եղել 2006 և 2007թթ., քանի որ կազմել են համապատասխանաբար 648.1 և 750.1 մլն դրամ: Այնուամենայնիվ, այս միջոցները 2008 և 2009թթ. ընթացքում սկսել են նվազել: Հարկ է նշել, որ այս միջոցները լուրջ ընդլայնման հնարավորություններ ունեն, այսինքն՝ լուրջ ծրագրեր, նախագծեր և միջազգային չափանիշներին համապատասխան առաջարկությունների փաթեթներ մշակելու պարագայում ՀՀ-ում գիտության ֆինանսավորման ծավալները կարող են բավական ընդլայնվել: Այստեղ ամենաօպտիմալ տարբերակներից մեկը կարող է լինել երկկողմանի մասնակցությամբ ծրագրերի ֆինանսավորումը, որն առնվազն կարող է կրկնա-

¹ ՀՀ սոցիալական վիճակը 2009թ., էջ 328:

² ՀՀ սոցիալական վիճակը 2009թ., էջ 187:

պատկել դրսից ներգրավվող միջոցները: Այսինքն՝ տարբեր գիտահետազոտական կազմակերպություններ իրենց բյուջետային միջոցները դրսից ֆինանսավորվող ծրագրերի հետ համատեղ օգտագործման հնարավորություն ունենալու պարագայում կարող են, լուրջ պայմանագրեր կնքելով, համատեղ ծրագրեր իրագործել: Այս առումով բյուջետային միջոցները նմանատիպ համատեղ ծրագրերի իրագործմանն ուղղելն առայժմ կարևոր է, քանի որ սեփական միջոցների ծախսերը գիտահետազոտական աշխատանքների վրա դեռևս անբավարար են և վերջին 5 տարում չեն գերազանցել 110 մլն դրամը, որը եթե անգամ ուղղվի համատեղ ծրագրերի իրագործմանը, լուրջ խթան կամ ներուժ չունի: Այս համատեքստում տարբեր աղբյուրներից գիտության ֆինանսավորման ավելացման խնդրի արդիականությունը կասկած չի հարուցում, այսինքն՝ միջազգային ասպարեզ դուրս գալու, միջազգային գիտահետազոտական կազմակերպությունների հետ համագործակցության փորձեր անելու համար անհրաժեշտ է պատրաստ լինել ֆինանսական ներդրումներ անելու գիտության ասպարեզում, հատկապես համատեղ գիտահետազոտական ծրագրերի ֆինանսավորման ասպարեզում: Դա կարող է լուրջ հիմքեր ստեղծել նաև կադրերի գիտական մակարդակի բարձրացման, փորձի փոխանակման, ինչպես նաև դեպի զարգացում տանող կապերի ապահովման համար:

Այս համատեքստում իր կարևորությունն ունի նաև տարբեր երկրների գիտության կառավարման և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման մոդելներին համահունչ կառավարման և ֆինանսավորման մոդել ունենալու խնդիրը:

Այս առումով և գիտության ֆինանսավորման համակարգի կատարելագործման նպատակով ուշագրավ է արևմուտքի որոշ երկրների փորձը:

Գիտության ֆինանսավորման միջազգային փորձն ունի իր առանձնահատկությունները, և այն մեծամասամբ տարբերվում է ըստ երկրների, սակայն կան հիմնական մոտեցումներ և տարրեր, որոնք կիրառում են այս ոլորտում զարգացման մեծ փորձ ունեցող գրեթե բոլոր երկրները: Շատ դեպքերում գիտության ֆինանսավորման արդյունավետ մեխանիզմներով է պայմանավորված տվյալ երկրում գիտության զարգացումը, սակայն մյուս կողմից դա, անհրաժեշտ պայման լինելով, կարող է նաև բավարար չլինել գիտության զարգացման համար: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ փորձենք ներկայացնել տարբեր երկրների ազգային այն մոտեցումները, որոնք նրանց կողմից կիրառվում են գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման և այդ ոլորտում ներդրումներ կատարելու առումներով:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի և միաժամանակ Գիտության և տեխնոլոգիաների քաղաքականության միջազգային կենտրոնի փորձագետ Նիկոլաս Ս. Վոնորտասի հետազոտությունը¹, որն առնչվում է տարբեր երկրների կողմից R&D² գիտահետազոտական աշխատանքների և զարգացման (մշակումների) ոլորտում ներդրումներին:

Ավստրիայում³ այս ոլորտում կատարվում են ներդրումներ ՀՆԱ-ի 2.5%-ի չափով, ուժեղ կողմերից է համագործակցությունը կառավարության, արդյունաբերության և համալսարանների միջև: Մյուս կողմից՝ մարտահրավերներ կան կապված բարձրագույն կրթության խիստ մեղ մասնագիտացման, R&D կողորդինացման ջանքերի և քաղաքականության առումով, ինչպես նաև այն առումով, որ բանկերն են ՓՄՁ-ների հիմնական ֆինանսավորողը:

Ավստրիայում գիտության կառավարումը հստակ բաժանված է երեք մակարդակների՝ քաղաքականություն իրականացնողներ, գործառնական մակարդակ, որտեղ գործում են գործակալությունները, և կյանքի կոչվում ծրագրերը, ու վերջապես RTD⁴ կատարողներ: Ավստրիայում քաղաքականություն մշակողներն են Հետազոտությունների, նորամուծությունների և տեխնոլոգիաների կոմիտեն և Գիտության կոմիտեն, այսինքն՝ կա հստակ մասնագիտացում, որը գործում է ֆունդամենտալ և կիրառական հետազոտությունների առանձին կոմիտեների միջոցով: Այս երկու ավստրիական կոմիտեներն անմիջականորեն համագործակցում են պառլամենտի հետ, իսկ մյուս մակարդակում կառավարությանը կից գործում են

¹ Nicholas S. Vonortas, National Approaches to Selecting R&D Investment Areas, AAAS Forum on Science and Technology Policy, Washington D. C., April 30 2009.

² R&D հետազոտություններ և զարգացում:

³ <http://cordis.europa.eu/erawatch/index.cfm?fuseaction=ri.home>

⁴ RTD հետազոտություններ, տեխնոլոգիաներ և զարգացում (մշակումներ):

RTD ավստրիական խորհուրդը և Գիտության խորհուրդը: Հաջորդ մակարդակում տարբեր նախարարությունների կոորդինացման ներքո գործում են մի շարք հիմնադրամներ, որոնք էլ հենց ֆինանսավորում են ծրագրերը: Հիմնադրամների մի մասը մասնագիտացված է կառուցվածքային և թեմատիկ ծրագրերի, մյուս մասը՝ դրամաշնորհային հետազոտությունների ֆինանսավորմամբ: Ամենաստորին օղակը կամ կատարողները ընկերություններն են, գիտահետազոտական ինստիտուտներն ու կոմպետենցիաների և գերազանցության կենտրոնները, տեխնոլոգիական կենտրոնները և այլն: Այսինքն՝ այս երկրում գոյություն ունի գիտության քաղաքականությունից մինչև հետազոտություններ ընկած կառուցվածքային հստակ մշակված սխեմա: Իսկ ներդրումները կատարվում են ամենամեծ զարգացման տեմպեր ունեցող ոլորտներում, և տնտեսական աճի հիմնական նախապայմանը բարձր տեխնոլոգիաներն են:

Ֆինլանդիան R&D ոլորտում ծախսում է ՀՆԱ-ի մոտ 3.5%-ը: Ֆինլանդիայի առանձնահատկություններից է այն, որ ուժեղ գիտելիքների հոսք գոյություն ունի դեպի նորամուծական համակարգ, որի արդյունքում ապահովվում է գիտության զարգացում, և մյուս կողմից պետական մարմինները մեծ աջակցություն են ցուցաբերում R&D-ների ֆինանսավորման գործում: Բացասական կողմերից է այն, որ ներդրումները կենտրոնացված են մի քանի արդյունաբերական ճյուղերում և հարաբերականորեն քիչ են նորամուծական հիմքով աշխատող ՓՄՁ-ները. այս բացասական գործոնը հստակ ազդեց համաաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ: Նշենք նաև, որ գրեթե 50% մասնավոր ներդրումները R&D ոլորտում արվում են Nokia ընկերության կողմից, որն էլ քաղաքականության առաջատարն է: Ֆինլանդիայի կառավարությանը կից գործում է Հետազոտությունների և նորամուծությունների խորհուրդը, և հետաքրքիրն այն է, որ տարբեր նախարարությունների կազմում կան նորամուծական վարչություններ կամ դեպարտամենտներ, որոնց ենթակայության տակ գործում են հետազոտական ինստիտուտներ:

Ստորին մակարդակում գործում են տարբեր հիմնադրամներ, ձեռնարկությունների հետազոտական միավորումներ, ձեռնարկությունների կազմում գործող միացյալ հետազոտական ինստիտուտներ, շահույթ չհետապնդող հետազոտական ինստիտուտներ և այլն:

Ֆրանսիայում R&D-ի ոլորտում կատարվող ներդրումները քաղաքական մեծ աջակցություն ունեն, ինչպես նաև հստակ հիմքերի վրա է դրված R&D-ների երկարաժամկետ պլանավորումը: Ֆրանսիայում մարտահրավերներից է R&D-ներում ՓՄՁ-ների ներդրումների ավելացումը, ինչպես նաև տարբեր ոլորտների միջև R&D-ների համագործակցության ուժեղացումը և տարբեր հետազոտությունների առևտրայնացումը: Ֆրանսիայի գիտական համակարգը բաժանված է առանձին մակարդակների. առաջին մակարդակում գործում են խորհրդատվական մարմինները, որոնք խորհրդատվական ծառայություն են մատուցում նախագահին, պառլամենտին, ինչպես նաև առանձին նախարարությունների: Երկրորդ մակարդակում գործում են նորամուծական և ֆինանսավորման գործակալությունները (OSEO¹), իսկ վերջիններս էլ միջոցներն ուղղում են մասնավոր կազմակերպություններին՝ ՓՄՁ-ներին և խոշոր ընկերություններին: Մյուս կողմից՝ միջոցներն ուղղվում են մրցակցային մեծ ներուժ ունեցող քլաստերների զարգացմանը, ինչպես նաև ֆինանսավորվում են բուհ-երը, ռազմական լաբորատորիաները, հանրային հետազոտական կազմակերպությունները և այլն:

Ֆրանսիական մոդելի առավելությունները բավական շատ են, այսինքն՝ կարելի է մշակել խորհրդատվական մարմինների ցանց, մյուս կողմից հասնել ՓՄՁ-ների նորամուծական գործունեության պետական ֆինանսավորման համակարգի ուժեղացմանը, իսկ քլաստերային համակարգի ձևավորումն ըստ մրցունակության կարելի է պարզապես տեղադրել գիտական ողջ քաղաքականության կենտրոնում:

Գերմանիան ունի ամենահզոր R&D ներդրումների համակարգը՝ մոտ 58.8 մլրդ եվրո, որը կազմում է ՀՆԱ-ի 2.53%-ը, իսկ ԵՄ-27-ի գիտահետազոտական ծախսերի մոտ 25%-ը: Գերմանիայում կողք կողքի գործում են Դաշնային պառլամենտի և 16 դաշնային միավորների պառլամենտների համակարգերը, որտեղ նախարարությունների մակարդակից ներքև

¹ Այն ձևավորվել է Ֆրանսիայի նորամուծական գործակալության և ՓՄՁ զարգացման բանկի միավորմամբ, որի արդյունքում Ֆրանսիան ունի նորամուծությունները ֆինանսավորող լուրջ կառույց:

արդեն KfW¹ ծրագրի շրջանակներում հետազոտական կազմակերպություններին ինստիտուցիոնալ ֆինանսավորման համակարգի հիման վրա տրվում են հատկացումներ: Ի տարբերություն եվրոպական մյուս երկրների՝ այստեղ համակարգն ավելի պարզ է: Բայց այստեղ կարևորն այն է, որ կա տարածքային դիվերսիֆիկացիա գիտության զարգացման բնագավառում: Գերմանիան առավել մեծ ուշադրություն է դարձնում բարձր տեխնոլոգիաներին, ինչպես նաև երկարաժամկետ հեռանկարում արտադրության և գաղափարների միաձուլման խնդիրն է պահում իր ուշադրության կենտրոնում:

Ճապոնիան աշխարհի 2-րդ ամենամեծ R&D ներդրումներ կատարող երկիրն է, որոնք գերազանցում են 150 մլրդ դոլարը և կազմում են ՀՆԱ-ի 3.2%-ից ավելին: Ճապոնիայի մարտահրավերների կամ առաջնահերթ լուծման խնդիրներից է այս ոլորտի ձեռնարկություններին աջակցությունը, ինչպես նաև վեճարարային կապիտալի և բարձր ռիսկային ֆինանսավորման ծավալների ընդլայնումը: Բավական պարզ ու հստակ սխեմայով է այստեղ կատարվում գիտության ֆինանսավորումը, այն է՝ վարչապետի կաբինետում գործում են S&T²-ների քաղաքականության խորհուրդը և S&T քաղաքականության պետնախարարը, իսկ նրանց գործունեությունը կապվում է մյուս բոլոր նախարարությունների հետ: Ճապոնիայի S&T ծրագրի շրջանակներում հիմնական ներուժն ուղղվում է առևտրայնացման գործընթացին և մարդկային ռեսուրսների կատարելագործմանը:

Տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ նրանք իրենց քաղաքականությունը մշակում են՝

- Նորամուծությունների խթանման և համագործակցության ցանցերի ընդլայնման միջոցով:
- Շատ երկրներում գործում է Triple Helix model³-ը, որը հայտնի եվրոպական երկրների գիտության զարգացման և արդյունաբերական ձեռնարկությունների հետ կապի մոդելն է:
- Եվ, վերջապես, համալսարանները դիտարկվում են որպես տնտեսական ներուժ կրողներ, հատկապես այն առումով, որ պատրաստում են այնպիսի կադրեր, ովքեր կարող են գործել գիտելիքահենք ուղղվածություն ունեցող հասարակության մեջ:

Հետևություններից է նաև այն, որ հզոր R&D ենթակառուցվածքների համակարգով է պայմանավորված գիտության զարգացումը: R&D-ի հաջողությունը կապված է բարձր ռիսկային ֆոնդերի հետ, հատկապես դրանք ՓՄՉ-ներին տրամադրելու հանգամանքի հետ:

R&D-ները հանգեցնում են պետության համար՝ նորամուծությունների, տնտեսական աճ են ապահովում, ստեղծում են արդյունաբերության նոր ճյուղեր, նոր աշխատատեղեր, խթանում են ձեռնարկատիրությունը, ընդլայնում են հարկային բազան և, վերջապես, բարձրացնում են երկրի մրցունակությունը: Սկսնակ գործարարների համար R&D-ն նրանց ապագան է, մեծ հասույթ բերողը և ամենաէական գործոնը:

R&D-ների նպատակն է գործարարության զարգացումը և տնտեսական աճը, որը հնարավոր է ապահովել նորամուծությունների միջոցով, այն է՝ նոր նյութեր, սպրանքներ, գործիքներ, ծառայություններ, գործընթացներ, ցանցեր, տեխնոլոգիաներ, որոնցից մի մասն անմիջականորեն բարձրացնում է եկամուտները, իսկ մյուս մասը՝ իջեցնում ծախսերը: Ինչպես նաև նոր արտոնագրեր, հեղինակային իրավունքներ, ֆրանչայզներ և լիցենզիաներ, սպրանքանիշեր և այլն:

Գիտահետազոտական և նորամուծական գործունեության ծավալման բնորոշ առանցքային խոչընդոտը ֆինանսական միջոցների սահմանափակությունն է, ինչն առնչվում է որոշ խնդիրների:

Դրանցից առաջինը կապված է **ասիմետրիկ տեղեկատվության** հետ, որը գոյություն ունի հետազոտողների, արտադրողների և ներդրողների միջև, այսինքն՝ պետք է հստակ տեղեկատվություն հասնի ներդրողներին, որպեսզի նրանք պատրաստ լինեն իրենց միջոցները ներդնելու նոր R&D-ների արդյունքների առևտրայնացման մեջ:

Բարոյական ասպեկտն այն է, որ կառավարիչները և սեփականատերերն ունեն տարբեր շահեր, ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում ներդրումների վրա:

¹ Kreditanstalt für Wiederaufbau (KfW), բանկային խումբ, որի սեփականատերը Գերմանիայի կառավարությունն է: Թարգմանաբար նշանակում է վերակառուցման վարկային ինստիտուտ (Reconstruction Credit Institute):

² S&T գիտություն և տեխնոլոգիաներ:

³ www.fondazionerosSELLI.it/DocumentFolder/Helix.doc

Հարկային խնդիրները, որոնք ստիպում են օգտվել դրսի առավել էժան միջոցներից, իսկ դրանք դժվար է գտնել: Այստեղ պետության քաղաքականությունը պետք է ուղղված լինի գիտահետազոտական աշխատանքների վրա կատարվող ներդրումները հարկերից ազատելուն, որը և կապահովի միջոցների հոսք դեպի R&D:

Խնդիրներից է նաև այն քաղաքականությունների տարբերությունը, որը գոյություն ունի սկսնակ և հասուն կազմակերպությունների միջև, որոնք խիստ տարբերվում են իրենց R&D հետազոտություններով. այս բացը պետք է կարգավորվի պետության կողմից կիրառվող առանձին մեխանիզմների միջոցով: Մասնավորապես, հարկային համակարգում կիրառելի ցածր կամ զրո հարկեր մոտեցումը, կատարել վերաֆինանսավորում և վարկեր տրամադրել, դրամաշնորհներով աջակցել, ընդլայնել վենչուրային կապիտալը, նախնական կամ սկզբնական կապիտալով ապահովել, ստեղծել ցանց պետության, համալսարանների, հետազոտական ինստիտուտների, ձեռնարկությունների և անհատների միջև, ինչպես նաև ապահովել թափանցելիություն համաշխարհային R&D շուկաներ:

Այս ամենին հասնելու համար հարկավոր է ունենալ հետևյալ հիմնարար գործիքները.

- մրցակցային գործարար միջավայր,
- զարգացած ֆինանսական ենթակառուցվածք,
- որակյալ ֆիզիկական ենթակառուցվածք,
- ուժեղ իրավական ենթակառուցվածք,
- գրավիչ բարձր որակավորման մասնագետների պատրաստման ենթակառուցվածք:

Հաջորդ խնդիրն ազգային նորամուծական ռազմավարության մշակելը և գործադրելն է: Եթե երկրի գիտության զարգացման բնագավառում բացակայում է ազգային նորամուծական ռազմավարությունը, և համակարգի թույլ կամ ուժեղ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքներն ուսումնասիրված չեն, ապա հաջողության հասնելն անհնար է:

Ելնելով վերոնշյալ մի շարք հիմնահարցերի ուսումնասիրությունից՝ ստորև ներկայացվում է գիտության և արտադրության համատեղ զարգացման պարբերաշրջանի մոդելի տարբերակ.

Փուլ 1 Գիտություն «S»՝

1.1 Հիմնարար հետազոտություններ «R»:

1.2 Կիրառական հետազոտություններ «R»:

Փուլ 2 Տեխնոլոգիաներ «T»՝

2.1 Հիմնարար հետազոտությունների արդյունքներ (նախագծակոնստրուկտորական և տեխնոլոգիական):

2.2 Կիրառական հետազոտությունների արդյունքներ (արտադրանքի փորձնական նմուշներ):

Փուլ 3 Նորամուծությունների արտոնագրում «P»՝

3.1 Հետազոտությունների արտոնագրում (ազգային ընթացակարգերով):

3.2 Հետազոտությունների արտոնագրում (միջազգային ընթացակարգերով):

Փուլ 4 Հետազոտությունների առևտրայնացում «C»՝

4.1 Պետական կազմակերպությունների միջոցով:

4.2 Մասնավոր կազմակերպությունների միջոցով:

4.3 Համատեղ կազմակերպությունների միջոցով (պետական և մասնավոր, պետական և արտերկրյա մասնավոր կազմակերպություններ և այլն):

Փուլ 5 Մրցունակության բարձրացում «C»՝

5.1 Ներքին շուկայում:

5.2 Արտաքին շուկայում (թիրախային):

Փուլ 6 Չարգացում և տնտեսական աճ «D»՝

6.1 Փորձարարական զարգացում:

6.2 Առաջանցիկ զարգացում:

«SRTPCCD» մոդելն ընդգրկում է Triple Helix (եռակի պարույր) նեոկորպորատիվ մոդելի (ակադեմիա-պետություն-բիզնես) տարրերը:

Առաջին փուլում ֆինանսավորումն իրագործվում է հանրային և մասնավոր ֆինանսական ռեսուրսների միջոցով, և հասկանալի է, որ պետության ֆինանսական ռեսուրսները

մեծամասամբ ուղղվում են հիմնարար հետազոտություններին: Այս ասպարեզում բավական դժվար է ընդգրկել արտաքին ֆինանսական միջոցներ, քանի որ հիմնարար հետազոտություններ ֆինանսավորելով որևէ երկրում՝ տվյալ երկիրն իր համար պատրաստում է մրցակից գիտության ոլորտում: Այդ իսկ պատճառով կարելի է ասել՝ մենք գործ ունենք *արտաքին ֆինանսավորման պարադոքսի* հետ: Այսինքն՝ ֆինանսավորման խնդիրն այս պարագայում հնարավոր է լուծել ներքին ռեսուրսների կամ լավագույն դեպքում նախագծերի համատեղ ֆինանսավորման միջոցով:

Երկրորդ տեխնոլոգիաների ստեղծման փուլն է, որը բավական բարդ է և կարող է լինել և՛ հիմնարար, և՛ կիրառական հետազոտությունների արդյունքների տեսքով: Այստեղ գործ ունենք դեռևս չառևտրայնացված տեխնոլոգիաների հետ:

Երրորդ փուլում տեղի է ունենում նորամուծությունների արտոնագրում, սակայն այս փուլը կարող է շրջանցվել, և նորամուծությունը միանգամից կառևտրայնացվի: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր փուլի շրջանցում կամ արագ անցում ապահովում է ավելի մեծ արդյունք, այսինքն՝ կարելի է գնել միայն արտոնագիր և սկսել առևտրայնացում, այսինքն՝ շրջանցել առաջին և 2-րդ փուլերը: Այնուամենայնիվ, դասական ճանապարհով շարժվելու պարագայում հետազոտությունները պետք է անցնեն ազգային կամ միջազգային արտոնագրում: Միջազգային արտոնագրում անցնելու պարագայում հետազոտությունը համաշխարհային շուկա դուրս գալու առավել մեծ շանսեր է ունենում:

Չորրորդ փուլում սկսվում է ամենաբարդ գործընթացներից մեկը, այն է՝ հետազոտությունների առևտրայնացումը: Առևտրայնացումը կարող է իրագործվել մի շարք սուբյեկտների կողմից՝ պետության, մասնավոր կազմակերպությունների, համատեղ ձեռնարկությունների և այլն: Այստեղ խնդիրը կապված է «գեներատիվ կապերի» ստեղծման հետ, դեպի նորամուծություններն ուղղված գործարարության համակարգի ստեղծման հետ, «տեխնոլոգիաների տեղափոխման գործակալությունների» գործունեության հետ, «նորամուծությունների կորորինատորների» ինստիտուտի ձևավորման հետ: Սրանք այն օղակները կամ ինստիտուտներն են, որոնք ապահովում են հետազոտությունների առևտրայնացման գործընթացը:

Հինգերորդ փուլում ապահովվում է ձեռնարկությունների մուտքը ներքին և արտաքին շուկաներ, իսկ արտաքին շուկաներում հատկապես շեշտը դրվում է թիրախային շուկաների վրա: Այստեղ բավականին բարդ խնդիրներից է համաշխարհային շուկայում մրցունակություն ունեցող արտադրանքի թողարկումը, որով արդեն պայմանավորվում է տնտեսության զարգացումը:

Վեցերորդ փուլում կարող է այս ամենի արդյունքում լինել կամ իսկական առաջանցիկ զարգացում ու բարձր տեմպերով աճ, կամ փորձը լինի անհաջող և չբերի զարգացման, որի արդյունքից էլ կախված է հետադարձ կապի համակարգով պարբերաշրջանի կրկնությունը՝ հաշվի առնելով այն բացթողումները, որոնք հանգեցրել են անհաջողության կամ կատարելագործելու համար այն հաջողություն բերող տարրերը, որոնք նպաստել են մրցունակ արտադրանք ստեղծելուն:

Այս ամենի հետ մեկտեղ փուլերի միջև գոյություն ունեցող կապերի շղթայի ստեղծումը պետք է հիմնվի ժամանակակից մոտիվացիոն մեխանիզմների ու ֆինանսավորման մոտեցումների և մեխանիզմների համատեղ կիրառության կամ զուգակցման վրա. միայն այս պարագայում է հնարավոր հասնել իրական հաջողության:

Այսպիսով, գիտության ֆինանսավորման համակարգի բարեփոխման ռազմավարությունը պետք է բովանդակի առաջին հերթին պետության, մասնավոր հատվածի և գիտության համատեղ գործունեության համակարգման հենքի վրա բազմադրյուր ֆինանսավորման մեխանիզմի ստեղծում, որը պետք է պարունակի պետական բյուջեից հատկացումները, մասնավոր հատվածից ներդրումները, միջազգային կառույցների հետ դրամաշնորհային ծրագրերից ստացվող ռեսուրսները:

**ՆԱԿԹԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ՆՈՐՎԵԳԻԱՅՈՒՄ**

Ամփոփագիր

Սույն հոդվածում ներկայացվել է նավթային եկամուտների դերը տարբեր երկրներում: Այդ նպատակի համար ընտրվել է Ասեմոզյուի աճի մոդելը¹, որի միջոցով համեմատվել են Թուրքիայի և Իրանի, ինչպես նաև Նորվեգիայի և Ֆինլանդիայի տնտեսական աճի ցուցանիշները: Այսինքն՝ համեմատվել են նավթարդյունահանող (Իրան և Նորվեգիա) և նավթ ներկրող (Թուրքիա և Ֆինլանդիա) երկրների տնտեսական աճի ցուցանիշները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նավթի գնի շուկայից հետո Նորվեգիայի տնտեսական աճի ցուցանիշները բարելավվել են և գերազանցել են Ֆինլանդիայի ցուցանիշները, իսկ Իրանի տնտեսական աճի ցուցանիշներն ավելի փոքր են եղել Թուրքիայի համեմատ:

Թուրքիայի և Իրանի մակրոտնտեսական ցուցանիշների համեմատությունը: Ըստ Ասեմոզյուի՝ տնտեսական աճի խթանումը պայմանավորված է 4 հիմնական գործոններով՝ մշակույթով, աշխարհագրական դիրքով, ինստիտուտներով և հնարավորություններով²: Իրանի տնտեսության վրա նավթային եկամուտների երկարաժամկետ ազդեցության գնահատման համար համեմատվել են Թուրքիայի և Իրանի տնտեսությունները: Երկրների ընտրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքով՝

- ոչ վաղ անցյալում 2 երկրներն էլ ունեցել են նույն մշակութային արժեքները և ինստիտուցիոնալ կառուցվածքը,
- ունեն աշխարհագրական գրեթե համարժեք դիրք,
- պատմության ընթացքում գրեթե միշտ հայտնվել են նմանատիպ իրավիճակներում և ունեցել են միևնույն հնարավորությունները:

Մշակութային նմանությունները վերաբերում են կրոնական դավանանքին՝ Իսլամին, 2 երկրներում էլ սեծ թվով քուրդ բնակչության առկայությանը և պատմության ընթացքում Իրանի և Թուրքիայի հողերում միասնական ինքնիշխանությանը: Բացի այդ, բազմաթիվ նմանություններ են նկատվում XX դարի սկզբում Իրանի Ռեզա շահի և Թուրքիայի առաջնորդ Էնմալ Աթաթուրքի գործողություններում³: Այս ամենը ցույց է տալիս, որ զարգացման ուղիների ընտրության հարցերում երկու երկրներն էլ ունեին նույն հնարավորությունները:

Մինչև XX դարի սկիզբը 2 երկրներում էլ եղել է թագավորական իշխանություն: Այնուհետև Իրանի Ռեզա շահի և Թուրքիայում Աթաթուրքի գահընկեցությունից հետո, չնայած Թուրքիայի քաղաքական համակարգը վերածվեց հանրապետության, 2 երկրների կառավարման համակարգերը ղեկավարվում էին միապետական սկզբունքներով:

Մինչև 1980թ. շուկայական տնտեսական համակարգը Իրանի տնտեսության առանցքն էր, քանի որ Իրանի կառավարությունը սերտ կապեր ուներ Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի հետ, այն դեպքում, երբ Թուրքիայի շուկայական համակարգը հիմնված էր պետական կարգավորման վրա: Այնուամենայնիվ, 1980թ. հետո 2 երկրների տնտեսական համակարգերը տեղերով փոխվեցին, և Իրանի տնտեսությունն անցավ պետության ուժեղ հսկողության տակ: Այդպիսով, չնայած ներկայումս 2 երկրներում գոյություն ունեն տարբեր տնտեսական համակարգեր, մինչև 1980թ. բազմաթիվ նմանություններ են եղել⁴:

Ասեմոզյուի մոդելում տնտեսական զարգացման մյուս գործոնը ստեղծված հնարավորություններն են: Այս դեպքում 2 երկրներն էլ պատմության ընթացքում ունեցել են միևնույն հնարավորությունները, որոնց մանրամասն նկարագրությունը բավականին դժվար է: Հարկ է

¹ Kamer Daron Acemoğlu – Հայկական ծագմամբ քուրդ տնտեսագետ:
² Institutions as the Fundamental Cause of Long-Run Growth (joint with Simon Johnson and James A. Robinson), in Handbook of Economic Growth, 2005.
³ Touraj Atabaki, Erik Jan Zürcher, Men of order: authoritarian modernization under Atatürk and Reza Shah”.
⁴ Güneş Murat Tezcür, Muslim Reformers in Iran and Turkey: The Paradox of Moderation.

միայն նշել, որ 2 երկրներն էլ միևնույն իրավիճակում են հայտնվել պատմական մի շարք իրադարձությունների հետևանքով, մասնավորապես՝ Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների, ինչպես նաև Արևմուտքի և Արևելքի ազդեցությամբ:

Աղյուսակ 1-ի տվյալները ցույց են տալիս, որ 1970-1973թթ. Թուրքիայում և Իրանում մեկ շնչի հաշվով եկամտի ցուցանիշները գրեթե հավասար էին, ինչը վկայում է միևնույն տնտեսական իրավիճակի մասին՝ հաշվի առնելով 2 երկրների բնակչության թվի ոչ այնքան մեծ տարբերությունը: Բացի այդ՝ համաշխարհային տնտեսության մեջ 2 երկրներն էլ ունեին միևնույն դիրքը:

Աղյուսակ 1

Իրանի և Թուրքիայի վիճակագրական տվյալները, 1970-2008թթ.


Տարի	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ, ԱՄՆ դոլար		Բնակչություն, մլն մարդ		Թուրքիայի արտահանում (մլրդ ԱՄՆ դոլար)	Իրանի արտահանում, մլրդ ԱՄՆ դոլար		
	Թուրքիա	Իրան	Թուրքիա	Իրան		Ընդամենը	Նավթ	Առանց նավթի
2008	10,031	4,728	73900	71532	132002	97668	81567	16101
2007	9,003	4,004	78360	71305	107272	76055	62011	14044
2006	7,365	3,165	72935	70254	85535	64366	53820	10546
2005	6,786	2,744	72065	69161	73476	43852	36315	7537
2004	5,582	2,326	71150	68119	63121	33991	27355	6636
2003	4,371	1,974	70712	67093	47253	28237	22966	5271
2002	3,400	1,979	69626	66081	35762	23904	19339	4565
2001	2,906	1,631	68529	65064	31334	28461	24280	4181
2000	4,0 11	1,539	67420	63985	27485	21030	17089	3941
1999	3,817	1,649	66293	62922	26587	13118	9933	3185
1998	4,181	1,603	65157	61877	26881	18381	15471	2910
1997	4,030	1,663	64015	60848	26245	22391	19271	3120
1996	3,918	1,806	62837	59865	23048	18360	15103	3257
1995	3,719	1,760	61737	58999	21599	19434	14603	4831
1994	2,919	1,771	60612	58146	18106	18080	14333	3747
1993	4,103	1,800	59491	57306	15349	19868	16880	2988
1992	3,682	1,666	58374	56476	14715	18661	16012	2649
1991	3,557	1,640	57262	55543	13593	19305	17993	1312
1990	3,611	1,593	56154	54209	12959	13081	12037	1044
1989	2,613	1,634	54902	52907	11627	10709	9673	1036
1988	2,255	1,703	53723	51636	11662	11916	10755	1161
1987	2,202	1,683	52569	50395	10190	7171	6255	916
1986	1,948	1,444	51440	49038	7457	14175	13710	465
1985	1,762	1,528	50286	47195	7958	17087	16726	361
1984	1,604	3,434	49079	45421	7134	21507	21150	357
1983	1,683	3,373	47873	43714	5671	22082	21798	284
1982	1,799	2,867	46696	42071	5747	10959	10619	34 0
1981	2,0 24	2,427	45548	40490	4702	12293	11648	645
1980	2,003	2,321	44484	38967	2910	24970	24158	812
1979	2,731	2,245	43502	37503	2261	16203	15660	543
1978	2,045	1,988	42606	36093	2288	23974	23451	523
1977	1,895	2,084	41760	34737	1753	24719	24179	54 0
1976	1,700	1,832	40911	33514	1960	20626	20034	592
1975	1,522	1,456	40025	32628	1401	21596	21014	582
1974	1,249	1,344	39108	31766	1538	8953	8318	635
1973	929	794	38157	30926	1317			
1972	759	513	37190	30109	885			
1971	620	423	36238	29313	677			
1970	675	346	35321	28539	589			

Աղբյուրներ՝ <http://www.nationmaster.com/>, <http://www.cbi.ir>, <http://www.bp.com>, <http://comtrade.un.org/db>, <http://data.un.org/Browse.aspx?d=15>,

Յուցանիշներում տարբերություններ գրանցվեցին այն ժամանակ, երբ 1974թ. հետո Իրանի տնտեսությունում նավթը սկսեց էական դեր խաղալ, այսինքն, երբ արաբական աշխարհը կրճատեց նավթի արտահանման ծավալները, և առաջին նավթային շոկը հանգեցրեց հում նավթի գնի աննախադեպ մեծ աճի, ինչի հետևանքով Իրանի եկամուտները կրկնապատկվեցին: Գծապատկեր 1-ի տվյալները ցույց են տալիս 2 երկրներում մեկ շնչի հաշվով եկամտի փոփոխությունների միտումը:

Գծապատկեր 1

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի փոփոխության միտումները Իրանում և Թուրքիայում, 1970-2008թթ.




Գծապատկերից երևում է, որ նավթային շոկի սկզբում իրավիճակը գնալով բարելավվում էր: Սա նշանակում է, որ կարճաժամկետում նավթային եկամուտները կարող են առաջացնել տնտեսական վերելք: Սակայն դրանից հետո, չնայած նավթի գները շարունակեցին բարձր մնալ (հիմնական պատճառներից էին 1979թ. հեղափոխությունը, այնուհետև՝ Իրան-Իրաք պատերազմը)¹, Թուրքիայում շարունակական և կայուն տնտեսական աճ գրանցվեց, այնինչ Իրանի տնտեսության մեջ էական աճ չգրանցվեց: Այս միտումը շարունակվեց մինչև 2002թ., որի ընթացքում Թուրքիան մեծ տնտեսական վերելք ունեցավ: Արդյունքում վերջին 6 տարիների ընթացքում 1 շնչի հաշվով եկամտի ցուցանիշը 2 անգամ գերազանցեց Իրանի նույն ցուցանիշը:

Հաշվի առնելով Ասեմոզլուի մոդելը և Թուրքիայի ու Իրանի նմանությունները՝ կարելի է եզրակացնել, որ չնայած Իրանը նավթային եկամուտների միջոցով ձեռք բերեց լրացուցիչ եկամտի աղբյուր, ինչի հետևանքով ակնկալվում էր համապատասխան տնտեսական աճ, այնուամենայնիվ եկամտի այս աղբյուրը միայն կարճաժամկետում ունեցավ դրական ազդեցություն, այնինչ երկարաժամկետում Իրանի տնտեսական աճը շեղեց իր բնականոն ընթացքից:

Գծապատկեր 2-ի տվյալները ցույց են տալիս, որ 1970-ականներին Իրանի և Թուրքիայի ընդհանուր արտահանման ծավալները գրեթե նույնն էին, և Թուրքիայի նկատմամբ Իրանի միակ առավելությունը նավթի արտահանումն էր: Սակայն վերջին տարիներին Թուրքիայի արտահանման ծավալները կայուն աճի միտում են ցուցաբերում: Բացի այդ՝ նավթային գործընկերության պատճառով Իրանի արտահանման ծավալները բազմաթիվ տատանումներ են ունեցել, ինչի հետևանքով ավելի քիչ են եղել, քան Թուրքիայինը: Եթե Իրանի ոչ նավթային արտահանման ծավալները համեմատենք Թուրքիայի հետ, ապա կտեսնենք, որ այստեղ իրավիճակն իսկապես բավականին վատ է:

¹ M.S. El Azhary, The Iran-Iraq war: an historical, economic, and political analysis.

Իրանի և Թուրքիայի արտահանման ծավալները



<http://comtrade.un.org/db>, <http://www.nationmaster.com/>


Չնայած նավթը կարող էր դրական դեր ունենալ ներդրումների ներգրավման, արտադրության որակի բարձրացման և տեսականու ընդլայնման, ինչպես նաև ոչ նավթային արտահանման ծավալների ավելացման հարցում, ակնհայտ է՝ նավթը ոչ միայն չնպաստեց նավթային արտահանման ծավալների ավելացմանը, այլ նաև Իրանի տնտեսությունը զրկեց համաշխարհային շուկայում մրցակցային այլ ապրանքների արտադրության ծավալների ավելացման հնարավորությունից: Բացի այդ՝ նավթարդյունաբերությունը քիչ առնչություն ունի արդյունաբերության մյուս ճյուղերի հետ, ինչի հետևանքով նավթի արտահանումը մեծ ազդեցություն չունի զբաղվածության և տնտեսության մյուս ճյուղերի վրա, այնինչ ոչ նավթային արտահանումների ծավալների մեծ մասը սերտորեն կապված է արդյունաբերության այլ ճյուղերի հետ, ինչի հետևանքով կարելի է ակնկալել զբաղվածության մակարդակի ավելացում¹: Այսինքն՝ չնայած կարճաժամկետում նավթը դրական ազդեցություն ունի Իրանի տնտեսական աճի ապահովման վրա, այնուամենայնիվ այն խոչընդոտում է տնտեսության մյուս ճյուղերի արտադրության ծավալների ընդլայնման գործընթացը:

Կարելի է եզրակացնել, որ հաշվի առնելով պատմական անցյալը, եթե Իրանի տնտեսությունում նավթ չլիներ, ապա միգուցե Իրանն ունենար այնպիսի տնտեսական աճ ու զարգացում, ինչպիսին Թուրքիայում է: Իրանի տնտեսության ամբողջական վերլուծությունից պարզ է դառնում, որ նավթային եկամուտների յուրաքանչյուր տարվա աճը կամ նվազումը իրենց համապատասխան ազդեցությունն են ունենում այդ տարվա (կամ 1-2 տարի անց) ՀՆԱ-ի վրա:

Ֆինլանդիայի և Նորվեգիայի մակրոտնտեսական ցուցանիշների համեմատությունը²: Եթե փորձենք հետազոտել 2 իրար նման երկրներ, ինչպիսիք են Նորվեգիան և Ֆինլանդիան, ապա կտեսնենք, որ երբ 1971թ. Նորվեգիան սկսեց զբաղվել նավթի արդյունահանմամբ և արտահանմամբ, այդ երկիրը Ֆինլանդիայի համեմատությամբ սկսեց արագ տեմպերով տնտեսական աճ գրանցել, ինչի հետևանքով 1 շնչի հաշվով եկամուտը 2 անգամ գերազանցեց Ֆինլանդիայի ցուցանիշը, այն դեպքում, երբ 1970թ. այդ 2 երկրների 1 շնչի հաշվով եկամտի ցուցանիշների միջև փոքր տարբերություն կար: Նավթի արդյունահանումից և արտահանումից հետո Նորվեգիայում 1 շնչի հաշվով եկամտի ցուցանիշը երկար ժամանակ շարունակեց իր բնականոն աճը՝ մի որոշ ժամանակ անց գերազանցելով Ֆինլանդիայի նույն ցուցանիշի աճը:

¹ Jahangir Amuzegar, Iran's economy under the Islamic Republic, page 58.
² Derry T. K., A history of Scandinavia՝ Norway, Sweden, Denmark, Finland and Iceland.

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի փոփոխության միտումները Նորվեգիայում և Իրանի



Իրանի և Նորվեգիայի մակրոտնտեսական ցուցանիշների համեմատությունը: Եթե միմյանց հետ համեմատենք Իրանը և Նորվեգիան, որոնք վերջին տարիներին ունեցել են նավթի միևնույն արտահանման ծավալները, ապա կարելի է եզրակացնել, որ նավթային եկամուտների նպատակային և արդյունավետ օգտագործումը հանգեցնում է երկրի տնտեսական աճին և բարգավաճմանը: Այդպիսով, չնայած նավթը Իրանի տնտեսությունում բավականին որոշիչ դեր ունի, սակայն կարճաժամկետ տնտեսական աճից և Թուրքիայից մի որոշ ժամանակով առաջ անցնելուց հետո տնտեսական աճի տեմպերը կտրուկ սկսեցին նվազել, այն դեպքում, երբ Թուրքիայի տնտեսությունը շարունակական աճ ունեցավ և առաջ անցավ Իրանից:

Այս դեպքում հարց է ծագում, թե ինչու են նավթային եկամուտները խոչընդոտում Իրանի տնտեսության աճը, երբ Նորվեգիայի պարագայում դրանք հակառակ ազդեցությունն են ունենում: Չնայած Նորվեգիայի և Իրանի մշակույթը, աշխարհագրական դիրքը և ինստիտուցիոնալ հեռանկարները միմյանցից չափազանց տարբեր են, այնուամենայնիվ Նորվեգիայի փորձը ցույց է տալիս, թե ինչպիսի դրական ազդեցություն կարող են ունենալ նավթային եկամուտները խելամիտ ձևով կառավարվող տնտեսություններում:

Այդուսակ 2-ում միմյանց հետ են համեմատվել Իրանի և Նորվեգիայի մի շարք ցուցանիշներ: Այդուսակի տվյալները ցույց են տալիս, որ չնայած անցյալում հնարավոր էր համեմատել այդ 2 երկրների 1 շնչի հաշվով եկամտի ցուցանիշները, ապա այժմ Իրանի 1 շնչի հաշվով եկամտի ցուցանիշը կազմում է Նորվեգիայի նույն ցուցանիշի 5%-ը: Բացի այդ՝ տվյալները ցույց են տալիս, որ ապագայում այդ տարբերությունն աճի միտում ունի:


Երկու երկրների արտահանման ծավալների համեմատությունը ցույց է տալիս, որ չնայած վերջին տարիներին դրանց նավթի արտահանման ծավալները գրեթե նույնն են, սակայն էական տարբերություններ կան 2 երկրների արտահանման ծավալների միջև: Այսինքն՝ Նորվեգիայի պարագայում նավթի արտահանումը կործանարար ազդեցություն չի ունեցել արտադրության մյուս ճյուղերի ապրանքների ու ծառայությունների արտահանման ծավալների վրա:

Իրանի և Նորվեգիայի բնակչության, նավթի արդյունահանման ծավալների, մեկ շնչի հաշվով եկամտի ցուցանիշների և արտահանման ծավալների համեմատությունը

Տարի	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ, ԱՄՆ դոլար		Բնակչություն, մլն մարդ		Արտահանում (մլրդ ԱՄՆ դոլար)		Նավթի արդյունահանում, մլրդ ԱՄՆ դոլար	
	Նորվեգիա	Իրան	Նորվեգիա	Իրան	Նորվեգիա	Իրան	Նորվեգիա	Իրան
2008	94,791	4,728	4645	71532	167812		2455	4325
2007	82,298	4,004	4628	71305	136357	97668	2556	4322
2006	72,012	3,165	4644	70254	122200	76055	2779	4282
2005	65,152	2,744	4623	69161	103759	64366	2969	4233
2004	56,221	2,326	4592	68119	82485	43852	3189	4248
2003	49,289	1,974	4565	67093	67940	33991	3264	4183
2002	42,293	1,979	4538	66081	59535	28237	3333	3543
2001	37,893	1,631	4513	65064	59217	23904	3418	3794
2000	37,531	1,539	4491	63985	59899	28461	3346	3818
1999	35,678	1,649	4460	62922	45479	21030	3139	3603
1998	34,097	1,603	4432	61877	40402	13118	3138	3855
1997	35,895	1,663	4404	60848	48550	18381	3280	3776
1996	36,537	1,806	4381	59865	48955	22391	3232	3759
1995	34,163	1,760	4360	58999	41740	18360	2903	3744
1994	28,726	1,771	4337	58146	34744	19434	2693	3730
1993	27,415	1,800	4312	57306	31904	18080	2377	3712
1992	29,932	1,666	4286	56476	35137	19868	2217	3523
1991	28,067	1,640	4262	55543	34037	18661	1955	3500
1990	27,732	1,593	4242	54209	34062	19305	1716	3270
1989	23,872	1,634	4227	52907	27030	13081	1567	2894
1988	23,811	1,703	4209	51636	22503	10709	1196	2349
1987	22,093	1,683	4187	50395	21519	11916	1054	2342
1986	18,523	1,444	4169	49038	18217	7171	907	2054
1985	15,474	1,528	4153	47195	19890	14175	823	2205
1984	14,765	3,434	4140	45421	18913	17087	752	2043
1983	14,736	3,373	4133	43714	17972	21507	661	2454
1982	15,043	2,867	4115	42071	17407	22082	532	2397
1981	15,338	2,427	4100	40490	17769	10959	512	1321
1980	15,595	2,321	4091	38967	18302	12293	528	1479
1979	12,904	2,245	4073	37503	13466	24970	407	3218
1978	11,338	1,988	4059	36093	10027	16203	356	5302
1977	10,157	2,054	4043	34737	8346	23974	287	5714
1976	8,835	1,832	4026	33514	7553	24719	279	5918
1975	8,127	1,456	4007	32628	16732	20626	189	5387
1974	6,744	1,344	3985	31766	13961	21596	35	6060
1973	5,640	794	3961	30926	10209	8953	32	5907
1972	4,377	513	3933	30109	7168		33	5059
1971	3,706	423	3903	29313	5696		6	4572
1970	3,283	346	3877	28539	5462		-	3848

Աղբյուրներ՝ <http://data.un.org/Browse.aspx?d=15>, <http://www.nationmaster.com/>, <http://comtrade.un.org/db>, Central Bank of Iran

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի փոփոխության միտումներն Իրանում և Նորվեգիայում, 1970-2008թթ.



Արտահանման ծավալների միտումներն Իրանում և Նորվեգիայում, 1970-2008թթ.



**ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԼՈՒԾՄԱՆ ՈՐԴԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հայաստանյան ապահովագրական շուկայի զարգացման համար լուրջ խթան էր 1996թ. նոյեմբերի 19-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը: Օրենքի ընդունումից հետո՝ 1997թ. ապրիլի 1-ին, շուկայում վերալիցենզավորման գործընթաց սկսվեց, որի ավարտին գործող 85 ապահովագրական ընկերություններից մնացին ընդամենը 20-ը, հետագայում այս ընկերությունների թիվն էլ ավելի կրճատվեց, և այսօր շուկայում գործունեություն է ծավալում միայն 8 ընկերություն: Ապահովագրական համակարգի զարգացման այս փուլին բնորոշ էին տարերայնությունը և պետական վերահսկողության անկատարությունը: Մասնավորապես առկա էին մի շարք խնդիրներ կարգավորման և վերահսկողության անհրաժեշտ արդյունավետ մեխանիզմների առկայության, անհրաժեշտ մասնագիտական փորձի պակասի առումով՝ պետական կարգավորող մարմնին օրենքով տրված լիազորությունների շրջանակներում: Ապահովագրական շուկայի պետական կարգավորման լիազորություններն այդ ժամանակահատվածում օրենսդրությամբ վերապահված էին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը, որն էլ իրականացնում էր կարգավորումն ու վերահսկողությունը առկա մասնագիտական և նյութական ռեսուրսների շրջանակներում: Հետագայում զարգացման որոշակի միտումներն ու շուկայի վերահսկողության փորձն առաջ բերեցին ապահովագրությունը կարգավորող նոր, առավել ընդգրկուն և արհեստավարժ օրենսդրության մշակման և ներդրման պահանջ, որը կլրացներ ոլորտում առկա բացերն ու կվերացներ շուկայի զարգացման խոչընդոտները: Արդյունքում՝ 2004 թվականի հուլիսին ուժի մեջ մտավ «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, որն իհարկե հետագայում մի շարք լրամշակումների ենթարկվեց, մինչ 2007 թվականին ոլորտի առավել մանրակրկիտ մասնագիտական ուսումնասիրությունների, շուկայի վերահսկողության և կարգավորման արդեն ձևավորված փորձի և միջազգային առաջավոր փորձի գործնական ուսումնասիրությունների արդյունքում կմշակվեր ապահովագրական գործունեությունը որակական և ռազմավարական ասպեկտներով նոր հարթության վրա բարձրացնող օրենսդրությունը համապատասխան նորմատիվային և իրավական կարգավորումն ապահովող ակտերով հանդերձ: 2007թ.-ից ոլորտի նկատմամբ վերահսկողական լիազորությունները ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից անցան ՀՀ Կենտրոնական բանկին, որի հետագա արդյունավետ աշխատանքի շնորհիվ էլ ձևավորվեցին երկրում զարգացած ապահովագրական շուկա ունենալու համար առաջին նախադրյալները, և շուկայում որոշակի ակտիվություն արձանագրվեց: Կարելի է արձանագրել, որ 2007-2011թթ. ընթացքում մեր երկրի ապահովագրական շուկան ունի կայուն աճի դինամիկա, մասնավորապես ընկերությունների ընդհանուր ակտիվները 2007-2011թթ. հուլիս ընկած ժամանակահատվածում աճել են՝ 8,376 մլն դրամից հասնելով 30,544 մլն դրամի, պարտավորությունները՝ 3,029 մլն դրամից 15,081 մլն դրամի, կապիտալը՝ 5,347 մլն դրամից 12,506 մլն դրամի, ապահովագրավճարների համախառն մեծությունը՝ 4,814 մլն դրամից 16,821 մլն դրամի, իսկ ապահովագրական հատուցումները՝ 417 մլն դրամից 3,624 մլն դրամի¹:

2010-2011թթ. ընկած ժամանակահատվածում հայաստանյան ապահովագրական շուկայում նկատվեց խոշորացման միտում, որի հետևանքով շուկայի մասնակիցների թվաքանակը կրճատվեց 2-ով և հասավ 8-ի, մասնավորապես «Այ-Էս-Ջի» ընկերության ապահովագրական պորտֆելն ամբողջությամբ փոխանցվեց «Ռ-ասկո» ապահովագրական ընկերությանը, իսկ «Գրիար Ինշուրանս» ընկերության պորտֆելը՝ «Ինգո-Արմենիա» ընկերությանը, նշենք նաև, որ այս ամենը լիովին համահունչ է ՀՀ Կենտրոնական բանկի՝ 2011-2013թթ. ապահովագրական

¹ ՀՀ Կենտրոնական բանկի տարեկան և ամսական տեղեկագիր (ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ):

համակարգի հնարավոր զարգացումների կանխատեսումներին, ըստ որի՝ առաջիկայում ՀՀ ապահովագրական շուկայում սպասվում է մրցակցության սրացում, ուստի և ընկերությունների թվաքանակի կրճատում: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործող 8 ապահովագրական ընկերություններից 2-ում օտարերկրյա կապիտալը հասնում է 95%-ի, իսկ 5-ում օտարերկրյա կապիտալն անցնում է 50%-ի շեմը, սակայն անհրաժեշտ է նաև փաստել, որ օտարերկրյա ներդրողներն էլ հիմնականում մեր հայրենակիցներն են, որոնց պատկանող կազմակերպությունները գրանցված են արտերկրում: ՀՀ ապահովագրական շուկայում փաստացի գործում են նաև 4 ապահովագրական բրոքերներ, որոնց գործունեության ծավալները փոքր են և ապահովագրական շուկայի զարգացումների վրա էական ազդեցություն չեն թողնում¹:

2010թ. հավաքագրված ապահովագրական վճարների ծավալով առաջին տեղում գույքի ապահովագրությունն է՝ 1 մլրդ 121 մլն դրամ: Ապահովագրվողների 80%-ն այստեղ կորպորատիվ հաճախորդներ են, որոնց մեծ մասը ստեղծվել է արտասահմանյան կապիտալով, մինևույն ժամանակ կնքված ապահովագրական պայմանագրերի քանակով առաջատար է ցամաքային տրանսպորտի ապահովագրությունը (10,957 պայմանագիր)՝ կապված երկրում ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության ներդրման հետ: Երկրորդ տեղում ցամաքային տրանսպորտն է՝ 1 մլրդ 102 մլն դրամ ապահովագրավճարով: Այս ցուցանիշն էլ հիմնականում պայմանավորված է բանկերի կողմից տրամադրված ավտոմեքենաների և խոշոր ընկերություններով, որոնք ապահովագրում են իրենց ողջ ավտոտնտեսությունը:

Երրորդ տեղում բժշկական ապահովագրությունն է՝ 812 մլն դրամ, որը նույնպես մեծապես կախված է խոշոր գործատուներից: Վերջիններս ակտիվորեն ներգրավում են բժշկական ապահովագրությունն իրենց աշխատակիցներին տրամադրվող սոցիալական փաթեթներում:

Ինչ վերաբերում է փոխհատուցումներին, ապա 2010թ. առաջին 9 ամիսներին ամենամեծ ծավալը գրանցվել է ցամաքային տրանսպորտի (1 մլն 150 հազ. դոլար) և անձնական ապահովագրության (1 մլն 100 հազ. դոլար) ոլորտներում²:

Երկրի ապահովագրական շուկայի կայացմանը մեծապես կնպաստի 2013թ. պարտադիր բժշկական ապահովագրության ենթադրվող մուտքը, որի մասին մամուլում այսօր պարբերաբար ակնարկվում է:

Չնայած վերը նշված բարեփոխումներին և շուկայի զարգացման դրական միտումներին՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ ապահովագրական համակարգը կայացման փուլում է և դեռևս չի կարողանում լիովին բավարարել տնտեսության պահանջմունքները, ուստի և հեռու է զարգացած համարվելուց: Դրա վկայությունն է, թեկուզ, այն հանգամանքը, որ մեկ շնչին ընկնող ապահովագրական տարեկան վճարի չափը 2010թ. տվյալներով մեր երկրում կազմում է 7 ԱՄՆ դոլար: Սա աշխարհում ամենացածր ցուցանիշներից մեկն է: Ռուսաստանում, օրինակ, այս ցուցանիշը 12 դոլար է կազմում, եվրոպական զարգացած երկրներում՝ մինչև 50 դոլար³: Այս ցուցանիշով մենք զիջում ենք անգամ մեր անմիջական հարևաններին, քանզի Ադրբեյջանի ու Վրաստանի իշխանություններն ապահովագրության պարտադիր ձևերն ավելի վաղ էին ներմուծել: Նշենք, որ այս ցուցանիշը ցույց է տալիս երկրի բնակչության՝ ապահովագրական համակարգում ներգրավվածության և այդ համակարգի նկատմամբ հասարակության վստահության մակարդակը: Հիմնվելով վերը նշված վիճակագրական տվյալների վրա՝ թերևս կարելի է փաստել, որ ՀՀ ապահովագրական շուկան ունի զարգացման մեծ պոտենցիալ, որն իրացնելու համար անհրաժեշտ է վերացնել մի շարք խոչընդոտներ, ինչպիսիք են՝ երկրի տնտեսությունում սովորի բարձր մակարդակը, ազգաբնակչության գերակշիռ մասի եկամուտների ցածր մակարդակը, օրենսդրական բացերը, ապահովագրության զարգացումը խթանող համապատասխան հայեցակարգը կյանքի կոչելու քայլերին խոչընդոտող օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքները, ապահովագրության տեսակների սակավությունը և մի շարք այլ խնդիրներ, որոնց առավել մանրամասն կանդիդատներն ստորև: Այս խնդիրների առկայությունը, ինչպես նաև երկրում նոր ձևավորված ապահո-

¹ http://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/texekagir/him_cuc_2.pdf

² ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագիր 2010թ.:

³ CEA Statistics, European Insurance in Figures, 2010.

վագրական ընկերությունների փորձի պակասը, օբյեկտիվորեն պահանջում են պետական կարգավորիչի կողմից տարվող քաղաքականության շարունակականություն և հետևողականություն համակարգի առջև ծառայած խնդիրներն օր առաջ լուծելու և ոլորտի զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով:

Այժմ առավել մանրամասն անդրադառնանք այն հիմնական խոչընդոտներին, որոնք առկա են հայաստանյան ապահովագրական համակարգի զարգացման ճանապարհին: Այս խոչընդոտներից, թերևս, ամենակարևորներից մեկն է ոլորտը կարգավորող *օրենսդրական և նորմատիվային դաշտի անկատարությունը*, որոնց պայմաններում խիստ բարդանում են շուկայում օտարերկրյա ինստիտուցիոնալ ներդրումների ներգրավման, նոր ծառայությունների ներդրման գործընթացներն ու այլ՝ շուկայի զարգացման համար կենսականորեն անհրաժեշտ պայմանների ապահովումը: Հաշվի առնելով Հայաստանի ապահովագրական շուկայի զարգացման և ապահովագրական մշակույթի առկա ցածր մակարդակը՝ խիստ վաղաժամ է ազատականացնել այնպիսի հարաբերություններն այդ ոլորտում, ինչպիսիք են՝ սակագների կարգավորումը, հայցերի կարգավորման գործընթացները, հատուցումների շուրջ ծագող իրավահարաբերությունները և այլն, որոնք սակայն դեռևս երկար ժամանակ որոշակի կարգավորման և վերահսկման կարիք ունեն: Ուստի անհրաժեշտ է այս իրավահարաբերությունների կարգավորման տարրերը դնել օրենսդրական հարթության վրա՝ սահմանելով ապահովագրական հայցերի ներկայացման, դրանց կարգավորման կարգն ու մեխանիզմները, ապահովագրական հայցերի կարգավորման ընթացակարգերում հատուցման եզրակացությունների տրման և հատուցումների վճարման պայմաններն ու առավելագույն ժամկետները, դրանց նախապայմանների շրջանակները, մերժման պայմաններն ու ընթացակարգերը և այլն:

Ինչպես գիտենք, հայաստանյան օրենքների գերակշիռ մասի հիմքում, այդ թվում՝ նաև ներկայումս գործող ապահովագրական նոր օրենսդրության («Ապահովագրության և ապահովագրական գործունեության» մասին ՀՀ օրենքը և դրանից բխող ենթօրենսդրական ակտերը) հիմքում, ընկած են նույն օրենքների եվրոպական տարբերակները, և այս պարագայում նշված օրենքները չեն կարող համապարփակ կարգավորիչ դեր ունենալ, քանզի յուրաքանչյուր երկրում առկա են մի շարք առանձնահատկություններ, որոնք օբյեկտիվորեն այլ են մեկ ուրիշ երկրում: Այս օրենքը, մշակված լինելով հիմնավորապես եվրոպական դիրեկտիվների հենքի վրա և մի մեծ քայլ առաջ լինելով ապահովագրության պետական կարգավորման ոլորտում, այնուամենայնիվ, ամբողջությամբ չի ծածկում ապահովագրական շուկայում առկա խնդիրների բազմազանությունը և չի ապահովում զարգացման ցանկալի պոտենցիալ, քանի որ նոր օրենքով ամրագրված նորամուծություններն ու առանձնահատկությունները պետք է ներդաշնակորեն ամրապնդվեն նաև հարակից այլ օրենսդրությամբ, մասնավորապես քաղաքացիական, հարկային և այլն, ինչը դեռևս տեղի չի ունեցել: Առկա են հակասական նորմեր ապահովագրական օրենսդրության և այլ օրենքների միջև, հաճախ եվրոդիրեկտիվներից ներմուծված նորմերը չեն բխում հայաստանյան ապահովագրական շուկայի օբյեկտիվ իրականությունից և պահանջումքներից, բաց են օրենսդրական կարգավորման ենթակա մի շարք ասպեկտներ և այլն:

Ակնհայտ է, որ ապահովագրական շուկայի զարգացման առաջնային խնդիրներից մեկը օտարերկրյա ներդրումների և այդպիսով նաև միջազգային առաջավոր ապահովագրական մշակույթի, փորձի և ծառայությունների ներգրավումն է, և այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով սահմանել որոշակի արտոնություններ օտարերկրյա ինստիտուցիոնալ ներդրողների համար, որոնք կարող են դրսևորվել հարկային, վերահսկողական և այլ արտոնությունների ձևով՝ տեղական շուկան նրանց համար առավել գրավիչ դարձնելու նպատակով: Վերը նշվածն ավելի արդիական է դառնում, եթե հաշվի առնենք մեր շուկայի՝ խոշոր ապահովագրական ընկերությունների համար գրավչության ցածր մակարդակը՝ կապված պոտենցիալ շուկայի փոքր ծավալների հետ, իսկ վերջին շրջանում Հայաստան մուտք գործած խոշոր ապահովագրական ընկերությունների, մասնավորապես Ռ-ետո, Ռ-ուգոսստրաֆի, հետաքրքրությունը դեպի մեր շուկան թերևս պայմանավորված էր ոչ միայն բիզնեսի զարգացման հեռանկարներով, այլև նշված ընկերությունների սեփական

նատերերի հայկական արմատներով: Այսպիսով, միջազգային խոշոր ապահովագրական ընկերությունների մուտքը հայաստանյան ապահովագրական շուկա լուրջ խթան կարող է հանդիսանալ այս ոլորտի արագ զարգացման համար, քանզի այս ընկերությունների մուտքի հետ մեկտեղ, ինքնըստինքյան, լուծում կստանան մեր շուկայի համար մի շարք օրակարգային հարցեր, ինչպիսիք են՝ արտասահմանյան լավագույն փորձի և ապահովագրական բարձր մշակույթի աստիճանական ներդրումը և մատուցվող ապահովագրական ծառայությունների տեսականու ընդլայնումը:

Ապահովագրական շուկայի զարգացման ճանապարհին կարևոր խոչընդոտներ են տեղական ընկերությունների գործունեության ռիսկայնության զսպման անկատար գործիքները, մասնավորապես նոր գործող օրենսդրությամբ չեն կարգավորվում այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են՝ ընկերությունների կողմից օտարերկրյա վերասապահովագրողների հետ իրավահարաբերություններում և փոխադարձ հաշվարկներում ծագող *արտարժույթային ռիսկերը*: Հայաստանյան ապահովագրական ընկերություններն իրենց գործունեության ընթացքում առնչվում են այնպիսի ռիսկերի հետ, որոնք կապված են վերասապահովագրության բնագավառում ոչ ռեզիդենտների հետ մեծածավալ արտարժույթային գործարքների իրականացման, ինչպես նաև ապահովագրական պահուստներից գոյացած միջոցներն արտարժույթով բանկային դեպոզիտներում տեղաբաշխելու հետ: Մասնավորապես, առաջին դեպքում խոսքը վերաբերում է վերասապահովագրավճարների և վերասապահովագրողներից ստացված ապահովագրական հատուցումների գումարները ՀՀ դրամից արտարժույթի և հակառակը փոխարկելու գործառնություններին, երբ կախված այդ գումարների ծավալներից և փոխարժեքի տատանումներից, առաջ է գալիս զգալի կորուստներ կրելու հավանականություն: Այսպես, 2011 թվականի առաջին կեսի արդյունքներով շուկայի վերլուծությունները ցույց են տալիս, որ առանձին ընկերությունների, կախված դրանց գործունեության ուղղվածությունից և քաղաքականությունից, արտարժույթով ակտիվներն ու պարտավորությունները կազմում են շուրջ 30-50%-ը, իսկ ամբողջ շուկայի մասշտաբով, համաձայն ՀՀ ԿԲ տվյալների, 2011թ. հուլիսին ակտիվների 31%-ը արտահայտված էր արտարժույթով¹: Այս ցուցանիշները բավականին ռիսկային և զգայունակ են դարձնում տեղական ապահովագրական ընկերություններն արտարժույթի շուկայում տեղի ունեցող փոխարժեքային տատանումների նկատմամբ և առանձնապես անհանգստացնող են առանձին ընկերությունների պարագայում, որոնք, լինելով շուկայի առավել խոշոր ընկերություններ, անկայունության պարագայում կարող են էապես վտանգել ամբողջ ապահովագրական շուկան: Այս խնդրի կարգավորումը հնարավոր է կարգավորող մարմնի կողմից, ի թիվս այլ տնտեսական նորմատիվների, ևս մեկի՝ արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանման ճանապարհով: Մեկ այլ ճանապարհ է ընկերություններին երկարաժամկետ արտարժույթային ակտիվների և պարտավորությունների պահպանումն արգելելը, որն ավելի ինտերվենտիվ միջոց է և նվազ արդարացված:

Անդրադառնալով բուն ապահովագրական շուկայի հիմնախնդիրներին՝ սկսենք առավել գորբալ խնդրից, այն է՝ *ապահովագրական համակարգի նկատմամբ հասարակության վստահության ցածր մակարդակը*: Համակարգի նկատմամբ հասարակության անվստահության ապացույց է հավաքագրվող ապավճարների աննշան ծավալը, որն ակնհայտ է դառնում վերը նշված վիճակագրական տվյալներից: Ուստի, ապահովագրական շուկայի դինամիկ զարգացմանն ու կայունությանն ուղղված քայլերից բացի, առաջնային խնդիր պետք է դառնա երկրում ապահովագրական համակարգի նկատմամբ բնակչության վստահության բարձրացմանն ու առկա լուրջ ապահովագրական պոտենցիալի ներգրավմանն ուղղված հայեցակարգին համապատասխան անհրաժեշտ միջոցառումների իրականացումը: Արձանագրենք նաև, որ պետության կողմից այս ուղղությամբ արդեն իրականացվում են համապատասխան քայլեր, մասնավորապես կարելի է նշել երկրում ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման պատասխանատվությունից բխող պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) ներդրումը, որը ոչ միայն դրականորեն է ազդում երկրի ապահովագրական շուկայի կայացման վրա, այլև աստիճանաբար կփոխի մարդկանց վերաբերմունքը դեպի ապահովագրության գաղափարը՝

¹ ՀՀ Կենտրոնական բանկի ամսական տեղեկագիր (ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ):

կապված հասարակության լայն շրջաններում ապահովագրման դրական կողմերը գիտակցելու և արդեն ապահովագրական պատահարների առաջացման և համապատասխան փոխհատուցման ստացման դեպքում վստահության մակարդակի բարձրացման հետ: Անհրաժեշտ է նաև խստացնել վերահսկողությունը ինչպես ապահովագրական հայցերի կարգավորման, այնպես էլ հայցերի մերժման դեպքերի նկատմամբ: Այս խնդրի կարգավորման գործում մեծ դերակատարում կարող է ունենալ կայացած ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտը:

Ապահովագրական համակարգի նկատմամբ վստահության ցածր մակարդակի հետ անմիջականորեն կապված մեկ այլ խնդիր է հասարակության *թերտեղեկացվածությունը*, որը նույնպես իր գործոնային բացասական ազդեցությունն է թողնում շուկայի զարգացման տեմպերի վրա: Այստեղ ևս առկա է կարգավորող մարմնի կողմից որոշակի միջամտության և ներգործության միջոցների գործադրման անհրաժեշտություն:

Այսօր երկրում ստեղծվել է այնպիսի մի իրավիճակ, երբ մարդիկ ապահովագրություն տերմինը լսելիս հասկանում են ԱՊՊԱ և հակառակը: Սա նշանակում է, որ պետական համապատասխան մարմինները պետք է լուրջ քարոզչական միջոցառումներ ձեռնարկեն, որի հիմնական նպատակը պետք է հանդիսանան ազգաբնակչության տեղեկացվածության բարձրացումը, երկրում առկա լուրջ ապահովագրական պոտենցիալի իրացումը և կամավոր ապահովագրության ծավալների բարձրացումը, որն էլ կլինի նշված միջոցառումների վերջնական նպատակը: Այսօր մեր ազգաբնակչության մեջ թերևս իշխում է այն կարծիքը, որ ապահովագրությանը տրված գումարները ֆինանսական միջոցների անտեղի վատնում են, և դեռևս մի տևական ժամանակ կպահանջվի, մինչև հնարավոր լինի համապատասխան պետական քաղաքականության շնորհիվ փոփոխություն կատարել մարդկանց մեջ ձևավորված այս կարծրատիպերում: Ինչ վերաբերում է հասարակության տեղեկացվածության բարձրացմանը, ապա այստեղ կարգավորող մարմնի ուղղակի միջամտությամբ և աջակցությամբ անհրաժեշտ են այնպիսի միջոցառումների ծրագրի մշակում և իրագործում, որի արդյունքում ապահովագրական ծառայությունները կներթափանցեն տնտեսության ամենատարբեր ոլորտները: Այս ուղղությամբ պետության հաջորդ քայլերը պետք է ուղղվեն տարբեր ռիսկային ոլորտներում ապահովագրության որոշակի մասնակի պարտադիր պահանջների սահմանմանը:

Մեր ապահովագրական շուկային բնորոշ և դրա զարգացումը խոչընդոտող մեկ այլ հանգամանք է հայաստանյան ապահովագրական ընկերությունների ստանձնած ապահովագրական ռիսկերի հետագա *վերասպահովագրման չափազանց բարձր մակարդակը*: Բավական է նշել, որ վերասպահովագրողներին փոխանցված ապահովագրավճարների և դրանց համախառն մեծության հարաբերակցությունը վերջին չորս հաշվետու տարիներին տատանվել է 50%-ի շրջակայքում (2010թ.՝ 48.6%)¹: Այսինքն՝ դե ֆակտո տեղական ընկերությունները վերածվում են միջնորդ կազմակերպությունների բուն ապահովագրվողի և միջազգային խոշոր ընկերությունների միջև, որոնք շահույթ են ձևավորում գուտ ապահովագրական սակագների տարբերության շնորհիվ: Այս ամենը հանգեցնում է ոչ միայն ապահովագրության տնտեսական էության խաթարմանը, այլ նաև նպաստում է Հայաստանից կապիտալի խոշոր ծավալի արտահոսքին դեպի զարգացած երկրներ, նվազեցնում է տեղական ընկերությունների շահութաբերության մակարդակը, հետևաբար նաև հարկման բազան և հարկային մուտքերը դեպի պետական բյուջե: Հաջորդ կարևորագույն խնդիրը կապված վերասպահովագրության խոշոր ծավալների հետ, տեղական ապահովագրական շուկայի կախվածությունն է օտարերկրյա ապահովագրական ընկերություններից, ուստի և անմիջականորեն այլ պետություններից: Այսինքն՝ բացի նշված խնդրի ֆինանսական կողմից, վերասպահովագրման խոշոր ծավալները հակասում են երկրի պետական շահին: Ապահովագրական ռիսկերի կենտրոնացվածությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայաստանյան ընկերություններն իրենց ռիսկերը վերասպահովագրելիս նախընտրում են աշխատել հիմնականում մի քանի աշխարհահռչակ ընկերությունների հետ, իսկ սա իր հերթին հղի է լուրջ բացասական հետևանքներով այս ընկերություններից ցանկացածի խնդիրներ ունենալու պարագայում, քանի որ հայաստանյան դեռևս զարգացող ապահովագրական շուկան հազիվ

¹ ՀՀ Կենտրոնական բանկի տարեկան տեղեկագիր (ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ):

թե կարողանա ուշքի գալ հանգամանքների նման դասավորվածության դեպքում, ուստի անհրաժեշտություն է առաջանում ռիսկերի դիվերսիֆիկացիայի, որին կարելի է հասնել միայն վերաապահովագրական ընկերությունների ցանկն ընդլայնելու ճանապարհով: Որպես կանոն, ընկերությունների կողմից վերաապահովագրվում է իրենց ստանձնած ապահովագրական ռիսկերի այն մասը, որն իրենք ի վիճակի չեն կառավարել երկու հիմնական պատճառներով՝ կապիտալացման ցածր մակարդակ և ռիսկերի սեփական գնահատման և կառավարման ունակությունների բացակայություն: Վերջինը հիմնավորապես կապված է սակագների հաշվարկման սեփական ռեսուրսների (ակտուարների) և կիրառման ենթակա վստահելի գնահատման մեթոդների բացակայության հետ: Այս երկու հարցերի շրջանցման նպատակով ընկերություններն իրենց ռիսկերը փոխանցում են վերաապահովագրության՝ ստանալով դրանց դիմաց ընդամենը միջնորդավճարներ: Ուստի այս պատճառների վերացման ուղղությամբ անհրաժեշտ է նպատակային միջոցառումների իրականացում, ապահովագրական ընկերությունների կապիտալացման պահանջի խստացում, որը թույլ կտա մեծացնել ստանձնած ապահովագրական ռիսկերում սեփական պահումների մասնաբաժինը, և ակտուարական ինստիտուտի ձևավորում ու որակյալ մասնագետների պատրաստում, որոնք ի զորու կլինեն ինքնուրույն գնահատելու ներկայացվող ապահովագրական ռիսկերը, հաշվարկելու սակագները՝ ձեռնպահ մնալով վերաապահովագրողների կողմից ստացվող սակագների կիրառումից:

Ելնելով վերն ասվածից՝ կարելի է արձանագրել, որ այսօր հայաստանյան ապահովագրական շուկայի կայացումն ու զարգացումը խոչընդոտող մեկ այլ կարևոր խնդիր է երկրում բարձրորակ *ակտուարների պակասը*, եթե ոչ բացակայությունը: Չարգացած ապահովագրական համակարգ ունեցող երկրներում բնականաբար յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն ինքն է շահագրգռված հիմնավորված սակագնային քաղաքականություն վարելու խնդրով, քանզի սխալ ընտրված սակագինը կարող է բերել ոչ միայն տվյալ ընկերության մրցակցային դիրքերի թուլացմանը, այլև ապահովագրական պատահարների աճի դեպքում վնասաբեր գործունեության, իսկ առանձին դեպքերում նույնիսկ սնանկության: Այսօր մեր շուկայում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ապահովագրական ընկերությունները սահմանում են իրենց սակագները՝ ելնելով վերաապահովագրման արդեն իրենց ներկայացված սակագնից, բնականաբար՝ այս պարագայում տեղական ընկերությունների կողմից իրենց ակտուարների վերապատրաստման ուղղությամբ ֆինանսական միջոցների հատկացման մասին խոսելն անգամ ավելորդ է, քանի որ չկա դրա անհրաժեշտությունը, ուստի ապահովագրական շուկայի զարգացման այս փուլում անհրաժեշտ է պետական կարգավորիչի գործուն մասնակցություն: Ըստ էության, այս ուղղությամբ արդեն իսկ կարևոր քայլ էր նոր ապահովագրական օրենսդրությամբ ապահովագրական ընկերություններում ակտուարի՝ որպես պատասխանատու պաշտոնատար անձի, պարտադիր առկայության պահանջը: Այդպիսով, կմեծանա պահանջարկն այս մասնագետների նկատմամբ, որոնք էլ կկազմեն ոլորտի ինքնակեցության հենասյունը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է մեծածավալ պետական և հասարակական ռեսուրսների կենտրոնացում այս խնդրի լուծման վրա՝ անհրաժեշտ մասնագիտական պոտենցիալ ունեցող անձանց ընտրության և վերապատրաստման բարդ ու ծախսատար գործընթացներն իրականացնելու նպատակով:

Ապահովագրական շուկայի զարգացման համար խոչընդոտ է նաև այն հանգամանքը, որ հայաստանյան ապահովագրական շուկայում ներկայացված *ապահովագրական ծառայությունների ցանկը բավականին սահմանափակ* է, իսկ եթե ուսումնասիրելու լինենք առաջարկվող տեսակների կառուցվածքն ու կազմը, կնկատենք, որ դրանք առավել ցածր ռիսկային տեսակներն են, այսինքն՝ այն ուղղություններն են, որտեղ վնասաբերությունը խիստ ցածր է, իսկ այն ոլորտները, որոնք առավել ռիսկային են և ունեն ապահովագրության կարիք (օրինակ՝ գյուղատնտեսություն, շինարարական աշխատանքներ, մասնագիտական պատասխանատվություն, ֆինանսական ռիսկեր և այլն), դուրս են մատուցվող ծառայությունների շրջանակից: Այս երևույթն ուղղակիորեն խոչընդոտում է շուկայի զարգացումը՝ կապված առկա ապահովագրական պոտենցիալի գրավման հետ: Այս առումով կարելի է մեկ անգամ ևս կարևորել հայաստանյան ապահովագրական շուկա օտարերկրյա ընկերությունների մուտքը,

քանի որ վերջիններս իրենց հետ կրերեն և տեղական շուկայում կներկայացնեն ապահովագրության նորանոր տեսակներ:

Ամփոփելով մեր կողմից սույն հոդվածում ներկայացված հիմնախնդիրները՝ կարող ենք եզրակացնել, որ եթե 1991-1995թթ. ապահովագրությունը Հայաստանում գրեթե պահանջարկ չուներ, ապա 1995-2011թթ. բոլոր նախադրյալները կան՝ պնդելու, որ ապահովագրությունը մեր երկրում աստիճանաբար դառնում է շուկայական հարաբերությունների մի շատ կարևոր տարր առանց որի, թերևս, դժվար է պատկերացնել քիչ թե շատ զարգացած երկիր: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ վերջին տարիներին՝ սկսած 1999 թվականից, տարեկան արդյունքներով համակարգի գործունեությունը եղել է շահութաբեր, իսկ 2010թ. տեղական մի շարք ընկերությունների վնասը պայմանավորված է գուտ հաշվապահական ստանդարտների պահանջներով՝ կապված այն հանգամանքի հետ, որ 2010թ. գրեթե բոլոր ապահովագրական ընկերությունները խոշոր ներդրումներ իրականացրին երկրում ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրման իրավունք ստանալու նպատակով, որից սպասվող եկամուտը կհաշվեգրվի միայն 2011թ.:

Չնայած վերը նշված դրական միտումներին, դեռևս վաղ է ասելու համար, որ մեր ապահովագրական շուկան կայացել է, ընդ որում ՀՀ ապահովագրական շուկան կսկսի արդյունավետ գործել, երբ այդ շուկայի գործունեության հիմքում կլինի նրա պահանջներն ամբողջությամբ բավարարող և լավ մշակված օրենսդրական բազա, հիմնովին լուծված կլինեն վերը թվարկված բոլոր հիմնախնդիրները, և ամենակարևորը՝ ապահովագրության պարտադիր տեսակների հետ մեկտեղ կսկսի մասսայականություն վայելել կամավոր ապահովագրությունը՝ կապված մարդկանց մտածելակերպի փոփոխության հետ, քանզի ապահովագրական ինստիտուտն ապահովում է հասարակության անվտանգությունը, կայուն զարգացումը, հատկացնում է սոցիալական երաշխիքներ ֆինանսական պաշտպանության մեխանիզմների կիրառման ճանապարհով:

ԳԵՎՈՐԳ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ


*ՆԳԱԱ Մ. Լոթսևսկայնի անվան
փնտրեսազիտության ինստիտուտի ասպիրանտ*

ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 1998-2010 ԹԹ. ՀԱՄԱՐ

1998-2010թթ. ընթացքում ՀՀ տնտեսության մեջ ներդրվել է ավելի քան 6.2 մլրդ ԱՄՆ դոլար: Առևտրային բանկերի կողմից ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում վարկերի տեսքով տրամադրվել է 2000-2010թթ. ընթացքում 2.24 մլրդ ԱՄՆ դոլար: Արդյունքում ՀՆԱ-ն աճել է 2000-2010թթ. 1.9 մլրդ ԱՄՆ դոլարից մինչև 9.3 մլրդ ԱՄՆ դոլար և սա այն պարագայում, երբ գնաճը նշված ժամանակահատվածում կազմել է 52.9%: Այլ կերպ ասած՝ 2000-2010թթ. ՀՀ տնտեսության մեջ արտերկրից և առևտրային բանկերի կողմից ներդրվել է 8.4 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ՀՆԱ-ն աճել է ընդամենը 7.4 մլրդ ԱՄՆ դոլարով, իսկ եթե այս 7.4 մլրդ ԱՄՆ դոլարը ճշգրտենք գնաճի տեմպերով, կստացվի, որ 2000-2010թթ. ՀՆԱ-ն աճել է իրականում 3.4 մլրդ ԱՄՆ դոլարով¹: Ստացվում է, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ տնտեսության մեջ ներդրված յուրաքանչյուր 1 ԱՄՆ դոլարը ստեղծել է ընդամենը 0.4 ԱՄՆ դոլարի ՀՆԱ, ինչից հետևում է, որ ներդրումները եղել են խիստ վնասաբեր, մասնավորապես -60% և չեն ստեղծել ոչ մի ավելացված արժեք: Ասվածից հետևում է, որ ՀՀ-ում 2000-2010թթ. ընթացքում տարվել է սխալ ներդրումային քաղաքականություն:

¹ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:

Ներդրումների, ՀՆԱ-ի աճի տեմպերը և ՍԳԻ-ն 1998-2010թթ. համար, %¹



Գծապատկեր 1-ից երևում է, որ ներդրումների աճի դինամիկան ամենաանկայունն է համեմատած ՍԳԻ-ի և ՀՆԱ-ի աճի տեմպերի հետ: Նման ցուցանիշը վկայում է ՀՀ տնտեսության անկայունության մասին և նախադրյալներ ստեղծում՝ մտահոգվելու համար ՀՀ տնտեսության ներդրումային գրավչության առումով:

1998-2003թթ. ՀՀ տնտեսության մեջ ներդրվել է 1.15 մլրդ ԱՄՆ դոլար, որից 853 մլն ԱՄՆ դոլարը կազմել են ուղղակի ներդրումները: Այլ կերպ ասած՝ դիտարկվող ժամանակահատվածում ուղղակի ներդրումները կազմել են համախառն ներդրումների 73.89%-ը²:

Պետք է նշել, որ դիտարկվող վեց տարիների ընթացքում տնտեսության մեջ ներդրվել է 1.15 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ առևտրային բանկերի կողմից տնտեսության տարբեր ճյուղերի տրամադրված վարկերը կազմել են 31.3 մլն ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում գնաճը կազմել է 17.4%, իսկ ՀՆԱ-ն 2003թ. 1.9 մլրդ ԱՄՆ դոլարից դարձել է 2.8 մլրդ ԱՄՆ դոլար: Այսինքն՝ ստացվում է, որ ՀՆԱ-ն աճել է ընդամենը 0.9 մլրդ ԱՄՆ դոլարով, եթե սա ճշգրտենք գնաճի տեմպերով, կստանանք 0.74 մլրդ ԱՄՆ դոլար: Հաշվարկներն այս ամենից հետո ցույց են տալիս, որ 1998-2003թթ. ընթացքում ՀՀ տնտեսության մեջ ներդրված յուրաքանչյուր 1 ԱՄՆ դոլարը ստեղծել է 0.64 ԱՄՆ դոլար: Այլ կերպ ասած՝ կորուստը կազմել է 36%, ինչից հետևում է, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում տեղի ունեցած ներդրումները չեն ստեղծել ավելացված արժեք³:

Այժմ դիտարկենք այն ոլորտները, որտեղ հիմնականում իրականացվել են այդ ներդրումները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում ամենախոշոր ներդրումներն իրականացվել են էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրության մեջ, կապի ոլորտում և սննդամթերքի (ներառյալ խմիչքների արտադրությունը) արտադրության մեջ: 2001-2003թթ. ավելացել է ներդրումների ծավալը լեռնահանքային արդյունաբերության, մետաղագործական արտադրության և շինարարության ոլորտներում: Հարկ է նկատել նաև, որ նշված ժամանակահատվածում արձանագրվել է էական տեղաշարժ օդային տրանսպորտում և հյուրանոցային ու ռեստորանային բիզնեսում տեղի ունեցող ներդրումների առումով հատկապես 2002-2003թթ. ընթացքում: Նշենք նաև, որ զգալի ներդրումներ մեծաժախ առևտրի ոլորտում պահպանվել են մինչև 2001թ., դրանից հետո այդ ոլորտի ներդրումները զգալիորեն նվազել են:

Նշենք նաև, որ մետաղագործական արդյունաբերության մեջ տվյալ ժամանակահատվածում հիմնական ներդրողը եղել է Ռուսաստանը: 2003թ. շինարարության մեջ հիմնական ներդրումներն իրականացվել են Բահամյան կղզիներից, ինչն օֆշորային գոտի է, և հստակ չէ, թե որ երկիրն է կանգնած նման ներդրումների հետևում: Մեծաժախ առևտրի ոլորտում մեծ

¹ Գծապատկերը կառուցված է ըստ www.armstat.am կայքի տվյալների:
² Հաշվարկներն իրականացվել են ըստ www.armstat.am կայքի տվյալների:
³ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:

ներդրումներ է իրականացրել Կիպրոսը, օդային տրանսպորտում՝ Արգենտինան, հյուրանոցային և ռեստորանային բիզնեսում՝ ԱՄՆ-ը, կրթական և հետազոտական ծրագրերում՝ ԱՄՆ-ը, հանքագործական արդյունաբերության մեջ՝ Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան և Գերմանիան:

2004-2008թթ. ՀՀ տնտեսության մեջ ներդրվել է 3.43 մլրդ ԱՄՆ դոլար, որից 2.48 մլրդ ԱՄՆ դոլարը կազմել են ուղղակի ներդրումները: Այլ կերպ ասած՝ դիտարկվող ժամանակահատվածում ուղղակի ներդրումները կազմել են համախառն ներդրումների 72.41%-ը¹:

2004-2008թթ. ՀՀ տնտեսության մեջ ամենախոշոր ներդրումներ իրականացրած պետություններն են՝ Ռուսաստանը, Գերմանիան, Արգենտինան, ԱՄՆ-ը և Ֆրանսիան: Ռուսաստանը դիտարկվող ժամանակահատվածում ներդրել է 1.67 մլրդ ԱՄՆ դոլար, Գերմանիան՝ 262.8 մլն ԱՄՆ դոլար, Արգենտինան՝ 209.6 մլն ԱՄՆ դոլար, ԱՄՆ-ը՝ 87.6 մլն ԱՄՆ դոլար, Ֆրանսիան՝ 122.9 մլն ԱՄՆ դոլար:

Պետք է նշել, որ դիտարկվող հինգ տարիների ընթացքում տնտեսության մեջ ներդրվել է 3.43 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ առևտրային բանկերի կողմից տնտեսության տարբեր ճյուղերի տրամադրված վարկերը կազմել են 1.8 մլրդ ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում գնաճը կազմել է 23.9%, իսկ 2008թ. ՀՆԱ-ն 3.57 մլրդ ԱՄՆ դոլարից դարձել է 11.9 մլրդ ԱՄՆ դոլար: Այսինքն՝ ստացվում է, որ ՀՆԱ-ն աճել է ընդամենը 8.35 մլրդ ԱՄՆ դոլարով, եթե սա ճշգրտենք գնաճի տեմպերով, կստանանք 6.35 մլրդ ԱՄՆ դոլար: Հաշվարկներն այս ամենից հետո ցույց են տալիս, որ 2004-2008թթ. ընթացքում ՀՀ տնտեսության մեջ ներդրված յուրաքանչյուր 1 ԱՄՆ դոլարը ստեղծել է 1.21 ԱՄՆ դոլար: Այլ կերպ ասած՝ շահութաբերությունը կազմել է 21%, ինչից հետևում է, որ դիտարկվող ժամանակահատվածը կարելի է բնորոշել որպես ներդրումային միջավայրի բարենպաստ ժամանակահատված²:

Այժմ դիտարկենք այն ոլորտները, որտեղ հիմնականում իրականացվել են այդ ներդրումները՝ պարզելու համար, թե որ ոլորտներն են հետաքրքրություն ներկայացրել ներդրողների համար:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ 2004-2008թթ. ընթացքում ամենախոշոր ներդրումները կատարվել են էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրության, հանքագործական արդյունաբերության, կապի, օդային տրանսպորտի, մետաղագործական և սննդի արտադրության ոլորտներում: 2007-2008թթ. գրանցվել է ներդրումների աճ անշարժ գույքի հետ կապված գործառնությունների ոլորտում, որտեղ հիմնական ներդրողը Ռուսաստանն է: Հատկանշական է այն փաստը, որ ամենախոշոր ներդրումները ՀՀ-ում չեն կատարվում վերամշակող արդյունաբերության ոլորտում, և կատարված ներդրումների մեծ մասը գալիս է Ռուսաստանից, իսկ մնացած ներդրումները տարբեր օֆշորային գոտիներից եկած ներդրումներ են: Մասնավորապես էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրության ոլորտում միակ ներդրողը Ռուսաստանն է, սննդամթերքի արտադրության ոլորտում ներդրողներն են Լյուքսեմբուրգն ու Ֆրանսիան, մետաղագործական արտադրության ոլորտում՝ Ռուսաստանն ու Լիխտենշտեյնը, կապի ոլորտում՝ Լիբանանը, Ռուսաստանը և Ֆրանսիան, օդային տրանսպորտի ոլորտում՝ Արգենտինան, շինարարության ոլորտում՝ Ռուսաստանը, Կիպրոսը և Բահամյան կղզիները, իսկ հանքարդյունաբերության ոլորտում՝ Գերմանիան և Կիպրոսը: Հարկ է նշել, որ ԱՄՆ-ի կողմից իրականացված ներդրումներն ավելի շատ ուղղված են ծրագրային ապահովման, կրթական և հետազոտական ծրագրերի ֆինանսավորմանը:

2009-2010թթ. ՀՀ տնտեսության մեջ ներդրվել է 1.6 մլրդ ԱՄՆ դոլար, որից 1.2 մլրդ ԱՄՆ դոլարը կազմել են ուղղակի ներդրումները: Այլ կերպ ասած՝ դիտարկվող ժամանակահատվածում ուղղակի ներդրումները կազմել են համախառն ներդրումների 74.2%-ը: Պետք է նշել նաև, որ 2002-2008թթ. գրանցված ներդրումների աճի ֆոնի վրա 2009թ. ներդրումները նվազել են 2008թ. գրանցված ամենամեծ ներդրումային ներհոսքի հետ համեմատած 25.6%-ով, իսկ 2010թ. ներդրումները՝ 44.1%-ով, ինչը վկայում է այն մասին, որ հետճգնաժամային պայմաններում ՀՀ տնտեսության նկատմամբ ներդրողների հետաքրքրության պակաս է գրանցվել,


¹ Հաշվարկներն իրականացվել են ըստ www.armstat.am կայքի տվյալների:

² Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:

ինչն էլ հետևանքն է տարբեր միջազգային կառույցների բացասական գնահատականի տնտեսության կառուցվածքի, որակի և մրցունակության առումով:

Գծապատկեր 2

2008-2010թթ. ընթացքում ՀՀ տնտեսության մեջ ներդրված ուղղակի ներդրումների ծավալները, հազ. ԱՄՆ դոլար¹



Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, 2008-2010թթ. ընթացքում ուղղակի ներդրումների ծավալները կտրուկ սկսել են նվազել՝ 1 մլրդ ԱՄՆ դոլարից իջնելով 482.9 մլն ԱՄՆ դոլարի:

Այժմ վերլուծենք 2009-2010թթ. տեղի ունեցած ներդրումներն ըստ ներդրումներ իրականացնող երկրների:

Աղյուսակ 1

2009-2010թթ. ՀՀ տնտեսության մեջ ամենամեծ ներդրումներ իրականացրած պետություններն ըստ աճման կարգի²


2009	2010
Ռուսաստանի Դաշնություն	Ռուսաստանի Դաշնություն
Ֆրանսիա	Ֆրանսիա
Նիդեռլանդներ	Նիդեռլանդներ
Արգենտինա	Գերմանիա
Իտալիա	Արգենտինա

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, 2009-2010թթ. ՀՀ տնտեսության մեջ ամենախոշոր ներդրումներ իրականացրած պետություններն են Ռուսաստանը, Արգենտինան, Ֆրանսիան և Նիդեռլանդները: Ռուսաստանը դիտարկվող ժամանակահատվածում ներդրել է 773.1 մլն ԱՄՆ դոլար, Արգենտինան՝ 83.3 մլն ԱՄՆ դոլար, Նիդեռլանդները՝ 135.4 մլն ԱՄՆ դոլար, Ֆրանսիան՝ 344.2 մլն ԱՄՆ դոլար:

¹ Գծապատկերը կառուցված է ըստ www.armstat.am կայքի տվյալների:

² Գծապատկերը կառուցված է ըստ www.armstat.am կայքի տվյալների:

2009-2010թթ. առաջին հինգ խոշոր ներդրումներ կատարած պետությունների կողմից իրականացված ներդրումների ծավալները¹



Գծապատկեր 3-ում պատկերված է 2009-2010թթ. առաջին հինգ խոշոր ներդրումներ կատարած պետությունների կողմից իրականացված ներդրումների ծավալների փոփոխությունը, որը միջինը կազմել է տարեկան 472.3 մլն ԱՄՆ դոլար:

Պետք է նշել, որ դիտարկվող երկու տարիների ընթացքում տնտեսության մեջ ներդրվել է 1.6 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ առևտրային բանկերի կողմից տնտեսության տարբեր ճյուղերի տրամադրված վարկերը կազմել են 756.02 մլն ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում գնաճը կազմել է 11.6%, իսկ 2010թ. ՀՆԱ-ն 8.9 մլրդ ԱՄՆ դոլարից դարձել է 9.3 մլրդ ԱՄՆ դոլար: Այսինքն՝ ստացվում է, որ ՀՆԱ-ն աճել է ընդամենը 0.4 մլրդ ԱՄՆ դոլարով, եթե սա ճշգրտենք գնաճի տեմպերով, կստանանք 0.35 մլրդ ԱՄՆ դոլար: Հաշվարկներն այս ամենից հետո ցույց են տալիս, որ 2009-2010թթ. ընթացքում ՀՀ տնտեսության մեջ ներդրված յուրաքանչյուր 1 ԱՄՆ դոլարը ստեղծել է 0.15 ԱՄՆ դոլար: Այլ կերպ ասած՝ կորուստը կազմել է 85%, ինչից հետևում է, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում տեղի ունեցած ներդրումները չեն ստեղծել ոչ մի ավելացված արժեք²:

Այժմ դիտարկենք այն ոլորտները, որտեղ հիմնականում իրականացվել են այդ ներդրումները՝ պարզելու համար, թե որ ոլորտներն են հետաքրքրություն ներկայացրել ներդրողների համար:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ 2009-2010թթ. ընթացքում պահպանվել են նախկինում ստեղծված միտումները, այն է՝ ամենախոշոր ներդրումները կատարվել են էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրության, հանքագործական արդյունաբերության, կապի, օդային տրանսպորտի և սննդի արտադրության ոլորտներում: 2009-2010թթ. գրանցվել է ներդրումների կայուն աճ անշարժ գույքի հետ կապված գործառնությունների ոլորտում, որտեղ հիմնական ներդրողներն են Ռուսաստանը և Իտալիան: 2010թ. ներդրումների աճ է նկատվել էլեկտրական սարքավորումների արտադրության ոլորտում, որտեղ հիմնական ներդրող է հանդես եկել Գերմանիան: Էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրության ոլորտում ներդրողներն են Ռուսաստանն ու Նիդեռլանդները, սննդամթերքի արտադրության ոլորտում ներդրողներն են Լյուքսեմբուրգն ու Ֆրանսիան, կապի ոլորտում՝ Լիբանանը, Ռուսաստանը և Ֆրանսիան, օդային տրանսպորտի ոլորտում՝ Արգենտինան, իսկ հանքարդյունաբերության ոլորտում՝ Գերմանիան և Շվեյցարիան:

Ամփոփելով պետք է նշել, որ ՀՀ տնտեսության մեջ կատարված ներդրումները եղել են ոչ շահութաբեր, հիմնականում ուղղվել են հանքարդյունաբերական և բնական մենաշնորհների ոլորտներ, ինչն էլ հիմնավորում է այն փաստը, որ նման ներդրումները չէին կարող ստեղծել բավարար ավելացված արժեք և բարձրացնել երկրի մրցունակությունը: Հիմնական ներդրողը Ռուսաստանն է, որը չի կարող ներդնել նաև համապատասխան կորպորատիվ մշակույթ

¹ Նույն տեղում:

² Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:

սեփական երկրում դրա բացակայության պատճառով: Այլ կերպ ասած՝ վերն արված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ 1998-2010թթ. իրականացված ներդրումները չեն ունեցել հստակ կողմնորոշում, չեն ձևավորվել երկրի մրցունակության բարձրացման և զարգացման համատեքստում, այլ ունեցել են իրավիճակային բնույթ, ինչն էլ հիմք է տալիս առաջարկել վերաիմաստավորելու պետության կողմից տարվող ներդրումային քաղաքականությունը՝ նպատակ հետապնդելով այն դարձնել գերակա ոլորտների զարգացման լոկոմոտիվ:

ԳԵՎՈՐԳ ԲԱՂԿԱՍԱՐՅԱՆ

*ՆԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՎԱՅՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներդրումների ուսումնասիրությունը միշտ եղել է տնտեսագիտության ուշադրության կենտրոնում: Սա թերևս պայմանավորված է նրանով, որ ներդրումները վերաբերում են տնտեսական գործունեության ամենախոր հիմքերին՝ ընդհանուր առմամբ որոշելով տնտեսական աճի գործընթացը: Ներդրումային միջավայրի էությանն անդրադառնալուց առաջ ներկայացնենք ներդրումների բովանդակության նկարագիրը:

«Ներդրումներ» հասկացությունը լայնորեն կիրառվում է տնտեսագետների, ձեռնարկատերերի, քաղաքագետների կողմից, սակայն հաճախ այն մեկնաբանվում է խիստ նեղ, կամ ոչ ճիշտ: Ներդրումներ ասելով՝ հաճախ հասկացվում է դրա դրսևորումը միայն կապիտալի տեսքով, որի պարագայում դիտարկվում է ներդրումների միայն այն մասը, որն օգտագործվում է հիմնական ակտիվների ձեռքբերման կամ դրանց արդիականացման համար: Սակայն, եթե այդ ապրանքները ձեռք չեն բերվում հետագա վերավաճառքի համար, ապա դրանց վրա կատարված ծախսը չի կարելի համարել ներդրում, քանի որ հետագայում դրանք եկամուտ չեն ապահովում¹:

Երբեմն ներդրումների շարքն են դասում միայն երկարաժամկետ ներդրումները, չնայած դրանք կարող են կրել նաև կարճաժամկետ բնույթ, կամ ներդրումները դրամական տեսքով, չնայած դրանք կարող են իրականացվել բաժնետոմսերի գնման, շրջանառու միջոցների ձեռքբերման կամ գուղվիլի տեսքով²:

Մակրոտնտեսական մակարդակում ներդրումները պետք է դիտարկել որպես երկրի ազգային եկամտի բաղկացուցիչ մասերից մեկը, որը տնտեսական աճի համար կարևոր դեր է խաղում: Ներդրումներ ասելով՝ այս պարագայում հասկացվում է իրական և ֆինանսական ռեսուրսների (կապիտալի) ներդրումը նախագծերում, որոնց իրականացումը հանգեցնում է իրական հարստության հավելաճին նյութաիրային, դրամական, տեղեկատվական և այլ տեսքերով՝ ի հաշիվ հասարակությունում կապիտալի վերաբաշխման³:

Ներդրումային միջավայրի ձևավորման գործում հանդես են գալիս երկու հիմնական մասնակիցներ՝ պետությունը և մասնավոր հատվածը (մասնավոր ներդրողները): Եթե մասնավոր հատվածում տեղի ունեցող փոփոխությունները՝ սեփական միջոցների պակասը, հարկային համակարգի ոչ բավարար արդյունավետությունը (հարկային գործակցի ցածր մակարդակը), խնայողության նորմայի ցածր մակարդակը, արտադրության ծավալների անկումը, կաշկանդում են ներդրումային միջավայրի զարգացումը, ապա այս բոլոր «բացերը» կարող են անմիջապես լրացվել պետության կողմից վարվող հետևողական ֆինանսական, բանկային, ներդրումային, ֆիսկալ, հարկաբյուջետային, արտաքին առևտրին նպաստող քաղաքականության արդյունք-

¹ Шеремет В. В., "Управление инвестициями", Т. 1. М., 1998, с. 54.

² Шарп У. Ф., Александер Г.Д., "Инвестиции": пер. с англ., М., 1998, с. 79.

³ Бланк И. А., "Основы финансового менеджмента". Т.2. Киев, 1999, с. 512.

ներով: Տնտեսությունում «գոհաբերման գործակցի» ընտրությունը կարող է հանդիսանալ բացասական երևույթների առաջացման պատճառ: Օրինակ՝ հարկային բեռի ավելացումը մի կողմից նպաստում է հարկային եկամուտների աճին, իսկ մյուս կողմից մեծացնում է վնասով աշխատող կազմակերպությունների քանակը, ինչն էլ բացասաբար է անդրադառնում ներդրումային միջավայրի վրա մասնավոր ներդրողների (տեղական և օտարերկրյա) տեսանկյունից: Իրականությունն այն է, որ վնասով սկսում են աշխատել կազմակերպությունների կեսից ավելին, որը նշանակում է «ներուժային ներդրումներ»-ի կորուստ: Պետությունը հանդես է գալիս որպես կարգավորող սուբյեկտ և հարկային արտոնությունների տրամադրման միջոցով մասնակիորեն լուծում է կապիտալ ներդրումների խնդիրը: Այնուամենայնիվ, հարկային բեռի ավելացումը նպաստում է պետական խնայողությունների աճին և միայն մեկ բացառիկ դեպքում կարող է դրական ազդեցություն ունենալ ամբողջությամբ վերցրած տնտեսության վրա. ներքին ներդրումների տեսանկյունից պետությունը պետք է հանդես գա ակտիվ ներդրողի դերում:

Ներդրումային միջավայրը սոցիալական, տնտեսական, կազմակերպական, իրավական, քաղաքական, մշակութային նախադրյալների հանրագումար է, որը կանխորոշում է այս կամ այն տնտեսական համակարգում (երկրի, տարածաշրջանի տնտեսության, կազմակերպության) ներդրումների կատարման գրավչությունը և նպատակահարմարությունը¹: «Ներդրումային միջավայր» հասկացությունն արտահայտում է այս կամ այն երկրում (տարածաշրջանում, ճյուղում) ձևավորված իրավիճակի բարենպաստ լինելու աստիճանն այն ներդրումների համեմատությամբ, որոնք կարող են կատարվել տվյալ երկրում (տարածաշրջանում, ճյուղում)²: Ներդրումային միջավայրի գնահատականը հիմնվում է այն գործոնների վերլուծության վրա, որոնք բնորոշում են այդ միջավայրը և նպաստում տնտեսական աճին: Որպես կանոն, օգտագործվում են երկրի ներդրումային միջավայրի ելքային բնութագրիչները (կապիտալի ներհոսքը և արտահոսքը, սղաճի և տոկոսադրույքի մակարդակը, ՀՆԱ-ում խնայողությունների բաժինը), ինչպես նաև մուտքային բնութագրիչները, որոնք էլ որոշում են ելքային բնութագրիչների նշանակությունը և արտահայտում ներդրումների յուրացման գծով երկրի ներուժն ու դրանց իրականացման ռիսկը:

Ներդրումային միջավայրի վերլուծության նոր հնարավորություններ է տալիս ժամանակակից տնտեսագիտական մտքի առաջատար ուղղություններից մեկը՝ ինստիտուցիոնալիզմը: Կարևոր է ինստիտուցիոնալ համակարգերի բնութագիրը, որոնք ապահովում են տնտեսության արդյունավետ կազմակերպումը, արդյունքում էլ՝ տնտեսական աճը. որևէ երկրի տնտեսական կայունությունն հնարավոր է միայն բարենպաստ ներդրումային միջավայրի պարագայում:

Այսպիսով, կարելի է ասել, որ ներդրումային միջավայրը տնտեսության ինստիտուցիոնալ համակարգում առանձնահատուկ ենթահամակարգ է, որը կոչված է հասարակության արտադրողական ուժերի զարգացման և գիտատեխնիկական նորացման մեջ տնտեսական-հասարակական հարաբերությունների լավագույն հետազոտման համար նախադրյալներ ստեղծելուն՝ ակտիվ ներդրումային գործունեության միջոցով: «Ինստիտուտ» հասկացության առավել ճշգրիտ սահմանում է տալիս Գ. Նորտը. «Ինստիտուտը ֆորմալ և ոչ ֆորմալ կանոնների, սկզբունքների և նորմերի կայուն համալիր է, որոնք կարգավորում են մարդկային գործունեության այս կամ այն ոլորտը»³:

Ներդրումային միջավայրը կարելի է գնահատել երկու տեսանկյունից: Առաջինը ներդրումային միջավայրն է ներքին ներդրողների համար, որը ներառում է տեղի ներդրողների համար օրենսդրական դաշտը, այլ ֆորմալ և ոչ ֆորմալ հանգամանքների ազդեցությունը: Երկրորդ տեսանկյունով պետք է դիտարկել երկրի ներդրումային շուկայի գրավչությունն օտարերկրյա ներդրողների տեսանկյունից: Այս մոտեցման հիմքում առաջին հերթին ընկած է տեղի և օտարերկրյա ներդրողների նկատմամբ կիրառվող պետական տնտեսական քաղաքականությունը: Պակաս կարևոր նշանակություն չունի նաև ոչ ֆորմալ ինստիտուտների և գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են ազգային հոգեբանության առանձնահատկությունները, պատմական նախադրյալները, ազգային մշակույթը և այլն:

¹ Цакунов С., "Инвестиции в России: ожидание оттепели"//Рынок ценных бумаг. 2001. N 6. с. 105.

² Инвестиционный рейтинг российских регионов. 1999-2000 гг. // Эксперт. 2000. N 41. с. 73-90.

³ North D. C., "Institutions, institutional change and economic performance", NY, Cambridge University Press, 1995, p. 203.

Այսպիսով, կարող ենք նշել, որ ներդրումային միջավայրի կառուցվածքն ընդգրկում է հետևյալ տարրերը.

1. ներդրումային միջավայրի տարբերակումը տնտեսության տարբեր մակարդակներով,
2. ներդրումային միջավայրի ձևավորումը օբյեկտիվ գործոնների հանրագումարի ազդեցությամբ,
3. ազգային տնտեսության ներդրումային միջավայրի անհամապատասխանությունը ճյուղերի և տարածաշրջանների ներդրումային միջավայրերի հանրագումարին (սինեքվայի հատկություն),
4. տարբեր ռիսկերի առաջացումը՝ որպես համապատասխան պայմանների առկայության արդյունք (դրանց զարգացած չլինելը, անհամաձայնեցվածությունը, միմյանց հակասելը և այլն):

Սակայն, ժամանակակից շուկայական հարաբերություններում վերոնշյալ «ռացիոնալ» ներդրումային միջավայրի կողքին գոյություն ունի նաև «ոչ ռացիոնալը», որը տնտեսության ոչ շուկայական և ստվերային հատվածներում ձևավորվող ներդրումային հարաբերությունների հանրագումարն է:

Ներդրումային միջավայրն ուղղակիորեն կախված է երկրում տիրող գործարար միջավայրի զարգացումներից, ուստի կփորձենք դիտարկել գործարար միջավայրի հետ համատեղ, քանի որ բարենպաստ գործարար միջավայրը հանգեցնում է նաև ներդրումային բարենպաստ միջավայրի և ընդհակառակը. գործարար միջավայրի խոչընդոտներն անպայման անդրադառնում են նաև ներդրումային միջավայրի վրա: Այստեղ թերևս բաց է մնում մի խնդիր. պետությունը ևս ներդրումներ կատարող սուբյեկտ է, և գործարար միջավայրի զարգացումներն ինչ-որ չափով երկրորդային ազդեցություն են թողնում պետության ներդրումային քաղաքականության վրա, սակայն այս պարագայում ևս հետադարձ կապ գոյություն ունի, քանի որ պետության նյութական ռեսուրսների և ֆինանսական կարողությունների գերակշիռ մասը ձևավորվում է գործարար միջավայրի բնականոն գործունեության արդյունքում (հարկեր, տուրքեր և այլն): Ներդրումային միջավայրի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է կատարել այդ ոլորտը բնութագրող ցուցանիշների քանակական և որակական վերլուծություն:

Ամփոփելով վերը ասվածը՝ կարելի է փաստել, որ ներդրումների ուսումնասիրությունը միշտ եղել է տնտեսագիտության ուշադրության կենտրոնում: Սա թերևս պայմանավորված է նրանով, որ ներդրումները վերաբերում են տնտեսական գործունեության ամենախոր հիմքերին՝ ընդհանուր առմամբ որոշելով տնտեսական աճի գործընթացը:

ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

*ՆՇ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.*

ՀՀ ԲԻԶՆԵՍ ՄԻԶԱՎԱՅՐԻՑ ԱՏՎԵՐԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԲԱՅԱՅԱՅՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Տնտեսվարման ներկա հասարակարգում ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում ՀՀ տնտեսության համար արդիական և հրատապ է դարձել արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության դիվերսիֆիկացման խնդիրը: Ընդ որում, հումքային ռեսուրսների սակավություն ունեցող երկրում, ինչպիսին համարվում է Հայաստանի Հանրապետությունը, տնտեսվարող սուբյեկտների շրջանակներում բարենպաստ և շահութաբեր բիզնեսի նախընտրելի տեսակ է դարձել ապրանքների և ծառայությունների ներմուծումը, և այդ հիմքով, ապրանքների և ծառայությունների մանրամեծաձախ առևտուրը ներքին արտադրության կազմակերպման և արտահանման խթանման փոխարեն:


Այսպես, 2010թ. ՀՀ տնտեսությունում ապրանքների ներմուծումն արտահանումից ավել է 20-25 տոկոսով, և այդ միտումը պահպանվում է վերջին 5-6 տարիների ընթացքում: Ընդ որում, Հայաստանից արտահանվող արտադրանքի 80 տոկոսը ներկայացված է 15 ապրանքներով, որոնց թվում՝ լեռնահանքային արդյունաբերության արտադրանք, կոնյակ, ոսկի և այլն¹:

Արտաքին առևտրի հաշվեկշիռը (արտահանումը և ներմուծումը՝ հաշվարկված ՖՕԲ գներով) 2011 թվականի առաջին եռամսյակին կազմել է 487.4 մլն դոլար: 2011 թվականի առաջին երեք ամիսների արդյունքներով այն կազմել է 1118.4 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 10.1%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ: Այսպես, արտահանումն աճել է 25.2%-ով՝ կազմելով 248.5 մլն դոլար, իսկ ներմուծումը՝ 6.4%-ով և կազմել է 869.9 մլն դոլար²:

Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված է ընթացիկ տարում ինչպես բնակչության տնօրինվող եկամուտների, այնպես էլ տնտեսության վերականգնմամբ: Ներմուծման աճ է արձանագրվել կառուցվածքում մեծ կշիռ ունեցող գրեթե բոլոր ապրանքների գծով, բացառությամբ պատրաստի սննդի արտադրանքի և ներդրումային բնույթի ապրանքների: Բացի այդ, 2011 թվականի առաջին եռամսյակի ներմուծման ծածկման գործակիցն արտահայտում է ապրանքների արտահանման և ներմուծման հարաբերակցությունը (ՖՕԲ գներով), նախորդ տարվա համեմատ բարելավվել է 5.3 տոկոսային կետով. արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման 33.8%-ը (գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Ներմուծման ծածկման գործակից, %³



Ինչ վերաբերում է արտահանման ծավալներին, 2011 թվականի առաջին երեք ամիսների արդյունքներով արտահանման 25.2% աճի ամենաբարձր՝ 11 տոկոսային կետը պայմանավորվել է «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանման ավելացմամբ: Արտահանման աճի 8.2 տոկոսային կետը պայմանավորվել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», 4.1 տոկոսային կետը՝ «Պատրաստի սննդի արտադրանք» և 1.7 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ծավալներով, որոնք համապատասխանաբար աճել են 22.3, 34.6 և 12.2%-ով⁴:

Ընդ որում, ՀՀ կառավարությունը կայուն զարգացման ծրագրում գերակա նպատակ է սահմանել ներմուծման փոխարինման և նոր աշխատատեղերի ստեղծման քաղաքականության իրականացումը⁵:

¹ ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 2011թ., էջ 3-6:

² <http://www.minfin.am/up/pbkat/2011q1report.pdf>

³ Ներմուծման ծածկման գործակիցը՝ ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ծառայությունների մասին տեղեկատվության բացակայության պատճառով, ներկայացված է ապրանքների արտահանման և ներմուծման հարաբերակցությամբ (ՖՕԲ գներով):

⁴ <http://www.armstat.am/file/doc/99461618.pdf>

⁵ <http://www.gov.am/files/docs/165.pdf>

Այդ քաղաքականության իրականացման համար գտնում ենք, որ անհրաժեշտ է մշակել արտահանման զարգացման հայեցակարգ և ստեղծել արտահանման ուղղվածություն ունեցող ընկերությունների ցուցակ, որոնք կարող են նվաճել արտաքին շուկան կամ դրական ազդեցություն ունենալ ՀՀ բարենպաստ բիզնես միջավայրի զարգացման գործում:

Առաջին հայացքից թվում է, որ ՀՀ բարենպաստ միջավայրի զարգացման գրավականը հարկային և մաքսային վարչարարության ոլորտներում բարեփոխումների իրականացումն է, բայց դա միայն առաջին հայացքից է:

Աղյուսակ 1

Հարկերի վճարման ընթացակարգերի համեմատական գնահատականները ՀՀ-ում, Կենտրոնական Եվրոպայի և ՏՀԶԿ երկրներում¹

Հարկերի վճարում 2011թ.			
Ցուցանիշ	Հայաստան	Եվրոպա և Կենտրոնական Ասիա	ՏՀԶԿ (OECD) երկրներ
Վճարումներ (քանակ)	50	41,7	14,2
Ծախսվող ժամանակ	581	313,9	199,3
Շահութահարկ (% շահույթի)	16,6	9,8	16,8
Եկամտահարկ (% շահույթի)	23	22,9	23,3
Այլ հարկեր (% շահույթի)	1,1	8,5	3
Ընդհանուր հարկային դրույքաչափ (% շահույթի)	40,7	41,2	43

Ընդ որում, հարկային վարչարարության ցածր մակարդակը Կենտրոնական Եվրոպայի և ՏՀԶԿ երկրների հետ համեմատած (աղյուսակ 1) վկայում է բազմաթիվ բյուրոկրատական քաշքշուկների մասին, որոնք ստիպված, այսպես ասած, «ընկած են տնտեսվարող սուբյեկտների վրա», ովքեր դրանցից խուսափելու համար շատ հաճախ դիմում են անօրինական գործելաոճի՝ պետական համակարգում առաջացնելով կոռուպցիոն ռիսկեր:

Բացի հարկային և մաքսային բեռից և վարչարարությունից, ՀՀ բիզնես միջավայրի վրա ազդում են բազմաթիվ այլ գործոններ՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային, հոգեբանական, որոնք առավել ցայտուն ձևով են ազդում ՀՀ բարենպաստ բիզնես միջավայրի կայացման կամ չկայացման վրա (աղյուսակներ 2-3):

Հայաստանում «երկրորդ» սերնդի կամ ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունքում ՀՀ գործարարների շարքում դեռևս շարունակում է գոյություն ունենալ պետական համակարգի նկատմամբ անվստահության խնդիրը:

Մասնավորապես, 2008-2012թթ. ՀՀ հարկային բարեփոխումները «դեմքով դեպի հարկատուի» սկզբունքի գերակայությամբ, այսպես ասած, «չեն լուծում Հայաստանում բիզնեսի ստվերից օրինական հարկային դաշտ տեղափոխելու» խնդիրը, ինչը զգալի ջանքեր է պահանջում հայ գործարարներից, որոնց մոտ վերջին տարիներին ստեղծվել է «արագ հարստացման ձգտելու» մշակույթ: Իսկ վերջինիս պատճառներից են ՀՀ կազմակերպություններում և ձեռնարկություններում ցածր արտադրողականության և անարդյունավետ մեներջմանի առկայության հիմնախնդիրները:

«2011-2020թթ. գյուղատնտեսության զարգացման հեռանկարների ամփոփման» զեկույցի շրջանակներում նշվել է, որ ՀՀ-ում պարենամթերքի բարձր գները և հումքի շուկաների անկայունությունը շարունակվելու են պահպանվել²: Իսկ այդ եզրակացությունը կատարվել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, երբ բացահայտ դարձավ ՀՀ տնտեսության բավարար չափով դիվերսիֆիկացված չլինելու պատճառը:

¹ www.doingbusiness.org/arm/paying taxes2011.pdf

² <http://www.fao.org/fishery/statistics/global-aquaculture-production/en>

ՀՀ բիզնես միջավայրի զարգացման վրա ազդող հիմնական ռիսկերն ու դրանց առաջացման պատճառները


Ռիսկերի դասակարգման չափանիշները	Պատճառների մեկնաբանություն
Քաղաքական ռեժիմի հետ կապված ռիսկեր	<ul style="list-style-type: none"> Արտաքին գնային ցնցումներ, կայուն քաղաքականության ռեժիմի խախտում, տարածաշրջանային անկայունության վտանգ
Օժանդակող հիմնական կառույցների հետ կապված ռիսկեր	<ul style="list-style-type: none"> արդար մրցակցության պայմաններ ապահովելու անկարողություն, գույքային իրավունքների ոչ պատշաճ պաշտպանություն, պետական հովանավորչության արդյունքում օլիգարխների կողմից մենաշնորհային եկամուտների ստացում, հարկային, մաքսային վարչարարության կամայական ու անկանխատեսելի գործելակերպ, մուտքային միջոցների և ենթակառուցվածքների չափազանց բարձր գներ, ֆինանսական գործարքների անապահով ռեժիմ,
Գիտելիքների և վարչարարության հետ կապված ռիսկեր	<ul style="list-style-type: none"> մարդկային կապիտալի որակագրկում, գիտելիքների ակտիվ կիրառության վրա հիմնված տեխնոլոգիաների յուրացման անբավարար մակարդակ, պետական վարչարարության կորողինացումը կազմակերպելու անկարողություն:

«Գործարարությամբ զբաղվելը» բնութագրող 9 ցուցանիշները ՀՀ-ում

«Գործարարությամբ զբաղվելը» բնութագրող ընթացակարգերը	Գործարարությամբ զբաղվելը 2011թ.	Գործարարությամբ զբաղվելը 2010թ.	Բացարձակ փոփոխություն (3)=(1)-(2)
	(1)	(2)	(3)=(1)-(2)
Ընկերության բացում	22	20	-2
Արտոնագրության տրամադրում կամ շինարարական թույլտվություն	78	72	-6
Սեփականության գրանցում	5	4	-1
Վարկեր ստանալը	46	44	-2
Ներդրողների շահերի պաշտպանություն	93	92	-1
Հարկերի վճարում	159	157	-2
Միջսահմանային առևտուր	82	103	21
Պայմանագրերի կիրարկում	63	62	-1
Բիզնեսի լուծարում կամ սնանկության ճանաչում	54	49	-5

Անդրադառնալով ՀՀ տնտեսության զարգացման ներուժի բացահայտմանը, մասնավորապես արտահանման և ներմուծման ծավալների գնահատմանը, 2002թ. Հայաստանի արտահանումը կազմում էր ՀՆԱ-ի 20 տոկոսը, իսկ 2011թ. այն ընդամենը 12 տոկոս է, ինչը վկայում է այն մասին, որ Հայաստանի առևտրային հաշվեկշիռը շարունակում է լինել բացասական (գծապատկեր 2):

Առևտրային հաշվեկշռի դինամիկան 2000-2011թթ. (մլն ԱՄՆ դոլար)¹



Առևտրային հաշվեկշռի բացասական հակվածությունը կանխելու, տնտեսությունը դիվերսիֆիկացնելու համար ՀՀ կառավարությունը 2010-2011թթ. սահմանել է տնտեսության 3 գերակա ոլորտները՝

1. հանքարդյունաբերություն,
2. տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների արդյունաբերություն,
3. զբոսաշրջություն:

Այդ ոլորտների զարգացման համար ֆինանսավորման գերակա աղբյուրներից են սփյուռքահայերի կողմից կատարվող ֆինանսական և իրական ներդրումները օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսքով:

Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ սփյուռքահայերի կողմից կատարվող ՕՈՒՆ-երի ՀՆԱ-ում կազմում են 60-70 տոկոս²: Իհարկե, Սփյուռքից ներդրումները գալիս են ոչ միայն օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսքով, այլ նաև մասնավոր դրամական փոխանցումների միջոցով, ինչը, վերջին հաշվով, նպաստել է ՀՀ տնտեսությանը հաղթահարելու տնտեսական ճգնաժամի հետևանքները:

Այսպիսով, ամփոփելով ՀՀ բիզնես միջավայրից ստվերային եկամուտների բացահայտման և գնահատման հիմնական մոտեցումները արտահանվող արտադրության դիվերսիֆիկացման համատեքստում՝ հողվածի շրջանակներում առաջ քաշված հիմնախնդիրները, կարող ենք եզրակացնել, որ Հայաստանը, ցավոք, դարձավ համաշխարհային ճգնաժամից ամենաշատ տուժած երկրներից մեկը, իսկ դրա հնարավոր բացասական հետևանքներից խուսափելու համար խիստ հրատապ է դարձել արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության դիվերսիֆիկացիայի խնդիրը:

¹ <http://www.armstat.am/file/doc/99461618.pdf>

² <http://www.armstat.am/file/doc/99461623.pdf>

**ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Հանցավոր գործարքների կամ մեխանիզմների ամբողջականությունը, որը խախտում է օրենքի նորմերն ու իրավական ակտերը մեկից ավելի երկրներում, քրեագիտության կողմից սահմանվում է որպես «վերազգային հանցավորություն»:

Փորձենք սույն հոդվածի շրջանակներում ներկայացնել և բացահայտել համաշխարհային մակարդակով վերազգային հանցավորության տեսակներն ու դրանց գործունեության բովանդակությունը:

Իտալական մաֆիա: Վերազգային հանցավորության տեսակների մեջ իտալական և սիցիլիական մաֆիան առանձնանում է իր բարդ կառուցվածքով և, այսպես ասած, «գաղտնիության պահպանման» սկզբունքով: Այսպես, Իտալիայում «մաֆիա» հասկացությունը նույնականացվում է սիցիլիական մաֆիա կամ «*Կոզա Նոստրա*» հասկացության հետ: Վերջինս առաջացել է նեապոլական «կամորա» բառից, որը թարգմանաբար նշանակում է տեղային հանցագործություն, և կալաբրիկական «նդրագենտա» բառից, որը թարգմանաբար կոչվում է ընտանիք:

Տնտեսվարման ներկա հասարակարգում ժամանակակից Իտալիայում «*Կոզա Նոստրա*» հասկացությունը դարձել է անօրինական թմրադեղերի բիզնեսի կազմակերպարավական տեսակ, որը ղեկավարվում է Իտալիայի ավանդական ընտանեկան կլանային կազմակերպությունների միջոցով: Դրանց կարգավորման հիմնական գործիքն է հանցավորության բարոյական էտիկետը, որտեղ առաջնորդվում են իրավունքների և պարտավորությունների ստանձնման «վախի» լծակի միջոցով:

«*Կոզա Նոստրա*» հասկացությունը՝ որպես կազմակերպված հանցավորության տեսակ, ձևավորվել է Իտալիայի թույլ սուվերեն իշխանության ժամանակ, հատկապես գյուղական վայրերում և մարզերում, ինչի հետագա զարգացմանը նպաստել է աշխատուժի ներգաղթը: Վերջինիս հոսունությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ի, Գերմանիայի աշխատուժի միջոցով, որոնք ներգրավվել են թմրադեղերի (հերոյինի) բիզնեսում:

Չինական «տրիադաներ»: Այն ճկուն ցանցային համակարգ է, որը շատ հաճախ վերափոխվում է այս կամ այն տեսակի՝ ելնելով հանցավոր և անօրինական գործարքի պահանջից: Չինական տրիադա հասկացությունը բնորոշվում է որպես կազմակերպված հանցավորության տեսակ, որը բնորոշ է եղել Հին Չինաստանին մ.թ.ա. 2-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը: Այսպես, «տրիադա» բառը չինարենից թարգմանաբար կոչվում է սուրբ հասարակություն, որը հանդես է գալիս ամպ, հող, մարդ եռանկյան տեսքով: Ավանդական չինական հանցավոր կազմակերպությունը չափազանց փակ կառույց է, որը գրեթե չունի մուտքի հնարավորություն՝ խիստ գաղտնիության սկզբունքի պահպանման միջոցով:

Ժամանակակից Չինաստանում «չինական տրիադաներ»-ի կենտրոններն են՝ Հոնկոնգը, Թայվանը, Հարավարևելյան Ասիայի երկրները: Բացի դրանից, լինելով հանցավոր կազմակերպության չափազանց ճկուն համակարգ, դրանք լայն տարածում են գտել նաև Հյուսիսային Ամերիկայում, Մերձավոր Արևելքում, նույնիսկ Ռուսաստանում: Չինացի և արտերկրյա փորձագետների գնահատման համաձայն՝ Հոնկոնգում հաշվառվում է շուրջ 160000 անդամներ, որոնք ընդգրկված են 50 և ավելի տրիադաներում:

Ընդ որում, մինչ օրս Չինաստանում իրավաբաններն ու վերլուծաբանները տրիադայի կազմակերպարավական կառուցվածքի զարգացման հարցի վերաբերյալ միասնական կարծիք չեն ձևավորել: Այլ խոսքով, «չինական տրիադա» հասկացությունը, այսպես ասած, նույնացվում է «համալսարան ավարտած ուսանողների» կազմակերպության հետ, որտեղ անդամակցությունը որոշվում է՝ հիմք ընդունելով փոխադարձ վստահության, աշխատանքային կողեկտիվի ձևավորման, փոխադարձ օգնության տրամադրման սկզբունքները, որոնք շատ հաճախ հակասում են օրենքում սահմանված նորմերին և իրավական ակտերին:

Այսօր չինական տրիադաները որոշակի ֆորմալ կազմակերպարավական միավորներ են, որտեղ դեկավարում են տրիադայի պարագլուխը և այս կամ այն հանցավոր գործարքի կամ ստվերային եկամուտների ձևավորման գործում հանդես եկող ժամանակավոր կառավարիչները կամ տրիադայի ինսայդերները, անդամները:

Այսպես, տրիադաների տնտեսական գործունեության ոլորտներն են՝ կաշառակերությունը, մարդկային թրաֆիքինգը, խաղատների բիզնեսը, թմրադեղերի անօրինական շրջանառությունը, որոնց մատակարարման ցանցերը գտնվում են նաև ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում:

Ճապոնական «յակուդզա»: Այն համարվում է ճապոնիայում ամենատարածված հանցավոր կազմակերպության տեսակներից մեկը: Այսպես, «յակուդզան» ներառում է բազմաթիվ խոշոր կազմակերպություններ, որոնցից կարելի է առանձնացնել՝

1. «Յամգուչի Գումի» կազմակերպությունը, որը ներառում է շուրջ 26000 անդամներ և 944 փոքր և միջին հանցավոր խմբավորումներ,
2. «Ինգավա Կայ» կազմակերպությունը, որը ներառում է շուրջ 8600 անդամներ,
3. «Մումեչի Կայ» կազմակերպությունը, որը ներառում է շուրջ 7000 անդամներ:

Նշված յակուդզիները պայքարում են միմյանց դեմ ճապոնական և արտերկրյա անօրինական շուկան գրավելու նպատակով: Ուստի, վերջիններս դիմում են ցանկացած քայլի ընդհուպ մինչև քաղաքականություն ներառվելը, քաղաքական տանիք ձևավորելը և կաշառքի մեխանիզմ մշակելը, միմյանց տնտեսական, ֆինանսական, իրավական և բարոյական կարգավիճակները և հզորությունները վերացնելու համար: Յակուդզիների և հանցավոր խմբավորումների գործունեության ոլորտներն են՝ քաղաքական տեռորիզմը, Հավայան կղզիներ և Կալիֆոռնիա մաքսանենգ ճանապարհով թմրադեղերի տեղափոխումն ու դրանց վաճառքը խոշոր ճապոնական համայնքների բաշխման ցանցի միջոցով, ինչպես նաև այդ երկրներից նրանց կողմից անօրինական և մաքսանենգ ճանապարհներով ճապոնիա զենքի և զինամթերքի ներկրումն ու դրանց վաճառքը:

Ժամանակակից յակուդզաների գործունեությունն իրականացվում է նաև Հարավարևելյան Ասիայի երկրներում մարդկային թրաֆիքինգի, խաղատների բիզնեսի խարդախության, փողերի լվացման գործարքների միջոցով, որոնք ստերիլիզացվում են պաշտոնական բիզնեսում:

Կոլումբիական կարտելներ: Դրանք յուրահատուկ հանցավոր կազմակերպության տեսակներ են, որոնք պատրաստ են դիմել ռազմական պայքարի միջոցների կառավարական և պաշտպանության նախարարության գորքերի դեմ: Կոլումբիական կարտելները միայն զբաղվում են թմրադեղերի առքուվաճառքով, որի կենտրոնն է համարվում Կոլումբիան՝ ԱՄՆ-ում, Արևմտյան և Արևելյան Եվրոպայում, նախկին սոցերկրներում (Ռուսաստան, Ուկրաինա) վերաբաշխման ցանցի տարածման միջոցով:

Նիգերիական հանցավոր կազմակերպություն: Նիգերիայում 1980թ. հանցավոր կազմակերպությունների ձևավորումը պայմանավորվում է նավթի գների նվազմամբ, ինչն առաջացրել է Նիգերիայում տնտեսական խզումներ՝ ապակայունացնող տնտեսական քաղաքականության արդյունքում: Ընդ որում, հանցավոր կազմակերպությունների աճը պայմանավորող բացասական գործոններից է նաև արտահանման ծավալների նվազումը: Արդյունքում, տնտեսվարող սուբյեկտների գերակշիռ մասը հայտնվել է սնանկացման փուլում և եկամուտների կրճատման արդյունքում դիմել է անօրինական գործունեության, ինչպես Նիգերիայում, այնպես էլ այլ երկրներում:

Հանցավոր խմբավորումների գործունեության ոլորտներից են՝ թմրադեղերի անօրինական վաճառքը, խարդախությունը, դրամաշորթությունը, կաշառակերությունը և ընդհատակյա կամ ստվերային ֆինանսական բանկային գեղծարարությունները՝ կեղծ բանկային պլաստիկ քարտերի ստեղծում, դրանց լայն շրջանառություն, բանկային գործարքների կնքման արդյունքում ավտոմատացված ծրագրերի ապակողավորում, փողերի լվացում և այլն:

Այսօր Նիգերիայում ժամանակակից հանցավոր կազմակերպությունները մասնագիտանում են «նիգերիական նամակագրական» ծառայությունների մատուցման մեջ, որտեղ ներառվում են նաև ազգային անվտանգության համակարգի ապակողավորումն ու դրա աշխատանքի խափանումը:

Ռուսական վերազգային հանցավոր կազմակերպություն: Այն չունի յուրահատուկ անվանում, ինչպես Իտալիայում, Չինաստանում, Ճապոնիայում, որը պայմանավորված է այդ երկույթի դեռևս թերզարգացմամբ: Այսպես, Ռուսաստանում կազմակերպված հանցավորության կազմակերպատիրավական միավորի ձևավորումը սկսվել է 1980-1990թթ. շուկայական տնտեսության անցման և շուկայական հարաբերությունների ձևավորման փուլում, որը տեղի է ունեցել շուկային թերապիայի մեթոդով: Ռուսաստանում կազմակերպված հանցավորությունը ստացել է, վերջին ժամանակներում, ազգային ավանդական բնույթ՝ Ռուսաստանում ապրող բնակչության, մարդկանց «տեղացի» և «ներգաղթող» խմբերում դասակարգելու միջոցով: Դրանց են վերաբերում՝

1. Արևմտաեվրոպական խմբեր, որոնք 1993թ., ըստ Ռ-Դ Ազգային անվտանգության ծառայության տվյալների, կազմում են շուրջ 4000 խմբեր, որոնցից 200-ը գործել են արևմտաեվրոպական երկրներում:
2. Չեչենական խմբավորումներ, որոնք հանդես են գալիս հիերարխիկ կառուցվածքի տեսքով: Դա նշանակում է, որ տարբեր խմբեր գործում են անկախ և գործունեության իրականացման տեսանկյունից միմյանցից անտեղյակ սկզբունքներով: Այն շատ հաճախ չեչենական հանցավոր խմբավորումների միջև առաջացնում է կոնֆլիկտներ, խնդիրներ, որոնք ավարտվում են բռնության, մարդկային զոհերի և զանգվածային տեռորիստական գործողություններով: Վերջիններիս եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրներից են փողերի լվացումը, խաղատների բիզնեսը, կաշառակերությունն ու դրամաշորթությունը, պաշտոնական և հանցավոր ռեկետը:
3. Վրացական խմբավորումներ, որոնք գործում են նաև Բեռլինում, Վիեննայում, Պրագայում:
4. Թուրքական և քրդական հանցավոր կազմակերպություններ, որոնք գործում են նաև Գերմանիայում, Հոլանդիայում և եվրոպական այլ երկրներում: Դրանցից մեծ մասը ձևավորվել է որպես ընտանեկան բիզնեսի տեսակ, որը զբաղվում է թմրադեղերի մատակարարմամբ և այլ անօրինական գործունեությամբ: Թուրքական հանցավոր կազմակերպությունները են Հարավարևմտյան Ասիային հերոյին են մատակարարում դեպի Արևմտյան Եվրոպա հայտնի «պատշգամբային երթուղի» ճանապարհով: Վերջինիս զարգացմամբ էլ պայմանավորված է եղել Հարավսլավիայի կոնֆլիկտի առաջացման խնդիրը:
5. Յամայական հանցավոր կազմակերպություն, որը հայտնի է «Պոսես» անվանմամբ:
6. Արմատական կամ ավանդական ամերիկյան մաֆիա հասկացությունը:
7. Դոմենիկյան հանցավոր կազմակերպությունը և այլ կազմակերպված հանցավոր խմբավորումները:

Այսպիսով, ամփոփելով վերազգային հանցավոր կազմակերպությունները տարբեր երկրներում, կարող ենք եզրակացնել, որ Ռուսաստանի Գաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված հանցավորությունը չի վերափոխվել վերազգային հանցավոր կազմակերպության: Սակայն, դրան զուգահեռ Ռուսաստանում, ՀՀ-ում, Վրաստանում, Բելառուսում, Ղազախստանում և այլ ԱՊՀ երկրներում հանցավոր տնտեսության զարգացումը պայմանավորված է կառավարության վախի, պետական համակարգի դեմ անհատական հեղինակությունների ձևավորմամբ, որոնք շատ հաճախ հանդես են գալիս որպես քաղաքական տանիք տրամադրողների դերում:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Տնտեսական համակարգում առկա խնդիրների լուծման և պետությանը վերապահված գործառույթների լիարժեք իրականացման գործում բյուջետային լծակների կիրառման արդյունավետությունը դեռևս ցանկալի մակարդակի վրա չէ: Այս առումով, ներկայումս հրատապ խնդիրներ են բյուջետային քաղաքականության կատարելագործումը, բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումը, բյուջետային գործընթացի բարելավումը, դրանում ներգրավված իշխանության տարբեր թևերի լիազորությունների և պարտականությունների հստակ տարանջատումը, պատասխանատվության գործուն մեխանիզմների ներդրումը և այլն: Վերը նշված խնդիրների լուծումը պահանջում է բյուջետային գործընթացի հետ կապված հիմնախնդիրների և տնտեսության զարգացման գործում բյուջետային համակարգի ունեցած դերի համակողմանի վերլուծություն, բյուջետային ծախսերի արդյունավետության վրա ազդող գործոնների գնահատում, հանրապետությունում բյուջետավորման նոր մեթոդների կիրառում:

Բյուջետային քաղաքականության հիմնահարցերն առավել կարևորվում են անցումային տնտեսություն ունեցող երկրներում և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում, որտեղ նշանակալի են պետական բյուջեի դեֆիցիտի ու արտաքին պարտքի չափերը, հստակեցված ու մանրամասնեցված չեն բյուջեի եկամուտների ու ծախսերի դասակարգումը, իսկ համայնքի բյուջեի ֆինանսական լիարժեք ինքնուրույնության բացակայության պատճառով տեղական ինքնակառավարման ինստիտուտը հանրապետությունում չի կայանում և այլն:

Բյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացումն ուղղակիորեն պայմանավորված է բյուջետային գործընթացի կազմակերպական և օրենսդրակալական մեխանիզմների կատարելագործմամբ: Այս ուղղությամբ կարևոր խնդիր է բյուջետային համակարգի կայուն զարգացումը, ինչը ենթադրում է այդ համակարգի կայունության ապահովում ինչպես միջնաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում, արդյունավետ միջբյուջետային հարաբերությունների, պոտենցիալ ռիսկերի կառավարման և, վերջապես, բյուջետային և ֆինանսական վերահսկողության գործուն համակարգերի առկայություն: Այս համատեքստում հատկապես մեծ կարևորություն է ստանում բյուջետային քաղաքականության արդյունավետության ապահովումը, ինչը ենթադրում է բյուջետային միջոցների արդյունավետ բաշխում, պետական իշխանության մարմինների գործունեության արդյունավետություն՝ ակնկալվող արդյունքների ձեռքբերման տեսանկյունից, գործունեության արդյունքների համար պատասխանատվության մեխանիզմների առկայություն, մոնիտորինգի և աուդիտի գործուն համակարգերի ներդրում՝ բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության հետագա բարձրացման նպատակով:

Ընդհանուր առմամբ, բյուջետային գործընթացի կատարելագործումը պետք է հիմնված լինի հարկաբյուջետային թափանցիկության, բյուջեի կայունության, միջբյուջետային հարաբերությունների արդյունավետ և արդարացի համակարգի առկայության, բյուջետային գործընթացի կանոնակարգվածության, միջնաժամկետ ֆինանսական պլանավորման, ըստ արդյունքների բյուջետավորման և արդյունավետ բյուջետային վերահսկողության վրա:

Հարկաբյուջետային թափանցիկության ապահովումն, ըստ էության, կարևոր նախապայման է իրականացվող քաղաքականության նկատմամբ հանրության վստահության մակարդակի բարձրացման և ցանկալի արդյունքների ձեռքբերման տեսանկյունից: Այդ նպատակով անհրաժեշտ է ապահովել պետական ֆինանսների վերաբերյալ տեղեկատվության համընդհանուր մատչելիություն, բարձրացնել բյուջետային գործընթացի մասնակիցների գործունեության թափանցիկությունը, ապահովել բյուջետային հաշվետվությունների կազմման և ներկայացման պարզ, հստակ և մատչելի ընթացակարգեր: Պետք է նշել, որ թափանցիկու-

թյունը չի ենթադրում ծախսային բոլոր հոդվածների գծով տեղեկատվության մատչելիության ապահովում՝ ելնելով պետական, ռազմական և անվտանգության հետ կապված որոշակի ծախսերի գաղտնիությունից: Բյուջետային գործընթացի թափանցիկության ապահովման տեսանկյունից կարևոր են նաև հասարակական լայն քննարկումների կազմակերպումը և անցկացումը հարկաբյուջետային քաղաքականության և դրա արդյունքների վերաբերյալ: Նշված խնդիրը հատկապես կարևորվում է անցումային տնտեսությամբ երկրներում, քանի որ, որպես կանոն, նման երկրներում առկա է հասարակության կողմից որոշակի անվստահություն իրականացվող տնտեսական քաղաքականության նկատմամբ:

Բյուջետային գործընթացի արդյունավետության բարձրացման կարևոր պայմաններից մեկն է բյուջեների կայունության ապահովումը: Վերջինիս ձեռքբերման միջոցներից են բյուջետային ցուցանիշների միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների համակարգի ներդրումը, բյուջետային պլանավորման հիմքում դրվող տնտեսական կանխատեսումների մեթոդիկայի մշակումը և դրանց իրատեսականության ապահովումը, ինչպես նաև հարկաբյուջետային ոլորտում ռիսկերի համակարգային կառավարումը:

Բյուջետային գործընթացի զարգացման առումով, անշուշտ, կարևոր նշանակություն ունի բյուջետային համակարգի տարբեր մակարդակների միջև հարաբերությունների արդյունավետ կարգավորումը: Այդ նպատակով անհրաժեշտ է ձևավորել կայուն և կանխատեսելի ֆինանսական հարաբերություններ պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև, հստակ կերպով տարանջատել բյուջետային համակարգի մակարդակների միջև եկամուտները և ծախսային պարտավորությունները, ապահովել տնտեսապես հիմնավորված, օբյեկտիվ և թափանցիկ ֆինանսական համահարթեցում: Բացի այդ, անհրաժեշտ է հստակ և միանշանակ սահմանել գործադիր իշխանության մարմինների իրավասությունները և պատասխանատվությունը՝ բյուջետային քաղաքականության մշակման և իրականացման՝ այդ թվում նաև բյուջեի կազմման և կատարման գործընթացի կազմակերպման ուղղությամբ, բոլոր եկամուտները և ծախսերն արտացոլել միասնական բյուջեում՝ առանց այս կամ այն եկամտի կոնկրետ ծախսատեսակին ամրակցման:

Պետական ծախսերի արդյունավետությունն անմիջականորեն կապված է պլանավորման համակարգի գործունեության հետ: Ընդհանուր առմամբ, ներկայումս առավել արդիական և արդյունավետ են միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման համակարգերը, որոնք հնարավորություն են տալիս սահմանափակ ֆինանսական ռեսուրսներն օպտիմալ կերպով բաշխելու տարբեր ոլորտների և ճյուղերի միջև: Այս տեսանկյունից, ֆինանսական պլանավորումը ենթադրում է միջնաժամկետ և երկարաժամկետ բյուջետային ծրագրերին համահունչ տարեկան բյուջեի կազմում և հաստատում, միջնաժամկետ բյուջետային ծրագրերի վերանայման ընթացակարգերի առկայություն, բյուջետային սահմանափակումների պայմաններում ծախսային նոր պարտավորությունների ստանձնման համար անհրաժեշտ ռեսուրսների որոշման ընթացակարգերի առկայություն: Բացի այդ, անհրաժեշտ է սահմանել յուրաքանչյուր գերատեսչության նպատակները, խնդիրները և գործունեության արդյունքները՝ ուղղված պետական քաղաքականության նպատակների և գերակայությունների իրացմանը, ապահովել գերատեսչությունների, նրանց կառուցվածքային ստորաբաժանումների և հիմնարկների ինքնուրույնություն, պատասխանատվություն և մոտիվացիա՝ բյուջետային հատկացումների պլանավորման և դրանց օգտագործման արդյունքների ձեռքբերման գործընթացում:

Ինչ վերաբերում է ֆինանսական վերահսկողության և մոնիտորինգի կազմակերպմանը, ապա այն ենթադրում է բյուջետային հաշվետվությունների վերաբերյալ տարեկան արտաքին անկախ աուդիտի իրականացում՝ օրենսդիր մարմնի կողմից դրա արդյունքների քննարկմամբ, ֆինանսների վերահսկողության և կառավարման նպատակով համապատասխան տեղեկատվական համակարգի ձևավորում, բյուջետային օրենսդրության պահանջների կատարման համար ստուգումների ընթացակարգերի և դրա խախտումների համար պատասխանատվության մեխանիզմների օրենսդրորեն ամրագրում, բյուջետային միջոցների օգտագործման և, մասնավորապես, պետական գնումների վերաբերյալ որոշումների ընդունման թափանցիկ ընթացակարգերի մշակում, ներքին ֆինանսական աուդիտի համակարգի ներդրում և շարունակական կատարելագործում:

Ակնհայտ է, որ բյուջետային գործընթացի կատարելագործումը կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացման համար, քանի որ հարկաբյուջետային համակարգի կայունությունը տնտեսության բնականոն գործունեության գրավականներից է, իսկ պետական ֆինանսների ոչ արդյունավետ կառավարումը կարող է խոչընդոտել երկրի զարգացումը՝ ստեղծելով մի շարք հիմնախնդիրներ տնտեսական համակարգի մյուս օղակների համար: Բյուջետային գործընթացի կատարելագործումը ենթադրում է պետական իշխանության մարմինների գործառույթների և դերի հստակեցում և, մասնավորապես, բյուջետային գործընթացի բոլոր մասնակիցների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության մեխանիզմների ամրագրում:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, ֆինանսական ռիսկերի կառավարման և սահմանափակ ռեսուրսների արդյունավետ պլանավորման նպատակով խիստ կարևոր է բյուջետային համակարգի բոլոր մակարդակներում ապահովել բյուջետային գործընթացի համալիր բնույթը: Դա, նախ և առաջ, ենթադրում է բյուջետային գործընթացի և բյուջետային քաղաքականության համար պատասխանատվության հստակ սահմանում: Ընդհանուր առմամբ, բյուջեի կազմումը և կատարումը համալիր գործընթացներ են: Դրա առանձին տարրերի կոորդինացման բացակայությունը, ակնհայտորեն, կարող է բյուջետային գործընթացը մասնատել մի քանի առանձին մասերի, որի արդյունքում էականորեն կնվազի հարկաբյուջետային ոլորտի կառավարման արդյունավետությունը: Այս առումով, պետք է հստակ սահմանվի բյուջետային քաղաքականության մշակման և իրականացման, այդ թվում նաև բյուջեի նախագծի կազմման և կատարման ուղղությամբ գործադիր իշխանության իրավասությունների և պատասխանատվության շրջանակը: Ըստ էության, դա բյուջետային գործընթացի այն հիմնախնդիրներից մեկն է, որին բախվում են անցումային տնտեսությամբ և զարգացող երկրները: Դրանց առաջացման պատճառները տարբեր են, սակայն հետևանքը նույնն է. բյուջետային գործընթացի փուլերի միջև փոխկապակցվածության բացակայությունը հանգեցնում է կառավարման արդյունավետության անկմանը և սահմանափակ բյուջետային ռեսուրսների ոչ նպատակային ու հասցեական օգտագործմանը:

Բյուջետային գործընթացի արդյունավետության ապահովման տեսանկյունից հատուկ ուշադրության է արժանի ֆինանսական վերահսկողության իրականացումը: Ընդհանրապես, բյուջեի արդյունավետ կատարումը մատուցվող պետական ծառայությունների որակի բարձրացման և դրանց ծավալների ավելացման վրա ազդող որոշիչ գործոն է: Միաժամանակ, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ոչ արդյունավետ վերահսկողությամբ պայմանավորված բյուջետային միջոցների ոչ նպատակային օգտագործումը և փոշիացումը կարող են երկրի ֆինանսական կայունության խաթարման պատճառ հանդիսանալ:

Ֆինանսական վերահսկողության համակարգի հիմքում, ըստ էության, ընկած են բյուջետային գործընթացի թափանցիկությունը և համապատասխան տեղեկատվության առկայությունն ու մատչելիությունը: Վերահսկողության համակարգի կատարելագործման նախադրյալներ են նման համակարգերի ծրագրային ու տեղեկատվական ապահովվածությունը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման զարգացումը: Չափազանց կարևոր է նաև բյուջետային գործընթացի յուրաքանչյուր մակարդակում վերահսկողության հստակ ընթացակարգերի սահմանումը: Անհրաժեշտ է համապատասխան մեխանիզմներ ներդնել կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար, քանի որ դրանցով պայմանավորված բյուջետային ռեսուրսների փոշիացումը հասարակական ֆինանսների կառավարման գործընթացն ապակայունացնող որոշիչ գործոն է: Ընդհանուր առմամբ, կոռուպցիայի դեմ պայքարը ինչպես կենսագործունեության մյուս ոլորտներում, այնպես էլ բյուջետային գործընթացում պետք է արժանանա հատուկ ուշադրության, ինչը ենթադրում է պարզ և թափանցիկ ընթացակարգերի սահմանում՝ պատասխանատվության գործուն մեխանիզմների գույակցմամբ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի չափորոշիչներ, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի գնահատել բյուջետային ֆինանսավորում ստացողների գործունեությունը և անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկել դրա արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Ըստ էության, բյուջետային գործընթացի կատարելագործման և պետական ծախսերի արդյունավետության բարձրացման կարևորությունը հատկապես հրատապ է Հայաստանի Հանրապետությունում, ինչը պայմանավորված է սահմանափակ ֆինանսական ռեսուրսների

միջոցով հիմնախնդիրների առավել լայն շրջանակ լուծելու անհրաժեշտությամբ: Բնականաբար, նման իրավիճակում պետության խնդիրն է մշակել այնպիսի մեխանիզմներ, որոնք կնվազեցնեն, իսկ հնարավորության դեպքում կբացառեն ֆինանսական ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման և փոշիացման հնարավորությունները: Նման մեխանիզմը ենթադրում է բյուջետավորման առաջադիմական մոտեցումների մշակում, բյուջետային կարգապահության բարձրացում, ծախսային ծրագրերի հիմնավորվածություն, գերակա խնդիրների սահմանում և այլն: Բացի այդ, անհրաժեշտ է սերտ փոխկապակցվածություն ապահովել իրականացվող բյուջետային ծախսերի և ստացվող արդյունքների միջև, ինչի պարագայում առավել հստակ կերպով հնարավոր կլինի պարզել օգտագործված բյուջետային ռեսուրսների արդյունավետությունը:

ԹԵԼՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*ՏՊ ԳԱԱ Մ. Լոթոսևյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՐԿԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆԵ

Ժամանակակից հասարակությունում ակտիվ տարածում է գտել «փողերի լվացում» հասկացությունը, որն առաջացել է դեռ անցյալ դարի 30-ական թվականներին ԱՄՆ-ում, երբ հանցավոր խմբավորումների կողմից ստեղծվում էին հագուստի լվացքատներ, և դրանք օգտագործվում էին հանցավոր գործունեությունից ստացված գումարների ծագումը թաքցնելու համար: Այդ ժամանակից ի վեր բազմաթիվ սահմանումներ են տրվել «փողերի լվացման» հասկացությանը, ինչպես նաև տարբեր մեթոդներ են մշակվել հանցավոր ճանապարհով ստացված եկամտի օրինականացման դեմ պայքարելու համար: Ընդ որում սկզբնական շրջանում միջազգային հանրությունը «փողերի լվացման» առումով հանցանք դիտում էր միայն թմրադեղերից ստացված եկամուտը, սակայն տարիների ընթացքում այդ խմբում ներառվել է հանցագործությունների բավականին լայն ցանկ (թրաֆիքինգ, զինամթերք, կոռուպցիա): Ընդհանուր առմամբ «փողերի լվացումը» բնորոշվում է որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման գործընթաց, որի նպատակը հենց այդ եկամուտները թաքցնելն է: Նշված գործընթացն իրականացնող կամ օժանդակող (ուղղակի կամ անուղղակի կերպով) օղակներ են տարբեր ֆինանսական (օրինակ՝ առևտրային բանկերը, ապահովագրական ընկերությունները) և ոչ ֆինանսական հաստատությունները (օրինակ՝ օֆշորային երկրներում գրանցված կազմակերպությունները, բարեգործական ընկերությունները):

Հայաստանի Հանրապետությունում «փողերի լվացում» հասկացությունը չնայած գործավում է շատ հաճախ, սակայն իրավական առումով այն ամրագրված է որպես «հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում», և ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածում տրված է դրա հետևյալ սահմանումը. «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) համարվում է «հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում» (փողերի լվացում): Քրեական օրենսգրքը սահմանում է նաև վերը նշված արարքի համար պատիժ (կախված գույքի կամ եկամտի չափից և կատարման ձևից՝ նախատեսվող պատիժը տարբեր է), ինչպես նաև այն

հանցագործությունների տեսակները, որոնց արդյունքում ձեռք բերված միջոցները կարող են համարվել հանցավոր ճանապարհով ստացված գույք (այդ թվում՝ դրամական միջոցներ, արժեթղթեր կամ գույքային իրավունք):

Գաղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետությունում «ստվերային տնտեսություն» երևույթը արմատացել է տնտեսության ազատականացման պահից: Մասնավոր սեփականության հաստատումը, կենսամակարդակի անկումը, նոր և անկատար հարկային և մաքսային համակարգերը, հարկերի և մաքսային դրույքաչափերի բարձր լինելը, վճարումների գերակշռող մասի կանխիկ կատարելը (որը նաև առևտրային բանկերի նկատմամբ վստահության ցածր մակարդակի հետևանք էր), ինչպես նաև կոռուպցիայի բարձր մակարդակը նպաստեցին երկրում «ստվերային տնտեսության» ձևավորմանը: Ցանկացած ձեռնարկատիրական գործունեություն, որի արդյունքում թաքցվում է որոշակի եկամուտ՝ չվճարված հարկերի տեսքով, համարվում է ստվերային տնտեսություն:

Տարբեր դրսևորումներով այն առկա է մեր տնտեսության բոլոր սեկտորներում՝ լուրջ խոչընդոտելով տնտեսության զարգացումը: Մասնավորապես առկա ստվերային տնտեսությունը (տարբեր գնահատականներով այն կազմում է երկրի ՀՆԱ-ի 40%-60%) խոչընդոտում է արտադրության և առևտրի զարգացումը՝ անհավասար պայմաններ սահմանելով այն ձեռնարկատերերի համար, ովքեր գործում են իրավական դաշտում: Ստվերային տնտեսության մեծ ծավալները վերջին հաշվով նպաստում են պետական բյուջեի դեֆիցիտի աճին, քանի որ հարկերի մի մեծ մաս չեն հավաքագրվում տնտեսվարող սուբյեկտներից: Խոշոր եկամուտներ են թաքցվում առևտրի և ծառայությունների ոլորտներում, այսինքն՝ գործարքների մեծամասնությունն իրականացվում է տնտեսության օրինական հատվածում (այլ ոչ օրինակ զենքի կամ թմրադեղերի գործունեության մեջ)՝ իրական շրջանառության ծավալները թաքցնելու համար, որի նպատակը հարկային բեռի նվազեցումն է:

ՀՀ տնտեսության համար բնորոշ է փողերի լվացման հենց այն տեսակը, երբ փողերի լվացումը հարկերից խուսափման հետևանք է: ՀՀ-ն ունի ներմուծող տնտեսության կարգավիճակ, որը մեծ չափով նպաստում է նմանատիպ երևույթների ավելացմանը: «Ստվերային տնտեսության» առաջացման գլխավոր պատճառները, ինչպես աշխարհի շատ տնտեսություններում, այնպես էլ Հայաստանում հարկային վճարումներից խուսափելն է, որն էլ, իր հերթին, կարելի է համարել «փողերի լվացման» նախորդող հանցանք: Պետք է նշել, որ «փողերի լվացման» նախորդող հանցանք համարվող հանցագործությունների շարքում հարկերից խուսափումը միշտ էլ զբաղեցրել է առաջնային դիրքեր¹, իսկ վերջին տարիներին այն ունի միայն աճելու միտում:

Նմանատիպ հանցանքների տեսակները բավականին մեծ տարածում ունեն անցումային և զարգացող տնտեսություն ունեցող պետություններում, որտեղ տնտեսվարող սուբյեկտները պետական բյուջե չվճարած հարկերը փորձում են տարբեր ճանապարհներով թաքցնել և դրանց օրինական տեսք տալ:

Նույն գործընթացը կատարվում է նաև ՀՀ-ում: Այստեղ խնդիրն առավել արդիական է այն պարզ պատճառով, որ արտաքին հաշվեկշռում տարեցտարի ներմուծման կշիռը մեծանում է, և, հետևաբար, մեծանում է ներկրվող ապրանքերի չհարկման հավանականությունը, որն էլ, ի վերջո, նպաստում է «ստվերային» տնտեսության աճին. տնտեսվարող սուբյեկտները, փորձելով թաքցնել իրենց իրական շրջանառության ծավալները, մաքսագերծում են ներմուծված ապրանքները ոչ դրանց իրական արժեքներով կամ ոչ ամբողջ ծավալով, ինչը նշանակում է, որ այդ ապրանքների չհայտարարագրված մասի իրացումը կատարվում է ստվերում (չի բացահայտվում կազմակերպության հաշվապահական հաշվառման և այլ փաստաթղթերում): Արդյունքում պետական բյուջեն ոչ միայն չի ստանում ապրանքի մաքսագերծման համար սահմանված գումարը, այլև, վերջին հաշվով, նաև ուղղակի հարկային եկամուտների տեսքով սահմանված գումարները: Տնտեսվարող սուբյեկտներն էլ, իրենց հերթին, չհարկված գումարով ձեռք են բերում նոր ապրանքներ, և գործընթացը նորից կրկնվում է: Այս գործընթացը գնալով նմանվում է փակ շղթայի, որտեղ նշված ցիկլը միշտ

¹ Ըստ 2009թ. փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների հանձնախմբի կողմից կատարված փոխադարձ գնահատման հաշվետվության մեջ տեղ գտած վիճակագրական տվյալների՝ նշված ժամանակահատվածում արձանագրվել են թվով 234 հարկերից, վճարներից և տուրքերից խուսափելու դեպքեր:

կրկնվում է: Նմանատիպ գործարքները տեղի են ունենում նաև տեղական արտադրողների շրջանակում: Հատկապես ներմուծող տնտեսվարող սուբյեկտները վերը նշված գործընթացն իրականացնում են ֆինանսական հաստատությունների, հիմնականում բանկերի միջոցով, օգտագործելով իրենց հետ կապված ֆիզիկական անձանց, ովքեր էլ կատարում են ոչ իրական արժեքով կամ ծավալով չհայտարարագրված ապրանքների վճարումներ: Խնդիրը բարդանում է նաև նրանով, որ մաքսային մարմինները շատ դեպքերում նպաստում են ապրանքների թերի կամ ոչ ամբողջ ծավալով հայտարարագրմանը: Վճարումները, որոնք կատարվում են բանկային փոխանցումների տեսքով, ըստ էության, «փողերի լվացում» են, քանի որ արդեն նշված ՀՀ քրեական օրենսգրքում հարկերից խուսափելու արդյունքում ձեռք բերված եկամուտը համարվում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտ (քրեական օրենսգրքի 205-րդ հոդված), իսկ փոխանցման, գործարքների կատարման գործընթացը օրինականացման կարևոր փուլերից մեկն է: 2008 թվականի մայիսի 26-ին ընդունված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը նմանատիպ գործարքները սահմանում է որպես փողերի լվացման առումով կասկածելի գործարքի հիմք և ֆինանսական հաստատություններին ինչ-որ տեղ պարտադրում է արձագանքել նման գործարքների:

Պետք է նշել, որ նմանատիպ գործարքները ՀՀ առևտրային բանկերում տեղի են ունենում շատ հաճախ, և դրանց բոլորին արձագանքելը բավականին բարդ խնդիր է, քանի որ ֆիզիկական անձանց կողմից դեպի իրավաբանական անձինք կատարվող գրեթե բոլոր փոխանցումները ձեռնարկատիրական նպատակ են հետապնդում: Ծավալների մեծ լինելու պատճառով որոշ բանկեր հրաժարվում են նման գործարքներ կատարելուց, որոշ բանկեր էլ կատարում են վերապահումներով: Արդյունքում հաճախորդներն ունենում են դժվարություններ գումարներն արտերկրի իրենց գործընկերներին փոխանցելիս, բանկերը չեն ստանում որոշակի եկամուտ, մինչդեռ վերահսկման արդյունավետությունը գրեթե չի բարձրանում: Առևտրային բանկերի և քրեական հետապնդումն իրականացնող մարմինների միջև համապատասխան կապն իրականացնող մարմինը՝ ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնը, առևտրային բանկերից համապատասխան պարբերականությամբ և քանակով նման ազդանշաններ ստանալու դեպքում օբյեկտիվ պատճառներով չի կարող արձագանքել բոլորին: Բացի այդ, և որն ավելի կարևոր է, գոնե կարճաժամկետ հատվածում վերահսկողության խիստ մակարդակը կարող է բերել տնտեսական ակտիվության նվազման, քանի որ ձեռնարկատերերը դեռևս պատրաստ չեն ամբողջությամբ դուրս գալու «ստվերից»: Մեր կարծիքով օրենքի տարրի հստակ կիրառումը ՀՀ տնտեսության զարգացման նման մակարդակի դեպքում չի կարող ամբողջ չափով արդյունավետ լինել: Ավելի նպատակահարմար կլիներ մշակել ճկուն հարկային համակարգ, որն առաջին հերթին տնտեսական առումով կնպաստի փոքր և միջին ձեռնարկատերերի մի մեծ խմբի՝ ստվերային դաշտից դուրս գալուն և զերծ կպահի նրանց ապօրինի փոխանցումներ կատարելուց:

ՀԱՐԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ հարկերը գոյություն են ունեցել շատ հին ժամանակներից: Պատմականորեն հարկերի ծագումը կապված է հասարակության ըստ տարբեր խմբերի, շերտավորման և պետության ձևավորման հետ¹: Լայն իմաստով հարկ հասկացությունը կարելի է հասկանալ որպես պարտադիր, չփոխհատուցվող վճարում, որը հիմնված է պետական հարկադրանքի վրա և չի կրում փոխհատուցման բնույթ²: Պետության կողմից հարկերի գանձումը նպատակ ունի ապահովելու պետության կենսագործունեությունը, ու չնայած մարդկությունն օբյեկտիվորեն և սուբյեկտիվորեն միշտ էլ դժգոհել է հարկային բեռի ծանրությունից կամ նույնիսկ գոյությունից, փաստն այն է, որ անտիկ ժամանակաշրջաններից պետության անվտանգության ապահովման համար բանակ ունենալու, հոգևոր ոլորտը վերահսկող եկեղեցիները պահպանելու, տնտեսական համակարգի բաղկացուցիչները կազմող ջրամբարների, ոռոգման համակարգերի, ճանապարհների, նավահանգիստների, շուկաների և այլ ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև իշխանության հարաճուն ծախսերն ապահովելու համար անհրաժեշտ էին ֆինանսական, նյութական և աշխատանքային ռեսուրսներ, որոնք գոյանում էին հենց հարկային համակարգի միջոցով:

Տարբեր հեղինակներ հարկերի վերաբերյալ իրենց քննարկումներում տարբեր կերպ են մեկնաբանում հարկերի ունեցած դերը և կարևորությունը: Այսպես, պետության գոյատևման տեսանկյունից կարևորվում է հարկերի ֆիսկալ, այսինքն՝ պետական եկամուտների ապահովման գործառույթը, և դարերով այն ներկայացվում էր որպես հարկերի կարևորագույն գործառույթ: Սակայն բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ հարկերի՝ տնտեսության մեջ ունեցած դերն ու կատարած գործառույթները չեն սահմանափակվում մնան նեղ դաշտով. ավելին, տնտեսական տարբեր իրավիճակներում հարկերը կարող են իրականացնել շատ ավելի հրատապ գործառույթներ: Նպատակ չունենալով այս կամ այն կերպ գերազնահատել կամ թերագնահատել հարկերի իրականացրած գործառույթները՝ ցանկանում ենք նշել, որ գործառույթների մնան տարանջատումը խիստ պայմանական է, քանի որ դրանք տնտեսական և իրավական տարբեր հարթություններում հատվում և միախառնվում են: Բացի ֆիսկալ գործառույթից՝ հարկերն իրականացնում են նաև մի շարք գործառույթներ՝ կարգավորող, բաշխող կամ սոցիալական, վերահսկող և այլն:

Հարկի ֆիսկալ գործառույթն ամենաշատ քննարկվող և կարևորվող գործառույթն է, ինչը կապված է հարկ երևույթի պատմական առաջացման անհրաժեշտության հետ: Ժամանակակից աշխարհում հարկի ֆիսկալ գործառույթի կիրառմամբ պետությունը դրամական միջոցներ է հավաքագրում համապատասխան բյուջեներում կամ արտաբյուջետային ֆոնդերում և դրանք ուղղում պետական և տեղական խնդիրների լուծմանը, կամ օգտագործում կոնկրետ ծրագրերի իրականացման նպատակով: Այսպիսով, հարկի ֆիսկալ գործառույթը պետության և պետականության գոյության ֆինանսական երաշխիքն է: Ֆիսկալ գործառույթի միջոցով հավաքագրելով դրամական միջոցներ՝ նախադրյալներ են ստեղծվում հարկի մյուս գործառույթների իրականացման համար:

Հարկ է նշել, որ պետության սահմանափակ ֆինանսական հնարավորությունների պարագայում հարկի ֆիսկալ գործառույթի կիրառումը կարող է իրական պատուհաս դառնալ տնտեսության համար: Նման իրավիճակի պարագայում պետական համակարգն իր ողջ ջանքերն ուղղում է ոչ թե տնտեսական համակարգի արդյունավետության բարձրաց-

¹ Маркс К., Энгелс Ф., Соч., 2-е издание, т. 21, с. 171.

² Перов А. В., Толкушкин А. В., “Налоги и налогообложение”, учебное пособие, 8-е изд., перераб. и доп. Москва, Юрайт-Издат, 2007г., с. 22.

մանը, այլ պետության ընթացիկ ֆինանսավորմանը: Նման քաղաքականությունը խաթարում է բազմաթիվ տնտեսական մեխանիզմներ, նվազեցնում է տնտեսական ներուժը և ըստ այդմ՝ հետագայում հարկային մուտքերի ավելացման հնարավորությունը:

Նման իրավիճակը հատկապես բնորոշ է հետխորհրդային, թերզարգացած և նաև զարգացող երկրներին: Հարկերի ֆիսկալ գործառույթի մասն «չարաշահումը» կարող է հանգեցնել նրան, որ ազգային հարկային համակարգը հայտնվի անվերջ շրջապտույտում՝ մի ձեռքով իրականացնելով հարկային եկամուտներ ավելացնելուն ուղղված և տնտեսությունը քայքայող քաղաքականություն, և մյուս ձեռքով՝ տնտեսական աճի խթանմանն ուղղված անհուսալի միջոցառումներ:

Հարկն ուղղակիորեն ազդում է նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա: Հանդես գալով որպես ծախս՝ այն իր դրոշմն է թողնում արտադրանքի ինքնարժեքի, իրացման գնի, ներդրումների տնտեսապես հիմնավորված ծավալի, ձեռնարկության հետագա ընդլայնման և տնտեսական մի շարք այլ երևույթների վրա, ինչը հնարավորություն է տալիս այն օգտագործել տնտեսության կարգավորման նպատակով: Հարկի կարգավորիչ գործառույթն իբրև տնտեսական խթանումների համալիր միջոց, նպաստում է տնտեսության մեջ այս կամ այն գործընթացների զարգացմանը, ինչպես նաև հարկային արտոնությունների, հարկային հաշվանցումների ու հարկային վարկի, ֆինանսական պատժամիջոցների ու հարկային դրույքաչափերի կիրառման միջոցով նպատակաուղղված ներգործություն է ունենում հասարակական վերարտադրության կառուցվածքի ու համամասնությունների վրա¹: Պետությունն այս կամ այն տնտեսական գործունեությունը սահմանափակելու նպատակով կարող է սահմանել բարձր դրույքաչափեր՝ այդ գործունեությունը դարձնելով նվազ շահութաբեր ներդրողների համար, և բարձրացնել գները՝ այդպիսի գործունեության արտադրանքի կամ ծառայությունների սպառման ծավալները նվազեցնելու նպատակով²:

Հարկ է նշել, որ կարգավորիչ գործառույթի իրականացումն այդքան էլ հեշտ և պարզ չէ: Նախ՝ տնտեսության տարբեր ճյուղերի նկատմամբ տարբերակված մոտեցումը կարող է բացասաբար անդրադառնալ պետության վարկանիշի վրա՝ վանելով օտարերկրյա ներդրումները: Մյուս կողմից, տարբեր ոլորտների համար խստացված հարկային պայմանների սահմանումը խթանում է այդ ոլորտում ստվերայնության բարձրացումը, որի դեմ պայքարը կարող է բավականին միջոցներ պահանջել, իսկ մեղմացված հարկային քաղաքականությունը կարող է հանգեցնել տնտեսական գործունեության արհեստական ձևախեղման՝ արտոնյալ ոլորտին կամ ձեռնարկություններին համապատասխանեցվելու նպատակով:

Ընդհանուր առմամբ, հարկային արտոնությունների տրամադրման գործում անհրաժեշտ է չափազանց զգուշավոր լինել: Այստեղ խնդիրը ոչ թե նման արտոնությունների բացառումն է, այլ արտոնյալ խմբերի հստակ տարանջատումը, ինչը պետք է բացառի տնտեսական մեխանիզմների բնականոն աշխատանքի խեղաթյուրումը: Հարկային կարգավորիչ գործառույթը պետք է առավելապես ժամանակավոր բնույթ կրի՝ որոշակի խնդիրների արագ հաղթահարման և շուկայական մեխանիզմների վերահաստատման նպատակով:

Շուկայական և ցանկացած այլ տնտեսության պայմաններում առաջանում են բնակչության սոցիալապես խոցելի խմբեր, որոնք ֆինանսական աջակցության կարիք են զգում: Ընդ որում, նման աջակցության կարիք կարող է լինել ինչպես անընդհատ՝ օրինակ՝ տարիքային կենսաթոշակառուների պարագայում, ինչպես նաև ժամանակավոր՝ օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակ կամ ժամանակավոր գործազրկության պարագայում: Պարզ է, որ ոչ ոք չի կարող երաշխավորվել նման իրավիճակներից, և մարդասիրական համակեցության պայմանները թելադրում են, որ «հաջողակները» որոշակիորեն պետք է հոգ

¹ *Խաչատրյան Ա.*, Հարկային իրավունք, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2003, էջ 76:

² *Սարգսյան Ա.*, Հարկային բեռի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում թեկնածուական ատենախոսություն, կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտ, Երևան, 2006, էջ 23:

տանեն «դժբախտության մեջ» հայտնվածների համար: Նման կերպ ի հայտ է գալիս հարկի բաշխիչ, կամ սոցիալական գործառույթը, որի դեպքում հարկերը, գանձվելով որոշակի ժամանակահատվածում, կուտակվում են պետական և տեղական բյուջեներում կամ արտաբյուջետային ֆոնդերում, ինչպիսիք են, օրինակ, սոցիալական ապահովության և ապահովագրության ֆոնդերը, և ուղղվում են սոցիալապես կարիքավոր բնակչության ապահովմանը:

Հարկային համակարգը տնտեսության պետական վերահսկողության կարևորագույն բաղադրիչներից է: Օրենսդրորեն սահմանելով տարբեր հարկատեսակների դրույքաչափեր, հաշվարկման և վճարման պարբերություններ, հաշվարկի մեթոդաբանություն և սկզբունքներ՝ պետությունը, ի դեմս հարկերի, ձեռք է բերում տնտեսության ներսում առկա կապերի, դրամական միջոցների շարժի, աշխատուժի և ապրանքների տեղափոխությունների վերահսկման բավականին հուսալի համակարգ: Տնտեսության նման վերահսկողության անհրաժեշտությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ տնտեսական դաշտում են բախվում բնակչության, ձեռնարկությունների, ներդրողների, պետական ինքնիշխանության կենսական շահերը: Ընդ որում, նման հարաբերությունների մասնակիցները, որպես կանոն, տիրապետում են անհավասար իշխանության և տեղեկացվածության, ինչը չարաշահումների, տնտեսական հանցագործությունների պարարտ հող է ստեղծում:

Անցումային կամ հետանցումային երկրներում հարկային համակարգի վերահսկիչ գործառույթի իրականացումը բավականին դժվար է: Այդ դժվարությունը կապված է, մի կողմից, օրենսդրության անկատարության, և մյուս կողմից՝ տարբեր գերիզուր տնտեսական շահի կենտրոնների ձևավորման և փաստացի օրենքից դուրս գործելու հնարավորության հետ: Տարբեր զարգացած երկրների տնտեսական պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման խնդիր շուկայական տնտեսության ձևավորման սկզբնական փուլերում գոյություն է ունեցել, ըստ էության, բոլոր երկրներում: Այս առումով հետխորհրդային երկրներում առկա իրավիճակը կարելի է գնահատել բնականոն: Սակայն, մյուս կողմից, հասարակության խոշոր տնտեսական շահի կենտրոնների վերահսկողության հիմնավորված պահանջը պարտադրում է ունենալ հարկերի վերահսկիչ գործառույթն անթերի կատարող համակարգ, որի ստեղծումը, հանուն արդարության նշենք, այնքան էլ հեշտ խնդիր չէ:

Ժամանակակից ցանկացած երկրում հարկային համակարգն արդեն վաղուց վերաճել է սոսկ ֆիսկալ գործառույթ իրականացնող պարզունակ գործիքի: Հարկային համակարգն արդյունավետորեն օգտագործվում է ինչպես տնտեսության այս կամ այն հատվածը խթանելու, այնպես էլ ազգային եկամուտը տարբեր սոցիալական խմբերի միջև վերաբաշխելու, ինչպես նաև տնտեսական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու համար:

Այնուամենայնիվ, ժամանակակից աշխարհում իշխանություններն այնքան էլ ազատ չեն հարկային քաղաքականության սահմանման և իրականացման գործում: Բացի այն, որ նման ազատությունը սահմանափակված է տարբեր միջազգային կառույցներին անդամակցությամբ և ստանձնած պարտավորություններով, այլև ազգային օրենսդրությամբ սահմանված մի շարք սկզբունքային մոտեցումներով: Այլ կերպ ասած, հարկային քաղաքականություն մշակողներն ու իրականացնողներն իրենց գործունեությունն անհրաժեշտաբար պետք է իրականացնեն որոշակի սկզբունքների շրջանակներում: Հարկման սկզբունքների պահպանումն անհրաժեշտ է այն առումով, որ հարկային քաղաքականությունը պետք է լինի կանխատեսելի, արդարացի, ապահովի հավասար պայմաններ բոլոր տնտեսվարողների համար և այլն:

ՀՀ հարկային համակարգի առանձին սկզբունքներ սահմանված են ՀՀ սահմանադրությամբ¹: Այսպես, սահմանադրության 45-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել

¹ ՀՀ սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀՊՏ 2005.12.05/ հատուկ թողարկում, հոդ. 1426:

պարտադիր այլ վճարումներ, իսկ 83.5 հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների տեսակները, չափը, վճարման կարգը սահմանվում են բացառապես ՀՀ օրենքներով:

Շատ երկրներում հարկման սկզբունքները սահմանված են ազգային հարկային օրենսդրությամբ: Օրինակ՝ Ռուսաստանի հարկային օրենսգիրքը սահմանում է հարկման 7 սկզբունքներ: Դրանցում ամրագրված են այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ յուրաքանչյուր անձի կողմից օրենքով սահմանված հարկերը և տուրքերը վճարելու պարտավորությունը, հարկերի և տուրքերի՝ սոցիալական, ռասայական, ազգային, հոգևոր և նմանատիպ չափանիշներից խտրական բնույթ ունենալու բացառման պահանջը, հարկերի և տուրքերի տնտեսական հիմնավորվածությունը, հարկերի՝ միայն օրենսդրությամբ սահմանվելու պահանջը և այլն:

Յավոք, ՀՀ օրենսդրությունն ուղղակիորեն չի սահմանում ՀՀ-ում իրականացվող հարկային քաղաքականության նման մանրակրկիտ սկզբունքներ: Իհարկե, այդ սկզբունքները ձևավորվում են անուղղակիորեն, այլ նորմատիվ և իրավական ակտերով սահմանված դրույթներով, սակայն նման սահմանումն անուղղակի է: Հավանաբար, հարկման սկզբունքների սահմանման բացակայությունը պայմանավորված է հարկային օրենսգրքի բացակայությամբ: Հարկերի մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշվում է, որ օրենքով սահմանվում են հարկի հասկացությունը և հարկերի տեսակները, հարկային վեճերի լուծման կարգը, հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի խախտումների համար պատասխանատվությունը, ինչպես նաև այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում են հարկերի մասին ՀՀ օրենսդրությունը և հարկային հարաբերություններ կարգավորող մյուս իրավական ակտերը: Սակայն օրենքում հարկային համակարգի սկզբունքների մասին հիշատակումները բացակայում են¹:

Այս առումով հետաքրքիր է տնտեսագիտական գրականության մեջ ներկայացված հարկման այն 4 հիմնական տեսական սկզբունքների ուսումնասիրությունը, որոնց ապահովումը միայն կարող է հիմք ստեղծել հարկային արդյունավետ համակարգ ունենալու համար: Դրանք են.

- արդարության սկզբունք,
- որոշակիության սկզբունք,
- հարմարության սկզբունք,
- տնտեսման սկզբունք:

Հարկման արդարության սկզբունքը ենթադրում է, որ հարկեր պետք է վճարեն բոլորը՝ իրենց եկամուտներին համապատասխան: Այլ կերպ ասած՝ այս սկզբունքը սահմանում է հարկերի համընդհանուր բնույթը, և այն, որ հարկային վճարումների չափն ուղղակիորեն կախված է հարկման օբյեկտի մեծությունից:

Հարկման արդարության սկզբունքն առավել հաճախ քննարկվող, հասարակական առավել մեծ հնչեղություն ունեցող, առավել դժվար վերահսկելի դրույթներից է: Ընդ որում, սկզբունքի ապահովումը բարդ է ինչպես տեսական (օրենսդրական) առումով, այնպես էլ գործնական առումով: Այսպես, եթե ուղղակի հարկերի պարագայում հարկման արդարության սկզբունքի օրենսդրական ամրագրումը բավականին դժուր է, ապա նույնը չի կարելի ասել անուղղակի հարկերի մասով: Օրինակ՝ ապրանքի գնի մեջ ներառված ակցիզային հարկը գումարային արտահայտությամբ նույնն է բոլոր գնորդների համար, սակայն երբ այն ներկայացնում ենք գնորդների եկամուտների մասնաբաժնի տեսքով, նվազ եկամուտ ունեցողների համար այն ավելի մեծ տոկոս է կազմում: Այսինքն, անուղղակի հարկերի դեպքում կարելի է արձանագրել, որ հարկման արդարության սկզբունքը որոշակիորեն չի պահպանվում:

¹ ՀՀ օրենքը հարկերի մասին, ՀՀՊՏ 1997.05.20/11, հոդված 1:

Նույնը կարելի է ասել և արդարության սկզբունքի գործնական ապահովման տեսանկյունից: Հարկային վարչարարության թերությունները, տնտեսական շահի գերկենտրոնացումները, կոռուպցիոն ռիսկերն ու մի շարք այլ բացասական երևույթներ հանգեցնում են նրան, որ գործնականում խախտվում է հարկի համընդհանրությունը, և ի հայտ են գալիս «արտոնյալ» տնտեսվարողներ: Արդյունքում խաթարվում են շուկայական տնտեսության հիմնադրույթները, և տնտեսական մեխանիզմները դառնում են անկառավարելի: Միաժամանակ, հասարակությունը կորցնում է վստահությունը հարկային և պետական համակարգի նկատմամբ, նվազում է գործարարությամբ զբաղվելու ձգտումը, իսկ երկրի միջազգային վարկանիշային գնահատականները չեն բարելավվում՝ իրենց բոլոր բացասական դրսևորումներով:

Այս է պատճառը, որ հարկման արդարության սկզբունքի կարևորությունը գիտակցում են անգամ անտիկ դարաշրջանի մտածողները: Սակայն պետք չէ կարծել, թե արդարության սկզբունքի աներկբա պահպանումը սուկ ցանկությունների խնդիր է: Ընդհակառակը, արդարության սկզբունքով բնութագրվող հարկային համակարգի կերտումը պահանջում է երկարատև և քրտնաջան աշխատանք՝ ինչպես օրենսդիր մարմնում՝ կատարյալ օրենքների ընդունման նպատակով, այնպես էլ գործադիր մարմնում՝ արհեստավարժ հարկային ծառայողներ պատրաստելու և գործուն վարչարարական գործիքներ ներդնելու տեսքով:

Հարկման որոշակիության սկզբունքը պահանջում է, որ վճարման գումարը, եղանակը և ժամանակը նախօրոք հայտնի լինեն վճարողին: Այլ կերպ ասած, հարկատուները պետք է վստահաբար տեղյակ լինեն իրենց հարկային պարտավորությունների մեծության, վճարման եղանակի և ժամանակային շրջանակների մասին: Ի տարբերություն հարկման արդարության սկզբունքի՝ որոշակիության սկզբունքի ապահովումը շատ ավելի դյուրին խնդիր է և մեծամասամբ լուծելի է:

Այսպես, առանձին հարկատեսակների մասին օրենքները հստակ սահմանում են հարկ վճարողների շրջանակը, դրույքաչափերը, հաշվարկների ներկայացման և հարկային վճարումների կատարման պարբերականությունը, առանձին դեպքերում՝ կանխավճարների կատարման պարտավորությունը, հարկի հաշվարկման կարգն ու մեթոդաբանությունը: Իրավական հարթությունում սահմանված են նաև հարկային վճարումներ ստացողների հաշիվները, հարկային պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման իրավական հետևանքները, ինչը, իրականում, ոչ պակաս կարևոր հանգամանք է: Այսինքն, իրավական հարթությունում որոշակիության սկզբունքի պահպանումը լրիվ իրատեսական է:

Սակայն գործնականում պատկերը հաճախ կարող է բոլորովին տարբերվել նկարագրվածից, ինչը որոշակիորեն բնորոշ է սակավ ֆինանսական հնարավորություններ ունեցող երկրներին: Նման երկրներում, որտեղ հարկային ֆիսկալ գործառույթը գերիշխում է մյուս բոլոր գործառույթների նկատմամբ, իսկ հարկային մարմինները ստիպված են բյուջեի հարկային եկամուտներն ապահովելու համար «քամել» տնտեսությունը, շատ հաճախ հարկի որոշակիությունը կոպտորեն խախտվում է: Նման դեպքերում հարկային մարմինները ստիպված են բանակցել կամ պարտադրել հարկատուներին կանխավճարներ կատարել, կամ կրել օրենքով սահմանվածից ավելի հարկային պարտավորություններ: Նման պատկերն էլ ավելի մռայլ է դառնում այն դեպքում, երբ չի պահպանվում հարկման արդարության սկզբունքը, և լրացուցիչ հարկային պարտավորությունների բեռն ամբողջությամբ ընկնում է հարկ վճարողների միայն մի հատվածի վրա: Ընդ որում, ինչպես ցույց է տալիս կյանքը, այդ հատվածի դերում առավել հաճախ հանդես է գալիս փոքր և միջին ձեռներեցությունը, ինչը հարկի որոշակիության սկզբունքը չպահպանելը դարձնում է ավելի քան վտանգավոր: Արդյունքում կրկին խաթարվում են շուկայական տնտեսության հիմնադրույթներն ու տնտեսական մեխանիզմները, հասարակությունը կորցնում է վստահությունը հարկային և պետական համակարգի նկատմամբ, նվազում են գործարարությամբ զբաղվելու ձգտումը, երկրի միջազգային վարկանիշային գնահատականները և այլն:

Հարկերի հարմարության սկզբունքը ենթադրում է հարկի գանձում այն պահին և այն եղանակով, որոնք առավել հարմար են վճարողի համար: Դա նշանակում է, որ հարկերի վճարման ժամկետները որոշակիորեն պետք է փոխկապակցված լինեն ձեռնարկատիրական գործունեության ֆինանսական արդյունքների և սեզոնային գործոնների հետ: Այս սկզբունքի ապահովումը նույնպես մեծամասամբ կապված է համապատասխան օրենսդրական դրույթների ընդունման հետ, և կրկին բավականին հեշտ իրականացնելի է:

Սակայն այն ամենը, ինչ ներկայացվեց հարկերի որոշակիության վերաբերյալ քննարկման ընթացքում, իրավացի է նաև այս դեպքում: Սակավ ֆինանսական հնարավորություններ ունեցող երկրների պարագայում, ուղեկցվելով հարկման ֆիսկալ գործառույթի գերակայության հետ, հարմարության սկզբունքը չպահպանելը կարող է առավել ցավագին լինել: Այսպես, փորձը ցույց է տալիս, որ ֆինանսական հաշվետու ժամանակաշրջանների ավարտին որոշակիորեն ավելանում են հարկատուների նկատմամբ ճնշումները՝ հարկային օրենսդրությամբ սահմանված թույլատրելի վերջնաժամկետից շուտ հարկային վճարումներ կատարելու հորդորները:

Տնտեսման սկզբունքի էությունը հարկերի գանձման ծախսերի կրճատման, հարկման համակարգի ռացիոնալացման մեջ է: Դա նշանակում է, որ հարկային համակարգը չի կարող ուռճացված լինել, իսկ լրացուցիչ հարկային մուտքերի ապահովման համար կատարվող ներդրումները կամ ծախսերը պետք է տնտեսապես հիմնավորված լինեն: Դա հատկապես վերաբերում է հարկային վարչարարության կատարելագործմանը. չի կարելի բարեփոխումները դրական գնահատել միայն այն պատճառաբանությամբ, որ դրանց հետևանքով ավելացել են հարկային եկամուտները: Շատ ավելի կարևոր է բարեփոխումների որակական կողմը՝ հարկային համակարգի վրա ծախսված ֆինանսական և մարդկային միջոցների աշխատանքի արդյունավետությունը, հարկային պարտաճանաչության ավելացումները և այլն:

Ազգային հարկային համակարգի կանխատեսելիության և ամբողջականության ապահովման տեսանկյունից կարևոր ենք համարում հարկային քաղաքականության և հարկման սկզբունքների օրենսդրորեն ամրագրումը: Ընդ որում, այդ սկզբունքները պետք է լինեն տնտեսագիտական և միջազգային լավագույն հենքով և կանխորոշեն հարկային համակարգի զարգացման ուղղությունները: Մեր կարծիքով առավել ռացիոնալ կլինի հարկային ոլորտի կարգավորման նպատակով մշակել հարկային օրենսգիրք, որը կհամախմբի հարկերի մասին առանձին օրենքներն ու օրենսդրական ակտերը՝ պարզեցնելով և կրճատելով հարկային համակարգը կարգավորող օրենսդրական հիմքը: Միաժամանակ, հարկային օրենսգրքով կարող են սահմանվել հարկային քաղաքականության և հարկման սկզբունքները, որոնք օրենսդրական ուղեցիղներ կլինեն հարկային համակարգի կերտման և կատարելագործման համար:

ՆԵՐՂՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԻՒՅ ԳՈՒԵՏՍԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Ամփոփագիր

Վերջին 20 տարիների ընթացքում Իրանում բազմաթիվ օրենքներ և կանոնակարգեր են ընդունվել, որոնց հիմնական նպատակը օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, տնտեսական, ինչպես նաև մշակութային ու սոցիալական զարգացմանը նպաստելն է¹: Ներդրումների ներգրավման ու ներդրումային դաշտի զարգացման վրա ազդող գործոնների հետազոտման համար տարբեր էկոնոմետրիկ մոդելներ են կիրառվել մի շարք հետազոտություններում, սակայն ցուցանիշների հաշվեկշռված համակարգը դեռևս չի կիրառվել այդ նպատակի համար: Սույն հոդվածում փորձ է արվել վերոհիշյալ մեթոդի օգնությամբ ներկայացնել օտարերկրյա ներդրումների ներգրավման և զարգացման մի շարք ծրագրեր ու չափորոշիչներ, ինչպես նաև SWOT մեթոդի կիրառման միջոցով մշակել համապատասխան ռազմավարական ծրագիր ու գործողությունների պլան:

Բանալի բառեր

Գոլեստան գավառ, ներդրում, օտարերկրյա ներդրում, ներդրումների ներգրավման գործընթացը կարգավորող օրենք, ցուցանիշների հաշվեկշռված համակարգ, գործողությունների պլան:

Կապիտալի կուտակումը տնտեսական աճի գործընթացի հիմնական նախադրյալներից է: Տնտեսագետների կարծիքով կապիտալը տնտեսական աճի շարժիչ ուժն է: Կապիտալի ֆինանսավորումը հնարավոր է իրականացնել 2 ճանապարհով՝ ներքին (խնայողություններ և պետական միջոցներ) և արտաքին (արտաքին պարտք և օտարերկրյա կապիտալի ներգրավում) ռեսուրսների միջոցով²: Այդ պատճառով Իրանի Իսլամական Հանրապետությունում բազմաթիվ օրենքներ և կանոնակարգեր են ընդունվել³ (հատկապես 5-րդ տնտեսական զարգացման ծրագիրը⁴), որոնց նպատակը օտարերկրյա ներդրումների ներգրավմանն աջակցելն ու բիզնես միջավայրի բարելավումն է:

Գոլեստան գավառը գտնվում է Իրանի հյուսիսում՝ Կասպից ծովի հարավ-արևելքում, և 20437.7 կմ² տարածքով զբաղեցնում է Իրանի ողջ տարածքի 1.3%-ը:

Տարածաշրջանը հյուսիսից սահմանակցում է Թուրքմենստանին, արևմուտքից՝ Մազանդարան տարածաշրջանին և Կասպից ծովին, հարավից՝ Մեմնան տարածաշրջանին: Այն ունի 25 քաղաք և 1009 գյուղ: 2010թ. տվյալներով Գոլեստանն ունի 1 687 հազ. բնակչություն:

Տարածաշրջանը ներդրողների ներգրավման համար մի շարք գրավիչ պայմաններ ունի, մասնավորապես գյուղատնտեսության համար բարենպաստ եղանակային պայմանները, աշխարհագրական դիրքը, միջինասիական երկրների հետ սահմանակցությունը, մատչելի բանկային ծառայությունների մատուցումը, գործարանների հիմնադրման համար էժան հողատարածքների տրամադրումը, թույլ զարգացած վայրերում հարկային արտոնությունների տրամադրումը և այլն:

¹ Mosavi afsaneh and Tahery Fard Ehsan, She foreign investment direction in fifth program, number 367, 1389, 20010, Tehran, 34 pages (page 7).

² The management and programming organization, the vision document of Islamic republic of Iran 1404 year perspective (2025), 2003, 16 pages (different pages).

³ The investment organization and Iran economical and technical distribution the executive law of absorbing and supporting foreign investment 2002, Naghsh Jahan publishing company, Tehran, 2005, 35 pages (different pages).

⁴ The president leading observation and programming ministry, the fifth program Law of economy development, of Islamic Republic of Iran, Tehran, 2011. 132 pages (different pages).

Տարածաշրջանի առավել նպաստավոր պայմաններից են՝

- ներդրողներին տրամադրվում են ռեալով կամ արտարժույթով արտահայտված անսահմանափակ վարկային միջոցներ,
- Գոլեստանում կան 22 արդյունաբերական հաստիքներ, որոնք ունեն համապատասխան ենթակառուցվածքներ, հողի էժան գին և բարենպաստ պայմաններ,
- հարկային զգալի արտոնությունները, մասնավորապես թույլ զարգացած վայրերում գործարարներն ազատված են բոլոր տեսակի հարկերից, օրինակ՝ Աթրակում,
- Գոլեստանում կան համապատասխան տրանսպորտային ենթակառուցվածքներ՝ օդանավակայան, երկաթուղի, ինչպես նաև մայրուղի¹, և այլն:

Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի մոդելն առաջին անգամ կիրառվել է Հարավարդյի համալսարանի պրոֆեսոր Կապլանի կողմից²: Մոդելը մի եղանակ է, որի դեպքում համապատասխան նպատակների և հիմնական ուղղությունների ընտրության միջոցով հնարավոր է լինում հասնել ցանկալի նախատեսվող արդյունքին: Միևնույն ժամանակ մոդելը ներկայացնում է նպատակներին հասնելու համար գործողության ծրագիր: Այս եղանակը ռազմավարությունը գործողություն դարձնելու միջոց է: Մոդելն ունի գործողությունների 7 քայլ: Դրանք են՝

1. Կանխատեսվող ցանկալի արդյունքի մշակում և դրան հասնելու համար հիմնական ուղղությունների ընտրություն, որոնք պետք է իրականացվեն SWOT եղանակով:
2. Կարևոր հեռանկարների առանձնացում, որոնք հաջողությանը նպաստող գործոնների վերլուծության և ասիմիլյացիայի արդյունք են:
3. Ռազմավարության քարտեզի նախագծում, որն առանձնացնում է յուրաքանչյուր կանխատեսվող արդյունքի հասնելու նպատակները:
4. Յուրաքանչյուր նպատակի համար առավելագույն արդյունավետ գործոնների սահմանում:
5. Յուրաքանչյուր արդյունավետ գործոնի կատարողականության չափման սահմանում:
6. Թվային նպատակների սահմանում:
7. Թվային նպատակներին հասնելու համար գործողությունների ծրագրի պատրաստում:

Իրանում և Գոլեստան գավառում ներդրումների ներգրավման նպատակով ցուցանիշների հաշվեկշռված համակարգի կիրառման նպատակով աղյուսակը բաժանել ենք յոթ քայլանոց մակարդակների, որոնք պետք է նկարագրեն կանխատեսվող ցանկալի արդյունքին հասնելու գործընթացը: Տարբեր օրենքների շեշտադրման միջոցով մենք ներդրումների աջակցությունը դիտարկել ենք որպես պետության կարևորագույն նպատակ, իսկ այդ նպատակին հասնելու համար մի շարք կարևոր քայլեր են ձեռնարկվում կամ ձեռնարկվել են Գոլեստան տարածաշրջանի կողմից: Բացի այդ՝ աղյուսակում նշվել են մի շարք հնարավորություններ և վտանգներ, թույլ և ուժեղ կողմեր:

Քանի որ այս բնագավառը բավականին ընդգրկուն է, մենք փորձել ենք ներկայացնել միայն կարևորագույն կետերը:

¹ Government of Golestan province, deputy of planning, A guide on investment in Golestan province, center for persuasion and support of investment, Gorgan city, 2007, (92 pages, different pages).

² Kaplan, R.S & Norton, DP, The balanced score card – Measures that drive performance, Harvard Business Reviews, January – February 1992.

Առաջին քայլ: Կանխատեսվող ցանկալի արդյունքի սահմանումը և ռազմավարության մշակումը

59

Արտաքին միջավայրի վերլուծությունը	Կանխատեսվող ցանկալի արդյունքի սահմանումը		Ներքին ռեսուրսների վերլուծությունը		
<p>1 Իրանի ու նրա տարածաշրջանների նկատմամբ կիրառվող քաղաքական և տնտեսական սանկցիաները</p> <p>2 Իրանի մասին բացասական քարոզչությունը</p> <p>3 Ներդրողները վարկային գծերը կարող են օգտագործել միայն կարևորագույն նախագծերի համար</p> <p>4 Երկրի բարձր ռիսկայնությունը</p> <p>5 ԱՄՆ-ի և Համաշխարհային բանկի հետ Իրանի ու նրա տարածաշրջանների համագործակցության բացակայությունը</p> <p>6 Տարածաշրջանում Գոլեստանի ռազմավարական դիրքը</p> <p>7 Ներդրումների ներգրավման համար մրցակից տարածաշրջանները</p> <p>8 Օտարերկրյա ներդրողների կողմից Իրանում ներդրումներ կատարելու համար ցածր մոտիվացիան</p> <p>9 Համաշխարհային ճգնաժամը և դրա ազդեցությունները</p> <p>10 Կապիտալ ներդրումների և ապրանքների հոսքերը աշխարհում</p>	<p align="center">Ներդրումների ներգրավման աջակցությունը</p> <table border="1"> <tr> <td data-bbox="633 459 1111 1166"> <p>Ուժեղ կողմեր</p> <p>1 Տնտեսության ճյուղերը</p> <p>2 Արդյունաբերական հատվածների առկայությունը</p> <p>3 Ներդրումների կազմակերպում և ներդրումային հնարավորությունների բացահայտում</p> <p>4 Ներդրումներին աջակցող համապատասխան կանոնակարգերի առկայություն</p> <p>5 Նոր նախագծեր ընդունելու բարձր պատրաստակամություն</p> <p>6 Ներդրումային նախագծերի բարձր շահութաբերություն</p> <p>7 Զբոսաշրջության համապատասխան ենթակառուցվածքների առկայություն</p> <p>8 Էժան աշխատուժ</p> <p>9 Տնտեսական կայունություն</p> <p>10 Ներդրումների խթանում</p> </td> <td data-bbox="1111 459 1630 1166"> <p>Թույլ կողմեր</p> <p>1 Գլխավոր գրասենյակներում երաշխիքների թողարկման հետաձգում</p> <p>2 Անհամապատասխան գործարար միջավայր</p> <p>3 Օտարերկրյա ներդրողների հանդեպ մարդկանց ու կառավարության որոշ մարմինների բացասական վերաբերմունք</p> <p>4 Որոշ վայրերում ենթակառուցվածքների բացակայություն</p> <p>5 Արժեթղթերի գների և ինֆլյացիայի մակարդակի տատանում</p> <p>6 Տնտեսությունում պետության դիրքի գերիշխում</p> <p>7 Աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենքի հետ կապված խնդիրներ</p> <p>8 Որոշումներ ընդունող օղակների մեծ թիվ</p> <p>9 Բանկերի բարձր տոկոսադրույքներ</p> <p>10 Խնդիրներ լուծելու հարցում տարածաշրջանների հանդեպ վստահության պակաս</p> </td> </tr> </table>		<p>Ուժեղ կողմեր</p> <p>1 Տնտեսության ճյուղերը</p> <p>2 Արդյունաբերական հատվածների առկայությունը</p> <p>3 Ներդրումների կազմակերպում և ներդրումային հնարավորությունների բացահայտում</p> <p>4 Ներդրումներին աջակցող համապատասխան կանոնակարգերի առկայություն</p> <p>5 Նոր նախագծեր ընդունելու բարձր պատրաստակամություն</p> <p>6 Ներդրումային նախագծերի բարձր շահութաբերություն</p> <p>7 Զբոսաշրջության համապատասխան ենթակառուցվածքների առկայություն</p> <p>8 Էժան աշխատուժ</p> <p>9 Տնտեսական կայունություն</p> <p>10 Ներդրումների խթանում</p>	<p>Թույլ կողմեր</p> <p>1 Գլխավոր գրասենյակներում երաշխիքների թողարկման հետաձգում</p> <p>2 Անհամապատասխան գործարար միջավայր</p> <p>3 Օտարերկրյա ներդրողների հանդեպ մարդկանց ու կառավարության որոշ մարմինների բացասական վերաբերմունք</p> <p>4 Որոշ վայրերում ենթակառուցվածքների բացակայություն</p> <p>5 Արժեթղթերի գների և ինֆլյացիայի մակարդակի տատանում</p> <p>6 Տնտեսությունում պետության դիրքի գերիշխում</p> <p>7 Աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենքի հետ կապված խնդիրներ</p> <p>8 Որոշումներ ընդունող օղակների մեծ թիվ</p> <p>9 Բանկերի բարձր տոկոսադրույքներ</p> <p>10 Խնդիրներ լուծելու հարցում տարածաշրջանների հանդեպ վստահության պակաս</p>	<p>1 Տնտեսության ճյուղերը</p> <p>2 Արդյունաբերական հատվածների առկայությունը</p> <p>3 Ներդրումների կազմակերպում և ներդրումային հնարավորությունների բացահայտում</p> <p>4 Ներդրումներին աջակցող համապատասխան կանոնակարգերի առկայություն</p> <p>5 Նոր նախագծեր ընդունելու բարձր պատրաստակամություն</p> <p>6 Ներդրումային նախագծերի բարձր շահութաբերություն</p> <p>7 Գլխավոր գրասենյակներում երաշխիքների թողարկման հետաձգում</p> <p>8 Անհամապատասխան գործարար միջավայր</p> <p>9 Օտարերկրյա ներդրողների հանդեպ մարդկանց ու կառավարության որոշ մարմինների բացասական վերաբերմունք</p> <p>10 Որոշ վայրերում ենթակառուցվածքների բացակայություն</p>
<p>Ուժեղ կողմեր</p> <p>1 Տնտեսության ճյուղերը</p> <p>2 Արդյունաբերական հատվածների առկայությունը</p> <p>3 Ներդրումների կազմակերպում և ներդրումային հնարավորությունների բացահայտում</p> <p>4 Ներդրումներին աջակցող համապատասխան կանոնակարգերի առկայություն</p> <p>5 Նոր նախագծեր ընդունելու բարձր պատրաստակամություն</p> <p>6 Ներդրումային նախագծերի բարձր շահութաբերություն</p> <p>7 Զբոսաշրջության համապատասխան ենթակառուցվածքների առկայություն</p> <p>8 Էժան աշխատուժ</p> <p>9 Տնտեսական կայունություն</p> <p>10 Ներդրումների խթանում</p>	<p>Թույլ կողմեր</p> <p>1 Գլխավոր գրասենյակներում երաշխիքների թողարկման հետաձգում</p> <p>2 Անհամապատասխան գործարար միջավայր</p> <p>3 Օտարերկրյա ներդրողների հանդեպ մարդկանց ու կառավարության որոշ մարմինների բացասական վերաբերմունք</p> <p>4 Որոշ վայրերում ենթակառուցվածքների բացակայություն</p> <p>5 Արժեթղթերի գների և ինֆլյացիայի մակարդակի տատանում</p> <p>6 Տնտեսությունում պետության դիրքի գերիշխում</p> <p>7 Աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենքի հետ կապված խնդիրներ</p> <p>8 Որոշումներ ընդունող օղակների մեծ թիվ</p> <p>9 Բանկերի բարձր տոկոսադրույքներ</p> <p>10 Խնդիրներ լուծելու հարցում տարածաշրջանների հանդեպ վստահության պակաս</p>				

Արտաքին միջավայրի վերլուծությունը	Կանխատեսվող ցանկալի արդյունքի սահմանումը		Ներքին ռեսուրսների վերլուծությունը
<p>11 Նավթի համաշխարհային գնի բարձրացումը</p> <p>12 Էլեկտրոնային առևտրի զարգացումը</p> <p>13 Ներդրումների տեսակների փոփոխությունը</p> <p>14 Առևտրային գործունեության զարգացման համար ճանապարհները, երկաթուղին և Գորգան օդանավակայանը համապատասխան ենթակառուցվածքներ են ապահովում</p> <p>15 Կապիտալից բացի ժամանակակից տեխնոլոգիայի տեղափոխման հնարավորությունը</p> <p>16 Երկրների միջև կնքված տարբեր համաձայնագրերը</p> <p>17 Անվտանգության հարցերը և ահաբեկչական գործողությունները</p> <p>18 Գոլեստանում միջազգային կազմակերպությունների սակավությունը</p> <p>19 Բախումները և անվտանգության ցածր մակարդակը</p> <p>20 Բազմաթիվ երկրներում տնտեսական անկումը</p>	<p>Հնարավորություններ</p> <p>1 Ներդրողները վարկային գծերը կարող են օգտագործել միայն կարևորագույն նախագծերի համար</p> <p>2 Գոլեստանի ռազմավարական դիրքը</p> <p>3 Համաշխարհային տնտեսական ճգնաժամը և նրա ազդեցությունները</p> <p>4 Կապիտալ ներդրումների և ապրանքների հոսքերը աշխարհում</p> <p>5 Նավթի համաշխարհային գնի բարձրացումը</p> <p>6 Էլեկտրոնային առևտրի զարգացումը</p> <p>7 Ներդրումների տեսակների փոփոխությունը</p> <p>8 Առևտրային գործունեության զարգացման համար ճանապարհները, երկաթուղին և Գորգան օդանավակայանը համապատասխան ենթակառուցվածքներ են ապահովում</p> <p>9 Կապիտալից բացի ժամանակակից տեխնոլոգիայի տեղափոխման հնարավորությունը</p> <p>10 Բազմաթիվ երկրներում տնտեսական անկումը</p>	<p>Վտանգներ</p> <p>1 Իրանի ու նրա տարածաշրջանների նկատմամբ կիրառվող քաղաքական և տնտեսական սանկցիաները</p> <p>2 Իրանի մասին բացասական քարոզչությունը</p> <p>3 Երկրի բարձր ռիսկայնությունը</p> <p>4 ԱՄՆ-ի և Համաշխարհային բանկի հետ Իրանի ու նրա տարածաշրջանների համագործակցության բացակայությունը</p> <p>5 Ներդրումների ներգրավման համար մրցակից տարածաշրջանները</p> <p>6 օտարերկրյա ներդրողների կողմից Իրանում ներդրումներ կատարելու համար ցածր մոտիվացիան</p> <p>7 Երկրների միջև կնքված տարբեր համաձայնագրերը</p> <p>8 Անվտանգության հարցերը և ահաբեկչական գործողությունները</p> <p>9 Գոլեստանում միջազգային կազմակերպությունների սակավությունը</p> <p>10 Բախումները և անվտանգության ցածր մակարդակը</p>	<p>11 Զբոսաշրջության համապատասխան ենթակառուցվածքների առկայություն</p> <p>12 Էժան աշխատուժ</p> <p>13 Արժեթղթերի գների և ինֆլյացիայի մակարդակի տատանում</p> <p>14 Տնտեսական կայունություն</p> <p>15 Ներդրումների համար համապատասխան խթանների առկայություն</p> <p>16 Տնտեսությունում պետության դիրքի գերիշխում</p> <p>17 Աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենքի հետ կապված խնդիրներ</p> <p>18 Որոշումներ ընդունող օղակների մեծ թիվ</p> <p>19 Բանկերի բարձր տոկոսադրույքներ</p> <p>20 Խնդիրներ լուծելու հարցում տարածաշրջանների հանդեպ վստահության պակաս</p>

Երկրորդ քայլ: Կարևոր հեռանկարների սահմանում

Լրացուցիչ կանխատեսվող ցանկալի արդյունքը	Կարևոր հեռանկարներ	Հիմնական կանխատեսվող ցանկալի արդյունքը և ուղղությունները
<ol style="list-style-type: none"> 1 Ներդրումների ներգրավման գործընթացի զարգացումը 2 Իրանում և Գոլեստանում գործարար միջավայրի բարելավում 3 Անօգուտ բյուրոկրատիայի նվազեցում 4 Ներդրողներին համապատասխան շարժառիթներին ծանոթացումը 5 Իրանի մասին օտարերկրյա ներդրողների բացասական տեսակետի փոփոխությունը 	<ol style="list-style-type: none"> 1 Անօգուտ բյուրոկրատիայի նվազեցում 2 Ներդրողների ներգրավման համար ազգային մակարդակով համապատասխան գործողությունների ձեռնարկում 3 Օտարերկրացիների բացասական տրամադրվածության փոփոխություն 4 Իրանում և Գոլեստանում գործարար միջավայրի բարելավում 5 Երկրների միջև համապատասխան համագործակցության ստեղծում 6 Կապիտալի ներգրավման համար անհրաժեշտ պայմանների ապահովում 7 Կապիտալի ներգրավման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովում 8 Ներդրումային հնարավորությունների փաթեթին ծանոթացնելու նպատակով ազգային և միջազգային մակարդակով մեծածավալ գովազդի իրականացումը 9 Ազգային և միջազգային մակարդակով անվտանգության երաշխիքների մասին լայնածավալ գովազդը 10 Տնտեսական շրջանների զարգացում 11 Օտարերկրյա ներդրումների հանդեպ մարդկանց վերաբերմունքը փոխելուն ուղղված մշակութային գործունեությունը 12 Ինֆլյացիայի մակարդակի կարգավորումը 13 Պետական մարմինների կողմից տնտեսությանը և առևտրին աջակցության ցուցաբերումը 14 Ռիսկի մակարդակի նվազեցումը 15 Ներդրումների համար պատասխանատու անձանց աջակցումը 16 Տեղեկատվական կայքերի ստեղծումը 17 Տնտեսության մեջ քաղաքականության դիրքի չեզոքացման նպատակով 18 Կապիտալի ինստիտուտների աջակցումը և ուժեղացումը 19 Օտարերկրյա և տեղացի ներդրողներին երաշխիքների ու ապահովագրության տրամադրումը 20 Ներդրողներին համապատասխան շարժառիթներին ծանոթացումը 	<ol style="list-style-type: none"> 1 Ներդրումների ներգրավում 2 Անօգուտ բյուրոկրատիան նվազեցնելու համար միասնական պատուհանի ստեղծում

Հեռանկարների, հիմնական գործոնների, ցուցանիշների, թվային նպատակների սահմանումը հնգամյա ծրագրում

Հեռանկարներ (2-րդ քայլ)	Նպատակներ (3-րդ քայլ)	Հիմնական գործոններ (4-րդ քայլ)	Ցուցանիշներ (5-րդ քայլ)	Թվային նպատակներ (6-րդ քայլ)
Հեռանկար 1 ներդրումների ներգրավման գործընթացի զարգացում	- 44-րդ օրենքի համապատասխան կիրառում - ներդրումային կազմակերպությունների աջակցություն	- 44-րդ օրենքի կիրառման հետ կապված խնդիրներ - Օրենքների և կանոնակարգերի բարդություն	- Ներգրավված ներդրումների ցուցանիշը	տարեկան 20 % աճ (լավագույն ցուցանիշը տարեկան 100 մլն դոլար)
Հեռանկար 2 Իրանում և Գոլեստանում գործարար միջավայրի բարելավում	- Միասնական ներդրումային և առևտրային պատուհանի ստեղծում - Տնտեսության բացառական աստիճանի ավելացում	- Միասնական պատուհանի ստեղծումն արգելող օրենքներ - Ներդրումների խոչընդոտներ	Իրանում գործարար միջավայրի բարելավումը ¹	Իրանի ցուցանիշը 129-ից 100 դարձնելը ²
Հեռանկար 3 Անօգուտ բյուրոկրատիայի նվազեցում	- Միասնական ներդրումային պատուհանի ստեղծում - Արտադրության ծավալների ավելացում	- Ձեռներեցության երաշխիքների տրամադրում - Արտադրական կազմակերպությունների մրցունակության բարձրացում	- Տնտեսական աճ - Առաջնային և երկրորդային երաշխիքների թողարկման ժամկետը	Տարեկան 20% Առաջնայինը՝ 10 օրով, երկրորդայինը՝ 30 օրով
Հեռանկար 4 ներդրողներին համապատասխան շարժառիթներին ծանոթացում	- Ներդրումային հնարավորություններին ծանոթացում - Ներդրումային ծախսերի նվազեցում	- Ներդրումային հնարավորություններին ծանոթացնող կազմակերպությունների սակավություն - Արտադրության ծախսեր	- Ներդրումային հնարավորություններին ծանոթացնելու ժամանակը	Տարեկան 20 ներդրումային հնարավորություններ
Հեռանկար 5 Իրանի մասին օտարերկրյա ներդրողների բացասական տեսանկյան փոփոխությունը	- Տեղեկատվության թափանցիկություն - Տեղական և օտարերկրյա ներդրողների նկատմամբ վստահության բարձրացում	- Իրանի դեմ տարվող բացասական քարոզչություն - Իրանի մասին տարբեր երկրների բյուր կարծիքը	- ներդրումների ներգրավվածության աստիճան - ոչ նավթային արտահանում	Տարեկան 20 % աճ (լավագույն ցուցանիշը տարեկան 100 մլն դոլար)

¹ Arzghods Mohsen, The necessity for improving the business environment, Hamshahry online site (www.hamshahronline.ir).

² Hoseiny Ashtiany Hamidreza and Khandan Abass ,analyzing the business situation in Iran, 2010 (www.donya_e_eqtesad.com).

Հաշվի առնելով ցուցանիշների հաշվեկշռված համակարգի վերոհիշյալ քայլերը՝ 5-րդ զարգացման ծրագրի տնտեսական և մշակութային զարգացման մասին արված եզրակացությունները և մասնավոր հատվածին ու օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, գործարար միջավայրում Իրանի համաշխարհային դերի բարձրացմանն օժանդակող 44 հիմնական քաղաքականությունները ստորև ներկայացված են 5-րդ զարգացման ծրագրի նպատակներին հասնելու մի շարք առաջարկություններ՝

1. անհրաժեշտ է մշակել երաշխիքների տրամադրման այնպիսի սխեմա, որի հետևանքով կնվազեցվեն դրա տրամադրման ժամկետները և տրամադրող օղակների թիվը,
2. մասնավոր հատվածին աջակցող օրենքների շարունակական կատարելագործում, ինչի հետևանքով մասնավոր հատվածի կազմակերպություններում կավելանա օտարերկրյա ներդրումների թիվը,
3. Իրանում օտարերկրյա ներդրումների ծավալների պարբերական վերլուծություն,
4. օտարերկրյա ներդրումների ենթակառուցվածքային ծախսերի մասնակի փոխհատուցում,
5. կազմակերպությունների գրանցման ավտոմատացում և գրանցման գործընթացի առավելագույն ժամկետի սահմանում,
6. ունեցվածքի և շարժական գույքի էլեկտրոնային գրանցման համակարգի ներդրում,
7. նվազեցնել ներմուծվող ապրանքների ու ծառայությունների մաքսային տուրքերը՝ առանց տեղական արտադրության ապրանքների հետ անհավասար մրցակցություն ստեղծելու,
8. մասնավոր հատվածին ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով միջոցների տրամադրման գործընթացի պարզեցում,
9. տեղական և օտարերկրյա ներդրողների համար տնտեսական տարածաշրջանների զարգացում,
10. արտադրության աջակցության նպատակով արդյունաբերական խմբերի ստեղծում,
11. ներդրումների աջակցման նպատակով արդյունավետ վերահսկողության համակարգի ներդրում,
12. պետության կողմից ներդրողների համապատասխան սուբսիդիաների տրամադրում,
13. պոտենցիալ ներդրողների համար ներդրումային նախագծերի ու համապատասխան խթանների վերաբերյալ ներդրումային փաթեթների պատրաստում,
14. ներդրումային հնարավորություններին ծանոթացնելու նպատակով տեղեկատվական կայքերի ստեղծում,
15. Գոլեստանի ներդրումային հնարավորություններին ծանոթացնելու նպատակով պարբերական սեմինարների անցկացում,
16. ներդրումային նախագծերի հետ կապված ծախսերի նվազեցում (թույլտվության տրամադրման փուլից մինչև լիցենզավորում):

Այսպիսով, ցուցանիշների հաշվեկշռված համակարգի կիրառման միջոցով մենք փորձեցինք օտարերկրյա ներդրումների ներգրավման զարգացման, գործարար միջավայրի բարելավման վերաբերյալ մի շարք առաջարկություններ անել: Անշուշտ, Իրանի դեմ իրականացվող քարոզչությունը և բազմաթիվ երկրների բացասական տրամադրվածությունը մեծ խոչընդոտներ են ստեղծում օտարերկրյա ներդրումների ներգրավման համար: Այդ պատճառով, բացի վերոհիշյալ քայլերից, անհրաժեշտ է նաև քայլեր ձեռնարկել այդ տրամադրվածության փոփոխության ուղղությամբ:

**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՅՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ
ՇԱԽՈՒՔԱՔԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

Հանրային ծառայությունների ոլորտում գնագոյացման և սակագնային կարգավորման ընդունված սկզբունքներին որպես այլընտրանք XX դարի հիսունական թվականներին ամերիկյան մասնագիտական գրականության մեջ, իսկ որոշ ժամանակ անց նաև պրակտիկայում շրջանառության մեջ դրվեց տվյալ ոլորտում գործող ընկերությունների շահութաբերության մակարդակի կարգավորման սկզբունքը: Վերջինիս հիման վրա մշակված կարգավորման այդ մեթոդի կիրառման տրամաբանությունն այն է, որ, ըստ էության, վերահսկվում են ոչ թե բնական մենաշնորհի¹ կողմից կատարված ծախսերի մակարդակն ու դրանց հարաբերակցությունը, այլ սահմանվում է կոնկրետ ընկերության ռացիոնալ գործունեության իրականացման համար ներգրավված կապիտալի եկամտաբերության այնպիսի մակարդակ, որը հիմնականում չի տարբերվում շիսկայնության գրեթե միևնույն սահմաններում գտնվող արտադրական ձեռնարկությունների կապիտալի եկամտաբերությունից:

Շահութաբերության նորմայի կարգավորման մեթոդի կիրառումը հանրային ծառայությունների ոլորտում թույլ է տալիս կառավարման գործառույթ ներմուծել մրցակցային հարաբերություններին բնորոշ տարրեր, որոնք, անշուշտ, կարող են զգալիորեն բարձրացնել դրա սուբյեկտների գործունեության արդյունավետությունը: Պետք է սակայն նշել, որ տվյալ ոլորտում մրցակցությունն էականորեն տարբերվում է այլ ոլորտներում գործող ընկերություններին բնորոշ մրցակցությունից: Այստեղ, որպես կանոն, ձեռնարկություններն իրենց մրցակիցների նկատմամբ հասնում են առավելության և ապահովում են շահույթի հնարավոր բարձր մակարդակ՝ նորարարությունների, մարքեթինգային համակարգված քաղաքականության, ճկուն ու արդյունավետ մենեջմենթի և օրինական կամ այսպես կոչված այլ «արդար» ճանապարհներով (հետագա համեմատական վերլուծության համար մրցակցության այս ձևը պայմանականորեն անվանենք ինդուկցիոն): Այլ խոսքով, մրցակցության ինդուկցիոն ձևի պայմաններում կապիտալի արժեքի մեծությունը դառնում է որոշիչ շուկայում տվյալ ճյուղի կամ ընկերության մրցակցային դիրքի բարելավման կամ ամրապնդման գործում:

Հանրային ծառայությունների ոլորտում մրցակցային հարաբերությունների ներմուծումն ու զարգացումը կարող են արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ տվյալ ոլորտի գործունեությունը կարգավորող մարմնի կողմից սահմանվում է կապիտալի եկամտաբերության կոնկրետ ու իրատեսական մակարդակ (մրցակցության խթանման այդպիսի ձևը պայմանականորեն անվանենք դեդուկցիոն):

Հարկ է նշել, որ կապիտալի եկամտաբերության նման սկզբունքով սահմանված մակարդակից ածանցվում են բնական մենաշնորհի մնացած բոլոր գործառույթները, որոնց կատարումն ուղղակիորեն ենթադրում է մրցակցության տարրերի հնարավոր լայն կիրառում: Հանրային ծառայությունների ոլորտում գործող ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման շահութաբերության մակարդակի կարգավորման մեթոդի կիրառումը կապված է այնպիսի պայմանների ապահովման հետ, երբ կոնկրետ ընկերության համախառն եկամտի և ընթացիկ ծախսերի ու ամորտիզացիոն մասհանումների գումարի տարբերության և կապիտալի մեծության հարաբերության ցուցանիշը ձգտում և հավասար է դառնում կարգավորող մարմնի կողմից սահմանված շահույթի թույլատրելի մակարդակին:

Դիտարկված այս սկզբունքն ընդհանուր առմամբ ստեղծում է որոշակի հնարավորություններ բնական մենաշնորհի կողմից թողարկված ապրանքների և մատուցված ծառայու-

¹ Հետագա տեքստում «հանրային ծառայություններ մատուցող սուբյեկտներ» հասկացության փոխարեն, որպես հոմանիշ, կօգտագործվի նաև «բնական մենաշնորհ» հասկացությունը՝ խմբագրական առումով տեքստը «չծանրացնելու» նկատառումներով:

թյունների գները սահմանային ծախսերի մակարդակից ավելի բարձր սահմանելու համար (ակնհայտ է, որ դա կարելի է անել միայն թույլատրելի սահմաններում): Այդպիսի մոտեցման դրական կողմերից մեկն այն է, որ տվյալ ոլորտի սուբյեկտները ոչ միայն գտնվում են կայուն շահութաբերության տիրույթում, այլև պարտադրված են լինում բավարարել հասարակության պահանջները դրանց կողմից արտադրված ապրանքների և մատուցված ծառայությունների նկատմամբ:


Հարկ է նշել, որ կարգավորման այս տարբերակը լայն կիրառություն է ստացել կորպորատիվ կառավարման պայմաններում: Դա, անշուշտ, պայմանավորված է այն հանգամանքով, որ կորպորատիվ հարաբերությունների պայմաններում գործող ինստիտուտների և սուբյեկտների կողմից կիրառվող սկզբունքները, ինչպես նաև դրանց բնորոշ գործարար վարքագիծն ունեն էական ընդհանրություններ հանրային ծառայությունների սակագնային կարգավորման դիտարկվող տարբերակի հետ: Գործնական առումով վերջինս ավելի լայն կիրառություն ունի ամերիկյան տնտեսությունում, որի պատճառով «կարգավորող մարմին - կարգավորվող ընկերություն» փոխհարաբերությունների դիտարկումը նպատակահարմար է իրականացնել հենց ամերիկյան փորձի հիման վրա:

Բնական մենաշնորհի շահութաբերության նորմայի կարգավորման էությունն այն է, որ կարգավորվող ընկերության կողմից որոշակի ժամանակահատվածի (որպես կանոն՝ 12 ամսվա) համար հաշվարկվում են իր գործունեության համար անհրաժեշտ ծախսերը, ակնկալվող համախառն եկամուտը, ինչպես նաև շահույթի մակարդակը: Նույնատիպ հաշվարկներ են կատարվում նաև կարգավորող մարմնի կողմից, որից հետո ստացված արդյունքները համեմատվում են կարգավորվող ընկերության կողմից ներկայացված արդյունքների հետ: Դրանց միջև տարբերությունների առկայության դեպքում կողմերին հնարավորություն է ընձեռվում քննարկելու այդ տարբերակները և հանգելու փոխզիջումային լուծումների: Այդ գործընթացը համարվում է ավարտված, երբ հաշվարկների համաձայնեցված տարբերակը հաստատվում է կարգավորող մարմնի կողմից: Հակառակ դեպքում կողմերը կարող են դատական կարգով պաշտպանել իրենց կողմից առաջարկված հաշվարկները: Դատական գործընթացից հետո, երբ կարգավորող մարմինը սահմանում է ընկերության շահութաբերության մակարդակը, կատարվում է սակագների կոնկրետ հաշվարկ: Սակագները, որպես կանոն, հաշվարկվում են հետհաշվարկման մեթոդով: Այսինքն՝ սահմանվում է սակագների այնպիսի մակարդակ, որը թույլ կտա ընկերությանն ապահովել կարգավորող մարմնի կողմից սահմանված շահութաբերության նորման:

Հանրային ծառայությունների սակագնային կարգավորման այս մոդելի կիրառման արդյունավետության խնդրի շուրջ ամերիկյան տնտեսագիտական շրջանակներում գոյություն ունեն տարբեր կարծիքներ և մոտեցումներ: Որոշ հեղինակների կողմից բերվում են գիտականորեն հիմնավորված և կարգավորման պրակտիկայում ուշադրության արժանի այնպիսի հակափաստարկներ, որոնց առկայությունը պետական կարգավորող մարմիններին ստիպում է վերանայել կարգավորման այս մեթոդի կիրառման արդյունավետության հարցերը: Տեսական և գործնական առումներով հատկանշական են Հ. Ավերչի և Լ. Ջոնսոնի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված հակափաստարկները (որոնք հայտնի են Ավերչ-Ջոնսոնի էֆեկտ անվամբ), և որոնք, մեր կարծիքով, կարևոր նշանակություն ունեն տվյալ ոլորտում սակագնային կարգավորման արդյունավետ քաղաքականություն իրականացնելու առումով:

Նշված հեղինակների կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում մշակված մոդելի հիմնական տնտեսագիտական միտքն այն է, որ եթե պետական կարգավորող մարմնի կողմից թույլատրելի հատուցադրույքն ավելին է, քան ընկերության կապիտալի ծախսը, բայց փոքր է այն մակարդակից, որը կցանկանար ստանալ կարգավորվող ընկերությունը (եթե ազատ լիներ կարգավորման հարկադրանքից), ապա ընկերությունն իր կապիտալը կփոխարինի արտադրության մեկ այլ գործոնով և կարտադրի այնպիսի արտադրանք, որի արժեքը չի նվազեցվի:

Խնդրի տնտեսամաթեմատիկական վերլուծության արդյունքում կարելի է ցույց տալ կարգավորման ազդեցությունն ընկերության ծախսերի կորի վրա՝ կիրառելով արտադրության երկու գործոն (տե՛ս գծանկար 1):



Գծանկար 1-ում ցույց է տրվում ընկերության արտադրությունը, որտեղ x_1 հորիզոնական առանցքը կապիտալն է, իսկ x_2 ուղղահայաց առանցքը՝ աշխատանքը: Կապիտալի և աշխատանքի շուկայական կամ սոցիալական ծախսերը տալիս են A նույնածախսի կորը, որի պայմաններում պետական կարգավորման շրջանակներից դուրս գտնվող ընկերությունն ընդարձակվում է 1-ին ուղիով, որի պայմաններում շուկայական ծախսերը ցանկացած արտադրանքի համար հասցված են նվազագույնի: Պետական կարգավորման առկայության պայմաններում կապիտալի ծախսը (կամ ինչպես նաև ասում են՝ «մասնավոր ծախսը») հավասար չէ շուկայական ծախսին: Այս պարագայում կապիտալի յուրաքանչյուր ներդրված միավորի համար ընկերությանը թույլ է տրվում ստանալ եկամուտ, որը պետք է հավասար լինի կապիտալի շուկայական ծախսի և կարգավորող մարմնի կողմից թույլատրված հատուցադրույքի տարբերությանը, ինչից կարելի է հետևություն անել, որ «մասնավոր ծախսը» փոքր է շուկայական ծախսից՝ նշված տարբերության չափով:

Կարգավորման հետևանքով x_1 կապիտալի և x_2 աշխատանքի հարաբերական արժեքները փոփոխվում են, որի արդյունքում B նույնածախսի կորն ընկերության համար դառնում է առավել նպատակահարմար, և նա շարժվում է 2-րդ ուղիով, որտեղ արտադրանքի համար շուկայական ծախսը չի հասցվում նվազագույնի: Կարգավորվող ընկերության համար այս ուղին դառնում է նպատակահարմար գուտ այն պատճառով, որ նա միայն այս դեպքում է, իր հատուցադրույքի վրա հարկադրանք ունենալով, կարողանում ստանալ առավելագույն ընդհանուր շահույթ:

Ավերչի և Ջոնսոնի կողմից ձևակերպված մաթեմատիկական խնդրի քննարկման ժամանակ դիտարկվում է մի մենաշնորհ, որն արտադրում է մեկ տեսակի արտադրանք՝ օգտագործելով երկու ներդրանք: Մասնավորապես, այս դեպքում ընկերության արտադրական ֆունկցիան կունենա հետևյալ տեսքը.

$$z = z(x_1, x_2) \quad x_1 > 0 \quad x_2 > 0 \quad dz/dx_1 > 0 \quad dz/dx_2 > 0$$

$$z(0, x_2) = z(x_1, 0) = 0 : \quad (1)$$

Վերը գրվածից կարելի է հետևություն անել, որ սահմանային արդյունքները դրական են, և արտադրությունը պահանջում է երկու ներդրանքներն էլ: Պահանջարկի հակադարձ ֆունկցիան կարելի է գրել որպես՝

$$p = p(x), \quad (2)$$

իսկ շահույթը կարելի է ներկայացնել որպես՝

$$\pi = pz - r_1x_1 - r_2x_2, \quad (3)$$

որտեղ $r_i (i=1,2)$ -ը գործոնային ծախսերն են, որոնք գործոնների ներդրանքի բոլոր մակարդակներում հաստատուն են: Այսպիսով, x_1 -ը արտադրական հզորությունների և սարքավորումների քանակությունն է, c_1 -ը՝ արտադրական հզորությունների և սարքավորումների յուրաքանչյուր միավորի ձեռքբերման ծախսերը, u_1 -ը՝ կոնկրետ ժամանակահատվածում

դրանց մաշվածության արժեքը, իսկ U_1 -ը՝ մաշվածության ընդհանուր չափը, x_2 -ը՝ աշխատանքի ներդրանքի քանակությունը, իսկ r_2 -ը՝ աշխատավարձի չափը: Դիցուք կարգավորումը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով.

$$Pz - r_2 x_2 - u_1 / c_1 x_1 - U_1 \leq S_1, \quad (4)$$

որտեղ աշխատանքի ծախքի և կապիտալի մաշվածության նախնական չափը S_1 է:

Մոդելի հեղինակներն իրենց վերլուծությունն առավել պարզ դարձնելու համար մաշվածության U_1 և u_1 մակարդակներն ընդունում են զրոյական, իսկ կապիտալի ձեռքբերման c_1 ծախքը՝ որպես 1 միավոր, որի պայմաններում նախնական դրույքը հավասար կլինի կապիտալի ֆիզիկական ծավալին: Կապիտալի r_1 ծախքն արտադրական հզորությունների և սարքավորումների շահագործման ծախքն է, ինչն անհրաժեշտ է տարբերել արտադրական հզորությունների և սարքավորումների c_1 ծախքից: Թույլատրելի s_1 հատուցադրույքը պետական կարգավորող մարմնի կողմից թույլատրելի հատուցադրույքն է, ինչը պետք է բավարարի արտադրական հզորություններն ու սարքավորումները շահագործելու համար ներդրված կապիտալի ծախքերի փոխհատուցման համար: Այստեղից պետական կարգավորումը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով.

$$Pz - r_2 x_2 / x_1 \leq s_1 \quad (5) \text{ կամ } Pz - s_1 x_1 - r_2 x_2 \leq 0: \quad (6)$$

Տվյալ մոդելի առումով առավել կարևոր է r_1 -արժեքը. եթե r_1 կապիտալի իրական ծախքը մեծ է պետական կարգավորող մարմնի կողմից թույլատրելի s_1 հատուցադրույքից, ապա ընկերությունը կգործի վնասով, ինչի արդյունքում սնանկացման պատճառով կհեռանա շուկայից: Եվ քանի որ $x_1 > 0$, ապա կստացվի, որ $Pz - r_1 x_1 - r_2 x_2 = Pz - s_1 x_1 + (s_1 - r_1) x_1 - r_2 x_2 \leq (s_1 - r_1) x_1 < 0$: Հավասարում (3)-ից կարելի է հետևություն անել, որ x_1 -ի զրոյական արժեքի դեպքում $\pi = -r_2 x_2$ և ընկերությունը կարող է հետագայում կրճատել իր կորուստները՝ x_2 -ը հավասարեցնելով զրոյի, ինչի պայմաններում շահույթը հավասար կլինի զրոյի: Վերը նշվածից կարելի է հետևություն անել, որ թույլատրելի հատուցադրույքը՝ s_1 -ը, պետք է մեծ կամ հավասար լինի r_1 -ին, այսինքն՝ թույլատրելի հատուցադրույքն առնվազն պետք է ծածկի կապիտալի իրական ծախքը: Այդ դեպքում միակ խնդիրը, որը ծառայում է կարգավորվող ընկերության առջև՝ կարգավորման ենթարկվող եկամտի առավելագույն մեծացումն է: Այս դեպքի համար Լանգրանժի բանաձևը կունենա հետևյալ տեսքը՝

$$L(x_1, x_2, \lambda) = Pz - r_1 x_1 - r_2 x_2 - \lambda (Pz - s_1 x_1 - r_2 x_2): \quad (7)$$

Առավելագույն x_1 , x_2 , λ -ի համար Քուն-Թաքերի անհրաժեշտ պայմաններն են՝

$$r_1 \geq (1 - \lambda) [p + z dp/dz] dz/dx_1 + \lambda s_1, \quad x_1 \geq 0 \quad (8.1)$$

$$r_1 > (1 - \lambda) [p + z dp/dz] dz/dx_1 + \lambda s_1, \quad (8.2)$$

$$(1 - \lambda) r_2 \geq (1 - \lambda) [p + z dp/dz] dz/dx_2, \quad x_2 \geq 0 \quad (8.3)$$

$$(1 - \lambda) r_2 > (1 - \lambda) [p + z dp/dz] dz/dx_2 \quad (8.4)$$

$$Pz - s_1 x_1 - r_2 x_2 \leq 0 \quad (8.5)$$

$$Pz - r_2 x_2 < s_1 x_1 \quad (8.6)$$

Նշանակելով $\lambda > 0$ (8.1)-ից պարզ է դառնում, որ $\lambda = 1$ միայն այն դեպքում, եթե $r_1 = s_1$: Սա որևէ փոփոխության ենթակա չէ, և հետևում է, որ ցանկացած x_1 , x_2 , որ բավարարում է (8.5) բանաձևին, իրենից խնդրի լուծում է ներկայացնում, քանի որ կարգավորման $s_1 > r_1$ պայմաններից հետևում է, որ λ -ն պետք է մեծ կամ հավասար լինի զրոյից և փոքր մեկից: Բանաձև (8.1)-ից բխում է, որ կարելի է վերցնել բավականին մեծ s_1 , այնպես որ $\lambda = 0$ (այսինքն՝ թույլատրելի s_1 հատուցադրույքի որոշակի մեծ արժեքի դեպքում $x_1 (s_1 - r_1)$ արժեքը գերազանցում է առավելագույն շահույթի մակարդակը, և կարգավորումը դառնում է անարդյունավետ): Իսկ եթե ենթադրենք, որ $s_1 < r_1$, ապա λ -ն շարունակաբար փոփոխվում է, և քանի որ λ -ն հավասար չէ 1-ի, ապա այն ստանում է $0 < \lambda < 1$ արժեքները: Իսկ չկարգավորվող բնական մենաշնորհի համար սահմանային պայմանները կարելի է գրել որպես՝

$$r_i = [P + z dP/dz] dz/dx_i \quad i = (1, 2): \quad (9)$$

Արդյունավետ պետական կարգավորման պայմաններում, երբ λ -ն ընդունում է զրոյից մեծ արժեքներ, (8.3) և (9) հավասարումները ցույց են տալիս, որ ինչպես և չկարգավորվող մենաշնորհի դեպքում x_2 գործոնն այնպիսին է, որ նրա r_2 սահմանային ծախքը հավասար է սահմանային արժեքով արտադրանքին: Ի հակադրություն նշվածի՝ (8.1) և (9) բանաձևերից


բխում է, որ x_1 գործոնն այնպիսին է, որ նրա r_1 սահմանային ծախսն ավելի մեծ է, քան նրա սահմանային արժեքով արտադրանքը: (8.1) և (8.3) հավասարումներից բխում է, որ եթե այդ հավասարությունը տեղի ունի, ապա մի գործոնը մյուսով փոխարինելու սահմանային դրույքը հավասար է

$$-dx_2/dx_1 = r_1/r_2 - \lambda/(1-\lambda)(s_1-r_1)/r_2, \quad (10)$$

և քանի որ $\lambda/(1-\lambda)(s_1-r_1)/r_2 > 0$ $\lambda > 0$ $s_1 > r_1$, ապա $-dx_2/dx_1 < r_1/r_2$:

Այս իրավիճակում ընկերությունը կարող է հարմարվել պետական կարգավորմանը՝ կապիտալը փոխարինելով արտադրության մեկ այլ գործոնով, և ընդլայնել իր արտադրության ծավալները: Համեմատաբար հավասարակշռված արտադրանքները կարելի է ներկայացնել գծանկար 2-ի տեսքով:

Գծանկար 2



Եթե գծանկար 1-ում կարգավորվող ընկերությունը հարկադրված է շարժվել սոցիալական առումով արդյունավետ 1-ին ուղիով, ապա գծանկար 2-ում այն կշարժվի OC-ով: Այստեղ գինը մի փոքր բարձր է AC միջին ծախսերից՝ արտացոլելով այն փաստը, որ $s_1 > r_1$ և, քանի որ կարգավորվող ընկերությունը շարժվում է 2-րդ ուղիով, ապա սոցիալական ծախսի կորը AC-ից տեղափոխվում է AC, և կարգավորման է ենթարկվում առավել ներքևում գտնվող OB արտադրանքը: Կարգավորման նպատակն է ընկերությանը ստիպել, որպեսզի նա արտադրանքը չկարգավորվող OA դիրքից տարածի դեպի C դիրքը, սակայն դա տեղի չի ունենում, քանի որ արտադրանքի մի մասը, որը պետք է շահույթ բերեր, ծախսերի պատճառով չեզոքանում է: Արտադրանքի վրա կարգավորման ազդեցության չափը կախված է արտադրական ֆունկցիայի բնույթից. եթե այն ներառում է հաստատագրված չափաբաժիններ, ապա կարգավորվող ընկերությունը շարժվում է ընդլայնման արդյունավետ ուղիով և ողջ ընթացքում գնում է OC ուղիով, իսկ եթե արտադրական ֆունկցիան գծային է, և եթե արտադրանքի իզոկորերն ունեն $-r_1/r_2$ -ին հավասար թեքվածք, ապա ընկերությունը կարող է x_1 գործոնը փոխարինել x_2 -ով և, առանց փոխարինման սահմանային չափը փոփոխելու, արտադրության ծավալը պահել հաստատուն (այս դեպքում այն կարող է մնալ OA-ում):

Ավերչի և Ջոնսոնի կողմից կատարված ուսումնասիրության մեջ գոյություն ունի ուշադրության արժանի ևս մեկ մոդել: Այն կարգավորվող ընկերությունների այսպես կոչված՝ «բազմաշուկա մոդել» է, որի հիմնական գաղափարախոսությունն այն է, որ կարգավորվող ընկերությունը մի շուկայում գործունեություն ծավալելուն զուգահեռ, կարող է մուտք գործել նաև այլ կարգավորվող շուկաներ, քանի որ կարգավորող մարմիններն իրենց «ընդունելի հատուցադրույթի» սկզբունքը կիրառում են ընկերության արտադրական հզորությունների և սարքավորումների համընդհանուր արժեքի վրա (բոլոր շուկաների համար միասին վերցրած), այլ ոչ թե ամեն մի շուկայի համար առանձին- առանձին: Նման իրավիճակում ընկերությունը կարող է դրդապատճառ ունենալ (ինչը չէր ունենա կարգավորման բացակայության դեպքում)

մտնելու այս մյուս շուկաները, եթե անգամ նրա ծախքերը գերազանցեն լրացուցիչ եկամուտները: Այլ շուկաներ մուտք գործելն ընկերությանը հնարավորություն է տալիս մեծացնելու իր նախնական դրույքաչափը, որպեսզի բավարարի կարգավորող մարմնի պայմանները և ստանա ավելի մեծ ընդհանուր եկամուտ, քան հնարավոր կլինեք ստանալ երկրորդ շուկայի բացակայության պայմաններում:

Երկրորդ շուկայում գործունեություն ծավալելն ընկերությանը թույլ է տալիս գործել որպես չկարգավորվող մենաշնորհի առաջին շուկայում, այսինքն՝ երկրորդ շուկայում աշխատելը բավարարում է կարգավորման պայմաններն այնպես, որ ընկերությունն առաջին շուկայում կարող է գործունեություն ծավալել ՕԱ արտադրանքի ուղղությամբ (տե՛ս գծանկար 2): Այստեղից կարելի է ենթադրություն անել, որ հասարակական առումով ամենաօպտիմալ ուղիով շարժվելիս, արտադրական գործոնների ցանկացած կոմբինացիայի դեպքում, կարգավորվող ընկերությունը կարող է սնանկանալ անգամ շուկա 2-ում: Այսինքն՝ ցանկացած $x_{12} = x_{22}$ հավասարակշռության համար կունենանք հետևյալ բանաձևը՝

$$p_2 z_2 - r_1 x_{12} - r_2 x_{22} = 0, \quad (11)$$

իսկ n թվով շուկաների համար հարկադրանքը կունենա հետևյալ տեսքը՝

$$\sum p_i z_i - s_1 \sum x_{1i} - r_2 \sum x_{2i} \leq 0 : \quad (12)$$

Շուկա 1-ում արտադրանքը և արտադրական գործոնների ներդրանքը նշանակելով z_{11} , x_{11} , x_{21} , համապատասխանաբար այն արտադրանքի վրա, որի եկամտաբերությունն առավելագույնն է այս շուկայում, կունենանք՝

$$p_1 z_1 - s_1 x_{11} - r_2 x_{21} = m \quad m > 0, \quad (13)$$

որտեղ m -ը շուկա 1-ում «հավելյալ» եկամտի արժեքն է, ինչը կանտեսեր հարկադրանքի պայմանները, եթե ընկերությունը գործունեություն ծավալեր միայն այս շուկայում:

Շուկա 2-ում իր ընդլայնման ուղիով շարժվելիս ընկերությունը կարող է ընտրել կապիտալի ներդրման այնպիսի մակարդակ, որի պայմաններում՝

$$p_2 z_2 - s_1 x_{12} - r_2 x_{22} = -m : \quad (14)$$

Գումարելով (13) և (14) հավասարումները՝ կստանանք, որ ընկերությունը բավարարում է հարկադրանքի պայմանները (հավասարում 12)՝ առանց շուկա 1-ում որևէ եկամտից հրաժարվելու: Այսպիսով, մինչ չկարգավորվող ընկերության համար շուկա 2-ն իրենից առանձին հետաքրքրություն չի ներկայացնում, կարգավորվող ընկերության համար այդ շուկան հրապուրիչ է, քանի որ նա կարող է առանց որևէ վնասի, կապիտալի նախնական չափին հավասար կապիտալ ավելացնել: Շուկա 2-ում ընկերության կողմից կատարված ցանկացած ներդրանքի համար արտադրանքն ապահովում է եկամտի այնպիսի մակարդակ, որը պարզապես հավասար է արտադրական գործոնների համար կատարված ծախքերին: Քանի որ շուկա 2-ում կապիտալի իրական ծախքը ցածր է թույլատրելի հատուցադրույքից, կարգավորվող ընկերությունը կարող է այս տարբերությունն օգտագործել շուկա 1-ում՝ հարկադրանքի պայմանները բավարարելու համար և այդպիսով ստանալ հավելյալ եկամուտ, որը կապիտալի յուրաքանչյուր միավորի համար հավասար է $s_1 - r_1$ մեծությանը:

Այսպիսով, Ավերչի և Չոնսոնի կողմից դուրս բերված էֆեկտից կարելի է հետևություն անել, որ հանրային ծառայությունների պետական կարգավորման ոլորտում կապիտալի հատուցադրույքի կարգավորման եղանակը, իր մի շարք առավելությունների հետ մեկտեղ, առաջ է քաշում արտադրական գործոնների օգտագործման և դրանց հարաբերակցության մենաշնորհաձին հիմնախնդիր, ինչը կարգավորող մարմիններին, նախքան կարգավորման այս մեթոդի ընտրությունը, պետք է մտածելու և համապատասխան հետևություններ անելու տեղիք տա:

Սակայն Ավերչ-Չոնսոնի էֆեկտը կապիտալի հատուցադրույքի կարգավորման մեթոդի դեմ միակ հակափաստարկը չէ: Այսպես, անգլիացի տնտեսագետներ Ա. Մայքսի և Կ. Ռոբինսոնի գնահատմամբ վերը նշված բնական մենաշնորհների կարգավորման ամերիկյան համակարգն ունի որոշակի թերություններ: Առաջին հերթին բավականին երկար ժամանակահատվածներ տևող և զանգվածային լրատվական միջոցների կողմից բավականին ակտիվ կերպով լուսաբանվող կարգավորող հանձնաժողովի և դատարանի նիստերի արդյունքում կարգավորման գործընթացի բարդացումն է: Այս գործընթացների արդյունքում բնական մենաշնորհ ունեցող ընկերությունն իր վրա է կրում դատական գործընթացների արդյունքում

առաջացող բավականին մեծ չափի ծախսեր, ինչը վերջին հաշվով ընդգրկվում է սակագնի մեջ և «ծանրանում» սպառողների վրա:

Հաջորդ դժվարությունը, որն առաջանում է պետական կարգավորող մարմնի կողմից կարգավորման վերը նշված մեթոդի կիրառման ժամանակ, ընկերության վերաբերյալ տեղեկատվության ստացման խնդիրն է: Բանն այն է, որ նման տեղեկատվության ստացման աղբյուր է հենց կարգավորվող բնական մենաշնորհը, որի կողմից տրամադրվող տեղեկատվությունը ոչ միշտ է ճշգրիտ և օբյեկտիվ: Կարգավորման գործընթացում առաջ է գալիս նաև ընկերության հիմնական կապիտալի չափի ճշգրիտ որոշման մեթոդաբանության ընտրության խնդիրը, քանի որ բնական մենաշնորհի եկամտաբերության սահմանումն ուղղակիորեն կախված է հենց նրա կապիտալի մեծությունից: Կարգավորվող ընկերությունների կապիտալի չափի որոշման համար գոյություն ունեն հետևյալ մեթոդները.

- կապիտալի մեծության որոշումը սկզբնական արժեքի և մաշվածության տարբերությամբ,
- կապիտալի մեծության որոշումը նրա փոխարինման արժեքով,
- կապիտալի մեծության որոշումը նրա օգտագործման արժեքով,
- կապիտալի մեծության որոշումը նրա վաճառքի արժեքով:

Որոշ տնտեսագետների կարծիքով այս մեթոդներից երրորդը տվյալ մեթոդի կիրառման ժամանակ անհնաստ է, իսկ ընդհանուր առմամբ կարգավորման ամերիկյան պրակտիկայում գործնականում կիրառվում են կապիտալի մեծության գնահատման առաջին և երկրորդ մոտեցումները: Հասկանալի է նաև, որ Հայաստանում այս մեթոդների կիրառումն էլ ավելի խնդրահարույց է, ուստի դրանց օգտագործման համար անհրաժեշտ է դրանցում նախ և առաջ կատարել որոշակի փոփոխություններ՝ ՀՀ-ի պայմաններին և տվյալների բազաներին համապատասխանեցնելու նպատակով:

ԴԱԿԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՊՏՏ հայցորդ

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ, ԱՌԿԱ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒՇՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

ՀՀ-ում նոր տնտեսական հարաբերությունների ձևավորման փուլում օրենսդրական բարեփոխումներ իրականացվեցին նաև ֆինանսական վերահսկողության ոլորտում՝ հիմնավորելով այս ոլորտի հիմնախնդիրների լուծման ուղղությունները՝ ֆինանսական վերահսկողության իրականացման սկզբունքները, ընթացակարգերը, ինչպես նաև ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների համակարգը:

Հաշվի առնելով նշված հիմնախնդիրներից յուրաքանչյուրի կարգավորման տնտեսական ու սոցիալական նշանակությունը, ինչպես նաև դրանց արդիականությունը, մեր կողմից փորձ է կատարվում գնահատելու ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների գործունեությունը՝ հիմք ընդունելով վերջինիս կողմից իրականացվող գործառնությունների համակարգը «Սարանիստ» ՍՊԸ-ի օրինակով (այսուհետ՝ **Ընկերություն**)¹:

Այսպես, **Ընկերության** ֆինանսատնտեսական գործունեության ստուգումը, որը կատարվում է հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների, հաշվեկշռի, սկզբնական հաշվառման փաստաթղթերը լրացնելու (կազմելու) ճշտությունը պարզելու միջոցով, կարելի է սահմանել որպես ֆինանսական վերահսկողության համալիր, որը նպատակ ունի վեր հանել օբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության վերջնական կամ միջանկյալ արդյունքները՝ կապված սեփական ու փոխառու դրամական ու նյութական միջոցների օգտագործման նպատակայնության և արդյունավետության հետ:

¹ «Սարանիստ» ՍՊԸ-ի Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, էջ 2:

Ֆինանսական հաշվառման և վերահսկողության համակարգերի զարգացումը պայմանավորված է դրանց առանձին օղակի՝ կառավարչական հաշվառման և կառավարչական վերահսկողության համակարգի գնահատման անհրաժեշտությամբ: Այլ խոսքով, կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործարքների և գոյություն ունեցող բազմաթիվ հիմնախնդիրները կարգավորելու համար, գնալով մեծանուն է ներքին վերահսկողության ազդեցությունը կառավարչական որոշումներ ընդունելու գործընթացի վրա:

«Սարանիստ ՍՊԸ»-ում կառավարչական հաշվառման գործունեության կարելի է առանձնացնել ներքին միջավայրը պայմանավորող գործընթացները¹,

1. գործառնական միջավայրի փոփոխությունը, որը պայմանավորված է ներքին և արտաքին շուկաների կառուցվածքային, տեխնոլոգիական գործընթացների, ներքին և արտաքին մատակարարումների ցանցի գնային և սակագնային, հաշվառման քաղաքականության փոփոխության տեղաշարժերով,
2. նոր անձնակազմի ձևավորման կամ կադրային քաղաքականության իրականացման միջավայր,
3. նոր կամ վերափոխված տեղեկատվական տեխնոլոգիաներ, ծրագրային փաթեթներ ներդրմամբ պայմանավորված միջավայր,
4. արտադրական գործընթացների վերագնահատման արդյունքում սահմանված նորմատիվների և իրավական ակտերի փոփոխությամբ պայմանավորված միջավայր,
5. նոր կամ վերափոխված արտադրական և բիզնես գործընթացի փոխազդեցության արդյունքում ձևավորված միջավայր,
6. **Ընկերության** ղեկավարության կողմից կառավարչական որոշումներ ընդունելու արդյունքում ընկերության կազմակերպչական կառուցվածքի փոփոխությունը նպաստող միջավայր,
7. **Ընկերության** ֆինանսական դրական արդյունքներն ամփոփելու արդյունքում դուստր կամ գիտալաբորատոր ստորաբաժանումների ձևավորմանը և ընդլայնմանը նպաստող տեղաշարժերի միջավայր:

Այսպիսով, **Ընկերության** ներքին վերահսկողության համակարգն ընկերության ներքին կազմակերպչական կառուցվածքի, բիզնես գործընթացների և այդ հիմքերով հաշվետվություններ ներկայացնելու միջոցառումների համալիր է, որը կոչված է պահպանելու **Ընկերության** ակտիվները, տնտեսական գործունեության անընդհատությունը, հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, բարձրացնելու իրականացվող գործառնությունների արդյունավետությունը, ապահովելու ընկերության գործունեության համապատասխանությունը գործող օրենսդրությանը և ընկերության ներքին իրավական ակտերին:

Փորձենք ներկայացնել «Սարանիստ» ՍՊԸ-ում ներքին վերահսկողության նպատակները²: Դրանք են՝

1. **Գործառնական նպատակ՝** Ընկերության գործունեությանը բնորոշ ռիսկերի բացահայտումը և կառավարումը, ինչպես նաև աշխատանքների արդյունավետ կառավարումը և անձնակազմի արդյունավետ կառավարումը:
2. **Տեղեկատվական նպատակ՝** Ընկերությունում որոշում կայացնելու համար անհրաժեշտ հաշվապահական, ֆինանսական և այլ հաշվետվությունների հուսալիության, ամբողջականության և ժամանակին ներկայացման ապահովումը, Ընկերության ներսում տեղեկատվության անհրաժեշտ հոսքերի ապահովումը:
3. **Համապատասխանության նպատակ՝** Ընկերության գործունեության համապատասխանության ապահովումը Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, Ընկերության կառավարման իրավասու մարմինների կողմից հաստատված ներքին իրավական ակտերի (քաղաքականությունների, կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի, հրահանգների, ուղեցույցների) պահանջներին:

¹ «Սարանիստ» ՍՊԸ-ի կանոնադրություն, էջ 4:

² «Սարանիստ» ՍՊԸ-ի կանոնադրություն, էջ 3-4:

Հիմք ընդունելով «Սարանիստ» ՍՊԸ-ի կողմից ընտրված ռազմավարական նպատակների իրականացման հիմնական ուղղությունները¹, փորձենք ամփոփ ներկայացնել և վերլուծել հաշվառման համակարգերի վարման հայեցակարգային մոտեցումները՝ վերհանելով և համակարգելով սույն ոլորտին սպառնացող և խթանող հիմնական գործոնները, ռիսկերը, ինչպես նաև առաջարկելով ուղիներ դրանց գնահատման և կանխարգելման գործում (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Կառավարչական հաշվառման և ներքին վերահսկողության փոխազդեցության գնահատումը առկա և հնարավոր խնդիրների և դրանց լուծման տարբերակների առաջադրման համատեքստում՝

Հաշվառման համակարգերի փոխազդեցության ձևերը	Բնորոշումը և առանձնահատկությունը
Հաշվառման համակարգերի փոխազդեցությունը և դրանց դերը	Կազմակերպության արտադրամասի հաշվապահի անմիջական ղեկավարությամբ կառավարչական հաշվառում իրականացնող մասնագետն իրականացնում է կազմակերպության սկզբնական փաստաթղթերի կազմում և ստուգում, շահագրգիռ կողմերին արժանահավատ և համադրելի հաշվապահական տեղեկատվությամբ ապահովում, հաշվապահական փաստաթղթերի, տվյալների պահպանություն:
Խնդիրների բնագավառը	<ul style="list-style-type: none"> - կազմակերպության տնտեսական գործառնությունների փաստաթղթավորում և գրանցում, - կազմակերպության տնտեսական գործառնությունների ամփոփում, - հաշվապահական առանձին ենթահամակարգերի հաշվետվությունների և տեղեկատվության տրամադրում, - փաստաթղթային ստուգումների իրականացում, - հաշվապահական փաստաթղթերի, տվյալների պահպանություն և արխիվացում:
Խնդիր N1	Կազմակերպության տնտեսական գործառնությունների փաստաթղթավորում և գրանցում (անալիտիկ հաշվառում)
Գործընթաց առաջին	Կազմակերպությունում գործող փաստաթղթաշրջանառության կարգի համաձայն՝ հավաքում կամ կազմում է իր կողմից հաշվառվող տնտեսական գործառնություններին վերաբերող սկզբնական հաշվառման անհրաժեշտ փաստաթղթերը (հաշիվներ, ակտեր, պահեստի, դրամարկղի մուտքի և ելքի օրդերներ, վճարման հանձնարարագրեր, բանկային հաշիվների քաղվածքներ, հաշվետվություններ, հաշվարկներ, տեղեկանքներ), ստուգում է դրանց լրացման ճշտությունը և վավերապայմանների առկայությունը, թերությունների և սխալների հայտնաբերման դեպքում տեղյակ է պահում տվյալ ստորաբաժանման պատասխանատու կենտրոնին՝ հաշվապահին:
Կատարման չափը	Գույքագրումն իրականացված է, և արդյունքները փաստաթղթավորված են կազմակերպությունում սահմանված ընթացակարգերին համապատասխան
Խնդիր N2	Հաշվապահական փաստաթղթերի, տվյալների պահպանություն և արխիվացում
Գործընթաց առաջին	Ստացված հաշվապահական փաստաթղթերը համակարգված ձևով կարվում են թղթապանակներում, գրքերում, սահմանված ժամկետներում ու կարգով հանձնվում են կազմակերպության արխիվ, ստեղծվում են հաշվապահական տվյալների էլեկտրոնային բազաների պահուստային պատճեններ, ապահովվում է առևտրային գաղտնիք պարունակող փաստաթղթերի պահպանության սահմանված ռեժիմը, աշխատատեղում պահպանվում են աշխատանքի անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային անվտանգության կանոնները:

¹ Նույն տեղում:

Հաշվառման համակարգերի փոխազդեցության ձևերը	Բնորոշումը և առանձնահատկությունը
Կատարման չափանիշը	Հաշվապահական փաստաթղթերի և էլեկտրոնային բազաների պատշաճ պահպանության ապահովում. արխիվացման ենթակա փաստաթղթերը սահմանված կարգով և ժամկետներում հանձնվում են կազմակերպության արխիվ:
Պատասխանատվությունը և բարդության աստիճանը	Կառավարչական հաշվառում իրականացնող մասնագետը պատասխանատու է՝ - կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, ծախսերի և եկամուտների հաշվապահական և հարկային հաշվառումը գործող օրենսդրությանը, հաշվապահական հաշվառման ընդհանուր սկզբունքներին և կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան վարելու, - տնտեսական գործառնությունների ճիշտ փաստաթղթավորման և հաշվապահական ձևակերպման, - հաշվապահական հաշվառման տվյալների, հաշվետվությունների և տեղեկությունների արժանահավատության, - հաշվապահական փաստաթղթերի և էլեկտրոնային բազաների պատշաճ պահպանության - աշխատանքային կարգապահության պահպանության համար:
Կարողություններ և հմտություններ	Կառավարչական հաշվառում վարող մասնագետը մասնագիտական գործունեության ընթացքում պետք է կարողանա իր գիտելիքները, մասնավորապես՝ - օգտագործել անհրաժեշտ իրավական և նորմատիվային փաստաթղթերը, - փաստաթղթավորել, գրանցել գործառնությունները, - օգտվել համակարգչային բազային (հիմնական) ծրագրերից, - օգտվել հաշվապահական համակարգչային ծրագրերից:
Համակարգչային իմացությունը	Կառավարչական հաշվառում վարող մասնագետը մասնագիտական գործունեության ընթացքում պետք է՝ - ունենա համակարգչային բազային գրագիտություն (հիմնական ծրագրերի վերաբերյալ), - իմանա հաշվապահական համակարգչային ծրագրեր:

Վերլուծելով աղյուսակ 1-ում մեր կողմից առաջարկված մոտեցումը՝ կարող ենք եզրակացնել.

1. Կառավարչական հաշվառում իրականացնող մասնագետի դերը շատ մեծ է ներքին վերահսկողության համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման գործում: Նա անմիջապես արտադրական ստորաբաժանման հաշվապահի համաձայնությամբ իրականացնում է կազմակերպության սկզբնական փաստաթղթերի կազմում և ստուգում, շահագրգիռ կողմերին արժանահավատ և համադրելի հաշվապահական տեղեկատվությամբ ապահովում, հաշվապահական փաստաթղթերի, տվյալների պահպանության ապահովում:
2. Բացահայտվում և ներկայացվում է կառավարչական հաշվառման և ներքին վերահսկողության փոխազդեցության համատեքստում առկա և հնարավոր խնդիրների բնագավառը:

Այսպիսով, ամփոփելով հոդվածի շրջանակներում վերհանված խնդիրները և դրանց լուծման հիմնական ուղիները, կարող ենք եզրակացնել, որ ներքին վերահսկողության արդյունքները կարող են նպաստել կառավարչական հաշվառում վարելու գործընթացը պարզեցնելուն:

**ԿԱՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՐՁՐ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻԸ**

Ֆինանսական կայունությունն ամենաընդհանուր սահմանմամբ ընկալվում է որպես ֆինանսական հաստատությունների և ֆինանսական շուկաների կայունություն¹: Ֆինանսական կայունության ապահովումը ենթադրում է ռիսկերի հիմնական աղբյուրների, ֆինանսական ռիսկերի ոչ ճիշտ կառավարման, ակտիվների գների ձևավորման անարդյունավետության բացահայտում և համապատասխան քաղաքականության իրականացում:

Կայուն ֆինանսական համակարգը էական դեր ունի տնտեսության առողջ զարգացման համար: Այդ տեսանկյունից անհրաժեշտ է վստահ լինել, որ ֆինանսական համակարգն ապահով է և կայուն, ունակ է պատշաճ կերպով տնտեսությանը մատուցելու հիմնական ֆինանսական ծառայությունները: Ֆինանսական կայունության ապահովումը մի շարք երկրների կենտրոնական բանկերի առաջնային խնդիրներից մեկն է: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ցածր գնաճը, գործազրկության ցածր մակարդակը, բարձր տնտեսական աճը, որպես դրամավարկային և այլ պետական մարմինների խնդիրներ, ժամանակակից տնտեսություններում չեն կարող ապահովվել առանց զարգացած և կայուն ֆինանսական համակարգի միջնորդության, քանի որ դրա միջոցով են դրամավարկային քաղաքականության միջոցառումները փոխանցվում տնտեսության մյուս հատվածներին:

Բանկային համակարգը թափանցել է հասարակության բոլոր ոլորտները՝ տնտեսություն, քաղաքականություն, սոցիալական ոլորտ: Դրան համապատասխան՝ արտաքին և ներքին սոցիալ-տնտեսական անբարենպաստ փոփոխություններն ազդում են բանկային համակարգի վրա և ի վիճակի են հանգեցնելու այդ համակարգի էական անհավասարակշռության: Այդպիսի վիճակ կարող է առաջանալ ինչպես կտրուկ բացասական մակրոտնտեսական գործոնների, այնպես էլ բանկային համակարգի ներսում կառուցվածքային անհամամասնությունների կուտակման հետևանքով: Վերջին երկու տասնամյակներում մակրոտնտեսական գործոնների նման ազդեցությունն ուժեղացել է ֆինանսական շուկաների գլոբալացման բացասական հետևանքների պատճառով: Ֆինանսական շուկայի գլոբալացումը «քայլում» է կապիտալի միջազգային շարժի ազատականացմանը (լիբերալիզացիային) համընթաց: Այն արտահայտվում է ոչ միայն կապիտալի միջազգային շարժունության աճի, այլև տարբեր ֆինանսական գործառույթների միջև սահմանների վերացման մեջ: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին նախորդող զարգացումներից են ֆինանսական համակարգի գլոբալացման բարձր տեմպերը, ինչպես նաև մեծ և բարդ ֆինանսական ինստիտուտների սերտաճումը: Ֆինանսական գլոբալացումն ամբողջ աշխարհում անընդհատ տեղի ունեցող՝ տարբեր երկրների կողմից ֆինանսական հոսքերի ազատականացման գործընթացի հետևանք է: Այն ունի լավ կողմ. միջոցները կարողանում են արագ տեղաշարժվել երկրից երկիր և մտնել այն շուկաները, որոնք երաշխավորում են բարձր եկամտաբերություն, մյուս կողմից հնարավորություն են տալիս ներդրողներին ավելի արդյունավետ դիվերսիֆիկացնել իրենց պորտֆելները: Սակայն այս գործընթացն ունի նաև մեկ ռիսկ և թերություն, որ եթե մի երկրի ֆինանսական շուկայի բարդություն ի հայտ գա, ապա այն արագ արձագանք կգտնի մեկ այլ երկրում:

Այսպիսով, բանկերը, ի լրումն իրենց ավանդական ֆինանսական միջնորդի գործառույթների, ավելի հաճախ իրականացնում են գործակալների գործառույթներ ֆոնդային և արժույթային շուկաներում ինչպես իրենց, այնպես էլ հաճախորդների հաշվին: Արդյունքում բանկերի հիմնական գործառույթը՝ ֆինանսավորել ներդրումները, որոնք ստեղծում են նոր

¹ ՀՀ Կենտրոնական բանկ, «Ֆինանսական կայունության հաշվետվություն», Երևան 2010, էջ 1:

աշխատատեղեր և իրական հարստություն, փոխարինվում է սպեկուլյատիվ բնույթի ֆինանսական գործառնություններով¹: Վարկային կազմակերպությունների վարքագծի փոփոխությունը տեղի է ունենում ֆինանսական տարբեր շուկաների միջև սահմանների վերացման ֆոնի վրա: Բանկերի սպեկուլյատիվ գործառնությունները հանգեցնում են տոկոսային և շուկայական համակարգային բանկային ռիսկերի ավելացման, հետևաբար՝ ճգնաժամի: Ֆինանսական գլոբալացումը հանգեցրել է ապրանքների և ծառայությունների արտադրության աճի (տնտեսության «իրական հատվածի») և ֆինանսական գործառնությունների («ֆինանսական հատվածի») աճի տեմպերի հակասությունների ուժեղացման: Բացի այդ, ֆինանսական գլոբալացումը կապված է ֆինանսական դերիվատիվների (ածանցյալների) զարգացման հետ, որոնց շուկան գնալով աճում է և դառնում ինքնուրույն՝ առանձնահատուկ բազային ակտիվների շուկայից: Շատ բանկեր անցել են ֆինանսական այս գործիքների կիրառմանը, քանի որ դրանք ապահովում են բարձր շահութաբերություն: Սակայն, ինչպես մյուս բոլոր, այնպես էլ դերիվատիվ (ածանցյալ) գործիքներն ունեն այլ կողմ. դրանք բարձր-ռիսկային են, ինչը հաճախ դառնում է համակարգային բանկային ճգնաժամերի պատճառ: Թեև տնային տնտեսությունների և բիզնեսի տեսանկյունից այս գործընթացը ձեռնառու է, քանի որ հանգեցնում է ֆինանսական հսկաների կողմից առաջարկվող արտադրանքի ծախսերի նվազմանը, սակայն մյուս կողմից առաջ է բերում անհանգստություն, թե արդյո՞ք այս մեծ ֆինանսական հսկաներն արդյունավետ են կառավարվում՝ հատկապես այն բազմապիսի ռիսկերի տեսանկյունից, որոնք առաջ են գալիս դրանց գործունեության առնչությամբ: Ֆինանսական շուկաներում կոնսոլիդացիան (համախմբումը) առաջ է բերում նաև մեկ այլ ռիսկ, որ որոշ ֆինանսական կառույցներ արդեն ֆինանսական համակարգի բնականոն գործունեության համար դարձել են չափից ավելի մեծ և չափից ավելի կարևոր, և դրանցից որևէ մեկի վնասները համակարգային խնդիրներ կառաջացնեն գլոբալ ֆինանսական համակարգում: Այնուամենայնիվ, նշված գործոնները ևս գլոբալ մասշտաբով նպաստ են ֆինանսական հոսքերի մեծացմանը: Այսպես, ֆինանսական շուկաներում բանկային հատվածի վրա հիմնված ֆինանսական միջնորդությունն արագ վերափոխվում է շուկաների վրա հիմնված ֆինանսական միջնորդության: Այս գործընթացում հիմնական կարևոր հանգամանքն արժեթղթավորման արագ տարածումն է, որը թույլ է տալիս բանկի հաշվեկշռում եղած վարկն արագ արժեթղթավորել և նոր գործիքով վաճառել համաշխարհային շուկաների տարբեր ներդրողներին: Դրա հետ մեկտեղ արագ տեղի է ունենում վարկային ռիսկերի վերաբաշխում և տեղափոխություն, ինչը թույլ է տալիս վարկատուներին չվերադարձման (դեֆոլտի) ռիսկը տեղափոխել մեկ այլ ֆինանսական շուկայի խաղացողի վրա, նույնիսկ այն դեպքում, երբ վարկը փաստացի մնում էր իրենց հաշվեկշիռներում (CDS-credit default swaps): Ֆինանսական շուկաներում նոր գործիքների արագ ի հայտ գալը հանգեցնում է գլոբալ մասշտաբով ֆինանսական հոսքերի մեծացմանը և ֆինանսական շուկաների աշխուժության աճին: Նման գործառնությունների ծավալների մասին կարելի է դատողություններ անել՝ ելնելով հետևյալ տվյալներից. բանկերի և ներդրումային ֆոնդերի բոլոր ակտիվների գումարը, ապահովագրական ընկերությունների ակտիվների գումարը, ֆոնդային շուկաների մեծությունը, մյուս արժեթղթերի շուկան ներկայումս մի քանի անգամից մինչև մի քանի տասնյակ անգամ գերազանցում են միջին և բարձր զարգացած երկրների ՀՆԱ-ն: Ֆինանսական շուկայի բաղկացուցիչները վերջին 10-15 տարում միջին հաշվով 3-5 անգամ ավելի արագ են աճել, քան մնացած մակրոտնտեսական ցուցանիշները: ԱՄՆ-ում 2008 թվականի ամռան վերջին 15 տրիլիոն ԱՄՆ դոլար ՀՆԱ-ի պայմաններում արժեթղթերի և ածանցյալների գումարը կազմել է 482 տրիլիոնից (նվազագույն գնահատական) մինչև 510 տրիլիոն (առավելագույն գնահատական) ԱՄՆ դոլար: Իհարկե, դրան զուգընթաց, աճել են նաև հիփոթեքային վարկերը²: 2000-2007թթ. ընկած ժամանակահատվածում ԱՄՆ-ի ակտիվներն արտասահմանում 2 անգամ ավելացան՝ կազմելով ՀՆԱ-ի 128%-ը, ինչն արտացոլում է

¹ Кавтанадзе И., “Системные банковские кризисы в условиях финансовой глобализации”, Тбилиси, 2003, с. 247.
² Oliver Blanchard “Cracks in the system, Repairing the damaged global economy”, december 2008, p. 11.

ԱՄՆ-ի կարևորությունը որպես ուղղակի օտարերկրյա ներդրումների աղբյուր: Նույն ժամանակահատվածում ԱՄՆ-ի պարտավորությունները ՀՆԱ-ի 77%-ից աճեցին՝ հասնելով 145%-ի, ինչը 2007 թվականին ավելացնում է բացասական պարտավորությունները ՀՆԱ-ի նկատմամբ 17%-ով: ԱՄՆ-ի օտարերկրյա պաշտոնական ակտիվներն ավելի քան 3 անգամ աճեցին՝ հասնելով 3.3 տրիլիոն ԱՄՆ դոլարի կամ ՀՆԱ-ի 24%-ի. դրանց մեծ մասը կազմում են ԱՄՆ պետական պարտատոմսերը, պահուստների նմանատիպ աճ կա զարգացող երկրներում և բարձր եկամտաբերություն ունեցող Ասիայում¹: Դա պահում էր ԱՄՆ ցածր տոկոսադրույքները և դրդում գլոբալ «ելք փնտրելու»: Դա ստիպեց նաև ներդրողներին անտեսել ռիսկերը և անցնել ռիսկային ակտիվներին՝ խթանելով ամբողջ աշխարհի անշարժ գույքի և ֆոնդային շուկաներում առկա համընդհանուր կտրուկ աճը:

Վերջին 20 տարիների ընթացքում բանկային ճգնաժամերի գերակշիռ մասը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ տրամադրվող վարկերի ծավալները զգալի աճել են: Մյուս կողմից ոչ բոլոր վարկային բույներն են բերել բանկային ճգնաժամերի: Չնայած այն հանգամանքին, որ վարկային բույների ժամանակ բանկային ճգնաժամի առաջացման հավանականությունն աճում է 0.5-0.7-ով, պատմության մեջ վարկային բույների միայն 20%-ն է բերել ֆինանսական ճգնաժամերի: Այսպես օրինակ, Բարաք օբիսա և այլոց կարծիքով 135 վարկային բույներից միայն 23-ն են ավարտվել բանկային ճգնաժամերով, այսինքն՝ ընդամենը 17%-ը: Դա նշանակում է, որ ֆինանսական, տնտեսական կամ ֆինանսատնտեսական ճգնաժամերն ավելի շատ առանձնահատկություններ ունեն, քան օրինաչափություններ: Ծգնաժամերին բնորոշ հիմնական օրինաչափություններից մեկը ֆիկտիվ և իրական կապիտալների միջև առաջացող տարբերությունն է:

Բանկային համակարգն իր բնույթով ենթակա է ճգնաժամի: Բանկերը վերցնում են կարճաժամկետ ավանդներ և տրամադրում երկարաժամկետ վարկեր: Երբ ավանդատուների վստահությունը բանկերի նկատմամբ նվազում է, անգամ առողջ բանկին դա կարող է լուրջ վնաս հասցնել: Տնտեսական ցանկացած ճգնաժամ ունի իր առանձնահատուկ արմատներն ու դրան համարժեք լուծման ուղիները: Սեկ բանում են ճգնաժամերը բացարձակ միանման. դրանք ծագում են տնտեսական հավասարակշռության խախտման հետևանքով: Դրանց հաղթահարումը կապված է նոր հավասարակշռության սահմանման հետ: Վերջինիս պայմանները կարող են կտրուկ կամ մասամբ տարբերվել նախորդ հավասարակշռության պայմաններից: Այդ տարբերությունն էլ հենց կազմում է ճգնաժամի բուն էությունը և խորությունը:

Համակարգային բանկային ճգնաժամերը, որոնք տեղի են ունեցել վերջին հարյուրամյակի ընթացքում, բացի առաջացման ընդհանուր պատճառներից, ունեն նաև որոշակի ընդհանուր գծեր: Նախ, այդպիսի ճգնաժամն իր ներսում կրում է մասշտաբային մտավոր մարտահրավեր, որը պահանջում է ճգնաժամի պատճառների և արմատների իմաստավորում, դրա հաղթահարման ուղիների և մեխանիզմների բացահայտում և մշակում: Սկզբնապես համակարգային բանկային ճգնաժամերի դեմ սկսում են պայքարել ավանդական, անցյալում հայտնի մեթոդներով: 1930-ական թվականների նկատմամբ դա ԱՄՆ-ի կառավարության ձգտումն էր չմիջամտել իրադարձությունների բնական ընթացքին, կոշտ ձևով հավասարակշռել բյուջեն և ամրացնել դրամական համակարգը, որը հիմնված է ոսկյա ստանդարտի վրա: Ինչպես վկայում է անցած հարյուր տարվա փորձը, ճգնաժամերը սովորաբար հասունանում են մեկ տարվա ընթացքում, և դրա համար ոչ մի առանձնակի քաղաքականություն չի պահանջվում: Համանման ձևով 1970-ական թվականների ճգնաժամին զուգահեռ փորձեցին գործարկել այդ պահի համար արդեն ավանդական քեյնսական կարգավորման մեթոդները, որոնք հանգեցրին ինֆլյացիայի աննախադեպ աճի և ստագֆլյացիոն գործընթացների սկզբի: Այլ կերպ ասած՝ այս ճգնաժամերի նկատմամբ վատ կիրառելի են կամ ավելի ճիշտ ընդհանրապես կիրառելի չեն նախորդ տարիների ընթացքում մշակված տնտեսական քաղաքականության մեթոդները: Ժամանակի ընթացքում ծնվում են նոր հիմնախնդիրներ, անհասկանալի

¹ Մարկոսյան Ա., Բատիկյան Խ., Տնտեսական ճգնաժամը և ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները, Երևան 2010, էջ 58:


են ճգնաժամի ծավալման ինչպես մեխանիզմները, այնպես էլ դրանցից դուրս գալու ուղիները, դրա ծավալներն ու տևողությունը: XX հարյուրամյակի ընթացքում համակարգային ճգնաժամների հաղթահարման համար պահանջվեց տասը տարի: Այդ ընթացքում տնտեսագետները հասկացան, որ հանդիպել են այնպիսի դժվարությունների, որոնք մինչ այդ չեն եղել, և եկան այն մտքին, որ իրենք չգիտեն տնտեսության կառավարման բոլոր հարցերի պատասխանները:

Ֆինանսական միջնորդության վրա տնտեսական ճգնաժամների ազդեցության գնահատման նպատակով մեր կողմից ուսումնասիրվել են 2008-2010թթ. ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված ֆինանսական կայունության հաշվետվությունները, ամփոփվել է ֆինանսական միջնորդության մակարդակը բնութագրող ցուցանիշների դինամիկան: Մտացված արդյունքները վկայում են այն մասին, որ բանկային համակարգի կայունության փոփոխությանը համընթաց փոխվում է ֆինանսական միջնորդության մակարդակը: Այն գնահատելու համար օգտագործվում են երեք ցուցանիշներ՝ ավանդներ/ՀՆԱ, փողի զանգված/ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ:

2008 թվականին ֆինանսական միջնորդության մակարդակը փոքր-ինչ բարձրացել է: Բանկային համակարգի ակտիվների աճի տեմպը գերազանցել է ՀՆԱ-ի աճի տեմպը, ինչի արդյունքում բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունն ավելացել է 3.7 տոկոսային կետով՝ կազմելով 28.1%: 2008-ին ֆինանսական միջնորդության մակարդակը դեռևս գնահատվում էր ցածր, իսկ տնտեսական ճգնաժամի ազդեցության պայմաններում ակնկալվում էր, որ դրա աճի տեմպը կարող էր էականորեն գապվել: 2008 թվականին ֆինանսական միջնորդության հետագա խորացման նախանշան էր փողի զանգվածի և բանկային համակարգի կողմից ներգրավված ավանդների աճի տեմպերի նվազումը: Այդ ցուցանիշը տարվա արդյունքներով կազմել է 12.8%: Ֆինանսական միջնորդությունը բնութագրող՝ տնտեսությանը տրամադրված վարկերի մեծության և ընդհանուր ավանդների մեծության հարաբերակցության ցուցանիշը 2008 թվականին ավելացել է 34.6 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 137.2%: Խնայողություններից ներդրումների փոխանցման արդյունավետությունը բնութագրող վերոնշյալ ցուցանիշի աճը վկայում է, որ վարկավորման աճը 2008 թվականին, ի տարբերություն նախորդ տարվա, ավելի պակաս է ֆինանսավորվել ավանդների հաշվին, և ավելացել է միջազգային կազմակերպություններից ներգրավված միջոցների և բանկերի սեփական կապիտալի հաշվին վարկավորման ֆինանսավորումը:

Գծապատկեր 1¹

Ֆինանսական միջնորդության մակարդակը



¹ ՀՀ Կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, Երևան 2010, էջ 36:

Բանկային ակտիվների աճին զուգահեռ տնտեսությունում արձանագրվել է անվանական ՀՆԱ-ի կրճատում, ինչի արդյունքում բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունն այդ տարի ավելացավ 13.8 տոկոսային կետով՝ կազմելով 41.9%: Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունն ավելացել է 5.3 տոկոսային կետով և կազմել 22.2%: Ֆինանսական միջնորդությունը բնութագրող փողի զանգված/ՀՆԱ և բանկային համակարգի կողմից ներգրավված ավանդների/ՀՆԱ ցուցանիշների մասով նույնպես արձանագրվել է աճի տեմպերի արագացում: Ֆինանսական միջնորդության աճին նպաստող գործոններից կարելի է նշել տնտեսության որոշ ճյուղերի վարկավորման առաջանցիկ աճը: 2010 թվականի ընթացքում անվանական ՀՆԱ աճին զուգընթաց տնտեսությունում արձանագրվել է բանկային համակարգի ակտիվների առաջանցիկ աճ, ինչի արդյունքում բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը աճել է 2.6 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 44.5%: Տնտեսության վերականգնմանը զուգահեռ ՀՆԱ-ի աճի համեմատությամբ վարկերի առաջանցիկ աճի արդյունքում բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը ևս ավելացել է 3.1 տոկոսային կետով և կազմել 25.3%: 2010 թվականին ֆինանսական միջնորդությունը բնութագրող փողի զանգված/ՀՆԱ և բանկային համակարգի կողմից ներգրավված ավանդների/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշները նվազել են 0.6 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 26% և 19.2%: Ավանդներ/ՀՆԱ հարաբերական ցուցանիշի նվազման պատճառն իրավաբանական անձանց ավանդների նվազումն է: Ընդհանուր առմամբ 2010թ. տնտեսության աճի միտումների և գործարար ակտիվության վերականգնմանը զուգահեռ իրավաբանական անձինք սկսեցին գործարար ոլորտ ուղղել 2009թ. ընթացքում կուտակված ավանդները (2009թ. ընթացքում 36%-ով աճել էին իրավաբանական անձանց ավանդները):

Ֆինանսատնտեսական ճգնաժամի յուրաքանչյուր ալիքից հետո կառավարությունները միջոցներ են ձեռնարկում՝ խստացնելու և արդյունավետ դարձնելու վերահսկողական համակարգերը: Այդ մասին են վկայում նաև տնտեսական, ֆինանսական ոլորտը կարգավորող տնտեսական օրենքների բարեփոխումները: Ֆինանսատնտեսական ճգնաժամերի պատճառ է նաև պետական վերահսկողական համակարգերի անկատարությունը: Ասվածից մի հետևություն կարելի է անել, որ եթե ֆինանսատնտեսական ճգնաժամ է, ուրեմն՝ կառավարությունը միշտ մի քայլ հետ է մնացել տնտեսությունում ստեղծված իրավիճակին մակրոտնտեսական ճիշտ գնահատականներ տալուց համապատասխան որոշումներից: Մեր կարծիքով, որքան էլ կատարյալ լինեն ֆինանսական դաշտը կարգավորող օրենսդրական ու նորմատիվային դաշտերը, առանց ֆինանսական շուկայի յուրաքանչյուր մասնակցի արդյունավետ վարքագծի հնարավոր չէ խուսափել տատանումներից և տնտեսական ցնցումներից: Տնտեսական ցանկացած իրավիճակում շուկայի բոլոր մասնակիցների գիտակից վարքագիծը միշտ կարող է ավելի արդյունավետ մակրոտնտեսական զարգացումներ ապահովել, քան ամենակատարյալ վերահսկողական համակարգը: Մեր կարծիքով, դրան կարող է մեծապես նպաստել ֆինանսական ինստիտուտների ներսում իրացվելիության գրագետ կառավարումը: Քանի դեռ հասարակությունն ականատես է պարբերաբար կրկնվող ճգնաժամերի, վստահությունը բանկերի նկատմամբ չի կարող բարձր լինել, իսկ դա խանգարում է բանկերին արդյունավետ միջնորդներ լինելու և դրանով արդյունավետ խթանելու խնայողությունների փոխակերպումն իրական ներդրումների:

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Կատարյալ շուկայական տնտեսության հիմնական նախապայմանների ապահովման դեպքում, երբ գուտ մրցակցային տնտեսության պարագայում ձեռնարկատիրական գործունեության չափերի և տեսակների մասին որոշումները կայացվում են բացառապես տնտեսական շարժառիթներով, տնտեսագիտության տեսանկյունից պետության ցանկացած միջամտություն չի կարող հիմնավոր համարվել՝ անկախ այն հանգամանքից, թե տնտեսական գործունեության որ տեսակին կամ մասշտաբին է այն ուղղված: Տեսական հիմնավորմամբ ձեռնարկատիրության այն տեսակների պարագայում, որտեղ մասշտաբի էֆեկտը ձեռք է բերվում փոքր ձեռնարկատիրության պայմաններում, ինքնըստինքյան կգործեն մեծ թվով մանր ձեռնարկություններ, և հակառակը՝ խոշոր բիզնես կձևավորվի այն ոլորտներում, երբ մասշտաբի էֆեկտն առավելապես ցույց է տալիս իր դրական կողմերը խոշորամասշտաբ արտադրության պարագայում: Նման տնտեսությունում պետական ցանկացած աջակցություն կխաթարի տնտեսական բնականոն Պարետո հավասարակշռությունը:

Սակայն իրական կյանքում իրավիճակը, իհարկե, բոլորովին այլ է: Կապված այնպիսի հանգամանքների հետ, ինչպիսիք են՝ շուկայական անկատարությունները, ազգային անվտանգության խնդիրները, սեփականության պաշտպանության ինստիտուտի ապահովումը, պետության և պետական ծախսերի առկայությունը, ազգային շուկայի սահմանափակ ծավալը, նման հավասարակշռությունը բնականորեն հաստատվում է շատ ավելի վատ պայմաններով, քան կարող էր հասցվել պետական միջամտության պարագայում: Այսինքն, այս առումով, փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) պետական աջակցությունն անհրաժեշտ է միայն անկատար շուկայական տնտեսությամբ պայմանավորված:

ՓՄՁ առանձնացումը և դրա հանդեպ ընդգծված պետական քաղաքականության իրականացումը բոլոր երկրներում առավել շատ քննարկվող երևույթներից մեկն է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ՓՄՁ-ները մեծ դերակատարություն ունեն ինչպես ՀՆԱ-ի ձևավորման, այնպես էլ զբաղվածության և հարկային մուտքերի ապահովման, սոցիալական լարվածության նվազեցման գործում: Միաժամանակ, շուկայական տնտեսության գործունակության միակ երաշխիքը մրցակցության մեխանիզմի հստակ աշխատանքն է, ինչը հնարավոր է միայն բազմաթիվ ձեռնարկությունների առկայության պայմաններում: Այս առումով պետական ընդգծված խթանող քաղաքականությունը միանգամայն արդարացված է, եթե, իհարկե, չի վնասում տնտեսության ռացիոնալ կառուցվածքի ձևավորմանը:

Բազմաթիվ հետազոտողներ ՓՄՁ ոլորտի կարևորության նման փաստարկներով փորձում են հիմնավորել այս ոլորտի հանդեպ արտոնյալ պետական հարկային քաղաքականության անհրաժեշտությունը, որը պետք է արտահայտվի հարկման հատուկ ռեժիմների սահմանմամբ: Սույն հոդվածում փորձ է արվել համակարգել նման հատուկ ռեժիմների դրական և բացասական կողմերը և ներկայացնել այն հիմնական սկզբունքները, որոնց շրջանակներում այդ գործիքների տնտեսական արդյունավետությունը կլինի առավել բարձր: Նշենք, որ «Հարկման հատուկ ռեժիմ» է անվանվում այն հարկումը, որը տարբերվում է «ստանդարտ ռեժիմով» հարկումից և իրականացվում է պարզեցված ու հաստատագրված և այլ տարբերակներով:

ՓՄՁ ոլորտում իրականացվող տնտեսական և հարկային քաղաքականության գնահատումը հնարավոր է իրականացնել միայն այն պարագայում, երբ հստակ սահմանված են այդ քաղաքականության նպատակները: Միայն նպատակների հստակության պայմաններում է հնարավոր մշակել դրանց հասնելու ուղիներ և գործիքներ, ինչպես նաև գնահատել այդ գործիքների կիրարկման արդյունավետությունը: Ցավոք, նպատակների սահմանումն այդքան էլ հեշտ չէ, որքան թվում է առաջին հայացքից: Առավել ընդունված տեսակետի համաձայն՝ քաղաքականության նպատակը ՓՄՁ զարգացման խթանումն է: Չկրկնելով մասշտաբի էֆեկտի և ռեսուրսների տեղաբաշխման արդյունավետության տնտեսական մեխանիզմների

ձախողման վերաբերյալ վերը նշված քննարկումները՝ նշենք, որ չափազանց անորոշ է հենց ինքը՝ զարգացում տերմինի օգտագործման իմաստը: Այսինքն՝ ինչ նկատի ունենք ՓՄՁ զարգացում ասելով՝ ՓՄՁ ձեռնարկություններ թվաքանակի, շրջանառության, զբաղվածների կամ ՀՆԱ մասնաբաժնի ավելացում, թե՞ բոլորովին այլ բան: Այսինքն՝ արդյո՞ք ՓՄՁ բնութագրիչների մեխանիկական ավելացումը կարելի է բնութագրել որպես այս ոլորտի զարգացում, թե՞ պետական աջակցության նպատակը բոլորովին այլ է: Նման ավելացումների հիմքում կարող են լինել արհեստական գործոններ՝ պայմանավորված խթանող քաղաքականության հետևանքով առաջացած «կեղծ» տնտեսական ազդակներով, որոնք արդեն քննարկվել են: Մինչդեռ ՓՄՁ ոլորտի որակական բնութագրիչների գնահատումը ոչ միայն բարդ է, այլև կապված է դեռևս չլուծված մեթոդաբանական խնդիրների հետ, որոնցից կարևորագույնը, թերևս, տարբեր տնտեսական պայմաններում տարբեր մասշտաբների ձեռնարկությունների և տնտեսական ոլորտների համար ստացված արդյունքների համադրությունն ու համեմատությունն է:

Որպես հարկման հատուկ ռեժիմների այլընտրանքային նպատակ՝ երբեմն դիտարկվում է հարկերից խուսափելու հնարավորությունների նվազեցումը, այսինքն՝ գործունեության այն ոլորտներում, որտեղ հարկային վարչարարության գործիքների կիրառումը դժվար է, անհնար կամ տնտեսապես աննպատակահարմար, կիրառվում են հարկման հատուկ ռեժիմներ: Նման հիմնավորումը հատկապես կիրառելի է այնպիսի երկրներում, որտեղ տնտեսության կառուցվածքում գերիշխում են մանր ձեռնարկությունները: Դրանց շարքին կարող են դասվել զարգացած զբոսաշրջային, առևտրային, գյուղատնտեսական ենթակառուցվածք ունեցող երկրները՝ մանավանդ հաշվի առնելով գործունեության այդ տեսակների սեզոնային բնույթը:

Նպատակադրման այլընտրանքային տարատեսակ կարելի է դիտարկել նաև հաշվապահական հաշվառման վրա կատարվող ծախսերի նվազեցումը: Բանն այն է, որ տնտեսական գործունեության մի շարք տեսակների շրջանառության ծավալներն այնպիսին են, որ հաշվապահական հաշվառման ամբողջական համակարգ կիրառելու դեպքում գործունեության տեսակը վերածվում է տնտեսապես վնասաբեր գործունեության, ինչը տնտեսապես չհիմնավորված որոշումների կիրառման մթնոլորտ է ստեղծում՝ ընդհուպ մինչև գործունեության այս տեսակներով զբաղվելուց հրաժարվելը: Այս պարագայում ևս հարկման հատուկ ռեժիմների՝ պարզեցված հարկային հաշվառման կիրառումը հնարավորություն է ընձեռում լուծելու ծառայած խնդիրը: Նման նպատակը գերազանցապես վերաբերում է միկրո ձեռնարկատիրությանը:

Հարկման հատուկ ռեժիմների կիրառման ընդդիմադիրները լուրջ փաստարկներ են բերում դրանց անթույլատրելիության վերաբերյալ: Այդ փաստարկների գերակշիռ մասը վերաբերում է հարկային արտոնությունների և հատուկ ռեժիմների չարաշահումներին, ընդ որում, տեսականորեն, գրեթե ցանկացած դեպքում կարելի է ներկայացնել գործողությունների այնպիսի հաջորդականություն, որի դեպքում ի սկզբանե այդ արտոնություններից օգտվելու հնարավորությունից զրկված որոշակի խումբ ձեռնարկություններ հայտնվում են արտոնյալների շարքում: Նման գործողությունները ներառում են դուստր ձեռնարկությունների ստեղծումը, գործընկերների միջև խոշոր բիզնեսի մասնատումը, ենթապայմանագրային հարաբերությունների հաստատումը, փաստաթղթերով չամրագրված պայմանավորվածությունների ձեռքբերումը, աշխատակիցներին անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակով գրանցումն ու ծառայություններ մատուցելու պայմանագրի կնքումը և այլն, որոնք կախված են ազգային հարկային և այլ ոլորտները կարգավորող օրենսդրության ընձեռած հնարավորություններից և առանձնահատկություններից:

Այսպիսով, ինչպես պնդում են հարկման հատուկ ռեժիմների ընդդիմադիրները, խոշոր ձեռնարկատիրությունը նույնպես կարող է օգտվել արտոնյալ ռեժիմների ընձեռած հնարավորություններից, ընդ որում կարելի է հիմնավորել, որ որոշ դեպքերում շատ ավելի շատ, քան մանր ու միջին ձեռնարկատիրությունը, որոնց համար ի սկզբանե նախատեսված էին այդ արտոնյալ ռեժիմները: Եվ այն պնդումները, թե արտոնյալ պայմաններում ՓՄՁ ոլորտի զարգացման հետևանքով ստացված լրացուցիչ տնտեսական արդյունքը խոշոր հաշվով փոխհատուցում է արհեստական չարաշահումների հետևանքով կորսված հարկային եկամուտները, այնքան էլ իրականությանը չեն համապատասխանում: Այսինքն՝ ՓՄՁ խթանման պատճա-

ռաբանությամբ ներմուծված արտոնյալ ռեժիմներն ու արտոնությունները ոչ միայն չեն ծառայում իրենց բուն նպատակին, այլև ավելի են վատթարացնում այն իրավիճակը, որն առկա էր մինչև այդ ռեժիմների ներդրումը:

ՓՄՁ ոլորտին հարկային արտոնությունների տրամադրումն ունի մի շարք թաքնված վտանգներ: Առաջին և կարևորագույն վտանգն այն է, որ հարկային հատուկ ռեժիմների սահմանումը չպետք է հանգեցնի տնտեսական արդյունավետության նվազմանը և տնտեսության մեջ ռեսուրսների ռացիոնալ տեղաբաշխման տնտեսական մեխանիզմների խեղաթյուրմանը: Մյուս կողմից՝ հարկային արտոնություններից օգտվելու ֆինանսական ցուցանիշների սահմանումը կարող է հանգեցնել նրան, որ ձեռնարկությունները խուսափեն խոշորանալուց՝ մնալով առավել մեծ մասշտաբի էֆեկտ ապահովող չափերից շատ ավելի ցածր մակարդակում: Այսինքն, հարկային հատուկ ռեժիմներին ներկայացվող պահանջներից կարևորագույններից մեկն այն է, որ դրա ընձեռած օգուտներն ավելի մեծ լինեն, քան թաքնված վտանգները: Ինչպես ցույց են տալիս միջազգային զարգացումները, ՓՄՁ ոլորտը իրապես շարժիչ ուժ է տնտեսության համար՝ ապահովելով այնպիսի դրական երևույթներ, ինչպիսիք են՝ աշխատուժի ազատ տեղաշարժի հնարավորությունները, մրցակցության մակարդակի բարձրացումը, նոր տեխնոլոգիաների ընկալման և նորարարությունների ներդրման հանդեպ բարձր հակումը, խոշոր բիզնեսին մի շարք ծառայությունների մատուցումը, խոշոր բիզնեսի արտադրանքի սպառումը և այլն:

Կարելի է արձանագրել, որ ժամանակակից պատկերացումներով ՓՄՁ աջակցության այն մեխանիզմները, որոնք հիմնված են բացառապես ձեռնարկատիրության մասշտաբից ելնելով հարկային արտոնությունների տրամադրման վրա, վաղուց արդեն սպառել են իրենց, քանզի պարունակում են մի շարք վտանգներ: Նախ, ձեռնարկության խոշորացման հետևանքով հարկային պարտավորությունները թռիչքային աճ են արձանագրում, ինչը լուրջ արգելք է խոշորացման գնալու որոշում կայացնելու համար: Պակաս խնդրահարույց չէ նաև այն ազդեցությունը, որ կարող է առաջ բերել պետական աջակցության համակարգը ձեռնարկատերերի կողմից ձեռնարկատիրության այս կամ այն տեսակով զբաղվելու որոշման կայացման վրա: Տնտեսապես չհիմնավորված քաղաքականության արդյունքում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ ձեռնարկատերերը խուսափեն զբաղվելուց ազգային տնտեսական անվտանգության առումով կարևոր գործունեության տեսակներով, օրինակ՝ արտադրությամբ, և զբաղվեն առավել հեշտ եկամուտներ ապահովող, հարկային հարաբերությունների տեսակետից պարզ, սակայն նույն ազգային տնտեսական անվտանգության առումով պակաս կարևոր և նույնիսկ վտանգավոր գործունեության տեսակներով, ինչպիսիք են՝ մանրածախ առևտուրն ու ներմուծումը:

ՓՄՁ ոլորտի հանդեպ հարկային հատուկ ռեժիմների կիրառման կողմնակիցների պնդումները, այնուամենայնիվ, ավելի համոզիչ են հնչում: ՓՄՁ ոլորտում հատուկ հարկային ռեժիմների առկայությունն անհրաժեշտ է այն առումով, որ ՓՄՁ ծախսերը, որպես կանոն, ավելի մեծ են, և նվազ հարկային բեռը որոշակիորեն փոխհատուցում է այդ ծախսերը՝ համեմատաբար հավասար պայմաններ ստեղծելով խոշոր կազմակերպությունների հետ մրցակցելու առումով: Ծախսերի առաջին խումբը վերաբերում է ձեռնարկատիրության ֆինանսավորման ռեսուրսների նվազ կամ ավելի թանկ հասանելիությանը, քանի որ բանկային և վարկային հաստատությունների կողմից նորաստեղծ կամ մանր ձեռնարկությունների գործունեությունը գնահատվում է ավելի ռիսկային: Նման ձեռնարկություններում բացակայում են գրավի առարկաները, աշխատանքի փորձը, մշտական հաճախորդները և հետևաբար փոխառու միջոցներ կամ չեն տրվում, կամ տրվում են միջինից բարձր տոկոսադրույքով: Բացի այդ, խոշոր կազմակերպությունները համապատասխան ենթակառուցվածք ունեցող երկրներում կարող են միջոցներ ներգրավել նաև ֆոնդային բորսաներից, ինչը ցույց է տալիս, որ մանր և խոշոր կազմակերպությունների առումով առկա է հնարավորությունների և տեղեկատվության հստակ արտահայտված անհամաչափություն: Բացի այդ, փոխառու կապիտալի պարագայում դրա սպասարկումը հնարավոր է ներկայացնել որպես ծախս՝ նվազեցնելով հարկման բազան, այն դեպքում, երբ սեփական կապիտալի պարագայում նման բան տեղի չի ունենում: Իսկ սեփական կապիտալի հիման վրա գործում են հիմնականում հենց փոքր և միանձնյա սեփականությամբ ձեռնարկությունները:

ՓՄՁ համար հատուկ հարկային ռեժիմների առկայության օգտին ներկայացվող պատճառաբանությունների շարքում առանձնահատուկ տեղ ունեն և այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են հարկային հաշվառում կատարելու, հարկերը վճարելու գործընթացը կազմակերպելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն գուտ ֆինանսական, այլև ժամանակային, մարդկային և հոգեբանական ծախսերի մասին, որոնց հարաբերական մեծությունը բիզնեսի մասշտաբների աճին զուգահեռ նվազում է¹: Միաժամանակ, պետք է արձանագրել, որ հաշվապահական հաշվառումն ինքնին բոլորովին տարբեր խնդիրներ է լուծում մանր և խոշոր կազմակերպությունների համար: Այսպես, եթե մանր ձեռնարկությունների համար հաշվապահական հաշվառում վարելու գերխնդիրը հարկային պարտավորությունների մեծության որոշումն է, ապա խոշորներում ձեռնարկության կառավարչական խնդիրների լուծումն է, որտեղ հարկային պարտավորությունների մեծության որոշումը, ըստ էության, ամանցյալ և ինքնաբերաբար իրականացվող գործառույթ է: Այսինքն, եթե հաշվապահական հաշվառման իրականացման ծախսերը մանր ընկերությունների համար վստահորեն կարելի է «ներառել» հարկային բեռի մեծության մեջ, խոշորների դեպքում նման «բեռ» ընդհանրապես գոյություն չունի: Այս առումով մանր ձեռնարկատիրությունը հայտնվում է ոչ շահեկան վիճակում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարկային կարգապահության ծախսերը փոքրերի մոտ կազմում են շրջանառության գրեթե 2.6 տոկոսը, իսկ խոշոր հարկատուների մոտ՝ շրջանառության 0.02 տոկոսը²:

Ձեռնարկատիրության հարաբերական ծախսերի մեծության վրա իրենց ազդեցությունն են թողնում նաև պետական ինստիտուտների գործունեության առանձնահատկությունները, որոնք կարող են ինչպես ավելացնել ծախսերը, այնպես էլ նվազեցնել դրանք: Օրինակ՝ պետական միջոցներով ստեղծված ենթակառուցվածքներն ավելի շատ օգուտ կարող են բերել խոշոր, քան մանր կազմակերպություններին: Պետք չէ մոռանալ մեր իրականության մաս կազմող կոռուպցիոն ռիսկերի արմատացած համակարգի առկայության մասին. պետական չինովիկի պահանջած կաշառքը կարող է աննշան լինել խոշոր ձեռնարկության, սակայն անհամաչափ ավելի մեծ՝ մանրի համար: Նույնը վերաբերում է տեղեկատվության հավաքագրման, փոփոխված կանոնակարգերի յուրացման և մեկանգամյա ծախսումներ պահանջող այլ երևույթների ներդրմանը, քանի որ շրջանառության մասնաբաժնի առումով դրանք մանր բիզնեսի համար ավելի մեծ ծավալ են կազմում:

Սակայն պետք չէ կարծել, որ պետական ինստիտուտների գործունեությունը միշտ ի վնաս մանր ձեռնարկատիրության է տեղի ունենում: Օրինակ՝ հաշվապահական հաշվառման փոփոխությունները խոշոր կազմակերպություններում, որտեղ ներդրված են ավտոմատացված կառավարչական համակարգեր, կարող են պահանջել հսկայածավալ ծախսեր՝ կապված նոր ծրագրային ապահովման մշակման, առկա տեղեկատվական շտեմարանների վերափոխման, անձնակազմի ուսուցման և այլ միջոցառումների հետ, այն դեպքում, երբ նման փոփոխությունը մանր ձեռնարկությունում կարող է հանգեցնել պարզապես նոր ձևաթղթերի գնմանը և հաշվապահի վերապատրաստմանը: Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս փորձը, գործնականում խոշոր ձեռնարկատիրությունն ավելի քիչ ռեսուրսներ է ծախսում այս խնդիրները լուծելու համար:

Նմանատիպ հիմնավորումներ կարելի է ներկայացնել սեփականության պաշտպանության կազմակերպման առումով, հատկապես այն երկրներում, որտեղ հանցավորության մակարդակը բարձր է, իսկ սեփականության համապետական պաշտպանության ինստիտուտները՝ թույլ: Կարելի է հիմնավորել, որ գույքի, հետևաբար նաև ձեռնարկատիրության խոշորացմանը զուգահեռ հարաբերականորեն նվազում են դրա պահպանությանն ու պաշտպանությանն ուղղվող ծախսերը՝ ցանկապատեր, պարեկային ծառայություն և այլն, ինչպես նաև հնարավորություն է ստեղծվում ներդնել պահպանության ավտոմատացված համակարգեր: Իհարկե, գույքի և հարստության կուտակմանը զուգահեռ ավելանում է ինչպես անօրինական տիրանալու հակում ունեցողների թիվը, այնպես էլ աշխատակիցների կողմից յուրացումների հավանականությունը, սակայն, մյուս կողմից, խոշոր յուրացման և գողության

¹ Taxation and Small Business, OECD. 1994.

² Համաձայն Եվրահանձնաժողովի 2007թ. հարցման արդյունքների:

դեպքերում հավանականությունը, որ իրավապահ մարմինները կբացահայտեն կատարված հանցագործությունը, նույնպես ավելանում է: Էլ չենք խոսում կազմակերպված հանցավորության տարբեր դրսևորումների դեմ պայքարի մասին. մանր ձեռներեցությունն ավելի հակված է նման խմբավորումների կողմից «պաշտպանության» կամ «տանհիք» տրամադրելու անվան տակ դրամական միջոցներ շորթվելու ռիսկին:

Նույնը վերաբերում է նաև տնտեսական, քաղաքական, էկոլոգիական, արժույթային և այլ ռիսկերից ձեռնարկատիրության ապահովագրության հնարավորություններին: Խոշոր ձեռնարկատիրությունը գործունեության դիվերսիֆիկացման, ռիսկերից ապահովագրվելու տարբեր սխեմաների միջոցով դրանցից պաշտպանվելու ավելի մեծ հնարավորություններ ունի, քան մանր ձեռնարկատիրությունը: Իհարկե, կարելի է ընդդիմանալ նման պնդմանը՝ մեջբերելով 2007թ. վերջից սկիզբ առած ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով տուժած խոշոր և գերխոշոր կազմակերպությունների ֆինանսական և տնտեսական դժվարությունները, սակայն անհրաժեշտ է հիշել նաև, որ պետական աջակցությունն առաջին հերթին ուղղված էր հենց նման խոշորներին, որպեսզի ոչ մի դեպքում թույլ չտրվեր դրանց սնանկացումը: Մանր ձեռնարկությունները նման արտոնություններից զրկված են:

Նոր շուկա մուտք գործող մանր կազմակերպությունների ծախսերի ավելացման մյուս խումբը կապված է կազմակերպության ստեղծման և գործարկման համար անհրաժեշտ բավականին շոշափելի ներկայացուցչական, ապրանքանիշի ստեղծման և առաջխաղացման ծախսերի առկայության հետ: Ներկայումս, երբ մանրածախ առևտրի մի զգալի մասն իրականացվում է առևտրային ցանցերի միջոցով, նորաստեղծ կազմակերպությունները լուրջ դժվարությունների են հանդիպում սեփական ապրանքանիշը դրանցում ներկայացնելու ընթացքում: Ոլորտը կարգավորող օրենսդրության առանձնահատկություններով պայմանավորված՝ մանր և նորաստեղծ կազմակերպությունները ստիպված լուրջ գնային զիջումների են գնում, այլապես կհայտնվեն խաղից դուրս իրավիճակում: Նմանապես և արտաքին առևտրի պարագայում. սահմանափակ փոխադրումների հնարավորության պայմաններում արտահանման նվազագույն խմբաքանակը (օր՝ 1 կոնտեյներ) կարող է անհասանելի լինել ինչպես արտադրական հզորությունների, այնպես էլ արտասահմանում գնորդ գտնելու առումով:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կատարյալ մրցակցային պայմաններում տնտեսության այս կամ այն ճյուղում կազմակերպության չափը որոշվում է բացառապես տեխնոլոգիական առանձնահատկություններով, այսինքն՝ կազմակերպությունների չափերը համընկնում են առավելագույն մասշտաբի էֆեկտ ապահովող չափերի հետ: Հակառակ պարագայում այն կազմակերպությունները, որոնք չեն ենթարկվում այս կանոնին, ինքնաբերաբար դուրս են մնում մրցակցային պայքարի արդյունքում: Նման կացութաձևի պայմաններում պետության կողմից ձեռնարկությունների այս կամ այն չափին որոշակի արտոնության և աջակցության տրամադրումն անխուսափելիորեն հանգեցնում է արդյունավետության անկման և ռեսուրսների անհամաչափ բաշխման, ինչի արդյունքում նվազում են զատ արդյունքը և հասարակության բարեկեցությունը: Մակայն իրական կյանքում, երբ առկա է շուկայի անկատարություն և պետական ծախսերի բարձր մակարդակ, շուկան ինքնաբերաբար չի գնում Պարետո հավասարակշռության, իսկ պետության գրագետ միջամտությունը հանգեցնում է ռեսուրսների ավելի ռացիոնալ տեղաբաշխման: Բացի այդ, ՓՄՁ խթանումն ինքը հանգեցնում է մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների ինքնաբերաբար լուծման, ինչը, հակառակ պարագայում, պետք է իրականացվեր պետության կողմից՝ լրացուցիչ, ավելի ծանր հարկային բեռի պայմաններում: Նման իրավիճակը լավագույնս կարող է լուծվել պետական տնտեսական քաղաքականության մաս կազմող հարկային քաղաքականությամբ, եթե, իհարկե, հնարավոր լինի ապահովել վերը նշված վտանգների և խնդիրների արդյունավետ լուծումը: Նման տրամաբանությամբ ՓՄՁ հանդեպ պետական հարկային քաղաքականության հիմքում պետք է դրվի այն ձախողումների շտկումը, որոնք առաջանում են անկատար շուկայական տնտեսության գործունեության հետևանքով: Եթե այդ աջակցությունն ավելի լինի, քան ՓՄՁ գործառնական ծախսերի հարաբերական ավելցուկը խոշոր ձեռնարկատիրության նկատմամբ, ապա նման քաղաքականությունը կրերի ռեսուրսների անհավասարաչափ տեղաբաշխման, իսկ խոշոր ընկերություններն ամեն կերպ ուղիներ կփնտրեն օգտվելու արտոնյալ հարկային ռեժիմներից:

ՓՄՁ ոլորտի աջակցությունը, այլ պատճառներից բացի, համեմված է նաև քաղաքական ենթատեքստով: Չկա և մեկ նախընտրական քաղաքական ծրագիր, որտեղ արտահայտված չլինի ՓՄՁ ոլորտի աջակցության դրույթներով, և այս առումով ՓՄՁ ոլորտի աջակցությունը նաև քաղաքական պահանջ է: Չեռնարկատիրության այս ոլորտին ուղղված աջակցությունը չպետք է սահմանափակել հարկային արտոնություններով և հարկային հատուկ ռեժիմներով. պակաս կարևորություն չունեն տեղեկատվական, իրավաբանական, հաշվապահական, գործառնական և այլ աջակցության տեսակները, որոնց համընդհանուր արդյունքը՝ ուղղված շուկայի անկատարության հետևանքով առաջացած հարաբերական ծանր գործառնական ծախսերի նվազեցմանը, կարող է և գերազանցել հարկային համակարգի միջոցով տրամադրված աջակցությանը: Պակաս կարևոր չէ նաև մակրոտնտեսական և համապետական ինստիտուտների արդյունավետ գործունեությունը: Դատաիրավական համակարգի, բանկային ոլորտի, տարբեր հիմնադրամների կայացածությունն այն երաշխիքներն են, որ գործարար ջիդ ունեցող անհատներին քաջալերում են զբաղվել ձեռնարկատիրությամբ՝ օգուտ բերելով ամբողջ հասարակությանը: Այլապես մանր ձեռնարկատիրությունը Հայաստանում կշարունակի ասոցացվել մանրածախ առևտրի իրականացման տարբեր մեծության խանութների և կրպակների գործունեության հետ:

ՎԱՅԱԳԸ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

*ՆԿԱՆ Մ. Քոթանյանի անվան
վնդրեսագիրության ինստիտուտի հայցորդ*

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հարկերին հակազդելը, հարկատուների՝ հարկեր չվճարելու կամ դրանց փոքր մասը վճարելու ձգտումը միշտ էլ եղել է և կլինի այնքան ժամանակ, քանի դեռ հարկերը կազմում են բյուջետային եկամուտների հիմնական մասը: Այն օբյեկտիվ երևույթ է և կախված չէ պետական կարգից, կառավարման ձևից, հարկային օրենքների որակից և հասարակության բարոյականությունից, այլ պայմանավորված է հարկերի ֆիսկալ գործառնությամբ: Այս առումով հարկերից խուսափելու ձգտումը պետության ցանկացած ֆիսկալ միջոցառման հակազդեցության դրսևորումներից մեկն է: Այդ հակազդեցությունն իրական է՝ պայմանավորված այս կամ այն սեփականատիրոջ կողմից ցանկացած ռոնձգությունից այս կամ այն ձևով իր ունեցվածքը, կապիտալն ու եկամուտները պահպանելու ձգտմամբ: Քանի դեռ գոյություն ունեն պետությունը, մասնավոր սեփականությունը, պետությունից կախահանջվի այդ սեփականության հաշվին հարկերի ձևով ֆինանսավորում, իսկ հարկատուները դրան կհակազդեն իրենց հարկային բեռը թեթևացնելու փորձերով, ինչը պայմանավորված է հարկային արտոնությունների և հարկման տարբեր դրույթների առկայությամբ, օրենսդրական դրույթների ձևակերպման անճշտությամբ և աղավաղվածությամբ:

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն հարկային բեռի սահմանման տարբեր մոտեցումներ: Հարկային բեռը քանակապես կարելի է ներկայացնել որպես որոշակի ժամանակաշրջանում գանձված հարկային գումարների ու այդ նույն ժամանակաշրջանում հարկատուի եկամուտների հարաբերակցություն: Ա.Վ Բրիզգալինան հարկային բեռը սահմանում է հետևյալ կերպ. «Մակրո մակարդակում հարկային բեռը ընդհանրացնող ցուցանիշ է, որը բնութագրում է հարկերի դեբտ հասարակության կյանքում...»: Պ.Սամուելսոնը գտնում էր, որ. «Պետք է ուսումնասիրենք հարկային բեռը, այսինքն հետազոտենք, թե վերջին հաշվով ում վրա է այն ընկնում, ինչպիսի ազդեցություն է թողնում այն ապրանքների ու արտադրության գործոնների գների վրա, ռեսուրսների ու ջանքերի բաշխման վրա, արտադրության կառուցվածքի ու սպառման վրա»²:

¹ Налоги и налоговое право / Под ред. А. В. Брызгалина. – М.: Центр «Налоги и финансовое право»: Аналитика-Пресс, 1997, с. 54.

² Самуэльсон П., Экономикс. – М.: Экономика, 1992., с. 176-177.

Հարկային բեռի վերաբերյալ առկա մոտեցումների հստակեցման համար կարևոր նշանակություն ունի դրա տարբերակումն ըստ մակարդակների: Ըստ այդմ՝ տարբերակում ենք՝

- հարկային բեռ մակրոմակարդակում,
- հարկային բեռ միկրոմակարդակում:

Մակրոմակարդակում հարկային բեռը որոշվում է որպես գանձված հարկերի ընդհանուր գումարի և ՀՆԱ-ի հարաբերակցություն և ցույց է տալիս, թե համախառն արդյունքի որ մասն է վերաբաշխվում բյուջետային մեխանիզմների արդյունքում¹:

Միկրոմակարդակում կամ առանձին հարկատուի դեպքում հարկային բեռը ցույց է տալիս այդ անձի համախառն եկամտի այն մասը, որն ուղղվում է հարկեր վճարելուն: Այն որոշվում է գանձված հարկերի ընդհանուր գումարի և իրացման ծավալի հարաբերությամբ²:

Ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ տնտեսվարող սուբյեկտների մակարդակում հարկային բեռի հաշվարկման ժամանակ կան վիճելի հարցեր, որոնց վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ ունի այն հարցը, թե արդյո՞ք տնտեսվարող սուբյեկտի հարկային բեռի հաշվարկման ժամանակ պետք է ներառել ֆիզիկական անձանց ստացած եկամտից պահված եկամտահարկը^{3,4}, արդյո՞ք պետք է հաշվարկում ներառել անուղղակի հարկերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն ընկնում է վերջնական սպառողի վրա⁵, արդյո՞ք անհրաժեշտ է ներառել սոցիալական ապահովության վճարները, արտաբյուջետային ֆոնդերի վճարները և այլն:

Երբ որոշված է, թե հարկային բեռի հաշվարկման ժամանակ որ հարկատեսակներն ու ինչ չափով են ներառվում վճարված հարկերի ծավալում, մյուս խնդիրն արդեն վերաբերում է այն հարցին, թե ֆինանսատնտեսական որ ցուցանիշի հետ պետք է համեմատել այն՝ շահույթի⁶, հասույթի⁶, թե՞ հավելյալ կամ նոր ստեղծված արժեքի հետ:

Հարկ է նաև նշել հարկային բեռի որոշման մասին Ն.Գ.Վերստինայի մոտեցումը, ըստ որի այն որոշվում է բիզնեսի շուկայական արժեքի հետ հարաբերակցության մեջ⁶: Սակայն նման մոտեցումը զուտ տեսական հետաքրքրություն է ներկայացնում և իր հիմքում լուրջ տնտեսագիտական հիմնավորում չունի:

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն հարկային բեռի հաշվարկման տարբեր մաթեմատիկական մոդելներ, որոնք հնարավոր է խմբավորել 2 հիմնական խմբերում՝ գումարային և մուլտիպլիկատորային: Գումարային մեթոդներից արժանահիշատակ է հարկային բեռի որոշման համընդհանուր մեթոդը, ըստ որի հարկային բեռը կազմակերպության կողմից վճարվող բոլոր հարկատեսակների հարաբերությունն է հասույթին՝ ներառյալ նաև այլ իրացումներից հասույթը, որի հաշվարկը կարելի է ներկայացնել ստորև բերված բանաձևով⁷.

$$\text{ՀԲ} = \text{ՎՀ} / \text{ԱԻՀ} + \text{ՈԻԵ} \times 100\% ,$$

որտեղ՝

ՀԲ-ն՝ ձեռնարկության հարկային բեռն է,

ՎՀ-ն՝ բոլոր փաստացի վճարվող հարկերի ընդհանուր գումարը,

ԱԻՀ-ն՝ արտադրության (աշխատանքներ, ծառայություններ) իրացումից հասույթը,

ՈԻԵ -ն՝ ոչ իրացվելի եկամուտները:

Սակայն պետք է փաստել, որ վերոնշյալ մեթոդով հաշվարկված հարկային բեռը բնութագրում է միայն արտադրված արտադրանքի կամ մատուցված ծառայության հարկատարությունը և իրական պատկերացում չի տալիս հարկատուի իրական հարկային բեռի մասին: Ուստի անհրաժեշտ է հարկային բեռի որոշման ժամանակ հաշվարկին մասնակից դարձնել

¹ Пансков В. Г., Налоги и налогообложение в Российской Федерации. – М.: «Книжный мир», 2000, с. 61.

² Миляков Н. В., Налоги и налогообложение. Курс лекций. – М.: ИНФРА-М, 2000, с. 5.

³ Пансков В. Г., Налоги и налогообложение в Российской Федерации. – М.: «Книжный мир», 2000, с. 61.

⁴ Глухое В. В., Дольдэ И. В., Теория и практика. – СПб.: Специальная литература, 1997., с. 78-79.

⁵ Оспанов М. Т., Налоговая реформа и гармонизация налоговых отношений. – СПб.: Изд-во СПбГУЭФ, 1997, с. 184.

⁶ Верстина Н. Г., Налоговое планирование как элемент финансовой политики реструктурируемого предприятия / / Финансы. – 2002. – № 4, с. 26.

⁷ Лукаш Ш. А., “Оптимизация налогов. Методы и схемы”: полн. практ. руководство. М., : Грос с Медия: РОСБУХ, 2008, с. 23.

նաև արտաբյուջետային ֆոնդեր վճարվող հարկերի և այլ վճարների, ինչպես նաև հաշվարկված, բայց չվճարված հարկերի գումարները: Դեռ ավելին, հարկային բեռի որոշման ժամանակ անհրաժեշտ է հաշվարկին մասնակից դարձնել նաև ձեռնարկության աշխատակիցների կողմից վճարվող եկամտահարկի և աշխատակիցների սոցվճարների գումարները, քանի որ դրանք ներառված են աշխատավարձերի գումարներում և, վերջին հաշվով, անուղղակիորեն վճարվում են գործատուների կողմից աշխատակիցներին վճարվող և գործատուի համար «ծախս», իսկ աշխատակցի համար՝ «եկամուտ» համարվող միջոցների հաշվին: Նույն տրամաբանությամբ, հարկային բեռի բաղադրիչ պետք է դիտարկել նաև գործատուի (ձեռնարկության կողմից) տրվող սոցվճարների գումարները, որոնք գործատուի համար ծախս են և բացասաբար են ազդում նրա ֆինանսական վիճակի վրա:

Վերոնշյալ մոտեցումներով հաշվարկվող հարկային բացարձակ կամ իրական բեռը գործատու համարվող ձեռնարկությունների կամ հարկ վճարող իրավաբանական անձանց համար կարելի է հաշվարկել ստորև բերված բանաձևի օգնությամբ.

$$ԲՀԲ = ՀՎ + ԱԲՖՎ + ՎԹ + ԵԿ + ԳՍ + ԱՍ,$$

որտեղ՝

- ԲՀԲ-ն՝ հարկային բացարձակ կամ իրական բեռն է,
- ՀՎ-ն՝ ձեռնարկության կողմից փաստացի վճարված հարկային գումարները,
- ԱԲՖՎ-ն՝ արտաբյուջետային ֆոնդերում վճարումները,
- ՎԹ-ն՝ վճարումներում թերացումները կամ հաշվարկված, բայց չվճարված հարկերի գումարները,
- ԵԿ-ն՝ ձեռնարկության աշխատակիցների եկամտահարկի գումարները,
- ԳՍ-ն՝ գործատուի սոցվճարների գումարները,
- ԱՍ-ն՝ աշխատակցի սոցվճարների գումարները:

Քանի որ հարկային բացարձակ կամ իրական բեռն արտացոլում է տնտեսվարող սուբյեկտի գործունեությունից հարկային ողջ պարտականությունների գումարը և պատկերացում չի տալիս հարկային բեռի ծանրության մասին, ապա հարկային բեռի մակարդակի որոշման համար անհրաժեշտ է կիրառել հարկային բեռի հարաբերական ցուցանիշը, որն անհրաժեշտ է հաշվարկել որպես հարկային բացարձակ կամ իրական բեռի հարաբերություն նոր ստեղծված արժեքին:

Նոր ստեղծված արժեքը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$ՆՍԱ = Հ - ՆԾ - Ա + ՈԻԵ - ՈԻԾ$$

կամ

$$ՆՍԱ = ԱՎ + ՀՎ - ԱԲՖՎ + Ը,$$

որտեղ՝

- ՆՍԱ-ն՝ նոր ստեղծված արժեքն է,
- Հ-ն՝ արտադրանքի, աշխատանքների կամ ծառայությունների իրացումից հասույթը (ներառյալ ԱԱՀ-ն),
- ՆԾ-ն՝ նյութական ծախսերը,
- Ա-ն՝ ամորտիզացիան,
- ՈԻԵ-ն՝ ոչ իրացվելի եկամուտները,
- ՈԻԾ-ն՝ ոչ իրացվելի ծախսերը (առանց հարկային վճարների),
- ԱՎ-ն՝ աշխատանքի վարձատրությունը,
- ՀՎ-ն՝ հարկային վճարները,
- ԱԲՖՎ-ն՝ արտաբյուջետային ֆոնդերում վճարումները,
- Ը-ն՝ ձեռնարկության շահույթը¹:

Հետևաբար, հարկային բեռի մակարդակը՝ որպես հարաբերական ցուցանիշ, կարելի է հաշվարկել ստորև բերված բանաձևի օգնությամբ.

$$ՀՀԲ = ԲՀԲ / ՆՍԱ \times 100\%$$

¹ Кирова Е. А., Методология определения налоговой нагрузки на хозяйствующие субъекты // Финансы. – 1998. – №, с. 32.

Հարկային բեռի հաշվարկման մուլտիպլիկատորային մոդելները նույնպես բավականին հետաքրքիր են: Մուլտիպլիկատորային եղանակի առավելությունն այն է, որ թույլ է տալիս գնահատել հարկադրույքների, ձեռնարկությունում կատարվող կառուցվածքային փոփոխությունների ազդեցությունը հարկային բեռի մեծության վրա, ինչպես նաև համեմատել տարբեր ձեռնարկություններ:

Մեթոդաբանության հիմքում ընկած է այն մոտեցումը, որ կախված ձեռնարկության կապիտալատարությունից և աշխատատարությունից՝ տարբեր հարկատեսակներ տարբեր կերպ են անդրադառնում ձեռնարկության կողմից վճարված հարկերի ընդհանուր մեծության վրա: Այսպես, եթե կազմակերպության արտադրությունն աշխատատար է, ապա եկամտահարկի, սոցիալական ապահովության վճարների դրույքաչափերի ավելացումը ավելի մեծ ազդեցություն կունենա հարկային ընդհանուր բեռի մեծության վրա, քան գույքային հարկադրույքների մեծության փոփոխությունը: Նույնը կարելի է ասել նաև կապիտալատար կազմակերպությունների առումով: Որոշ հարկատեսակների փոփոխությունն ընդհանրապես կարող է ազդեցություն չունենալ ձեռնարկության հարկային բեռի վրա: Օրինակ՝ սիգարետի սկզբից հարկի ավելացումը որևէ ազդեցություն չի ունենում համակարգչային տեխնիկայի արտադրության կամ վաճառքով զբաղվող կազմակերպության վրա:

Հարկային ծանրության հաշվարկման բավականին հետաքրքիր տարբերակ են առաջարկում Ա.Կադուշինը և Ն.Միխայլովը¹: Նրանց մոտեցման համաձայն՝ հարկային բեռը պետք է որոշել ավելացված (հավելյալ) արժեքի հետ հարաբերակցության մեջ, ինչը կազմակերպության եկամուտների և հետևաբար նաև հարկերի վճարման աղբյուրն է:

Մեթոդը ներկայացնենք պարզագույն օրինակով՝ ենթադրելով, որ կազմակերպությունը վճարում է ավելացված արժեքի հարկ, եկամտահարկ՝ որպես հարկային գործակալ և շահութահարկ: Համախառն հասույթը ներառում է նյութական ծախսերը և ավելացված արժեքը (ԱԱ), որը, իր հերթին, ներառում է ամորտիզացիոն մասհանումները (ԱՄ), աշխատավարձի ծախսերը (ԱՇԽ), ԱԱՀ-ն և շահույթը (Շ):

Քանի որ տարբեր կազմակերպություններում վերոհիշյալ բաղադրիչներն իրարից տարբեր են, հեղինակները սահմանում են նաև հետևյալ կառուցվածքային գործակիցները՝

$Q_{\text{աա}} -$ ավելացված արժեքի մասնաբաժինը համախառն հասույթում՝

$$Q_{\text{աա}} = \text{ԱԱ} / \text{Հասույթ}:$$

$Q_{\text{աշխ}} -$ աշխատավարձերի ծախսերի մասնաբաժինը ավելացված արժեքում (արտադրության աշխատատարությունը հաշվի առնող գործակից)

$$Q_{\text{աշխ}} = \text{ԱՇԽ} / \text{ԱԱ}:$$

$Q_{\text{ամ}} -$ ամորտիզացիոն մասնահանումների մասնաբաժինը ավելացված արժեքում (արտադրության կապիտալատարությունը հաշվի առնող գործակից)

$$Q_{\text{ամ}} = \text{ԱՄ} / \text{ԱԱ}:$$

Կատարելով հետևյալ նշանակումները՝

$Q_{\text{ԱԱՀ}} -$ Ավելացված արժեքի դրույքաչափ

$Q_{\text{Եկ}} -$ Եկամտահարկի դրույքաչափ

$Q_{\text{Շ}} -$ Շահութահարկի դրույքաչափ

Կարելի է հաշվարկել կազմակերպության հարկային բեռը:

- ԱԱՀ մասով՝ $Q_{\text{ԱԱՀ}} \times Q_{\text{աա}} \times \text{ԱԱ}$
- Եկամտահարկի մասով՝ $Q_{\text{Եկ}} \times Q_{\text{աշխ}} \times \text{ԱԱ}$
- Շահութահարկի մասով՝ $Q_{\text{Շ}} \times (1 - Q_{\text{ԱԱՀ}} - Q_{\text{աշխ}} - Q_{\text{ամ}}) \times \text{ԱԱ}$

Հարկային բացարձակ բեռը կկազմի՝

$$\text{ՀԲ}_p = Q_{\text{ԱԱՀ}} \times Q_{\text{աա}} \times \text{ԱԱ} + Q_{\text{Եկ}} \times Q_{\text{աշխ}} \times \text{ԱԱ} + Q_{\text{Շ}} \times (1 - Q_{\text{ԱԱՀ}} - Q_{\text{աշխ}} - Q_{\text{ամ}}) \times \text{ԱԱ}$$

¹ Трошин А. В., Сравнительный анализ методик определения налоговой нагрузки на предприятия // Финансы – 2000. – №, с. 45.

Իսկ հարաբերականը՝

$$\Delta R_n = \Delta R_p / \Delta U = Q_{\text{ուս}} \times Q_{\text{աա}} + Q_{\text{եկ}} \times Q_{\text{աշխ}} + Q_{\text{Ե}} \times (1 - Q_{\text{ուս}} - Q_{\text{աշխ}} - Q_{\text{ամ}})$$

Վերջին բանաձևը ցույց է տալիս, որ ունենալով ձեռնարկության կապիտալատարության, աշխատատարության և նոր ստեղծված արժեքի մասնաբաժինները (ինչն առանձին ձեռնարկության համար դժվարություն չի ներկայացնում և կարելի է հաշվարկել հաշվապահական փաստաթղթերից)՝ կարելի է անմիջապես գնահատել ձեռնարկության հարկային բեռի ցուցանիշը՝ հիմք ընդունելով օրենսդրությամբ սահմանված դրույքաչափերը: Միաժամանակ, մեթոդը հնարավորություն է տալիս ընտրություն կատարել հարկային տարբեր ռեժիմների միջև՝ իհարկե, այն դեպքում, երբ ձեռնարկությունը նման հնարավորություն ունի: Ավելին, ձեռնարկությունն այս մեթոդի օգնությամբ կարող է գնահատել նաև նորամուծությունների ազդեցությունը հարկային բեռի վրա՝ գնահատելով նորամուծությունների ազդեցությունը արտադրության կապիտալատարության և աշխատատարության վրա:

Ինչ վերաբերում է հարկային բեռի օպտիմալ մեծության որոշմանը, ապա հարկ է նշել, որ այդ հիմնախնդրի շուրջ տարակարծությունները մինչև օրս շարունակվում են: Տնտեսագետների մի մասը որպես հարկային բեռի սահմանաչափի որոշման միջոց առաջարկում է, այսպես կոչված, «կարմիր սահմանագծի կանոնը» (Պ.Մոստովոյ և ուրիշներ)¹, որի համաձայն արդյունաբերական ձեռնարկություններից գանձվող հարկերի գումարը 3-5 տարի պետք է ընդհանուր շրջանառության նկատմամբ սահմանափակել որոշակի տոկոսաչափով: Հիշյալ հեղինակների կարծիքով նշված մոտեցման իրագործումը կնպաստի տնտեսության կայունության ապահովմանը և առաջարկի ու պահանջարկի իրական մակարդակների որոշմանը: Մեր կարծիքով, նշված մոտեցման կիրառումն արդարացված կարող է լինել այն երկրներում, որտեղ տնտեսության մեջ արդյունաբերությունը կունենա գերակշռող մասնաբաժին, ինչպես նաև որոշված կլինի այսպես կոչված «կարմիր սահմանագծի» չափը, որին նշված հեղինակները լուծումներ չեն առաջարկում: Բայց որպես խնդրի լուծման փորձ այն ուշադրության արժանի մոտեցում է: Այս մոտեցմանը նմանվող մոտեցման գործնականում կիրառման չհաջողված փորձ պետք է համարել Հայաստանի Հանրապետությունում հաստատագրված վճարների ու պարզեցված հարկի կիրառումը՝ որպես փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման խրախուսման միջոց, որը, թեպետ, նպաստեց գործարարությանը, բայց նշանակալիորեն խորացրեց հարկման բնագավառում առկա անարդարությունները:

Ուստի, նման և դրան նմանվող մոտեցումների գործնականում կիրառումը նպատակահարմար չէ, քանի որ հարկային բեռի բաշխվածությունը պետք է լինի հավասարաչափ, որի դեպքում յուրաքանչյուրը կվճարի այդ բեռի իր «արդարացի» բաժինը, որպեսզի նվազագույնի հասցվեն հարկման արդարության և համընդհանրության սկզբունքների խախտումները:

¹ Мостовой П., Произойдет ли “бостванизация” России? Эксперт, 1997, с. 44.

ՎԱՆՈՒՄԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԳԱՄ Բոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
ՄԳԱ թղթակից անդամ, Վ. Գ. Գ., պրոֆեսոր

ԱՆՆԱ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԳԱՄ Բոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, հայցորդ

ՀՀ ԱՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՏԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՓՈՐՁԻ ԶԱՄԱՏՔՍՈՒՄ

Արտերկրում ստվերային տնտեսության մասշտաբները գնահատելու համար գոյություն ունեն բազմաթիվ մեթոդներ: Ըստ այդմ, այդ մեթոդները կարելի է ընդհանրական տեսքով ներկայացնել պայմանականորեն դասակարգված 5 խմբերում:

1. ստվերային տնտեսության գնահատման **հատուկ ինդիկատորների** մեթոդ, որը կապված է որևէ մեկ ցուցանիշի օգտագործման հետ և բնորոշում է ստվերային տնտեսության մակարդակը: Այն որոշվում է ըստ՝

- ուղղակի մեթոդի,
- անուղղակի մեթոդի¹:

Ուղղակի մեթոդները, որոնք կոչվում են միկրոմեթոդներ, ենթադրում են այն տեղեկատվության օգտագործումը, որը ստացվում է հատուկ վերլուծության, հարցումների, ստուգումների արդյունքում՝ հարկատուների առանձին խմբերը բացահայտելու, դրանց ծախսերի և եկամուտների տարբերությունները գնահատելու, ինչպես նաև ստվերային տնտեսության առանձին հատվածները բացահայտելու միջոցով:

Անուղղակի մեթոդները հիմնված են հիմնականում մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծության վրա, որոնք հնարավորություն են տալիս ազգային վիճակագրական ծառայության համապատասխան մարմիններին գնահատելու տնտեսական իրական հատվածում ձևավորված եկամուտների մակարդակը, ինչպես նաև դրանց հնարավոր շեղումների մեծությունները: Այլ խոսքով, անուղղակի են կոչվում այն մեթոդները, որոնք ներառում են զբաղվածության ցուցանիշի և մոնետար մեթոդի հնարավոր տարբերությունները կամ դրանց շեղումները:

2. **Տարբերությունների մեթոդ կամ հաշվեկշռային մեթոդ**, որը հիմնված է փոխադարձ դիտարկվող ցուցանիշների գնահատման վրա՝ բացահայտելով ստվերային տնտեսության մասշտաբները տարբեր տեսանկյուններից համադրության եղանակի միջոցով: Այդ ցուցանիշների քանակական գնահատականների անհամապատասխանությունն իրական մակարդակներից թույլ է տալիս հիպոթեզներ անել այն մասին, թե դրանք ինչով են պայմանավորված, և ինչ հնարավոր ուղիներ կարելի է գտնել այդ շեղումներից խուսափելու կամ դրանք շտկելու համար: Բացի դրանից, հաշվեկշռային մեթոդի օգնությամբ հաշվարկվում են թաքնված աշխատավարձի կամ ստվերային եկամուտների մեծությունները, որոնք հանդես են գալիս որպես միջնորդ կազմակերպությունների ծառայությունների մատուցման գին:

3. **Տարբերությունների մեթոդների թվին է դասվում**, այսպես կոչված, **«ապրանքային հոսքերի» մեթոդը**: Այդ մեթոդի կիրառությունը վիճակագրական համադրումների և գնահատականների ժամանակ ընդունված է համարել որպես բարձր վիճակագրական կուլտուրայի գրավական, որը հատկապես լայնամասշտաբ կիրառություն է գտել Եվրամիության շրջանակներում: Նշված մեթոդի էությունն այն է, որ ապրանքային հոսքը, այսինքն՝ արժեքի շարժը, որը ձևավորվում է արտադրության փուլից սպառման փուլի ժամանակ, կառուցվում է ոչ թե մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա, այլ առանձին խմբերում դիտարկվող ապրանքների կամ ապրանքախմբերի հիման վրա: Այլ խոսքով, **«ապրանքային հոսքերի» մեթոդի գործնական կիրառության նպատակը** ոչ թե հատուկ հաշվեկշռային մոդելի կառու-

¹ Чусова А. Е., Особенности теневой экономической активности в сфере потребительского рынка // Материалы XII Всероссийского форума молодых ученых и студентов «Евразийское экономическое пространство: проблемы и тенденции развития» (22-23 апреля 2009 г.). – Екатеринбург: Изд-во УрГЭУ, 2009. – Ч. 4, с. 109-110.

ցումն է, այլ գոյություն ունեցող տեղեկատվական բազայի թույլ կողմերի բացահայտումը: Այսպես, օրինակ, եթե արտադրանքի արտադրության համար անհրաժեշտ տնտեսական ռեսուրսների ծախսերը դրամական արտահայտությամբ ավելի փոքր են, քան այդ արտադրանքի ներմուծման վրա կատարված ծախսերը դրամական արտահայտությամբ կամ վերջնական և միջանկյալ արտադրության վրա կատարված ծախսերը փոքր են գումարած կուտակման արտահանման վրա կատարվող ծախսերից, ապա անհրաժեշտ է որոշել արտադրությանը կամ ներմուծմանը վերաբերող տեղեկատվությունը, որը հնարավորություն կտա բացահայտելու դրանց գնահատման արդյունքում առաջացող հնարավոր շեղումները կամ ստվերային եկամուտների մեծությունները:

4. Անուղղակի մեթոդներից կարելի է առանձնացնել, այսպես կոչված, «**իտալական մեթոդը**», որը հիմնված է զբաղվածության հաշվարկային ցուցանիշների վրա: Այն ստեղծվել և բավականին երկար ժամանակ լայն կիրառություն է գտել Իտալիայի վիճակագրական ինստիտուտի կողմից և համարվում է ստվերային տնտեսության մասշտաբների գնահատման առավել հայտնի մեթոդներից մեկը: Այդ մեթոդի կիրառության ժամանակ հետազոտողները, տնտեսագետները և առհասարակ պետական չինովնիկները գտնում են, որ արտադրության վերաբերյալ հավաստի տվյալների հավաքագրումը բավականին բարդ գործընթաց է, հատկապես ծառայությունների մատուցման ոլորտի ու ՓՄՁ-երի համար: Իսկ դրա պատճառներից մեկը բիզնես գործունեության արդյունքների կանխամտածված թերհայտարարագրումն է՝ հարկային պարտավորություններից խուսափելու համար: Այլ խոսքով, նախնական տվյալները ոչ թե ստացվում են հարցաթերթիկներից, որոնք վերադարձվում են ընկերությունների կողմից, այլ այն տվյալներից, որոնք ստացվել են տնային տնտեսությունների ուսումնասիրությունների արդյունքում: Տնային տնտեսություններն ընտրվում են պատահական ընտրանքի սկզբունքով, և անհատ փորձագետները հարցնում են տնային տնտեսություններին իրենց աշխատած ժամերի մասին այս կամ այն ոլորտում գործունեություն ծավալելիս: Միևնույն ժամանակ հաշվի են առնվում ցանկացած ժամանակային ծախսերը խոշոր և մանր ձեռնարկություններում: Այնուհետև ստացված տեղեկատվությունը մշակվում և տարածվում է գլխավոր ընտրանքի վրա:

5. **Մոնետար մեթոդը** հիմնված է այն դրույթի վրա, որ կանխիկ դրամը հիմնականում օգտագործվում է ստվերային գործարքներ իրականացնելիս: Այսպես, Ռուսաստանում 1994 թ. կատարված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ կանխիկ դրամի աճի տեմպը էականորեն գերազանցում է դրամական զանգվածի աճի տեմպին: Եթե փողի զանգվածը 1993թ. ընթացքում աճել է 5.1 անգամ, ապա կանխիկ դրամի աճի տեմպը դիտարկվող ժամանակաշրջանում աճել է 7.9 անգամ¹: Ավելին, ըստ Ռ-Դ ԿԲ տվյալների, 1994 թ. հունվարի 1-ին երկրի տարածքում շրջանառվել է 13.3 տրլն ռուբլի, իսկ ազգային վիճակագրական ծառայությունը դիտարկվող ժամանակաշրջանում գնահատել է, որ ազգաբնակչության ձեռքում շրջանառվել է 7.8 տրլն կանխիկ ռուբլի: Ուստի, դրամական զանգվածի և կանխիկ ռուբլու բացարձակ տարբերությունը կազմել է 5.5 տրլն ռուբլի²: Իսկ այդ տարբերությունը, կարելի է ասել, որ հենց իրավաբանական անձանց պատկանող շրջանառու միջոցներն են, որոնք դուրս են գտնվում բանկային հաշիվների հաշվառման համակարգից: Ուստի, կանխիկ փողի 2/3-ը փաստորեն գտնվում է պետական մարմինների կառավարումից դուրս³, որը հենց համարվում է ստվերային եկամուտների մեծությունը և կազմում է ստվերային տնտեսության կառուցվածքը: Մեր կողմից ստվերային տնտեսության մասշտաբների գնահատման մեթոդներից աշխարհի գրեթե բոլոր երկրներում գործնականում լայն կիրառություն է ստացել **տեխնոլոգիական գործակիցների մեթոդը**, որը միջոց է՝ որոշելու արտադրության դինամիկ զարգացման գնահատման եղանակը՝ հիմք ընդունելով վերջինիս կողմից օգտագործվող սպառված էլեկտրաէներգիայի մեծությունը, բեռների փոխադրման և այլ անուղղակի ցուցանիշների մեծությունները: **Տեխնոլոգիական գործակիցների մեթոդը**, կարելի է ասել, ստվերային տնտեսության գնահատման պարզագույն մեթոդներից մեկն է, որը նախատեսված է պաշտոնական տվյալները վերլուծության արդյունքների հետ համադրելու համար: Ընդ որում, այդ մեթոդը

¹ Мартынов А. С., Артюхов В. В., Виноградов В. Г., "Спад производство и теневой сектор" 1998 (С). с. 3-5.

² Мартынов А. С., Артюхов В. В., Виноградов В. Г., "Спад производство и теневой сектор" 1998 (С). с. 6.

³ <http://www.sci.aha.ru/ATL/ra37b.htm>

չատ դեպքերում տալիս է բավարար արդյունքներ: Սակայն վերջինիս գործնական կիրառության արդյունքում անհրաժեշտ է հաշվի առնել շուկայական հարաբերություններին բնորոշ ենթակառուցվածքների զարգացման աստիճանը և էլեկտրաէներգիայի, բեռնափոխադրումների օպտիմալ գները: Եթե դրանց գները կարգավորվող են և չեն արտահայտում էներգիայի իրական գները կամ գործում է հնարավորություն երկար ժամանակով չվճարել էլեկտրաէներգիայի սպառման դիմաց սակագների վճարման հետաձգման հնարավորությունը սոցիալական առավելությունների տրամադրման համատեքստում, ապա էլեկտրաէներգիայի սպառման դիմամիկան կարող է էականորեն տարբերվել արտադրության ծավալի ու դրա ուղղությամբ: Նույնը նաև վերաբերում է բեռնափոխադրումների սակագներին:

Ուստի, **տեխնոլոգիական գործակիցների մեթոդը** հատկապես ԱՊՀ երկրների համար անընդունելի է: Այդ առումով, ԱՊՀ երկրներում ստվերային տնտեսության գնահատման համար գործնականում լայն կիրառություն է ստացել անուղղակի ինդիկատորների մեթոդը, որը կարելի է կիրառել այն դեպքում, եթե դիտարկվող ցուցանիշը և դրա վերաբերյալ անուղղակի տեղեկատվության միջև կապը պարզ է որոշել: Չնայած հաշվարկվող ցուցանիշի և անուղղակի ինդիկատորի միջև ֆունկցիոնալ կապ կարող է գոյություն չունենալ: Այդ դեպքում, անհրաժեշտ է բացահայտել մաթեմատիկական մոդելների կառուցման վիճակագրական փոխկապվածությունը:

Բացի հատուկ ինդիկատորների մեթոդից ստվերային տնտեսության մասշտաբի գնահատման համար օգտագործում են ևս երեք մեթոդներ.

1. *Թեթև մոդելավորման մեթոդ*, որը կապված է գործոնների համախմբության առանձնացմամբ, որոնք որոշում են ստվերային տնտեսությունը և ուղղված են վերջինիս մոտավոր ծավալները հաշվարկելու հետ:
2. *Կառուցվածքային մեթոդը*, որը պայմանավորված է տնտեսության տարբեր ոլորտներում ստվերային տնտեսության վերաբերյալ տեղեկատվության օգտագործման հետ:
3. *Խառը մեթոդներ*, որոնք հիմնված են թաքնված փոփոխականների մեթոդների և տարբեր մեթոդների համախմբության մեջ, որ գործնականում կիրառվում են ստվերային գործունեության բացահայտման և դրանց մասշտաբները գնահատելու համար: Թաքնված փոփոխականների մեթոդի էությունն այն է, որ մեթոդի կառուցման ընթացքում հաշվի են առնվում ինչպես մեծ թվով ստվերային տնտեսությունը որոշող գործոնները, այնպես էլ՝ ստվերային տնտեսությանը բնորոշ ինդիկատորներն ու դրանց մեծությունները:

Ստվերային տնտեսության մասշտաբների գնահատումը տարբեր երկրներում իրականացվել է մեր կողմից ներկայացված բոլոր մեթոդների արդյունքում:

Այսպիսով, կատարված վերլուծության արդյունքում, կարող ենք եզրակացնել, որ ստվերային տնտեսության գնահատման ուղղակի մեթոդները տալիս են հավաստի, սակայն որոշ չափով նվազեցված կամ թերհայտարարագրված արդյունքներ, որոնց հիմնական թերությունը տվյալների հավաքագրման բարդությունն ու բնակչության հարցումների ժամանակ տեղեկատվության կանխամտածված խեղաթյուրումներն են: Անուղղակի մեթոդների գործնականում կիրառությունը կարող է դիտարկվել բազմագործոնային հարթության շրջանակներում: Ընդ որում, դրանց մի մասը, հատկապես մոնետար մեթոդը, կարող է գործնականում կիրառություն ունենալ միայն դրամական հարաբերությունների և ֆինանսական միջնորդության աստիճանի կատարյալ զարգացման պայմաններում:

Ընդհանուր առմամբ, անուղղակի մեթոդները տալիս են ստվերային տնտեսության «բարձրացված» գնահատական: Ստվերային տնտեսության հաշվարկման բազմաթիվ մեթոդների առկայությունն աշխարհի գրեթե բոլոր երկրներում ցույց է տալիս, որ վերջինիս ծավալների հաշվարկման որևէ կոնկրետ, ճշգրիտ և բոլորի կողմից ընդունված միասնական մեթոդ մինչ օրս գոյություն չունի, ինչը պարտադրում է աշխարհի գրեթե բոլոր երկրների կառավարություններին հաշվի առնել այդ երկրների առանձնահատկությունները, զարգացման միտումները, վիճակագրական տվյալների տղությունը և ստվերային տնտեսությանը բնորոշ կոնկրետ իրավիճակի գնահատման համար ընտրել որևէ մեթոդ կամ մեթոդների համախմբություն:

ՀՀ տնտեսության համար ստվերային տնտեսության գնահատման մեթոդ կարող է համարվել իտալական մեթոդը: Ավելին, իտալացի և հայ մասնագետների համատեղ աշխատանքի արդյունքում հնարավոր է գալ ընդհանուր համաձայնության այն մասին, որ ստվերային


տնտեսության մասշտաբները կարելի է որոշել և գնահատել ապրանքների և ծառայությունների ծավալները և աշխատողների արտադրողականությունը հաշվարկելու միջոցով՝ ըստ ՀՀ 12 մարզերի:

Ընդ որում, ստվերային տնտեսության մասշտաբների գնահատման ժամանակ խտալական մեթոդի կիրառության արդյունքում առաջ են գալիս թերություններ, որոնք պայմանավորված են մեկ աշխատողի և միավոր արտադրանքի արտադրողականությամբ, աշխատողների միջին ցուցակային թվաքանակով, աշխատաժամանակի մեծություններով: Բացի այդ, գործարարները հարկերից խուսափելու նպատակով ոչ միայն արհեստականորեն նվազեցնում են արտադրության ծավալները թերհայտարարագրման միջոցով, այլ նաև աշխատողների թիվը: Դա բնորոշ է ինչպես փոքր, այնպես էլ խոշոր կազմակերպություններին՝ ներառյալ բանկերը: Օրինակ՝ 1999թ. գրանցված գործազուրկների թիվը ՌԴ-ում իջել էր 600 հազարով, սակայն միևնույն ժամանակ զբաղվածությունն աճել էր 300 հազարով, մնացածը կարծես թե «կորել» են ստվերային հատվածում: Ոչ ֆորմալ գործազրկության ծավալը 1999թ. ՌԴ-ում կազմել է 7.4 մլն մարդ, այսինքն՝ ակտիվ բնակչության 11 տոկոսը¹:

Օրինակ՝ Ռուսաստանում այդ մեթոդի գործնական կիրառության արդյունքում առաջ են գալիս բազմաթիվ բարդ գործընթացներ, որոնք կապված են ՌԴ ազգային վիճակագրական ծառայության հետ, ինչը չի կարող հաղթահարել տեղեկատվության փակվածության խնդիրը և ՌԴ կառավարության կողմից ծրագրի գրոյական ֆինանսավորումը: Բացի այդ, 1995թ. վիճակագրական տվյալների վերլուծության և գնահատման արդյունքում կատարվել է այն եզրակացությունը, համաձայն որի ՀՆԱ-ի ծավալները յուրաքանչյուր տարի նվազել են 9-10 տոկոսով, ստվերային հատվածը հաշվի չառնելու արդյունքում: 1995թ. ստվերային տնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 20 տոկոս, իսկ 1996թ.՝ 23 տոկոս²: Ստվերային տնտեսության ճյուղային կառուցվածքը 1996թ. ներկայացված է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1

1996թ. Ռուսաստանի Դաշնությունում ստվերային տնտեսության ճյուղային կառուցվածքը, %³



Ստացված տվյալներից կարելի է եզրակացնել, որ չգրանցված տնտեսական գործունեության ոլորտը զերիշխում է առևտրում, հատկապես ապրանքային և մթերային շուկաներում, ինչպես նաև՝ փողոցային առևտրում:

Փորձենք ներկայացնել Ռուսաստանում ազգային վիճակագրական ծառայության կողմից կիրառվող մեթոդը, որը հնարավորություն է տալիս պաշտոնապես հայտարարագրել ստվե-

¹ Иванова Н. Н., Масштабы и динамика развития теневой экономики в постсоциалистических государствах Евразии (обзор забугорных исследований) // «Экономическая теория преступлений и наказаний», 2004, №4, с. 12.

² Ласко М., "Масштабы теневой экономики в постсоветских странах в 1989-1995 гг.". М. 2000, с. 26-29.

³ <http://www.runtech.ru/files/Энергоэффективность%20в%20России.pdf>

րային տնտեսության մասշտաբները: Ներկայումս ՌԳ-ում գործնականում լայն կիրառություն է ստացել «Ստվերային տնտեսության գնահատման հիմնական մեթոդների մասին», 31.01.98 թ. ԱՎԾ-ի կողմից ընդունված որոշումը¹, համաձայն որի ստվերային տնտեսության մասշտաբները գնահատվում են սույն փաստաթղթի համաձայն ընդունված կարգով, որից կատարվել են հետևյալ եզրակացությունները.

- Ռուսաստանի ԱՎԾ-ն ուսումնասիրում է միայն ստվերային տնտեսության մի մասը: ԱՎԾ-ն չի հաշվառում և գնահատում անօրինական գործարքների ծավալները, որոնք փաստացի վերաբաշխում են արդեն ստեղծված ազգային հարստությունը: Սակայն ազգային հաշիվների համակարգի հաշվարկման ժամանակակից տարբերակն ամբողջությամբ առաջարկում է ՀՆԱ և այլ մակրոտնտեսական ցուցանիշներ հաշվարկել՝ ներառելով անօրինական գործունեությունը, ինչպիսիք են՝ թմրանյութերի արտադրությունը և առևտրային շղթաներով տարածումը: Միևնույն ժամանակ, մասնագիտական վիճակագիրների և վիճակագրական տեղեկատվությունից օգտվողների շրջանակներում կասկածներ կան կապված առաջարկվող մեթոդի գործնական կիրառության հետ: Անօրինական գործունեության աճը օբյեկտիվորեն բերում է ՀՆԱ-ի ավելացմանը, ինչը կարող է առաջացնել երկրի բարեկեցության աճի կարծիքի և գնահատականի սխալ ձևավորմանը: Այդ տեսակետի հիմնավորումը կարելի է իրականացնել երեք մոտեցմամբ.

1. Անօրինական գործողությունների ընթացքում, որպես կանոն, նոր ծառայություններ կամ ապրանքներ չեն ստեղծվում:
2. Միևնույն ժամանակ, օրենքով արգելված տնտեսական գործունեությունները, ինչպիսիք են՝ թմրանյութերի արտադրությունը և դրանց տարածումը, անօրինական փոխադրումները, մարմնավաճառությունը, տնտեսական իմաստով խիստ շահութաբեր են, ինչն ավելացնում է դրանց արտադրողականության մակարդակը:
3. Սակայն ցանկացած գործունեություն, վերջին հաշվով, պետք է իրավական տեսանկյունից լինի ազատ կամ օրինական և նպաստի տնտեսական բարեկեցության ավելացմանը, այլ ոչ թե բնակչության սովորական զանգվածի արագ հարստացման և տնտեսական ակտիվների անարդյունավետ վերաբաշխման գործընթացներին:

Նմանատիպ գործողությունները տնտեսվարող սուբյեկտների և պետական մարմինների փոխհամաձայնեցման արդյունք չեն, այլ ընդհակառակը, դրանք որոշված են՝ ելնելով ոչ տնտեսական պատճառներից, ինչպես օրինակ՝ հայտնի է, որ թմրամուլները հիվանդ մարդիկ են, որոնք ոչ միանշանակ են ընդունում գոյություն ունեցող իրականությունը:

Նման գործունեությունը մեծ վնաս է հասցնում բնակչության հոգևոր ու ֆիզիկական առողջությանը և, իհարկե, չի հանգեցնում բարեկեցության աճին:

Սակայն դրամաշորթության, գողությունների, այլ անօրինական գործունեությունների ծավալների գնահատումը, իհարկե, մեծ հետաքրքրություն է ներկայացնում կառավարության և պաշտպանական մարմինների համար:

Ուստի, ելնելով մեր կողմից առաջ քաշված հիմնախնդիրների հրատապությունից, նպատակահարմար ենք համարում ձևակերպել մեկ միասնական սահմանում ստվերային տնտեսության հասկացության վերաբերյալ, իրականացնել այդ երևույթին բնորոշ դասակարգիչների դասակարգում՝ համապատասխանաբար պետական մարմինն տալով որոշակի սահմանափակ և դասակարգված իրավասություններ ստվերային տնտեսության մասշտաբները, ըստ տնտեսության հատվածների, միկրո և մակրո հարթություններում քանակապես գնահատելու համար:

Ընդ որում, գտնում ենք, որ ՀՀ տնտեսությունը դեռևս խոցելի է տնտեսության իրական հատվածի ոլորտներում ստվերայնության գնահատման փորձերը, հատկապես սև մետալուրգիայի, շինարարության, արդյունաբերության ոլորտներում մասնավորապես բարտերային գործարքների իրականացման արդյունքում: Բացի այդ, գտնում ենք, որ ազգային վիճակա-

¹ Гусева С. Б., Мамасуев А. В., "Математические методы оценки теневого сектора экономики" // Современные тенденции в обеспечении экономической безопасности и стратегия развития органов противодействия налоговой преступности (опыт ФСНП России 2000 - 2002 гг.). Сборник материалов научно-практической конференции (28 июня 2002 г.): В 2-х томах. - М.: Изд-во Акад. экон. безопасности МВД России, 2004, Т. 2, с. 327-332.

գրական ծառայության կողմից հաշվառված պաշտոնական տվյալների և դրանց շեղումների վերաբերյալ արդյունքները, որոնք կարելի է համարել սովորական տնտեսության մասշտաբը, առանձին ցուցանիշով չի առանձնացվում որևէ հաշվետվության մեջ, իսկ այդ ցուցանիշի համար նույնիսկ չի կատարվում տարածքային տարանջատում:

ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրթսեր գիտաշխատող, հայցորդ

ՕՅՇՈՐՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԻՔ

Բարենպաստ բիզնես միջավայրի ձևավորման գրավականը շահույթի ավելացումն է ծախսերի կրճատման քաղաքականության միջոցով: Ընդ որում, յուրաքանչյուր ընկերության ծախսերը, առաջին հերթին, պայմանավորված են հարկային վճարումներով, և հետևաբար, այդ ծախսերի կրճատման ձգտումը խթանում է հարկային պլանավորման խելամիտ համակարգի ներդրումը և հարկման օպտիմալացումը:

Ոչ միայն խոշոր ընկերությունները, այլ նաև փոքր և միջին ընկերությունները ներառված են միջազգային առևտրում՝ արտահանման և ներմուծման գործարքների իրականացման արդյունքում: Տնտեսվարման ներկա հասարակարգում գնալով մեծանում է տնտեսվարող սուբյեկտների ուշադրությունը միջազգային կորպորատիվ հարկային պլանավորման համակարգի նկատմամբ: Դա պայմանավորված է ժամանակակից բիզնեսի համար աճող ռիսկերով, ինչպիսիք են՝

- հարկային օրենսդրության անկայունությունը,
- տնտեսությունում պարբերաբար կրկնվող ճգնաժամերը,
- բարձր հարկային դրույքաչափերը և ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառվող հարկային բեռի բարձր մակարդակը:

Այդ ընկերությունների տնտեսական արդյունավետության աստիճանը բարձրացնելուն, առաջին հերթին, նպաստում են հարկային բարենպաստ միջավայր ունեցող երկրները: Քանի որ տարբեր երկրների հարկային օրենսդրության առանձնահատկությունները պայմանավորված են ոչ միայն հարկային դրույքաչափերով, այլև վերջիններիս նկատմամբ կիրառվող հարկման մեթոդներով և եղանակներով: Այդ պատճառով, շատ ընկերություններ, օգտագործելով այս կամ այն իրավասությունների առավելությունները, օրենքի սահմաններում նվազեցնում են հարկային բեռը՝ նպաստելով պոտենցիալ շահույթի մեծության ավելացմանը:

Շատ հաճախ տարբեր ընկերություններ բիզնես նպատակների օպտիմալացման համար բախվում են հարկային պլանավորման համար անհրաժեշտ մասնագետներ ներգրավելու խնդրին:

«Eltoma Holdings Limitid» ընկերությունը¹, որի տարիների գործունեության ընթացքում կուտակված փորձն ու շահավետ գործնականում աշխատող սխեմաները փորձում են բացահայտել և լուծել բիզնեսի իրականացման ժամանակակից պահանջները, ինչպիսիք են՝ միջոցների կուտակումը և կապիտալի ներդրումն արտասահմանում:

Այժմ փորձենք բացահայտել և վերլուծել միջազգային հարկային պլանավորման համատեքստում ընկերություններում հարկերի նվազեցմանն ուղղված հիմնական մոտեցումները: Ըստ այդմ, դրանք բաժանվում են երկու խմբի՝

1. հարկեր վճարելուց խուսափում,
2. հարկային պլանավորում:

Առաջին մոտեցումը, որն ընդհանուր հաշվով որպես տնտեսագիտական կատեգորիա գործնականում չի կարող օգտագործվել իր իսկ անօրինական լինելու պատճառով, այնուամենայնիվ, աշխարհի գրեթե բոլոր երկրների տնտեսվարող սուբյեկտների շրջանակներում այն մինչև օրս գործնականում կիրառվում է բազմաթիվ կոռումպացված կազմակերպություն-

¹ <http://www.eltoma-offshore.com/pages/about.html>

ների կողմից: Այլ խոսքով, հարկեր վճարելուց խուսափումը հարկային մարմինների կողմից գնահատվում է որպես մի իրավիճակ, որտեղ հայտարարագրվում են արտահանման գների և ընկերության թողարկման արհեստական նվազեցումները, ծախսերի արհեստական ավելացումը, մինչդեռ այդ ընկերությունները ծավալում են ակտիվ տնտեսական գործունեություն բարձր եկամուտների յուրացման արդյունքում՝ զուգահեռաբար դրանք հայտարարագրելով որպես կորուստներ կամ ոչ ակտիվ գործունեություն ծավալող կազմակերպություն:

Քանի որ հարկերը բյուջեի ավելացման կարևորագույն լծակներից են, ուստի պետությունը ակտիվ և բավականին արդյունավետ ներդրում է դրանց հավաքագրման գործում բոլոր ջանքերը վերոհիշյալ հանցավոր համակարգերի դեմ պայքարում: Խոշոր ընկերությունները, որոնք ձգտում են շուկայում հասնել ճանաչման և ձևավորել հեղինակություն կամ վարկանիշ, չեն գնում նման ռիսկային լծակների կիրառման:

Երկրորդ մտտեցումը միջազգային հարկային պլանավորման համակարգի ձևավորումն է: Վերջինիս էությունը կազմակերպություններում բարդ և բացարձակ օրինական սխեմաների ներդրումն է բիզնես հարթություններում, որոնք թույլ են տալիս նվազեցնել ընկերության հարկային պարտավորությունները՝ ի հաշիվ առանձին երկրների հարկային համակարգերում հարկային արտոնությունների օգտագործման:

Այլ խոսքով, հարկային բարդ սխեմաները թույլ չեն տալիս պետությանը միջամտել ընկերությունների տնտեսական գործունեությանն ու դրանց արդյունքների յուրացման գործընթացին, քանի որ վերջիններիս կառուցումը չի հակասում որևէ երկրի սահմանադրությանը: Ավելին, այն այնքան խելամիտ ու հստակ է կազմակերպված՝ բոլոր իրավական և տնտեսական փոխհարաբերությունների տեսանկյունից, ինչը նպաստում է ընկերությունների, առանց որևէ արգելքի, գործունեության իրականացմանը: Ընդ որում, պետք է հաշվի առնել այն փաստը, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար հարկային սխեմաների գործադրումը անհատական աշխատանք է, որը հաշվի է առնում ընկերության աշխատանքի բոլոր կողմերը, ինչը բոլոր ոլորտներում փոխկապվածության և փոխզիջման համատեղ աշխատանք է:

Քանի որ Հայաստանը շուրջ 34 երկրների հետ կնքել է կրկնակի հարկումից խուսափելու մասին երկկողմանի համաձայնագրեր, ուստի, հաշվի առնելով ՀՀ տարածքում եկամտի ձևավորման գործոնը և օֆշորային բիզնեսի հարկման առանձնահատկությունները, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի հոդված 39, որը վերաբերում էր շահութահարկի դրույքաչափի արտոնություններին, 2009թ.-ից դուրս է եկել կիրարկումից: Ավելին, 2009թ. մինչ օրս հարկային հարաբերությունները կարգավորող օրենքներում շրջանառությունից հանվել է «օֆշոր» և դրան վերաբերող ցանկացած բառակապակցություն, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է օֆշորային բիզնեսի հարկմանը դեռևս թերի կամ ոչ լիարժեք հարկային վերահսկողություն ունենալով:

Օֆշորային բիզնեսի արդյունավետությունը, բացի պետության գրեթե սակավ միջամտությունից, խթանող հարկային քաղաքականության իրականացման մեջ է՝ հարկային արտոնություններ տրամադրելու միջոցով: Այսպես, բազմաթիվ եվրոպական երկրներում գոյություն ունեն մի շարք իրավասություններ, որտեղ շահութահարկի դրույքաչափը կազմում է 15% և նույնիսկ ավելի քիչ: Այսպես օրինակ, Լատվիայում շահութահարկի դրույքաչափը կազմում է 15%, Կիպրոսում՝ 10%, Էստոնիայում՝ 0% (շահութահարկի գրոյակյան դրույքաչափի փոխարեն գոյություն ունեն այլ հարկատեսակներ): Այլ խոսքով, այն ընկերությունները, որոնք գրանցված են այդ իրավասություններում, դասվում են ցածր հարկային բեռ ունեցող ընկերությունների շարքին: Այդ ընկերությունների դիմումները որոշվում են անմիջականորեն առաջադրանքների դիտարկման ժամանակ: Բացի այդ, տվյալ երկրներում տնօրենների և բաժնետերերի գրանցումը բաց է, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է հարկեր վճարել և հաշվետվություններ ներկայացնել: Այդպիսի ընկերությունների հեղինակությունը շատ ավելի բարձր է, քան օֆշորային ընկերությունների հեղինակությունը, իսկ հենց այդ ընկերությունները շահավետ են համարվում խոշոր բիզնեսների կողմից ներդրումային ակտիվների և հոսքերի մեծություններն ավելացնելու համար:

Ուստի, մեր կողմից կառուցված հարկային պլանավորման սխեմաների միջոցով փորձ է կատարվում բացահայտելու տարբեր բիզնեսների տեղաբաշխման հիմնախնդիրները հարկային բեռի կրճատման, հարկային ցածր դրույքաչափերի գործադրման արդյունքում օֆշորները բավականին գրավիչ բիզնեսի տեսակներ են համարվում ցանկացած ընկերության համար:

**ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ.
200 1-20 10ԹԹ. ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ**

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանն իր վրա վերցրեց ԽՍՀՄ երկրների ողջ պարտքային պարտավորությունները, որի արդյունքում նորանկախ Հայաստանի Հանրապետությունը ժառանգեց զրոյական պարտքային պարտավորություններ: Սակայն նման իրավիճակը երկար չտևեց, քանի որ 1992 թվականից իսկ արդեն Հայաստանի Հանրապետությունը ստիպված էր դիմել ֆինանսական կազմակերպությունների օգնությանը, որի արդյունքում հենց նույն թվականից սկսեց ձևավորվել Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքը: Սակայն նորանկախ Հանրապետության նմանատիպ իրավիճակն ուներ իր օբյեկտիվ պատճառները: Հայաստանի Հանրապետության, ինչպես մյուս բոլոր այն տնտեսությունների համար, որտեղ անցում էր պլանայինից շուկայական համակարգի, բավականին դժվար պայմաններ էին ստեղծվել: Այդ ժամանակահատվածում Հայաստանում խոր տնտեսական ճգնաժամ էր: Բացի այդ 1988 թվականին տեղի էր ունեցել ավերիչ երկրաշարժ, որին հաջորդեց Ղարաբաղյան հակամարտությունը, որի հետևանքով Հայաստանը հայտնվեց ծանր կացության մեջ: Բացի այս ամենից Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր տնտեսական, այդ թվում նաև էներգետիկ շրջափակման մեջ, որի պատճառով առաջին տարիների ստացված միջոցների մեծ մասն ուղղված էր էներգետիկ համակարգի պահպանմանն ու զարգացմանը (Ռուսաստանից): Սրան 1993 թվականի նոյեմբերին հաջորդեց ազգային արժույթի ներդրումը, որը նույնպես մեծ ֆինանսական ռեսուրսներ էր պահանջում: Չնայած նրան, որ փաստացի անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունը չունեցավ պարտքային պարտավորություններ, 1992թ. սկսած նորանկախ Հայաստանի Հանրապետությունում սկսեց գոյանալ պետական պարտք հասկացությունը: Դա էլ պատճառ դարձավ, որ ընդամենը հինգ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը հասավ 737.37 մլն դոլարի:

1999 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև 2004 թվականի դեկտեմբերի 31-ը պարտքը աճել էր շուրջ 36%-ով կամ 312.1 մլն դոլարով՝ հասնելով 1.112.9 մլն դոլարի: Երկրի արտաքին պարտավորությունների մակարդակի գնահատման տեսանկյունից պարտքի բացարձակ մեծությունից առավել կարևոր է այդ պարտքը սպասարկելու ունակությունը, որի համար անհրաժեշտ է, որ ՀՆԱ-ի ապրանքների և ծառայությունների արտահանման, բյուջեի եկամուտների աճի տեմպերը որոշակիորեն գերազանցեն երկրի արտաքին պարտքի, դրա սպասարկման աճի տեմպերին, ինչն էլ հիմնականում տեղի է ունեցել 1999-2004թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում:

Ինչ վերաբերում, է 2004-2010 թվականներին, ապա այս ժամանակահատվածում նկատվել է զգալի աճ՝ հասնելով 3,299 մլն-ի: Սակայն պետք է նշել, որ նման աճը պայմանավորված է եղել 2009 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամով, քանի որ միայն այս տարվա ընթացքում պետական պարտքը աճել է շուրջ 88 %-ով՝ հասնելով մինչև 2,977 մլն-ի: Իսկ 2010թ. նախորդ տարվա համեմատ այն ավելացել է շուրջ 11 տոկոսով:

Չնայած այն հանգամանքին, որ արտաքին պետական պարտքը տարեցտարի աճում է, պետք է նշել, որ արտաքին պարտքը գնահատելու համար կարևորվում է ոչ միայն արտաքին պետական պարտքի մեծությունը, այլև մի շարք մակրոտնտեսական ցուցանիշներ, որոնց գնահատման տեսակետից Հայաստանի Հանրապետությունը կարելի է համարել նվազ պարտքային բեռ ունեցող երկիր:

Նշված ժամանակաշրջանը բարենպաստ էր նաև արտոնյալ վարկերի առումով, քանի որ այդ ժամանակահատվածում ոչ արտոնյալ պայմաններով տրամադրված վարկերի մարումները գերազանցել են ստացումներին, ինչպես նաև ստացված նոր վարկերի մեծ մասը տրամադրվել է արտոնյալ պայմաններով, որի արդյունքում արտոնյալ վարկերի տեսակարար կշիռն աճել է: Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի կազմում

արտոնյալ վարկերը 2004 թվականի դրությամբ կազմել են 97%՝ 1997 թվականի 48%-ի համեմատ: Ընդ որում միայն 2003-2004թթ. աճը կազմել է 7.8%: Անկումը նկատվել է 2009 թվականին, որի պատճառը թերևս նույնն է՝ ֆինանսատնտեսական ճգնաժամը:

Աղյուսակ 1

Արտաքին պետական պարտքի արտոնյալ վարկերի տեսակարար կշիռն ըստ տարիների

	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Արտոնյալ վարկերի տեսակարար կշիռ	97	98	98.9	99.2	99.1	67.5	60,8
Առևտրային վարկերի տեսակարար կշիռ	3	2	1.1	0.8	0.9	32.5	39,2

www.mfc.am

Արտաքին պետական պարտքի կազմը կարելի է դիտարկել նաև՝ հիմք ընդունելով ստացված միջոցների ծախսման ուղղությունները, որն իր ձևավորման հենց սկզբից կարելի է բաժանել երկու տասնամյակի՝ 1991-2001 թվականներ և 2001-2010 թվականներ, ապա կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները:

1991-2001 թվականներին արտաքին վարկերը հիմնականում ուղղված են եղել հետևյալ ոլորտները զարգացնելուն¹:

Ծախսման նպատակը	գումար մլն ԱՄՆ դոլար	տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ
1. ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորում	162.46	16.1
2. Կառավարման համակարգի և կառուցվածքային բարեփոխումներ	68.03	6.7
3. Ոռոգման համակարգի վերականգնում	45.22	4.5
4. Մայրուղիների վերականգնում	27.6	2.7
5. Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օժանդակություն	8.1	0.8
6. Սոցիալական ներդրումներ	29.87	3.0
7. Էներգահամակարգի պահպանում	225.67	22.4
8. Հացահատիկի առաքում	45.0	4.5
9. Ձեռնարկությունների զարգացում	15.1	1.5
10. Առողջապահության պահպանում ու զարգացում	9.4	0.9
11. Կրթության համակարգի պահպանություն	14.4	1.4
12. Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցում և Ծառայությունների ստեղծում	28.3	2.6
13. Համայնքային զարգացման ծրագիր	29.0	2.9
14. Անշարժ գույքի գրանցման ծրագիր	7.8	0.8
15. Երկրաշարժից տուժածների օգնության ցուցաբերում		
16. Պատվարների անվտանգության ծրագիր	25.0	2.5
17. Դատախիրավական բարեփոխումներ	11	1.1
18. Տրանսպորտային ծրագիր	39.0	3.9
19. ՌԴ- կողմից ՀՀ հատկացված պետական վարկերի մարման հետաձգում	73.7	7.3
20. Վերականգնողական վարկ	53.9	5.3
21. Եվրամիության պարտավորությունների վերաձևակերպում	24.7	2.4
22. Զվարթնոց կարգո տերմինալի ծրագիր	22.8	2.3
23. 1994-95 թթ. գազի առաքման արդյունքում ձևավորված պարտքի վերաձևակերպում	34.023	3.4
Ընդամենը	1008.073	100

¹ Հարությունյան Վ. Լ., Բյուջետային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2003թ.:

Իսկ 2001-2010 թվականներին Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի ծախսման նպատակայնությունն ունեցել է հետևյալ տեսքը.

Ծախսման նպատակը	գումար մլն ԱՄՆ դոլար	տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ
1. Կառավարման համակարգի և կառուցվածքային բարեփոխումներ	6.8	0.3
2. Ոռոգման համակարգի վերականգնում	53.1	2.7
3. Մայրուղիների վերականգնում	49.2	6.2
4. Արտադրական ենթակառուցվածքների վերականգնում	10	0,5
5. Սոցիալական ներդրումներ	8.8	0.3
6. Էներգահամակարգի պահպանում	65.5	3.2
7. Չեռնարկությունների զարգացում	61.5	3.5
8. Առողջապահության պահպանում ու զարգացում	32.2	1.6
9. Կրթության համակարգի պահպանություն	202	1
10. Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցում և ծառայությունների ստեղծում	64.3	3.2
11. Համայնքային զարգացման ծրագիր	134,632	6,8
12. Հիփոթեքային շուկայի զարգացում	12	0,6
13. Պատվարների անվտանգության ծրագիր	4.7	0.2
14. Դատախիրավական բարեփոխումներ	15.2	0.7
15. Ռ-Գ կողմից ՀՀ հատկացված պետական վարկեր	500	25.6
16. Աղքատության նվազման ծրագիր	157,2	8
17. Զարգացման քաղաքականության իրականացում	40,4	2
18. Սևանա լճի բնապահպանական ծրագիր	43,73	2,2
19. Ճգնաժամի հաղթահարման աջակցման ծրագիր	51,378	2,6
20. Stand-by Arrangement	533,6	27,3
21. Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ	3.5	0.1
Ընդամենը	1951.9	

Եթե փորձենք ամփոփել 2001-2010 թվականների արդյունքները, ապա նշենք, որ այս թվականներին ստորագրվել է ընդհանուր առմամբ 46 վարկային համաձայնագիր, որոնք տրամադրվել են տարբեր պայմաններով, տոկոսադրույքներով և տրամադրվել են տարբեր նպատակների համար:

Ինչպես նախորդ տասնամյակում, այս տասնամյակում ևս գլխավոր վարկատուն շարունակում է մնալ Զարգացման միջազգային ընկերակցությունը: Արտաքին պարտքի ձևավորման սկզբից մինչ այսօր կնքվել է 95 վարկային համաձայնագիր, որից 56-ը պատկանում է ԶՄԸ-ին: Պետք է նշենք, որ այս տասնամյակում ևս ստացված վարկերը տրամադրվել են նույն պայմաններով, ինչ նախորդ տասնամյակում, ընդ որում դրանք կարելի է համարել ամենաարտոնյալ վարկերը, քանի որ դրանց համար սահմանված են՝ սպասարկման վճար՝ 0.75 տոկոս, պարտավորության վճար՝ 0-0.5 տոկոս, տոկոսավճար՝ 0 տոկոս: 2001-2010թթ. ցածր են եղել նաև Գերմանիայի, Ճապոնիայի կողմից տրամադրված վարկերը, որոնց համար տոկոսադրույքները սահմանվել են՝ 0.75 տոկոս, Գերմանիայի դեպքում՝ 5 վարկային համաձայնագիր, իսկ Ճապոնիայի դեպքում՝ 1 վարկային համաձայնագիր: Ասիական զարգացման բանկի կողմից ևս ստացվել են 5 վարկային համաձայնագրեր՝ 1-1.5 տոկոսադրույքով: Այս թվականներին համեմատաբար բարձր են եղել Վերականգնման և զարգացման եվրոպական բանկի տոկոսադրույքները՝ 5.76/EUIBOR+1: Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի տոկոսադրույքները ևս մի փոքր բարձր են եղել՝ կազմելով 3 տոկոս:

Բարձր են եղել նաև ՕՊԵԿի Միջազգային զարգացման հիմնադրամի տոկոսադրույքները, որոնք երեք վարկի համար եղել են համապատասխանաբար 1.75, 3 և 3.2 տոկոս: Ինչ

վերաբերում է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամին, ապա նշեմ, որ այս հիմնադրամից ձեռք բերված վարկերը նույնպես կարելի է համարել բավական արդյունավետ վարկեր, քանի որ դրանց համար սահմանված են տոկոսադրույք՝ 0 տոկոս, պարտավորության վճար՝ 0 տոկոս, սպասարկման վճար՝ 0.75 տոկոս: Բավականին բարձր է եղել նաև ՌԳ կողմից ստացված 500 մլն վարկի համար սահմանված տոկոսադրույքը՝ LIBOR+3 %: Դեռ ավելին, այն ոչ միայն բարձր է եղել, այլ նաև լողացող: Սա թերևս տոկոսադրույքի տեսակետից ամենից անբարենպաստ վարկն է եղել: Սակայն այն ունեցել է իր օբյեկտիվ պատճառները, այն ձեռք է բերվել 2009 թվականին՝ ֆինանսատնտեսական խոր ճգնաժամի պայմաններում, և նպատակ է ունեցել մեղմելու տնտեսական իրավիճակը, և այն ուղղվել է մասնավոր հատվածին՝ մասնավորապես հանքարդյունահանման ոլորտին:

Ինչ վերաբերում է միջոցների նպատակայնությանը, ապա այս տասնամյակում ինչպես և նախորդ տասնամյակում, միջոցների մեծ մասն ուղղվել է էներգետիկայի ոլորտին, սակայն նախորդ տասնամյակի համեմատությամբ այս տասնամյակում փոքր-ինչ նվազել է, ինչը թերևս կարող են վկայել ոլորտի քիչ թե շատ բարեկարգման մասին:

2001-2010 թվականներին ամենամեծ տեսակարար կշիռը կազմում են ՌԳ և ԱՄՆ վարկերը:

2001-2010 թվականներին մեծ են եղել նաև աղքատության նվազմանն ուղղված վարկերը, որոնք կազմել են ընդհանուրի 8 տոկոսը:

Նախորդ տասնամյակի համեմատությամբ աճել է նաև ձեռնարկությունների զարգացմանն ուղղված վարկերի տեսակարար կշիռը, ինչը թերևս ողջունելի փաստ է, քանի որ ձեռնարկությունների զարգացմամբ, ինչպես նաև դրանց ճիշտ կառավարման շնորհիվ այն կարող է բերել տնտեսական ակտիվացման, որը կարող է հանգեցնել նաև արտահանման մեծացման, որն էլ կբերի արտաքին պարտքի նվազման:

Համայնքների զարգացմանն ուղղված վարկերի տեսակարար կշիռը ևս ավելացել է՝ 2.6-ից հասնելով 6.8 տոկոս: Կրթության ոլորտում նկատվել է նվազման միտում:

Աճ նկատվել է նաև առողջապահության ոլորտում, որը թերևս կապված էր «թոչնագրիպ» կոչվող հիվանդության հետ: Ամբողջ աշխարհը սկսեց պայքարել այդ հիվանդության դեմ, և Հայաստանը բացառություն չկազմեց, սակայն եթե հարցը դիտարկենք զուտ արտաքին պարտքի տեսանկյունից, այլ ոչ թե խնդրին գլոբալ մոտեցում ցուցաբերենք, վարկը ոչ այդքան օպտիմալ էր, քանի որ նախ և առաջ Հայաստանում չգրանցվեցին հիվանդության դեպքեր, բացի այդ Բժշկական համաշխարհային ասոցիացիան հսկայական գումարներ էր ներգրավել ախտանիշի հակահարուցիչը ստեղծելու համար, որի մոտ Հայաստանի կողմից ներդրված միջոցներն ու ջանքերը պարզապես կարելի է գնահատել որպես՝ անարդյունավետ աշխատանք թե՛ որպես ֆինանսական միջոցների օգտագործման և թե՛ մարդկային ռեսուրսների օգտագործման տեսակետից: Ուստի վարկը կարելի է ոչ այդքան արդյունավետ վարկ համարել:

Աճի միտում է նկատվել նաև գյուղատնտեսության ոլորտում, որը սակայն արդարացված կարելի է համարել, քանի որ ներկայումս կառավարության վարած քաղաքականության մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում գյուղատնտեսության զարգացման հիմնախնդիրը, քանի որ դրա զարգացումը կարող է հանգեցնել գնաճի նվազմանը, որն էլ իր հետ կբերի տնտեսության ակտիվացմանը:

Ամփոփելով ներկայիս արտաքին պարտքի վիճակը՝ ընդհանուր առմամբ արտաքին պարտքի կառավարումը կարելի է դրական համարել, քանի որ եթե չլիներ 2009 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամը, ներկայիս արտաքին պարտքը նվազ կլիներ մոտ 50%-ով:

Սակայն պետք է նշել նաև, որ ցանկալի կլիներ, որ հետագայում ձեռք բերվեին այնպիսի վարկային համաձայնագրեր՝ ցածր տոկոսադրույքով, և որ ամենակարևորն է, հաստատուն կլինեին, այլ ոչ թե լողացող: Ցանկալի կլիներ նաև, որ վարկերը տրամադրվեին նաև այն ոլորտներին, որոնցից հետագայում կարելի էր շահույթ ստանալ և վճարել պարտքային պարտավորությունները:

**ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆԸ
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ Է**

Արտաքին պետական պարտքի կառավարման խնդիրը ներկայումս բավականին բարդ խնդիր է ոչ միայն Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի պատասխանատուների համար, այլև ողջ աշխարհի համար, քանի որ ճիշտ կառավարման մոտեցումից է կախված տվյալ պարտքային պարտավորության հետագա ընթացքը: Արտաքին պետական պարտքի կառավարման գործընթացը բավականին բարդ և բազմափուլ գործընթաց է: Ըստ էության արտաքին պետական պարտքի կառավարման հիմնական սկզբունքը, ըստ մասնագետների, այն հարցի պատասխանն է, թե կարող է արդյոք պետությունը ներգրավել միջոցներ դեֆիցիտի ծածկման համար, և եթե կարող է նաև հետագայում մարել այդ միջոցներն ու դրանց սպասարկման համար ձևավորված լրացուցիչ վճարներն ու տոկոսադրույքները: Սակայն սա առավել ընդհանրական մոտեցում է, որն անհրաժեշտ է գործնականում, բայց եթե փորձենք արտաքին պետական պարտքի կառավարումը դիտարկել որպես վարկային միջոցների կառավարման գործընթաց, այս դեպքում կունենանք մի բարդ և բազմափուլ գործընթաց, որը տարբեր տնտեսագետներ դասակարգել են՝ ելնելով տարբեր մոտեցումներից, սակայն սույն աշխատության շրջանակներում կփորձենք օգտվել հայրենական տնտեսագետների՝ մասնավորապես Ռ. Չազյանի դասակարգումից, ըստ որի այն դասակարգվում է որպես.

- արտաքին պարտքի ներգրավում,
- խտացված միջոցների օգտագործում,
- արտաքին պարտքի սպասարկում:

Սրանցից թերևս յուրաքանչյուրն առանձին ուսումնասիրության կարիք ունի: Ըստ էության արտաքին պետական պարտքի ներգրավում ասելով նկատի ունենք այն գործընթացը, երբ կառավարության լիազոր մարմինը ստորագրում է համաձայնագիր վարկային միջոցներ ներգրավելու համար, որը կարող է ուղղվել ինչպես անմիջապես բյուջեի դեֆիցիտի ծածկմանը, այնպես էլ կոնկրետ ներդրումներ կատարելուն կամ որևէ ծրագրի իրականացմանը: Ընդ որում պետք է նշել, որ արտաքին պարտքի ներգրավման ճիշտ կազմակերպումից է կախված վարկի ճակատագիրը: Վարկի ներգրավման հենց իսկ պահից են որոշվում այն հիմնական պայմանները, որոնք պետք է պահպանվեն մինչև վարկի մարման վերջին պահը: Դրանցից են տոկոսադրույքը, որը յուրաքանչյուր վարկի համար կարող է լինել տարբեր, ընդ որում ցանկալի է, որ տոկոսադրույքները լինեն հնարավորինս ցածր և հիմնականում հաստատուն: Սպասարկման վճարը ըստ էության նույն տոկոսադրույքն է, որը տվյալ վարկի համար յուրաքանչյուր տարվա կտրվածքով սպասարկման համար սահմանված վճարն է: Պարտավորության վճարը մի փոքր այլ է: Այն վճարվում է ոչ թե փաստացի ստացված գումարի համար, այլ դեռևս չստացված: Ինչպես հայտնի է կառավարությունը կարող է համաձայնագիր կնքել միջազգային կազմակերպությունների կամ օտարերկրյա պետությունների հետ որոշակի գումարի չափով, սակայն այդ գումարը կարող է տրամադրվել մի քանի տարվա ընթացքում, և ուրեմն պարտավորության վճարը ստորագրված, բայց դեռևս չստացված գումարի սպասարկման վճարն է: Այդ դեպքում հարց կարող է առաջանալ, թե ինչ իմաստ ունի վարկ վերցնել, ավելին, քան տրամադրվելու է դեռ ավելին՝ չստացվածի համար էլ լրացուցիչ գումար վճարել: Պատասխանն ակնհայտ է. չէ՞ որ շատ հաճախ մեծ գումարի վարկերի համար սահմանվում են առավել արտոնյալ պայմաններ, քան դա կարող էր լինել քիչ գումարով վարկի համար: Հաջորդ պայմանը վարկի մարման ժամկետն է: Ընդ որում պետք է նշել, որ շատ հաճախ վարկերը տրամադրվում են արտոնյալ ժամանակահատ-

վածով, որը նշանակում է, որ նշված ժամանակահատվածում վարկառու կողմը վարկատու կողմին պայմանագրի համաձայն վճարում չի կատարում:

Վարկի տեղաբաշխում ասելով նկատի ունենք այն գումարը, որը ստացվել է, որ պետք է ուղղվի: Ներկայումս արտաքին պարտքի շրջանակներում գումարների մեծ մասն ուղղվում է այն ոլորտներին, որոնցից թերևս եկամտատ չի կարելի սպասել, որոնք սակայն ունեն պետության աջակցության կարիքը: Սակայն, ըստ իս, եթե կառավարությունը որդեգրի այն քաղաքականությունը, որ արտաքին աղբյուրներից ստացված միջոցները պետք է ուղղել միայն սոցիալապես խոցելի ոլորտներին, պետական պարտքը տարեցտարի կավելանա՝ հետագա սերունդներին կանգնեցնելով բարդ իրադրության առաջ: Ուստի ցանկալի կլինի յուրաքանչյուր տարի այդ միջոցների մի մասն ուղղել եկամտատ ապահովող ծրագրերի մեջ: Առաջարկվում է որպես այդպիսին ընտրել հանքարդյունաբերության ոլորտը: Հարց կառաջանա, թե ինչ կապ կա հանքարդյունաբերության ոլորտի և պետական պարտքը կառավարող մարմինների միջև:

Առաջին հայացքից թվում է, թե սրանք բացարձակապես կապ չունեն միմյանց հետ: Պետական պարտքը կառավարող մարմինների համար կամ այլ կերպ ասած պետական պարտքի կառավարչի համար գոյություն ունի մեկ գերխնդիր. ունենալով բյուջեի դեֆիցիտ կամ ֆինանսական միջոցների կարիք՝ կոնկրետ ոլորտում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար պետք է կարողանա հայթայթել համապատասխան գումարը, և որ կարողանա դրա մարման ժամկետը հասնելուն պես վերադարձնել ժամանակին: Համարենք սա որպես գերխնդիր: Սակայն պետք է նշել, որ պետական պարտքի կառավարման համար շատ կարևոր է նաև արտահանման ծավալների աճը, որոնք պետական պարտքի սպասարկման, հետագայում նաև մարման գրավականն են: Ուստի այս նպատակին հասնելու համար պետք է ձեռնարկվեն որոշակի միջոցառումներ: Արտահանումը խթանելու համար հարկային դաշտում արդեն իսկ կատարվել են որոշակի փոփոխություններ:

Պետական պարտքը կառավարող մարմինները նույնպես կարող են որևէ կերպ աջակցել արտահանման խթանմանը: Խոսքը վերաբերում է հանքարդյունաբերության ոլորտին, որի զարգացումը, ըստ իս, այս պահի դրությամբ մեծ հնարավորություն կտա տարիների ընթացքում նվազեցնել արտաքին պետական պարտքը: Հարց կառաջանա՝ ինչպես ^օ և ինչու^օ հատկապես հանքարդյունաբերություն:

Ներկայումս հանքարդյունաբերությունը զարգացում է ապրում, սակայն որակել այն որպես զարգացած դեռ շատ վաղ է: Հայաստանի Հանրապետության ընդերքը բավականին հարուստ է, և այն արդյունավետ օգտագործելու դեպքում հնարավոր կլինի ոչ միայն ազդել արտահանման ծավալների աճի, հետևաբար նաև արտաքին պետական պարտքի նվազման վրա, այլ նաև կունենանք տնտեսական աճ, ինչպես նաև հնարավոր կլինի նվազեցնել գործազրկության մակարդակը: Իսկ ինչու պետք է զարկ տալ հենց հանքարդյունաբերությանը: Վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ ստորև ներկայացվում են այն արտահանման ապրանքատեսակները, որոնց տեսակարար կշիռն առավել մեծ է եղել.

Աղյուսակ

2009 թվականի արտահանված ապրանքատեսակների տվյալները

Ապրանքատեսակ	Արտահանում հազար ԱՄՆ դոլար
Թուղթ և ստվարաթուղթ	800.3
Գրքեր, լրագրեր, տպագրական արտադրանք	437.3
Բուրդ, նուրբ և կոպիտ կենդանական մազեր	107.5
Բամբակ	792.5
Այլ բուսական մանածագործական գործվածք	50.8
Քիմիա կան թելեր	1526.4
Քիմիական շտապելային գործվածք	2083.0
Կենդանի, կենդանիներ	9203.9
Միս, մսամթերք	1164.4

Ապրանքատեսակ	Արտահանում հազար ԱՄՆ դոլար
Չուկ և ծովային անողնաշարավորներ	3221.5
Կաթ, կաթնամթերք, ձու, մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք	1449.9
Բանջարեղեն	7744.3
Սուրճ, թեյ և համեմունքներ	9815.1
Ոգելից և ոչ ոգելից խմիչքներ	80114.2
Ծխախոտ	8581.7
Աղ, ծծումբ, քար, ցեմենտ	9970.6
Հանքաքար և խարամ	115886.5
Հանքային վառելանյութ, նավթ և նավթամթերք	19767.7
Դեղագործական մթերք	3849.1
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և թանկարժեք մետաղներ	105075.1
Սև մետաղ	93288.4
Իրեր սև մետաղներից	2405.0
Պղինձ, ալյումին	125593.6
Ոչ թանկարժեք մետաղներից իրեր	9503.6

www.armstat.am

Ինչպես երևում է աղյուսակից, մեծ տեսակարար կշիռ ունեն հանքաքարերն ու մետաղները, որոնք կազմում են մոտ 60 տոկոսը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում արդյունահանում և արտահանվում են հիմնականում պղինձ, ոսկի, արծաթ, մոլիբդեն, որն ի դեպ շատ ավելի թանկ մետաղ է, քան ոսկին, ցինկ, կապար: Արդյունահանման ծավալներով ներկայումս առաջին տեղում է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը, որը տարեկան արդյունահանում է մոտ 8-10 տոննա հանքաքար: Հանքավայրը համեմատաբար կարելի է որակել որպես ոչ շատ հին, քանի որ այն սկսել է աշխատել 1951 թվականից, ընդ որում արդեն 1958 թվականից սկսել է գործել բաց եղանակով, որը մոտ 7 անգամ էժան եղանակ է, քան փակ շահագործման եղանակը: Կոմբինատի զարգացումը համարվում է 60-ականներին, երբ սկսեցին կատարել մեծ ծավալով կապիտալ ներդրումներ, ինչպես նաև սկսեցին կիրառել բարձր արտադրողականությամբ հորատման հաստոցներ և այլ տեխնիկա, որի միջոցով հնարավոր եղավ բարձրացնել հանքավայրի արտադրողականությունը:

Վերջին տարիներին ՉՄՊԿ ծավալներն ավելացել են մոտ 5 անգամ, սակայն այն դեռևս կավելանա, քանի որ նոր շահագործողների կողմից իրականացվում են նոր կապիտալ ներդրումներ, որոնք թույլ կտան էլ ավելի արդյունավետ դարձնել և մեծացնել արդյունահանման ծավալները: Հարկ է նշել, որ ներդրումներն իրականացվելու են երկու փուլով, որից առաջինն արդեն ավարտվել է, որի համար ընկերությունն արդեն ներդրել է 157 մլն դոլար: Ընդ որում դրա մոտ 50 տոկոսը՝ 72814820 դոլար, հատկացվել է հարստացուցիչ ֆաբրիկայի կազմակերպման և վերազինման համար¹: Երկրորդ փուլը նախատեսված է 2008-2020 թվականներին, որի ընթացքում կան մի շարք նպատակներ, կրկին արտադրողականության մեծացումը, սակայն այս փուլում տեղ է գտել նաև Հայաստանի Հանրապետությունում ռաֆինացված պղնձի արտադրության հնարավորության ուսումնասիրումը:

Բացի սրանից հանքավայրի տարածքում կատարվում են նաև լրահետախուզական աշխատանքներ: Այս փուլի համար նախնական հաշվարկներով կապահանջվի մոտ 50-60 մլն դոլար: Սակայն պետք չէ մոռանալ նաև ընթացիկ ծախսերի մասին, որոնք, անկախ ներդրումների ծավալից, անհրաժեշտ է կատարել, որոնք վերջին տարիներին կազմել են մոտ 40 մլն դրամ, իսկ զուտ շահույթը եղել է մոտ 30 մլրդ: ՉՄՊԿ-ն ներկայումս համարվում է Հայաստանի Հանրապետության խոշորագույն հարկատուն՝ գրավելով առաջատարի դերը:

¹ Մելքումյան Մ., Հակոբյան Վ., Չեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2008թ.:

Ներկայումս ՉՄՊԿ-ն պատկանում է գերմանական «Cronimet Mining» ընկերությանը, որը բաժնետոմսերի 80 տոկոսի բաժնետերն է, «Մաքուր Երկաթ» ՍՊԸ՝ 15 տոկոս, «Չանգեգուր Մայնինգ»՝ 12.5 տոկոս, «Armenian Molibden Production»՝ 12,5 տոկոս:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են մոլիբդենի վերամշակման երկու գործարան և պղնձի վերամշակման մեկ գործարան, որն էլ հիմք է հանդիսանում, որ արդյունահանված խտանյութի հիմնական մասն արտահանվի: Մոլիբդեն հիմնականում արտահանվում է եվրոպական մի շարք երկրներ՝ մասնավորապես Գերմանիա, Լիխտենշտեյն և այլն, իսկ պղնձ հիմնականում արտահանվում է Չիլի, որն ունի աշխարհում ամենամեծ պղնձածուլական գործարանը:

Ինչ վերաբերում է պետության հետ համագործակցմանը, ապա այս ընկերության հետ՝ մասնավորապես «Չանգեգուր Մայնինգ» ՍՊԸ-ի, արդեն համագործակցություն եղել է 2009 թվականին, երբ ընկերությանը հատկացվեց մոտ 15 մլն դոլար գումար, որը տրամադրվել էր արտաքին պարտքի շրջանակներում ՌԳ կողմից ձեռք բերված վարկի միջոցով: Այն տրամադրվել է 5 տարի մարման ժամկետով՝ զարգացումը խթանելու համար, և տրամադրվել է լողացող տոկոսադրույքով:

Մեկ այլ խոշոր ընկերություն է «Մետալ Փրինգ» ընկերությունը, որը ներկայումս «Ախթալայի ԼՀԿ»-ի 100 տոկոս բաժնետերն է, որը հանքարդյունաբերության ոլորտում ներգրավված է 2000 թվականից և շահագործում է Ախթալայի և Շամլուղի հանքավայրերը, որտեղ առկա են պղնձի և բարիտ - բազմամետաղային հանքավայրեր: Ընկերությունը բավականին մեծ ծավալների կապիտալ ներդրումներ է իրականացրել: 2000 թվականին նախնական հաշվարկներով ներդրումների ծավալը կազմելու էր մոտ 900 մլն դոլար, սակայն աշխատանքների ավարտից հետո պարզ դարձավ, որ այդ սահմանն անցել է 1 մլրդ դոլարը: Չնայած 2009 թվականին տեղի ունեցող ֆինանսատնտեսական ճգնաժամին, որի հետևանքով մետաղների գները միջազգային ֆինանսական շուկաներում նվազեցին մոտ երեք անգամ, շատ ձեռնարկություններ, որոնք զբաղվում էին մետաղների արդյունահանմամբ և արտահանմամբ, կամ որոշ ժամանակով դադարեցրին իրենց գործունեությունը, կամ կրճատեցին աշխատակիցների թվաքանակը, բայց այս ընկերությունը շարունակեց աշխատել նույն ծավալով՝ իր վրա վերցնելով վնասներն ու ռիսկերը:

Չնայած այն հանգամանքին, որ հանքավայրը գործել է 1700-ականներից և ունի մոտ 300 տարվա պատմություն, այն կարելի է որակել որպես ավարտված հանքավայր, սակայն ընկերության ջանքերի շնորհիվ այն դեռ գործում է՝ տարեկան տալով մոտ 2000 հազար տոննա, սակայն 2011-2013 թվականներին կանխատեսվում է այն ավելացնել մոտ հինգ անգամ: Ընկերությունն իր արդյունահանված խտանյութը ամբողջովին արտահանում է, և 2010 թվականին արտահանման համար ստացվել է մոտ 5 մլրդ դրամ գումար, որից մոտ 400 մլն հարկ է վճարել:

Ներկայումս իրականացվում են մի շարք միջոցառումներ՝ արտադրության արտադրողականությունը բարձրացնելու համար:

Հանքարդյունաբերության ոլորտում ևս խոշոր ընկերություն է «Էյ-Սի ՓԻ» ընկերությունը, որտեղ մոտ 20 տոկոս բաժնետոմսերի բաժնետեր է Վալերի Մեջլումյանը, իսկ մնացած 80 տոկոսը պատկանում է Վալերա Ֆ.Մ.Իսթերլիշմենտին¹:

«Էյ-Սի-Փի» ընկերությունը ներառված է «Վալերա» խմբի մեջ, որոնք լեռնամետալուրգիայի ոլորտում ակտիվ գործունեություն են իրականացնում, մասնավորապես «Բեյզ Մեթալզ» ՓԲԸ-ն, որը շահագործում է Լեռնային Գարաբաղի Դրմբոն գյուղի պղնձ-ոսկու հանքավայրը: Ընկերությունը 50 մլն դոլար ներդրում է իրականացրել, սակայն եթե հաշվի առնենք այն, որ 2004-2005 թվականների արդյունահանվել է 120-150 հազար տոննա, 2006 թվականին՝ 300 հազար տոննա, իսկ 2007 թվականին՝ 350 հազար տոննա, ապա ներդրումները կարելի է լիովին արդարացված համարել:

¹ Մեջլումյան Մ., Հակոբյան Վ., Չեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2008թ.:

Խմբում ներառված է նաև «Վալթբա Մայնինգ» ՍՊԸ-ն, որը արդյունահանում է կվարցային հալանյութ:

Խմբի անդամ է «Թեդուտ» ՓԲԸ-ն, որի աշխատանքները ներկայումս ժամանակավորապես դադարեցվել են: Պատճառը թերևս սպասվող մեծ ներդրումներն են, որը ընկերությունը պատրաստ է կատարելու, և այն նախնական հաշվարկներով կգերազանցի 250 մլն դոլարը, սակայն սպասվում է, որ այն տարեկան կտա մոտ 30 հազար տոննա պղինձ և 0.8 հազար տոննա մոլիբդենի խտանյութ: Սակայն ըստ իս շահագործման ժամանակավոր դադարեցման պատճառը կարող էր դառնալ 2008 թվականից սկիզբ առնող ֆինանսատնտեսական ճգնաժամը:

Եթե հաշվի առնենք պաշտոնական հրապարակումները, ապա 1999-2003 թվականներին ընկերությունը գործել է վնասով, սակայն 2004 թվականից ընկերության գուտ շահույթը տարեցտարի աճել է:

Այս երեք ընկերությունների օրինակները հնարավորություն են տալիս մեզ գնահատելու, թե որոշակի ներդրում կատարելիս սպասումներն ու եկամուտները ինչպիսիք կլինեն:

Ներկայումս դեռ կան այնպիսի հանքավայրեր, որ դեռևս չեն շահագործվում, սակայն պակաս հարուստ պաշարներ չունեն, որոնց շահագործումը դրական ազդեցություն կունենա ողջ տնտեսության վրա, քանի որ կատեղծվեն նոր աշխատատեղեր, բյուջեի հարկային եկամուտները կավելանան, ինչպես նաև կնպաստի տնտեսական աճին:

Մասնավորապես տարեկան 50-70 մլն ներդրում կատարելով՝ հնարավոր կլինի ստանալ բավականին լավ եկամուտ մոտ 8-10 տարի հետո: Եվ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ներկայումս տրամադրվող վարկերի հիմնական մասն ունի 10-20 տարի արտոնյալ ժամանակահատված, ուստի արդարացված կլինեն նաև ներդրման ռիսկերը: Ընդ որում այն կարելի է իրականացնել երկու եղանակով:

Առաջին տարբերակում պետությունն անմիջական մասնակցություն կունենա շահագործման ողջ գործընթացին: Պետության միջոցներով պետության վերահսկողությամբ կարելի է հավաքագրել մասնագետների, որոնք ստացված գումարներով կսկսեն շահագործել այդ հանքավայրերը: Այս դեպքում և՛ ռիսկերը, և՛ եկամուտները կլինեն պետությանը:

Երկրորդ տարբերակում պետությունը, վարկ վերցնելով օտարերկրյա պետություններից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից, կարող է ներդնել այդ միջոցները արդեն գործող ընկերություններում՝ ավելացնելով որոշակի տոկոսներ: Նմանատիպ փորձ արդեն արվել է 2009 թվականին: Բացի այն, որ պետությունը կստանա լրացուցիչ եկամուտ, միևնույն ժամանակ լրացուցիչ միջոցների հաշվին կավելանան արդյունահանման ծավալները, հետևաբար կխթանվի արտահանումը:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ
ՄՈՏԵՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՓԼԱՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԿԱՐԵՎՈՐ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ**

Ֆինանսական հաստատությունների կողմից փողերի լվացման (ՓԼ) և ահաբեկչության ֆինանսավորման (ԱՖ) կանխարգելման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2007թ. ՖԱԹՖ-ի կողմից առաջարկվեց ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառումը: Դրա նպատակն էր ֆինանսական հաստատություններին առաջարկել այնպիսի մեթոդի կիրառում, որը հնարավորություն կընձեռի իրականացնել տարբերակված և յուրաքանչյուր հաճախորդի ռիսկին համարժեք հսկողություն՝ դրանով իսկ առավել արդյունավետ դարձնելով ՓԼԱՖ հնարավոր և գոյություն ունեցող ռիսկերի կառավարումը¹: Մեթոդը միաժամանակ նպաստում է ֆինանսական հաստատությունների մարդկային և տեխնիկական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը: Նոր մոտեցումն առաջարկում է ռեսուրսների հավասարաչափ, առանց առաջնահերթության օգտագործման փոխարեն ավելի շատ ռեսուրսներ ուղղել բարձր ռիսկայնություն ունեցող հաճախորդների և գործարքների նկատմամբ հսկողության իրականացմանը:

Ռիսկերի վրա հիմնված մոտեցումը թույլ է տալիս իրականացնել հաճախորդների արդյունավետ նույնականացում՝ հաշվի առնելով հաճախորդների ռիսկի դասը, բանկային հաշիվների տեսակները, ինչպես նաև հնարավորություն է տալիս հաշվի բացման փուլում բացահայտելու ռիսկային հաճախորդներին: Ռիսկերի վրա հիմնված մոտեցումը ենթադրում է ֆինանսական հաստատությունների հաճախորդների դասակարգում առնվազն հետևյալ երեք խմբերի՝ բարձրռիսկային, միջինռիսկային և ցածրռիսկային:

Հաճախորդների դասակարգումը կիրառվում է թե՛ մեկանգամյա գործարք իրականացնելիս, թե՛ գործարար հարաբերություն հաստատելիս և թե՛ հաճախորդի կողմից իրականացվող գործարքների շարունակական մոնիտորինգի ժամանակ: Հաճախորդների ռիսկի դասը կարող է փոփոխվել գործարար հարաբերության ընթացքում՝ կախված վերջինիս վարքագծի, գործարքների բնույթի փոփոխությունից:

ՖԱԹՖ-ի կողմից հրատարակված ուղեցույցի հիման վրա՝ 2008թ. ՀՀ ԿԲ նախագահի թիվ 1/1154Ս որոշմամբ հաստատվեց նաև «Ֆինանսական հաստատությունների կողմից ՓԼԱՖ ոլորտում ռիսկերի վրա հիմնված մոտեցման» վերաբերյալ ուղեցույցը, որը սահմանում է ՓԼԱՖ ոլորտում առկա ռիսկերի տեսակները և ֆինանսական հաստատությունների կողմից յուրաքանչյուր հաճախորդի նկատմամբ կիրառվող պատշաճ ուսումնասիրության մոտեցումները՝ կախված վերջինիս ռիսկայնության դասից:

Թե՛ ՖԱԹՖ-ի և թե՛ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված ուղեցույցները խորհրդատվական բնույթ են կրում և նպատակ են հետապնդում օժանդակելու ֆինանսական հաստատություններին իրենց ներքին իրավական ակտերի մշակման և սեփական ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության սահմանման գործում:

ՓԼԱՖ ռիսկերը գնահատելիս կարող են օգտագործվել ռիսկերի գնահատման տարբեր չափանիշներ: Ռիսկերի գնահատման լայն տարածում ունեցող չափանիշներն են՝ երկրի ռիսկը, հաճախորդի ռիսկը, մատուցվող ծառայության/ապրանքի հետ կապված ռիսկը: Ֆինանսական հաստատությունները սահմանափակված չեն հաճախորդի ռիսկի դասը որոշելիս և վերոնշյալ չափանիշներից յուրաքանչյուրին տրվող կշիռը սահմանելիս:

Երկրի ռիսկը տեղեկատվություն է տալիս փողերի լվացման հնարավոր, հավանական ռիսկերի ի հայտ գալու վերաբերյալ: Ե՛վ կառավարությունների, և՛ միջազգային կառույցների

¹ ՖԱԹՖ-ի 40 հանձնարարականների և 9 հատուկ հանձնարարականների կատարումը գնահատելու մեթոդաբանություն, Հանձնարարական թիվ 5, 27 փետրվարի 2004թ., էջ 28:

կողմից դեռևս ընդունված չէ միասնական մոտեցում երկրի ռիսկը սահմանելու վերաբերյալ, մասնավորապես ՓԼԱՖ տեսանկյունից:

Երկրի ռիսկը որոշելիս օգտագործվում են միջազգայնորեն ընդունված կառույցների կողմից հրապարակվող ցանկերը: Առավել ռիսկային են համարվում այն հաճախորդները, որոնք գրանցված են այնպիսի երկրներում կամ գործարքներ են իրականացնում այնպիսի երկրների հետ որտեղ, ՖԱԹ-Ֆ-ի, ԱՄՀ-ի, Համաշխարհային բանկի և Էզմոնտ խմբի կողմից հրապարակված տվյալների համաձայն, բացակայում կամ թերի է գործում ՓԼԱՖ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը, որտեղ կոռուպցիայի և հանցավոր գործունեության մակարդակը բարձր է, որոնց նկատմամբ ՕՖԱԿ-ի, ՄԱԿ-ի, ԵԿ-ի կողմից կիրառվում են պատժամիջոցներ: Ռիսկային են համարվում նաև այն երկրները, որոնք հայտնվել են OECD կողմից հրապարակվող հարկային թերացումներ ունեցող երկրների ցանկում և ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից հրապարակված թմրամիջոցների առք ու վաճառքում ներգրավված երկրների ցանկում: Վերջին տարիներին հատկապես կարևորվում է այն երկրների նկատմամբ զգոնությունը, որոնք աջակցում են ահաբեկչության ֆինանսավորմանը, հանդիսանում են միջնորդ երկիր թմրամիջոցների, զինամթերքի, թրաֆիքինգի համար:

ՖԱԹ-Ֆ-ի և ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված ուղեցույցները թեև նշում են, թե որ ցանկերից կարող են օգտվել ֆինանսական հաստատությունները երկրի ռիսկը որոշելիս, սակայն չեն առաջարկում որևէ մոտեցում՝ համապատասխան դասակարգում իրականացնելու համար:

Երկրի դասը որոշելու համար ֆինանսական հաստատությունները կարող են որդեգրել վերոնշյալ ցանկեր ներառված երկրներին, անձանց, կազմակերպություններին ռիսկի կշիռներ տալու միջոցով ռիսկայնությունը որոշելու սկզբունքը:

Աղյուսակ 1

Երկրի ռիսկի սահմանումը կշիռներ տալու միջոցով

Ռիսկ միավորի միջակայքը	Ռիսկի դասը
0 - 2.99	Ցածր
3 - 5.99	Միջին
6 և ավելի	Բարձր

Համաձայն միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված տեղեկատվության¹ տվյալ երկրում, աշխարհագրական տարածքում բացակայում է ՓԼ/ԱՖ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը, ապա տվյալ երկրին տրվող միավորն այս պարագայում պետք է ապահովի երկրի դասակարգումը՝ որպես բարձրռիսկային:

Ֆինանսական հաստատությունները կարող են միավորների կշիռը տարբերակել ըստ յուրաքանչյուր միջազգային կառույցի: Օրինակ՝ ավելի բարձր կշիռ տալ ՕՖԱԿ-ի կողմից հրապարակվող տվյալներին ԵԿ-ի կողմից հրապարակվող տվյալների համեմատ: Նման որոշման համար հիմք կարող է հանդիսանալ այն փաստը, թե տվյալ ֆինանսական հաստատությունն ավելի սերտ համագործակցում է ամերիկյան^օ, թե^օ եվրոպական ֆինանսական հաստատությունների հետ: Օրինակ՝ կարող է սահմանվել, որ գտնվում է ՕՖԱԿ-ի պատժամիջոցների ցանկում, ապա վերջինիս տրվող միավորը պետք է ապահովի երկրի դասակարգումը՝ որպես բարձրռիսկային: Իսկ եթե երկիրը գտնվում է միայն ԵԿ-ի կամ ՄԱԿ-ի կողմից հրապարակված պատժամիջոցների ցանկում, ապա տրվող միավորը պետք է ապահովի երկրի՝ որպես միջինռիսկային դասակարգումը:

Փողերի լվացման պոտենցիալ ռիսկ ներկայացնող հաճախորդների տարբերակումն էական նշանակություն կարող է ունենալ ֆինանսական հաստատության ՓԼԱՖ ռիսկերի գնահատման և կանխարգելման գործում: Այս պարագայում ևս առկա չեն միասնականորեն ընդունված չափանիշներ, սակայն միջազգային պրակտիկայում կան մի շարք գործունեության տեսակներ, մասնագիտություններ, որոնք ՓԼԱՖ տեսանկյունից դիտարկվում են որպես բարձրռիսկային:

¹ http://www.fatf-gafi.org/document/54/0,3746,en_32250379_32236992_48263734_1_1_1_1,00.html

Խաղատները, շահումով խաղ կազմակերպողները, բրոքերային-դիլերային ծառայություններ մատուցողները մշտապես ՓԼԱՖ ոլորտի թիրախներ են:

Կանխիկի մեծ շարժի վրա հիմնված կազմակերպությունները ևս համարվում են խոցելի, քանի որ հնարավորություն են ընձեռում փողերի լվացում իրականացնողներին համեմատաբար ավելի հեշտորեն խեղաթյուրելու և միախառնելու անօրինական գործունեությունից ստացված եկամուտները օրինական գործունեության արդյունքում ստացված եկամուտների հետ:

Ռիսկային են նաև ներմուծում/արտահանում իրականացնող կազմակերպությունները, քանզի վերջիններս միջազգային փողերի լվացման գործառույթ իրականացնողներին հնարավորություն են ընձեռում կեղծ առևտրային պայմանների կիրառման միջոցով քողարկել իրենց անօրինական գործունեությունը:

Միջազգային կառույցների կողմից, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ը, ՖԱԹՖ-ը, ԵԿ-ն, ՕՖԱԿ-ը, սահմանվել են բարձրռիսկային համարվող գործունեության տեսակների, ահաբեկիչների ու ահաբեկչական գործունեությունը հովանավորող անձանց կամ կազմակերպությունների, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց ցանկեր¹:

ՕՖԱԿ-ը վարում է տնտեսական և առևտրային պատժամիջոցների ցանկեր՝ ընդդեմ թմրամուլության և թրաֆիքինգով զբաղվող անձանց, ահաբեկիչների և ահաբեկչության ֆինանսավորումը հովանավորող անձանց՝ ելնելով ԱՄՆ արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության նպատակներից:

Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող ցանկը ներառում է այն անձանց և կազմակերպություններին, որոնք ներգրավված են կամ ներգրավված են եղել խարդախությունների կամ կաշառակերության մեջ:

ԱՄՆ Առևտրի նախարարության Արդյունաբերության և անվտանգության բյուրոն սահմանում է այսպես կոչված «մերժված անձանց» ցուցակ, որը մատնանշում է արտահանման արտոնություններից զրկված անձանց:

ԱՄՆ Պատրիոտ ակտի 331-րդ հոդվածով սահմանված է փողերի լվացման մեջ ընդգրկված անձանց ցանկ, որոնք վտանգում կամ բացասաբար են ազդում ԱՄՆ կազմակերպությունների աշխատանքի վրա:

Բարձրռիսկային անձանց և կազմակերպությունների մասին տեղեկատվությունն իհարկե միայն վերոնշյալ ցանկերով չի սահմանափակվում: Ընդ որում, վերջիններիս կազմում ներառվում են այլընտրանքային աղբյուրներից ՉԼՄ-ների կողմից հրապարակվող տեղեկատվությունը՝ «Ճանաչիր քո հաճախորդին» (KYC) տեղեկատվական համակարգերի տվյալները (World Check, Dow Jones, Accuity world Check):

Հաճախորդի ռիսկի դասը որոշելու համար լրացուցիչ հիմք կարող են հանդիսանալ նաև հաճախորդի մասնագիտությունը, բիզնեսի տեսակը, ֆինանսական հաստատության հետ գործարար հարաբերություն հաստատելու նպատակը, կանխատեսվող եկամուտները և ամսական միջին շրջանառությունը:

Հաճախորդի ռիսկի մասին խոսելիս կարևորվում է քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հասկացությունը:

Ըստ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի²՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ է համարվում այն անձը, ով օտարերկրյա պետությունում կամ տարածքում իրականացնում է կամ իրականացրել է բարձրաստիճան մակարդակով պետական, քաղաքական կամ հանրային բնույթի նշանակալից գործառույթներ:

2003թ.-ին վերանայված ՖԱԹՖ-ի 40 հանձնարարականներում տրվել է քաղաքական ազդեցություն ունեցող անձանց սահմանումը՝ ներառելով նաև վերջիններիս ընտանիքի անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց՝ նշելով, որ քաղաքական ազդե-

¹ 1. http://search.un.org/search?q=terrorist+list+of+names&output=xml_no_dtd&client=UN_Website_en&num=10&lr=lang_en&proxystyle=sheet=UN_Website_en&oe=UTF-8&ic=UTF-8&sort=date%3AD%3AL%3Ad1&ud=1&exclude_apps=1&site=un_org

2. <http://www.treasury.gov/resource-center/sanctions/SDN-List/Pages/default.aspx>

3. <http://www.eubusiness.com/news-eu/1232988421.45/>

4. http://www.fatf-gafi.org/document/54/0,3746,en_32250379_32236992_48263734_1_1_1_1,00.html

² «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, հոդված 3, 20-րդ ենթակետ:

ցություն ունեցող անձանց սահմանումը չի տարածվում միջին և ավելի ցածր պաշտոն գրադեցնող անձանց վրա:

Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք բարձր ռիսկ են ներկայացնում, քանի որ նրանց կողմից իրականացվող գործարքներում կարող են ներառվել կոռուպցիոն եկամուտներ՝ բանկերի համար հանգեցնելով հսկայական հեղինակության և իրավական ռիսկերի: Առևտրային բանկերն ապահովված չեն քաղաքական ազդեցություն ունեցող անձանց ռիսկերից: Հայտնի են դեպքեր, երբ որոշակի երկրների քաղաքական ազդեցություն ունեցող անձինք ունեցել են կապեր ահաբեկիչների և ահաբեկչական խմբավորումների հետ:

Բանկերը, իրենց հաճախորդների մեջ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց բացահայտելու համար, կարող են օգտագործել «Ճանաչիր քո հաճախորդին» տեղեկատվական տվյալների բազաները (World Check, Factiva, Dow Jones), որոնք ապահովում են համեմատաբար ավելի ամբողջական տվյալներ թե՛ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց և թե՛ վերջիններիս հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ:

Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց ռիսկի կառավարման համար ռիսկերի վրա հիմնված մեթոդի ներդրման համար առաջնային աղբյուր կարող են հանդիսանալ կոռուպցիայի ընդունման և կաշառք վճարողների ինդեքսները:

2010թ. կոռուպցիոն ինդեքսը¹ ցույց է տալիս, որ 178 երկրների մեկ երրորդն ունի հինգից ցածր միավոր, 0-10 գնահատման սանդղակով՝ 10 (բացարձակ չկոռումպացված), 0 (ամբողջովին կոռումպացված): Նման արդյունքները վկայում են համաշխարհային մակարդակով առկա կոռուպցիոն լուրջ խնդրի մասին: Հայաստանը երկրների շարքում 123-րդն է՝ 2.6 միավորով, ինչը վկայում է կոռուպցիայի բարձր մակարդակի մասին:

Ապրանքի/ծառայության ռիսկը ևս կարևորվում է ռիսկերի վրա հիմնված մոտեցումը կիրառելիս, քանի որ ֆինանսական հաստատությունների կողմից մատուցվող ապրանքները կամ ծառայությունները կարող են հաճախորդների կողմից օգտագործվել որպես գործիքներ՝ հեշտությամբ օրինականացնելու համար հանցավոր ճանապարհով ստացված դրամական միջոցները:

Թանկարժեք ակտիվները (արվեստի գործերը, թանկարժեք մետաղները, անշարժ գույքը, ավտոմեքենաները և այլն), որոնք հնարավոր է գնել և իրացնել կարճ ժամանակահատվածում, գրավիչ են փողերի լվացմամբ զբաղվող անձանց համար: Առցանց վճարումների իրականացման համակարգերը (PayPal and E-Bay) փողերի լվացման մեկ այլ տարածված և գրավիչ թիրախ են:

Միջազգային պրակտիկայում չեկային գրքույկները, SWIFT համակարգի ավտոմատացված քլիրինգային կենտրոնները, երրորդ անձանց անունով ավանդները, էլեկտրոնային փողը, ԱԳՄ-ները, էլեկտրոնային բանկինգը և նմանատիպ ծառայությունները համարվում են բարձրռիսկային:

Ֆինանսական հաստատությունների կողմից մատուցվող որոշ ծառայություններ ևս ՓԼԱՖ տեսանկյունից կարող են հանդիսանալ բարձրռիսկային: Դրանց թվին են պատկանում օտարերկրյա թղթակցային հաշիվները, միջազգային ֆինանսական առևտուրը, ակրեդիտիվները, հատուկ կուտակային հաշիվները, ինչպես նաև վարկավորման գործունեությունը, մասնավորապես փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերը, որոնք ապահովված են կանխիկով, արժեթղթերով, կրեդիտային քարտերով վարկավորումը և այլն:

2002թ. ՖԱԹՖ-ի 40 հանձնարարականների գծով տրված Վոլֆսթերգ խմբի մեկնաբանությունը տարանջատում է որոշ գործարքներ և գործունեություններ, որոնք ՓԼԱՖ տեսանկյունից ցածր ռիսկ են պարունակում: Դրանց թվին են դասվում հատուկ նպատակներով ստեղծված հաշիվները, որոնցով գումարները ստացվում կամ բաշխվում են նախապես հայտնի երրորդ անձանց՝ կոնկրետ նպատակների համար, ինչպիսիք են Էսքրո հաշիվների վարումը, կորպորատիվ հավատարմագրային կառավարիչները, պահառության հաշիվները:

Ցածրռիսկային են համարվում նաև ներդրումային ֆոնդերի համար ստեղծված հաշիվները, որոնք վերահսկվում են լիազոր մարմինների կողմից (կենսաթոշակային ֆոնդերը) և ենթակա են ՓԼԱՖ տեսանկյունից խիստ վերահսկողության:

¹ http://www.transparency.org/policy_research/surveys_indices/cpi/2010/results

Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ թեպետ որոշ ծառայություններ դասակարգվում են որպես ցածրոճիկային, ֆինանսական հատվածի ոչ մի ծառայություն կամ ապրանք չի կարող ապահովագրված լինել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման նպատակով օգտագործվելու ռիսկից:

Հողվածի շրջանակներում առաջ քաշված ռիսկ մոդելները միայն ակադեմիական նկատառումներով չեն ներկայացվում: Նրանք կարող են իրականում նպաստել հաշիվների բացման և գործարքների իրականացման գործընթացի արդյունավետության բարձրացմանը և ՓԼԱՖ ռիսկերի բացահայտմանը: Ավելին, հաշվի բացման գործընթացում կամ գործարքներ իրականացնելիս անհրաժեշտ է, որպեսզի ֆինանսական հաստատությունների/ բանկերի կողմից հաշվի առնվեն և ուսումնասիրվեն փողերի լվացման ռիսկի բոլոր ուղղությունները: Սակայն, փորձը ցույց է տալիս, որ ֆինանսական հաստատությունները, բացառությամբ մի շարք առաջատար բանկերի, հազվադեպ են կիրառում նման համապարփակ մոտեցում: Յուրաքանչյուր ֆինանսական հաստատություն ինքնուրույն պետք է ստեղծի ռիսկ մոդելներ՝ հիմք ընդունելով միջազգային փորձը և ՀՀ օրենսդրական դաշտի պահանջները:

ՀԱՅԿ ՄԱԿԱՐՅԱՆ

*ՆԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
ընկերասագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի՝ Հայաստանի տնտեսության վրա ազդեցության ուղիներից մեկը հարկային համակարգն է կամ ավելի ընդհանուր վերցրած բյուջեի եկամտային մասը: Այս հարցին անհրաժեշտ է մոտենալ լրջորեն, քանի որ ճգնաժամն առաջին հերթին ազդում է տնային տնտեսությունների և ձեռնարկությունների եկամուտների կրճատման վրա, իսկ վերջինս էլ իր անմիջական ազդեցությունն է թողնում բյուջեի եկամուտների հավաքագրման առումով: Այդ իսկ պատճառով շատ մեծ նշանակություն է ստանում տնտեսության մեջ առանձին հարկատեսակների միտումների ուսումնասիրությունը 2008-2010թթ. կտրվածքով, քանի որ ՀՀ տնտեսությունը կարելի է ասել իր վրա ճգնաժամի ամենամեծ ազդեցությունը կրել է այդ տարիների ընթացքում:

Հայաստանի տնտեսության հարկային համակարգում և հարկային մուտքերի բնագավառում տեղ գտած տեղաշարժերը բավականին մեծ դժվարություններ առաջացրին, որոնք անհրաժեշտ է վերլուծել և ուսումնասիրել: Ուսումնասիրելով տեղի ունեցած տեղաշարժերը՝ կարելի է նաև դուրս բերել հիմնական խոչընդոտները, հարկային համակարգում առկա թերությունները, փորձել առաջարկել մոտեցումներ և թերությունների վերացման ուղիներ:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցություններն աշխարհում առավել մեծ չափով սկսել են զգալ 2008թ. վերջին եռամսյակում, իսկ Հայաստանի տնտեսության վրա դրանք ազդեցին 2009թ. սկսած:

ՀՀ պետական բյուջեի եկամուտները 2008-2010թթ. ընթացքում ամենաբարձրն են եղել 2008թ.՝ կազմելով 759.2 մլրդ դրամ, որից հետո սկսված ճգնաժամի արդյունքում դրանք նվազել են՝ կազմելով 676.4 մլրդ դրամ, իսկ արդեն 2010թ. դրանք վերականգնվել են՝ հասնելով 755.8 մլրդ դրամի, սակայն 3.4 մլրդ դրամով պակաս են եղել 2008թ. ցուցանիշից: Ստացվում է այնպես, որ նախաճգնաժամային արդյունքային ցուցանիշներին պետական եկամուտների բնագավառում ՀՀ տնտեսությունը կհասնի միայն 2011թ.-ին՝ այն էլ բարենպաստ տնտեսական զարգացումների պարագայում: 2009թ. պետական բյուջեի եկամուտների տոկոսային միտումներն ուսումնասիրելիս նկատում ենք, որ դրանք 2008թ. նկատմամբ կրճատվել են մոտ 10.9%-ով, իսկ վատագույն եռամսյակն է եղել 2009թ. 3-րդ եռամսյակը՝ 86.5% անկման ցուցանիշով: Եկամուտների առավելագույն աճի եռամսյակն է եղել 2010թ. 2-րդ եռամսյակը՝ 121.9% ցուցանիշով, այսինքն՝ կարելի է դրանից ելնելով 2009թ. ընդունել որպես ստորին կետ բյուջեի

եկամուտների ձևավորման առումով, իսկ 2010թ. 2-րդ եռամսյակը՝ վերականգնման գազաթնակետ: Հետաքրքիր է նաև, որ ՀՆԱ-ի մեջ պետական բյուջեի եկամուտները տոկոսային առումով ունեն նվազման միտում ըստ եռամսյակների, քանի որ սովորաբար ամենաբարձրը դրանք լինում են 1-ին եռամսյակում, իսկ ամենացածրը 4-րդ եռամսյակում, առավելագույն տեսակարար կշիռ արձանագրվել է 2008թ. 1-ին եռամսյակում՝ 31.8%, իսկ նվազագույն 2008թ. 4-րդ եռամսյակում՝ 20.8%: ՀՆԱ-ն ևս ունի սեզոնային բնույթ, և այն առաջին եռամսյակում ձևավորվում է տարեկան ՀՆԱ-ի 10-12%-ի սահմաններում, որի պարագայում համամասնական եկամտային ձևավորում կամ բաշխվածություն ունենալու գործոնով կարող են բացատրվել ըստ եռամսյակների ՀՆԱ և պետական բյուջեի եկամուտներ հարաբերակցության տարբերությունները: 2009թ. վերջում այս ցուցանիշը կազմել է 21.8%, որը խոսում է ՀՆԱ-ի մեջ բյուջեի եկամուտների զգալի անկման մասին:

Աղյուսակ 1

ՀՀ պետական բյուջեի եկամուտները¹

(նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ, %)

	2009					2010				
	I	II	III	IV	I-IV	I	II	III	IV	I-IV
Ընդամենը պետական բյուջեի եկամուտներ	90.3	87.1	86.5	89.1	89.1	117.4	121.9	119.2	111.7	111.7
1. Հարկեր, տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	-	-	-	-	-	119.6	121.3	118	111.9	111.9
1.1 Հարկեր և տուրքեր	-	81.8	81.9	84.1	84.1	119.2	122.8	118.9	113.7	113.7
1.1.1 Հարկային եկամուտներ, որից՝	83.3	81.8	82	84.1	84.1	120.5	123.4	119.4	114.1	114.1
ավելացված արժեքի հարկ	79.9	74	76.3	79.8	79.8	124.4	136.1	127.3	118.7	118.7
շահութահարկ	79.2	97.3	96.8	94.9	94.9	118	96.8	94	96.3	96.3
եկամտահարկ	111.4	112.6	109.9	112	112	135.4	128.7	128.7	122.8	122.8
ակցիզային հարկ	92.4	91.4	89.6	93.2	93.2	103.4	112.2	110.9	112.6	112.6
գույքահարկ	36.4	50	50	60.7	60.7	325	162.5	150	82.4	82.4
հողի հարկ	166.7	87	130.5	125	125	70	70.1	46.2	55.9	55.9
մաքսատուրք	99.2	76.7	67.5	67.3	67.3	106.4	128.8	128.6	116.9	116.9
հաստատագրված վճարներ	124.5	121.7	116.6	112.1	112.1	98.5	95.8	95.2	92.3	92.3

Հարկերի և տուրքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2008թ. դրանք կազմել են 621.0 մլրդ դրամ, 2009թ.՝ 522.4 մլրդ դրամ, 2010թ.՝ 594.1 մլրդ դրամ, այսինքն՝ ճգնաժամային 2009թ. դրանք կրճատվել են մոտ 100 մլրդ դրամով, որը հսկայական գումարային մուտքերի անկում է ՀՀ պետական բյուջեի համար, իսկ 2010թ. վերականգնում դեռևս տեղի չի ունեցել, քանի որ 2008թ. համեմատությամբ այն 27 մլրդ դրամով պակաս է: Հարկերի և տուրքերի տոկոսային անկումը 2009թ. կազմել է 84.1%, իսկ ամենաստորին կետում այն գտնվել է 2009թ. 2-րդ եռամսյակում՝ 81.8% ցուցանիշով: Հետագայում արդեն 2010թ. տնտեսության առողջացման հետ մեկտեղ նկատվում է 13.7-22.8% հավելած, որը բավականին դրական է ազդել տնտեսության վերականգնման տեմպերի վրա, իսկ աճի գազաթնակետը կրկին 2010թ. 2-րդ եռամսյակն է՝ 122.8% աճի ցուցանիշով: Հարկերի և տուրքերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տարբեր եռամսյակներում ունեցել է տատանողական բնույթ և գտնվել է 16.8-22.4% միջակայքում: Ամենացածր ցուցանիշը եղել է 2009թ. տարեվերջին՝ 16.8%, իսկ ամենաբարձրը 2010թ. տարեկազմին՝ 22.4%: Այս ցուցանիշի տեսակարար կշիռն ընդհանուր բյուջետային եկամուտներում տատանվել է 76.3-82.6% միջակայքում, և ընդհանրապես ճգնաժամի ազդեցությունը եղել է այնպիսին, որ խիստ մեծ շեղումներ են առաջացել ցուցանիշների միտումներում, որը տնտեսական անկայունության գնահատականներից է: Առանձին վերցրած պետական տուրք-

¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվարից մինչև Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար ժամանակահատվածում ընկած հրապարակումներ:

քերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ 2008թ. այն կազմել է 22.3 մլրդ դրամ, 2009թ.՝ 19.0 մլրդ դրամ, իսկ 2010թ.՝ 20.0 մլրդ դրամ: Ի տարբերություն հարկային եկամուտների՝ տուրքերն ընդհանուր բյուջետային եկամուտների մեջ ունեն շատ փոքր տեսակարար կշիռ և կազմում են 2.1-3.1%: Իսկ ճգնաժամային տարում բնակչության կողմից տուրքերի մուծմամբ պայմանավորված գործարքների թիվը նվազում է, որի պատճառով էլ դրանք անկում են ապրել: Տուրքերի ամենամեծ անկումը գրանցվել է 2009թ. 3-րդ եռամսյակում և կազմել է 81.8%: Իսկ առավելագույն աճ նկատվել է 2010թ. 3-րդ եռամսյակում՝ 106.6%:

Աղյուսակ 2

ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների կառուցվածքը և հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ¹

(%)

	2008					2009					2010				
	I	II	III	IV	I-IV	I	II	III	IV	I-IV	I	II	III	IV	I-IV
Ընդամենը պետական բյուջեի եկամուտներ	31.8	26.1	21.1	20.8	20.8	28.6	26.3	22.5	21.8	21.8	28.9	27.5	23.7	21.5	21.5
1. Հարկեր, տուրքեր և պարտադիր սոցսպ. վճարներ	-	-	-	-	-	26.2	24.5	21	20.2	20.2	27	25.6	22	19.9	19.9
1.1 Հարկեր և տուրքեր	-	21.8	17.4	17	17	21.8	20.4	17.5	16.8	16.8	22.4	21.5	18.5	16.9	16.9
1.1.1 Հարկային եկամուտներ, որից՝	25.3	20.8	16.7	16.4	16.4	21	19.6	16.9	16.2	16.2	21.8	20.8	17.9	16.4	16.4
ավելացված արժեքի հարկ	13.1	10.7	8.8	8.7	8.7	10.4	9.2	8.3	8.2	8.2	11.2	10.7	9.3	8.6	8.6
շահութահարկ	4.1	3.5	2.5	2.4	2.4	3.3	3.9	3	2.6	2.6	3.3	3.3	2.5	2.2	2.2
եկամտահարկ	2.2	1.8	1.5	1.5	1.5	2.5	2.3	2	1.9	1.9	2.9	2.6	2.3	2.1	2.1
ակցիզային հարկ	2.1	1.6	1.3	1.3	1.3	1.9	1.7	1.5	1.4	1.4	1.7	1.6	1.4	1.4	1.4
գույքահարկ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
հողի հարկ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
մաքսատուրք	1.3	1.2	1	1	1	1.3	1	0.8	0.8	0.8	1.2	1.1	1	0.8	0.8
հաստատագրված վճարներ	0.9	0.7	0.6	0.6	0.6	1.1	1	0.8	0.8	0.8	0.9	0.8	0.7	0.6	0.6

Հարկային եկամուտները 2008թ. կազմել են 598.8 մլրդ դրամ, իսկ 2009թ. դրանք նվազել են մինչև 503.3 մլրդ դրամ, իսկ 2010թ. դրանք ավելացել են նախորդ տարվա համեմատությամբ և կազմել են 574.1 մլրդ դրամ: 2009թ. եղել է հարկային եկամուտների կրճատման ստորին կետը և տոկոսային առումով կազմել է 84.1%, իսկ այդ նույն տարվա 2-րդ եռամսյակում կազմել է 81.8%: Ստացվում է այնպես, որ մոտ 18 տոկոսանոց անկումը կարող էր խիստ բացասական ուղեցնի հանդիսանալ ողջ բյուջեի եկամտային քաղաքականության համար: Հարկային եկամուտների աճի գագաթնակետը եղել է 2010թ. 2-րդ եռամսյակում 123.4% մակարդակով, իսկ ընդհանուր տարեկան աճը կազմել է 114.1%: Հարկային եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տատանվել է 16.2-25.3% միջակայքում, անկման ստորին կետում գտնվել է 2009թ. 4-րդ եռամսյակում՝ 16.2%, իսկ առավելագույն մակարդակ գրանցվել է 2008թ. առաջին եռամսյակում՝ 25.3%: Հարկային եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր պետական բյուջեի եկամուտներում ամենամեծն է և կազմել է տարբեր եռամսյակներին 73.4-79.8%, ընդ որում 73.4%-անոց արդյունքը գրանցվել է 2009թ. 1-ին եռամսյակում: Հարկատեսակներից ամենամեծ տեսակարար կշիռը հարկային եկամուտներում ունի ԱԱՀ-ն, որը 2008թ. կազմել է 318.3 մլրդ դրամ, 2009թ. այն կրճատվել է՝ կազմելով 254.1 մլրդ դրամ, իսկ 2010թ.՝ 301.7 մլրդ դրամ: Այսինքն՝ ճգնաժամային տարում ԱԱՀ-ն կրճատվել է մոտ 63 մլրդ դրամով, որը հսկայական կորուստ է ՀՀ պետական բյուջեի համար, սա նշանակում է, որ այդ գումարի հնգապատիկի չափով արտադրանք և ծառայություններ ՀՀ տնտեսությունն ավելի քիչ է ստեղծել կամ ներմուծել 2009թ.: ԱԱՀ-ի անկման ամենաստորին կետը տոկոսային արտահայտությամբ գտնվել է 2009թ. 2-րդ եռամսյակում՝ 74%, իսկ հետագայում՝ 2010թ. 2-րդ եռամսյակում, այդ նույն հարկատեսակի աճի տեմպերը ռեկորդային էին և կազմել են 136.1%: ԱԱՀ-ի տեսակա-

¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008թ. հունվարից մինչև Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար ժամանակահատվածում ընկած հրապարակումներ:

րար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 8.3-13.1%, իսկ ճգնաժամի ժամանակահատվածում ամենացածր մակարդակի վրա է գտնվել 2009թ. 3-րդ եռամսյակում:

Աղյուսակ 3

ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների կառուցվածքը և հարաբերակցությունը¹

(ընդամենի նկատմամբ %)

	2008					2009					2010				
	I	II	III	IV	I-IV	I	II	III	IV	I-IV	I	II	III	IV	I-IV
Ընդամենը պետական բյուջեի եկամուտներ	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
1. Հարկեր, տուրքեր և պարտադիր սոցալ. վճարներ	-	-	-	-	-	91.7	93.5	93.7	92.4	92.4	93.4	93	92.7	92.5	92.5
1.1 Հարկեր և տուրքեր	-	82.6	82.4	81.8	81.8	76.3	77.6	78.1	77.2	77.2	77.5	78.1	77.9	78.6	78.6
1.1.1 Հարկային եկամուտներ, որից՝	79.6	79.8	79.4	78.9	78.9	73.4	74.8	75.2	74.4	74.4	75.3	75.8	75.3	76	76
ավելացված արժեքի հարկ	41.3	41.1	41.8	41.9	41.9	36.5	34.9	36.9	37.6	37.6	38.7	38.9	39.4	39.9	39.9
շահութահարկ	13	13.5	12	11.4	11.4	11.4	14.9	13.3	11.9	11.9	11.5	11.9	10.5	10.3	10.3
եկամտահարկ	6.9	6.9	7	7.1	7.1	8.6	8.9	8.9	8.9	8.9	9.9	9.4	9.6	9.8	9.8
ակցիզային հարկ	6.5	6	6.3	6	6	6.6	6.3	6.5	6.3	6.3	5.8	5.8	6	6.4	6.4
գույքահարկ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
հողի հարկ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
մաքսատուրք	4.1	4.5	4.8	4.9	4.9	4.5	3.9	3.7	3.7	3.7	4.1	4.2	4	3.9	3.9
հաստատագրված վճարներ	2.7	2.6	2.7	2.7	2.7	3.7	3.8	3.7	3.5	3.5	3.1	3	3	2.9	2.9

Հաջորդ հարկատեսակը, որն իր տեսակարար կշռով ամենամեծն է, շահութահարկն է, այն 2008թ. կազմել է 86.2 մլրդ դրամ, 2009թ. այն նվազել է մինչև 80.8 մլրդ դրամ, իսկ 2010թ. անկման միտումը շարունակվել է, և այն կազմել է 77.8 մլրդ դրամ: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում շահութաբերության անկումը խիստ բացասական է ազդել այս հարկատեսակի գծով կատարվող հավաքագրումների վրա: Շահութահարկի գծով տոկոսային անկումը բարձր է եղել 2009թ. 1-ին եռամսյակում և կազմել է 79.2%, այնուհետև հավաքագրումները վերականգնվել են, և դրանք տարեվերջին մոտեցել են 94.9% մակարդակի, իսկ 2010թ. աննախադեպ աճ է նկատվել 1-ին եռամսյակում՝ 118.0%, որը կարելի է ասել պայմանավորված էր նախորդ տարվա նույն եռամսյակի կտրուկ անկման ֆոնով: ՀՆԱ-ի մեջ շահութահարկի տեսակարար կշիռը տատանվել է 2.2-4.1% միջակայքում, իսկ ամենացածրը եղել է 2010թ. 4-րդ եռամսյակում՝ 2.2%, այսինքն՝ գնալով այն անկում է ապրում և խիստ մտահոգիչ պետք է լինի կառավարության համար, թե ինչով է պայմանավորված շարունակական շահութաբերության անկումը, քանի որ առանց շահույթի մակարդակ ապահովելու մեկ ճգնաժամը չհաղթահարած կազմակերպությունները կհայտնվեն մյուսի մեջ: Եկամտահարկն այն հարկատեսակներից է, որ և՛ նախաճգնաժամային, և՛ հետճգնաժամային, ինչպես նաև բուն ճգնաժամի ժամանակահատվածում չի կրճատվել, 2008թ. այն կազմել է 53.7 մլրդ դրամ, 2009թ.՝ 60.2 մլրդ դրամ, իսկ արդեն 2010թ.՝ 73.9 մլրդ դրամ: Համադրելով շահութաբերության և եկամտաբերության ցուցանիշները, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց գործունեությունը՝ կարելի է եզրակացնել, որ իրավաբանական անձինք, որոնք շահույթով են հարկվում, ավելի շատ են տուժել, քան ֆիզիկական անձինք, ովքեր եկամտահարկի հարկման տիրույթում են: Այս երևույթը նկատելի էր նաև խոշոր ու միջին և մյուս կողմից փոքր կազմակերպությունների տվյալների ուսումնասիրության ժամանակ: Եկամտահարկի աճի միտումներից նկատելի է դառնում, որ այն 2009թ. գրեթե բոլոր եռամսյակներում ունեցել է 10% հավելած, իսկ առավելագույն աճ է գրանցվել 2-րդ եռամսյակում՝ 112.6%: Այս միտումները շարունակվել են նաև 2010թ., և 1-ին եռամսյակում արձանագրվել է 135.4% աճ, իսկ տարին ամփոփվել է 122.8%-անոց աճով: Այս հարկատեսակի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տատանվել է 1.5-2.9% միջակայքում և ստորին կետում է գտնվել 2008թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում, իսկ ընդամենը պետական բյուջեի եկամուտներում դրա տեսակարար կշիռը տատանվել է 6.9-9.9% միջակայքում:

¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008թ. հունվարից մինչև Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար ժամանակահատվածում ընկած հրապարակումներ:

Ակցիզային հարկը նախաճգնաժամային 2008թ. կազմել է 45.9 մլրդ դրամ, իսկ 2009թ. այն նվազել է՝ կազմելով 42.8 մլրդ դրամ, իսկ 2010թ. վերականգնվել և գերազանցել է 2008թ. մակարդակը՝ հասնելով 48.1 մլրդ դրամի: Ակցիզային հարկի նվազման ստորին կետը եղել է 2009թ. 3-րդ եռամսյակը, իսկ անկումը կազմել է 89.6%, իսկ 2010թ. սկսած՝ սկսել են նկատվել աճի միտումներ տարեսկզբին՝ 103.4%, իսկ տարեվերջին դրանք կազմել են 112.6%: ՀՆԱ-ում այս հարկատեսակի տեսակարար կշիռը տատանվել է 1.3-2.1% միջակայքում և ամենաբարձրն է եղել 2008թ. 1-ին եռամսյակում: Առանձին ուղղակի և անուղղակի հարկատեսակների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ անուղղակի հարկերի (ԱԱՀ, ակցիզային հարկ) դիրքի թուլացում է տեղի ունեցել ճգնաժամի արդյունքում, իսկ շահութահարկը և եկամտահարկը հատկապես ամրապնդել են իրենց դիրքերը, այսինքն՝ դրական կառուցվածքային տեղաշարժ է նկատվել հարկատեսակների մեջ: Իսկ այն հանգամանքը, որ տնտեսության վրա առավել մեծ ազդեցություն ունեն ուղղակի հարկերը, ընդունված է ամբողջ աշխարհում, սակայն Հայաստանում հակառակ երևույթն է, որի բացասական արդյունքներն էլ նկատելի դարձան ճգնաժամի արդյունքում:

Հաջորդ խոշոր եկամտային խումբը մաքսատուրքերն են, որոնք 2008թ. կազմել են 37.3 մլրդ դրամ, 2009թ. դրանք նվազել են՝ հասնելով 25.1 մլրդ դրամի, իսկ 2010թ. կազմել են 29.4 մլրդ դրամ: Մաքսատուրքերի մեծ լինելու դեպքում տուժում է երկրի արտաքին առևտուրը, իսկ քանի որ ՀՀ-ում ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը 3-4 անգամ գերազանցում է արտահանվող ապրանքներին, ստացվում է այնպես, որ վճարված մաքսատուրքերին և ներմուծման հարկերին համամասնական աճում են նաև ներմուծվող ապրանքների գները, որոնք մոտավոր հաշվարկներով կազմում են 32-33%, ստացվում է այնպես, որ միջազգային ապրանքների գներից բավականին բարձր գներով են ՀՀ-ում ապրանքները վաճառվում, այստեղ պետությունը կարող է սահմանել ցածր մաքսատուրքեր և ունենալ բյուջեի եկամուտների կորուստ, իսկ մյուս կողմից կշահի բնակչությունը՝ ունենալով ցածր գներով ներմուծված ապրանքներ: Մաքսատուրքերի անկման ստորին կետը 2009թ. տարեվերջն է՝ 67.3% մակարդակով, իսկ աճի գագաթնակետը 2010թ. երկրորդ եռամսյակը՝ 128.8% աճի մակարդակով: ՀՆԱ-ի մեջ մաքսատուրքերի տեսակարար կշիռը տարբեր եռամսյակներում կազմել է 0.8-1.3%, ամենաբարձրը եղել է նախաճգնաժամային 2008թ. առաջին եռամսյակում, իսկ ամենացածրը՝ 2009թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում: Այստեղից կարելի է հետևություն անել, որ արտաքին առևտրաշրջանառության գագաթնակետը ՀՀ տնտեսության համար 2008թ. 1-ին եռամսյակն է:

Հաստատագրված վճարների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2008թ. դրանք կազմել են 20.3 մլրդ դրամ, իսկ 2009թ. աճել են և հասել 23.8 մլրդ դրամի, իսկ 2010թ.՝ 21.9 մլրդ դրամ: Ստացվում է, որ ճգնաժամային տարում հաստատագրված վճարով աշխատող կազմակերպությունների թիվն ավելի մեծ է եղել, քանի որ անորոշության պայմաններում հաստատագրված վճարները կարող են որոշակի հստակություն մտցնել գործունեության իրականացման դաշտում: Հաստատագրված վճարների աճի գագաթնակետը եղել է 2009թ. 1-ին եռամսյակում՝ 124.5%, իսկ անկման ստորին կետը 2010թ. վերջում՝ 92.3%: ՀՆԱ-ի մեջ դրանց տեսակարար կշիռը կազմել է 0.6-1.1%: Այստեղ ևս նկատվում է, որ կան տատանման լայն միջակայք և բավականին մեծ շեղումներ: Հարկային մյուս եկամտատեսակները նպատակահարմար չենք գտնում ուսումնասիրել ՀՀ պետական բյուջեի եկամուտներում դրանց ունեցած փոքր տեսակարար կշռի պատճառով:

Հետևությունները կամ հիմնական եզրակացությունները հարկային եկամուտների վերլուծության արդյունքում հետևյալն են՝

- Միայն եկամտահարկն է, որ ամբողջ 2009թ. ընթացքում ունեցել է աճի միտում, ստացվում է այնպես, որ ճգնաժամի պայմաններում ՀՀ-ում եկամուտները ոչ թե կրճատվել են, այլ ավելացել, որի արդյունքում էլ եկամտահարկի գծով հավաքագրումների աճ է արձանագրվել: Այստեղ կամ տեղի է ունեցել, իսկապես ազգաբնակչության եկամուտների աճ, կամ թաքցված եկամուտների բացահայտում, կամ էլ առանձին հարկատեսակների մեջ կառուցվածքային տեղաշարժ, և առավել մեծ չափով դրանք արտահայտվել են եկամտահարկի տեսքով:
- Ակցիզային հարկի դիմամիկան հարաբերականորեն կայուն է եղել, այն տատանվել է ավելի նեղ միջակայքում, իսկ անկման ստորին կետը գտնվել է 2009թ. սեպտեմբեր ամսին՝ կազմելով 89.6%: Հետաքրքիր մեկ համադրություն ևս. շահութահարկի, ակցիզային հարկի

անկման կետերը գրեթե չեն համընկնում ժամանակագրական տեսանկյունից, իսկ եկամտահարկի և ԱԱՀ-ի անկման կետերը համընկնում են, որոնք երկուսն էլ ամենացածրն են եղել 2009թ. մայիսին:

- Այս համադրությունից կարելի է նշել, որ կառուցվածքային տեղաշարժերը ճգնաժամային իրավիճակում եղել են ի օգուտ ուղղակի հարկերի և անուղղակի հարկերը կորցրել են իրենց դիրքերը, այսինքն՝ «առողջ» տնտեսությունը պետք է հիմնվի ուղղակի հարկերի վրա, իսկ անուղղակի հարկերը տնտեսության համար կայունարարներ չեն, իսկ տնտեսության պարբերաշրջանային (ցիկլային) զարգացումներն ավելի հեշտ է կարգավորել ուղղակի հարկերի միջոցով, քանի որ տնտեսության ցնցումներին առաջին հերթին արձագանքում են այն հարկատեսակները, որոնք պայմանավորված են տնտեսության զարգացմամբ, իսկ անուղղակի հարկերը մեծամասամբ տնտեսական գործունեության արդյունքում ձևավորված հարկեր չեն, այդ իսկ պատճառով ՀՀ տնտեսության մեջ առաջին հարվածն իրենց վրա կրեցին այդ հարկատեսակները, իսկ պետական բյուջեի մուտքերն ամենաշատը նվազեցին ԱԱՀ-ի գծով:

ՀՀ տնտեսությունը 2009թ. գտնվում էր թուլացած վիճակում, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության գրեթե բոլոր հնարավոր լծակներով փորձ էր արվում վերականգնել տնտեսության զարգացման տեմպերը, որոնք, կարծում ենք, իրենց դրական ազդեցությունը թողեցին, և տնտեսության մեջ արդեն նկատելի արդյունքներ կան, պարզապես պետք է լինել հետևողական՝ փորձելով թույլ չտալ արտաքին տնտեսական ցուցումների կտրուկ ազդեցություն, ինչպես նաև պատրաստ լինել դիմակայելու ծագող դժվարություններին: Այժմ մի շարք տնտեսագետներ (Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր Նուրիել Ռուբինին, 2008թ. Նոբելյան մրցանակակիր Պոլ Կրուգմանը և Մայքլ Գեյդր¹) կանխատեսում են համաշխարհային տնտեսության մեջ նոր ճգնաժամ սկսվելու մասին, որը կարող է իրականությանը շատ մոտ լինել, այդ իսկ պատճառով պետք է պատրաստ լինել տնտեսական նոր մարտահրավերների և ցնցումների, ինչպես նաև փորձել դրանք հաղթահարել տնտեսական քաղաքականության ճիշտ լծակների և հարկային ճիշտ մեխանիզմների միջոցով:

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՏԵՐՅԱՆ

*Ն Գ Ա Ա Մ. Լոթթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող, տ. գ. դ., պրոֆեսոր*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԵՐԿՐՈՐԴ ԱԼԻՔԸ ԵՎ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԶՅ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Բնության և հասարակության մեջ հանդիպող ցանկացած երևույթ անհրաժեշտաբար տեղ է գտնում որոշակի հիմքերի վրա, որոնք, որպես կանոն, ձևավորվում են աստիճանաբար: Հետևաբար, ցանկացած երևույթ կարող է ոչ միայն կրկնվել, այլև ունենալ զարգացման հստակ միտումներ:

Միջազգային ֆինանսական ճգնաժամը, մեր դիտարկմամբ, համադրելի է բնության տարերք ներկայացնող այնպիսի ցնցման հետ, ինչպիսին երկրաշարժն է: Եվ որքան էլ անսպասելի է մարդկանց համար ցանկացած երկրաշարժ, նույնքան կանխատեսելի է այն սեյսմոլոգների, երկրաբանների, բնագետների և այլ մասնագետների համար: Համեմատության համար նշենք, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ևս կանխատեսելի է, ավելին՝ այն որոշ առումով նաև անխուսափելի է: Միաժամանակ այն համեմատվել է համաճարակի հետ, որը ևս կրկնվելու միտում ունի:

Հատկանշական է, որ միջազգային փորձագետներից շատերը շտապելով կանխատեսումներ անել ճգնաժամի բացասական հետևանքների վերացման հնարավոր ժամկետների մասին, այդպես էլ հաշվի չառան այնպիսի կարևոր սցենարի հավանականությունը, ինչ-

¹ <http://www.b24.am/economy/33569.html>

պիսին ճգնաժամի կրկնությունն է: Մեր համոզմամբ, այն համադրելի է երկրաշարժի երկրորդ ալիքի կամ ալիքների՝ հետցնցումների (aftershocks) հետ: Հետևաբար, խիստ տրամաբանական են այն զարգացումները, որոնք տեղ են գտել համաշխարհային տնտեսության մեջ՝ 2008թ. ծայր առած ճգնաժամի հաղթահարման ճանապարհին: Աշխուժացման միտումները, որոնք նկատվում են ԱՄՆ-ում, Եվրոպայում, Ճապոնիայում, Չինաստանում և այլուր, սկսեցին ուղեկցվել տնտեսության տարբեր ճյուղերում նկատվող հակասական միտումներով: Այդ զարգացումներն, ընդհանուր առմամբ, կուտակվելով, ի վերջո, վերաճեցին միջազգային ֆինանսական ճգնաժամի երկրորդ ալիքի կամ հետցնցման, որը կարող է միակը չլինել:


Եվրամիության անդամ երկրներում աճում է դժգոհությունը վերջին տարիների անարդյունավետ ֆինանսական մեխանիզմից և դրա պատասխանատուներից: Եվրոն, որը ԵՄ երկրների միասնականության խորհրդանիշներից մեկն է, մի կողմից գերարժուրվեց ԱՄՆ դոլարի արժեզրկման համապատկերում, մյուս կողմից խոշորամասշտաբ չարաշահումների տեղիք տվեց: Մասնավորապես, Հունաստանի, Իսպանիայի, Պորտուգալիայի, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի՝ ԵՄ վերջերս անդամակցած երկրներից, յուրաքանչյուրն իրենց չափով թուլացրին եվրոյի դիրքերը:

Միաժամանակ, շարունակում է աճել միջազգային ֆինանսական շուկաների անկայունությունը, որն իրենից զգալի կախվածության մեջ է դնում համաշխարհային տնտեսությունը, հատկապես թույլ զարգացող ազգային տնտեսություններն իրենց դժվար կառավարելի արժույթներով: Եթե այս ամենին հավելենք նաև ԱՄՆ-ի տնտեսության դժվար կանխատեսելի զարգացումները և ամերիկյան արժույթի տատանումները, ապա կուրվագծվի այն համայնապատկերը, որում գտնվում են պետությունները՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի երկրորդ ալիքի վրա:

Առավել սրվեց իրավիճակը ԱՄՆ-ում պետական պարտքի վերին սահմանի փոփոխության շուրջ արդեն պատմության գիրկն անցած սուր առճակատումների ժամանակ, որը սպառնում էր տեղիք տալ ֆինանսական դեֆոլտի: Եվ որքան էլ անցանկալի է ամերիկյան ֆինանսական դեֆոլտը ցանկացած՝ ներքին, տարածաշրջանային և միջազգային հնարավոր զարգացումների ու բացասական ազդեցությունների տեսանկյուններից, այնուամենայնիվ, դրանից խուսափելը նմանվում էր աննախադեպ հրաշքի:

Գծանկար 1

ԱՄՆ պետական պարտքի մեծությունը 2006-2016թթ.¹



Այս անլուծելի թվացող հանգույցը բնավ էլ նոր չի առաջացել: Գեռես երկու տարի առաջ ԱՄՆ-ի նոր վարչակազմի կողմից մոբիլիզացվեցին բոլոր հնարավոր ռեսուրսները՝ փրկելու ազգային տնտեսությունը: Այդ նպատակով պետությունը ստիպված եղավ բյուջեից միջոցներ հատկացնել սնանկությունից վերակենդանացնելու հայտնի Չեներալ Մոթորսը և Ուաշինգթոն Մյուչուալ բանկը: Չեռնարկվեցին ոչ ստանդարտ քայլեր, մասնավորապես Չինաստանին վաճառվեցին գրեթե մեկ տրիլիոն արժողությամբ ԱՄՆ պետական պարտատոմսեր, որոնց


¹ http://www.usgovernmentsspending.com/federal_debt_chart.html

հասույթը ներդրվեց տնտեսության մեջ: Սակայն այս ամենի արդյունքում 2011 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով ԱՄՆ տնտեսության աճը կազմել է ընդամենը 0,5%:

Իրականում, ԱՄՆ-ի ստեղծման օրվանից ի վեր պետական պարտքը, որոշ ընդհատումներով, ընդհանուր առմամբ աճի միտում ունի: Սակայն, հաշվի առնելով աշխարհի գերիզոր տնտեսության համախառն ներքին արդյունքի աճի ծավալները, պարտքի մեծությունը երբեք այնպիսի վտանգ չի ներկայացրել պետության համար, որքան վերջին մի քանի տարիներին, երբ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով խիստ կրճատվեցին հենց ամերիկյան ՀՆԱ-ի աճի տեմպերը, ուստի և ավելացավ պետական պարտք / ՀՆԱ հարաբերակցությունը՝ վերածվելով տնտեսական լուրջ սպառնալիքի:

Գծանկար 2

ԱՄՆ կառավարության պետական պարտք / ՀՆԱ հարաբերության տատանումների դինամիկան 1792-2016թթ.¹




Գաղտնիք չէ, որ ճգնաժամից դուրս գալու համար պահանջվում են զգալի ֆինանսական ռեսուրսներ: Դրանք սովորաբար փոխառնվում են այլ երկրներից, միջազգային կառույցներից և պետական ներքին պարտատոմսերի թողարկումից և դրանց վաճառքից: Բոլոր նշված աղբյուրներն, իրենց հերթին, ավելացնում են պետական պարտքը և նոր հիմքեր ձևավորում հետագայում ճգնաժամերի առաջացման համար:

Ներկայումս աշխարհի տարբեր երկրների կուտակված պետական պարտքի ծավալները սեփական ՀՆԱ-ի նկատմամբ հետևյալ տեսքն ունեն.²

Գծանկար 3

Աշխարհի տարբեր երկրների կուտակված պետական պարտքի ծավալները սեփական ՀՆԱ-ի նկատմամբ



¹ http://www.usgovernmentspending.com/federal_debt_chart.html

² Աղբյուրը՝ www.mapsofworld.com

Հիշեցնենք, որ «Այլընտրանք» հետազոտական կենտրոնի կողմից 2009թ. կանխատեսվել էր համաշխարհային տնտեսական ճգնաժամի երկրորդ ալիքի հավանականությունը, մինչդեռ ոմանք շտապում են Հայաստանի հյուծված տնտեսությունը ներկայացնել արդեն աշխուժացման ու զարգացման փուլում: Այդ ալիքն առավել հնարավոր սպառնալիքների տեսքով ներկայանում է այն երկրում, որտեղից էլ հենց սկիզբ է առել համաշխարհային ներկայիս ճգնաժամը:

Օրինաչափ զարգացումներ: Այս իմաստով բոլորովին պատահական չեն նաև Եվրամիությունում նկատվող ֆինանսական բարդությունները, որոնք ևս տարիների բացթողումների արդյունք կարելի է համարել, ինչպես նաև՝ ԱՄՆ-ի հետ փոխկախվածության և փոխապայմանավորվածության մեջ գտնվող շուկաների հետևանք: Այսօր ԵՄ-ում խոսում են անգամ միասնական արժույթից հրաժարվելու կամ որոշ երկրների իրենց ազգային արժույթներին վերադարձնելու սցենարների մասին: Հետևաբար, ֆինանսական համաճարակն ամենուր է՝ իր երևացող և աներևույթ սպառնալիքներով:

Վաշինգտոնում 2011թ. հուլիսին լուրջ վտանգի տակ էին պարտքի վերին սահմանի շուրջ բանակցությունները, որի ընթացքում հանրապետականներն ու դեմոկրատները ցուցաբերում էին հանդուրժողականության պակաս՝ յուրաքանչյուրը պնդելով, որ հենց իր ներկայացրած ծրագիրը կարող է երկիրը դուրս բերել փակուղուց: Գլխավոր թեման, ընդամին, մնում էր բյուջետային ծախսերի կրճատման և դեֆիցիտի աճի վերաբերյալ առանցքային ասպեկտների շուրջ համաձայնությունը: Անկախ այն բանից, որ ԱՄՆ նախագահի միջնորդության շնորհիվ հնարավոր եղավ խուսափել ֆինանսական դեֆոլտից, այնուամենայնիվ, մնան նախադեպը կարող է իր ազդեցությունն ունենալ 2012թ. ԱՄՆ նախագահական ընտրությունների ընթացքի վրա:

ԱՄՆ-ի պարտքի գծով ֆինանսական դեֆոլտի անգամ տեսական հավանականությունն արդեն վերածվել է տնտեսական և քաղաքական, ներքին և արտաքին իրական սպառնալիքի: Այն յուրօրինակ փորձաքար կարող է լինել նաև առաջիկայում՝ ԱՄՆ-ի ֆինանսների համակարգի պատասխանատուների համար, որոնք պետք է մտահոգվեն ժամանակին և լիարժեք կատարելու իրենց պարտավորությունները՝ պարտքի սպասարկման մասով:

Ապագայի հնարավոր կանխատեսումներ: Կարելի⁶ է արդյոք կանխատեսումներ անել մնան իրավիճակում: Իրականում կանխատեսումները պայմանավորված են միաժամանակ մի քանի երբեմն հակասական գործոններով և զարգացման հնարավոր սցենարներով: Դրանց բազմակողմանի վերլուծությունները մեզ թույլ են տալիս ենթադրել, որ անգամ այն պարագայում, եթե բանակցող կողմերի միջև ձեռք բերվի համաձայնություն, բուն բանակցությունների ձգձգվող գործընթացը բարձրացրել է ԱՄՆ-ի վարկային ռեյտինգի անկման հավանականությունը: Աշխարհահռչակ Moody's, Սթենդերդ ընդ Փուրս և այլ միջազգային գործակալություններ ԱՄՆ-ի նախկին գերգերազանց AAA ռեյտինգն արդեն վերանայել և իջեցրել են հենց հետագա ցնցումների հավանականության պատճառով: Մեկ այլ հեղինակավոր՝ TD Securities-ի ռազմավարական բաժանմունքի ղեկավար Բարտ Սելեքի վկայությամբ, ֆինանսական դեֆոլտը կարող է լրջորեն խոչընդոտել տնտեսության ապաքինման և վերականգնման գործընթացները: ԱՄՆ-ի ռեյտինգի նվազումը կարող է ունենալ լայնամասշտաբ ազդեցություն ամերիկյան տնտեսության վրա, քանի որ պետական պարտքի սպասարկման արժեքը նույնպես կավելանա, որը մեր համոզմամբ կարող է հանգեցնել տոկոսադրույքի բարձրացման բոլոր ասպարեզներում՝ սկսած հիփոթեքային շուկայից մինչև վարկային քարտերը և ուսանողական վարկերը: Հետևաբար, ամերիկացիների տնտեսական վիճակը ևս զգալիորեն կվատանա՝ հաշվի առնելով նաև գործազրկության բարձր մակարդակն ու տնտեսության վերականգնման դանդաղումը:

Մինչ բոլորը հետևում են բանակցությունների ընթացքին՝ ԱՄՆ դոլարի փոխարժեքը եվրոյի և այլ արժույթների նկատմամբ արդեն ընկել է: Քաղաքական փակուղին հանգեցրեց ICE դոլարային ինդեքսի անկմանը Նյու Յորքում մինչև 74,025-ի, որը լուրջ մտահոգության առիթ է:

Կարևոր է նկատել, որ ոսկու ֆյուչերսների գները ԱՄՆ դոլարով ավելի էժան են՝ համեմատած նույն ֆյուչերսներին՝ արտահայտված այլ արժույթներով այն ժամանակահատվածում, երբ ԱՄՆ դոլարի փոխարժեքն անկում է արձանագրում: Հատկանշական է, որ


բարձրացան նաև արժաթի գները: Մասնավորապես, Նյու Յորքի ապրանքային բորսայում սեպտեմբերյան արժաթի ֆյուչերսների գները բարձրացել են 23,9 ցենտով կամ 0,6 տոկոսով՝ մեկ ունցիայի դիմաց մինչև 40,361 ԱՄՆ դոլարի:

Իսկ ինչ ազդեցություն կարող է ունենալ ԱՄՆ-ի ֆինանսական համակարգի հետագա անկայունությունը Հայաստանի վրա: Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ ազդեցությունները կարող են լինել տարբեր և բազմակողմանի:

Առաջին, եական փոփոխությունները կարող են արձանագրվել Հայաստանի վճարային հաշվեկշռում, որը, ներկայացնելով այլ պետությունների հետ երկրի փոխադարձ արտաքին վճարային պարտավորությունները, հիմնականում արտահայտված է ԱՄՆ դոլարով, ինչը ներկայումս շարունակական արժեզրկման փուլում է:

Գծանկար 4

ԱՄՆ դոլարի թռիչքն ու անկումը 1800-2009թթ.¹



Երկրորդ, ԱՄՆ դոլարն աշխարհում թերևս միակ արժույթն է, որը որոշակիորեն կողմնորոշում է մնացած արժույթների փոխարժեքների միտումները և անուղղակիորեն արտահայտում ազգային արժույթի հանդեպ վստահության աստիճանը՝ դոլարիզացիայի մակարդակը: Ներկայումս Հայաստանում դոլարիզացիայի մակարդակը կազմում է 70%: Որքանով այն կարող է աճել կամ նվազել, նույնպես կախված են ԱՄՆ պետական պարտքի շուրջ ընթացող բանակցությունների ընթացքից և Հայաստանի ազգային արժույթի հանդեպ վստահության ձևավորման ուղղությամբ տարվող հետագա քայլերից:

Երրորդ, Հայաստանն առայժմ ներկրող երկիր է (ներդրումները գրեթե քառակի գերազանցում են արտահանման ծավալներն ու դրա հատկյաները): Հետևաբար, համաշխարհային շուկայում ձևավորվող ապրանքների գները՝ արտահայտված հիմնականում ԱՄՆ դոլարով, ուղղակի ազդեցություն կունենան տեղական շուկայի և սպառողների գնողունակության վրա:

Չորրորդ, արտահանման ծավալների ավելացումը, որին կարող է նպաստել ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացումը, նույնպես կարող է ժամանակավոր բնույթ կրել կամ շարունակական լինել՝ պայմանավորված ԱՄՆ-ի ֆինանսական դեֆոլտի հավանականությամբ: Առավել մեծ ազդեցություն վերջինս կարող է ունենալ հատկապես Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության և արտահանման ուղղվածություն ունեցող այլ ճյուղերի՝ զբոսաշրջության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ոսկերչության, ադամանդագործության զարգացման համար:

Հինգերորդ, ՀՀ արտաքին պարտքի առյուծի բաժինը կազմում են ԱՄՆ դոլարով արտահայտված փոխառնված վարկային միջոցները: Անգամ ՀՀ ռազմավարական դաշնակցից՝ Ռուսաստանից ստացված վարկը տրամադրվել է ԱՄՆ դոլարով՝ կես միլիարդ ԱՄՆ դոլար

¹ <http://www.abovetopsecret.com/forum/thread496669/pg1>

ընդհանուր գումարով: Արտաքին պարտքի սպասարկումը ևս այս իմաստով կարող է վերանայվել՝ կախված ԱՄՆ-ի դեֆոլտի հետ կապված ներկայիս զարգացումներից:

Վեցերորդ, օտարերկրյա ուղղակի ներդրումները /ՕՈՒՆ/ նույնպես գնահատվում են ԱՄՆ դոլարով: Որքանով դրանք կպահպանեն իրենց արժեքը, որքանով նպատակահարմար կլինեն ներդրումներ ներգրավել նշյալ արժույթով, այլ ոչ, օրինակ, Ռուսաստանի ռուբլով կամ ԵՄ եվրոյով, նույնպես կախված է ԱՄՆ դոլարի գնողունակությունից:

Յոթերորդ, Հայաստանի համար վերջին տարիներին խիստ կարևոր նշանակություն ձեռք բերած անձնական տրանսֆերտների հարցում անխուսափելի կլինեն ոչ միայն ծավալների տատանումները, այլև կարող է տեղի ունենալ դրամական փոխանցումների համար նախընտրելի արժույթի փոփոխություն կամ առնվազն դրանց դիվերսիֆիկացիա:

Ութերորդ, ՀՀ Կենտրոնական բանկի պետական իրացվելի ռեզերվներում գերակշռում է ԱՄՆ դոլարը, որն էլ անհրաժեշտության պարագայում և ոսկու պաշարների բացակայության պայմաններում օգտագործվում է ազգային արժույթի փոխարժեքի կայունացման համար: ՀՀ ԿԲ ռեզերվներում քիչ չեն նաև ԱՄՆ պետական պարտատոմսերը: ԱՄՆ դոլարի հետագա արժեզրկումը կարող է օրակարգային հարց դարձնել ոսկու որոշակի պաշարների ձեռքբերումը՝ ապագայում նման իրավիճակներում հնարավոր ռիսկերի նվազեցման նպատակով:

Ո՞րն է ելքը: Ստեղծված իրավիճակում Հայաստանը ստիպված է ելքեր որոնել: Իրենց հերթին, ելքերի որոնումները պայմանավորված են առևտրատնտեսական գործընկերների և ապրանքների ու ծառայությունների սպառման շուկաների հետագա դիվերսիֆիկացիայով և մեկ-երկու շուկաներից գոյություն ունեցող կախվածության կրճատմամբ: Չենք բացառում նաև արտաքին առևտրում այնպիսի կարևոր և ավանդական գործիքի կիրառումը, ինչպիսին ապրանքափոխանակություններն են: Դրանք նման անկայուն իրավիճակներում կոչված են կրճատելու ազգային կամ միջազգային արժույթների փոխարժեքների անկման հետ կապված ռիսկերը: Ի վերջո, անհրաժեշտ է մշտապես հետևել իրադարձությունների զարգացմանը, կատարել հիմնական միտումների համապարփակ ուսումնասիրություն, որոնց օգնությամբ հնարավոր կլինի վարել նախահարձակ արտաքին տնտեսական քաղաքականություն՝ առավելագույնս նվազեցնելու հնարավոր ռիսկերը, իսկ առիթ ընձեռնվելու դեպքում նաև որոշակի օգուտներ քաղել դրանցից:

Միաժամանակ, անհրաժեշտ են որոշակի միջոցառումներ՝ ոչ միայն ապահովելու երկրի ֆինանսական համակարգի կայունությունը, այլև այն ծառայեցնելու տնտեսության իրական հատվածի զարգացման շահերին: Կարևոր է հաշվի առնել, որ ճգնաժամի փուլում տնտեսությանը հասցվող ծանրագույն հարված է «կապիտալի փախուստը» երկրից: Տնտեսական անվտանգության տեսանկյունից վերջին շրջանում նկատվող միտումներից են անհրապույր ներդրումային միջավայրը և անառողջ մրցակցային դաշտը, որ մենաշնորհների տարբեր ձևերի և մոնոպոսիաների միջոցով ուղղակի ստեղծում են տնտեսական առումով անհանդուրժողականություն՝ փոքր և միջին ձեռներեցության համար, օրինաչափորեն ի վերջո աննպատակահարմար են դարձնում նաև ֆինանսական միջոցների աշխույժ կիրառությունը նաև մեծ բիզնեսի և կլանների համար: Գաղտնիք չէ, որ վստահության բացակայությունը և գործարար միջավայրի անկանխատեսելիությունը երբեմն պատճառ են դառնում, որ անգամ պետական հովանավորչությունը վայելող խմբերն իրենց ֆինանսական կապիտալներն ուղղեն արտերկիր: Ոմանք կապիտալի լայնածավալ արտահոսքը բացատրում են ներքին շուկայի փոքր ծավալներով, մինչդեռ շարունակում են աճել ներդրումների նկատմամբ պահանջարկը և արտերկրից ստացվող փոխառու միջոցների ներհոսքը: Կապիտալի «փախուստի» խնդիրները պարբերաբար քննարկվում են ինչպես G20, G8, այնպես էլ ոչ ֆորմալ բնույթ կրող Գ-ավոսի համաշխարհային տնտեսական համաժողովների ժամանակ:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԹԵ՛ ԶԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՅԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Կենտրոնացված պլանային համակարգի մերժումը հաճախ նույնացվում է դեպի բաց շուկայական հասարակարգ անցման հետ: Ընդամին, հարկ է հիշել, որ այսօր էլ աշխարհում առկա են խառը տնտեսակարգեր՝ պլանայինի և շուկայականի տարիմաստ միաձուլվածքի փորձերով, որոնք գոյատևում են և հավակնում առաջընթացի շոշափելի արդյունքների: Հարավային Ամերիկայի մի շարք երկրներում (Պարագվայ, Բոլիվիա, Վենեսուելա, Պերու, Չիլի) օրինակ վերջին տասնամյակների ընթացքում նշյալ բաղադրիչների գերիշխող դերը մշտապես փոփոխվում է: Եվրոպայում սոցիալական (երբեմն՝ սոցիալիստական) բնութագրվող գերակա նպատակները վաղուց շտկումներ են մտցրել շուկայական տնտեսության կարծրատիպերում: Շվեդիան, Նորվեգիան, Դանիան և այլ զարգացած երկրներ անվճար բուժժառայության, անվճար ուսուցման, այլ ծառայությունների արտոնյալ պայմանների արդյունավետ իրացման առումով կարող են այսօր հաջողության պատմությունների դասեր տալ նախկինում սոցիալիստական գաղափարներն անհաջող պատկերացումներով կիրարկած բազմաթիվ երկրների, որոնք այսօր Եվրամիության անդամակցությանն են ձգտում: Ավելին, կան պետություններ, որոնք չեն հերքում ո՛չ պլանային, ո՛չ էլ շուկայական տնտեսության դրական կողմերը և, Չինաստանի օրինակով, հռչակում են «մեկ երկիր - երկու համակարգ» կարգախոսը: Մեր համոզմամբ, չկան և չեն կարող լինել դեղատոմսեր, որոնք իրենց արդյունավետությամբ ընդունելի կլինեն մեծ թվով երկրների համար այն աստիճան, որ աշխարհը դարձյալ տրոհվի երկու տնտեսական և քաղաքական համակարգերի: Փոխարենն իր կենսունակությունն ապացուցեց Չոն Գելբրեյտի կոնվերգենցիայի, ասել է թե՛ միախառնման, փոխներգործության տեսությունը, երբ երկրները փորձում են օգտագործել երկու համակարգերի իրենց համար առավել ընդունելի կողմերը: Մեր կողմից հավելենք, որ մման փորձերն, ի վերջո, պարտադրվող մոդելների փոխարենն, կհանգեցնեն տնտեսության ազգային մոդելների ձևավորման, որոնք թույլ կտան առավելագույն արդյունավետությամբ իրացնել սեփական մրցակցային առավելությունները ներքին և արտաքին շուկաներում: Միաժամանակ, հարկ է նշել, որ ցանկացած տնտեսակարգում առկա են տնտեսական սպառնալիքների տարբեր համախմբեր, որոնք լուրջ խոչընդոտ են ակնկալվող առաջընթացի ճանապարհին: Դրանցից կարևորագույնների թվում են կլանները և մենաշնորհներն իրենց տարբեր դրսևորումներով (մոնոպոլիա, մոնոպսոնիա, դուոպոլիա, օլիգոպոլիա և այլն):

Նախ՝ կարևոր է տարբերակել մենաշնորհը և ընկերության գործունեության ծավալները: Երբեմն միջազգային ընկերությունները կամ վերազգային կորպորացիաները նույնացվում են մենաշնորհների հետ: Ռուսական գրականության մեջ՝ «американские монополии» և «крупные американские компании» հասկացությունները նույնացվում են, երբ խոսվում է, ասենք, FORTUNE 500 ամենամյա հրապարակվող առաջատար ընկերությունների ցուցակի մասին: Ընկերության գործունեության խոշոր ծավալները, բնականաբար, դեռ չեն կարող վկայել շուկայում մենաշնորհային դիրքի մասին, թեև հայտնի է, որ միջազգային խոշոր ընկերություններից General Motors, General Electric, Coca Cola և այլն իրենց կապիտալով գերազանցում են Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի բյուջեները միասին վերցված՝ մի քանի անգամ: Ամեն ինչ կախված է շուկայի մեծությունից և տվյալ շուկայում ընկերության զբաղեցրած դիրքից, տվյալ ապրանքի իրացման ընդհանուր ծավալում ունեցած տեսակարար կշռից: Տնտեսագիտական գրականության մեջ բազմաթիվ անդրադարձեր են եղել մենաշնորհների դասակարգմանը և այդ հասկացության մեկնաբանումներին:

Մենաշնորհը տվյալ շուկայում իրացնող կամ սպառողի (անհատի կամ ընկերության) կողմից զբաղեցրած դիրք և կարգավիճակ է, որի շնորհիվ սահմանափակվում կամ վերանում է տնտեսական մրցակցությունը, դեմայինգային գներով կամ պետական հովանավորչության

տարբեր դրսևորումներով (լիցենզավորում, հարկային տարբերակված պայմաններ, դեմային-գային գներ) անհավասար պայմաններ են առաջանում տնտեսվարման և ապրանքների իրացման համար, ինչպես նաև հնարավորինս տվյալ շուկայում անանցանելի է դառնում այլ արտադրողների (կամ սպառողների) մուտքը: Արդյունքում առավելագույնս բարձրացվում է մենաշնորհային գինը՝ ապահովելով ոչ միայն շահույթ, այլև մենաշնորհային գերշահույթ, օգտվելով տվյալ ապրանքի կամ ծառայության հանդեպ պահանջարկի առաձգականությամբ: Ըստ որում, մենաշնորհի կարելի է հասնել ինչպես առողջ, այնպես էլ անբարեխիղճ մրցակցության արդյունքում.

- ա) ձեռք են բերվում և կիրառվում մրցակիցներին ոչ մատչելի նոր տեխնոլոգիաներ, որոնք կարող են ապահովել ապրանքի կամ ծառայությունների բացառիկությունը,
- բ) նախ՝ առաջարկվում են արհեստականորեն ցածր գներ՝ նվաճելու տվյալ շուկան և դուրս մղելով հնարավոր մրցակիցներին՝ սահմանվում են մենաշնորհային բարձր գներ,
- գ) կազմակերպված հակազովագրային արշավ է ծավալվում բարի համբավ վայելող ընկերությունների դեմ՝ միաժամանակ արդյունավետ գովազդով ներկայացնելով սեփական ապրանքները կամ ծառայությունները,
- դ) տվյալ շուկայում շոշափելի կշիռ ունեցող ընկերությունները համաձայնության են գալիս ազդեցության ոլորտների բաժանման և գների վերաբերյալ՝ առավելագույնի հասցնելով շահույթը և ստանալով գերշահույթ:

Հաշվի առնելով տարբեր ապրանքների և ծառայությունների արտադրության և սպառման առանձնահատկությունները, բնական մենաշնորհը կարելի է բնութագրել որպես բնականորեն (օբյեկտիվորեն) ձևավորված տնտեսաաշխարհագրական պայմաններում պետության կողմից տվյալ ոլորտին շնորհված ժամանակավոր և պայմանական կարգավիճակ: Կախված տվյալ երկրի ընդերքից, բնական հարստություններից, աշխարհագրական դիրքից, տնտեսության զարգացման մակարդակից, տվյալ տնտեսությունում հումքի, էներգակրի այս կամ այն տեսակի կարևորության աստիճանից, ենթակառույցների բացառիկ դերից՝ կարող են սահմանվել հեռահարողակցության, ճանապարհների, տրանսպորտի ձևերի, կոմունալ ծառայությունների և այլ ոլորտների բնական մենաշնորհներ: Մեր համոզմամբ, բնական մենաշնորհի կարգավիճակի սահմանման դեպքում առաջնահերթ պայմանների թվում պետք է նկատի առնվի, թե նման կարգավիճակը որքանով է արդյունավետ՝ տնտեսական հաշվարկների իմաստով և հիմնավորված՝ ազգային անվտանգության տեսանկյունից: Ինչ վերաբերում է Հայաստանում բնական մենաշնորհների կարգավորման՝ այժմ արդեն վերանվանված Հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովին, ապա այն կարող է իրականացնել խիստ սահմանափակ գործառույթներ, իսկ պետության «բնական մենաշնորհ» հասկացությունը կարելի է օգտագործել խիստ վերապահումով և պայմանականորեն, որը մեկնաբանվում է բնական մենաշնորհներ դասվող էներգետիկայի, ջրամատակարարման ոլորտների կառույցների սեփականության, տնօրինման, կառավարման ձևերի վերջին տարիներին տեղի ունեցած արմատական փոփոխություններով (Մեծամորի ատոմակայան, Հրազդանի ՊՇԷԿ, բաշխիչ էլեկտրացանցեր, Ջրմուղ կազմակերպության կարգավիճակի փոփոխություն):

Երբեմն կարելի է հանդիպել տեսակետների առ այն, թե մենաշնորհը կարող է չարիք լինել տնտեսությանը, եթե ի չարս է օգտագործվում կամ էլ կարող է բարիք դառնալ, եթե այն տնօրինում են բարի մարդիկ, որոնք ունեն բարի նպատակներ: Նման տեսակետները կարող են միայն մոլորեցնել մարդկանց և մենաշնորհի վերլուծությունը տնտեսական հարթությունից տեղափոխել փիլիսոփայական, հոգեբանական կամ այլ հարթություն: Մեր համոզմամբ, մենաշնորհն ինքը տնտեսական հասկացություն է և տնտեսական երևույթ, որի հիմքում ընկած են հատակ տնտեսական շահեր՝ նվազագույն ծախսերով առավելագույնի հասցնելու շահույթը: Հետևաբար, մենաշնորհից ակնկալել հանրության համար բարիք, որը կարտացոլի հանրային շահը և կառաջնորդվի հասարակության պահանջների բավարարման հրամայականով, միևնույնն է, ինչ պլանային-ադմինիստրատիվ համակարգի պայմաններում ակնկալել առողջ մրցակցություն և շուկայական տնտեսության ձևավորում: Ինչպես արդարացիորեն նշել է Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Էդուարդ Հեյստինգս Չեմբեռլինը, «... արդյունաբերության միևնույն ոլորտի ձեռնարկատերերի՝ անգամ հաճելի ժամանց անց-

կացնելու համար կազմակերպված հանդիպումներին խոսակցությունը հաճախ ձևավորվում է գնորդներին ի հակառակ կամ ինչ-որ համաձայնություն է ձեռք բերվում գների բարձրացման նպատակով»¹: Ըստ որում, գներով մանկրելու հնարավորությունը խախտում է դասական տեսության կանխադրությունները՝ գնագոյացման գործընթացի անկախությունը, պահանջարկի և առաջարկի հավասարակշռության նույնացումը ռեսուրսների ամենաբարենպաստ կիրառման հետ ու հասարակական բարեկեցության օպտիմալացումը²: Սա է Ջոան Վայլետ Ռոբինսոնի տնտեսական ուսմունքի սկզբունքային տարբերությունը Չեմբերլինի ուսմունքից, որը համարում էր, որ հատկապես մենաշնորհային մրցակցության մեխանիզմը լավագույն կերպով սպասարկում է տնտեսական բարեկեցության շահերը: Մյուս կողմից, տնտեսագիտության դասականներից Ջոն Ստյուարտ Միլի խոսքերով «... անմիջականորեն գները սահմանվում են մրցակցությամբ, որն առաջանում է այն բանից, որ գնորդն աշխատում է գնել էժան, իսկ վաճառողը՝ վաճառել թանկ: Ազատ մրցակցության դեպքում շուկայական գինը համապատասխանում է առաջարկի և պահանջարկի հավասարությանը: Դրան հակառակ, մենաշնորհի դիրք ունեցող ընկերությունը կարող է իր հայեցողությամբ սահմանել ցանկացած բարձր գին, միայն թե այն չզերագանցի այն գնին, որը սպառողը չի կարող կամ չի ցանկանա վճարել. բայց անել այդ չի կարող միայն առաջարկը սահմանափակելով»³: Հետևաբար, նման երևույթը կարելի է հանդուրժել միայն այն դեպքում, երբ այն դասվում է բնական մենաշնորհների շարքին՝ մշտապես դարձնելով պետության կարգավորիչ և վերահսկիչ գործառույթների առարկա:

Այսպիսով, անկախ դասակարգման աստիճանից /մենաշնորհ, օլիգոպոլիս, դոմինանտ, մոնոպոսոնիս/, մենաշնորհները այս կամ այն չափով չարիք են տնտեսության համար, ուստի արդարացի կլինի մենաշնորհացման միտումը դասել տնտեսական սպառնալիքների շարքին: Այն երկրները, որոնք, բացառությամբ բնական մենաշնորհների հիմնավորված գոյության, թույլ են տալիս մենաշնորհացման գործընթաց, չեն կարող հավակնել դասվելու առողջ մրցակցությամբ շուկայական տնտեսությամբ ժողովրդավար երկրների շարքին: Մյուս կողմից, ժողովրդավարացման գործընթացների դանդաղ ընթացքի կամ դրանց ձախողման արդյունքում պարարտ հող է ստեղծվում ոչ այնքան դասական դասակարգման մենաշնորհների տեսակների, որքան մինչկապիտալիստական, ֆեոդալական հասարակարգին բնորոշ կլանների ձևավորման և մրցակցության ձևախեղման համար: Կլանային տնտեսության գոյությունն, իր հերթին, լրջագույն խոչընդոտներ է ստեղծում տնտեսական բարեփոխումների, սոցիալական արդարության, աղքատության կրճատման, հասարակության բեռնացվածության մակարդակի մեղմացման համար: Իրավիճակը Հայաստանում և նման վիճակում հայտնված այդ երկրներում տարբեր է զարգացած արդյունաբերական երկրներից: «Գները չեն արձագանքում պահանջարկին և առաջարկին, արտադրության գործոնները, ձեռնարկատիրական գործունեությունը, ավելի յուրահատուկ են և թույլ են արձագանքում տնտեսական խթանիչներին, եթե առհասարակ արձագանքում են: Շուկայի ոչ կատարյալ լինելը, սոցիալությունը և իռացիոնալությունը համատարած բնույթ են կրում: Դիվերսիֆիկացիայի աստիճանը նշանակալի քիչ է, իսկ մենաշնորհացումը՝ նշանակալի շատ, շարժունությունը բացակայում է կամ բարդացած է, կոմպլիքսնտարությունը ուժեղ է և ամենուր»⁴: Նոբելյան մրցանակի դափնեկիր տնտեսագետ Գունար Մյուրդալի հայեցակարգի համաձայն՝ այդ երկրների բոլոր աղետները պայմանավորված են գլխավորապես հնամենի, հնադարյան ինստիտուտների և հայեցակետերի (մտածելակերպերի) տիրապետությամբ, որոնք թափանցում են սոցիալական, տնտեսական և հոգևոր կյանքի ամբողջ համակարգը: Այդ ամենը ջլատում է տեխնիկատնտեսական արդիականացումը, նվազեցնում է դրա արդյունավետությունը և, հետևաբար, բերում է անցումային և հետամնաց երկրների մակարդակների միջև անջրպետի մեծացմանը:

Արդյունքում արագընթաց տեմպերով տեղի է ունենում արտադրական կարողություն-

¹ Эдвард Чемберлин “Теория монополистической конкуренции (Реориентация теории стоимости),” Москва, “Наука”, 1984, с. 129.

² Джоан Робинсон “Экономическая теория несовершенной конкуренции”, 1933, с. 118.

³ Джон Милль “Основы политической экономии”, Москва, “Прогресс”, 1980, с. 38.

⁴ Gunnar Myrdal, Value in Social Theory. New York: Harper, 1958, p. 97.

ների, սպառնան շուկաների կամայական կենտրոնացում, զարգանում է ձեռներեցության չհարկվող հատվածը՝ ստվերային տնտեսությունը, իսկ երկրի իշխանական վերնախավը սերտաճում է ֆինանսական վերնախավի հետ՝ անխուսափելի դարձնելով մակրոտնտեսական դեֆոլտն ու մրցակցային առավելությունների դիրքերի կորուստը: Այսպիսով՝ կանխատեսելի բնույթ է ստանում սոցիալական և տնտեսական հետընթացը, զգալի վնաս հասցնելով երկրի տնտեսական անվտանգությանը: «Գերմանական հրաշքի» հեղինակ Լյուդվիգ Էրհարդը կարևորել է մենաշնորհային սկզբունքներով հաստատվող գների վտանգը սպառողին, ինչպես նաև անհաջող ներդրումների և տեխնիկական ու տնտեսական առաջընթացի խախտման վտանգները: «Ելնելով դրանից՝ օրենսդիրը պետք է իր խնդիրը համարի շուկայական գործառնությունների ընթացքը խաթարող գործոնների վերացումը, ինչի համար անհրաժեշտ է պահպանել ազատ մրցակցություն հնարավորինս մեծ ծավալով, այն շուկաներում, որտեղ մրցակցությունը չի կարող ամբողջությամբ վերացվել, պետք է արգելել հզոր տնտեսական խմբերի չարաշահումները:

Այս նպատակի համար պետք է հիմնադրել պետական վերահսկողության մարմին, իսկ եթե անհրաժեշտ է նաև շուկայական գործառնությունների ընթացքի վրա ազդեցություն գործելու համար»¹: Մինչ սպառողների շահերի պաշտպանության իմաստով որևէ տնտեսական հիմնավորման ենթակա չէ պետական հովանավորչություն վայելող տնտեսվարողների կողմից ոլորտների մենաշնորհացման գործընթացը, որն, ի վերջո, հանդես է գալիս որպես իրավունքի մենաշնորհի դրսևորում (միակ արտադրողը, միակ ներմուծողը, միակ սպառողը, միակ գնորդը լինելու իրավունքի ձեռքբերմամբ), մեր կողմից սոցիալ-տնտեսական առումով հիմնավորված է ներկայանում պատասխանատվության մենաշնորհացման գործընթացը: Ժողովրդավարության զարգացումը պետք է տարբերել մի կառույցի փոխարեն միևնույն գործառույթն իրականացնող մի քանի արհեստական մարմինների ձևավորման գործընթացից: Որպես օրինակ կարելի է մատնանշել Դեղագործական Փորձագիտական կենտրոնին որպես այլընտրանք այլ կառույցի կամ կառույցների ձևավորման փորձը, որը ձևակերպվել էր ՀՀ Օրենքի նախագծի կարգավիճակով՝ ՀՀ Ազգային ժողովի ընթերցմանը²: Վերացարկումը կատարվել էր գործառույթների բնույթից, և եթե մտովի փորձենք պատկերացնել, թե նույն երկրում քանի կառույց կարող է պատասխանատվություն կրել ներմուծվող կամ արտադրվող դեղերի որակի և առողջությանը սպառնացող վտանգի համար, ապա պարզ կդառնա այն իրավիճակը, որ կարող է տիրել երկրում պատասխանատվության նման «փոխանցումների» և պատասխանատուի անվերջ փնտրտուքի պայմաններում:

Մրցակցությունը կարելի է բնորոշել որպես անարգել մուտքի հնարավորություն ընձեռող շուկայում իրար հետ գնային և այլ³ համաձայնության չեկած երկու և ավելի տնտեսվարողների (ձեռներեցների կամ ընկերությունների) կողմից ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման ասպարեզներում շարունակական բնույթ կրող տնտեսական պայքար՝ նոր տեխնոլոգիաների և արտադրության, բաշխման, փոխանակման և իրացման կազմակերպման նոր ձևերի կիրառմամբ ապրանքների և ծառայությունների մրցունակության բարելավման (որակը բարձրացնելու, ինքնարժեքը, հետևաբար՝ գինը նվազեցնելու) շնորհիվ և ավելի մեծ թվով սպառողներ ձեռք բերելու և շահույթները բազմապատկելու նպատակով:

Ժամանակակից տնտեսագիտության դասական Մայքլ Պորտերի բնութագրմամբ, «...մրցակցության կարգավորումը համապատասխան քաղաքականություն վարելու միջոցով, այնպիսին, ինչպիսին է պետական մենաշնորհի պահպանումը, ճյուղի մեջ ներդրումների վերահսկողությունը կամ գների ֆիքսումը բերում են երկու էական բացասական արդյունքների: Սակայն ապակարգավորումը և սեփականաշնորհումը իրենք իրենցով չեն բերում

¹ Людвиг Эрхард, “Благосостояние для всех”, Москва, “Начала-пресс”, 1991, с. 237.

² Հայաստանի Հանրապետության Օրենքը դեղերի մասին:

³ Գներից բացի տնտեսվարողները կարող են պայմանավորվել կրճատելու ապրանքների և ծառայությունների քանակը և արհեստական պակասորդ ստեղծել, ինչպես նաև մշակել և իրականացնել միասնական տնտեսական քաղաքականություն միմյանց միջև նախապես բաժանված ազդեցության ոլորտներում և տարածքներում, սահմանափակել շուկայի մուտքն այլ ձեռներեցների համար, խոչընդոտներ հարուցել մրցակիցներին՝ հումքի ստացման և օգտագործման, դրա ներկրման համար, ձեռք բերել ապրանքների ներմուծման բացառիկ իրավունք և այլն:

հաջողության առանց խիստ ներքին մրցակցության, իսկ դա պահանջում է ուժեղ և հետևողական մենաշնորհային քաղաքականության կիրառում»¹: Թեև ասվածը, լինելով կարևոր հիմնադրույթներից մեկը ազգային մրցակցային առավելությունների տեսության, անմիջական շարունակությունն է Ադամ Սմիթի բացարձակ առավելությունների և Դավիդ Ռիկարդոյի հարաբերական առավելությունների տեսությունների, միաժամանակ ուղղակիորեն առնչվում է նաև մարքսիզմին: Իր ժամանակին Կ. Մարքսը տնտեսագիտորեն հիմնավորեց, թե ինչպես կապիտալների ազատ մրցակցության արդյունքում նկատվում է տնտեսական գործունեության ընթացքում օգտագործվող նյութական միջոցների կենտրոնացման աճ և ի վերջո գերիշխող մենաշնորհների ձևավորմամբ հանգեցնում մրցակցության կանոնների խախտման: Մյուս կողմից, ըստ Մարքսի, ազատ շուկայի պահպանումը հիմնավորում է իրենց հայեցողությամբ շուկայում առանձին անձանց գործունեության պետական սահմանափակումը²:

Կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ արդի տնտեսագիտական գրականության մեջ ավելի հաճախ անդրադարձ է արվում ոչ այնքան «ազատ մրցակցություն» հասկացությանը, որքան «արդար մրցակցությանը» և դրա նախապայմաններին: Արդար չի կարող լինել մրցակցությունն այն պարագայում, երբ ներմուծվող միևնույն ապրանքի համար պետական հովանավորչություն չվայելող ընկերությունները ստիպված են վճարել գրեթե կրկնակի ավելի մաքսատուրք³: Արդար չի կարող լինել մրցակցությունն, ասենք, շինարարական կազմակերպությունների միջև, երբ պետական նշանակության ծրագրերի մրցույթների հաղթող են անընդհատ ճանաչվում միևնույն ընկերությունները, որոնք, նախ, արհեստականորեն ցածր գներ են առաջարկում, ապա «չնախատեսված» ծախսերի անվան տակ կրկնապատկում ծրագրված շահույթները՝ դրանցից բաժին հանելով նաև իրենց հովանավորողներին: Անարդար մրցակցության օրինակ է նաև «դեմպինգը», երբ ապրանքները և ծառայությունները սպառողին մատուցվում են արհեստականորեն ցածր, հաճախ անգամ ինքնարժեքից էլ անտրամաբանականորեն ցածր գներով՝ տվյալ շուկան գրավելու և մրցակիցներին սնանկացնելու նպատակով: Այդ ամենին բնականաբար հետևում է արդեն մենաշնորհած շուկայում գների աստիճանական բարձրացում, որն էլ ապահովում է հայտնի մենաշնորհային գերշահույթի ստացումը: Մեր երկրում փորձելով շրջանցել հարկային պարտավորությունների կատարումը՝ հաճախ ստանում են նաև ստվերային մենաշնորհային գերշահույթ: Սակայն ճիշտ չէ եզրակացնել, թե նման երևույթը բնորոշ է միայն անցումային փուլում գտնվող երկրներին: Հակառակ զարգացած երկրների կողմից շարունակաբար արվող ազատ ու արդար մրցակցության քարոզչությանը՝ իրենք՝ զարգացած երկրներն են կոպտորեն խախտում շուկայի օրենքները և համաշխարհային շուկային պարտադրում խաղի սեփական կանոնները: Դեմպինգային ցածր գներով ապրանքներ են առաքվում անգամ այնպիսի երկրներ, որոնք տվյալ ապրանքի արտադրությունում ունեն բացարձակ մրցունակություն⁴: Միջազգային փորձից ուսանելի է, մասնավորապես, ԱՄՆ-ում հակամենաշնորհային օրենսդրության մշակման և կիրառման համառոտ վերլուծությունը: Այն վկայում է, որ դեռևս 1887թ. մենաշնորհների մասին ԱՄՆ առաջին դաշնային օրենսդրությամբ ստեղծվել է երկաթուղին կարգավորող Միջնահանգային առևտրային հանձնաժողովը: 1890թ. Շերմանի հակամենաշնորհային հայտնի օրենքն ընդունվեց Կոնգրեսի կողմից՝ արգելելու մենաշնորհներն ու դրա հնարավոր տարբերակները՝ կարգավորելու նահանգների միջև և արտասահմանյան երկրների հետ առևտուրը: 1895թ. ընդունվեց ԱՄՆ կառավարության որոշումն ընդդեմ Ի.ՍԻ.Նայթ ընկերության՝ կիրարկելով Շերմանի հակամենաշնորհ-

¹ Michael E. Porter, *Competitive Strategy: Techniques for Analyzing Industries and Competitors*, The Free Press, New York, 1980, p. 54.

² Маркс К., «Капитал», тт. 1,2,3, Москва, 1980, с. 237.

³ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 12 հունվարի 2006թ., էջ 1-2:

⁴ ԱՀԿ անդամակցությունից ի վեր որոշակի հետընթաց է արձանագրում անգամ իր տնտեսության սրընթաց զարգացմամբ համաշխարհային հանրության չխամրող ուշադրությունը վայելող Չինաստանը: Վիճակագրությունը վկայում է, որ ԱՀԿ անդամակցությունից հետո ոչ թե Չինաստանի գյուղատնտեսական ապրանքների արտահանումն է ավելացել դեպի ԱՄՆ, այլ ԱՄՆ կառավարության կողմից սուբսիդավորվող ամերիկյան ապրանքների հոսքն է ավելացել դեպի Չինաստան: Ըստ որում, այս գործընթացն ունի արագընթաց աճի միտում (Secretary of Agriculture, Ann M. Veneman, September 17, 2001): 2003թ. ԱՄՆ գյուղատնտեսական ապրանքների արտահանման ծավալները Չինաստան կազմել են \$28 մլրդ ԱՄՆ դոլար, որը կրկնակի գերազանցում է 1999թ. արտահանման ծավալները: 2004թ. այս ցուցանիշն աճել է ավելի քան մեկ քառորդով, իսկ 2005թ. այդ ցուցանիշը հասել է \$40 մլրդ ԱՄՆ դոլարի:

հային օրենքը: 1903թ. ստեղծվեց ԱՄՆ-ի կառավարության Արդարադատության նախարարության հակամենաշնորհային վարչությունը: 1905թ.«Սվիֆթ և ընկերություն»-ը կիրարկեց Շերմանի հակամենաշնորհային օրենքն ընդդեմ ԱՄՆ կառավարության: 1914թ. ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց Զլեյթընի հակամենաշնորհային օրենքը: 1914թ. ստեղծվեց ԱՄՆ-ի Դաշնային առևտրի հանձնաժողովը: 1936թ. ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց Ռոբինսոն-Փաթմանի օրենքը (**Robinson-Patman Act**), որը կոչված է պաշտպանելու փոքր ձեռնարկատերերի շահերն ընդդեմ խանութների մեծ ցանցերի խտրական գործողությունների: 1961թ. Ջեներալ Էլեկտրիկ (General Electric), Ուեստինգհաուս (Westinghouse) և այլ առաջատար էլեկտրական սարքավորումներ արտադրող ընկերությունների ղեկավարները մեղավոր ճանաչվեցին միասնական գների համաձայնեցման սխեմայի կիրառման հարցում: 1982թ. Ըմերիքըն թելեֆոն ընդ թելեգրաֆ (**American Telephone and Telegraph – AT&T**) ընկերությունն առանձնացավ տեղական 22 հեռախոսային գործող ընկերություններից: 2000թ. Մայքրոսոֆտ (Microsoft) ընկերությունը ինտերնետային սպասարկող համակարգը՝ (browser) իր հիմնարար ծրագրային համակարգին (operating system) կապելու համար մենաշնորհային գործունեության մեջ մեղավոր ճանաչվեց: Հատկանշական է, որ եթե ԱՄՆ-ի օրենքներն արգելում են մենաշնորհների ձևավորումն անգամ երկրի սահմաններից դուրս, մյուս երկրներում ավելի մեծ ուշադրություն է դարձվում ներքին մենաշնորհների դեմ պայքարին: Եվրամիության անդամ երկրները և ԱՄՆ-ը հսկայական գումարներ են ծախսում գյուղատնտեսության սուբսիդավորման, ասել է թե՛ գյուղմթերքների մրցունակության արհեստական բարձրացման վրա: WTO հաշվարկների սպառողները և կառավարությունները զարգացած երկրներում վճարում են տարեկան 350 մլրդ ԱՄՆ դոլար գյուղատնտեսության սուբսիդավորման համար, այլ խոսքով այդ ծախսերը բավարար են, որ 41 մլն կովեր տարին մեկ և կես անգամ բիզնես կարգով ինքնաթիռով պտույտ կատարեն աշխարհի շուրջը: Մեկ այլ հաշվարկով մեկ կովի վրա ԵՄ կողմից կատարվող ծախսերն ավելին են, քան Ռուսաստանի գյուղատնտեսությունում մեկ շնչին ընկնող եկամուտները¹:

Ի վերջո, կարևոր է տարբերակել պետության կողմից ճանաչված և de jure գործող բնական մենաշնորհները փաստացի de facto ձևավորված մենաշնորհներից, դուօպոլիաներից, օլիգոպոլիաներից, մոնոպոստիաներից, որոնք իրականում վերածվում են կլանների և համարում ոչ ֆորմալ, ասել է թե՛ ապօրինի, չհարկվող արտոնյալ կառույցների շարքերը: Դրան նպաստում է շատ դեպքերում այնպիսի ոլորտների de facto մենաշնորհումը, ուր ապրանքների և ծառայությունների պահանջարկը, հետևաբար նաև՝ գինը առաձգական չեն: Մյուս կողմից, ներքին շուկայի սահմանափակ բնույթը, սպառողի մեջ իր իրավունքների համար պայքարում անգործության մտայնության ձևավորումը, հասարակության մեջ գերիշխող անպատժելիության միջավայրը լրացուցիչ «բարենպաստ» գործոններ են դառնում մենաշնորհների համար²: Ինչպես վկայում է անցման փուլը հաջողությամբ հաղթահարած երկրների փորձը, մենաշնորհների դեմ պայքարի և առողջ մրցակցության ծավալման համար լավագույն միջոցը ոչ միայն և ոչ այնքան օրենքով սահմանված դրույթներն են, որքան դրանց չկատարման դեպքում պատժամիջոցների կիրառումը: Պատժամիջոց հասկացությունը կարող է ներառել ինչպես նյութական պատիժը՝ տնտեսապես աննպատակահարմար դարձնելով օրենքի շրջանցումը, այնպես էլ առանձնապես մեծ չափերի հասնող չարաշահումների, շարունակաբար պետական բյուջեին և տնտեսությանը հասցված խոշոր վնասների համար քրեական պատժամիջոցների կիրառումը: Տնտեսության և հասարակության մեջ վստահությունը վերականգնելու, ներդրումների նոր հոսքեր ապահովելու և դրանք նպատակին օգտագործելու համար անհրաժեշտ է նախ և առաջ վերականգնել իրավունքի և պատասխանատվության միջև ակնկալվող հավասարակշռությունը:

¹ http://www.wto.org/english/res_e/doload_e/10b_e.pdf

² Stigler, George J., “The Economist Plays with Blocs,” *American Economic Review, Papers and Proceedings*, May, 1954, pp. 8–14.

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մեծ Բրիտանիայի հարկային համակարգը թերևս կարելի է համարել աշխարհի հնագույն շուկայավարման հարկային համակարգերից մեկը: Մեծ Բրիտանիայում գործող հարկերը գանձվում են դեպի Կենտրոնական բյուջե և տեղական բյուջեներ: Կենտրոնական բյուջե գանձվող ուղղակի հարկերից են ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկը, շահութահարկը (կորպորատիվ հարկ), նավթի և նավթամթերքների արտադրությունից գանձվող հարկը, ժառանգության հարկը: Իսկ անուղղակի հարկերից առավել մեծ մասնաբաժին են ապահովում ԱԱՀ-ը, ակցիզային հարկը և պետական տուրքը: Տեղական բյուջե գանձվող հարկերից է համարվում գույքահարկը¹:

Ֆիզիկական անձանցից հարկման բրիտանական մոդելը կախված է հարկ վճարողների ռեզիդենտության և ոչ ռեզիդենտության սկզբունքներից և սովորական ռեզիդենտից (ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, ով ապրել է Մեծ Բրիտանիայում առնվազն 3 տարի²): Փորձենք աղյուսակ 1-ի միջոցով ներկայացնել Մեծ Բրիտանիայում եկամտահարկի հաշվառման առանձնահատկությունները, դրա առավելություններն ու թերությունները:

Աղյուսակ 1

Ֆիզիկական անձանց կողմից եկամտահարկի հաշվառման մեխանիզմը³

1. Եկամտահարկի վճարման պարտականություն	Մեծ Բրիտանիայում հարկման է ենթակա
<i>ռեզիդենտ</i>	բոլոր եկամուտները (ներառյալ արտերկրի)
<i>ռեզիդենտ՝ բնակության վայրի կարգավիճակի բացակայության դեպքում</i>	եկամուտը Մեծ Բրիտանիայում (եկամուտները Իռլանդիայում) արտերկրյա ներդրումների փոխանցումներ և արտերկրում վարձու աշխատանքից եկամուտ
<i>ոչ ռեզիդենտ</i>	Մեծ Բրիտանիայի աղբյուրներից եկամուտներ՝ բացառությամբ դիվիդենդների և տոկոսների
Կապիտալի աճից հարկման պարտականություն	Մեծ Բրիտանիայում հարկման է ենթակա
<i>ռեզիդենտ կամ սովորական ռեզիդենտ</i>	կապիտալի ամբողջ աճը (ներառյալ՝ արտերկրյա)
<i>ռեզիդենտ կամ սովորական ռեզիդենտ և բնակության վայրի կարգավիճակի բացակայություն</i>	կապիտալի ամբողջ աճը Մեծ Բրիտանիայում արտերկրյա կապիտալի աճից փոխանցումներ
<i>ոչ ռեզիդենտ</i>	բացակայում է (սահմանափակ բացառությամբ)
3. Ժառանգությունից հարկման պարտականություն	
Հարկի տվյալ տեսակը գանձվում է ժառանգությունից և նվիրատվությունից ստացված արժեքից՝ 7 տարվա ընթացքում ստեղծված: Հարկը տարածվում է ժառանգության և նվիրատվության այն մասի վրա, որը գերազանցում է հաստատված չհարկվող արժեքը (2008/2009 ֆինանսական տարում կազմում էր 312.000 ֆունտ սթեռլինգ և հարկվում է ըստ միասնական դրույքի՝ հավասար 40%-ին): Ժառանգությունից հարկի վճարման պարտականությունը կախված է փոխանցող անձի դմիցիլից կամ ունեցվածքի գտնվելու վայրից:	
Մեծ Բրիտանիայում բնակության վայրի բացակայություն	ամբողջ ունեցվածքը (ներառյալ՝ արտերկրյա)
բնակության վայրի կարգավիճակի բացակայության դեպքում	ունեցվածք՝ տեղակայված Մեծ Բրիտանիայում

Մեծ Բրիտանիայում յուրաքանչյուր հարկ վճարողի համար գործում է չհարկվող հարկման նվազագույն շեմ հասկացությունը: Այսպես, վերջինս. ըստ տարբեր հարկ վճարողի խմբերի, ունի հետևյալ զարգացման միտումը (աղյուսակ 2):

¹ Налоговые системы стран дальнего и ближнего зарубежья: /Мировой опыт/, Вестник ВХС, РБ, 2005, №9, с. 80.
² Juhani Kesti, LL.M. European Tax Handbook 1999, p. 599-601.
³ www.rustradeuk.org/ru/law/art-taxes/files/taxes.doc

Տարբեր կարգի անձանց համար չհարկվող հարկային միմիմունդ ¹

Անձանց կարգը	Չհարկվող միմիմունդ	
	2007/2008 ֆինանսական տարի	2008/2009 ֆինանսական տարի
1 շնչի հաշվով չհարկվող բազային միմիմունդ	5.225	5.435
65-74 տարեկան անձանց համար	7.550	9.030
75 տարեկան և ավել	7.690	9.180
ամուսնական զույգ (ծնունդը մինչև 6.04.35)	6.285	6.535
ամուսնական զույգ (75 տարեկան և ավելի)	6.365	6.625
այլ ամուսնական զույգեր	2.440	2.540
կույրեր	1.730	1.800

Օտարերկրյա ընկերությունների մասնաճյուղերը համարվում են կորպորատիվ հարկ վճարողներ: Սովորաբար, վերջիններիս կորպորատիվ շահութահարկի դրույքաչափը կազմում է 28%, որոշ դեպքերում նվազեցվում է մինչև 21%²:

2006-2007թթ. ՓՄՁ-ների համար սկսել է գործել միասնական կորպորատիվ հարկը, որի դրույքաչափը կազմել է 19% ֆունտ սթեռլինգ: Բացի այդ, կորպորատիվ հարկի դրույքաչափը 2008/2009թթ.-ից գործում է շահութահարկի գանձման պրոգրեսիվ սանդղակը³.

- մինչև 300 հազար ֆունտ սթեռլինգից կազմել է 21%
- 300 հազար ֆունտ սթեռլինգից ավել և մինչև 1.500 հազար ֆունտ սթեռլինգ՝ 21% ավելի քան 1.500 հազար ֆունտ սթեռլինգ՝ 28%:

Արտահանման և ներմուծման գործարքների դեպքում մատակարարվող ապրանքների ու ծառայությունների տեսակներից կախված՝ հարկի դրույքները էականորեն տարբերվում են: Օրինակ, այդ առումով գործում է հարկային դրույքաչափերի 3 կարգ ⁴.

- ստանդարտ դրույք՝ 17.5%,
- նվազեցված դրույք՝ 5% (կիրառվում է վառելանյութի և էլեկտրաէներգիայի նկատմամբ՝ տնային տնտեսությունում և բարեգործական հաստատություններում կիրառվող և այլն)
- «զիտական դրույք»՝ 0% (կիրառվում է բացառապես սննդի, մանկական հագուստի և կոշիկի, գրքերի և թերթերի, նոր բնակելի հաստատությունների և տների վաճառքի՝ բարեգործական նպատակներով օգտագործվող, հասարակական տրանսպորտի ծառայությունների և այլնի նկատմամբ):

Ակցիզային հավաքները, ըստ առանձին ապրանքների, էականորեն տարբերվում են ծավալով⁵: Վառելանյութի և յուղերի նկատմամբ կիրառվում են ակցիզային հավաքների հետևյալ դրույքները.

Ակցիզային հարկի հաշվառման գնահատականը 2006-2009թթ. ⁶

	2006-2007թթ. դրույք	01.10.2007 դրույք	01.04.2008 դրույք	01.04.2009 դրույք
Ոչ էթիլացված բենզին և բենզին՝ գերցածր հումքի պարունակությամբ	48.35	58.35	50.35	-
Ոչ էթիլացված բենզին՝ ամբողջապես կապարագրված	51.52	53.65	50.35 01.10.2008 ից՝ 52.35	54.19
Վառելիքի ծանր տեսակներ, որոնք ավանդական դիզելային վառելիք չեն:	54.68	56.94	50.35 01.10.08-ից՝ 52.35	54.19

¹ www.rustradeuk.org/ru/law/art-taxes/files/taxes.doc
² Juhani Kesti, LL.M. European Tax Handbook 1999, p.589-591.
³ www.rustradeuk.org/ru/law/art-taxes/files/taxes.doc
⁴ http://www.langinfo.ru/index.php?sect_id=1408
⁵ Juhani Kesti, LL.M. European Tax Handbook 1999, p.594-594.
⁶ www.rustradeuk.org/ru/law/art-taxes/files/taxes.doc

	2006-2007թթ. դրույք	01.10.2007թ.-ից դրույք	01.10.2008թ.-ից դրույք	01.04.2009թ.-ից դրույք
Թեթև տեսակի վառելիք, որը ներառում է էթիլացված բենզին, բացառությամբ ոչ էթիլացված բենզինի և ավիաբենզինի, թեթև յուղերի	57.68	60.07	62.07	-
Ավիացիոն բենզին	28.84	30.03	31.03	-
Վառելիքի թեթև տեսակներ, որոնք մատակարարում են երաշխավորված անձանց վառարաններում վառելիքի օգտագործման համար	7.29	9.29	9.66	10.00
Դիզելային վառելիք՝ գերցածր ծծմբի պարունակությամբ	48.35	50.35	52.35	54.19
Գազ և դիզելային վառելիք՝ գերցածր ծծմբի պարունակությամբ	7.69	9.69	10.07	10.42
Մագուր	7.29	9.29	9.66	10.00
Բիոդիզելային վառելիք, որն օգտագործվում է ճանապարհային վառելիքի տեսքով	28.35	30.35	32.35	34.19
Բիոդիզելային վառելիք, որն օգտագործվում է ճանապարհային վառելիքի տեսքով, որն օգտագործվում է այլ նպատակներով	3.13	3.13	3.13	3.13
Բնական գազ՝ ներառյալ բիոգազ	10.81	13.70	16.60	19.26
Գազ, որն օգտագործվում է ճանապարհային վառելիքի տեսքով՝ բացառությամբ բնական գազի	12.21	16.49	20.77	24.82
Կերոսին, որն օգտագործվում է հարթաճանապարհային նպատակներով կամ այլ հատուկ տրանսպորտային միջոցների համար շարժիչի վառելիքի տեսքով	7.69	9.69	10.07	10.42

Աղյուսակի միջոցով ներկայացնենք սպիրտային խմիչքների՝ գարեջուր, գինի և այլ ալկոհոլային խմիչքների ակցիզները՝ կախված նրանցում պարունակվող սպիրտի ծավալից կամ խմիչքի թնդությունից¹.

Աղյուսակ 5

Սպիրտային խմիչքների ակցիզային հարկի դրույքները²

	26.03.2007-ից կիրառվող դրույքներ	17.03.2008-ից կիրառվող դրույքներ
Սպիրտային խմիչքներ (ալկոհոլ չպարունակող)	19.56	21.35
Գինի՝ 22%-ից ավել ալկոհոլ պարունակող	19.56	21.35
Գինի և արհեստական գինի՝ 1.2-4% թնդությամբ	54.85	59.87
Գինի և արհեստական գինի՝ 4.0-5.5% թնդությամբ	75.42	82.32
Գինի և արհեստական գինի՝ 5.5-15% թնդությամբ	177.99	194.28
Գինի և արհեստական գինի՝ 15-22% թնդությամբ	237.31	259.02
Փրփրուն գինի և արհեստական գինի՝ 5.5-8.5% թնդությամբ	172.33	188.10
Փրփրուն գինի և արհեստական գինի՝ 8.5-15% թնդությամբ	227.99	248.85
Խնձորի գինի՝ 1.2-7.5% թնդությամբ	26.48	28.90
Խնձորի գինի՝ 7.5-8.5% թնդությամբ	39.73	43.37
Գազավորված խնձորի գինի՝ 1.2-5.5% թնդությամբ	26.48	28.90
Գազավորված խնձորի գինի՝ 5.5-8.5% թնդությամբ	172.33	188.10
Գարեջուր	13.71՝ յուրաքանչյուր 1% թնդության համար	14.96՝ յուրաքանչյուր 1% թնդության համար

¹ www.rustradeuk.org/ru/law/art-taxes/files/taxes.doc

² www.rustradeuk.org/ru/law/art-taxes/files/taxes.doc

Կապիտալի գործառնություններից գանձվող հարկը ձևավորվում է կապիտալի զուտ աճից, մասնավորապես ֆիզիկական անձանց կողմից ստացվող հարկային տարում (2008-2009 ֆինանսական տարում նվազագույն շեմային ծավալը ֆիզիկական անձանց համար 2008թ. կազմել է 9.600 ֆունտ սթեռլինգ, 2009թ.՝ 4.800 ֆունտ սթեռլինգ):

Ֆիզիկական անձի նկատմամբ հարկը գանձվում է ըստ աճողական դրույքի՝ կախված անձի եկամտից:

Ժառանգությունից հարկը գանձվում է ստացվող ժառանգության և նվիրատվության արժեքից՝ 7 տարվա ընթացքում ստեղծված, ում ունեցվածքը ժառանգվում է: Հարկը տարածվում է ժառանգության և նվիրատվության արժեքի այն մասի վրա, որը գերազանցում է հաստատված չհարկվող շեմը և գանձվում է միասնական դրույքով՝ 40% ծավալով: 2008-2009թթ. չհարկվող նվազագույն շեմ է համարվում 1-312.000 ֆունտ սթեռլինգը, 2009-2010թթ.՝ 325 հազար ֆունտ սթեռլինգը:

Ժառանգության հարկման օբյեկտներից չեն համարվում ամուսնական զույգերի միջև փոխանցվող ունեցվածքը, նվերները և իրերը՝ բրիտանական բարեգործական հասարակության կողմից, հիմնական քաղաքական կուսակցությունների կողմից թողնված:

Մինչև 2003թ. դեկտեմբերի 1-ը Մեծ Բրիտանիայում գործել են զինանշանի օգտագործման դիմաց գանձվող տուրքերը, որը կիրառվում էր Մեծ Բրիտանիայի տարածքում հողատարածքների օգտագործման համար պայմանագրի փաստաթղթերի ձևակերպման ժամանակ և շինարարության ժամանակ: 2003թ.-ից զինանշանի օգտագործման դիմաց գանձվող տուրքերին փոխարինեցին զինանշանի օգտագործման դիմաց գանձվող տուրքերը և հողի հարկը: Այլ կերպ ասած, այն պայմանագրի հարկ է, այլ ոչ թե փաստաթղթի:

Փորձենք ներկայացնել պայմանագրային հարկի հաշվառման մեխանիզմը.

Աղյուսակ 6

Հողի հարկի դրույքաչափի և զինանշանի օգտագործման դիմաց գանձվող տուրքերը ¹

Հողի հարկի դրույքաչափի և զինանշանի օգտագործման դիմաց գանձվող տուրքերը	«Անկումային տարածքում» հողատարածքներ		Այլ հողատարածքներ	
	ռեզիդենտային	ոչ ռեզիդենտային	ռեզիդենտային	ոչ ռեզիդենտային
0%	0-150	0-150	0-125	0-150
1%	151-500	151-500	125-250	151-500
3%	251-500	251-500	251-500	251-500
4%	500-ից ավել	500-ից ավել	500-ից բարձր	500-ից ավել

Մեծ Բրիտանիայում հարկման են ենթարկվում տարբեր տեսակի տոտալիզատորները, խաղատները, բինգո-լոտո և ատրակցիոնները: Դրանց դրույքները տատանվում են՝ կախված կոնկրետ խաղի ազարտությունից և ռիսկայնությունից: 2001 թվականից ներմուծվել է հարկման նոր դրույք՝ 15% չափով բուքմեյքերների շահույթից՝ փոխարինելով նախկինում գործող տոտալիզատորների հավաքներին՝ 6.75%:

Շրջակա միջավայրի աղտոտման հարկը 01.04.2008թ.-ից կմեծանա յուրաքանչյուր տարի մինչև 2011թ.-ը 8 ֆունտ սթեռլինգով՝ 1 տոննա թափոնների համար:

2001թ.-ի ապրիլից ներմուծվել է նոր հարկատեսակ՝ հիմնված օդային ուղևորների կարգերի վրա: Դրա հետ մեկտեղ, տվյալ հավաքի հաստատուն չափը կազմում է 20 ֆունտ սթեռլինգ՝ ԵՄ-ի տարածքում չվերթներ իրականացնելու դեպքում և 80 ֆունտ սթեռլինգ մնացած այլ ուղղություններով, իսկ նվազագույն դրույքը՝ համապատասխանաբար 10 և 40 ֆունտ ստերլինգ: Նվազագույն դրույքը կիրառվում է այն դեպքում, երբ ուղևորներն օգտվում են ուղևորական չվերթի ամենացածր կարգից: Ստորև ներկայացված են ԵՄ երկրներում հարկազանձման օրենսդրական կարգավորման մեխանիզմները (աղյուսակ 7):

¹ www.rustradeuk.org/ru/law/art-taxes/files/taxes.doc

ԵՄ երկրներում հարկազանձման օրենսդրական կարգավորման մեխանիզմներն իրականացվում են հետևյալ կարգով.¹

Երկիր	Իրավաբանական անձանց նվիրատվություններ	Ֆիզիկական անձանց նվիրատվություններ
Ավստրիա	<10% հարկվող եկամտից	-
Բելգիա	>1000 բելգիական ֆրանկ <5% հարկվող եկամտից <20.000.000 բելգիական ֆրանկ	-
Մեծ Բրիտանիա	<ul style="list-style-type: none"> «նվիրատվությունները» համարվում են չհարկվող նվիրատվություն, եթե յուրաքանչյուր >250 ֆունտ սթեռլինգից «Օգնության ցուցաբերական պարտավորության ընդունման պայմանագիր», ոչ մի սահմանափակում 	-
Գերմանիա	<ul style="list-style-type: none"> <5% զուտ եկամտից կամ <0.2% տարեկան շրջանառությունից <10% համախառն եկամտից՝ մշակութային, բարեգործական և գիտական կազմակերպություններում կատարված նվիրատվությունների հաշվին: <p>Նշված սահմանները գերազանցող նվիրատվությունների գումարները կարող են տեղափոխվել հաջորդ ֆինանսական տարի:</p>	-
Հունաստան	Ոչ մի սահմանափակում	Ոչ մի սահմանափակում
Գանիա	>500 դանիական կրոն <15% հարկվող եկամտից կամ <15000 կրոն գիտական հետազոտություն իրականացնող կազմակերպությունների համար: Վերին սահմանը սահմանված չէ:	>500 դանիական կրոն <15% հարկվող եկամտից կամ <15000 կրոն
Իռլանդիա	Հարկային արտոնությունների գումարը կախված է այն կազմակերպությունների գործունեության մասշտաբից, որոնք ստանում են 100-ից մինչև 100000 իռլանդական ֆունտի նվիրատվություն:	Հարկային արտոնությունների գումարը կախված է այն կազմակերպությունների գործունեության մասշտաբից, որոնք ստանում են 100-ից մինչև 100000 իռլանդական ֆունտի նվիրատվություն:
Իսպանիա	<10% հարկվող եկամտից կամ 0.1% շրջանառությունից	Սահմանված է հարկային 20% զեղչ նվիրատվությունների գումարից հարկվող եկամտի 30%-ի սահմաններում:
Իտալիա	<ul style="list-style-type: none"> <2% հարկվող եկամտից <2% հարկվող եկամտից «ONLUS» կարգավիճակ ունեցող կազմակերպություններին կատարված նվիրատվությունների հաշվին՝ 100 մլն լիրի սահմաններում 	<ul style="list-style-type: none"> <2% հարկվող եկամտից «ONLUS» կարգավիճակ ունեցող կազմակերպություններին կատարված նվիրատվությունների գումարի 50%՝ 2 մլն լիրի սահմաններում
Լյուքսեմբուրգ	>5000 լյուքսեմբուրգյան ֆրանկ <10% հարկվող եկամտից և <20 մլն լյուքսեմբուրգյան ֆրանկ	>5000 լյուքսեմբուրգյան ֆրանկ <10% հարկվող եկամտից և <20 մլն լյուքսեմբուրգյան ֆրանկ
Հոլանդիա	>500 գուլդեն <6% հարկվող եկամտից ենթակա է նվազեցման հարկվող եկամտից	>120 գուլդեն կամ համախառն եկամտի 1% <10% համախառն եկամտից ենթակա է նվազեցման հարկվող եկամտից
Պորտուգալիա	Հարկվող եկամտից նվազեցվում են նվիրատվությունների 120%-ից մինչև 0.5% շրջանառությունից: Նվիրատվությունները, որոնք գերազանցում են շրջանառության 0.5%-ը, նվազեցվում են 50%-ի չափով:	Հարկվող եկամտից նվազեցվում են նվիրատվությունների 130%-ից մինչև հարկվող եկամտի 1.5%-ը:
Ֆինլանդիա	<ul style="list-style-type: none"> Հարկվող եկամտից նվազեցվում են ֆիննական մշակույթի ֆոնդին կատարվող նվիրատվությունները, եթե դրանք գերազանցում են 5000 ֆիննական մարկը, ընդ որում վերին սահմանը հաստատված չէ: Հարկվող եկամտից նվազեցվում են գիտական և մշակութային նպատակներով կատարված նվիրատվությունները, եթե դրանք >5000 ֆիննական մարկից, բայց <150000 մարկից: 	Հարկային արտոնություն սահմանված չէ:

¹ http://old.aeplac.eu/pdf/Annual/AET_2007.pdf

Երկիր	Իրավաբանական անձանց նվիրատվություններ	Ֆիզիկական անձանց նվիրատվություններ
Ֆրանսիա	<ul style="list-style-type: none"> Հարկվող եկամտի գումարից կարող է նվազեցվել տարեկան շրջանառության մինչև 0.325%-ը «համարային շահերից գործող» կազմակերպություններ կատարված նվիրատվությունների հաշվին: Հարկվող եկամտի գումարից կարող է նվազեցվել տարեկան շրջանառության մինչև 0.225%-ը այլ կազմակերպություններին տրված նվիրատվությունների հաշվին: 	<p><6% հարկվող եկամտից, նվիրատվությունների 50%-ը կարող է նվազեցվել եկամտահարկից:</p> <p><6% հարկվող եկամտից, հումանիտար կազմակերպություններին կատարված նվիրատվությունների 60%-ը կարող է նվազեցվել եկամտահարկից:</p>
Շվեդիա	Արտոնություն սահմանված չէ:	Արտոնություն սահմանված չէ:

Այսպիսով, ուսումնասիրելով զարգացած երկրների հարկային համակարգերի վերլուծությունը՝ գտնում ենք, որ այդ երկրների հարկային համակարգերն աչքի են ընկնում մի շարք հարկային արտոնություններով և հարկային մուտքերը՝ ըստ տարբեր մակարդակի բյուջեներում հստակ բաշխվածությամբ: Հարկային մուտքեր գերակշիռ մասը կազմում են եկամտահարկի մուտքերը, որոնք կազմում են ՀՆԱ-ի 10-12 %-ը:

ԱՐԹՈՒՐ ՍԱՅԱԴՅԱՆ

*Մ. ԳԱԼ Մ. Զոթանյանի անվան
 Կրթության գիտության ինստիտուտի ասպիրանտ*

ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ ԴՖՈՒԹՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Զարգացող երկրների շարքին են դասվում Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի և Օվկիանիայի մի շարք երկրներ, որոնք մեծամասամբ նախկինում հանդիսացել են արևմտյան գերտերությունների գաղութներ կամ վերջիններից կախյալ երկրներ: «Զարգացող երկրներ» տերմինը փոխարինեց նախկինում առավել տարածված «Թույլ զարգացած երկրներ» տերմինին, որի շրջանակներն, իհարկե, ավելի ընդգրկում էին: Հաճախ «Զարգացող երկրներ» տերմինին զուգահեռ ընդունված է կիրառել նաև «Երրորդ աշխարհ» տերմինը¹:

Անկախացումից հետո ՀՀ-ում փուլային բարեփոխումների արդյունքում ձևավորվեց երկաստիճան բանկային համակարգ: Հատկանշական է, որ երկրորդային մակարդակը կազմավորող առևտրային բանկերը բավականին արագ սկսեցին մատուցել բազմակողմանի ֆինանսական ծառայություններ, ինչն ակտիվացրեց մրցակցությունը բանկային արտադրանքի իրացման գործընթացում: Բայց հետագայում առևտրային բանկերը, բավականին իրատեսորեն գնահատելով դեպքերի զարգացման հետագա ընթացքը, աստիճանաբար սկսեցին մասնագիտանալ որոշակի ուղղություններով՝ նախապայմաններ ստեղծելով մենաշնորհային գործունեության համար: Հիփոթեքային վարկավորումը, որն իրենից ենթադրում է, առաջին հերթին, երկարաժամկետ վարկային ներդրումներ, ամենևին էլ այն ոլորտը չէ, որը կարող է չափազանց գրավիչ թվալ առևտրային բանկերի համար, նամանավանդ այն պարագայում, որ «երկարաժամկետ փողերի» խնդիրը եղել է և շարունակում է մնալ արդիական Հայաստանի համար: Արևմտյան աշխարհի փորձը ցույց է տալիս, որ հիփոթեքային շուկայի զարգացումը պայմանավորված է անշարժ գույքի և արժեթղթերի շուկաներով, օրենսդրաիրավական դաշտով և մի շարք այլ պայմաններով, որոնք, ըստ էության, ինքնակարգավորվող չեն, և առանց պետության ակտիվ դերակատարության որևիցե լուրջ առաջընթաց ակնկալելն այստեղ անիմաստ է: Այժմ փորձենք ուսումնասիրել հիփոթեքային վարկավորման զարգացող երկրների փորձը, ինչը կարծում ենք մասամբ օգտակար և նաև ուսուցողական է Հայաստանի համար:

Մի շարք աֆրիկյան երկրներում հիփոթեքային վարկավորման զարգացման նպատակով ստեղծվել են պետության վերահսկողության տակ գտնվող հատուկ կազմակերպություններ:

¹ Мировая экономика 2-е изд.; В. К. Ломакин; Москва-2008г.

Այսպես՝ Նիգերիայում ստեղծվել է ֆեդերալ հիփոթեքային բանկը, որը 60%-ով պատկանում է կառավարությանը, իսկ 40%-ով՝ երկրի Կենտրոնական բանկին: Վերջինիս խնդիրներն են երկարաժամկետ վարկերի տրամադրումը և շուկայից միջոցների հավաքագրումը (ներկայումս ավանդների և խնայողական հաշիվների տեսքով): Բացի այդ ֆեդերալ հիփոթեքային բանկն օժտված է հիփոթեքային վարկավորման շուկայի կարգավորման և վերահսկման գործառնություններով, ինչը ներառում է հիփոթեքային գործառնությունների լիցենզավորումը, առաջնային վարկատուների հիփոթեքային արժեթղթերի երաշխավորման միջոցով գրավագրերի երկրորդային շուկայի զարգացումը և այլն: 1989թ. սկսած՝ երկրում ստեղծվել են ավելի քան 200 առաջնային հիփոթեքային վարկատուներ:

Գանայում խոշորագույն հիփոթեքային վարկատուն Բնակարանային ֆինանսավորման ընկերությունն է (ԲՖԸ), որն արտոնագրված է որպես ոչ բանկային կազմակերպություն և ունի մոտ 3500 հիփոթեքային վարկերից բաղկացած պորտֆել:

Երկնակարդակ համակարգի մոդելը աֆրիկյան երկրներում գործնականում չի զարգանում: Բացի Գանայում գործող վերոնշյալ Բնակարանային ֆինանսավորման ընկերության, Աֆրիկայում գրավագրերի երկրորդային շուկայի օպերատոր հանդիսացող հատուկ ինստիտուտներ գոյություն չունեն (նիգերիական ֆեդերալ հիփոթեքային բանկը ստեղծվել էր երկրորդային շուկայի զարգացման համար, սակայն դեռևս երկրում երկրորդային շուկա գոյություն չունի): Եվ նույնիսկ Գանայում, չնայած երկրորդային շուկայի հատուկ օպերատորի ստեղծմանը և բավարար ենթակառուցվածքների առկայությանը, ոչ մի գանական բանկ իր պորտֆելից ոչ մի վարկ չի վաճառել ԲՖԸ-ին:

Ժամանակակից միտումներից կարելի է նշել հիփոթեքների ֆինանսավորումը գրավագրերով ապահովված արժեթղթերի թողարկման միջոցով: Այսպես՝ Գանայում ԲՖԸ-ն իր միջոցները համալրում է երկու տիպի պարտատոմսերի թողարկման միջոցով:

1. Պարտատոմսերը ինդեքսացվում են ըստ գնաճի մակարդակի. դրանց գծով եկամտաբերությունը հավասար է գնաճի մակարդակ գումարած մեկ տոկոսային կետ: Այս պարտատոմսերի գնորդներն են Գանայի բանկը և Ազգային կենսաթոշակային հիմնադրամը: Վարկավորման տոկոսադրույքը որոշվում է որպես գնաճի մակարդակ գումարած 4,5%, որից 1,5%-ը մնում է առաջնային վարկատուին, իսկ 2%-ը ԲՖԸ- մարժան է:
2. ԲՖԸ-ն թողարկել է նաև 35 մլն ԱՄՆ դոլարի կորպորատիվ պարտատոմսեր, որի նպատակն է դոլարով արտահայտված վարկերի վերաֆինանսավորումը: Պարտատոմսերի սեփականատերերը երկու տարուց կարող են կամ մարել դրանք, կամ էլ դրանք օգտագործել որպես առաջին վճար վարկ ստանալու դեպքում: Այս արժեթղթերի գծով երկրորդային շուկայի շրջանառությունը չնչին է: Ներդրողները հիմնականում նախընտրում են դրանք օգտագործել որպես հեջավորման գործիք:

Լատինական Ամերիկայում հիփոթեքային վարկավորումն առավել ակտիվ զարգանում է Արգենտինայում և Բրազիլիայում¹: Արգենտինայում Համաշխարհային բանկի օգնությամբ ստեղծվել է հիփոթեքային վարկավորման արդյունավետ մեխանիզմ, որն ընդհանուր առմամբ ունի հետևյալ տեսքը. կառավարությունը ծրագրին մասնակից բանկերի կողմից թողարկվող պարտատոմսերի համար ստեղծում է երաշխավորման հիմնադրամ: Համաշխարհային բանկը հիմնադրամի ստեղծման համար տրամադրում է 500 մլն դոլարի վարկ՝ 15 տարի ժամկետով: Հիմնադրամը տրամադրում է երաշխիքներ հիփոթեքային շուկայի սուբյեկտների թողարկված արժեթղթերի և հիփոթեքային վարկերի փուլերում փայամասնակցությունների գծով: Երաշխավորության դիմաց վճարը կազմում է վարկի գումարի 5%-ը:

Որոշ լատինաամերիկյան երկրներ մեծ ուշադրություն են դարձնում գրավագրերի երկրորդային զարգացմանը, սակայն գոյություն ունեն մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են հիփոթեքային ակտիվների արժեթղթավորումը: Դրանցից են.

- իրավական և ինստիտուցիոնալ սահմանափակումներ. խճճված և բարդ գործընթացներ,
- փորձի պակաս (միայն երեք երկիր՝ Արգենտինան, Չիլին և Կոլումբիան, ունեն արժեթղթավորման փորձ)²

¹ <http://www.worldbank.org>- World Bank Organisation.

² Furguson B., "Micro-finance of housing: a key to housing the low or moderate-income majority", Inter-American Development Bank, 2000.

- հիփոթեքային վարկերի տրամադրման և սպասարկման ազգային ստանդարտների բացակայություն, ինչը արժեթղթավորման նպատակով փուլերի ձևավորումը դարձնում է թանկ և ժամանակի մեջ ձգված,
- հիփոթեքային վարկերի գծով վարկային պատմության չնչին ծավալներ,
- ֆինանսական ճգնաժամի պայմաններում ռեսուրսների ներգրավման հնարավորության կտրուկ նվազում,
- հիփոթեքային վարկերի ոչ մեծ ծավալներ և ստանդարտացված փաստաթղթերի բացակայություն,
- մակրոտնտեսական պայմանների անկայունություն:

Անցումային տնտեսություն ունեցող ասիական երկրներից հիփոթեքային վարկավորումը առավել տարածված է Հնդկաստանում և Թաիլանդում: Հնդկաստանում հիփոթեքային վարկեր տրամադրում են առևտրային բանկերը, կոոպերատիվ բանկերը, բնակարանային ֆինանսավորման ընկերությունները: Իր առանձնահատուկ դերն ունի 1988թ. ստեղծված Ազգային բնակարանային բանկը (ԱԲԲ): Բանկի հիմնական նպատակը երկրում լիարժեք բնակարանային ֆինանսավորման համակարգի ստեղծումն է: Բանկի հիմնական ֆունկցիան հիփոթեքային վարկավորման շուկայի զարգացումն է, կարգավորումը և ֆինանսական աջակցությունը: ԱԲԲ-ն ակտիվորեն խթանում է առաջնային շուկայի զարգացումը՝ այդ թվում ստեղծելով նոր ֆինանսական ընկերություններ և վերաֆինանսավորելով դրանց վարկերը: Երկրորդ կարևոր ֆունկցիան՝ կարգավորումը և վերահսկումը, ԱԲԲ-ն իրականացնում է հիփոթեքային վարկավորման ստանդարտների սահմանման և դրանց իրականացման հսկման միջոցով:

Առևտրային բանկերը հավաքագրում են խնայողությունների մեծ մասը, ինչը սակայն դրանք չեն դարձրել բնակարանային ֆինանսավորման առաջատարներ: Պատճառը բանկերի մեծամասնության մոտ երկար փողերի բացակայության պայմաններում առևտրում և արդյունաբերության մեջ կապիտալի ավելի արագ շրջապտույտն է, քան հիփոթեքային վարկավորման մեջ:

Հիփոթեքային վարկատուների մեծամասնությունը տրամադրում է ստանդարտ վարկեր՝ հաստատուն տոկոսադրույքով և մինչև 15 տարի ժամկետով: Բացի վարկի սպասարկման գծով ծախսերից, փոխառուն վճարում է նաև տոկոսներից գանձվող հարկը (տոկոսային եկամտի գումարի 2%-ի չափով): Բացի դրանից, բանկերը պահանջում են վարկի գումարի 0,5-1%-ի չափով վճար՝ դիմում տալու համար և ադմինիստրատիվ վճար վարկի գումարի 1%-ի չափով¹:

Հնդկաստանում հիփոթեքային շուկայի զարգացման սկզբից, կառավարության ակտիվության շնորհիվ, հիփոթեքային համակարգի ձևավորումն իրականացվում էր նաև արտասահմանյան աջակցության միջոցով: Այսպես, 1981-88թթ. USAID-ն բնակարանային զարգացման ֆինանսավորման կորպորացիային հատկացրել է 125 մլն դոլար՝ ոչ մեծ եկամուտներով ընտանիքներին վարկերի տրամադրման համար: Ֆինանսավորում ստացվում էր նաև այլ աղբյուրներից:

Գրավագրերի երկրորդային շուկան Հնդկաստանում գրեթե զարգացած չէ: ԱԲԲ-ն փորձեց իրականացնել ընտրված ֆինանսական ընկերությունների կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի փուլով ապահովված արժեթղթերի փորձնական թողարկում: Սակայն մի շարք հարկային և իրավական խնդիրներ երկրորդային շուկայի զարգացումը Հնդկաստանում դարձնում են գրեթե անհնարին: Այսպես, վարկի գծով իրավունքների փոխանցումը պահանջում է նաև գրավի փոխանցում, ինչը կարող է իրականացվել հատուկ գրավոր գործիքի միջոցով, որի գրանցման արժեքը կազմում է արժեթղթավորման գումարի 3-17%-ը (կախված նահանգից), սակայն այժմ որոշ նահանգներ այդ գումարը իջեցրել են մինչև 0,1%: Բացի այդ, պարտավորության փոխանցումը պահանջում է հատուկ գրանցում, ինչը տարբեր տեղերում գտնվող վարկատուների կողմից տրամադրված վարկերից փուլի ձևավորումը դարձնում է բավականին թանկ: Բացի այդ գոյություն ունի գրավի առարկայի բռնագանձման հիմնախնդիրը՝ ելնելով գրավի իրավունքի բովանդակությունից:

¹ Разумова И. А., Ипотечное кредитование: 2-е издание. Санкт Петербург-2009.

Հաշվի առնելով Հայաստանում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակի նմանությունը ԱՊՀ այլ երկրներում տիրող իրավիճակի հետ՝ առավել օգտակար է դիտարկել այս երկրների փորձը հիփոթեքային վարկավորման բնագավառում:

ԱՊՀ երկրներից հիփոթեքն առավել զարգացած է Ղազախստանում: Բնակարանային ֆինանսավորման համակարգի ձևավորման առաջին քայլերն այստեղ ձեռնարկվել են դեռևս 90-ականների կեսերին: Մասնավորապես, ընդունվեցին մի շարք օրինագծեր և նախագահի՝ օրենքի ուժ ունեցող հրամանագրեր, որոնք ստեղծեցին բնակարանային ոլորտում շուկայական հարաբերությունների ձևավորման և զարգացման սկզբնական իրավական հիմքերը: Հիփոթեքի զարգացման գործում իրենց առանձնահատուկ դերն ունեն կառավարությունը և Ղազախստանի Հանրապետության Կենտրոնական բանկը:

2000թ. կառավարության կողմից հաստատվեց «Ղազախստանի Հանրապետությունում բնակարանային շինարարության երկարաժամկետ ֆինանսավորման և հիփոթեքային վարկավորման համակարգի ստեղծման հայեցակարգը», համաձայն որի ենթադրվում էր հավասարապես ներդնել ինչպես եվրոպական, այնպես էլ ամերիկյան մոդելները:

Իրականացման տեսանկյունից երկրորդ մոդելն ավելի բարդ է, սակայն նախընտրությունը տրվեց հենց սրան: Այս սխեմայի շրջանակներում 2000թ. դեկտեմբերին Ազգային բանկը, ԱՄՆ-ի հիփոթեքային գործակալությունների համանմանությամբ, ստեղծեց «Ղազախստանի հիփոթեքային ընկերություն» ՓԲԸ-ը: Այն իրենից ներկայացնում է վերաֆինանսավորող կազմակերպություն, որն առաջնային հիփոթեքային վարկատուներից ձեռք է բերում հիփոթեքային վարկերի գծով պահանջի և գրավի իրավունքները և թողարկում է վարկերի փուլով ապահովված պարտատոմսեր: 2010թ. դրությամբ Ընկերության բաժնետիրական կապիտալը կազմում էր 29 մլրդ տենգե (196 մլն ԱՄՆ դոլար), և նրա բաժնետոմսերի 100%-ը պատկանում էր Ազգային բանկին, սակայն հետագայում նախատեսվում է ներգրավել այլ բաժնետերեր միջազգային ֆինանսական կազմակերպությունների և դազախսական բանկերի շարքից¹:

Հիփոթեքային շուկայում ակտիվության աճին մեծապես նպաստեց հիփոթեքային վարկավորման միջազգային պահանջներին բավարարող ստանդարտների ներդրումը.

- վարկերը տրամադրվում են ազգային արժույթով մինչև 20 տարի ժամկետով,
- վարկերը տրվում են մինչև անշարժ գույքի շուկայական արժեքի 70%-ի չափով, իսկ մնացած մասը փոխառուն վճարում է սեփական միջոցների հաշվին (նրանց, ովքեր դեռևս չեն հասցրել կուտակել անհրաժեշտ գումարը, ընկերությունը հնարավորություն է տալիս վարկ ստանալ՝ սկզբում վճարելով գույքի արժեքի միայն 15%-ը՝ այն պայմանով, որ մնացած 15%-ը պետք է ապահովագրվի ապահովագրական ընկերությունում),
- բնակարանների վերանորոգման համար տրվող վարկի առավելագույն չափը կազմում է վերանորոգվող բնակարանի արժեքի 50%-ը,
- վարկի մայր գումարի և տոկոսների մարումն իրականացվում է ամենամսյա հավասարաչափ վճարների միջոցով, ընդ որում ամենամսյա վճարների գումարը չպետք է գերազանցի փոխառուի ամենամսյա փաստաթղթորեն հավաստվող եկամտի 35%-ը: Թույլատրվում է վճարների բաժնի ավելացում մինչև 45%՝ այն պայմանով, որ վճարումից հետո ընտանիքի մեկ անդամի հաշվով բաժին է ընկնում 150 ԱՄՆ դոլարին համարժեք եկամուտ: Ցանկության դեպքում կարող են հաշվի առնվել նաև ընտանիքի այլ անդամների եկամուտները,
- վարկի նվազագույն գումարը Ալմաթայի և Աստանայի համար կազմում է 450 հազ. տենգե, իսկ մնացած շրջանների համար՝ 300 հազ.: Վարկի առավելագույն գումար չի սահմանվում,
- թույլատրվում է վարկի վաղաժամկետ մասնակի կամ ամբողջական մարում (եթե 2002թ. վաղաժամկետ մարման նվազագույն գումարը կազմում էր 42,265 տենգե, ապա ներկայումս նման սահմանափակում չկա),
- վարկի տոկոսադրույքը սահմանվում է գործընկեր բանկի կողմից Ղազախստանի հիփոթեքային ընկերության կողմից սահմանվող ուղենիշային տոկոսադրույքի հիման վրա,

¹ www.kmc.kz

որը հրապարակվում է յուրաքանչյուր ամիս: Բանկը իրավունք ունի սահմանել սեփական մարժան, որը սակայն չի կարող գերազանցել 4%-ը: Վարկի տոկոսադրույքը լողացող է և կապված է գնաճի գործակցին՝ վերանայվելով կես տարին մեկ: Նախատեսված է նաև տոկոսադրույքի վերին սահման. մեկ տարվա ընթացքում այն չի կարող աճել ավելի քան 4,5 տոկոսային կետով՝ անկախ գնաճի մակարդակից,

- գրավի արժեքը որոշվում է անկախ կազմակերպության միջոցով,
- գործում է գրավադրվող անշարժ գույքի, ինչպես նաև փոխառուի կյանքի և աշխատունակության պարտադիր ապահովագրություն:

Այս ստանդարտների ներդրումը շատ կարևոր նշանակություն ունի, քանի որ երկրորդային շուկայի մոդելի շրջանակներում ձեռք բերված վարկերի գծով պահանջի իրավունքները Հիփոթեքային ընկերության կողմից զիջվում են հիփոթեքով ապահովված արժեթղթերի իրացման միջոցով: Եվ միայն ստանդարտների խիստ կիրառությունը թույլ կտա նվազեցնել հիփոթեքային շուկայի մասնակիցների ռիսկերը և, հետևաբար, կարող է այդպիսի արժեթղթերը դարձնել ներդրողների համար գրավիչ: Հենց այս պատճառով էլ ընկերության հետ համագործակցության պայմանագիր կնքող վարկատուն պետք է երաշխավորի, որ բոլոր վարկերը համապատասխանում են սահմանված պահանջներին, և պարտավորվում է ամեն ամիս ներկայացնել անհրաժեշտ ֆինանսական տեղեկատվությունը: Իր հերթին ընկերությունը պարբերաբար իրականացնում է վարկերի մի մասի ստուգում: Եթե ստուգման արդյունքում հայտնաբերվեն անորակ կամ ոչ ստանդարտ վարկեր, ապա վարկատուն պարտավոր է հետ գնել դրանք:

Սկզբում այս սխեման հաջողությամբ փորձարկվեց Աստանայում և Ալմաթայում, որից հետո ներառվեցին ևս 11 քաղաքներ, իսկ մոտ ապագայում նախատեսվում է ներառել ողջ հանրապետությունը: Ընկերությունը համագործակցության գլխավոր պայմանագրեր է կնքել հինգ խոշոր բանկերի և երկու ոչ բանկային կազմակերպությունների հետ:

Հատկանշական է, որ Ղազախստանի հիփոթեքային ընկերության գործունեության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ ընկերությունը վերաֆինանսավորում է միայն ազգային արժույթով տրամադրված և արտարժույթի հետ չկապված վարկերը: Սա արվում է այն պատճառով, որ բնակչության մեծ մասի եկամուտները տեղեկվում են, և, փաստորեն, այս ճանապարհով նվազեցվում են փոխարժեքի փոփոխության հետ կապված ռիսկերը:

Հիփոթեքի զարգացումը դանդաղեցնող հիմնական խնդիրներից մեկը երկարաժամկետ վարկային ռեսուրսների հայթայթումն է: Նախատեսվում է ներքին շուկայում միջոցներ ներգրավել ընկերությանը պատկանող վարկերով ապահովված արժեթղթերի թողարկման միջոցով, ընդ որում խոշոր ինստիտուցիոնալ ներդրողների առկայությունը (ինչպիսիք են կենսաթոշակային հիմնադրամները և ապահովագրական ընկերությունները) թույլ է տալիս շուկայի տվյալ սեգմենտի արդյունավետ զարգացման պայմանները համարել բավականին բարենպաստ: Այսպես՝ արդեն այսօր 5%-ից մինչև 10% է մեծացվել ակտիվների այն մասնաբաժինը, որը կենսաթոշակային ընկերություններին թույլատրվում է ներդնել հիփոթեքային պարտատոմսերում, և եթե ենթադրենք, որ այս ընկերություններն ամբողջովին կօգտագործեն այդ իրավունքը, ապա յուրաքանչյուր տարի նրանք կարող են Ղազախստանի հիփոթեքային ընկերության պարտատոմսերում ներդնել շուրջ 20 մլն դոլարին համարժեք գումար (3 մլրդ տեղեկ)՝:

2002թ. նոյեմբերին տեղի ունեցավ «Ղազախստանի հիփոթեքային ընկերություն» ՓԲ ընկերության պարտատոմսերի առաջին թողարկումը՝ 1,5 մլրդ տեղեկ գումարի չափով: Սա հիփոթեքով ապահովված արժեթղթերի թողարկումն էր ոչ միայն Ղազախստանում, այլ նաև ողջ ԱՊՀ-ում: Թողարկվեցին 3 տարի մարման ժամկետով, արժեկտրոնային, գնաճի գործակցին կապված լողացող տոկոսադրույքով պարտատոմսեր, որոնց եկամտաբերությունը որոշվում է որպես գնաճի գործակցի գումարած 4,75%, և որը վերանայվում է կես տարին մեկ: Գնաճի գործակցից ընտրվել է որպես տոկոսադրույքի հաշվարկման հիմք, քանի որ ենթադրվում է, որ այն առավել ճիշտ արտացոլում է տնտեսության վիճակը:

¹ www.kmc.kz

Ղազախստանի հիփոթեքային ընկերությունը պլանավորում է թողարկել ոչ միայն արժեկտրոնային , այլ նաև զեղչատոկոսային պարտատոմսեր¹ :

Նշենք նաև, որ Ղազախստանում հիփոթեքային վարկավորմամբ զբաղվում են նաև այն բանկերը, որոնք չեն համագործակցում Ղազախստանի հիփոթեքային ընկերության հետ: Միջոցների ներգրավման համար նրանք ևս օգտագործում են ֆոնդային շուկայի գործիքները: Այսպես, օրինակ, «Լարիբա-Բանկը» դեռևս 2001թ. առաջինն իրականացրեց արժեկտրոնային անվանական հիփոթեքային պարտատոմսերի թողարկում, որոնք ներառվել էին Ղազախստանի ֆոնդային բորսայի «B» կատեգորիայի արժեթղթերի պաշտոնական ցուցակում: Այս արժեթղթերի մեծ մասը գնվեց ղազախական կենսաթոշակային հիմնադրամների կողմից: Նշենք նաև այն հանգամանքը, որ այս արժեթղթերի թողարկման համար ԱՄՆ-ի կառավարությունը, USAID ծրագրի շրջանակներում, տրամադրեց 500 հազ. դոլարի երաշխիք: Հենց այս արժեթղթերի թողարկումը բանկին հնարավորություն տվեց հիփոթեքային վարկերի տոկոսադրույքը 20%-ից իջեցնել մինչև 15%:

Խորհրդային Միության փլուզումից հետո Ռուսաստանի Դաշնությունում բնակարանաշինության ոլորտում առաջացած ֆինանսավորման խնդրի լուծման առաջին փորձը եղավ 1994թ. նախագահի հրամանագիրը «Բնակարանային սերտիֆիկատների թողարկման և շրջանառության մասին», համաձայն որի բնակարանների շինարարության պատվիրատուի իրավունքներ ունեցող իրավաբանական անձանց թույլատրվում էր քաղաքացիներից ֆինանսական միջոցներ ներգրավել բնակարանային սերտիֆիկատների միջոցով: Բնակարանային սերտիֆիկատները ինդեքսավորվող անվանական արժեքով հատուկ պարտատոմսեր էին, որոնք հավաստում էին դրանց սեփականատիրոջ իրավունքը որոշակի քանակությամբ սերտիֆիկատների գնման դեպքում ձեռք բերել բնակարան կամ առաջին իսկ պահանջով դրանք թողարկողից ստանալ պարտատոմսի ինդեքսավորված անվանական արժեքը: Այս գործիքի նկատմամբ բնակչության վստահության ավելացման նպատակով էմիտենտները կարող էին ներգրավել առևտրային բանկերին՝ որպես երաշխավոր:

Որպես կանոն, այս արժեթղթերի ինդեքսացիան չէր արտացոլում ֆինանսական շուկայում տեղի ունեցող փոփոխությունները, գործնականում դրանք ոչ իրացվելի էին, իսկ քաղաքացիները զրկված էին ազատ ընտրության իրավունքից, քանի որ սերտիֆիկատը տալիս էր միայն որոշակի շենքերում բնակտարածք ձեռք բերելու իրավունք: Հենց այս պատճառով էլ տվյալ գործիքները լայն տարածում չստացան: Այնուամենայնիվ, ներկայումս բնակարանային փոխառության պարտատոմսերը հաջողությամբ կիրառվում են երկրի մի շարք շրջաններում: Փաստացիորեն դրանք տեղական ադմինիստրացիայի կողմից երաշխավորված մունիցիպալ պարտատոմսեր են, սակայն դրանք կարող են մարվել ինչպես ռուբլիներով, այնպես էլ բնակտարածքով:

1996թ.-ից, երբ հրապարակվեց նախագահի հրամանագիրը «Հիփոթեքային վարկավորման զարգացման լրացուցիչ միջոցառումների մասին», սկսեցին կիրառվել երկու նոր սխեմաներ: Դրանցից առաջինը փայային շինարարության սխեման էր, իսկ մյուսն իրենից ներկայացնում էր բնակարանների ապառիկ վաճառք՝ առաջին վճարումն իրականացնելուց հետո բնակվելու իրավունքով և մնացած գումարի վճարումից հետո սեփականության ձևակերպմամբ: Այսպիսի «հիփոթեքային» սխեմաները մինչ այժմ բնակարանների ձեռքբերման առավել տարածված միջոցներն են, չնայած նրան, որ փայային մասնակցության դեպքում գնորդը փաստացիորեն վարկավորում է շինարարական ընկերությանը՝ մինևույն ժամանակ իր վրա վերցնելով բոլոր շինարարական ռիսկերը, իսկ ապառիկ գնման իրավունքը տրվում է շատ կարճ ժամկետով (1-3 տարի) և բարձր տոկոսադրույքով:

1997թ. ընդունվեց «Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և դրանցով գործառնությունների պետական գրանցման մասին» օրենքը, իսկ 1998թ.՝ «Հիփոթեքի մասին» օրենքը, որի շրջանակներում փորձ արվեց ստեղծել հարմար և հեշտ շրջանառելի ֆինանսական գործիք՝ գրավագիր, որն անվանական արժեթուղթ է և հավաստում է դրա սեփականատիրոջ հետևյալ իրավունքները².

¹ Копейкин А., Сагиндыкова М., Ипотека по-казахски. //Банковское обозрение, 2002, N 9, -с.52-54

² Завидов Б. Д., Комментарий к Федеральному закону Российской Федерации “Об ипотеке (залоге недвижимости)”. – Москва, 1998,-119с.

- իրավունք ստանալ հիփոթեքով ապահովված դրամային պարտավորության իրականացում՝ առանց այդ պարտավորության գոյությունը հավաստող այլ ապացույցների ներկայացման,
- հիփոթեքի պայմանագրում նշված գույքի նկատմամբ գրավի իրավունք:

Գրավագիրը կազմվում է փոխառուի կողմից և տրվում է սկզբնական գրավառուին, որն էլ կարող է այն փոխանցել այլ անձանց:

Ինքնին գրավագիրը դժվար թե կարողանա դառնալ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման գործիք, քանի որ ամբողջովին արտացոլելով վարկային պայմանագրի և հիփոթեքի մասին պայմանագրի բոլոր էական դրույթները՝ այն դառնում է բազմաթերթ մի փաստաթուղթ և քիչ է բավարարում հեշտ շրջանառվող արժեթղթի պահանջները: Սակայն գրավագրերը կարող են հիմք հանդիսանալ երկրորդային հիփոթեքային արժեթղթերի թողարկման համար, որոնք չեն ունենա անհատականացված բնույթ, այսինքն՝ չեն պարունակի յուրաքանչյուր հիփոթեքային գործարքի կոնկրետ առանձնահատկությունները և կարող են ներդրողների համար դառնալ գրավիչ գործիք:

Դա հատկապես կարևոր է, քանի որ Ռուսաստանում հիփոթեքի մոդելի ընտրության ժամանակ նախապատվությունը տրվել է երկրորդային շուկայի ամերիկյան մոդելին, որտեղ վարկավորման համար միջոցների ներգրավման համար կիրառվում են ֆոնդային շուկայի գործիքները: ԱՄՆ-ի օրինակով Ռուսաստանում ստեղծվում են հիփոթեքի երկրորդային շուկայի օպերատոր գործակալություններ¹:

Այսպես, արդեն 1996թ. ֆեդերալ մակարդակով ստեղծվեց Հիփոթեքային բնակարանային վարկավորման գործակալությունը (ՀԲՎԳ), որը պետք է ստանդարտացնի հիփոթեքային վարկավորման գործընթացը և գնի առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերը: Այսօրվա դրությամբ գործակալության կողմից արդեն իսկ սահմանվել են վերաֆինանսավորման ենթակա վարկերի տեսակները: Դրանք են ռուբլով և ԱՄՆ դոլարով հաստատուն տոկոսադրույքով վարկերը, փոփոխուն տոկոսադրույքով ռուբլով վարկերը, որոնք կապված են գործակալության կողմից սահմանված ինդեքսին, ինչպես նաև փոփոխուն տոկոսադրույքով ԱՄՆ դոլարով վարկերը:

Բացի այդ ձեռքբերվող վարկերը չպետք է գերազանցեն գրավադրված անշարժ գույքի շուկայական արժեքի 70%-ը, իսկ վարկավորման ժամկետը չպետք է գերազանցի 20 տարին:

Բանկերի վերաֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցները գործակալությունը պետք է ներգրավի ֆոնդային շուկայից՝ սեփական արժեթղթերի թողարկման միջոցով, որոնք կարող են լինել երկու տեսակի՝ կորպորատիվ պարտատոմսեր (կամ այլ կերպ ասած ընդհանուր պարտավորության պարտատոմսեր) և հիփոթեքային արժեթղթեր: Սակայն մինչ այժմ վերաֆինանսավորումն իրականացվում է «ԱՄՆ-Ռուսաստան» ներդրումային հիմնադրամի վարկերի հաշվին, որը, սկսած 1998թ., Ռուսաստանի հիփոթեքային շուկայի առավել ակտիվ մասնակիցներից մեկն է:

Նշենք նաև, որ 1999թ. Մոսկվայում ստեղծվեց երկրորդային շուկայի սեփական կառույցը՝ «Մոսկովյան հիփոթեքային գործակալություն» ԲԲԸ-ն: Բացի այդ, այստեղ իրագործվում են տարբեր բանկերի հիփոթեքային ծրագրեր, իսկ Մոսկվայի կառավարությունը Շինարարական խնայողական դրամարկղի միջոցով աջակցում է բնակչության բնակարանային ֆինանսավորման այլընտրանքային համակարգի իրագործմանը, որի գործունեությունը մոտ է գերմանական մոդելին²: Սակայն, ի տարբերություն գերմանականի, սրան բնորոշ է կուտակման կարճ ժամկետը (0,5-3 տարի) և, հետևաբար, վարկավորման կարճ ժամկետները (2-5 տարի):

Սեփական հիփոթեքային սխեմաներ մշակվում են Ռուսաստանի Դաշնության ավելի քան 50 շրջաններում, որտեղ արդեն տրամադրվել են ավելի քան 40 հազ. հիփոթեքային վարկեր: Սակայն բնակչության ցածր վճարունակության և երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսների բացակայության պայմաններում առավել արդյունավետ աշխատում են այն

¹ Кримова Б. Н., Ипотечное кредитование в России и проблемы повышения его эффективности. Москва 2001, -394с.

² Лимаренко В. И., Дом для Вашей семьи на Большой Волге: проблемы внедрения ипотечного кредитования в российских регионах. Теория и практика. – Саратов, 1998, -329 с.

«հիփոթեքային» սխեմաները, որոնք գործում են ռեզիդենտ, մուլտիցիպալ և ճյուղային հիփոթեքային հիմնադրամների առաջարկած միջոցների հաշվին¹:

Այնհայտ է, որ ֆինանսավորման տվյալ աղբյուրի սահմանափակությունը թույլ չի տա հիփոթեքը դարձնել իրապես զանգվածային:

Ուսումնասիրելով վերոնշյալ երկրների հիփոթեքային շուկաների զարգացման ուղիները կարծում ենք կարելի է նկատել բազմաթիվ ընդհանրություններ հայաստանյան հիփոթեքային շուկայի հետ: Հատկանշական է Ղազախստանի շուկայի զարգացման փորձը, որը մեծամասամբ պայմանավորված է «Ղազախստանի հիփոթեքային ընկերություն» ՓԲԸ ստեղծմամբ. կարելի է բազմաթիվ զուգահեռականներ անցկացնել վերջինիս և «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ-ի միջև, որի նպատակն է համակցել բնակարանային վերաֆինանսավորումը և կապիտալի շուկան՝ հիփոթեքային արժեթղթերի միջոցով:

ԷՂՈՒՐԴ ՍԱՆԱՅԱՆ

*Ն Գ Ա Ա Մ. Լոթսանյանի անվան
փնտրեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ. ՃԳՆԱԺԱՄԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Ժամանակակից ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում բոլոր երկրների կառավարությունների համար առաջնային և լրջագույն խնդիր է հակաճգնաժամային արդյունավետ քաղաքականության մշակումը, սակայն արդեն իսկ մեր օրերում պարզ է դառնում, որ միշտ չէ, որ նախընտրած ուղին իրեն արդարացնում է: Դրան ևս մենք ականատես եղանք, երբ բազում երկրներում կառավարությունների քաղաքական վերադասավորումներ եղան հրաժարականների (2009թ. հունվարին Իսլանդիայի իշխող կառավարությունը ֆինանսական ծանր պայմաններից ելնելով հրաժարական ներկայացրեց) և ընտրությունների տեսքով, կամ էլ պարզապես կտրուկ անկում ապրեցին տարբեր երկրներում իշխող քաղաքական ուժերի վարկանիշները: Այս երևույթն առավել պարզ էր երևում հյուսիսամերիկյան, եվրոպական, լատինաամերիկյան և հետխորհրդային երկրներում: Անշուշտ, 2008թ. ծանր տնտեսական տարվա ընթացքում ճգնաժամի ալիքը տարածվել էր համաշխարհային մասշտաբով և չկար որևէ երկիր, որտեղ մտահոգության հիմնական թեմաներից չհանդիսանար: Այդ պահին տրամաբանական կարելի էր համարել այն հանգամանքը, որ ամբողջ աշխարհը սպասում էր արագ և օբյեկտիվ միջամտություն առաջին հերթին ԱՄՆ իշխանությունների կողմից, քանզի ԱՄՆ տնտեսական համակարգի կայունացմանն ուղղված ցանկացած քայլ որոշակիորեն հանդարտեցնում էր ճգնաժամային կրքերն աշխարհով մեկ: Իրականն այն է, որ հենց այդ սցենարով էլ սկսեցին զարգանալ իրողությունները, երբ կարգավորման և նախաճգնաժամային կայուն համակարգի վերականգման առաջին նշույլն ի հայտ եկավ այն տնտեսությունում, որտեղից էլ հենց սկիզբ էր առել ալիքը: Հենց 2008թ. ԱՄՆ կառավարության կողմից ընդունված կարգավորման քաղաքական ուղին էլ, կարելի է նշել, դարձավ գործիքակազմի տեսանկյունից ունիվերսալ բոլոր տնտեսական համակարգերում հետագայում իրականացվելիք բարեփոխումների համար: Մասնավորապես կարգավորման դրամական և ոչ դրամական միջամտությունների մեծ ալիք բարձրացավ համաշխարհային մակարդակով, քանզի միաժամանակյա տնտեսական կարգավորման հետ մեկտեղ կարևորվում էր նաև համաշխարհային մակարդակով հասարակությանը տրամադրել դեպի կայուն տնտեսական աճ և, այսպիսով՝ կտրել կամաց-կամաց խորացող վստահության կորուստը դեպի տնտեսական համակարգերի կայունացում: Այս քայլը բավականին մեծ աշխուժություն առաջացրեց, և բազում երկրներում սկսեցին իրականացվել լայնամասշտաբ կարգավորման բարեփոխումներ:

¹ Косарева Н., Пастухова Н., Рогожина Н. Развитие системы долгосрочного ипотечного кредитования в России. // Вопросы экономики, 2001, N 5 – с.103-107.

Կարելի է առանձնացնել շատ երկրների կողմից ֆինանսական հաստատությունների խնդրահարույց ակտիվների ձեռքբերման, վարկային շուկայի ֆինանսավորման, մասնավոր հատվածի ֆինանսական օգնությունների տրամադրման, խոշոր կազմակերպությունների պարագայում կառավարությունների կողմից դրանց բաժնետոմսերի գնման և այլ դրամական կարգավորման քայլեր, ինչպես նաև մեծ ուշադրություն էր դարձվում ոչ դրամական եղանակով կարգավորումների և կանոնակարգումների հաստատմանը¹ (որոշ երկրներում կատարվեցին ներդրումների ապահովագրման սահմանաչափերի ավելացումներ, գրավադրման ապահովագրումներ, աշխատավարձերի սահմանաչափերի կիրառումներ, կազմակերպությունների մասով ինտենսիվ տնտեսական աճի ուղղված ինստիտուցիոնալ կարգավորումներ, նաև պարտքային պարտավորությունների երաշխիքների տրամադրումներ, շահաբաժինների տրամադրման սահմանափակումներ, նոր աշխատատեղերի ստեղծում, սոցիալական երաշխիքների տրամադրման համակարգերի կարգավորումներ և այլն): Այդուհանդերձ նմանատիպ ուղղումների իրականացման հիմնական թիրախն էր մակրոտնտեսական կայունությունը և դեռևս 2007թ. սկսած անկման գործընթացի կանգը: Դեռևս այդ ժամանակահատվածում առաջ էին գալիս բազում վարկածներ, թե որքան ժամանակ է պահանջվում նախաճգնաժամային տնտեսական ցուցանիշների վերականգնումը: Բավական հետաքրքրական են ստացվում այս պայմաններում ՀՆԱ, զբաղվածության, ինֆլյացիայի, պետական պարտքի, պետական պահուստների վերահսկողության և արդյունավետ կառավարման քաղաքականությունների մշակումը:

ՀՀ պարագայում ևս այս ցուցանիշների դիտարկումն արդիական է, քանզի ցնցումների առաջին փուլերից սկսած Կառավարությունը փորձ է կատարում ռեսուրսների առավել արդյունավետ կառավարման համակարգեր ներդնել, տնտեսական համակարգում գերակա ճյուղերի զարգացման հաստատուն տեմպի հաշվին կայունացնել և կոմպենսացնել ցնցումների ժամանակահատվածում գրանցած կորուստները:

Այս հանգամանքը դրդեց ուսումնասիրել տարբեր տարածաշրջանների մակրոտնտեսական ցուցանիշները նախաճգնաժամային զարգացման տեմպերը, ինչպես նաև տնտեսական ցնցումներին հաջորդող ժամանակահատվածում գրանցված արդյունքները:

Ուսումնասիրենք իրական ՀՆԱ աճի տեմպը Հայաստանի և տարբեր տարածաշրջանների՝ աշխարհի խոշորագույն տնտեսությունների, զարգացող տնտեսական համակարգերի, եվրոպական, ասիական տնտեսական համակարգերի, միջինասիական և հյուսիսաֆրիկյան տնտեսություններինը միասնական ցուցանիշները 2000-2010թթ. ժամանակահատվածում: Տվյալների աղբյուրներն են ՀՀ ԱՎԾ և ԱՄՀ տվյալների բազաները²: Առաջնահերթությունը տալով ՀՀ տնտեսության աճի ուսումնասիրությանը կնկատենք հիմնականում կայուն աճ միջին հաշվարկով 10% հավելածի մասով: Մեր ցուցանիշի պահվածքը մինչ ճգնաժամային հատվածում ունի գրեթե նույն տեմպը, իսկ ահա 2007-2008թթ. նկատվում է անկում, որն իր հատակին հասնում է 2009թ.: Այդ տարվա ցուցանիշը հավասարվում է 2008թ. ցուցանիշի 87%-ին, և որպես հավելում կարելի է մատնանշել, որ 2010թ. ցուցանիշը մինչճգնաժամային ցուցանիշի 98%-ի մասն է կազմում: Դիտարկելով ընդհանրական տարածաշրջանների ցուցանիշները և համեմատելով ՀՀ տնտեսության ցուցաբերած վարքագծի հետ, նշենք, որ մյուսների պարագայում ճգնաժամի ազդեցությունն ավելի զգալուն է եղել, սակայն մինչ ճգնաժամը մյուս ցուցանիշների պարագայում տատանումներն ավելի լավ պահվածք են ցուցաբերել՝ աճի առավել բարձր տեմպեր արձանագրելով: Ընդհանուր առմամբ մինչ տնտեսական ճգնաժամը բոլոր տարածաշրջանների տնտեսական աճի ցուցանիշները դրական են եղել, սակայն ցնցումների պարագայում 2007-2009թթ. տարբեր տարածաշրջաններ տարբեր պահվածք են դրսևորել: Ամենամեծ անկման ցուցանիշը նկատելի է դառնում միացյալ Եվրոպայի տնտեսական աճի պարագայում (2009թ. ցուցանիշը 6.1 անգամ ցածր է կազմում 2008թ.-ի համեմատությամբ): Այսպիսով՝ կարձանագրենք, որ ամենամեծ հարվածը բաժին է ընկել Եվրոպական երկրներին, իսկ ահա ամենալավ պահվածքն ասիական զարգացող տնտե-


¹ Հարությունյան Վ., Հակաճգնաժամային միջոցառումները և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոփոխության միտումները, ՀՀ ԳԱԱ, Գիտությունե հրատակչություն 2011թ., էջ 50-60 :

² ՀՀ ԱՎԾ տարեգրքեր (2000-2010թթ.)՝ ազգային հաշիվների համակարգ, ԱՄՀ World Economic Outlook Database, September 2011:

սություններինն է (2009-2010թ. անկումը 2010թ. ցուցանիշի բացակայության պատճառն է): Հատկանշական է, որ աշխարհով մեկ ի կատար են ածվել բազում հակաճգնաժամային տնտեսական բարեփոխումներ և թերևս տարբեր երկրների բարեփոխումները տարբեր ազդեցություններ են ունեցել իրենց տնտեսական աճի վրա, սակայն ցուցանիշից նկատում ենք մեկ կարևոր հանգամանք, որ միջինասիական և հյուսիսաֆրիկյան տնտեսական համակարգերի անկումը սկսած ճգնաժամի առաջին տարիներից կանգ չի առել և տրամաբանական շարունակություն կարելի է համարել միապետական կառավարման մի շարք իշխանությունների տապալումը սույն տարածաշրջանում:

Գծապատկեր 1

Տարբեր տարածաշրջանների ՀՆԱ պահվածքը և համադրումը Հայաստանյան ցուցանիշի հետ




Անշուշտ սա միակ ցուցանիշը չէ, որ ուսումնասիրության կարիք է պահանջում, այդ իսկ պատճառով փորձել ենք անդրադառնալ նաև այլ կարևորագույն նշանակության ցուցանիշների ուսումնասիրության: Բնականաբար տնտեսական կարևորագույն ցուցանիշներից և ոչ մեկն անմասն չի մնացել ճգնաժամի ազդեցությունից, այդ իսկ պատճառով կդիտարկենք նաև այլ ցուցանիշների փոփոխությունը:

Մասնավորապես, սկսած 2007թ. բավականին ակտիվացավ Հայաստանի տնտեսությունում գնաճի միտումը: Որպես ուսումնասիրության օբյեկտ վերցված են Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Էստոնիայի, Լատվիայի և Լիտվայի գնաճի ցուցանիշները նախորդ ժամանակահատվածի նկատմամբ: Ուսումնասիրության համար ընտրված ժամանակահատվածն է 2000-2011թթ. տվյալները և 2011-2016թթ. կանխատեսվող տեմպերը: Դատելով տվյալներից կնկատենք, որ 2005-2006թթ. տվյալները միակն են բոլորի համար, երբ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ ցուցանիշը կազմում է 10%-ի հավելածի շրջակայքում: 2005թ. տվյալների համաձայն Հայաստանի ցուցանիշը ցույց է տալիս, որ այդ տարում գնաճի տեմպի նվազում է նկատվել, մինչդեռ մյուս երկրներում այդպիսի երևույթ չի նկատվել: 2005-2008թթ. դիտարկված գրեթե բոլոր տնտեսություններում գնաճն աճի միտում է դրսևորել (բացառությունը հանդիսանում է 2005-2006թթ. Ադրբեջանի ցուցանիշի նվազման միտումը): Ծգնաժամի ազդեցության ակտիվ անդրադարձի տարիներին՝ 2007-2008թթ., այն ունի առավել ակտիվ աճի տեմպ: Ըստ ընտրված երկրների տվյալների բարձրագույն աճը նկատվում է Ադրբեջանի ցուցանիշում, կազմելով 20.7% (2007թ. նկատմամբ): Իսկ ՀՀ տնտեսության համար 2008-2010թթ. առավել հետաքրքիր դրսևորում են ունեցել համապատասխանաբար 9%, 3.5%, 7.2% կազմելով: Մնացած երկրներն, ընդհանուր առմամբ, ըստ կանխատեսվող տվյալների ունեն կառավարելի վարքագիծ: Կարելի է նաև ուշադրության դարձնել նաև այն փաստին, որ հարևան Վրաստանում գնաճի տեմպերն առավել հանգիստ վարքագիծ ունեն: Ուշագրավ փաստ կարելի է նկատել նաև, եթե դիտարկենք 2000-2006թթ. գրանցված գնաճի միջին տարեկան ցուցանիշը, ապա Հայաստանի համար այն կկազմի 3-4%, իսկ 2007-2009թթ. համար՝ 6-7%: Մյուս երկրներում կլինեն հետևյալ ցուցանիշները՝ 2000-2006թթ. 5%, 2007-2009թթ.՝ 13%

Ադրբեջանում, Վրաստանի համար համապատասխանաբար կլինեն 6 և 7%, Լատվիայում 4 և 10%, Լիտվայի համար 2 և 8%:

Գծապատկեր 2

2000-2016թթ. գնաճի ցուցանիշները նախորդող ժամանակահատվածի նկատմամբ:




Ուսումնասիրության հաջորդ հատվածը ներկայացնելով հասարակության բարեկեցության վրա ազդեցություն ունեցող մյուս գործոնին՝ գործազրկության մակարդակին, կնկատենք հետևյալ պատկերը: Ինչպես տեսնում ենք գործազրկության դիտարկման պարագայում պատկերը բավականին այլ է ստացվում: Եթե նախորդ գծապատկերը ցուցում է գնաճի զսպմանն ուղղված քաղաքականություն և որոշակի արդյունքներ դրսևորում, ապա այս պարագայում տարբեր իրավիճակ է գործում ամեն երկրի համար:

ՀՀ-ում գործազրկության մակարդակը մինչև 2005թ. ունեցել է կայուն նվազման միտում, որից հետո տնտեսական ցնցումների պարագայում խնդրի ֆորմալ կերպն առավել որոշակիորեն է ձևակերպվել՝ տեղափոխվելով նախ իրական գործազրկության մակարդակի բացահայտմանը և հետո նաև տնտեսական աճի ապահովման նոր աշխատատեղերի քանակի աճի հաշվին: Ըստ նախնական կանխատեսումների 2011-2016թթ. նախատեսվում է գործազրկության մակարդակը հասցնել 5.7%-ի: Սա չի կարելի միարժեքորեն համարել դյուրին խնդիր, քանզի տնտեսական ցնցումների պայմաններում կիրառվող խնայողական քաղաքականությունն էլ ավելի է ակտիվանում և ցանկացած սուբյեկտ սկսած պետական համակարգի որևիցե մասնիկ, թե հասարակ ձեռնարկություն փորձում է հասնել տնտեսական ինտենսիվ աճի ապահովման: 2007-2009թթ. Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի ցուցանիշները ունեն կտրուկ աճի միտում, ինչը մտահոգիչ է տնտեսական կայունության ապահովման համար: Եվրոպական երկրների պարագայում, առհասարակ, տնտեսական ճգնաժամի հարվածը բավականին զգալի է, ուստի և այս տարածաշրջանում գործազրկության աճի առավել մեծ ցուցանիշները պայմանավորված են ճգնաժամի ուղղակի ազդեցությամբ: Պատկերը բավականին ծանր է նաև Հունաստանի համար, քանզի այն ինչպես հայտնի է կարող է հանդիսանալ Եվրոպայում նոր ծագող՝ Եվրոգոտու, նաև Եվրոմիության միասնականությանը սպառնող մեծ վտանգի աղբյուր: Ներկա իրավիճակին առավել օպերատիվ արձագանքելու համար Հունաստանի տնտեսական դրությանն առավել համակողմանի տիրապետելու համար ԱՄՀ, Եվրոմիության, Եվրոպական կենտրոնական բանկի կողմից կազմվել է աշխատանքային խումբ՝ ներկայումս աշխատանքների ընթացքին հետևելու համար¹: Ըստ նշված զեկույցի տնտեսական անկումը դեռ չի հասել իր ցածրագույն կետին, իսկ տնտեսությունը վերականգնման փուլ կմտնի ոչ շուտ քան 2013թ.: Ադրբեջանական ցուցանիշը 2000-2003թթ. բացակայության պատճառով անհասանելի է:

¹ Statement by the European Commission, the ECB and IMF on the Fifth Review Mission to Greece Press Release No. 11/359 October 11, 2011.


Գործազրկության մակարդակը, որպես տնտեսապես ակտիվ բնակչության մաս 2000-2016թթ.



Տնտեսական ցնցումների վերջին շրջանում կիրառվեցին ֆինանսական գործիքների մեծ փաթեթներ, որոնց նպատակը հիմնականում տարբեր շուկաներում կայունացման և վստահեցման մեծացումն էր: Մասնավորապես ՀՀ օրինակով կարելի է ասել, որ ֆինանսական միջոցները, որոնց միջոցով ևս կատարվեցին տնտեսական տարբեր հատվածներում ներդրումներ հիմնականում պետական նոր ֆինանսական պայմանավորվածությունների արդյունք էին և ի կատար էին ածվում պետական պարտքի մակարդակի աճին զուգընթաց:

Ստորև պատկերված գծապատկերում ներկայացված է պետական պարտք ՀՆԱ հարաբերությունը ցույց տալու համար պետական պարտքի ծավալը: Հայաստանի պարագայում ցուցանիշը 2002-2007թթ. կտրուկ վարընթաց է ապրել մինչ այդ գոյություն ունեցող պարտավորությունների մարում ապահովելով: 2008-2009թթ. ֆինանսական աշխուժացման նպատակայնություն ունեցող մի շարք ծրագրեր իրականացվեցին հիմնականում արտերկրից ստացված մի շարք վարկերի ձեռքբերման շնորհիվ: Այդ պատճառով ցուցանիշը հասավ 40%-ի սահմանագիծը (40,1%): Նմանատիպ պայմաններում նույն սցենարով են սկսել նաև զարգանալ Վրաստանի, Լատվիայի, Լիտվայի, ցուցանիշները ևս նմանատիպ տատանման ենթարկվեցին (հիմնականում 30-45%-ի չափով): Անկասկած աչքից չի վրիպի նաև ադրբեջանական ցուցանիշը, որը ցածրագույնն է (հիմնականում պատական պարտքի սպասարկումը կատարվել և կատարվում է նավթադուլարների մեծ միջոցների հաշվին): (2000-2003թթ. Վրացական տվյալների լիակատարությունը բացակայում է):


Պետական պարտք ՀՆԱ հարաբերությունը վերը նշված երկրների համար 2000-2016թթ.



Վերը բերված ցուցանիշների հետ համատեղ կարելի է նաև ուսումնասիրել ՀՆԱ և պետական պարտք ցուցանիշների պահվածքը՝ ուսումնասիրելու դրանց աճի միտումները, քանզի տնտեսական կարևորության տեսանկյունից սա բավական նշանակալի է, որովհետև ուղղակիորեն ցույց է տալիս, թե արդյոք պետական պարտքի աճի դեպքում ապահովված է լինում տնտեսական աճը: Այս ուսումնասիրությունը կներկայացվի Հայաստանի, Ադրբեջանի մակարդակներով համեմատություններ կատարելու նպատակով: 2002-2008թթ. ՀՀ պատական պարտքը ցուցաբերել է նվազման միտում, իսկ ահա տնտեսական ճգնաժամի ակտիվացման ժամանակաշրջանում՝ 2008-2010թթ., ցուցանիշը կտրուկ աճ է գրանցել 2009թ.-ին հասնելով ընդհուպ մինչև 2008թ. ցուցանիշի կրկնապատիկին: Այս ցնցումների ժամանակահատվածում անկում է գրանցվել նաև ՀՆԱ ցուցանիշում, սակայն 2010-2011թթ. ինչպես նաև 2011-2016թթ. կանխատեսվող ցուցանիշն ունի միջին առումով 8%-ի (նախորդ ժամանակահատվածի նկատմամբ) մակարդակ: Թերևս, կարևորն այն է, որ պետական պարտքի կանխատեսումները 2010-2011թթ. ևս ունեն նվազման միտում համապատասխանաբար միջին վերցրած 7% նախորդ տարվա նկատմամբ:

Գծապատկեր 5


ՀՆԱ և պետական պարտքի վարքագիծը 2001-2016թթ.



Ադրբեջանական ցուցանիշների տատանումներն ավելի շատ են՝ 2004-2007թթ. բավականին հաջող պահվածքով, 2008-2010թթ. պետական պարտքի մակարդակը ևս աճել է, սակայն ինչպես արդեն նշեցինք, պետական պահուստների և նավթադուլարների միջոցով Ադրբեջանում պարտքն ավելի վերահսկելի է: Կանխատեսումների մասով 2011-2016թթ. ՀՆԱ աճը սահուն բացասական կեցվածք է դրսևորում, իսկ ահա պարտքը սկսած 2013թ.-ից ավելի արագ է աճում, քան տնտեսական աճը:

Գծապատկեր 6

ՀՆԱ և պետական պարտքի վարքագիծը 2001-2016թթ.



Անշուշտ, վերը նշված ցուցանիշների դիտարկումը բավականին հետաքրքրական պատկեր է ձևավորում հետճգնաժամային զարգացումների միտումով, սակայն բնավ բավարարչեն վստահորեն ասելու համար, թե ցնցումներն արդեն անցյալում են, և այդ իսկ պատճառով կարելի է մատնանշել, որ սրանց հիման վրա առաջանում է ավելի համակողմանիորեն ուսումնասիրությունների անհրաժեշտություն: Ամփոփման տեսանկյունից կարելի է տրամաբանական համարել ստացված արդյունքները, քանզի ճգնաժամը միանգամից հարված հասցրեց բոլորին և ամեն հնարավոր միջոցներով, որով դրեց համաշխարհային հանրությանը մտածել ոչ թե կոսմետիկ միջամտությունների կատարման մասին այլ ֆունդամենտալ, որոշ դեպքերում նույնիսկ մտածողության մակարդակով փոփոխությունների մասին: Սա ինքնին բոլորին ցույց տվեց ճգնաժամերի իրական «արժեքների» բացահայտմանը և դրա եղանակներին (իրականում բազում տեսաբաններ առաջարկել են ամենատարբեր եղանակներով դրանց իրական գնի և արժեքի բացահայտում, սակայն խնդիրը դրա առավել ճշգրտության մեջ է կայանում): Այդուհանդերձ, հիմնականում ճգնաժամի արժեքի բացահայտումն ուղղված է պետության կողմից բանկերի կապիտալացման նորմերի, ինչպես նաև ավանդատուների հավատի վերականգնումը ապահովվումը¹:

ՆԱԻՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

*ՆԿԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
փնտրեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ԲԱՆԿԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Տնտեսական աճի կարգավորման գործընթացում իր ուրույն տեղն ունի բանկային համակարգը, որն առևտրային բանկերի միջոցով ապահովում է տարբեր տեսակի գործառնությունների իրականացում և ծառայությունների մատուցում ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում: Ուստի այդ առումով կարևորվում է տվյալ երկրում գործող առևտրային բանկերի՝ ակտիվներով, պարտավորություններով և ընդհանուր կապիտալով հագեցվածությունը և դրանց օգտագործումը բանկի համար նախատեսված տնտեսական նորմատիվներին համահունչ: Մասնավորապես բանկի գործունեության անընդհատության համար իր առանձնահատուկ տեղն ունի իրացվելիությունը: Վերջինս բանկի տեսանկյունից հնարավորինս արագ և նվազագույն կորուստներով պարտավորությունները կատարելու կամ ակտիվների աճը ֆինանսավորելու բանկի ունակությունն է: Բանկի իրացվելիության ամբողջական պատկերը ստանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել բանկի ակտիվները և պարտավորությունները:

Բանկի ակտիվների կառուցվածքը բնութագրում է, թե ակտիվների որ մասն են կազմում այս կամ այն կարգի ակտիվները՝ վարկեր, արժեթղթեր, պահանջներ կառավարության նկատմամբ և այլն: Ըստ բանկի ակտիվների կառուցվածքի՝ բանկի ղեկավարությունը պետք է ընտրի ռազմավարություն՝ ստանալ շատ եկամտ՝ուտ, թե՞ ապահովի իրացվելիություն և որքան շատ վարկային տեղաբաշխումներ է կատարում բանկը, այնքան մեծ է նրա եկամուտը, և ցածր է իրացվելիությունը և հակառակը՝ որքան բարձր է բանկի իրացվելիությունը, այնքան քիչ են նրա եկամուտները:

Ակտիվների իրացվելիության կարևորագույն գործոններից է դրանց ժամկետայնությունը, քանի որ կարճ ժամկետայնությամբ ակտիվները կանխիկի արագ ձեռքբերման աղբյուր են և ունեն համեմատաբար կայուն գին: Եվ հակառակը՝ երկարաժամկետ ակտիվներն ունեն ցածր իրացվելիություն, որովհետև դրանք ավելի զգայուն են տոկոսադրույքների փոփոխությունների նկատմամբ:

¹ Franklin Allen and Douglas Gale, Understanding financial crises, Oxford university press 2007, pp.17-18.

Ակտիվները համարվում են բարձր իրացվելի կամ ուղղակի իրացվելի, եթե հնարավոր է դրանք շատ կարճ ժամանակահատվածում և նվազագույն կորուստներով փոխարկել կանխիկ դրամական միջոցների: Հիմնականում ակտիվներն իրացվելի են այնքանով, որքանով շուկայում բարձր է դրանց նկատմամբ պահանջարկը: Այսինքն՝ որքան բանկը շատ ունի ակտիվներ, որոնք կարող է իրացնել արագ և շուկայական գնից ոչ ցածր, այնքան բարձր է նրա իրացվելիության աստիճանը:

Բանկի իրացվելիությունը գնահատելու համար կարևոր է ուսումնասիրել նաև բանկի պարտավորությունները՝ հիմնականում դրանց ժամկետայնությունն ու կառուցվածքը: Բանկի պարտավորությունները կարելի է բաժանել ըստ հետևյալ ժամկետայնությունների՝ ցպահանջ, կարճաժամկետ (մինչև 1 տարի) և երկարաժամկետ (1 տարուց ավելի): Իրացվելիության վրա մեծ ազդեցություն են թողնում ցպահանջ պարտավորությունները, որոնք ցանկացած պահի կարող են հետ պահանջվել պարտատերերի և հաճախորդների կողմից: Ժամկետայնությունն իրացվելիության գնահատման իդեալական գործիք կլիներ, եթե ՀՀ-ում օրենսդրորեն սահմանափակված լիներ ժամկետային ավանդների՝ ժամկետից շուտ հետ պահանջելու ավանդատուների իրավունքը: Այդ պատճառով, բացի բանկի պարտավորությունների ժամկետայնությունից, անհրաժեշտ է առանձնահատուկ վերլուծության ենթարկել նաև բանկի պարտավորությունների կառուցվածքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների՝ առևտրային բանկերի իրացվելիության նորմատիվների խումբը ներառում է երկու հիմնական տնտեսական նորմատիվ¹, որոնք են.

- Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը – Ն2¹ նորմատիվ (ընդհանուր իրացվելիություն),
- Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը – Ն2² նորմատիվ (ընթացիկ իրացվելիություն): Վերոնշյալ նորմատիվների համար ԿԲ կողմից սահմանվել են հետևյալ սահմանաչափերը.
- Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (Ն2¹ նորմատիվ) սահմանվում է 15 տոկոս,
- Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն2² նորմատիվ) սահմանվում է 60 տոկոս:

Բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում ընդգրկվում են ստորև թվարկված այն ակտիվները (բացառությամբ 4, 5, 6 և 7 կետերում նշված ակտիվների գծով հաշվեգրված տոկոսների), որոնց համար չկա դրանց տնօրինումը սահմանափակող որևէ պայման:

1. Կանխիկ դրամական միջոցները (ներառյալ ճանապարհին գտնվող և բանկումատներում գտնվող դրամական միջոցները), կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը (բացառությամբ ճանապարհին գտնվող վճարային փաստաթղթերի)՝ ՎԻՁԱ, ԹՈՍԱՍ ՔՈՒԿ/ՄԱՍՏԵՐ ՔԱՐՏ, ԱՍԵՐԻՔԱՆ ԷՔՍՊՐԵՍ, ՍԻՏԻՔՈՐՊ և Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ նաև այլ վճարային փաստաթղթեր,
2. Կենտրոնական բանկում թղթակցային հաշիվների և պարտադիր պահուստների միջոցներն ու ներդրված ավանդները,
3. Բանկային ոսկին, ներառյալ նաև ճանապարհին գտնվող բանկային ոսկին,
4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված փոխանցելի մուրհակները, որոնց մինչև մարումն ընկած ժամանակահատվածը մինչև 1 տարի է, և որոնք ենթակա են պարտադիր վճարման ՀՀ ԿԲ-ի կողմից՝ ՀՀ կառավարության գանձապետական միասնական հաշվի միջոցներից, ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերը և ԿԲ-ի թողարկած արժեթղթերը՝ ընթացիկ (շուկայական) արժեքով,
5. Կենտրոնական բանկի կողմից «Գ-» և բարձր վարկանիշ ստացած ոչ բանկ կազմակերպությունների արժեթղթերը՝ ընթացիկ (շուկայական) արժեքով,

¹ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2:

6. Ստանդարտ և Փուրգ կամ Ֆիթչ (Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված Ա+(Ա1) և բարձր վարկանիշ ունեցող պետությունների պետական զանձապետական պարտատոմսերը՝ ընթացիկ (շուկայական) արժեքով,
7. Ստանդարտ և Փուրգ կամ Ֆիթչ (Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների տրամադրած Ա+(Ա1) և բարձր վարկանիշ ունեցող կորպորատիվ պարտատոմսերը՝ ընթացիկ (շուկայական) արժեքով,
8. Ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում թղթակցային հաշիվները. ընդ որում, վերջիններիս մեծությունը նվազեցվում է նույն բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունների չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան «նոտրո» թղթակցային հաշվի մնացորդն է:

Բարձր իրացվելի ակտիվներում չեն ընդգրկվում գրավադրված, ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը:

Բանկի ընդհանուր ակտիվների (Ա_{ընդ}) հաշվարկում ընդգրկվում է ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանի «Ակտիվներ» կարգի բոլոր հաշիվների հանրագումարը: Ընդհանուր ակտիվների հանրագումարը պակասեցվում է վերոնշյալ բարձր իրացվելի ակտիվներում ներառվող 8-րդ կետի համաձայն թղթակցային «նոտրո» հաշիվներից նվազեցվող գումարների չափով: Ընդհանուր ակտիվների հանրագումարը պակասեցվում է բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում չընդգրկվող՝ ռեպո համաձայնագրերով վաճառված, ինչպես նաև գրավադրված՝ բարձր իրացվելի ակտիվների 4, 5, 6 և 7-րդ կետերով սահմանված արժեթղթերի գումարի չափով:

Ցպահանջ պարտավորությունների հաշվարկում ընդգրկվում են հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող ցպահանջ կամ մարման սահմանված ժամկետ չունեցող միջոցները (ներառյալ դրանց գծով հաշվեգրված ցպահանջ և մարման սահմանված ժամկետ չունեցող տոկոսները), այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունները: Ընդ որում, ցպահանջ պարտավորություններից նվազում են բարձր իրացվելի ակտիվների 8-րդ կետի առաջին պարբերության համաձայն թղթակցային «նոտրո» հաշիվներից նվազեցվող ցպահանջ պարտավորությունները (ներառյալ դրանց գծով հաշվեգրված տոկոսները): Մույն նորմատիվի իմաստով ժամկետանց են այն պարտավորությունները, որոնք, բացառությամբ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում գտնվողների, չեն կատարվել պարտավորությամբ սահմանված ժամկետում: Դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում գտնվող գործերով պարտավորությունները համարվում են ցպահանջ:

Ուսումնասիրելով ՀՀ առևտրային բանկերից մեկի («Անելիք Բանկ» ՓԲԸ) հրապարակած ֆինանսական հաշվետվություններից համախմբված հաշվեկշռի տվյալները՝ կարելի է փաստել հետևյալը.

Աղյուսակ 1

«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ համախմբված հաշվեկշիռը

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ 30.06.2011թ.	Նախորդ ֆինանսական տարվա վերջի դրությամբ 31.12.2010թ.	Շեղումը (+,-)	
				Բացարձակ հազ. դրամ	Հարաբ. %
h/h	1	2	3	4	5
1	Ակտիվներ				
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ Կենտրոնական բանկում	10,049,903	10,182,032	-132,129	-1.30%
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ	0	0	0	0
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,902,565	9,146,079	-2,243,514	-24.53%
1.4	Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ	0	0	0	0

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ 30.06.2011թ.	Նախորդ ֆինանսական տարվա վերջի դրությամբ 31.12.2010թ.	Շեղումը (+,-)	
				Բացարձակ հազ. դրամ	Հարաբ. %
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառվածքություններ	35,373,175	29,721,156	5,652,019	19.02%
1.6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	95,798	91,010	4,788	5.26%
1.7	Սինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	2,442,943	2,469,687	-26,744	-1.08
1.8	Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում	0	0	0	0
1.9	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ	0	0	0	0
1.10	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	5,447,410	4,957,589	489,821	9.88%
1.11	Հետաձգված հարկային ակտիվներ	0	0	0	0
1.12	Այլ ակտիվներ	3,312,393	3,523,301	-210,908	-5.99%
	Ընդամենը ակտիվներ	63,624,187	60,090,854	3,533,333	5.88%
2	Պարտավորություններ				
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17,521,846	19,210,288	-1,688,442	-8.79%
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	29,593,947	24,734,977	4,858,970	19.64%
2.3	Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	0	0	0	0
2.4	Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն	0	0	0	0
2.5	Վճարվելիք գումարներ	29,138	28,784	354	1.23%
2.6	Հետաձգված հարկային պարտավորություններ	29,889	29,889	0	0
2.7	Պահուստներ	20,632	25,724	-5,092	-19.79%
2.8	Այլ պարտավորություններ	542,207	381,453	160,754	42.14%
	Ընդամենը պարտավորություններ	47,737,659	44,411,115	3,326,544	7.49%
3	Կապիտալ				
3.1	Կանոնադրական կապիտալ	10,816,300	10,816,300	0	0
3.2	Էմիսիոն եկամուտ	3,483,700	3,483,700	0	0
3.3	Պահուստներ	(82,266)	(273,694)	191,428	69.94%
3.3.1	Գլխավոր պահուստ	97,000	80,000	17,000	21.25%
3.3.2	Վերագնահատման պահուստներ	(179,266)	(353,694)	174,428	49.32%
3.4	Չբաշխված շահույթ (վնաս)	1,668,794	1,653,433	15,361	0.93%
3.4.1	Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ	32,353	535,477	-503,124	-93.96%
3.4.2	Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ	1,636,441	1,117,956	518,485	46.38%
3.5	Կապիտալի այլ տարրեր	0	0	0	0
	Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ	15,886,528	15,679,738	206,790	1.32%
	Փոքրամասնության բաժնեմաս	0	0	0	0
	Ընդամենը կապիտալ	15,886,528	15,679,739	206,789	1.32%
	Ընդամենը պարտավորություններ և կապիտալ	63,624,187	60,090,854	3,533,333	5.88%

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ չնայած 2010 թվականի վերջի նկատմամբ 2011 թվականի առաջին կիսամյակում ակտիվների, պարտավորությունների և կապիտալի գծով «Անելիք Բանկ» ՓԲ ընկերությունն ունեցել է աճման միտում, սակայն որոշ հոդվածների գծով գրանցվել են նվազումներ, հատկապես ՀՀ Կենտրոնական բանկում կանխիկ դրամական միջոցների, բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների ու պարտավորությունների, պահուստների ու շահույթի գծով: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ կարելի է փաստել, չնայած որոշ բացասական դրսևորումներին «Անելիք Բանկ» ՓԲ ընկերությունն ընդհանուր առմամբ ունեցել է ակտիվների և պասիվների գծով դրական միտումներ:

Ինչպես արդեն նշել ենք, յուրաքանչյուր բանկի համար կարևորվում են հիմնական տնտեսական նորմատիվները, հատկապես կապված իրացվելիության հետ: Ուստի այդ առումով ներկայացնում ենք «Անելիք Բանկ» ՓԲԸ հիմնական տնտեսական նորմատիվները 2011թ. առաջին կիսամյակում:

Աղյուսակ 2

**«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ համախմբված հաշվետվություն
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ (2011թ. 1-ին կիսամյակ)¹**

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համախմբված հաշվետվությունների նկատմամբ	ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու կիսամյակում խախտումների թիվը
1	2	3	4	5
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	10,816,300	10,816,300	50,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	13,088,423	13,118,630	5,000,000	Խախտում առկա չէ
Ն ₁ Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	24.10%	21.54%	12.0%	Խախտում առկա չէ
Ն ₂ ¹ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	18.71%	27.76%	15.0%	Խախտում առկա չէ
Ն ₂ ² Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	111.24%	97.57%	60.0%	Խախտում առկա չէ
Ն ₃ ¹ Սեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	16.91%	16.88%	20.0%	Խախտում առկա չէ
Ն ₃ ² Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	93.30%	93.09%	500.0%	Խախտում առկա չէ
Ն ₄ ¹ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	1.23%	1.23%	5.0%	Խախտում առկա չէ
Ն ₄ ² Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	3.73%	3.24%	20.0%	Խախտում առկա չէ
ՀՀ Կենտրոնական բանկում տեղաբաշխված ՀՀ դրամով պարտադիր պահուստների նվազագույն չափը	X	X	8.0%	Խախտում առկա չէ
ՀՀ Կենտրոնական բանկում տեղաբաշխված արտարժույթով պարտադիր պահուստների նվազագույն չափը	X	X	12.0%	Խախտում առկա չէ

¹ «Անելիք Բանկ» ՓԲԸ 2010 թվականի տարեկան և 2011 թվականի կիսամյակային հաշվետվությունները:

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համախմբված հաշվետվությունների նկատմամբ	ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու կիսամյակում խախտումների թիվը
1	2	3	4	5
Առաջին արտարժութային խմբի համախառն դիրքի առավելագույն չափը	X	X	X	X
Երկրորդ արտարժութային խմբի համախառն դիրքի առավելագույն չափը	X	X	X	X
Ըստ առանձին արտարժույթների բաց դիրքի առավելագույն չափը	X	X	X	X

Աղյուսակ 2-ի տվյալներից ակնհայտ է, որ ուսումնասիրվող բանկի տնտեսական նորմատիվների գծով (ըստ սյունակ 5-ի) 2011 թվականի առաջին կիսամյակում առկա խախտումներ չկան: Այստեղից հետևություն, որ բանկը գտնվում է հուսալի պայմաններում, և այդ առումով էլ մասնավորապես բանկի իրացվելիության նորմատիվներն ունեն իրենց բացառիկ դերը ֆինանսական կայունության ապահովման գործընթացում:

ԳՈՒ ՏԵՐ-ԵՍԱՅԱՆ

*ՆԿԱՍ Մ. Զոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ՀԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Տնտեսական հարաբերությունների զարգացումը, արտաքին և ներքին նոր իրողությունների ձևավորումը, ինչպես նաև մի շարք այլ կարևոր հանգամանքներ օբյեկտիվորեն պայմանավորում են հարկային բարեփոխումների իրականացումը հանրապետությունում: Ընդհանուր առմամբ, դրա հիմնական և գլխավոր նպատակը պետք է լինի պետական եկամուտների ապահովումը՝ տնտեսական գործընթացների արդյունավետ կարգավորմամբ: Չնայած վերջին տարիներին հանրապետության հարկաբյուջետային ոլորտում արձանագրված դրական տեղաշարժին, այդուհանդերձ, հարկման ցուցանիշները տարածաշրջանային և միջազգային չափանիշների համեմատությամբ զգալիորեն ցածր են, ինչի հետևանքով սահմանափակվում են սոցիալական ոլորտում կատարվող ծախսերի և պետական այլ ծրագրերի ֆինանսավորման հնարավորությունները:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում 2002-2008 թվականներին արձանագրվել են տնտեսական աճի բավականաչափ բարձր ցուցանիշներ, ինչը հիմնականում պայմանավորված է եղել ներմուծման ծավալների և շինարարության ոլորտի աճի տեմպերով: Մակայն այն լրացուցիչ հարկային եկամուտներ գրեթե չի ապահովել, ինչի արդյունքում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը մնացել է նույնը և հիմնականում դրսևորել է տատանողական բնույթ: Մասնավորապես, հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը մինչև 2007 թվականը կազմել է 15.7 տոկոս, իսկ այնուհետև, պայմանավորված ներմուծվող ապրանքների գծով ԱԱՀ-ի աճով, 2008 թվականին բարձրացել է մինչև 16.7 տոկոս¹: Փաստորեն, հիշյալ ժամանակահատվածում արձանագրված բարձր տնտեսական աճի պայմաններում հարկային եկամուտների ոչ համարժեք աճի հիմնական պատճառն այն էր, որ տնտեսական աճի ապահովման հարցում հատկապես մեծ էր տնտեսության դժվար հարկվող ոլորտների դերը: Մասնավորապես, տնտեսական աճի երկու հիմնական աղբյուր-

¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2002-2008 թվականներին: Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2009: Վիճակագրական ազգային ծառայություն: www.armstat.am

ների՝ առևտրի և բնակարանաշինարարության բաժինը զգալիորեն մեծ է աճի ապահովման գործում, որոնք բնորոշվում են նաև շահութահարկի ցածր արդյունավետ դրույքաչափերով: Բացի այդ, տնտեսական աճին էապես նպաստել են ֆինանսական հատվածը և գյուղատնտեսությունը, որոնք ազատված էին ԱԱՀ-ից: Արդյունքում, հարկային եկամուտների աճն ակնկալվող մակարդակի չի հասել համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքի և տնտեսական աճի ապահովման գործում իրենց նպաստը բերած ոլորտների սահմանափակ հարկման հետևանքով:

Վերջին տարիներին հանրապետությունում ձևավորված հարկային եկամուտների կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ մի շարք հարկատեսակների գծով գոյություն ունի դեռևս չօգտագործված հարկային ներուժ: Մասնավորապես, զգալիորեն ցածր են գույքահարկի գծով մուտքերն այն դեպքում, երբ գույքահարկն առավել պարզ վարչարարություն ենթադրող և հեշտ հավաքագրվող հարկատեսակ է: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ գույքահարկի դեպքում հարկման բազան տեսանելի է և հնարավոր չէ թաքցնել հարկերի վճարումից խուսափելու նպատակով:

ԱՊՀ և Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի երկրների համեմատությամբ հանրապետությունում զգալիորեն ցածր է նաև ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկի բաժինը հարկային եկամուտների կառուցվածքում, որի պատճառներից են եկամուտների ցածր մակարդակը և հարկային արտոնությունների ծավալը: Բացի այդ, գյուղատնտեսական ոլորտում ձևավորվող եկամուտն ազատված է անհատական հարկումից այն դեպքում, երբ 2008 թվականին ընդհանուր ավելացված արժեքի 18 տոկոսը բաժին է ընկել գյուղատնտեսությանը¹: Նման իրավիճակն, ակնհայտորեն, անդրադառնում է հանրապետությունում ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկի ծավալների վրա: Ինչ վերաբերում է սոցիալական ապահովության վճարներին, ապա 2009 թվականին դրանք կազմել են ՀՆԱ-ի 3.3 տոկոսը, որը եկամտահարկի ցուցանիշը գերազանցում է գրեթե կրկնակի: Սակայն այս դեպքում առաջ է գալիս մեկ այլ հիմնախնդիր, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործատուի կողմից վճարվող ֆիքսված գումարի պատճառով ցածր աշխատավարձ վճարող ոլորտների գործատուները հայտնվում են ոչ բարենպաստ վիճակում բարձր աշխատավարձ վճարող ոլորտների գործատուների համեմատությամբ: Արդյունքում, տարբեր չափի աշխատավարձերի դեպքում գործատուի բեռը տոկոսային արտահայտությամբ կարող է տարբեր լինել, ինչը ոչ արդարացի մոտեցում է: Այս առումով, նշված հիմնախնդիրը վերացնելու համար անհրաժեշտ է գործատուների կողմից կատարվող վճարների չափը սահմանել տոկոսային արտահայտությամբ:

2000-2003 թվականներին շահութահարկի գծով մուտքերը ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ մոտ կիսով չափ նվազել են՝ 2.0 տոկոսից հասնելով 1.1 տոկոսի, սակայն 2010 թվականին աստիճանաբար բարձրացել են՝ հասնելով ՀՆԱ-ի 2.2 տոկոսի²: Շահութահարկի գծով ներկայումս գոյություն ունեցող հիմնախնդիրներից մեկը նվազագույն հարկի գանձումն է: Այս առումով, խնդիրը կայանում է նրանում, որ նույնիսկ վնասով աշխատող ընկերությունները ստիպված են վճարել շրջանառության 1 տոկոսի չափով նվազագույն հարկ: Ակնհայտորեն, այն տնտեսական տեսակետից արդարացված և հիմնավորված չէ հատկապես ցածր շահութաբերությամբ աշխատող տնտեսվարող սուբյեկտների համար: Բացի այդ, տնտեսական կորուստներով աշխատող ընկերությունների վրա այդ կերպ դրվում է լրացուցիչ հարկային բեռ: Այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է վերացնել նվազագույն հարկը, քանի որ այն չի բխում հարկի տնտեսական բովանդակությունից և չի նպաստում հարկի տնտեսական գործունեության կարգավորիչ գործառույթի իրացմանը:

Ընդհանուր առմամբ, հարկային քաղաքականության արդյունավետ իրականացման կարևոր խնդիրներից մեկն է հարկային արտոնությունների տրամադրման հարցը: Այս առումով, արտոնությունների տրամադրման ժամանակ անհրաժեշտ է որոշակի հաշվեկշռվածություն

¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թվականին: Վիճակագրական ազգային ծառայություն: www.armstat.am

² Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2000-2004: Վիճակագրական ազգային ծառայություն: www.armstat.am
Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թվականին: Վիճակագրական ազգային ծառայություն: www.armstat.am

ապահովել պետական եկամուտների կորստի և ակնկալվող արդյունքների միջև: Ըստ էության, հարկային արտոնությունները ստեղծում են անարդյունավետություն և անարդարություն: Միաժամանակ, ներդրողներին հարկային առավելություններ շնորհելը կարող է հանգեցնել բարեխղճորեն հարկեր վճարած և զգալի ներդրումներ իրականացրած ընկերությունների մրցունակության անկմանը: Բացի այդ, հարկային արտոնությունների տրամադրման արդյունքում շատ հաճախ տեղի է ունենում պետական եկամուտների կորուստ, իսկ արտոնություններ ստացած ընկերությունները դառնում են պակաս արտադրողական, խաթարվում է հարկման արդարության գաղափարը և այլն: Այս առումով, հարկային արտոնությունների տրամադրման գլխավոր նախապայման պետք է հանդիսանա դրանց հասցեականության ապահովումը, հակառակ դեպքում կաղավաղվի արտոնության ընդհանուր գաղափարը, և չի ապահովվի ի սկզբանե դրված նպատակի իրականացումը: Հարկային արտոնություններ սովորաբար տրամադրվում են օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանման նպատակով՝ հարկային բեռը թեթևացնելու միջոցով ստեղծելով մրցակցային առավելություն: Մակայն փորձը ցույց է տալիս, որ շատ հաճախ նման քաղաքականությունը չի ապահովում բավարար ներդրումներ բաց թողնված եկամուտները փոխհատուցելու համար: Այս առումով, կարծում ենք, որ հարկային արտոնություններ պետք է տրամադրվեն միայն շուկայի անկատարությունների չեզոքացման կամ ենթակառուցվածքների զարգացման համար, ինչը, ունենալով բազմապատկիչի ազդեցություն, կնպաստի տնտեսության զարգացման համար համապատասխան նախադրյալների ձևավորմանը: Ընդ որում, անհրաժեշտ է արտոնությունների տրամադրումից առաջ հստակ հաշվարկել ստացվելիք օգուտները և վնասները, որից հետո միայն ձեռնամուխ լինել արտոնությունների տրամադրմանը: Բացի այդ, պետք է գնահատել արտոնությունների տրամադրման տնտեսական էֆեկտը՝ միաժամանակ սահմանելով դրանց առավելագույնը 5 տարվա ընթացքում ինքնաբերաբար դադարելու մասին նորմեր, որից հետո վերլուծությունների միջոցով պարզել, թե արդյո՞ք տրամադրված հարկային արտոնություններն ապահովել են դրված նպատակի իրականացումը: Նշված խնդրի լուծման համար, կարծում ենք, կարելի է կիրառել առաջնային եկամուտների կորստի (օգուտի) կամ վերջնական եկամուտների կորստի (օգուտի) հաշվարկը:

Առաջնային եկամուտների կորստի (օգուտի) մեթոդի դեպքում հաշվարկվում է այն գումարը, որի չափով կրճատվում (ավելանում) է հարկային եկամուտը հարկային արտոնությունների ներդրման (վերացման) հետևանքով: Դրա հիմքում ընկած է գործող և փոփոխվող օրենսդրական ակտերի համեմատությունը, ինչի արդյունքում գնահատվում է արտոնության փաստացի արժեքը: Այս մեթոդի թերությունն այն է, որ հաշվի չեն առնվում մեկ նորմը հանելու հետևանքով մյուս նորմերի առավել ակտիվ գործողություններով պայմանավորվող փոփոխությունները:

Վերջնական եկամուտների կորստի (օգուտի) մեթոդի դեպքում հաշվարկվում է այն գումարը, որի չափով կրճատվում (ավելանում) է հարկային եկամուտը հարկային արտոնության ներդրման (վերացման) հետևանքով՝ միաժամանակ հաշվի առնելով տնտեսվարողների վարքագծի փոփոխությունը և հարկային արտոնության ներդրման (վերացման) ազդեցությունն այլ հարկատեսակներից ստացվող եկամուտների մակարդակի վրա: Կարծում ենք, որ հանրապետությունում ներկայումս իրականացվող հարկային վարչարարության պայմաններում կարելի է կիրառել առաջին մեթոդը, ինչը հնարավորություն կտա առավել նպատակային և արդյունավետ դարձնելու հարկային արտոնությունների կիրառումը:

Հարկային քաղաքականության տեսանկյունից կարևոր խնդիր է հարկման հատուկ ռեժիմների սահմանումը, որոնք հիմնականում կիրառվում են փոքր և միջին բիզնեսի, ինչպես նաև վարչարարական մեծ ծախսեր պահանջող ոլորտների հարկման նպատակով: Այս առումով, պետք է նշել, որ հանրապետությունում գործող հաստատագրված վճարները, ըստ էության, խնդրի ժամանակավոր և ոչ ամբողջական լուծում են: Իհարկե, որոշակի իրավիճակներում հաստատագրված վճարները կարող են ունենալ դրական ազդեցություն: Մասնավորապես, այն երկրներում, որտեղ առկա է սովետային տնտեսության զգալի հատված, հաստատագրված վճարները նպաստում են փոքր բիզնեսի անցմանը սովետայինից օրինական գործունեության դաշտ: Սովետային գործունեության մեծ ծավալների պայմաններում, երբ

ԱԱՀ-ի շենք բարձր է, հաստատագրված վճարը կարող է փոքր բիզնեսը հարկելու միակ մեխանիզմը լինել:

Հաստատագրված վճարներով հարկման մեթոդի ընտրությունը, որպես կանոն, կախված է պետության տնտեսության զարգացման աստիճանից և կարող է տարբերվել՝ շրջանառության հարկի պարզ դրույքաչափից մինչև ըստ ոլորտի և գործունեության տեսակի հարկում: Նման բազմաձևությամբ հանդերձ, հաստատագրված վճարների սահմանման ժամանակ պետք է ապահովվեն մի քանի պայմաններ: Մասնավորապես, հարկման նման մեթոդը պետք է լինի պարզ և հարկ վճարողների համար հասկանալի: Պետք է որոշակի կախվածություն ապահովել ԱԱՀ-ի չհարկվող շեմի և փոքր ու միջին բիզնեսի սուբյեկտ համարվելու համար սահմանվող չափանիշների միջև: Ավելին, հատուկ ռեժիմով հարկվող սուբյեկտների կողմից վճարման ենթակա հարկը պետք է մոտավորապես հավասար լինի այն գումարին, որը կվճարվեր ընդհանուր ռեժիմում գործելու դեպքում: Այլ կերպ ասած, հարկման հատուկ ռեժիմը պետք է համահունչ լինի ընդհանուր հարկային համակարգին, այսինքն՝ հաստատագրված վճարների համակարգում գործող տնտեսվարողի կողմից վճարվող հարկը պետք է հնարավորինս մոտ լինի ընդհանուր ռեժիմի հարկային բեռին: Հետևաբար, հարկման հատուկ ռեժիմից ընդհանուրին անցման դեպքում հարկային պարտավորությունները չպետք է զգալիորեն ավելանան:

Հանրապետության հարկային համակարգում գոյություն ունեցող լուրջ հիմնախնդիրներից է հարկային գերավճարների հարցը: Այս առումով, խիստ կարևորվում է, մի կողմից՝ գերավճարների վերադարձի համակարգի կատարելագործումը, իսկ մյուս կողմից, դրա նկատմամբ հարկ վճարողների վստահության բարձրացումը: 2011 թվականի մարտի 1-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 80.4 մլրդ դրամի գերավճար¹: Նման ծավալը վկայում է այն մասին, որ հանրապետության հարկային համակարգի համար դա լուրջ հիմնախնդիր է, և հարկ վճարողների գերակշիռ մասին դեռևս հասանելի չէ վերադարձման մեխանիզմներից օգտվելը: Ակնհայտ է, որ ԱԱՀ-ի գծով գերավճարների կուտակումը բացասաբար է անդրադառնում հարկ վճարողների կարգապահության վրա և լուրջ խոչընդոտ է ներդրումների և տնտեսական աճի համար: Ուստի, պետք է մշակել կուտակված գերավճարների նվազեցման ռազմավարություն, որի արդյունքում դրանք ժամանակի ընթացքում աստիճանաբար կկրճատվեն: Անհրաժեշտ է վերլուծել և գնահատել կուտակված գերավճարների ժամկետային կառուցվածքը, պարզել վերադարձման համար անհրաժեշտ ծախսերի ծավալը և սահմանել մարման հստակ ժամանակացույց: ԱԱՀ-ի գերավճարների աճի տեմպն անհրաժեշտ է զգալիորեն կրճատել՝ սահմանելով վերադարձման ենթակա գումարների խիստ որոշակի հերթականություն՝ ըստ գերավճարի ժամկետի տևողության: Բացի այդ, բոլոր հարկ վճարողներին անհրաժեշտ է թույլատրել, որպեսզի նրանք գերավճարներն անմիջապես հաշվանցեն հաջորդ ամսվա ԱԱՀ-ի հաշվին:

Ընդհանուր առմամբ, հանրապետության հարկային համակարգի հիմնախնդիրներից է հարկային օրենսդրության բարդությունը: Բացի այդ, տարբեր հարկատեսակների գծով արտոնություններ են սահմանվում տարբեր օրենքներով, ինչը զգալիորեն դժվարացնում է օրենսդրությունից օգտվելու հարկատուների հնարավորությունները: Մասնավորապես, «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 17-րդ հոդվածով սահմանվում է, որ հարկային այլ օրենքներով կարող են նախատեսվել ԱԱՀ-ից ազատումներ: Կարծում ենք, որ հիշյալ դրույթն ավելորդ է և պետք է հանել, ինչը հնարավորություն կտա բարելավելու հարկային համակարգի պարզությունը և թափանցիկությունը, ինչպես նաև բարձրացնելու հարկ վճարողների իրազեկվածությունը: Միաժամանակ, կարծում ենք, անհրաժեշտ է ԱԱՀ-ից բոլոր ազատումները (բացառությամբ շեմի) ներկայացնել միասնական ցանկով: Ի դեպ, նույնը վերաբերում է նաև զրոյական դրույքաչափով հարկվող բոլոր դեպքերին, ներառյալ հարկային այլ օրենքներով ներկայումս նախատեսված՝ ԱԱՀ-ից բոլոր ազատումները և ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկման դեպքերը:

Որոշակի խնդիրներ գոյություն ունեն նաև ակցիզային հարկի բնագավառում: Վերջինիս գծով հավաքագրվող եկամուտների ցուցանիշը վերջին ինը տարիներին զգալիորեն նվազել է:

¹ <http://www.taxservice.am>

Միջազգային չափանիշների համեմատությամբ ակցիզային հարկից հավաքագրման ընդհանուր մակարդակը հանրապետությունում զգալիորեն ցածր է: Մասնավորապես, 2009 թվականին ԵՄ անդամ պետություններում ակցիզային հարկի գծով մուտքերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին կազմել է 2.83 տոկոս, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետություններում՝ 3.83 տոկոս, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ 1.88 տոկոս¹: Փաստորեն, հիշյալ երկրներում ակցիզային հարկից մուտքերը ՀՆԱ-ի նկատմամբ մեկից երկու տոկոսային կետի չափով գերազանցում են Հայաստանի ցուցանիշը:

Հարկային համակարգի թափանցիկության վրա բացասաբար է ազդում այն փաստը, որ ակցիզային բնույթի հարկեր նախատեսվում են տարբեր օրենսդրական ակտերով: Այս առումով, անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական փոփոխությունների միջոցով որոշակի ապրանքների ներմուծման, արտադրության և գնման հարկման վերաբերյալ դրույթները սահմանել միայն «Ակցիզային հարկի մասին» օրենքում: Ակցիզային հարկից հավաքագրվող եկամուտները դրույքաչափերի վրա գնաճի ազդեցության պատճառով վերջին ինը տարիներին նվազել են: Դա կանխելու նպատակով անհրաժեշտ է ակցիզային հարկի դրույքաչափերի մասով կիրառել ինդեքսավորում: «Ակցիզային հարկի մասին» օրենքով կարելի է սահմանել գնաճի ինդեքս, որը կիրառելի կլինի բազային դրույքաչափի նկատմամբ:

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ հանրապետությունում հարկային համակարգի զարգացումը և հարկային վարչարարության բարելավումը տնտեսական զարգացման ներկա փուլում, իսկապես, խիստ հրատապ են ու արդիական, ինչը ենթադրում է տվյալ ոլորտում օրենսդրաիրավական և կազմակերպական քայլերի իրականացում:

ԳՈՒ ՏԵՐ-ԵՍԱՅԱՆ

*ՆԿԱՍ Մ. Զոթանյանի անվան
լինարեսազիրության ինստիտուտի հայցորդ*

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հարկային բեռ» հասկացությունն առաջ է եկել հարկերի առաջացման հետ միաժամանակ: Դեռևս Ա. Սմիթն իր աշխատություններում ցույց տվեց հարկային ճնշման և պետության բյուջետային մուտքերի միջև գոյություն ունեցող տնտեսական կախվածությունը²: Ֆինանսական գիտության զարգացման տարբեր փուլերում հարկային բեռի ուսումնասիրությունը և դրա օպտիմալ չափերի սահմանումը գտնվել է տարբեր տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Արդեն 18-19-րդ դարերում տարբեր մասնագետների կողմից բացահայտվեց հարկային բեռի մակարդակի և բյուջետային մուտքերի միջև գոյություն ունեցող կախվածությունը, դրա մակարդակի ազդեցությունը տնտեսական գործունեության հնարավորությունների վրա, և փորձ կատարվեց տալ հարկային բեռի այն քանակական մեծությունը, որը հնարավորություն կտար ապահովելու բյուջետային համապատասխան մուտքեր և, միաժամանակ, չէր խաթարի տնտեսական գործունեության իրականացումը: Մասնավորապես, Ֆ. Յուստին հարկային բեռը սահմանեց որպես ազգային եկամտի և բյուջեի միջև հարաբերակցություն, որը չպետք է գերազանցեր ազգային եկամտի 1/6-րդ մասը: Իսկ Ա. Բիֆելդի կարծիքով այդ սահմանը չպետք է գերազանցեր հարկատուի եկամուտների 25 տոկոսը³: Իհարկե, պետք է նշել, որ պատմական զարգացման տվյալ փուլում հարկային բեռի վերաբերյալ ուսումնասիրությունները և, առավել ևս, դրա օպտիմալ մակարդակի հաշվարկման փորձերը հիմնականում կրում էին տեսական բնույթ և դեռևս դուրս չէին գալիս որակական գնահատականների շրջանակներից:

¹ Եվրոպական հանձնաժողով, <http://ec.europa.eu>

² Смит А., Исследование о природе и причинах богатств народов. М, 2007г. с. 489.

³ Пушкарева В., История финансовой мысли и политики налогов. ИНФРА-М, 1996г. с. 183.

Տնտեսագիտական գրականության մեջ տարբեր մոտեցումներ են ցուցաբերվում հարկային բեռի սահմանման վերաբերյալ: Ժամանակակից տնտեսագիտական բառարանում հարկային բեռը սահմանվում է որպես տնտեսական սահմանափակումների աստիճան, որը ձևավորվում է հարկերի վճարման արդյունքում: Հարկային բեռի քանակական աստիճանը կարող է չափվել որպես հարկային վճարումների ընդհանուր մեծության հարաբերություն տվյալ սուբյեկտի կողմից նույն ժամանակահատվածում ստացված եկամուտներին¹: Ա. Բռիգգայինը տալիս է հարկային բեռի հետևյալ սահմանումը. մակրոմակարդակում հարկային բեռն ընդհանրական ցուցանիշ է, որը բնութագրում է հարկերի դերը հասարակության տնտեսական կյանքում և որոշվում է հարկային մուտքերի ընդհանուր գումարի հարաբերությամբ համախառն ազգային եկամտին²: Ն. Միլյակովը հարկային բեռի տակ նկատի է առնում երկրի մակարդակով ընդհանուր հարկային մուտքերի հարաբերությունը համախառն ներքին արդյունքին, իսկ կոնկրետ հարկատուի համար՝ կատարված հարկային վճարումների հարաբերությունն իրացման շրջանառությանը³: Ընդհանրացնելով գրականության մեջ գոյություն ունեցող հարկային բեռի սահմանումները՝ կարող ենք արձանագրել, որ դրա վերաբերյալ միասնական մոտեցում գոյություն չունի, չնայած որ գրեթե բոլոր սահմանումներն ունեն խիստ նմանություններ: Այս առումով, որպես մակրոմակարդակում հարկային բեռի ընդհանրական ցուցանիշ օգտագործվում է ընդհանուր հարկային եկամուտների հարաբերությունը համախառն ներքին արդյունքին, որն էլ, ըստ էության, ցույց է տալիս հարկային ճնշման մակարդակը տնտեսության վրա:

Ակնհայտ է, որ հարկային բեռի ցուցանիշը կարևոր նշանակություն ունի պետության տնտեսական քաղաքականության հիմնական նպատակների ձեռքբերման գործում: Վերջինիս կարևորությունը կայանում է հետևյալում: Հարկային բեռի ցուցանիշն անհրաժեշտ է պետության ընթացիկ հարկային քաղաքականության մշակման և իրականացման համար: Սահմանելով նոր հարկատեսակներ, փոփոխություններ կատարելով գործող հարկատեսակների հիմնական տարրերում, տրամադրելով տարաբնույթ հարկային արտոնություններ՝ պետությունը պարտավոր է հաշվարկել այդ գործողությունների արդյունքում հարկային բեռի մակարդակի փոփոխությունը: Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկային բեռը չգերազանցի թույլատրելի սահմանը, ինչին կարող են հետևել տնտեսական զարգացման առումով մի շարք ոչ ցանկալի հետևանքներ: Բացի այդ, հարկային բեռի ցուցանիշի օգնությամբ պետությունը կանխատեսում է բյուջետային մուտքերի ծավալն առաջիկա ժամանակահատվածի համար և գնահատում հարկային համակարգի արդյունավետությունը տնտեսության զարգացման առումով:

Հարկային բեռի ցուցանիշը հնարավորություն է տալիս իրականացնելու համեմատական վերլուծություններ տարբեր երկրներում արձանագրվող նման ցուցանիշի հետ՝ պարզելով հարկման տեսանկյունից առավել բարենպաստ տնտեսական միջավայրերը: Դա հատկապես կարևորվում է հնարավոր ներդրողներին ձեռնարկատիրության ոլորտ ներգրավելու, ներդրումային հոսքերն ակտիվացնելու և կապիտալի տեղաբաշխման համար: Հարկային բեռի ցուցանիշը հնարավորություն է տալիս նաև որոշակի ուղղորդումներ իրականացնելու սոցիալական քաղաքականության կտրվածքով: Պարզելով հարկային բեռի բաշխումն ըստ սոցիալական խմբերի՝ պետությունը կարող է հարկային ճնշումը թույլ ապահովված սոցիալական խմբերից բաշխել առավել լայն ֆինանսական հնարավորություններ ունեցող խմբերի վրա:

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և հարկային համակարգի բարեփոխումների կարևոր ուղղություններից մեկն է հարկային բեռի արդարացի և հավասարաչափ բաշխումը: Վերջինիս գնահատման վերաբերյալ միասնական մոտեցումների բացակայությունը բավականաչափ հիմնախնդիրներ է առաջացնում դրա արդյունավետ լուծման համար: Պետական ֆինանսների ժամանակակից տեսություններում հարկային բեռի քանակական գնահատումը հիմնականում օգտագործվում է տարբեր երկրներում հարկային ճնշման ցուցանիշների համեմատության, հարկային քաղաքականության կատարելագործման

¹ Райзенберг Б., Лозовский Л., Стародубцева Е., Современный экономический словарь. М.: ИНФРА-М, 2001г. с. 238.

² Налоги и налоговое право. Под ред. А. Брызгалина. М.: Центр «Налоги и финансовое право»: Аналитика-Пресс, 1997г. с. 54.

³ Миляков Н., Налоги и налогообложение. Курс лекций. М.: ИНФРА-М, 2000г. с. 5.

ուղղված միջոցառումների մշակման, տնտեսվարող սուբյեկտների վարքագծի վրա հարկերի ազդեցության գնահատման և այլ խնդիրների լուծման նպատակով: Մակրոմակարդակում հարկային բեռի տնտեսագիտական իմաստը համախառն ներքին արդյունքի այն մասի որոշման մեջ է, որը վերաբաշխվում է բյուջետային համակարգի միջոցով:

Ընդհանուր առմամբ, հարկային ճնշման մակարդակը տնտեսության վրա գնահատելու համար կիրառվում են մի շարք ցուցանիշներ, որոնց համադրման արդյունքում հնարավոր է դառնում առավել ամբողջական կերպով գնահատել հարկային բեռի մակարդակը: Մասնավորապես, դրանց շարքին են դասվում հետևյալները.

1. հարկային ճնշումը (հարկային վճարումների հարաբերությունը ՀՆԱ-ին),
2. բյուջեի կախվածությունը հարկային վճարումներից (հարկային վճարումների հարաբերությունը բյուջետային եկամուտներին),
3. հարկային ճնշումը տնային տնտեսությունների վրա (ֆիզիկական անձանց եկամտից զանձվող հարկերի հարաբերությունը բնակչության եկամուտների ծավալին՝ հանած սոցիալական օգնությունը),
4. հարկային ճնշումը սպառման վրա (սպառումից զանձվող հարկերի (անուղղակի հարկերի) հարաբերությունը վերջնական սպառողական ծախսերին),
5. հարկային ճնշումը կորպորատիվ սեկտորի շահույթի վրա (շահութահարկի գծով մուտքերի հարաբերությունը համախառն շահույթի վրա) և այլն:

Գրեթե նույն կերպ հաշվարկվում է նաև հարկային ճնշման մակարդակը մյուս հարկատեսակների և պարտադիր այլ վճարների գծով, ինչը որոշակիորեն օգնում է առավել ամբողջական կերպով գնահատելու երկրում ձևավորված հարկային բեռի մակարդակը: Այդ տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև հարկատուների կողմից հարկերի վճարման և համապատասխան հաշվետվությունների ներկայացման վրա տարեկան կտրվածքով ծախսվող ժամանակի ցուցանիշը:

Ներկայումս հարկային բեռին նվիրված ուսումնասիրություններում բավականաչափ բարդ հարցերից մեկն այն գործոնների բացահայտումն է, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել տնտեսության վրա հարկման ընդհանուր մակարդակի գնահատման ժամանակ: Որպես կանոն, դրանց շարքին են դասվում հետևյալները.

- հաշվարկված և վճարված հարկային պարտավորությունների ծավալը,
- հարկ վճարողների հարկային ապառքների ծավալը,
- հարկային կանխավճարների ծավալը,
- ԱԱՀ-ի գծով հարկային գերավճարների ծավալը,
- հարկային վարչարարության իրականացման նպատակով կատարվող ծախսերի ծավալն ինչպես պետության, այնպես էլ հարկատուների տեսանկյունից,
- ստվերային տնտեսության չափերը,
- հարկային արտոնությունների ծավալը:

Այժմ քննարկենք նշված գործոններից յուրաքանչյուրի ազդեցությունը հարկային բեռի մակարդակի վրա:

Հաշվարկված և վճարված հարկերի չափը. հարկ է նշել, որ սա այն գործոններից մեկն է, որը խիստ կարևորվում է հարկային բեռի ընդհանուր մակարդակի գնահատման տեսանկյունից: Ընդհանրապես, հարկման պրակտիկայում հարկային բեռը տարանջատվում է անվանականի և ռեալի: Անվանական հարկային բեռը բոլոր հաշվարկված հարկերի և սոցիալական վճարների ընդհանուր գումարի հարաբերությունն է ՀՆԱ-ին և որոշվում է հետևյալ բանաձևով:

$$\langle \text{ՀԲՄ} \rangle = \frac{\langle \text{ՀԳԻ} \rangle + \langle \text{ՄՎԻ} \rangle}{\langle \text{ՀՆԱ} \rangle}$$

որտեղ

ՀԲՄ- ն՝ հարկային բեռի մեծությունն է,

ՀԳԻ-ն՝ հաշվարկված հարկերի գումարը,

ՄՎԻ-ն՝ հաշվարկված սոցիալական վճարումների գումարը,

ՀՆԱ-ն՝ համախառն ներքին արդյունքը:

Իրական հարկային բեռը հաշվարկվում է որպես փաստացի գանձված հարկային եկամուտների հարաբերություն ՀՆԱ-ին:

$$\text{ՀԲՄ} = \frac{\text{ՀԳՎ} + \text{ՄՎՎ}}{\text{ՀՆԱ}}$$

որտեղ

ՀԲՄ-ն՝ հարկային բեռի մեծությունն է,

ՀԳՎ-ն՝ վճարված հարկերի գումարը,

ՄՎՎ-ն՝ վճարված սոցիալական վճարումների գումարը,

ՀՆԱ-ն՝ համախառն ներքին արդյունքը:

Նման տարանջատման հիմնական իմաստն այն է, որ հատկապես անցումային տնտեսություններում շատ հաճախ արձանագրվում է զգալի տարբերություն փաստացի գանձված և հաշվարկված հարկային եկամուտների միջև: Դա կարող է վկայել հարկային թույլ վարչարարության, հարկային բարձր դրույքաչափերի և մի շարք այլ երևույթների մասին: Սակայն պետք է նշել, որ միշտ չէ, որ անվանական հարկային բեռը կարող է գերազանցել իրական հարկային բեռին: Այն դեպքերում, երբ հարկային ապառքների ծավալը փոքր է հարկային կանխավճարների և գերավճարների ծավալից, ապա կստացվի հակառակ պատկերը:

Հարկ վճարողների հարկային ապառքների ծավալը: Շատ հաճախ այս ցուցանիշի բացարձակ մեծությունն օգտագործվում է հարկային բեռի մակարդակը երկրում բնութագրելու համար: Այս դեպքում հարկային բեռի գնահատման համար, որպես կանոն, օգտագործվում է հետևյալ բանաձևը:

$$\text{ՀԲՄ} = \frac{\text{ՀԳՎ} + \text{ՄՎՎ} + \text{ՀԱ}}{\text{ՀՆԱ}}$$

որտեղ

ՀԱ-ն հարկային ապառքների ընդհանուր գումարն է:

Այս դեպքում հարկային բեռի գնահատման ժամանակ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ հարկային ապառքներն ընդգրկում են ոչ միայն տվյալ տարվա, այլ նաև նախորդ տարիներին հարկային պարտավորությունների չկատարման հետևանքով գոյացած և չվճարված հարկերի գումարը: Իսկ եթե նկատի ունենանք այն, որ հարկային բեռը հաշվարկվում է մեկ տարվա կտրվածքով, ապա ակնհայտ կդառնա, որ այս դեպքում հարկային բեռի իրական պատկերը չենք ստանա: Սակայն այն հնարավորություն է տալիս հաշվարկելու տվյալ տարվա կտրվածքով տնտեսության վրա առկա հարկային ճնշման մակարդակը:

Հարկային կանխավճարների ծավալը. Տեսականորեն այս ցուցանիշը հարկային բեռի գնահատման տեսանկյունից պետք է վերաբերի հաջորդ հաշվետու ժամանակաշրջանին, սակայն փաստացի կերպով տնտեսվարող սուբյեկտներն այդ վճարումները կատարում են տվյալ ժամանակահատվածում, և այդ առումով, այն նրանց համար հարկային ճնշում է տվյալ տարվա համար: Այս դեպքում հարկային բեռի հաշվարկման բանաձևը կունենա հետևյալ տեսքը (4):

$$\text{ՀԲՄ} = \frac{\text{ՀԳՎ} + \text{ՄՎՎ} + \text{ՀԱ} - \text{ՀԿ}}{\text{ՀՆԱ}}$$

որտեղ

ՀԿ-ն հարկային կանխավճարներն են:

ԱԱՀ-ի գծով հարկային գերավճարների ծավալը: Այս գումարը, փաստորեն, պետության պարտքն է հարկատուներին և ենթակա է վերադարձման բյուջեից: Հետևաբար, տվյալ հանգամանքն անհրաժեշտ է հաշվի առնել հարկային բեռի գնահատման ժամանակ (5):

$$\text{ՀԲՄ} = \frac{\text{ՀԳՎ} + \text{ՄՎՎ} + \text{ՀԱ} - \text{ՀԿ} - \text{ՀԳ}}{\text{ՀՆԱ}}$$

որտեղ

ՀԳ-ն հարկային գերավճարներն են:

Հարկային վարչարարության իրականացման նպատակով կատարվող ծախսերի չափը ինչպես պետության, այնպես էլ հարկատուների տեսանկյունից: Հարկման տեսության մեջ հարկային համակարգի գործունեության տեսանկյունից ընդունված է կատարվող ծախսերը տարանջատել երկու խմբի՝ ուղղակի ծախսեր, որոնք անհրաժեշտ են հարկային ծառայության գործունեության կազմակերպման համար, և անուղղակի ծախսեր, որոնք կատարվում են հարկատուների կողմից սեփական հարկային պարտավորությունների իրականացման նպատակով: Հետևաբար, հարկային բեռի գնահատման ժամանակ առավել ռեալ պատկեր ստանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն հարկային վարչարարության իրականացման, այլ նաև հարկատուների կողմից հարկային հաշվառման նպատակով կատարվող ծախսերը: Սակայն երկու մեծությունների ընդգրկումը հարկային բեռի հաշվարկման մեջ այնքան էլ տրամաբանական չէ, քանի որ եթե հարկատուների կողմից կատարվող ծախսերն իսկապես ավելացնում են նրանց հարկային բեռը, ապա հարկային վարչարարության նպատակով պետության կողմից իրականացվող ծախսերի չափը ավելի շատ վկայում է ընդհանուր հարկային համակարգի արդյունավետության մասին: Հաշվի առնելով այդ գործոնի ազդեցությունը՝ հարկային բեռի հաշվարկման բանաձևը կարող ենք ներկայացնել հետևյալ տեսքով:

$$\langle \text{ԲՄ} \rangle = \frac{\langle \text{ԳՎ} \rangle + \langle \text{ՍՎՎ} \rangle + \langle \text{ՀԱ} \rangle - \langle \text{ՀԼ} \rangle - \langle \text{ՀԳ} \rangle + \langle \text{ՀՎԾ} \rangle}{\langle \text{ՆԱ} \rangle}$$

որտեղ

ՀՎԾ-ն հարկատուների կողմից կատարվող վարչարարական ծախսերն են:

Ստվերային տնտեսության չափերը: Ընդհանուր առմամբ, չնայած վերը բերված հարկային բեռի վրա ազդող գործոնների բազմազանությանը, այդուհանդերձ, տվյալ ցուցանիշի վրա առավել առարկայական ազդեցություն ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական արտահայտությամբ, ունենում է ստվերային տնտեսության ծավալը: Հաշվի առնելով տվյալ գործոնի ազդեցությունը՝ հարկային բեռի հաշվարկման բանաձևը կունենա հետևյալ տեսքը:

$$\langle \text{ԲՄ} \rangle = \frac{\langle \text{ԳՎ} \rangle + \langle \text{ՍՎՎ} \rangle + \langle \text{ՀԱ} \rangle - \langle \text{ՀԼ} \rangle - \langle \text{ՀԳ} \rangle + \langle \text{ՀՎԾ} \rangle}{\langle \text{ՆԱ} \rangle (1 + \langle \text{ՍՏԾ} \rangle)}$$

որտեղ

ՍՏԾ-ն ստվերային տնտեսության ծավալն է՝ տոկոսային արտահայտությամբ:

Փաստորեն, հաշվի առնելով ստվերային տնտեսության ազդեցությունը հարկային բեռի ցուցանիշի վրա, կարող ենք արձանագրել, որ այս դեպքում հարկային բեռի ցուցանիշը կնվազի, քանի որ հանրապետությունում ստվերային տնտեսության ծավալները զգալի են:

Այժմ փորձենք վերը բերված բանաձևերի օգնությամբ հաշվարկել հանրապետությունում առկա հարկային բեռի մակարդակը: Պետք է նշել, որ ներկայացված բանաձևերից ոչ բոլորի մասով է հնարավոր հաշվարկել հարկային բեռի մակարդակը հանրապետությունում՝ համապատասխան պաշտոնական տվյալների բացակայության պատճառով: Փաստացի վճարված հարկերի և սոցիալական վճարների գծով 2010 թվականին հարկային բեռի ցուցանիշը կազմել է¹.

$$\langle \text{ԲՄ} \rangle = \frac{547.1 + 1053}{3.509.6} = 18.6$$

Ըստ հաշվարկված հարկերի և սոցիալական վճարների՝ 2010 թվականին արձանագրված հարկային բեռի ցուցանիշը կկազմի.

¹ Տվյալները վերցված են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թվականի հունվար-դեկտեմբերին: Վիճակագրական ազգային ծառայություն: Երևան 2011թվական» հրատարակումից, Հայաստանի Հանրապետության 2010 պետական բյուջեից և www.taxservice.am կայքից:

$$\langle \text{ԲՄ} \rangle = \frac{550,1 + 105,2}{3,214,6} = 20,3$$

Հարկային բեռի հաշվարկման ժամանակ, եթե հաշվի առնենք նաև հարկային ապառքների ծավալը, ապա կատանանք հետևյալ ցուցանիշը:

$$\langle \text{ԲՄ} \rangle = \frac{547,1 + 105,3 + 103,4}{3,509,4} = 22,4$$

Ինչ վերաբերում է մյուս մեթոդներով հարկային բեռի հաշվարկմանը, ապա պետք է նշել, որ համապատասխան տվյալների, մասնավորապես հարկային կանխավճարների, վարչարարության վրա հարկատուների կողմից կատարվող ծախսերի, ինչպես նաև ստվերային տնտեսության ծավալների պաշտոնական ցուցանիշների բացակայությունը որոշակիորեն բարդացնում է նման հաշվարկի իրականացումը: Սակայն, դրանով հանդերձ, կարելի է որոշակիորեն գնահատել հարկային բեռի ցուցանիշի հնարավոր փոփոխությունը՝ պայմանավորված նշված գործոններով: Հաշվի առնելով, որ հանրապետությունում հարկային գերավճարների և կանխավճարների ծավալը բավականաչափ մեծ է, ապա արդյունքում համարիչը որոշակիորեն կփոքրանա, իսկ ստվերային տնտեսության ծավալներով պայմանավորված՝ հայտարարը կմեծանա, ինչի հետևանքով հարկային բեռի ցուցանիշը զգալիորեն կփոքրանա: Հետևաբար, հանրապետությունում ներկայումս արձանագրված հարկային բեռի իրական ցուցանիշն ավելի փոքր է պաշտոնապես գրանցվածից, ինչը մեկ անգամ ևս վկայում է հարկային համակարգի գործունեության ոչ բավարար արդյունավետության մասին: Տվյալ հիմնախնդրի լուծումը պահանջում է օրենսդրաիրավական և կազմակերպական համալիր միջոցառումների իրականացում, որի հիմնական խնդիրը պետք է հանդիսանա հարկային բեռի հավասարաչափ և արդարացի բաշխումը, հարկային քաղաքականության զարգացման և վարչարարության բարելավման արդյունավետ մոտեցումների մշակումը:

ИРИНА АКОПЯН

Старший научный сотрудник института экономики им. М.Котаняна НАН РА, к.э.н.

ВЗАИМОСВЯЗЬ АМОТИЗАЦИОННОЙ И НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ В ПОСТСОЦИАЛИСТИЧЕСКИХ СТРАНАХ

Процесс реформирования налогового законодательства, протекающий с девяностых годов прошлого века в постсоциалистических странах, охватил также совершенствование амортизационной политики в налоговых целях. Дело в том, что в условиях развития рыночных отношений амортизационные отчисления утратили свою основную (воспроизводственную) функцию, которую они выполняли в условиях социалистической системы хозяйствования. При этом одной из причин ослабления воспроизводственной функции явилась продолжающаяся инфляция. В условиях рыночных отношений суммы начисленной амортизации превратились просто в некий расход, регулирующий уровень налоговой нагрузки, величина которой зависит от отрасли экономики, в которой работает налогоплательщик, имеющий в собственности основные средства. Однако, по сравнению с другими расходами, на сумму которых снижается налогооблагаемая прибыль, амортизация обладает той особенностью, что имеет двойственную природу, имея две составляющие (физическую и моральную).

Следует остановиться на некоторых различиях в методах начисления амортизации в ряде постсоциалистических государств. Во всех указанных государствах (кроме Туркмении, где налоговый кодекс не регулирует порядок и нормы амортизации, делая отсылку на иные нормативно-правовые акты) порядок начисления амортизации регулируется налоговым

законодательством. В Армении при определении облагаемой налогом прибыли валовой доход уменьшается на суммы амортизационных отчислений в связи с износом основных средств и на суммы нематериальных активов (к последним относятся приобретенные или созданные налогоплательщиком результаты интеллектуальной собственности). В Армении годовая величина амортизационных отчислений исчисляется как отношение первоначальной стоимости, а в случае переоценки - восстановительной стоимости основных средств к амортизационному сроку, размер которого зависит от того, к какой группе относится актив. Амортизация определяется исходя из минимальных сроков службы актива, которые составляют: для зданий сооружений и передаточных устройств – 20 лет, для зданий и сооружений гостиниц, пансионатов, домов отдыха, санаториев – 10 лет, для поточных линий, робототехники -3 года, для вычислительной и компьютерной техники -1 год, для прочих основных средств -5 лет. При определении суммы облагаемой прибыли налогоплательщик может выбрать иной срок амортизации основных средств, однако в рамках установленных сроков. В Азербайджане налоговое законодательство делит основные средства на несколько категорий, по отношению к каждой из которых устанавливаются амортизационные нормы (определенный процент от их остаточной стоимости на конец налогового периода). Нормы амортизации по категориям основных средств устанавливаются в следующих размерах: здания, строения, сооружения – до 7%, машины, оборудование и вычислительная техника, а также транспортные средства – до 25%, нематериальные активы – до 10%, прочие основные средства - до 20 %. В Республике Беларусь амортизация регулируется законом "О налогах на доходы и прибыль" (с 2007 года республика отказалась от разделения налогообложения прибыли организаций на налог на доходы и на налог на прибыль). Определение сумм амортизационных отчислений осуществляется ежегодно, исходя из установленных норм амортизационных отчислений и балансовой стоимости основных фондов по отдельным группам или инвентарным объектам, состоящим на балансе организации, путем умножения среднегодовой стоимости основного средства на соответствующие нормы амортизационных отчислений с учетом поправочных коэффициентов, отражающих фактические условия эксплуатации этих средств. В Узбекистане правила амортизации основных средств и нематериальных активов регулируются Налоговым кодексом. Имущество, подлежащее амортизации, распределяется по группам и подгруппам с установленными предельными нормами амортизации (здания, строения и сооружения - 5%, передаточные устройства -8%, рабочие машины и оборудование -15%, мобильный транспорт -8%, компьютерные, периферийные устройства, оборудование по обработке данных 10%. Амортизационные отчисления по каждой подгруппе рассчитываются путем применения нормы амортизации по данной подгруппе, но не выше предельной. В Казахстане амортизируемое имущество, которое называют "фиксированные активы", в целях упрощения исчисления сумм амортизации разделены на 4 группы. По каждой группе определяется предельная норма амортизации в процентах (здания, сооружения – 10 %, машины и оборудование -25 %, компьютеры и оборудование для обработки информации – 40 %, прочие фиксированные активы - 15 %). В Казахстане отменен ускоренный порядок амортизации, в соответствии с которым по фиксированным активам, впервые введенным в эксплуатацию на территории республики, налогоплательщик был вправе в первый налоговый период эксплуатации исчислять ускоренную амортизацию по двойным нормам амортизации при условии использования данных фиксированных активов в целях получения совокупного годового дохода не менее 3-х лет. В России первоначальная стоимость основного средства определяется как сумма расходов на его приобретение, сооружение, изготовление, доставку и доведение до состояния, в котором оно пригодно для использования, за исключением налога на добавленную стоимость и акцизов. Восстановительная стоимость амортизируемых основных средств определяется как их первоначальная стоимость с учетом проведенных переоценок.

Остаточная стоимость основных средств определяется как разница между восстановительной их стоимостью и суммой амортизации в целях налогообложения. Амортизируемое имущество распределяется по амортизационным группам в соответствии со сроком его полезного использования, который определяется налогоплательщиком самостоятельно на дату ввода в эксплуатацию данного объекта. Налогоплательщик вправе увеличить срок полезного использования объекта основных средств после даты ввода его в эксплуатацию в случае, если после реконструкции, модернизации или технического перевооружения такого объекта произошло увеличение срока его полезного использования. Амортизируемые основные средства объединяются в десять амортизационных групп. Сумма амортизации для целей налогообложения определяется налогоплательщиком ежемесячно, амортизация начисляется отдельно по каждому объекту амортизируемого имущества.

В последние годы в России был пересмотрен подход к начислению амортизации в целях налогообложения прибыли предприятий. В Налоговом кодексе России принципиально поменялся порядок начисления амортизации с использованием нелинейного метода. На законодательном уровне была определена возможность отказа от пообъектного начисления амортизации и предусмотрена возможность начисления амортизации методом остатка по укрупненным группам.

Таким образом, при определенном разнообразии методов начисления амортизационных сумм, основные принципы его продолжают действовать на всем постсоветском пространстве. Однако при данной системе начисления амортизации и учета этих сумм в налоговых целях в странах СНГ, особенно это касается Армении, не обеспечивается система замены и модернизации основных средств. Более того, с каждым годом усиливается тенденция снижения доли собственных средств предприятий в инвестиции в основной капитал. В реальной действительности опыт новых независимых государств, в том числе Армении, свидетельствует о том, что удельный вес собственных средств / прибыли и амортизационных отчислений / в инвестиции в основной капитал из года в год снижается. Так, в Армении в 2009 году по сравнению с 2001 годом снижение составило около 13%, а в России в 2009 году удельный вес прибыли и амортизации составил 33,6% по сравнению с 42, 5% в 2001 году. Следовательно, в большинстве стран с переходной экономикой утрачено основное предназначение амортизационных отчислений, состоящее в повышении инвестиционной активности и обновлении основных фондов.

Исходя из этих тенденций, в последние годы, среди российских экономистов распространилось мнение о целесообразности исключения из перечня расходов, перечисленных в законе о налоге на прибыль, такого регулятора налоговой нагрузки, как суммы начисленной амортизации¹. При этом предлагается в случае реального создания новых объектов основных фондов, восстановления функционирующих фондов организациям – налогоплательщикам, по результатам проведения технического аудита, дать возможность предоставлять налоговые льготы по налогу на прибыль дифференцированно в процентном отношении от первоначальной стоимости созданных новых и (или) восстановленных основных фондов. По мнению Е.Голиковой, отмена начисления сумм амортизации в налоговых целях может решить одновременно проблемы нескольких участников хозяйственной деятельности: сократит отток капитала из страны, пополнит бюджет поступлениями налога на прибыль, будет содействовать снижению цен на широкий перечень товаров массового потребления, стимулировать создание новых объектов основных фондов, окажет положительное влияние на конкурентоспособность отечественных товаров, сократит трудозатраты специалистов (бухгалтеров, аудиторов). При отмене начисления сумм амортизации в налоговых целях с перспективой получения налоговых льгот по налогу на прибыль активизируются воспроизводственные процессы, что весьма актуально в нынешних условиях повышенного износа и морального

¹ Голикова Е. И., Рыночная экономика требует реальной модернизации амортизационной политики. Финансы. 9, 2010г., с. 28.

устарения объектов основных средств на постсоветском пространстве. Мы считаем, что даже учитывая все положительные моменты, связанные с отменой начисления амортизации в налоговых целях данное новшество не следует принимать, поскольку оно может затронуть интересы ряда налогоплательщиков, которые реально направляют полученные средства на инвестиции.

Необходимо учитывать, что в нынешних условиях роста конкуренции на внешних рынках все более актуализируется роль разумной инвестиционной и инновационной политики, что предполагает проведение принципиально новой налоговой и амортизационной политики, преодоления пассивности хозяйствующих субъектов в области инвестиционной и инновационной деятельности. Опыт показывает, что предприятия только незначительную часть экономии на налогах направляют на инвестиции и инновации. Необходимо разработать конкретные механизмы, стимулирующие внедрение и развитие новых технологий, модернизацию основных средств. В этом вопросе существенную роль может сыграть перестройка проводимой инвестиционной политики.

Мировой опыт показывает, что ускорения инвестиционной активности невозможно достичь без серьезных изменений в амортизационной политике. В частности, развитие экономики США тесно связано с проведением крупных амортизационных реформ, благодаря которым американская экономика получила мощный толчок в развитии сферы высоких технологий, информатики и ряде других сфер. В настоящее время в развитых странах амортизация основных средств является не просто показателем, показывающим степень ее физического износа, а стала важным инструментом регулирования расширенного воспроизводства. Дело в том, что амортизационные отчисления, уменьшая размер прибыли налогоплательщика, соответственно уменьшают также суммы уплачиваемого им налога, но, в отличие от других издержек производства и обращения, амортизация становится источником дополнительных финансовых ресурсов налогоплательщика. В случае, когда объем амортизационных отчислений превышает потребности обновления, они должны быть направлены на реализацию инвестиционных программ. В противном случае теряется смысл освобождения амортизации от налога на прибыль. Снижая доходы бюджета по линии налога на прибыль, государство должно иметь гарантию того, что дополнительно полученные налогоплательщиками финансовые ресурсы будут использованы на цели экономического роста путем усиления инвестиционной деятельности. При этом преимущество амортизации по сравнению с другими формами экономического стимулирования состоит в том, что при освобождении от налога экономика стран получает финансовые ресурсы для инвестиций, многократно превышающие недополученные суммы бюджета по налогу на прибыль.

Исходя из приведенных доводов, можно утверждать, что в настоящее время важной проблемой становится превращение амортизационных отчислений из источника возмещения основного капитала в источник инвестиций в расширенное воспроизводство.

Необходимость этого вызвана также тем обстоятельством, что сегодня главным фактором воспроизводства выступает не физический, а моральный износ основных средств, требующий их быстрее обновления. Вследствие этого начисляемые объемы амортизации должны быть больше, чем это необходимо для обновления основных фондов в их первоначальной стоимости. В развитых странах этот фактор начали учитывать начиная со второй половины двадцатого века, вследствие чего активное развитие получила ускоренная амортизация основных средств. В результате этого наметилась преобладающая роль амортизационных сумм в общих источниках финансирования инвестиций в основной капитал, результатом чего явилось ускоренное обновление основных фондов.

Надо отметить, что активную амортизационную политику проводил в последние годы и Китай, что в значительной мере способствовало подъему его экономики. В то же время в российской налоговой политике указанный фактор действует неэффективно. Аналогичное

положение наблюдается и в ряде других стран СНГ, включая Армению. Считаем, что для обеспечения импульса развития инвестиционных и инновационных процессов целесообразно в Армении пересмотреть сроки полезного использования объектов основных средств, сделать их экономически более обоснованными. Кроме того, следует провести переоценку основных фондов в целом по экономике, с установлением и реальной рыночной стоимости (при этом не исключено, что растущая инфляция нейтрализует эту сумму). Важную роль может сыграть также разработка механизма, обеспечивающего прямую зависимость размера начисленной амортизации, уменьшающего налоговую базу по налогу на прибыль, и фактического использования амортизационных отчислений, направляемых на инвестиции.

В этом отношении приемлемым можно признать предложение В.Г.Панскова о том, что необходимо ввести финансовые санкции за нецелевое использование начисленных сумм амортизационных отчислений. В этих целях предлагается в затраты при исчислении суммы налога на прибыль включать суммы не начисленной амортизации, а фактически направленной на финансирование инвестиций. Указанное новшество позволит обеспечить целевое использование амортизационного фонда¹

Все указанные меры могут оказать благоприятное воздействие на совершенствование амортизационной политики в налоговых целях, а следовательно, на улучшение инвестиционной среды и на преодоление кризиса воспроизводственных процессов.

¹ Пансков В. Г., Совершенствование амортизационной политики в контексте модернизации российской экономики. Финансы. /11, 2010г., с. 30.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՐԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆ

ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, երկր. հանք. գիտ. դոկտոր

ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱՍՈՒԻԲՂԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏԻ ՀԱՆՔԱՀԱՐՍԱՑՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Սեղրու շրջանում՝ Ագարակ ավանից 3-5կմ դեպի հյուսիս:

Գ. Փիջյանի¹ տվյալներով Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքաքարերում հիմնական պղինձ և մոլիբդեն տարրերի հետ համատեղ հայտնաբերվել են ռենիում, սելեն, տելուր, բիսմութ, գերմանիում և արծաթ, սակայն նշված հեղինակի կողմից չի հայտնաբերվել պղնձի հանքաքարի մեջ բավականաչափ մեծ տարածում ունեցող ոսկին (հավանաբար ոսկու գծով անալիզներ չեն կատարվել), որը հետագայում հայտնաբերվել է երկրաբան-հետախույզների կողմից և գնահատվել է պաշարների հաշվարկի մեջ: Գ. Փիջյանի տվյալներով Ագարակի հանքավայրի հիմնական հանքանյութերում՝ մոլիբդենիտում, խալկոպիրիտում և պիրիտում, հայտնաբերված հարակից տարրերի պարունակությունները կազմում են.

- մոլիբդենի՝ մոլիբդենիտ հանքանյութում ռենիումի միջին պարունակությունը 10 մմուշների տվյալներով՝ 0,0527%, սելենինը՝ 0,0514%, տելուրինը՝ 0,0045%, բիսմութինը (2 մմուշների տվյալներով)՝ 0,0015%, գերմանիումինը (2 մմուշների տվյալներով)՝ 0,00015%, արծաթինը՝ (6 մմուշների տվյալներով)՝ 0,00023%,
- պղնձի՝ խալկոպիրիտ հանքանյութում ռենիումի միջին պարունակությունը 6 մմուշների տվյալներով՝ 0,000093%, սելենինը՝ 0,0102%, տելուրինը՝ 0,0032%, բիսմութինը (4 մմուշների տվյալներով)՝ 0,0077%, գերմանիումինը՝ (6 մմուշների տվյալներով)՝ 0,00047%, արծաթինը՝ 0,0131%,
- ծծմբի հրաքարի՝ պիրիտ հանքանյութում ռենիումի պարունակությունը 2 մմուշների տվյալներով՝ 0,00003%, սելենինը (3 մմուշների տվյալներով)՝ 0,0054%, տելուրինը՝ 0,0026%, բիսմութինը (4 մմուշների տվյալներով)՝ 0,0043%, գերմանիումինը՝ 0,00026%, արծաթինը՝ 0,0003%:

Ծծմբի պարունակությունը Ագարակի համալիր հանքաքարերում կազմում է 1,05%:

Ագարակի հանքավայրը կանոնավոր կերպով շահագործվում է 1963թ.-ից, և դրա ընդերքից արդյունահանվել է սկզբնական պաշարների գերակշիռ մեծամասնությունը: Կատարվել են նաև որոշակի լրահետախուզական աշխատանքներ, և դրա արդյունքով, 2006թ. օգոստոսի 22-ին, վերահաստատվել են դրա պաշարները: Այսպիսով, 01.09.2006թ. դրությամբ Ագարակի հանքավայրի ընդերքում մնացած պաշարների քանակը կազմել է.

- հանքաքարերինը. B+C₁ կատեգորիայի՝ 61688,7 հազ. տ, C₂ կատեգորիայի՝ 107857,5 հազ. տ, արտահաշվեկշռային՝ 5815,8 հազ. տ, ընդհանուրը՝ 175362 հազ. տ,
- պղնձինը. B+C₁ կատեգորիայի՝ 246,71 հազ. տ, C₂ կատեգորիայի՝ 359,79 հազ. տ, արտահաշվեկշռային՝ 13,21 հազ. տ, ընդհանուրը՝ 619,71 հազ. տ,
- մոլիբդենինը. B+C₁ կատեգորիայի՝ 14386,4տ, C₂ կատեգորիայի՝ 20060տ, արտահաշվեկշռային՝ 460տ, ընդհանուրը՝ 34906,4տ,
- ոսկունը. B+C₁ կատեգորիայի պաշարներում՝ 1345,18կգ, C₂ կատեգորիայի պաշարներում՝ 1798,84կգ, արտահաշվեկշռային՝ 72,67կգ, ընդհանուրը՝ 3216,69կգ,
- արծաթինը. B+C₁ կատեգորիայի պաշարներում՝ 62,81տ, C₂ կատեգորիայի պաշարներում՝ 93,04տ, արտահաշվեկշռային՝ 3,42տ, ընդհանուրը՝ 159,27տ,
- բիսմութինը. B+C₁ կատեգորիայի պաշարներում՝ 105,04տ, C₂ կատեգորիայի պաշարներում՝ 154,71տ, արտահաշվեկշռային՝ 5,68տ, ընդհանուրը՝ 265,43տ,

¹ Пиджян Г.О., Медно-молибденовая формация руд Армянской ССР. Ереван, Изд. АН Арм.ССР, 1975, 309с.

- սելենինը. B+C₁ կատեգորիայի պաշարներում՝ 175,48տ, C₂ կատեգորիայի պաշարներում՝ 257,87տ, արտահաշվեկշռային՝ 9,39տ, ընդհանուրը՝ 442,74տ,
- տելուրինը. B+C₁ կատեգորիայի պաշարներում՝ 30,04տ, C₂ կատեգորիայի պաշարներում՝ 44,18տ, արտահաշվեկշռային՝ 1,61տ, ընդհանուրը՝ 75,83տ,
- ռենիումինը. B+C₁ կատեգորիայի պաշարներում՝ 13,2տ, C₂ կատեգորիայի պաշարներում՝ 18,6տ, արտահաշվեկշռային՝ 0,44տ, ընդհանուրը՝ 32,24տ,
- ծծմբինը. B+C₁ կատեգորիայի պաշարներում՝ 678,6 հազ.տ, C₂ կատեգորիայի պաշարներում՝ 1186,432 հազ.տ, արտահաշվեկշռային՝ 63,974 հազ.տ, ընդհանուրը՝ 1929,0 հազ. տ:

Գ. Փիջյանի հետազոտությունների արդյունքով գերմանիում հայտնաբերված է բոլոր 3 հիմնական՝ խալկոպիրիտ, մոլիբդենիտ և պիրիտ հանքանյութերում: Մոլիբդենիտի մեջ գերմանիումի պարունակությունը կազմում է 0,00015%, խալկոպիրիտի մեջ՝ 0,00047%, պիրիտի մեջ՝ 0,00026%:

Որպեսզի հաշվենք գերմանիումի ռեսուրսները Ագարակի հանքավայրում, մեզ անհրաժեշտ է ունենալ պիրիտ, խալկոպիրիտ և մոլիբդենիտ հանքանյութերի քանակները: Վերջիններիս քանակները հաշվարկվել են պղնձի, մոլիբդենի և ծծմբի պաշարների հիման վրա:

Պիրիտի ընդհանուր քանակը Ագարակի հանքաքարերում կազմում է 2231120տ:

Գերմանիումի ընդհանուր ռեսուրսները Ագարակի հանքավայրում կազմում են.

- մոլիբդենիտ հանքանյութում՝ 0,0874տ,
- խալկոպիրիտ հանքանյութում՝ 8,410տ,
- պիրիտ հանքանյութում՝ 5,801տ,

բոլոր երեք հանքանյութերում համատեղ՝ 14,2984տ:

Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքաքարերում պղնձի խալկոպիրիտ և ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութերի հետ կապված է (դրանց բյուրեղային ցանցը կազմող հիմնական տարրերից է) նաև երկաթը, որի քանակն ըստ առանձին հանքանյութերի հետևյալն է.

- պղնձի խալկոպիրիտ հանքանյութի մեջ՝ 544.707տ
- ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութի մեջ՝ 1.038.586տ

Երկաթի ընդհանուր քանակը Ագարակի հանքաքարերում 01.01.2007թ. դրությամբ կազմել է 1583293տ:

Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների վերջին (2006թ.) հաստատումից հետո հանքավայրը շահագործվել և այժմ էլ շահագործվում է: Հետևապես այդ հանքավայրի ընդերքից վերջին երեք տարիներին (2007-2009թթ.) B+C₁ կատեգորիայի պաշարներից արդյունահանվել է 7061,8 հազ. տ հանքաքար և 01.01.2010թ. դրությամբ շահագործող ձեռնարկության 5 ԳՔ հաշվետվության համաձայն՝ հանքավայրի հաշվեկշռային պաշարների մնացորդը կազմել է.

- հանքաքարերինը՝ 54813,05 հազ. տ
- պղնձինը՝ 224430տ
- մոլիբդենինը՝ 12976,97տ
- ոսկունը՝ 1197,88կգ
- արծաթինը՝ 55,91տ:

ԽՍՀՄ-ի փլուզումից և Ալավերդու պղնձածուլական կոմբինատի լուծարումից հետո Հայաստանը ստիպված եղավ լեռնահանքային ձեռնարկությունների կողմից թողարկվող խտանյութերը վաճառել արտասահմանյան երկրներին: Այդ պարագայում նախկինում (ԽՍՀՄ-ի օրոք) թողարկվող պղնձի խտանյութերը՝ պղնձի 15-17% պարունակությամբ, դրսում պահանջարկ չէին գտնում, և լեռնահանքային ձեռնարկությունները պարտադրված էին խտանյութերի մեջ բարձրացնելու պղնձի պարունակությունը: Չանգեզուրի և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատների թողարկված պղնձի և մոլիբդենի խտանյութերի հետազոտությունները ցույց տվեցին, որ պղնձի խտանյութերում պղինձ մետաղի պարունակության բարձրացումն ուղեկցվում է խտանյութերի մեջ նշված մետաղների կորզումների իջեցմամբ: Այդ փաստը մենք նախկինում ցուցադրել ենք Չանգեզուրի կոմբինատի օրինակով: Այժմ դա ցուցադրենք Ագարակի կոմբինատի օրինակով՝ համեմատելով 1988-1990թթ., 1998-2000թթ., 2007թ., 2008թ. և 2009թ. տվյալները:

1988-1990թթ.¹ Ագարակի հանքավայրի ընդերքից արդյունահանվել և մշակվել է 8866,3 հազ. տ հանքաքար, որի հարստացումից ստացվել են.

- պղնձի խտանյութ՝ 154625տ, որի մեջ պղինձ մետաղի քանակը կազմել է 23193տ (պղնձի պարունակությունը խտանյութում կազմել է 15%),
- մոլիբդենի խտանյութ՝ 2792,5տ, որի մեջ մոլիբդեն մետաղի քանակը կազմել է 1424տ (մոլիբդենի պարունակությունը խտանյութում կազմել է 51%):

Արդյունահանված 8866,3 հազ.տ հանքաքարերում կորզման ենթակա տարրերի քանակը կազմել է.

- պղնձինը՝ 30109տ (պղնձի միջին պարունակությունը հանքաքարերում կազմել է 0,3396%),
- մոլիբդենինը՝ 1933,8 տ (մոլիբդենի միջին պարունակությունը հանքաքարերում կազմել է 0,0218%):

Հիմնական օգտակար տարրերի (պղնձի և մոլիբդենի) կորուստները կազմել են.

- պղնձինը՝ $30109 - 23193,8 = 6915,2$ տ, որը կազմել է կորզման ենթակա 30109տ պղնձի 22,97%-ը (կորզումը կազմել է 77,03%),
- մոլիբդենինը՝ $1933,8 - 1424 = 509,8$ տ, որը կազմել է կորզման ենթակա 1933,8տ մոլիբդենի 26,36%-ը (կորզումը կազմել է 73,64%),

1998-2000թթ.² Ագարակի հանքավայրի ընդերքից արդյունահանվել և մշակվել է 1936,7 հազ. տ հանքաքար, որի հարստացումից ստացվել են.

- պղնձի խտանյութ՝ 23134տ, որի մեջ պղինձ մետաղի քանակը կազմել է 4920,5տ (պղնձի միջին պարունակությունը խտանյութում կազմել է 21,27%),
- մոլիբդենի խտանյութ՝ 434,4տ, որի մեջ մոլիբդեն մետաղի քանակը կազմել է 221,5տ (մոլիբդենի միջին պարունակությունը խտանյութում կազմել է 51%):

Արդյունահանված 1936,7 հազ.տ հանքաքարերի մեջ կորզման ենթակա հիմնական պղինձ և մոլիբդեն տարրերի քանակը կազմել է.

- պղնձինը՝ 7084,7տ (պղնձի միջին պարունակությունը հանքաքարերում կազմել է 0,366%),
- մոլիբդենինը՝ 380,6 տ (մոլիբդենի միջին պարունակությունը հանքաքարերում կազմել է 0,01965%):

Հիմնական օգտակար տարրերի (պղնձի և մոլիբդենի) կորուստները կազմել են.

- պղնձինը՝ $7084,7 - 4920,5 = 2164,2$ տ, որը կազմել է կորզման ենթակա պղնձի 30,55%-ը (կորզումը կազմել է 69,45%),
- մոլիբդենինը՝ $380,6 - 221,5 = 159,1$ տ, որը կազմել է կորզման ենթակա մոլիբդենի 41,8% (կորզումը կազմել է 58,2%):

Ինչպես տեսնում ենք, 1998-2000թթ. թողարկված պղնձի խտանյութի պարունակությունը 1988-1990թթ. համեմատ աճել է 6,27 տոկոսով, սակայն դրա հետ կապված այդ մետաղի կորստի աճը կազմել է 7,58%:

1998-2000թթ. Ագարակի կոմբինատի կողմից թողարկված մոլիբդենի խտանյութում մոլիբդեն մետաղի պարունակության աճ 1988-1990թթ. համեմատ բոլորովին տեղի չի ունեցել (պահպանվել է կայուն 51%-ի մակարդակում), սակայն, չնայած դրան, մոլիբդենի կորստի աճ, այնուամենայնիվ, տեղի ունեցել է և այն էլ բավականաչափ մեծ՝ 15,44%-ով:

Այժմ տեսնենք, թե որքանով է բարելավվել (եթե, իհարկե, բարելավվել է) հանքաքարերից խտանյութերի մեջ օգտակար տարրերի կորզման վիճակը վերջին երեք տարիներին՝ 2007, 2008 և 2009 թվականներին:

2007թ.³ Ագարակի հանքավայրի ընդերքից արդյունահանվել և մշակվել է 2857,8 հազ. տ հանքաքար, և ստացված խտանյութերի քանակը կազմել է.

- պղնձինը՝ 21856տ, որի մեջ պղինձ մետաղի քանակը կազմել է 5660,896տ (պղնձի պարունակությունը խտանյութում կազմել է 26%),

¹ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի 1988, 1989, 1990թթ. տարեկան հաշվետվություններ՝ ձև «5ԴՄ»:

² Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի 1998, 1999, 2000թթ. տարեկան հաշվետվություններ՝ ձև «5ԴՄ»:

³ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի 2007թ.-ի տարեկան հաշվետվություն՝ ձև «5ԴՄ»:

- մոլիբդենինը՝ 749,745տ, որի մեջ մոլիբդեն մետաղի քանակը կազմել է 382,755տ (մոլիբդենի պարունակությունը խտանյութում կազմել է 51%):

Արդյունահանված հանքաքարերում օգտակար տարրերի պարունակությունները կազմել են. պղնձինը՝ 0,301%, մոլիբդենինը՝ 0,0207%, ոսկունը՝ 0,022գ/տ, արծաթինը՝ 1,02գ/տ: Պղնձի և մոլիբդենի հետ հարակից տարածված մյուս օգտակար տարրերի մասին կոմբինատը տեղեկություններ չի տվել, ուստի արդյունահանված հանքաքարերում դրանց պարունակություններն ընդունում ենք հանքաքարերում դրանց ունեցած միջին տվյալները. ռենիումինը՝ 0,214գ/տ, սելենինը՝ 2,2գ/տ, տելուրինը՝ 0,478գ/տ, փամուտինը՝ 1,703գ/տ, ծծմբինը՝ 1,05%:

Արդյունահանված և մշակված 2857,8 հազ.տ հանքաքարերում կորզման ենթակա օգտակար տարրերի քանակները կազմել են. պղնձինը՝ 8602տ, մոլիբդենինը՝ 591,56 տ, ոսկունը՝ 62,87կգ, արծաթինը՝ 2,915տ, ռենիումինը՝ 611,57 կգ, սելենինը՝ 6,29տ, տելուրինը՝ 1,39տ, փամուտինը՝ 4,87տ, պիրիտինը՝ 30007,0տ, ծծմբինը՝ 25114տ, երկաթինը՝ 21530տ:

Կորզման ենթակա 8602տ պղնձից 2007թ. կորզվել է 5660,896տ, պոչամբարներ թափված պղնձի քանակը կազմել է $8602 - 5660,896 = 2941,104$ տ, որը կազմել է կորզման ենթակա 8602տ պղնձի 34,2%-ը (կորզումը կազմել է 65,8%), կորզման ենթակա 591,56տ մոլիբդենից խտանյութերի մեջ կորզվել է 382,755տ, պոչամբարներ թափված մոլիբդենի քանակը կազմել է $591,56 - 382,755 = 208,805$ տ, որը կազմել է կորզման ենթակա 591,56տ մոլիբդենի 35,3%-ը (կորզումը կազմել է 64,7%):

Համեմատելով տարբեր տարիներին կատարված օգտակար տարրերի կորզումները (հանքաքարերից խտանյութերի մեջ)՝ տեսնում ենք, որ ամենաբարձր կորզումները (համեմատաբար) կատարվել են ԽՍՀՄ-ի տարիներին: 1988-1990թթ. պղնձի գծով կորզումը կազմել է 77,03%, իսկ մոլիբդենի գծով՝ 73,64%: 1998-2000թթ. պղնձի գծով կորզումը կազմել է 69,45%, այսինքն՝ բավականին ցածր, քան 1988-1990թթ. և քիչ ավելի բարձր, քան 2007թ. (2007թ. այն կազմել է 65,8%): Մոլիբդենի գծով կորզումները 2007թ.-ին ավելի բարձր են եղել (64,7%), քան 1998-2000թթ. (58,2%), բայց, այնուամենայնիվ, էական բարելավում տեղի չի ունեցել:

2007թ. Ազարակի հանքավայրի ընդերքից արդյունահանված 2857,8 հազ.տ հանքաքարերի մեջ պղնձի խալկոպիրիտ հանքանյութի քանակը կազմել է $8602 \times 100 : 34,62 = 24847$ տ, իսկ ծծումբ պարունակող մյուս հիմնական հանքանյութի՝ մոլիբդենիտի քանակը՝ $591,56 \times 100 : 59,94 = 987$ տ: 24847տ խալկոպիրիտի մեջ ծծմբի քանակը կազմել է 8681տ, իսկ 987տ մոլիբդենիտի մեջ՝ 395տ: 30007տ պիրիտի մեջ ծծմբի քանակը կազմել է 16038տ, իսկ երկաթինը՝ 13969տ: Այսպիսով, արդյունահանված և մշակված 2857,8 հազ.տ հանքաքարում ծծմբի կորզելի քանակը կազմել է 25114տ, երկաթինը՝ 21530տ: Հետևապես նշված քանակի (30007տ) պիրիտի հետ պոչամբարներ թափված օգտակար տարրերի քանակները (հաշվարկված Գ.Փիջյանի տվյալների հիման վրա) կազմել են. ռենիումինը՝ 9,0կգ, սելենինը՝ 1,62տ, տելուրինը՝ 780կգ, փամուտինը՝ 1290կգ, գերմանիումինը՝ 78,2կգ, արծաթինը՝ 90,03կգ, երկաթինը՝ 13968տ, ծծմբինը՝ 16039տ:

Քանի որ ոսկին անմիջականորեն կապված է պղնձի հանքանյութի հետ, հետևապես ոսկու կորզումն էլ ընդունում ենք 65,8%: Այստեղից հետևում է, որ ոսկու կորուստը (պոչամբարներ թափված) կազմել է 21,502 կգ (ոսկու պարունակությունը 2007թ. պոչամբարում կազմել է 0,007584գ/տ: 2007թ. պոչամբարներ թափված հանքաքարերի քանակը կազմել է 2835,2 հազ. տ):

2007թ. արդյունահանված 2857,8 հազ.տ հանքաքարերում պարունակվող 24847տ խալկոպիրիտ հանքանյութից կորզվել է 16149տ, իսկ պոչամբարներ է թափվել 8698տ, Գ.Փիջյանի տվյալների հիման վրա պոչամբարներ թափված տարրերի քանակը կազմել է. ռենիումինը՝ 8,09կգ, սելենինը՝ 887,2կգ, տելուրինը՝ 278,3կգ, փամուտինը՝ 669,7կգ, գերմանիումինը՝ 40,88կգ, արծաթինը՝ 1139,44կգ:

Հանքաքարերում առկա 987տ մոլիբդենիտ հանքանյութից կորզվել է 638,6տ, իսկ պոչամբարներ է թափվել 348,4տ: Մոլիբդենիտի հետ պոչամբարներ թափված տարրերի քանակները՝ հաշվարկված Գ.Փիջյանի տվյալների հիման վրա, կազմում են. ռենիումինը՝ 183,6կգ, սելենինը՝ 179,1կգ, տելուրինը՝ 15,68կգ, գերմանիումինը՝ 0,52կգ, արծաթինը՝ 0,8կգ:

2007թ. պոչամբարներ թափված տարրերի քանակները կազմել են. ռենիումինը՝ 200,69կգ, սելենինը՝ 2686,3կգ, տելուրինը՝ 1073,98կգ, փամուտինը՝ 1959,7կգ, գերմանիումինը՝ 119,6կգ,

արծաթինը՝ 1230,27կգ, ոսկունը՝ 21,502կգ, պղնձինը՝ 2941,3տ, մոլիբդենինը՝ 208,8տ, երկաթինը՝ 16615տ, ծծմբինը՝ 19078տ:

Այժմ հաշվենք 2007թ. աշխատանքների ընթացքում Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրից պոչամբարներ թափված տարրերի արժեքը 2007թ. մարտ-ապրիլ և 2008թ. մայիսին (ծծմբի համար) միջազգային շուկայում գործող գներով.

Աղյուսակ 1

Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի ընդերքի հարստություններից 2007-ին պոչամբարներ թափված (կորստի մատնված) տարրերի արժեքի հաշվարկը

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Պղինձ	տ	2941,3	7465	21.965.804
Մոլիբդեն	տ	208,8	62200	12.987.360
Ոսկի	կգ	21,502	31500	677.313
Արծաթ	տ	1,23027	450000	553.621
Ռենիում	տ	0,20069	7777700	1.560.907
Սելեն	տ	2,2,6863	52220	140.278
Տելուր	տ	1,07398	116000	124.582
Քիսմուտ	տ	1,9597	24440	47.895
Գերմանիում	տ	0,1196	950000	113.620
Երկաթ	տ	16615	300	4.984.500
Ծծումբ	տ	19078	650	12.400.700
Ընդամենը				55.556.580

2007թ. Ագարակի հանքավայրի ընդերքից արդյունահանված 2857,8 հազ. տ հանքաքարերի մշակման արդյունքով Ագարակի լեռնահանքային ձեռնարկության ստացած հասույթը խտանյութերի վաճառքից կազմել է.

$$(5660,696 \times 7465 \times 55,6 : 100) + (382,755 \times 62200 \times 52,3 : 100) = 23.494.945 + 12.451.250 = 35.946,195 \text{ դոլ.}:$$

Ծանոթություն. խտանյութերի վաճառքի պարագայում պղինձը խտանյութի մեջ գնահատվում է կորզված պղինձ մետաղի գնի 55,6 տոկոսի չափով, իսկ մոլիբդենը՝ կորզված մոլիբդեն մետաղի գնի 52,3%-ով:

Եթե Ագարակի լեռնահանքային ձեռնարկության հանքահարստացման տեխնոլոգիայում ներդրվեն նորագույն տեխնոլոգիաներ, համաշխարհային չափանիշների մակարդակով՝ 92-94%-ով կորզվեն բոլոր օգտակար տարրերը, կառուցվի ժամանակակից մետալուրգիական գործարան, և խտանյութեր անցած բոլոր օգտակար տարրերը կորզվեն 98-99%-ով, ապա 2,86 մլն տ հանքաքարերից լեռնամետալուրգիական ձեռնարկության ստացած հասույթը կարող է կազմել 117,28 մլն դոլար 2007թ. ստացած 35,95 մլն դոլարի դիմաց:

2008թ.¹ Ագարակի հանքավայրի ընդերքից արդյունահանվել է 2734,4 հազ. տ հանքաքար, որից մշակվել է 2725,8 հազ. տ: Մշակված հանքաքարերի մեջ պարունակվել են պղինձ՝ 8149,58տ (պղնձի միջին պարունակությունը հանքաքարում կազմել է 0,299%), մոլիբդեն՝ 530,77տ (մոլիբդենի միջին պարունակությունը՝ 0,01947%), ոսկի՝ 60,0կգ (ոսկու միջին պարունակությունը՝ 0,022գ/տ), արծաթ՝ 2,78տ (արծաթի միջին պարունակությունը՝ 1,02գ/տ): Մյուս հարակից տարրերի մասին Ագարակի կոմբինատի տարեկան հաշվետվության (ՏԴԲ) մեջ բերված են հետևյալ տվյալները. ծծումբ՝ 27,4 հազ. տ (միջին պարունակությունը՝ 1,05%), ռենիում՝ 0,563տ (միջին պարունակությունը՝ 0,21գ/տ), սելեն՝ 7,12տ (միջին պարունակությունը՝ 2,8գ/տ), տելուր՝ 1,297տ (միջին պարունակությունը՝ 0,49գ/տ), քիսմուտ՝ 4,27տ (միջին պարունակությունը՝ 1,7գ/տ):

Կոմբինատի հաշվետվության (ՏԴԲ) տվյալներով մշակված 2725,8 հազ. տ հանքաքարերից ստացվել են.

¹ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի 2008թ. հաշվետվություն՝ ձև «ՏԴԲ»:

- պղնձի խտանյութ՝ 25112,9տ, որի մեջ պարունակվել է 5507,79տ պղինձ մետաղ (պղնձի միջին պարունակությունը հաշվետվության համաձայն կազմել է 26%, սակայն մեր հաշվարկներով այստեղ, ինչպես նաև մոլիբդենի խտանյութում կան լուրջ հաշվարկային սխալներ),
- մոլիբդենի խտանյութ՝ 737,458տ, որի մեջ մոլիբդեն մետաղի քանակը կազմել է 346,014տ (մոլիբդեն մետաղի պարունակությունը խտանյութում հաշվետվության համաձայն կազմել է 51%): Կորզումները հաշվետվության համաձայն կազմել են. պղնձինը՝ 67,6%, մոլիբդենինը՝ 65,2% (երբ այս տվյալները համեմատում ենք պղնձի և մոլիբդենի քանակների հետ մշակված հանքաքարերի մեջ, ապա ստացվում է, որ կորզված քանակները ճիշտ են: Հետևապես սխալ են հաշվարկված ստացված խտանյութերի քանակները (եթե, իհարկե, ճիշտ են մետաղների պարունակությունները խտանյութերի մեջ): Եվ այսպես, եթե ճիշտ է պղնձի միջին պարունակությունը՝ 26% պղնձի խտանյութի մեջ, ուրեմն այդ խտանյութի քանակը 2008թ. կազմել է 21184տ, իսկ մոլիբդենի խտանյութի քանակը՝ 678,5տ):

Ինչպես տեսնում ենք, 2008թ.-ին կորզումները 2007թ.-ի համեմատ փոքր-ինչ բարելավվել են, սակայն դրանք դեռևս հեռու են բավարար լինելուց (դրանք, նույնիսկ, բավականին հեռու են ԽՍՀՄ-ի վերջին տարիների կորզումներից):

Որպեսզի հաշվարկենք կորստի մատնված հարակից բաղադրիչների քանակը, մեզ անհրաժեշտ է հաշվարկել հիմնական հանքանյութերի՝ պղնձի խալկոպիրիտի, մոլիբդենի մոլիբդենիտի և ծծմբի հրաքար պիրիտի քանակները մշակված հանքաքարերում: Պղնձի և մոլիբդենի քանակները հայտնի են և մշակված 2725,8 հազ.տ հանքաքարերում կազմում են. պղնձինը՝ 8149,58տ, մոլիբդենինը՝ 530,77տ: 8149,58տ պղինձ կարող է պարունակվել 23533,3տ խալկոպիրիտ հանքանյութում, իսկ 530,77տ մոլիբդեն՝ 888,5տ մոլիբդենիտում: 23533,3տ խալկոպիրիտում պարունակվում է 8222,5տ ծծումբ, իսկ 888,5տ մոլիբդենիտում՝ 357,7տ ծծումբ: Երկու հիմնական խալկոպիրիտ և մոլիբդենիտ տարրերի հետ կապված ծծմբի քանակը կազմել է $8222,5 + 357,7 = 8580,2$ տ:

Արդյունահանված և մշակված 2725,8 հազ.տ հանքաքարերում ծծմբի ընդհանուր քանակը կազմել է $2725800 \times 1,05 : 100 = 28621$ տ: Եթե ծծմբի ընդհանուր 28621տ քանակից հեռացնենք խալկոպիրիտի և մոլիբդենիտի հետ կապված քանակները, կստանանք պիրիտ հանքանյութի բաժինը՝ $28621 - 8580,2 = 20040,8$ տ, որին էլ համապատասխանում է 37494,5տ պիրիտ հանքանյութ (պիրիտ հանքանյութի քանակը Ազարակի հանքաքարերում մոտ 1,6 անգամ ավել է խալկոպիրիտ հանքանյութի քանակից): Խալկոպիրիտ հանքանյութից կորստի է մատնվել և պոչամբարներ թափվել ընդհանուր քանակի 32,4%-ը, մոլիբդենիտ հանքանյութի՝ 34,8%-ը, իսկ պիրիտ հանքանյութն ամբողջությամբ: Պոչամբարներ թափված հանքանյութերի քանակները 2008թ. կազմել են.

- խալկոպիրիտինը՝ $23533,3 \times 32,4 : 100 = 7624,8$ տ,
- մոլիբդենիտինը՝ $888,5 \times 34,8 : 100 = 309,2$ տ,
- պիրիտինը՝ 37494,5տ (թափվել է ամբողջությամբ):

Այժմ հաշվարկենք 2008թ. պոչամբարներ թափված օգտակար տարրերի քանակները Չ.Փիջյանի տվյալների և հաստատված պաշարներում փաստացի պարունակությունների հիման վրա:

Ոսկին և արծաթը հիմնականում կապված են պղնձի խալկոպիրիտ հանքանյութի հետ, հետևապես դրանց կորուստները կազմել են 2725,8 հազ. տ հանքաքարերում առկա ընդհանուր քանակի 32,4%-ը, այսինքն.

- ոսկու կորուստը՝ $60 \times 32,4 : 100 = 19,44$ կգ,
- արծաթի կորուստը՝ $2,78 \times 32,4 : 100 = 0,9$ տ:

Որոշակի քանակների արծաթ է հայտնաբերված նաև մոլիբդենի մոլիբդենիտ հանքանյութի և ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութի մեջ:

Որպեսզի մեր հաշվարկները քիչ թե շատ մոտենան իրական կորուստներին, մենք հաշվարկում ենք հարակից տարրերի միջին պարունակությունները երկու հիմնական հան-

քանյութերում՝ մոլիբդենիում և խալկոպիրիտում համատեղ՝ կապված վերջիններիս իրական քանակների հետ: Եվ այսպես.

- ռենիումի միջին պարունակությունը երկու հիմնական հանքանյութերում կազմում է 0,001274%,
- սելենիինը՝ 0,00743%,
- տելուրինը՝ 0,00206%,
- բիսմութինը՝ 0,004747%,
- գերմանիումինը՝ 0,00029%,
- արծաթինը՝ 0,00802%:

Պղնձի և մոլիբդենի միջին հավասարակշռված կորուստը 2008թ. կազմել է 32,55%, հետևապես պղինձ և մոլիբդեն տարրերի հետ պոչամբարներ թափված հարակից տարրերի քանակները կազմել են.

- ռենիումինը՝ $(23533,3+888,5) \times 32,55 : 100 \times 0,001274 : 100 = 0,101274$ տ,
- սելենիինը՝ $(23533,3+888,5) \times 32,55 : 100 \times 0,00743 : 100 = 0,59$ տ,
- տելուրինը՝ $(23533,3+888,5) \times 32,55 : 100 \times 0,00206 : 100 = 0,1637$ տ,
- բիսմութինը՝ $(23533,3+888,5) \times 32,55 : 100 \times 0,004747 : 100 = 0,37735$ տ,
- գերմանիումինը՝ $(23533,3+888,5) \times 32,55 : 100 \times 0,00029 : 100 = 0,023$ տ,
- արծաթինը՝ $(23533,3+888,5) \times 32,55 : 100 \times 0,00802 : 100 = 0,6375$ տ:

Պիրիտ հանքանյութի հետ պոչամբարներ թափված տարրերի քանակները կազմել են.

- ռենիումինը՝ $37494,5 \times 0,00003 : 100 = 0,01125$ տ,
- սելենիինը՝ $37494,5 \times 0,0054 : 100 = 2,025$ տ,
- տելուրինը՝ $37494,5 \times 0,0026 : 100 = 0,9748$ տ,
- բիսմութինը՝ $37494,5 \times 0,0043 : 100 = 1,6123$ տ,
- գերմանիումինը՝ $37494,5 \times 0,00026 : 100 = 0,0975$ տ,
- արծաթինը՝ $37494,5 \times 0,0003 : 100 = 0,1125$ տ:

Այսպիսով, 2008թ. պիրիտ հանքանյութի չկորզման և պղինձ ու մոլիբդեն հիմնական տարրերի թերկորզման հետևանքով 2008թ. Ագարակի հանքավայրից պոչամբարներ են թափվել.

- պղինձ՝ 2641,8տ,
- մոլիբդեն՝ 184,76տ,
- ռենիում՝ 0,1833տ,
- սելեն՝ 2,615տ,
- տելուր՝ 0,4385տ,
- բիսմութ՝ 1,38տ,
- գերմանիում՝ 0,1205տ,
- արծաթ՝ 0,95տ,
- ոսկի՝ 19,44կգ,
- ծծումբ (միայն պիրիտ հանքանյութի հետ կապված)՝ 20041տ,
- երկաթ(միայն պիրիտ հանքանյութի հետ կապված)՝ 17453,5տ,

Աղյուսակ 2-ում հաշվարկված է 2008թ. Ագարակի հանքավայրից պոչամբարներ թափված տարրերի արժեքը:

Խտանյութերի վաճառքի պարագայում Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը 2008թ. աշխատանքների արդյունքով և 2007թ. մարտ-ապրիլ ամիսներին միջազգային շուկայում մետաղների ունեցած գներով խտանյութերի վաճառքից կարող էր ստանալ. $(5507,79 \times 7465 \times 55,6 : 100) + (346,014 \times 62200 \times 52,3 : 100) = 22.860.303 + 11.256.043 = 34.116.346$ դր., այն պարագայում, երբ միայն պոչամբարներ թափված տարրերի արժեքը կազմում է ավելի քան 52,3 մլն դոլար:

Աղյուսակ 2

2008թ. Ագարակի հանքավայրի ընդերքից արդյունահանված օգտակար տարրերի քերկորզման հետևանքով պոչամբարներ թափված տարրերի արժեքի հաշվարկը

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Պղինձ	տ	2641,8	7465	19.721.037
Մոլիբդեն	տ	184,76	62200	11.492.072
Ռենիում	տ	0,1833	7777700	1.425.652
Ոսկի	կգ	19,44	31500	612.360
Արծաթ	տ	0,95	450000	427.500
Սելեն	տ	2,615	52220	136.555
Տելուր	տ	0,4385	116000	50.866
Քիսմուտ	տ	1,38	24440	33.727
Գերմանիում	տ	0,1205	950000	114.475
Երկաթ	տ	17453,5	300	5.236.050
Ծծումբ	տ	20041	650	13.026.650
Ընդամենը				52.276.944

Այժմ հաշվենք այն հարակից տարրերի արժեքը, որոնք հիմնական մետաղների՝ պղնձի և մոլիբդենի հետ անցել են խտանյութերի մեջ, սակայն խտանյութերի վաճառքի պարագայում դրանք չեն գնահատվել և չեն փոխհատուցվել:

Խտանյութեր անցած հարակից բաղադրիչների քանակները կազմել են.

- ոսկունը՝ 40,56կգ,
- արծաթինը՝ 1,83տ,
- ռենիումինը՝ 0,3797տ
- սելենինը՝ 4,505տ,
- տելուրինը՝ 0,7885տ,
- քիսմուտինը՝ 2,89տ,
- գերմանիումինը՝ 0,0265տ,
- ծծմբինը՝ 5790տ,
- երկաթինը՝ 4840տ,

Աղյուսակ 3

Ագարակի լեռնահանքային ձեռնարկության կողմից՝ 2008թ. խտանյութերի վաճառքի պարագայում հարակից բաղադրիչների չգնահատման հետևանքով կրած վնասների հաշվարկը

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Արծաթ	տ	1,83	450000	823.500
Ռենիում	տ	0,3797	7777700	2.953.193
Սելեն	տ	4,505	52220	235.251
Տելուր	տ	0,7885	116000	91.466
Քիսմուտ	տ	2,89	24440	70.632
Գերմանիում	տ	0,0265	950000	25.175
Ծծումբ	տ	5790	650	3.763.500
Երկաթ	տ	4840	300	1.452.000
Ընդամենը				9.415.317

Աղյուսակ 3-ում հաշվարկված է, թե որքան վնաս է կրել Ագարակի լեռնահանքային ձեռնարկությունը խտանյութերի վաճառքի ժամանակ կորզված (խտանյութեր անցած)

օգտակար տարրերի չգնահատման հետևանքով (ծանոթություն. ոսկու արժեքը չենք հաշվարկում, քանի որ ոսկու մի մասի արժեքը, այնուամենայնիվ, գնահատվում է, բայց քանի որ չգիտենք, թե դրա որ մասն է գնահատվում, պայմանականորեն ընդունում ենք, որ գնահատվել է ամբողջ ոսկու քանակը):

Այստեղից՝ 2-րդ և 3-րդ աղյուսակներից, պարզ է դառնում, որ Ագարակի լեռնահանքային ձեռնարկությունը 2008թ. օգտակար տարրերի թերկորզման և խտանյութերի վաճառքի ժամանակ հարակից բաղադրիչների չգնահատման հետևանքով կորցրել է ավելի, քան 62 մլն դոլարի հարստություն: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ խտանյութերի վաճառքի պարագայում հիմնական պղինձ և մոլիբդեն տարրերն էլ գնահատվում են մետաղների իրական արժեքի համարյա կես գնով (55,6 և 52,3 տոկոսներով), ապա առավել ևս պարզ կդառնա, թե ինչ վնասներ է կրում մեր հանրապետությունը խտանյութերի վերամշակման մետալուրգիական գործարաններ (գործարան) չունենալու պատճառով:

2009թ. Ագարակի հանքավայրի ընդերքից արդյունահանվել է 1506,4 հազ.տ չոր հանքաքար, որից մշակվել է 1463,6 հազ. տ, և ստացվել են.

- պղնձի հանքանյութ՝ 13640,8տ, որի մեջ պղինձ մետաղի քանակը կազմել է 3546,6տ (պղնձի պարունակությունը խտանյութում կազմել է 26%),
- մոլիբդենի խտանյութ՝ 250,4տ, որի մեջ մոլիբդեն մետաղի քանակը կազմել է 127,7տ (մոլիբդենի պարունակությունը խտանյութում կազմել է 51%):

Արդյունահանված հանքաքարում օգտակար տարրերի քանակները կազմել են՝ պղնձինը՝ 5309,2տ (միջին պարունակությունը՝ 0,353%), մոլիբդենինը՝ 211,8տ (միջին պարունակությունը՝ 0,0141%), ոսկունը՝ 34,65կգ (միջին պարունակությունը՝ 0,023գ/տ), արծաթինը՝ 1,61տ (միջին պարունակությունը՝ 1,07գ/տ), ռենիումինը՝ 0,316տ (միջին պարունակությունը՝ 0,21գ/տ), սելենինը՝ 4,28տ (միջին պարունակությունը՝ 2,84գ/տ), տելուրինը՝ 0,74տ (միջին պարունակությունը՝ 0,49գ/տ), փամուտինը՝ 2,56տ (միջին պարունակությունը՝ 1,7գ/տ), ծծմբինը՝ 15817տ (միջին պարունակությունը՝ 1,05%):

Արդյունահանված հանքաքարերում առկա պղնձի խալկոպիրիտ հանքանյութի քանակը կազմել է 15335,6տ, որի մեջ ծծմբի քանակը կազմել է 5358,3տ, իսկ երկաթինը՝ 4666,6տ, մոլիբդենի մոլիբդենիտ հանքանյութի քանակը՝ 353,35տ, որի մեջ ծծմբի քանակը կազմել է 141,5տ: Երկու հիմնական հանքանյութերի մեջ ծծմբի ընդհանուր քանակը կազմել է 5499,8տ, հետևապես պիրիտ հանքանյութի ծծմբի բաժինը կկազմի $15817,0 - 5499,8 = 10317,2$ տ, որի համեմատ պիրիտ հանքանյութի քանակը կկազմի 19302,5տ, որի մեջ երկաթ մետաղի քանակը կազմել է 8985,3տ (երկաթի ընդհանուր քանակը խալկոպիրիտ և պիրիտ հանքանյութերի հետ կապված կազմել է 13851,9տ):

Արդյունահանված հանքաքարերում առկա 5309,2տ պղնձից կորզվել է 3546,6տ, կորստի է մատնվել 1962,6տ, որը կազմել է կորզման ենթակա պղնձի 33,2%-ը, իսկ 211,8տ մոլիբդենից կորզվել է 127,7տ, հետևապես կորստի է մատնվել 84,1տ, որը կազմել է կորզման ենթակա մոլիբդենի 39,7%-ը: Հիմնական օգտակար տարրերի՝ պղնձի և մոլիբդենի միջին հավասարակշռված կորուստը կազմել է 33,32%: Պոչամբարներ թափված օգտակար տարրերի քանակները կազմել են.

պղնձինը՝ 1962,6տ, մոլիբդենինը՝ 84,1տ, ոսկունը՝ 11,54կգ, արծաթինը՝ 0,54տ, ռենիումինը՝ 0,105տ, սելենինը՝ 1,43տ, տելուրինը՝ 0,25տ, փամուտինը՝ 0,85տ, գերմանիումինը՝ 0,0666տ, ծծմբինը՝ 12298տ, երկաթինը՝ 10710տ:

Աղյուսակ 4-ում հաշվարկված է 2009թ. կորստի մատնված (պոչամբար թափված) օգտակար տարրերի արժեքը:

2009թ. Ագարակի հանքավայրի ընդերքից արդյունահանված 1506,4 հազ. տ հանքաքարերի մշակման արդյունքով լեռնահանքային ձեռնարկության ստացած հասույթը խտանյութերի վաճառքից կազմել է.

$(3546,6 \times 7465 \times 55,6 : 100) + (127,7 \times 62200 \times 52,3 : 100) = 18,87$ մլն դոլար, այն պարագայում, երբ պոչամբարներ թափված տարրերի արժեքը գերազանցում է 32 մլն դոլարը:

Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի ընդերքից 2009թ.-ին կորստի մատնված (պոչամբարներ թափված) տարրերի արժեքի հաշվարկը

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Պղինձ	տ	1962,6	7465	14.650.809
Մոլիբդեն	տ	84,1	62200	5.231.028
Ոսկի	կգ	11,54	31500	363.510
Արծաթ	տ	0,54	450000	243.000
Ռենիում	տ	0,105	7777700	816.658
Սելեն	տ	1,43	52220	74.675
Տելուր	տ	0,25	116000	29.000
Բիսմութ	տ	0,85	24440	20.774
Գերմանիում	տ	0,0666	950000	63.270
Ծծումբ	տ	12298	650	7.993.700
Երկաթ	տ	10710	300	3.213.000
Ընդամենը				32.699.424

Այժմ հաշվարկենք, թե որքան օգտակար տարրեր են թափվել պոչամբարներ Ագարակի հանքավայրից շահագործման ամբողջ ժամանակահատվածում՝ 1963թ.-ից մինչև 2009թ. վերջը: 1963թ.-ից մինչև 2009թ. վերջն Ագարակի հանքավայրի ընդերքից արդյունահանվել և մշակվել է 100121,15 հազ. տ չոր հանքաքար, որի մեջ պարունակվել են.

- պղինձ՝ 433191,4տ (միջին պարունակությունը՝ 0,4327%),
- մոլիբդեն՝ 25261,1տ (միջին պարունակությունը՝ 0,0252%),
- ոսկի՝ 2396,18կգ (միջին պարունակությունը՝ 0,02393 գ/տ),
- արծաթ՝ 112,61տ (միջին պարունակությունը՝ 1,1247գ/տ),
- ռենիում՝ 211,11տ (միջին պարունակությունը՝ 0,214գ/տ),
- սելեն՝ 280,66տ (միջին պարունակությունը՝ 2,845գ/տ),
- տելուր՝ 48,04տ (միջին պարունակությունը՝ 0,487գ/տ),
- բիսմութ՝ 167,97տ (միջին պարունակությունը՝ 1,7027գ/տ),
- գերմանիում՝ 8,14տ (միջին պարունակությունը՝ 0,08248գ/տ),
- ծծումբ՝ 1.035.841տ (միջին պարունակությունը՝ 1,05%),
- երկաթ՝ 902104տ (միջին պարունակությունը՝ 0,914%):

Որպեսզի հաշվարկենք, թե որքան օգտակար տարրեր են թափվել պոչամբարներ, նախ՝ պետք է ունենանք շահագործման ամբողջ ժամանակահատվածի տարիների միջին կորզումները, որից էլ բխում են կորուստները: Քանի որ մենք չունենք շահագործման բոլոր տարիների կորզումների տվյալները, այն հաշվարկում ենք սույն աշխատության մեջ բերված տարիների՝ 1988-1990, 1998-2000, 2007, 2008 և 2009 թվականների (9 տարիների) տվյալներով և դրանք պայմանականորեն ընդունում ենք որպես միջին կորզումներ շահագործման ամբողջ ժամանակահատվածի համար:

Հաշվարկներով պարզվել է, որ նշված 9 տարիներին Ագարակի հանքավայրի ընդերքից արդյունահանված և մշակված հանքաքարերից միջին հավասարակշռված կորզումները կազմել են.

- պղնձի գծով՝ 72,31% (կորուստները՝ 27,69%),
- մոլիբդենի գծով՝ 68,37% (կորուստները՝ 31,63%):

Արդյունահանված 100121,15 հազ. տ հանքաքարերում պիրիտ հանքանյութի քանակը կազմել է 1394810տ, որն էլ, պարունակվող հարակից տարրերով հանդերձ, ամբողջությամբ թափվել է պոչամբարներ:

Այսպիսով, արդյունահանված 100121,15 հազ.տ հանքաքարերում պարունակված 433191,4տ պղնձից պոչամբարներ են թափվել՝ $433191,4 \times 27,69 : 100 = 119950,7$ տ,

- 25261,1տ մոլիբդենից՝ $25261,1 \times 31,63 : 100 = 7990,1$ տ,
- 2396,18 կգ ոսկուց՝ $2396,18 \times 27,69 : 100 = 663,5$ կգ,

Պիրիտ հանքանյութի (1394810տ) հետ պոչամբարներ թափված տարրերի քանակները կազմել են.

- ռենիումիներ՝ 0,42տ
- սելենիներ՝ 75,65տ,
- տելուրիներ՝ 36,42տ,
- քիսմոտիներ՝ 60,24տ,
- գերմանիումիներ՝ 3,64տ,
- արծաթիներ՝ 4,2տ,
- ծծմբիներ՝ 748813տ,
- երկաթիներ՝ 652154տ:

Պոչամբարներ թափված հարակից տարրերի քանակները հիմնական պղնձ և մոլիբդեն տարրերի թերկորզման հետևանքով, որտեղ պղնձի և մոլիբդենի միջին հավասարակշռված կորուստը կազմել է 27,8%, կազմել են.

- ռենիումիներ՝ 58,7տ
- սելենիներ՝ 78,0տ,
- տելուրիներ՝ 13,35տ,
- քիսմոտիներ՝ 46,7տ,
- գերմանիումիներ՝ 2,26տ,
- արծաթիներ՝ 30,9տ,
- ծծմբիներ՝ 125407տ,
- երկաթիներ՝ 118803տ:

Այսպիսով, պոչամբարներ թափված տարրերի ընդհանուր քանակները կազմել են.

- պղնձիներ՝ 119950,7տ,
- մոլիբդենիներ՝ 7990,1տ,
- ոսկուներ՝ 663,5կգ,
- արծաթիներ՝ 35,1տ,
- ռենիումիներ՝ 59,12տ
- սելենիներ՝ 153,65տ,
- տելուրիներ՝ 49,77տ,
- քիսմոտիներ՝ 106,94տ,
- գերմանիումիներ՝ 5,9տ,
- ծծմբիներ՝ 874220տ,
- երկաթիներ՝ 770957տ:

Աղյուսակ 5-ում հաշվարկված է Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի ընդերքից 1963-2009թթ. շահագործման ամբողջ ժամանակահատվածում պոչամբարներ թափված օգտակար տարրերի ընդհանուր արժեքը: Նշենք, որ հաշվարկները կատարվում են 2007թ. մարտ-ապրիլ ամիսներին և 2008թ. մայիսին՝ Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի նախօրյակին միջազգային շուկայում օգտակար տարրերի ունեցած գներով:

Աղյուսակ 5-ից տեսանելի է, որ 01.01.2010թ. դրությամբ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչամբարներում առկա է ավելի քան **2 մլրդ 710** մլն դոլարի հարստություն: Այս պարագայում Ագարակի պոչանքները կարելի է դիտարկել որպես ձեռակերտ (մարդկային գործունեության հետևանքով զոյացած) հանքավայր, որի ընդերքում առկա են այլ տարրերի՝ ծանր մետաղների (899,1 հազ.տ) հետ համատեղ բավականին մեծաքանակ (203,4տ) խիստ թունավոր, նույնիսկ միացությունների տեսքով, տարրեր՝ սելեն և տելուր: Վերջիններս, ինչպես նաև հանքաքարերում առկա (թեկուզև քիչ քանակությամբ), սակայն չնկարագրված մկնդեղը, թունավոր ու խիստ վտանգավոր են, եթե դրանք մնան պոչամբարներում, բայց դրանք կարող

են դառնալ օգտակար, եթե կորզվեն: Վերջիններս ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի հետ մեկտեղ կարող են կիրառվել նաև էլեկտրոնիկայի, այդ թվում միկրոէլեկտրոնիկայի՝ քիչ նյութատար, շատ աշխատատար, աշխատավորների բարձր որակավորում պահանջող, էկոլոգիապես մաքուր և մեծ շահութաբերություն ունեցող ճյուղում:

Աղյուսակ 5

Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի ընդերքից շահագործման ամբողջ ժամանակահատվածում պոչամբարներ թափված օգտակար տարրերի արժեքի հաշվարկը

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դր.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դր.
Պղինձ	տ	119950,7	7465	895.431.975
Մոլիբդեն	տ	7990,1	62200	496.984.220
Ոսկի	կգ	663,5	31500	20.900.250
Արծաթ	տ	35,1	450000	15.795.000
Ռենիում	տ	59,12	7777700	459.817.624
Սելեն	տ	153,65	52220	8.023.603
Տելուր	տ	49,77	116000	5.773.320
Բիսմուտ	տ	106,94	24440	2.613.614
Գերմանիում	տ	5,9	950000	5.605.000
Ծծումբ	տ	874220	650	568.243.000
Երկաթ	տ	770957	300	231.287.100
Ընդամենը				2.710.474.706

Եզրակացություններ և առաջարկություններ

Ագարակի հանքավայրն օգտագործվում է խիստ ցածր արդյունավետությամբ: Ընդերքում առկա միլիոնավոր ու միլիարդավոր դոլարների հարստություններից հանքավայրը շահագործող ձեռնարկությունը տարեկան ստանում է դրանց իրական արժեքի 15%-ի չափով շահույթ: Օտարներին է մվիրվում ու պոչամբարներ թափվում այդ արժեքի ավելի քան 50 տոկոսին հասնող հարստություն, այնինչ հանքահարստացման նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, օգտակար տարրերի կորզումը հանքաքարերից խտանյութերի մեջ հասցնելով 92-94%-ի, և ժամանակակից մետալուրգիական գործարանի (գործարանների) առկայության պայմաններում ստացվող հասույթը կարելի է հասցնել օգտակար տարրերի իրական արժեքի 85-90%-ին:

Բացի այն, որ փոշիացվում է մեր երկրին ու մեր ժողովրդին պատկանող հարստությունը, միևնույն ժամանակ պոչամբարներ թափվող թունավոր ու խիստ վտանգավոր տարրերով ու ծանր մետաղներով ստեղծվում է էկոլոգիական աղետով սպառնացող միջավայր:

Վերոնշյալից ելնելով՝ առաջարկվում է.

1. Հանքահարստացման գործընթացներում ներդնել համաշխարհային չափանիշներին համապատասխանող ժամանակակից տեխնոլոգիաներ, օգտակար տարրերի կորզումները հանքաքարերից խտանյութերի մեջ հասցնել 92-94%-ի, ընդ որում՝ հիմնական տարրերինը հասցնել 94-95%-ի, այդ թվում՝ նաև ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութինը, իսկ հիմնական տարրերի հետ զուգակցվող հարակից տարածված տարրերինը՝ ոչ պակաս 90%-ից: Նշված գործում կարելի է (անհրաժեշտ է, պարտադիր է) ներդնել և կիրառել ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիայի գերժամանակակից մշակումները,

2. Մյուսիքի մարզում, ավելի կոնկրետ Կապանի շրջանում՝ Կապան քաղաքի մոտակայքում, կառուցել նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ժամանակակից և բազմապրոֆիլ մետալուրգիական գործարան, որտեղ կարող են վերամշակվել այդ մարզում թողարկվող բոլոր տեսակների խտանյութերը՝ պղնձի, մոլիբդենի, պիրիտի, բազմամետաղների, ոսկի-բազմամետաղների, ազնիվ մետաղների և, միևնույն ժամանակ, **գտվել ու գերգտվել** ստացվող

մետաղներից առավել կարևորներն ու արժեքավորները: Նշենք, որ այս գործում ևս անհրաժեշտ է ներդնել և կիրառել ՀՀ ԳԱԱ Կապանի լաբորատորիայի մշակումները, որոնք ապահովում են մետաղների և ոչ մետաղների բարձր տոկոսով կորզումներ և էկոլոգիական մաքուր միջավայր,

3. ՀՀ տարածքի էկոլոգիական միջավայրը մաքրելու, պոչամբարներ թափված օգտակար տարրերը կորզելու և մեր ժողովրդի հարստությունը տիրոջը վերադարձնելու նպատակով անհրաժեշտ է անհապաղ ձեռնարկել պոչանքների վերամշակման՝ հանքահարստացման աշխատանքներ և այդ փորձը տարածել հանրապետության այլ մարզերում ու շրջաններում գործող ձեռնարկությունների վրա:

Նշված առաջարկությունների իրագործման արդյունքով ինչ-որ չափով հնարավոր կլինի նպաստել ՀՀ ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարմանը: Մինևույն ժամանակ.

- կունենանք հանքահարստացուցիչ ձեռնարկության շրջակայքում բնապահպանական առումով մաքուր միջավայր,
- կստեղծվեն մի քանի հարյուր նոր աշխատատեղեր,
- մետալուրգիական գործարանի արտադրանքների մի մասը՝ պղինձը, ոսկին, արծաթը, սելենը, տելուրը, մկնդեղը, ծարիրը, ինդիումը, գալիումը, գերմանիումը և այլն, կարող են կիրառվել էլեկտրոնիկայի, այդ թվում՝ նաև միկրոէլեկտրոնիկայի քիչ նյութատար, շատ աշխատատար, աշխատավորների բարձր որակավորում պահանջող, էկոլոգիապես մաքուր և մեծ շահույթ ապահովող ճյուղում և նպաստել նշված արդյունաբերության վերակենդանացմանը ՀՀ-ում:

Վերջաբանի փոխարեն

Այսօր արդեն ՀՀ տարածքում գործում են մոտ երկու տասնյակի հասնող լեռնահանքային՝ հանքահարստացուցիչ ձեռնարկություններ: ՀՀ տարբեր մարզերով ու շրջաններով սփռված են մոտ երեք տասնյակի հասնող թունավոր տարրերով ու ծանր մետաղներով առլեցուն մեծ ու փոքր պոչամբարներ: Հետախուզվում ու շահագործման են պատրաստվում գործող հանքավայրերից 5-6 անգամ ավելի՝ մետաղական օգտակար հանածոների նորանոր հանքավայրեր: Այսպես շարունակվելու պարագայում 2-3 տասնյակ տարիներ հետո Հայաստանի ողջ տարածքը ծածկված կլինի թունավոր ու կյանքի համար խիստ վտանգավոր հարյուրավոր պոչամբարներով, որոնք կործանարար կարող են դառնալ Հայաստան երկրի ու հայ ժողովրդի համար, հայ ժողովրդի գոյության համար ընդհանրապես: Կապականվի ու կթունավորվի բնական միջավայրը՝ հողը, օդը, ջուրը, որն էլ կունենա կործանարար հետևանք: Մեզ, մեր կառավարությանը, մտավորականությանը, առաջին հերթին ԳԱԱ-ի գիտնականներին անհրաժեշտ է սթափվել, հեռուն նայել, մտածել երկրի ու ժողովրդի ապագայի մասին, այն էլ ոչ հեռավոր ապագայի, այլ շատ ու շատ մոտակա՝ 30-50 տարիների: Անհրաժեշտ է այսօր, այժմյան իրավիճակներում խուսափել նորանոր հանքավայրերի շահագործման մեջ ներգրավումից: Նախ՝ անհրաժեշտ է նորագույն տեխնոլոգիաներ ներդնել հանքահարստացման գործընթացներում՝ բարձր ու գերբարձր տոկոսներով կորզել հանքաքարերում առկա բոլոր օգտակար տարրերը, միջավայրը պահպանել ու պաշտպանել թունավոր տարրերի ու ծանր մետաղների ներթափանցումից, վերամշակման ենթարկել արդեն իսկ կուտակված մի քանի հարյուր միլիոն տոննաների հասնող պոչանքները, ապահովել բնական միջավայրի անադարտությունը և միայն դրանից հետո մտածել նորանոր հանքավայրերի շահագործման մեջ ներգրավելու մասին, այն էլ աստիճանաբար՝ մեկի-երկուսի ավարտից հետո ներգրավել մեկը-երկուսը:

Քանի դեռ հանքավայրերը շահագործվում են բարբարոսաբար և աննշան արդյունավետությամբ, շռայլվում ու փոշիացվում է բնության կողմից մեր ժողովրդին պարզված բարիքը, նորանոր հանքավայրերի ներգրավումը շահագործման մեջ անթույլատրելի է, ավելի ստույգ ասած՝ հանցագործություն է:

**ԼԵՌՆԱՀԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀՆՈՒՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Լեռնահանքային արդյունաբերությանը մեծ վնաս են հասցնում օգտակար հանածոների արդյունահանման ժամանակ տեղի ունեցող կորուստները: Մասնագետների կարծիքով առավել մեծ կորուստներ են տեղի ունենում նավթահանքերում. ընդերքից արդյունահանվում է նավթահանքերի հետախուզված պաշարների հազիվ կեսից ավելին, լավագույն դեպքում դրանց 60 տոկոսը:

Մեծ են կորուստները մի շարք մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ժամանակ: Այսպես, օրինակ. կալիումական աղերի արդյունահանման ժամանակ կորուստները կազմում են պաշարների մոտ 50 տոկոսը, ածուխների արդյունահանման ժամանակ՝ մոտ մեկ երրորդը, երկաթաքարերի արդյունահանման ժամանակ՝ մոտ 30 տոկոսը և այլն: Հատկապես մեծ են լինում կորուստները փոքր հզորություն (հաստություն) ունեցող հանքային մարմինների (փոքր հզորության շերտերի, շերտանման մարմինների և երակների) շահագործման ժամանակ (այն դեպքում, երբ հանք շահագործողները ցանկանում են փոքրացնել օգտակար հանածոյի կորուստները, դրանց հակադարձ համեմատականությամբ աճում են հանքաքարերի աղքատացումները): Հաշվարկները ցույց են տվել, որ օգտակար հանածոների հանքանյութերի միջին կորուստները բոլոր տիպերի օգտակար հանածոների արդյունահանման ժամանակ կազմում են մոտ 25 տոկոս. մի մասը մնում է ընդերքում, մի մասը մակաբացման աշխատանքների ընթացքում ծածկող կամ կողային «դատարկ» ապարների հետ միասին հեռացվում է թափոնակույտեր և անվերադարձ կորսվում, իսկ մյուս մասը հանքահարստացման ոչ կատարյալ (հնացած և հետամնաց) տեխնոլոգիաների կիրառման հետևանքով թափոնապոչերի հետ միասին թափվում է պոչամբարներ, աղտոտում՝ ապականում ու թունավորում շրջակա միջավայրը, առաջացնելով բնապահպանական (էկոլոգիական) աղետներ:

Առավել ցավալի է, որ նյութական ու ֆիզիկական մեծ ծախսերի գնով հետախուզված, այնուհետև արդյունահանված հանքաքարերից օգտակար տարրերի մեծամեծ կորուստներ են տեղի ունենում հանքաքարերի սկզբնական մշակման՝ հանքահարստացման գործընթացներում: Հարստացման եղանակների անկատարության, հատկապես հնացած տեխնոլոգիաներով կատարվող հարստացման գործընթացները նպատակամղված էին ինչ-որ մեկ կամ մի քանի հիմնական տարրերի կորզմանը և անտեսվում էին (են) հիմնական տարրերի հետ հարակից տարածված՝ զուգակցվող, շատ ու շատ այլ, հաճախ ավելի արժեքավոր տարրերը: Արդյունքը լինում է այն, որ բնության կողմից միլիոնավոր տարիների ընթացքում մասնիկ առ մասնիկ հավաքված ու կուտակված օգտակար հանածոների հանքավայրերը շահագործվում են մի քանի տասնամյակների կամ, լավագույն դեպքում, հարյուրամյակների ընթացքում և այն էլ ոչ լիարժեք, շատ ցածր արդյունավետությամբ: Դա է պատճառը, որ լեռնահարստացուցիչ կոմբինատների շրջակայքում գոյանում են թափվածքների «մեռած» սարեր, աճում են թափոնապոչերի (պոչանքների) պահեստարանները, որոնց պահպանման վրա ծախսվում են բավականաչափ խոշոր գումարներ՝ լեռնահարստացուցիչ կոմբինատների ընդհանուր ծախսերի մոտ 10 տոկոսը: Ի վերջո, բոլոր այդ թափոնները, հատկապես մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման պարագայում, աղետ են դառնում շրջակա բնակավայրերի բնակչության «գլխին», ծանր մետաղներով և թունավոր տարրերով թունավորում են շրջակա միջավայրը՝ մարդկանց ու կենդանիներին, շատ հաճախ դրանք մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների երկրորդական՝ ձեռակերտ հանքավայրեր են: Հենց սա էր պատճառը, որ ԽՍՀՄ-ի օրոք որոշ զարգացած երկրներ ցանկություն էին հայտնել գնել Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի թափոնապոչերը և «աղքատ» ու ոչ կոմերցիոն հանքաքարերի թափոնները:

Ճիշտ է, թափոններում, այդ թվում նաև թափոնապոչերում, օգտակար տարրերի պարունակությունը համեմատաբար փոքր է լինում (ավելի փոքր, քան սկզբնական հանքաքարերում), սակայն դրանք շատ ավելի հարմար են օգտագործման (օգտակար տարրերի կորզման) համար, քան սկզբնական հանքաքարերը, որոնց ընդերքից արդյունահանման, փշրման ու մանրացման համար ծախսվում են բավական մեծ գումարներ: Բերենք օրինակներ Հայաստանում շահագործվող հանքավայրերից:

1988-1990թթ.¹ Խորհրդային Հայաստանի վերջին տարիների ընթացքում Քաջարանի հանքավայրի ընդերքից արդյունահանվել և մշակվել է 25,34 մլն տ հանքաքար, որի հարստացումից ստացվել են.

- պղնձի խտանյութ՝ 237298 տ, որի մեջ պղինձ մետաղի քանակը կազմել է 42000 տ (պղնձի միջին պարունակությունը խտանյութում կազմել է 17,7%): Արդյունահանված 25,34, մլն տ հանքաքարում պղնձի քանակը կազմել է 57973 տ, հետևապես պղնձի կորզումը կազմել է 72,5%,
- մոլիբդենի խտանյութ՝ 22249 տ, որի մեջ մոլիբդեն մետաղի քանակը կազմել է 11438,7 տ (մոլիբդենի միջին պարունակությունը խտանյութում կազմել է 51,41%): Արդյունահանված 25,34, մլն տ հանքաքարում մոլիբդենի քանակը կազմել է 14051 տ, հետևապես մոլիբդենի կորզումը կազմել է 81,4%:

Արդյունահանված 25,34 մլն տ հանքաքարից պղինձի և մոլիբդենի խտանյութերի տեսքով կորզվել է $237298 + 22249 = 259547$ տ, որը կազմել է արդյունահանված և մշակված 25,34 մլն տ հանքաքարերի 1,024%-ը, իսկ դա էլ նշանակում է, որ պոչամբար թափված հանքաքարերի քանակը կազմել է 25,08 մլն տ (արդյունահանված և մշակված հանքաքարի 98,976%-ը):

1998-2000թթ.² հետխորհրդային 3 տարիների ընթացքում նույն Քաջարանի հանքավայրի ընդերքից արդյունահանվել և մշակվել է 17,959 մլն տ հանքաքար, որի հարստացումից ստացված խտանյութերի քանակը կազմել է.

- պղնձինը՝ 97528 տ, որի մեջ պղինձ մետաղի քանակը կազմել է 23907 տ (պղնձի միջին պարունակությունը խտանյութում կազմել է 24%): Արդյունահանված և մշակված 17,959 մլն տ հանքաքարում պղնձի քանակը կազմել է 39286,8 տ, հետևապես պղնձի կորզումը կազմել է 60,85%,
- մոլիբդենինը՝ 15752 տ, որի մեջ մոլիբդեն մետաղի քանակը կազմել է 8000,5 տ (մոլիբդենի միջին պարունակությունը խտանյութում կազմել է 50,79%): Արդյունահանված և մշակված 17,959 մլն տ հանքաքարում մոլիբդենի քանակը կազմել է 10975,7 տ, հետևապես մոլիբդենի կորզումը կազմել է 72,89%:

Արդյունահանված 17,959 մլն տ հանքաքարից պղնձի և մոլիբդենի խտանյութերի տեսքով կորզվել է $97528 + 15752 = 113280$ տ, որը կազմել է արդյունահանված և մշակված 17,959 մլն տ հանքաքարերի 0,63%-ը, իսկ դա էլ նշանակում է, որ պոչամբար թափված հանքաքարերի քանակը կազմել է 17845,72 հազ. տ (արդյունահանված և մշակված հանքաքարերի 99,37%-ը):

1988-1990թթ. Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի ընդերքից արդյունահանվել և մշակվել է 8866,3 հազ. տ հանքաքար, որի հարստացումից ստացվել են.

- պղնձի խտանյութ՝ 154625 տ, որի մեջ պղինձ մետաղի քանակը կազմել է 23193տ (պղնձի պարունակությունը խտանյութում կազմել է 15%): Արդյունահանված և մշակված 8866,3 հազ.տ հանքաքարում պղնձի քանակը կազմել է 30109 տ, հետևապես պղնձի կորզումը կազմել է 77,03%):
- մոլիբդենի խտանյութ՝ 2792,5 տ, որի մեջ մոլիբդեն մետաղի քանակը կազմել է 1424տ (մոլիբդենի պարունակությունը խտանյութում կազմել է 51%): Արդյունահանված և մշակված 8866,3 հազ.տ հանքաքարում մոլիբդենի քանակը կազմել է 1933,8 տ, հետևապես մոլիբդենի կորզումը կազմել է 73,64%):

Արդյունահանված 8866,3 հազ.տ հանքաքարերից պղնձի և մոլիբդենի խտանյութերի տեսքով կորզվել է $154625 + 2792,5 = 157417,5$ տ, որը կազմել է արդյունահանված և մշակված

¹ Լեռնահանքային ձեռնարկությունների 5 ԳՐ ձևի տարեկան հաշվետվություններ՝ 1988, 1989, 1990թթ.:

² Լեռնահանքային ձեռնարկությունների 5 ԳՐ ձևի տարեկան հաշվետվություններ՝ 1998, 1999, 2000թթ.:

8866,3 հազ.տ հանքաքարերի 1,77%-ը, որն էլ նշանակում է, որ պոչամբարների թափված հանքաքարերի քանակը կազմել է 8708,88 հազ. տ (98,23%-ը):

1998-2000թթ. Ագարակի հանքավայրի ընդերքից արդյունահանվել և մշակվել է 1936,7 հազ. տ հանքաքար, որի հարստացումից ստացվել են.

- պղնձի խտանյութ՝ 23134 տ, որի մեջ պղինձ մետաղի քանակը կազմել է 4920,5 տ (պղնձի միջին պարունակությունը խտանյութում կազմել է 21,27%): Արդյունահանված և մշակված 1936,7 հազ.տ հանքաքարում պղնձի քանակը կազմել է 7084,7 տ, հետևապես պղնձի կորզումը կազմել է 69,45%,
- մոլիբդենի խտանյութ՝ 434,4 տ, որի մեջ մոլիբդեն մետաղի քանակը կազմել է 221,5 տ (մոլիբդենի միջին պարունակությունը խտանյութում կազմել է 51%): Արդյունահանված և մշակված 1936,7 հազ.տ հանքաքարում մոլիբդենի քանակը կազմել է 380,6 տ, հետևապես մոլիբդենի կորզումը կազմել է 58,2%:

Արդյունահանված 1936,7 հազ.տ հանքաքարից պղնձի և մոլիբդենի խտանյութերի տեսքով կորզվել է 23134 + 434,4=23568,4 տ, որը կազմել է արդյունահանված և մշակված 1936,7 հազ.տ հանքաքարերի 1,22%-ը, որն էլ նշանակում է, որ պոչամբարների թափված հանքաքարերի քանակը կազմել է 1913,13 հազ. տ (98,78%-ը):

Քաջարանի հանքավայրի հանքաքարերում պղնձից ու մոլիբդենից բացի հայտնաբերված են հարակից տարածված մի քանի այլ տարրեր՝ ռենիում, ոսկի, արծաթ, սելեն, տելուր, բիսմութ, երկաթ, վանադիում, սկանդիում, պլատինոիդներ, ծծումբ և այլն, որոնց մի մասը (նրանք, որոնք սերտորեն կապված են պղնձի և մոլիբդենի հանքանյութերի հետ՝ ոսկին, արծաթը, պլատինոիդները, ռենիումը, ծծումբը, սելենը, տելուրը և բիսմութը) անցնում են խտանյութերի մեջ հիմնական հանքանյութերին ուղիղ համեմատական կարգով, իսկ մյուս տարրերը՝ պիրիտ հանքանյութն իր բյուրեղային ցանցը կազմող ծծմբի և երկաթի հետ, ինչպես նաև դրա հետ հարակից տարածված ռենիումը, սելենը, տելուրը, բիսմութը, ոսկին, արծաթը և այլն, մագնետիտ հանքանյութի երկաթը, վանադիումը և սկանդիումը, շրջանցելով խտանյութերը, ուղղակիորեն անցնում են պոչանքներ:

Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ամբողջ ժամանակահատվածում (1951 թվից մինչև 2009թ.) դրա ընդերքից արդյունահանվել և մշակվել է 318,2 մլն տ հանքաքար, որի մեջ պարունակվող օգտակար տարրերի քանակները կազմել են. պղնձինը՝ 707258,6 տ, մոլիբդենինը՝ 118688,6 տ, ռենիումինը՝ 50,91 տ, ոսկունը՝ 8909,6 կգ, արծաթինը՝ 496,392 տ, սելենինը՝ 515,484 տ, տելուրինը՝ 429,57 տ, բիսմութինը՝ 496,392 տ, նիկելինը՝ 532,985 տ, կոբալտինը՝ 199,83 տ, կապարինը՝ 9227,8 տ, ցինկինը՝ 8177,74 տ, սկանդիումինը՝ 1705,5տ, երկաթինը (մագնետիտ հանքանյութի մեջ)՝ 2.291.000 տ, վանադիումինը (մագնետիտ հանքանյութի մեջ)՝ 63000 տ, ծծմբինը (կապված սուլֆիդային հանքանյութերի հետ)՝ 2145793 տ, երկաթինը (կապված պղնձի և ծծմբի հրաքարերի հետ)՝ 1858167 տ:

Օգտակար որոշակի տարրերի չկորզման և հիմնական ու հարակից տարրերի մեծ մասի թերկորզման հետևանքով Քաջարանի հանքավայրի ընդերքից արդյունահանված և մշակված 318,2 մլն տ հանքաքարերից պոչամբարների թափված տարրերի քանակները կազմել են. պղնձինը՝ 222747տ, մոլիբդենինը՝ 26194,6տ, ռենիումինը՝ 23,995տ, ոսկունը՝ 2805,6 կգ, արծաթինը՝ 306,3 տ, սելենինը՝ 430տ, տելուրինը՝ 313,78տ, բիսմութինը՝ 296,44տ, երկաթինը՝ 4149167տ, ծծմբինը՝ 2145793տ, վանադիումինը՝ 63000տ, սկանդիումինը՝ 1705,5տ, նիկելինը՝ 532,985տ, կոբալտինը՝ 199,83 տ, կապարինը՝ 9227,8տ, ցինկինը՝ 8177,74տ:

Սելենը, տելուրը, մկնդեղը և մի քանի այլ տարրեր, որոնք հաճախ առատորեն պարունակվում են Հայաստանի համարյա բոլոր տիպերի հանքաքարերում, նույնիսկ միացությունների տեսքով, խիստ թունավոր են: Դրանք ընդերքում խոր թաղված հոծ հանքաքարերի մեջ շատ ավելի քիչ վտանգավոր են, քան, երբ արդյունահանվում են ընդերքից և ներփակող ապարները փշրելով ու մանրացնելով մերկացվում ու շրջակա միջավայր են թափվում:

Դա շատ ավելի վտանգավոր է դառնալու, երբ իրագործվի Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տիրոջ՝ ազահուրյան մոլուցքով առլեցուն, մտահղացումը՝ Քաջարանի ընդերքից հանքաքարերի արդյունահանման ու մշակման քանակն աստիճանաբար մեծացնելով հասցնել 20 մլն տոննայի, այն էլ այն դեպքում, երբ արդեն այսօր պոչամբարի տեղ անգամ չեն գտնում, որպեսզի համեմատաբար քիչ ավելի վտանգավոր ամբարեն

հարստապոչերը: Երբ իրագործվի այդ մտահղացումը, յուրաքանչյուր տարի հարստապոչերի հետ շրջակա միջավայր կթափվի. պղինձ՝ 13895,9 տ, մոլիբդեն՝ 2382 տ, ռենիում՝ 1151,3 կգ, ոսկի՝ 178,7 կգ, արծաթ՝ 9687,4 կգ, սելեն՝ 10163,8 կգ, տելուր՝ 8476,4 կգ, քիմուտ՝ 12545,9 կգ, նիկել՝ 10,0 տ, կոբալտ՝ 3,77 տ, կապար՝ 176,0 տ, ցինկ՝ 154 տ, երկաթ (մագնետիտ հանքանյութի հետ կապված)՝ 59553,7 տ, վանադիում՝ 3235,6 տ, սկանդիում՝ 106402,4 կգ, պլատին՝ 2,33 կգ, պալադիում՝ 5,66 կգ, ծծումբ՝ 135000 տ, և թե ի՞նչ վտանգներ է սպասվում դրանից Կապանի շրջանի բնակչությանը, այդ մասին շատ պատկերավոր կասեն (և արդեն իսկ ասում են) Արծվանիկ գյուղի բնակիչները:

Մենք գտնում ենք, որ Քաջարանի և դրա նման այլ հանքավայրերի (Շահումյանի և Արմանիսի ոսկի բազմամետաղային, Սոտքի և Մեղրաձորի ոսկու, Ագարակի պղնձամոլիբդենային և այլն) հարստապոչերն անհապաղ պետք է վերանշակվեն, կորզվեն բոլոր (կամ հնարավորինս շատ թվով) օգտակար տարրերը և միջավայրը պետք է մաքրվի դրանցից: Այս դեպքում մեր ժողովրդի շահը կրկնակի ու եռակի է լինելու: Նախ՝ կկորզվեն հարստապոչերում եղած օգտակար տարրերը, երկրորդ՝ միջավայրը կմաքրվի ծանր մետաղներից ու թունավոր տարրերից (թունավոր ու վնասակար տարրերը կդառնան օգտակար) և, երրորդը՝ կստեղծվեն նորանոր աշխատատեղեր նպաստելով տվյալ տարածքում բնակչության գոյատևմանը:

Հայաստանի Հանրապետությանը անհրաժեշտ են ոչ միայն հանքահարստացուցիչ ձեռնարկություններ, այլ նաև համաշխարհային չափանիշները բավարարող ժամանակակից տեխնիկայով ու տեխնոլոգիաներով հագեցած մետալուրգիական գործարաններ, որտեղ ոչ միայն կկորզվեն հանքաքարերում պարունակվող և խտանյութեր անցած հիմնական ու հարակից բաղադրիչները, այլև միջազգային շուկայի պահանջներին համապատասխան կմաքրվեն ու կզտվեն դրանք:

Կորզված ու զտված տարրերի մի պատկառելի մասը՝ ոսկին, արծաթը, սելենը, տելուրը, գալիումը, գերմանիումը, ինդիումը, բերիլիումը (բերիլիումի օքսիդը) և այլն, արդյունաբերության այլ ճյուղերի հետ միասին, օգտագործվում է նաև էլեկտրոնիկայի, այդ թվում նաև միկրոէլեկտրոնիկայի, քիչ նյութատար, շատ աշխատատար, աշխատավորների բարձր որակավորում պահանջող, բարձր եկամտաբերություն ապահովող և էկոլոգիապես մաքուր արդյունաբերության մեջ, որն էլ՝ ԽՍՀՄ-ի վերջին երկու տասնամյակների ընթացքում մեծ թափ էր առել Հայաստանում, հատկապես Երևան և Արովյան քաղաքներում: ԽՍՀՄ-ի փլուզման հետ միասին «փլուզվեց» նաև նշված արդյունաբերությունը, որը, ինչ խոսք, մեր հանրապետության ղեկավարության անհեռատես և հանցավոր քաղաքականության արդյունք էր: Մենք գտնում ենք, որ Հայաստանում անհրաժեշտ է վերակենդանացնել էլեկտրոնիկայի արդյունաբերության բոլոր ձեռնարկությունները, նույնիսկ ավելին՝ անհրաժեշտ է ընդարձակել ու զարգացնել արդյունաբերության այդ կարևորագույն ճյուղը, որը հունքով կարող է ապահովված լինել ներքին ռեսուրսների հաշվին:

Հայտնի է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները էլեկտրոնիկայի սարքավորումներ գնելու համար տարեկան ավելի շատ ծախս է կատարում, քան նավթի:

Պղնձամոլիբդենային կազմավորման հանքաքարերի պաշարների և ռեսուրսների գծով Հայաստանը համարվում է առաջնակարգ երկրներից մեկը, նույնիսկ կարելի է ասել առաջինն աշխարհում: Հայաստանում հայտնի են պղնձամոլիբդենային կազմավորման երեք տասնյակից ավելի (35) հանքավայրեր ու հանքաերևակումներ, որոնցից մանրագնին հետախուզված և Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատված արդյունաբերական պաշարներով հանքավայրերը յոթն են՝ Քաջարանի, Ագարակի, Այգեձորի, Դաստակերտի, Հանքասարի (հետախուզվել է Կենտրոնական տեղամասի մեկ երակային տիպի հանքային մարմին՝ 2006-2007թթ.), Թեղուտի և Հանքավանի, որոնցից առաջին հինգը գտնվում են Սյունիքի մարզում, մեկը (Թեղուտինը)՝ Լոռու, իսկ Հանքավանինը՝ Կոտայքի մարզում: ՀՀ պղնձամոլիբդենային հանքավայրերի հետախուզված հանքաքարերի պաշարների քանակը կազմում է 6074,95 մլն տ, որից հաշվեկշռային գնահատվածներինը՝ 2998,09 մլն տ, արտահաշվեկշռային գնահատվածներինը՝ 3076,87 մլն տ, իսկ կանխատեսումային ռեսուրսներինը՝ 2699,47 մլն տ: Բազմաթիվ հանքաերևակումներից այժմյան դրությամբ առավել հեռանկարային երկու հանքաերևակումների՝ Կազանլճի և Նժդեհ-Մուրխուզի (երկուսն էլ Սյունիքի

մարզում) հանքաքարերի կանխատեսումային P₁ կատեգորիայի ռեսուրսների քանակը կազմում է 267,2 մլն տ:

Այսպիսով մանրագնին հետախուզված 7 հանքավայրերի և առավել հեռանկարային ճանաչված երկու հանքաերևակումների պաշարներն ու P₁ կատեգորիայի կանխատեսումային ռեսուրսները համատեղ կազմում են 8774,2 մլն տ, որից Սյունիքի մարզում՝ 7634,6 մլն տ, Լոռու մարզում՝ 768,1 մլն տ, Կոտայքի մարզում 371,5 մլն տ: Ավելի քան մեկ մլրդ տ են գնահատվում ավելի փոքր հանքաերևակումների հանքաքարերի կանխատեսումային ռեսուրսները:

Հայաստանում հայտնի են բուն պղնձի (պղինձ-հրաքարային կազմավորման) հինգ մանրագնին հետախուզված հանքավայրեր՝ Կապանի և Լիճքի՝ Սյունիքի մարզում, Ալավերդու, Շամլուղի և Հանքաձորի՝ Լոռու մարզում, որոնց Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատված արդյունաբերական պաշարների ընդհանուր քանակը կազմում է 850,5 հազ. տ, իսկ դրանց կանխատեսումային ռեսուրսներինը՝ 560 հազ. տ: Պաշարների պետական հանձնաժողովի կողմից Լիճքի հանքավայրում արտահաշվեկշռային գնահատված պաշարների քանակը կազմում է 105,4 հազ. տ, որը, մեր գնահատմամբ, կարելի է արդյունահանել և մշակել հաշվեկշռային գնահատված պաշարների հետ համատեղ, և դրանով էլ նույնքանով մեծացնել Սյունիքի մարզի պղնձի պաշարները: Հանքաձորի հանքավայրում հետախուզված և հեղինակային հաշվարկով գնահատված պաշարների քանակը կազմում է 100 հազ. տ, իսկ P₁ կատեգորիայի կանխատեսումային ռեսուրսներինը՝ 150 հազ.տ:

Հայաստանի տարածքում հայտնի են նաև 25 փոքր և մեծ հանքաերևակումներ, որոնց կանխատեսումային ընդհանուր ռեսուրսները հետախույզ երկրաբանների կողմից գնահատվում են մոտ երկու մլն տ: Դրանցից առավել հեռանկարայինները, որոնք մոտ ապագայում կարող են գնահատվել որպես հանքավայր, երեքն են՝ Ալվարդ-Բարդուտի (Լոռու մարզում), Տիգրանաբերդի (Գեղարքունիքի մարզում) և Դիլիջանի (Տավուշի մարզում), որոնցում պղնձի ընդհանուր ռեսուրսները գնահատվում են 1015,0 հազ. տ (Ալվարդ-Բարդուտինը՝ 250 հազ. տ, Տիգրանաբերդինը՝ 500,0 հազ. տ և Դիլիջանինը՝ 265 հազ. տ): Այնուամենայնիվ պետք է նշել, որ Հայաստանի պղնձի պաշարների «առյուծի բաժինը» մոտ 8 անգամ ավելի, քան բուն պղնձի հանքավայրերում, կապված է պղնձամոլիբդենային կազմավորման հանքավայրերի հետ:

Մեր գնահատմամբ Հայաստանը բավական հարուստ է կապար-ցինկային, բազմամետաղային (ներկայացված կապար, ցինկ, պղինձ հիմնական մետաղներով) և ոսկի-բազմամետաղային (ոսկի, արծաթ, կապար, ցինկ, պղինձ հիմնական մետաղներով և բազմաթիվ հարակից տարածված տարրերով) հանքաքարերով: Հանրապետության տարածքով մեկ սփռված են մի քանի տասնյակ բավականին հեռանկարային հանքավայրեր և հանքաերևակումներ, որոնց մի մասն արդեն իսկ մանրագնին հետախուզված է, իսկ մյուս մասը հետախուզված և հետազոտված է երկրաբանաորոնողական ու հետախուզական աշխատանքների տարբեր փուլերով՝ որոնողական, որոնողագնահատողական և նախնական հետախուզական: Մանրագնին հետախուզվածների թվին են պատկանում՝ Շահումյանի ոսկի բազմամետաղային հանքավայրը Սյունիքի մարզում, Արմանիսի և Ախթալայի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը Լոռու մարզում, Գլաձորի բազմամետաղային և Ազատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը Վայոց Ձորի մարզում, որոնցից Գլաձորի հանքավայրի պաշարները նախկին ԽՍՀՄ-ի Պաշարների պետական հանձնաժողովի կողմից ընդունվել էին որպես արտահաշվեկշռային: Հետագայում՝ 2007-2010թթ. աշխատանքներով Գլաձորի հանքավայրում՝ ՀՀ պաշարների գործակալության կողմից հաստատված պաշարներով համարյա երկու անգամ ավելացվեցին հիմնական օգտակար տարրերի պաշարները և հայտնաբերվեցին ու գնահատվեցին որոշակի քանակի (9289կգ) ոսկու պաշարներ, որոնց հիման վրա էլ այդ հանքավայրը կարելի է դասել ոսկի-բազմամետաղային կազմավորումների շարքում: Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի (Սյունիքի մարզ) հանքաքարերի հաշվեկշռային պաշարների քանակը 01.01.2008թ. դրությամբ կազմում է 13,766 մլն տ, Գլաձորի և Ազատեկի հանքավայրերինը (Վայոց Ձորի մարզ)՝ 22,781 մլն տ, Արմանիսի և Ախթալայի հանքավայրերինը (Լոռու մարզ)՝ 15,95 մլն տ: Նշված հանքավայրերի հանքաքարերի ընդհանուր պաշարների քանակը կազմում է 52,497 մլն տ: Նույն հանքավայրերի հանքաքարերի P₁ կատեգորիայի

րիայի կանխատեսումային ռեսուրսների քանակը կազմում է 56,6 մլն տ, որից՝ Շահումյանի հանքավայրինը (Սյունիքի մարզ)՝ 9,0 մլն տ, Գլաձորի և Ազատեկի հանքավայրերինը (Վայոց Ձորի մարզ)՝ 34,5 մլն տ, Արմանիսի և Ախթալայի հանքավայրերինը (Լոռու մարզ)՝ 13,1 մլն տ:

Հայաստանում հայտնի են նաև մոտ երկու տասնյակ բազմամետաղային և ոսկի-բազմամետաղային հանքաերևակումներ, որոնց շարքում, այժմյան պահանջներից ելնելով, առավել հեռանկարայինները յոթն են՝ Արևիսի հանքաերևակումը՝ իր երկու տեղամասերով և Բարձրավանինը Սյունիքի մարզում, Կաքավասարինը և Չիրախլուինը՝ Վայոց Ձորի մարզում, Մովսեսինը և Վազաշենինը՝ Տավուշի մարզում և Պրիվոլնիինը՝ Լոռու մարզում:

Նշված 7 հանքաերևակումների շարքում առավել մեծ հեռանկարներ խոստացող ոսկի-բազմամետաղային երեք հանքաերևակումների՝ Կաքավասարի, Արևիսի և Բարձրավանի P₁ կատեգորիայի հանքաքարերի կանխատեսումային ռեսուրսների ընդհանուր քանակը կազմում է 43,0 մլն տ, որից. Կաքավասարինը (Վայոց Ձորի մարզ)՝ 15,0 մլն տ, Արևիսինը (Սյունիքի մարզ)՝ 22,5 մլն տ և Բարձրավանինը (Սյունիքի մարզ)՝ 5,5 մլն տ:

Հաշվարկները ցույց են տալիս, որ ՀՀ բազմամետաղային և ոսկի-բազմամետաղային մանրազնին հետախուզված հանքավայրերն իրենց արդյունաբերական պաշարներով և P₁ կատեգորիայի կանխատեսումային ռեսուրսներով հանդերձ, հաջորդաբար և մեծ արդյունավետությամբ կարելի է շահագործել ավելի քան 300 տարի և յուրաքանչյուր տարի կորզել, մաքրել ու գտել. պղինձ՝ ավելի քան 1800 տ, կապար՝ 4700 տ, ցինկ՝ 7170 տ, ոսկի՝ 440 կգ, արծաթ՝ 62,0 տ, կադմիում՝ 240 տ, քիսմուտ՝ 11,0 տ, սելեն՝ 24,0 տ, տելուր՝ 10,0 տ, գերմանիում՝ 500 կգ, գալիում՝ 3800 կգ, ինդիում՝ 3100 կգ, քալիում՝ 50 կգ:

Առավել հեռանկարային՝ Արևիսի, Բարձրավանի, Կաքավասարի և Պրիվոլնիի հանքաերևակումների մանրազնին հետախուզումով բազմամետաղային և ոսկի-բազմամետաղային լեռնահանքային ու լեռնամետալուրգիական ձեռնարկությունների «կյանքի տևողությունը» կարելի է երկարաձգել ևս 150-200 տարով՝ եթե, իհարկե, դրանք թալանչիական նպատակներով բարբարոսական եղանակներով չշահագործվեն:

Նշենք ևս մեկ անգամ. Հայաստանում հանքավայրեր շահագործող ձեռնարկությունները թողարկում են միայն կիսաարտադրանքներ՝ խտանյութեր, որոնք էլ վաճառվում են արտասահմանյան երկրներին: Բացառություն չեն կազմում նաև բազմամետաղային և ոսկի-բազմամետաղային հանքավայրերի վրա գործող ձեռնարկությունները, քանի որ Հայաստանում մետալուրգիական գործարան չունենք ընդհանրապես: Այժմ ոսկի-բազմամետաղային հանքավայրերի շահագործման ժամանակ խտանյութերի մեջ են կորզվում 4-5 հիմնական տարրեր՝ պղինձ, ցինկ, ոսկի, արծաթ, երբեմն էլ կապար, որոնց հետ էլ «կորզողների» ցանկությունից ակամա խտանյութերի մեջ են անցնում հիմնական տարրերի հետ հարակից տարածված, վերջիններիս հետ սերտորեն կապված մի քանի տարրեր՝ կադմիում, սելեն, տելուր, գալիում, գերմանիում և այլն, որոնք, սակայն, խտանյութերի վաճառքի պարագայում չեն գնահատվում, և դրանց արժեքները չեն փոխհատուցվում, չնայած դրանցից շատերը շատ ավելի արժեքավոր են, քան հիմնական տարրերից յուրաքանչյուրը: Դրա հետ էլ մեկտեղ, ինչպես հիմնական, այնպես էլ հարակից տարրերի կորզումները հանքաքարերից խտանյութերի մեջ շատ ցածր են՝ ցածր ոչ միայն համաշխարհային չափանիշներից, այլ նաև տվյալ հանքավայրի համար տեխնոլոգիական փորձարկումներով և տեխնիկատնտեսական հիմնավորումներով սահմանված չափաքանակից: Բերենք ՀՀ Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի (Սյունիքի մարզ) օրինակը.

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործումը՝ հանքաքարերի արդյունահանումն ու մշակումը, տեխնիկատնտեսական հիմնավորմամբ նախատեսված է 2 տարբերակով՝ 300 և 500 հազ. տ տարեկան, որոնցից տվյալ ձեռնարկության համար ընտրված էր առաջին տարբերակը, որն էլ ապահովում է բավականին բարձր արդյունավետություն: Նշված տարբերակով աշխատելու պարագայում տարեկան պետք է ստացվեր՝ 7,12 հազ. տ պղինձի խտանյութ՝ պղնձի 16% պարունակությամբ, 9,1 հազ. տ ցինկի խտանյութ՝ ցինկի 53,8% պարունակությամբ, 0,91 հազ. տ կապարի խտանյութ՝ կապարի 19,2% պարունակությամբ: Ազնիվ մետաղների կորզումը նշված սելեկտիվ խտանյութերից պետք է կազմեր. ոսկունը՝ 82,23%, արծաթինը՝ 82,29%: Հիմնական մետաղների կորզումները սելեկտիվ խտանյութերի մեջ պետք է կազմեին. պղնձինը՝ 73,0%, ցինկինը՝ 80%, կապարինը՝ 48% (ինչպես տեսնում

ենք նույնիսկ տեխնիկատնտեսական հիմնավորմամբ նախատեսված են շատ ցածր կոր-
զումներ՝ ցածր համաշխարհային չափանիշներից): Այդ բոլորով հանդերձ, շահագործող
ձեռնարկության 2000 և 2001թթ. աշխատանքային փորձը ցույց տվեց, որ նշված նույնիսկ
ցածր ցուցանիշներին հասնելը ձեռնարկության համար դժվարին գործ է: 2000 թվին
ձեռնարկության կողմից արդյունահանվել և մշակվել է 56746 տ հանքաքար, որից ստացվել
են. 803,7 տ պղնձի խտանյութ՝ պղնձի 14,79% պարունակությամբ (կորզված պղնձի քանակը
կազմել է 118,87 տ), 527,93 տ ցինկի խտանյութ՝ ցինկի 54,39% պարունակությամբ (կորզված
ցինկի քանակը կազմել է 287,14 տ): Կապարի խտանյութ չի ստացվել (ձեռնարկության ղեկա-
վարությունը պատճառաբանել է, որ կապարն անցել է պղնձի և ցինկի խտանյութերի մեջ):
Ապրանքային հանքաքարերում նշված երկու մետաղների պարունակությունները կազմել են.
պղնձինը՝ 0,31%, ցինկինը՝ 1,3%: Հաշվարկները ցույց են տալիս, որ մշակված 56746 տ
հանքաքարերից պետք է ստացվեին. պղնձ՝ 175,91 տ, ցինկ՝ 737,7 տ, որտեղից երևում է, որ
պղնձի կորուստը կազմել է 57,04 տ (34,2%), ցինկի կորուստը՝ 450,6 տ (61%): Ազնիվ մետաղ-
ների կորուստը կազմել է 35% (կորզումը՝ 65%):

Հայաստանի հանքավայրերի հանքաքարերում կորզելի քանակներով ազնիվ մետաղներ
են հայտնաբերվել ոչ միայն բազմամետաղային և ոսկի-բազմամետաղային, այլև պղնձ-
հրաքարային, պղնձ-մոլիբդենային, ծծումբ-հրաքարային և այլ կազմավորումների հանքա-
վայրերում: Սակայն ազնիվ մետաղների (ոսկու և արծաթի) համեմատաբար բարձր պարու-
նակություններ և մեծ պաշարներ հայտնաբերվել են բուն ոսկու՝ ոսկի-սուլֆիդային կազմա-
վորման հանքավայրերում: Այժմյան դրությամբ Հայաստանի տարածքում ունենք մանրազնին
հետախուզված և Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատված արդյունա-
բերական պաշարներով ոսկի-սուլֆիդային կազմավորման 6 հանքավայրեր և 4 բավականին
հեռանկարային հանքաերևակումներ, որոնց մանրազնին հետախուզման պարագայում մոտ
ապագայում կարող ենք ունենալ ևս 4՝ արդյունաբերական մեծ պաշարներով հանքավայրեր:
Մանրազնին հետախուզված Սոտքի, Մեղրածորի, Լիճքվագ-Թեյի, Տերտերասարի, Մղարթի և
Բազումի հաշվեկշռային պաշարները 2008թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում են՝ ոսկունը
199196,683 կգ, արծաթինը՝ 337,057 տ, իսկ դրանց կանխատեսումային ռեսուրսները՝ ոսկունը՝
332801,2 կգ, արծաթինը՝ 1209,3 տ:

Ազնիվ մետաղների 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հետախուզված 6 հանքա-
վայրերից 2009թ. մարտի դրությամբ շահագործվում են 4-ը՝ Սոտքի և Մեղրածորի հանքավայ-
րերը՝ ռուսական «Մարնեուլի» ընկերության, իսկ Լիճքվագ-Թեյի և Տերտերասարի հանքա-
վայրերը՝ ավստրալիական «Իբերիան ռեսուրսիս» ընկերության կողմից: Հետախուզված՝
արդյունաբերական պաշարներով, Մղարթի հանքավայրը, որը դասվում է շատ փոքր հանքա-
վայրերի շարքին, շահագործվում է «Մուլտի գրուպ» կոնցեռնի կողմից:

2007-2010թթ. հետախուզվել են ոսկու 3 հանքավայրեր՝ Բարձրաղիի հանքավայրը
(Սյունիքի մարզում), հանքաքարի պաշարները կազմում են 917,863 հազ.տ, ոսկունը՝ 9645կգ,
արծաթինը՝ 14,413տ,

Լուսաջրի հանքավայրը (Կոտայքի մարզում), որը, իրականում, հանդիսանում է Մեղրա-
ծորի ոսկու հանքավայրի հյուսիսարևմտյան տեղամասը, հանքաքարի պաշարները կազմում
են 1845,3 հազ.տ, ոսկունը՝ 18480,39կգ, արծաթինը՝ 33,321տ, տելուրինը՝ 23,336տ, բիսմու-
տինը՝ 15,984տ,

Ամուլսարի «հանքավայրը» (Վայոց Ձորի մարզում), որը, իրականում հանդիսանում է
Կաքավասարի ոսկի-բազմամետաղային հանքաերևակման վերին հորիզոնը՝ «Երկաթյա
գլխարկը» (железная шляпа), հանքաքարերի հաշվեկշռային պաշարները կազմում են 18395,7
հազ.տ, արտահաշվեկշռային պաշարները՝ 7100,5 հազ.տ, ոսկու հաշվեկշռային պաշարները՝
16380կգ, ոսկու արտահաշվեկշռային պաշարները՝ 3634,4կգ:

Վերը նշված երեք հանքավայրերը պատրաստվում են շահագործման:

Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնի են երկաթաքարերի հարյուրից
ավելի հանքավայրեր և հանքաերևակումներ, որոնցից հետախույզ երկրաբանների կարծիքով
հեռանկարային են համարվում ութը: Սակայն որոնողական, որոնողագնահատողական և
հետախուզական աշխատանքների տվյալներով դրանցից առավել հեռանկարայինները՝
որպես հանքավայր որակվածները, վեցն են՝ Հրազդանի և Աբովյանի (Կոտայքի մարզ)

մանրագնին հետախուզված և Պաշարների պետական հանձնաժողովի (ԽՍՀՄ-ի) կողմից հաստատված արդյունաբերական պաշարներով, Սվարանցի, Կամաքարի (Սյունիքի մարզ), Բագումի (Լոռու մարզ) և Թթուջուր-Մարտունու (Գեղարքունիքի մարզ) տարբեր փուլերով՝ որոնողականից մինչև նախնական հետախուզական, հետագուտված հանքավայր-հանքաբերակունքները: Նախնական հետախուզական աշխատանքներ կատարվել են Սվարանցի հանքավայրում, որի հետևանքով էլ ունենք 430,7 մլն տ հեղինակային հաշվարկված պաշարներ, Բագումի հանքավայրում կատարվել են որոնողագնահատողական աշխատանքներ, իսկ Կամաքարի և Թթուջուր-Մարտունու հանքավայրերում՝ մանրակրկիտ որոնողական: Բագումի հանքավայրում որոնողագնահատողական աշխատանքների արդյունքով կատարվել է հանքաքարերի պաշարների հեղինակային հաշվարկ՝ 150 մլն տ, որոնք գնահատվել են C_2 կատեգորիայով:

Հրագրանի երկաթի հանքավայրում արդյունաբերական ($B+C_1$) կատեգորիաներով հաստատված պաշարները կազմում են 50,1 մլն տ՝ 31,76% լուծվող երկաթի միջին պարունակությամբ: Արտահաշվեկշռային ընդունված պաշարների քանակը կազմում է 23,2 մլն տ՝ 17,7% երկաթի միջին պարունակությամբ: Արովյանի հանքավայրի արդյունաբերական ($A+B+C_1$) կատեգորիաներով հաստատված հաշվեկշռային պաշարների քանակը կազմում է 243,8 մլն տ՝ 27,6% լուծվող երկաթի միջին պարունակությամբ: Արտահաշվեկշռային ընդունված պաշարների քանակը կազմում է 17 մլն տ՝ 20,55% լուծվող երկաթի միջին պարունակությամբ: Հետագայում տեխնոլոգիական և տեխնիկատնտեսական հետազոտություններով հաստատվել է, որ երկու հանքավայրերում էլ հաշվեկշռային և արտահաշվեկշռային պաշարները կարելի է արդյունավետ շահագործել համատեղ՝ ունենալով 40,2 մլն տ պաշարների հավելած:

ՀՀ վեց առավել հեռանկարային հանքավայրերի ընդհանուր ռեսուրսները, հետախուզված պաշարների հետ համատեղ, կազմում են 3984,0 մլն տ, իսկ երկաթ մետաղինը՝ 1104,5 մլն տ:

Հանքարդյունաբերությունը ԽՍՀՄ-ի օրոք Հայաստանում չի ունեցել և, բնականաբար, այժմ էլ չունի ավարտուն տեխնոլոգիական շրջափուլեր: Քաջարանի, Ագարակի, Կապանի, Շամլուղի կոմբինատները թողարկում էին միայն կիսաարտադրանքներ՝ պղնձի և մոլիբդենի խտանյութեր, որոնք՝ մետալուրգիական գործարաններ չունենալու պատճառով, ուղարկվում էին հանրապետությունից դուրս: Արարատի ոսկու կորզման ֆաբրիկան մշակում էր Մոտքի և Մեղրածորի ոսկու հանքերի հանքաքարերը, որոնցից կորզված բնածին ոսկին և ստացված խտանյութերը՝ կորզված ոսկին մաքրելու (գտելու), իսկ խտանյութերը ոսկու կորզման և գտման նպատակով, դարձյալ ուղարկվում էին հանրապետությունից դուրս՝ հազարավոր կիլոմետրեր հեռու: Կորզված մաքուր մետաղներից միայն ոսկու մի մասն էր վերադարձվում Հայաստան (Երևանի ոսկե գարդերի գործարանի կարիքները բավարարելու չափաքանակով), իսկ մոլիբդենը՝ ուղեկից բոլոր տարրերով հանդերձ (ռենիում, սելեն, տելուր, բիսմութ, պլատինոիդներ և այլն), մնում էր այնտեղ, ուր ուղարկվում էր: Բացառություն էր կազմում պղինձը, որի խտանյութերը Քաջարանի, Ագարակի, Կապանի և Շամլուղի հանքավայրերից ուղարկվում էին Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատ, որտեղ կորզված ու գտված պղինձը լիովի բավարարում էր մեր հանրապետության կաբելի, էլեկտրատեխնիկական, սարքաշինական և այլ ձեռնարկությունների պահանջարկը և, նույնիսկ, արտահանվում էր արտասահման:

Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի կողմից՝ գտված պղինձ մետաղից բացի, թողարկվում էր նաև պղնձարջասպ, պղնձափոշի, ծծմբաթթու, կորզվում էր պղնձի հետ գուգակցվող ոսկու և արծաթի մեծ մասը: Այժմ Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի հիմնահատակ քանդման հետ կապված՝ պղնձի խտանյութերի «առյուծի բաժինը» վաճառվում է արտասահմանյան երկրներին, իսկ Հայաստանի կաբելի, էլեկտրատեխնիկական ու սարքաշինական (և մի շարք այլ) գործարանները պղնձալարեր չունենալու պատճառով կաթվածահար վիճակում են. չեն գործում, որի հետևանքով էլ հազարավոր բանվոր-ծառայողներ համալրել են գործազուրկների քանակը, որոնց մի մասը ընդմիջտ լքել է հայրենիքը:

Սակայն հարկ է նշել, որ արդեն մի քանի տարի է (12 տարուց ավելի), ինչ գործում է Ալավերդու սև պղնձի արդյունաբերության «ACP» (նախկինում Մանես և Վալլեքս) գործարանը՝ տարեկան 5 հազար տոննա արտադրողականությամբ, որի արտադրական կարողությունը մոտ 8 անգամ փոքր է նախկին պղնձածուլական կոմբինատի կարողությունից և, բնա-

կանաբար, Հայաստանի Հանրապետության պահանջները բավարարել չի կարող: Ասենք ավելին. ՀՀ պահանջարկը բավարարել չի կարող ոչ միայն այն պատճառով, որ արտադրանքի քանակն է քիչ, այլև այն պատճառով, որ դրա որակն է վատ՝ չի գտված ու չի մաքրված:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Ալավերդու պղնձաձուլական կոմբինատը հիմնահատակ ավերվեց այն պատճառաբանությամբ, որ իբր թե այն շատ (նախագծված նորմատիվներից շատ ավելի) ծծմբային գազեր է արտանետում շրջապատ և թունավորում միջավայրը: Իսկ ի՞նչ կարելի է ասել սև պղնձի այժմյան գործարանի մասին, որը ծծմբային գազերի կլանման ֆիլտրերի նմուշ անգամ չունի: Այդ մասին այսօր արդեն խոսվում է կառավարության սենյակներում, հետևապես այդ գործարանի գոյության հարցի լուծումը թողնենք ՀՀ կառավարությանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գտված ու գերգտված մետաղները միջազգային շուկայում՝ իրենց սովորական տեսակներից թանկ են գնահատվում մինչև մի քանի հազար անգամ (կապված դրանց գտվածության աստիճանից), դժվար չի լինի նկատել, որ ՀՀ լեռնահանքային արդյունաբերության արդյունավետությունը բազմապատիկ կարող է մեծանալ, եթե մեր հանրապետության ընդերքի հարստությունները համաշխարհային շուկա դուրս բերվեն վերջնաարտադրանքների՝ մետալուրգիական փուլով կորզված, մաքրված ու գտված մետաղների ու մետաղարտադրանքների տեսքով: Դրա հետ էլ կապված ենք, մեր նախկին աշխատություններում բազմիցս նշել ենք և այժմ էլ նշում ենք, որ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների հզոր հումքային հենքը, անհրաժեշտ է կառուցել երկու ուղղությամբ գործող մի քանի մետալուրգիական գործարաններ.

- առաջինը՝ գունավոր մետալուրգիայի ուղղությամբ գործող երկու գործարան, որոնցից մեկը պետք է վերամշակի պղնձամոլիբդենային կազմավորման հանքանյութերի խտանյութերը, իսկ մյուսը՝ բազմամետաղային և ոսկի-բազմամետաղային կազմավորման,
- երկրորդը՝ սև մետալուրգիայի ուղղությամբ գործող մեկ գործարան, որն էլ պետք է վերամշակի երկաթահանքերից ստացվող խտանյութերը:

Մետալուրգիական գործարանների կառուցումը նպատակամղված պետք է լինի առաջնային հումքից վերջնաարտադրանքների ստացման, կորզելի քանակներով առկա օգտակար բոլոր տարրերի կորզման, դրանց մաքրման, զտման ու, երբեմն էլ, ըստ շուկայի պահանջների գերզտման ուղղությամբ:

Ժամանակի հրատապ հիմնախնդիրներից է նաև լեռնահանքային արդյունաբերության հետ կապված բնական միջավայրի պահպանության հիմնախնդիրը: Մեզ սպառնում են աղետի վերածվել հանքահարստացման հետ կապված հարստապոչերը, կամ այսպես ասած՝ «պոչանքները», որոնց քանակներն ու ծավալներն օրըստօրե աճում ու ավելանում են:

Հաշվարկներ են կատարված այն մասին, թե հանքավայրերի շահագործման՝ օգտակար տարրերի թերկորզման և որոշակի հանքանյութերի (երկաթաքարի, պիրիտի, սկանդիումի և այլն) չկորզման հետևանքով որքան թունավոր տարրեր ու ծանր մետաղներ են թափվում «պոչանքներ», որոնք էլ թունավորելով միջավայրը սպառնում են աղետներ ստեղծել մեր հայրենիքի այս փոքրիկ տարածքում: Դրա հետ էլ կապված անհրաժեշտ է նորագույն տեխնիկա ու տեխնոլոգիաներ ներդնելու օգնությամբ կատարելագործել ինչպես հանքահարստացման, այնպես էլ աղետով սպառնացող «պոչանքների» վերամշակման և դրանց անվտանգ դարձնելու գործընթացները:

Հաշվարկները ցույց են տալիս, որ շահագործվող մի քանի հանքավայրերի հանքաքարերի հարստապոչերում («պոչանքներում») պարունակվում են միլիարդավոր դոլարների հասնող հարստություններ, որոնց կորզելու պարագայում կհարստանա մեր երկիրը, իսկ չկորզելու պարագայում՝ թունավոր տարրերն ու ծանր մետաղները կտարածվեն շրջակա միջավայր՝ թունավորելով բուսական ու կենդանական աշխարհը, չարիք դառնալով մեր ժողովրդի գլխին:

Մինչև այժմ Հայաստանում շահագործվող և ոչ մի հանքավայրի հանքաքարերից ծծմբի հրաքար՝ պիրիտ հանքանյութի (որի քանակն ի դեպ միշտ և ամենուրեք շատ ավելին է լինում, քան հիմնական օգտակար հանածոյի կամ, նույնիսկ, հանածոների քանակն է) անջատ խտանյութեր երբևիցե չեն ստացվել և այսուհետ (համենայն դեպս մոտակա ապագայում) չեն էլ ստացվելու (դրանց ստացում չեն նախատեսվում): Պիրիտն ամբողջությամբ թափվում է

պոչամբարներ՝ իր հետ տանելով ծծումբ և երկաթ սեփական տարրերն ու հարակից տարածված շատ ու շատ բաղադրիչներ՝ ոսկի, արծաթ, սելեն, տելուր, բիսմուտ, երբեմն էլ ռենիում (պղնձամոլիբդենային հանքավայրերում), պլատինոիդների խմբի մետաղներ և այլն: Հաշվարկները ցույց են տալիս, որ ցանկացած հանքավայրում պիրիտ հանքանյութի հիմնական բաղադրիչների՝ ծծմբի և երկաթի արժեքը համաչափելի է տվյալ հանքավայրի հիմնական օգտակար հանածոյի արժեքին (որոշակի դեպքերում նույնիսկ երկու հիմնական օգտակար հանածոների՝ ասենք պղնձի և մոլիբդենի, արժեքին): Այստեղից հետևում է, որ բոլոր կազմավորումների հանքավայրերի շահագործման պարագայում պիրիտի անջատ խտանյութի ստացումը ժամանակի հրամայական պահանջ է: Նշենք, որ 2008թ. մայիսի 28-30-ի տվյալներով պիրիտի բյուրեղային ցանցի հիմնական բաղադրիչներից մեկի՝ ծծմբի մեկ տոննան արժեք 650-700 ԱՄՆ դոլար (նախկինում՝ 2001-2002թթ., այն արժեք 20-30 դոլար):

ԽՍՀՄ-ի օրոք շահագործվող հանքավայրերի «կյանքի տևողությունը» երկարաձգելու նպատակով կառավարության կողմից հրահանգավորված էր՝ շահագործվող հանքավայրերի P₁ կատեգորիայի կանխատեսումային ռեսուրսների սահմանագծում, հանքավայրերի թևերում ու խոր հորիզոններում, հետախուզել և տալ պաշարների այնքան հավելված, որքան յուրաքանչյուր տարի արդյունահանվում է դրա ընդերքից: Այժմ այդ կարգը Հայաստանում չի գործում՝ «մոռացության է տրվել»: Հանքավայր շահագործողները՝ թե՛ Հայաստանի, և թե՛ արտասահմանի քաղաքացիները, գումարներ չեն հատկացնում այդ նպատակով: Երբեմն երբեմն հետախուզական փոքրիկ աշխատանքների (մեծամասամբ առանց հետախուզական աշխատանքների) արդյունքով «նոր պաշարները» վերահաստատման են ներկայացնում՝ ունենալով հիմնականում մեկ նպատակ՝ «դուրս գրել» պաշարների որոշակի քանակություն:

ՀՀ կառավարությունը կամ լիազորված մարմինը հանքավայրը շահագործման տալու պահից ի վեր, պայմանագրի մեջ անպայման պետք է նշում կատարի այդ մասին, պարտավորեցնելով շահագործողին (շահագործողներին) սիստեմատիկաբար և մշտապես գումարներ հատկացնել լրահետախուզական աշխատանքների համար՝ հետախուզել և տարեկան այնքան պաշարներ ավելացնել, որքան արդյունահանվում է դրա ընդերքից: Դա է պահանջում մեր ժողովրդի շահը, դա են պահանջում մեր ապագա սերունդները:

ԽՍՀՄ-ի օրոք մետաղական օգտակար հանածոների հանքավայրերը հետախուզվելուց և պաշարները կառավարությանն առընթեր Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատվելուց հետո կազմվում էին հանքավայրերի շահագործման արդյունավետության տեխնիկատնտեսական հիմնավորումներ: Հանքավայրն արդյունավետ շահագործելու և, միևնույն ժամանակ, շահագործական աշխատանքները հնարավորինս երկարատև ժամանակահատվածով կատարելու նպատակով հանքարդյունահանման ծավալները (շահագործող ձեռնարկության հզորությունը) հաշվարկվում և միմյանց հետ համեմատվում էին 3 տարբերակով՝ փոքր, միջին և մեծ: Օրինակ. ոսկի-բազմամետաղային կազմավորման հանքավայրերի շահագործման համար Հայաստանի պայմաններում վերցվում էին տարեկան 300, 500 և 800 հազ.տ հանքաքարերի արդյունահանում և մշակում: Եթե հաշվարկները ցույց էին տալիս, որ բոլոր 3 տարբերակներով էլ լեռնահանքային ձեռնարկությունը կարող է աշխատել արդյունավետ, բայց պարզվում է, որ փոքր հզորության պարագայում ձեռնարկությունը կարող է աշխատել շատ երկար ժամանակահատված, բայց շատ փոքր շահույթով, միջին հզորության պարագայում՝ չափավոր շահույթով և տևական ժամանակահատված, մեծ հզորության պարագայում՝ մեծ շահույթով, բայց կարճ ժամանակահատված, այդ դեպքում ընտրվում էր լեռնահանքային ձեռնարկության հզորության այն տարբերակը, որն ապահովում էր չափավոր շահույթ և շահագործման տևական ժամանակահատված: Տվյալ պարագայում՝ լեռնահանքային ձեռնարկության հզորության ընտրության գործում, մեծ շահույթը երբեք ու երբեք որոշիչ չէր լինում: Ամեն դեպքում գերակայությունը տրվում էր շահագործման ժամանակահատվածին, բայց վնասով աշխատելը բացառվում էր:

Եթե լինում էին դեպքեր, երբ լեռնահանքային ձեռնարկության փոքր հզորության պարագայում (կապված օգտակար հանածոյի տիպի ու տեսակի հետ) ապահովվում էր չափավոր շահույթ և հանքավայրի շահագործման բավականին տևական ժամանակահատված, ապա այդ դեպքում ընդունվում էր առաջին (փոքր հզորության) տարբերակը, և խտանվում ու բացառվում էին մյուս երկու տարբերակները:

Բոլոր դեպքերում էլ նպատակը հետևյալն է եղել.

1. որքան հնարավոր է երկարացնել լեռնահանքային ձեռնարկության կյանքի տևողությունը, որպեսզի շահագործման տրված հանքավայրի մերձակայքում կառուցվող բանվորական ավաններն ու քաղաքներն իրենց գոյությունը պահպանեն տևական (որքան հնարավոր է երկար) ժամանակահատված,
2. լեռնահանքային ձեռնարկությունում աշխատանք ունենան ոչ միայն տվյալ սերունդները, այլև ապագա,
3. պետությունը կարողանա ետ ստանալ կապիտալ շինարարության վրա կատարած իր ծախսերը,
4. բնակչության տեղաշարժերը լինեն շատ դանդաղ և առանց տառապանքների:

Իսկ ի՞նչ է արվում այժմ. այժմ հանքշահագործողները, հիմնականում արտասահմանցիները (մեզ համար օտարները), կարճ ժամանակահատվածում մեծամեծ շահույթներ ստանալու նպատակով կամայականորեն մեծացնում են լեռնահանքային ձեռնարկության հզորությունը և հանքավայրը (հանքավայրերը) շահագործում են բարբարոսաբար, առանց հաշվի առնելու դրանց տիրոջ՝ հայ ժողովրդի, կամքն ու ցանկությունը:

Դա անթույլատրելի է, որը պետք է կանխվի օրենքով:

ԻՆՈՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

*Տայաստրանի պետական ագրարային
համալսարանի հայցորդ*

ԿԱԹԻ ԻՐԱՅՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԳՆԱԳՈՑԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆՐԱԴԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հանրապետության գյուղատնտեսությունում շուկայական հարաբերություններին անցման ժամանակահատվածում ծառայել են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց մեջ առանձնանում են գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիրները: Գյուղատնտեսությունում մթերքներից իրացման խնդիրն առավել ընդգծված է այնպիսի մթերքների համար, որոնց հատկանիշներով և այլ գործոններով պայմանավորված երկարատև պահպանման հնարավորությունները սահմանափակ են: Վերջինս հատկապես վերաբերում է կաթին, որի պահպանման տեխնոլոգիական պահանջների ապահովումը համեմատաբար բարդ և ներդրումներ պահանջող գործընթաց է:

Հանրապետությունում արտադրվող կաթի իրացումը հիմնականում իրականացվում է հետևյալ ուղղություններով. իրացում՝ արտադրողների (գյուղացիական տնտեսությունների) կողմից գյուղատնտեսական մթերքների շուկայում, իրացում միջնորդ օղակների միջոցով (մասնավորապես՝ կաթի հավաքման-սպառման կոոպերատիվների, կաթի հավաքման կետերի), իրացում գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ընկերություններին, իրացում վերամշակված տեսքով գյուղատնտեսական մթերքներ արտադրողների կողմից (պանրի, մածունի, կարագի և այլ կաթնամթերքի տեսքով) և այլն:


Կաթի իրացման հիմնական ուղղությունների սխեման ներկայացված է 1-ին գծապատկերում:

Կաթի որոշակի քանակություն անմիջապես վերամշակվում է գյուղացիական տնտեսություններում և գյուղատնտեսական առևտրային կազմակերպություններում՝ հիմնականում արտադրվում է պանիր և մածուն, ու իրացումը իրականացվում է ինչպես գյուղատնտեսական մթերքների շուկայում, այնպես էլ առևտրի կետերին կամ միջնորդ օղակներին: Կաթի և կաթնամթերքի որոշ քանակություն (փոքր խմբաքանակներով) արտադրողների կողմից, մանրածախ ձևով, անմիջապես իրացվում է սպառողներին (բնակչությանը): Նշված ուղղություն-

ների հետ մեկտեղ կաթի որոշակի քանակություն տրամադրվում է ապրանքափոխանակության և աշխատանքի դիմաց որպես բնամթերային վարձատրություն:

Գծապատկեր 1

Կաթի իրացման հիմնական ուղղությունները



Հանրապետությունում կաթի իրացման իրավիճակը գնահատելու նպատակով ուսումնասիրել ենք նաև իրացման կառուցվածքը, որն ըստ հանրապետության մարզերի ու տարածաշրջանների զգալիորեն տարբեր է: Վերջինս հիմնականում պայմանավորված է իրացման գործառույթ ունեցող օղակների՝ գնող-իրացնող կառույցներ, կաթի հավաքման և իրացման կոոպերատիվներ (կառույցների), վերամշակող ընկերությունների, ճանապարհների վիճակով, իրացման հիմնական շուկաներից հեռավորության և այլ գործոններով:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ հանրապետության գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի և կաթնամթերքի իրացման կառուցվածքը բնորոշող 2008-2010թթ. տվյալները ներկայացված են 1-ին աղյուսակում:

Ներկայացված տվյալներից երևում է, որ կաթի ապրանքայնության մակարդակը հանրապետության մարզերում զգալիորեն ցածր է: Կաթի զգալի մասը սպառվում է տնտեսությունում, ինչպես անձնական կարիքների բավարարման, այնպես էլ որոշ մասը արտադրական սպառման համար (հորթերի կերակրում և այլն):

Գյուղացիական տնտեսություններում կաթի և կաթնամթերքի (վերածած կաթի) իրացման կառուցվածքը ըստ ՀՀ մարզերի 2008-2010թթ.¹

(արտադրության ծավալի նկատմամբ, %)

Մարզերը	Տարե-թվերը	Գյուղացիական տնտեսությունների կողմից					մնացորդը տնտեսու-թյունում
		վաճառ-վել է	տրվել է ապ-րանքափոխա-նակման դիմաց	տրվել է բնա-մթերքով ծառա-յությունների դիմաց	օգտա-գործվել է տնտեսութ-յունում	դրանից վերա-մշակվել է	
Հայաստանի Հանրապետություն	2008	39.5	4.1	1.5	41.5	55.1	13.0
	2009	41.0	4.4	0.6	35.7	77.8	18.3
	2010	44.7	4.3	0.4	41.4	71.6	9.2
Արագածոտնի	2008	41.8	5.2	5.7	37.0	55.1	10.3
	2009	30.8	4.8	-	22.9	90.6	41.5
	2010	73.7	1.4	-	20.5	83.3	4.4
Արարատի	2008	40.5	0.2	-	57.8	53.2	1.5
	2009	41.0	0.4	-	57.2	84.9	1.4
	2010	54.1	1.0	0.4	42.9	25.9	1.6
Արմավիրի	2008	57.6	-	-	42.4	55.5	-
	2009	69.8	3.1	-	27.1	63.1	-
	2010	59.9	0.5	-	39.6	58.2	-
Գեղարքունիքի	2008	41.2	2.7	0.4	32.6	33.1	23.1
	2009	32.8	3.1	0.3	39.4	88.4	24.4
	2010	25.0	3.9	0.3	47.5	94.5	23.3
Լոռու	2008	45.8	1.9	-	47.6	33.5	4.7
	2009	45.8	2.2	0.8	45.4	61.8	5.8
	2010	47.0	0.3	0.5	48.9	36.6	3.3
Կոտայքի	2008	42.0	1.8	0.8	53.0	48.1	2.4
	2009	39.9	2.7	0.7	43.0	38.1	13.7
	2010	53.1	6.8	1.3	31.2	61.3	7.6
Շիրակի	2008	36.9	3.4	0.2	35.5	63.4	24.0
	2009	62.6	3.5	1.9	16.2	97.5	15.8
	2010	42.1	4.6	0.5	43.5	79.3	9.3
Սյունիքի	2008	40.0	5.8	1.8	49.2	60.1	3.2
	2009	37.2	5.5	0.3	54.7	66.3	2.3
	2010	41.1	6.4	0.3	49.3	59.0	3.0
Վայոց ձորի	2008	8.9	16.1	0.2	71.5	82.6	3.3
	2009	8.5	16.8	-	72.2	59.6	2.5
	2010	7.9	17.1	-	70.4	54.4	4.6
Տավուշի	2008	22.1	10.8	1.4	54.6	74.6	11.1
	2009	25.4	11.3	1.4	48.7	75.2	13.2
	2010	19.1	11.7	1.6	55.8	81.4	11.8

Գյուղացիական տնտեսությունները որոշակիորեն ունեն բնամթերային բնույթ, այսպես՝ վաճառված կաթը և կաթնամթերքը 2008-2010թթ. կազմել է ընդհանուր արտադրանքի 39.5-44.7%-ը: Արտադրանքի որոշակի մասը տրվել է ապրանքափոխանակության և բնամթերքով ծառայությունների դիմաց, այն համապատասխանաբար կազմել է 4.1-4.4 և 0.4-1.5%: Կաթի զգալի մասը օգտագործվել է տնտեսության ներսում, որը կազմել է արտադրված կաթի 35.7-41.5%: Վերջիններիս գերակշիռ մասը վերամշակվում է տնտեսությունում, որը նշված

¹ «Գյուղատնտեսական մթերքի իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2008-2010 թվա-կաններին»: «Վիճակագրական տեղեկագրեր», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2009-2011թթ., էջ 8:

Ժամանակահատվածում կազմել է 55.1-77.8%, այն հիմնականում վերամշակվում է պանրի, մածունի, կարագի և թթվասերի:

Կաթի իրացման կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրապետության մարզերում ստեղծված իրավիճակը տարբեր է: Ապրանքայնության ցածր մակարդակ է դրսևորվել Վայոց ձորի և Տավուշի մարզերում, այստեղ վաճառված կաթի տեսակարար կշիռը 2008-2010թթ. համապատասխանաբար տատանվել է 7.9-8.9 և 19.1-25.4%-ի սահմաններում:

Ստեղծված իրավիճակը՝ այլ գործոնների հետ մեկտեղ, հետևանք է կաթի իրացման համակարգի թերզարգացածության, այդ համակարգի գործառույթներ ունեցող կառույցների անկատարության, ինչպես դրանց կազմակերպական (կիրառվող կառուցակարգերի), նյութատեխնիկական բազայի անկատարության և այլն:

Ուսումնասիրության համար կաթի իրացման կառուցվածքի փոփոխության հետ մեկտեղ՝ կարևոր ենք համարել գնահատել նաև վերջին տարիներին (2006-2010թթ.) կաթի ապրանքայնության մակարդակի փոփոխության միտումներն ըստ հանրապետության մարզերի, որոնց ամփոփ արդյունքները ներկայացված են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Կաթի ապրանքայնության մակարդակը* 2003-2007թթ., ՀՀ մարզերի կտրվածքով¹

Մարզերի անվանումը	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
ՀՀ, ընդամենը	52.0	53.3	45.1	46.0	49.4
Արագածոտնի	48.3	55.8	52.7	35.6	75.1
Արարատի	56.4	64.9	40.7	41.4	55.5
Արմավիրի	59.2	58.6	57.6	72.9	60.4
Գեղարքունիքի	61.4	57.4	44.3	36.2	29.2
Լոռու	42.3	48.7	47.7	48.8	47.8
Կոտայքի	75.7	70.4	44.6	43.3	61.2
Շիրակի	48.2	48.3	40.5	68.0	47.2
Սյունիքի	50.2	48.8	47.6	43.0	47.8
Վայոց ձորի	24.5	21.6	25.2	25.3	25.0
Տավուշի	41.0	41.0	34.3	38.1	32.4

* Ապրանքայնության մակարդակն իրենից ներկայացնում է տնտեսության կողմից վաճառված, ապրանքափոխանակման և ծառայությունների դիմաց բնամթերքով տրված ծավալների տեսակարար կշիռների հանրագումարը

Պետք է նշել, որ կաթի ապրանքայնության մակարդակը՝ համեմատած հանրապետությունում գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության միջին կշռված մակարդակի հետ, զգալիորեն ցածր է: Այսպես՝ 2009 և 2010թթ. գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության միջին կշռված մակարդակը համապատասխանաբար կազմել է 56.2 և 55.8%՝ կաթի ապրանքայնության 46.0 և 49.4%-ի դիմաց:

2008-2009թթ. հանրապետությունում կաթի ապրանքայնության մակարդակը զգալիորեն վատթարացել է, սակայն 2010թ. այն նկատելիորեն բարձրացել է, ինչը պայմանավորված է կաթի մթերման գների բարձրացմամբ: Կաթի ապրանքայնության մակարդակն ըստ տարիների և ՀՀ մարզերի ունեցել է տատանողական բնույթ, և ընդհանուր օրինաչափություն չի նկատվում: Կաթի բարձր ապրանքայնության մակարդակ է ապահովվել Կոտայքի մարզում, սակայն 2007-2008թթ. տվյալներով այն զգալիորեն ցածր է եղել, որոշակի բարձրացում է նկատվել 2010 թվականին: Համեմատաբար բարձր ապրանքայնության մակարդակ է ապահովվել նաև Արմավիրի մարզում, սակայն այն 2010թ.՝ 2009թ. համեմատ, նվազել է: Ընդհանուր վերցրած, կաթի ապրանքայնությունն ունի ցածր մակարդակ, որը հետևանք է արտադրողից մինչև սպառողն ապրանքային շարժին նպաստող օղակների բացակայության և եղածների անկատարության, կիրառվող կառուցակարգերի անբավարարության:

¹ Հիմք է ընդունվել ՀՀ ԱՎԾ «Գյուղատնտեսական մթերքների իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից վիճակագրական տեղեկագրի 2006-2010թթ.» տվյալները:

Շուկայական տնտեսության մեջ համընդհանուր տնտեսական գործունեության որոշիչներից մեկը՝ պահանջարկի մեծությունն է, որի միջոցով շուկան իր պահանջն է ներկայացնում արտադրությանը՝ այս կամ այն ապրանքի արտադրությունն ավելացնելու կամ կրճատելու ուղղությամբ: «Պահանջարկի մեծությունը կամ ծավալը որոշվում է ապրանքների և ծառայությունների այն քանակով, որ գնորդները ցանկանում են և կարող են ձեռք բերել շուկայում ձևավորված գներով՝ տվյալ ժամանակահատվածում: Հետևապես, պահանջարկի մեծությունը, ամենից առաջ, կախված է իրացվող ապրանքների և ծառայությունների գներից»¹:

Ապրանքի շուկայական գնի և դրա այն քանակի միջև, որի համար ներկայացվում է պահանջարկը, մշտապես գոյություն ունի որոշակի հարաբերակցություն. «ինչքան բարձր է գինը, այնքան քիչ է նրանց թիվը, ովքեր ցանկանում են գնել տվյալ ապրանքը, այսինքն՝ ցածր է պահանջարկի մակարդակը (եկամուտների տվյալ մակարդակում), և հակառակը, ինչքան ցածր է գինը, այնքան շատ կլինի գնորդների թիվը և ձեռք բերվող ապրանքների քանակը»²:


Այսպիսով, պահանջարկի և առաջարկի հզոր կարգավորիչ է հանդիսանում գինը և դրա կարևորությունից ելնելով՝ մեր կողմից ուսումնասիրվել է հանրապետությունում վերջին տարիներին կաթի գների փոփոխությունը: Այդ տվյալները ներկայացված են 2-րդ գծապատկերում: Ընդ որում, ուսումնասիրվել են ինչպես մանրածախ գները, այնպես էլ՝ գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի իրացման գները: Գների փոփոխությունն ուսումնասիրվել է 2006-2010թթ. և 2011թ. առաջին կիսամյակում:

Կաթի մանրածախ գներն ուսումնասիրվող ժամանակահատվածում ունեցել են աճի միտում: Սակայն գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման գների փոփոխությունը ոչ համաչափ է եղել: Այդ մասնավորապես վերաբերում է 2009 թվականին:

Գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի իրացման և մանրածախ գների փոփոխությունը հիմնականում եղել է համաչափ, ինչը վկայում է այն մասին, որ կաթն արտադրողից սպառողին հասցնելու գործընթացում առկա ենթակառուցվածքներն ու արտադրական կարողությունները գործել են գրեթե միևնույն կարողություններով և կառուցակարգերով: Սակայն բարձր է մնում մանրածախ և գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման գների հարաբերակցությունը:

Գծապատկեր 2

Գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի իրացման և մանրածախ գների փոփոխությունը 2006-2011թթ.³



¹ Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ: / Երևան, «Տնտեսագետ», 2000թ., էջ 153:

² Գևորգյան Մ.Ա., Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ: / Երևան, 1997թ., էջ 65:

³ Հիմք են ընդունվել Պարենային ապահովություն և աղքատություն, 2008թ. հունվար-մարտ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2008թ., էջ 23, 27:

Արտադրողից մինչև սպառողը շղթայի ենթակառուցվածքային օղակների գործունեությունը բնորոշող կարևորագույն ցուցանիշ է համարվում մանրածախ գների և գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման գների հարաբերակցության մակարդակը: Վերջինիս վերաբերյալ տվյալները ներկայացված է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

ՀՀ-ում կաթի մանրածախ և գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման գների հարաբերակցության մակարդակը բնութագրող ցուցանիշները 2006-2011թթ.

	2006	2007	2008	2009	2010	2011	
						I եռամ.	II եռամ.
Կաթի մանրածախ և մեծածախ գների հարաբերակցությունը	2.67	2.64	2.64	3.10	2.88	2.38	97.1

Ինչպես երևում է բերված տվյալներից, մանրածախ գնի և գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման գնի հարաբերակցության մակարդակը բարձր է, որը պայմանավորված է կաթի իրացումն ապահովող կարողությունների՝ կաթի հավաքման և սառեցման տեղակայանքների սակավությամբ, կաթ արտադրողների և վերամշակող ընկերությունների միջև պայմանագրային փոխհարաբերությունների թերզարգացածությամբ, կաթ արտադրողներին միջնորդների ու վերամշակողների կողմից գների թելադրմամբ:

Գյուղացիական տնտեսությունները կաթի զգալի մասն օգտագործում են տնտեսությունում, որը 2010թ. տվյալներով կազմել է արտադրված կաթի 41.4%-ը, որի 71.6%-ը վերամշակվում է¹ հիմնականում պանրի: Հետևաբար, կարևոր ենք համարել պանրի գների մակարդակի և դրա փոփոխության միտումների ուսումնասիրությունը: Վերջինիս արդյունքները ներկայացված են 4-րդ աղյուսակում:

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից պանրի իրացման գները նույնպես ունեցել են աճի միտում, հատկապես 2011 թվականի ընթացքում, սակայն գործարանային պանրի մանրածախ գնի և գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման գնի հարաբերակցությունը զգալիորեն բարձր է, վերջինս պայմանավորված է արտադրանքի փաթեթավորման, ապրանքային տեսքի և իրացման համակարգի անկատարությամբ:

Աղյուսակ 4

ՀՀ-ում գյուղացիական տնտեսությունների կողմից պանրի իրացման և մանրածախ գների փոփոխությունը 2006-2010 թվականներին

(դրամ/կգ)

Գնի տեսակը	Պանրի տեսակը	2006	2007	2008	2009	2010	2011		2010թ.՝ 2006թ. նկատմամբ, %
							I եռամսյակ	II եռամսյակ	
գյուղաց. տնտես. կողմից իրացվող	-	908	924	968	942	1055	1563	1531	116.2
միջին մանրածախ	«Չանախ»	1336	1403	1456	1461	1563	2032	2085	117.0
	«Լոռի»	1083	1089	1104	1098	1167	2360	2420	107.7


Հաշվի առնելով տարվա ընթացքում կաթի գների տատանողական բնույթը, անհրաժեշտ ենք համարել ուսումնասիրել նաև կաթի գների փոփոխությունը՝ ըստ եռամսյակների: Ուսումնասիրություններն իրականացվել են՝ հիմք ունենալով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված տվյալներն ըստ եռամսյակների: Կաթի գների մակարդակն ըստ եռամսյակների ներկայացվել է 2010 թվականի և 2011 թվականի առաջին կիսամ-

¹ Գյուղատնտեսական մթերքների իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2010 թվականին, վիճակագրական տեղեկագիր», ՀՀ ԱՎԾ, Երևան 2011թ., էջ 8:

յակի համար: Գների փոփոխությունն առավել պատկերավոր ցույց տալու համար այն ներկայացվել է գրաֆիկորեն (գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի իրացման և մանրածախ գնի փոփոխությունը 2010թ. և 2011թ. առաջին կիսամյակում



Գծապատկերից ակնհայտ է, որ գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի իրացման գնի նվազեցումը չի հանգեցրել կաթի մանրածախ գնի համարժեք նվազեցման, վերջինս հատկապես վերաբերում է 2010թ. II և III եռամսյակներին: Տվյալ երևույթը վկայում է վերամշակողների կողմից գների թելադրման և կաթ արտադրողի և վերամշակողի միջև շահույթի անհավասարաչափ բաշխման մասին:

Կատարված ուսումնասիրությունից բացահայտվել է, որ կաթի գների վրա ազդում են մի շարք գործոններ, որոնցից հիմնականները հետևյալն են.

- անասնապահությունում օգտագործվող ռեսուրսների գների փոփոխությունը, մասնավորապես այն վերաբերում է անասնակերերին, կերային բաղադրամասերին, դիզելային վառելանյութին, բենզինին, անասնաբուժական սպասարկումների սակագներին և այլն,
- բնակչության եկամուտների մակարդակը, որը անմիջականորեն պայմանավորում է վճարունակ պահանջարկը,
- կերային մշակաբույսերի, ինչպես դաշտային, այնպես էլ բնական կերահանդակների համար տվյալ տարվա բնակլիմայական պայմանների բարենպաստ և ոչ բարենպաստ լինելը,
- սեփական արտադրության և գնովի կերերի ծավալների հարաբերակցությունը,
- կաթ գնող-իրացնող և այլ միջանկյալ օղակների (կետեր, կոոպերատիվներ, կառույցներ) բացակայությունը, չկանոնակարգված միջնորդ խավի առկայությունը,
- արտադրությունում կիրառվող արտադրական տեխնոլոգիաները, արտադրված արտադրանքի ինքնարժեքը,
- կաթ վերամշակող ընկերությունների առկայությունը և դրանց կողմից թողարկվող արտադրանքի ծավալները:

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների՝ հողի, աշխատանքային ռեսուրսների ու ջրի արդյունավետ օգտագործմանն ուղղված կառուցակարգերի մշակման հիմնախնդիրը գոյություն ունի հանրապետական և մարզային մակարդակներում: Օրինակ, Արագածոտնի մարզում վարելահողերի տարածքը կազմում է 54.2 հազ. հա, իսկ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 32.4 հազ. հա, փաստորեն, վարելահողերի օգտագործման մակարդակը կազմել է 59.8% կամ 21.8 հազ. հա վարելահող նպատակային չի օգտագործվում: Ուստի, առկա վարելահողերի օգտագործման կառուցակարգերի մշակումը և կիրառման պայմանների ստեղծումը մնում է գյուղատնտեսության կառավարման հիմնական հիմնախնդիրներից մեկը:

Ներկայումս հիմնախնդիր է մնում գյուղական բնակավայրերում աշխատուժի օգտագործման մակարդակի բարձրացումը: Գյուղատնտեսության բնագավառում զբաղվածության բարձր մակարդակի (հանրապետության տնտեսության զբաղվածության 46.0%-ը)¹ հետ մեկտեղ՝ խնդիրներ կան դրա թերբեռնված օգտագործման ուղղությամբ:

Արագածոտնի մարզի գյուղացիական տնտեսությունների անդամների կողմից ծախսված աշխատաժամանակը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով: Մինչև 449 ժամ զբաղվածների տեսակարար կշիռը կազմում է 33.0%, 450-1349 ժամ զբաղվածներինը՝ 51.0%, իսկ 1350 ժամ և ավել զբաղվածներինը կազմում է 16.0%²: Գյուղացիական տնտեսությունների անդամների գերակշիռ մասը՝ 51.0%-ը, տարվա մեջ զբաղված է 56-169 օր: Վերջինս հանդիսանում է հնարավոր աշխատաժամանակի ֆոնդի օգտագործման չափազանց ցածր ցուցանիշ: Ստեղծված իրավիճակը պահանջում է զբաղվածության մակարդակի բարձրացման միջոցառումների մշակում և կիրառում:

Խնդիր է մնում ոռոգման ջրի օգտագործման մակարդակի բարձրացման ուղղությամբ համապատասխան կառուցակարգերի մշակումն ու կիրառումը: Մարզում ոռոգելի հողերը կազմում են 27638 հա՝ 54.2 հազ. հա վարելահողերի և 6.6 հազ. հա բազմամյա տնկարկների դիմաց: Մասնավորապես՝ հիմնախնդիրը վերաբերում է ջրապահովվածության մակարդակի բարձրացմանը, ոռոգման խնայողական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ջրի կորուստների կրճատմանը և այլն:

Առաջարկում ենք հետևյալ ուղղությունները՝ կապված գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման վերը նշված հիմնախնդիրների լուծման հետ.

1. Հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկվում է հետևյալը:
 - հողի մշակությունը խթանելու համար մարզում առաջնահերթ համարվող և զարգացման լավագույն պայմաններ ունեցող մշակաբույսերի մշակության համար հասցեական պետական աջակցության (սուբսիդիաների) տրամադրում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն նպատակահարմար է իրականացնել հացահատիկային մշակաբույսերի (ցորենի, գարու, հատիկաընդեղեն մշակաբույսերի) և բազմամյա կերային մշակաբույսերի համար: Արագածոտնի մարզի համար պետական աջակցության ծրագրում ներառվող տարածքները, միավոր տարածության հաշվով առաջարկվող գումարի և պետական աջակցության ընդհանուր գումարի չափը և համախառն արտադրանքի ավելացման մեր կանխատեսումները ներկայացված են աղյուսակ 1-ում:

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք: ՀՀ ԱՎԾ, Երևան, 2008թ., էջ 56:
² Գյուղատնտեսական ընտրանքային հետազոտության զեկույց, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2008թ., էջ 13:

Արագածոտնի մարզում պետական աջակցության առաջարկվող տարբերակի կանխատեսումները

Մշակա- բույսերը	2008թ. գրադեցրած տարածքը, հա	Ապահովված մի- ջին բերքը, ց/հա	Պետ. աջակցության համար առաջարկվող տարածքը, հա	1 հա-ի աջակցության չափը, դրամ	Պետական աջակցության ընդհանուր գումարը, հազ. դրամ	1հա-ից ակնկալվող բերքի հավելումը, ց/հա	Հավելյալ բերքը, տոննա	Հավելյալ բերքի արժեքը, հազ.դրամ
Հացահա- տիկային	22916	19.5	21000	35000	735000	4.0	8400	945000
Հատիկա- ընդեղեն	225	26.2	200	45000	9000	5.0	100	50000
Բազմամյա կերային	6467	80.4	6000	20000	120000	14.0	8400	252000
Ընդամենը	X	X	X	X	864000	X	X	1247000

Սուբսիդավորման ենթակա տարածքները կազմում են նշված մշակաբույսերի 2008թ. գրադեցրած տարածքների շուրջ 90%-ը: Տվյալ դեպքում պետական աջակցության համար պահանջվող գումարը կկազմի 864.0 մլն դրամ, իսկ հավելյալ բերքի արժեքը՝ 1247.0 մլն դրամ: Համախառն արտադրանքի արժեքի աճը նշված մշակաբույսերի համար՝ միջոցառման կիրառման արդյունքում կկազմի 17.0%:

- հողերի օգտագործման մակարդակի բարձրացմանը կնպաստի հողօգտագործողներին մատչելի պայմաններով բարձրորակ սերմացուների տրամադրումը մատչելի կառուցակարգերով, մասնավորապես՝ բարձր վերարտադրության սերմերի տրամադրումը սերմ վարկի, գների սուբսիդավորման և այլ կառուցակարգերով: Նշվածը հատկապես վերաբերում է հացահատիկային մշակաբույսերի սերմերին: Ըստ մեր հաշվարկների՝ մարզում բարձր վերարտադրության սերմերի պահանջը կազմում է 6500-6900 տոննա: Տվյալ դեպքում սերմացուի գնի 50 դրամ սուբսիդավորման դեպքում կպահանջվի 325-345 մլն դրամ, իսկ բարձր վերարտադրության սերմերի օգտագործումը կնպաստի հացահատիկային մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը միջին հաշվով 10-12.5%-ով: Ըստ հաշվարկների՝ այն կհանգեցնի 4500-5600 տոննա հացահատիկի բերքի հավելմանը, որն արժեքային գնահատմամբ կկազմի 547-630 մլն դրամ:
- բազմամյա տնկարկների տարածքների ընդլայնման նպատակով առաջարկում ենք այգետնկումների խթանման կառուցակարգերի կիրառում: Մասնավորապես՝ նոր հիմնվող այգիների համար տրամադրել պետական աջակցություն: Առաջարկվում է 1 հեկտար խաղողի այգետնկումների համար հատկացնել 130 հազ. դրամ, պտղատու այգիների հիմնման համար՝ 100 հազ. դրամ: Ըստ մեր գնահատման՝ նպատակահարմար է ուսումնասիրվող մարզում աջակցություն տրամադրել տարեկան 100 հա խաղողի և 235 հա պտղատու այգիների հիմնման համար, որը կազմում է ներկայիս այգետարածքի շուրջ 5.0%-ը: Այս դեպքում անհրաժեշտ կլինի տարեկան ներդնել խաղողի այգետնկումների համար 13.0 և պտղատու այգիների հիմնման համար՝ 23.5 մլն դրամ: Տվյալ դեպքում կատարված ծախսերի հատույցը կապահովվի միջինժամկետ հեռանկարում: Նպատակահարմար է համարվում տվյալ ծրագիրը զուգակցել մատչելի կառուցակարգերով՝ բարձրորակ տնկիների մատակարարման և մինչև բերքատվության մեջ մտնելը ոռոգման ջրի սուբսիդավորման ծրագրերի հետ:
- գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավումը: Ուսումնասիրվող Արագածոտնի մարզում անասնապահության ճյուղի տեսակարար կշիռը կազմում է գյուղա-

տնտեսության համախառն արտադրանքի 41.1%-ը, այսինքն՝ չի օգտագործվում մարզի անասնապահության համար ռեսուրսային ներուժը՝ վարելահողերը և բնական արոտները: Այս իրավիճակը պահանջում է մարզում պայմաններ ստեղծել անասնապահության զարգացման համար: Վերջինս, առաջին հերթին, վերաբերում է կաթի իրացման համար պայմանների ստեղծմանը, մասնավորապես՝ գյուղական համայնքներում կաթի հավաքման ռեզերվուարների տեղադրումը: Այդ հնարավոր կլինի լիզինգային կառուցակարգերով: Միջին հաշվով, 1000-1200 լիտր տարողությամբ կաթի սառեցման մեկ ագրեգատի ձեռքբերման ծախսերը կազմում են 3.05 մլն դրամ, հետևաբար՝ նշված ծրագրի իրականացումը մարզի 117 գյուղի 90%-ում (105 գյուղում) կպահանջի շուրջ 320.3 մլն դրամ, որը տնտեսավարողների կողմից հնարավոր է վերականգնել միջին ժամկետում: Տվյալ միջոցառման իրականացումը հնարավորություն կընձեռի ավելացնել կաթի արտադրության ու իրացման ծավալը: Ըստ գնահատման, այն հնարավորություն կընձեռի կաթի արտադրության ծավալն ավելացնել 15.0%-ով: Փաստորեն, կաթի արտադրության հավելածը կկազմի շուրջ 11.5 հազ. տոննա (76.3 հազ. տոննա \times 15.0/100), որն արժեքային արտահայտությամբ կկազմի 1.3 մլրդ դրամ (11.5 հազ. տոննա \times 115.0 հազ. դրամ): Միջոցառման կիրառմամբ էականորեն կբարձրանա կաթի ապրանքայնության մակարդակը, կավելանան անասնապահական տնտեսությունների եկամուտները: Ակնհայտ է տվյալ ծրագրի իրականացման արդյունավետությունը:

- կարևոր ենք համարում բուսաբուծությունում ինտենսիվ մշակաբույսերի մշակության խթանումը: Այն վերաբերում է բազմամյա տնկարկների տարածքների և աշխարհագրության ընդլայնմանը, հատիկաընդեղեն մշակաբույսերի տարածքների ավելացմանը, հնդկացորենի մշակության արմատավորմանը և այլն: Վերջինս պահանջում է նաև անհրաժեշտ մեքենայական համակարգի ներդրում: Մեր հաշվարկների համաձայն՝ նշված միջոցառումների իրականացումն Արագածոտնի մարզում կպահանջի լրացուցիչ 750.0 մլն դրամի ներդրումներ, որն ըստ մեր գնահատման՝ կապահովի 1.5-1.6 մլն դրամի լրացուցիչ համախառն արտադրանք:
- 2. Աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկում ենք.
 - գյուղական համայնքներում գյուղմթերքների վերամշակման կարողությունների հիմնումը: Անհրաժեշտ ենք համարում գյուղական համայնքների շուրջ 30%-ում գյուղատնտեսական մթերքների վերամշակման կարողությունների հիմնումը հետևյալ արտադրական ուղղություններով՝ պտուղ-բանջարեղենի վերամշակման, կաթի մթերման և վերամշակման, խաղողի մթերման և վերամշակման, սպանդանոցներ, մսի մթերման և վերամշակման, տեխնիկական մշակաբույսերի և հատապտղի մթերման և վերամշակման, ինչպես նաև սառնարանային և պահեստային տնտեսություններ: Ըստ մեր գնահատման՝ Արագածոտնի մարզում միջնաժամկետ հեռանկարի համար անհրաժեշտ են 30-35 արտադրական կարողություններ, որոնք կունենան միջին հաշվով 7 աշխատող: Ընդհանուր վերցրած, նոր ստեղծվող աշխատատեղերի թիվը կկազմի 210-245: Մեկ աշխատատեղի ստեղծման համար պահանջվում է ներդնել 3.33 մլն դրամ, ընդամենը պահանջվող ներդրումները կկազմեն 670-810 մլն դրամ: Նշված ներդրումներն ակնկալվում է ստանալ նպատակային մատչելի վարկերի, լիզինգային կառուցակարգերով սարքավորումների մատակարարման միջոցով: Ըստ գնահատման՝ նշված ներդրումները տարեկան կապահովեն 235-285 մլն դրամի ավելացված արժեք:
 - աշխատանքային ռեսուրսների առավել լիարժեք օգտագործմանը կնպաստի նաև Արագածոտնի մարզում ագրոտորիզմի զարգացումը, որը կխթանի ինչպես զբաղվածության հարցերի լուծմանը, այնպես էլ՝ եկամուտների ավելացմանն ու գյուղատնտեսության զարգացմանը: Ագրոտորիզմի զարգացումը պահանջում է որոշակի ներդրումներ, որը պետք է ուղղվի հյուրերին համապատասխան կացարաններով ապահովմանը, ինչպես նաև բարձրորակ մթերքների արտադրությանը և մատակարարմանը: Միջնաժամկետ հեռանկարում, ըստ գնահատման, հնարավոր կլինի մարզի գյուղերի շուրջ 40%-ում՝ 45 համայնքում ձևավորել ագրոտորիզմով զբաղվող գյուղացիական տնտեսություններ՝ միջին հաշվով մեկ համայնքում 5 տնտեսություն, ընդհանուր վերցրած նմանատիպ

տնտեսությունների թիվը կկազմի 225: Ըստ մեր գնահատման՝ ագրոտորիզմով զբաղվող մեկ տնտեսությունում զբաղված կլինեն միջինը 4 մարդ, ընդհանուր վերցրած, զբաղվածների թիվը կկազմի 900 մարդ: Ագրոտորիզմի ուղղվածություն ունեցող մեկ աշխատատեղի ստեղծման համար պահանջվող ներդրումները գնահատել ենք 2.5 մլն դրամ: Միջին ժամկետ հեռանկարում ներդրումները կկազմեն 2.25 մլրդ դրամ, ինչը հնարավորություն կընձեռնի տարեկան ապահովել 560-675 մլրդ. դրամի ավելացված արժեք:

3. Ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնական ուղղություններն են.

- ոռոգման ներքին ցանցերում կորուստների կրճատման ուղղությամբ առաջարկում ենք ոռոգման արդիական տեխնոլոգիաների ներդրումը, մասնավորապես՝ այն վերաբերում է կաթիլային ոռոգման համակարգերի ներդրմանը, ջրաչափական սարքավորումների տեղադրմանը: Ոռոգման արդիական տեխնոլոգիաների ներդրման արդյունավետությունը ցույց տալու համար փորձել ենք տարբեր մշակաբույսերի 1 հա-ի ոռոգման համար ցույց տալ կաթիլային ոռոգման տնտեսական արդյունավետությունը: Հաշվարկային ամփոփ տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Կատարված հաշվարկները վկայում են, որ 1 հա-ի հաշվով նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում էականորեն կխնայվի ոռոգման ջուրը, որն արժեքային արտահայտությամբ լուրջ, պտղի և խաղողի համար համապատասխանաբար կկազմի 43.2; 38,9 և 38.9 հազ. դրամ, իսկ զուտ եկամտի հավելւածը՝ 230,8; 307,1 և 422,3 հազ. դրամ:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ պահանջվող ներդրումները կփոխհատուցվեն միջին ժամկետում՝ 2.4-4.3 տարվա ընթացքում:

Ուսումնասիրվող մարզի համար միջնաժամկետ հեռանկարում իրատեսական ենք համարում ոռոգման նոր տեխնոլոգիաների ներդրումը մարզի բանջարանոցային մշակաբույսերի շուրջ 10%-ում, որը կկազմի 90 հա, պտղատու այգիների շուրջ 5%-ում այն կհասնի 235 հա-ի և խաղողի 8%-ը, որը կկազմի շուրջ 150 հա: Ընդհանուր տարածքը կկազմի 475 հա, և պահանջվող ներդրումները կկազմեն՝ 1.3 մլն ԱՄՆ դոլար կամ 474.5 մլն դրամ: Ըստ կատարված հաշվարկների՝ նշված ծավալով նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում զուտ եկամտի հավելւածը կկազմի 156.2 մլն դրամ ($90 \times 230.8 + 235.0 \times 307.1 + 150 \times 422.1$) կամ ներդրումները կփոխհատուցվեն միջին հաշվով 3 տարում:

- ոռոգման ջրի սուբսիդիաների տրամադրումը Ջրօգտագործողների ընկերություններին չի խթանում ջրի ծախսի կրճատմանը, մասնավորապես՝ ներկայումս ընդունված է հետևյալ մոտեցումը՝ ՋՕԸ-ները լրացուցիչ սուբսիդիաներ են ստանում ոռոգման ջրի վարձավճարները չհավաքագրելու համար:

Աղյուսակ 2

Գյուղացիական տնտեսություններում ոռոգման նոր տեխնոլոգիայի (կաթիլային) ներդրման արդյունավետությունը հիմնավորող հաշվարկային ամփոփ տվյալները 1 հա լուրջի, պտղի և խաղողի համար

Ցուցանիշները	Չափի միավորը	Լուրջ		Պտուղ		Խաղող	
		Ոռոգման սովորական եղանակի դեպքում	Կաթիլային ոռոգման դեպքում	Ոռոգման սովորական եղանակի դեպքում	Կաթիլային ոռոգման դեպքում	Ոռոգման սովորական եղանակի դեպքում	Կաթիլային ոռոգման դեպքում
1 հա-ի կաթիլային ոռոգման համար պահանջվող ներդրումները	ԱՄՆ դոլար	0	2700	0	2700	0	2700
Ոռոգման ջրի ծախսը	լս.մ	8000	3200	7200	2880	7200	2880
Ջրի խնայողությունը արժեքային, 1 լս.մ.՝ 9 դրամ սակագնի դեպքում	հազ. դրամ	0	43,2	0	38,9	0	38,9
Ջրումների քանակը	ջրում	9	9	8	8	8	8

Ցուցանիշները	Չափի միավորը	Լոյիկ		Պտուղ		Խաղող	
		Ոռոգման սովորական եղանակի դեպքում	Կաթիլային ոռոգման դեպքում	Ոռոգման սովորական եղանակի դեպքում	Կաթիլային ոռոգման դեպքում	Ոռոգման սովորական եղանակի դեպքում	Կաթիլային ոռոգման դեպքում
Ջրման համար պահանջվող աշխատանքային ծախսումները 1 հա-ի հաշվով	մարդ.օր	6	1,8	5,5	1,1	5,7	1,14
Տնտեսումը աշխատանքային ծախսումների կրճատման հաշվին (1 մարդ/ օրը 3000 դրամին համարժեք հաշվարկի դեպքում)	հազ. դրամ	0	12,6	0	13,2	0	13,7
Պտղի 1հա-ից ստացվող բերքը	գ/հա	350	385,0	85	97,8	145	166,8
Հաշվարկային արտադրական ծախսերը (չհաշված ոռոգման սարքավորման տեղադրման ծախսերը)	հազ. դրամ	595	539,2	547	494,9	515	462,4
Իրացման գինը 1կգ-ի հաշվով	դրամ	50	50	200	200	170	170
Արտադրանքի իրացումից հասույթը	հազ. դրամ	1750	1925,0	1700	1955,0	2465	2834,8
Չուտ եկամուտը	հազ. դրամ	1155	1385,8	1153	1460,1	1950	2372,3
Չուտ եկամտի հավելածը	հազ. դրամ	0	230,8	0	307,1	0	422,3
Նոր տեխնոլոգիայի ներդրման ծախսերի փոխհատուցման ժամկետը	տարի		4.3		3.3		2.4

ԷԲԱ ԲԱԲԱՅԱՆ

*ՆԳԱԱ Մ. Զոթանյանի անվան
 տնտեսագիտության ինստիտուտի առաջատար
 գիտաշխատող, աշխ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր*

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ
 ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ**

Համաշխարհային տնտեսության ճգնաժամային ցնցումները, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների համար ստեղծելով ավելի նպաստավոր պայմաններ, առավել են ընդգծում այս ոլորտում օպտիմալ կառավարման անհրաժեշտությունը: Կայուն զարգացման համակարգի կառուցումը իրական պահանջ է հատկապես զարգացող և հետանցումային տնտեսության պայմաններում, որտեղ ցնցումները, անհրաժեշտ ինստիտուտների փաստացի անկատարությունն ու անհավասարակշիռ զարգացումը առաջացնում են բնապահպանական լրացուցիչ բարդություններ:

ՀՀ-ում առկա են բնապահպանական բազմաթիվ խնդիրներ, ինչպիսիք են՝ մթնոլորտային և տարածքային աղտոտումները, անտառային ռեսուրսների կրճատումը, հողի էրոզիան, անապատացումը, ջրային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը: Այս խնդիրները և վերը նկարագրված իրավիճակը ոչ միայն դժվարացնում, այլև վտանգում են երկրի կայուն զարգացումը և, ի վերջո, իրենց հետադարձ ազդեցությունն են թողնում տնտեսության վրա:

Ժամանակակից էկոլոգատնտեսական իրավիճակի վերլուծությունը և «հասարակություն-բնություն» փոխհարաբերությունների գիտական իմաստավորումը, ինչպես նաև կայուն զարգացման հայեցակարգի գնահատումն ընդգծում են տնտեսական և էկոլոգիական արժեք-

ների համաձայնեցման անհրաժեշտությունը: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է արտադրության և սպառման կառուցվածքներում կատարել համապատասխան վերափոխումներ, որոնք կապված են տնտեսական մեխանիզմի կատարելագործման հետ, և այդ գործընթացը պետք է համապատասխան վարչական աջակցում և ընկալում ստանա հասարակության կողմից:

Բնապահպանության և բնօգտագործման հիմնախնդիրները սերտորեն կապված են սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտի հետ, որը պայմանավորված է մարդու և բնական միջավայրի փոխներգործության գործընթացների հետ, որոնց ուժեղացումը, խիստ կերպով ազդում է մարդու օրգանիզմի, կյանքի որակի և հոգեբանական վիճակի վրա: Այն պայմանավորվում է նաև շրջակա միջավայրի պահպանման, վերականգնման և բարելավման անհրաժեշտությամբ:

Վերջերս Նյու Յորքում անցկացված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կոնֆերանսում, որը նվիրված էր համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին և նրա հետևանքներին, խոսվեց այն մասին, որ Երկիրն ընդհանուր է բոլորի համար և այն չի կարելի ո՛չ գնել, ո՛չ վաճառել: Այն չի պատկանում մեծահարուստներին և հզորներին, այլ՝ բոլորին: Բնական ռեսուրսները պատկանում են բոլորին: Դա մարդկության ընդհանուր ժառանգությունն է: Մակայն այս սկզբունքը չի պահպանվում: Առանձնացվում են բիոքաղաքակրթության 6 սկզբունքներ՝ 1) բնական ռեսուրսների պատասխանատու և կայուն օգտագործում, 2) ասել ոչ էկոավազակախմբերին, 3) բարիքների արդար բաժանում, 4) ժողովրդավարություն, 5) հոգևոր զարգացում և ստեղծագործում, 6) սոցիալ-գլոբալ բարիքների նկատմամբ հավասար հասանելիություն և համագործակցում: Մարդկությունը պետք է առաջնորդվի 4 էսթետիկ (գեղագիտական) սկզբունքներով՝ 1) փոխադարձ հարգանք, 2) հոգատարություն, 3) պատասխանատվություն, 4) համագործակցություն¹:

ՄԱԿ-ի գրեթե բոլոր կառույցները ստեղծված իրավիճակից ելքը տեսնում են կանաչ տնտեսության մեջ:

Ժամանակակից էկոլոգիական քաղաքականությունն ուղղված է ազգային, տարածաշրջանային և գլոբալ բնապահպանական հիմնահարցերի լուծմանը՝ կապված էկոլոգիական անվտանգության ապահովման, շրջակա միջավայրի որակի, կյանքի որակի և հասարակության առողջության որակի բարելավման խնդիրների հետ: Հիմնահարցերի նման համադրումը ներկայումս ստացել է նոր՝ գիտական հիմնավորում կայուն էկոլոգատնտեսական զարգացման հայեցակարգի շրջանակներում: Կայուն զարգացման գաղափարախոսությունը վերածվել է կոնկրետ ռազմավարական գործողությունների, որոնք պետք է ունենան համապատասխան գիտական հենք:

Այժմ անդրադառնանք ՀՀ հարավ արևելյան մասում գտնվող մարզերի՝ Վայոց Ձորի և Սյունիքի էկոլոգիական իրավիճակների համառոտ վերլուծությանը:

ՀՀ Վայոց Ձորի մարզն ընդգրկում է Վայքի և Եղեգնաձորի տարածաշրջանները: Մարզում ընդգրկված են 44 համայնքներ, այդ թվում 3 քաղաք՝ Ջերմուկ, Վայք, Եղեգնաձոր: Վերջինս հանդիսանում է Վայոց Ձորի մարզկենտրոնը, որտեղ բնակչության ընդհանուր քանակը կազմում է 8187 մարդ և մարզում բնակչության թվով առաջինն է:

Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և նրա վտակների ջրերն առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, լեռնանցքներ, սարահարթեր, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի հիմնական ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (71մ): Վայոց Ձորի տարածքի 4.6%-ը կազմում են բնական անտառները:

Անտառները հանդիսանում են բազմատեսակ և տարածված բնապահպանական համակարգերից մեկը երկրի վրա և կատարում են մի շարք ֆունկցիաներ՝ նրանք հույճ են փայտ և այլ նյութեր արտադրելու համար, ունեն վերականգնողական (ռեկրեացիոն) նշանակություն, իրականացնում են բնապահպանական համակարգային գործառույթ, ընդ որում ջրային և հողային ռեժիմների կարգավորում, ծառայում են որպես կենսաբազմազանության

¹ Даниелян К., “С этикой, с которой мы живем, планета на воспринимать не может”. Финансовый кризис глазами эколога. “Деловой экспресс”, № 27 (829), 15-24 июля 2009г.

օբյեկտներ և կլանում են ամխաթթու գազը: Անտառների չափազանց շահագործումը, հատվածավորումը (ֆրագմենտացիան), բնական միջավայրի վատթարացումը (դեգրատացիան) և բազմատեսակ հողօգտագործման բաժանումը վտանգում են անտառտնտեսության ռեսուրսները: Վայոց Ձորի սոցիալ-տնտեսական խնդիրները գտնվում են պետության ուշադրության ներքո: Մինչև այսօր շրջանը համարվում է զարգացման փուլում, իսկ ապագայում հանրապետության տարածաշրջաններից գրավելու է առաջատար դեր: 2009թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Վայոց Ձորի մարզում գրանցված է եղել 2490 ՓՄՁ սուբյեկտ, որը կազմում է հանրապետությունում գրանցված ՓՄՁ սուբյեկտների 1.9%: Միայն 2008թ. ընթացքում ՀՀ Վայոց Ձորի մարզում գրանցվել է 373 ՓՄՁ սուբյեկտ՝ ապահովելով շուրջ 451 նոր աշխատատեղ: ՀՀ Վայոց Ձորի մարզում 1000 բնակչի հաշվով գրանցված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը 2008թ. կազմել է 45¹:

Վայոց Ձորի մարզում կան անհրաժեշտ պայմաններ տնտեսության զարգացման համար: Խաղողի հայրենիքի՝ Արենիի գինու գործարանի ծավալի աճն ապահովելու նպատակով մշակվել են 700 հա նոր խաղողի այգիներ: Առանց ջրի հնարավոր չէ ոռոգել հողատարածքները: Կառավարության օժանդակության ներքո կառուցված են երկու ինքնահոս ջրատարներ, որոնք սնում են 7 հազ.հա տարածք:

Մարզի տարածքով է անցնում Հայաստանի Իրանի հետ միացնող ավտոմայրուղին, որն էական դեր է կատարում մարզի տնտեսության զարգացման գործում: Մարզում ընդհանուր առմամբ զբաղվում են գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ: Գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 187792 հա, այդ թվում վարելահողերը՝ 46757 հա:

ՀՀ Սյունիքի մարզը (մարզպետարանը) ձևավորվել է 1996 թվականից և բաղկացած է 60 համայնքներից, որի կազմում են ընդգրկված 5 քաղաքներ՝ Կապան, Գորիս, Գաստակերտ, Մեղրի, Ագարակ:

2009թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Սյունիքի մարզում գրանցված է եղել 6591 ՓՄՁ սուբյեկտ, որը կազմում է հանրապետությունում գրանցված ՓՄՁ սուբյեկտների 5%-ը: Միայն 2008թ. ընթացքում ՀՀ Սյունիքի մարզում գրանցվել է 1005 ՓՄՁ սուբյեկտ՝ ապահովելով շուրջ 1275 նոր աշխատատեղ: ՀՀ Սյունիքի մարզում 1000 բնակչի հաշվով գրանցված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը 2008թ. կազմել է 43²:

Պետական տնտեսական կարգավորումն իրենից ներկայացնում է հարկադրական և խթանման միջոցների զուգակցում, որոնց օգտագործումն անցումային շրջանում գտնվող երկրներում (այդ թվում նաև ՀՀ-ում) հանդիպում են մի շարք դժվարությունների՝ կապված անկայուն (որոշ երկրներում՝ լարված) էկոլոգատնտեսական իրավիճակի, անբավարար պետական ֆինանսավորման, գործող հարկային համակարգի անկատարության, հարկահավաքության անբավարար վիճակի և այլ գործոնների հետ: Անկախ նշված գործոններից, շրջակա միջավայրի պահպանության հիմնահարցերի արդյունավետ լուծման գործում նախապատվությունը տրվում է պետական մասնակցությանը և էկոլոգիական անվտանգության ապահովմանը:

Ժամանակակից պայմաններում աղտոտման տնտեսական վնասն իրենից ներկայացնում է էկոլոգիական ծախքերի հիմնական բաղադրիչը: Հետևաբար կարևոր է, որպեսզի միկրոտնտեսական ցուցանիշների կատարելագործումը բոլոր տեսակի էկոլոգիական ծախքերի հաշվառմամբ կատարվի բոլոր երկրներում միասնականացման սկզբունքով: Այդպիսի քաղաքականության իրականացումը, որն ուղղված է ինչպես միկրո, այնպես էլ մակրոտնտեսական ցուցանիշների կատարելագործմանն ու միասնականացմանը, կարևոր նախադրյալ է ստեղծում համաշխարհային հանրության կայուն զարգացման գերակայող սկզբունքների իրագործման համար:

Տնտեսապես կայուն զարգացմանը նպաստում են նաև շրջակա միջավայրի աղտոտման համար վճարների գանձումը: Նման գործընթացի արդյունավետությունը կախված է «աղտոտողը վճարում է» սկզբունքի իրականացումից, որը դրդում է ներդնել գործուն բնապահպանական միջոցառումներ: Հարկ է նշել, որ արևմտյան զարգացած երկրներում

¹ Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն, 2008, էջ 44:

² Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն, 2008, էջ 43:

այդպիսի սկզբունքը բավականին արդյունավետ է, քանի որ զարգացած է մրցակցային միջավայրը, և անհնար է նման վճարումների փոխհատուցումն իրականացնել գների աճի ճանապարհով:

Այսպիսով, ներկայումս, առավել արդիականացել է էկոլոգատնտեսական հաշվառման համակարգի ստեղծման հիմնահարցը: Նշված համակարգը պետք է էապես տարբերվի մակրոտնտեսական հաշվետվությունների «ավանդական» համակարգից և ունենա հատուկ դեր ու նշանակություն էկոլոգիական ազդեցության գնահատման ժամանակակից մեթոդաբանությունում: Բացի այդ, էկոլոգատնտեսագիտական հաշվառման համակարգի մշակումը, տեղեկատվական զարգացումը և կատարելագործումը, ինչպես նաև «սովորական» էկոլոգիական հաշվետվության համակարգի վերափոխումը հնարավորություն կտա հաշվի առնել ուսումնասիրվող գործընթացների էկոլոգատնտեսագիտական առանձնահատկությունները, օգտագործել ինչպես ֆիզիկական, այնպես էլ արժեքային տվյալները, շուկայական ու պայմանական գնահատումները:

Բնության պահպանությունը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման կառավարումը յուրաքանչյուր երկրի ռազմավարական կարևորագույն խնդիրներից է: ՀՀ օրենսդրության համաձայն՝ պետությունը պետք է պահպանի շրջակա միջավայրը, ինչպես նաև երաշխավորի բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և վերարտադրողականությունը:

Պետք է նշել, որ չնայած բնապահպանական միջոցառումների իրականացման համար հավաքագրվող պետական բյուջեի եկամուտների ծավալների զգալի աճին, ՀՀ-ում դեռևս թույլ է տնտեսական մեխանիզմների կարգավորիչ դերը շրջակա միջավայրի աղտոտման ծավալների նվազեցման հարցում, չի ձևավորված համապատասխան իրավական և կառուցվածքային համակարգ, որը հնարավորություն կընձեռներ բնօգտագործման և բնապահպանական վճարների գծով հավաքագրվող ֆինանսական միջոցները ամբողջովին նպատակաուղղել հանրապետությունում առկա, առաջնահերթ իրագործման կարիք ունեցող բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը, նպատակաուղղված միջոցառումների ֆինանսավորմանը:

Այսպիսով, ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի կառավարման համակարգի գործունեությունը շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման բնագավառներում դեռևս չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Դա միասնական ազգային էկոլոգիական քաղաքականության բացակայության հետևանքն է, մասնավորապես բնապահպանական գործողությունների արդյունավետության գնահատման և էկոլոգիական պլանավորման բնագավառներում:

Հեռանկարում քաղաքացիների բնապահպանության անվտանգության և առողջ բնական միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանության գլխավոր գործոններից մեկը էկոլոգիական ապահովագրությունն է, որը կարող է դառնալ շրջակա միջավայրը աղտոտումից կանխարգելելուն ուղղված դրամական միջոցների ձևավորման մեխանիզմներից մեկը:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացությանը, որ բնապահպանական միջոցառումների արդյունավետության բարձրացման կարևոր երաշխիք է հանդիսանում բնապահպանական ծախսերի ֆինանսավորման աղբյուրների օպտիմալացումը տնտեսական գործիքների ներդրմամբ և ծախսերի բաշխման գիտականորեն հիմնավորված չափանիշների մշակմամբ: Նման մոտեցումը նախադրյալներ է ստեղծում բնապահպանական ծախսերի ու բնապահպանական միջոցառումների համատեղելիության և գործողությունների հստակեցման համար:

Ընդհանուր առմամբ, շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում լուրջ դերակատարություն պետք է վերապահվի պետությանը, որը մյուս շահագրգիռ կազմակերպությունների և կառույցների հետ համագործակցելով պետք է մշակի և իրականացնի տվյալ ոլորտում կուտակված հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ: Բնապահպանական պետական քաղաքականության հիմնական ուղղություններ պետք է հանդիսանան մարդկանց ապրելու և կենսագործունեության համար պիտանի, բարենպաստ բնական միջավայրի ապահովումը, բնապահպանական առկա վիճակի նկատմամբ պետական մոնիտորինգի համակարգի ներդրումը, բնապահպանական չափորոշիչների սահմանումը և կիրառումը,

բնակչության աճի և բնական պաշարների օգտագործման միջև հավասարակշռության ապահովումը, իրավախախտումների բացահայտման և պատասխանատվության սահմանման մեխանիզմների կատարելագործումը, էկոլոգիապես վտանգավոր գործունեության տեսակների լիցենզավորման համակարգի զարգացումը և այլն:

Այսպիսով, ներկայումս առավել արդիականացել է էկոլոգատնտեսական հաշվառման համակարգի ստեղծման հիմնահարցը: Նշված համակարգը պետք է էապես տարբերվի մակրոտնտեսական հաշվետվությունների «ավանդական» համակարգից և ունենա հատուկ դեր ու նշանակություն էկոլոգիական ազդեցության գնահատման ժամանակակից մեթոդաբանությունում: Բացի այդ, էկոլոգատնտեսագիտական հաշվառման համակարգի մշակումը, տեղեկատվական զարգացումը և կատարելագործումը, ինչպես նաև «սովորական» էկոլոգիական հաշվետվության համակարգի վերափոխումը հնարավորություն կտա հաշվի առնել ուսումնասիրվող գործընթացների էկոլոգատնտեսագիտական առանձնահատկությունները, օգտագործել ինչպես ֆիզիկական, այնպես էլ արժեքային տվյալները, շուկայական ու պայմանական գնահատումները:

Բնության պահպանությունը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման կառավարումը յուրաքանչյուր երկրի ռազմավարական կարևորագույն խնդիրներից է: ՀՀ օրենսդրության համաձայն՝ պետությունը պետք է պահպանի շրջակա միջավայրը, ինչպես նաև երաշխավորի բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և վերարտադրողականությունը:

Հանրապետությունում դեռևս ձևավորված չէ էկոլոգատնտեսական հաշվառման ժամանակակից համակարգ, որի գործունեությունը հնարավորություն է տալիս գնահատել և հսկել զարգացման էկոլոգացման ընթացքը, հատկապես մակրոտնտեսական ցուցանիշների օգնությամբ:

Չնայած բնապահպանական միջոցառումների իրականացման համար հավաքագրող պետական եկամուտների որոշակի աճին, ՀՀ-ում դեռևս թույլ է տնտեսական մեխանիզմների կարգավորիչ դերը շրջակա միջավայրի պահպանության և ռացիոնալ բնօգտագործման բնագավառներում:

Մեր կարծիքով, իրավիճակը կարգավորելու համար, անհրաժեշտ է.

- հատուկ հսկողություն սահմանել էկոլոգիական հաշվետվությունների և տնտեսվարող սուբյեկտների փաստացի գործունեության նկատմամբ, որը պետք է ուղղված լինի առաջին հերթին տնտեսական գործառույթների՝ հարկերի և վճարումների կիրառման արդյունավետության բարձրացմանը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում,
- համայնքների մակարդակով ֆինանսական առաջնահերթությունը պետք է տրվի այն նախագծերին, որոնք կողմնորոշված են արդյունաբերության առավել «կեղտոտ» ճյուղերում կառուցվածքային փոփոխություններ իրականացնելուն, տարածաշրջանային բնապահպանական սուր հիմնախնդիրները լուծելու համար,
- ստեղծել ազգային միասնական տեղեկատվական համակարգ, որը կընդգրկի տվյալների բանկ՝ կապված ՀՀ էկոլոգիական իրավիճակի, բնօգտագործման բնագավառների գնահատման և ռազմավարական գործողությունների վերլուծության հետ:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացությանը, որ բնապահպանական միջոցառումների արդյունավետության բարձրացման կարևոր երաշխիք է հանդիսանում բնապահպանական ծախսերի ֆինանսավորման աղբյուրների օպտիմալացումը տնտեսական գործիքների ներդրմամբ և ծախսերի բաշխման գիտականորեն հիմնավորված չափանիշների մշակմամբ: Նման մոտեցումը նախադրյալներ է ստեղծում բնապահպանական ծախսերի ու բնապահպանական միջոցառումների համատեղելիության և գործողությունների հստակեցման համար:

ԱՄՆ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՐ

Համաշխարհային ճգնաժամը մեծ հարված հասցրեց աշխարհի գրեթե բոլոր պետություններին. վնաս կրեցին համաշխարհային տնտեսության բոլոր ոլորտները: Աշխարհի բոլոր երկրների տնտեսությունները միմյանցից կախման մեջ են գտնվում, ճգնաժամից դուրս գալու համար անհրաժեշտ է, որ տնտեսության առողջացում լինի աշխարհի մասշտաբով: Վերջին շրջանում նկատվող որոշ դրական փոփոխությունները կարող են հիմք տալ ենթադրելու, թե ճգնաժամն արդեն ավարտվել է, սակայն առկա փաստերը վկայում են, որ այս ճգնաժամը համակարգային է և չի կարող վերանալ, եթե չկատարվեն համակարգային փոփոխություններ, նույնիսկ այնպիսի գերտերությունում, ինչպիսին է ԱՄՆ-ը: Իրականացվող միջոցառումներն իրենց բնույթով ավելի շուտ նպատակ ունեն մեղմել ճգնաժամի հետևանքները՝ առանց վերացնելու ճգնաժամ ծնող պատճառները: Գնաժամը նախ և առաջ ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական ոչ արդյունավետ համակարգի արդյունք է, իսկ մյուս երկրները տուժեցին, քանի որ ֆինանսական թելերով ամուր շաղկապված էին ԱՄՆ-ին: Եթե դիտարկենք XX դարում տեղի ունեցած ճգնաժամերը, ապա պարզ կդառնա, որ դրանք ընթացել են, կարծես, ալիքաձև: Յուրաքանչյուր անկման հաջորդում է վերելք, իսկ վերելքին՝ նոր անկում: 1929թ. սկսված մեծ դեպրեսիան ԱՄՆ-ում հաղթահարվեց այն ժամանակ, երբ սկսվեց Երկրորդ աշխարհամարտը: Պարտատեր երկիրը ռազմական պատվերների կտրուկ ավելացման հետևանքով հզորացած դուրս եկավ պատերազմից՝ դառնալով պարտատու: ԱՄՆ-ի հաճախակի ճգնաժամների մեջ հայտնվելու հանգամանքը պայմանավորված է նրանով, որ 1913թ. հիմնադրված երկրի կենտրոնական բանկը (Դաշնային պահուստային համակարգ (ԴՊՀ)) լիովին անկախ կառույց է և հաշվետու չէ պետությանն իր գործունեության համար: Իրականացնելով դոլարի անվերահսկելի ու մեծաքանակ արտադրություն՝ բանկն այդ գումարը որոշակի տոկոսադրույքով տրամադրում է կառավարությանը: Եվ քանի որ դոլարը նաև համաշխարհային հիմնական արժույթն է, դոլարի քանակի անկառավարելի աճը ուղղակիորեն հարվածում է բոլոր մասնակից երկրներին: Աշխարհի համախառն արտադրանքն իր աճի տեմպերով չի հասնում դոլարի ավելացման տեմպերին՝ առաջացնելով դոլարի արժեզրկում (ինֆլյացիա) և ապրանքների գների աճ: Իրավիճակը ցնցումային չէր, քանի դեռ ԱՄՆ-ն ուսկով ապահովում էր իր արժույթի գինը: Սակայն 1976թ. լողացող փոխարժեքների համակարգին անցում կատարելով և հրաժարվելով դոլարի ուսկով ապահովումից՝ վերացավ դոլարի արժեզրկումը խոչընդոտող հիմնական զապաշապիկը, և այդ պահից աշխարհի հիմնական արժույթը ոչնչով ապահովված չէ: Տասնամյակների ընթացքում ԴՊՀ-ն նաև նպաստել է բնակչությանը տարատեսակ վարկերի (հիպոթեկային, սպառողական) անսահմանափակ տրամադրմանը, ինչը պարբերաբար հանգեցրել է նրան, որ բնակչության զգալի մասը, հայտնվելով պարտքերի մեջ և կորցնելով աշխատանքը, զրկվել է այն ամենից, ինչ ձեռք է բերել նախկինում վարկերի միջոցով: Համաշխարհային տնտեսագետների կարծիքով ԱՄՆ ֆինանսական համակարգը չի արդարացրել իրեն՝ Ենթադրվում էր, որ այն պետք է մոբիլիզացներ խնայողությունները, տեղաբաշխեր կապիտալը և խուսափեր ռիսկերից: Առաջին խնդիրը ԱՄՆ ֆինանսական համակարգը չի կարողացել կատարել, քանի որ խնայողությունները գտնվում են գրոյական մակարդակի վրա: Ներդրումներ են արվել այնպիսի տներում, որոնք մարդիկ ի վիճակի չէին գնել, ընդ որում, այնպիսի տեղերում, որի կարիքն ընդհանրապես չկար: Եվ վերջապես, համակարգը չի նպաստել ռիսկերից խուսափելուն, այլ հակառակը՝ ինքն է ռիսկեր ստեղծել: Նորելյան մրցանակի դափնեկիր, Համաշխարհային բանկի նախկին գլխավոր տնտեսագետ, ներկայումս՝ Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Ջոզեֆ Ստիգլիցը գտնում է, որ հենց արատավոր ֆինանսական համակարգն է դեֆորմացրել ԱՄՆ-ի ողջ տնտեսական համակարգը, և այժմ խորը բարեփոխումների անհրաժեշտություն է առաջացել: «Մեր ֆինանսական համակարգի խնդիրները ախտանիշն են ավելի խորը խնդիրների, որոնք առկա են ժամանակակից կապիտալիզմում՝ իր ամերիկյան տարբերակով»:

Ճգնաժամի հետևանքով լուրջ անկում է արձանագրել Ճապոնիայի վիճակագրությունը՝ ներկայացնելով հետևյալ տվյալները՝ 2009 թվականի հունվարին ճապոնական արտադրանքի արտահանումն ավելի քան 45%-ով կրճատվել է՝ 2008 թ. հունվարի համեմատ: Երկրի ֆինանսների նախարարության տվյալներով, ԱՄՆ արտահանվող ապրանքների ծավալը կրճատվել է՝ 53, իսկ Եվրամիություն՝ 47%-ով: Ճգնաժամի գլխավոր պատճառներից մեկն, ըստ Ստիգլիցի, համախառն պահանջարկի դեֆիցիտն է, որն առաջացել է «գլոբալ անհամաչափությունների» արդյունքում: Իսկ անհամաչափությունների պատճառը անցումային տնտեսությամբ զարգացող երկրներն են, որոնք արտարժույթային ռեզերվների պահանջ են զգացել: Ըստ Ստիգլիցի. «Վերջին 8-9 տարիների ընթացքում ռեզերվների կուտակումը, հատկապես Ասիայի և Մերձավոր Արևելքի երկրներում, հսկայական մասշտաբների է հասել և հաշվվում է տրիլիոնավոր դոլարներով»:

Այդ երևույթի բացատրությունը հետևյալն է՝ 1997-1998թթ. ֆինանսական ճգնաժամից հետո այդ երկրները որոշեցին այլևս երբեք թույլ չտալ այնպիսի իրավիճակ, որում նրանք կկորցնեն իրենց տնտեսական ինքնիշխանությունը՝ ենթարկվելով Արժույթի միջազգային հիմնադրամի հրահանգներին, նրանք հասկացան, որ պետք է պաշտպանեն իրենք իրենց: Ու քանի դեռ գոյություն չունի գլոբալ ապահովագրման համակարգ՝ որպես այդպիսին, յուրաքանչյուր երկիր ձգտում է ինքն իրեն պաշտպանել՝ մեզառեզերվներ ստեղծելով: Այդ ռեզերվները բուֆերի դեր պետք է կատարեն, եթե իրավիճակը վատանա: Եվ նրանք ճիշտ էին վարվում, քանի որ ճգնաժամի արդյունքում ավելի նախընտրելի վիճակում հայտնվեցին, քան այն երկրները, որոնք ռեզերվներ չէին կուտակել: Նա նաև նշել է, որ պահանջարկի դեֆիցիտի արդյունքում մեկ երկիր վերածվեց «վերջին ատյանի սպառողի», և այդ երկիրն ԱՄՆ-ն է: Տնտեսագետն ամոթալի է համարել այն համակարգը, որի պայմաններում աշխարհի ամենահարուստ երկիրը պետք է միջոցներ չխնայելով սպառի, որպեսզի նույն համակարգը շարունակի գործել:

Գոլարի անհուսալիության ուղղակի հետևանք էր 1999թ. նոր արժույթի՝ Եվրոյի ստեղծումը: Այս հանգամանքը որոշակիորեն մեղմեց երկրների կախվածությունը դոլարից: 2010թ. ԱՄՆ-ն, օգտագործելով Հունաստանի ծանր վիճակի խաղաքարտը, հարձակում սկսեց եվրոյի նկատմամբ, որի փոխարժեքը անկում էր ունեցել: Սակայն ԵՄ հիմնասյուների՝ Գերմանիայի և Ֆրանսիայի ջանքերով հաջողվեց խուսափել եվրոյի անկումից և դուրս եկավ ճգնաժամից: Ոսկին նույնպես դիտարկվում է որպես ճգնաժամից խուսափելու փորձված տարբերակ: Եթե 2008թ. վերջերին ոսկու մեկ տրոյական ունցիան արժեք շուրջ 750\$, 2010թ. մայիսի տվյալներով՝ ոսկու գինը տատանվում է 1225 \$-ի սահմաններում (ըստ ոսկու գրաֆիկի՝ աճը հավանաբար կշարունակվի): Այսինքն՝ ճգնաժամի թեժ շրջանում փախուստը արժույթներից մեծացրել է ոսկու պահանջարկը՝ հանգեցնելով դրա գնի բարձրացմանը: Ուստի տրամաբանական է, որ քանի դեռ ոսկու գինը աճի միտում ունի, ճգնաժամը ավարտված համարել չի կարելի: Արժաթի, պլատինի և մյուս մետաղների գները նույնպես աճել են: Ներկայիս թվացյալ առողջացումը ճգնաժամի անկման պիքին հաջորդած հակա-ալիք էր, որին պետք է հաջորդի նոր անկում: Մի կողմից՝ ԱՄՆ ռազմարդյունաբերական համալիրը պահանջում է նոր պատերազմներ և նոր ռազմական պատվերներ, մյուս կողմից՝ այդ պատերազմների սանձազերծումը ավելի է մեծացնում ԱՄՆ պետական պարտքի բեռը՝ առաջացնելով տնտեսության մյուս ոլորտների անհամաչափ զարգացում: Պարզ է, որ ռազմարդյունաբերական համալիրի գերակայությամբ գործող և անընդհատ պատերազմելու կարիք ունեցող համակարգը չի կարող արդյունավետ լինել և երկար գոյատևել: Պատերազմների միջոցով նոր աշխատատեղերի ստեղծումը, գործազրկության մակարդակի նվազեցումը և այլ խնդիրների լուծումը փակուղային է: ԱՄՆ-ի ներկայիս քայլերը ֆինանսական ոլորտի կարգավորման ուղղությամբ (նորանոր քանակի դոլարային հատկացումներ տնտեսության մեջ) նման են վիրաբուժական միջամտության կարիք ունեցող հիվանդին կոսմետիկ վիրահատությամբ բուժելու փորձերի, ինչն ավելի է բարդացնում իրավիճակը: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը սպառողներին ստիպում է գնել միայն ամենաանհրաժեշտ իրերը: Մթերային խանութներում մարդիկ անտարբեր անցնում են երկրորդային նշանակություն ունեցող ապրանքների կողքով: Շատ ծնողներ ստիպված հրաժարվում են գումար տրամադրել երեխային արվեստի և սպորտի դպրոցներ հաճախելու համար՝ ապահովելով սնունդ,

հագուստ և առաջին անհրաժեշտության իրերը: Հետազոտությունները ցույց են տվել, որ նվազել է նաև այն մարդկանց թիվը, ովքեր նախընտրում էին օգտվել բրենդային խանութներից, որպեսզի բարձրացնեն իրենց սոցիալական կարգավիճակը: Աշխարհում բազմաթիվ թեժ կետերի առկայության պայմաններում, որպես ճգնաժամից դուրս գալու տարբերակ, ԱՄՆ-ն կարող է դիտարկել լոկալ և նույնիսկ համաշխարհային պատերազմի սանձազերծումը, ինչը հնարավորություն կտա իրականացնելու համակարգային փոփոխություններ, ստեղծելու նոր ֆինանսատնտեսական մոդել, որի արդյունքում կառաջանան ուժային նոր կենտրոններ: Չնայած որ ԱՄՆ-ում են կենտրոնացված համաշխարհային տնտեսագիտական գլխավոր դպրոցները, սակայն ԱՄՆ-ը չի կարողանում ստեղծել մի հակաճգնաժամային ծրագիր, որը վերջնականապես դուրս կբերի ԱՄՆ-ին ճգնաժամային իրավիճակից: ԱՄՆ-ի այժմյան նախագահ Բարաք Օբամայի և իր թիմակիցների հակաճգնաժամային ծրագիրն է խթանել տնտեսությանը առանց հարկերը բարձրացնելու: Բնականաբար ծախսերը կրճատելու և հարկերը բարձրացնելու գործելաոճը մեկ-երկու տարի անց կբերի հակառակ արդյունքի: Ճգնաժամը հաղթահարելու մյուս տարբերակը կարող է լինել բազմարժույթային ֆինանսական համակարգի ստեղծումը՝ յուանի, եվրոյի, ռուբլու և այլ ռեզիդնալ արժույթների հավասարաչափ ընդգրկմամբ՝ բացառելով որևէ արժույթի գերակայությունը աշխարհում: Դա պետություններին հնարավորություն կտա դիվերսիֆիկացնելու ֆինանսական քաղաքականությունը և ավելի ճկուն գործելու պայմաններ ստեղծելու՝ զգալիորեն խուսափելով ցնցումային իրավիճակներից: Ներկայումս աշխարհի շատ երկրներում ստեղծված տնտեսական գործունեության ֆիկտիվ ոլորտը (զանազան արժեթղթերի սպեկուլյացիա, բանկային տարբեր գործառույթներ, ծառայությունների սեկտորի անհամամասնական զարգացում իրական արտադրության հետ համեմատած) վաղ թե ուշ հանգեցնում է նմանատիպ ճգնաժամերի. ուստի արտադրական հնարավորությունների մեծացումը, ֆինանսա-կրեդիտային համակարգի խիստ վերահսկողությունը և ավելի արդյունավետ նորագույն տեխնոլոգիաների ներդրումը տնտեսության մեջ էապես կնպաստեն ճգնաժամի հաղթահարմանը: Յուրաքանչյուր պետության իրական հզորությունը պետք է հիմնված լինի նյութական բարիքներ ստեղծելու, ոչ թե թղթադրամներ արտադրելու վրա: Ճգնաժամի ազդեցությունը չխորացնելու համար նպաստավոր կլինի, եթե Հայաստանը կարճ ժամանակամիջոցում էապես կրճատի դոլարային պահուստները, որդեգրի բազմարժույթային խնայողությունների գամբյուղ՝ տեղ հատկացնելով Եվրոյին, շվեյցարական ֆրանկին, ռուբլուն, յենին, յուանին և ոսկուն: Սա հնարավորություն կտա վնասներ չկրելու շատ մոտ ապագայում դոլարին սպառնացող կոլապսային իրավիճակներից և չվտանգելու փխրուն տնտեսական հավասարակշռությունը: Ի վերջո, այս ճգնաժամը նաև մարդկային հարաբերությունների, պետությունների գործելակերպի և համոզմունքների ճգնաժամ է: Անպատասխանատու վերաբերմունքը երկիր մոլորակի նկատմամբ, տասնամյակներ շարունակ օգտակար հանաժողների անխնա շահագործումը, շրջակայքը աղտոտելով երկրի էկոհամակարգին էական վնասներ հասցնելը և քաղաքակրթության այլ «բարիքներ» ստեղծել են մի իրավիճակ, երբ մարդը վերածվել է ապրանքներ սպառող էակի՝ մոռանալով հոգևոր պահանջմունքների մասին: Շարունակ նյութական բարիքների ետևից «վազելը» չի կարող գերնպատակ հռչակվել: Ապագան կարող է իսկապես պայծառ և ապահով լինել, եթե պետությունները շեշտը դնեն անսպառ էներգատեսակների (քամի, ջուր, արև, ատոմ) վրա՝ չխախտելով մոլորակի հավասարակշռությունը, եթե ստեղծվեն արդարացի ֆինանսատնտեսական ենթակառուցվածքներ՝ յուրաքանչյուր երկրի հատկացնելով իրեն հասանելիք տեղը:

**ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Վերջին տարիների ֆինանսական ճգնաժամը, որը վերաճել և դարձել է տնտեսական ճգնաժամ, առաջին ծիլերը տվեց ԱՄՆ-ի տնտեսությունը: Գլոբալիզացման պայմաններում տնտեսությունների փոխադարձ կախվածության աստիճանը ծայրահեղ բարձր է: Հաշվի առնելով «Բրեթոն-Վուդյան համաձայնագրերը» (ԱՄՆ, Նյու Հեմփշիր, 1944թ.), ըստ որի դոլարը մինչ օրս համարվում է համաշխարհային հիմնական արտարժույթ (չնայած որ ունի արժանի մրցակից, ինչպիսին է եվրոն), ԱՄՆ-ի 100 տրիլիոն դոլարի պարտքը ստիպված են փակել ոչ միայն ամերիկացիները, այլև մնացած բոլոր՝ հատկապես զարգացած երկրները: Հայաստանը, թեկուզև չլինելով զարգացած երկիր, փոխկապակցված է համաշխարհային ֆինանսական և տնտեսական գլոբալ համակարգին, և կրել է մեծ վնասներ:

Ռուսաստանը նախքան ճգնաժամը, տնտեսական աճի բավական բարձր տեմպեր է արձանագրել. նավթի (համաշխարհային հայտնաբերված պաշարների 10-12%-ը), գազի (30-32%-ը) ածուխի (30%), անտառանյութի (22%, պաշարներով, թվում է պետք է խուսափեր ճգնաժամից: Նշենք նաև, որ ֆինանսական ճգնաժամի սկիզբին Ռուսաստանը աշխարհում երկրորդ տեղում էր իր ոսկու և արտարժույթի պաշարներով (560 մլրդ դոլարի չափով), ամեն դեպքում Ռուսաստանի Դաշնությունը չկարողացավ գերծ մնալ ֆինանսական բուռն ցնցումներից: Ռուսաստանի տնտեսության հետ էլ սերտորեն առնչվում է ՀՀ տնտեսությանը. 2009 թվականի առաջիկա երեք ամիսների ընթացքում ՀՀ բանկային համակարգի միջոցով Ռուսաստանից Հայաստան է փոխանցվել 146247 միլիոն դոլար, իսկ հակառակ ուղղությամբ կատարված փոխանցումների ծավալը կազմել է 24,365 ԱՄՆ դոլար: Հատկանշական է, որ Ռուսաստանից Հայաստան փոխանցված գումարների ճնշող մեծամասնությունը՝ 96,4%, անձնական կամ ոչ առևտրային բնույթ են կրում: Սույն Կարգի գումարների փոխանցման ծավալը նվազել է 34%-ով 2008 թվականի համեմատ, 2009 թվականին նաև ԱՄՆ-ից Հայաստան փոխանցված գումարներն են նվազել՝ 18,310 միլիոն դոլարի համեմատ, տվյալ ցուցանիշը նվազել է 43,83%-ով: Ընդհանուր առմամբ 2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Հայաստան փոխանցված գումարների ընդհանուր ծավալը կազմել է 261,782 միլիոն դոլար. Հայաստանից փոխանցված գումարների ծավալը կազմել է՝ 131,498 միլիոն դոլար: Մեր երկրում 2009 թվականի ապրիլից արձանագրվել է 3,2% գնաճ: Իսկ 2010 թվականին գնաճի տեմպը երկրորդ եռամսյակից սկսել է արագանալ: Հայաստանում արտահանման և ներմուծման ծավալների շեշտակի նվազում է արձանագրվել: Շուրջ 30 տոկոսով նվազել են պատրաստի սննդի արտադրանքի և 20 տոկոսով՝ հանքահումքային արտադրանքի ծավալները: Արտահանման կառուցվածքում հանքահումքային արտադրանքի ծավալը կրճատվել է 70 տոկոսով՝ պայմանավորված պղնձի և մոլիբդենի միջազգային գների կտրուկ անկմամբ: Ոչ թանկարժեք քարերի, մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանումը կրճատվել է շուրջ 50 տոկոսով: Հայաստանի միջազգային բեռնափոխադրողների ասոցիացիայի բեռնատարների 50 տոկոսը պարապուրդի են մատնվել և գտնվում են Երեւանում: 2009 թվականի ապրիլին «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի կողմից իրականացված հետազոտությունների տվյալներով Հայաստանի 60 փոքր և միջին ձեռնարկությունների 90%-ը զգացել է ճգնաժամի բացասական հետևանքները: Ձեռնարկությունները ստիպված կրճատել են աշխատակիցների թիվը, արդյունաբերական ընկերությունների շուրջ 20%-ը կրճատել է աշխատավարձերը: Ճգնաժամը Հայաստանի Հանրապետությունում ամենաշատը ազդել է էներգետիկայի, հանքարդյունաբերական և շինարարական ոլորտների վրա: Այս բոլոր տվյալները կարծես, փաստում են, որ Հայաստանի տնտեսությունը սերտորեն ինտեգրված է համաշխարհային տնտեսությանը, այդ պատճառով էլ արձագանքել

է համաշխարհային տնտեսական փոփոխություններին: Հայաստանի Հանրապետության բնակչության շուրջ 70%-ը ենթարկվել է ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությանը: «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը «Ի-Վի Քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության աջակցությամբ այս տարվա մարտին հանրապետությունում իրականացրել է հետազոտություն: Իրականացված հարցումներին մասնակցել է 1000 տնային տնտեսություն, որոնցից 44 տոկոսի մոտ նկատվել են եկամուտների նվազում, 15 տոկոսի մոտ՝ աշխատավարձերի ուշացումներ, 11 տոկոսը հայտնվել են հարկադիր պարապորդում, իսկ 7 տոկոսն ընդհանրապես կորցրել է աշխատանքը: Տնային տնտեսությունների եկամուտների նվազում է արձանագրվել 11-25 տոկոսի սահմաններում: Տնային տնտեսությունների միայն 20 տոկոսն է վստահություն հայտնել, որ ճգնաժամը կհաղթահարվի կարճ ժամանակահատվածում, իսկ շուրջ 50 տոկոսը կանխատեսում է իրավիճակի վատթարացում: Հարցվածների 15 տոկոսը պատասխանել են, որ ստեղծված իրավիճակում դժվարանում են արտագնա աշխատանք գտնել: Երեւանում հարցվածների 40 տոկոսը նշել է, որ նախատեսում է կրճատել կապի վրա կատարվող ծախսերը: Երկարաժամկետ ապրանքների գնումը հետաձգել է 33, բնակարանների վերանորոգման և գնման աշխատանքները՝ 32 տոկոսը: Հարցվածների 33 տոկոսը կրճատել են տուրիզմի, 24 տոկոսը՝ սննդի վրա կատարվող ծախսերը, իսկ ավտոմեքենայի գնման գործընթացը հետաձգել է 9 տոկոսը:

Հայաստանը դասվում է այն երկրների շարքին, որոնք ունեն անցումային զարգացող տնտեսություն, այս դեպքում առավել քան կարևոր է մշակել այնպիսի ռաջիոնալ ռազմավարություն, որպեսզի համաշխարհային ճգնաժամը ունենա նվազագույն ազդեցություն Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա: Ծգնաժամի դեմ պայքարը այսօր հիմնախնդիր է արևմտաեվրոպական հզոր երկրներում՝ Ճապոնիայում, Ռուսաստանում, Չինաստանում: Ծգնաժամով պայմանավորված՝ Հայաստանի առջև այժմ 2 հիմնական խնդիր է ծառայել տնտեսական աճի նվազում և արտաքին առևտրի պակաստրդի ավելացում: Դրանցից առաջինը հաղթահարելու համար պետք է ավելացնել բյուջետային ծախսերը ենթակառուցվածքների ֆինանսավորման վրա, իսկ երկրորդի համար կիրառել փոխարժեքի քաղաքականությունը: Հայաստանի կառավարությունը վարում է փոխարժեքի առավել ճկուն քաղաքականություն, որը մաս է ընդհանուր մակրոտնտեսական քաղաքականության:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության յուրահատկությունները, հարկավոր է հիմնախնդիրը լուծել հետևյալ ֆունկցիաները ապահովելով՝

1. իրականացնել ՀՆԱ-ի ինդեքսի պահպանում,
2. կայունացնել գները,
3. պակասեցնել գործազրկության մակարդակը,
4. խթանել արդյունաբերական արտադրությունը,
5. ավելացնել ներդրումների ծավալը,
6. ֆոնդային բորսաների ինդեքսը հանգեցնել կտրուկ փոփոխությունների:

Պետության ներգործության (Կենտրոնական բանկի) հիմնական գործիքները դրամական առաջարկի վրա՝ դա պարտադիր պահուստային պահանջարկի նորմատիվային մեծության փոփոխությունն է՝ զեղչման չափի մակարդակին (ռեֆինավորման չափ) և գործողությունը բաց շուկայում (պետական արժեքավոր թղթերի առք ու վաճառք): Դրամական առաջարկի և արտադրական ոլորտների միջև փոփոխությունների կապը բնութագրում է «кейнсианский հաղորդիչ մեխանիզմը», որի համաձայն դրամական առաջարկի փոփոխությունն իր ետևից բերում է տոկոսի մակարդակի փոփոխություն, ինչն անդրադառնում է ներդրումային պահանջարկի վրա, որն իր հերթին մուլտիպլիկատիվ էֆեկտով ազդում է ՀԱԱ-ի և զբաղվածության ծավալի վրա: ՀՀ կառավարությունը մշակել է հետևյալ հակաճգնաժամային սկզբունքը տնտեսության զարգացման համար, շարունակել կատարել բարեփոխումներ, որը և կօգնի հեշտ դուրս գալ ստեղծված իրավիճակից: Համաշխարհային բանկի տնօրենների խորհուրդը հաստատել է Հայաստանին վերաբերող 5 վարկային ծրագրեր, որոնք են՝

1. հատկացնել 50 մլն դոլար արժողությամբ Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ֆինանսավորման համար,
2. 25 մլն դոլար՝ գյուղական ճանապարհների կառուցման համար,
3. լրացուցիչ 8 մլն դոլար՝ սոցիալական ներդրումների և լրացուցիչ,
4. 2 մլն դոլար՝ գյուղական զարգացման ծրագրերին: Ընդհանուր առմամբ, այս գումարը կազմել է 85 մլն դոլար,

5. դրամաշնորհային ծրագիր է 1,5 մլն դոլար արժողությամբ, որն ուղղվելու է երկրաջերմային էներգիայի ուսումնասիրմանը՝ Գեղարքունիքի մարզի Գրիճոր և Սյունիքի մարզի Կառկառ վայրերում: ՀԲ միջոցներով վերանորոգվելու են գյուղական ճանապարհները, ֆինանսական աջակցություն է տրվելու գյուղական և սոցներդրումների ծրագրերին ուղղված ենթակառուցվածքների ստեղծմանը, գումար է ներդրվելու աշխատատեղերի ավելացման համար, որը նաև կբարելավի գյուղատնտեսության արտադրողականությունը և բնակիչների կենսամակարդակը: Գյուղական ճանապարհների նորոգման ծրագրով մինչև տարեվերջ Հայաստանի 9 մարզերում կնորոգվեն 100 կմ երկարության ճանապարհներ, որի շնորհիվ կստեղծվեն 800 աշխատատեղեր: Սոցիալական ներդրումների ծրագրով աջակցություն կստանան 55 ամենաաղքատ համայնքները, որտեղ կնորոգվեն դպրոցներ, համայնքային կենտրոններ, կանցկացվեն խմելու ջրագծեր: Գյուղական զարգացման ծրագրով ավարտին կհասցվեն 35 համայնքներում տնտեսական զարգացման ծրագրերը և դրանցում կընդգրկվեն եւս 5-7 համայնք: ՓՄՁ-ների ֆինանսավորման ծրագիրը, այն առաջին վարկն է, որ տրամադրում է ՀԲ կառույցը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը: Այս ծրագրով վարկերը կտրամադրվեն Հայաստանի Կենտրոնական բանկին, որն էլ՝ բանկերին: Վերջիններս վարկեր կտրամադրեն տնտեսվարողներին: ԿԲ-ի կողմից բանկերին տրամադրվող գումարը կկազմի մոտ 8 տոկոսի սահմաններում, իսկ բանկերը վարկերը պետք է տրամադրեն 500 մլն դրամ տարեկան շրջանառությունից ցածր շեմ ունեցող կազմակերպություններին, մեկ վարկի առավելագույն չափը չպետք է գերազանցի 150 հազար դոլարը: Վարկերը կտրամադրվեն դրամով և արտարժույթով, եթե տվյալ կազմակերպությունն ունի արտարժույթային եկամուտներ: Ըստ ՀԲ երեսնյան գրասենյակի ղեկավարի, այս վարկի տրամադրումը 2 նպատակ ունի՝ հաշվի առնելով տնտեսական աճի դանդաղումն ու մասնավոր փոխանցումների նվազումը, ապահովել ՓՄՁ-ների ֆինանսավորումը և պահպանել ՓՄՁ-ների ֆինանսավորման մատչելիությունը: Հարկային եկամուտները հավաքելիս հարկ է ընդլայնել հարկման բազան, որպեսզի բեռը չընկնի փոքր և միջին բիզնեսի վրա: Դրա համար անհրաժեշտ է ներդնել հարկահավաքման նոր ձեւեր՝ ռիսկերի հիման վրա ստուգումների անցկացում, ինքնահայտարարագրում, շփումների նվազեցում պետական պաշտոնյայի և գործարարի միջև: Պետք է մոբիլիզացնել ջանքերը Հայաստանում ստվերը հարկման դաշտ բերելու ուղղությամբ և որ այդ ստվերի մի մասն էլ գտնվում է փոքր և միջին բիզնեսում: Խնդիրն, ըստ նրա, այն է, որ եկամուտները հավաքվեն ավելի լավ միջոցներով: Տնտեսական քաղաքականությունը բավականին ճիշտ է, այն կօգնի մեղմել ճգնաժամի ազդեցությունները, կառավարության կողմից ՓՄՁ-ների համար ֆինանսավորման մատչելիությունը ապահովում է ենթակառուցվածքների կառուցման ծրագրերի իրականացումը և այդ միջոցով աշխատատեղերի ստեղծումը: Միաժամանակ, ներմուծվող ապրանքների համար մաքսատուրքերի բարձրացման առնչությամբ, որ Հայաստանի կառավարությունն իրականացնում է տեղական արտադրությանը խրախուսելու նպատակով, ՀԲ-ն խորհուրդ է տալիս բոլոր երկրներին զերծ մնալ նման հովանավորչական քայլերից: Ըստ Արիստոմենե Վարուդակիսի (ՀԲ գրասենյակի ներկայացուցիչը Հայաստանում), նաև ներմուծվող ապրանքների գնաճ կառաջացնի և բացասաբար կանդրադառնա աղքատ բնակիչների վրա: Հայաստանի Հանրապետությունում տնտեսական քաղաքականության գերնպատակը մեկ սերնդի կյանքի տևողության կտրվածքով ռեսուրսների արդյունավետ բաշխումն էր, մինչդեռ ժամանակակից քաղաքակրթության առաջընթացը պայմանավորվում է կայուն զարգացման ապահովմամբ, որի պարագայում առավել երաշխավորված են ներկա և ապագա սերունդների պահանջների բավարարման հնարավորու-

թյունները: Այս առումով, տնտեսական քաղաքականությունը, քանակական աճին զուգընթաց, ներկայումս ուղղված է որակական տնտեսական զարգացման ապահովմանը: Այսինքն, գերակայությունը մարդկային ռեսուրսների, այն է՝ մտավոր և ստեղծագործ ունակությունների առավել ինտենսիվ օգտագործման հիման վրա տնտեսության էվոլյուցիայի ապահովումն է՝ բնական ռեսուրսների ռազմավարական դերի թուլացման միտումով: Ինովացիոն գործընթացների զարգացում ժամանակակից գլոբալացման պայմաններում, երբ կապիտալի հոսքերը աննախադեպ աճել են և մեծապես ուղղված են բարձր տեխնոլոգիաների ոլորտ, իսկ նորարարությունների ներմուծումը դարձել է շուկայական տնտեսության առանցքային գործոն, ինովացիոն զարգացման քաղաքականությունն ուղղվում է այդ հոսքերի համար Հայաստանը գրավիչ դարձնելուն՝ առավելագույն կարճ ժամանակաշրջանում երկիրը դարձնելով, եթե ոչ բարձր տեխնոլոգիաներ ստեղծող, ապա գոնե այն սպասարկող երկիր: Նման երկրորդային դերից առաջնայինին (սպասարկողից՝ ստեղծողի) անցման համար իրականացվում է ժամանակակից համակարգերին ինտեգրվելու ունակ գիտահետազոտական համակարգի ձևավորմանն աջակցման քաղաքականություն: ՀՀ-ն արդեն ունի ազգային ինովացիոն ձևավորված համակարգ: Երկրորդ փուլում քաղաքականությունը կուղղվի այնպիսի արտադրությունների կազմակերպման խթանմանը, որոնք կարող են յուրացնել նորագույն նորամուծություններ և արտադրել միջազգային չափանիշներով գիտատար արտադրանք՝ դուրս գալով արտաքին շուկաներ: Չպետք է մոռանանք, որ տնտեսական աճը սովորաբար դանդաղ է ընթանում: Նույնիսկ բարգավաճող տնտեսություններում տնտեսական աճը կազմում է տարեկան 2-3 %:

Այդուհանդերձ, տնտեսական աճի ցուցանիշները փոփոխվում են բարդ տոկոսային հաշվարկի մեծ՝ տոկոսադրույքի տարեկան 2 տոկոս կայուն աճի դեպքում միայն, տասը տարի հետո կհանգեցնեն նշանակալիորեն ավելի մեծ և առողջ տնտեսության: Հուսանք, որ մեր երկիրը կհաղթահարի բարդ ճգնաժամը և կարճ ժամանակահատվածում կունենանք կայուն տնտեսական աճ:

ԱՐՄԱՆ ԴԱՎԹՅԱՆ

*ՏԳԱԱ Մ. Զոթանյանի անվան
յրևրեսազիտության ինստիտուտի հայցորդ*

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Ժամանակակից աշխարհում փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման անհրաժեշտությունը ազգային տնտեսությունների վերակառուցման և զարգացման գլխավոր հրամայականներից մեկն է: Այն հանդիսանում է արդյունավետ շուկայական տնտեսության արմատավորման և տնտեսական առաջընթացի երաշխիքը:

Սակայն, ելնելով այս ոլորտի առանձնահատկություններից և կարևորությունից, այդ զարգացումը մեծապես պայմանավորված է ոլորտի զարգացմանն ու աջակցմանն ուղղված պետական քաղաքականության և ռազմավարության առկայությամբ:

Մի շարք երկրներում (Լեհաստան, Չեխիա, Ռումինիա, Թուրքիա, Հունաստան, Ալբանիա, Հունգարիա, Իտալիա, Ավստրիա և Հոլանդիա) մշակվել և իրականացվում են ՓՄՁ զարգացման հստակ պետական քաղաքականություն և ռազմավարություն, իսկ որոշ երկրներում, մասնավորապես, նախկին սոցիալիստական երկրներում, ընդունվել են ՓՄՁ զարգացման վերաբերյալ հատուկ օրենքներ, որոնք կարգավորում և նպաստում են գործունեությանը այդ ոլորտում:

Ընդհանուր առմամբ, եվրոպական երկրների փորձը ցույց է տալիս, որ նրանցից շատերը չունեն ՓՄՁ զարգացմանն առնչվող հատուկ օրենքներ, ինչը պայմանավորված է կամ այդ երկրներում շուկայական տնտեսության բնականոն զարգացմամբ (արևմտաեվրոպական

երկրների օրինակը), կամ էլ նրանով, որ այդ երկրներում ՓՄՁ զարգացման քաղաքականությունը (հիմնադրությունները) հանդիսանում է այդ երկրներում տարվող տնտեսական քաղաքականության անքակտելի մասը (Լեհաստանի և Հունգարիայի օրինակը): Սակայն այդ երկրներում գործող մի շարք օրենքներում առկա է ՓՄՁ սուբյեկտների խրախուսման քաղաքային և դրսևորվում է (մասնավորապես, հարկային և մաքսային օրենսդրություններում) ՓՄՁ սուբյեկտների նկատմամբ առանձնացված մոտեցում:

Գիտարկված երկրներից շատերում ՓՄՁ պետական քաղաքականության մշակման հարցերով զբաղվում են պետական գերատեսչությունների համապատասխան ստորաբաժանումները (յուրաքանչյուրն իր իրավասությունների և գործառնությունների շրջանակներում), սակայն առանձին երկրներում ստեղծվել են ՓՄՁ պետական քաղաքականության իրականացման հարցերով զբաղվող առանձին պետական կամ կիսապետական կառույցներ (Թուրքիա՝ KOSGEB, Հունաստան՝ EOMMEX, Ճապոնիա՝ Փոքր ձեռնարկատիրության կորպորացիա (JSBC) և այլն), իսկ Գերմանիայում բոլոր տարածաշրջաններն ունեն բազմատեսակ կառույցներից կազմված (տեխնոպարկեր, արդյունաբերական գոտիներ, բիզնես-ինկուբատորներ, վենչուրային և երաշխիքային հիմնադրամներ և այլն) պետական աջակցության համակարգեր:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այն երկրներում, որտեղ գործում են ՓՄՁ պետական քաղաքականության իրականացնող առանձին պետական կամ կիսապետական կառույցներ, ՓՄՁ ոլորտի զարգացման համար իրականացվում են պետական կարևորության լայնածավալ ծրագրեր, որոնց իրականացումը պահանջում է հատուկ մոտեցումների կիրառում և օպերատիվ կառավարում: Վերոհիշյալ երկրներում ՓՄՁ զարգացմանն ուղղված պետական քաղաքականության համալիրը կազմված է 3 կարևոր բաղադրիչներից՝ առաջին հերթին, բարենպաստ գործարար միջավայրի սպառնալից (հարկային և մաքսային քաղաքականություն, արդար մրցակցային դաշտ, հակամենաշնորհային քաղաքականություն և այլն), երկրորդ՝ տեխնիկական (գործարար տեղեկատվություն և խորհրդատվություն, կադրերի պատրաստում և վերապատրաստում և այլն) և երրորդ՝ ֆինանսական (ֆինանսաբանկային համակարգ, վենչուրային և երաշխիքային հիմնադրամներ, միկրոֆինանսավորում, լիզինգ, ապահովագրություն և այլն) աջակցությունն է: Անհրաժեշտ է նշել, որ վերը նշված բաղադրիչները փոխկապակցված և փոխապայմանավորված են մեկը մյուսով: ՓՄՁ զարգացման համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ մի շարք երկրներում, ինչպես, օրինակ, Ճապոնիայում, Գերմանիայում նշանակալի ձեռքբերումներ են գրանցվել ՓՄՁ ոլորտում և ընդհանուր առմամբ ամբողջ տնտեսությունում, ինչը պայմանավորված է այդ երկրներում վերոհիշյալ բոլոր բաղադրիչների առկայությամբ:

Բացի պետական կառույցներից, բոլոր երկրներում գործում են նաև ՓՄՁ հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններ՝ առևտրաարդյունաբերական պալատներ, ասոցիացիաներ, ֆեդերացիաներ, միություններ, ՓՄՁ զարգացման և աջակցման հիմնադրամներ և այլն:

Միջազգային փորձը վկայում է այն մասին, որ ՓՄՁ զարգացումը մեծապես պայմանավորված է ՓՄՁ սուբյեկտների ինչպես կարճատև, այնպես էլ երկարատև ֆինանսական ապահովվածությամբ, ինչը հնարավոր է միայն ֆինանսական ծառայությունների շուկայի ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված պետական աջակցության, ինչպես նաև ֆինանսական շուկայի մասնակիցների միջև մրցակցության ինտենսիվացման միջոցով:

Ըստ էության գրեթե բոլոր երկրներում մշակվել և իրականացվում են ՓՄՁ ֆինանսական և ներդրումային աջակցության պետական ծրագրեր (դրամաշնորհներ, վարկեր, ռիսկային կապիտալ, միկրոֆինանսավորում, լիզինգ, ապահովագրություն, վարկային երաշխիքներ, նպատակային ծրագրերի ֆինանսավորում և այլն):

2002թ. TACIS-ի «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը» ծրագրի շրջանակներում ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնման նպատակով ուսումնասիրվել են աշխարհում այդ ուղղությամբ պետության կողմից կիրառվող մեխանիզմները: Ուսումնասիրության արդյունքները նույնպես վկայում են այն մասին, որ ՓՄՁ աջակցության

պետական ծրագրերի շրջանակներում իրականացվող ֆինանսական աջակցության առավել լայն տարածում գտած և արդյունավետ գործող հիմնական ուղղություններն են վարկային երաշխիքների տրամադրումը, վենչուրային ֆինանսավորումը, միկրոֆինանսավորումը և լիզինգը: Դրանով է պայմանավորված այն, որ ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական աջակցությանն ուղղված պետական երաշխիքների գումարը դիտարկվող բոլոր երկրներում գնալով աճում է:

Այդ ուղղությամբ պետության կողմից իրականացվող միջոցառումները Լեհաստանում, Էստոնիայում, Սլովակիայում ներառում են վարկային երաշխիքների, լիզինգային և վենչուրային կապիտալի հիմնադրամների ստեղծում: Հատկանշական է այն, որ այս երկրների համար վարկային երաշխիքների տրամադրման սխեմաների և մեխանիզմների զարգացումը և ծրագրերի իրականացումը նույնպես հանդիսանում են ՓՄՁ պետական աջակցության կարևորագույն ուղղություններից:

Լեհաստանում, իրականացվում են ՓՄՁ վարկային երաշխիքների տրամադրման լայնածավալ ծրագրեր, որոնց շրջանակներում ստեղծված և հաջողությամբ գործող վարկային երաշխիքների հիմնադրամների կողմից արդեն 2010 թվականին շուրջ 24 հազար շահառուներին տրամադրված պետական երաշխիքների ընդհանուր գումարը կազմել է ավելի քան 140 մլն. եվրո, իսկ ծրագրի շրջանակներում տրված վարկերի տոկոսադրույքը՝ մինչև 5% (տոկոսադրույքի իջեցումը պայմանավորված է պետական երաշխիքների առկայությամբ):

Գերմանիայում վարկային երաշխիքների տրամադրումը նույնպես ՓՄՁ զարգացման պետական քաղաքականության կարևոր ուղղություն է համարվում: 2010թ. միայն Deutsche Ausgleichsbank և Kreditanstalt für Wiederaufbau-ի կողմից ավելի քան 12 մլրդ. եվրո հատկացվել է պետական վարկային երաշխիքների տրամադրմանը: Հոլանդիայում մասնատիպ ծրագրի իրականացման համար տարեկան պետական բյուջեից հատկացվում է 450 մլն. եվրո: Յուրաքանչյուր տարի երաշխիքների տրամադրման համար հատկացված գումարներից օգտագործվում է 95%-ը: Նշված երկրներում վարկային երաշխիքների ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի վերադարձելիությունը կազմում է միջին հաշվով 90-95%: Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ սկզբնական փուլում այդ ծրագրերի շրջանակներում տրամադրվող վարկերի չվերադարձելիության տոկոսը հասնում է 20-25-ի, որը ժամանակի ընթացքում նվազում է:

Մի շարք երկրներում, որոնցից են Ճապոնիան, Գերմանիան, ԱՄՆ, Եվրամիության երկրները, ուր պետության կողմից ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող ֆինանսական և ներդրումային աջակցությունը ունի տասնամյակների փորձ, վարկային երաշխիքների տրամադրման հետ մեկտեղ առանձնակի կարևորվում է նաև վենչուրային ֆինանսավորումը: Այսպես, 2010թ. Եվրոպայի երկրներում տարբեր ծրագրերում ներդրված վենչուրային կապիտալի ծավալը հասել է 58 մլրդ. ԱՄՆ դոլարի, իսկ ԱՄՆ-ում այս ցուցանիշը փոքր-ինչ գերազանցել է 65 մլրդ.-ը: Միայն Գերմանիայում 2010թ. վենչուրային ֆինանսավորման ձևով շուրջ 700 մլն. եվրո ներդրվել է 2000 ՓՄՁ-ներում, որոնցից 900-ը՝ սկսնակ էին: Բազմաթիվ ֆիրմաներին հաջողվել է շեշտակիորեն ավելացնել իրենց ակտիվները վենչուրային ֆինանսավորման շնորհիվ: Ակնառու օրինակներից մեկը, դա «ԴԵԿ»-ն է («Ինջիթը Էքվիպմենտ կորպորեյշն»), երբ 1957թ. 70 հազար ԱՄՆ դոլար ներդրվեց այդ ընկերություն վենչուրային կապիտալի ձևով, որի շնորհիվ արդեն 1971թ. ձեռնարկության ակտիվների ընդհանուր գումարը գնահատվում էր 355 մլն. ԱՄՆ դոլար: Մյուս օրինակը, դա «Էփլ կոմպյուտեր ինկ.»-ն է, երբ 1975թ. ձեռքբերված 1.5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք բաժնեմասը 1978թ. ավելացավ և կազմեց 100 մլն. ԱՄՆ դոլար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք երկրներում պետության կողմից իրականացվում են վարկային տոկոսադրույքի սուբսիդավորման փորձնական ծրագրեր (օրինակ, Նիդերլանդներում, Չեխիայում), իսկ, օրինակ, Ֆրանսիան, իրականացնում է հատուկ պետական քաղաքականություն, ուղղված վարկավորման տոկոսադրույքի սուբսիդավորմանը: Մակայն այս պրակտիկան աշխարհում լայն կիրառում չի ստացել: Այսպես, Ֆրան-

սիայում նման քաղաքականությունը չունեցավ նշանակալի արդյունքներ և չնպաստեց ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական միջոցներից օգտվելու մատչելիության ապահովմանը: Նման մեխանիզմի կիրառումը կորցրեց իր արդիականությունը, մասամբ այն պատճառով, որ այն չունեցավ անհրաժեշտ ազդեցություն վարկային միջոցների սկզբնական ռիսկի նվազեցման վրա: Այդ իսկ պատճառով Ֆրանսիայի կառավարությունը սկսեց առավելապես կենտրոնանալ ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխիքների տրամադրման մեխանիզմների մշակման և կիրառման ուղղությամբ, սերտորեն համագործակցելով բանկերի և վենչուրային հիմնադրամների հետ:

Գրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ այնպիսի զարգացած երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Գերմանիան, Ճապոնիան, Ֆրանսիան, ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական աջակցության պետական ծրագրերի իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի կորուստներ: Օրինակ, ԱՄՆ-ում 70-ական թվականներին ուղիղ փոխառությունների ծրագրի շրջանակներում ՓՄՁ-ները չկարողացան վերադարձնել 0.5 մլրդ. դոլար գումարի վարկեր, ինչը կազմում էր դրանց ընդհանուր գումարի 25%: Պետական բյուջեի կորուստները երաշխավորված վարկերի վրա դեռ ավելի բարձր են (երաշխավորված փոխառությունների ընդհանուր գումարի 8-10%): Իսկ Գերմանիայում պետության կողմից իրականացվող ֆինանսական աջակցության ծրագրերը համարվում են հաջողված, եթե միջին հաշվով աջակցություն ստացած 10 ՓՄՁ-ներից 4-ը հասնում են դրական արդյունքի:

Սակայն, միջազգային փորձը ցույց է տալիս, որ նման կորուստները արդարացված են, քանի որ զարգացած ՓՄՁ ոլորտը հնարավորություն է տալիս փոխհատուցել այդ կորուստները զգալի թվով նոր աշխատատեղերի ստեղծմամբ, բնակչության կենսամակարդակի բարձրացմամբ և երկրի տնտեսական աճի ապահովմամբ:

ԱՐՄԱՆ ԴԱՎԹՅԱՆ

*ՆԿԳԱԱ Մ. Զոթանյանի անվան
իրավաբանության ինստիտուտի հայցորդ*

ՓՈՔՐ, ՄԻՋԻՆ ԵՎ ԽՈՇՈՐ ԶԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԶԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Զարգացած երկրների տնտեսություններում փոքր և միջին ձեռնարկությունները ոչ միայն ընդգրկված են խոշոր ձեռնարկությունների կոռպորացիոն համակարգում, այլև հանդիսանում են խոշոր ձեռնարկությունների արտադրական կառուցվածքի անբաժանելի մասը: Խոշոր ձեռնարկություններն օգտագործում են փոքր և միջին ձեռնարկությունների շուկայական և կառուցվածքային ճկունությունը, նրանց ինովացիոն հնարավորությունները, նրանք շահագրգռված են համագործակցելու փոքր և միջին ձեռնարկությունների հետ, որովհետև նման համագործակցությունը աջակցում է նոր տեխնիկական որոշումների փնտրման և իրականացման գործում, օգնում է թափանցել վաճառքի նոր շուկաներ և ձեռք բերել անհրաժեշտ ինֆորմացիա: Բացի այդ, այդպիսի համագործակցությունը «փոքր գործընկերների» հետ թույլ է տալիս դիմել ռիսկի այս կամ այն գործում: Փոքր, միջին և խոշոր ձեռնարկությունների զուգակցումը հնարավորություն կտա որոշակի աստիճանով չեզոքացնելու վերջիններիս գործունեության վրա պետական քաղաքականության ազդեցության թերությունները: Այս տիպի կոռպորացիաների զարգացումն այդ քաղաքականության հիմնական օբյեկտին և սուբյեկտին դարձնում է գործնական շրջանակներ՝ պետությանը թողնելով ընդհանուր տնտեսավարման պայմանների ստեղծման ֆունկցիան:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ ՓՄՁ-ները նպաստում են խոշոր ձեռնարկությունների հնարավորությունների ընդլայնմանը՝ իրենց վրա վերցնելով խոշոր ձեռնարկությունների որոշ

արտադրական փուլեր՝ այսինքն, իրականացնելով խոշոր ձեռնարկությունների պատվերները, առավել շահութաբեր են դարձնում խոշոր արտադրություններն ու ճկունություն հաղորդում վերջիններիս: Ի տարբերություն խոշոր ձեռնարկությունների, որոնց համար պահանջվում է կայուն և շարունակական պահանջարկով ընդգրկուն շուկա, միջազգային ստանդարտներին համապատասխանող զանգվածային արտադրության արտադրանք, որոշակի ֆինանսական միջոցների համախմբում և էժան աշխատուժ, ՓՄՁ-ները նրանց նկատմամբ ունեն մի շարք առավելություններ կառավարման առումով: Այն է՝ խիստ հիերարխիայի բացակայություն, հաղորդակցման պարզություն և նպատակների արագ ճշգրտման հնարավորություն: Այդ պատճառով արտադրված ապրանքների կամ մատուցված ծառայությունների բարձր որակի պայմաններում ՓՄՁ-ների կողմից թողարկված արտադրանքի ինքնարժեքը ցածր է, քան խոշոր ձեռնարկություններում: Բացի դրանից, ՓՄՁ-ները իրենց վրա են վերցնում (իրենց հաշվին կամ խոշոր ձեռնարկությունների կողմից մասնակի ֆինանսավորման պայմաններում) որոշակի ռիսկի գործոնը և իրենց ուժերը կենտրոնացնում առկա արտադրանքի նորացման և նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ, քանի որ այլընտրանք չունեն շուկայական տնտեսության ընձեռած դաժան մրցակցությանը դիմանալու համար, այն դեպքում, երբ արտադրանքի արտադրությունը և իրացումը, որպես կանոն, պահանջում է հսկայական կապիտալ ներդրումներ, արտադրական հզորություններ և բազմապիսի այլ ռեսուրսներ, որոնք հասու են միայն խոշոր ձեռնարկություններին: Հենց այդ պատճառներից ելնելով էլ խոշոր ձեռնարկությունները իրենց կազմում ստեղծում են տարբեր փոքր և միջին ձեռնարկություններ և սկսում բուռն կերպով համագործակցել նրանց հետ:

ՓՄՁ-ների փոխհարաբերություններն իրենց «մեծ գործընկերների», այսինքն՝ խոշոր ձեռնարկությունների հետ կազմում են մի համակարգ, որն իր մեջ ներառում է ենթակապալը, լիզինգը, ֆրանչայզինգը, աութսորսինգը, դուստր ձեռնարկությունների ստեղծումը, վենչուրային բիզնեսը, «բիզնես-ինկուբատորների» ստեղծումը և այլն:

Ենթակապալի ասպարեզում փոքր և միջին ձեռնարկությունները խոշոր ձեռնարկությունների հետ աշխատանքի տեխնիկական բաժանում են իրականացնում և դրանով ապահովում տնտեսվարման բարձր արդյունավետություն: Այս դեպքում խոշոր ձեռնարկությունները ՓՄՁ-ներին ներկայացնում են որպես ենթակապալառու՝ ապահովելով նրանց արտադրության համար անհրաժեշտ բոլոր պայմաններով և պարագաներով, նաև թույլ է տալիս նրանց օգտագործել իրենց ապրանքանիշը: Այս միջոցը թույլ է տալիս խոշոր ձեռնարկություններին ազատվել արտադրական ծախսերից և իր ջանքերը կենտրոնացնել ավելի կարևոր խնդիրների լուծման վրա: Փոքր և միջին ու խոշոր ձեռնարկությունների համագործակցության այս ձևը նպաստել է մի շարք զարգացած երկրների՝ Ճապոնիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, արդյունաբերական աճին: Մեր երկրում խոշոր ձեռնարկությունների ճնշող մասն օգտվում է ՓՄՁ-ների հետ համագործակցության հենց այս ձևից, որը թույլ է տալիս ապահովել աշխատանքի հուսալիության բարձր մակարդակ:

Լիզինգը ևս փոքր և միջին ու խոշոր ձեռնարկությունների զուգակցման ձև է: Այս բառն ունի անգլիական ծագում և նշանակում է վարձակալության վերցնել: Վերջինիս կիրառումը մեծ առավելություններ է տալիս, քանզի լիզինգի պայմաններով սարքավորումներ ստանալիս արտադրության կազմակերպման կամ վերակառուցման ժամանակ մեծ ներդրումների կարիք չի զգացվում: Լիզինգը ձեռնտու է նրանով, որ հնարավորություն է ընձեռում ՓՄՁ-ներին ձեռք բերել ժամանակակից սարքավորումներ՝ առանց մեծ և միանվագ ծախսեր կատարելու: Միաժամանակ խոշոր ձեռնարկություններին՝ լիզինգային ընկերություններին, ապահովում է վարկերի վերադարձման երաշխիք և կայուն ու երկարաժամկետ հարաբերություններ գործընկեր ՓՄՁ-ների հետ: Չարգացած երկրներում ֆինանսավորման այս տեսակը ներկայացնում է տեղական ներդրումների 30-40%, իսկ զարգացող երկրներում՝ 5-15%: Հայաստանի համար զուգակցման այս ձևն աչքի է ընկնում իր առանձնահատկություններով, լիզինգի միջոցով ՓՄՁ-ները հնարավորություն են ստանում միջին և երկարաժամկետ ֆինանսավորում ունենալու՝ այդպիսով խթանելով երկրի տնտեսական զարգացմանը:

Ֆրանչայզինգը ևս փոքր և միջին ու խոշոր ձեռնարկությունների համագործակցության մի ձև է: Դրա էությունը կայանում է նրանում, որ սպառողներին բավականին հայտնի ընկերությունը պայմանագիր է կնքում փոքր կամ միջին ձեռնարկության հետ (սովորաբար հենց այդ նպատակով ստեղծված)՝ նրան որոշակի ապրանքների արտադրության և սպառման բացառիկ իրավունքներ տրամադրելու նպատակով, ինչպես նաև որևէ շուկայում տվյալ ընկերության ապրանքային նշանի ներքո ծառայություններ մատուցելու վերաբերյալ: Կնքելով պայմանագիրը և ստանձնելով ստանդարտների պահպանումը՝ ֆրանչայզինգ՝ այսինքն՝ փոքր և միջին ձեռնարկությունը, փոխարենը ստանում է «ծնողական» ֆիրմայի՝ այսինքն՝ խոշոր ձեռնարկության, կողմից նշանակալից աջակցություն ձեռնարկության զարգացման համար անհրաժեշտ բոլոր պայմանների ուղղությամբ: Չուգակցման այս ձևն արդյունավետ է հատկապես նոր ստեղծվող փոքր և միջին ձեռնարկությունների համար, քանի որ ֆրանչայզերի կողմից արդեն հեղինակությունը «ձեռք բերված» է, գովազդի համար համարյա պետք չէ միջոցներ ծախսել, սպառողն արդեն ծանոթ է ապրանքանիշին: Հայաստանում ևս, մասնավորապես վերջին տարիներին, լայն տարածում ստացավ ֆրանչայզինգը ինչպես արտադրության, այնպես էլ ծառայությունների մատուցման ոլորտներում:

Ելնելով ենթակապալի, լիզինգի և ֆրանչայզինգի համակարգից՝ խոշոր ձեռնարկություններն իրենց շուրջ ձևավորում են միջֆիրմային կապերի ցանց՝ ակտիվորեն ներքաշելով նրանում փոքր և միջին ձեռնարկություններին:

Վեճուրային քիզնեսը հիմնականում հիմնված է գիտատեխնիկական ծրագրերի իրագործման վրա: Խոշոր ձեռնարկությունները, որոնք հետաքրքրված են արտադրության արդյունավետությունը բարձրացնող գիտական մշակումներով, նոր տեխնոլոգիաներով, ինովացիաներով, կարող են դառնալ գիտական-նախագծային աշխատանքներ իրականացնող փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման հիմնական աղբյուրը: Վերոնշյալ գաղափարի իրագործման ձևերը կարող են լինել տարբեր՝ վարկավորումը կարող է անցկացվել ոչ ուղիղ ձևով, այլ հատուկ ստեղծված վեճուրային ֆոնդերի միջոցով: Այդպիսի ֆոնդերը հեշտ են կորորդինացնում ինովացիոն ծրագրերի աշխատանքները, սակայն խոշոր ձեռնարկության առաջարկած միտքը դրանից համարյա չի փոխվում: Նման ձևով մինիմալացվում է ռիսկը՝ իջեցնելով գիտատեխնիկական հետազոտությունների մշակման ծախսերը, հնարավորություն տալով ընտրել ավելի հեռանկարային ճյուղեր: Վեճուրային ընկերությունների՝ փոքր և միջին ձեռնարկությունների, ստեղծումը, որոնք զբաղվում են գիտատեխնիկական հետազոտություններով, նորամուծությունների ստեղծմամբ և ներդրմամբ, նույնպես հանդիսանում է, փոքր և միջին ու խոշոր ձեռնարկությունների զուգակցման տարածված ձևերից մեկը: Վեճուրային քիզնեսը հնարավորություն է տալիս այսօրվա փոքր ռիսկի հաշվին ապագայում մեծ շահույթ ստանալ: Ներկայումս զուգակցման այս ձևը Հայաստանում այնքան էլ տարածված բնույթ չի կրում:

Դուստր ընկերությունների ստեղծումը հանդիսանում է փոքր և միջին ու խոշոր ձեռնարկությունների զուգակցման յուրահատուկ ձև: Այս դեպքում խոշոր ձեռնարկությունը ներդրում է կատարում փոքր և միջին ձեռնարկության կապիտալում: Սակայն ստեղծված դուստր ձեռնարկությունը պատասխանատվություն չի կրում խոշոր ձեռնարկության պարտքերի համար, իսկ խոշոր ձեռնարկությունը իրավունք ունի հրամաններ տալու դուստր ձեռնարկությանը և նրա հետ համապարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումների համաձայն կնքված պայմանագրերի կատարման համար: Դուստր ձեռնարկության մասնակիցներն իրենց իրավունքով կարող են խոշոր ձեռնարկությունից պահանջել վերջինիս մեղքով դուստր ձեռնարկությանը պատճառված վնասների փոխհատուցում: Եթե խոշոր ձեռնարկության պարտադիր ցուցումների կատարումը դուստր ձեռնարկությանը հանգեցնում է սնկկացման, ապա խոշոր ձեռնարկությունը սուբսիդիար պատասխանատվություն է կրում նրա պարտքերի համար: Այժմ Հայաստանում գրանցված են ավելի քան 1000 դուստր ձեռնարկություններ: Խոշոր ձեռնարկությունները, հիմնվելով իրենց իրավունքների վրա, ձեռնարկության գործունեության դիվերսիֆիկացման, կապիտալի ծավալի ընդլայնման և սեփական արտադրության արդյու-

նավետության բարձրացման համար ստեղծում են այլ փոքր դուստր ձեռնարկություններ՝ դրանով թեթևացնելով հարկային բեռը:

Աուքսոսինգը ներկայիս շուկայական տնտեսությունում փոքր և միջին ու խոշոր ձեռնարկությունների զուգակցման ձևերից է դարձել: Աուքսոսինգը կազմակերպչական որոշում է ձեռնարկության որոշակի բիզնես-ֆունկցիաների կամ բիզնես-պրոցեսների կողմնակի կապալառուին փոխանցման մասին: Աուքսոսինգի էությունը իրենից ներկայացնում է հետևյալը, երբ խոշոր ձեռնարկությունը «իրեն է պահում» արտադրության այն պրոցեսները, որոնք նա կարող է ավելի լավ կատարել, իսկ փոքր և միջին ձեռնարկություններին է տալիս այն պրոցեսները, ինչը որ նրանք են ավելի լավ իրականացնում: Ներկայումս աուքսոսինգը լայն կիրառություն ունի զարգացած երկրների, ինչպես նաև Հայաստանի տնտեսության բոլոր ճյուղերում:

Բիզնես-ինկուբատորների շրջանակում փոքր և միջին ձեռնարկությունները խոշոր ձեռնարկությունների հետ ավելի մոտ կարգավիճակով են գործում: Այստեղ խոշոր ձեռնարկությունները ինովացիոն փոքր և միջին ձեռնարկություններին ավելի մեծ չափով են վերահսկում՝ օգտագործելով տարբեր կազմակերպարավական ձևեր: Գոյություն ունի խոշոր ձեռնարկությունների և «բիզնես-ինկուբատորների» կապերի երեք տարբերակ: *Առաջին* տարբերակն այն է, որ կոոպերացիան ամբողջովին տիրում է «ինկուբատորին»՝ նրա եկամուտներով հանդերձ: *Երկրորդը*՝ «ինկուբատորի» հետ համատեղ վեճաբանական ձեռնարկության ստեղծում, երբ կոոպերացիան ֆինանսավորում է միայն «ինկուբատորի» ստեղծումը՝ որակելով նրա գործունեության մի քանի ծախսեր: *Երրորդը*՝ լիցենզիոն համաձայնություն, որի հիման վրա իրավունք է տալիս «ինկուբատորին» «աճեցնել» նոր ֆիրմաներ ֆիրմային արտադրանքների և ծառայությունների արտադրության և վաճառքի համար:

Կան նաև ավելի «համարձակ» ՓՄՁ-ներ, որոնք ուղղակիորեն մրցակցում են խոշոր ձեռնարկությունների հետ: Այս կարգի ՓՄՁ-ներին հաճախ դա հաջողվում է, երբ նրանց արտադրանքը կամ ծառայությունը աչքի է ընկնում իր յուրահատկությամբ, նորարարական այս կամ այն մշակման ներդրմամբ: ՓՄՁ-ների մեկ այլ խումբ ընդհակառակը, «պտտվում» է խոշոր ֆիրմաների ուղեծրում՝ հանդես գալով՝ որպես խոշոր ֆիրմայի մատակարար, ենթակապալառու, դիստրիբյուտոր: Փոխգործակցության մեծ համակարգը բնորոշ է այնպիսի ճյուղերին, ինչպիսիք են մեքենաշինությունը, էլեկտրոնիկան, էլեկտրատեխնիկան ու համակարգիչների արտադրությունը: Բնականաբար, այդպիսի տանդեմները խոշոր ֆիրմաների հետ շահավետ են «փոքր» գործընկերոջ համար՝ որպես իրացման երաշխավորված և կայուն շուկա: Մակայն այդ կապերի խզման դեպքում ՓՄՁ-ները, չունենալով այլ խոշոր պատվիրատ, կարող են անմիջապես սնանկանալ:

Փոքր և միջին ձեռնարկությունները շուկայական տնտեսության «հզորների», այսինքն՝ խոշոր ձեռնարկությունների, նկատմամբ ունեն մի շարք մրցակցային առավելություններ: Դրանցից ամենակարևորը ՓՄՁ-ների ճկունությունն ու հարմարվողականությունն է, առանց որի ժամանակակից բիզնեսը դատապարտված է ձախողման: Բացի այդ ՓՄՁ սուբյեկտները ավելի «մոտ» են իրենց սպառողներին, քան խոշորները, իսկ ծառայություններ ու ապրանքներ արտադրողների և դրանց հաճախորդների միջև հեռավորության կրճատումը հսկայական նշանակություն ունի ժամանակակից բիզնեսում:

ՓՄՁ-ները մրցակցային դաշտում ունեն ոչ միայն ուժեղ, այլ նաև թույլ կողմեր: Դրանք նախ և առաջ արտահայտվում են նրանում, որ ֆինանսական միջոցների սղության պատճառով ՓՄՁ-ները ավելի հաճախ են դիմում վարկային կապիտալի ներգրավմանը: ՓՄՁ-ների մասնակցությունը մրցակցային պայքարին բարդանում է նաև այն պատճառով, որ նրանք չեն կարող ապրանքների ու ծառայությունների մատուցման որոշակի բնագավառում գնային քաղաքականություն ձևավորողի դեր կատարել, և ստիպված են հաճախ միայն հարմարվել խոշոր ձեռնարկությունների գնային քաղաքականությանը: Այդ պատճառով ՓՄՁ-ները ձգտում են մշտապես բացառել արտադրության ընթացքում իրենց թերացումները, որպեսզի չպարտվեն գնային մրցակցության ժամանակ, քանի որ նույնիսկ կարճ ժամանակով նրանք

չեն կարող կազմակերպել ինքնարժեքից ցածր վաճառք (մի բան, որ հաճախ են անում խոշոր ֆիրմաները՝ մրցակցային պայքարում շուկայի նոր սահմանագծեր գրավելու կամ մրցակիցներին խեղճացնելու համար): ՓՄՁ-ների համար մյուս, ավելի արդյունավետ ուղին ոչ գնային մրցակցության գործոնի խաղարկումն է: Այն ենթադրում է սպառողների գրավում արտադրատեսակների և ծառայությունների ավելի բարձր որակով ու վստահելիությամբ, դրանց արտաքին տեսքով, փաթեթավորման դիզայնով, երաշխիքային սպասարկման ավելի երկար ժամանակով, հարակից այլ ծառայություններով:

Դիտարկելով ՓՄՁ-ները՝ անհրաժեշտ է հաշվի առնել վերջիններիս պոտենցիալ առավելություններն ու թույլ կողմերը, որոնցից են՝ միջոցների արդյունավետ օգտագործումն ապահովող գործոնները, կառուցվածքային փոփոխություններն ու արտաքին բացասական ազդակները, ինովացիաները, ֆինանսավորումը և օրենսդրական բազայի պահանջների բավարարման հետ կապված խնդիրները:

Միջոցների արդյունավետ օգտագործումն ապահովող գործոններ: ՓՄՁ-ները ընդհանուր առմամբ զիջում են խոշոր ձեռնարկություններին, քանի որ խոշոր ձեռնարկություններում արտադրության ծավալների մեծացման դեպքում իջնում է արտադրանքի ինքնարժեքը: Սակայն անցումային տնտեսությամբ երկրներում հիմնական միջոցների մաշվածությունը խոշոր ձեռնարկությունների մեծ մասում հանգեցնում է հումքի ու էներգիայի գերծախսի և ընդհանուր կորուստների ավելացմանը: Ապրանքափոխադրման հետ կապված դժվարությունները (ինչպես, օրինակ՝ Հայաստանի դեպքում) նույնպես իր բացասական ազդեցությունն է ունենում ինքնարժեքի վրա: Հակառակ դրան վերոհիշյալ երկրներում ՓՄՁ-ները ի վիճակի են զգալիորեն նվազեցնել այդ կորուստները: Ավելին, քանի որ ՓՄՁ-ները առավելագույնս օգտագործում են տեղական ռեսուրսները և առաջին հերթին ուղղված են դեպի տեղական շուկաներ, փոխադրման ծախսերը նույնպես էապես կրճատվում են: ՓՄՁ նման հատկանիշները կարող են հավասարակշռել կամ անգամ գերակշռել արտադրության ծավալների մեծացմամբ պայմանավորված խոշոր ձեռնարկությունների առավելությունը:

Կառուցվածքային փոփոխությունները ու արտաքին բացասական ազդակներ: Դիմակայելու համար արտաքին տնտեսական, ինչպես նաև, ներքաղաքական պայմանների փոփոխմանը և ապահովելու համար ձեռնարկության հետագա արդյունավետ գործունեությունը, հաճախ անհրաժեշտ է լինում էապես փոխել ձեռնարկության կառուցվածքը և արտադրանքի տեսականին: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ շնորհիվ համեմատաբար պարզ կառուցվածքի և կառավարման համակարգի, ՓՄՁ-ները լավագույն ձևով են հարմարվում և դիմակայում այնպիսի արտաքին բացասական ազդակների, ինչպիսիք են էներգետիկ, ֆինանսական ճգնաժամերը, տնտեսական շրջափակումը և այլն: Արտադրական ծրագրի և գործընթացի մեջ արագ փոփոխություններ կատարելու և միաժամանակ մի քանի գործունեություն իրականացնելու հատկությունը թերևս ՓՄՁ-ների անվիճելի առավելություններից է: Նման որակը բարձրացնում է նաև ՓՄՁ-ների մրցունակությունը շուկայում:

Ինովացիաներ: ՓՄՁ-ների առավելությունն ինովացիաների և բարձր տեխնոլոգիաների բնագավառում, հատկապես, ակնառու է արտադրական ցիկլի վաղ փուլերում, երբ ինովացիաներն ու բարձր մասնագիտական հմտությունների կարիքը առանձնակիորեն կարևորվում է, և երբ խոշոր ընկերությունները զբաղեցնում են տվյալ շուկայի հիմնական մասը: Սակայն, այստեղ ինովացիաների և բարձր տեխնոլոգիաների թանկության և լրացուցիչ ներդրումների անհրաժեշտության, ինչպես նաև համապատասխան տեղեկատվության անմատչելիության պատճառով, ՓՄՁ-ներում վերջիններիս ներդրումը մեծապես դժվարանում է: Այս բնագավառում համապատասխան միջոցառումները կարող են բարձրացնել հավելյալ արժեք պարունակող ապրանքների մասնաբաժինը ընդհանուր ապրանքային զանգվածի մեջ, ինչն առավել կարևոր է՝ բարձրացնելու համար հայրենական արտադրանքի մրցունակությունը ինչպես տեղական, այնպես էլ արտաքին շուկաներում:

Ֆինանսավորման ծախսեր: Խոշոր ձեռնարկությունների համեմատ, ՓՄՁ-ների համար ֆինանսական միջոցների ներգրավումը ավելի դժվար է, որը պայմանավորված է վարկերի

բարձր տոկոսադրույքների ու կարճաժամկետության, ինչպես նաև իրացվելի գրավ տրամադրելու պահանջի հետ: Հաշվի առնելով արդյունաբերության ներկա վիճակը, երբ արտադրությունների մեծ մասը պարասպորտի են մատնված, կամ էլ աշխատում են զգալի թերթեռնվածությամբ, դրանցից շատերը գտնվում են ֆինանսական ծանր վիճակում, ակնհայտ է, որ արդյունաբերության վերակառուցման ու զարգացման համար անհրաժեշտ են հսկայական ֆինանսական միջոցներ: Հայաստանն այսօր չի տնօրինում այդպիսի միջոցների, սակայն ձգտում է ներգրավել արտաքին աղբյուրներից ինչպես վարկերի, այնպես էլ դրամաշնորհների ձևով՝ ՓՄՁ-ների, ինչպես նոր ստեղծվող, այնպես էլ արդեն գործողների ֆինանսավորումը անհամեմատ ավելի մեծացնելու նպատակով:

Օրենսդրական բազայի պահանջների բավարարման հետ կապված խնդիրներ: Օրենսդրական բազայի պահանջներին բավարարելու հետ կապված հարցերը, մասնավորապես հարկային և այլ պետական կարգավորիչ օրենսդրությունների պահանջները ՓՄՁ սուբյեկտների գործունեության ժամանակ համեմատաբար զգալի բարդություններ են առաջացնում: Այս հիմնախնդիրը ակնառու է հատկապես արտահանման/ներմուծման գործունեություն իրականացնելիս: Այստեղ պահանջվում է պետական հատուկ ռազմավարություն, որի վերջնական նպատակը պետք է լինի հնարավորին չափ պարզեցնել գործող կարգավորիչ նորմատիվային դաշտը ՓՄՁ ոլորտի համար: Նման մոտեցումների կիրառումը հուժկու խթան կհանդիսանա հայրենական ՓՄՁ-ներին միջազգային շուկա դուրս բերելու համար:

Ազգային տնտեսության հնարավորությունների արդյունավետ օգտագործումը կախված է փոքր, միջին և խոշոր ձեռնարկատիրության ռացիոնալ կազմակերպումից: Փոքր, միջին և խոշոր ձեռնարկությունների զուգակցման գործում մեծ դեր է խաղում պետությունը, որն արտոնություններ տալով ՓՄՁ-ներին՝ դարձնելով այն գրավիչ խոշոր ձեռնարկությունների համար, դրանց ընձեռում է պատվերներ ստանալու անհամեմատ մեծ հնարավորություն, քանի որ այն խոշոր ձեռնարկություններին հնարավորություն է տալիս կրճատել ծախսերը: Շատ փոքր և միջին ձեռնարկություններ չեն կարողանում դիմակայել արտադրության բնագավառում առանց խոշոր ձեռնարկությունների պատվերների: Խոշոր ձեռնարկությունների պատվերները կատարող փոքր և միջին ձեռնարկություններն արդեն որոշակի առավելություն ունեն իրենց մրցակիցների նկատմամբ, քանի որ նրանք արտադրանքի իրացման խնդիր չունեն և այդ ուղղությամբ լրացուցիչ ծախսեր չեն կատարում: Փոքր, միջին և խոշոր ձեռնարկությունների զուգակցումը շատ բանով կախված է նաև տեղական իշխանություններից և ոչ պետական կազմակերպություններից (միություն, ասոցիացիա և այլն), որոնք կոորդինացնում են խոշոր, միջին և փոքր ձեռնարկությունների առանձին խմբերի աշխատանքները:

Ելնելով վերոնշյալից՝ հստակ կարելի է ասել, որ փոքր և միջին ու խոշոր ձեռնարկությունների զուգակցումը կարևոր դեր է խաղում ցանկացած երկրի տնտեսության զարգացման գործում, քանի որ զուգակցման հետևանքով ՓՄՁ-ների համար լուծվում են մի շարք խնդիրներ, որոնք նրանց ապահովում են կայուն եկամուտներով և դրա հետևանքով ստեղծվում են աշխատատեղեր, որն էլ նպաստում է երկրում միջին խավի ձևավորմանը:

ՍԵՐՈՒՆԱԿ ԴԱՁԱՐՅԱՆ

*ՄԳ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտության գծով փոխարևորեն, ր. գ. դ., պրոֆեսոր*

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՁԱՐՅԱՆ

*ՄԳ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, ր. գ. դ., պրոֆեսոր*

ԼԻԱՆԱ ԱՋԱՏՅԱՆ

*ՄԳ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության ագրարային հատվածում կառավարության կողմից վարվող քաղաքականությունը 2010-2020թթ. կնպատակաուղղվի գյուղատնտեսության և նրան սպասարկող կառույցների, գյուղմթերքների իրացման ու վերամշակման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը, և դրա հիման վրա նպաստավոր պայմաններ կստեղծվեն ագրոպարենային ոլորտի հետագա զարգացման ու ընդլայնված վերարտադրության կազմակերպման, տնտեսավարող սուբյեկտներում աշխատանքի արտադրողականության բարձրացման, իրական եկամուտների ավելացման, հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման, ինչպես նաև անտառային տնտեսության պահպանության, պաշտպանության և վերարտադրության համալիր միջոցառումների իրականացման համար:

Առաջին հերթին նախատեսվում է խորացնել ագրարային հատվածի բարեփոխումները, որոնք ուղղված կլինեն հետևյալ խնդիրների լուծմանը.

- պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև իրավահարաբերությունների ներդաշնակեցում և համապատասխան իրավական դաշտի ձևավորում,
- տեղական արտադրողների շահերի պաշտպանության միջոցով տնտեսավարող սուբյեկտների համար առավել նպաստավոր տնտեսական պայմանների ստեղծում և մրցունակության բարձրացում,
- գյուղատնտեսության սպասարկող և արտադրական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացում,
- գիտակրթական, տեղեկատվական ու մասնագիտական խորհրդատվական համակարգի ուժեղացում, բարելավման մեխանիզմների ներդրում,
- գյուղատնտեսական արտադրության գործընթացներում արդյունավետ տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն:

Գյուղատնտեսության էքստենսիվ վարման ռեսուրսներն աստիճանաբար պակասելու են. այդ պատճառով միջնաժամկետ հեռանկարում անցում կկատարվի ինտենսիվ զարգացմանը: Իրենց չափերով փոքր գյուղացիական տնտեսությունները որոշակի ժամանակամիջոցում դեռևս կմնան գյուղատնտեսական արտադրության տնտեսավարման հիմնական ձևը, և ագրարային քաղաքականության հիմնական գերակայությունները կշարունակեն հանդիսանալ դրանց ապրանքայնության մակարդակի բարձրացումն ու աշխատանքի արտադրողականության աճը, ինչպես նաև փոխառու ֆինանսական միջոցների մատչելիության ապահովումը: Մոտ հեռանկարում պետական ագրարային քաղաքականությունն ուղղված կլինի նաև խոշոր առևտրային ձեռնարկությունների ձևավորման խրախուսմանը:

Գյուղատնտեսության ընդհանուր արդյունավետության աճը կապահովվի սպասարկող ոլորտների, մասնավորապես՝ ինտեգրացնող կառույցների, առաջնային վերամշակման ձեռնարկությունների, մատակարարող և իրացնող կոոպերատիվների ցանցի զարգացման խրախուսման միջոցով:

Արդյունավետության աճը ապահովող կարևոր գործոն կհանդիսանան պետական մեծածավալ ներդրումները արտադրական ենթակառուցվածքների, մասնավորապես՝ ոռոգման

(որոնք իրականացվում և շարունակելու են իրականացվել ոռոգման համակարգի նոր ինստիտուցիոնալ կառուցվածքի կայացմանն ու ամրապնդմանը զուգընթաց) և գյուղական ճանապարհների, ինչպես նաև այլ (հողերի բարելավում, մշակաբույսերի սելեկցիա և սերմնաբուծություն, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման խրախուսում, խորհրդատվական համակարգի զարգացում և այլն) ոլորտներում: Գյուղատնտեսական գործունեության հետ կապված բնական ռիսկերը կնվազեցվեն համապատասխան ենթակառուցվածքների (հակակարկտային կայաններ, հակահեղեղային միջոցառումներ և այլն) զարգացման և ապահովագրական համակարգի մշակման ու ներդրման միջոցով: 2010-2020թթ. գյուղատնտեսական արտադրության սուբսիդավորման արդյունավետ համակարգի շարունակական ներդրումը կնպաստի գյուղատնտեսական արտադրության օբյեկտիվորեն գոյություն ունեցող տարածքային տարբերությունների մեղմմանը և գործունեության համար հնարավորինս հավասար պայմանների ստեղծմանը, ինչպես նաև ազդեցություն կունենա գյուղացիական տնտեսությունների արտադրանքի կառուցվածքի վրա՝ խրախուսելով բարձր ավելացված արժեք ունեցող գյուղմթերքների արտադրությունն ու ապրանքայնությունը:

Գյուղական բնակավայրերում աշխատուժի առավել արդյունավետ օգտագործման, աշխատանքի արտադրողականության բարձրացման նպատակով, օժանդակություն կցուցաբերվի գյուղական բնակավայրերում ագրարային ոլորտի փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծմանը, օրգանական գյուղատնտեսության հնարավորությունների ընդլայնմանը, ագրոտուրիզմի և գյուղական բնակավայրերում զբաղվածություն ապահովող այլ ոլորտների զարգացմանը:

Խոշոր ապրանքային տնտեսությունների ստեղծմանը նպաստող ագրարային քաղաքականության արդյունքում քայլ առ քայլ կավելանա դրանց տեսակարար կշիռը գյուղատնտեսության ավելացված արժեքում, որը 2020թ. կհասնի մինչև 11,0%: Համապատասխանաբար, շուրջ 10%-ով կկրճատվի գյուղացիական տնտեսությունների քանակը, և տեղի կունենա աշխատուժի տեղաշարժ գյուղացիական տնտեսություններից դեպի խոշոր առևտրային տնտեսություններ: Այդ անցումը ապահովող քաղաքականության հիմնական բաղկացուցիչներն են՝ գործարար և ներդրումային միջավայրերի բարելավումը, գյուղատնտեսական հողերի գրավադրման արդյունավետ մեխանիզմների կիրառումը, հողի շուկայի ակտիվացումը և հողի վաճառքի ստվերային գործարքների ծավալների էական կրճատումը:

Գյուղատնտեսության զարգացման և արտադրության ինտենսիվացման հիմնական շարժիչ ուժերը կհանդիսանան գյուղմթերքների արտահանման առաջանցիկ աճը և պարենային ինքնաապահովման մակարդակի կտրուկ ավելացումը: Նախատեսվում է մինչև 2020թ. գյուղմթերքների արտահանման ծավալների անվանական դոլարային արտահայտությամբ աճ մոտ 12 անգամ՝ 2020թ. արտահանման տեսակարար կշիռը գյուղատնտեսության ավելացված արժեքում հասցնելով 12,0 տոկոսի: Ինչ վերաբերում է պարենային ինքնաապահովման մակարդակի աճին, ապա այն կիրականացվի ներմուծման փոխարինման տեսքով, նախատեսվում է կրճատել ներմուծվող գյուղմթերքների տեսակարար կշիռը:

Գյուղմթերքների արտահանման առաջանցիկ աճը և երկրի պարենային ինքնաապահովման մակարդակի ավելացումը կապահովվի ինչպես գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ու առևտրի հետագա ազատականացման, տեխնիկական արգելքների վերացման և տրանսպորտային ծախսերի կրճատման, այնպես էլ գյուղատնտեսության կայուն զարգացման ծրագրի իրականացման արդյունքում:

Հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործընթացը պահանջում է գործուն շուկայական մեխանիզմների և պետական կարգավորման գործառույթների միջև ռացիոնալ հաշվեկշռի ստեղծումն ու պահպանումը: Բնականոն տնտեսական զարգացումների շահերը պահանջում են ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման հետևողականություն, միջազգային փորձի և ազգային տնտեսության առանձնահատկությունների այնպիսի համադրում, որը բարենպաստ պայմաններ կապահովի օրենսդրական ու ներդրումային դաշտի բարելավման և տնտեսական աճի խթանման համար:

Ամփոփելով վերը բերված դատողությունները, կարելի է նշել, որ ուրվագծվել են գյուղատնտեսության հիմնական ճյուղերի հնարավոր զարգացումների շրջանակները: Ինտենսիվ ձևով կզարգանան ինչպես բուսաբուծությունն, այնպես էլ անասնաբուծությունը:

Բուսաբուծությունում նախատեսվում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացում և միավոր արտադրանքի հաշվով արտադրական ծախսերի կրճատում՝ ագրոտեխնիկայի առաջադիմական համակարգերի ներդրման և տեխնոլոգիական գործընթացների համալիր մեքենայացման միջոցով: Առաջնային է դառնում ցանքատարածությունների կառուցվածքի բարելավումը, որը թույլ կտա ավելացնել ստացվող եկամուտը միավոր տարածությունից:

Այս ճյուղի գլխավոր խնդիրներն են անհրաժեշտ տեսակներով հացահատիկի արտադրության ավելացումը, պահանջարկի հնարավոր առավելագույն չափով բավարարումը, ներմուծումների ծավալների նվազեցումը, հացահատիկային տնտեսությունների տեխնոլոգիական շղթայի նորացումը, որոնք համապատասխան փոփոխություններ կպահանջեն հացահատիկի արտադրության կառուցվածքում: Աստիճանաբար հնարավորություն է ստեղծվում սեփական արտադրության հաշվին լուծելու գյուղացիական տնտեսությունների հացահատիկային մշակաբույսերի բերքատվության բարձրացման, սորտաթարմացման և սերմապահովվածության խնդիրները:

Չարգացման մեծ հնարավորություններ ունեն բանջարաբուստանային, կարտոֆիլագործության, խաղողագործության, պտղաբուծության ճյուղերը:

Անասնապահության ճյուղի հետագա զարգացումը կապված է տոհմային գործի զարգացման, կերակրման և կենդանիների պահվածքի բարելավման հետ: Կերային բազան հանդիսանալով անասնաբուծության արդյունավետության բարձրացման կարևորագույն միջոց, պահանջում է արմատական բարելավում: Որքան լիարժեք է անասունների կերակրումը, այնքան բարձր է դրանց մթերատվությունը և ցածր՝ մթերքների ինքնարժեքը: Հետևապես պահանջվում է, որ յուրաքանչյուր տնտեսության անասունների առկա գլխաքանակի համեմատ, կերի բազան զարգանա ամենաբարձր տեմպերով: Ինտենսիվորեն կզարգանան տավարաբուծությունը, ոչխարաբուծությունը, խոզաբուծությունը, թռչնաբուծությունը և ձկնաբուծությունը:

Չնայած եղած դժվարություններին, ՀՀ մարզերում և մարզատարածքներում հողի շուկայի գոյությունը հողի մասնավոր սեփականության պայմաններում օբյեկտիվ անհրաժեշտություն է, և կան հիմքեր եզրակացնելու, որ մոտակա տարիներին այն կկայանա ու կաշխուժանա՝ գրավելով իր կայուն տեղը տնտեսական հարաբերությունների համակարգում, բխելով պետական, տեղական ինքնակառավարման, իրավաբանական, ֆիզիկական անձանց շահերից:

Գյուղատնտեսության ճյուղերի հեռանկարային կանխագուշակումն ընդգրկում և բնութագրում է այդ ոլորտի առանձին ճյուղերի զարգացման ընթացքը, հեռանկարային հաշվարկները, ծրագրային խնդիրները, բարեփոխումների առանձնահատկություններն ու հնարավորությունները: Յուրաքանչյուր ճյուղը հիմնականում միևնույն արտադրանքը թողարկող տնտեսությունների կամ ձեռնարկությունների ամբողջությունն է և, իր հարաբերական ինքնուրույնությամբ, այն ունի արտադրության կազմակերպման և կառավարման, ինչպես և տեխնոլոգիական որոշակի առանձնահատկություններ, որոնք ձևավորում են արտադրական, սոցիալական, տեխնիկական ճյուղային միջավայրն իր նպատակներով ու խնդիրներով:

Այսօր և՛ տնտեսագետները, և՛ ագրարային ոլորտի մասնագետները գտնում են, որ կարևոր հիմնախնդիրը գյուղացիական տնտեսությունների խոշորացումն է, որի ամենաիրատեսական ուղիներից մեկը հանդիսանում է կամավոր սկզբունքներով կոոպերատիվների ստեղծումը:

Ագրոպարենային համակարգի նորմալ զարգացումը հանրապետությունում էապես պայմանավորված է կոոպերացիայի ընդլայնմամբ, որն ինտեգրացված համակարգում միավորում է գյուղատնտեսական տարբեր ապրանք արտադրողներին հորիզոնական և ուղղահայաց սկզբունքով: Շուկայի պայմաններում կոոպերացիան կարող է կոորդինացնել տարբեր ֆունկցիաներ, ինչպես գյուղատնտեսական արտադրանքի արտադրության, այնպես էլ ագրոսերվիսի ոլորտում:

Կոոպերացիայի գաղափարի իրականացմանը չնպաստող պատճառներից են հանդիսանում գյուղատնտեսական արտադրանքի իրացման բարդությունները, գյուղտեխնիկայի, վառելիքի, թունաքիմիկատների, դեղերի, պարարտանյութերի և այլ նյութական ռեսուրսների բարձր գները: Դրանք արտադրության զարգացման հիմնական խոչընդոտներն են, որոնք ունեն գրեթե բոլոր ապրանք արտադրողները, անկախ ձեռնարկությունների սոցիալ-տնտեսական և

կազմակերպատենտային և ճեմարանի միջև կանգնած են միջնորդ մատակարարողը, իրացնողը և այլ սուբյեկտներ: Նման իրավիճակից դուրս գալու ելքը դարձյալ հանդիսանում են կոոպերատիվ կազմակերպությունները, որոնք զբաղվում են նյութատեխնիկական մատակարարման և սպասարկման հարցերով:

Հետևաբար, գյուղացիական տնտեսությունների արտադրության կազմակերպման կատարելագործման և արդյունավետության բարձրացման համար էական միջոց է հանդիսանում միջտնտեսական կոոպերացիայի զարգացումը: Այս տեսանկյունից գյուղատնտեսական կոոպերացիան կարելի է դիտարկել որպես կառավարման և արտադրության կազմակերպման կարևորագույն ֆունկցիա, որի դեպքում շուկայի տնտեսավարող սուբյեկտները համագործակցում են ինչպես գյուղատնտեսական արտադրության, այնպես էլ արտադրանքի վերամշակման և իրացման փոխկապակցված հետագա գործընթացում: Տնտեսական շահերի միասնության տեխնոլոգիական փոխկախվածությունը և կապիտալի ու արտադրության մյուս գործոնների փոխադարձ ինտեգրումը ներկայացնում են գյուղացիական տնտեսությունների միջև միջտնտեսական կոոպերացիայի գործընթացների խթանման տնտեսական հենքը և օբյեկտիվ նախադրյալները, որոնք ապահովում են արտադրության արդյունավետության բարձրացումը:

Ելնելով վերոնշյալից, նպատակահարմար ենք համարում հանրապետությունում կոոպերացիայի զարգացման հարցը քննարկել ՀՀ կառավարությունում, այդ մասին համապատասխան օրենք ընդունելու համար:

1991թ. հունվարի 22-ին ընդունված «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքը հիմնականում կատարել է իր պատմական միսիան: Անհրաժեշտ է ընդունել «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» նոր օրենք կամ դրանում լուրջ փոփոխություններ կատարել, որը կդառնա ուղենիշային հիմնական փաստաթուղթ, ուր կարտահայտվեն գյուղացիական տնտեսությունների ամրապնդման, խոշորացման, ապրանքային արտադրության կազմակերպման և նրա աճի, ինչպես նաև ագրոպարենային համակարգի մյուս կառույցների հետ նրանց փոխհամագործակցության ու արտադրության վերելքին խթանող այլ հիմնադրույթներ՝ շուկայական տնտեսության ձևավորման պայմաններում:

Գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների իրավական կարգավիճակը դեռևս այնքան էլ հստակեցված չէ: Գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացումը պահանջում է, որ օրենսդրական կարգով հստակեցվի գյուղատնտեսությունում տնտեսավարողների իրավական կարգավիճակը, մասնավորապես, որոշակի չափանիշներից ելնելով, սահմանվեն ընտանեկան տնտեսություն, գյուղացիական տնտեսություն, ֆերմերային (ագարակային) տնտեսություն և այլ կազմակերպական ձևերը:

Այս կապակցությամբ առաջարկվում է առաջիկայում անդրադառնալ հարցի քննարկմանը՝ կառավարության մակարդակով, ընդգրկելով ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն ու ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղացիական տնտեսություններում արտադրական սպասարկման կազմակերպման գործընթացն անմխիթար վիճակում է: Տեխնիկայի սեփականատերերը աշխատանքի համար թելադրում են իրենց կամքը, գյուղացին չի կարողանում հողամշակման ծախսերը վճարել, ստիպված տիրապետող է դառնում ձեռքի աշխատանքը: Համայնքներում չեն նկատվում գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ տնօրինման և օգտագործման միտումներ:

Առաջարկվում է գյուղացիական տնտեսություններում արտադրական սպասարկման և պարարտանյութերով, թունաքիմիկատներով ու այլ նյութական միջոցներով ապահովման խնդրի լուծման նպատակով, համայնքներում ստեղծել վճարովի ծառայություն կատարող կառույց: Պետության կողմից տարբեր ծրագրերով հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկան, պարարտանյութերը և այլն, տրամադրել ոչ թե առանձին անհատ հողագործներին, այլ համայնքներում ձևավորվող մասնագիտացված կազմակերպությանը՝ գյուղացիական և այլ տնտեսությունների օբյեկտիվ և հավասարաչափ սպասարկման համար:

Առաջարկում ենք աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման ոլորտում, նոր աշխատանքային ռեսուրսների ընդգրկման տեսանկյունից, կարևոր նշանակություն տալ ճկուն պայմանագրային համակարգերի կիրառմանը արտադրող-վերամշակող-սպառող ոլորտում: Այն գյուղացիական տնտեսություններին հնարավորություն կընձեռի ունենալ արտադրված մթերքի իրացման երաշխիք, կանխավճարներով լրացնել շրջանառու միջոցների սեզոնային, հատկապես գարնանային ժամանակահատվածի ճեղքվածքը:

Պայմանագրային հարաբերությունները շահեկան են նաև վերամշակող ձեռնարկությունների համար, քանի որ դրանով ոչ միայն ապահովվում է անհրաժեշտ չափի հումքի երաշխավորված քանակություն, այլև տվյալ ձեռնարկությունում աշխատող մարդկանց երկարաժամկետ զբաղվածություն:

Գյուղատնտեսության արտադրական գործոնների արդյունավետ օգտագործումը, բնակչության սոցիալ-տնտեսական ոլորտի կառավարումը և աղքատության հաղթահարումը պահանջում են բազմակողմանիորեն հիմնավորված մասնագիտացում և արտադրության ռացիոնալ տեղաբաշխում: Մարզերի գյուղատնտեսության մասնագիտացումը և գլխավոր ճյուղերը՝ համախառն արտադրանքի կտրվածքով, հանդիսանում են տավարաբուծությունը, ոչխարաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը, մասամբ ծխախոտագործությունը: Մարզերի հեռանկարային մասնագիտացումը նույնպես կընդգրկի մսակաթնային տավարաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը, ոչխարաբուծությունը, որոնց զարգացման հնարավորությունները մեծ են:

Մարզերում պետք է զարգանա գյուղատնտեսական հումքի վերամշակման համակարգը, որի գերակայություններն են.

- ա) արտադրական հզորությունների ընդլայնումը, տեսականու մեծացումը և արտադրանքի մրցակցության բարձրացումը,
- բ) շուկայահանման գործառույթների ակտիվացումը և արտահանման ծավալների ավելացումը,
- գ) որակի կառավարումը, ստանդարտացման չափանիշներին բավարարող համակարգի ներդրումը,
- դ) վերամշակող արտադրության ռացիոնալ տեղաբաշխումը, մարզերում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը,
- ե) շուկայական հարաբերություններին արագ հարմարվող փոքր արտադրությունների ստեղծումը,
- զ) մարզերում պտղաբուծության, խաղողագործության և գինեգործության զարգացման գործում տեղական ու արտաքին ներդրումների համար բարենպաստ գործարար ու ներդրումային միջավայրի ձևավորումը, հումքի արտադրության և վերամշակման համատեղ կազմակերպությունների ստեղծումը:

Համաշխարհային տնտեսության մեջ, հատկապես վերջին տասնամյակում կատարվող տեղաշարժերը պայմանավորված են, այսպես կոչված, «բարձր տեխնոլոգիաների» և հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացմամբ: Փաստորեն, տեխնոլոգիական առաջընթացը հանգուցային այն ռեսուրսն է, որն ի վիճակի է նպաստել անցումային փուլում գտնվող Հայաստանի տնտեսության արդիականացմանը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները նաև նոր հնարավորություններ կստեղծեն ՀՀ մարզերում աշխատանքի և զբաղվածության կազմակերպման նոր ձևերի կենսագործման համար:

Գյուղատնտեսության պետական կարգավորման բարեփոխումների արդյունավետ իրականացումը պահանջում է հանրապետության պետական կարգավորման համակարգի և գյուղատնտեսության զարգացման դինամիկայի խոր ուսումնասիրություն, գյուղատնտեսության զարգացմանը նպաստող պետական կարգավորման միջոցառումների վերլուծություն, դրանց համապատասխան՝ բարեփոխումների խորացման նպատակների սահմանում ու կոնկրետ ուղղությունների նպատակամետ մշակում և վերջինից ելնելով, համապատասխան միջոցառումների իրականացում:

Կարևորագույն նպատակ է համարվում ՀՀ մարզերում համալիր այնպիսի միջոցառումների մշակումն ու իրականացումը, որոնք գյուղացիական և այլ տնտեսություններին հնարա-

վորություն կտան գյուղատնտեսական արտադրությունը զարգացնել ինտենսիվ ճանապարհով և մասնագիտանալ: Մարզերում, գյուղացիական տնտեսություններում և այլ կազմակերպություններում աշխատանքները պետք է կազմակերպել այնպես, որպեսզի գյուղացիական տնտեսությունների գործունեության ուղղվածությունը զգալի նպաստի գյուղմթերքների արտադրության աճի ապահովմանը, նկատի ունենալով հիմնական գյուղատնտեսական մթերքների նկատմամբ պահանջարկը, դրանց ապահովումը սեփական արտադրության հաշվին:

Հիմնական խնդիրներից է նաև վեր նշված տնտեսություններից առանձնացված խմբերում արտադրական ճյուղերի տնտեսական վերլուծությունների կազմակերպումը, որը հնարավորություն կտա մշակելու դրանց արտադրաճյուղային օպտիմալացման ու հետագա զարգացման ուղիները և հնարավորությունները՝ յուրաքանչյուր մարզի կտրվածքով, կապված արտադրության ինտենսիվացման հետ, նկատի ունենալով արտադրության գործընթացի տեխնիկական ու տեխնոլոգիական փոխադարձ կապը, նպատակային տնտեսական և էկոլոգիական պայմանները:

Խնդիր է դրված, որպեսզի գյուղատնտեսական ապրանքների արտահանման ծավալների ավելացումը, առևտրային հաշվեկշռի և կառուցվածքի բարելավումը վերլուծվի որպես ռազմավարական կարևորություն ներկայացվող հիմնախնդիր:

Հետազոտությունները, որոնք ուղղված են հանրապետության բազմահազար գյուղացիական տնտեսությունների հետագա զարգացմանը, իրագործված միջոցառումները, եզրակացություններն ու առաջարկությունները գյուղացիական տնտեսություններին հնարավորություն կտան գյուղատնտեսական արտադրությունը զարգացնել ինտենսիվ ճանապարհով, ճիշտ օգտագործել ՀՀ մարզերի տնտեսությունների բնական և տնտեսական պայմանները, կիրառել գիտության առաջավոր մեթոդները և այլ նախատեսվող միջոցառումները, որոնք էլ իրենց հերթին կնպաստեն տնտեսությունների շահութաբերության և աշխատանքի արտադրողականության բարձրացմանը:

Ագրարային ոլորտում ծառայած տարաբնույթ այլ խնդիրների լուծման համար ստեղծված և կանխատեսվող իրավիճակի համալիր վերլուծության արդյունքում մեր կողմից մշակվել են համալիր միջոցառումներ՝ ուղղված հանրապետության գյուղատնտեսության ինտենսիվ զարգացմանը:

Ըստ ուսումնասիրությունների արդյունքների, հանրապետության առկա ռեսուրսային ներուժը հնարավորություն է տալիս ավանդական գյուղատնտեսության հետ մեկտեղ, երկրի տնտեսության զարգացման հեռանկարային ուղղություններում աստիճանաբար ներառել նաև էկոլոգիական գյուղատնտեսությունը, որը կարևորագույն ռեզերվ է հանրապետության պարենային հաշվեկշռի բարելավման համար:

Առաջիկայում դրական մեծ ազդեցություն կունենան այնպիսի հիմնական հարցերի կարգավորումն, ինչպիսիք են՝ կառավարման, ֆինանսական և սննդարդյունաբերության համակարգերի բարելավումը, արտադրության ինտենսիվացումն ու մասնագիտացումը, հողի շուկայի գործունեության ակտիվացումը, մարքեթինգի զարգացումը, սուբսիդավորման գործընթացները, տարբեր ծրագրերի իրականացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, գյուղական զբոսաշրջության զարգացումը, արտադրության գիտական ապահովումը և այլն:

Գյուղատնտեսության կառավարման հետագա բարելավումը, գյուղատնտեսական մթերքների ու պարենամթերքի արտադրության ծավալների ավելացումը, գյուղացիական տնտեսությունների ամրապնդումը, կոոպերացիայի զարգացումը, ներդրումների նպատակային օգտագործումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, մասնագիտական կադրերով ապահովվածությունը, առաջավոր տեխնոլոգիաների ներդրումը հնարավորություն կընձեռեն որոշակիորեն բարելավել պարենամթերքի արտահանման-ներմուծման հաշվեկշիռը՝ հօգուտ տեղական արտադրանքի արտահանման տեսակարար կշռի մեծացման:

ԷՂՈՒԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի թեմայի ղեկավար, տ. գ. դ., պրոֆեսոր*

ՀՐԱՉՅԱ ԾՊՆԵՑՅԱՆ


*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ. գ. դ.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆԵՏԱԿԱՆ ՄԵԾԱԾԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հանրապետության ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակով, ագրոպարենային ոլորտի ենթակառուցվածքների անբավարար գործունեությամբ և մի շարք այլ գործոններով պայմանավորված՝ գյուղատնտեսության առջև ներկայումս ծառայած կարևոր հիմնախնդիրներից է գյուղատնտեսական մթերքների իրացումը: Մի շարք հանգամանքներով և առաջին հերթին՝ հանրապետության բնակչության ցածր վճարունակ պահանջարկի հետևանքով, սննդամթերքի ներքին սպառման շուկան հագեցած է, և լուրջ խնդիրներ են ծառայած տեղական շուկայում գյուղատնտեսական մթերքների իրացման բնագավառում:

Գծանկարն 1

Գյուղատնտեսական մթերքների իրացման ուղղությունները



Հանրապետությունում արտադրվող գյուղատնտեսական մթերքների իրացումը հիմնականում կատարվում է հետևյալ ուղղություններով. իրացում՝ արտադրողների (գյուղացիական տնտեսությունների) կողմից շուկայում, իրացում՝ միջնորդ օղակների միջոցով, իրացում՝ գյուղատնտեսական հումք վերամշակող ընկերություններին, իրացում՝ վերամշակված տեսքով: Գյուղատնտեսական մթերքների իրացման ուղղությունները սխեմատիկ ձևով ներկայացված է ստորև տրված գծապատկերում:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության՝ հանրապետության գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսական հիմնական մթերքների իրացման կառուցվածքը, 2010թ. տվյալներով ներկայացված է 1-ին աղյուսակում:

Բերված տվյալներից ակնհայտ է, որ գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը զգալիորեն ցածր է: Մթերքների նշանակալի մասը սպառվում է տնտեսություններում, ինչպես արտադրական կարիքների (սերմացու, անասնակեր), այնպես էլ անձնական օգտագործման համար: Ապրանքայնության միջին կշռված մակարդակը հանրապետության գյուղացիական տնտեսություններում 2010թ. կազմել է 55.8 %:

Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսություններում գյուղատնտեսական մթերքների իրացման կառուցվածքը 2010թ. տվյալներով¹

(տոկոսներով)

	Գյուղատնտեսական մթերքների անվանումը	Գյուղացիական տնտեսությունների կողմից			Օգտագործվել է տնտեսությունում	Մնացորդը տնտեսությունում
		վաճառվել է	տրվել է սպորանքավոխանակման դիմաց	տրվել է բնամթերքով ծառայությունների դիմաց		
1	Հացահատիկային և հատիկաղնդեղեն մշակաբույսեր	15.8	6.0	2.0	38.7	37.5
2	Կարտոֆիլ	28.3	6.1	0.6	30.1	34.9
3	Բանջարեղեն	67.3	6.5	0.5	20.3	5.4
4	Բոստան	85.2	6.6	0	8.2	0
5	Պտուղ	26.9	6.9	1.2	36.0	29.0
6	Խաղող	84.5	4.7	0.5	7.8	2.5
7	Սիս	71.3	5.1	0.2	22.9	0.5
8	Կաթ և կաթնամթերք (վերածած կաթի)	44.7	4.3	0.4	41.4	9.2
9	Չու	29.8	10.3	0.3	59.6	0
10	Բուրդ	28.1	9.5	0.3	22.8	38.3
11	Մեղր	44.9	4.6	0.7	31.6	18.2

Գյուղացիական տնտեսությունները, կարելի է ասել, որոշակիորեն ունեն բնամթերային բնույթ: Այսպես, օրինակ, հացահատիկային մշակաբույսերի (38.7%), կարտոֆիլի (30.1%), պտղի (36.0%), կաթի (41.4%), ձվի (59.6%), բրդի (22.8%), մեղրի (31.6%) զգալի մասն օգտագործվում է (սպառվում է) գյուղացիական տնտեսություններում: Բացի այդ առանձին մթերքների մնացորդը տնտեսությունում բավականին մեծ տեսակարար կշիռ ունի: Այսպես օրինակ նշված ցուցանիշը 2010թ.-ին հացահատիկի և կարտոֆիլի համար համապատասխանաբար կազմել է՝ 37.5 և 34.9%:

Ստեղծված իրավիճակում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները հնարավորություն չեն ունենում վերարտադրության, տեխնիկական վերազինման և անհրաժեշտ արդյունավետության ապահովման համար:

Գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը տատանվում է մեծ սահմաններում, այն 2010թ. 23.8%-ից (հացահատիկային մշակաբույսեր) փոփոխվել է մինչև 91.8% (բոստան): Կախված գյուղատնտեսական մթերքների արտադրության կառուցվածքից և իրացման պայմաններից, այն հանրապետության տարբեր մարզերի համար տարբեր է:

Գյուղատնտեսական մթերքների, մասնավորապես՝ խաղողի, պտղի և բանջարեղենի զգալի մասը գնվում է (մթերվում է) գյուղատնտեսական հումք վերամշակող ընկերությունների կողմից: Գյուղատնտեսական հումքի գնումների ծավալները 2006-2010թթ. ներկայացվում են 2-րդ աղյուսակում:

Շնորհիվ գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության աշխուժացման՝ գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակող կազմակերպությունների միջև պայմանագրային հարաբերությունների ներդրման. զգալիորեն բարելավել է գյուղատնտեսական մթերքների գնումների գործընթացը, սակայն այդ բնագավառում իրավիճակը դեռևս մնում է բարդ:

¹ Գյուղատնտեսական մթերքների իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2010 թվականին, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2010թ., էջ 5-10:

Հայաստանի Հանրապետությունում 2006-2010թթ. կատարված գյուղատնտեսական հումքի գնումների ծավալները

(հազ. տոննա)

Գյուղատնտեսական մթերքներ	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Բանջարեղեն	67.6	57.1	39.0	32.3	29.7
Պտուղ	13.2	14.8	19.4	11.2	3.6
Խաղող	106.1	144.4	137.4	127.7	135.0

Գյուղատնտեսական արտադրանքի իրացման բնագավառում ստեղծված իրավիճակը հետևանք է ծառայած մի շարք հիմնախնդիրների, որոնցից կարելի է առանձնացնել.

- գյուղմթերքների և դրանց վերամշակումից ստացված արտադրանքի իրացման համակարգի անկատարելությունը: Մեծածախ շուկաների համակարգի բացակայությունը: Մեծածախ շուկաների բացակայության հետևանքով գյուղատնտեսական մթերքների շուկաներում, այսպես կոչված, տարերայնորեն և չվերահսկվող միջնորդների ձևավորումը, որոնք թելադրում են գները և գնում մթերքները իրենց կողմից վաճառելու կամ վերավաճառելու նպատակով, որը զգալիորեն բացասաբար է անդրադառնում գյուղացիական տնտեսությունների եկամուտների վրա,
- մթերքների ապրանքային տեսքի, փաթեթավորման և տարավորման անբավարար վիճակը,
- գնող-պահպանող-իրացնող (արտահանող) շղթայում կազմակերպված միջնորդական առևտրական կազմակերպությունների բացակայությունը,
- հարևան երկրների կողմից արտաքին շուկաներին կապող հաղորդակցության ուղիների շրջափակումը,
- վերամշակող ընկերությունների արտադրական հզորությունների օգտագործման ցածր մակարդակը և տեխնիկական հագեցվածության անբավարար վիճակը,
- սննդամթերքի նկատմամբ հանրապետության բնակչության գնողունակության ցածր մակարդակը,
- միջազգային չափանիշներին համապատասխանող սննդամթերքի անվտանգության համակարգի դեռևս ոչ լիարժեք գործունեությունը, սննդամթերքի իրացման, արտահանման գործընթացը խթանող իրավական դաշտի կատարելագործման անհրաժեշտությունը,
- տրանսպորտային փոխադրումների թանկությունը,
- արտահանման ենթակա վերամշակող արդյունաբերության արտադրանքն իր որակական հատկանիշներով դեռևս չի համապատասխանում եվրոպական չափանիշներին, հետևապես դրանց իրացումը հնարավոր է հիմնականում ԱՊՀ երկրներում, որն էապես նեղացնում է իրացման շուկայի շրջանակները,
- տեխնոլոգիաների անկատարության և փոխադրման հետ կապված դժվարություններով պայմանավորված՝ արտահանվող արտադրանքը բարձր գների պատճառով արտաքին շուկայում դառնում է ոչ մրցունակ:

Հիշատակված խնդիրների զգալի մասի լուծման հնարավորություններից է հանրապետությունում գյուղատնտեսական մեծածախ շուկայի համակարգի ձևավորումը և դրա գործունեության ապահովումը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պարենային մեծածախ շուկաների ստեղծումը հանդիսանում է ապրանքների տեղաբաշխման համակարգի վերակառուցման առաջին և անհրաժեշտ փուլ:

Ընդհանուր առմամբ պարենային մեծածախ շուկաների ձևավորումն ու զարգացումը աշխարհում ընթացել է հետևյալ երկու ուղղությամբ:

Առաջինը՝ այդ շուկաների համակարգի ստեղծումն ու կառուցումը կատարվել է պետության ֆինանսական աջակցությամբ, որի դեպքում պետությունը՝ իր միջոցների հաշվին գործարկում է առաջին մեծածախ շուկան և իրականացնում վերջինիս ամբողջ համակարգի ինտենսիվ զարգացման քաղաքականություն: Դրա վառ օրինակն է «Մերկասա» պետական ձեռնարկությունը (Իսպանիա), որն իր մեջ է ներառում երկրի ամբողջ տարածքով սփռված ավելի քան 20 շուկա, որոնք մատակարարում են ոչ միայն Իսպանիայի բնակչությունը, այլ նաև արտահանում են պարենամթերքը աշխարհի տարբեր երկրներ:

Երկրորդ ուղղությունը՝ դա պարենային մեծածախ շուկաների ստեղծման նպատակով ինչպես պետության, այնպես էլ շահագրգիռ այլ կողմերի միջոցների ներգրավումն է: Դրա օրինակներից է Մյունխենի մեծածախ շուկայի ստեղծումը:

Պարենային մեծածախ շուկաների ձևավորման միջազգային փորձը վկայում է այն մասին, որ դրանց ստեղծման ուղղությամբ առավել ակտիվ հետաքրքրություն են ցուցաբերում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինները, որոնք շահագրգռված են գյուղատնտեսական տարբեր արտադրատեսակները կանոնակարգված ձևով առևտրային ցանցեր մատակարարման համար, դրանով իսկ լուծելով քաղաքացիների պարենամթերքի պահանջարկի բավարարման խնդիրը:

Բացի նշվածից, կիրառվում են նաև այլ մոտեցումներ, որոնք շահադրդում են տեղական ինքնակառավարման մարմիններին (քաղաքային իշխանություններին) նոր մեծածախ պարենային շուկաների կառուցման ֆինանսավորման ուղղությամբ: Որպես կանոն, սկզբնական փուլում աշխարհի խոշորագույն քաղաքների կենտրոնական մասերում ձևավորվում էին չկազմակերպված մեծածախ շուկաներ, որոնք աստիճանաբար՝ ապրանքային հոսքերի ավելացման հետ մեկտեղ, սկսեցին առաջացնել բազմաթիվ տրանսպորտային, սանիտարական, սոցիալական, բնապահպանական և այլ հիմնախնդիրներ:

Մեծածախ շուկաների տեղափոխումը քաղաքից դուրս թույլ տվեց քաղաքային իշխանություններին բեռնաթափել քաղաքի կենտրոնը: Մեծածախ շուկաների տարածքում տեղավորված ենթակառուցվածքները (բանկեր, հասարակական սնունդ, ապահովագրական ընկերություններ, խանութներ) սկսեց արագ տեմպով զարգանալ, լուծելով ոչ միայն շուկայի մասնակիցների սպասարկման, այլ նաև նոր աշխատատեղերի ստեղծման հիմնախնդիրը: Օրինակ, Ֆրանսիայում նոր մեծածախ շուկաների բացման շնորհիվ 25 հազ. մարդ աշխատանք ստացան:

Մեծածախ շուկաները խոշոր առևտրական համակարգերի և մանր առևտրականների մեջ եղած մրցակցությունը մեղմացնելով, փրկեցին վերջիններիս սնանկացումից: Այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Իսպանիան, Գերմանիան՝ մեծածախ շուկաները բարենպաստ պայմաններ ստեղծեցին մանրածախ առևտրի տարբեր տեսակների զարգացման համար:

Մեծածախ շուկաները կարևոր դեր սկսեցին խաղալ բնակչության առողջության բնագավառում: Առավել վառ դա արտահայտվում է ԱՄՆ-ում և Ավստրալիայում: Պետությունն օգտագործեց մեծածախ շուկայի տեղեկատվական ներուժը առողջության համար անվտանգ արտադրանքի նկատմամբ որակապես նոր գնողունակ պահանջարկի ձևավորման համար: Մեծածախ շուկաները սկսեցին ֆինանսավորել առողջ սննդի լայնածավալ գովազդը:

Միջազգային պրակտիկայում մեծածախ շուկայի հիմնական թիրախը դա շուտ փչացող արտադրանքն է:

Արտասահմանյան երկրներում կազմակերպված մեծածախ շուկաների ձևավորումը և գործունեությունը դիտարկվել է որպես տեղական արտադրողների արտադրանքի երաշխավորված իրացման մեխանիզմ, այսինքն տեղի է ունենում այդ տեղական արտադրողների պետական աջակցության գործընթաց:

Այսպիսով, այլ երկրների փորձը ցույց է տվել, որ ներկայումս շուտ փչացող արտադրանքի վերաբաշխման ամենամատչելի և արդյունավետ ձևը դա գյուղատնտեսական մեծածախ շուկաների կազմակերպումն է, և պատահական չէ, որ այդ երկրների կառավարությունները ակտիվ կերպով մասնակցում են նման շուկաների ստեղծման գործընթացին՝ սկսած

լայնածավալ ֆինանսավորումից մինչև այդ շուկաների արդյունավետ գործունեությունը խթանող համապատասխան օրենքների և նորմատիվային ակտերի ընդունումը:

Գյուղատնտեսական մթերքների իրացման բնագավառում հանրապետությունում ստեղծված ներկայիս իրավիճակը վկայում է, որ կարևոր է գյուղատնտեսական մթերքների մեծածախ առևտրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների (միջնորդների) ձևավորման գործընթացը: Դրանք, հանդիսանալով արտադրողի և սպառողի միջև միջանկյալ օղակ, կիրականացնեն գյուղատնտեսական ապրանքների անմիջական գնումները գյուղացիներից և ապրանքաբաշխիչ համակարգում կկատարեն կանոնակարգող դեր: Միջնորդ կազմակերպությունները կվերացնեն գյուղատնտեսության և մանրածախ առևտրի շղթայի ապրանքների շարժի առկա խզումը, միաժամանակ գյուղացուն կազատեն նրան ոչ բնորոշ մթերքների իրացման հոգսերից:

Հանրապետությունում գյուղատնտեսական մթերքների իրացման հիմնախնդրի լուծմանը կնպաստի մեծածախ շուկաների համակարգի հիմնումը: Սկզբնական փուլում հարկ կլինի հիմնել կենտրոնական մեծածախ շուկա իր տարածաշրջանային բաժանմունքներով: Մեծածախ շուկաների համակարգի ստեղծումը կնպաստի փաթեթավորման, որակի վերահսկման, պահպանման, ներքին և արտաքին շուկաներում իրացման գործընթացի բարելավմանը և ընդհանուր առմամբ ներկայիս շուկայական հարաբերությունների կատարելագործմանը:

Հանրապետությունում գյուղատնտեսական մեծածախ շուկաների համակարգի ներդրումը, սկզբնական փուլում, հնարավոր է համարվում ձևավորել բաժնետիրացման սկզբունքով, որին իր մասնակցությունը պետք է ունենա նաև պետությունը: Գյուղատնտեսական մեծածախ շուկայի համակարգի ձևավորումը նպատակահարմար է համարվում իրականացնել մրցութային կարգով, որի գրավիչ պայմանը կլինի պետության մասնակցությունը (բաժնեմասը) և հնարավորություն կտրվի մասնավոր բաժնեմասը տնօրինող սեփականատերերին, մատչելի ժամանակահատվածում, հետ գնել պետական բաժնեմասը: Գյուղատնտեսական մեծածախ շուկաների համակարգում, մեկնարկային փուլում, պետության մասնակցության մասը նպատակահարմար է համարվում 30-60%-ի սահմաններում:

Ռիսկերից խուսափելու համար մրցույթները նպատակահարմար է կազմակերպել առանձնացված՝ առանձին հավաքման կետերի և կենտրոնական մեծածախ շուկայի համար: Յուրաքանչյուր մրցույթին կմասնակցի առանձին տնտեսավարող սուբյեկտ: Գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկայի ձևավորվող համակարգը սկզբնական փուլում նպատակահարմար է ծառայեցնել բուսաբուծական մթերքների իրացմանը:

Գյուղմթերքների մեծածախ շուկան պետք է գործի հանրապետության ամբողջ տարածքում, ուստի շատ կարևոր է այդ համակարգի ճիշտ տեղաբաշխումը: Սկզբնական փուլում մեծածախ շուկայի կառույցների՝ հավաքման կետերի ձևավորման համար հիմք են ընդունվել 3-րդ աղյուսակում տրված տվյալները:

Հաշվի առնելով բուսաբուծական մթերքների ապրանքային մասի հաշվարկային բեռնաշրջանառությունը՝ հաշվարկված մարզկենտրոնների և մայրաքաղաքի միջին համակշռված հեռավորությունով և հաշվի առնելով նաև հավաքման կետերի համաչափ տեղաբաշխման և զուտ հեռավորության գործոնը, նպատակահարմար է համարվում հավաքման կետերի ձևավորումը Արարատ, Արմավիր, Գավառ, Վանաձոր, Գյումրի, Գորիս քաղաքներում: Վերջինը կծառայի նաև ԼՂՀ-ից գյուղատնտեսական մթերքների հավաքման համար:

Երևանում անհրաժեշտ կլինի հիմնել 2 կենտրոնական մեծածախ շուկա, որոնք գործունեություն կիրականացնեն տարածաշրջանային կառույցների հետ: Արտահանման գործընթացի խթանման նպատակով հետագայում անհրաժեշտ կլինի հավաքման կետեր տեղակայել նաև Մեղրիում և Բագրատաշենում:

Հանրապետությունում գյուղատնտեսական մեծածախ շուկայի համակարգի ձևավորումը պահանջում է մեծածավալ ներդրումներ: Ըստ մոտավոր գնահատման՝ մեկ հավաքման կետի համար միջին հաշվով կպահանջվի կատարել 115.0 մլն դրամի ներդրումներ: Ընդհանուր ներդրումները հավաքման կետերի համար կկազմեն շուրջ 690 մլն դրամ: Իսկ կենտրոնական շուկայի կառուցման համար պահանջվող ներդրումները հնարավոր կլինի գնահատել նախազմանախահաշվային փաստաթղթերի կազմումից հետո:

Մեծածախ շուկաների համակարգի ձևավորումը տարածաշրջանային մակարդակով նպատակահարմար է իրականացնել կոոպերացիայի սկզբունքով: Մեծածախ շուկաների գործունեության համար կարևորագույն պայման է՝ գյուղացիական տնտեսությունների և գյուղմթերքներ արտադրող այլ տնտեսավարող սուբյեկտների և տարածաշրջանային կառույցների հետ պայմանագրային փոխհարաբերությունների հաստատումը, որոնց հիման վրա պետք է ապահովվի փոխհամաձայնեցված աշխատանքը Երևանի կենտրոնական մեծածախ շուկաների և արտահանման գործառույթ ունեցող տնտեսավարողների հետ:

Աղյուսակ 3

Գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկայի տեղաբաշխման հիմնավորման համար հաշվարկային ցուցանիշներ*

	Մարզերի անվանումը	Համախառն արտադրանքի կառուցվածքը %	Բուսաբուծական հիմնական մթերքների (հացահատիկ, կարտոֆիլ, բանջար, բոստան, պտուղ, խաղող) ծավալը հազ. տոննա	Բուսաբուծական հիմնական մթերքների ապրանքային արտադրանքի ծավալի գնահատականը, հազ. տոննա	Տեսակարար կշիռը, %	Մարզկենտրոնները	Մարզկենտրոնի հեռավորությունը Երևանից, կմ	Երևանի հետ բեռնաշրջանառության հաշվարկային ծավալը, հազ. տկմ	Երևանի հետ համակշռված հեռավորության (61.9 կմ) համար հաշվարկված բեռնաշրջանառություն, հազ. տկմ	Տեսակարար կշիռը, %
1	Արագածոտն	7.5	168.7	67.4	5.5	Աշտարակ	20	1348	4172.1	5.6
2	Արարատ	13.0	519.6	417.5	34.2	Արտաշատ	29	12107.5	25843.3	34.6
3	Արմավիր	15.1	412.7	352.9	28.9	Արմավիր	48	16939.2	21844.5	29.2
4	Գեղարքունիք	14.3	432.4	179.6	14.7	Գավառ	98	17600.8	11117.2	14.9
5	Լոռի	10.2	100.1	28.5	2.3	Վանաձոր	120	3420	1764.2	2.4
6	Կոտայք	9.7	80.1	45.3	3.7	Հրազդան	50	2265	2804.1	3.7
7	Շիրակ	10.1	195.4	60.2	4.9	Գյումրի	116	6983.2	3726.4	5.0
8	Սյունիք	9.3	101.1	39.9	3.3	Կապան	316	12608.4	2469.8	3.3
9	Վայոց ձոր	4.4	20	5.4	0.4	Եղեգնաձոր	119	642.6	334.3	0.4
10	Տավուշ	5.5	58.1	11.5	0.9	Իջևան	137	1575.5	711.9	1.0
11	Երևան	1.0	22.5	11.3	0.9	Երևան				
	Ընդամենը	100.0	2110.7	1219.5	100.0			75490.2	74787.6	100.0

* հիմք է ընդունվել երեք տարվա միջին տվյալները

Մեծածախ շուկաների համակարգը պետք է ապահովված լինի համապատասխան տրանսպորտային և պահպանման (սառնարանային) և տեղեկատվական ենթակառուցվածքներով:

Մեծածախ շուկաների ցանցի ձևավորումը հնարավորություն կընձեռի զգալիորեն կրճատել գյուղատնտեսական մթերքների կորուստները, բարձրացնել ապրանքայնության մակարդակը, ինչպես նաև ավելացնել գյուղացիական տնտեսությունների եկամուտները և հարկային մուտքերը: Այն պայմաններ կստեղծի գյուղատնտեսական մթերքների արտահանման գործընթացի կազմակերպման համար:

Մասնավորապես համակարգի ներդրումից ակնկալվում է հետևյալ արդյունքները՝

- գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը կբարձրանա 10-15 տոկոսային կետով,
- առավել արդարացի կբաշխվի գյուղատնտեսական մթերքների իրացումից ստացված հասույթը,

- պայմաններ կատեղծվի գյուղմթերքների արտադրողներից մինչև սպառողը արտադրանքների ազատ շարժի համար,
- հավաքման կետերի ձևավորումով ըստ գնահատման կատեղծվի շուրջ 120 նոր աշխատատեղ, իսկ կենտրոնական շուկաների ձևավորումը գրեթե տասնապատիկ ավել,
- պայմաններ կատեղծվի գյուղատնտեսական մթերքների գործընթացում երաշխավորված պայմանագրային հարաբերությունների արմատավորման համար,
- համակարգի ներդրումը դրականորեն կանդրադառնա գյուղատնտեսության արտադրության ծավալների և արդյունավետության բարձրացման վրա:

ԷՂՈՒԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի թեմայի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՀՐԱԶՅԱ ԾՊՆԵՑՅԱՆ

*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.դ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐՏՈՖԻԼԻ ԱՊՐԱՆՔԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԵՎ ԿԱՐՏՈՖԻԼԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի ագրոպարենային համակարգի կայուն զարգացման հիմնախնդրի լուծման ուղղությամբ կարևորվում է կարտոֆիլագործության արդյունավետության բարձրացումը, կարտոֆիլի սորտաթարմացման և վերամշակման խթանումը:

Կարտոֆիլագործությունն ունի նաև ռազմավարական նշանակություն, քանի որ բնակչության սննդամթերքի սպառման կառուցվածքում զբաղեցնում է երկրորդ տեղը, առաջնայնությունը զիջելով միայն հացին, և մեծապես նպաստում է երկրի պարենային անվտանգության ու պարենային անկախության մակարդակի բարձրացմանը:

Լինելով աշխատատար մշակաբույս՝ այն ուրույն դեր է խաղում աշխատանքային ռեսուրսների զբաղվածության ապահովման հիմնախնդրի լուծման գործում: Մեծ տեղ է գրավում ներքին ապրանքաշրջանառության մեջ:

Կարտոֆիլը բարձրարդյունավետ մշակաբույս է: Զբաղեցնելով ցանքատարածությունների շուրջ 10 %-ը՝ այն 2008-2010թթ. միջին տվյալներով ապահովում է հանրապետության բուսաբուծության համախառն արտադրանքի շուրջ 14.7 տոկոսը:

Կարտոֆիլի ինքնաբավության մակարդակը բավականին բարձր է, այն ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի տվյալներով 2006, 2007, 2008, 2009, 2010թթ. համապատասխանաբար կազմել է 99.7; 99.0; 99.9; 100.8 և 100.6 տոկոս: 2006-2010թթ. ազգային պարենային հաշվեկշռի կարտոֆիլին առնչվող ցուցանիշները ներկայացվել են 1-ին աղյուսակում:

2010թ. արտադրվել է 482.0 հազ. տոննա կարտոֆիլի բերք, որը 2002թ. հետո ընկած ժամանակահատվածում ամենացածր ցուցանիշն է: Վերջինս հետևանք է անբարենպաստ բնակլիմայական պայմանների և մշակության տարածքների կրճատման: Կարտոֆիլի արտադրության ծավալները՝ ըստ հանրապետության մարզերի 2006-2010թթ. համար ներկայացված է 2-րդ աղյուսակում:

2006-2010թթ. վիճակագրական տվյալներով հանրապետությունում արտադրվող կարտոֆիլի համախառն արտադրանքի շուրջ 47.2 %-ը բաժին է ընկնում ՀՀ Գեղարքունիքի մարզին:

Հանրապետությունում կարտոֆիլի ապրանքայնության մակարդակի վերաբերյալ պատկերացում է տալիս 3-րդ աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 1

ՀՀ ազգային պարենային հաշվեկշռում կարտոֆիլին առնչվող 2006-2010թթ. տվյալները¹
(հազ. տոննա)

	Պահուստներ տարվա սկզբում	Արտադրություն	Ներմուծում	Անբողջական առաջարկ	Մնդի օգտագործում	Անասնակեր	Կորուստներ	Մերմացու	Արտահանում	Պահուստներ տարվա վերջում	Օգտագործում	Բնթմաբավության աստիճան, %	Սպառումը մեկ 2նչի հաշվով, կկալ/օր
2006թ.	452.1	539.5	1.7	993.3	171.2	192.1	73.5	132.2	0	424.3	993.3	99.7	117.2
2007թ.	424.3	583.9	6.0	1014.2	151.8	181.8	74.2	126.7	0.1	479.6	1014.2	99.0	103.9
2008թ.	479.6	648.6	4.3	1132.5	165.0	210.2	84.2	137.2	3.6	532.3	1132.5	99.9	113.0
2009թ.	532.3	593.6	0.9	1126.8	169.6	257.2	91.0	128.0	5.9	475.1	1126.8	100.8	116.1
2010թ.	475.1	482.0	1.6	958.7	142.6	234.5	79.5	113.4	4.4	384.3	958.7	100.6	97.6

Աղյուսակ 2

Կարտոֆիլի համախառն արտադրանքը՝ ըստ ՀՀ մարզերի 2006-2010թթ.²
(հազ. տոննա)

Մարզերը	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Արագածոտն	33.5	33.6	34.0	34.2	34.3
Արարատ	26.6	26.8	32.8	28.9	24.3
Արմավիր	47.1	53.5	63.5	53.2	32.3
Գեղարքունիք	260.0	271.3	278.0	254.3	233.1
Լոռի	43.5	57.0	54.5	55.0	31.8
Կոտայք	13.5	18.2	17.3	16.1	14.1
Շիրակ	72.5	68.0	104.9	89.7	69.3
Սյունիք	27.4	31.3	33.3	32.4	23.6
Վայոց ձոր	3.5	3.5	3.5	2.9	3.0
Տավուշ	10.8	19.8	25.5	25.5	14.5
ք. Երևան	1.2	0.9	1.3	1.4	1.7
Ընդամենը ՀՀ-ում	539.5	583.9	648.6	593.6	482.0

Աղյուսակ 3

ՀՀ-ում կարտոֆիլի ապրանքայնության մակարդակը ըստ ՀՀ Մարզերի 2006-2010թթ.³
(տոկոսներով)

Մարզերը	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Արագածոտն	45.1	45.9	37.0	29.5	16.4
Արարատ	71.6	77.1	73.4	79.3	77.9
Արմավիր	78.9	84.1	88.8	91.0	87.7
Գեղարքունիք	45.6	46.7	44.5	42.7	37.7
Լոռի	24.1	26.3	12.5	12.4	12.2
Կոտայք	54.6	52.4	52.6	38.0	38.0
Շիրակ	32.1	33.5	31.7	28.9	32.0
Սյունիք	32.0	37.9	35.3	27.8	27.6
Վայոց ձոր	14.9	14.0	6.1	26.0	16.5
Տավուշ	11.9	14.7	12.5	10.7	6.3
Ընդամենը ՀՀ-ում	43.0	45.5	42.3	38.4	35.0

¹ Հիմք է ընդունվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռների տվյալները:

² Պարենային ապահովություն և աղքատություն, 2011թ. հունվար-հունիս, ՀՀ ԱՎԾ, Երևան, էջ 35:

³ Գյուղատնտեսական մթերքների իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2007թ., 2008թ., 2010թ., վիճակագրական տեղեկագրեր, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2008թ., 2009թ., 2011թ.:

Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ կարտոֆիլի ապրանքայնության մակարդակը զգալիորեն ցածր է և այն վերջին 3 տարիներին ունեցել է նվազման միտում: Ապրանքայնության համեմատաբար բարձր մակարդակ է ապահովվում Այրարատի և Արմավիրի մարզերում, որտեղ գերակշռող է վաղահաս կարտոֆիլը: Ապրանքայնության նման մակարդակը կարտոֆիլաբուծական գյուղացիական տնտեսություններին դնում ֆինանսական դժվարին պայմանների մեջ և բարդացնում դրանց հետագա վերարտադրությունը, ագրոտեխնիկական պահանջների պահպանումը:

ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի տվյալներով մեկ շնչի հաշվով սննդի համար կարտոֆիլի սպառումը 2008-2010թթ. տատանվում է 47.5-56.5 կգ սահմաններում, սակայն մեր ուսումնասիրություններով իրական սպառումն առավել է: ՀՀ առողջապահության նախարարության կողմից առաջադրվող նվազագույն պարենային զամբյուղի համար մեկ շնչի սպառումը սահմանված է 91.3 կգ: Հետևաբար հանրապետությունում առկա բնակչության համար (3002 հազ. մարդ) սննդի սպառումը կկազմի 274 հազ. տոննա: Շուրջ 130-135 հազ. տոննա օգտագործվում է որպես սերմացու: Ըստ ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի տվյալների անասնակերի համար կարտոֆիլի ծախսերը, վերջին 5 տարիների միջին տվյալներով, կազմում շուրջ 215 հազ. տոննա, իսկ կորուստները՝ 80.5 հազ. տոննա: Նշված ծավալով անասնակերի համար օգտագործումը իրատեսական չենք համարում, այն, մեր գնահատմամբ, կկազմի, շուրջ 110 հազ. տոննա, այդ դեպքում այսպես կոչված «ավելցուկ» կարտոֆիլը, ամենաբարձր բերքի դեպքում, կկազմի շուրջ 50.0 հազ. տոննա (650-274-135-80.5-110=50.5 հազ. տոննա):

Նշված ծավալով կարտոֆիլի իրացումը հնարավոր է համարվում արտահանման և վերամշակման կազմակերպման միջոցով:

Վերջին տարիներին կարտոֆիլի արտաքին ապրանքաշրջանառության մասին պատկերացում է տալիս 4-րդ աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 4

Կարտոֆիլի արտաքին ապրանքաշրջանառությունը 2004-2009թթ.¹

	(տոննա)				
	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Ներմուծում	1704.9	6040.6	4280.5	857	1578
Արտահանում	0.5	50.2	3594.6	5909	4381
Հաշվեկշիռ	-1704.4	-5990.4	-685.9	5052	2803

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից կարտոֆիլի արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշիռը բացասական էր մինչև 2009թ.: Վերջին երկու տարիներին որոշակի ակտիվացել է կարտոֆիլի արտահանման գործընթացը: Չնայած նշվածին այս ուղղությամբ չեն օգտագործվում առկա ռեսուրսները, որն իրատեսական է համարվում արտահանման ավելացման և հանրապետությունում վերամշակման կազմակերպման միջոցով:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետությունում կարտոֆիլաբուծության զարգացումը պահանջում է լուծում տալ հետևյալ խնդիրներին.

- հանրապետության տարածքում կարտոֆիլի վերամշակման ընկերությունների տեղաբաշխման հիմնավորում,
- կարտոֆիլի վերամշակման ընկերությունների ձևավորմանն աջակցության մեխանիզմների հստակեցում,
- կարտոֆիլի արտահանման խթանման մեխանիզմների հստակեցում,
- հանրապետության որոշ գոտիներում կարտոֆիլի տակ դրված տարածքներն այլ մշակաբույսերով փոխարինման հնարավորությունների գնահատում:

Կարտոֆիլ վերամշակող ընկերությունների տեղաբաշխում

Հաշվի առնելով, որ հանրապետությունում կարտոֆիլի մեծ մասն արտադրվում է Գեղարքունիքի և Շիրակի մարզերում, որոնց 2010թ. բաժին է ընկել կարտոֆիլի արտադրության

¹ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի մաքսային վիճակագրություն, 2007թ., 2009թ. և 2010թ. կարեկան տեղեկագրեր, Երևան 2008, 2010, 2011:

համապատասխանաբար՝ 48.4 և 14.4%-ը, ապա հիմնավորված է համարվում վերամշակման կարողությունների ձևավորումն այդ մարզերում:

Կարտոֆիլ վերամշակող ընկերությունների ձևավորմանն աջակցություն¹

Կարտոֆիլ վերամշակող ընկերությունների ձևավորումն իրատեսական է համարվում համապատասխան աջակցության պայմաններում, որը հնարավոր է համարվում հետևյալ ուղղություններով՝

- նպատակային, միջնաժամկետ վարկերի տրամադրում,
- լիզինգային մեխանիզմներով սարքավորումների տրամադրում,
- ներքին և արտաքին շուկաներում կարտոֆիլի վերամշակումից ստացվող արտադրատեսակների վերաբերյալ շուկայական տեղեկատվության, արտադրության տեխնոլոգիաների, արտադրանքի մրցունակության բարձրացման ուղղությամբ խորհրդատվության տրամադրում,
- վերամշակման համար օգտագործվող սորտերի սերմնաբուծության զարգացմանն աջակցություն,
- վերամշակման համար օգտագործվող սորտերի և դրանց մշակության առանձնահատկությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- կարտոֆիլն վերամշակողների և կարտոֆիլաբուծությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների միջև փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների խթանում:

Կարտոֆիլի արտահանման խթանման մեխանիզմներ

Կարտոֆիլի արտահանման խթանման հնարավոր մեխանիզմներն են՝

- միջպետական հարաբերություններով, հատկապես Վրաստանի հետ, կարտոֆիլի մատակարարման պայմանագրային հարաբերությունների հաստատում,
- տրանսպորտային խոչընդոտների հաղթահարման աջակցություն,
- արտահանման համար նպատակային, մատչելի վարկերի տրամադրում,
- գյուղատնտեսական մթերքների արտահանման գործառույթ ունեցող կառույցների ձևավորման աջակցություն՝ վարկավորման, լիզինգային մեխանիզմներով տրանսպորտային միջոցների տրամադրման և այլ միջոցներով:

Կարտոֆիլի մշակությունն այլ մշակաբույսերով փոխարինման հնարավորությունների գնահատում

Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանում շաքարի գործարանի գործարկումը հնարավորություն է տալիս, գյուղացիական տնտեսությունների հետ փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների ձևավորման պայմաններում միջնաժամկետ ժամանակահատվածում, ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի և Արագածի, Լոռու մարզի Գուգարքի և Սպիտակի, Շիրակի մարզի Ախուրյանի, Անիի, Արթիկի տարածաշրջանների կարտոֆիլի մշակության տարածքներից 3000-4000 հա դնել ճակնդեղի մշակության տակ:

Վերը նշված միջոցառումների իրականացումից ակնկալվում են հետևյալ արդյունքները.

- կբարձրանա կարտոֆիլի ապրանքայնության մակարդակը և կարտոֆիլաբուծությամբ զբաղվող տնտեսությունների եկամուտները,
- ներքին շուկայում կձևավորվի կարտոֆիլի կայուն գին, արդյունքում՝ կբարձրանա ճյուղի շահութաբերությունը,
- կլուծվի «ավելցուկ» համարվող կարտոֆիլի իրացման խնդիրը, կբարելավվի կարտոֆիլի արտաքին ապրանքաշրջանառության ծավալները: Կարտոֆիլի արտահանման ծավալները հնարավոր կլինի հասցնել 35-40 հազ. տոննայի և վերամշակման ծավալները՝ 20-25 հազ. տոննայի,
- վերամշակող կարողությունների ստեղծումով կստեղծվեն նոր աշխատատեղեր,
- կբարձրանա ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակը:

¹ Մեկ տոննա կարտոֆիլի վերամշակումից կարելի է ստանալ 175 կգ օսլա կամ 112 լիտր սպիրտ, 55 կգ հեղուկ ածխաթթու, 0.39 լ սիվուխային յուղ, 1500 լ մաթ և այլն:

ԱՐԱՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.

ԼԻԼԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

**ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՍԱՅՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ**

Տարբեր երկրներում գործադիր իշխանության մարմինները միանման չեն: Սահմանադրության համաձայն՝ գործադիր իշխանությունը պատկանում է կա՛մ երկրի ղեկավարին և կառավարությանը (նախարարների խորհրդին, կաբինետին), ինչպես Եգիպտոսում է, կա՛մ միայն երկրի ղեկավարին, ինչպես ԱՄՆ-ում է, կա՛մ միայն կառավարությանը, ինչպես Իտալիայում է:

Ի տարբերություն ներկայացուցչական և դատական մարմինների, գործադիր իշխանության մարմինների համակարգը կազմված է միասնական ուղղահայացից:

Երկրի ղեկավարը: Երկրի ղեկավարը, որպես կանոն, միապետն է (թագավորը, սուլթանը և այլն) կամ նախագահը: Երկրի կոլեգիալ ղեկավարը (Մուդանի, Եմենի, Սիրիայի երբեմնի Պրեզիդենտական խորհուրդը, այժմ Շվեյցարիայի Դաշնային խորհուրդը և Կուբայի Պետական խորհուրդը) հազվադեպ է պատահում: Երկրի ղեկավարը սահմանադրական մարմին է և միաժամանակ պետության բարձրագույն պաշտոնատար անձն է, որը պետությունը ներկայացնում է ինչպես դրա ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Որոշ երկրներում (Բրունեյ, Օման, Սաուդյան Արաբիա և այլն) նա իր ձեռքում կենտրոնացնում է մեծ իշխանություն, մյուսներում նա միայն պետության սիմվոլն է (Ճապոնիայի կայսրը) կամ գործում է «կառավարության խորհրդով» (Հնդկաստանի նախագահը):

Երկրի ղեկավարը ձևավորում է կառավարությունը (երբեմն հաստատում է այն միայն ձևականորեն), իրավունք ունի նախարարներին և կառավարությանը ազատել աշխատանքից, իրավունք ունի նշանակել դատավորներին, շնորհել երկրի քաղաքացիություն և բնակատեղիի իրավունք, միջազգային պայմանագրերի որոշ տեսակներ կնքել և ռատիֆիկացնել, նշանակել դիվանագիտական ներկայացուցիչներին, պարգևներ շնորհել, ներում շնորհել դատապարտյալներին և այլն, սակայն գործնականում այդ լիազորությունների իրականացումը կախված է կառավարման ձևից, պետության ղեկավարի իրական դիրքից: Բացի այդ, կառավարման յուրաքանչյուր ձևի դեպքում էլ կան որոշակի լիազորություններ, որ երկրի ղեկավարը կարող է իրագործել ինքնուրույն, իսկ մյուսների իրագործման համար անհրաժեշտ է և պահանջվում է պառլամենտի համաձայնությունը կամ հաստատումը (օրինակ, ԱՄՆ-ում դեսպանների նշանակման համար) կամ նույնիսկ կառավարության համաձայնությունը (պառլամենտական հանրապետության պայմաններում): Սեփական լիազորությունների իրագործման համար երկրի ղեկավարը ընդունում է նորմատիվ և ոչ նորմատիվ (հրամաններ, ղեկրետներ և այլն) իրավական ակտեր, անցկացնում է նախարարների և այլ պաշտոնատար անձանց հետ խորհրդակցություններ, հրամաններ է տալիս, ուղևորվում է երկրի տարբեր շրջաններ և երկրի սահմաններից դուրս, ստորագրում է միջազգային պայմանագրեր, իրականացնում է արարողակարգային միջոցառումներ: Պառլամենտական հանրապետություններում և միապետություններում, երբեմն նաև խառը հանրապետություններում, որպեսզի երկրի ղեկավարի որոշ ակտեր գործի դրվեն, անհրաժեշտ է վարչապետի ստորագրությունը (կոնտրասիգնացումը): Հազվադեպ վարչապետի ստորագրության հետ մեկտեղ անհրաժեշտ է լինում նաև այն նախարարի ստորագրությունը, ով պատասխանատու է տվյալ ոլորտի համար:

Միապետը: Որպես կանոն, միապետը (թագավորը, սուլթանը և այլն) երկրի ղեկավարն է և միաժամանակ գործադիր իշխանության գլուխը: Գործնականում ողջ իշխանությունը նրան է պատկանում միայն բացարձակ միապետություններում:

Միապետն իր պաշտոնը ստանում և փոխանցում է ժառանգաբար:

Մալազիայում թագավորի գահը չի փոխանցվում ժառանգաբար. նա ընտրվում է միապետական սուրբեկտների սուլթանների կողմից և միայն իրենց կազմից:

Միապետի իրավական կարգավիճակը: Միապետն անձեռնմխելի է: Նա չի կարող վարչական, քրեական պատասխանատվության ենթարկվել, նրա դեմ հնարավոր չէ քաղաքացիական հայց ներկայացնել: Միապետի պետական գործողությունների համար քաղաքական պատասխանատվությունը կրում են նրա նախարարները:

Հաճախ միապետն օժտված է լինում օրենքների նկատմամբ վետոյի իրավունքով (ի տարբերություն նախագահի, նա կարող է ունենալ բացարձակ վետոյի իրավունք, որը պառլամենտը չի կարող հաղթահարել), սակայն շատ երկրներում այդ իրավունքը չի գործածվում (օրինակ, Մեծ Բրիտանիայում մոտ 300տ., որի հետևանքով էլ ձևավորվել է սահմանադրական ավանդույթ՝ միապետի կողմից վետոյի չօգտագործման հետ կապված): Որոշ նոր սահմանադրություններ, օրինակ, իսպանական, ճապոնական, միապետը վետոյի իրավունքից զրկված է:

Սահմանադրության համաձայն՝ միապետը նշանակում է կառավարությունը, բայց գործնականում պառլամենտական միապետություններում նա միայն ստորագրում է համապատասխան փաստաթուղթը, իսկ կառավարության կազմը պայմանավորված է լինում պառլամենտում տարբեր ուժերի հարաբերակցությամբ և որոշվում է կուսակցության (կուսակցությունների) կողմից, որը պառլամենտում կազմում է մեծամասնություն:

Նախագահը: Նախագահն ընտրվում է որոշակի ժամանակահատվածով՝ Լատվիայում՝ 3տ., ԱՄՆ-ում՝ 4տ., Բրազիլիայում՝ 5տ., Եգիպտոսում՝ 6տ., Ղազախստանում՝ 7տ. և այլն: Սակայն եղել են նաև «ցմահ» նախագահներ (ներկայումս Թուրքմենիայում, Կորեայում), ինչպես նաև նախագահներ, որոնք իրենց պաշտոնը զբաղեցրել են ոչ ընտրությունների միջոցով, այլ հեղաշրջումների արդյունքով:

Կառավարության կազմը տարբեր երկրներում տարբեր է: Դրա կազմի մեջ մտնում են դրա նախագահը (սովորաբար կոչվում է վարչապետ, սակայն կան նաև այլ անվանումներ՝ Չինաստանում Պետական խորհրդի պրեմիեր, Բուլղարիայում նախարար-նախագահ, Շվեյցարիայում պետական նախարար և այլն): Վարչապետի ղեկավարության ներքո աշխատում են նախարարները, պետական նախարարները (Պորտուգալիայում նրանք վարչապետի տեղակալներն են), պետական քարտուղարներ (ԱՄՆ-ում այդպես է կոչվում արտգործ նախարարը, մյուս նախարարները կոչվում են քարտուղարներ), գերատեսչությունների (ծառայությունների, գործակալությունների) ղեկավարներ: Պառլամենտական քարտուղարները, ովքեր ապահովում են կառավարության, նախարարների և պառլամենտական կառույցների միջև, պառլամենտում ներկայացնում են նախարարներին:

Կառավարության կազմավորման կարգը: Կառավարության կազմավորման կարգը կախված է երկրի պետական կառավարման ձևից: Կիսաբացարձակ միապետություններում սահմանադրական քողի տակ թաքնված երկրի ղեկավարը կառավարության անդամներին սովորաբար նշանակում է իր մոտ բարեկամների շարքերից (Բահրեյն, Քուվեյթ, Սաուդյան Արաբիա և այլն): Նախարարների ընտրության հարցում երկրի ղեկավարը ազատ է նաև դուալիստական միապետություններում՝ չնայած թագավորը երբեմն նաև հաշվի է առնում պառլամենտում առկա իրավիճակը: Նախագահական հանրապետություններում նախագահն ինքնուրույն է ձևավորում նախարարների կազմը կուսակցության ակտիվ գործիչների ցանկից (Բրազիլիա, Եգիպտոս, Մեքսիկա, Կոլումբիա և այլն)՝ չնայած որոշ այսպիսի հանրապետություններում կառավարման ձևավորմանը մասնակցում է նաև պառլամենտի վերին պալատը (ԱՄՆ-ում նախարարների նշանակման համաձայնությունը տալիս է Սենատը. այն չի զբաղվում նախարարների պաշտոնին նշանակված անձանց կուսակցական պատկանելության հարցի լուծմամբ, այլ միայն ստուգում է թեկնածուների բարոյական կարգավիճակը, նրանց կոմպետենտությունը):

Խառը հանրապետություններում կառավարության ձևավորման գործընթացում հաշվի է առնվում պառլամենտի կուսակցական կազմը և կառուցվածքը, քանի որ, որպես կանոն, վարչապետի նշանակման համար անհրաժեշտ է լինում պառլամենտի (ստորին պալատի) համաձայնությունը (Ուկրաինա) կամ էլ ողջ կառավարության հաստատումը պառլամենտի կողմից (Ռումինիա):

Պաշտամենտական միապետություններում և պաշտամենտական հանրապետություններում կառավարության ձևավորման պաշտամենտական կարգն է գործածվում, ինչը հիմնված է լինում պաշտամենտական ընտրությունների վրա: Յուրաքանչյուր ընտրություններից հետո, ներառյալ, եթե պաշտամենտը վաղաժամ է ցրվել) կառավարությունը նորից է կազմավորվում, նույնիսկ եթե իշխանությունը մնում է նույն կուսակցության ձեռքերում, սակայն նոր նախագահի ընտրություններից հետո չի հետևում նոր կառավարության ձևավորում:

Իտալիայում, 2005թ. սահմանադրական ուղղման համաձայն, կառավարության գլուխն ընտրվում է քաղաքացիների կողմից անուղղակի ընտրությունների միջոցով, ապա հանրապետության նախագահի կողմից նշանակվում է որպես վարչապետ: Կառավարության ձևավորման նմանատիպ մեխանիզմ գործում էր նաև Իսրայելում, սակայն հետագայում հրաժարվեցին դրանից:

Հնդկաստանում կառավարության կազմի մեջ պարտադիր կերպով մտնում են խոշոր նահանգների ներկայացուցիչները, Քենիայում՝ այն ցեղերի ներկայացուցիչները, որոնք կազմում են երկրի ողջ բնակչության 3%-ից ոչ պակասը (այդ իսկ պատճառով էլ Քենիայի կառավարությունը սովորաբար բազմաթիվ անդամներից է բաղկացած լինում): Կանադայում հաշվի է առնվում ազգությունը և լեզուն: Լինում է նաև այնպես, որ կառավարության անդամ դառնալու կարգը սահմանված է լինում տվյալ երկրի սահմանադրությամբ¹: Բելգիայում, համաձայն սահմանադրության 99 հոդվածի, կառավարության կազմում պետք է ընդգրկված լինեն ֆրանսերեն և նիդերլանդերեն իմացող նախարարների հավասար թվով անդամներ²: Շվեյցարիայի Սահմանադրության 175 հոդվածը սահմանում է, որ կառավարության ձևավորման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երկրի տարածքների և լեզվական շրջանների համաչափության ապահովումը³: Մի շարք երկրներում կառավարության անդամների համար սահմանված է որոշակի տարիք (Բրազիլիայում 25տ., Եգիպտոսում 30տ.):

Մեծ Բրիտանիայում և այլ երկրներում (Հնդկաստան, Հունաստան) նախարարները նշանակվում են միայն պաշտամենտականների շարքերից, նրանք պահպանում են իրենց պաշտամենտական մանդատը և նույնիսկ կարող են քվեարկել կառավարությանը անվստահություն հայտնելու հարցի քվեարկության ժամանակ: Ֆրանսիայում, Ուկրաինայում նրանք պետք է ընտրություն կատարեն՝ մնալ պաշտամենտում, թե դառնալ նախարար: ԱՄՆ-ում, Բուլղարիայում նախարարները չպետք է լինեն պաշտամենտի անդամներ⁴:

Կառավարության տեսակները: Պաշտամենտական այն հանրապետություններում, որտեղ որևէ կուսակցություն կազմում է բացարձակ մեծամասնություն (50%+1 ձայն միապալատ պաշտամենտում կամ երկպալատ պաշտամենտի ստորին պալատում), ստեղծվում է միակուսակցական կառավարություն: Այդպիսի իրավիճակը հատուկ է երկկուսակցական համակարգ ունեցող երկրներին (Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Կանադա և այլն) և 1 իշխող կուսակցություն ունեցող երկրներին (օրինակ, Հնդկաստանում, Ճապոնիայում այդպես է եղել բավական երկար ժամանակահատված): Այսպիսի երկրներում միայն պատերազմների, արտակարգ իրավիճակների ժամանակ միակուսակցական կառավարության կազմի մեջ են ընդգրկվում այլ կուսակցությունների ներկայացուցիչներ:

Նախագահական հանրապետություններում (եթե կա կառավարություն) նույնպես ստեղծվում է միակուսակցական կառավարություն: Երկրի ղեկավարը նշանակում է նախարարներին իր կուսակցությունից և շատ հազվադեպ է ներգրավում կառավարության կազմի մեջ այլ կուսակցությունների ներկայացուցիչներ կամ անկուսակցական մասնագետներ:

Խառը հանրապետություններում կառավարության կազմը որոշ չափով կարող է կախված լինել պաշտամենտի կազմից (այսպիսով, Ֆրանսիայում կառավարությունը պետք է ստանա պաշտամենտի համաձայնությունը):

Կրիտիկական պահերին, հատկապես պատերազմական իրավիճակներում կարող է կազմավորվել հատուկ տիպի կոալիցիոն կառավարություն՝ ազգային միասնականության

¹ Козырин А. Н., Глушко Е. К. и др., Правительство в зарубежных странах: Учебное пособие/ Под ред. проф., д.ю.н. А. Н. Козырина и доц., к.ю.н. Е. К. Глушко. – М.: Ось-89, 2007. – 240с. (Juris prudentia).

² Конституции государств Европы. В 3т. Т. 1. М., 2001. С. 357-358.

³ Конституции государств Европы. В 3т. Т. 1. М., 2001. С. 570.

⁴ Чуркин В. Е., Государственное и муниципальное управление М.: Юрист, 2003.

կառավարություն, որում ներգրավված են լինում տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ, որոնք իրենց վրա են վերցնում երկրի ղեկավարման պատասխանատվությունը:

Այն դեպքերում, երբ երկրում կա 2-3 խոշոր կուսակցություն, որոնք պառլամենտում չունեն բացարձակ մեծամասնություն, կարող է ստեղծվել պառլամենտական փոքրամասնության կառավարություն: Կուսակցություններից մեկը ձևավորում է կառավարությունը, իսկ մի քանի փոքրաքանակ կուսակցություններ, հրավիրված չլինելով կոալիցիոն կառավարություն, խոստանում են ցուցաբերել իրենց աջակցությունը վստահության քվեարկության ժամանակ և դա անում են գործնականում նույնպես (ժամանակին այդպես էր Հնդկաստանում, Թուրքիայում, Ճապոնիայում):

Եթե պառլամենտական միապետությունում կամ պառլամենտական հանրապետությունում չի հաջողվում ձևավորել կոալիցիոն կառավարություն, ստեղծվում է ձառայողական (գործնական, պաշտոնական) կառավարություն՝ մասնագետներից ընտրված կազմով: Նրանք կարող են լինել անկուսակցական, կարող են նաև պատկանել որևէ կուսակցության, սակայն իրենց գործունեության մեջ չպետք է արտահայտվի կուսակցական պատկանելությունը: Այսպիսի կառավարությունը սովորաբար ժամանակավոր բնույթ է կրում և գոյություն է ունենում մինչ պառլամենտական նոր ընտրությունները, երբ արդեն հնարավոր կլինի ձևավորել կուսակցական հիմքերով կառավարություն: Անկուսակցական կառավարությունները մշտապես գոյություն ունեն նաև այն երկրներում, որտեղ բոլոր քաղաքական կուսակցությունները արգելվում են կամ էլ քաղաքական զարգացումը դեռ չի բերել կուսակցությունների ստեղծման: Ներկայումս անկուսակցական կառավարություններ, կազմված մեծամասամբ միապետի մոտ բարեկամներից, գործում են Սաուդյան Արաբիայում, Բութանում, Բահրեյնում, Կատարում, Բուվեյթում:

Հեղափոխական և պատերազմական հեղաշրջումների պատճառով հաճախ ստեղծվում է ժամանակավոր կառավարություն: Այն կազմավորվում է արտապառլամենտական կարգով և ոչ սահմանադրական նորմերի հիման վրա: Ժամանակավոր կառավարությունը իր անդամների կազմով կարող է լինել կուսակցական և անկուսակցական: Հաճախ այն չի անվանվում ժամանակավոր, սակայն իրականում այդպիսին է¹:

Կառավարության լիազորությունները: Սահմանադրությունների մեծ մասում կառավարության լիազորությունները սահմանված են լինում շատ ընդհանուր ձևով²: Օրինակ, Ֆրանսիայի Սահմանադրության մեջ ասվում է. «Կառավարությունը որոշում և իրականացնում է ազգի քաղաքականությունը. դրա ենթակայության տակ են գտնվում վարչական ապարատը և զինված ուժերը» (հոդված 20)³:

Կառավարության լիազորություններն ավելի մանրակրկիտ է ձևավորված լինում տոտալիտար սոցիալիզմի և հետսոցիալիստական խառը հանրապետությունների սահմանադրություններում:

Միայն հազվագյուտ սահմանադրություններ պարունակում են հարցեր, որոնք կառավարությունը պետք է որոշի կոլեգիալ կարգով (օրինակ, Սլովակիայի Սահմանադրության 119 հոդվածում՝ սկսած 1992թ. սեպտեմբերի 1-ից)⁴:

Կառավարությունը ընդունում է ենթաօրենսդրական ակտեր՝ նորմատիվ և ոչ նորմատիվ (օրոգնանսներ, ղեկրետներ, կարգադրություններ և այլն): Դրանք պետք է համապատասխանեն օրենքներին և երկրի ղեկավարի ակտերին: Նախարարները նույնպես կարող են ընդունել ակտեր որոշ հարցերի վերաբերյալ: Նախագահական հանրապետություններում, նույնիսկ եթե այդտեղ գործում է նախարարների խորհուրդը, կառավարության նորմատիվ ակտերն ընդունվում են որպես երկրի ղեկավարի ակտեր: Խառը հանրապետություններում կառավարությունը ընդունում է սեփական նորմատիվ իրավական ակտեր:

Կառավարության և դրա անդամների պատասխանատվությունը: Կառավարության և դրա անդամների պատասխանատվությունը կախված է նրանից, թե արդյոք նրանց կողմից

¹ Чиркин В. Е., “Опыт зарубежного управления (государственное и муниципальное управление)”, Москва, Юристъ, 2006г., 184с.

² Пронкин С. В., Петрунина О. Е., Государственное управление зарубежных стран: учебное пособие. 3-е изд., доп. И перераб. – М.: КДУ, 2007. – 496с.

³ Конституции государств Европы. В 3т. Т. 1. М., 2001. С. 415.

⁴ Конституции государств Европы. В 3т. Т. 1. М., 2001. С. 143.

կատարվել է այս կամ այն իրավական խախտումը ծառայողական պարտականությունները կատարելիս կամ էլ անհատական անձանց կարգավիճակով: Վերջին դեպքում մի շարք երկրներում նրանք պատասխան են տալիս մյուս քաղաքացիներին հավասար պայմաններում, սակայն որոշ երկրներում էլ նախարարը հանձնվում է դատարան՝ պառլամենտի որոշման համաձայն, և նրան դատում է հատուկ դատարանը:

Ներկայումս նախարարներին և կառավարությանը անվստահություն հայտնելու գործընթացի որոշակի բարդացում է նկատվում: Դա կապված է խառը հանրապետությունների թվի կտրուկ աճով՝ կապված կառավարության կայունության ապահովման հետ: Շատ երկրներում կառավարության անվստահություն հայտնելու համար անհրաժեշտ է միայն պառլամենտի կամ դրա ստորին պալատի ձայների 1/10-ը (Կոլումբիա), 1/4-ը (Չեխիա), իսկ երեմն էլ 1/3-ը (Բելոռուսիա): Որոշ պառլամենտական հանրապետություններում և միապետություններում (Գերմանիա, Հունգարիա, Պապուա-Նոր Գվինեա) նախատեսված է, այսպես կոչված, անվստահության հայտնման կառուցվածքային տարբերակը. կառավարության ղեկավարին անվստահության հայտնման բանաձևում անպայմանորեն պետք է նշված լինի, թե ով է նրան հաջորդելու: Անվստահության հայտնումը և վարչապետի պաշտոնակցությունը ընթանում է միաժամանակ հաջորդ վարչապետի նշանակման հետ, ինչն ապահովում է կառավարչական իշխանության հաջորդականությունը և կայունությունը:

Մյուս կողմից, անվստահության հայտնման գործընթացի բարդացմանը զուգահեռ նկատվում է նաև այդ գործընթացի լայն տարածում: Ծիշտ է, մի շարք պայմաններով, սակայն սա այժմ կարող է կիրառվել նաև Լատինական Ամերիկայի նախագահական հանրապետություններում (Վենեսուելա, Կոստա-Ռիկա, Ուրուգվայ), սակայն միայն առանձին նախարարների հանդեպ (կառավարությունը այս երկրներում նախագահի կաբինետն է):

Նախարարների պատասխանատվությունը պառլամենտի առջև կարող է լինել միահավասար կամ անհատական: Միահավասար պատասխանատվության դեպքում ողջ կառավարությունը պաշտոնակց է արվում, նույնիսկ եթե անվստահությունը հայտնվել է անդամներից միայն մեկին (Ֆրանսիա, Իսպանիա, Կուբա), իսկ անհատականի դեպքում պաշտոնակց է արվում միայն այն նախարարը, որին պառլամենտը հայտնել է անվստահություն: Որոշ երկրներում հնարավոր է նույնիսկ պատասխանատվության այս երկու տեսակների համադրություն: Այն հարցը, թե պատասխանատվության որ ձևը կկիրառվի, եթե անվստահությունը հայտնվել է միայն մեկ նախարարին (մի քանի նախարարներին), բայց ոչ կառավարությանը ամբողջությամբ, երկրների մի մասում որոշում է կաբինետը (Մեծ Բրիտանիա), իսկ որոշ երկրներում էլ՝ պառլամենտը (Իտալիա):

Նախարարներին գործից ազատման տարբերակ է նաև իմպիչմենտը: ԱՄՆ-ում դա իրականացվում է նախագահի իմպիչմենտի նման: Դանիայում նախարարներին իմպիչմենտ կարող է հարուցվել ոչ միայն պառլամենտի կողմից. այս դեպքում որոշումը կայացնում է Թագավորության Գերագույն դատարանը¹:

¹ Рой О. М., Система государственного и муниципального управления: Учебное пособие. 3-е издание. – СПб.: Питер, 2007. - 368 с.: ил. – (Серия “Учебное пособие”).

**ՀՀ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՄՈՂԵԼԸ**

Կառավարության և ոլորտային նախարարությունների միջև, ինչպես նաև նախարարությունների ու կառավարությանն առընթեր մարմինների միջև առկա են գործառույթների էական կրկնություններ և անհատակություններ, ինչը գործնականում հանգեցնում է կառավարման արդյունավետության ցածր մակարդակի, արդյունքների համար հաշվետվելիության պակասի, համակարգման հիմնախնդիրների և առկա միջոցների ոչ ռացիոնալ օգտագործման: Պետական կառավարման մարմինների մեծամասնությունը հստակ չի սահմանում իր գործունեության խնդիրներն ու ռազմավարական նպատակները: Շատ հաճախ դրանց կազմակերպական կառուցվածքը, հիմնական գործառույթներն ու կանոնակարգերը ենթարկվում են չհիմնավորված փոփոխության, ինչը հանգեցնում է լուրջ խառնաշփոթի և անարդյունավետության: Կառավարության, նախարարությունների, կառավարությանն առընթեր մարմինների, տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև շատ բնագավառներում լիազորությունների բաժանումը նույնպես հստակ չէ: Ոլորտային քաղաքականություն մշակող նախարարությունների գործունեության համակարգման գործում շարունակում են սահմանափակ մնալ կառավարության հնարավորությունները: Նախ, զարգացած չեն լավագույն քաղաքականության խրախուսման կանոններն ու փորձը (ինչպիսիք են, օրինակ, կառավարական հանձնաժողովները, քաղաքականության հարցրերի բազմափուլ ու ազատ քննարկումները), քաղաքականության կիրառման բյուջետային ծախսի հաշվարկի մոտավորությունը, քաղաքականության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև աղքատության և կոռուպցիայի մակարդակները: Անբավարար վիճակում են նաև կառավարությանը ենթակա կազմակերպությունների կողմից քաղաքականության կիրառման, մոնիտորինգի և ազդեցության գնահատման համակարգերը: Քաղաքականության մշակման վրա ազդում է համապատասխան գիտելիքներով օժտված պետական ծառայողների բացակայությունը, քաղաքականության վերլուծությունների համար պահանջվող համապատասխան տեղեկատվության անմատչելիությունը, կառավարման հաստատությունների միջև անբավարար համակարգման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ քննարկումների բացակայությունը: Որպես արդյունք, քաղաքականությունը մշակվում ու փոփոխվում է չհամակարգված եղանակով, և դրա հիմնավորումը հաճախ պարզ չէ ինչպես այդ քաղաքականությունն իրականացնող պատասխանատու պաշտոնյաների համար, այնպես էլ այդ քաղաքականության ազդեցության կամ ներգործության տակ գտնվող անձանց համար:

Այսպիսով, քաղաքականության գործառույթը հաճախ չի իրականացվում արդյունավետորեն կամ իրականացվում է կամայականորեն և առանց որևէ համակարգման, ինչը հանգեցնում է դրա նկատմամբ վստահության անկմանն ու կոռուպցիայի համար նախադրյալների առաջացմանը:

Պետական կառավարման համակարգի կառավարման արդյունավետության ցածր մակարդակի հիմնական պատճառների շարքին կարելի է դասել.

- հանրապետական և տարածքային կառավարման մարմինների միջև լիազորությունների և գործառույթների անհամաչափ բաշխումը,
- գործառույթների կրկնությունները տարբեր մարմիններում, կառավարման խնդիրների ոչ հստակ ձևավորումը,
- օրենսդրական և ենթօրենսդրական դաշտի անկատարությունը,
- կառավարման ոչ ռացիոնալ կառուցվածքների առկայությունը,
- աշխատողների մասնագիտական ցածր մակարդակը, կադրերի ընտրության, նրանց պաշտոնական առաջխաղացման մեխանիզմների անկատարությունը, կադրերի բարձր հոսունությունը, նրանց անպաշտպանվածությունը և ցածր վարձատրությունը:

ՀՀ պետական կառավարման մարմիններում գործառույթային վերլուծության արդյունքներով 2000-2001թթ. հանրապետական գործադիր իշխանության մարմիններին (նախարարություններ, կառավարությանն առընթեր մարմիններ, տեսչություններ և այլ գերատեսչություններ) հատուկ էր նաև կանոնադրությունների կառուցվածքների նկատմամբ խիստ տարբերակված մոտեցումների առկայությունը: Նախարարությունների՝ այդ ժամանակ գործող կառուցվածքներում տարբերակվում էին կազմակերպական և իրավական կարգավիճակի առումով տարբեր, հաճախ բնույթով միանման գործառույթներ իրականացնող, բայց տարբեր անվանումներով ու կարգավիճակներով գործող 17-ից ավելի տիպի կառուցվածքային ստորաբաժանումներ, ինչպես օրինակ՝ խորհուրդ, կոլեգիա, հանձնաժողով, ֆոնդ, գործերի տնօրինություն, գործերի կառավարչություն, դեպարտամենտ, տեսչություն, գործակալություն, գլխավոր վարչություն, վարչություն, բաժին, ենթաբաժին, խումբ, ծառայություն, նախարարի աշխատակազմ, նախարարության աշխատակազմ և այլն: Այսպիսի մոտեցումն իրականության մեջ առաջ էր բերում խառնաշփոթ, անարդյունավետ կառավարում, աշխատակազմերի կառուցվածքային ստորաբաժանումներում հաստիքների արհեստական ուռճացում: Նման իրավիճակի պատճառը կառուցվածքային ստորաբաժանումներ, գործառույթների և խնդիրների ոչ ճիշտ ձևակերպումն էր, կառավարման ուղղաձիգ և հորիզոնական կապերի խախտումը, կառավարման մակարդակների քանակի ու կառուցվածքային ստորաբաժանումների սահմանման միասնական չափորոշիչների բացակայությունը:

ՀՀ պետական կառավարման մարմինների գործառույթային վերլուծության շրջանակով սահմանված սկզբունքներին համապատասխան գործառույթների դասակարգումը, ինչպես նաև դասակարգված ու խմբավորված գործառույթներին համապատասխան կառավարման կառուցվածքային միավորների վերակազմավորումը պայմանավորեց **քաղաքականության մշակման գործառույթների** (ռազմավարության մշակում, ռազմավարական պլանավորում, իրավական փաստաթղթերի նախագծերի կազմում, մշակում, պայմանագրերի ու ստանդարտների, նվազագույն չափորոշիչների, նորմերի մշակում, քաղաքականության վերլուծություն ու գնահատում, կանխատեսում) վերապահումը հանրապետական գործադիր մարմինների աշխատակազմերի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումներին, մասնավորապես, վարչություններին, բաժիններին:

Ծառայությունների մատուցման գործառույթների (տարբեր բնույթի ծառայությունների մատուցում ներքին՝ պետական այլ մարմիններին և արտաքին՝ քաղաքացիներին և իրավաբանական-կազմակերպական կառույցներին, ֆերմերներին, անտառապահներին, ձկնորսներին և այլ հաճախորդներին ապրանքների և ծառայությունների մատուցում) իրականացումը վերապահվեց գործակալություններին, պետական ոչ առևտրային կազմակերպություններին:

Կանոնակարգող (վերահսկողական կարգավորիչ) գործառույթները (արտոնագրում, լիցենզավորում, քվոտավորում, հավատարմագրում, որոնք առանձնացվում են գործունեության կանոնները սահմանող քաղաքականության մշակման գործառույթներից) վերապահվեց գործակալություններին, իսկ վերահսկող գործառույթների մասով՝ տեսչություններին:

Համակարգող (կատարողականների մոնիտորինգի) գործառույթները (դրված խնդիրների լուծման ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքի վերլուծությունը և տարբեր արդյունքների համադրումն ու սահմանված ժամկետներում և աշխատանքների որակով կատարման ընթացքի վերահսկումը) վերապահվեց աշխատակազմի կառուցվածքային ինքնուրույն միավորներին:

Օժանդակող (սպասարկող) գործառույթները (անձնակազմի, նյութական և ֆինանսական ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգերի, ենթակառույցների և քարտուղարական ծառայությունների արդյունավետ գործունեությանն ուղղված գործառույթները) վերապահվեց աշխատակազմի ինքնուրույն կառուցվածքային միավորների, այդ թվում՝ քարտուղարությանը¹:

Այս չափորոշիչների պայմաններում ՀՀ հանրապետական գործադիր մարմնի կառավարման կազմակերպական կառուցվածքը միասնականացվեց: Հիմք ընդունելով՝ հանրապե-

¹ Խուղավերդյան Արմեն Վազգենի, Հանրային ոլորտի բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում.-Եր.: Սարվարդ հրատ., 2008թ., 300 էջ:

տական գործադիր մարմինների կառավարման կազմակերպական կառուցվածքի առաջարկված մոդելը՝ ՀՀ Նախագահի 2002թ. մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին» հրամանագրում սահմանվեցին հանրապետական գործադիր մարմինները՝ նախարարությունները, գործակալությունները, տեսչությունները: Այս հրամանագրով գործակալություններն ու տեսչությունները ճանաչվեցին որպես պետական մարմիններ: Իսկ ինչպես սահմանում է «ՀՀ պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքը. «Հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որը ստեղծվում է Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններին, դատախազությանը, ինչպես նաև օրենքի հիման վրա ստեղծված՝ պետական կառավարչական գործառույթների իրականացնող այլ պետական մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով¹: Այսպիսով, գործակալություններն ու տեսչությունները պետական կառավարչական հիմնարկի կարգավիճակ կարող էին ստանալ, եթե դրանք ստեղծվեին օրենքով: Մինչդեռ, այդ տարիներին որպես պետական մարմիններ օրենքներով ստեղծված էին միայն առանձին հանձնաժողովներ և խորհուրդներ:

Գործակալություններին և տեսչություններին պետական կարգավիճակի սահմանման գաղափարի հիմքում ընկած էր այն, որ պետական կառավարման համակարգի հետագա բարեփոխումների ընթացքում, կառավարության կառուցվածքի վերանայման պայմաններում հանրապետական գործադիր մարմինները պետք է խոչորացվեին՝ մի կողմից, կառավարությանն առընթեր մարմինների, մյուս կողմից, նոր ստեղծվող պետական մարմինների հաշվին: Դա էր վկայում նաև ՀՀ Նախագահի 2002թ. մարտի 16-ի «ՀՀ կառավարության կառուցվածքում փոփոխություններ կատարելու մասին» հրամանագրի 2-րդ մասում տրված ձևակերպումը, ըստ որի՝ ՀՀ կառավարությանն առընթեր սահմանված պետական կառավարման մարմինները գործում են մինչև պետական կառավարման համակարգի բարեփոխումների գործընթացի ավարտը: Դրա հետ մեկտեղ, կառավարման բարեփոխումների հետագա քայլերում արդեն նշմարվում էր գործակալությունների և տեսչությունների լիազորություններն օրենքով սահմանելու անհրաժեշտությունը, որը նաև հնարավորություն և առիթ էր հենց համանուն օրենքներով էլ ստեղծելու տեսչություններ և գործակալություններ՝ պետական մարմնի կարգավիճակով: Վերջինս ենթադրում է ոչ միայն գործառութային, այլև մարդկային, նյութական և ֆինանսական միջոցների կառավարման ինքնուրույնություն: Այդ տարիներին նոր ձևավորված կամ վերակազմավորված գործակալությունների և տեսչությունների փոքր չափերը, գործառութային ոչ լիարժեք ինքնուրույնությունը, ծառայությունների մատուցման չափորոշիչների, ինչպես նաև ընթացակարգերի բացակայությունը հնարավորություն չէին տալիս գործակալություններն ու տեսչությունները ձևավորել որպես լիարժեք, ինքնուրույն պետական մարմիններ: Դրա հետ մեկտեղ, նախարարություններում, քաղաքականության, ռազմավարական պլանավորման, կանոնակարգման և կարգավորման գործառույթների թերզարգացվածությունը նույնպես պահանջում ու ստիպում էին դեռևս միասնական մեկ աշխատակազմում տեսնելու գործակալություններին ու տեսչություններին: Կարծես թե, ընտրված էր լավագույն կոնսենսուսը, փոխհամաձայնեցումն այդ մարմինների հետագա զարգացման գործում: Կյանքը ցույց տվեց այս թեզի գոյությունը, և որպես օրինակ, այսօր արդեն մի շարք տեսչություններ ունեն սեփական գործունեությունը կանոնակարգող օրենքներ: Չևավորված բոլոր գործակալություններն ու տեսչությունները նախանշված ձևաչափով կայացան և այսօր գտնվում են ծառայությունների մատուցման որակի ու մատչելիության բարձրացման խնդրի իրականացման փուլում: Այս 2 ուղղություններն էլ օրենսդրորեն ամրագրվեցին ինչպես ՀՀ 2005թ. Սահմանադրությամբ, այնպես էլ ՀՀ Նախագահի 2008թ. հուլիսի 18-ի «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՀ-174-Ն հրամանագրով:

¹ «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենք, հոդված 1 կետ 1, 03.12.2001:

**ՀՀ ԶՕԸ-ՆԵՐՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ԶՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ**

Նպատակ ունենալով նպաստելու ոռոգման ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանն ու շարունակականության ապահովմանը, ինչպես նաև աջակցելու ջրօգտագործողների ընկերություններին՝ ֆինանսական վիճակի բարելավման ու ինստիտուցիոնալ կարողությունների հետագա հզորացման հարցերում և հիմք ընդունելով 2009 թվականի դեկտեմբերի 16-ին «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կողմից ընդունված՝ Հայաստանի Հանրապետության ոռոգման ոլորտի ազգային քաղաքականության հայեցակարգը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2010 թվականի սեպտեմբերի 30-ին որոշեց.

1. Հավանություն տալ ջրօգտագործողների ընկերություններին պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարությանը:
2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել ջրօգտագործողների ընկերություններին ընթացիկ դրամաշնորհների տեսքով պետական ֆինանսական աջակցության տրամադրման հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ¹:

Պետական ընթացիկ ֆինանսական աջակցության նպատակներն են՝

- ոռոգման ջրի մատչելիության բարձրացումը՝ կրճատելով ոռոգելի հողատարածքների նվազման հավանական ռիսկերն ու նպաստելով փաստացի ոռոգվող հողատարածքների ավելացմանը.
- ԶՕԸ-ների ֆինանսական վիճակի բարելավումը (ներառյալ՝ նախկինում կուտակված կրեդիտորական պարտավորությունների կրճատմանը ուղղված գործիքների կիրառմամբ)՝ ամրապնդելով ընթացիկ ծախսածածկման հնարավորինս բարձր մակարդակի ապահովման նախադրյալները:

2012-2016 թթ. ընթացքում ԶՕԸ-ներին պետական ընթացիկ ֆինանսական աջակցությունը տրամադրվելու է հետևյալ երկու հիմնական ձևերով՝

1. ընթացիկ բյուջետային դրամաշնորհներ.
2. բյուջետային փոխառություններ՝ նախկինում կուտակված կրեդիտորական պարտավորությունների կրճատման նպատակով:

Դրամաշնորհների մեծությունը գնահատելիս ԶՕԸ-ները դիտարկվել են երկու խմբերով՝

1. ԶՕԸ-ներ, որտեղ մեկ հեկտար ոռոգելի հողատարածքի հաշվով ոռոգման ջրի փաստացի տեսակարար ծախսը գերազանցում է 3,500 խմ-ը,
2. ԶՕԸ-ներ, որտեղ մեկ հեկտար ոռոգելի հողերի հաշվով ոռոգման ջրի փաստացի տեսակարար ծախսը փոքր է կամ հավասար 3,500 խմ-ից:

Առաջին խմբում դասակարգված ընկերությունների պարագայում ենթադրվում է, որ գերակշռելու է ոռոգման ջրի ծավալի նկատմամբ սահմանվող վճարների պրակտիկան: Մինչդեռ երկրորդ խմբում դասակարգված ԶՕԸ-ներում, ոռոգման ջրի ծավալի նկատմամբ սահմանվող վճարները զուգորդվելու են փաստացի ոռոգվող հողատարածքների նկատմամբ կիրառվող վճարներով՝ անդամավճարների տեսքով:

Դրամաշնորհների հաշվարկի հիմքում սակագնային նման քաղաքականության դիտարկումը ենթադրում է, որ երկրորդ խմբում դասակարգված ԶՕԸ-ները 2012-2013 թթ. պետք է, ըստ էության, անցում կատարեն երկմակարդակ վճարների քաղաքականության, որը հնարա-

¹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=50584>

վորություն կտա զգալիորեն բարելավել այդ ՋՕԸ-ների ընթացիկ ֆինանսական վիճակը, ինչը, իր հերթին, նախադրյալներ է ստեղծելու ոռոգման ջրի մատուցման ծառայությունների շարունակականության ապահովման ու հուսալիության բարձրացման համար¹:

ՀՀ կառավարությունը, ՋՕԸ-ներին դրամաշնորհների տեսքով ընթացիկ ֆինանսական աջակցություն տրամադրելիս, 2012-2016 թթ. շարունակելու է առաջնորդվել ոռոգման ջրի ծավալի նկատմամբ կիրառվող վճարների հաշվարկային մակարդակների ավելացման քաղաքականությամբ՝ դրամաշնորհների հաշվարկների հիմքում ենթադրելով ոռոգման ջրի վճարների հետևյալ մակարդակները.

Աղյուսակ 1

Ոռոգման ջրի սակագները 2012-2016թթ.²

	չ/մ	2012	2013	2014	2015	2016
Ոռոգման ջրի դիմաց վճար (նվազագույն), ԱԱՀ-ից ազատված	դրամ/խմ	11.00	12.00	12.00	13.00	13.00

Թեև դրամաշնորհների հիմքում դրվել է ոռոգման ջրի դիմաց վճարների հաշվարկային մակարդակների վերոհիշյալ սցենարը, այդուհանդերձ, ՋՕԸ-ները չեն սահմանափակվելու օրենսդրորեն իրենց վերապահված իրավունքների սահմաններում սահմանել վճարների ավելի բարձր մակարդակներ՝ մնացած հավասար այլ պայմաններում ստանալով դրամաշնորհային պայմանագրերով ամրագրված դրամաշնորհների մեծություններն ամբողջությամբ:

Ոռոգման ոլորտում ոռոգման ջրառ իրականացնող կազմակերպություններն են՝ «Սևան-Հրազդանյան ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Դեբեդ-Աղստև-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունները, որոնց 100 տոկոս բաժնետոմսերը սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի:

Ոռոգման ջրի երկրորդական բաշխումն իրականացվում է ՋՕԸ-երի կողմից, որոնք հանդիսանում են ջրօգտագործողների կողմից ստեղծված շահույթ չհետապնդող կազմակերպություններ:

ՋՕԸ-երը ստեղծվել են ջրօգտագործողներին ոռոգման ջրով ապահովելու նպատակով և իրականացնում են միայն ոռոգման համակարգի շահագործման ու պահպանման գործառույթներ: Ի տարբերություն խմելու ջրի մատակարարման համակարգի, ոռոգման համակարգում առաջնային և երկրորդական (մեծածախ և մանրածախ) ջրամատակարարման իրականացման գործառույթները տարանջատված են տարբեր կազմակերպությունների միջև: ՋՕԸ-երը մեծածախ գնով ջուր են գնում ոռոգում-ջրառ ընկերություններից՝ հետագայում իրենց սեփական ջրաղբյուրներից վերցված ջրաքանակի հետ միասին բաշխելով ջրօգտագործողներին:

Աղյուսակ 2

Ջրօգտագործողների ընկերությունների 2005-2009թթ. որոշ ցուցանիշների վերաբերյալ³

N	Ցուցանիշի անվանումը	2005	2006	2007	2008	2009	2010
1.	Ընդամենը ջրառը (հազ մ ³)	1 025 160,4	984 657,2	937 233,0	1 030 021,0	723 066.5	709,277.5
	1. Ոռոգում ջրառից	818 839,7	795 550,7	757 437,4	838 402,4	579 624.8	557,228.4
	1.1. ինքնահոս եղանակով	605 577,6	583 783,2	578 910,4	633 458,3	479 916.0	473,271.3
	1.2. մեխանիկական եղանակով	213 262,1	211 767,5	178 527,0	204 944,1	99.709	83,957.1
	2. Տեղական աղբյուրներից	206 320,7	189 106,5	179 795,7	191 618,6	143 441.7	152,049.1

¹ ՀՀ կառավարության «Ջրօգտագործողների ընկերությունների պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարությանը հավանություն տալու և ռազմավարությունից բխող առանձին միջոցառումների իրականացումն ապահովելու գործողությունների մասին» 2010 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 1291- Ն որոշում:

² <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=50584>

³ Աղյուսակը կազմվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի տվյալների հիման վրա:

N	Ցուցանիշի անվանումը	2005	2006	2007	2008	2009	2010
	2.1. ինքնահոս եղանակով	42 485,9	42 707,6	50 908,9	37 540,4	34.242	45,169.3
	2.2. մեխանիկական եղանակով	163 834,8	146 398,9	128 886,8	154 078,2	109.199	106,879.8
2.	Կորուստը						
	1. Բնեղեն արտահայտությամբ [հազ. մ3]	428091.2	410317.9	396217.2	464259	311037.8	312,046.3
	2. Տոկոսային արտահայտությամբ (%)	41.8	41.7	42.3	45.1	43.0	44.0%
3.	Մատակարարված ոռոգման ջրի ծավալները՝ ջրտուքը (հազ մ ³)	597 069,22	574 339,34	541 015,78	565 762,0	412028.8	397,231.3
4.	Փաստացի ոռոգված հողեր (հա)	125 648,0	130 347,0	128 696,5	128 500,0	128,076.0	129,194.0
5.	Գ-անձում	2 975 863,80	3 093 867,10	3 102 927,90	3 442 523,90	3 216 200.0	3 561 000.0
6.	Հաշվարկված ծախսեր (մլն դրամ)	8 038 647,13	8 174 151,32	8 173 409,50	9 760 943,79	8 243 521.2	8,390,057.3
	Այդ թվում՝ էլեկտրաէներգիայի ծախս (մլն դրամ)	2 430 193,29	2 029 263,40	1 892 934,45	2 311 348,10	2 009 779	2 100 000
7.	Մուբսիդավորում (մլն դրամ)	5645430,7	5 336 823,21	5 370 000,2	5 391 364,0	5 250 411	4 756 000,0

ԶՕԸ-երին պայմանագրային հիմունքներով անհատույց օգտագործման տրամադրված շահագործվող ոռոգման միջհամայնքային ցանցերը պետական սեփականություն են (հաշվառված են «ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի հաշվեկշռում՝ շուրջ 60.0 մլրդ դրամ), իսկ ներհամայնքային ցանցերը հանդիսանում են տեղական ինքնակառավարման մարմինների սեփականությունը: Ինչպես երևում է աղյուսակից, ջրօգտագործողների ընկերությունների կողմից 2005-2009թթ. իրականացված ջրառը և ջրտուքը գնալով հիմնականում նվազել է կամ արդյունքում ավելացել են կորուստները:

Միաժամանակ ավելանում է գանձման մակարդակը: Ընդ որում, ինքնարժեքի մեջ դեռևս բավականին մեծ տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և ջրառի ծախսերը, որոնց կրճատման ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր, մասնավորապես, մեխանիկական եղանակով ոռոգման փոխարեն ինքնահոս ջրագծերի կառուցման, ինչպես նաև իրականացնել կազմակերպչական, տնտեսական, տեխնիկական և ինստիտուցիոնալ փոփոխություններ:

Իսկ այժմ աղյուսակի տեսքով ներկայացնենք ՀՀ տարածքում գործող բոլոր ԶՕԸ-ների ոռոգման ջրի կորուստների առավելագույն ընդունելի մակարդակը¹:

Աղյուսակ 3

Ոռոգման ջրի կորուստների առավելագույն ընդունելի մակարդակները (նորմերը)² ըստ ԶՕԸ-ների, 2012-2016 թթ.²

ԶՕԸ-ի անվանումը	2010	2011	2012	2013	2014	2015	2016
1 «Ազատ» ԶՕԸ	48.30	48.30	48.30	48.30	48.30	48.30	48.30
2 «Ակնալիճ» ԶՕԸ	42.70	42.70	42.70	42.70	42.70	42.70	42.70
3 «Ամբերդ» ԶՕԸ	43.60	43.60	43.60	43.60	43.60	43.60	43.60
4 «Աշտարակ» ԶՕԸ	51.60	51.60	51.60	51.60	51.60	51.60	51.60
5 «Ապարան-Արագած» ԶՕԸ	38.50	38.50	38.50	38.50	38.50	38.50	38.50

¹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=50584>

² ՀՀ կառավարության «Ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնադրույթները և մատակարարված ոռոգման ջրի կորուստների նորմաները հաստատելու մասին» 2007թ. փետրվարի 8-ի թիվ 188-Ն որոշում:

	ՋՕԸ-ի անվանումը	2010	2011	2012	2013	2014	2015	2016
6	«Արարատ» ՋՕԸ	35.00	35.00	35.00	35.00	35.00	35.00	35.00
7	«Արաքս» ՋՕԸ	43.00	43.00	43.00	43.00	43.00	43.00	43.00
8	«Արմավիր» ՋՕԸ	44.60	44.60	44.60	44.60	44.60	44.60	44.60
9	«Արտաշատ» ՋՕԸ	42.30	42.30	42.30	42.30	42.30	42.30	42.30
10	«Գավառ» ՋՕԸ	31.50	31.50	31.50	31.50	31.50	31.50	31.50
11	«Գառնի-Գեղարդ» ՋՕԸ	26.80	26.80	26.80	26.80	26.80	26.80	26.80
12	«Գեղիկ» ՋՕԸ	39.90	39.90	39.90	39.90	39.90	39.90	39.90
13	«Եղեգնաձոր» ՋՕԸ	38.30	38.30	38.30	38.30	38.30	38.30	38.30
14	«Եղվարդ» ՋՕԸ	46.90	46.90	46.90	46.90	46.90	46.90	46.90
15	«Երևան» ՋՕԸ	40.00	40.00	40.00	40.00	40.00	40.00	40.00
16	«Թալին» ՋՕԸ	53.00	53.00	53.00	53.00	53.00	53.00	53.00
17	«Իջևան» ՋՕԸ	24.10	24.10	24.10	24.10	24.10	24.10	24.10
18	«Լոռու ջրանցք» ՋՕԸ	32.90	32.90	32.90	32.90	32.90	32.90	32.90
19	«Խոյ» ՋՕԸ	46.00	46.00	46.00	46.00	46.00	46.00	46.00
20	«Կասպան» ՋՕԸ	30.00	30.00	30.00	30.00	30.00	30.00	30.00
21	«Կոտայք» ՋՕԸ	47.00	47.00	47.00	47.00	47.00	47.00	47.00
22	«Հրազդան-ջուր» ՋՕԸ	40.60	40.60	40.60	40.60	40.60	40.60	40.60
23	«Մասիս» ՋՕԸ	35.50	35.50	35.50	35.50	35.50	35.50	35.50
24	«Մարտունի» ՋՕԸ	45.80	45.80	45.80	45.80	45.80	45.80	45.80
25	«Մեղրի» ՋՕԸ	40.50	40.50	40.50	40.50	40.50	40.50	40.50
26	«Մերձափնյա» ՋՕԸ	42.70	42.70	42.70	42.70	42.70	42.70	42.70
27	«Մուսալեռ» ՋՕԸ	47.80	47.80	47.80	47.80	47.80	47.80	47.80
28	«Նաիրի» ՋՕԸ	36.50	36.50	36.50	36.50	36.50	36.50	36.50
29	«Նոյեմբերյան» ՋՕԸ	34.50	34.50	34.50	34.50	34.50	34.50	34.50
30	«Շամիրամ» ՋՕԸ	39.10	39.10	39.10	39.10	39.10	39.10	39.10
31	«Շենիկ» ՋՕԸ	43.40	43.40	43.40	43.40	43.40	43.40	43.40
32	«Շիրակ» ՋՕԸ	51.00	51.00	51.00	51.00	51.00	51.00	51.00
33	«Որոտան» ՋՕԸ	40.70	40.70	40.70	40.70	40.70	40.70	40.70
34	«Ուտիք» ՋՕԸ	30.90	30.90	30.90	30.90	30.90	30.90	30.90
35	«Ջրվեժ-Չորաղբյուր» ՋՕԸ	26.30	26.30	26.30	26.30	26.30	26.30	26.30
36	«Սև ջուր – Ախթամար» ՋՕԸ	33.90	33.90	33.90	33.90	33.90	33.90	33.90
37	«Սիսիան» ՋՕԸ	31.60	31.60	31.60	31.50	31.50	31.40	31.40
38	«Վաղարշապատ» ՋՕԸ	40.90	40.90	40.90	40.90	40.90	40.90	40.90
39	«Վայք» ՋՕԸ	30.80	30.80	30.80	30.80	30.80	30.80	30.80
40	«Վարդենիս» ՋՕԸ	40.90	40.90	40.90	40.90	40.90	40.90	40.90
41	«Վեդի» ՋՕԸ	41.80	41.80	41.70	41.70	41.60	41.60	41.50
42	«Փարսի» ՋՕԸ	41.60	41.60	41.60	41.60	41.60	41.60	41.60
43	«Քասախ» ՋՕԸ	37.00	37.00	37.00	37.00	37.00	37.00	37.00
44	«Քարակերտ» ՋՕԸ	43.60	43.60	43.60	43.60	43.60	43.60	43.60
	Ընդամենը	42.90	42.90	42.90	42.90	42.90	42.90	42.90

Ինչպես երևում է ներկայացված աղյուսակից, ոռոգման ջրի կորուստները ՀՀ տարածքում գործող բոլոր ՋՕԸ-ներում միջին հաշվարկով մոտենում են 40-45 տոկոսին, որը բավականին մեծ ցուցանիշ է: Իսկ ՋՕԸ-ների գործունեության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է հնարավորինս նվազեցնել այս գործակիցը:

Կատարված ուսումնասիրությունները և հողվածում ներկայացված տվյալները վկայում են, որ ոռոգման ջրի սակագինը գնալով աճման միտում է ունենալու: Պետության կողմից մեծ ուշադրություն է դարձվում ոռոգման համակարգին: Սրա մասին են վկայում պետական ընթացիկ ֆինանսական ռազմավարության ընդունումը, որի նպատակներն են նպաստել ոռոգվող հողատարածքների ավելացմանը, ինչպես նաև ՋՕԸ-ների ֆինանսական վիճակի բարելավմանը, որոնք մեծաձախ գնով ջուր գնելով ոռոգում-ջրառ ընկերություններից՝ իրենց սեփական ջրաղբյուրներից վերցված ջրաքանակի հետ միասին բաշխում են ջրօգտագործողներին:

ՆԱՐԵԿ ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

ՆԿԳԱՄ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ.

ՓՄՁ-ՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մի շարք հետազոտական աշխատանքներում ՓՄՁ-ների արտահանման ներուժի (ԱՆ) ներկայացման նպատակով առաջարկվում են մի շարք ցուցանիշներ (ՓՄՁ բաժինը երկրի ՀՆԱ-ում, ընդհանուր ձեռնարկությունների մեջ, արտահանման մեջ, ՓՄՁ զբաղվածության բաժինը ընդհանուր զբաղվածության մեջ, արտահանման կողմորոշվածություն ունեցող ՓՄՁ-ների բաժինը ընդհանուր ՓՄՁ-ների մեջ) որոնք ընդհանուր առմամբ ընդունելի են մեր կողմից¹: Սակայն խոսել վերջիններիս մասին, որպես ՓՄՁ-ների արտահանման ներուժի գնահատման տիպային մեթոդաբանության չենք կարող, ավելին հիմնավորված ամբողջական գնահատում, որն առավել կոնկրետացված կլինի որակել արտահանման ներուժը, դեռևս չի իրականացվել:

Եթե դիտենք ՓՄՁ-ների ԱՆ-ի վերը նշված գնահատման ցուցանիշներից մի քանիսը Հայաստանի համար (աղյուսակ 1), ապա կհամոզվենք, որ վերջիններս այնքան էլ ամբողջական չեն և արտահանման ներուժի որակական պատկերը չեն ներկայացնում, ինչը մեթոդաբանական նոր մոտեցման կարիք ունի:

Աղյուսակ 1

ՓՄՁ արտահանման ներուժը

	Հայաստան 2008-2009թ. ²
ՓՄՁ բաժինը ՀՆԱ-ում	42.1%
ՓՄՁ-ների բաժինը ընդհանուր ձեռնարկությունների մեջ	95%
ՓՄՁ-ների բաժինը զբաղվածության մեջ	42.1%
ՓՄՁ բաժինը արտահանման մեջ	17.6%

Երկրի տնտեսական համակարգում ՓՄՁ ոլորտի տեղի և նշանակության առավել ամբողջական պատկեր ստանալու հնարավորություն է ընձեռում նաև Միացյալ ազգերի կազմակերպության ՓՄՁ ոլորտի վերաբերյալ իրականացված հետազոտություններում

¹ Опыт зарубежных стран в развитии конкурентоспособного экспортно-ориентированного малого и среднего предпринимательства http://www.giac.ru/content/document_r_E5F0CC3E-98AF-4DC6-87B0-FF96C8D9DFE2.html.

² <http://www.smednc.am/?laid=1&com=module&module=menu&id=189>.

կիրառվող ագրեգացված մի ցուցանիշ, որը կոչվում է՝ ՓՄՁ զարգացման ինդեքս¹: Այն իր մեջ ներառում է ամբողջ ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը ազգային տնտեսության մակարդակով², իսկ ՓՄՁ զարգացման ինդեքսը կարող է արտահայտվել տոկոսներով և/կամ ՀՆԱ-ի նկատմամբ մեկ շնչին ընկնող եկամուտների հաշվով: Ինչպես նկատում ենք, այս մեթոդը շատ բաներով նման է նախորդին և կրկին չի կարող ամբողջական կերպով ներկայացնել ՓՄՁ ԱՆ-ը: Այն ապացուցելու համար բավական է բերել հետևյալ փաստը՝ 2009թ. 2002 թ.-ի նկատմամբ ՀՀ ՓՄՁ զարգացման ինդեքսը աճել է մոտ 7 անգամ³, այն դեպքում, որ 2009թ. 2003թ.-ի նկատմամբ ՓՄՁ բաժինը արտահանման մեջ աճել է ընդամենը 3.4 %-ային կետով (2009թ.՝ 17.7%, 2003թ.՝ 14.3%⁴):

ՀՀ-ում, բացի վերը նշված խնդիրները, ՓՄՁ-ների արտահանման խթանման հիմնախնդիրների վերաբերյալ սահմանափակ թվով վերլուծություններ կան, իսկ վիճակագրական շարքերն ըստ տարիների դեռևս նման հնարավորություն չեն ընձեռնում սույն ոլորտում տնտեսական գնահատում, կամ զարգացման միտում կանխատեսելու համար: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից չի իրականացվում այդ ոլորտի առանձնացված վիճակագրական հաշվառում (սակայն վերջինիս կողմից պարբերաբար իրականացվել են ոլորտի ձեռնարկություններին վերաբերող ընտրանքային հետազոտություններ)⁵: Չնայած ՀՀ ՓՄՁ-ների զարգացման, արտաքին տնտեսական գործունեության վերաբերյալ բավականին արժեքավոր վերլուծություններ են կատարվել Հայաստանի ՓՄՁ ան զարգացման ազգային կենտրոնի կողմից⁶, սակայն այստեղ ևս խոսք չի գնում ՓՄՁ արտահանման ներուժի գնահատման ընդհանրացնող և ամբողջական ցուցանիշի հաշվարկման մասին:

Այս մեթոդաբանության մշակումը հնարավորություն կտա ձևավորել ԱՆ-ի գնահատման միասնական կանոններ՝ համապատասխան ցուցանիշների և կշռային գործակիցների միջոցով: Արտահանման ներուժի յուրաքանչյուր տարրի ուսումնասիրությունը առանձին չի կարող ներկայացնել հավաստի և կոնկրետ պատկերացում ՓՄՁ-ների արտաքին շուկաներում ունեցած ներուժի և հնարավորությունների վերաբերյալ: Բազմակողմանի և հիմնավորված ուսումնասիրության համար, որի արդյունքում կբացահայտվի ՓՄՁ ԱՆ-ը և վերջինիս ընդլայնման հնարավորությունը և հիմնախնդիրները, անհրաժեշտ է կիրառել համախմբված մոտեցում՝ հիմնված փոխկապակցված ցուցանիշների վրա: Որպես ընդհանրական ցուցանիշ այդ համակարգում հանդես է գալիս ինչպես արդեն նշեցինք **ՓՄՁ արտահանման ներուժի մակարդակի համալիր ցուցանիշը (վերջինս առավել նպատակահարմար է դիտարկել տնտեսության առանձին ոլորտներում, կամ ճյուղերում գործող ՓՄՁ-ների կտրվածքով)**:

ՓՄՁ ԱՆ-ի համակարգային գնահատման մեր կողմից մշակված մեթոդիկան ենթադրում է հետևյալ փուլերի հետևողական անցումը՝

- I. Առաջին փուլում պետք է իրականացվի արտահանման ներուժի նպատակների և խնդիրների որոշումը: Վերջինիս հիմնական նպատակն է ի սկզբանե որոշել թե հատկապես որ ճյուղերի կամ ոլորտների շրջանակներում է (հնարավոր է նաև առանց կոնկրետացնելու ոլորտը՝ այսինքն նպատակ դնել որոշելու ընդհանրապես արտահանման ներուժը) հարկավոր ՓՄՁ-ների արտահանման գործընթացի զարգացման ներուժի բացահայտումը:
- II. Երկրորդ փուլում պետք է առաջ քաշել ԱՆ-ի հիմնական տարրերը: Գնահատման մեթոդաբանության կորդինացվածության մեծացման նպատակով անհրաժեշտ է բաժանել

¹ “Small and medium entrepreneurship sector in Armenia 2003-2004” Reference book, Yerevan 2005 /in armenian/
<http://www.smednc.am/download.php?f=325&fc=Stat%202003-2004.pdf>.

² Հիմնված է 3 հիմնական տնտեսական գործունեության վրա՝ մասնավոր հատվածի տեսակարար կշիռը երկրի տնտեսությունում, ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատուժի տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում:

³ <http://www.smednc.am/?laid=1&com=module&module=menu&id=189>.

⁴ “Small and medium entrepreneurship sector in Armenia 2003-2004” Reference book, Yerevan 2005 /in armenian/
<http://www.smednc.am/download.php?f=325&fc=Stat%202003-2004.pdf>.


⁵ Օրինակ՝ «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման», Main Indicators of Industrial Organizations by Sizes Based on Number of Employees and by Economic Activities (two-digit code) for January-December 2009 (in Armenian)
<http://www.armstat.am/en/?nid=82&id=1120>:

⁶ Մենք ինքներս օգտվել ենք այս կենտրոնի տրամադրած տվյալներից:

այն մի քանի մասերի: Արտահանման ներուժի վերլուծությունը թույլ է տալիս մեզ առանձնացնել այն հիմնական տարրերը, որոնք առավել ազդեցիկ են վերջինիս ձևավորման վրա:

Ի սկզբանե նշենք, որ մենք փորձել ենք ՓՄՁ ԱՆ-ի ընդլայնման զարգացման մակարդակը և հնարավորությունները բնորոշող տարրերը պայմանականորեն բաժանել 4 խմբի, որոնք իրենցից ներկայացնում են առանձին ցուցանիշներ, կամ ցուցանիշների գումար (տես գծապատկեր 1):

Գծապատկեր 1



(X1)-ՓՄՁ ճյուղային արտադրողականությունը ներկայացնող տարրը առաջարկում ենք հաշվարկել ՓՄՁ աշխատանքի արտադրողականության ցուցանիշի միջոցով (տնտեսության կոնկրետ ոլորտում, ճյուղում գործող ՓՄՁ-ում զբաղված մեկ աշխատողի ստեղծած ավելացված արժեքի տեսակարար կշիռը ՓՄՁ ընդհանուր ավելացված արժեքում): Այն կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ՝

$$SME..sect.L.productivity = \frac{SME.sect.value.added}{SME.sect..L.total} * 100 \quad / \quad SME.value.added$$

SME..sect.L.productivity – ՓՄՁ աշխատանքի արտադրողականության ցուցանիշը
SME.add.value. – տնտեսության կոնկրետ ոլորտի կամ ճյուղի կտրվածքով,
SME.sect.value.added – ՓՄՁ-ների կողմից ստեղծած ընդհանուր ավելացված արժեք,
SME.sect..L.total – ՓՄՁ-ների կողմից ստեղծած ավելացված արժեքը տնտեսության կոնկրետ ոլորտի կամ ճյուղի կտրվածքով,
SME.sect..L.total – ՓՄՁ-ում զբաղվածների թիվը տնտեսության կոնկրետ ոլորտի կամ ճյուղի կտրվածքով:

Ընդհանրական առումով, այս տարրը, այսպես ասած, արտահայտում է ՓՄՁ-ների արտադրողականության ապահովման տնտեսական արդյունավետությունը ըստ տնտեսության հիմնական ոլորտների:

(X2)-տարրը ՓՄՁ ճյուղային արտահանման ուղղվածության մակարդակը բնորոշող մի շարք ցուցանիշների ամբողջությունն է: Դրանք են՝

1) ՓՄՁ-ների ճյուղային արտահանման տեսակարար կշիռը ՓՄՁ ընդհանուր արտահանման մեջ ($\frac{SME.sect.export}{SME.export.total} * 100$)

SME.sect.export. – ՓՄՁ արտահանման ծավալը կոնկրետ ոլորտի կամ ճյուղի կտրվածքով,
SME.export.total – ՓՄՁ ընդհանուր արտահանման ծավալը:

- 2) Տնտեսության կոնկրետ ճյուղի կամ ոլորտի համար ՓՄՁ-ների արտահանման կողմնորոշվածությունը (export bias), որը հաշվարկվում է ՓՄՁ-ների ճյուղային արտահանման ծավալը հարաբերելով ՓՄՁ-ների ճյուղային արտադրության ծավալի վրա, արտահայտած %-ով՝

$$\frac{SME.sect.export.}{SME.sect.output} * 100,$$

SME.sect.export. – կոնկրետ ոլորտում ՓՄՁ արտահանման ծավալները,
SME.sect.output. – կոնկրետ ոլորտում ՓՄՁ արտադրության ծավալները:

- 3) Տնտեսության կոնկրետ ճյուղի կամ ոլորտի համար ՓՄՁ-ների արտահանման կողմնորոշվածության ցուցանիշը հարաբերում ենք ՓՄՁ-ների տվյալ ոլորտում, կամ ճյուղում զբաղվածության %-ային ցուցանիշին՝

$$\frac{SME.sect.export.}{SME.sect.output} * 100 \quad / \quad \frac{SME.sect.L.total}{SME.L.total} * 100$$

SME.sect.export. – կոնկրետ ոլորտում ՓՄՁ արտահանման ծավալները,
SME.sect.output. – կոնկրետ ոլորտում ՓՄՁ արտադրության ծավալները,
SME.sect.L.total – ՓՄՁ-ում զբաղվածների թիվը տնտեսության կոնկրետ ոլորտի կամ ճյուղի կտրվածքով,
SME.L.total – ՓՄՁ-ներում ընդհանուր զբաղվածների քանակը այս հաշվարկման արդյունքում կարելի է պարզել թե տնտեսության կոնկրետ ոլորտում ՓՄՁ զբաղվածության 1%-ը ՓՄՁ արտահանման կողմնորոշվածության ցուցանիշի որ մասն է ստեղծում: Որքան ավելի է մեծանում այս ցուցանիշը, այնքան առավել ակնհայտ է, որ տնտեսության տվյալ ոլորտում գործող ՓՄՁ-ում զբաղվածներն առավել շատ են հակված արտահանման կողմնորոշում ունեցող արտադրանք ստեղծելուն:

- 4) Ըստ ոլորտի, կամ ճյուղի ՓՄՁ արտահանման տարեկան %-ային հավելաճի ցուցանիշի և տվյալ ոլորտում, կամ ճյուղում գործող ՓՄՁ-ներում կատարված ներդրումների տարեկան %-ային հավելաճի ցուցանիշի հարաբերությունը՝

$$\frac{SME.sect.ex.\Delta\%}{SME.sect.Inv.\Delta\%}$$

SME.sect.ex.Δ% – ՓՄՁ արտահանման հավելաճի տեմպը,
SME.sect.Inv.Δ% – ՓՄՁ-ներում կատարված ներդրումների հավելաճի տեմպը հետևյալ հաշվարկը ցույց է տալիս, թե կատարված ներդրումների 1% հավելաճը արտահանման քանի տոկոս է ավելացնում:

- 5) Հաշվարկվում է ՓՄՁ հաջորդ տարվա (տարիների) կանխատեսվող արտահանման իրական ծավալների սպասվող հավելաճը՝ ՓՄՁ փաստացի արտահանման իրական ծավալների նկատմամբ: Վերջինս ինքնին արտահայտում է կանխատեսվող արտահանման իրական ծավալները, աճի տեմպը՝ փաստացի արտահանման աճի իրական տեմպի և սպասվող գնաճի տեմպի պայմաններում:

$$\frac{SME.ex.nom * \left(1 + \left(\frac{SME.ex.real.nom. - SME.ex.bas.}{SME.ex.bas.} \right) - Infl_{t+1} \right)}{SME.ex.real.nom} * 100,$$

որտեղ

$$SME.ex.real.nom. = SME.ex.bas. + (SME.ex.nom. - SME.ex.bas.) * (1 - nom.Infl.)$$

SME.ex.real.nom. – ՓՄՁ փաստացի արտահանման իրական ծավալը,
SME.ex.bas. – ՓՄՁ արտահանման ծավալը բազիսային տարում,
SME.ex.nom. – ՓՄՁ փաստացի տարվա արտահանման ծավալը,

nom.Infl. – փաստացի տարվա գնաճ,
Infl._{t+1} – հաջորդ տարվա սպասվող գնաճ:

(X3)-տարրը ՓՄ ձեռնարկատիրության աջակցության և զարգացման խթանման պետական քաղաքականության մակարդակը բնորոշող ցուցանիշներն են, որոնք ճիշտ է լիարժեք չեն կարող արտահայտել իրական պատկերը որակական տեսանկյունից, սակայն ամբողջական պատկեր կարող են ներկայացնել: Դրանք են՝

- 1) ՓՄՁ-ների հարկային բեռը, որը հատկորեն կարող ցույց տալ թե փոքր և միջին գործարարությունը պետական աջակցության ինչպիսի մակարդակ ունի: Սա իր հերթին առաջարկում ենք հաշվարկել հետևյալ ձևով՝

$$SME.Tax.burden = \frac{SME.paid.taxes}{Tax.Revenue} * 100 \quad / \quad \frac{SME.output}{GDP.tot.value} * 100$$

SME.Tax.burden – ՓՄՁ հարկային բեռ,

SME.paid.taxes – ՓՄՁ-ի գծով հարկային եկամուտները,

Tax.Revenue – ընդհանուր հարկային եկամուտներ,

SME.output – ՓՄՁ արտադրության ծավալները,

GDP.tot.value – ՀՆԱ մեծությունը:

- 2) ՓՄՁ-ների զարգացման և արտահանման խթանման խնդիրներով զբաղվող պետական, մասնավոր կազմակերպությունների, տարաբնույթ մասնագիտացված կամ հասարակական կազմակերպությունների զարգացման, վերջիններիս թվաքանակի ընդլայնման միտումը գնահատելու տեսանկյունից նպատակահարմար է կիրառել հետևյալ եղանակը՝

$$\frac{Institut..sme}{Institut.tot.} * 100 \quad / \quad \frac{SME.numb./Institut..sme}{SME.numb.} * 100$$

Institut..sme – ՓՄՁ-ների խնդիրներով զբաղվող պետ. կամ ոչ պետական կազմակերպությունների, կառույցների թիվը,

Institut.tot. – ընդհանուր պետ. կամ ոչ պետական կազմակերպությունների թիվը,

SME.numb. – ՓՄՁ-ների ընդհանուր քանակը:

(X4)-տարրն իր մեջ ներառում ՓՄՁ արտահանման ներուժի ընդլայնման կարևոր պայման հանդիսացող մարքեթինգային գործունեության, արդյունավետ մենեջմենթի կիրառման վերաբերյալ անհրաժեշտ մի շարք տվյալներ՝

1. բրենդային ապրանքների առկայությունը ՓՄՁ կոնկրետ ոլորտի արտադրանքի մեջ,

վերջիններիս տեսակարար կշիռը ($\frac{SME.sect.brend.}{SME.sect.output.} * 100$), որտեղ *SME.sect.brend* – ն

ՓՄՁ-ների կողմից արտադրվող բրենդային ապրանքների ծավալն է կոնկրետ ոլորտի մեջ, իսկ *SME.sect.output.* – ն ՓՄՁ-ների կողմից կոնկրետ ոլորտի շրջանակներում արտադրվող ընդհանուր ապրանքների ծավալը,

2. բարձր տեխնոլոգիական ապրանքների առկայությունը ՓՄՁ ընդհանուր արտադրանքի

մեջ, վերջիններիս տեսակարար կշիռը ($\frac{SME.hitech.prod.}{SME.prod.value} * 100$),

որտեղ *SME.hitech.prod.* – ն ՓՄՁ-ների կողմից արտադրվող բարձր տեխնոլոգիական ապրանքների ծավալն է, իսկ *SME.prod.value* – ն ՓՄՁ-ների կողմից արտադրվող ընդհանուր ապրանքների ծավալը,

3. տնտեսության կոնկրետ ոլորտում գործող ՓՄՁ-ների բրենդ մենեջմենթի ակտիվության մակարդակը,
4. տնտեսության կոնկրետ ոլորտում գործող ՓՄՁ-ներում զարգացած է արդյոք արտահանման լոգիստիկ համակարգը, վերջինիս մակարդակը,
5. տնտեսության կոնկրետ ոլորտում գործող ՓՄՁ-ներում առկա է արդյոք արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող բաժին,
6. տնտեսության կոնկրետ ոլորտում գործող ՓՄՁ-ներն ունեն արդյոք համաշխարհային ինտերնետային ցանցում սեփական կայք, կամ այլ գրանցում,

Անհրաժեշտ է նշել, որ (X4)-տարրի մեջ մտնող 3-ից 6 ցուցանիշները ստացվելու են ՓՄՁ-ների շրջանակներում իրականացվող հարցման արդյունքում, որից էլ կորոշվի թե տնտեսության կոնկրետ ոլորտում գործող ՓՄՁ-ների մեջ այս կետերի գծով ակտիվություն ցուցաբերած ՓՄՁ-ների տեսակարար կշիռը որքան է, և ըստ դրա էլ կտեղադրվեն տվյալները (օրինակ, հարցման են ենթարկվում թեթև արդյունաբերության ոլորտում գործող 100 ՓՄՁ-ներ, և պարզվում է, որ նրանց 35%-ը ունեն արտաքին տնտեսական հարաբերություններով զբաղվող բաժին, 25%-ը բավական մեծ տեղ են հատկացնում բրենդ մենեջմենթին և այլն):

III. Երրորդ փուլը ենթադրում է ԱՆ-ի յուրաքանչյուր տարրի ցուցանիշների շրջանակների որոշումը և դրանց հաշվարկը: Յուրաքանչյուր տարր պետք է հաշվարկվի առանձին՝ սեփական ցուցանիշների հիման վրա: Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ ԱՆ-ի համակարգային հետազոտումը նախատեսում է ցուցանիշների կապակցված համակարգում, քանի որ դրանց համագումարը, առանձ փոխադարձ կապակցվածության ապահովման, չի կարող տալ ԱՆ-ի արդյունավետության օբյեկտիվ ներկայացում, և տվյալների հավաստիություն: Անհրաժեշտ է ԱՆ-ի առանձին տարրերի վերաբերյալ կոնկրետ տվյալների միջև ապահովել օրգանական և կշռային փոխկապվածություն: Այս խնդիրը լուծել ենք հետևյալ ձևով՝

$$SME.sect.ex.pot. = 0.25 * (X1 + X2 + X3 + X4)$$

- $X1 = SME.sect.L.productivity = \frac{SME.sect.value.added}{SME.sect.L.total} * 100 / SME.value.added$
- $X2 = 0.2 (1+2+3+4+5)$
- $X3 = 0.5 (1+2)$
- $X4 = 1/6 (1+2+3+4+5+6)$


IV. Որոշում կայացնելու համար, թե տվյալ երկրի տնտեսության որ ոլորտներն են ՓՄՁ-ների համար համարվում բարձր արտահանման ներուժ ունեցող, նպատակահարմար ենք գտնում կառուցել արտահանման ներուժի արդյունավետ կորը ըստ դիտարկվող տնտեսության ոլորտների:

y-ը ԱՆ-ի գնահատման ինդեքսն է,

x-ը տնտեսության ճյուղերի պայմանական նշանակումներ:

Արդյունավետ կորի կառուցումից հետո համեմատում ենք փաստացի ինդեքսները որոնք են գտնվում կորի շրջանակներում, ինչի հիման վրա հնարավոր է վերջնական եզրահանգում կատարել, թե տնտեսության որ ոլորտներն ունեն իրական ԱՆ:

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, եթե փորձենք մեր մեթոդով հաշվարկել, օրինակ, վերը նշված ոլորտներում ՓՄՁ-ների ԱՆ-ի ինդեքսները, և համեմատություն իրականացնել, ապա միանշանակ պարզ է դառնում, որ արտահանման ներուժը ամենաբարձր ցուցանիշն ունի ռետիլնե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրության ոլորտում:



- 1- հանրագործական արդյունաբերություն
- 2- սննդամթերքի, ներառյալ խմիչքներ, արտադրություն
- 3- մանագործական և կարի արտադրություն
- 4- ռետին և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
- 5- մետաղագործական արդյունաբերություն
- 6- մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 7- էլեկտրական էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն

ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍԱՆ

*ՆԳԱԱ Մ. Զոթանյանի անվան
 փնտրեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

Ձեռնարկասիրական սիճակների գնահատմանը հիմն

Յուրաքանչյուր երկրում ձեռնարկատիրությունը հանդիսանում է ժամանակակից տնտեսության զարգացման անբաժանելի բաղադրիչ: Եվ պատահական չէ, որ ներկայումս այն հողի, կապիտալի և աշխատանքի հետ միասին համարվում է արտադրության և ծառայությունների զարգացման կարևոր (չորրորդ) գործոնը:

Ձեռնարկատիրությունը ոչ միայն պարզապես գործարարության ոլորտի դրսևորում է. այն նաև մտածողության և ապրելակերպի մի յուրահատուկ ձև է, որտեղ շուկայական պայմաններում կենտրոնացած են պետության, հասարակության, սեփականության և սոցիալական շահերը, որոնք իրացվում են կոնկրետ ձեռնարկատիրական ձիրք ունեցող և արտադրության մյուս բաղադրիչների ներգործության արդյունքում:

Ձեռնարկատիրությունը, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկատիրությունը (այսուհետև՝ ՓՄՁ) հանդիսանում է յուրաքանչյուր երկրի տնտեսության հիմնաքարերից մեկը, որի վրա կարելի է կառուցել կայուն տնտեսական աճ և սոցիալական բարձր կենսամակարդակ:

ՀՀ-ում ՓՄՁ-ների պատմությունն ուղեկցվել է հուշագրավ զարգացումներով, որոնք իրենց ազդեցությունն են թողել տնտեսության գրեթե բոլոր ոլորտների վրա: Այդ համատեքստում, շատ կարևոր փոփոխություններ են տեղի ունեցել, որոնք միտված էին պետական ձեռնարկությունների մասնավորեցմանն ու մասնավոր մեծ հատվածի առաջացմանը, որն իր հերթին կարևոր դեր կատարեց երկրում սոցիալ-տնտեսական հարաբերությունների հաստատման

գործում: Մասնավորեցման գործընթացի արդյունքում առաջացած տնտեսական ազատությունը շատ կարևոր էր թե գործարարի, թե սեփականատիրոջ և թե վերջնական սպառողի համար: Այդ ազատությունն իրականում հանդիսանում է իրավունքի ազատություն՝ յուրաքանչյուրի համար՝ տնօրինելու այս կամ այն գործը սկսելու կամ դադարեցնելու իր սեփական ցանկությունը, կազմակերպելու ռեսուրսների ձեռքբերումը և բաշխումը, նոր տեխնոլոգիաների ներդրումը, ցանկացած ապրանքի արտադրումը կամ ծառայության մատուցումը և գնային քաղաքականության մշակումը՝ սեփական հայեցողությամբ: Հանդիսանալով սոցիալ-տնտեսական գործընթաց՝ մասնավորեցումը նաև հանդիսանում է տնտեսության ռացիոնալ կառավարման, արտադրական արդյունավետության բարձրացման, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոց, որն ըստ էության, առաջ է բերում մրցակցություն և սահմանափակում է պետական վարչակազմի ազդեցությունը ձեռնարկատիրության ոլորտի տարրերի վրա:

1991թ. մարտին ընդունված առևտրի, հանրային սննդի, վճարովի ծառայությունների և անավարտ շինարարության փոքր օբյեկտի սեփականաշնորհման մասին ՀՀ կառավարության ընդունած որոշումով սկիզբ դրվեց սեփականաշնորհման գործընթացին ՀՀ-ում, որը շարունակվում է մինչ օրս: Բացի այդ, ՓՄՁ ոլորտում զբաղված է աշխարհի բնակչության 50%-ից ավելին, և հենց նրանք են ապահովում համախառն ներքին արդյունքի 60-70%-ը¹:

Այսպես օրինակ, Ճապոնիայում և մի շարք արևմտյան երկրներում, այդ թվում ԱՄՆ-ում և Գերմանիայում, առավել բարձր է գնահատվում ՓՄՁ-ների դերը տնտեսության ոլորտում, քանի որ հենց վերջիններս են ապահովում խոշոր ձեռնարկությունների բնականոն աշխատանքը, տրամադրելով անհրաժեշտ ապրանքներ և ծառայություններ: Խոշորագույն ճապոնական ձեռնարկությունները շատ հաճախ գտնում են նմանատիպ փոքր կազմակերպությունների հետ համագործակելն ավելի շահավետ, քանի որ վերջիններս, գործելով խիստ մրցակցության միջավայրում, առաջարկում են խոշոր կազմակերպություններին առավել շահավետ պայմաններ²: Այս և մնացած հանգամանքներից ելնելով, ակնհայտ է, որ ՓՄՁ-ները բավական տարածված են աշխարհում: ՀՀ-ում, սակայն, ՓՄՁ-ները այդքան էլ չեն կատարում իրենց առաքելությունը՝ գործազրկության մակարդակի կրճատման, տնտեսական աճի և կենսամակարդակի բարձրացման առումով: Պատճառը թերևս պետք է փնտրել մի շարք գործոնների մեջ:

Նախ և առաջ, ՀՀ-ում ՓՄՁ-ներին առնչվող օրենքներում չափորոշիչների սահմանումը ոչ լիարժեք է: Եթե Եվրամիության երկրներում գոյություն ունեն քանակական և որակական չափանիշներ ՓՄՁ-ների դասակարգման համար, ապա ՀՀ-ում ուղղորդվում են միայն քանակական չափորոշիչներով: Ըստ այդմ, Եվրամիության երկրներում գերփոքր է համարվում այն ձեռնարկությունը, որն ունի աշխատողների միջին տարեկան թվաքանակ 0-ից 9 և տարեկան շրջանառության մինչև 2 միլիոն եվրո, փոքր՝ 10-14 աշխատողների թվաքանակով և մինչև 10 միլիոն եվրո շրջանառությամբ և միջին՝ 50-250 աշխատողների թվաքանակով և մինչև 50 միլիոն եվրո շրջանառությամբ³:

ՀՀ-ում, ի տարբերություն Եվրամիության, ձեռնարկությունները դասակարգվում են միայն աշխատողների տարեկան միջին թվաքանակով, որոնք սահմանված են 2000թ. դեկտեմբերի 5-ին ընդունված «Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Այսպես, ՀՀ-ում գործունեություն ծավալող գերփոքր ձեռնարկություն են համարվում տարեկան միջին 5 աշխատող ունեցող, փոքր՝ 15-50 աշխատող և միջին՝ 30-100 աշխատող (կախված նրանից, թե տնտեսության որ ճյուղում է գործունեություն ծավալում ընկերությունը) ունեցող ձեռնարկությունները⁴: Հարկ է նշել, որ սույն օրենքը չի տարածվում վարկային, ապահովագրական և ներդրումային կազմակերպությունների, գրավատների, արժեթղթերի շուկայի մասնագիտացած մասնակիցների, խաղատների և այլն վրա:

¹ Հարությունյան Գ., «Գործարարության ծավալման տնտեսական խթանները Հայաստանի Հանրապետությունում», 2007, էջ 64:

² Small business in Japan “White paper on small and medium enterprises in Japan”, MTI, 2002, p. 109,219:

³ Փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2004-2005, տեղեկագիր, Երևան 2006, էջ. 6:

⁴ «Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, հոդված 1:

Հայաստանում յուրաքանչյուր տարի ավելանում է ՓՄՁ-ների թիվը, որն ինքնին դրական երևույթ է, հաշվի առնելով վերջիններիս դերը տնտեսության զարգացման գործում: Այսպես, ՓՄՁ-ների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ ընթացիկ գներով 2006թ.-ի դրությամբ կազմել է 40,3%, 2003թ. 36,5%-ի, 2004թ.-ի 38,6%-ի և 2005թ.-ի 39,8%-ի դիմաց¹: Սակայն վերոհիշյալ ցուցանիշները չեն բավարարում Հայաստանում ՓՄՁ-ների զարգացվածությունը դրական գնահատելու համար, քանի որ ՀՀ ՓՄՁ ոլորտի զարգացմանը խոչընդոտում են բազմաթիվ գործոններ: Դրանցից են՝

1. ՓՄՁ-ների զարգացման խոչընդոտներից մեկը հանդիսանում է տարածաշրջանային անհավասար բաշխվածությունը: 2005թ.-ին ՓՄՁ-ների 48.5% կամ 45529 տնտեսավարող սուբյեկտ կենտրոնացված էր Երևանում, իսկ մնացած 51.5% կամ 48345 սուբյեկտ՝ հանրապետության մնացած մարզերում²: Այսպիսով՝ ակնհայտ է դառնում, որ գործարար ակտիվության տեսանկյունից Երևանի և մարզերի միջև առկա է անհավասարաչափ տեղաբաշխում, և հետևաբար նաև՝ զարգացում: Դա, բնականաբար, բացասականորեն է անդրադառնում Երևանի և մարզերի հավասարաչափ զարգացման վրա:
2. Մարզերում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտները մուտք չունեն այնպիսի ծառայությունների, ինչպիսիք են, օրինակ, իրավաբանական, հարկային և հաշվապահական խորհրդատվությունը, և այլն: Ուստի, վերոհիշյալ խնդիրների, ինչպես նաև մարզերում տրանսպորտային ենթակառուցվածքների և տրանսպորտային միջոցների թերզարգացվածության պատճառով, մարզերում ՓՄՁ-ների զարգացումը դեռ մնում է անբավարար: Հետևաբար անհրաժեշտ է ստեղծել անհրաժեշտ պայմաններ, ձևավորել համապատասխան տնտեսական և սոցիալական միջավայր՝ մարզերում ձեռնարկատիրության զարգացմանը նպաստելու համար:

Մեր կողմից ներկայացված գործոնները բացասաբար են ազդում նաև բնակչության զբաղվածության վրա: Չնայած կառավարության կողմից հրապարակված տվյալներին՝ մարզերում գործազրկությունը այնուամենայնիվ մնում է կարևոր հիմնախնդիր, ոչ պաշտոնական տվյալներով կազմելով 30-40%³:

Բացի այդ, ցածր է նաև ՓՄՁ-ների տեսակարար կշիռը արտաքին առևտրի ցուցանիշերում: Օրինակ, 2004թ.-ին այն կազմել է 15.7%, իսկ ներմուծման մեջ՝ 34.8%⁴: Դա բացատրվում է նրանով, որ ՀՀ-ում ՓՄՁ-ները ունեն կողմնորոշում մեծապես դեպի ներքին շուկան, քանի որ շատ կազմակերպությունների արտադրանքը չի բավարարում արտաքին շուկաների պահանջարկի որակի չափանիշերին, իսկ այն կազմակերպությունների համար, որի արտադրանքը բավարարում է, կան ֆինանսական և արտաքին տնտեսական կապերի բացակայության խնդիրներ:

ՀՀ-ում բավական ցածր է ՓՄՁ-ների մասնաբաժինը բյուջեի եկամուտների ձևավորման գործում: ՀՀ պետ.բյուջեի եկամուտների «առյուծի բաժինը» ապահովել են խոշոր ձեռնարկությունները՝ միջինում տարեկան 72%-28% համամասնությամբ⁵:

Այս ամենից պետք է հետևություն անել, որ Հայաստանում ՓՄՁ-ների զարգացվածությունը գտնվում է ցածր մակարդակի վրա, և իրավիճակը փոխելու համար անհրաժեշտ են լուրջ փոփոխություններ պետական կառավարման որոշ ոլորտներում: Ուստի տվյալ հիմնախնդիրների համատեքստում կարևորվում է ՓՄՁ-ների զարգացման գործում պետության դերը: Կառավարման մեխանիզմը հանդիսանում է այն կարևոր գործիքը, որը կարգավորում է տնտեսության այդ ոլորտը, մասնավորապես՝ պետության դերը կարևորվում է իր վարած հարկային քաղաքականությամբ: Օրինակ՝ Ֆրանսիայում ստեղծված փոքր կազմակերպությունները 3 տարի ազատվում են շահութահարկի վճարումից, իսկ հաջորդ 2 տարիների վճարում հարկերի ընդամենը 50%⁶:

¹ Հարությունյան Դ., «Գործարարության ծավալման տնտեսական խթանները Հայաստանի Հանրապետությունում», 2007, էջ 70:

² Տեղեկատու, «Փոքր ու միջին ձեռնարկատիրությունների գործունեությունների բնագավառը Հայաստանում», Երևան 2005, էջ.37:

³ ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն, <http://armstat.am/en/?module=publications&mid=6&id=109>:

⁴ Նույն աղբյուրը:

⁵ Նույն աղբյուրը:

⁶ <http://www.frenchentree.com/france-employment-work-jobs/DisplayArticle.asp?ID=37356>

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում, հատկապես տնտեսական ճգնաժամի պայմաններում, ՀՀ-ում պետության աջակցությունը փոքր և միջին ձեռնարկություններին առավել անհրաժեշտ է: Չնայած պետության կողմից իրականացված ծրագրերին և ընդունված օրենքներին, իրավիճակը ոլորտում դեռ մնում է անբավարար: Պետության կողմից՝ մենաշնորհների դեմ պայքարին ծառայող բարեփոխումները և դրանով տնտեսության արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերը պետք է հանդիսանան ՓՄՁ-ի զարգացման հիմնական ուղղություններից մեկը, քանի որ տնտեսության այս հատվածը անհրաժեշտ միջավայր է ձևավորում մրցակցության համար, որը պատրաստ է արագ արձագանքել շուկայում իրականացվող ցանկացած փոփոխության: Իրականում, սակայն, հստակ կարգավորման համակարգի բացակայությունը ՓՄՁ-ների համար, որը դրսևորվում է վարկերի ներգրավման, նյութական ռեսուրսների աջակցության բնագավառում, այս ձեռնարկություններին դրել է ծանր վիճակում՝ վերջիններիս անհավասար մրցակցության մեջ դնելով խոշոր կազմակերպությունների հետ: Բանն նրանում է, որ ՀՀ-ում փոքր գործավարությունը դեռ չի հասել բավարար մակարդակի, որպեսզի կարողանա ինքնակարգավորվել, հարմարվել առկա շուկայական տնտեսության պայմաններին: Ավելին, որոշ փորձագետների կարծիքով, Հայաստանում կան բազմաթիվ պատենտներ, որոնք խոչընդոտում են ՓՄՁ-ների կայուն զարգացմանը:

Այդ խոչընդոտների շարքում դասվում են օրինական դաշտում ոչ կատարյալ օրենքների առկայությունը, որոնցում անհրաժեշտ են փոփոխություններ՝ դաշտը բարելավելու նպատակով: Բարձր հարկերը, վարչարարական խոչընդոտները, անհավասար մրցակցային դաշտը, ոչ բավարար ֆինանսական միջոցները, ենթակառուցվածքների ցածր զարգացվածության մակարդակը, գործարարների մասնագիտական թերի պատրաստվածությունը, մասնագետների պակասը և այլ խոչընդոտները լուրջ պատենտ կարող են հանդիսանալ երկրում ՓՄՁ-ների զարգացման համար: Որպեսզի ՓՄՁ-ները դառնան իսկապես կենսունակ և ողջ ծավալով օգտագործվեն իրենց մեջ առկա ներուժը, պետությունն էական ջանքեր պետք է գործադրի՝ ոլորտի զարգացմանը նպաստելու համար: Այսօր ՓՄՁ-ներն ավելին, քան երբևէ ունեն պետական աջակցության կարիք, և այդ աջակցությունը պետք է լինի համապարփակ, երկարաժամկետ և ուղղված լինի ոլորտում դրական արդյունքների ստացմանը, որն էլ իր հերթին ապագայում դրական արդյունքներ կստեղծի ամբողջ տնտեսության համար: «ՓՄՁ աջակցության համակարգ»-ը, որոշ մասնագետների գնահատմամբ, ենթադրում է պետական և հասարակական կառույցների կողմից ՓՄՁ-ների կայունացման, մրցունակության բարձրացման և զարգացմանն ուղղված անհրաժեշտ բարենպաստ տնտեսական, իրավական և ենթակառուցվածքային միջավայրի ստեղծումը, ինչպես նաև ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսների ներդրումը:

Այդ համատեքստում, կարևոր է նաև միջազգային փորձի կիրառումը Հայաստանում ՓՄՁ զարգացմանն ուղղված քաղաքականությունը մշակելիս: Անշուշտ, յուրաքանչյուր մոտեցում պետք է հաշվի առնի տեղական շուկայի առանձնահատկությունները, այն պետք է իր մեջ ներառի քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ ոլորտների համապարփակ վերլուծություն, որը թույլ կտա հնարավորինս ճշգրիտ գնահատական տալ ներկա իրավիճակին և, հետևաբար կառաջարկի ողջամիտ լուծումներ առկա խնդիրների կարգավորման համար: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, փոքր ու միջին ձեռնարկատիրության ապագան ՀՀ-ում և նրա ձևավորման հնարավորությունները կապված են փոքր և խոշոր ձեռնարկությունների միջև գործարար կապերի ընդլայնման և զարգացման հետ, ինչպես դա արվում է տնտեսապես զարգացած երկրներում, ինչպիսիք են Ճապոնիան, ԱՄՆ և Եվրամիության երկրները:

Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության ապագա զարգացման հեռանկարները ուղղակիորեն կապված են պետության աջակցության հետ՝ հարկային բեռի թեթևացման և բարենպաստ իրավական դաշտի ձևավորման համար, առկա ֆինանսավարկային մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև ոլորտում առկա այլ խնդիրներին հայեցակարգային և հիմնավոր լուծումներ տալու համար:

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՃՂՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ. ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ**

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում գործող փոքր ու միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման դինամիկան և նրա հասարակական և տնտեսական խնդիրների լուծմանն ուղղված նպատակները պահանջում են շարունակական վերահսկում և վերջինիս գործունեության վրա ազդող բազմաթիվ գործոնների վերլուծություն:

ՓՄՁ կողմից իրականացվող գործունեության կարևոր դեր է խաղում շուկայական տնտեսության ճկունության և առաձգականության բարձրացման գործում, քանի որ այն ապահովում է աշխատանքային, ֆինանսական և նյութական ռեսուրսների արագ տեղաշարժը՝ շուկայի պահանջարկին համապատասխան: Ի վերջո, այն նպաստում է տնտեսության կառուցվածքի արդյունավետությանը, եկամուտների աճին, զբաղվածության բարձր մակարդակին, սոցիալական լարվածության թուլացմանը, ինչպես նաև միջին խավի ստեղծմանը: Հաշվի առնելով այս և այլ տնտեսական ու սոցիալական գործոնները, հետևում է, որ պետության համար ՓՄՁ զարգացման խնդիրը պետք է լինի առաջնահերթություն:

ՓՄՁ ոլորտի ներկայիս իրավիճակը Հայաստանի տնտեսության մեջ պետք է դիտարկել մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության ներքո, որոնք արդյունք են հանդիսանում ֆինանսական տնտեսական ճգնաժամի ինչպես զարգացած երկրներում, այդպես էլ Հայաստանում:

Օբյեկտիվ գործոնների շարքում դասվում է ընդհանուր մակտրոտնտեսական իրավիճակը, որն արտահայտվում է օրեցօր աճող համաշխարհային տնտեսության գլոբալիզացիայի գործընթացով և հանդիսանում է Հայաստանի տնտեսության վրա ազդող գործոններից մեկը: Արտերկրյա և հայրենական տնտեսագետները նշում են, որ աշխարհը կանգնած է համաշխարհային տնտեսական փոփոխությունների եզրին, որը կապված է, այսպես կոչված, «սպառման դարաշրջանի» ավարտի հետ, որտեղ ԱՄՆ-ն ստանձնել էր առաջնորդի դեր՝ որպես խոշորագույն սպառող աշխարհում¹:

Օրինակ, 2008թ. առաջին կիսամյակում, ըստ պաշտոնական տվյալների, մոտ 67 հազար գործարաններ հայտարարվեցին սնանկ: 2009թ. հունվար-փետրվար ամիսներին ԱՄՆ ներկրված ապրանքների ծավալը նվազել է 10%-ով²: Համաշխարհային տնտեսության գլոբալացման գործընթացի համատեքստում, այս փաստը կարող է բացասաբար անդրադառնալ նաև Հայաստանում գործող փոքր ու միջին ձեռնարկությունների արտադրողականության վրա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՄՆ-ն հանդիսանում է Հայաստանից արտահանվող ապրանքների խոշորագույն շուկաներից մեկը:

Արդյունքում կարելի է ենթադրել, որ ճգնաժամը կհանգեցնի ՓՄՁ սուբյեկտների քանակի կրճատման, քանի որ շատ ձեռնարկություններ ստիպված կլինեն նվազեցնել արտադրության ծավալները կամ լիովին կասեցնել իրենց գործունեությունը, որն իր հերթին կավելացնի գործազուրկների թիվը երկրում, կնվազեցնի ապրանքաշրջանառությունն ու ներդրումների ծավալը, կբերի աշխատավարձերի կրճատմանը ՀՀ-ում:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը չեզոքացնելու համար՝ պետությունը պետք է մշակի հստակ հայեցակարգային մոտեցում՝ սատարելու երկրում ՓՄՁ-ների ամրապնդումն ու զարգացումը: Այն իր մեջ պետք է ներառի հետևյալ բաղադրիչները՝

- պետության կողմից ՓՄՁ-ների գործունեության կարգավորման իրավական հիմքերի օպտիմալացում,
- ՓՄՁ-ների հարկման գործընթացների բարելավում,

¹ Джош Грин. Надежны ли Ваши зарубежные партнеры? Harvard Business Review Россия. Ноябрь 2009.С.24.

² Harvard Business Review, Ռուսաստան. Նոյեմբեր 2009, էջ 24:

- ՓՄՁ-ների զարգացման համար անհրաժեշտ ֆինանսավարկային մեխանիզմների զարգացում,
 - ՓՄՁ-ներին մատուցվող տեղեկատվական աջակցության կատարելագործում
 - ՓՄՁ-ներում ներգրավված կադրերի վերապատրաստման մեխանիզմների ամրապնդում և զարգացում
 - ակտիվ հակամենաշնորհային և անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարին ուղղված քաղաքականություն
 - ՓՄՁ-ներին պետական աջակցության մեխանիզմների կատարելագործում
- Վերոհիշյալ քայլերից բացի, պետությունը պետք է իր ուշադրության կենտրոնում պահի նաև ՀՀ մարզերում ՓՄՁ-ների գործունեության խթանման խնդիրները:

Ձեռնարկատիրական ողջ ներուժի իրականացման համար անհրաժեշտ է, որպեսզի պետությունը ստեղծի այն բարենպաստ միջավայրը, որում ՓՄՁ-ները կկարողանան գործել ավելի արդյունավետ: Ներկայումս կարևոր է նաև պետության դերը հակաճգնաժամային համալիր միջոցառումների իրականացման մեջ, որոնք միտված են չեզոքացնելու համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը Հայաստանյան ընկերությունների վրա:

- Գտնում ենք, որ ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի առանձնահատկությունների վերլուծությունը կօգնի բացահայտել այն հիմնախնդիրները, որոնք բացասաբար են ազդում վերջիններիս գործունեության վրա: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր հանրապետությունում ՓՄՁ-ների գործունեությանը խոչընդոտում են հետևյալ գործոնները¹,
- շուկայում անկայունության բարձր մակարդակը, որն արտահայտվում է ՓՄՁ-ների զնոդունակության նվազեցմամբ և անվճարունակության բարձրացումով՝ կապված ընդհանուր պահանջարկի անկման հետ ինչպես սպառողների, այնպես էլ կապալառուների կողմից,
- լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունը և բանկերի կողմից վարկավորման անշահավետ պայմանները,
- ներդրումների անբավարար մակարդակը, որի արդյունքում անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելը դառնում է անհնար և հետևաբար բարձրանում է հիմնական կապիտալի արժեզրկման աստիճանը,
- հումքի և այլ նյութերի ձեռք բերման, աշխատավարձերի վճարման համար անհրաժեշտ շրջանառու միջոցների բացակայությունը
- ծանր հարկային բեռը, որը պահանջում է պետական աջակցություն՝ հարկերի կրճատման, հարկման գործընթացի պարզեցման, հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների հաճախականության կրճատման միջոցով,
- արտադրության հանդեպ պահանջարկի և, հետևաբար եկամտի անկում, որի արդյունքում վարկերի մարումը ՓՄՁ սուբյեկտների կողմից դառնում է անհնար,
- վարչարարական վերահսկողության մեծ ճնշում՝ սանիտարա-համաճարակային ծառայության, հարկային մարմինների, ներքին գործերի ստորաբաժանումների կողմից իրականացվող հաճախակի ստուգումների տեսքով և այլն²:

ՓՄՁ ոլորտում առկա խնդիրներն հիմնականում առնչվում են ֆինանսական ռեսուրսների սակավ լինելու հետ: Ուստի, պետության կողմից իրականացվող հակա-ճգնաժամային միջոցառումների շարքը, նախ և առաջ պետք է իր մեջ ներառի ՓՄՁ-ների գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական հիմքի ամրապնդման և վերջինիս արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլեր:

Հաշվի առնելով ներկայումս Հայաստանում ՓՄՁ գործունեությանը խոչընդոտող հիմնախնդիրները, պետության դերը պետք է կայանա հակաճգնաժամային համալիր ծրագրի մշակման և այդ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ մեթոդների, գործիքների և ընդհանուր ուղղվածության սահմանման մեջ:

¹ «Միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում», Ա. Փանոսյանի ատենախոսություն, Երևան 2008, էջ. 137.

² Հարությունյան Դ., «Գործարարության ծավալման տնտեսական խթանները Հայաստանի Հանրապետությունում», 2007, էջ 54-64:

Նախ և առաջ, այդ աջակցության դրսևորում կարող են լինել հարկային բեռի թեթևացմանն ուղղված քայլերը, ինչպես նաև հարկային խթանման համակարգի կատարելագործումը: Այդ համակարգի կատարելագործմանն ուղղված բարեփոխումների միջոցով անհրաժեշտ է հնարավորինս կրճատել բացասական գործոնների ազդեցությունը ՓՄՁ սուբյեկտների գործունեության վրա: Այն պետք է ապահովի արդարացիության ու հավասարության սկզբունքի կիրառումը, ուստ որի, հարկային արտոնությունների և անհատին հարկերից ազատելու համակարգի շնորհիվ հնարավոր կլինի սահմանել փոքր ձեռներեցության հարկման հարաբերականորեն ցածր, բայց արդարացի բեռ, հնարավորինս նվազեցնել վարչարարական վերահսկողության մեխանիզմների կիրառումը, սահմանափակել իրավապահ մարմինների կողմից իրականացվող հաճախակի ստուգումները, ձերբազատվել տարբեր գերատեսչությունների կողմից իրականացվող ստուգումների կրկնությունից:

Երկրորդ հերթին, ՓՄՁ զարգացմանն ուղղված քայլերի համատեքստում անհրաժեշտ է կատարելագործել ֆինանսական ռեսուրսների տրամադրման համակարգերը: Դա կարող է տեղի ունենալ ինչպես պետության կողմից ցուցաբերվող աջակցության տեսքով, այնպես էլ բանկերի կողմից տրամադրվող տարատեսակ վարկավորման ծրագրերի միջոցով: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է իրականացնել ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկային երաշխավորությունների և լիզինգային ծառայություններից օգտվելու խթանման ծրագրերի ընդլայնում, որը, դրական արդյունքների դեպքում, հիմք կծառայի ոլորտի հետագա զարգացման համար: Նախ և առաջ, պետք է լուծել ՓՄՁ-ներին տրամադրվող վարկերի հասանելիության հարցը, որի համար լուրջ խոչընդոտ են հանդիսանում բարձր տոկոսադրույքները, գրավադրման անշահավետ պայմանները, և ՀՀ մարզերի դեպքում՝ հատկապես սահմանամերձ գոտիներում, վարկավորման հնարավորությունների սահմանափակ լինելը:

Բացի այդ, ՀՀ կառավարության կողմից արվել են քայլեր՝ տնտեսվարող սուբյեկտների աջակցությանն ուղղված միջոցառումների լայն շրջանակ տեքստով: Այդ համատեքստում Հայաստանում իրականացված դրական փոփոխությունների շարքում կարելի է առանձնացնել «Հայաստանի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի ստեղծումը¹, որն ապահովում է ՓՄՁ սուբյեկտներին տեղեկատվական, իրավաբանական, խորհրդատվական, ինչպես նաև ֆինանսական աջակցություն՝ պետական տարբեր ծրագրերի միջոցով:

ՓՄՁ զարգացմանն ուղղված պետական աջակցության մեկ այլ կարևոր գործիք է հանդիսանում պետական գնումների համակարգը, որը արտադրանքի իրացման լրացուցիչ հնարավորություն է ընձեռում փոքր ու միջին ընկերություններին, արագացնում է կապիտալի կուտակման գործընթացը և ըստ երևույթին, նպաստում արտադրության ծավալների աճին և մրցունակության բարձրացմանը:

Հաշվի առնելով վերոհիշյալ խնդիրներն ու նրանց լուծմանն ուղղված առաջարկությունները, ակնհայտ է, որ պետական աջակցությունը հանդիսանում է ՓՄՁ զարգացման կարևոր նախապայմաններից, և պետական համակարգի աջակցությունն իր մեջ պետք է ներառի հետևյալ հիմնախնդիրների լուծմանն ուղղված քայլեր՝

- Պետական աջակցության բոլոր մարմինների աշխատանքների կոորդինացում, այդ թվում նաև մարզային իշխանությունների կողմից:
- ՓՄՁ-ներին բավարար ֆինանսական ռեսուրսներով ապահովումը, որը պետք է իրականացնի պետության և բանկային ոլորտի ուժերի միավորման միջոցով:
- Հարկային դաշտի կատարելագործումը, որը կատեղծի բարենպաստ միջավայր ՓՄՁ-ների զարգացման համար:
- Մակրոտնտեսական ցուցանիշերի բարելավում (գործազրկություն, սղան, համախառն ներքին արդյունք)

Ուստի, ամփոփելով մեր կողմից այս հոդվածի շրջանակներում առաջ քաշած հիմնախնդիրները, կարծում ենք, որ միայն այս և այլ հրատապ հարցերին լուծում տալու դեպքում է հնարավոր երկրում ստեղծել ՓՄՁ-ների արդյունավետ գործունեությունը նպաստող միջավայրը, որն իր հերթին կհանգեցնի ընդհանուր տնտեսության բարելավմանը և կնպաստի երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

¹ <http://smednc.am/?laid=2&com=module&module=menu&id=69>

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԽՈՐԱՅՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ**

Գյուղատնտեսությունը հանրապետության տնտեսության առանցքային ճյուղերից մեկն է: Վերջին տարիներին (2008-2010 թթ.) միջին տվյալներով գյուղատնտեսությանը բաժին է ընկնում համախառն ներքին արդյունքի մոտ 20%-ը: Հանրապետության ընդհանուր զբաղվածության մեջ գյուղատնտեսության մասնաբաժինը կազմում է 46%: Արտաքին ապրանքաշրջանառության մեջ 16.8%-ը պատկանում է տեղական արտադրության գյուղատնտեսական ծագման արտադրատեսակներին, այդ թվում արտահանման կառուցվածքում այն կազմում է 17.1%-ը, իսկ ներմուծման՝ 16.8%-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2010թ. տվյալներով կազմել է 596,7 մլրդ դրամ, որը նախորդ տարվա 85,8%-ն է: Բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 385,8 մլրդ դրամ (նախորդ տարվա 79,5%): Անասնաբուծության արտադրանքը կազմել է 210,9 մլրդ դրամ (նախորդ տարվա 99,0%): Գյուղատնտեսության տնտեսական անկումը 14,5% է, այդ թվում բուսաբուծությունում՝ 20,5%, իսկ անասնաբուծությունում 1,0%: Հանրապետության համախառն արտադրանքի կրճատումը պայմանավորված է հիմնական մշակաբույսերի արտադրության ծավալների կրճատմամբ, իսկ անասնապահության համախառն արտադրանքի կրճատումը պայմանավորված է մսի (4,2%-ով) և կաթի արտադրության (3,6%-ով) նվազմամբ:

Գյուղատնտեսության առանձնահատկությունները, ճյուղի զարգացման համար տարբեր պայմանների առկայությունը և երկրի կենսագործունեության և պարենային ապահովության գործում ճյուղի բացառիկ նշանակությունը պահանջում է գյուղատնտեսության աջակցության մեխանիզմների կիրառում, մասնավորապես ագրովերամշակող արդյունաբերությանը, որը համարվում է երկրի տնտեսության կարևորագույն և բարձր արդյունավետությամբ աշխատող ճյուղերից մեկը: Այն կարևորվում է նաև որպես գյուղական բնակչության զբաղվածության և եկամուտների աղբյուր: Ագրովերամշակման ոլորտի կայուն զարգացումը խթան է հանդիսանում երկրի գյուղատնտեսության մյուս հիմնական ճյուղերի՝ բուսաբուծության և անասնաբուծության զարգացմանը:

Հանրապետության ընդհանուր արդյունաբերության արդյունքի մոտ 30%-ը պատկանում է ագրովերամշակող արդյունաբերությանը, որը պայմանավորված է մի շարք հետևողական և բազմաձևավալ միջոցառումներով, ինչպիսիք են՝ մասնավորեցումը, օրենսդրական դաշտի բարելավումը, շուկայական ենթակառուցվածքների ստեղծումն ու մեծածավալ ներդրումները:

Մյուս ճյուղերին զուգընթաց՝ ագրովերամշակող կազմակերպությունների մասնավորեցումը հուսալի նախադրյալներ է ստեղծել գյուղում առկա ներուժի արդյունավետ օգտագործման համար: Ագրոպարենային ոլորտում ձևավորվել է 340.000 գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսության սպասարկման և գյուղմթերքների իրացման և վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Գյուղացիական տնտեսությունների վարկավորման, տեխնոլոգիաների կատարելագործման, նյութատեխնիկական միջոցների մատակարարման, որակի ստանդարտների կիրառման և շատ այլ միջոցառումներ արդյունավետ կերպով կարող են իրականացվել ագրովերամշակող կազմակերպությունների հետ համագործակցության խորացման միջոցով:

Ագրովերամշակող արդյունաբերական ձեռնարկությունները, երկարաժամկետ պայմանագրային փոխհարաբերություններով աշխատելով գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների հետ, երաշխիք են ապահովում հումքի իրացման, արտադրության ճիշտ կազմակերպման, արտադրության ծավալների ավելացման և գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի ավելացման համար:

Վերջին տասնամյակում ագրովերամշակման համակարգում նկատելիորեն ավելացել է հզորությունների օգտագործումը, որի արդյունքում մեղմացել են գյուղատնտեսական հումքի մթերումների հիմնախնդիրները: 2010թ. հաջողվել է մթերել շուրջ 168,3 հազար տոննա պտուղ, բանջարեղեն և խաղող (մոտ 18,9 մլրդ դրամի), որից՝ 33,3 հազար տոննա պտուղ, բանջարեղեն (մոտ 2,1 մլրդ դրամ), 135,0 հազար տոննա խաղող (մոտ 16,8 մլրդ դրամի): Մթերված խաղողի 1 կգ-ի միջին գինը կազմել է 124,4 դրամ, նախորդ տարվա 115,4-ի դիմաց: Արտադրանքի գինը հիմնականում պայմանավորված է առաջարկի զիջմամբ ներքին շուկայի պահանջներին, ինչպես նաև սպառող շրջայում միջնորդ վերավաճառողների առկայությամբ: Ինչ խոսք, 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի դժվարությունների հետևանքով որոշ մթերումների ծավալները նկատելիորեն կրճատվել են: 2009թ. մթերվել է շուրջ 127.7 հազ. տոննա խաղող, 32.3 հազ. տոննա բանջար և 11.3 հազ. տոննա պտուղ:

Հումքի մթերման և սննդամթերքի արտադրության ծավալների ավելացումը կապված է շուկայական հարաբերությունների և մրցակցության խորացման, նոր ձեռնարկությունների ստեղծման, տեխնոլոգիաների վերազինման, արտադրանքի որակի բարելավման և արտահանման ծավալների ավելացման հետ: Եթե 2000թ.-ին հանրապետությունում գործում էր հումք վերամշակող 7 պահածոների, 12 գինեգործության և կաթի, մսի վերամշակման մի քանի ընկերություններ, այժմ գործում և վերամշակվում են մոտ 35 պահածոների, 45 գինեգործական, 275 կաթի, 75 մսի և 4 ծխախոտի վերագործարկման ընկերություններ: Ներկայումս սննդի վերամշակման կարողությունները չեն բավարարում գյուղատնտեսական հումքի արտադրության ներուժին, հետևաբար այս ոլորտում ներդրումների ավելացման միջոցով փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացումը կարևոր անհրաժեշտություն է դարձել: ՓՄՁ-ի ստեղծմանը մեծապես նպաստել են տարբեր միջազգային կառույցներ և ֆինանսական ներդրումներ, որոնց գործունեության շնորհիվ վերջին տարիներին ստեղծվել և վերագործարկվել են պահածոների, գինեգործության, պանրի, կաթնամթերքի, մսամթերքի արտադրությունների և կաթի հավաքման կետերի ավելի քան 227 ՓՄՁ-ներ:

Հանրապետությունում հումքի վերամշակման արդյունաբերական ձեռնարկություններում ստեղծված իրավիճակում կարևորվում է նաև օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման աշխատանքների անհրաժեշտությունը, որը կնպաստի արտադրվող սննդամթերքի որակի և անվտանգության նկատմամբ վստահության բարձրացմանը և արտահանման ծավալների ավելացմանը:

Գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացված արտադրանքների ներմուծման և արտահանման ցուցանիշները պատկերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

2009-2010թթ. հունվար-դեկտեմբերի արտահանման և ներմուծման ծավալներն ըստ ապրանքախմբերի*

(հազ. Դոլար)

	Արտահանում			Ներմուծում		
	2009թ.	2010թ.	Աճի տեմպը, %	2009թ.	2010թ.	Աճի տեմպը, %
Ընդամենը	710,157.5	1011,425.8	142.4	3321,133.9	378,875.3	113,9
այդ թվում						
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	15,298.0	23,377.0	152.8	97487.1	101611.5	104.2
Բուսական ծագման արտադրանք	19,895.4	15,941.7	80.1	198,026.7	214,933.9	108.5
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	2.9	29.1	10.0 անգ.	51,777.2	49867.7	96.3
Պատրաստի սննդի արտադրանք	99570.2	131182.7	131.7	264659,0	309564.6	117.0

Վերջին տարիներին տեղական արտադրողների և ներմուծողների համար համեմատաբար հավասար մրցակցային պայմանների կիրառումը և ըստ նպատակահարմարվածության ներմուծվող պարենամթերքների փոխարինումը արտահանման ուղղվածություն ունեցող գյուղմթերքներով, հանգեցրել են վերամշակման համակարգում նկատելի որոշակի առաջընթացի, այսինքն՝ կիրառելով գործող և նոր ստեղծվող գործարաններում արդիական տեխնոլոգիաները և զարգացնելով արդյունավետ մենեջմենտի ծառայությունները, բարձրացել է թողարկվող արտադրանքի մրցունակությունը:

Հանրապետության ագրովերամշակման ոլորտում սննդամթերքի արտադրության ծավալների ավելացումը, շուկայական մրցունակության խորացումը, որակի կառավարման ներդրումը, տեխնոլոգիաների վերազինումը հնարավոր դարձավ մեծածավալ ներդրումների, համատեղ ձեռնարկությունների ստեղծման և վարկային միջոցների ներգրավման միջոցով:

ՀՀ-ում գյուղական տարածքներում գյուղմթերքների վերամշակող և արտադրող մասնավոր ձեռնարկություններում բաժնետիրական ֆինանսավորում՝ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ Ծրագրի շրջանակներում հիմնադրվել է գյուղական տարածքներում ներդրումների հիմնադրամը (ՖՐԵԴԱ): Հիմնադրամի միջոցով 2009 թվականին իրականացվել է 200.0 մլն դրամի մեկ բաժնետիրական ներդրում ձկնաբուծության ոլորտում:

Ծրագիրն աջակցել է նաև գյուղական տարածքներում տնտեսական գործունեության ակտիվացմանը՝ ծրագրային տարածքում գյուղական միջին և փոքր ձեռնարկատերերի համար համապատասխան ֆինանսական միջոցները մատչելի դարձնելու ճանապարհով: Այս նպատակով գյուղական փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման համար վարկային միջոցներից 2009 թվականի ընթացքում տրամադրվել են 2975.0 հազար ԱՄՆ դոլարի կարճաժամկետ և երկարաժամկետ վարկեր՝ հիմնականում 12-13 տոկոսով, 3-7 տարի ժամկետով: Վարկեր են տրամադրվել հետևյալ գործունեությունների համար՝ անասնապահություն, կաթի վերամշակում, ձկնաբուծություն, այգեգործություն, թռչնաբուծություն, մեղվաբուծություն, պահածոյացում և սառնարանային տնտեսություն:

Տրամադրված վարկերի ընդամենը քանակը և գումարը, ըստ մարզերի ունի հետևյալ տեսքը՝

Աղյուսակ 2

Անվանում	Գումար (ԱՄՆ դոլար)	Քանակ
Վայոց -Ձորի մարզ	298 500	9
Արագածոտնի մարզ	565 800	13
Տավուշի մարզ	221 000	4
Գեղարքունիքի մարզ	482 500	14
Լոռու մարզ	721 500	16
Շիրակի մարզ	208 000	2
Սյունիքի մարզ	391 700	7
Արարատի մարզ	55 000	2
Արմավիրի մարզ	30 958	1
Ընդամենը	2 974 958	68

Մարզերում վարկային և դրամաշնորհային ծրագրերի միջոցով կատարված աշխատանքներն ըստ բաղադրիչների և ուղղվածության ունեն հետևյալ տեսքը՝

1. ենթավարկային տրամադրում:

Երեք (ԻնՔԼո, ԱնԷԼք, Կոնվերս), մասնակից ֆինանսական կառույցների (ՄՖԿ) կողմից տրամադրվել է 28 երկարաժամկետ ենթավարկեր 876,7 հազար ԱՄՆ դոլար:

Ենթավարկային տրամադրում**

ԱՄՆ դոլար

Ուղղվածություն	Մարզեր					
	Կոտայք	Արագածոտն	Արմավիր	Արարատ	Լոռի	Վայոց Ձոր
Անասնապահություն	3.500 47.500	68000		8.000 39.000		
Ջերմոցային տնտեսություն	145650		8.600 7.000 5.800 11.750 6.250 8000 3000	3.400		
Հիմնական միջոցներ	6.000			3.000	11.000	50.000
Այգեգործություն	25.000		12.500			
Կաթնամթերքի արտադրություն	6.500 5000		20.000			
Թռչնաբուծություն		150.000				
ձկնաբուծություն			16.250			
Կաթի արտադրության վերամշակում			110.000			
Խաղողի այգու հիմնադրում				86.000		
Մեղվաբուծություն					10.000	

2. Մրցակցային դրամաշնորհների տրամադրում:

2008թ. մրցակցային դրամաշնորհային ծրագրերի V փուլի մրցույթի արդյունքում կնքվել է 18 պայմանագիր 89,312 մլն ՀՀ դրամ կամ 295.3 հազ. ԱՄՆ դոլար արժողությամբ, հետևյալ ուղղվածությամբ

- անասնապահություն և կաթնամթերքի արտադրություն
- թռչնաբուծություն
- ձկնաբուծություն և ձկան կերի արտադրություն
- կենդանական մթերքի վերամշակում և շուկայահանում
- դաշտային և կերային մշակաբույսեր
- մեղվաբուծություն
- այլ (ծառայություններ, պարարտանյութեր):

3. Խորհրդատվական համակարգի հզորացում:

ՀՀ մարզերում իրականացվել են «Ագրարային տեխնոլոգիաների գնահատման» ծրագրեր հետևյալ զարգացման ուղղվածությամբ՝ կատարելագործությունն, բանջարաբուծություն, կերարտադրություն, հատիկաընդեղենների մշակություն, խաղողագործություն, 74.9 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր գումարի, այդ թվում՝

- Արարատ 8,712
- Արագածոտն 8,160
- Արմավիր 6,780
- Գեղարքունիք 10,480
- Լոռի 9,001
- Շիրակ 7,156
- Սյունիք 8,941
- Վայոց Ձոր 3,432
- Տավուշ 3,485
- Տավուշ 3,485

4. Սերմերի և տնկանյութի շուկայի հզորացում:

Ծրագրի շրջանակներում աշխատանքներ են կատարվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության ենթակա «Սերմերի Գործակալություն» ՊՈԱԿ-ի և «Գյումրիի սելեկցիոն կայան» ՊՓԲԸ նյութատեխնիկական բազայի հզորացման ուղղությամբ: Այսպես.

- «Գյումրիի Սելեկցիոն Կայան»-ի ՊՓԲԸ-ի համար ձեռք են բերվել գյուղտեխնիկա (1 տրակտոր, 2 կոմբայն, 2 շարքացան, 1 սերմերի ախտահանման սարքավորում) 325.0 հազար ԱՄՆ դոլարի:
- «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է 16705 տոննա սերմերի որակի ստուգում, ստացվել ու ձևակերպվել են սորտափորձարկման 30 հայտ:
- Սերմնաբուծությամբ զբաղվող «Սերմեր Գործակալություն» ՊՈԱԿ-ի ու սերմնաբուծության ոլորտի մասնագետներին և ֆերմերային տնտեսություններին տրամադրվել է օժանդակություն (պահպանման ծախսեր, ուսուցում) 128.0 հազար ԱՄՆ դոլար:

Անշուշտ, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման գլխավոր ազդակը ազդվերամշակման արդյունաբերության զարգացումն է, որին էլ պետք է նպատակաուղղել ագրարային ոլորտի ներդրումային հնարավորությունները:

ԹԱՍԱՐԱ ՍԱՆՈՒԿՅԱՆ

ԵՊՏ մագիստրատուրայի շրջանավարտ

**ՀՀ ԲԻԶՆԵՍ ՄԻՋՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ
ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Եթե բիզնես միջավայրը դիտարկենք որպես օտարերկրյա և տեղական ընկերությունների համար տվյալ երկրում բիզնես իրականացնելու և շահույթ հետապնդելու հնարավորություն ընձեռնող համակարգ, ապա վերջինիս բարենպաստ կամ անբարենպաստ լինելը պայմանավորված է տնտեսությանը բնորոշ ռիսկերից (գծապատկեր 1):


Այսպես, տնտեսության որևէ ոլորտում առաջընթացը կարող է «չեզոքացվել» մեկ այլ ոլորտում առաջընթացի բացակայությամբ: Հարկային, մաքսային անկայուն քաղաքականությունը կամ վարչարարությունը կարող են սահմանափակել բիզնեսի ձևավորման նպաստավոր պայմանները և բիզնես սկսելու ընթացակարգերի պարզությամբ պայմանավորված աճը: Հետևաբար՝ ստեղծված անբարենպաստ միջավայրը հանգեցրել է ապրանքային երկակի շուկաների ստեղծմանը, որտեղ գերիշխող դիրք ունեցող գործարարներն օգտվում են գույքային իրավունքի պաշտպանությունից, հարկային ու մաքսային կողմնապահ գործելաճից, իսկ շուկա մուտք գործել ցանկացողները հայտնվում են ոչ շահեկան իրավիճակում: Ցանկացած բիզնես գործընթաց իր մեջ ներառում է մի շարք ընթացակարգերի պարտադիր իրականացում: Երբ գործարարը մշակում է բիզնես պլան և փորձում է անցնել դրա իրականացմանը, առաջին արգելքները, որոնք պետք է հաղթահարի, նոր ընկերությունը կազմավորելու ու գրանցելու առնչությամբ բյուրոկրատական և իրավական ընթացակարգերն են: Տարբեր երկրներում նոր բիզնեսների մուտքի կանոնակարգման մեթոդներն ունեն որոշակի առանձնահատկություններ՝ պայմանավորված տվյալ երկրի տնտեսական և իրավական դաշտի զարգացվածության աստիճանից: Որոշ տնտեսություններում այս գործընթացը պարզ է և մատչելի: Այլ խոսքով՝ ընթացակարգերն այնքան ծանրաբեռնող են, որ գործարարները, խուսափելով ընթացակարգերի վարչարարական և ժամանակի ծախսերից, ստիպված են լինում դիմել այլ մեթոդների՝ բիզնեսը վարել ոչ ֆորմալ ձևով: Բացի այդ, գործարարության արդյունավետությունն ավելի շատ պայմանավորված է օրենսդրական և կառավարչական որոշումներից:

Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգումը գնահատում է այն կարգավորումները, որոնք ուղղակիորեն ազդում են գործարար միջավայրի զարգացման աստիճանի և տնտեսական աճի վրա՝ հնարավորություն տալով իրականացնել միջերկրային

համեմատություններ հետազոտված 183 երկրների միջև: Այս գեկույցում *183 երկրների շարքում Հայաստանը 2011թ. զբաղեցրել է 48-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ իջեցնելով իր վարկանիշը 44-ից: Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 25 երկրների հետ համեմատած Հայաստանը գտնվում է 8-րդ տեղում: ՀՀ ՊԵԿ 2011 թվականի գերակա խնդիրներից է հանդիսանում Համաշխարհային Բանկի «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավումը:*

Գծապատկեր 1

ՀՀ բիզնես միջավայրի զարգացմանը նպաստող և խոչընդոտող հիմնական ռիսկերն ու դրանց առաջացման պատճառները



Հայաստանում *«բիզնեսով զբաղվելը»* հարմարավետության գնահատման համար կիրառված ընթացակարգերը բաղկացած են երկու փուլերից.

1. Բացահայտել երկրի համեմատական տեղն անցումային տնտեսության երկրների շարքում՝ հաշվի առնելով բիզնես միջավայրի ընդհանուր «ֆորմալ» հարմարավետությունը: Իսկ լավագույն փորձի ցուցանիշները «բիզնեսով զբաղվելու» յուրաքանչյուր ուղղության համար սահմանվել են ոչ թե համաշխարհային մակարդակով, այլ անցումային տնտեսության երկրների մակարդակով:
2. Բիզնես միջավայրի բարենպաստ կամ անբարենպաստ լինելն ամբողջությամբ ներկայացնելու համար առաջնակարգ ուշադրություն է դարձվում սովետային տնտեսության չափին: «Բիզնեսով զբաղվելու արժեքը» փաստաթղթի ցուցանիշների կիրառումը թույլ է տալիս գնահատել, թե որքանով է երկիրը շեղվում լավագույն փորձից յուրաքանչյուր ուղղության և յուրաքանչյուր ցուցանիշի կտրվածքով՝ կապված բիզնեսին առնչվող օրենքների և կանոնակարգերի հետ:

1. Ընկերության հիմնադրում: Ընկերության հիմնադրման ցուցանիշը ներառում է ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար գործարարների կողմից իրականացման ենթակա քայլերի քանակը, դրանց միջին տևողությունը, պահանջվող ծախսերը և պահանջվող նվազագույն կապիտալի տոկոսային հարաբերակցությունը մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի հետ: *«Doing»*

Business»-ը հաշվարկում է նոր գործ սկսելու և պաշտոնապես գործարկելու համար ձեռնարկատիրոջից պաշտոնապես պահանջվող ընթացակարգերը, ծախսը և ժամանակը: Հայաստանում ընկերություն հիմնադրելու համար միջինում պահանջվում է իրականացնել 6 ընթացակարգ, որը տևում է 15 օր և պահանջվում է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի 2,6% ծախս: Իսկ նվազագույն կապիտալի պահանջը կազմում է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի 0%: Համաշխարհային մակարդակով այս ցուցանիշով Հայաստանը դասակարգվում է 20-րդ տեղում:

2. Լիցենզավորում (շինարարական թույլտվություններ) 2010թ: Լիցենզավորման (շինարարական թույլտվությունների) ցուցանիշը ներկայացնում է շինարարության համար պահանջվող ընթացակարգերը, ժամանակը ու ծախսերը, ներառյալ՝ անհրաժեշտ լիցենզիաների և թույլտվությունների ստացումը, պահանջվող ծանուցումների և վերահսկողությունների կատարումը և կոմունալ ծառայությունների միացումները: Այդ գործառնությունները հանրապետությունում բաղկացած են եղել 20 ընթացակարգերից, տևել են միջինը 137 օր, որոնց արժեքը կազմել է մեկ շնչի հաշվով՝ ՀՆԱ 104,9%-ը: Շինարարական թույլտվությունների ստացման դյուրինության առումով Հայաստանը գրավում է 72-րդ տեղը: Իսկ օրինակ՝ Վրաստանը հիմնել է մեկ կենտրոն, որտեղ միավորվում է բոլոր նախարարություններից ստացվող շինարարական ծրագրերի թույլտվությունները: Բացի այդ, Վրաստանում և Էստոնիայում լիցենզավորման ստացման ծախսը գործարարների համար 15 անգամ ցածր է Հայաստանի հետ համեմատած:

3. Սեփականության գրանցում: Սեփականության գրանցման ցուցանիշը ներկայացնում է ընկերությունների սեփականության իրավունքի ձեռք բերման դյուրինությունը, ընթացակարգերի քանակը, ժամկետը և սեփականության գրանցման ընթացքում ծախսերը: Թեև, Հայաստանն աշխարհում զբաղեցնում է 4-րդ տեղն այս ցուցանիշով, այնուամենայնիվ, այն կարող է շահել հետագա բարեփոխումների իրականացումից: Հետևաբար՝ Էլեկտրոնային ընթացակարգերի և տեղեկատվության որոնման համակարգի ներդրումը թույլ կտա էլ ավելի բարձրացնել Հայաստանի դիրքը՝ դարձնելով այն աշխարհում սեփականության իրավունքի փոխանցման բնագավառում ամենաարդյունավետ ընթացակարգեր ունեցող երկրներից մեկը:

4. Վարկեր ստանալը: Վարկեր ստանալու ցուցանիշը ներկայացնում է վարկային տեղեկատվության տրամադրման միջոցները և վարկառու ու վարկատուի «իրավական իրավունքները»: Հայաստանի չափահաս բնակչության 13.5%-ն է ընդգրկված մասնավոր վարկային գրասենյակում/բորսայում և 2.8%-ը հանրային վարկային ռեգիստրում, մինչդեռ Մեծ Բրիտանիայում այդ թիվը կազմում է բնակչության մոտ 85%-ը: Հայաստանը վարկերի ստացման դյուրինության առումով դասակարգվում է 44-րդ տեղում

5. Ներդրողների պաշտպանություն: Ներդրողների պաշտպանության ցուցանիշը ներկայացնում է ներդրողի պաշտպանվածության երեք աստիճանները՝ գործառնությունների թափանցիկությունը (*Բացահայտման ցուցիչի աստիճանը*), ինքնուրույն աշխատելու պատասխանատվությունը (*Տնօրենի պատասխանատվության ցուցիչի աստիճանը*), բաժնետերերի իրավունքը ոչ պատշաճ աշխատանքի համար դատական գործ հարուցելու պաշտոնյաների և ղեկավարների դեմ (*Բաժնետերի հայց ներկայացնելու հեշտությունը*) և *Ներդրողի պաշտպանվածության ցուցիչի ամբողջությունը*: Աշխարհում ներդրողների/փոքր բաժնետերերի պաշտպանության մակարդակով Հայաստանը զբաղեցնում է 92-րդ տեղը:

6. Հարկերի վճարում: Հարկերի վճարում ցուցանիշը ներկայացնում է այն հարկերը, որոնք պետք է վճարի միջին չափի ընկերությունը տվյալ տարում, ինչպես նաև վճարվող հարկերի վարչարարական բեռի չափերը: Այս չափերը ներառում են վճարումների քանակը, որ պետք է կատարի ձեռնարկատերը, նախապատրաստման, գրանցման և վճարման վրա վատնված ժամաքանակը, և իրենց շահույթի տոկոսային մասնաբաժինը, որը պետք է վճարվի որպես հարկ: Հայաստանն աշխարհում դասակարգվում է 157-րդ տեղում հարկերի վճարման դյուրինությամբ, ինչն ամենավատն է «*Doing Business*»-ի ցուցանիշներից: Ներկայումս հայկական ընկերությունները յուրաքանչյուր տարի ծախսում են 581 ժամ (72 օր) հարկային հաշվետվությունները լրացնելու և պահանջները բավարարելու համար, իսկ ՏՀԶԿ երկրներում կազմում է 199,3 ժամ: Այս ցուցանիշը 5-րդն է աշխարհում ժամանակի երկարության առումով վատթարագույնների մեջ: ՀՀ -ում կատարում են 50 տարբեր հարկային վճարումներ, այնինչ այդ նույն ցուցանիշը ՏՀԶԿ երկրներում կազմում է 14,2 (աղյուսակ 1):

ՀՀ «Հարկերի վճարման» ցուցանիշի հաջորդական գործընթացների համեմատական գնահատումը ՀՀ-ում և Կենտրոնական Եվրոպայի, ՏՀԶԿ երկրներում 2011թ.¹

Հարկերի վճարում			
Ցուցանիշ	Հայաստան	Եվրոպա և Կենտրոնական Ասիա	ՏՀԶԿ(OECD)
Վճարումներ (քանակ)	50	41,7	14,2
Ծախսվող ժամանակ	581	313,9	199,3
Շահութահարկ (% շահույթից)	16,6	9,8	16,8
Եկամտահարկ (% շահույթի)	23	22,9	23,3
Այլ հարկեր (% շահույթի)	1,1	8,5	3
Ընդհանուր հարկային դրույքաչափ (% շահույթի)	40,7	41,2	43

ԱԱՀ-ի և սոցիալական ապահովագրության հատկացումների հաշիվների հաշվարկման և լրացման համար ծախսվում է ժամանակի մեծ մասը՝ յուրաքանչյուրի համար ամսական 40 ժամ: Շահութահարկը պահանջում է տարեկան ևս 13 վճարում: Աշխարհի երկրների 1/4-ում հարկերի լրացումն ու վճարումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով: Ըստ փորձագետների՝ այն երկրները, որտեղ ստուգումները հիմնված են ռիսկի վերլուծությունների վրա, ապահովում են ավելի մեծ հարկային հավաքագրումներ: Այսպես, հարկերի վճարման բարդության ներկայիս աստիճանը և հարկային վարչարարության ցածր որակը տնտեսության սովորաբար բարձր և, հետևաբար, հարկահավաքման՝ հնարավորինս ավելի ցածր մակարդակը պայմանավորող հիմնական գործոններից մեկն է: Օրինակ՝ Էստոնիան ունի ավելի բարձր միջին տոկոսադրույք՝ 49,61%, քան Հայաստանը՝ 40,7%, բայց առաջ է Հայաստանից՝ հարկերի վճարման դյուրինությամբ:

Ուստի, հարկային վարչարարությունն ենթակա է բարեփոխման, ինչպես հարկային հաշվետվությունների լրացման վրա ծախսվող ժամանակի առումով, այնպես էլ վճարումների քանակի կրճատման առումով: Օրինակ՝ Էստոնիայում գործարարները ունեն տարեկան միայն 7 վճարում: Համեմատության համար նշենք, որ Սինգապուրում, որն ըստ «Գործարարության» հետազոտության ինդեքսի՝ բիզնեսի իրականացման համար ամենահարմարավետ երկիրն է, 5 վճարումների կատարումը 84 ժամ է պահանջում:

7. Միջասիանային առևտուր: Այս ցուցանիշը ներկայացնում է ապրանքների առաքման ստանդարտացված ընթացակարգերը և ծախսերը՝ կապված ներմուծման և արտահանման հետ: Այստեղ ներառված է ցանկացած պաշտոնական ընթացակարգ՝ սկսած երկու կողմերի միջև պայմանագրի կնքումից և ավարտված՝ ապրանքների առաքմամբ: Հայաստանում միջինը պահանջվում է 13 օր արտահանման համար և 18 օր ներմուծման համար՝ արժենալով համապատասխանաբար՝ 1655 ԱՄՆ դոլար և 2045 ԱՄՆ դոլար: Արտահանման համար անհրաժեշտ է 3 փաստաթուղթ, ներմուծման համար՝ 6: Միջազգային/արտաքին առևտրում 183 երկրների մեջ Հայաստանը զբաղեցնում է 82-րդ տեղը: Դա Հայաստանի երկրորդ վատթարագույն ցուցանիշն է «*Doing business*»-ի կողմից գնահատվող 9 ոլորտների մեջ:

8. Պայմանագրերի կիրարկումը: Պայմանագրերի կիրարկումը ցուցանիշը ներկայացնում է առևտրային պայմանագրերի կիրառման դյուրինությունը կամ բարդությունը: Դա որոշվում է վճարման հետ կապված վեճերի ընթացքով՝ ներառելով հայցվորի կողմից հայցի ներկայացման պահից մինչև փաստացի վճարումը վատնած ժամանակը, կատարված ծախսերը ու ընթացակարգերի քանակը:

Միջինում՝ Հայաստանում առևտրային/կոմերցիոն վեճը կարգավորելու համար պահանջվում է իրականացնել 49 ընթացակարգ, որը տևում է 285 օր, և ծախսը կազմում է հայցի արժեքի 19%-ը: Աշխարհում Հայաստանը զբաղեցնում է 62-րդ տեղը՝ պայմանագրերի կիրառման դյուրինության առումով (աղյուսակ 2):

¹ <http://www.doingbusiness.org/>

9. **Ընկերության լուծարում:** Այս ցուցանիշը ներկայացնում է գործընթացի հետ կապված ժամանակը և ծախսերը: Հայաստանում ընկերության լուծարման/սնանկացման գործընթացով անցկացնելը միջինում տևում է 1.9 տարի, և ծախսը կազմում է գույքի արժեքի 4%-ը:

Աղյուսակ 2

«Գործարարությանը զբաղվելը» 9 ցուցանիշների դինամիկան 2010-2011 թթ.¹

Ցուցանիշ	Գործարարությանը զբաղվելը 2011 ցուցանիշներ	Գործարարությանը զբաղվելը 2010 ցուցանիշներ	Ցուցանիշի փոփոխություն
<i>Ընկերության հիմնադրում</i>	22	20	-2
Լիցենզավորում (շինարարական թույլտվություն)	78	72	-6
Սեփականության գրանցում	5	4	-1
Վարկեր ստանալը	46	44	-2
Ներդրողների պաշտպանություն	93	92	-1
Հարկերի վճարում	159	157	-2
Միջսահմանային առևտուր	82	103	21
Պայմանագրերի կիրարկում	63	62	-1
Ձեռնարկության լուծարում	54	49	-5

ԹԱՄԱՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՊՏ մագիստրատուրայի շրջանավարտ

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՈՒ ԱՐԴԱՐԱՑԻ ԲԱՇԽՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հարկային համակարգը և բիզնես միջավայրը փոխադարձ կապված են միմյանց հետ, քանի որ հարկային համակարգի արդյունավետությունից է կախված ձեռնարկատիրության զարգացման հնարավորությունները, նաև հարկային համակարգը սահմանափակում է տնտեսապես չհիմնավորված եկամուտների ստեղծման հնարավորություններն ազգային տնտեսության տարբեր ոլորտներում:

Որպես հարկային քաղաքականության իրականացման հիմնական մակրոտնտեսական չափանիշ կիրառվում է հարկային բոյանսի (K) կամ հարկային էլաստիկությունն արտահայտող ցուցանիշը, որը որոշվում է որպես հարկային եկամուտների տոկոսային փոփոխության և ՀՆԱ-ի տոկոսային փոփոխության հարաբերություն.

$$K = \frac{\text{հարկային եկամուտների տոկոսային փոփոխություն}}{\text{ՀՆԱ-ի տոկոսային փոփոխություն}}$$

Եթե $K > 1$ -ից, ապա այն նշանակում է, որ հարկային քաղաքականությունը, ընդհանուր առմամբ, կարելի է համարել արդյունավետ:

2001-2010 թթ. հանրապետությունում հարկային բոյանսի մեծությունը մեկից բարձր է (աղյուսակ 1), սակայն հարկեր/ՀՆԱ ցուցանիշը, որը 2001-2007թթ կայուն աճել է հասնելով 16,1%, 2008թ հասել է մինչև 17,4 %, 2009-2010թթ կտրուկ անկում է ապրել՝ հասնելով 2,2% մակարդակին:

¹ <http://www.doingbusiness.org/data/exploreconomics/armenia/>

Հարկային բռյանսի և Հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 2001-2010թթ.¹

	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	1175,9	1362,5	1624,6	1907,9	2242,9	2656,2	3149,3	3568,2	3102,8	3509,6
ՀՆԱ-ի իրական աճ, %	14,0	15,9	19,2	17,4	17,6	18,4	18,6	13,3	-13,0	13,1
Հարկային եկամուտներ եւ տուրքեր, մլրդ դրամ ²	168,8	198,6	227,4	267,0	321,5	385,1	505,5	621,1	522,4	594,1
Հարկային եկամուտներ եւ տուրքեր-ի իրական աճ, %	10,7	17,7	14,5	17,4	20,4	19,8	31,3	22,9	-15,9	13,7
K (Հարկային եկամուտների տոկոսային փոփ./ՀՆԱ-ի տոկոսային փոփ.)	0,8	1,1	0,8	1,0	1,2	1,1	1,7	1,7	1,2	1,0
Հարկային եկամուտներ և տուրքեր / ՀՆԱ, %	14,4	14,6	14,0	14,0	14,3	14,5	16,1	17,4	16,8	16,9

ՀՀ տնտեսության ընդլայնման և հարկային եկամուտների աճի միջև կապը թույլ է արտահայտված: Այսինքն՝ հարկային եկամուտների էլաստիկության գործակցի մեկից փոքր լինելը նշանակում է, որ ՀՆԱ-ի աճը չի ուղեկցվում հարկային եկամուտների համարժեք աճով: Արդյունքում՝ տեղի է ունենում Հարկեր/ ՀՆԱ հարաբերակցության աստիճանական նվազում: Բացի այդ, ավելի փոքր է ուղղակի հարկերի էլաստիկության գործակցիցը. ՀՆԱ-ի 1% աճին համապատասխանում է Ուղղակի հարկեր/ ՀՆԱ հարկային եկամուտների ցածր հարաբերական մակարդակ, այն 2010թ կազմել է 4,3 %:

Դրանով է պայմանավորված այն, որ ՀՀ կառավարության առաջնահերթ նպատակներից է եկամուտների մոբիլիզացումը: Ուստի, այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հարկային վարչարարության բարեփոխումներ:

Ներկայումս ՀՀ-ում գործում են 6 հիմնական հարկատեսակ՝ շահութահարկ, եկամտահարկ, ակցիզային հարկ, գույքահարկ, հողի հարկ: Հարկերի կառուցվածքի վրա էական ազդեցություն է թողնում տնտեսվարման ձևը. մասնավոր սեփականության գերակայության պայմաններում շեշտակիորեն աճում է ուղղակի հարկերի դերը, քանի որ մասնավոր սեփականությունը օրինականացնում է սոցիալական անհավասարությունը, ինչն էլ առաջ է բերում պրոգրեսիվ հարկման պահանջ, իսկ դա հնարավոր է միայն գերակայության պայմաններում:

ՇԱՀՈՒՓԱՀԱՐԿ. Ընդհանրապես յուրաքանչյուր հարկատեսակ ունի տնտեսական համակարգի վրա ներգործելու իր հատվածը: Շահութահարկը հատկապես ազդում է ձեռներեցության և գործարար ակտիվության և ներդրումների խթանման վրա: Մասնավորապես՝

Որոշ ծախսերի գծով ՀՀ-ում հարկվող շահույթից նվազեցումների վրա կան սահմանափակումներ, որոնք տնտեսվարման անբարենպաստ պայմաններում մեծացնում են շահութահարկի բեռը: Խոսքը մասնավորապես վերաբերում է կադրերի վերապատրաստման և մասնագիտական հմտությունների բարձրացման, գովազդային, գիտահետազոտական ծախսերին: Շուկայական տնտեսության պայմաններում անհնարին է սահմանափակել կադրերի պատրաստման ծախսերը և ակնկալել մրցունակ արտադրանքի թողարկում: *Այս առումով առաջարկում ենք որոշ ծախսերի գծով ընդլայնել ինքնարժեքին վերջիններիս վերագրվելու նորմատիվները:*

Ըստ «Շահութահարկի մասին օրենքի»՝ ՀՀ-ում կիրառվում է հիմնական միջոցների հավասարաչափ ամորտիզացիան, որի հետևանքով որոշ ձեռնարկությունների համար դժվարանում է նոր հիմնական միջոցների ձեռքբերումը: Կարծում ենք որ պետք է ձեռնարկություններին և կազմակերպություններին արագացված ամորտիզացիայի կիրառման հնարավորություն տալ, որը վերաֆինանսավորման և հիմնական միջոցների արդիականացման պայմաններ կստեղծի: Արագացված ամորտիզացիայի դեպքում ներդրումների առաջին

¹ «Հայաստանի Հանրապետության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները» տարեկան զեկույց, ՀՀ ՖՆ:

² <http://www.taxservice.am/>, Հարկային վիճակագրական տվյալներ, 2001-2010թ 4-րդ եռամսյակ:

տարիներին ամորտիզացիոն մասհանումները ավելի արագ են կատարվում, քան իրական ամորտիզացիան է, և, հետևաբար, հարկային պարտավորությունների ընթացիկ զեղչավորված արժեքը ավելի փոքր է: Այս դեպքում ձեռնարկությունները ակտիվի շահագործման առաջին տարիներին մեղմ պայմաններով հարկման հնարավորություն են ստանում, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում գործունեության զարգացման և ընդլայնման համար:

Համաձայնելով, որ ակտիվների բոլոր տեսակների նկատմամբ արագացված ամորտիզացիայի կիրառումը աննպատակահարմար է, առաջարկում ենք արագացված ամորտիզացիա կիրառել միայն արտադրական սարքավորումների նկատմամբ և կիրառել ամորտիզացիոն մասհանումների գործակիցների մաքսիմալ սահմանաչափերի սահմանում: Միայն արտադրական սարքավորումների նկատմամբ արագացված ամորտիզացիայի կիրառումը բացատրվում է տեխնոլոգիական նորամուծությունների անհրաժեշտությամբ և այդ տեսակի ակտիվների արժեզրկման ավելի մեծ հնարավորությամբ: Բացի այդ, նշվածը լուրջ նախադրյալներ կստեղծի նոր տեխնիկա և տեխնոլոգիա պահանջող արտադրությունների զարգացման տեմպերի արագացման համար:

Անհրաժեշտ է ամբողջությամբ վերանայել շահութահարկի գծով կանխավճարների իրականացման համակարգը: Ըստ էության ձեռնարկությունները, այդպիսով, պարտադրված վարկավորում են պետությանը՝ կորցնելով շահույթի այն բաժինը, որը կարող էր ստացվել այդ միջոցների օգտագործումից:

Հարկային համակարգի կարևոր բաղկացուցիչ պետք է լինեն նաև ինդեքսավորված հարկային դրույքները: Ենթադրենք հարկատուին պատկանող ակտիվի արժեքը աճել է 10%-ով, այն դեպքում, երբ տղաճը ևս 10% է կազմել: Ստացվում է, որ տղաճի հետևանքով հարկատուն իրականում չի շահում, ուստի պետության կողմից այդ ակտիվի մեծացման հարկումը կլինի տնտեսապես անարդյունավետ: Այս խնդիրը շատ երկրներում լուծվել է հարկային դրույքաչափերի և համախառն եկամտից կատարվող նվազեցումների ինդեքսավորման միջոցով:

Հայտնի է, որ բարձր հարկերը խոչընդոտում են ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը: Ձեռներեցը բարձր հարկերի պատճառով կամ դադարեցնում է գործունեությունը, կամ վերածվում ստվերային տնտեսության: Սակայն, որքան ցածր են հարկերը, այնքան գործարարության մասնակիցների շրջանակները լայն են, այնքան ավելի արագ է տեղի ունենում ապրանքների և դրամի շրջանառությունը, այնքան քիչ են ստվերային տնտեսություն անցնել ցանկացողների թիվը: Տվյալ դեպքում հարկը դառնում է արտադրական գործունեության խթանիչներից մեկը:

Արդյունքում ընդլայնվում է հատկացումների իրական շրջանակը՝ ապահովելով բյուջեի եկամուտների մեծացումը նույնիսկ ցածր հարկերի դեպքում:

Այսպիսով, շահութահարկը, հանդիսանալով արտադրության զարգացման վրա անմիջականորեն ազդող հարկատեսակ, պետք է իր մեջ բովանդակի արտադրությունը խրախուսելու լծակներ:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿ: Ընդունելով հարկման ընդհանուր պրոգրեսիվության սկզբունքը՝ առաջարկում ենք, որ որոշակի բարձր եկամուտների մակարդակից սկսած՝ եկամտահարկը հարկվի ռեգրեսիվ դրույքաչափերով: Այս հետևությունը հիմնավորվում է շուկայական տնտեսության դրույթներից մեկով, համաձայն որի՝ բարձր եկամուտները զգալի չափով արտահայտում են հասարակության նյութական բարեկեցության գործում առանձին մարդկանց դրական ներդրումը, որն արդյունք է նրանց կողմից նախաձեռնության դրսևորման, իրենց վրա ռիսկ վերցնելու պատրաստակամության և բարեհաջող տնտեսական որոշումների կայացման: Այս հանգամանքը ստիպում է համաձայնել, որ ամենաբարձր եկամուտներ ստացողները պետք է հնարավորություն ունենան ռեգրեսիվ հարկման տիրապետել եկամուտների համեմատաբար մեծ մասը, ինչպես նաև ունենան ավելի մեծ ազատություն դրանք օգտագործելու համար: Այս մոտեցումը ձեռներեցներին խրախուսում է ընդլայնել իրենց գործունեության շրջանակները:

Հաշվի առնելով, որ պարտադիր սոցալ վճարը և եկամտահարկը հաշվարկվում են հարկման գրեթե միևնույն բազայի նկատմամբ և նույն սկզբունքով, նպատակահարմար է դրանց ներդաշնակեցումը: Դրա շնորհիվ կպարզեցվի հաշվարկման համակարգը, կբարելավվի հարկային վարչարարությունը և կնվազի ընդհանուր հարկային բեռը: Այս առումով,

կարծում ենք, որ նպատակահարմար կլինի պարտադիր սոցալ վճարների համար ևս սահմանել նվազագույն չհարկվող շեմ:

Անուղղակի հարկեր: Անուղղակի հարկերը առավելապես ազդում են բնակչության անապահով խավերի գնողունակության վրա: Անուղղակի հարկերի գծով արտադրողները հարկային բեռն ավելի հեշտորեն են տեղափոխում գնորդների վրա(հարկերի տեղափոխում դեպի առաջ): Ամենատարածված անուղղակի հարկատեսակը, որը ներկայումս գործում է բազմաթիվ երկրներում ԱԱՀ-ն է:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ: Հարկային բարեփոխումների իրականացման գործընթացում առանցքային նշանակություն ունի ԱԱՀ-ի դրույքաչափերի նվազեցումը: Դա պայմանավորված է հատկապես տնտեսության սովերային հատվածի բացահայտման և հարկման դաշտ ներառելու անհրաժեշտությամբ: ԱԱՀ-ի դրույքաչափերի նվազեցումը և չհարկվող շեմի բարձրացումը, նպաստելով տնտեսվարող սուբյեկտների հարկային պարտավորությունների նվազեցմանը, միաժամանակ կհանգեցնի հարկերի վճարման պատրաստակամություն բարձրացմանը՝ դրանով իսկ կրճատելով հարկերից խուսափելու գալթակցությունը: ԱԱՀ-ի դրույքաչափերի նվազեցումը և չհարկվող շեմի բարձրացումը պետք է փոխհատուցել ԱԱՀ-ի գծով առկա որոշ արտոնությունների վերացմամբ՝ պայմանավորված հարկման բազայի ընդարձակմամբ: Այս առումով առաջարկում ենք բացառել ԱԱՀ-ի ազատման գործող արտոնությունները:

ՀՈՂԻ ՀԱՐԿ: Հողի հարկման էական թերություններից է նրա արժեքի գնահատման հին համակարգը, որը բնականաբար չի համընկնում ներկա շուկայական արժեքին:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿ: Ձեռնարկություններից զանձվող գույքահարկը կարող է դիտվել որպես նվազագույն հարկատեսակ, քանի որ մուծվում է անկախ նրանից ունի ձեռնարկությունը շահույթ, թե ոչ: Ձեռնարկության ակտիվից զանձվող նվազագույն հարկը ունի որոշակի տնտեսագիտական հիմնավորում, որի էությունն այն է, որ ձեռնարկության եկամուտը ինչ-որ ձևով պետք է կախված լինի նրա ակտիվներից: Սակայն, գործնականում այս հարկը կարող է դառնալ ծանր բեռ ձեռնարկությունների համար, դանդաղեցնել նրանց հիմնական ֆոնդերի ակտիվ մասի նորացման գործընթացը և առաջացնել լուրջ վնասներ: Դրա փոխարեն կարելի է հարկել անշարժ գույքը, այսինքն՝ հիմնական ֆոնդերի պասիվ մասը միայն:

Գույքահարկը էական ազդեցություն կարող է ունենալ արտադրության զարգացման վրա, ուստի այն տարբերակված հարկման օբյեկտի սահմանման և դրույքաչափերի համակարգի միջոցով պետք է խրախուսի արտադրության կազմակերպման և ընդլայնման գործընթացը՝ կապիտալ ներդրումների իրականացման և արտադրության վերազինման համար ստեղծելով բարենպաստ պայմաններ: Յաճախ դրույքաչափերի և դրանց ոչ ճիշտ տարբերակման դեպքում մարդիկ հակված կլինեն իրենց խնայողությունները ներդնել անշարժ գույքի մեջ, իսկ գույքահարկի խելամիտ դրույքաչափերի պայմաններում այդ խնայողությունները կներդրվեն տնտեսության մեջ և կնպաստեն տնտեսության զարգացմանը:

Գույքահարկի տոկոսադրույքը պետք է հաշվել՝ ելնելով տվյալ գույքի շուկայական արժեքից, որը ենթադրում է գույքային հարկերի հարկման բազայի համապատասխանեցում հարկվող օբյեկտի շուկայական արժեքին: Առաջարկում ենք անշարժ գույքի գնահատումը իրականացնել 2 տարին 1 անգամ, ինչը հնարավորություն կընձեռի գույքային հարկերի բազան առավելագույնս համապատասխանեցնել հարկվող օբյեկտի շուկայական արժեքին:

Տարբերակված գույքահարկի կիրառման դեպքում, որը ենթադրում է բարձր գույքային ապահովվածություն ունեցող անձի անհամեմատ բարձր դրույքաչափերով հարկում, շոալ գույքային ներդրումները կփոխարինվեն համեստ (անհրաժեշտ) ներդրումներով և գոյացած դրամական խնայողությունները կուղղվեն տնտեսության իրական հատված:

Վերջին տարիներին հարկային քաղաքականության նպատակադրումը դարձել է հնարավորինս շատ հարկեր հավաքելը, այսինքն՝ հարկերի ֆիսկալ գործառույթը գերակշռում է հարկազանձման այլ գործառույթների նկատմամբ: Ներկայիս ՀՀ հարկային բեռը խոչընդոտում է արտադրության զարգացումը, այնինչ հարկային քաղաքականությունը, ֆիսկալ խնդիրները լուծելով հանդերձ, պետք է բովանդակի արտադրության և ձեռներեցության զարգացման համար անհրաժեշտ խթանիչներ և լծակներ, այլապես, հետապնդելով միայն ֆիսկալ

նպատակներ և դրանով իսկ մեծացնելով հարկային բեռը, կգսպվի և կխոչընդոտվի արտադրության զարգացման գործընթացը:

Այսպիսով, հարկային քաղաքականությունը հաջողության կհասնի միայն արտադրության խթանման միջոցի դերում հանդես գալու դեպքում, այլ ոչ թե դրա մշտական կրճատման դերակատարում ունենա: Այդ պատճառով արդյունք կարող է ապահովել միայն այն հարկային միջոցառումները, որոնք կարող են խթանել արտադրությունը և համապատասխանաբար ընդլայնել հարկման բազան:

ԱՏՈՍ ՍԱՐԳԱՐՅԱՆ

*ՆԳԱՎԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ. գ. թ., դոցենտ*

ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ

*ՆԳԱՎԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԶՅ-ՈՒՄ¹

Հայաստանի Հանրապետության գիտելիքահենք տնտեսության ստեղծման և ինովացիայի աջակցման ազգային համակարգի ձևավորմանն ուղղված ռազմավարության մշակումը, ներդրումը և իրականացումը դարձել է արդի կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Դրանով հանդերձ, Հայաստանի տնտեսության վերլուծությունները փաստում են, որ երկիրը ներկայումս կանգնած է առկա գիտելիքաստեղծ պոտենցիալի պահպանման և նորի ստեղծման լուրջ մարտահրավերների առջև²:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. հունվարի 20-ի որոշմամբ հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության հայեցակարգին, որտեղ ամրագրված են գիտելիքի վրա հիմնված տնտեսության ձևավորման սկզբունքներն ու մոտեցումները: Այդ սկզբունքների հիման վրա մշակվել է ծրագիր, որտեղ ներառվել են իրականացվելիք միջոցառումները և դրանց ֆինանսավորման հնարավոր աղբյուրները: Արդեն 2006թ.-ին «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով և կառավարական մի շարք որոշումներով սահմանվեցին Հայաստանում ինովացիոն գործունեության աջակցման իրավական հիմքերը³:

Որքանով են այս օրենսդրական ակտերը նպաստավոր հայաստանյան նորարարական համակարգի զարգացման համար, ի՞նչ փոփոխությունների կարող են հանգեցնել դրանք հայաստանյան տնտեսությունում և արդյո՞ք միայն դրանց ընդունմամբ է պայմանավորված ՀՀ նորարարական համակարգի զարգացումը, որո՞նք են տեխնոլոգիական նորարարության ինստիտուցիոնալ և օրենսդրական աջակցման առաջնահերթ խնդիրները: Այս հարցերը հրատապ են և առաջնահերթ լուծումներ են պահանջում են:

Դեռևս 2005 թվականի ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ, իսկ հետագայում նաև 2006 թվականի մի շարք ՀՀ օրենքներով և կառավարական որոշումներով ամրապնդվեց Հայաստանում ինովացիոն քաղաքականության հայեցակարգը, որը կոչված էր երկրի տնտեսությունը փոխադրել կայուն զարգացման ուղիու վրա և երկրում ձևավորել ինովացիոն

¹ Հնդվածը պատրաստվել է ՀՀ ԳՊԿ-ԲՀ ՀՀԲՀ «ՀՀ և Բելառուսի շուկաների սուբյեկտների գործունեության միջազգայնացումը երկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներգրավման, հարմարեցման և ներդրման բնագավառում» 11Ե-09 թեմայի ֆինանսավորման շրջանակներում:

² Տե՛ս «Հայաստանի Ազգային Մրցունակության Ձեկույց 2009. Նորարարության էկոհամակարգի սերմանումը», «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2009, էջ 4: «Հայաստանի Ազգային Մրցունակության Ձեկույց 2010. Բարձրագույն կրթության մարտահրավերը», «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2010, էջ 6:

³ ՀՀ օրենքը «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին», ընդունված է 2006թ. մայիսի 23-ին:

համակարգ: Այս համակարգը կոչված է միասնականացնելու երկրի գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական և արտադրական միմյանց հետ փոխկապակցված օղակները ու դրանց սպասարկող ենթակառուցվածքները: Այս միջոցառումները նպատակ ունեն երկրում ինովացիոն հիմքի վրա կայուն տնտեսական աճ ապահովել՝ խորացնելով հիմնարար հետազոտությունների և կիրառական մշակումների, գիտության և արտադրության միջև փոխշահավետ կապերը:

Ինովացիոն համակարգի ձևավորման համար գերակա խնդիրներ են մտավոր և արդյունաբերական սեփականության քաղաքակիրթ շուկայի զարգացման մեխանիզմների գործարկումը, նորարարական ընկերությունների գործունեության համար անհրաժեշտ իրավական միջավայրի ձևավորումն ու ֆինանսական աղբյուրների ապահովումը, ինչպես նաև արդյունավետ տեղեկատվական բազայի ստեղծումը: Սակայն այսօր հրատապ խնդիր է ոչ միայն ինովացիոն տնտեսության նպաստավոր և միասնական իրավաօրենսդրական դաշտի ձևավորումը, այլև դրա զարգացման հայեցակարգի, ինչպես նաև վերջինիս ներդրման մեխանիզմի ստեղծումը, ինչը կապահովի իրավահավասար պայմաններ բոլոր տնտեսական ազենտների համար, կամրապնդի երկրի մրցակցային դաշտը և կնպաստի գիտատեխնոլոգիական ներուժի և նորարարությունների զարգացմանը:

Ինովացիոն տնտեսական համակարգի ձևավորումը ենթադրում է համակարգային մոտեցումներ: Առանձին իրականացված յուրաքանչյուր նախաձեռնություն կբերի ռեսուրսների փոշիացման և ոչ արդյունավետ օգտագործման: Այն ենթադրում է սերտ համագործակցություն ինչպես պետական տարբեր կառույցների, այնպես էլ մասնավոր և գիտակրթական ոլորտների միջև: Համակարգային մոտեցումը ենթադրում է նախ և առաջ միասնական համակարգի մշակում և ներդրում երկրի մասշտաբով, և, անշուշտ, այստեղ նախաձեռնողը պետք է պետությունը լինի՝ իր ինստիտուցիոնալ կառուցվածքով և ենթակառույցներով:

Ինովացիոն տնտեսության զարգացման ռազմավարության հաջողության նախապայմաններից մեկը մասշտաբայնությունն է և տեղեկատվական հասանելիությունը բոլոր տնտեսական ազենտներին: Կարևոր նախապայմաններից է նաև համալսարան-տնտեսություն կապի սերտացումը, որտեղ պետությունը կարող է ունենալ և՛ ուղղակի և՛ անուղղակի աջակցություն: Պետության գլխավոր գործիքներից մեկը ինովացիոն քաղաքականության ձևավորման համար եղել և մնում է իրավաօրենսդրական դաշտի ճկուն կարգավորումը և համապատասխան օրինագծերի ընդունումը, որոնք կխրախուսեն երկրում նորարար ձեռնարկությունների ստեղծումը:

Միջազգային փորձի որոշ դիտարկումներ

Միջազգային փորձից հայտնի են բազմաթիվ հաջողված օրինակներ, երբ բարենպաստ օրենքներն ու օրենսդրական ակտերը դիտարկվող երկրների տնտեսություններին հնարավորություն են տվել ապահովել ՀՆԱ-ի շեշտակի աճ՝ շնորհիվ գիտության որոշ բնագավառների զարգացման և դրանց բազայի վրա նորարարական արտադրության խթանման, ինչն էլ իր հերթին նպաստել է այդ երկրների համաշխարհային մրցունակության բարձրացմանը և հիմք հանդիսացել նորանոր շուկաներ ներթափանցման համար: Նման փորձի կիրառման արդյունք են այնպիսի երկրների տնտեսական համակարգերը, ինչպիսիք են օրինակ ԱՄՆ-ը, Գերմանիան, Ճապոնիան, Չինաստանը, Սինգապուրը, Հնդկաստանը, որոնք տարբերվելով մի շարք առանձնահատկություններով և ունենալով մեկնարկային տարբեր պոտենցիալներ, ինովացիոն համակարգերի բնագավառում հասել են շոշափելի հաջողությունների: Դիտարկենք այդ երկրների փորձը:

ԱՄՆ-ում 1980-2000թթ. ընդունվել են 8 ներքոհիշյալ օրենքները, որոնք կարգավորում են գիտահետազոտական աշխատանքներում տարբեր սուբյեկտների միջև ծագող հարաբերությունները, ինչպես նաև տեխնոլոգիաների փոխանցումը գիտության պետական համակարգից տնտեսության մասնավոր հատված: Ներկայացնենք այդ օրենքների յուրահատկությունները¹.

¹ Stū Special Report, Comparisons of U.S. and Japanese R&D Policies, Dr. Gregory Tasse, Strategic Planning and Economic Analysis Group, National Institute of Standards and Technology, March 1998, p. 6. Steering And Funding of Research Institutions Country Report: United States, Special Report done by OECD in US R&D institutions, 2001, p. 6.

1. 1980թ. ընդունված «**Տեխնոլոգիական ինովացիաների մասին**» օրենքում ամրագրված է, որ դաշնային կառավարության համապատասխան մարմինները պետք է կազմակերպեն պետության սեփականություն հանդիսացող գյուտերի փոխանցումը նահանգներին և մասնավոր հատվածին:
2. «**Փոքր ձեռնարկությունների և համալսարանների արտոնագրային իրավունքների մասին**» (1980թ.) օրենքը թույլ տվեց պետական դրամաշնորհներ ստացողներին և պետական հետազոտական առաջադրանքներ կատարողներին պահպանել և իրացնել իրենց իրավունքները պետական միջոցներով ստեղծված գյուտերի առևտրայնացման ընթացքում:
3. «**Փոքր ձեռնարկատիրության ինովացիոն զարգացման մասին**» (1982թ.) օրենքի հիման վրա ստեղծվեց Փոքր ձեռնարկատիրության ինովացիոն զարգացման ծրագիր: Վերջինս պարտավորեցրեց բոլոր այն նախարարություններին և գերատեսչություններին, որոնց բյուջեն գերազանցում է 100 մլն ԱՄՆ դոլարը, ծախսերի 1.25%-ը ուղղել փոքր և միջին ձեռնարկություններին՝ դրամաշնորհների, համագործակցության պայմանագրերի և հուշագրերի հիման վրա:
4. «**Ազգային գիտահետազոտական համագործակցության մասին**» (1984թ.) օրենքը հնարավորություն տվեց ԱՄՆ ընկերություններին և կորպորացիաներին ինովացիոն գործընթացի շրջանակներում համակցել-միավորել իրենց հզորությունները՝ արտամրցակցային պայմաններով:
5. Պետական գիտահետազոտական լաբորատորիաների կողմից մշակված և 1986թ. ընդունված «**Տեխնոլոգիաների փոխանցման մասին**» օրենքը ինովացիոն օրենսդրության մեջ ավելացրեց մի դրույթ, որը թույլ տվեց պետական լաբորատորիաներին (գիտահետազոտական ինստիտուտներին) համագործակցության պայմանագրեր կնքել միմյանց և այլ կազմակերպությունների հետ:
6. «**Առևտրի և մրցունակության մասին**» օրենքի (1988թ.) շրջանակներում ստեղծվեց մրցունակության հարցերով զբաղվող խորհուրդ: Արդյունքում Ազգային ստանդարտացման և տեխնոլոգիաների ինստիտուտին կից ստեղծվեց «Առաջատար տեխնոլոգիաների ծրագրեր» կազմակերպությունը, որը աջակցում է ձեռնարկություններին նոր տեխնիկայի և արտադրության եղանակների յուրացման հարցերում:
7. «**Գիտահետազոտական աշխատանքների և արտադրությունների միջև ազգային համագործակցության մասին**» օրենքը (1993թ.) խթանեց վենչուրային-հետազոտական ձեռնարկություններին՝ համատեղ մշակել և գործարկել նոր տեխնոլոգիաներ:
8. «**Շուկայացման նպատակով տեխնոլոգիաների փոխանցման մասին**» օրենքը (2000թ.) լրացրեց «Տեխնոլոգիական ինովացիաների մասին» օրենքը՝ էսպես պարզեցնելով նախարարությունների և այլ պետական գերատեսչությունների կողմից իրենց մշակումների արտոնագրումը:

Գերմանիայի գիտահետազոտական ոլորտը ունի բավականին բարդ կառուցվածք, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական ինստիտուտներին հնարավորություն է տրված ֆինանսավորվել նաև ոչ պետական աղբյուրներից, իսկ մասնավոր գիտահետազոտական ինստիտուտներին՝ պետության միջոցներից: Երկրում գիտության ոլորտի պետական քաղաքականությունը կոորդինացնում է Կրթության և հետազոտությունների ֆեդերատիվ նախարարությունը (BMBF): Վերջինիս բյուջեն կազմում է գիտության վրա կատարված պետական ծախսերի շուրջ 75%-ը, իսկ մնացած մասը հիմնականում հատկացվում է Տնտեսության ու Աշխատանքի և պաշտպանության ֆեդերատիվ նախարարությունների կողմից: Գիտության պետական քաղաքականության, մասնավորապես՝ ֆինանսավորման, հարցերը չեն կարգավորվում առանձին օրենքով: Հիմնական օրենքի (Basic Law) 91 հոդվածներով սահմանվում են երկրի ֆեդերատիվ համակարգի կողմից գիտության ֆինանսավորման և խթանման հիմնադրույթները:

Գերմանիայում ներկայում ֆեդերատիվ նահանգները (FS) և ֆեդերատիվ կառավարությունները (FG) ֆինանսավորում և աջակցում են մասնավորապես երկու խոշորագույն գիտահետազոտական կառույցների՝ Մաքս-Պլանկ ընկերակցությունը (Max-Planck-Gesellschaft՝ MPG) և Ֆրաունհոֆեր ընկերակցությունը (Fraunhofer-Gesellschaft՝ FhG): FG-ն ապահովում է

MPG-ի ֆինանսավորման 50%-ը և FhG-ի՝ 90%-ը: «Գերմանիայի բնական գիտությունների ակադեմիաներ» կառույցը (Academies and Deutsche Akademie der Naturforscher Leopoldina) բաղկացած է երկրի հիմնական քաղաքներում տեղակայված 7 ակադեմիաներից և ներառում է տարբեր ոլորտներին առնչվող 1400 իսկական և թղթակից անդամներ: Կառույցը ունի գիտության մեջ ավելի շատ ինստիտուցիոնալ նշանակություն (գիտական համաժողովների կազմակերպում, գիտության սոցիալական բախումների հարթեցում, գիտական զարգացումների գնահատում և այլն) և բացառապես ֆինանսավորվում է ֆեդերատիվ աղբյուրներից: Գիտահետազոտական ինստիտուտների համակարգում գործում են նաև՝ Blue List Institutions-ը (BLE), որը ներառում է 79 գիտահետազոտական ինստիտուտներ:

Ճապոնիայում ինովացիոն քաղաքականության հիմք է հանդիսանում «Գիտության և տեխնոլոգիաների մասին» օրենքը և 2001թ. կառավարության կողմից ներկայացված Գիտատեխնիկական քաղաքականության երկրորդ գլխավոր պլանը¹: Վերջինիս գործադրման արդյունքում երկրի կառավարության ենթակայության տակ ստեղծվել է Գիտատեխնիկական քաղաքականության խորհուրդ. միաձուլվել են նաև Ճապոնիայի Գիտության և տեխնոլոգիաների գործակալությունը (STA) և Կրթության, գիտության, սպորտի և արվեստի նախարարությունը (Monbusho)՝ Կրթության, արվեստի, սպորտի, գիտության և տեխնոլոգիաների նախարարության (MEXT) հովանու տակ: Սկսած 2001թ.-ից մինչև 2004թ. ապրիլը բոլոր ազգային համալսարաններին և քոլեջներին տրվել է կորպորատիվ գործակալության կարգավիճակ: Ճապոնիան ունի 90 ազգային համալսարաններ:

Մյուս կողմից, Բարձր արդյունաբերական գիտության և տեխնոլոգիաների ազգային ինստիտուտը (AIST) հռչակվել է որպես Միավորված վարչական գործակալություն՝ ներառելով Միջազգային առևտրի և արդյունաբերության նախարարության 16 գործող հետազոտական ինստիտուտները: Արդյունքում Միավորված վարչական գործակալությունը ստացել է կառավարությունից անկախ իրավաբանական անձի կարգավիճակ: Կատարված բարեփոխումներից հետո արձանագրվել է, որ նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ AIST-ի արտաքին ֆինանսավորման ծավալները, հրատարակված աշխատանքները, գյուտերի արտոնագրման դիմումները և արտոնագրերից ստացված շահույթը էապես աճել են: 2001թ. գործարկվել է նաև գիտության բարելավված մրցակցային ֆինանսավորումը, որի կազմակերպման համար ներգրավվել են հետազոտական փորձ ունեցող գնահատող փորձագետներ: Անհատ գիտնականների հետազոտությունների ֆինանսավորման համար նաև գործում են MEXT-ի կողմից ֆինանսավորվող Աջակցման և գիտության ճապոնական միությունը (JSPS) և Ճապոնիայի գիտատեխնիկական կորպորացիան (JST), որոնք առաջարկում են համալսարնական դրամաշնորհային ծրագրեր:

Հարավային Կորեան մեկ այլ գիտելիքահենք տնտեսության զարգացման մոդելի օրինակ է: Ականատես լինելով Ճապոնիայի տնտեսության վերընթացին՝ Կորեան սկսեց գիտակցել համալսարանների և արդյունաբերության (բիզնեսի) սերտ կապի անհրաժեշտությունը: Կորեական մի շարք ռազմավարական նշանակության արդյունաբերական ոլորտներ արագորեն անցան բարձր տեխնոլոգիաների և ավտոմատացված համակարգերի: Համալսարան-բիզնես կապը զարգացնելու նպատակով մշակվեցին մի շարք օրինագծեր և ընդունվեցին ինովացիային բարենպաստող օրենքներ: Նմանատիպ օրինագծերից կարևորներն էին Գիտատեխնոլոգիական հիմնական օրենքը (the Science-Technology Basic Law), Տեխնոլոգիական փոխակերպման խթանման օրենքը, Արտոնագրերի մասին օրենքը և Արդյունաբերական կրթության խթանման և համագործակցության ուժեղացման մասին օրենքը (the Law for Industrial Education Promotion and Collaboration Boost): Հաշվի առնելով Կորեայի ձեռքբերումները Համալսարան-Արդյունաբերություն կապի ուժեղացման միջոցառումները կարելի համարել հաջողված քայլերից մեկը դեպի նորարարամետ տնտեսություն:

Չինաստանի գիտատար և տեխնոլոգիատար տնտեսության ձևավորումը ունեցել է բավականին տարբերակված պատմական հենք: Այդ երկրում համալսարան-արդյունաբերություն համագործակցությունը սկսել էր դեռևս 1950-ական թվականներին, երբ կոմունիստական ռեժիմի ներքո համալսարանները կոչված էին ավելացնելու չինական արտադրության

¹ St'u Cabinet Office, Government of Japan - <http://www.cao.go.jp/index-e.html>

արդյունավետությունը: Նախնական շրջանում համալսարաններից գիտելիքի փոխակերպումը մրցունակ արտադրանքի իրականացվում էր ոչ կանոնակարգված ձևով: Դրանով հանդերձ, 1980-ական թվականներին Չինաստանի մակրոտնտեսական քաղաքականությունը զգալիորեն փոխվեց՝ շեշտադրումը փոխադրելով տնտեսության արդյունավետության և գիտելիքահենք ուղղության վրա, որի արդյունքում սկսվեց ակադեմիական և գիտական ռեսուրսների համախմբումը և ուղղորդումը՝ հատկապես արտահանմանը միտված մրցունակ արտադրանքի արտադրության տնտեսական ծրագրերի իրագործման նպատակներին հասնելու համար¹: 1985թ Չինաստանի կառավարության կողմից գիտական և տեխնոլոգիական համակարգի բարեփոխումների ծրագրի ընդունումը ելակետային հանդիսացավ այդ երկրի գիտության և տեխնոլոգիայի քաղաքականության ձևավորման համար: Այդ որոշումը հնարավորություն ընձեռեց համալսարաններին ինքնուրույն որոշում կայացնելու Գ-ՏԱ ծրագրերի և տեխնոլոգիական փոխակերպումների կազմակերպման ընթացքում՝ հիմք ընդունելով շուկայական պահանջարկը: Ավելին, նման որոշումները հնարավորություն ընձեռեցին ապահովելու խթաններ «ավելի մեծ վճար՝ լրացուցիչ գործի համար» սկզբունքով: Պետական ուղղակի միջամտությունն աստիճանաբար փոխակերպվեց դեպի անուղղակի աջակցության և ուղղորդման ծրագրերը՝ սահմանելով օրենքներ և կանոններ, որոնք համալսարաններին հնարավորություն էին ընձեռում հանձնառել ինովացիոն քաղաքականության ռիսկերը ու դրանց հիման վրա կայացնել սեփական պատասխանատու որոշումները:

Մինգապուրի նորարարական քաղաքականության կայացման և տնտեսության կայունացման փորձը բավականին տարբերվում է Ասիական այլ պետությունների փորձից: Անկախացումից ի վեր այն բաց է եղել համաշխարհային մրցակցության տեսանկյունից և արդեն 1990-ական թվականներին երկիրը հասել էր բավականին բարձր արդյունաբերական զարգացման և էժան աշխատուժի առավելությունը այլևս արդիական չէր նորարարական տնտեսության զարգացման տեսանկյունից: Դարասկզբին երկրի երկու համալսարանները (the National University of Singapore (NUS) և Nanyang Technological University (NTU)) ավանդաբար սերտորեն համագործակցում էին արդյունաբերական ոլորտի հետ և համալսարանների շրջանավարտները պարբերաբար լրացնում էին արդյունաբերության ոլորտում առկա թափուր աշխատատեղերը: Արդյունաբերության հետ համագործակցության «մշակույթը» զարգացել է մի շարք միջոցառումների շնորհիվ, ինչպիսիք են գիտա-հետազոտական համագործակցությունները, տեխնոլոգիաների լիցենզավորումը և այլն:

Թայլանդի տնտեսական աճը վերջին տարիներին բավականին ակնառու է: Ունենալով օտարերկրյա ներդրումների մեծ ծավալ արդարության ոլորտում, մասնավորապես ավտոմեքենաշինության ոլորտում և էլեկտրատեխնիկայում Թայլանդը արդեն իր ամուր դիրքերն է գրավում համաշխարհային շուկայի տվյալ ոլորտներում: Սակայն Թայլանդում մասնավոր բիզնեսը շատ թույլ է հետազոտությունների իրականացման տեսանկյունից: Միայն բավականին մեծ ընկերություններն են կարողանում կից լաբորատորիաներ և հետազոտական կենտրոններ պահել: 1979թ. ընդունվեց օրենք մտավոր սեփականության մասին, որին հաջորդեցին մի շարք այլ օրենքներ կապված ապրանքանիշերի և հեղինակային իրավունքի հետ: Ուշագրավ է նաև Ֆինանսների նախարարության բարեփոխումները, որոնք հնարավորություն են ընձեռնում ընկերություններին, համալսարաններին և հետազոտական ինստիտուտներին իրականացնել մինչև 200% Գ-ՏԱ ծախսեր՝ կիրառելով հարկվող գումարները:

Այսպիսով, տարբեր երկրների բազմաբնույթ փորձը վկայում է, որ ինովացիոն ոլորտում պետությունը կարող է հանդես գալ որպես՝

- **կարգավորող** (օրենսդրության մշակում և ընդունում, ստանդարտացում և փորձաքննություն, ինստիտուցիոնալ բարեփոխումներ),
- **աջակցող** (հարկային և այլ ֆինանսական արտոնություններ, մտավոր սեփականության պաշտպանություն),
- **արտադրող** (պետական Գիտահետազոտական և փորձա-նախագծային ինստիտուտներ),
- **սպառող կողմ** (Գ-ՀՓՆԱ արդյունքների ձեռքբերում):

¹ Տե՛ս Kazuyuki Motohashi, “China’s National Innovation System Reform and Growing Science Industry Linkage”, Asian Journal of Technology Innovation 14, 2 (2006), pp. 51-52.

ՀՀ ինովացիոն համակարգի զարգացման խնդիրները

Հաշվի առնելով միջազգային մրցակցային մարտահրավերները, վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ պաշտոնական շրջանակների կողմից նույնպես իրականացվում են որոշակի միջոցառումներ գիտելիքահենք տնտեսության ձևավորման ուղղությամբ: Այսպես, ըստ ՀՀ կառավարության 2010 թվականի ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգի՝ մշակվել են մի շարք տեսլականներ, որի հիմնական նպատակն է Հայաստանը դարձնել տեխնոլոգիական հետազոտությունների և մշակումների տարածաշրջանային կենտրոն՝ ձևավորելով և զարգացնելով ազգային ինովացիոն համակարգի անհրաժեշտ բաղադրիչները:

Ինովացիոն համակարգի ձևավորման համար պաշտոնապես գերակա խնդիրներ են դիտարկվում մտավոր և արդյունաբերական սեփականության քաղաքակիրթ շուկայի զարգացման մեխանիզմների գործարկումը, ինովացիոն կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ իրավական դաշտի ստեղծումն ու ֆինանսական աղբյուրների ապահովումը, ինչպես նաև ինովացիաների տեղեկատվական բազայի ստեղծումը: Հաստատված ծրագրերի շրջանակներում նախատեսվում է ազգային ինովացիոն համակարգի ձևավորումը իրականացնել գիտատեխնիկական և արտադրական-տեխնոլոգիական ոլորտներում փոխկապակցված կառույցների, տեխնոլոգիաների փոխանցմամբ և մտավոր սեփականության գնահատմամբ զբաղվող միջնորդ կազմակերպությունների, վենչուրային, ինովացիոն հիմնադրամների, տեխնոպարկերի, բիզնեսի ինկուբատորների, գիտակրթական հաստատությունների ստեղծման և զարգացման միջոցով: Ու չնայած նմանատիպ մի շարք դրական տեղաշարժերին, Հայաստանում դեռևս մնում են մի շարք ակնհայտ հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են նորարարամետ տնտեսության զարգացմանը: Կայացած քաղաքական, տնտեսական և քաղաքացիական ինստիտուտների, ինչպես նաև օրենքի գերակայության, արդյունավետ հանրային ծառայությունների մատուցումը և գերազանց գործարար միջավայրի կայացման խթանումն ազգային մրցունակության հիմնաքարերից են:

Համաձայն Մրցունակության համաշխարհային զեկույցի (2010թ) Հայաստանի ընդհանուր ինստիտուցիոնալ որակը մեծ փոփոխության չի ենթարկվել: Ըստ այդմ՝ Հայաստանի հիմնական մրցակցային առավելություններն են պետական պարտքի տանելի չափը, աշխատանքի շուկայի կարգավորումը, ինչպես նաև գյուղատնտեսական քաղաքականությունը և այլն: Մակայն նորարարական տնտեսության զարգացման համար ամենաուշագրավ թերություններից մեկը եղել է և մնում է հակամենաշնորհային միջոցառումների անարդյունավետությունը և շուկայում գերիշխող խմբերի առկայությունը, որոնք խոչընդոտում են ազատ մրցակցությանը:

Նկատենք, որ գրեթե բոլոր զարգացող երկրներում առկա է տնտեսության և քաղաքականության թույլ փոխկապակցվածության խնդիրը: Անցումային երկրների փոխակերպումների ոչ այնքան հաջող փորձը և 90-ականներին իրար հաջորդող ճգնաժամերը այդ երկրներում հիմք հանդիսացան ինստիտուցիոնալ կառույցների դերի և նշանակության քննարկումների ծավալման համար: Տնտեսական զարգացումը պայմանավորված է պետության իրավաօրենսդրական դաշտի զարգացմամբ, որի հիմնական հենակետը պետք է լինի նորմերի ձևավորումը համապատասխան ենթակառուցվածքներում:

Ինովացիոն համակարգին վերաբերող օրենսդրությունը Հայաստանում, այնպես ինչպես զարգացած երկրներում, պետք է գլխավորապես նպատակ ունենա կիրառելու մի շարք խթանիչ գործիքներ, որոնք թույլ կտան առաջին հերթին ստեղծել համապատասխան պայմաններ՝ մասնավոր հատվածի և նորարարական հետազոտություններով զբաղվող ինստիտուտների և համալսարանների փոխգործակցության ակտիվացման համար:

Այլ կարևոր խնդիր է բուհական գիտության ակտիվացումը, համալսարանական կառույցների ներառումը գիտահետազոտական աշխատանքներում և միևնույն ժամանակ մասնավոր պատվերների իրականացման հնարավորության ընձեռումը, ինչը էապես կարևորվում և գործում է համատարած՝ բոլոր զարգացած երկրներում: Այս իմաստով Հայաստանում նույնպես անհրաժեշտ է կատարել ակադեմիական համակարգի և համալսարանների շուկա-

յական համակարգին համահունչ բարեփոխումներ, դրանց որոշակի գիտահետազոտական ներուժը ուղղորդելով դեպի մասնավոր հատված:

Անհրաժեշտ է մեղմացնել մասնավոր հատվածի կողմից գիտատար ռեսուրսների օգտագործման հարկային պարտավորությունները և մյուս կողմից՝ սահմանել գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներով զբաղվող պետական և մասնավոր ինստիտուտների, ինկուբատորների, համալսարանների պետական աջակցության քաղաքականություն: Օրենսդրությունը պետք է նախատեսի նաև ինստիտուտների և համալսարանների վերը ներկայացված կարգավիճակի փոփոխությունների դրույթներ: Այնուամենայնիվ, հարցին առնչվող օրենսդրությունը չպետք է պարունակի նաև սահմանափակող, խիստ կանոնակարգում մտցնող դրույթներ՝ ոլորտի զարգացման համար որոշակի ազատություն ապահովելու համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույնիսկ զարգացած երկրներում մշտապես խնդիր է դրվում կարճաժամկետ և երկարաժամկետ առումով ավելացնել գիտության պետական ֆինանսավորման մասնաբաժինը: Հայաստանը նույնպես պետք է գործադրի բոլոր հնարավոր տարբերակները գիտության պետական ֆինանսավորման շարունակական աճի ապահովման համար, քանի որ դրանով է պայմանավորված երկրում գիտական և հատկապես հիմնարար հետազոտությունների այնպիսի զարգացումը, որը մրցունակ կլինի միջազգային մակարդակով:

Համաձայն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի փոփոխության (14.12.2001թ.), պետությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսում է նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարից ոչ պակաս հատկացումներ: Նկատենք, որ վերջինս էական կախվածության մեջ է դնում գիտության ֆինանսավորումը բյուջեի եկամուտներից, ինչը չի կարող հաստատապես ապահովել գիտության ֆինանսավորման անհրաժեշտ աճ:

Բազմաթիվ երկրների փորձը վկայում է, որ Հայաստանում պարտադիր կարգով պետք է ստեղծվեն գիտության ոլորտին առնչվող ազգային հիմնադրամներ՝ ազգային ինովացիոն հիմնադրամ, ազգային վենչուրային հիմնադրամ և այլն, որոնք արդյունավետ կկառավարեն ոչ միայն մասնավոր հատվածի այլ նաև պետական ֆինանսական միջոցները և կֆինանսավորեն ոչ միայն պետական ԳՀՓՆԱ կառույցներին այլ նաև մասնավոր հատվածին, ինչպես Գերմանիայում, ԱՄՆ-ում և այլն:

Այլ կարևոր խնդիր է գիտության ֆինանսավորման եղանակների փոփոխումը՝ մասնավորապես մրցակցային ֆինանսավորման սկզբունքների ավելի արդյունավետ կիրառումը: Այստեղ կիրառվող ընդհանուր սկզբունքն է՝ գիտահետազոտական ինստիտուտներին և լաբորատորիաներին նախկինում կատարված աշխատանքների որակական և քանակական գնահատումների հիման վրա ֆինանսավորումը: Ինչ վերաբերում է մասնավոր հատվածին, ապա ֆինանսավորման չափորոշիչները կարելի է սահմանել մրցույթներով և գնահատել ներկայացվող ծրագրերը:

Նկատենք նաև, որ գիտության և տեխնոլոգիաների ֆինանսավորման էական մասնաբաժինը աշխարհում իրականացվում է վենչուրային կապիտալի գործադրմամբ: Հայաստանում պետության կողմից պետք է պատշաճ կարգով կարևորվի վենչուրային կապիտալի ներհոսքի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը¹:

1 Տե՛ս «Վենչուրային համակարգը Հայաստանում. ներդրման հայեցակարգ», Կորպորատիվ կառավարման կենտրոն: Երևան, 2005թ., 55 էջ:

ԱՏՈՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ. գ. թ., դոցենտ

ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Կարելի է մատնանշել հետազոտական գործունեության գնահատման երկու հիմնական մոտեցումներ. 1. քանակական ցուցիչներով գնահատման մեթոդ, 2. էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդ: Ներկայում առավել լայն տարածում է ստացել նորաստեղծական գործունեության գնահատման համալիր մոտեցումը, ինչը ենթադրում է այդօրինակ գործունեության արդյունքների գնահատում Ազգային նորարարական համակարգերի (ԱՆՀ) գործողության շրջանակներում: Այսպիսի մոտեցումը պահանջում է, մի կողմից, հետազոտական և նորաստեղծական գործունեությունը գնահատել նրա տարբեր փուլերում որոշակի քանակական ցուցանիշների հիման վրա, մյուս կողմից, նրա արդյունավետությունը գնահատել ամբողջության մեջ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության տեսակետից: Իհարկե, գիտության և ինովացիոն գործունեության ազդեցությունը տնտեսության վրա անհնար է գնահատել մեկ միասնական, ընդհանուր ցուցանիշով անհնար է, քանի որ այդ ազդեցությունները բազմազան են ու բազմապլան, դրանք ուղղակի են և միջնորդավորված:

Բուհական համակարգերի, ֆիրմաների ու գիտահետազոտական կազմակերպությունների հետազոտական և նորաստեղծական արդյունավետ գործունեության գնահատումը և փորձի համեմատումը ներկայումս շատ տարածված է, որը իրականացվում է **«կողմնորոշիչ ցուցանիշների» (benchmarking)** կիրառման միջոցով, որը իրենից ներկայացնում է կազմակերպությունների համակարգված համեմատումը լավագույն փորձ ունեցող կազմակերպության հետ:

Կողմնորոշիչ ցուցանիշների (ԿՑ) կիրառությունը սկսվեց 1970-ական թթ.-երի վերջերին «Քսերոքս» ընկերության կողմից որպես մի մեթոդ, որի միջոցով հնարավոր էր համեմատման եզրեր գտնել մրցակից ընկերությունների միջև, ինչպես նաև փոխառնել և յուրացնել առաջատար ֆիրմաների լավագույն փորձը: Հասարակական ոլորտը, որը համեմատաբար առանձնացված է մրցակցության ճնշող ազդեցությունից, սկսեց ԿՑ-երի կիրառումը մեկ տասնամյակ անց, երբ ամերիկյան տեղական կառավարման մարմինները ներկայացրեցին արդյունավետության և արտադրողականության չափման միավորները: Արդեն 1990-ական թվականներին ԿՑ-երի կիրառումը ընդգրկվեց տարբեր երկրների կառավարությունների ենթակառույցներում, և դարձավ քաղաքականության անբաժան մաս ինչպես մեկ ձեռնարկության, այնպես էլ մեկ երկրի սահմաններում:

Չնայած կողմնորոշիչ ցուցանիշների այսպիսի հանրաճանաչությանը, դեռևս շատ քիչ հետազոտություններ են արվել բացատրելու, թե ինչպես է հնարավոր կողմնորոշիչ ցուցանիշների միջոցով մշակել և ներդնել նորարարական քաղաքականության հանձնարարականներ և հետևել դրա արդյունավետությանը:

Կողմնորոշիչ ցուցանիշի սահմանումը առաջին անգամ տվել են Զ. Բոգանը և Մ. Ինգլիշը իրենց համատեղ հոդվածում. «Կողմնորոշիչ ցուցանիշները կազմակերպության հնասովորույթի (routine) համակարգված ուսումնասիրությունն է և լավագույն միավորների համեմատումը՝ ռեսուրսների օգտագործման և արտադրողականության մակարդակով: Կողմնորոշիչ ցուցանիշները արդյունաբերության լավագույն փորձի բացահայտումն է, որի արդյունքն է լավագույն ներկայացումը»¹:

¹ Stéu Bogan C., and English M.J., "Benchmarking for best practices: winning through innovative adaptation", McGraw-Hill, New York.,1994, Pg4 in: Jorge Niosi / Research Policy 31 (2002), "National Systems of Innovation are "X-efficient" (and X-effective): Why some are slow leaner", էջ 299:

ԿՑ-ները սովորաբար ընդգրկում են կազմակերպության արդյունքների կամ գործընթացների որոշակի համեմատումը նմանատիպ կամ նույն առաքելություններով այլ կազմակերպության հետ: Կողմնորոշիչ ցուցանիշների գործընթացը ներառում է ձեռնարկության տվյալների հավաքագրումը, դրանց վերլուծությունը, ձեռնարկության վարքագծի գնումը: Այնուհետև ստացված արդյունքները բաղադրամաս են ենթարկվում, որից հետո հնարավորություն է ընձեռնվում բարելավել տվյալ կազմակերպության արդյունավետությունը:

Այսպիսով, կարելի է գրակացնել, որ **«կողմնորոշիչ ցուցանիշները» ցուցիչներ են, որոնք երևան են բերում լավագույն փորձը:** Կողմնորոշիչ ցուցանիշները ծնունդ առան արդյունաբերության ոլորտում, այնուհետև տեղափոխվեցին հասարակական ոլորտ, և այժմ էլ ներխուժում են ազգային նորարարական համակարգեր, որպես նրա արդյունավետության բացահայտման նոր ցուցիչների ամբողջություն:

Կողմնորոշիչ ցուցանիշների վերլուծության արդյունավետ մեթոդներից մեկն է հանդիսանում տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը: Այս մեթոդը բավական երկար ժամանակ գոյություն ունի, հատկապես մասնավոր բիզնեսի և հասարակական ոլորտի կազմակերպությունների էվոլյուցիոն արդյունավետությունը և արտադրողականությունը բնորոշելու ժամանակ: Տվյալների հավաքագրման մեթոդը դարձել է օգտակար գործիք տեխնոլոգիական փոփոխությունների և նորարարական գործընթացների վերլուծության ժամանակ:

Ազգային կողմնորոշիչ ցուցանիշների վերլուծությանը սկիզբ դրեցին Եվրամիության շրջանակներում քաղաքական համաձայնությունները: Դրանցից կարևորագույն էր Եվրամիության հանձնաժողովի առաջարկը աշխատելու Եվրամիության 15 երկրների հետ ազգային հետազոտության քաղաքականության մշակման ուղղությամբ ԿՑ-ների մեթոդոլոգիա զարգացնելու համար: Այս նախագիծը, որը արդյունք էր ԵՄ-ի Լիզբոնի գազաթափոցի, վերջնականապես տեսքի բերվեց ԵՄ-ի Հետազոտության Նախարարության Խորհրդի կողմից 2000թ.-ի հունիսի 15-ին: Այս հսկա նախագծի մեկ նիստը նվիրված էր համանման երկրների համեմատմանը մասնավոր բիզնեսի և գիտական ոլորտի բնագավառներում:

ԱՆՀ-երի համեմատման վիճակագրական տվյալներում հաճախ օգտագործվում են տարբեր ցուցիչներ, որոնք որոշում են ինստիտուտների արդյունավետությունը կամ անարդյունավետությունը: ԱՆՀ-երի համեմատման ցուցիչները առավելագույնս մանրագին վերլուծվել է Ջորջ Նիոզի կողմից: Սակայն պետք է նշել, որ կողմնորոշիչ ցուցանիշները չպետք է ընդունվեն որպես նորմատիվներ: ԱՆՀ-երի կողմնորոշիչ ցուցանիշները հաճախ ընկալվում են որպես ինֆորմացիայի աղբյուր, որը կարող է օգտակար լինել հետազոտողների և քաղաքական գործիչների համար: Սա հանդիսանում է ԱՆՀ-երի կողմնորոշիչ ցուցանիշների հիմնական ֆունկցիան:

Վերջին տարիների ԱՆՀ-երի փորձնական կամ «էմպիրիկ» վերլուծությունները բավականին տարածված են դարձել և ԱՆՀ-երի քննարկման մոտեցումները խիստ կողմնորոշված են դեպի էմպիրիկ վերլուծությունները: Մասնավորապես 1990-ական թթ.-երի վերջին որոշ փորձեր են արվել համեմատական բազայի ստեղծման և վերջապես ԱՆՀ-երը դասակարգման ենթարկելու համար, որի նպատակն է մշակել քաղաքական միջամտության ծրագիր՝ նորարարական ենթակառուցվածքի արդյունավետ զարգացման պայմանների ստեղծման համար:

Նորարարական քաղաքականության որակը մեծամասամբ կախված է փորձերի և վերլուծությունների համեմատության գործընթացից: Այնուամենայնիվ նորարարական գործունեության և նորարարական արդյունքների հստակ տվյալները չեն կարող երկար ժամանակ ծառայել համանման երկրների (cross-country) համեմատման համար: Ելնելով այս բնական խոչընդոտներից Տնտեսական Չարգացման և Վերակառուցման Կազմակերպությունը (ՏՉՎԿ) 1994թ. սկսեց լայնատարած ԱՆՀ-ի զարգացման նախագիծ՝ նպատակ ունենալով լավացնել համեմատումները և սրանով իսկ նպաստել ԱՆՀ-ի ավելի լայն ընկալմանը¹:

Այս նախագիծը օգտագործվեց մի քանի տարի և հիմք դրեց նորարարական գործունեության տվյալների բազայի ստեղծման: Էմպիրիկ վերլուծությունների արդյունքների մեծ մասը դրված է տեխնոլոգիական քաղաքականության հիմքում:

¹ Տե՛ս OECD, “Managing National Innovation Systems”, Paris, 1999, էջ 24:

Որպես օրինակ կարող ենք բերել Վ. Էջհորսթի վերջին վերլուծությունները ՏՉՎԿ տվյալների մասին¹: Համեմատումը կամ ինչպես նշում է հեղինակը «կողմնորոշիչ ցուցանիշների վերլուծությունը» կատարվել է Գերմանիայի և ՏՉՎԿ անդամ 17 երկրների միջև: Չնայած, որ այս կողմնորոշիչ ցուցանիշների վերլուծությունը հիմնականում ընդգրկում էր Գերմանիայի աշխատանքի շուկան, փորձ արվեց վերլուծության ոլորտը ընդգրկող «բոլոր» գործուները առավելագույնս հետազոտման ենթարկել: Հեղինակը որոշեց ներկայացնել տվյալները, նշելով ոչ միայն Գերմանիայի կրթական համակարգի հարաբերական չափը և ներուժը, այլ նաև Գերմանիայի առևտրային ոլորտում նորարարական ներկայացումների չափանիշները: Տալով այս վերլուծության կառուցվածքը, կառուցվածքային բլոկները կամ ԱՆՀ-երի նորարարական բաղադրիչները՝ Վ. Էջհորստը, այդուհանդերձ, ի վիճակի չի եղել ԱՆՀ-երի զարգացման համապատասխան ուղղություններ գտնել: Ե՛վ ՏՉՎԿ-ն հետազոտություններում, և՛ Վ. Էջհորսթի աշխատություններում հանդիպում ենք տարբեր ցուցիչների լայն «տեսականու», որոնք բնորոշում են նորարարական գործունեության տարբեր որոշիչներ: Այնուամենայնիվ, սրանցից յուրաքանչյուրը մեծամասամբ սահմանել է կողմնորոշիչ ցուցանիշների վերլուծության ընթացակարգը՝ հիմնված տվյալների նկարագրական վերլուծության վրա:

Ի հակադրումն վերը ասվածի՝ ավելի ֆորմալ ձևով են ներկայացնում համանման երկրների համեմատումը Ջ. Ֆուրմանը, Մ. Պորտերը և Ս. Սթերնը² իրենց համատեղ աշխատությունում: Նրանք օգտագործել են «ազգային նորարարական ընդունակություն» հասկացությունը: Ազգային նորարարական ընդունակությունը սահմանվում է որպես «երկրի ընդունակությունը՝ արտադրել և վաճառքի հանել նորարարական տեխնոլոգիան երկարաժամկետ կտրվածքով՝ կախված երկրի ընդհանուր նորարարական ենթակառուցվածքի ներուժից, նրա արդյունաբերական խմբերի նորարարությանը նպաստող միջավայրից և այս երկուսի միջև գոյություն ունեցող ուժեղ փոխադարձ կապից»³: Այս երեք բաղադրիչներից յուրաքանչյուրը՝ ենթակառուցվածքը, խմբերի առկայությունը և փոխադարձ կապը, չափվում է մի շարք ցուցանիշներով: Այնուհետև այս երեք բաղադրիչները մուտք գործեցին գլխավոր ռեգրեսիոն մոդել, որպես լրացուցիչ անկախ փոփոխական բլոկներ: Հասանելի տվյալները, ավելի ճիշտ «պատենտների այն քանակը, որը հատկացվում է ներդրողին առանձին երկրի կողմից (բացառությամբ ԱՄՆ-ի USPTO կազմակերպության կողմից) տվյալ տարում», օգտագործվում են որպես կախյալ փոփոխականներ, որոնց էլ վերագրվել է «ազգի նորարարական ընդունակությունը»:

Վերը դիտարկված դրույթների հիման վրա մշակվեց գիտելիքի վրա հիմնված էնդոգեն աճի մոդել և կատարվեց դրա էմպիրիկ վերլուծությունը: Մոդելը ընդգրկում էր 17 բարձր արդյունաբերական երկրների կողմնորոշիչ ցուցանիշների վերլուծությունը: Ինչ վերաբերում է այդ մոդելի առկա էմպիրիկ արդյունքներին՝ երեք հիմնական ոլորտ պետք է շեշտադրել.

1. Վերլուծվող բոլոր երկրները ուղղություն էին վերցրել բարելավել իրենց նորարարական ընդունակությունները որոշակի հետազոտվող ժամանակահատվածում (1973-1995թթ.-ներ):
2. Առկա էր տեխնոլոգիական քաղաքականության ազդեցություն ազգային նորարարական համակարգի վրա:
3. Երկրները տարբերվում էին իրենց տեխնոլոգիաների զարգացման մակարդակով:

Հիմնվելով նախորդ հետազոտությունների վրա Մ. Պորտերը, Ջ. Ֆուրմանը և Ս. Սթերնը 2002թ. առաջարկեցին ազգային նորարարական ընդունակությունների նոր մոդել, որտեղ վերլուծությունը կատարվել էր շուրջ 75 երկրներում: Տնտեսագետները օգտագործեցին էմպիրիկ արդյունքները վերլուծվող ազգերի դասակարգման համար: Ազգերի դասակարգման ժամանակ որպես ենթահիդրքսներ ներառված էին՝ «գիտնականների և ինժեներների տեսակակար կշիռը», «նորարարական քաղաքականությունը», «նորարարական միջավայրի խումբը» և «դրանց միջև փոխադարձ կապը»: Քանակական արժեքները ստացվում էին ռեգրեսիոն մոդելի վերլուծությունից:

¹ Stü Eichhorst W., Profit S., Thode E., “Benchmarking Deutschland: Arbeitsmarkt und Beschaffung, Bericht der Arbeitsgruppe Benchmarking und der Bertelsmann Stiftung” Springer-Verlag, Berlin 2001.in: Markus Balzat “The Theoretical Basis and the Empiric Treatment of NIS” Augsburg University, 2002, էջ 48:

² Stü Stern, S., Porter, M.E., Furman, J.L., 2000. The Determinants of National Innovative Capacity. NBER Working Paper, No. 7876. NBER, Cambridge, MA:

³ Stü Furman J.L., Porter M.E., Stern S., “The determinants of national innovative capacity”, Research Policy 31(6), 2002, էջ 899, 910-911:

Գոյություն ունի նաև ազգային նորարարական համակարգի չափորոշիչների որոշման մեկ այլ մոտեցում: Այս խնդրին իր ուրույն մոտեցումն է ցուցաբերել Ջորջ Նիոզին¹ օգտագործելով *X-անարդյունավետություն* և *X-արդյունավետություն* տերմինները, որոնք կապված են ԱՆՀ-երի նորարարական արդյունավետության հետ:

X-անարդյունավետությունը ներկայացվում է որպես «ճեղքվածք անհրաժեշտ զարգացման և գոյություն ունեցող լավագույն զարգացման միջև, բայց ոչ որպես ճեղքվածք հետազոտվող և որևէ տեսականորեն օպտիմալ զարգացման միջև»²:

X-արդյունավետությունը նկարագրվում է որպես «մի աստիճան, որին ինստիտուտները հասնում են իրենց կազմակերպչական առաքելության ժամանակ»³: Առաքելության օրինակներ են համալսարանների՝ մարդկային կապիտալի արտադրումը, գիտական գիտելիքների արտադրությունը, այդ գիտելիքների փոխադրումը արտադրության ոլորտ և ներկայացումը հասարակությանը: Որոշ համալսարաններ ավելի լավ են կարողանում նոր գիտելիքներ կամ շրջանավարտներ ապահովել, որոշ ընկերություններ ավելի լավ են կարողանում կառավարել նոր արտադրանքի զարգացման և ներդրման գործընթացը, որոշ կառավարության որոշ լաբորատորիաներ ավելի արդյունավետ են ներդնում նոր տեխնոլոգիաները արդյունաբերության մեջ և այլն: Այսպիսով՝ ինստիտուտների արդյունավետությունը հանդես է գալիս որպես փոփոխական, երբ նույն առաքելությամբ օժտված նման ինստիտուտները համեմատվում են միմյանց հետ, և բացառվում է համեմատությունը որևէ տեսականորեն օպտիմալ տարբերակի հետ:

ԱՏՈՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ. գ. թ., դոցենտ*

ԱԼԵՔՍԵՅ ՅՈՎԱԿԻՄՅԱՆ

*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.*

ՀՀ ԻՆՈՎԱՅԻՈՆ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ⁴

Տնտեսական զարգացումը մշտապես պահանջում է նոր գաղափարների և նոր տեխնոլոգիաների շարունակական հոսքեր: Ինովացիաները (նորամուծությունները) և հասարակության ստեղծագործական ներուժը պայմանավորում են երկրների ու տնտեսությունների մրցակցային կարողությունը՝ մրցունակությունը: Հանրահայտ տեսաբան Յու. Շումպետերը իր հետազոտություններում ընդգծում էր տեխնոլոգիայի և նորարարության դերը տնտեսական աճի և զարգացման գործընթացներում՝ վճռորոշ համարելով «դինամիկ ձեռնարկատիրոջ» դերը, որը ի վիճակի է հարուցել ու շուկա հանել «նոր համակցություններ» (նոր նյութերը, նոր տեխնոլոգիաները, արտադրության կազմակերպման նոր մեթոդները, նոր գործընթացները և այլն)⁵:

1970-80-ական թվականներից սկսած, տեխնոլոգիական նորարարության գործունը վերածվեց եվրոպական և ասիական զարգացած երկրների տնտեսական աճի ու մրցունա-

¹ Տե՛ս Jorge Niosi “National Systems of Innovation are “X-efficient” (and X-effective): Why some are slow leaner” Research Policy 31, 2002, էջ 291-302:

² Տե՛ս նույն տեղը:

³ Տե՛ս նույն տեղը:

⁴ Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԳՊԿ-ԲՀ ՀՀԲՀ «ՀՀ և Բելառուսի շուկաների սուբյեկտների գործունեության միջազգայնացումը երկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներդրման, հարմարեցման և ներդրման բնագավառում» 11Ե-09 թեմայի ֆինանսավորման շրջանակներում:

⁵ Տե՛ս Schumpeter J. “Business Cycles: A Theoretical, Historical and Statistical Analysis of the Capitalist Process” New York, 1939, vol. I, էջ 100-101, 104.

կության գլխավոր միջոցի, տնտեսության, գիտության և տեխնոլոգիայի փոխհարաբերությունների խնդրի պարզաբանումը ավելի համալիր տեսական-մեթոդաբանական մոտեցման պահանջ դրեց՝ տեխնոլոգիաների ստեղծումն ու փոխանցումը դիտելով ազգային ինովացիոն/նորամուծային համակարգի (ԱՆՀ) ստեղծման ու զարգացման շրջանակներում: Ըստ Զ. Ֆրիմենի, ազգային ինովացիոն համակարգը իրենից ներկայացնում է պետական և մասնավոր հատվածներում գործող ինստիտուտների ցանց, որոնք փոխգործակցելով նախաձեռնում, արտահանում, ձևավոխում ու տարածում են նոր տեխնոլոգիաները¹: Ինովացիաների ստեղծումը և օգտագործումը դարձել է անհրաժեշտ պայման որակական տնտեսական աճի և զարգացման ապահովման համար: Ս. Մեթքալֆի բնորոշմամբ «ԱՆՀ-ը տարբեր ինստիտուտների համակցություն է, որոնցից յուրաքանչյուրը առանձին, միաժամանակ՝ համատեղ, մասնակցում են նոր տեխնոլոգիաների ստեղծմանը՝ ձևավորելով այն հիմքը, ինչը կառավարություններին թույլ է տալիս որոշակի քաղաքականության միջոցով ազդել նորարարական գործընթացի վրա: Այդ ցանցում ստեղծվում, համակարգվում և փոխանակվում է գիտելիքի և հմտության համադրության արդյունքը, ինչը բնութագրվում է որպես նոր տեխնոլոգիա»²:

Ժամանակակից մեկ այլ տեսաբան՝ Ջ.Նիոզիի բնութագրմամբ ԱՆՀ-ն երկրի սահմաններում նոր տեխնոլոգիաների և գիտելիքների ստեղծման նպատակով հասարակական և մասնավոր հաստատությունների, համալսարանների և կառավարության ջանքերի միավորումն է: Այդպիսի համակցությամբ ձևավորվում են տեխնոլոգիական, առևտրային, իրավական, սոցիալական և ֆինանսական ցանցեր՝ նպատակ ունենալով զարգացնել, պաշտպանել, ֆինանսավորել և կարգավորել գիտելիքը և նոր տեխնոլոգիաները: Ժամանակակից տեսաբանները նորամուծությունների արդյունավետ գործընթացը դիտարկում են ոչ թե գծային-շղթայական, այլ, այսպես կոչված, «ցանցային մոդելի» շրջանակներում, որը ենթադրում է, որ նոր տեխնոլոգիաներ («նոր կոմբինացիաներ») կարող են ձևավորվել գիտությունից մինչև վերջնական ներդրում գիտելիքների շղթայի ցանկացած փուլում, եթե առկա են դրան բարենպաստող ինստիտուցիոնալ պայմանները (օրենսդրություն, մակրոտնտեսական միջավայր, կարգավորման ու ֆինանսավորման մեխանիզմներ, քաղաքական, էթնո-մշակութային գործոններ և այլն): Այդպիսով, նոր գիտելիքների ստեղծման ու դրանց հիման վրա մրցունակ տեխնոլոգիական մշակումների գործընթացները հաջողակ կլինեն միայն համապատասխան ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի և արդյունավետ պետական քաղաքականության միջոցով:

Տեխնոլոգիական զարգացման և եկամուտների մակարդակի միջև կապի վերաբերյալ վիճակագրությունը մի խումբ երկրների համար ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Տեխնոլոգիական զարգացումը և եկամուտների մակարդակը տարբեր խմբի երկրներում, 2009թ.*

	Բարձր եկամուտներով երկրներ	Միջին եկամուտներով երկրների խումբ	Ցածր միջին եկամուտներով երկրների խումբ	Հայաստան
ՀՆԱ մեկ շնչի հաշվով*	36,236.50	6,349.70	3,403.90	2,770.40
Բարձր տեխնոլոգիական արտահանում, % մշակող արդյունաբերության ընդհանուր արտահանումից (manufactured exports)	19.4	20.1	13.4	3.7
ՏՏ ապրանքների արտահանում, % ընդհանուր ապրանքային արտահանումից	12.2	16.3	13	1.5

¹ Տե՛ս Freeman C. Technology Policy and Economic Performance, L.: Printer Publishers, 1987, էջ 18.
² Տե՛ս Metcalfe S. The Economic Foundation of Technology Policy: Ecivilbrium and Evolutionary Perspective // Handbook of the Economics of Innovation and Technical Change / P. Stoneman (ed.). L.: Blackwell, 1995, էջ 48.
³ Տե՛ս J. Niosi “ National Systems of Innovation are “X-efficient” (and X-effective): Why some are slow leaner” Research Policy 31, 2002, էջ 291-302.

	Բարձր եկամուտներով երկրներ	Միջին եկամուտներով երկրների խումբ	Ցածր միջին եկամուտներով երկրների խումբ	Հայաստան
SS ապրանքների ներկրում, % ընդհանուր ապրանքային արտահանումից	13.3	16.5	12.8	5**
Հետազոտությունների և մշակումների (R&D) ծախսեր, % ՀՆԱ-ի նկատմամբ	2.3	1	0.5	0.2**

* Աղբյուրը՝ World Development Indicators (WDI) Online Database, <http://databank.worldbank.org/ddp/home.do>

** Գնողունակության պարիտետով և ընթացիկ ԱՄՆ դոլարով արտահայտված:

*** 2009թ.-ի տվյալները բացակայում են, վերցվել են նախորդ տարիների տվյալները:

Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը զգալի չափով նպաստում է բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը՝ խթանելով նորամուծությունները, արդյունաբերական ու գիտատեխնիկական հետազոտություններն ու մշակումները և պաշտպանելով դրանք չարտոնագրված կրկնօրինակումից/պատճենումից, մտավոր սեփականության գոտությունից և երաշխավորելով օգուտների ստացումը դրանց ստեղծողների կողմից: Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը ձևավորում է նաև առավել բարենպաստ և թափանցիկ միջավայր օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներգրավման և տեխնոլոգիաների փոխանցման համար: Այսպես, Հնդկաստանը և Բրազիլիան արձանագրեցին ՕՈՒՆ-ի նշանակալի ներհոսք արտոնագրերի, ապրանքանիշների և արդյունաբերական սեփականության իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենքների ընդունումից և հետևողական կիրարկումից հետո: Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության առավել հետևողական կիրառման պահանջով էր նաև պայմանավորված, օրինակ, Մայքրոսոֆթ ընկերության մուտքը Հայաստանյան շուկա, իսկ վերջին տարիներին արձանագրվել է այդ ընկերության ծրագրային ապահովման ոչ արտոնագրված օրինակների օգտագործման ծավալների չնչին նվազում (ընդհանուրի մեջ մի քանի տոկոսային կետով. Հայաստանում ոչ լիցենզիոն, «այիրատային» ծրագրային ապահովման ցուցանիշը գերազանցում է 90%-ը): Այնուամենայնիվ, հաշվի առնելով SS սեկտորի զարգացման միտումները, ինչպես նաև որակյալ աշխատուժի առկայությունը, 2011-ին բացվեց Հայաստանում Մայքրոսոֆթ ընկերության ինովացիոն կենտրոնը:

Հայաստանում մտավոր սեփականության պաշտպանությանն առնչվող խնդիրները կանոնակարգվում են Քաղաքացիական օրենսգրքով և մի շարք օրենքներով, այդ թվում՝ հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության, արտոնագրերի, ֆիրմային անվանումների, ապրանքանիշների մասին և այլ օրենքներով: Հայաստանն անդամակցում է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, վավերացրել է Գրականության և արվեստի աշխատանքների պաշտպանության Բեռլինի կոնվենցիան, Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզի կոնվենցիան և մի շարք այլ համաձայնագրեր: Հայաստանում գործում է Մտավոր սեփականության պաշտպանության գործակալությունը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո, սակայն նրա գործառույթները սահմանափակվում են մտավոր սեփականության իրավունքների գրանցմամբ և այն չի մասնակցում ոլորտում քաղաքականության իրականացմանը: Հայաստանում գոյություն չունի առանձին օրենք համակարգչային ծրագրերի և տվյալների բազաների նկատմամբ հեղինակային իրավունքների պաշտպանության մասին, և դրանք պաշտպանվում են հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության մասին օրենքով:

Տեխնոլոգիաները հիմնականում վերաբերվում են ոչ նյութական արտադրանքներին՝ ներառյալ նորամուծությունները, ինչպես նաև դրանք կարող են լինել օգտակար մոդելներ, արդյունաբերական նմուշներ, համակարգչային ծրագրեր, տվյալների բազաներ, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաներ, տեխնիկական տեղեկատվություն, հոդվածներ ու այլ գիտատեխնիկական տեղեկատվություն, որն արտադրվել է որպես գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական, դիզայնի և տեխնոլոգիական աշխատանքների արդյունք:

Ազգային ինովացիոն/նորամուծային քաղաքականություն իրականացնելու տեսանկյունից

կարևոր է նպաստավոր կարգավորող (օրենսդրական) դաշտը մասնավոր հատվածի՝ փոքր և միջին ինովացիոն ձեռնարկությունների գործունեության համար, որոնք բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների հատվածի զարգացման և երկրի մրցունակության շարժիչ ուժն են: Որպես կանոն, փոքր ինովացիոն ձեռնարկությունները տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնների հաճախորդներն են, քանզի դրանք գիտահետազոտական հատվածի ամենաճկուն ու ամենադինամիկ սուբյեկտներն են. նրանց ճկունությունը պայմանավորված է գիտատար և բարձր տեխնոլոգիաների շուկաներում պահանջարկին արագ հարմարվելու կարողությամբ: Այս տեսանկյունից, երկրների նորամուծային քաղաքականությունը առանձնացնում է վեճուրային հիմնադրամների/ընկերությունների, տեխնոպարկերի և ինկուբատորների դերը և գործարարության պարզեցված կանոնակարգումը¹:

Ինովացիոն քաղաքականության և ներքին շուկայում տեխնոլոգիական փոխանցման հիմնական ուղղություններն ու դրանց հիմնական գործիքները հետևյալն են՝

- Ազգային նորամուծային համակարգի կառուցվածքի օպտիմալացում՝ ներառյալ գիտության ու կրթության և նորամուծությունների պետական ֆինանսավորմանը,
- Բիզնես հատվածի/արդյունաբերության և գիտության միջև նորամուծային համագործակցության խթանում երկրի ներսում: Այս ուղղությունն իր մեջ ներառում է համալսարանների և ընկերությունների միջև համակարգված համագործակցություն, գիտության և նորամուծությունների լայնածավալ ֆինանսավորում, ֆինանսավորման մեջ մասնավոր հատվածի և ՕՈՒՆ-ի ներգրավում,
- Ինտեգրացիա միջազգային ինովացիոն ցանցերին՝ համակարգված կերպով և տեխնոլոգիական մասնագիտացման հիման վրա,
- Ներքին ինովացիոն/նորամուծային ցանցերի կանոնակարգում: Հատուկ պայմանների ստեղծում նորամուծությունների բնագավառում միջտարածաշրջանային կապերի ստեղծման համար,
- Ազգային նորամուծային/ինովացիոն համակարգի ձևավորում, որը ներառում է ազգային գիտական համակարգի վերակառուցում, ՓՄՁ-ների ներգրավում ինովացիոն հատված, գիտության ու կրթության համակարգի վերակազմավորում, բարձր տեխնոլոգիաների բնագավառում հիմնական ուղղությունների բացահայտում:

ՀՀ-ում նորամուծությունների, տեխնոլոգիաների փոխանցման և SS հատվածը կանոնակարգող մի քանի իրավական գործիքներ կան, որոնք ներառում են 2006թ. Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին օրենքը, Ինովացիոն համակարգի զարգացման 2005-2010թթ. ծրագիրը, 2005թ. Էլեկտրոնային հազորդակցության, ինչպես նաև 2000թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին օրենքները²: Դրան զուգահեռ, առկա են նաև պետական պլանավորման մի շարք փաստաթղթեր, ինչպես օրինակ, գիտության զարգացման ռազմավարությունը, SS ոլորտի զարգացման քաղաքականությունը, մի շարք միջազգային պայմանագրեր ու համաձայնագրեր՝ ուղղված մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությանը:

Անդրադառնալով տեխնոլոգիաների փոխանցմանը (այդ թվում նաև ներքին շուկայում), պետք է նշել, որ ներկայումս Հայաստանում գոյություն չունի տեխնոլոգիաների փոխանցման որևէ կենտրոն, իսկ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության օրենսդրության կիրարկումը թույլ է այլ զարգացող երկրների համեմատությամբ: Այսպես, մտավոր սեփականության պաշտպանության ցուցանիշով Հայաստանը զիջում է իր ենթախմբի՝ միջին եկամտոտներով երկրների խմբի ցածր ենթախմբի երկրներին: ՀՀ-ում առայժմ չկա ոլորտում իր ակտիվ գործունեությունը ծավալած որևէ վեճուրային կամ ինովացիոն հիմնադրամ, չնայած 2010թ. ծրագրվում էր ստեղծել մեկ վեճուրային հիմնադրամ Սիթրոնիքս ընկերության և Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ «Մարս» ՓԲԸ հիմքի վրա: Կապը գիտության և տնտեսության, մասնավորապես արդյունաբերության միջև թույլ է, չնայած կան բուհերի և SS հատվածի ընկերությունների համագործակցության որոշ օրինակներ: Համալսարանների և

¹ St'u Kamil Idris, "Intellectual Property – A Power Tool for Economic Growth," World Intellectual Property Organization (WIPO), March 23, 2005.

² <http://www.wipo.int/about-wipo/en/dgo/wipo_pub_888/index_wipo_pub_888.html> p.24-31

² St'u www.parliament.am

ընկերություններ միջև հետազոտական համագործակցության ցուցանիշով Հայաստանը նույնպես զիջում է այլ զարգացող երկրներին (աղյուսակ 2):

Հայաստանում տեխնոլոգիաների ստեղծման և փոխանցման ինովացիոն զարգացման տեսանկյունից առկա է որոշակի ներուժ՝ ի դեմս բարձրակարգ աշխատուժի առկայության: Նախկինում Հայաստանում գործել են բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտներ՝ ֆունդամենտալ և կիրառական հետազոտությունների բնագավառում, սակայն անկախությունից հետո թեպետև տեխնոլոգիական զարգացման այդ հիմքը նշանակալիորեն տուժել է, դեռևս որոշ ուղղություններով ներուժ պահպանվել է, և սկսել են իրականացվել առանձին միավորների հիման վրա հեռանկարային զարգացման ծրագրեր (օրինակ, նոր սերնդի արագացուցիչ՝ հանրահայտ CANDLE նախագիծը ՀՀ-ում): Սակայն այս դաշտում առաջնահերթությունների սահմանման խնդիր գոյություն ունի, թե՛ ի վերջո Հայաստանի համար ինչպիսի տեխնոլոգիական ուղղություններ կարող են լինել հեռանկարային:

Աղյուսակ 2

Տեխնոլոգիաների ստեղծումը և փոխանցումը Հայաստանում և այլ երկրներում՝ ըստ եկամուտների մակարդակի խմբերի, 2009թ.

Ցուցանիշներ*	Հայաստան	Միջին եկամուտներով երկրներ, ցածր ենթախումբ	Միջին եկամուտներով երկրներ, բարձր ենթախումբ	Բարձր եկամուտներով երկրներ
Մտավոր սեփականության պաշտպանություն (1-7), 2008	1.84	3.26	4.4	8.2
Համալսարաններ-ընկերություններ հետազոտական համագործակցություն (1-7), 2008	1.52	3.52	5.2	8.24
Վենչուրային կապիտալի մատչելիություն (1-7), 2008	0.32	3.79	5.36	8
Բարձր տեխնոլոգիական արտահանում, % մշակող արդյունաբերության արտահանումից, 2007 (1-10)	2.9	6.22	6.56	8.02
Մասնավոր հատվածի ծախսերը հետազոտությունների և մշակումների վրա (1-7), 2008	2.8	4.4	4.98	8.2
Ֆիրմաների մակարդակով տեխնոլոգիաների յուրացում (1-7), 2008	2.08	4.2	4.34	8.44
Արժեշոթանների առկայությունը (1-7), 2008	2.88	4.21	4.61	8.32

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, World Bank Knowledge for Development (K4D) interactive benchmarking tool, http://info.worldbank.org/etools/kam2/KAM_page1.asp

* Բոլոր ցուցանիշները կշռված են (նորմալացված): Գնահատման սանդղակը՝ 0-ից (նվազագույնը) մինչև 7-ը (առավելագույնը): Որոշ ցուցանիշներ գնահատվում են 1-7 սանդղակով:

Նոմինալ արտահայտությամբ, իհարկե, հետազոտությունների և մշակումների (R&D) ոլորտում առկա է մասնագիտացում և դիվերսիֆիկացիա (բազմաթիվ ինստիտուտներ), սակայն այս ոլորտում Հայաստանում դրական տեղաշարժ արձանագրելու համար, բացի առաջնահերթությունների սահմանումից, անհրաժեշտ է նաև ոլորտի վերակառուցում և ֆինանսավորման մեխանիզմների և ծավալների վերանայում: Հայտնի ընկերությունները Հայաստանի տեխնոլոգիական ոլորտում արդեն իսկ ներկայացված են, ինչը վերջին տարիներին ոլորտում արձանագրված զարգացումների հաջողության գործոններից է: Ամեն դեպքում, ոլորտի համաշխարհային առաջատարների հետագա մուտքը ՀՀ տեխնոլոգիական ոլորտ՝ ի դեմս դրանց հետազոտությունների և մշակումների կենտրոնների (R&D centers) հիմնադրման, դրականորեն կազդի այս ոլորտում ՀՀ ներուժի վրա: Հայաստանի «Չեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը, որը միակն է նմանատիպ կառույցների շարքում, տրամադրում է աջակցություն տեխնոլոգիական/ինովացիոն ոլորտի նորաստեղծ ձեռնարկություններին

(սթարթափս – start-ups), սակայն այդ աջակցության ծավալները փոքր են, և չեն կարող նշանակալի արդյունք ապահովել մակրո-մակարդակով: Նման հիմնադրամների թվի ավելացումը և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավումը կարող է այս տեսակի ինստիտուտները դարձնել Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի զարգացման շարժիչ ուժ: Հայաստանում տեխնոլոգիաների ստեղծման և փոխանցման ոլորտի սուբյեկտները, հատկապես, նրանք, որոնք ստանում են պետական ֆինանսավորում, թույլ են ինտեգրված համաշխարհային ինովացիոն ցանցերին, իսկ ֆիրմաների մակարդակով հայաստանյան ընկերությունները նույնպես զիջում են զարգացող երկրների իրենց գործընկերներին (աղյուսակներ 1 և 2): Ներկայումս բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի սուբյեկտները Հայաստանում հիմնական աշխատում են արտապատվիրման (աուքտրսինգի) սխեմայով (օրինակ, հայտնի ընկերությունների մասնաճյուղերը Հայաստանում), այսինքն վերջնական ու ամբողջական արտադրանք համաշխարհային տեխնոլոգիական շուկաներում Հայաստանը չի առաջարկում: Ինչպես արդեն նշվել է, Հայաստանում չկան տեխնոլոգիաների փոխանցման կենտրոններ, որոնք միջոց են համալսարանների և արդյունաբերության միջև կապը խթանելու, համալսարանական հետազոտողների կողմից արվող գյուտերի պաշտպանության և առևտրայնացման համար: Հայաստանում տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնները կարող են ստեղծվել որպես առանձին կառույցներ, իսկ դրանց գործունեությունը հնարավոր է Գյումրու տեխնոպարկի կամ Ջեռնարկությունների ինկուբատորի հիման վրա: Տեխնոլոգիաների փոխանցումը խթանող կանոնակարգող դաշտը և համապատասխան մեխանիզմները Հայաստանում բացակայում են:

Հայաստանում հետազոտությունների և մշակումների ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է պետական միջոցների հաշվին, որոնք թեև տարեց տարի աճում են, սակայն ՀՆԱ-ի մեջ հետազոտությունների և մշակումների ծախսերի տեսակարար կշիռը մնում է ցածր՝ այլ զարգացող երկրների հետ համեմատած (աղյուսակներ 1 և 3): Վենչուրային հիմնադրամների կամ մասնավոր հատվածի միջոցները գրեթե չեն ուղղվում հետազոտությունների և մշակումների ոլորտ՝ վենչուրային կապիտալը Հայաստանում գրեթե մատչելի չէ (կամ դեռևս գոյություն չունի) (աղյուսակ 2): Որպես արդյունք, զգալի խզում կա իրականացվող հետազոտությունների և շուկայի կարիքների միջև, ինչն էլ արտահայտվում է համալսարանների, հետազոտություններ և մշակումներ իրականացնող հաստատությունների և ընկերությունների միջև համագործակցության չափազանց անբավարար մակարդակով:

Աղյուսակ 3

Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 1994-2009թթ. (մլն դրամ)*

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Հետազոտությունների վրա կատարված ներքին ծախսեր, ընդամենը	1904,2	3290,9	3440,9	3894,5	4045,1	4814,4	5691,5	6013,1	7425.1	8473.4	7987.9
այդ թվում պետ. բյուջեից	1519,1	1797,0	1900,3	1896,3	2096,6	2593.2	3062.2	3341.2	4473.8	5079.1	5298.0

*Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, www.armstat.am

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Հայաստանում ինովացիոն համակարգի՝ տեխնոլոգիաների ստեղծման և փոխանցման գոյություն ունեցող հիմնական սուբյեկտները գործում են միմյանցից մեկուսացված (կրթություն, հետազոտություններ և մշակումներ իրականացնող հաստատություններ, մասնավոր հատված), իսկ մի շարք առանցքային ինստիտուտներ կամ չկան (տեխնոլոգիաների փոխանցման կենտրոններ), կամ սաղմնային վիճակում են (վենչուրային հիմնադրամներ), կամ էլ կան, սակայն դրանց տնօրինած ֆինանսական ռեսուրսները և, համապատասխանաբար, գործունեության մասշտաբն ու ապահոված արդյունքն առայժմ էական տեղաշարժ չի առաջացնում ոլորտում: Պետական քաղաքականությունն, այսպիսով, պետք է ուղղված լինի նրան, որպեսզի ինովացիոն/տեխնոլոգիական համակարգի տարրերը միասնական ինովացիոն համակարգ կազմեն (ինստիտուցիոնալ, օրենսդրական, տեխնի-

կական և կազմակերպական մակարդակներով անհրաժեշտ փոփոխությունների և վերակառուցումների միջոցով, տրամաբանական և սուբյեկտների իրական շարժառիթները հաշվի առնող, փոխկապված և ներդաշնակ գործող համակարգ): Այդ դեպքում միայն ինովացիոն համակարգը կաշխատի, տեխնոլոգիական զարգացումը տեղի կունենա, իսկ պետական քաղաքականությունը կլինի առավել արդյունավետ (ինչպես նաև ոլորտի վրա կատարվող պետական ծախսերը): Միևնույն ժամանակ, արդի հետազոտությունները փաստում են, որ ներկայումս գիտության և տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանի մարդկային ռեսուրսները գնահատվում են որպես ծերացող ու սահմանափակ, և հիմնախնդիրն ավելի լուրջ է դառնում, քանզի չի ապահովվում գիտական ոլորտի պատշաճ սերնդափոխությունը, հետազոտողների թիվը բավարար չափով չի համարվում, շարունակվում է առավել մեծ արդյունք ապահովող գիտնականների արտահոսքը (արտասահման և այլ ոլորտներ), այն պարագայում, երբ չնչին են մեկ հետազոտողի հաշվով կատարվող գիտահետազոտական ծախսերը¹:

Գիտելիքահենք տնտեսության տեսլականը Հայաստանի համար կներառի կրթության, գիտության և տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսություն, որտեղ մեծ է ծառայությունների և էլեկտրոնային ծառայությունների հատվածը, մատուցվում են համալիր ճարտարագիտական ծառայություններ, գործում են տեխնոպարկերը և էլեկտրոնային կառավարումը (E-Government): Նշված իրավիճակին նաև ավելանում է այն, որ բնական գիտությունների և ճարտարագիտական մասնագիտություններով ուսանողների տեսակարար կշռով ներկայումս Հայաստանը զիջում է զարգացող երկրների համանման ցուցանիշներին, ինչը բացասական միտում է (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Գիտությունը, կրթությունը և տեխնոլոգիական զարգացման միջավայրը Հայաստանում և այլ երկրներում՝ ըստ եկամուտների մակարդակի խմբերի, 2009թ.*

Ցուցանիշներ *	Հայաստան	Միջին եկամուտներով երկրներ, ցածր ենթախումբ	Միջին եկամուտներով երկրներ, բարձր ենթախումբ	Բարձր եկամուտներով երկրներ
Բնական գիտությունների և ճարտարագիտական մասնագիտություններով ուսանողների տեսակարար կշիռը (%), 2007	0.4	3.95	4.37	6.05
Հետազոտությունների և մշակումների մեջ ներգրավված հետազոտողներ / 1 մլն. բնակչության հաշվով, 2006	6.26	4.39	4.9	8.03
Գիտական հոդվածներ (բնական գիտություններ և ճարտարագիտական մասնագիտություններ) / 1 մլն. բնակչության հաշվով	6.81	4.41	6.15	8.58
USPTO-ի կողմից շնորհված արտոնագրեր / 1 մլն. բնակչության հաշվով, միջինը 2003-2007թթ.	5.68	4.62	6.27	8.94
Բնական գիտությունների և ճարտարագիտական մասնագիտություններով հոդվածներ՝ օտարերկրյա համահեղինակներով (%), 2005	4.76	6.05	4.99	2.55
Բնական գիտությունների և ճարտարագիտական մասնագիտություններով հոդվածների արված հղումներ, միջին թիվ, 2005	1.19	3.39	5.42	7.73
Պետական ծախսերը կրթության վրա, % ՀՆԱ-ից, 2007	2.64	6.71	5.75	8.1
Բնական գիտությունների և մաթեմատիկայի դասավանդման որակը (1-7), 2008	4.56	3.73	3.63	7.48

¹ Թառոյան Ա. Հ., Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման և կառավարման հիմնահարցերը ՀՀ-ում, ատենախոսության սեղմագիր, ԵՊՀ, Երևան 2011, էջ 68:

Ցուցանիշներ *	Հայաստան	Միջին եկամուտներով երկրներ, ցածր ենթախումբ	Միջին եկամուտներով երկրներ, բարձր ենթախումբ	Բարձր եկամուտներով երկրներ
Կառավարման դպրոցների որակը (1-7), 2008	0.72	4.36	4.91	7.72
Էլեկտրոնային կառավարման (E-Government) առկայությունը (1-7), 2008	0.4	3.88	4.84	7.79
Տեղական մրցակցության ինտենսիվություն (1-7), 2008	0.08	3.49	3.87	8.12
Կոռուպցիայի վերահսկողություն, 2007	2.6	3.32	5.86	8.53

* Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, World Bank Knowledge for Development (K4D) interactive benchmarking tool, http://info.worldbank.org/ctools/kam2/KAM_page1.asp

* Բոլոր ցուցանիշները կշռված են (նորմալացված): Գնահատման սանդղակը՝ 0-ից (նվազագույնը) մինչև 7-ը (առավելագույնը): Որոշ ցուցանիշներ գնահատվում են 1-7 սանդղակով:

1 մլն բնակչության հաշվով հետազոտությունների և մշակումների մեջ ներգրավված հետազոտողների թվով Հայաստանի ցուցանիշը բարձր է զարգացող երկրների միջին ցուցանիշից, սակայն եթե նկատի ունենանք, որ բարձր տեխնոլոգիական արտահանման ցուցանիշով այն զիջում է միջին եկամուտներով երկրների թե բարձր, թե ցածր ենթախմբերին, ապա միանգամայն հիմնավորված է համալսարանների, հետազոտություններ և մշակումներ իրականացնող հաստատությունների և տնտեսության/ընկերությունների միջև թույլ կապը: Ամեն դեպքում, դատելով Աղյուսակ 4-ում բերված համադրելի ցուցանիշներից, մեր տեխնոլոգիական ոլորտի գիտնական-հետազոտողները գրում են հոդվածներ (1 մլն բնակչության հաշվով հոդվածների ցուցանիշով Հայաստանն առաջ է զարգացող երկրների միջին ցուցանիշից), սակայն դրանց քիչ են հղում անում (նաև արտասահմանում): Նույնիսկ արտոնագրման համապատասխան ցուցանիշով Հայաստանը ֆորմալ առումով լավ դիրքերում է, սակայն թե տեղական, թե միջազգային բիզնես շրջանակների կողմից այդ արդյունքի օգտագործման նկատմամբ հետաքրքրությունը թույլ է (այլ կերպ ասած՝ այդ արդյունքը պահանջված չէ կամ ոչ բավարար չափով մրցունակ): Այս պարագայում կարևորագույն հարցն այն է, թե ինչպես և ինչի վրա են ծախսվում հսկայական պետական միջոցները, որոնք ուղղվում են հետազոտությունների և մշակումների վրա: Մյուս կողմից, անշուշտ, պետությունը պետք է խրախուսի և խթանի գիտության և մասնավոր հատվածի կապը, իսկ առավելապես աջակցի նոր տեխնոլոգիական ընկերությունների ստեղծմանը՝ ինստիտուցիոնալ, տեխնիկական և ռեսուրսների ներգրավման մակարդակներով, հանրային և մասնավոր հատվածների համագործակցությամբ: Պետության կողմից հայրենական ռազմաարդյունաբերական համալիրի վերականգնման և պետության կողմից տեխնոլոգիական արտադրանքների տեղական գնումները Հայաստանում նույնպես կարող են համարվել տեխնոլոգիական զարգացումն առաջ մղող կարևոր միջոց:

Այսպիսով, տեխնոլոգիական զարգացման տեսանկյունից, Հայաստանի առաջ ծառայած լրջագույն խնդիրներից է գիտակրթական համակարգի և դրա ֆինանսավորման չափանիշների ու մեխանիզմների բարեփոխումը, այն մրցունակ դարձնելը, երիտասարդ կադրերի ներգրավումը և սերնդափոխության ապահովումը: Ամեն դեպքում, Հայաստանի ներուժը տեխնոլոգիական ոլորտում, բացի նախկին հզոր բազայից և SS հատվածի աճի կայուն դինամիկայից, անուղղակիորեն արտահայտվում է նաև նրանում, որ զարգացող այլ երկրների համեմատ Հայաստանում կրթության ոլորտի վրա ավելի քիչ է ծախսվում, սակայն մաթեմատիկայի և բնական գիտությունների դասավանդման որակն ավելի բարձր է (աղյուսակ 4):

Տեխնոլոգիաների ստեղծումը, փոխանցումը և օգտագործումն իրականացնող գիտության, կրթության և մասնավոր հատվածի սուբյեկտների համագործակցության առկա վիճակը Հայաստանում չէր էլ կարող այլ լինել, եթե նկատի ունենանք երկրի ընդհանուր ոչ մրցակցային միջավայրը՝ սոցիալ-տնտեսական հարաբերությունների բոլոր ոլորտներում: Տեղական մրցակցության ինտենսիվության ցուցանիշը Հայաստանի համար 0-7 գնահատման սանդղակով կազմում է 0,08, այնինչ միայն միջին եկամուտներով ցածր ենթախմբի երկրների համար

այն 3.49 է (առանց եկամուտների ավելի բարձր մակարդակ ունեցող երկրները դիտարկելու): Արդյունքում, Հայաստանում ձևավորվել են օլիգարխիկ տնտեսական կառուցվածքը և փակ սոցիալական կառույցները, և այդ միջավայրը հանգեցնում է կոռուպցիայի վերահսկելիության ցածր մակարդակի (այս ցուցանիշով Հայաստանը նույնպես զիջում է զարգացող երկրների միջին ցուցանիշներին), ինչի արդյունքում երկրի ունեցած ներուժը, այդ թվում տեխնոլոգիական զարգացման ներուժը, չի իրացվում:

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

*ՆԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

ԱՐՏԱԿԱՆՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տնտեսագիտական գրականության մեջ ամենատարբեր կերպ է բնութագրվում տնտեսական աճի գաղափարը, սակայն բոլոր տնտեսագետները միանշանակ դրական տեսանկյունից են բնութագրում այս երևույթը այն պարագայում, երբ այն ուղեկցվում է բնակչության բարեկեցության բարձրացմամբ և կենսամակարդակի աճով: Արտահանման և տնտեսական աճի փոխկապվածության հիմնահարցը հետազոտել են ամենատարբեր տնտեսագիտական դպրոցների ներկայացուցիչները: Ընդհանրացնելով մինչ օրս հայտնի տեսությունների ու վերլուծությունների արդյունքները՝ արտահանման և տնտեսական աճի միջև առկա կապը և փոխազդեցության մեխանիզմները կարելի է ներկայացնել հետևյալ դրույթներով.

- Արտահանումը, հատկապես փոքր տնտեսություն ունեցող երկրներում, ձեռնարկատերերին հնարավորություն է տալիս օգտվել մասշտաբի էֆեկտից և ապահովել արտադրության առավել մեծ ծավալ, ինչն էլ ընդհանուր տնտեսության համար նշանակում է տնտեսական աճի բարձր տեմպեր:
- Արտահանման և տնտեսական աճի միջև կապը կրելի է դիտարկել նաև այն տեսանկյունից, որ արտահանման աճի արդյունքում տնտեսություն է ներհոսում լրացուցիչ օտարերկրյա արժույթ, ինչն էլ հնարավորություն է տալիս արտերկրից միջանկյալ հումք և մեքենա-սարքավորումներ ներմուծել և արտադրության մեջ օգտագործելով նպաստել տնտեսական աճին:
- Արտահանման ուղղվածություն ունեցող տնտեսությունը տնտեսական աճ ապահովելուց բացի ունակ է նաև զբաղվածության և եկամտաբերության բարձր մակարդակ ապահովել:
- Արտահանման աճը պայմանավորում է ՀՆԱ-ի աճը՝ ռեսուրսների առավել արդյունավետ բաշխման միջոցով, ինչպես նաև արտադրությունում մասնագիտացման շնորհիվ մասշտաբի էֆեկտից օգտվելու միջոցով, մրցակցության մակարդակը բարձրացնելու շնորհիվ արտադրության արդյունավետությունը խթանելու միջոցով, նորարարության տարածմանը նպաստելու միջոցով:
- Միաժամանակ առկա է նաև հակադարձ կապը. ՀՆԱ-ի աճը մասշտաբի էֆեկտի և ծախսերի կրճատման միջոցով խթանում է արտահանման աճը, նաև՝ արտադրությունում օգտագործվող մեքենա-սարքավորումների և միջանկյալ հումքի ներմուծումը: Բնականաբար, վերոնշյալ դրույթները տարբեր համամասնություններով են կիրառվում առանձին երկրների տնտեսություններում, ուստի տալիս են տարբեր արդյունքներ:

Փորձենք պարզել, թե կոնկրետ Հայաստանում որքանով են փոխկապակցված արտահանումն ու տնտեսական աճը: Դրա համար կառուցել ենք 2 մոդել: Առաջին մոդելով պարզել ենք ՀՆԱ-ի կախվածությունը արտահանումից և օտարերկրյա ուղղակի ներդրումներից (ՕՈՒՆ), իսկ երկրորդ մոդելով՝ արտահանման կախվածությունը ՀՆԱ-ից, նախորդ եռամսյակի ներմուծումից և դուրս-դրամ արժույթային փոխարժեքից:

Մոդելների կառուցման նպատակով օգտագործել ենք 1998-2010թթ. ՀՀ եռամսյակային տվյալները. ՀՆԱ՝ շուկայական գներով, արտահայտված ԱՄՆ դոլարով, արտահանում՝ շուկայական գներով, արտահայտված ԱՄՆ դոլարով, ներմուծում՝ շուկայական գներով, արտահայտված ԱՄՆ դոլարով, ՕՈՒՆ՝ արտահայտված ԱՄՆ դոլարով, Դոլար/դրամ եռամսյակային միջին արժույթային փոխարժեք: Տվյալների աղբյուրը ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներն են: Բոլոր փոփոխականները արտահայտված են բնական լոգարիթմերով՝ ժամանակային շարքերի ստացիոնարությունը ապահովելու համար: Դիտարկումների թիվը կազմել է 52¹: Մոդելների գնահատումը կատարվել է փոքրագույն քառակուսիների մեթոդով՝ օգտագործելով Eviews 4 ծրագրային փաթեթը:

Մոդել N1

Նախ՝ փորձենք պարզել ՀՆԱ-ի կախվածությունը արտահանումից և ՕՈՒՆ-ից:

Աղյուսակ 1

Մոդել N1-ի վերլուծության արդյունքները

Փոփոխականներ	գործակից (ստանդարտ սխալ)
Արտահանում	0.92 (0.09)*** ²
ՕՈՒՆ	0.18 (0.05)***
Հաստատուն	1.14
Adj R-squared = 0.85	

Ռեգրեսիոն հավասարումը ստանում է հետևյալ տեսքը.

$$GDP = 1.14 + 0.92 * Export + 0.18 * FDI$$

Ստացված գործակիցները վկայում են այն մասին, որ արտահանման 1% փոփոխությունը հանգեցնում է ՀՆԱ-ի 0.92% փոփոխության, իսկ ՕՈՒՆ-ի 1% փոփոխությունը բերում է ՀՆԱ-ի 0.18% փոփոխության, ընդ որում՝ ստացված արդյունքները վկայում են, որ բոլոր փոփոխականները վիճակագրորեն նշանակալի են ($|t| > 2$): Նշանները ունեն տեսականորեն ակնկալելի արժեքներ: Այսպիսով, տվյալ մոդելի արդյունքում պարզ է դառնում, որ Հայաստանում արտահանումը շատ կարևոր գործոն է հանդիսացել տնտեսական աճի ապահովման տեսանկյունից 1998-2010թթ.-ին: Հետևապես՝ ստորև կփորձենք բացահայտել արտահանման հնարավոր աճի տարբերակները՝ ըստ ՀՀ տնտեսության առանձին ոլորտների:

Մոդել N3

Այժմ փորձենք պարզել, թե որքանով է տնտեսական աճը նպաստում արտահանման աճին:

Աղյուսակ 2

Մոդել N2-ի վերլուծության արդյունքները

Փոփոխականներ	գործակից (ստանդարտ սխալ)
ՀՆԱ	0.62 (0.09)***
Ներմուծում(-1) ³	0.66 (0.13)***
Փոխարժեք	1.46 (0.38)***
Հաստատուն	-11.78
Adj R-squared = 0.87	

¹ Երկրորդ մոդելում դիտարկումների թիվը 51 է, քանի որ կախվածությունը դիտարկվել է ներմուծման նախորդ եռամսյակի տվյալներից:

² *, **, ***- նշանակում է, որ գործակիցները նշանակալի են համապատասխանաբար 90%, 95%, 99% վստահելիության մակարդակում:

³ Ներմուծում (-1)-ը նշանակում է նախորդ եռամսյակի ներմուծումը:

Ռեգրեսիոն հավասարումը ստանում է հետևյալ տեսքը.

$$\text{Export} = -11.78 + 0.62 * \text{GDP} + 0.66 * \text{Import}(-1) + 1.46 * \text{Ex_rate}$$

Ստացված գործակիցները վկայում են այն մասին, որ ՀՆԱ-ի 1% փոփոխությունը հանգեցնում է արտահանման 0.62% փոփոխության (նշենք, որ եթե արտահանումից բացառեինք հումքի արտահանումը, ապա նման մեծ ցուցանիշ չէինք ստանա, քանի որ հայկական արտադրանքը արտասահմանյան շուկաներում ունի լուրջ մրցունակության խնդիր), Ներմուծման 1% փոփոխությունը հանգեցնում է Արտահանման 0.66% փոփոխության (սա կարող է պայմանավորված լինել ինչպես մեքենա-սարքավորումների ու հումքի ներմուծմամբ, որը ամբողջ ներմուծման մոտ 50%-ն է կազմում, այնպես էլ կոնկրետ ադամանդի ներմուծմամբ, որը մշակվում և արտահանվում է), իսկ Դոլար/դրամ փոխարժեքի 1% փոփոխությունը բերում է Արտահանման 1.46% փոփոխության¹, ընդ որում՝ ստացված արդյունքները վկայում են, որ բոլոր փոփոխականները վիճակագրորեն նշանակալի են ($|t| > 2$):

Միջազգայնորեն ընդունված է արտահանման ազդեցությունը տնտեսական աճի վրա առավել ճիշտ պատկերացնելու համար արտահանման կառուցվածքը դիտարկել ըստ ապրանքների տեխնոլոգիատարության: Ընդ որում, միջազգային փորձը վկայում է, որ ներկայումս տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովում են այն երկրները, որոնց արտահանման կառուցվածքը փոփոխվել է ցածր տեխնոլոգիատարության ապրանքներից դեպի բարձր տեխնոլոգիատարության ապրանքներ: Իսկ բնական ռեսուրսների վրա հիմնված ապրանքների արտահանման ուղղությամբ մասնագիտացումը ամենևին էլ բարձր տնտեսական աճի գրավական չէ: ՀՀ արտահանման վերլուծությունը ցույց է տալիս, որ, չնայած 2001-2010թթ. ՀՀ արտահանման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ցածր տեխնոլոգիատարության ապրանքները (նշված ժամանակահատվածում՝ ավելի քան 60%), այնուամենայնիվ դիտարկվող ժամանակահատվածում ցածր, միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքների տեսակարար կշիռը նվազել է, իսկ փոխարենը աճել է ռեսուրսատար ապրանքների տեսակարար կշիռը: Ընդ որում, ռեսուրսատար ապրանքներ ենթախմբում նշված ժամանակահատվածում արտահանման աճ գրանցվել է բոլոր ապրանքախմբերում, սակայն այս ենթախմբի հիմնական մասը բաժին է ընկնում հանրահումքային մթերքներին (2010թ.՝ 27.3%): Փաստորեն, ՀՀ արտահանումը նշված ժամանակահատվածում տնտեսական աճին նպաստելու տեսանկյունից զարգացել է բավականին վատ սցենարով: Ուստի, հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ տնտեսական աճի և արտաքին առևտրի առավել կայուն կապ ապահովելու համար առաջարկում ենք ՀՀ արտահանման կառուցվածքում ռեսուրսատար և ցածր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումից անցում կատարել դեպի միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքների արտադրություն և արտահանում: Հայաստանը չունի մեծաքանակ ռեսուրսներ, ուստի հետագա կայուն տնտեսական աճի համար անհրաժեշտ է տնտեսության զարգացումն ապահովել ռեսուրսների ոչ թե քանակական, այլ որակական ընդլայնման միջոցով, ինչն էլ հնարավոր է իրականացնել միայն առավել բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտադրությամբ:

Անդրադառնալով առանձին ոլորտների աճի ու արտահանման հնարավորություններին՝ նշենք, որ կարելի է գնահատել յուրաքանչյուր ոլորտի արտահանման նպաստման չափը ՀՀ տնտեսական աճին՝ օգտագործելով յուրաքանչյուր ոլորտի արտահանման կշիռը ընդհանուր արտահանման մեջ և համադրելով այն Մոդել N1-ի տվյալների հետ:

Այսպիսով՝ անդրադառնալով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին՝ կարելի է փաստել, որ այստեղ մասնագիտացումն ընթանում է հիմնականում վեր-դիզայնի և ծրագրային ապահովման ուղղությամբ (27%), մինչդեռ այսօր համաշխարհային և տեղական շուկայում մեծ պահանջարկ կա միկրոսխեմաների նախագծման, բանկային և ֆինանսական ծրագրերի, ինչպես նաև՝ կառավարման տեղեկատվական համակարգերի նկատմամբ: Ուստի, առաջարկում ենք շեշտադրում կատարելով մասնագիտացման այս ուղղությունների վրա՝ զգալիորեն ավելացնել SS ոլորտի արտահանումը և բավարարել SS բարձրորակ արտադրանքի

¹ Այստեղ, փոխարժեքի 1% աճը նշանակում է դրամի 1% արժեզրկումը:

նկատմամբ զգալի տեղական պահանջարկը: Տնտեսական աճին նպաստման տեսանկյունից նշենք, որ ոլորտի արտահանման 10 % աճը բերել է 0.5 % տնտեսական աճ:

Մեքենաշինության ոլորտում կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ Հայաստանում այս ոլորտում համեմատական առավելություններ ունեն նվազ նյութատար և առավել գիտատար ենթաճյուղերը, որոնց վրա էլ պիտի կենտրոնացվի հիմնական ուշադրությունը: Ընդ որում, մյուս ենթաճյուղերի մեքենաշինական արտադրանքի ներմուծումը, կարծում են, չի կարելի դիտարկել որպես բացասական երևույթ, սա վերաբերում է հիմնականում արդյունաբերական նպատակներով ներմուծվող մեքենա-սարքավորումներին, օրինակ՝ վերամշակող մեքենա-սարքավորումներին:

Մանածագործական իրերի և տեքստիլ արդյունաբերության ոլորտում համեմատական առավելություն ունեն գրեթե բոլոր ապրանքատեսակները: Որպես այդպիսին, առաջնային ուշադրության է արժանի գորգագործության ոլորտը, որտեղ հնարավոր է ապահովել արտահանման ծավալների բազմակի աճ, քանի որ առկա են բավական մեծ արտաքին պահանջարկ, ազատ աշխատանքային ռեսուրսներ (կանացի աշխատուժ), հումքի ներքին աղբյուր և այլ բարենպաստ պայմաններ: Հեռանկարային է համարվում նաև արտաքին շուկայում մեծ պահանջարկ ունեցող մետաքսե արտադրանքի արտահանումը, որը, ճիշտ է, միջնաժամկետ, եթե չասենք երկարաժամկետ զարգացում է պահանջում, սակայն, կարծում են, որ զարգացման սկիզբը պիտի դրվի հենց այսօր, քանի որ տասը տարի անց մնան քաղաքականությունը պարզապես ժամանակավրեպ կլինի, քանզի նախկին մասնագետները, որոնք կարող են իրենց փորձը փոխանցել սերունդներին այսօր արդեն բավականին մեծահասակ են, իսկ երիտասարդ մասնագետներ այս ոլորտում չունենք: Բացի այդ, խնդիրը առավել մակրո հարթությունում դիտարկելու պարագայում կարող ենք ասել, որ ներկայումս պետական ռազմավարության տեսանկյունից հրատապ է դառնում սահմանամերձ գյուղերի բնակեցումը: Հատկապես անդրադառնալով Մեղրու շրջանի և ԼՂՀ սահմանամերձ գյուղերին՝ կարող ենք պնդել, որ սրանք ունեն թթի աճեցման համար Հայաստանում ամենանպաստավոր կլիման, սակայն գրեթե չունեն բնակչություն: Ուստի մետաքսի արտադրությունը միջնաժամկետ զարգացման ծրագրի մեջ ներառելով՝ նախ և առաջ անհրաժեշտ կլինի լուծել Մեղրու շրջանի և ԼՂՀ սահմանամերձ գյուղերի բնակեցման հարցը, որոնց էլ կարելի է տրամադրել աջակցություն շերամապահության զարգացման համար: Բացի այդ, տեքստիլ արդյունաբերությունը քիմիական արդյունաբերության հետ փոխկապակցված զարգացնելու պարագայում լայն հնարավորություն է բացվում նաև քիմիական արհեստական մանրաթելերի և դրանցից արտադրանքի արտահանման ծավալների մեծացման համար:

Բացի այդ, կարելի է զուգահեռաբար սկսել համաշխարհային շուկայում այս ոլորտի համեմատաբար նոր ճյուղի զարգացումը՝ չիրկիզվող պոլիմերային նյութերի և կտորների արտադրություն (իհարկե նախապես հաշվարկելով դրա երկարաժամկետ հատվածի համար դրա արտադրության արդյունավետությունը ՀՀ տնտեսության համար), որոնք օգտագործվում են մեքենաների, ինքնաթիռների, նավերի ներքին սրահների երեսպատման, հյուրանոցների, դպրոցների և այլ կառույցների շինարարության մեջ, ինչպես նաև վարագույրների, գորգերի արտադրության մեջ: Հարկ է նշել, որ այս նյութերը ներկայումս չունեն այլ փոխարինիչներ: Իհարկե, ասվածը ենթադրում է միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացում, քանզի անհրաժեշտ է նորարարական մոտեցում ցուցաբերել և նախ և առաջ մշակել մնան նյութերի արտադրության արդյունավետ տեխնոլոգիա: Տեքստիլ արդյունաբերության մեջ նորարարության ներդրման պարագայում կարելի է մտածել նաև Հայաստանում տեխնիկական տեքստիլի արտադրություն սկսելու մասին, որը, ի դեպ, կնպաստի ոչ միայն ՀՀ արտահանման աճի հնարավորությանը, այլ նաև տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը (տեխնիկական տեքստիլն օգտագործվում է բժշկության, շինարարության, գյուղատնտեսության և այլ ոլորտներում): Վերոնշյալ 2 նոր ճյուղերը կարող են դառնալ ՀՀ տնտեսության առանցքային ոլորտներից, քանի որ ՀՀ-ն ունի դրանց զարգացման համար անհրաժեշտ թե՛ հումքային և թե՛ մտավոր ներուժ: Դրա համար անհրաժեշտ է հնարավորինս արագ հանրապետությունում նաև նոտեխնոլոգիաների ներդրումը, որն էլ կօգնի Հայաստանի տնտեսությանը զարգանալ ժամանակին համընթաց: Այդ նպատակով կրելի է ստեղծել նաև նոտեխնոլոգիաների մշակման գիտաարտադրական համալիր՝ համաշխարհային փորձի հետևողական դիտարկման արդյունքում:

Անդրադառնալով տնտեսական աճին՝ կարող ենք փաստել, որ ոլորտի արտահանման 10% աճը նպաստել է 0.4 % տնտեսական աճի: Սակայն, հաշվի առնելով, որ այս ցուցանիշը ստացվել է առանց մեր նշած փոփոխությունների իրականացման, կարող ենք պնդել, որ այն զգալիորեն կաճի առաջարկված փոփոխությունների արդյունքում:

Վերլուծելով գյուղատնտեսության և սննդարդյունաբերության ոլորտը, կարող ենք պնդել, որ այս ոլորտում առկա են համեմատական առավելություններ՝ պայմանավորված լինելով համաշխարհային շուկայում էկոլոգիապես մաքուր արտադրանքի նկատմամբ մեծ պահանջարկով և այլընտրանքային ցածր ծախսերով: Վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության և սննդարդյունաբերության ոլորտում արտադրության և արտահանման ցուցանիշների աճ կարող են գրանցել ոլորտի գրեթե բոլոր արտադրատեսակները (հատկապես՝ մեղրը, կաթնամթերքը, դեղաբույսերը, համեմունքները, թարմ և չորացրած մրգերն ու բանջարեղենը և դրանց բոլոր վերամշակված տարբերակները՝ պահածոներ, հյութեր, սառեցված մրգեր, հանքային ջրերը, երշիկեղենը և պահածոյացված մսամթերքը, ոգելից խմիչքները): Ընդ որում, արդեն իսկ ավանդական ճյուղերին զուգահեռ անհրաժեշտ է խթանել հայկական գյուղատնտեսությունում շատ քիչ մշակվող այնպիսի մշակաբույսերի արտադրությունը, ինչպիսիք են գետնախնձորը, մասուրն ու թեյի վարդը: Ինչպես գիտենք, Հայաստանում առկա է գյուղատնտեսական հողերի թերզբաղվածություն, հետևաբար լրիվ իրատեսական է գետնախնձորի և մասուրի ու թեյի վարդի պլանտացիաներ ստեղծելու գաղափարը, առավել ևս, որ նշված մշակաբույսերի աճեցումը հնարավորություն կտա զարգացնելու նաև դրանց հետ առնչվող շատ հարակից ճյուղեր: Մասուրի և վարդի հասունացումը Հայաստանում համընկնում է իսլամական երկրներում ռամադանի շրջանի հետ (մասուրի և վարդի թերթիկների հյութերը, հատկապես Ռամադանի ժամանակ, որպես ըմպելիք լայնորեն օգտագործվում են Պարսից ծոցի երկրներում), ուստի առկա է բավականին մեծ ծավալով դրանց արտահանման ռեալ հնարավորություն: Գետնախնձորը շատ երկրներում անփոխարինելի միջոց է, ինչպես սննդում կիրառության, այնպես էլ բժշկության մեջ, քիմիական արտադրությունում՝ հատկապես կոսմետիկայի բնագավառում, ավելին՝ գետնախնձորի աճեցումը օգտակար է նաև գյուղատնտեսական հողերի որակի բարելավման տեսանկյունից, հետևաբար դրա արտադրությունը կարևորում ենք ոչ միայն արտահանման, այլ ավելի շուտ բազմաթիվ հարակից ճյուղերի զարգացման նկատառումներով: Փաստենք, որ ԱՎԾ տվյալների և Մոդել N1-ի համադրմամբ ստացվում է, որ ոլորտի արտահանման 10% աճը նպաստել է 1.8% տնտեսական աճի, որը ևս հետագայում զգալիորեն կաճի առաջարկված փոփոխությունների արդյունքում:

Անդրադառնալով հանքահումքային արդյունաբերության և մետալուրգիայի ոլորտներին՝ նկատենք, որ նշված ոլորտների արտահանումը նշանակում է հումքի արտահանում, ինչը ամենևին էլ ուրախալի հանգամանք չէ: Նույնիսկ չափազանց մեծ ռեսուրսային հնարավորություններ ունեցող երկրներն իրենց թույլ չեն տալիս հումքի ուղղակի արտահանում այն պարագայում, երբ երկրում առկա է դրանց նկատմամբ պահանջարկ և իրացման լայն հնարավորություններ: Առավել ևս Հայաստանի պարագայում, հումքային ապրանքների արտահանումը չի կարող նպաստել Հայաստանի տնտեսության զարգացմանը: Այդ իսկ պատճառով էլ առաջարկում ենք հանքահումքային արդյունաբերության արտադրանքի արտահանումը պետական մակարդակով սահմանափակել՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով բավականին բարձր մաքսադրույքներ հումքի այն տեսակների արտահանման նկատմամբ, որոնք երկրի ներսում վերամշակելու իրատեսական հնարավորություններ ունեն: Դա նշանակում է, որ պետք է հրաժարվել արտահանման մոտ 52%-ն ապահովող մասնագիտացման ներկա ուղղությունից, սակայն պետք է հաշվի առնել, որ չարտահանված հումքային ռեսուրսներով կարելի է տեղում պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն նախաձեռնել, որն էլ որոշակի ժամանակային ինտերվալով կհանգեցնի առավել բարձր արժեք ունեցող (քան հումքի արժեքն է) արտադրանքի արտահանման աճին: Այդ նպատակով առաջարկում ենք արտահանող ձեռնարկություններին տրամադրել նպատակային արտոնյալ վարկային ռեսուրսներ՝ հանքաքարի վերամշակման հզորությունների ստեղծման ու արդիականացման նպատակով, ինչպես նաև աստիճանաբար անցում կատարել հանքաքարի արտահանումը կանխող ոչ արտոնյալ հարկային դաշտի ձևավորմանը:

Ոսկերչության և ադամանդագործության ոլորտների մասին խոսելիս հարկ է նշել, որ ադամանդի վերամշակումը կարող է առավել նպատակահարմար համարվել հատկապես այն դեպքում, երբ հիմնական արտադրանքը ծառայի ոսկերչության և հարակից այլ արտադրությունների զարգացմանը, թեպետ այսօր կնքվող պայմանագրերը հիմնականում ենթադրում են վերամշակված ադամանդի՝ որպես հումքի վերադարձ մատակարարներին: Իհարկե, եթե հաշվի առնենք, որ ադամանդի հումքը մատակարարվում է պատվիրատուի կողմից, ուստի վերոնշյալ սխեման կարող է հանգեցնել անմշակ ադամանդի մատակարարման որոշ աղբյուրների կորստի: Այդ պատճառով էլ կարելի է պահպանել ներկա իրավիճակը՝ զուգահեռաբար կնքելով հումքի մատակարարման նոր պայմանագրեր, որոնք չեն ենթադրի վերամշակված ադամանդի հետ վերադարձ, այլ հիմք կծառայեն ադամանդե զարդերի տեղական արտադրության զարգացման համար:

Ոսկերչության և ադամանդագործության ոլորտում արտահանման 10% աճը նպաստել է 3% տնտեսական աճի: Սակայն, այս ցուցանիշը ևս բարելավման միտում ունի ոլորտում կառուցվածքային փոփոխությունների արդյունքում:

Ոսկերչության ոլորտի արտահանման և արտադրության միջև ամուր կապ ստեղծելու նպատակով կիրառել համաշխարհային պրակտիկայում բազմիցս օգտագործվող մոդել՝ ոսկերչական կլաստերի հիմնում: Շատ երկրներում ոսկերչական կլաստերները հիմնվում են ոսկու հանքերի հարևանությամբ գտնվող տարածքներում, որտեղ և տեղփոխվում են բնակվելու ոսկերիչները: Ինչպես նաև կարելի է ստեղծել պարզապես արտահանման արդյունաբերական գոտիներ այս ոլորտի համար, որոնք կհամապատասխանեն համաշխարհային արտահանման արտադրական գոտիների սահմանմանը, այսինքն՝ տվյալ տարածքում կգործի հատուկ մաքսային ռեժիմ արտահանման ուղղվածության արտադրանք թողարկող արդյունաբերական ձեռնարկությունների համար, ինչպես նաև կգործեն գիտահետազոտական և գիտաարտադրական ձեռնարկություններ, որոնք անհրաժեշտ ծառայություններ կմատուցեն ոլորտի ձեռնարկություններին: Հարկ է նշել նաև, որ վերոնշյալ մոդելները կիրառելի են վերամշակող արդյունաբերության մյուս ոլորտներում ևս, բացառությամբ սննդի արդյունաբերության՝ հաշվի առնելով հանրապետության ողջ տարածքում գյուղատնտեսական պիտանի հողերի առկայությունն ու ցրվածությունը:

Փաստորեն, վերլուծելով ՀՀ արտահանման և տնտեսական աճի տվյալները, ստացանք հետևյալ արդյունքը.

- արտահանման 10% աճը նպաստում է 9.2% տնտեսական աճի, որից 0.5%-ը բաժին է ընկնում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին, 0.46%-ը՝ մեքենաշինությանը, 0.4%-ը՝ մանածագործական արդյունաբերությանը, 1.8%-ը՝ գյուղատնտեսության և սննդարդյունաբերության ոլորտին, 3%-ը՝ ոսկերչությանն ու ադամանդագործությանը և այլն,
- ՀՆԱ-ի 10% աճը, իր հերթին, նպաստում է արտահանման 6.2% -ին:

Այսպիսով, ՀՀ տնտեսական աճի և արտաքին առևտրի զարգացումների բազմակողմանի վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ ՀՀ արտահանումը տնտեսական աճի վրա ունեցել է դրական ազդեցություն, սակայն այդ ազդեցության առավել արդյունավետ դրսևորումները սահմանափակվել են արտահանման կառուցվածքի և արտադրանքի ոչ բավարար աստիճանի մրցունակության պատճառով: Ամփոփելով վերլուծությունը՝ կարող ենք նշել, որ Հայաստանում տնտեսական աճի և արտաքին առևտրի միջև առկա է անժխտելի փոխկապվածություն, որը կարելի է օգտագործել առավել արդյունավետորեն ատենախոսությունում դիտարկված թերությունները շտկելուց և առաջարկված փոփոխություններին գործնական կիրառություն տալուց հետո:

ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Էկոլոգիական հիմնախնդիրների լուծման այլընտրանքային տարբերակների թվին պետք է դասել արտահանման քաղաքականության փոփոխությունը: Ներկայումս շրջակա միջավայրի անբարենպաստ վիճակն ավելի է սրվում բնությունատար, բնությունաավերիչ արտահանման քաղաքականության պատճառով: Դա վերաբերում է ԱՊՀ երկրների, այդ թվում՝ ՌԴ արտահանման պոտենցիալին, հավասարապես նաև Հայաստանի Հանրապետությանը:

Հայաստանի Հանրապետության արտահանման պոտենցիալի ճնշող մասը բաժին է ընկնում բնական ռեսուրսներին կամ դրանցից ստացված արտադրանքին: 2009թ. հանրապետությունից արտահանված 710.2 մլն դոլարի նյութերից և արտադրանքի 79 տոկոսից ավելին բաժին էր ընկնում բնական ռեսուրսներին և բնությունատար արտադրանքին: Արտակարգ մեծ է արտահանման ծավալներում հանքաքարի խարամի և մոխրի տեսակարար կշիռը՝ 16.3 տոկոս, սև և գունավոր մետաղների (պղինձ, ալյումին, անագ)՝ 31.1, բնական կամ արհեստական թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերին և թանկարժեք մետաղներին՝ 14.8 տոկոս: Զգալի են նաև աղի, ծծմբի, սվաղման նյութերի, քարի ու ցեմենտի, ապակու, կերամիկական և ապակե իրերի, հանքային վառելանյութերի, նավթի և նավթամթերքի, բիտումային միջոցների, մոմանյութերի, ինչպես նաև այլ ոչ թանկարժեք մետաղների, մետաղակերամիկայի, դրանցից պատրաստված իրերի արտահանման տեսակարար կշիռը՝ 6.9 տոկոս:

Ներկայումս բնական միջավայրի վրա բեռնվածությունը հնարավոր է զգալիորեն կրճատել արտահանման քաղաքականության փոփոխման հաշվին, նվազեցնելով բնությունատար արտադրանքը և վերականգնելով բարձր տեխնոլոգիատար և գիտելիքահեռք, բարձրարժեք արտադրանքների արտադրությունը, ստեղծելով նոր գիտատար ճյուղեր: Նման ճյուղերի (արտահանվող արտադրանքի) տեսակարար կշիռը ներկա պահին չի գերազանցում ընդհանուր արտահանվող արտադրանքի ծավալի 20-22 տոկոսը, մինչդեռ կան բոլոր նախադրյալները դրա տեսակարար կշիռը 45-50 տոկոսի հասցնելու համար:

Առանձնահատուկ նշանակություն է ստանում ՀՀ-ում հացահատիկի ներկրման խնդիրը: Դրա ծավալները մոտ ապագայում որոշ չափով կարելի է կրճատել դրսից բարձր բերքատու սորտերի ներկրման, չցանվող տարածքների մի մասը հացահատիկի տակ դնելու, դաշտում բերքահավաքի ժամանակ բերքի կորուստների կանխմանն ուղղված միջոցառումների իրականացման, մշակության նոր, առաջադիմական տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ: Թերևս ճիշտ կլինի նաև գյուղատնտեսության մեջ կառուցվածքային փոփոխությունների իրականացումը և այնպիսի արժեքավոր մշակաբույսերի տարածությունների ավելացումը, որոնց համար ՀՀ-ն ունի առավել նպաստավոր պայմաններ և որոնք միավոր տարածությունից առավել մեծ եկամուտ և բարձր զբաղվածություն են ապահովում:

Նման ռեսուրսախնայողական փոփոխությունները թույլ կտան հանրապետության ժողովրդական տնտեսության կառուցվածքը վերակառուցել այն հաշվով, որ կրճատվեն բնական ռեսուրսների արտահանվող ծավալները և բարելավվի երկրի էկոլոգիական իրավիճակը:

**Նվազ թափոններով և ռեսուրսախնայողական տեխնոլոգիաների
զարգացումը, տեխնոլոգիական փոփոխություններ**

Էկոնոմիկայի զարգացման էկոլոգացման հաջորդ ուղղությունը նվազ թափոնային և ռեսուրսախնայողական տեխնոլոգիաների լայն զարգացումն է: Եթե էկոլոգիական հիմնա-

խնդիրների լուծման այլընտրանքային տարբերակները հիմնականում կապված են մակրո-մակարդակի կամ ճյուղային մակարդակի հետ՝ համալիրներ, հատվածներ, ճյուղեր և այլն, ապա նվազ թափոնային և ռեսուրսախնայողական տեխնոլոգիաների զարգացումն ավելի շուտ տարածաշրջանային բնույթ է կրում և կապված է տնտեսական մակրոմակարդակի հետ՝ արտադրամասեր, ձեռնարկություններ, տարաբնույթ ձեռնարկությունների խումբ միևնույն տարածքում:

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի նյութերում և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համագործակցության գծով 1979թ. խորհրդակցությունում ընդունված «Նվազ թափոնային և անթափոն տեխնոլոգիաների մասին» հայտարարագրում նվազ թափոնային և անթափոն տեխնոլոգիան ներկայացվում է որպես գիտելիքների, մեթոդների ու միջոցների գործնական կիրառում այն հաշվով, որ մարդու պահանջումների շրջանակներում ապահովվի բնական ռեսուրսների առավել ռացիոնալ օգտագործում և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Ասածից հետևում է, որ «նվազ թափոնային տեխնոլոգիան լուծում է երկակի խնդիր. բնական հումքի և դրա վերամշակումից ստացված նյութերի առավել օգտագործում և մյուս կողմից՝ շրջակա միջավայրի պաշտպանություն տարբեր տեսակի աղտոտումներից, ինչպես նաև թափոններից:

Նվազ թափոնային և ռեսուրսախնայողական տեխնոլոգիաների զարգացման նպատակն է ստեղծել փակ տեխնոլոգիական շղթա, ամբողջությամբ օգտագործելով ստացվող հումքը և չմշակված թափոնները, որոնք դուրս են այդ շղթայի շրջանակներից: Դա մի փորձ է՝ վերարտադրելու բնական փուլերը, քանի որ կենսոլորտը փակ համակարգ է, որտեղ բոլոր տարրերը փոխկապակցված են և պայմանավորում են մեկը մյուսին: Ժամանակակից տեխնոգեն էկոնոմիկան հանդիսանում է բաց համակարգ, որտեղ ստացված համեմատաբար ոչ մեծ քանակությամբ արտադրանքը հսկայական ծախսեր է պահանջում և ուղեկցվում է մեծ թափոններով: Օտարված ամբողջ բնական ռեսուրսների հաշվով ներկայումս վերջնական արդյունքը (արտադրանքը) կազմում է նրա 2-4%-ը, իսկ մնացած մասը թափոններ են (խարամ, դատարկ հումք և այլն):

Մարդկությունը ճանաչում է համեմատաբար փակ էկոհամակարգեր: Դա գյուղատնտեսությունն է, ավելի ճշգրիտ՝ բնամթերային գյուղատնտեսությունը, որտեղ թափոնները նվազագույնն են: «Բուսաբուծություն-անասնաբուծություն» համակարգը այստեղ նվազագույնի է հասցնում թափոնների քանակը՝ ուտիլիզացնելով դրանք ճյուղի ներսում: Բուսաբուծությունն անասնաբուծությանն ապահովում է կերերով, ինչպես նաև վերամշակման մնացորդները (ջարդված հատիկ, ժոն և այլն), իսկ անասնաբուծությունը բուսաբուծությանն ապահովում է բերրիության և էկոլոգիական տեսակետից խիստ կարևոր օրգանական պարարտանյութերով: Արդյունքում ստացվում է նյութերի փոքրիշատե փակ շրջապտույտ գյուղատնտեսության ներսում:

Ավանդական տեխնոլոգիաների լրիվ փոխարկումը նվազ թափոնային և ռեսուրսախնայողականների թույլ կտա աստիճանաբար անցնել բաց արտադրական համակարգերից (ռեսուրսների ազատ մուտքով և թափոնների ելքով) դեպի կիսաբացը, որի դեպքում մասնակիորեն օգտագործվում են արդյունահանած նյութերը և մաքրվում թափոնները: Ապա անցում կկատարվի լրիվ վերամշակման փակ համակարգերի՝ ստացված արտադրանքի լրիվ վերամշակմամբ և թափոնների ուտիլիզացումով (օգտագործումով), որի դեպքում լիովին դադարում է շրջակա միջավայրի աղտոտումը: Նման տրանսֆորմացիան փոխում է հենց իրեն՝ տեխնոլոգիական սկզբունքը: Ներկա տեխնոլոգիաների մեծ մասում պայքարը աղտոտման և թափոնների դեմ տեղի է ունենում գործնականորեն արդեն վերջին տեխնոլոգիական փուլում՝ ֆիլտրեր, մաքրող կայանքներ և այլն (ուղղակի բնապահպանական միջոցառումներ): Անզլերենում նման տեխնոլոգիաները պատկերավոր կերպով անվանում են «Խողովակի ծայրի տեխնոլոգիաներ» (end of pipe technology): Ի տարբերություն սրանց, նվազ թափոնային տեխնոլոգիաների դեպքում ստեղծվում են նոր ցիկլեր, կապեր (հանգույցներ) բուն տեխնոլոգիական գործընթացի ներսում:

Նման տեխնոլոգիական փոխակերպումների համար վճռորոշ նշանակություն ունի գիտատեխնիկական առաջընթացը: Միայն դրա նվաճումների հիման վրա կարելի է ապա-

հովել անցումը ավանդական ռեսուրսատար տեխնոլոգիաներից դեպի նվազ թափոնային և անթափոն տեխնոլոգիաների: Նման անցումը թույլ կտա իջեցնել շրջակա միջավայրի ծանրաբեռնվածությունը, հատկապես տարածաշրջանային մակարդակով: Ժամանակակից տեխնոլոգիաները, փոխարինելով հին բնությունատարներին, հնարավորություն են տալիս պակասեցնել մշակվող հանքավայրերը, ապագայի համար պահպանելով բնական ռեսուրսների սպառվող, չվերականգնվող պաշարները:

Նվազ թափոնային տեխնոլոգիաների առավելության մասին են խոսում հետևյալ փաստերը: Ներկայումս, անկատար տեխնոլոգիաների պատճառով արդյունահանումից հետո հողում է մնում նավթի պաշարների մինչև 70, ածխի՝ 30, երկաթահանքի 20 տոկոսը և այլն:

Արտադրության նվազ թափոնային համակարգերի ձևավորման հեռանկարային մոտեցում կարող են լինել տարածքային արտադրական համալիրները, որոնք լայն հնարավորություններ ունեն առանձին փակ արտադրական ցիկլերով օգտագործելու ուղեկցող արտադրանքը և թափոնները: Այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ է գտնել միջոցներ և ուղիներ՝ վերակառուցելու գործող ձեռնարկությունները: Հնացած, ֆիզիկապես և բարոյապես մաշված սարքավորումների և տեղակայանքների փոխակերպումը նոր, ավելի կատարյալ սարքավորումներով թույլ կտա ստանալ էական տնտեսում բազմաթիվ ռեսուրսների, ներդրումների գծով, ինչպես նաև բարելավել արտադրանքի որակը և այլն:

Ուղղակի բնապահպան միջոցառումներ

Շրջակա միջավայրի պահպանության ավանդական եղանակներ են ուղղակի բնապահպան միջոցառումները: Ըստ էության դրանք հանդիսացան գործնականում առաջին պատասխանը էկոնոմիկայի տեխնոգեն զարգացման արդյունքում բնության դեգրադացմանը: Արդյունաբերության և գյուղատնտեսության կողմից բնության շահագործումը ցանկություն առաջացրեք տարբեր բնույթի մաքրող կառույցների, ֆիլտրերի միջոցով մեկուսացնել, անջրպետել էկոհամակարգերը տեխնոլոգիայից՝ ի հաշիվ պահպանվող բնական տարածքների ստեղծման, կատարելագործել թափոնների թաղման և պահեստավորման համակարգը, վերականգնել խախտված հողերը և այլն: Ներկայումս բնապահպանական տարբեր ծրագրերում և պլաններում այդ միջոցառումներին զգալի ուշադրություն է դարձվում ամբողջ աշխարհում: Սակայն այդ բոլորը միայն փորձ է պայքարելու տեխնոգեն զարգացման հետևանքների դեմ, մինչդեռ անհրաժեշտ է վերացնել պատճառները:

Այդուհանդերձ, այժմ և հետագայում ուղղակի բնապահպանական միջոցառումների դերը բավականաչափ բարձր կլինի: Խոսքը պետք է գնա բոլոր միջոցառումների խելամիտ սինթեզի մասին կայուն էկոլոգո-տնտեսական զարգացման ուղղված բոլոր միջոցառումներում՝ այդ կազմավորման երեք ուղղություններում: Դժբախտաբար այսօրվա տեխնոլոգիական մակարդակը թույլ չի տալիս միայն այլընտրանքային տարբերակների կամ նվազ թափոնային տեխնոլոգիաների միջոցով վերացնել արտադրության զարգացման արդյունքում առաջացած բացասական էկոլոգիական հետևանքները: Այս դեպքում դեռևս երկար ժամանակ հարկ կլինի շրջակա միջավայրը պահպանել ավանդական պաշտպանական բնապահպանական միջոցառումներով:

Ուղղակի բնապահպանական միջոցառումների շարքում արժե առանձնացնել նաև գործնականորեն «հավերժները»: Կենսաբազմազանության պահպանման հիմնախնդիրը պայմանավորված է շատ բուսական ու կենդանական տեսակների անհետացման հետ, էնդեմիկ տեսակների գոյատևումը (տեսակներ, որոնք գոյություն ունեն միայն որոշակի տեղանքում), անհրաժեշտ է դարձնում ընդլայնել պահպանվող տարածքները՝ արգելոցներ, ազգային պարկեր և այլն: Միայն այս ձևով կարելի է փրկել արագ անհետացող կենդանիների և բույսերի բազմաթիվ տեսակներ: Եվ Հայաստանը, որն իր շատ փոքր տարածքում աչքի է ընկնում եզակի տեսակներով, մեծ գործ ունի կատարելու: Հանրապետությունում 2009թ. հուլիսի 1-ի դրությամբ կար 229.9 հազար հեկտար հատուկ պահպանվող տարածքներ, 31.7 հազար հեկտար հատուկ նշանակության հողեր: Կան 26 պետական արգելավայրեր՝ 111.7 հազար հեկտար մակերեսով:

Հանրապետության էկոնոմիկայի աղքատիկ ռեսուրսները և ներդրումներն անհրաժեշտ են դարձնում էկոլոգատնտեսական քաղաքականության մեջ այս կամ այն ուղղությանը առաջնայնություն տալը:

Ներկայումս առավել տարածված պահանջ է բնապահպանական նպատակով կատարվող ծախսերի կտրուկ ավելացումը: Ընդ որում, հաճախ համեմատություն է կատարվում ստուգելու նաև նման ծախսերի բաժինը էկոնոմիկայում կատարված ընդհանուր ներդրումներում, համախառն ազգային արդյունքում և այլն:

Սակայն նույնիսկ այս դեպքերում բնապահպանական ծախսերի տակ հասկացվում են միայն ուղղակիորեն բնապահպանական նպատակներով կատարվող ծախսերը: Սակայն թերևս ավելի ճիշտ կլիներ առաջին հերթին այդ ծախսերի տակ հասկանալ կառուցվածքային վերակառուցմանն ուղղված կապիտալ ներդրումները, նվազ թափոնային տեխնոլոգիաների զարգացումը, և միայն դրանից հետո, երկրորդ հերթին, ուղղակի բնապահպան միջոցառումների հատկացվող ծախսերը:

Նման մոտեցման դեպքում անիմաստ է դառնում բնության պահպանությանն ուղղված պահանջվող ներդրումների մեծության մասին հարցը: Ֆինանսավորելով էկոնոմիկայի ռեսուրսախնայողական կառուցվածքի վերակառուցումը, հասնելով դրա էկոլոգացմանը, դրանով իսկ նվազագույնի է հասցվում տնտեսական տեխնոգեն զարգացման նեգատիվ հետևանքները:

АРМАН ДАНИЕЛЯН

*Соискатель Института экономики
имени М. Котаняна НАН РА*

ВЛИЯНИЕ ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКОГО КРИЗИСА НА МАЛОЕ И СРЕДНЕЕ ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВО В РА

Нынешний финансово-экономический кризис является самым жестоким за последние десятилетия. Его последствия проявляются в стремлении предпринимательского сообщества к минимизации возможных рисков в связи с пессимистическими оценками ближайших и среднесрочных перспектив экономического развития. Сужение потребительского рынка и сокращение объема продаж, наряду с уменьшением ликвидности предприятий, повлияет на малое и среднее предпринимательство. Положение МСП в достаточной степени усугубляется ухудшением условий доступа к краткосрочному и долгосрочному кредитованию.

Малое и среднее предпринимательство является одним из индикаторов надежности финансовой системы, устойчивости бизнеса, движения денежных потоков, а в ближайшей перспективе и трансграничного движения капитала. В этой связи меры, направленные на совершенствование финансового механизма развития малого и среднего предпринимательства, позволят сохранить социальную стабильность на рынке труда, создать условия и стимулы для повышения эффективности, конкурентоспособности и активации малого и среднего предпринимательства, использовать шансы на обновление и модернизацию, снизить излишнюю бюджетную нагрузку на государство, расширить стимулирование в рамках государственно-частного партнерства, внедрить новые коммерческие инициативы. Эти меры, направленные на развитие источников собственных активов малого и среднего предпринимательства, позволят увеличить финансовые инструменты, при которых повысится уровень налоговых платежей, увеличится объем финансовых ресурсов государства, произойдет вливание в науку дополнительных инвестиций, заработает потенциал малого и среднего предпринимательства для создания новых рабочих мест.

В наибольшей мере финансово-экономический кризис оказал негативное влияние на МСП, что обусловлено следующими важнейшими обстоятельствами;

1. возрастающими задержками по оплате счетов в сочетании с увеличением складских запасов /из-за сокращения объемов продаж/, обусловленные недостатком оборотных средств и сокращением ликвидности.
2. увеличением количества клиентов, отказывающихся от своих обязательств, ростом числа банкротств и объявлений о неплатежеспособности.

В настоящее время в Армении зарегистрировано 155 тыс. предприятий, из которых 86 тыс. являются субъектами микро-бизнеса и около 200 предприятий подпадают под группу крупного бизнеса. На долю малого и среднего бизнеса приходится всего лишь 6300 субъектов вместе взятых.

В Армении в большей степени развивается малый и крупный бизнес. Малочисленные крупные предприятия и многочисленные микро-предприниматели, являясь основными участниками рынка, не в состоянии обеспечить естественное развитие экономики. Малый и средний бизнес, в свою очередь, недостаточно развит в Армении, чтобы внести радикальные изменения в бизнес-среду.

Процесс расширения микро-бизнеса до крупного в Армении продвигается очень медленно. Однако в последнее время уделяется много внимания улучшению бизнес-среды и развитию малого и среднего предпринимательства. Почти два года назад власти освободили от многих инспекционных проверок предприятия, имеющие 160 тыс. долларов годового оборота (в драмовом эквиваленте 58,5 млн.), а также введены электронные системы.

Армянские производственные предприятия работают с низкой эффективностью, чтобы повысить продуктивность своего производства, предпринимателям необходимо, прежде всего, отказаться от объемных размеров своих предприятий, требующих огромных затрат, к чему собственники пока не готовы. Им следовало бы продать часть неработающих активов, или сдать в аренду, или под технопарк часть ненужной недвижимости, направив средства на модернизацию и улучшение качества менеджмента и маркетинга менее объемного, но более перспективного производства.

С ухудшением экономической ситуации и в ожидании среднесрочных негативных перспективе у выживающих малых и средних предприятий на влияние падения объема продаж и невыполнения обязательств со стороны партнеров появляются следующие типы поведения:

- стремление к снижению себестоимости производства для восстановления прибыльности предприятий и сокращение объемов производства в соответствии с уменьшением спроса, что достигается снижением уровня заработной платы сотрудников и сокращением количества работающих;
- изыскание дополнительных способов повышения собственной ликвидности;
- приостановка или перенос на более поздние сроки инвестиционных проектов или планов расширения производства, а также активизация деятельности в поиске возможностей для слияния, способствующего сокращению количества новых предприятий.

Предприятия МСП разыскивают такие альтернативные способы финансирования как мобилизация собственных резервов для самофинансирования, сокращение реализации инвестиционных и инновационных проектов и даже их прекращение. Основная часть предприятий МСП может весьма эффективно использовать финансовые ресурсы, однако доступ к ним затруднен, особенно в условиях финансово-экономического кризиса и это является основным препятствием к созданию новых МСП, к их выживанию и дальнейшему развитию.

Особую активность в изыскании дополнительных источников для всестороннего ресурсного обеспечения проявляют МСП, вовлеченные в реализацию инвестиционных и инновационных проектов. Это обусловлено тем, что после завершения кризиса результаты инвестиций в производственную модернизацию и в инновационные проекты станут важнейшим

средством достижения экономического успеха в условиях глобализации экономики, основанной на новейших знаниях и научно-технических достижениях.

В кризисных условиях, с ухудшением доступа к финансовым ресурсам, основная масса предпринимателей не стремится к увеличению балансовой задолженности, даже при сокращении объема продаж и увеличении неплатежей клиентов. Такая реакция предпринимательства с учетом неопределенности в будущем, ужесточения требований по предоставлению заемных средств со стороны кредитно-финансовых институтов, является наиболее рациональной.

Предоставление кредитов для МСП связано с необходимостью выполнения множества обязательных условий, определяемых банками и финансовыми посредниками. Важнейшими из них являются стоимость привлеченных финансовых ресурсов и уровень процентных ставок, величина комиссионных сборов, разница между величиной запрашиваемого кредита и фактически предоставляемым займом, размер необходимого залогового обеспечения, срок действия кредита, длительность процедур по оформлению кредитов и др. Во всех странах проявилось ужесточение условий кредитования в банковской сфере для всех заемщиков. Это нашло отражение в уменьшении размеров предоставляемых займов, в сокращении сроков кредитования и в увеличении гарантийных обязательств для всех категорий заемщиков. Вследствие этого произошло ухудшение условий доступа к финансовым ресурсам в МСП большинстве стран. Итак, МСП испытал двойной удар в связи со снижением деловой активности и вследствие ухудшения условий финансирования со стороны кредитно-финансовых институтов и посреднических организаций. Анализ показал, что малые и средние предприятия резко сократили свои инвестиционные программы, финансируемые за счет заемных средств. До некоторой степени уменьшилась потребность малых и средних предприятий в оборотных средствах и в краткосрочных кредитах в связи с увеличением незавершенного производства и ростом складских запасов. На основе исследований выявлено, что под влиянием мирового кризиса на МСП в разных странах произошло резкое ухудшение финансового состояния МСП, приведшее к сокращению деятельности многих предприятий. В большинстве стран МСП в значительной мере сократил свои запросы по предоставлению кредитов, при этом одновременно у них возросли трудности с оборотным капиталом из-за платежей. Все это привело к сокращению количества предприятий МСП вследствие несостоятельности или банкротства. Это особенно остро проявилось в Дании, Ирландии, Испании и Италии. Только в Венгрии, Южной Корее, Великобритании и США отмечается некоторое увеличение потребности в краткосрочных кредитах, тогда как в большинстве стран происходит сокращение запросов на предоставление долгосрочных кредитов.

Таким образом, МСП столкнулся с новыми трудностями, связанными с недостатком ликвидности. При этом, в связи с отсутствием достаточных обоснований возможных прогнозов дальнейших путей развития экономической ситуации, существует большая неопределенность в объемах кредитных потребностей МСП, приемлемых в условиях заимствования и времени их возвратности.

Существует и такая опасность, что увеличение объемов кредитования в случае продолжающегося спада спроса и потребления приведет к чрезмерной задолженности. В такой ситуации хронический дефицит текущей ликвидности в дальнейшем может привести к несостоятельности многих предприятий. В этих условиях банковское сообщество вынуждено пересмотреть стратегию поведения в связи с ограниченностью собственных капиталов и со стремлением инвесторов осуществлять свои вложения в акции тех финансовых институтов, которые обладают лучшей капитализацией. По мере ухудшения перспектив экономического развития возрастает скептицизм всех участников финансового рынка. Это приводит к пересмотру стратегии деятельности всех финансовых институтов как в сторону ужесточения кредитной политики, так и сокращению объемов предоставляемых заимствований, что отражается на ухудшении условий доступа МСП к финансовым ресурсам. В этой связи правительства многих стран предпринимают ряд мер, позволяющих облегчить доступ к финансовым ресурсам для предприятий МСП.

АЛВАРД ЗАТИКЯН

*Заместитель директора института
экономики им. М.Котаняна НАН РА, к.э.н.*

АРМАН ДАНИЕЛЯН

*Соискатель Института экономики
им М. Котаняна НАН РА*

МАЛОЕ И СРЕДНЕЕ ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВО КАК ОБЪЕКТ УПРАВЛЕНИЯ В УСЛОВИЯХ ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКОГО КРИЗИСА В РА

Финансово-экономический кризис в разных странах проявился обширным объемом негативных социально-экономических явлений. Особенно в тяжелом положении оказалось малое и среднее предпринимательство, что связано с резким и глубоким падением спроса, а также с ухудшением условий получения кредитов в банковской сфере. Однако следует отметить, что уровень снижения объема продаж в разных странах существенно отличается в зависимости от экономического развития и степени интегрированности этих стран во внешнеторговую деятельность.

Финансово-экономический кризис может привести: к краху рынков государственного долга, акций, корпоративных облигаций, финансовых инструментов; утечке капиталов и резкому снижению валютных резервов; дефолту банков и других финансовых институтов; резкому сокращению платежной системы; возникновению инфляции и соответствующему росту потребительских цен, а также существенному снижению государственных доходов.

К особенностям финансовой системы в условиях кризиса относятся: жесткая налоговая и денежная политика на стадии финансовой стабилизации, отсутствие налоговых стимулов, поддерживающих интерес к стимулированию в финансовые активы на длительное время, запаздывание с переходом к политике стимулирования экономического роста, несвоевременная либерализация счета капиталов, неправильное применение процентной политики, создающее искусственно высокий уровень процента в одних секторах финансового рынка в ущерб другим.

Прогнозировались следующие последствия финансового кризиса:

- падение реальных доходов и расходов бюджета в сравнении с их предкризисной величиной;
- неэластичность государственных расходов к отрицательной экономической динамике, их сокращение в реальном выражении в существенно меньшей степени по сравнению с уменьшением доходов бюджета;
- переход бюджета из профицитной в дефицитную зону, возникновение пиковых значений дефицита бюджета в сравнении с уровнем достигнутыми перед кризисом.

Вышеизложенное должно учитываться при прогнозировании развития малого и среднего предпринимательства. Но такого подхода к изучению данной проблемы не существует.

Неблагоприятный предпринимательский климат в Армении является корнем всех проблем в экономике. В результате проведенного исследования было выявлено, что такими проблемами являются: наличие большого неформального сектора экономики, политическая нестабильность, несовершенство налогового поля и администрирования. В целом проблемами экономики страны являются ее слабая диверсификация, высокие транспортные расходы, большая зависимость от денежных трансфертов из-за рубежа и зависимость от импорта энергоносителей. Местное производство неконкурентоспособно на внешних рынках и в основном удовлетворяет потребности внутреннего рынка. Накапливаемое в стране богатство распределяется не среди широких слоев населения, а концентрируется в руках ограниченного количества людей, создается олигопония. Армения имеет большой потенциал для

развития с точки зрения привлечения к этому процессу зарубежной армянской диаспоры, однако данный потенциал плохо используется.

Помимо этого, в имеющихся исследованиях не прослеживается борьба двух тенденций, которые характерны для развития экономики страны. С одной стороны, стремление подчеркнуть то, что предпринимательство развивается сугубо исходя из требований законов рыночной экономики и соответственно не может быть подвергнуто регламентации со стороны государства, т. е. признание того, что сам рынок будет регулировать развитие предпринимательства. С другой стороны, те условия экономического развития, которые в ходе воспроизводственного цикла обостряются, заставляют рассматривать малое и среднее предпринимательство как объект управления. Необходимо здесь, как и в области развития экономики в целом и отдельных отраслях соблюдать соотношение между рыночным фактором и государственным управлением. Кризис привел к падению производства во всех отраслях экономики и высвобождению работников. Поэтому и возникает проблема компенсации экономических и социальных потерь, что связано со значительными инвестициями.

Развитие малого и среднего предпринимательства в сельских местностях могло бы нейтрализовать угрозу продовольственной безопасности страны в условиях, когда доля отечественных производителей на рынке продовольственных товаров достигает критического уровня. Это заставляет формировать запасы продовольствия, поскольку нет уверенности в том, что поток произведенных товаров из-за рубежа останется стабильным. Ведь в этих странах также имеет место спад производства. В то же время правительство будет ограничивать импорт продовольствия, чтобы поддержать отечественных производителей. Здесь все будет зависеть от соблюдения пропорций между отечественными и зарубежными производителями. В сельских местностях значительная доля населения, занятая в малом и среднем предпринимательстве ориентирована не на производство, а на торговлю. Большие возможности открываются в развитии предприятия малого и среднего предпринимательства по переработке сельскохозяйственной продукции, которые могли бы функционировать круглогодично при условии организации парникового хозяйства, соответствующих складских помещений. Имеются немало объектов недвижимости, которые могли бы быть использованы как складские помещения при условии создания на их базе предпринимательских структур с долевым участием как самих производителей, так и соответствующих органов. Следует отметить, что усиление направленности малого и среднего предпринимательства во многом зависит от того, какие взаимоотношения у него с базовыми отраслями. Так к примеру, для многих стран Западной Европы и США характерно то, что крупные промышленные компании дают заказы небольшим предприятиям на поставку различных деталей и узлов, которые хотя имеют второстепенное (вторичное) значение для головного предприятия, но без них главный конвейер автомобильного завода работать не сможет. Отмеченные малые и средние предприятия имеют достаточно высокий уровень автоматизации производства и высококвалифицированные кадры, которые могут обслуживать (снабжать) несколько крупных предприятий. Но, к сожалению, подобная практика в нашей стране не развивается из-за кризиса.

По нашему мнению, должны быть созданы совместные предприятия на базе существующих частных, где привлекаемые предприятия малого и среднего предпринимательства выступали бы дольщиками (пайщиками).

Соответствующий орган (к примеру муниципалитет) должен стать организатором развития предпринимательских структур, поскольку они являются представителями власти на местах и ответственны за проведение этой работы, кроме того, они достаточно хорошо владеют ситуацией в этой среде, а также могут использовать имеющиеся бюджетные средства. Предприятия малого и среднего предпринимательства могут быть достаточно специализированными. Может быть использована практика заключения долгосрочных договоров на выполнение работ между муниципалитетами, управляющими компаниями, малыми и средними предприятиями. Но следует учесть, что только при условии существенного ослабления налоговой нагрузки и представления других форм материального стимули-

рования можно было бы всегда рассчитывать на полную поддержку со стороны малого и среднего предпринимательства.

Обычно приводят сравнения показателей развития малого и среднего предпринимательства страны с соответствующими европейскими странами, связанные с удельным весом МСП в экономике, количеством населения, занятого в данной сфере и т. д. Но фактически по своей сущности и структуре МСП в РА ближе к азиатским, а не европейским, которое более или менее решает вопрос преодоления бедности, и не имеет никакого отношения к экономическому развитию страны. Армянский малый и средний предприниматель - это представитель торговли, чаще всего рыночной, реже – сектора услуг. Но даже существующие в этом сегменте бизнеса производства - это не предприятия, рождающие инновации, обладающие экспортным потенциалом и т. д. За последние 20 лет небольшие европейские производственные предприятия, которые представляли довольно архаичный сегмент рынка, поскольку работали на устаревшем и дешевом оборудовании, в настоящее время они работают на высокие технологии, сотрудничают с крупными компаниями и являются звеном в общей технологической цепочке.

Малое и среднее предпринимательство в нашей стране не выстраивает долгосрочную стратегию развития своего бизнеса, обладает недостаточными экономическими знаниями, не обращается к услугам консультантов, поскольку предприниматели не видят никаких серьезных перспектив развития, Заработанные ими средства не так велики, чтобы строить амбициозные планы.

В начале 90-х годов огромная масса людей занялась именно торговым бизнесом и это было вполне естественно. Соотношение объемов необходимых финансовых средств и сроков окупаемости в торговле наиболее оптимально, тем более в период тотальной нехватки товаров на потребительском рынке. Однако дальше можно было ожидать изменения в структуре бизнеса, с распределением по отраслям. Изменения эти могли произойти, если бы предприниматель заработал нормальный стартовый капитал, нормализовались бы правила игры на экономическом поле и отношения между предпринимателями и органами власти. На деле малый и средний предприниматель достаточных средств так и не заработал. И до сих пор малые и средние предприниматели не производят впечатление собственников, уверенных в продолжении своей деятельности.

Основные проблемы МСП – высокие налоги и недоступность финансирования. С финансированием правительство пытается решить проблему, направляя привлеченные кредитные ресурсы на кредитование малого и среднего предпринимательства через коммерческие банки. Но с началом кризиса основная часть кредитных средств, предоставляемых МСП, направляется в торговый сектор, и фактически отечественный бизнес при ближайшем рассмотрении неэффективен, многие предприятия не могут рассчитывать на кредиты, поскольку работают непрозрачно, с убытками и т. д.

Необходимо создать модель малого и среднего предпринимательства, которая решила бы задачи повышения конкурентоспособности экономики, и предоставила возможность отраслевым министерствам решать задачу поддержки малого и среднего предпринимательства в конкретных отраслях. Изучив положительный зарубежный опыт в этой области, можно заметить, как создаются условия для тех предприятий, которые необходимы экономике страны, и как избирательны подходы к разным сферам малого и среднего предпринимательства.

Ситуацию с налогообложением малого и среднего предпринимательства можно считать плачевной поскольку, принимаемые меры не облегчают налоговое бремя, но при этом основная налоговая нагрузка приходится на малое и среднее предпринимательство, которое еле-еле сводит концы с концами, часто вынуждены работать в тени и скрывать свои доходы.

Следует также учесть, что при появлении каких-то особых условий для малого и среднего предпринимательства этим тут же готов воспользоваться крупный бизнес. Так, при введении упрощенной системы налогообложения малого и среднего бизнеса многие собственники раздробили крупное производство на несколько средних и малых предприятий,

сотрудничающих между собой. Но на деле это достаточный повод для поиска возможного решения проблемы, но не для того, чтобы ставить МСП в равные условия с крупным бизнесом.

Главным принципом, на котором должна строиться налоговая политика по отношению к малому и среднему предпринимательству - это оставлять в распоряжении предпринимателей достаточного объема средств для инвестирования и расширения производства. Именно из этого нужно исходить, проводя налоговые реформы, а не предоставлять периодически какие-то специальные льготы в виде освобождения от НДС, мешающие работать и сотрудничать с крупными предприятиями, что является необходимым условием развития МСП. Если же относиться к малому и среднему предпринимательству как основному источнику пополнения бюджета, то необходимо устранить, а в долгосрочной перспективе ликвидировать возможность пополнения бюджета крупным бизнесом, избегающего от уплаты налогов за счет раздробления своего бизнеса.

Без малого и среднего бизнеса экономика рискует превратиться в монопольную. В нашем случае монополизация экономики создает риск уничтожения даже того неприхотливого малого и среднего бизнеса, который у нас есть сегодня.

Армянская промышленность, ввиду узости внутреннего рынка, должна ориентироваться на внешние рынки, а задача государства – обеспечить соответствующее правовое поле. По внутреннему законодательству, касающемуся экспорта, Армения считается страной, соответствующей лучшим мировым показателям. В частности, экспортеры освобождены от налогов на экспорт, НДС, акцизных налогов. В экспортном режиме для товаров стратегического и двойного назначения у нас не применяются методы бестарифного регулирования, квоты, лицензии и др. Вот только на экспорте все это почему-то не отражается.

Имеются достаточно благоприятные внешние условия для развития армянского экспорта в виде нескольких действующих режимов торговли с основными деловыми партнерами. В частности, со всеми странами СНГ действует режим свободной торговли, предполагающий вход армянских товаров на их рынки с нулевой таможенной пошлиной. Велика вероятность, что уже в течение этого года в рамках СНГ будет создана свободная торговая зона на многосторонней основе. В торговле с Евросоюзом действует система GSP, обеспечивающая вход армянских товаров (около 2000 наименований) на европейский рынок со сниженными тарифами, третий год действует система GSP+ с расширенным перечнем товаров (примерно 6400 наименований, подпадающих под ее действие и более низкими тарифными ставками. Между тем всего около 60% экспорта в ЕС идет с использованием возможностей этой системы. Экспортеры остальных 40% товаров либо не знают о существовании этой системы, либо не умеют ею пользоваться и платят дополнительные суммы таможенным органам. В настоящее время идет подготовка к переговорам Армении с ЕС о создании зоны свободной торговли. И в рамках членства в ВТО для Армении действует так называемый режим наибольшего благоприятствования почти со 150 странами, в том числе и Китаем. Режим также упрощает для армянских экспортеров вход на рынки этих стран.

Среди проблем, сдерживающих развитие армянского экспорта, следует отметить необходимость формирования системы качества, а также реформирования системы сертификации, стандартизации и приведения их в соответствие с европейскими критериями и требованиями. Концепция принята, и в течение нескольких лет должна быть создана система качества и сертификации такого уровня, который позволит армянским товарам в широком масштабе выйти на европейский рынок. В настоящее время существенно сокращено количество обязательных документов (до трех лет), необходимых для осуществления экспорта. Государство должно помочь малому и среднему бизнесу в выходе на внешние рынки, используя возможности Армянского агентства развития в части маркетинговых исследований, поиска деловых партнеров и др. Одним из барьеров является неосведомленность бизнеса об имеющихся возможностях, и неиспользование системы GSP.

Имеются ряд претензий и к кредитной политике, процентные ставки по кредитам хотя и несколько снизились, продолжают оставаться чрезмерно высокими. Проблема недоступности кредитных ресурсов особенно актуальна для малого и среднего бизнеса, у представителей которого зачастую нет даже кредитных историй.

Оценивая политику, проводимую в отношении малого и среднего предпринимательства, следует отметить, что малый бизнес не является однородным, и к нему необходим дифференцированный подход. Малые предприятия – это не только торговля, это еще и предприятия производственного профиля, в том числе наукоемкие, работающие на импортозамещении, которые при благоприятных условиях могут перерасти в средние и даже крупные. В каждом конкретном случае государство должно определить, насколько выгодно вести этот бизнес. И если малый бизнес является перспективным и нуждается в поддержке, то нужно оказать эту поддержку, чтобы реализовать политику импортозамещения, иметь отечественное производство конкурентоспособных экспортоориентированных товаров.

ТАТЬЯНА ОГАНЯН

*Старший научный сотрудник института
экономики им. М.Котаняна НАН РА, к.э.н.*

СОЗДАНИЕ И СТАНОВЛЕНИЕ СВОБОДНОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ЗОНЫ В АРМЕНИИ

Одним из путей преобразования экономики РА может стать организация свободных экономических и промышленно-производственных зон (СЭиППЗ). Назревшая потребность во всесторонней либерализации экономики дает основание полагать, что данный вопрос заслуживает большого к себе внимания.

Свободная экономическая и промышленно-производственных зона это ограниченная часть государственной территории, на которой действуют особые льготные экономические условия для предпринимателей, что создает условия для развития промышленности и инвестирования иностранного капитала. С помощью таких зон решаются внешнеторговые, общеэкономические, социально и научно-технические проблемы. По оценкам иностранных экспертов в 2011 году через различные экономические зоны пройдут до 30% мирового товарооборота.

Создание свободных экономических зон рассматривается их учредителями как важное звено в реализации принципов открытой экономики.

Создание производственных свободных экономических зон, помимо привлечения иностранного капитала для активизации экономических процессов внутри страны увязывают с тремя основными задачами: стимулирование промышленности экспорта и получение на этой основе валютных средств; рост занятости; превращение зон в территорию по опробованию новых методов хозяйствования и роста национального хозяйства.

Свободные торговые зоны в основном создаются в относительно слабо развитых или развивающихся странах, где целью является быстрое стимулирование бизнеса.

При организации СЭиППЗ используют два различных концептуальных подхода: территориальный и функциональный. В первом случае зона рассматривается как обособленная территория, где все предприятия-резиденты пользуются льготным режимом хозяйственной деятельности. Согласно второму подходу, зона – это льготный режим, применяемый к определенному виду предпринимательской деятельности независимо от местоположения соответствующей фирмы в стране.

Одной из простейших форм СЭиППЗ являются свободные (беспошлинные) таможенные зоны (СТЗ). Эти зоны, как и СТЗ относятся к зонам первого поколения. Эти зоны представ-

ляют собой транзитные склады для хранения, упаковки и незначительной обработки товаров, предназначенных для экспорта. Такие зоны часто называют бондовыми складами или свободными таможенными территориями. Свободные таможенные зоны освобождаются от таможенных пошлин на ввоз и вывоз товаров. Они имеются во многих странах.

Зоны свободной торговли (ЗСТ) также широко распространены в мире. Наибольшее развитие ЗСТ получили в США. Промышленно-производственные зоны относятся к зонам второго поколения. Они возникли в результате эволюции торговых зон, когда в них стали ввозить не только товар, но и капитал, заниматься не только торговлей, но и производственной деятельностью.

Не менее важно решение вопроса об участниках свободных зон - зарубежных и местных инвесторах. Именно состав участников определяет успех и неудачу этой новой формы хозяйствования в экономической системе страны, а они зависят прежде всего от реакции инвесторов, которые захотели бы вложить свои капиталы в зоны.

Прямые иностранные инвестиции в свободные экономические зоны возможно рассматривать как метод постепенной интеграции иностранных фирм в национальную экономику. Поэтому уже на стадии планирования СЭЗ необходимо предусмотреть возможности установления прямых и обратных связей иностранных фирм с местными предпринимателями. Такие связи призваны обеспечить получение местных сырьевых товаров, компонентов, полуфабрикатов, комплексного оборудования и услуг. Доступ к местным ресурсам является важным стимулом для иностранных инвесторов. Но на практике добиться этого для иностранных фирм, действующих в зоне, может оказаться достаточно трудным делом и потребовать длительного времени.

Дефицит сырьевых ресурсов и финансирования, низкий технический уровень местных предприятий, низкое качество местных товаров и услуг – обуславливает сложность решения вопроса установления связей между действующими в зоне иностранными фирмами и местными предприятиями, действующими за пределами зоны.

При разработке проектов свободных экономических зон необходимо уделять соответствующее внимание проблеме привлечения местных предприятий, которые успешно функционировали бы в данной свободной зоне.

Характерной чертой различных видов свободных экономических зон является наличие благоприятного инвестиционного климата, включающего в себя таможенные, финансовые, налоговые льготы и преимущества по сравнению с общим режимом для предпринимателей, существующим в той или иной стране.

В ноябре 2009 года Правительство РА утвердило концепцию о создании первой свободной зоны на территории аэропорта “Звартноц”. Создаваемые специальные экономические зоны представляют собой ограниченные территории, на которых действует особый правовой режим. В настоящее время ведутся переговоры с рядом международных структур с целью сотрудничества. В частности, с компанией “Сингапурский свободный порт”, которая специализируется в области продажи драгоценных камней, вин, произведений искусства. Достигнута договоренность о проведении ряда мероприятий по обмену опытом. Работы ведутся с голландской фирмой “Flora Holland”, с целью внедрения опыта организации продажи цветов. С европейским банком реконструкции и развития (EBRD) достигнута договоренность о разработке бизнес-программ для проведения исследовательских работ и для их финансирования. Достигнута договоренность о создании свободной экономической зоны между Арменией и ОАЭ.

Основной целью создания Армянской свободной экономической зоны является вывоз армянских сельхозпродуктов за границу, поскольку для свежих продуктов питания существуют особые условия их содержания, то по этой причине только подобные зоны смогут дать возможность быстро организовать экспорт сельхозпродуктов. В свободной экономической зоне будут созданы организации по упаковке продуктов, которые будут отсылааться за рубеж под армянской маркой.

Предполагается создание соответствующих логистических сетей, которые будут работать с сельским населением, чтобы осуществлять процесс принятия сельхозпродуктов, проводить специализированные консультации по использованию сельскохозяйственных удобрений, знакомить с новыми технологиями, соответствующими международным стандартам.

В Армении, для стимулирования экономики, использование модели создания свободной зоны начинается сразу в трех направлениях, сельское хозяйство, ювелирное дело и высшие технологии.

Самая короткая дорога из сельской местности в зарубежье.

Сельское хозяйство в Армении это та сфера, которая не только удовлетворяет требованиям внутреннего рынка (ОВП – 20%), но имеет большой потенциал для выхода на внешний рынок и превращения в реальный бренд. Не новость, что армянские сельхозпродукты не имеют органических добавок натуральны и чисты, имеют большой спрос особенно в России, Украине, в последние годы также в арабских и персидских рынках. Однако от села к рынку, и то на внешний рынок, доставка продукции является одной из сложных задач развития сферы. Поэтому предполагается, что свободная зона будет состоять не только из производственных территорий, складов, логистических центров, сортировочных, упаковочных и брендовых услуг, а еще из пунктов сбора урожая. В течение этого года в трех регионах республики будут созданы точки сбора урожая, откуда этот урожай будет доставлен в свободные зоны – а оттуда на международные рынки. Итак, программа будет иметь три составляющие: точки сбора урожая – свободные торговые зоны – экспортеры.

Армянская ювелирообработывающая бурса.

Идея создания бурсы бриллиантовых и ювелирных изделий возникла давно. Однако, в сфере бриллиантовой обработки за последние 3-4 года из-за мирового кризиса, который непосредственно повлиял на эту сферу, осуществление проекта было приостановлено. После создания свободной торговой зоны на территории аэропорта “Звартноц”, Армения станет центром бриллиантовых и ювелирных изделий.

В этом направлении первым шагом будет организация ювелирной выставки, совместно с организацией международных ювелиров, где будут выставлены работы местных ювелиров. Ведутся переговоры с разными посольствами и международными организациями.

Армянская силиконовая зона.

В Армении в сфере высших и информационных технологий правительство предполагает создать свободную торговую зону на территории научно-исследовательских институтов “Мергелян” и “Марс”, которые в настоящее время действуют под российским руководством. В этом направлении основные переговоры ведутся с русской компанией “Ситроникс”, которой передано централизованное управление активами компании “Инвентарь против долга”.

На указанных территориях вновь созданным армянским организациям по внедрению высших технологий будет предоставлена возможность осуществлять свою деятельность без взимания налогов. “Ситроникс” предусматривает до конца года открыть первый венчурный фонд, который будет финансировать вновь организованные и рискованные бизнес-программы. На первом этапе первоначальный капитал венчурного фонда составит 40 млн.долларов, который впоследствии удвоится.

Придание статуса специальной экономической зоны позволит осуществить мероприятия по возобновлению работы длительно простаивающих предприятий, освоению новых производств, оказанию поддержки малому и среднему предпринимательству, привлечению инвестиций.

Таким образом, создание и становление СЭЗ в Армении позволит осуществлять реформы в регионах: развивать производство промышленных товаров, привлекать инвестиции, создавать дополнительные рабочие места и обеспечивать занятость населения, расширять поставки на внутренний рынок конкурентноспособных товаров и услуг производственного и непромышленного назначения.

Изучение опыта СЭЗ показало, что в целях эффективного государственного регулирования экономики, обеспечения их нормального функционирования необходимо совершенствование нормативно-правовой базы СЭЗ. Для этого следует:

Во-первых, предусмотреть государственную регистрацию юридических лиц, филиалов и представительств юридических лиц на территории специальной экономической зоны.

Во-вторых, на территориях специальных экономических зон, на которых будет действовать режим свободной таможенной зоны, может производиться розничная продажа товаров для внутреннего потребления.

В-третьих, внесение изменений и дополнений в законодательные акты по расширению полномочий административных советов и увеличению льгот. Все это будет способствовать улучшению правового режима функционирования специальных экономических зон и позволит обеспечить ускоренное экономическое развитие данных регионов.

Помимо этого, наиболее эффективными в зонах является проведение следующих мероприятий:

- снижение локальных и государственных налогов, предоставление кредитов на инвестиции;
- ослабление налогов на продажу, имущество, оборотные фонды, программы кредитования рабочих мест;
- участие и заинтересованность местных властей.

Общий вывод, который можно сделать из опыта функционирования зон предпринимательства состоит в том, что программы должны ограничиваться небольшим числом зон и предусматривать более широкий спектр стимулов.

ТАТЬЯНА ОГАНЯН

*Старший научный сотрудник института
экономики им. М.Котаняна НАН РА, к.э.н.*

РОЛЬ ГОСУДАРСТВА В РАСПРЕДЕЛЕНИИ ИНВЕСТИЦИЙ И СТИМУЛИРОВАНИИ ИННОВАЦИЙ РА

Обоснование выбора путей формирования новой структуры обрабатывающей промышленности РА и предложенные для этого методы связаны с объемами внедряемых ресурсов, вложениями, а также с объемом бюджетного финансирования. Если в 2008г. объем продукции обрабатывающей промышленности составлял 100.6%, то уже в 2009г. он равнялся 91.2%, а структура ее составляла 68.9% в 2008г. и 66.4% в 2009г.¹ В настоящее время почти остановлена функциональная деятельность предприятий. Резко сократился качественный сдвиг производства, неудовлетворительны финансовые и материально-сырьевые ресурсы, современные тенденции производства продукции. Обрабатывающая промышленность РА не обеспечивает потребительские требования внешнего рынка. Достигла минимальных размеров деятельность по кооперированию, интегрированию и нововведениям. Государственное распределение инвестиций не регулирует использование производственных возможностей предприятий, не обеспечивает материальными, фондовыми и финансовыми ресурсами, в том числе современными и новейшими производствами. Поэтому необходима реорганизация отрасли, которая способствовала бы созданию производственных сдвигов, международному техническому сотрудничеству и повышению конкурентоспособности национальной экономики. Для восстановления предприятий обрабатывающей промышленности РА необходимо решение ряда вопросов, которые связаны с недостаточностью внедряемых ресурсов, ограниченностью внедрения высших технологий, с физическим износом используемого оборудо-

¹ Стат. ежегодник РА, Ереван, 2010г, с. 260, 263.

вания, со спадом производства природных ресурсов и др. Эти сложности являются причинами неравномерного развития предприятий. Для каждого предприятия необходимо конкретизировать те направления создания ресурсного потенциала, осуществление которых необходимо в особенности, в период кризиса. Неизвестна направленность развития отрасли республики в данный период, которая состоит в выборе критериев и механизмов упорядочения объемов и структуры финансовых и сырьевых ресурсов в каждой отдельной сфере производства. В связи с этим возникает необходимость государственного регулирования инновационных процессов, которая связана с решением основных и промежуточных задач развития инновационной деятельности всей промышленности. В настоящее время инновации становятся основным средством увеличения прибыли хозяйствующих субъектов за счет лучшего удовлетворения рыночного спроса и снижения производственных издержек по сравнению с конкурентами. Деятельность крупных предприятий в значительной степени модифицируют механизмы совершенной конкуренции и позволяют частично интегрировать научно-инновационные процессы в общий воспроизводственный процесс. Однако, в большинстве отраслей механизмы конкуренции не способны обеспечить полное использование инновационного потенциала современных достижений науки и техники. Ограниченность рыночных механизмов как среды распространения инноваций можно проследить по ряду направлений. Во-первых, отдельным хозяйственным субъектам невозможно сконцентрировать средства для осуществления крупных инноваций. Совершенствование процессов научного познания делают НИОКР все более дорогостоящим. При этом инновации становятся основным средством увеличения прибыли хозяйствующих субъектов за счет лучшего удовлетворения рыночного спроса, снижения производственных издержек по сравнению с конкурентами. Новые научные результаты достигаются высококвалифицированными и, следовательно, высокооплачиваемыми кадрами, при этом опережающими темпами растет фондовооруженность научного труда. Развитие науки приобретает все более дисциплинарный характер. Кооперация представителей различных областей науки и техники требует дополнительных расходов. Еще больших затрат требует реализация нововведений, как правило, это значительные капитальные вложения, связанные с техническим перевооружением производства, расходы на поиск и приобретение научно-технической информации, прогнозирование конъюнктуры, обучение персонала, организационные мероприятия, а зачастую и на модификацию сложившихся взаимосвязей с поставщиками ресурсов и потребителями продукции и услуг. Определенных затрат требует экспертиза, патентование, сертификация новой продукции и т.д. Во-вторых, многие инновации могут оказаться экономически эффективными лишь при масштабах внедрения, превосходящих определенный критический минимум и при наличии достаточно емкого рынка. В-третьих, изолированное осуществление инноваций ведет к существенным потерям как для отдельных фирм, так и для промышленности в целом. С ростом научно-инновационных затрат неоправданное дублирование расходов на НИОКР и инновации зачастую становится непозволительной роскошью. В-четвертых, существуют такие процессы, которые вообще не могут осуществляться на коммерческой основе. Прежде всего следует отметить фундаментальные научные исследования, результаты которых, как правило, не могут быть коммерциализированы. Однако, в конечном счете, большинство инноваций связано с успехами фундаментальной науки. Сюда же относятся инновации в областях и видах деятельности, полностью или частично направленных на удовлетворение потребностей промышленности, финансируемых за счет государственных средств. В-пятых, инновационные проекты в большинстве случаев характеризуются значительной степенью неопределенности результата и длительностью лага получения отдачи. Вкладывая средства в инновации, предприниматель или фирма подвергают себя значительному инновационному риску, складывающемуся из нескольких элементов: технологический риск связан с возможной неудачей проекта с технической стороны, хозяйственный риск - с возможностью превышения величины требуемых ресурсов над имеющейся в распоряжении хозяйствующего субъекта, коммерческий риск - с неопределенностью конъюнктуры рынка, динамический риск - с возможностью значительного изменения общеэкономической среды за время реализации

проекта. Требуются определенные внешние стимулы, либо гарантии полного или частичного возмещения потерь в случае неудачи, чтобы предприниматель предпочел инновационный проект, который является менее рискованным для размещения капитала. В-шестых, экономический эффект проявляется в различных видах и во многих сферах промышленности. Сопряженные инновационные эффекты зачастую превышают величину прибыли, рассчитанную на этапе инициирования проекта. Возможности коммерциализации инноваций могут расширяться например за счет охвата дополнительных сегментов рынка, использования инновационных проектов и технологий в других отраслях, стимулирования инноваций у поставщиков и потребителей через технологические цепи и т.д. На микроуровне весьма сложно заранее оценить полную эффективность проекта и принять обоснованное решение о его реализации. Помимо этого, значительная доля сопряженных инновационных эффектов реализуется вне сферы приложения средств первоначального инвестора. Таким образом, распределение государством инвестиций и стимулирование инноваций должно осуществляться с учетом государственной инвестиционно-инновационной политики и обуславливает развертывание государственного участия в инновационных процессах. Под государственной инновационной политикой понимается комплекс целей, а также методов воздействия государственных структур на промышленность в целом, связанных с иницированием и повышением экономической и социальной эффективности инновационных процессов. В данной связи следует особо отметить комплексность, взаимосвязанность инструментов государственной инновационной политики. Инновационная политика неизбежно испытывает влияние общеэкономической стратегии. Степень государственного вмешательства в инновационные процессы в значительной степени определяется общими механизмами экономического регулирования. Государственные приоритеты в области нововведений детерминируются направлениями государственной экономической политики в целом. Институциональная экономическая политика определяет социально-экономическое поле инновационных процессов – совокупность хозяйствующих субъектов и отношений между ними. В свою очередь регулирование инноваций само становится одним из важнейших аспектов государственной политики. Инновационная политика тесно взаимосвязана с научной и научно-технической политикой, которая включает государственное регулирование науки и научно-технического развития, в части, направленной на рост прикладных знаний, использование научно-технических достижений. Пересекаясь между собой, эти две составляющие государственного регулирования не покрывают друг друга полностью, а имеют ряд специфических объектов и методов. Инвестиционная политика, направленная на стимулирование капиталовложений, одновременно стимулирует и инновации в той части, в которой инвестиции выступают базой для материализации нововведений. Одновременно, активизация инновационных процессов порождает дополнительный спрос на инвестиции.

Развитая промышленность характеризуется ростом корреляции инновационной и структурной политики. Возможным путем государственного воздействия выступает стимулирование инноваций через структурную политику – поддержку высокотехнологичных отраслей, поощрение развития промышленности на новой технической базе. В то же время, поощрение инновационной деятельности само по себе является основой для новых наукоемких отраслей промышленности. Инновационная политика практически неосуществима в отрыве от промышленной политики, становящейся одним из важнейших факторов спроса на инновации посредством воздействия на структуру собственности, размеры предприятий, концентрацию и распределение производственных ресурсов.

Государство осуществляет регулирование инновационных процессов как непосредственно, иницируя нововведения и выступая участником связанных с этим отношений, так и опосредовано, стимулируя инновации косвенными методами и создавая соответствующий промышленный механизм. Инновационным проектам могут предоставляться льготы по оплате государственных услуг – связи, электроэнергии, тепла и т.д. Среди мер косвенного регулирования прежде всего подчеркнем налоговые льготы. В настоящее время основная инновационная льгота на прибыль состоит в уменьшении облагаемой прибыли на сумму

средств, направленных на техническое перевооружение, реконструкцию, расширение, обновление производства. Налогооблагаемая прибыль уменьшается на сумму средств, направленных на проведение собственных НИОКР, но не более 10% облагаемой прибыли в общей сложности. Используя опыт мировой практики, целесообразно было бы использовать налоговые льготы, стимулирующие инновационную деятельность РА: предоставление исследовательского и инвестиционного налогового кредита.

Исходя из вышеизложенного, можно сделать вывод, что для развития инновационной деятельности РА необходимо:

- найти эффективные методы разработки инновационных проектов;
- оценить финансовые средства, необходимые для внедрения инновационных проектов;
- определить направления интеграции инновационных проектов;
- оценить количественные и качественные факторы инновационных проектов.
- определить направленность и задачи для развития инновационной деятельности по отраслям промышленности;
- разработать основные виды инноваций и определить предприятия, которые их разрабатывают и внедряют;
- определить объемы основных видов инвестиций, направленных на инновации и обеспечение источников их поступления, с учетом требований внутреннего рынка.

ИРИНА ТАРАНЯН

*Научный сотрудник института
экономики им. М.Котаняна НАН РА, к.э.н.*

ДАВИД ШАМШЯН

магистрант

ИСТОЧНИКИ ФИНАНСИРОВАНИЯ ТРАНСПОРТНЫХ ПРОЕКТОВ АРМЕНИИ В УСЛОВИЯХ КРИЗИСА

Для обеспечения высоких темпов экономического роста в условиях кризиса Армении жизненно необходима реализация крупных системообразующих проектов. Такие проекты сегодня сконцентрированы в сфере транспорта. Особенно перспективными представляются проекты строительства автомагистрали «Север-Юг» и новых железных дорог – Армения-Иран и Ванадзор-Фиолетово. В целом инвестиционная программа автодорожного коридора «Север-Юг» предполагает модернизацию дорожной инфраструктуры Армении от армяно-иранской до армяно-грузинской границы (север-юг) протяженностью в 556 км. Соответствующий международным стандартам коридор является наиболее удобным и кратчайшим путем для открытия транзитного пути из Ирана в ЕС через Грузию. Транзитный коридор с севера на юг Армении позволит буквально за считанные часы пересечь всю территорию страны, а также разрешить проблемы по обеспечению диверсификации транспортных путей. Строительство почти 32-х километровской железнодорожной ветки Ванадзор-Фиолетово позволит соединить железнодорожное направление Иджеван-Раздан-Ереван с железнодорожным направлением Тбилиси-Гюмри-Масис, тем самым, обеспечив сокращение длительности межрегиональных и межгосударственных перевозок. В результате строительства этого отрезка направление Ереван-Айрум сократится на 70-100 км. Железнодорожная ветка даст толчок развитию промышленности, сельского хозяйства и туризма в северо-восточной части Армении – в районе Севана. Реализация стратегического проекта строительства железной дороги Армения – Иран не только прорвет блокаду нашей страны, но и превратит ее в

важный коммуникационный узел, связав черноморское побережье с Персидским заливом, соединяясь с рынками Индии и Китая. Это в корне трансформирует нынешнюю деградацию экономики Армении с роли сырьевого придатка и сервисной марионетки к цели восстановления национальной промышленности, особенно горнодобывающей, а также будет способствовать возможностям для стабильного роста.

Таких инфраструктурных программ в Армении никогда не осуществлялось. С финансовой точки зрения эти проекты отличаются большой капиталоемкостью, низкой рентабельностью и длительными сроками окупаемости. При условии надлежащего финансирования автомагистраль «Север-Юг» с предварительной стоимостью \$962 млн может быть введена в эксплуатацию через 5-6 лет. Стоимость проекта железнодорожной ветки Ванадзор-Фиолетово по предварительным оценкам составляет \$100 млн. Если этот проект достаточно легко осуществим, то реализации второго крупного и амбициозного проекта мешают объективные проблемы. Принципиальное решение о строительстве железной дороги Армения-Иран было принято еще в 2007 г., но пока существуют значительные проблемы с финансированием и обеспечением объемов грузоперевозок. Сегодня правительство Армении занято продвижением проекта и поиском источников финансирования. Реализация проекта с ориентировочным сроком до 10 лет сопряжена с огромными техническими трудностями, что значительно увеличивает ее стоимость. По самым скромным расчетам, для создания 250 км-ой новой железной дороги, проходящей по горной местности, необходимо, по разным оценкам, от \$1,8 до \$4 млрд¹. В свете глобальных ограничений кредитования найти таких финансовых вложений нелегко.

Трудности с привлечением средств связаны также с тем обстоятельством, что этот проект является почти полностью политическим и его реализация обусловлена тем, какие суммы или кредитные средства готовы предоставить инвесторы или международные структуры на непривлекательной с точки зрения экономической эффективности проекта.

Самостоятельно Армения не способна реализовать подобные проекты, необходима как техническая, так и финансовая помощь. В условиях кризиса естественно меняется роль тех или иных источников финансирования транспортных проектов. Реализация таких масштабных проектов невозможна без «длинных» и недорогих денег, что представляет собой отдельную трудность, когда обычные инвесторы – государство и коммерческие банки – ограничивают свои вложения в долгосрочные проекты. Самым серьезным источником «длинных денег» может и должно быть государство. Во-первых, государство действительно располагает достаточными финансовыми ресурсами, во-вторых – оно может «длинные деньги» производить. Наконец, только государство обладает возможностями – информационными, аналитическими, управленческими – позволяющими не только просчитывать риски, но и управлять ими. А если при этом государство является инициатором и участником разработки и формирования проектов, то его инвестиционная активность станет надежным сигналом для прочих инвесторов и убедительной гарантией эффективности вложений. Но государству нецелесообразно в условиях кризиса, дефицита бюджета осуществлять 100% инвестирование в заявленные проекты, поэтому закономерно, что первоочередной задачей является привлечение инвестора.

Наиболее распространенный во всем мире источник дешевых ресурсов – денежные средства населения. Лежащие на счетах банков невостребованные остатки денег населения являются дешевым ресурсом и, в случае их многолетней невостребованности, долгосрочным. Но этот ресурс возникает при следующих непереносимых условиях. Во-первых, у населения должны быть эти самые непотраченные деньги, которые оно, к тому же держит не в «кубышке», а доверяет их на сохранение и приумножение финансовым учреждениям – банкам, страховым компаниям, пенсионным фондам. Чтобы это происходило, должны в течение длительного времени соблюдаться «процентные ножницы»: вкладчик получает привлекательные (не менее инфляции) проценты по вкладу, но не слишком большие, чтобы

¹ <http://rus.azatutyun.am/content/article/2189644.html>

ресурсы оставались достаточно дешевыми для инвесторов. Ускоренному формированию этих ресурсов сегодня в стране мешают инфляция – пока она высокая, деньги «дешевыми» быть не могут. Во-вторых, недоверие к банкам и всем прочим финансовым организациям страны. Если за рубежом финансовые ресурсы формируются за счет средств населения, открывающего вклады на долгие годы, то у нас в депозитах физические лица хранят деньги максимум год, из-за чего пассивы коммерческих банков Армении почти полностью являются краткосрочными, что затрудняет кредитование на длительные сроки (свыше 5 лет). В целом, местные банки ориентированы на розничное кредитование. К тому же низкий уровень доверия населения к банковской системе, инфляционные и девальвационные ожидания привели к тому, что банки вынуждены привлекать средства населения под очень высокие проценты, что почти не стимулирует привлечение средств граждан в банковскую систему и ведет лишь к удорожению кредита для заемщика. В результате огромные внутренние сбережения населения в банках, в «кубышках» и на счетах зарубежных банков в подавляющей своей части не превращаются в Армении в инвестиции, т.е. вклады не обеспечивают «длинных денег». Являясь самым развитым сектором финансового рынка, по сравнению с другими секторами, банковский сектор Армении не в состоянии обеспечить финансирование транспортных проектов, потому что даже небольшие транспортные проекты – это десятки миллионов долларов.

Возможности кредитования армянских компаний в зарубежных банках под низкие проценты теоретически существуют лишь для крупных предприятий, на практике же эти возможности ограничены, ввиду непрозрачности армянского бизнеса, отсутствия финансовой отчетности по международным стандартам, отсутствия кредитной истории в западных банках и т.д. До бесконечности занимать долгосрочные ресурсы за рубежом банки тоже не могут. Сегодня банковский сектор Армении из-за некомплексности осуществляемых реформ в сфере становления и развития системы регулирования финансового сектора взяла на себя всю тяжесть финансирования реального сектора экономики. Между тем, долгосрочные финансовые ресурсы во всем мире производятся не банками, а консервативными институтами, к которым относятся специализированные фонды и компании (пенсионные фонды, страховые компании, ПИФы и т.д.), инвестиционные институты (инвестиционные компании, инвестиционные фонды), не имеющие своей основной целью получение прибыли и не распределяющие эту прибыль между учредителями. Целью функционирования некоммерческих финансовых институтов является предоставление участникам – (вкладчикам, членам) некоммерческого финансового процесса различных выгод (пенсия, страховая защита и др.). Но в Армении эти консервативные институты, обеспечивающие аккумуляцию долгосрочных ресурсов, отсутствуют либо недостаточно развиты в основном в связи с низким уровнем доходов населения и отсутствием платежеспособного спроса на услуги небанковского финансового сектора, а также с темпами реформ, проводимых в этих сегментах финансового рынка.

Во всем мире пенсионные фонды, а именно негосударственные пенсионные фонды (НПФ), и страховые компании являются основным источником «длинных» денег, поскольку выплачивать деньги им приходится только через десятилетия после того как им доверили. НПФ аккумулируют средства своих вкладчиков и в этом качестве становятся кредитными портфельными инвесторами. НПФ в отличие от иных инвестиционных организаций формируются не с целью инвестиций, а с целью пенсионного обеспечения достойной старости граждан. Поэтому для инвестиций, осуществляемых пенсионными фондами, характерен чрезвычайный консерватизм. Основным критерием для выбора объектов вложения средств НПФ является их надежность. В отличие от высокоразвитых стран Запада, где сложилась проверенная годами система НПФ, обеспечивающих в среднем 20% пенсионных выплат (в США, Канаде, Великобритании они составляют более 40%, а в Чехии, Польше, Венгрии, Словакии – пока менее 5%)¹, а также стран СНГ, в Армении система НПФ не развита. У нас

¹ npf-almaz.ru.>news.../201-pensia-analiz.html

действует лишь Государственный пенсионный фонд, организованный на принципе «солидарности поколений», который из-за демографической ситуации приходит в упадок: численность пенсионеров, приходящихся на одного работающего резко увеличивается (в геометрической прогрессии). Среди стран СНГ система НПФ развита в России – 149 НПФ с общим числом участников 6,6 млн человек (на 30.06.2010 г.), в Казахстане – 13 НПФ (на 01.01.2011 г.), который первым из стран СНГ перешел на накопительную систему пенсий по примеру Чили, на Украине 109 НПФ (на 01.01.2009 г.).

В настоящее время на создание в стране системы долгосрочных накоплений и тем самым укрепление долгосрочной инвестиционной политики банков ориентирована осуществляемая по инициативе Центрального банка (ЦБ) Армении реформа пенсионной системы. Пенсионная реформа предусматривает переход на многоступенчатую пенсионную систему, состоящей из двух компонентов – государственной распределительной и частной накопительной. Накопительный компонент в Армении в добровольном порядке введен с 2011 г. Ежегодный объем сбережений в рамках добровольной системы накопительного пенсионного обеспечения по наихудшему сценарию предполагается составит \$5 млн, а по наиболее оптимистичному прогнозу порядка \$12 млн¹. Накопительная система пенсионного обеспечения в обязательном порядке будет введена с 2014 г. Накопленная за годы сумма, считающаяся собственностью гражданина, в пенсионном возрасте уже может быть им не только использована, но и передана в наследство. В целях сохранения денег пенсионеров управляющие накопленными активами имеют право инвестировать средства в ценные бумаги (государственные ценные бумаги, акции местных компаний, прошедших листинг на бирже), в том числе иностранные. Средства могут существовать и в виде вкладов (банковские счета, депозиты), однако запрещено их вложение в недвижимость, драгоценные металлы. Такое ограничение является подобием гарантии сохранности вложений граждан. Для того, чтобы накопительная система работала успешно необходимы три фактора: высокий уровень зарплаты, доверие граждан к финансовым институтам, развитой и находящийся на подъеме рынок ценных бумаг, куда и вкладываются пенсионные накопления: ипотечные ценные бумаги, инфраструктурные облигации и др.

В нынешней ситуации от удачного хода пенсионной реформы во многом зависит развитие рынка капитала страны. С появлением пенсионных фондов в Армении аккумулированные в них денежные средства, естественно, должны работать и быть вложены в какие-то финансовые инструменты. Во всех развитых странах пенсионные накопления служат источником длинных денег для ипотечного кредитования. При этом, чтобы снизить риски такого инвестирования, на Западе деньги будущих пенсионеров вкладываются в ипотечные ценные бумаги (ИЦБ), которые выпускают банки и агентства, занимающиеся таким кредитованием. Ипотечные облигации являются одним из самых надежных инструментов инвестирования во всем мире, поскольку они обеспечены недвижимостью. Надо отметить, что рынок ипотечного кредитования Армении на сегодня успешно развивается, но не настолько быстро, как бы того хотелось, о чем свидетельствует высокий уровень ипотечных ставок (8,5-13% в 2010 г.) и, напротив, очень низкий уровень проникновения ипотеки – пока в кредит приобретается не более 15% жилья. В европейских странах этот показатель в 2-4 раза выше, а среднегодовая процентная ставка очень низкая, например, 1,36% в Дании, 2,23% в Швеции². В Армении объем ипотечного кредитования слишком мал, чтобы играть решающую роль для экономики страны. Если в США одна ипотека составляет около 60-70% ВВП, то у нас объем всего кредитования не превышает 20% ВВП³. Объем предоставленных армянскими банками ипотечных кредитов на сегодняшний день составляет 83 млрд. драмов, а по оценке армянских специалистов и международных экспертов в течение ближайших года-полтора в Армении есть возможность доведения объема ипотечного портфеля до 110-120 млрд. драмов. Удельный вес ипотечных кредитов в общем портфеле банковской системы

¹ /www.finport.am/view-lang-rus-newsarticle-13942.html

² <http://armeconomedia.com/ru/news/real-estate/mortgage-portfolio-of-commercial-banks-will-have-40-increase/167/>

³ <http://www.unibank-armenia.com/news/2821/>

составляет 12%¹. Сегодня банки не в состоянии предоставлять долгосрочные кредиты из-за того, что в их пассивах почти нет привлеченных на долгосрочной основе средств.

Ипотечный рынок Армении активизировало создание универсальной кредитной организации /УКО/ «Национальной ипотечной компании» 16 июня 2009 г. и УКО «Квартиры молодым» 16 февраля 2010 г. решениями Центробанка Армении. Перспективы ипотечного кредитования, конечно, зависят от темпов роста доходов граждан. Для активного развития ипотеки банки вынуждены считаться с реалиями отечественной экономики – большинство игроков при принятии решения учитывает «серые доходы» заемщика, в частности, переводы из-за рубежа. Банки также наращивают кредитование, привлекая заемщиков из среды так называемых самозанятых граждан, которые в большинстве своем не могут документально подтвердить свои заработки. Еще одна характеристика отечественного ипотечного рынка – недостаток информированности и доверия населения к кредитным организациям, что также создает определенные трудности в развитии. Развитию ипотеки в стране способствует также применение ипотечного страхования, который на сегодня является одним из основных объектов страхования наряду со страхованием имущества и обязательного страхования автогражданской ответственности (ОСАГО), введенного с 1 января 2011 г. в качестве инструмента стимулирования рынка страхования, в то время как во всех остальных странах это воспринимается как сокращение или нейтрализация предмета, предоставляющего общественную опасность общественными средствами. Если страхование имущества связано с ведением бизнеса и кредитованием инвестпроектов, то ОСАГО – с кредитами банков на покупку автомобилей. Говоря о страховом рынке Армении, который также является главным источником длинных денег в стране, следует констатировать, что он – один из самых слабо развитых среди стран СНГ, о чем свидетельствует низкая капитализация страховых институтов, являющаяся препятствием для реализации транспортных проектов. Общий объем страховой премии – почти 6 млрд. драмов (\$16 млн) по состоянию на 10 октября 2010, а доля страховых премий в ВВП страны – 0,3%. Это крайне низкий показатель. Для сравнения отметим, что в развитых странах данный показатель составляет в среднем 15%, а в России – 2,5%, на Украине – 1,2%, в Казахстане – 0,55%. 9 частных страховых компаний республики на сегодняшний день не предоставляют полный спектр страховых услуг или так называемых полисов. Если в США застраховано порядка 98% подлежащих страхованию рисков, в Польше 65-68%, в России 8-9%, то в Армении – 1%. Медицинское страхование практикуется в той мере, в какой это требуют иностранные страховые компании. Основными страхователями являются юридические лица. Страхование жизни – основной инструмент накопления сбережений, можно сказать, не практикуется, поскольку в соответствии с действующим в Армении законом «О страховании», компании не имеют право одновременно предоставлять услуги по страхованию жизни и не жизни, так как страхование не жизни-рисковое, а жизни-накопительное. Для страхования жизни необходимо создание новой компании с новым уставным капиталом. В Армении появление 2-3 страховых компаний в виде институциональных инвесторов предусматривается только к 2014-2015 гг. в рамках реализации пенсионных реформ. Накопительное страхование жизни (НСЖ) в развитых странах мира занимает одно из самых важных мест личного страхования, давая человеку надежную защиту и уверенность в завтрашнем дне, к тому же позволяет увеличить денежные средства вкладчиков. Сегодня владельцы полисов страхования жизни составляют 90% всего населения США, Европы и других западных стран, а это составляет практически 70% от всего рынка страхования в мире. НСЖ – уникальный финансовый инструмент, сочетающий в себе две возможности; накопления и страхования. Возможность накопления заключается в том, что страховая компания вкладывает взносы своим клиентам в различные финансовые инструменты и таким образом деньги нарастают. Одной из принципиальных особенностей НСЖ является долгосрочный характер.

¹ <http://www.arka.am/rus/economy/2010/02/19/18790.html>

В Армении основной проблемой, препятствующей развитию страхования жизни, и, вообще, страхованию в целом, является невысокий уровень доходов населения республики, низкий уровень доверия населения и предприятий к страховым компаниям, отсутствие института актуариев, несовершенство законодательной базы, низкая культура страхования.

Следует отметить, что на отечественном финансовом рынке до сих пор не получили распространения также такие, давно известные в других странах, инвестиционные инструменты, как паевые инвестиционные фонды (ПИФы) и инвестиционные фонды, что ограничивает возможности привлечения капитала для реализации транспортных проектов. Сегодня государство должно серьезно задуматься о создании ПИФов с целью эффективного использования сбережений граждан, юридических лиц. Во всем мире это наиболее распространенная и эффективная форма привлечения средств частных и кооперативных инвесторов на фондовый рынок. В США объем средств в таких фондах – более \$7 трлн, число фондов превышает 8200. Около 95 млн человек в США инвестируют свои средства во взаимные фонды¹. В настоящее время в России уже работает свыше 350 фондов, пайщиками которых являются более 80 тыс. физических и юридических лиц², в Казахстане – соответственно 1984 и 10 тыс. человек (1.01.2011г.). Инвесторы во всем мире считают ПИФы привлекательными из-за простоты приобретения паев, профессионального управления инвестициями, высокой эффективности использования средств, более высокой доходности по сравнению с банковскими депозитами, низкого риска потери всех средств, льготного налогообложения, многоуровневой системы защиты прав инвесторов, прозрачности работы фондов.

Что касается инвестиционных фондов – компаний, организаций, вкладывающих денежный, инвестиционный капитал в ценные бумаги (преимущественно в акции) других компаний, то на сегодня в стране завершены подготовительные работы по разработке законодательных и подзаконных актов, регулирующих деятельность инвестиционных фондов. ЦБ Армении принял регламент 10/11, регулирующий порядок регистрации инвестиционных фондов. 8 инвестиционных компаний, действующих на рынке ценных бумаг, уже могут пройти регистрацию и лицензирование в качестве управляющих инвестиционными фондами.

Поскольку в масштабе всей экономики Армении проблема длинных денег остается нерешенной из-за неразвитости внебанковского сектора, как и раньше, главным источником длинных денег для реализации транспортных проектов остаются международные рынки. Основными потенциально доступными источниками более дешевых и длинных льготных кредитов являются международные финансовые институты. Так, Азиатский банк развития (АБР) сегодня осуществляет кредитную программу строительства автомагистрали «Север-Юг», согласно которой в течение 2009-2017 гг. Армения получит кредитные средства в размере \$ 500 млн США. Погашение кредита, предоставляемого отдельными траншами, будет осуществлено в течение 32 лет на льготных условиях. В течение льготного периода процентная ставка составит 1%, а в дальнейшем 1,5%³. На строительство автомагистрали \$50-70 млн готово предоставить Японское агентство международного сотрудничества (JICA).

Для финансирования железной дороги Армения-Иран государство также собирается привлечь средства АБР, выразившего готовность предоставить Армении в виде гранта \$ 1 млн необходимый для разработки технико-экономического обоснования проекта. Правительство Армении для строительства железной дороги в Иран рассчитывает получить более \$1 млрд из средств антикризисного фонда ЕврАзЭС с предоставлением гарантии, а для строительства железной дороги Ванадзор-Фиолетово – \$49,9 млн, которые будут переданы ЗАО «Южно-Кавказская железная дорога» – 100%-ной дочерней компании ОАО «Российские железные дороги», осуществляющей концессионное управление ЗАО «Армянская железная дорога», согласно Концессионному договору, подписанному 13 февраля 2008 г. Финансирование будет осуществляться на паритетных основах. Интерес к проекту строительству железной дороги Армения-Иран проявляют и Всемирный Банк (ВБ), Иран, готовый предо-

¹ <http://www.bibliofond.ru/view.aspx?id=482422>

² <http://www.bibliofond.ru/view.aspx?id=482422>

³ <http://www.vestikavkaza.ru/news/ekonomika/transport/14951.html>

ставить кредит в \$400 млн, Украина, Китай, а также Россия, Казахстан, являющиеся главными донорами ЕврАзЭС. В реализации транспортных инфраструктурных проектов может быть заинтересован также Евразийский банк развития, полноправным участником которого Армения является с апреля 2009г. Надо отметить, что сегодня, в условиях кризиса, переговоры, которые правительство Армении ведет с разными странами и организациями-донорами для определения источников финансирования железной дороги, идут не как прежде по вопросу привлечения долгосрочных и льготных кредитов, а коммерческих кредитов, которые неизбежно приблизят размер внешнего долга страны к установленному пределу в 60% ВВП. Поэтому данный проект следует рассматривать не только с точки зрения строительства, но и с точки зрения эксплуатации и возвращения средств. Действительно, сегодня объемы грузоперевозок Армения-Иран достаточно низки и составляют примерно 600 тыс. тонн в год (общий объем грузоперевозок за 2009 г. – 4,571 млн т). Согласно различным анализам и данным логистических компаний, для обеспечения прибыльности строительства новой железной дороги необходимо, чтобы на каждый строящийся железнодорожный километр приходилось около 30000 т грузоперевозок. С этой точки зрения, для обеспечения прибыльности строительства железной дороги Армения-Иран необходимо обеспечить для нее 7,5-8 млн т. грузоперевозок, что почти вдвое превышает общегодовые объемы грузоперевозок РА и более чем в 10 раз – объемы грузоперевозок в направлении Армения-Иран¹. Это обстоятельство играет основную отрицательную роль в поисках источников финансирования для строительства железной дороги.

Однако, проект такого масштаба, на наш взгляд, призванный оказать всестороннее влияние на целые регионы, их экономику, производство, культуру, не может оставить равнодушным дальновидных инвесторов. Мировой опыт показывает, что если государство начинает подобный проект, то инвестиции под государственные гарантии составляют 4:1. Решение о начале такого проекта моментально создает условия для притока инвестиций. А дальше начинается мультипликативный эффект и не столько самого строительства, сколько мультиэффект создания производств вокруг этой дороги.

Привлечение международного капитала конечно является некоторым стимулом развития финансового рынка и институтов страны. Кроме того, оно способствует развитию широкой практики среднесрочного и долгосрочного банковского кредитования – важного фактора для финансирования проектов государственно-частного партнерства (ГЧП). Однако надеется на программы помощи извне и строить экономику на их основе, на наш взгляд, не конструктивно, так как они не только малы, но и приводят к парниковому эффекту, который задерживает развитие собственных финансовых институтов, как бы за «ненужностью». А на развитие и становление совершенной системы финансового посредничества нужно время, которого, к сожалению, у нас нет.

В условиях финансового кризиса справиться с реализацией проектов за счет государства без привлечения частных инвесторов (как отечественных, так и иностранных) – задача невыполнимая. Частникам сейчас очень трудно финансировать проекты, нужна поддержка государства. И сбалансированный механизм для этого – ГЧП. Но, конечно, это не панацея от всех бед. Это сложный инструмент, у него много болевых точек и уязвимых мест. Ведь это использование государственных и частных средств в одном проекте, наличие определенной договорной основы, где и возникают проблемы. Но все-таки мировая практика свидетельствует в пользу использования данного механизма, особенно в условиях кризиса, когда возможности взять длинные дешевые деньги на Западе существуют. Огромная заинтересованность как отечественных, так и зарубежных инвесторов в такого рода проектах объясняется потенциальными возможностями инвестировать крупные средства на длительный срок и получать от таких вложений гарантированный, стабильный доход на протяжении ряда лет. Насколько эти возможности удастся реализовать на практике зависит, в конечном

¹ <http://www.transtender.ru/articles/detail.php?ID=10781>

итоге, от структуры сделок и условий договоров, которыми будут определяться отношения между сторонами.

В условиях кризиса новым инструментом, отвечающим потребностям инвесторов могут и должны стать, на наш взгляд, инфраструктурные облигации (ИО) с купонными выплатами, индексированными в соответствии с инфляцией. По своей сути ИО – это ценные бумаги, которые выпускаются с целью финансирования строительства и эксплуатации объектов инфраструктуры. Они являются полезным инструментом для привлечения финансовых ресурсов в рамках ГЧП, но только в той мере, в какой хорош сам проект, поскольку базовой гарантией доходности при их выпуске служит сам проект. Только экономически разумные и обоснованные проекты в результате их реализации смогут генерировать такую прибыль, чтобы окупить стоимость указанных ценных бумаг и начисленные по ним проценты.

Инфраструктурные облигации, как и любой другой финансовый инструмент, имеет свои инвестиционные качества и особенности, которые характеризуют его как объект инвестирования. Естественные особенности инфраструктурных проектов, лежащих в основе ИО, предполагают длительный характер (10-15 лет и более) и большой объем инвестиций, более низкую по сравнению с сопоставимыми рыночными инструментами доходность, а также значительную зависимость от государственного регулирования. Возможность обращения этих ценных бумаг на биржевом или внебиржевом рынке (публичная обращаемость) снижает риски потенциальных инвесторов, а следовательно, стоимость привлечения средств, устраняет необходимость отвлечения средств на очень длительные периоды, тем самым, предоставляя возможность для инвестирования инвесторам, обладающим сравнительно коротким инвестиционным горизонтом. Хотя ИО, в силу большей ликвидности и возможности обращения, позволяют инвесторам с относительно коротким инвестиционным горизонтом вкладываться в инфраструктурные проекты, основу базы инвесторов должны составлять так называемые долгосрочные инвесторы, к числу которых в рамках современной финансовой системы относятся страховые компании и пенсионные фонды, инвестиционные фонды, для которых сохранность их резервов важнее доходности. Обращаемость ИО вместе с меньшим объемом финансовых средств, необходимых для участия в финансировании, позволяют привлекать с их помощью средства не только консервативных институтов, но и значительно более широкого круга инвесторов: частных инвесторов, инвестиционных фондов, в т.ч. не специализирующихся на инвестициях в инфраструктуру, банков, неготовых по ряду причин (недостаточный размер, отсутствие достаточных объемов длинных денег, отсутствие возможности брать риски) кредитовать проектные компании, тем самым значительно расширяя потенциально доступный объем средств, которые могут быть использованы для финансирования развития инфраструктуры, а также снизить их стоимость (большой спрос ведет к снижению требуемой нормы доходности инвесторов).

Другой особенностью инфраструктурных проектов, оказывающей влияние на инвестиционную привлекательность ИО, является значительная прямая или косвенная зависимость от государства и /или иных органов власти. Проявлениями такой связи выступают тарифное регулирование, стимулирование спроса, содействие в решении правовых и технологических проблем, особые режимы налогообложения, что делает их столь эффективным и привлекательным механизмом, если учитывать, что ставки по ним обычно значительно (на 2-4%) ниже, чем по обычным корпоративным, а также софинансирование определенной части обязательств. Таким образом, доходность и риски вложения в ИО оказываются в значительной степени зависимыми от действий государства (или иного органа власти). Для решения задачи привлечения необходимых финансовых ресурсов по приемлемой стоимости, государство должно по каждому отдельному проекту четко указать параметры своего участия, правила регулирования и не изменять их в течение реализации проекта (а в случае если изменение неотвратимо – выкупить ИО или погасить убытки инвесторов, возникшие в результате данных изменений).

Кроме того, выпуск ИО предполагает большой контроль реализации проекта со стороны инвестиционного сообщества, более высокие стандарты раскрытия информации (в

т.ч в части расходования средств, выбора поставщиков и т.д), управления и защиты окружающей среды. Наличие в структуре держателей облигаций частных инвесторов позволяет в значительной степени ограничить политические риски проекта, включая отказ или изменение условий государственной поддержки, вызванной сменой политической конъюнктуры или другими неэкономическими причинами.

Несомненно, в Армении, как и во многих странах (США, Австралии, Чили, Индии, Китае, России, Казахстане), ИО могут быть важным источником финансирования инфраструктурных проектов, однако не стоит ожидать, что именно они станут решением всех назревших проблем в транспортной сфере. Международная практика показывает, что в случае их выпуска они смогут покрыть только 15-20% расходов на большие объекты. По нашему мнению, для успешного применения ИО в Армении необходимо подготовить, в первую очередь, целевой рынок – долгосрочных инвесторов и спекулянтов, которые создают волатильность и обеспечивают ликвидность рынка, что является важной предпосылкой для успеха ИО как нового перспективного инструмента на финансовом рынке Армении. Необходимо также нормативно-правовая база, регулирующая эти ценные бумаги.

Таким образом, от дальнейшего развития всех форм коллективного инвестирования и необходимых для вложения накоплений финансовых инструментов во многом зависят успехи реализации транспортных проектов, поскольку именно сбережения граждан до сих пор остаются неиспользуемым резервом долгосрочного инвестирования в ее реальный сектор. Увеличение притока средств в экономику создаст условия для экономического роста, что, в свою очередь, приведет к лучшей наполняемости государственного бюджета и улучшению финансирования инфраструктурных программ.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԵՐԶՅԱՆ

ՆՆ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏՃԳՆԱԺԱՍԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀՀ անկախության 20 տարիները ևս մեկ անգամ ցույց տվեցին, որ ժամանակակից աշխարհում սեփական երկրի նորմալ և կայուն զարգացում ապահովելու համար պետք է ունենալ ինչպես ներքին սոցիալ-տնտեսական կայուն իրավիճակ, այնպես էլ արտաքին ազդեցությունից պաշտպանվելու ռազմական, տնտեսական ուժ: Վերը թվարկված բաղկացուցիչներից երկրորդը համարվում է հիմնարար: Սակայն, տնտեսական ուժ ունենալու համար անհրաժեշտ է վարել կշռադատված և մտածված՝ կոնկրետ հաշվարկների վրա հիմնված, ներքին և արտաքին տնտեսական քաղաքականություն: Տնտեսական ուրույն քաղաքականության մշակումը հանդիսանում է յուրաքանչյուր անկախ պետության առաջնահերթություններից մեկը: Գծվար է պատկերացնել անկախ պետությունն առանց սեփական տնտեսական քաղաքականության, որը պետք է միտված լինի ոչ թե օտարների, այլ սեփական ժողովրդի բարեկեցիկ ներկայի և ապագայի ապահովմանը: Տնտեսական քաղաքականություն մշակելիս հաշվի են առնվում սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր բնագավառները: Մույն հոդվածի շրջանակներում անդրադարձ կլինի ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովմանը: Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ-ը գուրկ է վառելիքային ռեսուրսներից՝ պետք է կարողանա մշակել բազմակողմանի էներգետիկ անվտանգություն: Բազմակողմանի ասելով նկատի ունենք էներգակիրների ներմուծում ոչ թե մի երկրից՝ Ռուսաստանից, այլ նաև տարածաշրջանի այլ երկրներից: Կան բազմաթիվ երկրներ, որոնք չունենալով փաստացի հարաբերություններ հարևան երկրների հետ, այնուամենայնիվ կարողանում են բազմատեսականացնել սեփական երկրի էներգետիկ շուկան: ՀՀ-ը գուրկ լինելով նավթի և գազի պաշարներից՝ կարողանում է իրականացնել էներգիայի արտադրություն՝ ատոմակայանի, ՀԷԿ-երի օգնությամբ: ՀՀ էներգետիկ ոլորտը այն բնագավառներից է, որն ապահովում է արտահանման ինչ-որ չափաբաժին: Սակայն այդ էներգիայի արտահանումը, մեծամասամբ, շաղկապված է էներգակիրների ներկրման հետ: Հաշվի առնելով վերն ասվածը՝ սույն հոդվածում փորձ է արվել առաջարկել մեթոդ՝ էլեկտրաէներգիայի նկատմամբ ՀՀ ներքին պահանջարկը գնահատելու համար: Այս խնդիրը ոչ միայն ունի կարճաժամկետ, այլ նաև երկարաժամկետ հեռանկար: Իմանալով, թե որքան էներգիա է պետք ներքին շուկայում՝ պետությունը կկարողանա պլանավորել այդ շուկայի ընդհանուր զարգացումը՝ սկսած գնային քաղաքականությունից, արտահանման նոր սխեմաների ներմուծումից, վերջացրած էներգետիկ անվտանգության համակարգի մշակմամբ:

Բացի այդ կարևորվում է վերականգնվող էներգիայի մասնաբաժնի մեծացումը ՀՀ էներգետիկ համակարգում: Կանաչ տնտեսության ապահովումը կարող է հանդիսանալ ՀՀ տնտեսական համակարգի առաջնահերթություններից մեկը: Վերականգնվող էներգիայի օգտագործումը ՀՀ էներգետիկ շուկայում՝ արտաքին աշխարհից կախվածության թուլացման ճանապարհներից մեկն է:

Դիտարկենք էլեկտրաէներգիայի արտադրությունը ՀՀ-ում 2010 թվականի համար հետևյալ աղյուսակի միջոցով.

Էլեկտրաէներգիայի արտադրանքը 2010 թվականին

	2010թ.				
	1եռ	2եռ	3եռ	4եռ	տարի
Հայկական ատոմակայան	752.2	624.4	704.8	408.7	2490.0
Հրագդանի ՋԷԿ	154.4	12.2	0.0	181.9	348.4
Երևանի ՋԷԿ	120.3	110.0	399.5	434.8	1064.7
ՄԷԿ (Միջազգային էներգետիկ կորպորացիա)	156.0	324.0	177.9	69.1	727.1
Որոտանի ՀԷԿՀ	291.6	341.0	345.2	333.7	1311.4
Չորա ՀԷԿ	23.3	47.6	18.7	14.5	104.0
Փոքր կայաններ	86.7	161.6	106.6	90.6	445.5
ԸՆԴԱՄԵՆԸ	1584.4	1620.8	1752.7	1533.3	6491.2

Վերը գրվածի համատեքստում դիտարկենք Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգիայի նկատմամբ ցանկալի պահանջարկի հետևյալ էկոնոմետրիկ մոդելը.

$$\ln ED_t^* = \alpha_0 + \alpha_1 \ln GDP_t + \alpha_2 \ln EP_t + \varepsilon_t^1, \quad (1)$$

որտեղ

ED_t^* -ն էլեկտրաէներգիայի նկատմամբ ցանկալի պահանջարկն է t ժամանակահատվածում,

GDP_t -ն անվանական ՀՆԱ - ն է t ժամանակահատվածում,

EP_t -ն էլեկտրաէներգիայի կշռված սակագինն է t ժամանակահատվածում,

$\alpha_0, \alpha_1, \alpha_2$ -ն մոդելի անհայտ պարամետրերն են,

ε_t^1 -ն մոդելի պատահական սխալն է

t -ն ներկայացնում է այն ժամանակահատվածը՝ 2000-2010թթ., որի կտրվածքով իրականացվել է հետազոտությունը:

Էլեկտրաէներգիայի ցանկալի պահանջարկը հայտնի չէ, և այն որոշելու համար դիտարկենք անուղղակի գնահատման մեթոդը հետևյալ հաջորդական քայլերով, որոնցից յուրաքանչյուրը հիմնված է ժամանակակից էկոնոմետրիկ մեթոդների կիրառման վրա:

Հասկանալի է, որ էներգիայի փաստացի պահանջարկը հասնում է ցանկալի մակարդակին ոչ միանգամից¹: Այդ փաստը ներկայացնենք հետևյալ հավասարման օգնությամբ.

$$\ln ED_t - \ln ED_{t-1} = \lambda (\ln ED_t^* - \ln ED_{t-1}) + v_t, \quad (2)$$

որտեղ

ED_t, ED_{t-1} - էլեկտրաէներգիայի փաստացի պահանջարկ

λ -ն ցուցանիշ է, որը ցույց է տալիս, թե էլեկտրաէներգիայի նկատմամբ փաստացի պահանջարկը ինչ արագությամբ է ձգտում ցանկալի մակարդակին: Ընդ որում $0 < \lambda < 1$,

v_t -ն մոդելի պատահական սխալն է, այսինքն փաստացի ու ցանկալի մակարդակների շեղումը պայմանավորված է մաս ալ գործոններով, որոնք մոդելում առանձնացված չեն:

Հաջորդ քայլով (2)-ի աջ մասի ցանկալի պահանջարկի փոխարեն տեղադրենք (1)-ի աջ մասը: Կստացվի՝

$$\ln ED_t - \ln ED_{t-1} = \lambda (\alpha_0 + \alpha_1 \ln GDP_t + \alpha_2 \ln EP_t + \varepsilon_t^1 - ED_{t-1}) + v_t: \quad (3)$$

(3)-ից գտնենք էլեկտրաէներգիայի նկատմամբ փաստացի պահանջարկը՝ կատարելով մի շարք թվաբանական գործողություններ.

¹ Эрнст Р. Берндт, Практика эконометрики: классика и современность, ЮНИТИ-ДАНА, Москва, 2005, с. 370-371.

$$\ln ED_t = \lambda \alpha_0 + \lambda \alpha_1 \ln GDP_t + \lambda \alpha_2 \ln EP_t + (1-\lambda) \ln ED_{t-1} + \lambda \varepsilon_t^1 + v_t \quad (4)$$

Կատարենք հետևյալ նշանակումները՝

$$\begin{aligned} \beta_0 &= \lambda \alpha_0 \\ \beta_1 &= \lambda \alpha_1 \\ \beta_2 &= \lambda \alpha_2 \\ \beta_3 &= 1-\lambda \\ \varepsilon_t^2 &= \lambda \varepsilon_t^1 + v_t \end{aligned}$$

Կստանանք ՀՀ վիճակագրական տվյալներով գնահատելու համար նախատեսված հետևյալ մոդելը.

$$\ln ED_t = \beta_0 + \beta_1 \ln GDP_t + \beta_2 \ln EP_t + \beta_3 \ln ED_{t-1} + \ln \varepsilon_t^2 \quad (5)$$

Մոդելի հատկացումը կատարվել է՝ հենվելով տեսական մեթոդների վրա: Մասնավորապես, էներգիայի նկատմամբ պահանջարկի վրա ազդող հիմնական գործոններից մեկը անվանական ՀՆԱ-ն է: Ըստ տեսության՝ որքան արտադրության ծավալը մեծ է, այնքան ավելի կլինի նաև էներգիայի նկատմամբ պահանջարկը:

2-րդ գործոնը էլեկտրաէներգիայի սակագներն են:

3-րդը նախորդ ժամանակաշրջանի պահանջարկն է, այսինքն՝ կարևոր է ուսումնասիրել նաև տնտեսական սպասումները:

Նախքան (5) - մոդելը գնահատելը՝ կատարվել է շարքերի հարթեցում, մասնավորապես, մոդելում առկա բոլոր ցուցանիշների համար դիտարկվել է ստացիոնարության խնդիրը: Այն փոփոխական շարքերը, որոնք չեն եղել ստացիոնար, բերվել են ստացիոնար վիճակի՝ օգտագործելով դրանց կրկնակի տարբերությունները: Գնահատման համար դիտարկենք հետևյալ մոդելը կրկնակի տարբերություններով:

$$D(\ln ED_t) = \beta_0 + \beta_1 D(\ln GDP_t) + \beta_2 D(\ln EP_t) + \beta_3 D(\ln ED_{t-1}) + \ln \varepsilon_t^2 \quad (6)$$

(6) մոդելը սովորական ՓԲԵ-ով գնահատելու արդյունքում պարզվում է, որ մոդելում առկա է 2-րդ կարգի սահող միջինով պրոցես, որը հաշվի առնելով, կստանանք ավելի հուսալի գնահատված մոդել: Ըստ գնահատման արդյունքների՝ մոդելը լավ որակի է: Հենվելով գնահատված արդյունքների վրա՝ տանք գնահատված միջանկյալ մոդելը:

$$D(\ln \bar{ED}_t) = 0,11 D(\ln GDP_t) - 0,32 D(\ln EP_t) + 0,39 D(\ln ED_{t-1}) \quad (7)$$

Սակայն, մեզ համար ավելի մեծ նշանակություն ունի (5)-ի գնահատված մոդելը, որը ստանալու համար կատարենք որոշ թվաբանական գործողություններ (7)-ում:

$$\ln \bar{ED}_t = 3,51 - 0,32 \ln EP_t + 0,11 \ln GDP_t + 0,39 \ln ED_{t-1} \quad (8)$$

Քանի որ $\beta_3 = 0,39 = 1 - \lambda \Rightarrow \lambda = 0,61 \Rightarrow$ Հայաստանի Հանրապետությունում էլեկտրաէներգիայի նկատմամբ փաստացի պահանջարկը ձգտում է ցանկալի մակարդակին 0,61 գործակցով: Կարելի է նշել, որ այդ գործակիցը բավականին մեծ է, այսինքն փաստացի պահանջարկը բավական արագ է ձգտում ցանկալի մակարդակին:

Իրականացնենք մի շարք հաշվարկներ.

$$\begin{aligned} \beta_1 = \lambda \alpha_1 \Rightarrow \alpha_1 &= 0,11 / 0,61 = 0,18 & \alpha_1 &= 0,18 \\ \beta_2 = \lambda \alpha_2 \Rightarrow \alpha_2 &= -0,32 / 0,61 = -0,52 & \alpha_2 &= -0,52 \\ \alpha_0 = \beta_0 / \lambda &= 3,51 / 0,61 = 5,75 & \alpha_0 &= 5,75 \end{aligned}$$

Հաշվի առնելով վերը կատարված հաշվարկները՝ կստանանք էլեկտրաէներգիայի ցանկալի պահանջարկի՝ անուղղակի ճանապարհով գնահատված վերջնական մոդելը:

$$\ln \bar{ED}_t^* = 5,75 - 0,52 \ln EP_t + 0,18 \ln GDP_t \quad (9)$$

Այստեղ երևում է, որ էլեկտրաէներգիայի նկատմամբ երկարաժամկետ կամ ցանկալի պահանջարկի վրա անվանական ՀՆԱ-ն ազդում է դրական գործակցով, իսկ էլեկտրաէներգիայի սակագները՝ բացասական: Վերոհիշյալը միանգամայն կարելի է մեկնաբանել տնտեսագիտական մեթոդների օգնությամբ: Բացի այդ սույն մոդելը ցույց է տալիս, որ անվանական ՀՆԱ-ի 1% աճը հանգեցնում է էներգիայի նկատմամբ պահանջարկի 18 % ավելացման, իսկ սակագների 1% աճը պահանջարկի 52 % կրճատման: Ստացված արդյունքները ևս մեկ անգամ ցույց են տալիս պետական քաղաքականություն մշակողներին, որ ՀՀ էներգետիկ շուկան գնային շոկերի նկատմամբ բավականին զգայուն է: Հետևապես էներգիայի սակագների իջեցման ուղիների որոնումը պետք է հանդիսանա ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հենքերից մեկը՝ թույլ տալով էլ ավելի ամրապնդել ՀՀ տնտեսական անվտանգությունը, հետևապես ապահովել տնտեսական անկախությունը:

ՆՎԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրթաքաղաքական գիտաշխատող, տ. գ. թ.*

ԻՆՏԵՐՆԵՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԲԻՋՆԵՍ ՄՈԴԵԼՆԵՐՈՒՄ

Ընդհանուր առմամբ ինտերնետի միջոցով իրականացված առևտրային գործարքների հարկման հիմնախնդիրները կապված են վաճառվող ապրանքի բնույթի հետ, այսինքն՝ արդյո՞ք վաճառված ապրանքը ֆիզիկական է, թե ներկայացված է թվային տեսքով: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել ինտերնետի միջոցով իրականացվող առևտրային գործարքի հետևյալ մոդելները.


1. ֆիզիկական ապրանքի¹ վաճառք ռեզիդենտի կողմից ռեզիդենտին,
2. ֆիզիկական ապրանքի վաճառք ռեզիդենտի կողմից ոչ ռեզիդենտին,
3. ֆիզիկական ապրանքի վաճառք ոչ ռեզիդենտից ռեզիդենտին
4. էլեկտրոնային տեսքով ներկայացված ապրանքի վաճառք ռեզիդենտի կողմից ռեզիդենտին,
5. էլեկտրոնային տեսքով ներկայացված ապրանքի վաճառք ռեզիդենտի կողմից ոչ ռեզիդենտին,
6. էլեկտրոնային տեսքով ներկայացված ապրանքի վաճառք ոչ ռեզիդենտի կողմից ռեզիդենտին:

Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի նշված 6 մոդելների փոխկապակցվածությունը ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

«Ֆիզիկական ապրանքի վաճառքը ռեզիդենտի կողմից ռեզիդենտին» մոդելը հարկման տեսակետից ամենաքիչ առանձնահատկություններն է պարունակում: Այս մոդելը, ըստ էության, առանձնապես չի տարբերվում փոստ-առաքումային ծառայություններից, օրինակ՝ տարբեր կատարողներից հեռախոսային կամ փոստային պատվերների կատարումը: Այս դեպքում, առաջ են գալիս գործարքները հարկային մարմիններից թաքցնելու նույն այն մեխանիզմները, որոնք առկա են առևտրի «ավանդական» ձևերի դեպքում: Մակայն ակնհայտ է, որ ինտերնետի օգտագործումը բավականին մեծացնում է ստվերային շրջանառության ծավալները: Դժվարությունն այստեղ այն է, որ ինտերնետային առևտրի վերահսկողության, հսկիչ գնումների իրականացման համար հարկային մարմիններից պահանջվում է տեխնիկական որոշակի հզորություններ և պատրաստվածություն:

¹ Այս հետազոտության իմաստով ֆիզիկական են բոլոր այն ապրանքները, որոնք շոշափելի են և ունեն նյութական հենք, իսկ էլեկտրոնային տեսքով ներկայացվածները՝ այնպիսի ապրանքներն են, որոնք ամբողջությամբ կարող են ներկայացվել թվային տեսքով և հաղորդվել հեռահաղորդակցության ցանցերի միջոցով՝ այսինքն, առանց նյութական հենքի են:

Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրային գործարքների մոդելները



«Ֆիզիկական ապրանքի վաճառք ռեզիդենտի կողմից ոչ ռեզիդենտին» մոդելը ներկայանում է որպես ինտերնետի միջոցով իրականացված արտահանման գործարք: Այս դեպքում գնման գործարքին հետևում է գնված ապրանքի առաքումը գնորդին, ինչը ենթադրում է ապրանքի մաքսային սահմանի հատում: Այստեղ ոչ միայն հնարավոր է դառնում պարզել գործարքի իրականացման փաստը, և որոշակի վարչական գործիքներ կիրառել, այլև վաճառողն ինքը շահագրգռված է ներկայացնելու մնացած վաճառքների իրականացման փաստը:

Այս դեպքում կարող են առաջանալ մի շարք դժվարություններ կապված, մասնավորապես, «ԱԱՀ–ի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթների հետ: Այս մոդելի շրջանակում խնդիրներ կարող են առաջանալ նաև այն դեպքում, երբ ֆիզիկական ապրանքը գտնվում է արտասահմանում գտնվող պահեստում: Այս դեպքում վաճառքի գործարքից հետո ֆիզիկական ապրանքը մաքսային սահման չի հատում, որի դեպքում ևս խիստ դժվարանում է հարկային և մաքսային վարչարարության իրականացումը:

«Ֆիզիկական ապրանքի վաճառք ոչ ռեզիդենտից ռեզիդենտին» մոդելը, ըստ էության, ներմուծման գործարք է: Այս դեպքում ևս տեղի է ունենում ապրանքի մաքսային սահմանի հատում, ինչը հնարավորություն է տալիս մաքսային ծառայություններին արձանագրել վաճառքի փաստը և իրականացնել համապատասխան վարչարարական մեխանիզմներ, այսինքն՝ այն դեպքում, երբ հայաստանաբնակ քաղաքացին ինտերնետի միջոցով ապրանք է գնում օտարերկրյա կազմակերպությունից, ստիպված է լինում հոգ տանել ապրանքի մաքսագերծման համար:

Հայկական մաքսային վարչարարության ցավոտ կողմերից մեկը ապրանքի ներմուծման պահին վերագնահատման իրականացումն է: Ինտերնետի միջոցով առևտրի իրականացման դեպքում առաջ են գալիս նույն այն դժվարությունները, որոնք առկա են ապրանքների ներմուծման ժամանակ, ինչպիսին է, օրինակ, մաքսային արժեքի որոշումը: Այստեղ տեղին է նշել, որ ինտերնետի միջոցով իրականացված առևտրային գործարքների դեպքում գործարքի փաստաթղթային մասը նույնպես իրականացվում է էլեկտրոնային տեսքով: Նման փաստաթղթերը մաքսային մարմինների կողմից կարող են որակվել որպես «էական վավերապայմաններ» չպարունակող փաստաթղթեր, ինչը հիմք կտա մաքսային մարմիններին մաքսային արժեքի գնահատում իրականացնել: Փաստորեն, ինտերնետի միջոցով օտարերկրյա կազ-

մակերպությունից ապրանք գնելիս գնորդը, մինչև ապրանքի ներմուծման պահը, չի կարող հաշվել, թե որքան կարժենա ապրանքը ներմուծումից հետո:

Էլեկտրոնային տեսքով ներկայացված ապրանքների վաճառքի դեպքում վերը նշված դժվարություններին ավելանում է նաև այն հանգամանք, որ էլեկտրոնային տեսքով ներկայացված ապրանքի տեղաշարժը վերահսկելը չափազանց բարդ է:

Այսպես, ռեզիդենտի կողմից ռեզիդենտին էլեկտրոնային տեսքով ներկայացված ապրանքի վաճառքի դեպքում ֆիզիկական ապրանքի մոդելի համար նշված դժվարություններին ավելանում է նաև այն հանգամանքը, որ բազմակի անգամ ավելանում է պետական մարմիններից ապրանքների իրացման իրական ծավալների վերահսկողության հնարավորությունը: Որպես իրացման ծավալի ցուցիչ՝ բանկային հաշվին մուտքագրված գումարների կիրառումը իրատեսական չէ, քանի որ որպես վճարման միջոց կարող են օգտագործվել ինչպես արտասահմանյան վճարային համակարգերը, այնպես էլ երրորդ կազմակերպությունների բանկային հաշիվները:

«Էլեկտրոնային ապրանքի ռեզիդենտի կողմից ոչ ռեզիդենտին վաճառքի» մոդելի դեպքում վաճառողը շահագրգռված է ոչ միայն ցույց տալ վաճառքի իրական ծավալը, այլև ուռճացնելու այն: Այստեղ տեղին է նշել, որ էլեկտրոնային տեսքով ներկայացված ապրանքների արժեքի անաչառ գնահատման համար որևէ արդյունավետ գործուն մեխանիզմ գոյություն չունի:

Էլեկտրոնային ապրանքի ոչ ռեզիդենտի կողմից ռեզիդենտին վաճառքի պարագայում ո՛չ գնորդը, և ո՛չ վաճառողը որևէ շարժառիթ չունեն հարկային և մաքսային մարմիններին ներկայացնել առևտրային գործարքի իրականացման փաստը: Օրինակ՝ սկավառակների վրա ձայնագրված և ՀՀ տարածք ներմուծված ծրագրային ապահովման համար ներմուծողը վճարում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վճարներ, այն դեպքում, երբ արտադրողի կայքից նույն ծրագրային ապահովման գնման դեպքում նման վճարների զանձման հավանականությունը չնչին է:

Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրային գործարքների արդարացի հարկման մեխանիզմների մշակումը, այսինքն այնպիսի մեխանիզմների, որոնց դեպքում ավանդական և էլեկտրոնային ձեռնարկատիրական գործունեությունները հայտնվում են հավասար հնարավորությունների դաշտում, անշուշտ կխթանի այս տեսքով առևտրի իրականացման ծավալների ավելացումը, որից, ի վերջո, շահելու է սպառողը:

Այստեղ տեղին է նշել, որ ինտերնետի միջոցով իրականացվող հարաբերությունների անմիջական վերահսկողության մեթոդը շատ դեպքերում հիմնված է ինֆորմատիկայի տեխնոլոգիական առանձնահատկությունների վրա: Տնտեսագիտական տեսանկյունից կարևոր են ոչ թե տեխնոլոգիական և տեխնիկական առանձնահատկությունները, այլ նման վերահսկողության հետևանքներն ու նպատակահարմարությունը:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԿՄԱՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՓՈՐՁ

Վերջին տարիներին ավելի ու ավելի շատ հեղինակներ են անդրադառնում համաշխարհային տնտեսության կառուցվածքում ամուր դիրքեր գրավող էլեկտրոնային ձեռնարկատիրական գործունեության տնտեսական և իրավական հիմնախնդիրներին: Առաջ եկած խնդիրները տարբեր հեղինակներ դիտարկում են սեփական հետաքրքրությունների և հետազոտությունների շրջանակում, սակայն զարգացած տնտեսություն ունեցող երկրներում այս ոլորտի զարգացումը առանձնացրել է այն հիմնախնդիրները, որոնց լուծումը հրատապ լուծում է պահանջում: Չցանկանալով ըստ կարևորության ստորադասել դրանցից և ոչ մեկը, ցանկանում ենք փաստել, որ դրանց շարքում էլեկտրոնային գործարքների հարկման հիմնախնդիրներն ունեն առանձնահատուկ տեղ:

Էլեկտրոնային առևտրի միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրներ դրա կարգավորման հիմքում փորձում են ամրագրել և ապա ողջ աշխարհում տարածել հատկապես այնպիսի մոտեցումներ, որոնք ձեռնառու են սեփական երկրին և առավելագույն կնպաստեն երկրի զանձարան առավել մեծ ծավալով հարկային եկամուտների ներհոսքին: Նման հնարավորությունն ի հայտ է եկել կապված այն հանգամանքի հետ, որ ինտերնետ առևտրի մասնակիցները կարող են լինել տարբեր երկրների ռեզիդենտներ, և շատ դժվար է միանշանակ պատասխանել այն հարցին, թե որ երկրում ինչպիսի հարկատեսակներ պետք է վճարվեն: Արդեն իսկ ակնհայտ է «ինտերնետ-արտահանողների» և «ինտերնետ ներմուծողների» շահերի միջև հասունացող կոնֆլիկտը հարկային բազայի համար պայքարի գծով:

Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրային գործունեության հարկման առանձնահատկություններն առաջին հերթին կապված են գործարքի մասնակիցների շարքում «արտասահմանյան բաղադրիչի» առկայության հետ, ինչը նշանակում է, որ միևնույն գործարքը կարող է միաժամանակ ենթարկվել մի քանի պետությունների հարկային համակարգի ազդեցությանը: Այդ պատճառով մման գործունեության հարկման մեխանիզմների մշակման ժամանակ չափազանց կարևոր է տարբեր պետություններում մման մեխանիզմների փոխհամաձայնեցվածության խնդիրը:

Ամերիկայի Միացյալ Նահանգները անկասկած էլեկտրոնային բիզնեսի զարգացման առաջատարներից է: ԱՄՆ-ում էլեկտրոնային առևտրի կարգավորման առաջին փորձերը ձեռնարկվել են դեռևս 1996թ.: 1996թ. ԱՄՆ-ում հրապարակվում է «Գլոբալ էլեկտրոնային առևտրի հարկման քաղաքականության մի քանի հիմնախնդիրներ» փաստաթուղթը¹, որում հիմնավորվում էր այնպիսի հարկային նորմերի ընդունման անհրաժեշտությունը, որոնք կլինեն հստակ, պարզ, բացառեն կրկնակի հարկումը, ինչը պետք է երաշխիք հանդիսանար էլեկտրոնային առևտրի հարկման համար: Բացի այդ, ՏՀԶԿ վերը նշված հաշվետվությունից շատ ավելի առաջ ԱՄՆ-ի Ֆինանսների դեպարտամենտը որոշում էր ընդունել էլեկտրոնային առևտրի նկատմամբ կիրառել նույն այն հարկատեսակները, որոնք կիրառվում են ձեռնարկատիրության այլ, կամ «ավանդական» տեսակների նկատմամբ, այսինքն, չսահմանել նոր հատուկ հարկատեսակներ:

Նման որոշմամբ ԱՄՆ-ը լուծում տվեց ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի հարկման բազային խնդրին: Որոշումը սահմանում էր, որ մման գործունեությունը պետք է հարկել, սակայն սովորական գործարքների նմանությամբ, իսկ տարբերակված քաղաքականություն վարելը նպատակահարմար չէ: ԱՄՆ-ի այս դիրքորոշումը բացատրվում է նրանով, որ ԱՄՆ-ը, մի կողմից ձգտում էր պահպանել միջազգային շուկայում էլեկտրոնային առևտրի

¹ Selected Tax Policy Implications of Global Electronic Commerce. – Department of the Treasury Office of Tax Policy. - 1996. - [http://www.ustreas.gov/offices/tax-policy/library/intemet.html].

իր առաջատար դիրքերը, մյուս կողմից՝ չէր ցանկանում հրաժարվել էլեկտրոնային առևտրից ստացվող հարկային եկամուտներից: Այս ոլորտում հետագա աշխատանքները ուղղված էին հարկային համակարգի համապատասխան փոփոխությունների իրականացմանը:

1998թ. ԱՄՆ-ում ընդունվեց «Ինտերնետը հարկերից ազատման ակտը»¹, որով 5-ամյա մորատորիում էր հայտարարվում նահանգային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ինտերնետ կապի տրամադրման ծառայությունների հարկման բոլոր տեսակի հարկեր կիրառելու դեմ, ինչպես նաև արգելվեցին էլեկտրոնային առևտրի բազմակի և խտրականացված հարկման դեմ: Այսինքն, այս օրինագիծը ոչ թե ամբողջությամբ հարկերից ազատում էր էլեկտրոնային առևտուրը, այլ արգելում էր շրջանառություն մտցնել այն հարկելու նոր օրենքներ, ինչը նշանակում էր, որ նման գործունեությամբ զբաղվող ձեռնարկատերերը պետք է հարկեր վճարեին նույն այն սկզբունքներով, ինչպիսիք առկա կլինեին նման գործունեությունը այլ եղանակով վարելու դեպքում: Կային նաև մորատորիումի հակառակորդներ, որոնք նշում են, որ էլեկտրոնային առևտրի հարկման նման քաղաքականությունը ԱՄՆ-ի համար էական բյուջետային կորուստների աղբյուր կարող է հանդիսանալ²:

Բավականին ուշագրավ է այն քննարկումների տրամաբանությունը, որոնք սկիզբ առան մորատորիումի ավարտից՝ 2003թ. հոկտեմբերի 1-ից հետո: Բազմաթիվ նահանգներ և տարածքային միավորումներ դեմ էին դրա վերահաստատմանը, քանի որ տեղական բյուջեները մեծածավալ հարկային եկամուտներ չէին կարողանում հավաքագրել: Քննարկումներն այնքան սուր էին, որ մորատորիումի ավարտից 14 ամիս անց միայն հաղթանակեցին մորատորիումի երկարացման կողմնակիցները, այսինքն նրանք կարողացան հիմնավորել, թե որքան կարևոր է էլեկտրոնային առևտրի ԱՄՆ դիրքերի պահպանման ռազմավարությունը պետական շահերի տեսանկյունից: Արդյունքում 2004թ. դեկտեմբերին ընդունվեց «Ինտերնետի հարկման չդիսկրիմինացման» մասին օրենքը³, որով երկարաձգվեց մորատորիումի գործողության ժամկետը մինչև 2007թ. նոյեմբերի մեկը: Այս օրենքն ավելի խիստ էր և չեղյալ էր հայտարարում բոլոր այն նահանգների սահմանած հարկերը, որոնք ընդունվել էին մինչև մորատորիումի 1-ին ընդունումը: Ջ.Բուշի նախագահության օրոք օրենքի գործողության ժամկետը երկարաձգվեց մինչև 2014թ. նոյեմբերի 1-ը⁴:

Ինչպես հայտնի է, ԱՄՆ-ում հիմնական հարկատեսակները շրջանառության հարկն ու շահութահարկն են: Շրջանառության հարկն անուղղակի հարկատեսակ է, որի դեպքում որպես հարկման բազա հանդես է գալիս մանրածախ առևտրի շրջանառությունը: Հարկը, որպես կանոն, վճարվում է այն հարկային ենթակայության գոտում, որի ռեզիդենտ է հանդիսանում գնորդը: Վաճառողն այս դեպքում հանդես է գալիս որպես հարկային գործակալ, որը հարկի գումարը ներառում է ապրանքի գնի մեջ և փոխանցում հարկային մարմիններին: Եթե գնորդն ու վաճառողը գտնվում են նույն հարկային ենթակայության սահմաններում, շրջանառության հարկի հաշվարկման և վճարման դժվարություններ չեն առաջանում: Սակայն էլեկտրոնային առևտրի պայմաններում գործարքի կողմերը առավել հաճախ ոչ միայն չեն պատկանում ԱՄՆ-ի ներսում գտնվող հարկային ենթակայություններին, այլև կողմերից մեկը ընդհանրապես կարող է ԱՄՆ-ի ռեզիդենտ չհանդիսանալ, և նման պարագայում շատ դժվար է որոշել, թե որ հարկային ենթակայության պահանջներով պետք է հաշվարկվի, պահվի և հետագայում փոխանցվի շրջանառության հարկի գումարը:

Այդ դժվարությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Նախ, ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի պարագայում որոշել, թե գնորդը որ հարկային ենթակայության ռեզիդենտ է, ներկայիս տեխնիկական հնարավորությունների պարագայում գրեթե անհնար է: Ներկայումս համակարգչի ցանցային վավերապայմաններով սկզբունքորեն հնարավոր է որոշել, թե որտեղ է գտնվում համակարգիչը, սակայն մեծ վերապահումներով: Ավելին, բացի այն, որ որոշման նման գործընթացի ճշգրտությունը կատարյալ չէ և կարելի է «թաքցնել» կամ «փոխել» իրական վավերապայմանները, նույնացնել համակարգչի աշխարհագրական դիրքը և համակարգչից օգտվողի ռեզիդենտությունը նույնպես թույլատրելի չէ:

¹ The Internet Tax Freedom Act, Public Law 105-277 of October 21, 1998. - [www.ecommercecornmission.org/ITFA.htm.].

² Operkent A. The Law Problems of Electronic Economy //Journal of Monetary Economics. 2001. № 12, p. 3.

³ The Internet Tax Nondiscrimination Act, Public Law 108-435 of January 07, 2003. - [www.theorator.com/bills108/s52.html].

⁴ H.R.3678 - Internet Tax Freedom Act Amendments Act of 2007 [http://www.opencongress.org/bill/110-h3678/show]

Այս խնդիրն առկա է ոչ միայն ԱՄՆ-ում, շրջանառության հարկի պարագայում, այլև ողջ աշխարհում:

Մյուս կողմից, այն դեպքերում, երբ հնարավոր է պարզել գնորդի ֆիզիկական գտնվելու վայրը (ինչպես, օրինակ, ֆիզիկական ապրանքի գնումների դեպքում, այսինքն՝ երբ վաճառքին հետևում է գնորդի նշած հասցեով ապրանքի առաքումը), կամ նույնիսկ հայտնի է, թե հարկային ինչ ենթակայություն ունի գնորդը, հարց է առաջանում, թե հանուն ինչի վաճառողը լրացուցիչ նյութական, մարդկային, ֆինանսական և այլ միջոցներ ծախսի այլ հարկային ենթակայության համար հարկային գումարներ հավաքագրելու համար: Ընդ որում, ԱՄՆ-ում նման խնդիրն առկա է դեռևս 1967թ., երբ ակտիվորեն ներդրվեցին տարբեր կատարողներով գնումների ծառայությունները: Հետաքրքիր է ԱՄՆ-ի գերագույն դատարանի իրավական դիրքորոշումը այս հիմնախնդրի շուրջ¹: Նշված վարույթի որոշման համաձայն հարկեր հավաքելու պարտավորությունը կախված է վաճառողի՝ այլ հարկային ենթակայության տարածքների հետ կապի (անգլ.՝ nexus) առկայության հետ: Որպես նման կապ առավել հաճախ դիտարկվում է վաճառողի ֆիզիկական գրասենյակի, աշխատակիցների կամ ներկայության այլ տեսակների առկայությունը այն հարկային ենթակայության աշխարհագրական սահմաններում, որտեղի ռեզիդենտ է հանդիսանում գնորդը, ընդ որում, հենց այդ հարկային ենթակայության կանոններով: Իսկ այն հարկային ենթակայությունների համար, որոնց հետ նման կապ չունի, վաճառողը հարկերի հավաքագրման գործառույթ իրականացնելու պարտավորություն չի կրում: Սա նշանակում է, որ այլ հարկային ենթակայությամբ էլեկտրոնային առևտրով զբաղվող ընկերությունները մրցակցային առավելություն են ձեռք բերում տեղական վաճառողների նկատմամբ, քանի որ, ըստ էության, օրինական ճանապարհով խուսափում են հարկեր վճարելուց:

Նման «անառողջ» մրցակցությանը դիմակայելու և տեղական ընկերություններին պաշտպանելու նպատակով նահանգների մեծ մասում և վարչական տարածքային միավորներում ներմուծվեց «օգտագործման հարկ» կոչվող հարկատեսակը (անգլ.՝ use tax), որը պետք է վճարվեր ոչ թե վաճառողը, այլ գնորդը, եթե վերջինս գնումներ էր կատարում ռեզիդենտ չհանդիսացող ընկերությունից: Սակայն հարկային մարմինները նման գործարքները վերահսկելու շատ փոքր հնարավորություններ ունեն, ինչը շատերին հնարավորություն է տալիս խուսափել այդ հարկատեսակը վճարելուց: Հատկանշական է, որ 2000թ. հրապարակված ԱՄՆ-ի գլխավոր ֆինանսական վերահսկիչ վարչության հաշվետվությունում արձանագրվում է, որ այս հարկատեսակը վճարվում է ֆիզիկական անձ հանդիսացող գնորդների և իրավաբանական անձանց միայն համապատասխանաբար 5 և 65-80 տոկոսը²:

Էլեկտրոնային առևտրի այդ ժամանակներին արդեն արձանագրված բուռն աճը և ապագայի համար աճի տեմպերի պահպանման կանխատեսումներ հիմք հանդիսացան, որպեսզի քննարկվի շրջանառության հարկի գործող օրենսդրության բարեփոխման և ԱՄՆ-ի ողջ տարածքում միասնականացման գործընթացը: Արդեն 2000թ. մարտ ամսին նախաձեռնվում է «Շրջանառության հարկի պարզեցման (կատարելագործման) նախագծի» (Streamlined Sales Tax Project) վրա աշխատանքը: Այս նախագծի շրջանակներում մշակվում է «Շրջանառության և օգտագործման հարկի մասին միասնական օրենքը»³, որի շրջանակներում նախագծին մասնակցող նահանգները պետք է վերափոխեին գործող հարկային կանոնակարգերը:

Այս միասնական օրենքը սահմանում էր 5 կանոն, որոնք թույլ էին տալիս որոշել, թե որ նահանգն է հանդիսանում իրացման վայր, և հետևաբար հարկվում է արդյոք գործարքը տվյալ նահանգում: Կանոնները դասակարգվում են ըստ կարևորության, այսինքն ամեն հաջորդող կանոնը կիրառվում է միայն այն դեպքում, եթե նախորդ կանոնով հնարավոր չի եղել որոշել իրացման վայրը: Այդ կանոններով իրացման տեղ է համարվում՝

¹ National Bellas Hess, Inc. v. Department of Revenue of the State of Illinois, 386 U.S. 753; 87 S. Ct. 1389; 18 L. Ed. 2d 505; 1967 U.S. LEXIS 2792 (1967).

² Electronic Commerce Growth Presents Challenges; Revenue Losses Are Uncertain. - GAO/GGD/OCE-00-165. - 2000. [http://www.unclefed.com/GAOReports/ggd00-165.pdf].

³ Uniform Sales And Use Tax Administration Act of December 22, 2000. - [http://www.streamlinedsalestax.org/library/124amdedactandagrmt.pdf]

1. Այն վայրը, որտեղ գնորդը ստանում է ապրանքը, եթե նա ապրանքը ստանում է անմիջապես վաճառողի ձեռնարկատիրական գործունեություն իրականացման վայրից,
2. Ապրանքի ստացման այն վայրը, պայմանով, որ վաճառողը տեղյակ է դրա մասին,
3. Գնորդի գտնվելու այն վայրը, համաձայն վաճառողի մոտ գրանցված գրառումների,
4. Այն վայրը, որտեղից գնորդը վճարում է իրականացրել,
5. Այն վայրը, որտեղից իրականացվում է առաքումը, եթե ապրանքը նյութական է: Հեռահաղորդակցության ցանցերով փոխանցվող ոչ նյութական ապրանքի դեպքում՝ այն վայրը, որտեղ ապրանքն առաջին անգամ վաճառողի համար հասանելի է դառնում փոխանցման համար:

Ծառայությունների մատուցման տեղի խնդիրը միասնական օրենքով լուծվում է ավելի պարզ եղանակով: Մատուցման վայր է համարվում այն նահանգը, որտեղից այն մատուցվել է, այսինքն վաճառողի գտնվելու վայրը:

Ինչպես երևում է, Միասնական օրենքը հակված է գործարքի տեղը կապել ապրանքի ստացման վայրի հետ, ոչ թե վաճառքի իրականացման վայրի հետ, ինչպես ընդունված էր շրջանառության հարկի հաշվարկման նախկին փորձի ժամանակ: Նույն օրենքով սահմանվում են հարկերի հավաքագրման 3 մոդելներ, ընդ որում վաճառողն ինքն է որոշում, թե որ մոդելով է ինքն աշխատելու:

1-ին մոդելի դեպքում վաճառողը հարկերի հավաքագրման և փոխանցման բոլոր գործառույթները փոխանցում է իր գործակալին՝ «Ծառայությունների հավաստագրված մատուցողին (Certified Service Provider), որը իր գործառույթներով նման է այն ատոլիտորական ընկերություններին, որոնք հաշվապահական ծառայություններ են մատուցում:

2-րդ մոդելի դեպքում վաճառողը ձեռք է բերում և կիրառում է «Հավաստագրված ավտոմատացված համակարգ» (Certified Automated System), որը թույլ է տալիս հաշվակել և փոխանցել հարկային պարտավորությունները: Այս դեպքում վաճառողն ինքնուրույն է իրականացնում հարկային հաշվապահությունը:

3-րդ մոդելի դեպքում վաճառողը ինքնուրույն է մշակում նման համակարգ, որը, սակայն, պետք է համապատասխան հավաստագրման ենթարկվի: Եթե 2-րդ մոդելը նախատեսված է մանր և միջին ընկերությունների համար, ապա այս մոդելը պետք է կիրառություն գտներ խոշոր առևտրային ընկերություններում, որոնք առևտրային գործունեության համար մշակում և կիրառում են սեփական ծրագրային ապահովում:

Եթե նահանգը ընդունում է Միասնական օրենքի դրույթները (իսկ դրա ընդունումը կամավոր սկզբունքներով է), ապա վաճառողը պետք է 12-ամսյա ժամկետում գրանցվի տվյալ նահանգում և շրջանառության հարկ հաշվարկի: Օրենքի կամավոր սկզբունքը հանգեցրել է նրան, որ ոչ բոլոր նահանգներն են ընդունել դրա դրույթները: Փորձեր են եղել Ֆեդերալ մակարդակում ընդունել օրենք, որը կպարտադրի բոլոր նահանգներին ընդունել Միասնական օրենքը, սակայն դա դեռևս չի հաջողվել:

Ինչպես նշվեց, ԱՄՆ-ի մյուս կարևոր հարկատեսակը շահութահարկն է: Շահութահարկը ուղղակի հարկատեսակ է, որը վճարում են իրավաբանական անձինք: ԱՄՆ-ի օրենսդրությամբ իրավաբանական անձ են համարվում կորպորացիաներն ու սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները: ԱՄՆ-ում գրանցված իրավաբանական անձը պարտավոր է շահութահարկ վճարել անկախ գործունեության վայրից, իսկ հարկման ենթակա է աշխարհի ցանկացած երկրում ստացված շահույթը:

Բացի այդ, շահութահարկով հարկվում են նաև ոչ ամերիկյան ընկերությունները, որոնք ԱՄՆ-ում «մշտական ներկայացուցչություն» ունեն: Խնդիրն այստեղ մշտական ներկայացուցչության սահմանման ոչ միարժեքությունն է, որն ավելի արտահայտված է դառնում էլեկտրոնային առևտրի պարագայում: ԱՄՆ-ի պարագայում այս հասկացության բովանդակությունը սահմանվում է առանձին պետությունների հետ միջպետական համաձայնագրերով, ինչպես նաև ԱՄՆ-ի շահութահարկի մոդելային կոնվենցիայով, որը հիմք է հանդիսանում շահութահարկի վերաբերյալ միջազգային պայմանագրերի համար¹: Այս կոնվենցիայի 5-րդ

¹ United States Model Income Tax Convention of November 15, 2006. - [http://www.irs.gov/usincomes/small/international/article/0,,id=164686,00.html].

հողվածի համաձայն մշտական ներկայացուցչություն է համարվում ձեռնարկատիրական գործունեության վարման ֆիքսված տեղ, որտեղից կազմակերպությունը իրականացնում է իր ողջ գործունեությունը կամ դրա մի մասը:

Կոնվենցիայում, ինչպես նաև դրա տեխնիկական մեկնաբանման փաստաթղթերում¹ ոչինչ չի ասվում այն խնդրի վերաբերյալ, թե ինչպես պետք է մեկնաբանել մշտական ներկայացուցչության հարցը էլեկտրոնային առևտրի պարագայում, սակայն դատական որոշումներից, ինչպես նաև ԱՄՆ-ի գանձապետարանի պաշտոնական մեկնաբանությունները² վկայում են, որ ֆիզիկապես ԱՄՆ-ում տեղակայված սերվերի վրա տեղադրված կայքը չի կարող դիտարկվել որպես կայքի սեփականատիրոջ մշտական ներկայացուցչություն³: Եվ իսկապես, սկզբունքորեն սարքավորումները (սերվերը) ինտերնետին միացնելուց հետո սարքավորման աշխարհագրական տեղադրման վայրը ընդհանրապես որևէ գործնական նշանակություն չունի⁴:

Հարկ է նշել, որ առանձին դեպքերում, նույնիսկ եթե կազմակերպությունը ԱՄՆ-ում մշտական ներկայացուցչություն չունի, ԱՄՆ-ի հարկային օրենսգիրքը նախատեսում է «վճարման վայրում» շահութահարկի հաշվարկման պարտավորություն: Նման դեպքերում հարկը հաշվարկվում և վճարվում է եկամտի աղբյուր հանդիսացող տեղական կազմակերպության կողմից: Խոսքը վերաբերում է ստացված դրամական միջոցները ռոյալտի կամ եկամուտ որակելուն:

Մշտական ներկայացուցչության բացակայության պայմաններում հարկման հիմնախնդիրը էլեկտրոնային առևտրի պարագայում կապված է ստացված եկամուտների բնույթի պարզաբանման հետ: Խնդիրը հիմնականում կապված է այնպիսի ապրանքների հետ, որոնք կարող են ներկայացվել և փոխանցվել էլեկտրոնային տեսքով՝ ծրագրային փաթեթներ, ֆիլմեր, երաժշտական ստեղծագործություններ և այլն: ԱՄՆ-ում գոյություն ունեցող օրենսդրությունը սահմանում է, որ գործարքի բնույթը կապված է ոչ թե ապրանքի առաքման կամ ներկայացման ձևից, այլ այն իրավունքների բնույթից, որոնք փոխանցվում են գնորդին⁵: Եթե գործարքի հետևանքով գնորդն իրավունք է ստանում օգտագործել ապրանքը միայն սեփական կարիքների համար, գործարքից ստացված դրամական միջոցները ներառվում են շահութահարկի բազայում, և շահութահարկը վճարվում է վաճառողի կողմից: Սակայն երբ փոխանցվում են նաև ապրանքի առևտրային օգտագործման իրավունքներ, գործարքից ստացված դրամական միջոցները որակվում են որպես ռոյալթի, որի գծով վաճառողի վճարելիք շահութահարկը պետք է հաշվարկվի և վճարվի եկամտի աղբյուրի մոտ, այսինքն գնորդի կողմից:

Ի հավելումն էլեկտրոնային առևտրի հարկման ամերիկյան նկարագրված համակարգի, նշենք, որ ԱՄՆ-ում գործունեություն ծավալող արտասահմանյան ընկերություններ հարկային հիմնախնդիրների լուծման գործում կարևոր նշանակություն ունեն միջպետական պայմանագրերն ու համաձայնագրերը: Եթե ԱՄՆ-ում գործունեություն ծավալող ընկերության ռեզիդենտության երկիրն ու ԱՄՆ-ը ունեն կրկնակի հարկումը բացառող միջպետական համաձայնագիր, ապա այդ ընկերությունը ԱՄՆ-ում հարկեր պետք է վճարի միայն այն դեպքում, երբ ԱՄՆ-ում մշտական ներկայացուցչություն ունի: Մինչդեռ այն ընկերությունները, որոնց ռեզիդենտության երկրները ԱՄՆ-ի հետ կրկնակի հարկումը բացառող միջպետական համաձայնագրեր չունեն, ստիպված պետք է լինեն շահութահարկ վճարել ԱՄՆ-ում ստացված եկամուտների համար:

¹ United States Model Technical Explanation Accompanying The United States Model Income Tax Convention of November 15, 2006. [<http://www.irs.gov/businesses/small/international/article/0,,id=164686,00.html>].

² U.S. Department of the Treasury, Selected Tax Policy Implications, sec. 7.2.5. - [<http://www.ustreas.gov/taxpolicy/intemet.html>].

³ McEvoy M. R., Feds Suggest Policies for Internet Commerce / M.R. McEvoy // Rochester Business Journal. - 1996.

⁴ Вавилов А.В., Ильин И.И. Пластиковые карты: Принципы построения платежных систем. М. : ИИЦ «Европиум-пресс», 2004. с. 8.

⁵ Жестков С.В., Правовые основы налогового планирования (на примере групп предприятий) : Учебное пособие. М.: АПУ, 2002. с. 28.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Տեղեկատվական տեխնոլոգիաները հասարակության վրա մեծ ազդեցություն ունեցող կարևորագույն գործոններից են: Արդեն իսկ փաստ է, որ ինտերնետը, որպես տեղեկատվական տեխնոլոգիաների բաղադրիչ, կարևոր դեր է խաղում հասարակության տնտեսական կյանքում: Տարեցտարի հազարավոր ընկերություններ սկսում են գործունեություն ծավալել ինտերնետի միջոցով, սակայն դեռևս մեր իրականությունից ամբողջովին արմատախիլ չի եղել մեզ բնորոշ ավանդական մտածելակերպը, որը շատ հաճախ մեզ թույլ չի տալիս վստահությամբ ներշնչվել ինտերնետի միջոցով մատուցվող ապրանքների կամ ծառայությունների հանդեպ: Ինտերնետի միջոցով մատուցվող ծառայությունների շարքում իր կարևոր տեղն է գրավում էլեկտրոնային առևտուրը:

Էլեկտրոնային առևտուրը (անգլերենից e-commerce) տնտեսական գործունեության յուրահատուկ բնագավառ է: Այն իր մեջ ներառում է բոլոր ֆինանսական և առևտրային գործարքները, որոնք իրականացվում են համակարգչային ցանցերի և բիզնես գործընթացների միջոցով կամ կապված են նմանատիպ գործարքների իրականացման հետ¹: Մասնավորապես, էլեկտրոնային առևտրին են վերաբերում՝

- Էլեկտրոնային տեղեկատվության փոխանակումը,
- միջոցների էլեկտրոնային շարժը,
- էլեկտրոնային առևտուրը,
- էլեկտրոնային մարքեթինգ,
- էլեկտրոնային բանկային ծառայությունները,
- էլեկտրոնային ապահովագրությունը և այլն:

Տարբեր հետազոտություններ ցույց են տալիս, որ ներկայումս կենցաղային տեխնիկայի և գրքերի 12-14%-ը վաճառվում է ինտերնետի միջոցով²: Ավելի դինամիկ էլեկտրոնային առևտրի շուկան սկսեց զարգանալ վերջին 20 տարիների ընթացքում, ինչը բացատրվում է ինտերնետ բաժանորդների թվի արագ աճով:

Ինչպես ցանկացած այլ բիզնեսի տարատեսակ, այնպես էլ էլեկտրոնային առևտուրն ունի իր առավելություններն ու թերությունները: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Կազմակերպության տեսակետից էլեկտրոնային առևտրի առավելություններն են՝

- Միջազգային շուկա: Էլեկտրոնային առևտրի ամենամեծ և կարևորագույն առավելությունը կայանում է նրանում, որ այն թույլ է տալիս շահագրգիռ ընկերությանը կամ ֆիզիկական անձին դուրս գալ համաշխարհային շուկա: Այսինքն՝ այն սկսում է բավարարել ինչպես ազգային, այնպես էլ միջազգային շուկայի կարիքները: Էլեկտրոնային առևտրի օգնությամբ նույնիսկ ամենափոքր ընկերությունները կարող են մուտք գործել համաշխարհային շուկա՝ ապրանքներ և ծառայություններ վաճառելու կամ գնելու համար: Նման ձևով բիզնեսի իրականացումը նաև բացառում է ժամանակային որևէ սահմանափակում, քանի որ էլեկտրոնային առևտուրը հնարավորություն է տալիս գործարքներ կատարել օրական 24 ժամ, նույնիսկ տոնական և հանգստյան օրերին, ինչն իր հերթին էապես մեծացնում է վաճառքը և շահույթը:
- Ժամանակի կրճատում: Ինտերնետի միջոցով իրականացվող վաճառքները սովորական խանութների հետ համեմատ շատ ավելի հարմար են և ժամանակ տնտեսող: Բացի այդ՝ սպառողները կարող են տեսնել տարբեր հաճախորդների կողմից թողած կարծիքներ այս կամ այն ապրանքի կամ ծառայության վերաբերյալ, ինչը կօգնի պոտենցիալ սպառողին ճիշտ որոշում կայացնել:

¹ Electronic Commerce, Gary Schneide, Course Technology, 2009, p. 5.

² Электронная торговля отправится в регионы, BFM.ru, 23 октября 2010.

- Մատակարարման շղթայի բարելավում: Եթե ավանդական առևտրի դեպքում ապրանքը սպառողին հասցնելը կարող է էական խնդիրներ առաջացնել մատակարարման հետ կապված, ապա էլեկտրոնային առևտրի դեպքում այս խնդիրը բացակայում է:
- Ապրանքի արագ դուրս բերում շուկա: Առևտրային ընկերությունների տեսանկյունից էլեկտրոնային առևտուրը զգալիորեն նվազեցնում է մարքեթինգի, հաճախորդների սպասարկման, վերամշակման հետ կապված ծախսերը, բիզնես գործընթացների վերակազմակերպման ժամանակը և բարձրացնում արտադրողականությունը:
- Սպառողների վերաբերյալ տեղեկատվության հավաքում: Սա թույլ է տալիս հավաքել և մշակել գնորդների վարքագծի հետ կապված տեղեկատվությունը, որն իր հերթին նպաստում է արդյունավետ մարքեթինգային և գովազդային ռազմավարության մշակմանն ու ընդունմանը:

Սպառողի տեսակետից էլեկտրոնային առևտրի առավելություններն են՝

- Անանունություն: Սրա էությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս գաղտնի պահել այն անձի կամ ընկերության անունը, ով էլեկտրոնային առևտրի միջոցով է ձեռք բերել համապատասխան ապրանքը կամ օգտվել է որևէ ծառայությունից:
- Ապրանքների և ծառայությունների լայն ընտրություն: Գնորդները հնարավորություն ունեն առաջարկվող ապրանքների կամ ծառայությունների լայն տեսականուց ընտրել հենց այն ապրանքը, որն իր որակական հատկանիշներով և գնով ավելի է համապատասխանում իրենց:
- Ավելի էժան ապրանքներ և ծառայություններ: Էլեկտրոնային առևտուրը հնարավորություն է տալիս սպառողներին ավելի էժան և որակյալ ապրանքներ ձեռք բերել: Էլեկտրոնային առևտրի օգնությամբ պոտենցիալ սպառողը կարող է ուսումնասիրել որոշակի արտադրանք, նույնիսկ գտնել այդ ապրանքն արտադրողին և այն ձեռք բերել շատ ավելի ցածր գնով, քան դրա համար պահանջում են վերավաճառողները:
 Էլեկտրոնային առևտրի զարգացումը նաև որոշակի խնդիրներ առաջացրեց: Մասնավորապես, պետական իշխանության համար այն խնդիրներ առաջացրեց հարկահավաքման բնագավառում:

Այսօր արդեն կարելի է հաստատ պնդել, որ էլեկտրոնային առևտրի հսկայական պոտենցիալը կարող է շատ քիչ ժամանակահատվածում էապես փոխել ողջ առևտրային համակարգը և միևնույն ժամանակ հանդես գալ որպես բիզնեսի վարման առավել արդյունավետ ձև: Էլեկտրոնային առևտրի ներուժը լիարժեք օգտագործելու համար պետք է լուծվեն մի շարք խնդիրներ: Դրանք են՝

1. Գլոբալացում: Համաշխարհային կապը կարող է բիզնեսի վարումը աշխարհի մյուս ծայրում գտնվող ընկերության հետ այնքան հեշտացնել, ինչպես եթե նա գտնվեր հարևան փողոցում: Մակայն հաղորդակցության այս միջոցը միշտ չէ որ հանդիսանում է բավարար: Ինչպե՞ս աշխարհի տարբեր ծայրերում գտնվող ընկերություններ կարող են վստահել մեկը մյուսի գոյությանը կամ նրանց կողմից առաջարկվող ապրանքների և ծառայությունների: Բացի վերոհիշյալից կա ևս մի կարևոր խնդիր, այն է՝ մշակութային և լեզվական բազմազանությունը: Ներկայումս այս խնդիրների մի մասն արդեն հաղթահարված է:
2. Պայմանագրային և ֆինանսական խնդիրներ: Այստեղ կարող են ի հայտ գալ այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ որ փուլում կարելի է երկու ընկերության միջև պայմանագիրը կնքված համարել, ինչպիսի՞ն է այդ պայմանագրի իրավաբանական կարգավիճակը, ո՞ր երկրի օրենսդրության կարգավորման տակ է այն գտնվում, ինչպե՞ս պետք է կատարվի վճարումը՝ հաշվի առնելով ֆինանսական օրենսդրության տարբերությունները, ինչպիսի՞ն պետք է լինեն հարկերը և մաքսային տուրքերը և ինչպե՞ս պետք է դրանք հավաքվեն:
3. Սեփականության իրավունքի հետ կապված խնդիրները: Էլեկտրոնային եղանակով տարածվող ապրանքները կարող են հեշտությամբ կրկնօրինակել, այդ պատճառով հատկապես սուր է դրված մտավոր սեփականության պաշտպանության խնդիրը:

4. Գաղտնիության և անվտանգության հետ կապված խնդիրներ: Էլեկտրոնային առևտրի իրականացումը բաց ցանցերով, ըստ էության, պահանջում է արդյունավետ և հուսալի մեխանիզմներ, որոնք կապահովեն վերջինիս բոլոր մասնակիցների անվտանգությունը: Այդ մեխանիզմները պետք է ապահովեն գաղտնիություն, անձնականացվածությունը և երաշխիք, որ կողմերը հետագայում չեն ժխտի իրենց մասնակցությունը գործարքին:
5. Տեղեկատվական համակարգերի համատեղելիությունը: Էլեկտրոնային առևտրի ներուժի լրիվ իրագործումը պահանջում է ունիվերսալ մուտքի իրավունք, այսինքն՝ ցանկացած ընկերություն և ցանկացած պատվիրատու պետք է մուտքի հնարավորություն ունենան այն կազմակերպությունների տեղեկատվական շտեմարաններին, որոնք առաջարկում են ապրանքներ և ծառայություններ՝ անկախ նրանց աշխարհագրական տեղից կամ նրանց տեղեկատվական համակարգերի առանձնահատկություններից: Դա իր կողմից պահանջում է ունիվերսալ չափորոշիչներ՝ դրա համար օգտագործելով միջոցների համատեղելիություն:
6. Օրենսդրության անկատարությունը: Մեր ժամանակներում տնտեսության զարգացումը կամ էլեկտրոնային առևտուրը պետք է ուղեկցվի մի շարք հիմնարար սկզբունքային փոփոխություններով՝ ներքին և միջազգային առևտրի իրավական կարգավորման ոլորտում, ինչպես միջազգային իրավունքի մակարդակում, այնպես էլ միջազգային օրենսդրության: Այս խնդրի լուծման բարդությամբ պայմանավորված էլեկտրոնային առևտրի իրավական դաշտի կարգավորման գործում շատ անկատարություններ կան, որոնք կարող են հանգեցնել կոնֆլիկտային իրավիճակների:

Այս բոլոր խնդիրները առկա են նաև ՀՀ-ում, քանի որ դեռևս համապատասխան ամուր հիմքեր չկան էլեկտրոնային առևտրի զարգացման համար՝ թե՛ իրավական և թե՛ գործնական տեսակետներից: Չնայած էլեկտրոնային առևտուրը դարձել է ժամանակակից զարգացած հասարակարգի կյանքի կարևոր բաղադրիչներից մեկը, մեր երկրում էլեկտրոնային առևտրի զարգացումը ցածր մակարդակի վրա է գտնվում, ինչը պայմանավորված է թե՛ ազգային մտածելակերպով, և թե՛ շուկայում առկա մի շարք հիմնախնդիրներով: Մեր հանրապետությունում էլեկտրոնային ձեռնարկատիրությունը գտնվում է դեռևս զարգացման փուլում, և դեռ շատ աշխատանքներ պետք է իրականացվեն այս ոլորտը զարգացնելու ուղղությամբ:

Ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ ՀՀ-ում վերջին տարիներին որոշակի առաջխաղացում է նկատվում այս բնագավառում. նոր էլեկտրոնային խանութներ են բացվել, իսկ որոշ գործող խանութներ սկսել են նաև ավանդական առևտրի հետ միաժամանակ էլեկտրոնային առևտուր իրականացնել: Քանի որ ՀՀ-ում էլեկտրոնային առևտուրը դեռևս զարգացող ոլորտ է համարվում, ուստի պետք է իրականացվեն համապատասխան միջոցառումներ, որոնք կնպաստեն այս ոլորտի նկատմամբ բնակչության հետաքրքրության բարձրացմանը:

Հաշվի առնելով վերջին տարիների ընթացքում ՀՀ-ում նկատվող տեխնիկական առաջընթացը և ինտերնետի ներթափանցումը գործունեության բազմաթիվ ոլորտներ, կարող ենք վստահաբար ասել, որ էլեկտրոնային առևտուրը մոտ ժամանակներս կդառնա առևտրի իրականացման կարևորագույն ուղղություններից մեկը: ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի զարգացմանը մեծապես խոչընդոտում է այն փաստը, որ ցածր է ինտերնետից օգտվողների թվաքանակը, իսկ հանրապետության որոշ հեռավոր մարզերում անգամ հաղորդակցության միջոց չկա:

ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի զարգացմանը մեծապես կնպաստեն նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են բնակչության մոտ ինտերնետի նկատմամբ վստահության գործոնի բարձրացումը, ինտերնետի հասանելիությունը բնակչության հնարավորինս լայն շրջանակներին, ինչպես նաև համապատասխան մասնագետների թվի շարունակական աճը:

**ՃՈՂԱԺԱՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՉՂԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԶՅՈՒՄ**

ՃՈՂԱԺԱՄԻ սոցիալական ազդեցությունը ներկայացնելու տարածված եղանակներից է դրա տնային տնտեսությունների վրա ազդեցությունը գնահատող «փոխանցման ուղիները» (ՃՈՂԱԺԱՄԻ սոցիալական ազդեցություն), որոնք առավել առարկայական տեսք են ստանում համապատասխան սոցիալ-տնտեսական ցուցանիշների արձանագրած միտումները բացահայտելիս¹: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հստակեցնել փոխանցման ուղիները, որոնց միջոցով ՀՀ-ում ՃՈՂԱԺԱՄԻ ունեցել է սոցիալական ազդեցություն, իսկ դա համար անհրաժեշտ է որոշել, թե ՀՀ-ում ՃՈՂԱԺԱՄԻ ո՞ր տեսակը կամ տեսակներն են արձանագրվել: Ըստ Ռեյնհարթի և Ռոգոֆֆի (2009թ.) սահմանման² ՀՀ-ում արձանագրվել է արժուրթային ՃՈՂԱԺԱՄԻ: Հետևաբար՝ պետք է դիտարկել արժուրթային ՃՈՂԱԺԱՄԻ սոցիալական ազդեցությունը տարածող «փոխանցման ուղիները»:

Արժուրթային ՃՈՂԱԺԱՄԻ ունեցած երկրների սոցիալական ազդեցության գնահատման հաջող օրինակներ են համարվում Պերնիայի և Նոլզի (1998թ.)³, ինչպես նաև Վանի⁴ և այլոց (2009թ.) աշխատությունները: Պերնիան և Նոլզն առանձնացնում են 5 սոցիալական ազդեցության տարածման փոխանցման ուղի՝ աշխատանքի շուկա (ներքին և արտաքին), գներ, ակտիվներ, վարկեր և պետական բյուջե: Իսկ ամեն փոխանցման ուղին, իր հերթին իր ազդեցությունն է թողնում եկամուտների բաշխման և աղքատության մակարդակի վրա, մարդկային կապիտալի վրա (կրթություն, առողջություն, ինչպես նաև վերարտադրողական առողջության վրա): Մյուս կողմից փոխանցման ուղիների միջոցով ըստ հեղինակների արժուրթային ՃՈՂԱԺԱՄԻ իր ազդեցությունն է թողնում սոցիալական կապիտալի (հանցագործություններ և բռնությունների մակարդակ, համայնքային համագործակցություն և մասնակցություն) և շրջակա միջավայրի վրա: Իսկ Վանը և այլոք որպես ՃՈՂԱԺԱՄԻ ազդեցություն տնային տնտեսությունների վրա առանձնացնում են տնային տնտեսությունների և զբաղվածության փոփոխությունը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է աղքատության մակարդակի աճ, տնային տնտեսությունների կողմից ծախսերի կրճատում հանրակրթական ուսման, ինչպես նաև առողջության վրա: Այս փոփոխության հետևանքով սնուցման, կրթության և առողջության հետ կապված խնդիրներ են առաջանում:

Հայաստանի պարագայում լավագույն օրինակներն են համարվում Համաշխարհային բանկի զեկույցը (2010թ.)⁵ և ՄԱԿ-ի ՀՊԾ-ի պարենային անվտանգության վերլուծությունը (2009թ.)⁶: ՄԱԿ-ի ՀՊԾ-ի պարենային անվտանգության վերլուծությունը Հայաստանի պա-

¹ Տնտեսական փոփոխականների փոփոխությանը զուգահեռ ներկայացվում են հարցումների արդյունքում ստացված առաջնային տվյալները, կամ էլ հարցման արդյունքները:
² Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). This Time is Different: Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, p. 6 (463p).
³ Pernia, Ernesto and Knowles, James C. (1998), “Assessing the Social Impact of the Financial Crisis in Asia”, ADB Economics and Development Resource Center EDRC Briefing Notes Number 6, Manila Philippines: Asian Development Bank, 16p. http://www.adb.org/Documents/EDRC/Briefing_Notes/BN006.pdf (last accessed: October 12, 2011).
⁴ Wan, Guanghua; Francisco, Ruth. (2009), “How Is the Global Recession Impacting on Poverty and Social Spending? An ex ante assessment methodology with applications to developing Asia”, ADB Sustainable Development Working Paper Series No 8, Manila, Philippines: Asian Development Bank, 30p. <http://www.adb.org/Documents/Papers/ADB-Working-Paper-Series/ADB-WP08-Global-Crisis-Impact-Poverty.pdf> (last accessed: October 12, 2011).
⁵ The World Bank, (2010) ARMENIA: The 2008–09 Global Economic Crisis, Policy, Responses, and Household Coping Strategies, Report No. 55011-AM, Human Development Sector Unit, Europe and Central Asia Region. http://siteresources.worldbank.org/ARMENIAEXTN/Resources/Global_Economic_Crisis_Policy_2008_09.pdf (last accessed: October 12, 2011).
⁶ WFP Food Security Analysis (2009) Rapid Assessment of the Impact of the Global Financial Crisis in Armenia, Yereavan: WFP Armenia, 12-18pp (45p) <http://home.wfp.org/stellent/groups/public/documents/ena/wfp205566.pdf> (last accessed: October 12, 2011).

րագայում առանձնացնում է ճգնաժամի սոցիալական ազդեցության տարածման 5 փոխանցման ուղի՝ արտահանումը և օտարերկրյա կապիտալի ներհոսքը, գների փոփոխությունը և գնաճը, աշխատանքի շուկան և զբաղվածությունը, դրամական փոխանցումները և միգրացիան, ինչպես նաև պետությունների ծախսերը և սոցիալական ապահովությունը: Այնուհետև, այս փոխանցման ուղիները տնային տնտեսությունների կողմից որդեգրած գոյատևման ռազմավարությունների միջոցով ազդում են սնուցման, պարենային անվտանգության վրա (թերսնուցման դեպքեր են ի հայտ գալիս), սահմանափակվում են տնային տնտեսությունների ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունները, ինչպես նաև սոցիալական խնդիրների աճ է արձանագրվում: Իսկ Համաշխարհային բանկն առանձնացրել է 3 ճգնաժամի սոցիալական ազդեցության տարածման ամենակարևոր փոխանցման ուղիները՝ աշխատանքի շուկաները, միգրացիայի նվազում և դրամական փոխանցումների կրճատում, ինչպես նաև գների փոփոխությունը և արտարժույթի փոխարժեքի կայունությունը: Այս փոխանցման ուղիներն իրենց հերթին հանգեցնում են տնային տնտեսությունների եկամուտների, սպառողական ծախսերի փոփոխությանը, ինչպես նաև ազդում են աղքատության մակարդակի և եկամուտների բաշխման վրա:

Տարբեր երկրների համար սոցիալական ազդեցության գնահատման մոտեցումներն ինչպես Հայաստանի և այլ երկրների պարագայում առաջարկում են ոչ ամբողջական եղանակ՝ հստակ ճգնաժամի սոցիալական ազդեցության շղթա: ՀՀ-ի համար լավագույն մոտեցումն (ազդեցության գնահատման մեխանիզմ) են առաջարկել և այդ մոտեցմամբ փորձել են տալ ճգնաժամի սոցիալական ազդեցության ամբողջական պատկերը Վ. Խաչատրյանը և Ա. Մակարյանը (2011թ.)¹: Առաջարկվող մոտեցումը² հանդիսանում է Փերնիայի և Նոլզի (1998թ.), ՀԲ-ի (2010թ.), Վանի և Ֆրանցիսկոյի (2009թ.), ինչպես նաև ՄԱԿ-ի ՀՊԾ-ի (2009թ.) կողմից առաջարկված մոտեցումների սինթեզը (տե՛ս գծապատկեր 1): Վերը նշված մոտեցումներից, Խաչատրյանի և Մակարյանի կողմից առաջարկվող մոտեցման առավելությունը կայանում է նրանում, որ այն սոցիալական ազդեցությունը դիտարկում է տնային տնտեսությունների բարեկեցության փոփոխության տեսանկյունից, և հանդիսանում է ճգնաժամի փոխանցման և ազդեցության տարածման ամբողջական շղթան: Նշված մոտեցումը չի դիտարկում սոցիալական կապիտալի, ինչպես նաև շրջակա միջավայրի փոփոխությունը, քանի որ այս մոտեցման հիմքում տնային տնտեսությունների բարեկեցությունն է ընկած:


Առաջարկվող մոտեցման առավելություններից մեկը նաև արժութային ճգնաժամին հատուկ սոցիալական ազդեցության տարանջատումն է երկու ազդեցության՝ ուղղակի ազդեցությունը դրանից անմիջապես բխող ազդեցությունից (աժանցյալ ազդեցություն): Առանձնացվում է 6 արժութային ճգնաժամի սոցիալական ազդեցության տարածման փոխանցման ուղի, ինչպես նաև առաջարկվում են համապատասխան ցուցանիշների (տնտեսական փոփոխականների) ցանկ (ավելի լայն շրջանակ, քան մյուս մոտեցումներն են առաջադրում), որոնց փոփոխության միջոցով, ամեն ուղին ուղղակիորեն ազդում է տնային տնտեսությունների բարեկեցության վրա: Ներկայացվել են այն ցուցանիշների ցանկը (տնտեսական փոփոխականներ), որոնց փոփոխությունը հանգեցնում է տնային տնտեսությունների բարեկեցության վրա ուղղակիորեն ազդող տնտեսական փոփոխականների կամ ցուցանիշների փոփոխության (ավելի լայն շրջանակ), որի շնորհիվ արձանագրվում է տնային տնտեսությունների բարեկեցության փոփոխություն: Իսկ փոխանցման ուղիներն հետևյալն են՝ ներքին աշխատանքի շուկան, գները, ակտիվները, կառավարության եկամուտներ, օտարերկրյա աշխատանքի շուկաներ:

¹ Խաչատրյան Վ., Մակարյան Ա., «Բաց հասարակության հիմնադրամ-Հայաստան» հիմնադրամ, (2011թ.) «Ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի վրա՝ սոցիալական ազդեցություն», Երևան, 79 էջ, գեկուցը պատրաստավել է «Բաց հասարակության հիմնադրամ-Հայաստան» հիմնադրամի դրամաշնորհի միջոցով:

² Նույն տեղում, էջ 8-10:

Ճգնաժամի փոխանցման մեխանիզմները և սոցիալական ազդեցությունները տնային տնտեսությունների վրա

335



Աղբյուր՝ Խաչատրյան Վ., Մակարյան Ա., «Բաց հասարակության հիմնադրամ-Հայաստան» հիմնադրամ, (2011թ.) «Ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի վրա՝ սոցիալական ազդեցություն», Երևան, էջ 10, գեկուցը պատրաստվել է «Բաց հասարակության հիմնադրամ-Հայաստան» հիմնադրամի դրամաշնորհի շրջանակում:

Որպես տնային տնտեսությունների բարեկեցության վրա ազդող ուղղակի (անմիջական) սոցիալական ազդեցություն դիտարկվում են տնային տնտեսությունների եկամուտների, սպառողական ծախսերի, ինչպես նաև աղքատության մակարդակի փոփոխությունը: Այս անմիջական փոփոխությունները դրդում են տնային տնտեսություններին համապատասխան ճգնաժամի հաղթահարման ռազմավարություններ որդեգրել, որի հետևանքով ծագում է ածանցյալ (նախորդից անմիջականորեն բխող) սոցիալական ազդեցությունը տնային տնտեսությունների վրա: Որպես բացասական ազդեցություն հանդես են գալիս՝ թերսնուցման դեպքերի աճը, կրթության վրա կատարվող ծախսերի կրճատումը կամ դադարեցումը, առողջության հետ կապված փոփոխություններ:

Այսպիսով՝ առաջարկվող եղանակը ներառում է ճգնաժամի սոցիալական ազդեցության տարածման լրիվ շղթան, որի հիմքում տնային տնտեսությունների բարեկեցության փոփոխությունն է և դրանից բխող հետևանքները: Մոտեցումն առաջարկում է ճգնաժամի սոցիալական ազդեցության փոխանցման ուղիների, ինչպես նաև այդ ուղիները բնութագրող ցուցանիշների փոփոխության միջոցով տնային տնտեսությունների բարեկեցության վրա ազդող փոփոխականների կամ ցուցանիշների ավելի լայն շրջանակ, որոնց փոփոխությունը հանգեցնում է տնային տնտեսությունների բարեկեցության փոփոխությանը: Այս մեխանիզմը կարող է կիրառվել ներկա արժույթային ճգնաժամի երկարաժամկետ ազդեցությունը դիտարկելու համար, ինչպես նաև հետագայում ՀՀ-ում արժույթային ճգնաժամի կրկնվելու դեպքում՝ սոցիալական ազդեցությունը գնահատելու համար:

ՆԱԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*ՆԳԱՍ Մ. Զոհանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ

Մարդկությունն իր զարգացման ներկայիս փուլում գտնվում է տեղեկատվական դարաշրջանում, որին բնորոշ են փոփոխությունների հսկայական արագություններ և դրա հետ կապված մեծ հնարավորություններ և վտանգներ: Արդեն իսկ հսկայական ծավալներով տվյալների հավաքագրման արագությունները մի քանի անգամ գերազանցում են տնտեսության զարգացման աճը: Հաշվողական տեխնիկայի և հեռահաղորդակցության միջոցների սրընթաց զարգացումը, հսկայական քանակությամբ տվյալների կուտակումը, տվյալների փոխանցման բարձր արագությունները ձևավորել են նոր հասկացություն՝ գլոբալ տեղեկատվական հասարակություն¹:

Գլոբալ տեղեկատվական հասարակության համար տեղեկատվությունը դիտարկվում է որպես ռեսուրս, որը միշտ գոյություն է ունեցել, բայց երբևէ չի դիտարկվել որպես տնտեսական կատեգորիա, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դեպքում այդ ռեսուրսը դառնում է նոր տեղեկատվական արտադրանք կամ տեղեկատվական ծառայություն՝ սերտաճելով բիզնեսի կազմակերպման ժամանակակից համակարգերի հետ:

Բիզնեսի զարգացման հիմնական նախապայմաններից են հնուտ ղեկավարումը, անձնակազմի արդյունավետ աշխատանքի ապահովումը, բիզնես-գործընթացների նախագծումը և իրականացումը, կազմակերպչական և տնտեսական գործունեության խելացի կազմակերպումը ու մշտական մոնիթորինգը: Ժամանակակից բիզնեսը ղեկավարելու համար պետք է կարողանալ ղեկավարել ներքին և արտաքին մեծամասշտաբ քանակով տվյալներն ու տեղեկատվությունը, ունենալ այնպիսի հմտություններ և հնարավորություններ, որոնք թույլ

¹ Грабауров В.А., Информационные технологии для менеджеров, М., Финансы и статистика, 2001.

կտան ստացված տեղեկատվությունը օգտագործել կառավարչական ճիշտ որոշումներ կայացնելու համար:

Դժվարությունը կայանում է նրանում, որ մարդկությունը անընդհատ ավելացնում է տեղեկատվության ծավալները, և դա 21-րդ դարի առանձնահատկություններից է: Այս փոփոխությունները զգալիորեն ազդեցին բիզնեսի վրա, տեղեկատվական տեխնոլոգիաները փոխեցին աշխատելու ձևը և հիմք ստեղծեցին նոր և մրցունակ էլեկտրոնային բիզնեսի համար: Ելակետը կարելի է համարել 1957 թվականը, երբ ԱՄՆ-ում տեղեկատվական ոլորտում աշխատողների թիվը հավասարվեց արտադրությունում աշխատողների թվին¹:

Այսօր կազմակերպությունների համար դժվար է պահպանել արժեքավոր տեղեկատվություն, իսկ լինել նրա միակ տիրապետողը՝ գրեթե անհնարին է: Մյուս կողմից՝ տեղեկատվական հասարակությունը արտադրում է բիզնեսի համար օգտակար և կարևոր տվյալներ, որոնք կարելի է ազատ ձեռք բերել և օգտագործել գործունեության արդյունավետության բարձրացման համար: Շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպությունը ներքին և քաղաքական արտաքին աղբյուրներից ստանում է շատ կարևոր գործնական և տնտեսական տեղեկատվություն:

Տեղեկատվության արտաքին և ներքին հոսքերի հիման վրա որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ են ճշգրիտ վերլուծված տվյալներ: Արտաքին տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը կազմակերպության մարքեթինգի գլխավոր գործառնություններից է, իսկ ներքին տեղեկատվությունը, որպես կանոն, հիմնվում է կառավարչական հաշվառման վրա:

Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը կազմված է անընդմեջ բիզնես-գործընթացներից, ընդ որում՝ ֆինանսական գործունեությունը ներառում է ներդրումային, վարկային, հարկային, ապահովագրական և այլ գործառնություններ, իսկ տնտեսականը՝ մատակարարում, արտադրություն և իրացում: Կազմակերպության ռեսուրսները ներառում են միջոցներ, հնարավորություններ, արժեքներ, եկամտի աղբյուրներ, որոնք ապահովում են կազմակերպության կայուն գործընթացը և շահույթը: Ցանկացած կազմակերպության նյութական, ֆինանսական, վարչական, աշխատանքային, տեղեկատվական և մտավոր հիմնական ռեսուրսները կազմում են համապատասխան կառավարման ենթակա հոսքեր:

Կարևոր է հաշվի առնել այն փաստը, որ կազմակերպության տեղեկատվական և հաղորդակցման հոսքերը օգտագործվում են ամբողջ հոսքերի արդյունավետ ղեկավարման համար և աջակցում են կառավարչական որոշումների համակարգի աշխատանքին: Կառավարչական որոշումների աջակցման համակարգերի մշակման և ներդրման նպատակը կազմակերպության ղեկավարներին մեթոդաբանական և տեղեկատվական աջակցությամբ ապահովումն է:

Կազմակերպության ողջ կառուցվածքը իր գործունեության ընթացքում աշխատանքի է բերվում բոլոր տեղեկատվական հոսքերով և հանդիսանում է կազմակերպության տեղեկատվական համակարգ, որը գործի է դրվում ողջ տեղեկատվական, փաստաթղթային հոսքերի միջոցով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ փոխվել է նաև ավտոմատացված տեղեկատվական համակարգերի (ԱՏՀ) օգտագործման մոտեցումները (աղյուսակ 1): Ներկայումս լայն տարածում են ստացել բիզնեսի համար նախատեսված ԱՏՀ-ները, որոնցից ամենահայտնին կառավարչական որոշումների աջակցման ԱՏՀ-ն է:

Որոշումների աջակցման ԱՏՀ-ներին բնորոշ են մի շարք կարևոր առանձնահատկություններ՝ կողմնորոշում դեպի կազմակերպության ղեկավարը, «Top Down» համակարգի կառուցվածք, տվյալների գրանցում գեներացման վայրում, կատարողների կողմից անհրաժեշտ տվյալները ղեկավարությանը փոխանցելու հնարավորություն, բոլոր հետաքրքրված սպառողներին տեղեկատվության հասանելիություն և այլն: Որոշումների աջակցող համակարգերը ինտերակտիվ համակարգեր են՝ նախատեսված միջին կամ բարձր մակարդակի ղեկավարների համար: Դրանք ներառում են այնպիսի տվյալներ և մոդելներ, որոնք կառավարչին օգնում են լուծել բիզնեսին վերաբերող, հատկապես հստակ կառուցվածք չունեցող խնդիրները: Համակարգի հիմքում ընկած մոդելը կարող է լինել ինչպես պարզ, այնպես էլ համալիր:

¹ Граничин О.Н., Киев В.И., «Информационные технологии в управлении», Бином, 2008.

Տեղեկատվական համակարգերի զարգացման փուլերը¹

Ժամանակաշրջան	Տեղեկատվական համակարգերի տեսակները	Կիրառման նպատակը	Սարքավորումներ
1950-1960թթ.	Փաստաթղթերի մշակում էլեկտրամեխանիկական և հաշվապահական մեքենաներով	Տվյալների մուտքագրում և աշխատավարձի հաշվարկում	Առաջին սերնդի IBM
1960-1970թթ.	Տեղեկատվական համակարգեր արտադրական տվյալների համար	Հաշվետվությունների պատրաստում	IBM/360
1970-1980թթ.	Կառավարչական հսկման համակարգեր (իրացում)	Առավել իրատեսական որոշումների մշակում	Անհատական համակարգիչներ
1980-2000թթ.	Ռազմավարական տեղեկատվական համակարգեր	Գործունեության արդյունավետության բարձրացում	Տեղեկատվական համակարգերի ձևավորում
2000-2010 թթ.	Կորպորատիվ տեղեկատվական համակարգեր	Համալիր լուծումներ	Տեղեկատվական համակարգերի բազմազանություն

Որոշումների աջակցման ԱՏՀ-ները նախատեսված են հնարավորություններ ընձեռելու, ոչ թե պարզապես տեղեկատվական պահանջմունքները բավարարելու համար: Դրանք մասնագիտացված են ըստ առանձնահատուկ, հերթերի ձևավորման, գնահատման և այլ տիպի որոշումների կայացման աջակցության: Որոշումների աջակցման ԱՏՀ-ները վերջնական օգտագործողին տվյալների և գործիքային միջոցների կառավարման հնարավորություն են տալիս, ճկուն են և արագ, հիմնվում են պրոֆեսիոնալ վերլուծության և նախագծման վրա, իսկ ելքային տվյալները պատկերվում են մոդելների, ծրագրերի և գրաֆիկայի տեսքով:

Դեկլարները գործունեության ընթացքում առնչվում են տարբեր տեսակի խնդիրներ լուծելու և որոշումներ կայացնելու հետ: Կապված խնդրի բնույթի հետ՝ որոշումները լինում են կառուցվածքային (ենթակա են ծրագրավորման), թույլ կառուցվածք ունեցող և կառուցվածք չունեցող: Ուսումնասիրվող համակարգերը նախատեսված են թույլ կառուցվածք և կառուցվածք չունեցող կիրառական վերլուծության համար² և կարող են օգտագործվել ընկերության տարբեր մակարդակներում: Միսալ է ենթադրել, որ մեծ կազմակերպություններում որոշումները կայացվում են միայն առանձին անհատների կողմից: Իրականում որոշումների մեծ մասը կոլեկտիվ է ընդունվում, քանի որ խոշոր կազմակերպությունում որոշումների կայացումը, ըստ էության, խմբային գործընթաց է և որոշումների աջակցման ԱՏՀ-ները կարող են նախատեսված լինել խմբի կողմից որոշումների կայացումը հեշտացնելու համար:

Որոշումների աջակցման ԱՏՀ-ները լայն կիրառություն ունեն ֆինանսական վերլուծությունների իրականացման համակարգերում: Բազային մոդելի արդյունքներն ուսումնասիրելուց հետո կառավարիչն իրականացնում է «Ինչ կլինի, եթե» տիպի հետազոտություն՝ փոխելով մեկ կամ մի քանի մուտքային տվյալները, որպեսզի որոշվի դրանց ազդեցությունը ելքային տվյալների վրա: Օրինակ՝ կառավարիչը կարող է հետազոտել շահութաբերության ցուցանիշի փոփոխությունը, եթե արտադրանքի վաճառքի ծավալը աճի տարեկան 15 %-ով:

Որոշումների աջակցման ԱՏՀ-ների հիմնական հնարավորություններն են.

- օրինակների վերլուծություն (case analysis)՝ ելքային մեծությունների գնահատում մուտքային ֆիքսված փոփոխականների հիման վրա,
- պարամետրական վերլուծություն (ինչ կլինի, եթե)՝ ելքային մեծությունների գնահատում՝ մուտքային արժեքների փոփոխության դեպքում,
- հնարավորությունների վերլուծություն՝ մուտքային փոփոխականի այն արժեքների որոշում, որոնք ապահովում են ցանկալի վերջնական արդյունք,
- տվյալների վերլուծություն՝ նախօրոք ունեցած տվյալների ուղղակի մուտքագրում մոդել և կանխատեսում,

¹ Дзюбенко А.Л., Информационные системы в экономике.

² Meskon M., Albert M., Fundamentals of management.

- ռիսկի վերլուծություն՝ մուտքային մեծությունների պատահական փոփոխությունների դեպքում ելքային փոփոխականների գնահատում,
- օպտիմալացում՝ կառավարվող մուտքային փոփոխականների այնպիսի արժեքների որոնում, որոնք ապահովում են լավագույն արդյունք:

Այսպիսով՝ ժամանակակից պայմաններում տեղեկատվական տեխնոլոգիաները և դրանց հիման վրա ստեղծված տեղեկատվական համակարգերը դարձել են անփոխարինելի գործիք կազմակերպության կայուն զարգացման և մրցակցային առավելությունների ապահովման համար: Տեղեկատվական համակարգերը կարճ ժամանակահատվածում դարձան կառավարիչների աշխատանքի անհրաժեշտ գործիք:

Վերջին տարիներին կտրուկ աճել է նաև հայկական կազմակերպությունների հետաքրքրությունը այնպիսի տեղեկատվական համակարգերի նկատմամբ, որոնք համալիր մոտեցում են ապահովում կազմակերպության ղեկավարմանը և կառավարչական որոշումների աջակցմանը: Միաժամանակ՝ ընդլայնվում են միջազգային տնտեսական համագործակցության շրջանակները, Հայաստանն ինտեգրվում է համաաշխարհային տնտեսությանը և պետք է համապատասխանի կառավարման միջազգային ստանդարտներին, ինչը նախատեսում է նաև վերը նշված համակարգերի մշակում, ստեղծում և կիրառում:

ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, ր. գ. թ.*

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Վերջին 3 տարիների ընթացքում գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամը լայն քննարկումների առարկա է դարձել, ինչի մասին են վկայում հազարավոր հրապարակումներն ու աշխատությունները: Առավել տարածված կարծիքի համաձայն ճգնաժամը սկիզբ առավ ֆինանսական համակարգում, որից հետո իր ազդեցությունը տարածեց տնտեսության մնացած բոլոր ճյուղերի վրա՝ դրանով իսկ ֆինանսական ճգնաժամից վերածվելով ֆինանսատնտեսական ճգնաժամի: Իհարկե, ճգնաժամի բոլոր պատճառներն ու գործոնները դեռևս բացահայտված չեն, և մեր կարծիքով դրա հիմքում ընկած գործոնները շատ խորքային են, որոնք կուտակվել են տարիների ընթացքում՝ այդպիսով ավելի զառիթափ դարձնելով շուկայական տնտեսություններին բնորոշ ցիկլային անկումը:

Ֆինանսական ճգնաժամի հետևանքների և ստեղծված նոր տնտեսական իրականության քննարկումը ավելի արգասաբեր կլինի ըստ տնտեսության ճյուղերի, ոլորտների կամ բնագավառների իրականացնելու դեպքում: Մեկը մյուսի ետևից տպագրված բազմաթիվ հոդվածներում և այլ աշխատություններում անդրադարձ է կատարվում տնտեսության տարբեր ճյուղերում ֆինանսական ճգնաժամի ազդեցությանը, հետևանքներին, առաջացման պատճառներին և հաղթահարման հիմնական ուղիներին: Սույն հոդվածում մենք կփորձենք նկարագրել և վերլուծել ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը էլեկտրոնային ձեռնարկատիրության զարգացման վրա:

Ընդհանուր առմամբ էլեկտրոնային ձեռնարկատիրության վրա ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության վերաբերյալ տեսակետները հիմնականում բաժանվում էին երկու հակադիր խմբերի: Եթե առաջին ուղղության կողմնակիցները պնդում են, որ ճգնաժամը խիստ բացասական ազդեցություն կունենա էլեկտրոնային ձեռնարկատիրության վրա, ապա մյուսներն այն կարծիքին էին, որ սկսված ճգնաժամը կարող է շահույթի ավելացման և բիզնեսի ընդլայնման նոր հնարավորություններ ստեղծել էլեկտրոնային ձեռնարկատիրությանը զբաղվող ձեռնարկատերերի համար: Հետաքրքիր է, որ ձեռնարկատիրության այս

ուղորտի վերաբերյալ բացասական կանխատեսումների կողմնակիցներն ավելի հիմնավոր և մեծաթիվ փաստարկներ էին ներկայացնում: Դրանց շարքում կարևորագույններից են.

1. Ֆինանսական ճգնաժամը աստիճանաբար վերափոխվեց տնտեսականի, այժմ այն ոչ միայն շոշափում է բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, այլ նաև տնտեսության մյուս ճյուղերը, այդ թվում նաև արտադրությունը: Նման պայմաններում անհմաստ է ենթադրել, որ ճգնաժամային երևույթները չեն անդրադառնա էլեկտրոնային ձեռնարկատիրության վրա:
2. Բնակչության գնողունակության անկման հետևանքով մարդիկ կաշխատեն ծախսել իրենց փողերը միայն առաջին անհրաժեշտության իրերի վրա, կխուսափեն թանկարժեք գնումներից (ավտոմեքենա, բնակարան, տեխնիկա և այլն) և հանգստին տրամադրվող ծախսերից: Հետևաբար էլեկտրոնային ձեռնարկատիրության անկումը նույնպես անխուսափելի է:
3. Վաճառքների ծավալը ինչպես սովորական, այնպես էլ ինտերնետ խանութներում կնվազի: Նույնիսկ տրամադրվող վարկերը ի վիճակի չեն լինի փրկել դրությունը, քանի որ նախ և առաջ բանկերը բավականին խստացրել են վարկի տրամադրման պայմանները, և հետո՝ շատ քաղաքացիներ մշտական աշխատանքի հույս չունենալով ուղղակի կիրաժարվեն վարկ վերցնել: Հետևաբար վստահորեն կարելի է պնդել, որ ոչ միայն կիջնի իրական, այլ նաև տեղեկատվական ապրանքի նկատմամբ պահանջարկը, որից էլ գոյանում է ցանցում ձեռնարկատիրական գործունեություն ծավալողների եկամուտների մեծ մասը:
4. Ձեռնարկատերերը կսկսեն կրճատել գովազդի բյուջեն, ինչն էլ կառաջացնի գովազդից ստացվող եկամուտների նվազեցում: Իսկ, քանի որ ինտերնետային նախագծերից շատերի դրամայնացման հիմքում ընկած է գովազդից ստացվող եկամուտը, ոլորտում ակտիվության նվազումն անխուսափելի է:
5. Կկրճատվեն նոր կայքերի նախագծման և առաջխաղացման ապահովման պատվերները, ինչն էլ իր հերթին կհանգեցնի ծրագրավորողների և առաջխաղացման մասնագետների եկամուտների նվազման:
6. Նման պայմաններում ինտերնետային խանութները ստիպված կլինեն կրճատել մարքեթինգային և աշխատակազմի ծախսերը, վերանայել ընթացիկ գովազդային քաղաքականությունը, օպտիմալացնել բիզնես գործընթացները, ինչը արդյունքում շրջապտույտի էֆեկտ կունենա:
7. Ֆինանսական ճգնաժամի պայմաններում ներդրումների ներգրավման հնարավորությունների նվազման, բանկային վարկի տոկոսադրույքների աճի հետևանքով շատ ցածր եկամտաբերություն ունեցող ինտերնետ նախագծեր կդադարեն իրենց գործունեությունը, և այլն:

Հակադիր ճամբարի, այսինքն ձեռնարկատիրության այս ոլորտի վերաբերյալ դրական կանխատեսումների կողմնակիցների պնդումները պակաս տրամաբանական չեն, և առաջին հայացքից պակաս համոզիչ չեն: Դրանցում առանձնահատուկ դեր են խաղում.

1. ավանդական բիզնեսը իր նախապատվությունը կտա ինտերնետում գովազդային քաղաքականություն վարելուն, քանի որ այն առավել մատչելի է և կարող է ավելի լայն մասսայականություն վայելող լսարան ունենալ,
2. բազմաթիվ ձեռնարկատերեր իրենց ապրանքներով կաշխատեն դուրս գալ ինտերնետ խանութների շուկա, քանի որ դա միակ խելամիտ միջոցը կլինի խնայել առևտրային տարածքների վարձակալության և ձեռքբերման վրա ծախսվող գումարները:
3. կավելանան ինտերնետ ծրագրավորվողներ և կայքերի առաջխաղացման մասնագետների ծառայություններից օգտվողների քանակը:
4. կապիտալ ներդրումների ցածր մակարդակի պայմաններում բազմաթիվ ներդրողներ իրենց ուշադրությունը կսեռեն ինտերնետային նախագծերին, քանի որ դրանցում ներդրումների ծավալը համեմատաբար պակաս է,
5. ճգնաժամի պայմաններում գործազրկության մակարդակի աճի հետևանքով կաճի ինտերնետ լսարանը, հետևաբար նաև պոտենցիալ հաճախորդների թիվը,
6. վերջին տարիներին էներգալիզմների գների անընդհատ տատանումները լուրջ խոչընդոտ

են հանդիսանում ներդրումային նախագծերի ռիսկայնության գնահատման համար, իսկ էլեկտրոնային ձեռնարկատիրությունն այս առումով առանձնապես կախում չունի դրանցից, և այլն:

Դրական տեսակետի կողմնակիցները վստահորեն պնդում են, որ ճգնաժամի տարիներին ինտերնետ բիզնեսը կհայտնվի առաջատար դիրքերում և ճգնաժամը առողջացնող ազդեցություն կունենա ոլորտի ընդհանուր արդյունավետության վրա: Հարկ է նշել, որ հետճգնաժամային զարգացումները ցույց են տալիս, որ ձեռնարկատիրության այս տեսակի զարգացման մինչճգնաժամային դրական միտումները ավելի արագ վերականգնվելու նշաններ են ցույց տալիս, քան տնտեսության մյուս հատվածներում:

Այսպիսով՝ մասնագետները տարբեր կերպ էին գնահատում էլեկտրոնային ձեռնարկատիրության աճի սպասվող տեմպերը: Նման իրավիճակն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ ամբողջովին հնարավոր չէ վստահ լինել այս ոլորտում ներդրումների վերաբերյալ տեղեկատվության և վիճակագրական տվյալների հավաստիության մեջ: Բանն այն է, որ նման տեղեկատվությունը ստացվում է «ներքին խաղացողներից», որոնք հաճախ սեփական շահադիտական նպատակներով խեղաթյուրում են այն: Կայացած էլեկտրոնային ձեռնարկատիրության ոլորտ ունեցող երկրներում վերջին տարիներին նորաստեղծ ինտերնետ նախագծերում ներդրումների ծավալի աճը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ պետությունը, միջին և խոշոր բիզնեսի ներկայացուցիչները շահագրգռված էին ներդրումներ կատարել իրենց գործունեության ոլորտները և իրացման ուղիների տարբերակման նպատակով:

Էլեկտրոնային ձեռնարկատիրության կարգավորման մասին շատ է խոսվում: Շատ է խոսվում ոչ միայն այն պատճառով, որ ձեռնարկատիրության այս տեսակը ժամանակակից բարձր տեխնոլոգիական զարգացման արդյունք է և դրա մասին խոսելը նորաճ է, այլ այն պատճառով, որ ոլորտի ներկա վիճակը և հետագա զարգացումների հեռանկարը լրջագույն մրցակից է ձեռնարկատիրության ավանդական տեսակների համար, և բացի այդ, բազմակի անգամ ավելի դժվար կարգավորվող, եկամուտների թաքցման և հարկերից խուսափելու հիանալի և գրեթե կատարյալ ուղիներ է առաջարկում: Նման իրավիճակը կարող է հանգեցնել պետական գանձարան դրամական հոսքերի այնպիսի նվազման, որը վտանգ կարող է առաջացնել պետության՝ իր ստանձնած պարտավորությունների իրականացման տեսակետից: Էլեկտրոնային ձեռնարկատիրության կարգավորման դաշտի և գործիքների ներկայացված իրավիճակը բնորոշ է թե՛ զարգացած, թե՛ զարգացող, թե՛ հետանցումային և թե՛ անցումային տնտեսությամբ երկրներին, պարզապես որքան տնտեսությունը զարգացած է, այնքան ավելի ակնառու են նման չկարգավորվածության հետևանքները:

Արդյունավետ կարգավորման համակարգ ունենալու նպատակով, բացի օտարերկրյա երկրների փորձի ուսումնասիրությունից, օրենսդիր մարմինը պետք է պարբերական ուսումնասիրություններ անցկացնի, որպեսզի պարզի, թե հատկապես ի՞նչ օրենսդրական փաթեթ է անհրաժեշտ էլեկտրոնային ձեռնարկատիրության ոլորտում արդյունավետ գործունեություն ծավալելու նպատակով: Առանց նման խորհրդակցության անհաջող օրենսդրական նախաձեռնությունների ընդունման հավանականությունը բավականին մեծ է, քանի որ տնտեսական գործունեության այս ոլորտը շատ յուրահատուկ է, և միայն ներքին խաղացողները կարող են հուշել «արդար խաղի» լավագույն պայմանները: Եվ իզուր չէ, որ բազմաթիվ երկրներ ոլորտի կայացման փուլում այն թողել էին ինքնակարգավորման:

Միևնույն ժամանակ, էլեկտրոնային ձեռնարկատիրության ոլորտում ներգրավված սուբյեկտներն իրենք պետք է պատրաստ լինեն օգնելու պետական մարմիններին լավագույն նպատակով և արդարացի օրենսդրական նախագծեր ձեռնարկելուն, այլապես պետական մարմիններից պահանջները սահմանափակվում են տարատեսակ արտոնությունների և ֆինանսական աջակցության պահանջներով: Հստակ պետք է գիտակցել և ընդունել, որ երկրի սահմաններում իրականացվող էլեկտրոնային ձեռնարկատիրությունը պետք է ոչ թե արտոնյալ պայմաններում գտնվի, այլ հավասար հնարավորություններ ընձեռնի բիզնեսի ավանդական ձևերին զուգահեռ:

Հայաստանում էլեկտրոնային ձեռնարկատիրության կարգավորման օրենսդրություն, ըստ էության, գոյություն չունի: Կան օրենսդրության որոշ բաղադրիչներ, ինչպիսին է, օրի-

նակ, էլեկտրոնային ստորագրության մասին ՀՀ օրենքը: Գործունեության այս ոլորտի մյուս կողմերը կարգավորվում են տնտեսական գործունեության կարգավորման մյուս օրենքներով և կանոնակարգերով, կամ ընդհանրապես չեն կարգավորվում: Մինչ այժմ լուծում չեն ստացել էլեկտրոնային փողերով վճարման համակարգերի գործունեության կարգավորման բաղադրիչները, անցանկալի էլեկտրոնային հաղորդագրություններից (սպամից) պաշտպանվելու մասին օրենսդրական դաշտը, ինտերնետ միջավայրում հեղինակային իրավունքի պաշտպանության խնդիրները, և այլն: Կարգավորված չէ նույնիսկ ինտերնետ կայքերի կարգավիճակի հարցը, դրանցում գեներված տեղեկատվության պաշտոնական կարգավիճակի հարցը: Հարկ է նշել նաև, որ այսօր Հայաստանում գործնականորեն հնարավոր չէ նոտարական վավերացում ստանալ ինտերնետային էջի համար, ինչը մի շարք խնդիրներ կարող է ստեղծել ամենատարբեր դատական և ոչ դատական վեճերում: Կարգավորված չէ անգամ ինտերնետ կայքերում տեղադրվող գովազդային վահանակների բովանդակության վերահսկողության հարցը: Ցավալի է, բայց շրջանառություն մտցված գովազդի մասին նոր օրենքի նախագծում անգամ այս մասին որևէ դրույթ ամրագրված չէ: Նման իրավիճակի լուծման ուղղությամբ լուրջ քայլեր չեն արվում ոչ պետական առյանների և ոչ մասնավոր հատվածի կողմից: Նման անտարբերության պատճառներից են, մի կողմից, համապատասխան, կոմպետենտ կադրերի պակասն է կամ բացակայությունը, մյուս կողմից «ստատուս քվոյի»¹ ոլորտում ներգրավված մասնակիցներին ձեռնառու լինելը:

Սակայն նման «ստատուս քվոյի» պահպանումը՝ առանց համապատասխան օրինական հիմքի, ոչ միայն խիստ վտանգավոր է, այլև կարող է արգելակել ոլորտի հետագա զարգացումը, քանի որ խոշոր մասնակիցները կարող են խուսափել լուրջ ներդրումներ իրականացնելուց: Հավանաբար սա է նաև պատճառներից մեկը, որ հայկական միակ «idram» էլեկտրոնային փողերով վճարային համակարգը չի կարողանում հասնել լուրջ բարձունքի, այն դեպքում, երբ արտերկրյա նմանատիպ վճարային համակարգերը ՀՀ տարածքում ըստ էության տրամադրում են բանկային տարբեր ծառայություններ՝ առանց համապատասխան լիցենզիայի:

Նշվածը ևս մեկ անգամ վկայում է, թե որքան կարևոր է մտածված և կշռադատված որոշումների կայացումը նման չկարգավորված ինքնազարգացող ոլորտում: Նման իրավիճակը բնորոշ է ոչ միայն Հայաստանին: Առաջանցիկ զարգացման տեմպեր ունեցող Ռուսաստանում անգամ էլեկտրոնային փողերով վճարային համակարգերի գործունեությունը կարգավորված չէ, այն դեպքում, երբ նման համակարգերով օրական շրջանառվում են միլիոնավոր դոլարին համարժեք գումարներ: Դժվար չէ պատկերացնել թե ինչ իրարանցում կսկսվի, եթե օրերից մի օր Ռուսաստանի Բանկը օրենքից դուրս հայտարարի նման վճարային համակարգերի գործունեությունը և արգելվի ՌԴ տարածքում դրանց աշխատանքը¹: Միլիոնավոր մարդիկ կհայտնվեն շոշափելի դրամական միջոցների կորստի վտանգի առջև, իսկ տասնյակ հազարավոր ինտերնետային առևտրային կայքեր ստիպված կլինեն փոփոխություններ մտցնել վճարումների ընդունման ավտոմատացված ծրագրային ապահովման մեջ՝ ծախսելով դրամական և ժամանակային մեծ միջոցներ: Դեպքերի նման զարգացումը հետճգնաժամային պայմաններում կրկնակի անգամ ավելի վտանգավոր է:

Կարող է կարծիք ձևավորվել, որ Հայաստանի Հանրապետությունը, ի տարբերություն զարգացող և հետանցումային ավելի կայացած երկրների, ինչպիսին է օրինակ Ռուսաստանի Դաշնությունը, կարգավորման խնդիրները լուծելիս գործողությունների ազատության ավելի լայն հնարավորություններ ունի, քանի որ ոլորտը իր ընդգրկմամբ բավականին նեղ է և «անհաջող» նախաձեռնությունների թողած հետևանքներն այնքան ցավոտ չեն լինի տնտեսության մասշտաբով: Սակայն նման կարծիքը սխալ է, քանի որ անկատար կարգավորման դաշտով պայմանավորված խոչընդոտները կարող են հանգեցնել նրան, որ արտասահմանյան ընկերություններն ամբողջությամբ գրավեն ինտերնետ այն ծառայությունների շուկան, որոնք կարող են մատուցվել արտասահմանից: Հետագայում դաշտի կարգավորման պայմաններում ազգային ձեռնարկությունների համար արդեն հաստատված ընկերությունների հետ մրցակցելը կլինի շատ դժվարին, եթե ոչ անհնարին:

¹ Խոսքը վերաբերում է օձիջորային գոտիներում իրավաբանական գրանցում ստացած ձեռնարկատիրությանը: Օրինակ, ռուսական հանրահայտ «WebMoney» էլեկտրոնային փողերով վճարային համակարգի իրավաբանական գրանցումը կատարված է աֆրիկյան Բեյիզ պետությունում:

ԵԿԱՄՈՒՏ ԶԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՇԽՄԱՆ ԶԱՐՑԻ ՇՈՒՐՉ

«Եկամուտ» հասկացությունը բավականին բարդ ու լայն իմաստ ունի: Դրա բնորոշմանն անդրադարձել են տարբեր տնտեսագետներ: Ընդհանուր բնորոշմամբ տնտեսագիտական գրականությունում «եկամուտ» հասկացությունը կիրառվում է որպես արտադրված արտադրանքի արժեքի գերազանցում այդ արտադրանքի արտադրության ծախսերի, ինչպես նաև արտադրված արտադրանքում յուրաքանչյուր դասակարգի, սոցիալական խմբի կամ առանձին անհատի կողմից որպես հատուցում, յուրացված բաժին¹: Մարդու համար եկամուտ կարող է հանդիսանալ այն ամենը, ինչը նա ստանում է փողի տեսքով կամ էլ այն, ինչը հարկման է ենթարկվում: Եկամուտը շուկայական տնտեսության յուրաքանչյուր մասնակցի գործողությունների վերջնական նպատակն է և խթանը:

Եկամուտն իրենից ներկայացնում է ֆիզիկական (իրավաբանական) անձի, որպես շուկայական տնտեսության սուբյեկտի գործունեության արդյունքի դրամական գնահատականը և, որը կանոնավորապես և օրինական ձևով, անցնում է նրա անմիջական տիրապետմանը²:

Ըստ Ա. Խ. Բուլատովի՝ եկամուտը տնային տնտեսությունների կողմից որոշակի ժամանակամիջոցում ստացված դրամական միջոցների և արտադրված նյութական բարիքների գումարն է³:

Պ. Նիկոլայևը ցույց է տալիս, որ եկամուտը արտադրության մասնակիցների ներդրածին համապատասխան արտադրված արտադրանքի մի մասն է⁴:

Եկամուտը ուրիշներին մատուցած արտադրական ծառայությունների դիմաց ստացվող փոխհատուցումն է պարզապես⁵: Շատ եկամուտներ ստացողներն ուրիշներին ապահովում են բազմաթիվ բարիքներով, որոնք նրանք գնահատում են: Եթե նրանք դա չանեն, ապա այդ ուրիշները չեն ցանկանա նրանց այդքան շռայլորեն վճարել: Սա նաև խրատական իմաստ ունի. եթե ցանկանում ես շատ եկամուտ ստանալ, պետք է հաշվարկես, թե ուրիշներին ինչպես օգնես: Հակառակը նույնպես ճիշտ է: Եթե դու ի վիճակի չես կամ չես ցանկանում ուրիշներին օգնել, ապա քո եկամուտ ստանալու միջև այս ուղիղ կապը ուժեղ ազդակներ է հաղորդում յուրաքանչյուրին ձեռք բերելու ուրիշների կողմից գնահատվող հմտություններ և զարգացնել իր ունակությունները: Եկամուտները դրամական և բնամթերային տեսքով ռեսուրսներ են, որոնք կարող են օգտագործվել բնակչության անձնական պահանջմունքների բավարարման, հարկային պարտադիր ու կամավոր վճարումների, խնայողությունների համար և կազմում են բնակչության նյութական բարեկեցության հիմքը:

Մեր կարծիքով՝ եկամուտը անհատի կամ տնային տնտեսության բազմատեսակ ծառայությունների, արտադրական ու ոչ արտադրական բարիքների կիրառման փոխհատուցումն է:

Եկամուտների բաշխման հիմնախնդիրը կարևորվել է տնտեսագիտության տեսության գրեթե բոլոր ուղղությունների կողմից, քանի որ տնտեսագիտությունն ի սկզբանե համարվել է գիտություն հարստությունն ավելացնելու և այն բաշխելու եղանակների մասին: Մարդկության ամբողջ նոր պատմության ընթացքում շատ հասարակագետներ, տնտեսագետներ փորձել են բացահայտել բաշխման հիմնախնդիրը, գտնել այն խորը արմատները, որոնք առաջացնում են հարստության և եկամուտների ծայրահեղ անարդարացի բաշխում մարդկանց միջև ու նրանց բաժանում աղքատների ու հարուստների:

Եկամուտների բաշխման ընդհանուր տեսությունը ձևավորվել է 17-րդ դարում: 1758 թվականին լույս տեսած «Տնտեսական աղյուսակներում» ֆրանսիացի տնտեսագետ, ֆիզիո-

¹ *Գևորգյան Մ. Ա.*, Տնտեսագիտության տեսություն: Երևան 1997, էջ 240:

² *Մարկոսյան Ա. Խ.*, Տնտեսագիտություն բոլորի համար: Երևան 2001, էջ 128:

³ Николаева И.П./ Экономическая теория.-М.: "КноРус", 1998, с. 217.

⁴ Николаева И.П./ Экономическая теория.-М.: "КноРус", 1998, с. 217.

⁵ *Գորտնի Ջեյմս Գ. և Սթրուֆ Ռիչարդ*, Նվազագույն գիտելիքներ տնտեսության և բարեկեցության մասին:/ Ե./Ա.թ./, էջ 23:

կրատ Ֆ.Քենեն (1694-1774թթ.) անդրադարձել է բաշխման հարցերի ուսումնասիրությանը: Ըստ ֆիզիոկրատների՝ արտադրողական էր համարվում միայն հողագործության ոլորտում ծախսվող աշխատանքը և այդ աշխատանքով ստեղծված արդյունքի վերաբաշխման հաշվին ավանսավորվում էին մյուս դասակարգերը: Դրանից ելնելով՝ ֆիզիոկրատները բաշխման մեխանիզմը կապում էին գյուղատնտեսության մեջ ստեղծված արդյունքի հետ և գտնում, որ հասարակության զուտ եկամուտը առաջանում է միայն գյուղատնտեսության մեջ¹:

Անգլիական դասական դպրոցից եկամուտների բաշխման ուսումնասիրմամբ զբաղվել է Ա. Սմիթը (1723-1790թթ.), Դ. Ռիկարդոն և Ջ. Ս. Միրը (1806-1873թթ.): Ա. Սմիթը 1776թ. «Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն» աշխատության մեջ հստակորեն սահմանազատել է հասարակության երեք հիմնական դասակարգերը՝ վարձու բանվորներին, կապիտալիստ-ձեռնարկատերերին և հողասեփականատերերին, որոնք հանդես են գալիս որպես արտադրության երեք հիմնական գործոնների՝ աշխատանքի, կապիտալի և հողի տերեր: Այսինքն՝ Սմիթը եկամուտների բաշխման հիմքում դրել է հասարակության դասակարգային կառուցվածքը, իսկ վերջինս բխեցրել է արտադրության գործոններին տիրապետելու հանգամանքից կախված: Այլ կերպ ասած՝ Սմիթը հասարակության տարեկան ամբողջական արդյունքը ներկայացրել է գործոնային եկամուտների տեսքով²:

Սմիթը պնդում էր, որ հարստության աղբյուրը չպետք է փնտրել զբաղվածության ինչ-որ յուրահատուկ տեսակի մեջ: Հարստությունն իրենից ներկայացնում է բոլոր գյուղացիների, նավաստիների, առևտրականների, աշխատանքի բոլոր տեսակների ու մասնագիտությունների ներկայացուցիչների սեփական աշխատանքի արդյունք: Ըստ Սմիթի՝ հարստության իսկական աղբյուրը «յուրաքանչյուր ազգի տարեկան աշխատանքն է»՝ ուղղված սպառմանը:

Դ. Ռիկարդոյի (1772-1823թթ.) տնտեսագիտական ուսմունքում ծավալուն տեղ է զբաղեցնում եկամուտների բաշխման տեսությունը: Չարգացնելով դասակարգերի առաջնային եկամուտների՝ աշխատավարձի, շահույթի, ռենտայի վերաբերյալ Սմիթի ուսմունքը՝ Ռիկարդոն ազգային եկամտի բաշխումը նմանեցրել է «կարկանդակի» բաժանման հետ, որն իր չափերով անփոփոխ է: Ըստ Ռիկարդոյի՝ բանվորներն ազգային եկամտից իրենց համեստ բաժինն ստանում են աշխատավարձի ձևով, իսկ մնացածը բաժին է ընկնում կապիտալիստներին, որոնք ստիպված են այն բաժանել հողասեփականատերերի հետ:

Միրի տնտեսագիտական հայացքներում մեծ տեղ է հատկացված եկամուտների ձևերին՝ աշխատանքային, շահութային, ռենտային:

Ըստ Մեյի՝ (1767-1823թթ.) արտադրության գործընթացում աշխատանքը, կապիտալը և հողը հավասար դեր են խաղում: Այդ պատճառով ապրանքի իրացումից ստացված գումարը պետք է բաժանվի արտադրության գործընթացի մասնակիցների միջև՝ որպես նրանց ծառայությունների դիմաց վարձատրություն:

Ֆրանսիացի տնտեսագետ Ժ.Միսնոնդին (1773-1842թթ.) եկամուտների մասին ուսմունքում միշտ ընդգծել է արտադրության միջոցների սեփականատերերի եկամուտների շահագործողական բնույթը՝ աշխատանքային եկամուտները հակադրելով անաշխատ եկամուտներին:

Եկամուտների տեսությունը ծավալուն տեղ է զբաղեցնում Մարքսյան տնտեսագիտական ուսմունքում: Մարքսիզմի խոշորագույն ծառայություններից մեկն այն է, որ տնտեսագիտության տեսության մեջ առաջին անգամ բացահայտվել է բաշխման և արտադրական հարաբերությունների միասնությունը: Կ. Մարքսը գրել է, որ արտադրանքի բաշխում լինելուց առաջ, բաշխումը արտադրության միջոցների բաշխում է: «Արտադրանքի բաշխումը, շարունակում է իր միտքը Կ. Մարքսը, -ակնհայտորեն միայն այն բաշխման արդյունքն է, որը գոյություն ունի արտադրության բուն պրոցեսի մեջ և կանխորոշում է արտադրության կազմակերպումը»³:

Կ. Մարքսը (1818-1883թթ.), իրեն համարելով դասական տնտեսագետների հետնորդը, շարունակել է իր հետազոտության կենտրոնում պահել հասարակության եկամուտների մեծացման և դրա վերաբաշխման խնդիրը: Մարքսը եկամուտների խնդիրը քննարկել է

¹ Кобалев С. Н., Латов Ю. В., Экономика: -М. Книжный мир, 2004, стр.22.

² *Կիրակոսյան Գ., Թավադյան Մ., Գրիգորյան Ս.*, Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, Եր.. Տնտեսագետ, 2004, էջ 129-132:

³ Маркс К., Энгелс Ф., Соч., 2-е изд., т.12, с. 722.

հասարակության դասակարգային կառուցվածքին և արտադրության գործոններին տնօրինմանը համապատասխան: Նա հիմնական եկամուտներ է համարել աշխատավարձը, շահույթը, փոխատվական տոկոսը, ձեռնարկատիրական եկամուտը և հողային ռենտան: Ըստ Մարքսի՝ աշխատավարձը վարձու բանվորի եկամուտն է, շահույթը, տոկոսը և ռենտան՝ շահագործողական դասակարգերի եկամուտների անմիջականորեն տեսանելի ու շոշափելի ձևերն են:

Մարժինայիզմի ամերիկյան դպրոցի հիմնադիր Ջ. Բ. Կլարկի (1847-1938թթ.) հիմնական աշխատություններից է «Հարստության բաշխումը»: «Հարստության բաշխումը» աշխատության մեջ Ջ. Բ. Կլարկը փորձում է ապացուցել, որ «Հասարակական եկամտի բաշխումը կառավարվում է բնական օրենքով, և որ այդ օրենքը, գործելով առանց բախումների, արտադրության յուրաքանչյուր գործոնին տալիս է հարստության այնքան գումար, որքան այդ գործոնը ստեղծում է»¹: Կլարկի բաշխման օրենքը հետևյալ դրսևորումն է ստանում. կապիտալը տոկոս է բերում, կապիտալային բարիքները՝ ռենտա, ձեռնարկատիրական գործունեությունը՝ ձեռնարկատիրական շահույթ, աշխատանքը՝ աշխատավարձ: Արտադրության յուրաքանչյուր գործոն ունի յուրահատուկ արտադրողականություն և իր բաժինն է ներդնում արդյունքի արժողության մեջ: Ուստի համապատասխան գործոնի տիրոջն է պատկանում դրա ներդրածը: Արտադրության յուրաքանչյուր մասնակից ստանում է հարստության այն մասը, որը ինքն արտադրել է:

Վ. Պարետոն (1848-1923թթ.) նշել է, որ եկամուտների բաշխումը բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում միատեսակ է: Այսպիսի պայմաններում պետության հիմնական եկամուտը հարկերն են, որոնց ծանրությունն ընկած է հիմնական վճարողների՝ աշխատավորների ուսին:

Բաշխման տեսության ժամանակակից ուղղությունը նորդասականների կողմից անվանվել է շուկաների և արտադրության գործոնների տեսություն: Այս ուղղության ներկայացուցիչները հաշվի են առնում բաշխման վրա տնտեսական միավորների, խմբերի, պետության ազդեցության ողջ մեխանիզմը, ինչպես նաև առաջարկի ու պահանջարկի իրական պայմանների ներգործությունը:

Տնտեսագիտության մեջ բաշխման հարաբերությունները դիտարկվում են լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով բաշխում ասելով հասկանում ենք արտադրության ռեսուրսների և աշխատուժի բաշխումը հասարակական արտադրության տարբեր ոլորտների ու ճյուղերի միջև, նեղ իմաստով՝ կենսամիջոցների բաշխումը հասարակության անդամների միջև, որի արդյունքում ձևավորվում են նրանց եկամուտները: Դա նախ դրամական եկամուտների բաշխումն է, որը հասարակության յուրաքանչյուր անդամի հնարավորություն է տալիս ձեռք բերել անհրաժեշտ կենսամիջոցներ:

Այսպիսով, եկամուտ հասկացությունը լայն իմաստ ունի, որին յուրաքանչյուր տնտեսագետ տվել է յուրովի մեկնաբանում, իսկ եկամուտների բաշխման հիմնախնդիրը քննարկվել է տնտեսագիտության տեսության գրեթե բոլոր ուղղությունների կողմից տարբեր ձևով:

¹ Кларк Дж. Б., Распределение богатства. М.-Л., 1934, с. 35.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՅԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Եկամուտների անհավասարությունը ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ ՀՀ-ում այն հիմնախնդիրներից է, որը մեծ ուշադրություն է պահանջում և ստիպում դրա մեղմացմանն ուղղված միջոցներ կիրառել: Դա առաջին հերթին անհրաժեշտություն է առաջացնում եկամուտների անհավասարության իրական պատկերի ճիշտ գնահատման և այն պայմանավորող պատճառների բացահայտման համար: Եկամուտների անհավասարության ժամանակ առաջ են քաշվում ամենաքիչը երեք հարց՝ ինչի՞ց, ու՞մ միջև, ինչպե՞ս¹:

Առաջին հարցը միջոցառման մասշտաբով տեղեկատվություն է տալիս, որով գնահատվում է անհատների եկամուտների անհավասարության իրավիճակը: Երկրորդ հարցը վերաբերվում է երկրի, քաղաքամասի՝ բնակչության, անհատների եկամուտների անհավասարության բացահայտմանը: Երրորդ հարցը վերաբերվում է եկամուտների անհավասարության չափման վիճակագրական գործիքներին:

Եկամուտների անհավասարության գնահատման համար վիճակագրությունն օգտագործում է հետևյալ ցուցանիշները.

1. միջին շնչային եկամուտը, որը հաշվարկվում է միջակայքային բաշխման շարքի տվյալներով և կշռված միջին թվաբանականի բանաձևով,

2. բաշխման շարքի կառուցվածքային բնութագրերը՝

- մոդային եկամուտը,
- մեդիանային եկամուտը,
- կվարտիլային եկամուտը,
- դեցիլային եկամուտը:

Միաժամանակ գոյություն ունեն եկամուտների անհավասարության գնահատման գործակիցներ, որոնք ներկայացվում են ստորև՝

1. եկամուտների տարբերակման գործակից: Տնային տնտեսություններին ըստ նյութական բարեկեցության մակարդակի բաշխման անհավասարությունն ուսումնասիրելու համար օգտագործվում է խմբավորման մեթոդը, համաձայն որի տնային տնտեսությունները բաժանվում են դեցիլային խմբերի (դեցիլների)՝ ըստ դիտարկվող ցուցանիշի արժեքների աճողական կարգի: Դիտարկվող համակցությունը (օրինակ մեկ շնչի հաշվով դրամական եկամուտները կամ սպառողական ծախսերը), բաշխվում են հերթական աճողական կարգով և ապա բաժանվում 10 հավասար խմբերի: Եկամուտների տարբերակման դեցիլային գործակիցը հաշվարկվում է որպես իններորդ և տասներորդ դեցիլների միջև եղած սահմանի և առաջին և երկրորդ դեցիլների միջև եղած սահմանի հարաբերակցություն, այսինքն՝ իրենից ներկայացնում է տնային տնտեսության վերին դեցիլի նվազագույն եկամտի և ստորին դեցիլի առավելագույն եկամտի միջև եղած հարաբերակցությունը.

$$K_d = d_9/d_1$$

Նման ձևով հաշվարկվում է տարբերակման քվինտիլային գործակիցը: Տարբերակման կվարտիլային գործակիցը ցույց է տալիս երրորդ և առաջին կվարտիլների հարաբերակցությունը:

$$K_Q = Q_3/Q_1$$

¹ www.inegalitn.fr

2. Եկամուտների հարաբերակցության ինդեքս: Եկամուտների հարաբերակցության դեցիլային գործակիցը կամ ինդեքսը հավասար է բնակչության ամենահարուստ և ամենաաղքատ խմբերի միջին եկամուտների հարաբերությանը (նման ձևով հաշվարկվում է եկամուտների հարաբերակցության քվինտիլային գործակիցը): Տնային տնտեսությունները որքան ավելի շատ խմբերի բաժանված լինեն, այնքան եկամուտների անհավասարության ցուցանիշը ճշգրիտ կլինի: Այդ պատճառով՝ քվինտիլային գործակիցը բարձր է կվարտիլային գործակցից, բայց ցածր է դեցիլային գործակցից:

3. Ֆոնդերի գործակիցը: Այս գործակիցը որոշվում է որպես 10-րդ և 1-ին դեցիլային խմբերի եկամուտների միջին մակարդակների հարաբերություն: Գործակիցը կարելի է հաշվարկել որպես ամենաբարձր և ամենացածր դեցիլային խմբերի եկամուտների գումարների հարաբերություն:

$$K_f = D_{10}/D_1$$

4. Լորենցի կորը և Ջինիի գործակիցը: Եկամուտների անհավասարության տարածված ցուցանիշների շարքին են դասվում Լորենցի կորը և եկամուտների կենտրոնացման Ջինիի գործակիցը: Դրանք պատկանում են գնահատականների այն համակարգին, որը հայտնի է Պարետո-Լորենց-Ջինի մեթոդաբանություն: Վ. Պարետոն, ընդհանրացնելով մի շարք երկրների վիճակագրական տվյալները, բացահայտեց հակադարձ կախվածություն եկամտի մակարդակի և եկամուտ ստացողների թվաքանակի միջև, որը ստացավ «Պարետոյի օրենք» անվանումը: Ամերիկյան վիճակագիր և տնտեսագետ Օ.Լորենցը, զարգացնելով Պարետոյի օրենքը, ներկայացրեց դրա գրաֆիկական պատկերը կորի տեսքով, որը հայտնի է «Լորենցի կոր» անունով: Տնտեսագիտության տեսության մեջ լայնորեն կիրառվում է Լորենցի կորը որպես բնակչության տարբեր խավերի միջև հասարակության ամբողջական արդյունքի անհավասար բաշխումն արտացոլող ցուցանիշ: Լորենցի կորը և Ջինիի գործակիցը ցույց են տալիս, թե համախառն եկամուտների որ մասը բնակչության առանձին խմբերի մոտ ինչպես են կենտրոնացված:

Լորենցի գործակիցը, որպես եկամուտների բաշխման անհավասարության հարաբերական բնութագրիչ, հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$L = \frac{|y_1 - x_1| + |y_2 - x_2| + |y_3 - x_3| + \dots + |y_n - x_n|}{2} = \frac{|y_i - x_i|}{2},$$

որտեղ՝ y_i -ն i -րդ սոցիալական խմբում ներառված բնակչության եկամուտների մասնաբաժինն է ընդհանուր եկամտում,

x_i -ն՝ i -րդ սոցիալական խմբի բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում,

n -ը սոցիալական խմբերի թիվն է:

Լորենցի գործակցի արժեքը տատանվում է 0-ից 1 միջակայքում. $L=0$ ՝ եկամուտների բաշխման լիակատար հավասարության դեպքում, և $L=1$ ՝ եկամուտների բաշխման կատարյալ անհավասարության դեպքում:

Լորենցի կորի մաթեմատիկական մեկ այլ ձևակերպում տրվել է իտալացի տնտեսագետ և վիճակագիր Կ.Ջինիի կողմից: Միջազգային փորձում այս գործակիցը եկամուտների անհավասարության գնահատման ամենահաճախ օգտագործվող ցուցանիշն է: Ինդեքսը քանակապես գնահատում է տարբեր անդամների կենսամակարդակների տարբերությունը:

Սորիսոնի կողմից n անհատների համար Ջինիի գործակիցը ներկայացվում է հետևյալ կերպ¹.

$$G = 1/2n^2y \sum \sum |y_i - y_j|$$

որտեղ՝ n -ը անհատների թիվն է,

¹ Morrison Christiq Que sais-je? Les inégalités des revenus. Presses Universitaires de France, 1986, page 5.

y_i -ն և y_j –ն i, j անհատների եկամուտներն են,

y -ն ընդհանուր բնակչության միջին եկամուտն է:

Ձիմիի գործակիցը կարող է ընդունել 0-ից 1 արժեքներ: Եկամուտների բացարձակ հավասարության դեպքում Ձիմիի գործակիցը հավասար է 0, բացարձակ անհավասարության դեպքում գործակիցն ընդունում է իր ամենամեծ արժեքը, ձգտում է 1-ին, բայց այն չի գերազանցում:

Ձիմիի գործակիցը հնարավորություն է տալիս անհավասարությունը տարանջել ըստ առանձին եկամտատեսակների:

5. Շուրի գործակիցը: Այս գործակիցը ցույց է տալիս եկամուտների փաստացի բաշխման և եկամուտների բացարձակ հավասարաչափ բաշխման միջև եղած տարբերությունը: Գործակիցն արտահայտվում է հետևյալ կերպ.

$$S=F(u)[1 - u_1/u],$$

որտեղ՝ u -ն խմբի միջին կենսամակարդակն է,

u_1 -ը խմբի միջին կենսամակարդակն է, որոնց եկամուտները ցածր են ընդհանուր եկամուտներից:

6. Թեյլի անհավասարության ինդեքս: Անհավասարության ցուցանիշներից հաճախակի օգտագործվում է Թեյլի կողմից մշակված միջին լոգարիթմական շեղման ինդեքսը, որի հաշվարկման բանաձևը հետևյալն է.

$$E(0) = 1/n \sum_{i=1}^n \ln(\bar{y}/y_i),$$

որտեղ՝ y_i -ն i -րդ տնտեսության եկամուտն է,

n -ը տնային տնտեսությունների քանակն է,

\bar{y} -ը միջին եկամուտն է,

i -ն տնային տնտեսությունների ինդեքսն է:

Լայնորեն կիրառվում է նաև Թեյլի անորոշության ինդեքսը՝

$$E(1) = 1/n \sum_{i=1}^n (y_i/\bar{y}) \ln(y_i/\bar{y}),$$

Բացարձակ հավասարության պայմաններում 2 ցուցանիշներն էլ ընդունում են 0-ական արժեք: Բացարձակ անհավասարության դեպքում $E(0)$ –ն ձգտում է անվերջության, $E(1)$ –ն ընդունում է $\ln(n)$ արժեքը: Թեյլի ցուցանիշի առավելությունը մյուս ցուցանիշներից նրանում է, որ հնարավորություն է տալիս անհավասարությունը տարանջատել ըստ բնակչության խմբերի:

Թեյլի ցուցանիշը հաշվարկվում է նաև բնակչության կտրվածքով: Եթե վերջինս բաղկացած է 2 խմբերից (օրինակ քաղաքային և գյուղական), ապա ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ կերպ¹:

$$T_k = T_b + [Y T_1 + (1 - Y) T_2],$$

որտեղ՝ T_b -ն չափում է միջսեկտորային անհավասարությունը, իսկ փակագծերի միջինը՝ ներսեկտորային,

Y -ը ներկայացնում է բնակչության առաջին խմբի ընդհանուր եկամուտների բաժինը: m ենթախմբի դեպքում վերոնշյալ բանաձևն ընդունում է հետևյալ տեսքը.

$$T = T_b + Y_i T_i, i=1,$$

որտեղ՝ T_i -ն չափում է եկամուտների տարբերությունը i -րդ խմբում:

¹ Inégalité, pauvreté et bien-être social. Boniface Essama –Nssah. Editions De Boeck Universite. 2000. P. 58.

7. Ատկինսոնի ինդեքս: Վիճակագրական պրակտիկայում լայնորեն կիրառվում է նաև Ատկինսոնի ինդեքսը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$I_A = 1 - (\sum_{i=1}^n f_i (y_i/y))^{1-c} / N^{1/(1-c)},$$

որտեղ՝ f_i -ն եկամուտ ստացող անձանց տնային տնտեսությունների թիվն է,

y -ն՝ միջին եկամուտը, $y = (\sum_{i=1}^n f_i y_i)$,

N -ը եկամուտ ստացողների ընդհանուր թիվն է,

c -ն՝ հավասարության սպասվելիք մակարդակը գնահատող պարամետր:

Հանրապետության բնակչության եկամուտների կամ ծախսերի «բևեռային» դեցիլների հարաբերության գործակիցը (այն է, 10% առավել ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակի հարաբերությունը 10% նվազագույն ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակին) 2009թ.-ին ըստ սպառողական ծախսերի կազմել է 7.9 անգամ, իսկ ըստ բնակչության դրամական եկամուտների՝ 14.5 անգամ (աղյուսակ 1): 2009թ.-ին 2004թ.-ի համեմատությամբ «բևեռային» դեցիլների հարաբերության գործակիցը ըստ բնակչության դրամական եկամուտների նվազել է 6.3-ով:

Աղյուսակ 1

10% ամենաապահով և 10% ամենաանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը, 2004-2009թթ.¹

	10% ամենաապահով և 10% ամենաանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը					
	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.
Ըստ դրամական եկամուտների	20.8 անգամ	17.9 անգամ	13.9 անգամ	15.6 անգամ	14.1 անգամ	14.5 անգամ
Ըստ սպառողական ծախսերի	9.5 անգամ	10.0 անգամ	8.7 անգամ	8.9 անգամ	8.0 անգամ	7.9 անգամ

Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում բնակչության եկամուտների (ծախսերի) տարբերակման գործակիցն ընդունվել է 20% առավել ապահովված բնակչության եկամուտների (ծախսերի) մակարդակի հարաբերությունը 20% նվազագույն ապահովված բնակչության եկամուտների (ծախսերի) մակարդակին: Այսինքն՝ բնակչության եկամուտների կամ ծախսերի տարբերակման համար հաշվարկվում է «բևեռային» քվինտիլների գործակիցը: Համաձայն վիճակագրական տվյալների ՀՀ-ում 2009թ.-ին՝ 2008թ.-ի համեմատ ավելացել է 20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության եկամուտների հարաբերակցությունը՝ 7.8 անգամից հասնելով 8.0 անգամի, իսկ 2009թ.-ի՝ 2004թ.-ի համեմատ նվազել է 20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության եկամուտների հարաբերակցությունը՝ 10.6 անգամից հասնելով 8.0 անգամի, իսկ սպառողական ծախսերի մասով՝ 5.8 անգամից հասնելով 5.1 անգամի (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը, 2004-2009թթ.²

	20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը					
	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.
Ըստ դրամական եկամուտների	10.6 անգամ	9.5 անգամ	7.6 անգամ	8.0 անգամ	7.8 անգամ	8.0 անգամ
Ըստ սպառողական ծախսերի	5.8 անգամ	6.0 անգամ	5.4 անգամ	5.6 անգամ	5.2 անգամ	5.1 անգամ

¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց: Ըստ 2009թ. տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության արդյունքների, Երևան-2010, էջ 126:

² Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց: Ըստ 2009թ. տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության արդյունքների, Երևան-2010, էջ 126:

1996 թվականի տվյալներով առավել հարուստ և առավել աղքատ խավերի 20%-ի եկամուտների հարաբերակցությունը 32 էր (երբ այդ թիվն անցնում է 30-ից, երկիրը սոցիալական առումով համարվում է պայթունավտանգ): 2003 թվականին տվյալ ցուցանիշն իջել է 17-ի¹:

Բնակչության եկամուտների կամ ծախսերի «բևեռային» դեցիլների հարաբերության գործակիցը ավելի ցայտուն է, քան քվինտիլային հարաբերության գործակիցը:

Դիտարկվող ժամանակահատվածում՝ 2008-2009թթ., Ջինիի գործակցի միջոցով գնահատված անհավասարության ցուցանիշները վկայում են, որ Հայաստանում բնակչության բևեռացումն ըստ եկամուտների ցուցանիշի ավելի խորն է՝ սպառման ցուցանիշի համեմատ: 2009թ. սպառման անհավասարությունը, որը չափվում է Ջինիի գործակցով, ավելացել է՝ կազմելով 0,257՝ 2008թ.-ի 0.242-ի համեմատ: Ըստ եկամուտների գնահատված անհավասարության ցուցանիշները վկայում են, որ եկամուտների անհավասարությունն ավելացել է՝ կազմելով 2009թ.-ին 0.355՝ 2008թ.-ի 0.339-ի համեմատ (աղյուսակ 3):

Եկամուտների անհավասարության գնահատման Թեյլի էնտրոպիայի համաթիվը և Թեյլի միջին լոգարիթմական շեղում E(0) են, որ 2008-2009թթ.-ին Հայաստանում բնակչության բևեռացումն ըստ եկամուտների ցուցանիշի և ըստ սպառման ցուցանիշի ավելացել է (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Սպառման և եկամտային անհավասարությունը, 2008-2009թթ.²

	Սպառում		Եկամուտ	
	2008թ.	2009թ.	2008թ.	2009թ.
Ջինիի գործակից	0.242	0.257	0.339	0.355
Թեյլի լոգարիթմական շեղում E(0)	0.096	0.108	0.201	0.224
Թեյլի էնտրոպիա E(1)	0.11	0.124	0.215	0.259

Այսպիսով, եկամուտների անհավասարության գնահատման համար կիրառվում են տարբեր գործակիցներ, ցուցանիշներ: Դիտարկվող ժամանակահատվածում՝ 2008-2009թթ., ՀՀ-ում եկամուտների անհավասարության գնահատման ցուցանիշները, գործակիցները արձանագրել են եկամուտների անհավասարության աճ, բնակչության բևեռացումն ըստ եկամուտների ցուցանիշի ավելացել է, դա նշանակում է, որ եկամուտների անհավասարությունը հանդիսանում է դեռևս լուրջ հիմնախնդիր

¹ Աղքատության հարթահարման ռազմավարական ծրագիր: Հարցեր և պատասխաններ: Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն: Երևան 2004, էջ 9:

² Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական գեկույց: Ըստ 2009թ. տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության արդյունքների, Երևան-2010, էջ 57:

ՀՀ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՆՂՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԴՐԱ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՎԵՐՋԻՆԻՍ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Օգտվելով ՀՀ ԿԲ տրամադրված՝ «Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալները»¹ հրապարակումում ամփոփված տեղեկատվություններից՝ բացահայտվել է, որ ժամանակահատվածի վերջի դրությամբ ռեզիդենտների ժամկետային ավանդների մեջ տնային տնտեսությունների ժամկետային ավանդները վերջին տարիներին կազմում են կեսից ավելին²:

Այս հաշվարկը ստորև ներկայացնում ենք ամփոփ աղյուսակով՝

Աղյուսակ 1

Տնային տնտեսությունների ժամկետային ավանդների հարաբերակցությունը՝ ռեզիդենտների ժամկետային ավանդներին

		Տնային տնտեսությունների ժամկետային ավանդների հարաբերակցությունը՝ ռեզիդենտների ժամկետային ավանդներին՝ դրամով	Տնային տնտեսությունների ժամկետային ավանդների հարաբերակցությունը՝ ռեզիդենտների ժամկետային ավանդներին՝ արտարժույթով
2005	Մարտ	0,29	0,62
	Հունիս	0,35	0,59
	Սեպտեմբեր	0,30	0,52
	Դեկտեմբեր	0,34	0,60
2006	Մարտ	0,38	0,66
	Հունիս	0,43	0,69
	Սեպտեմբեր	0,46	0,75
	Դեկտեմբեր	0,45	0,64
2007	Մարտ	0,48	0,74
	Հունիս	0,51	0,76
	Սեպտեմբեր	0,57	0,81
	Դեկտեմբեր	0,58	0,81
2008	Մարտ	0,55	0,77
	Հունիս	0,54	0,77
	Սեպտեմբեր	0,58	0,82
	Դեկտեմբեր	0,58	0,80
2009	Մարտ	0,61	0,70
	Հունիս	0,60	0,69
	Սեպտեմբեր	0,56	0,73
	Դեկտեմբեր	0,59	0,70
2010	Մարտ	0,66	0,71
	Հունիս	0,69	0,71
	Սեպտեմբեր	0,67	0,75
	Դեկտեմբեր	0,65	0,78

Նշված փաստը վկայում է այն մասին, որ տնային տնտեսություններից ներգրավված ավանդները առևտրային բանկերի համար հանդիսանում են լուրջ ֆինանսական ռեսուրս, ինչը կարևոր է դարձնում դրանց կառուցվածքի ու վերջինիս վրա ազդող գործոնների հետազոտումն ու վերլուծությունը:

Ռեզիդենտների ավանդների կազմում տնային տնտեսությունների ավանդների ունեցած մասնաբաժինը, ինչպես նաև՝ դրամային և արտարժույթային ավանդների մեջ եղած ծավալային տարբերությունները և դրա փոփոխման միտումները պատկերավոր ներկայացնելու նպատակով:


¹ <http://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

² Ռեզիդենտների ժամկետային ավանդները ներառում են՝ ձեռնարկություններից, տնային տնտեսություններից, շահույթ չհետապնդող կազմակերպություններից, այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ժամկետային ավանդները:

տակով ստորև գրաֆիկորեն ներկայացնում ենք առևտրային բանկերի ավանդների ծավալները՝ ժամանակահատվածի վերջի դրությամբ:

Գծապատկեր 1

Առևտրային բանկերի ավանդները (ժամանակահատվածի վերջ, մլն. դրամ)



Այս գծապատկերից ակնհայտ երևում է, որ արտարժույթային ավանդների ծավալները հատկապես վերջին երկու տարիներին էականորեն գերազանցում են դրամային ավանդների ծավալները:

Նշված միտումը ավելի խորը ուսումնասիրելու համար հարկ ենք համարում վերլուծության մեջ ընդգրկել ոչ միայն ավանդների կուտակային մնացորդները՝ ժամանակահատվածի վերջի դրությամբ, այլ նաև ժամանակահատվածի ընթացքում ավանդների մուտքերը՝ դրանք համադրելով դրամային և դոլարային ավանդների համար առևտրային բանկերի կողմից առաջարկվող տոկոսադրույքների հետ:

Այս քայլը պայմանավորված է այն փաստով, որ ամենևին պարտադիր չէ, որ ավանդների մուտքերի ծավալների և կուտակային մնացորդների փոփոխության միտումների մեջ լինի օրինաչափություն՝ ըստ արժույթների: Այսինքն այն փաստը, որ դոլարային ավանդների կուտակային մնացորդները գերազանցում են դրամային ավանդների կուտակային մնացորդին, ամենևին հիմքեր չի տալիս ենթադրելու, որ նույն օրինաչափությունը պետք է պահպանվի նաև տվյալ ժամանակահատվածի ընթացքում ներգրավված ծավալների պարագայում:

Վերջինս իրենից ներկայացնում է առևտրային բանկերի կողմից ներգրավված միջոցները, որոնք արտացոլում են միայն մուտքերը՝ ստվերում թողնելով ելքերը: Այսինքն՝ մենք չենք կարող ասել, թե տվյալ ժամանակահատվածում ներգրավված ավանդների որ մասն է մնացել բանկերում՝ ավելացնելով առևտրային բանկերում առկա ավանդների կուտակային մնացորդն, իսկ որ մասն է կարճ ժամանակ անց դուրս հոսել բանկերից՝ ուռճացնելով տվյալ ժամանակահատվածում ներգրավված ավանդների ծավալները, սակայն բնավ չավելացնելով բանկերում առկա ավանդների կուտակային ծավալները: Այսպիսով, որքան երկար են մնում ներգրավված ավանդները բանկերում, այնքան ավելի ինտենսիվ կաճի ամեն հաջորդ ժամանակահատվածում բանկերում առկա ավանդների մնացորդը:

ՀՀ ԿԲ ժամկետային ավանդների հոսքերի և տոկոսադրույքների մասին տեղեկատվությունը ներկայացնում է ամսեկան կտրվածքով, հազար միավորով և բացվածքով՝ ըստ ավանդների ժամկետայնության (մինչ 15 օր, 30 օր, 60 օր, 90օր, և այլն)¹: Ըստ ժամկետայնության նման մանրամասն բացվածքը չէր համապատասխանում մեր վերլուծության նպատակներին, և ավանդների ծավալների համար վերցրել ենք բոլոր ժամկետայնության ժամկետային ավանդների եռամսյակային գումարը, իսկ որպես տոկոսադրույք՝ օգտագործել


¹ ՀՀ ԿԲ Վիճակագրական տեղեկագիր, տարբեր տարիների հրապարակումներ:

ենք միջին կշռված տոկոսադրույքը¹: Դուրաբային և դրամային ավանդները համեմատելի դարձնելու համար, մենք դուրաբային ավանդները եռամսյակային միջին կշռված փոխարժեքով վերածել ենք դրամի:

Հաշվարկների արդյունքում բացահայտվել է, որ դուրաբային ավանդների հոսքերը նույնպես էականորեն գերազանցում են դրամային ավանդների հոսքերին, չնայած, որ դրամային ավանդների տոկոսադրույքները գերազանցում են դուրաբային ավանդների տոկոսադրույքները: Նշված արդյունքները ստորև ներկայացնում ենք ամփոփ աղյուսակով և գրաֆիկներով:


Գծապատկեր 2

Առևտրային բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային միջոցների միջին կշռված տոկոսադրույք



Գծապատկեր 3

Առևտրային բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային միջոցների ծավալները



¹ Հաշվարկներում ընդգրկված չեն մինչ 15 օր ավանդների ծավալներն ու տոկոսադրույքները, քանի որ տոկոսադրույքը դրսևորում էր խիստ անկայուն վարքագիծ՝ էականորեն տարբերվելով մնացած տոկոսադրույքներից:

Դրամային և դոլարային ավանդների ծավալների և միջին կշռված տոկոսադրույքների համեմատությունը

	Դոլարային ավանդների դրամային արտահայտմամբ ծավալի հարաբերակցությունը դրամային ավանդների ծավալին	Դրամային և դոլարային ավանդների միջին կշռված տոկոսադրույքների տարբերությունը
2005,1	13,3	2,9
2005,2	7,4	1,5
2005,3	13,9	1,6
2005,4	7,2	1,0
2006,1	9,9	1,8
2006,2	6,0	1,3
2006,3	4,2	1,2
2006,4	3,1	1,7
2007,1	2,8	1,5
2007,2	1,9	1,9
2007,3	2,0	2,1
2007,4	1,0	1,7
2008,1	0,9	1,6
2008,2	1,5	1,1
2008,3	1,0	1,8
2008,4	1,3	1,6
2009,1	5,7	3,3
2009,2	6,0	4,5
2009,3	5,0	3,8
2009,4	5,3	3,8
2010,1	5,4	3,3
2010,2	4,5	4,4
2010,3	3,6	4,3
2010,4	3,9	4,0

Ստացված արդյունքներից ակնհայտ երևում է, որ ՀՀ տնային տնտեսությունների համար իրենց խնայողությունների արժույթը որոշելիս տոկոսադրույքը միակ ազդեցիկ գործոնը չէ, իսկ խնայողական վարքագծի համար ներդրված ավանդների դիմաց հնարավորինս բարձր տոկոսներ ստանալը միակ շարժառիթը չէ:

Կարծում ենք, որ տնային տնտեսությունների ավանդների արժույթի ընտրության նման վարքագիծը մեծապես պայմանավորված է ազգային արժույթի հանդեպ անվստահությամբ:

Տնային տնտեսություններից ներգրավված ավանդների և դրանց համար առաջարկվող տոկոսադրույքների միջև կապն ուսումնասիրելու համար արվել է էկոնոմետրիկ վերլուծություն, ինչի արդյունքում բացահայտվել է, որ դրամային ավանդները ավելի զգայուն են տոկոսադրույքի նկատմամբ, քան դոլարայինները:

Մոդելների որակը հնարավորինս լավացնելու համար դրա մեջ ներդրվել են այլ փոփոխականներ նույնպես, մասնավորապես՝ «տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտներ» ցուցանիշը, որը ստացվել է հեղինակի հաշվարկներով՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

Դոլարային և դրամային ավանդների համար առանձին մշակված մոդելների արդյունքները ներկայացված են ստորև՝

$$\text{LOG}(\text{FFX}) = \underset{6.2}{9.17} * C + \underset{2.58}{0.92} \text{LOG}(\text{PRU}(-1)) + \underset{5.40}{0.53} \text{LOG}(\text{INC}(-2)) + \underset{-9.38}{\text{MA}(2)}$$

Adjusted R-squared 0.627896

Durbin-Watson stat 2.139244

Որտեղ՝ **FFX** - Ֆիզիկական անձանցից առևտրային բանկերի ներգրավված ժամկետային միջոցների եռամսյակային ծավալները՝ դոլարով,
PRU - ֆիզիկական անձանցից առևտրային բանկերի ներգրավված ժամկետային միջոցների միջին կշռված տոկոսադրույքները,
INC – Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտներ:

$$\text{LOG(FA)} = \underset{2.89}{2.94} * \text{LOG(PRA(-1))} + \underset{2.24}{0.21} * \text{LOG(INC(-1))} + \underset{4.06}{0.50} * \text{LOG(FA(-1))} + \underset{15.89}{0.97} * \text{MA(2)}$$

Adjusted R-squared 0.918173

Durbin-Watson stat 1.698623

Որտեղ՝ **FA** - Ֆիզիկական անձանցից առևտրային բանկերի ներգրավված ժամկետային միջոցների եռամսյակային ծավալները՝ դրամով,
PRA - ֆիզիկական անձանցից առևտրային բանկերի ներգրավված ժամկետային միջոցների միջին կշռված տոկոսադրույքները,
INC – Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտներ:

Նշենք, որ մոդելներում ներգրավված փոփոխականները բոլորն էլ եղել են վիճակագրորեն նշանակալի, իսկ ստացված արդյունքները ցույց են տալիս, որ նախորդ ժամանակահատվածում տոկոսադրույքի մեկ միավորի փոփոխությունը դրամային ավանդների պարագայում հանգեցնում է ներգրավված ավանդների ծավալների փոփոխության 2.94 միավորով, իսկ դոլարային ավանդների պարագայում՝ 0.92 միավորով: Հետաքրքրական է այն փաստը, որը մոդելների մի քանի տարբերակներ փորձարկելու արդյունքները ցույց են տվել, որ ներգրավված ավանդների ծավալների վրա ազդեցություն է ունենում ոչ թե ներկա, այլ նախորդ ժամանակաշրջանի տոկոսադրույքը: Նույն օրինաչափությունը առկա է նաև ավանդների ծավալների վրա տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտի փոփոխության ազդեցությունը դիտարկելիս: Այս ցուցանիշը նույնպես ավանդների վրա ազդում է որոշակի ժամանակային լագով:

Տոկոսադրույքի նկատմամբ դոլարային և դրամային ավանդների զգայունության տարբերությունը բացահայտելուց հետո անդրադառնանք ժամանակահատվածի ընթացքում ներգրավված ավանդների ծավալների և ժամանակահատվածի վերջում դրանց կուտակային մնացորդի փոխազդեցության վերլուծությանը:

Էկոնոմետրիկ վերլուծության օգնությամբ մենք փորձել ենք բացահայտել, թե տվյալ ժամանակահատվածում ներգրավված միջոցների ամեն մի միավորի ավելացումը որքանով է ավելացնում ժամանակահատվածի վերջում ավանդների մնացորդը: Այս նպատակի իրականացման համար որպես կախյալ փոփոխական է ընտրվել ավանդների կուտակային մնացորդը տվյալ ժամանակահատվածի վերջում, իսկ որպես բացատրող փոփոխականներ՝ տվյալ ժամանակահատվածի ընթացքում ներգրավված ավանդների ծավալներն ու ավանդների կուտակային մնացորդը՝ նախորդ ժամանակահատվածում:

Ստացված արդյունքները ներկայացված են ստորև՝

$$\text{LOG(SKFX)} = \underset{0.51}{-1.38} * C + \underset{0.13}{0.54} * \text{LOG(FFX)} + \underset{0.10}{0.59} * \text{LOG(SKFX(-1))}$$

Adjusted R-squared 0.974259

Durbin-Watson stat 2.138982

F-statistic 417.3300

Prob(F-statistic) 0.000000

Որտեղ՝ **SKFX** - ՀՀ առևտրային բանկերում տնային տնտեսությունների ժամկետային ավանդները՝ արտարժույթով,
FFX - Ֆիզիկական անձանցից առևտրային բանկերի ներգրավված ժամկետային միջոցների եռամսյակային ծավալները՝ դոլարով:

$$\text{LOG(SKA)} = 0.82 \cdot C + 0.54 \cdot \text{LOG(FA)} + 0.41 \cdot \text{LOG(SKA(-1))}$$

3.45
9.09
7.09

Adjusted R-squared 0.974259

Durbin-Watson stat 1.826550

F-statistic 800.3860

Prob(F-statistic) 0.000000

Որտեղ՝ **SKA** - ՀՀ առևտրային բանկերում տնային տնտեսությունների ժամկետային ավանդները՝ դրամով,
FA - Ֆիզիկական անձանցից առևտրային բանկերի ներգրավված ժամկետային միջոցների
 եռամսյակային ծավալները՝ դրամով:

Ստացված արդյունքներն ուշագրավ են այնքանով, որ մոդելների արդյունքները, ունենալով բավական լավ որակական հատկանիշներ, ցույց են տալիս, որ ներգրավված միջոցները միայն կիսով չափ են վերածվում կուտակային մնացորդի: Հետազոտության արդյունքները որոշակի հիմքեր են տալիս ենթադրություններ անելու նաև ավանդների ժամկետայնության վերաբերյալ: Մոդելի տարբեր տարբերակներում հետազոտվել են ավանդների կուտակային մնացորդի կախվածությունը նախորդ ժամանակահատվածում ներգրավված միջոցների ծավալներից: Ստացված արդյունքները ցույց են տվել, որ այդ բացատրող փոփոխականը վիճակագրորեն նշանակալի չէ: Իսկ եթե նախորդ ժամանակահատվածում ներգրավված միջոցները ազդեցություն չունեն տվյալ ժամանակահատվածի կուտակային մնացորդի վրա, ապա կարելի ենթադրել, որ դրանց ժամկետայնությունը մեծամասամբ մեկ եռամսյակ է: Այսինքն չնայած նրան, որ ժամկետային ավանդները կարող են ձևակերպվել տարբեր ժամկետներով՝ ինչպես մինչ 15 օր, այնպես էլ մեկ տարի և ավել, այնուամենայնիվ դրանց մեծամասնության միջին ժամկետայնությունը 3 ամիս է:

Ուշադրություն դարձնելով նաև մոդելներում ներգրավված մյուս բացատրող փոփոխականին՝ կարելի է նկատել, որ նախորդ ժամանակահատվածում ավանդների կուտակային մնացորդի մեկ միավորի աճը ներկա ժամանակահատվածում ավանդների կուտակային մնացորդը ավելացնում է դրամային ավանդների պարագայում՝ 0.41, իսկ դոլարային ավանդների պարագայում՝ 0.59 միավորով:

Այսինքն տվյալ ժամանակահատվածում առկա ավանդները գրեթե կիսով չափ են փոխանցվում հաջորդ ժամանակահատված:

ՏԻԳՐԱՆ ՍԿՐՏՉՅԱՆ

ԵՊՏ աստվիրասևր

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԽԱՌՆ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԵՎԱՍՈՒՏՆԵՐԻ, ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ

Տվյալ վերլուծությունն իրականացնելու համար մեզ անհրաժեշտ երեք ցուցանիշներից (տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտ, տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսեր և տնային տնտեսությունների խնայողություններ) միայն տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերն է, որ ՀՀ ԱՎԾ կողմից պաշտոնապես հրապարակվում է՝ եռամսյակային պարբերականությամբ: Ուստի, մեր առջև խնդիր էր դրված եռամսյակային կտրվածքով հաշվարկել նաև տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտները: Այս ցուցանիշն ուղղակի հաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկատվության բացակայության պատճառով, մենք ստիպված էինք դիմել այս ցուցանիշի հաշվարկման անուղղակի մեթոդի՝ չբացառելով վերջնական արդյունքներում որոշակի մոտարկում ունենալու հնարավորությունը:

Նշված անուղղակի մեթոդը կայանում է նրանում, որ նախ եռամսյակների կտրվածքով կհաշվարկենք համախառն ազգային տնօրինվող եկամուտ ցուցանիշը, քանի որ այս ցուցանիշը նույնպես պաշտոնապես չի հրապարակվում եռամսյակային կտրվածքով, այնուհետև, օգտագործելով ստացված արդյունքները՝ կգնահատենք տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտները: Այս վերլուծության մեջ կարող ենք հաշվարկներ անել առավելագույնը մինչ 2008թ համարը, քանի որ մինչ այս պահը հրապարակված է «Հայաստանի ազգային հաշիվները» 2010թ. համար, որում մեզ անհրաժեշտ տեղեկատվությունն ամփոփված է մինչ 2008թ:

Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտը ստանալու համար, անհրաժեշտ է եռամսյակների կտրվածքով հաշվարկել համախառն ազգային տնօրինվող եկամուտը: Վերջինս հաշվարկվում է հետևյալ մեթոդաբանությամբ՝

ՀՆԱ + Սկզբնական եկամուտներ ստացված «արտերկրից» – Սկզբնական եկամուտներ փոխանցված «արտերկիր» = Սկզբնական եկամուտների սալրո (համախառն ազգային եկամուտ):

Սկզբնական եկամուտների սալրո (համախառն ազգային եկամուտ) + «Արտերկրից» ստացված ընթացիկ տրանսֆերտներ – «Արտերկրին» փոխանցված ընթացիկ տրանսֆերտներ = Համախառն տնօրինվող եկամուտ¹:

Նշված բոլոր ցուցանիշները եռամսյակային կտրվածքով ամփոփված են ՀՀ ԱՎԾ պաշտոնական հրապարակումներում: Մասնավորապես՝ ՀՆԱ-ն եռամսյակային կտրվածքով ներկայացված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԸ» վիճակագրական ժողովածուում²: Սկզբնական եկամուտներ ստացված «արտերկրից» և սկզբնական եկամուտներ փոխանցված «արտերկիր» ցուցանիշները «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿԵԾԻՌԸ» վիճակագրական ժողովածուում արտացոլված են «ԵԿԱՄՈՒՏՆԵՐ» հոդվածում³: Իսկ Սկզբնական եկամուտներ ստացված «արտերկրից» և սկզբնական եկամուտներ փոխանցված «արտերկիր» ցուցանիշները՝ «ԸՆԹԱՑԻԿ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ» հոդվածում⁴: Նշենք, որ այս բոլոր ցուցանիշները արտացոլված են դոլարով:

Նշված ցուցանիշները դրամի վերածելու համար օգտագործել ենք եռամսյակային միջին փոխարժեքը⁵: Իսկ տարեկան ցուցանիշները հաշվարկել ենք ոչ թե օգտագործելով տարեկան միջին փոխարժեքը, այլ գումարելով եռամսյակների ցուցանիշները դրամային արտահայտմամբ: Այդ իսկ պատճառով մեր ստացած տարեկան թվերը փոքրինչ շեղվում են ՀՀ ԱՎԾ ներկայացրած տարեկան ցուցանիշներից: Սակայն այդ շեղումն այնքան չնչին է, որ չի կարող ազդել արվող վերլուծության որակի վրա, և մենք կարող ենք այն անտեսել: Մեր հաշվարկներով ստացված «Համախառն ազգային տնօրինվող եկամտ» ցուցանիշի և ԱՎԾ ներկայացրած ցուցանիշի մեջ տարեկան կտրվածքով եղած շեղումն ունի հետևյալ պատկերը:

1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԸ, 2004-2008, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, ք. Երևան 2010թ., էջ 28-29:

2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԸ, 2004-2008, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, ք. Երևան 2010թ., էջ 136:

3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿԵԾԻՌԸ, 2010, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, ք. Երևան, 2010թ., էջ 42, 43:

4 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿԵԾԻՌԸ, 2004-2007, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, ք. Երևան, 2008թ., էջ 43:

5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿԵԾԻՌԸ, 2010, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, ք. Երևան, 2010թ., էջ 46:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿԵԾԻՌԸ, 2004-2007, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, ք. Երևան, 2008թ., էջ 46:

5 Վիճակագրական տեղեկագիր 2009, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, էջ 66:

Համախառն Ազգային Տնօրինվող Եկամուտ

(մլն. դրամ)

	Համախառն ազգային տնօրինվող եկամուտը՝ մեր հաշվարկներով	Համախառն ազգային տնօրինվող եկամուտն՝ ԱՎԾ հաշվարկներով	Մեր հաշվարկներով ստացված ՀԱՏԵ տոկոսային շեղումը ԱՎԾ ՀԱՏԵ-ից
2005.1	385544.40		
2205.2	547777.71		
2005.3	775773.07		
2005.4	833527.39		
2005	2542622.58	2543206.28	-0.02
2006.1	423214.38		
2006.2	694541.36		
2006.3	957332.02		
2006.4	954307.06		
2006	3029394.82	3034419.33	-0.17
2007.1	478985.22		
2007.2	793260.53		
2007.3	1147981.04		
2007.4	1142561.61		
2007	3562788.41	3567829.52	-0.14
2008.1	580372.84		
2008.2	922649.77		
2008.3	1396762.58		
2008.4	1160095.00		
2008	4059880.20	4060477.31	-0.01

Ստացված արդյունքները թույլ են տալիս «համախառն ազգային տնօրինվող եկամուտ» ցուցանիշի՝ եռամսյակային կտրվածքով հաշվարկն համարել հաջողված: Մակայն մեր գլխավոր նպատակն է եռամսյակային կտրվածքով հաշվարկել «տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտ» ցուցանիշը, որի ուղղակիորեն հաշվարկումը անհնար է՝ տվյալների բացակայության պատճառով: Բայց, ինչպես արդեն նշել ենք, մենք կարող ենք այս ցուցանիշի հաշվարկմանը մոտենալ անուղղակի ճանապարհով: Այն է՝ հաշվարկել, թե «Համախառն ազգային տնօրինվող եկամուտ» տարեկան ցուցանիշի մեջ որքան մասն է կազմում «Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտ» տարեկան ցուցանիշը և ստացված համամասնությունները տարածել եռամսյակային ցուցանիշների վրա: Հաշվարկները ցույց են տալիս, որ «Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտ» ցուցանիշը տարեկան կտրվածքով կազմում է «համախառն ազգային տնօրինվող եկամուտ» ցուցանիշի շուրջ 75 տոկոսը:

«Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտը» և «Համախառն ազգային տնօրինվող եկամուտ» տարեկան ցուցանիշների համեմատությունը

(մլն. դրամ)

	Համախառն ազգային տնօրինվող եկամուտ (ՀԱՏԵ)	Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտ (ՏՏՀՏԵ)	ՏՏՀՏԵ հարաբերությունը ՀԱՏԵ
2005	2543206.28	1730747.0	0.75
2006	3034419.33	2080332.0	0.76
2007	3567829.52	2356739.0	0.73
2008	4060477.31	2732983.0	0.74

Նշված հանգամանքը հիմք է տալիս ենթադրելու, որ «Համախառն ազգային տնօրինվող եկամուտ» ցուցանիշի ձևավորման միտումները կարելի է տարածել նաև «Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտ» ցուցանիշի վրա:

«Համախառն ազգային տնօրինվող եկամուտ» ցուցանիշի ձևավորման միտումները բացահայտելու համար մենք ամեն եռամսյակի ցուցանիշը կբաժանենք տարվա ցուցանիշի վրա, որպեսզի տեսնենք, թե ամեն եռամսյակում տարեկան ցուցանիշի որ մասնաբաժինն է ձևավորվում:

Ստացված արդյունքները ներկայացված են ստորև՝

Աղյուսակ 3

**«Համախառն ազգային տնօրինվող եկամուտ» ցուցանիշի
ձևավորման միտումները՝ ըստ եռամսյակների**

	2005	2006	2007	2008
1-ին եռամսյակ	0.15	0.14	0.13	0.14
2-րդ եռամսյակ	0.22	0.23	0.22	0.23
3-րդ եռամսյակ	0.31	0.32	0.32	0.34
4-րդ եռամսյակ	0.33	0.31	0.32	0.29

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ առաջին երկու և վերջին երկու եռամսյակների մեջ կա ընդգծված տարբերություն, որը դրսևորվել է դիտարկված բոլոր տարիներում: Եռամսյակների ընթացքում «համախառն ազգային տնօրինվող եկամուտ» ցուցանիշի ձևավորման համամասնությունների՝ դիտարկված բոլոր չորս տարիների կտրվածքով համաչափությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այն հանդիսանում է օրինաչափ երևույթ: Նշված հանգամանքները հիմք են տալիս ենթադրելու, որ եթե տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտ ցուցանիշն ըստ եռամսյակների տրոհենք նույն համամասնություններով, ստացված թվերը կլինեն իրատեսական, զերծ անթույլատրելի մոտարկումներից, և մենք կարող ենք դրանք օգտագործել մեր հետագա վերլուծություններում:

«Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտ» ցուցանիշն ըստ եռամսյակների տրոհելով նույն համամասնություններով, ինչպես ձևավորվել է «Համախառն ազգային տնօրինվող եկամուտ» ցուցանիշը՝ մենք կստանանք հետևյալ արդյունքները՝

Աղյուսակ 4


**Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող
եկամուտն՝ ըստ եռամսյակների**

(մլն. դրամ)

	2005	2006	2007	2008
1-ին եռամսյակ	262437.62	290627.82	316842.60	390688.65
2-րդ եռամսյակ	372868.80	476952.23	524731.71	621098.66
3-րդ եռամսյակ	528063.79	657414.62	759374.79	940256.41
4-րդ եռամսյակ	567376.79	655337.33	755789.90	780939.28

Ստացված արդյունքները մենք կարող ենք համադրել Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսեր ցուցանիշի հետ, որը ԱՎԾ-ն հրապարակում է եռամսյակների կտրվածքով: Արդյունքում կտեսնենք, թե ինչպիսի ընդհանուր միտումներ, կամ տարբերություններ կան տնային տնտեսությունների եկամուտների ու ծախսերի՝ տարվա ընթացքում ըստ եռամսյակների ձևավորման համամասնություններում: Իսկ այս երկու ցուցանիշների տարբերությունը հաշվելով՝ մենք կստանանք նաև տնային տնտեսությունների խնայողությունները՝ եռամսյակային կտրվածքով: Ստացված արդյունքները գրաֆիկորեն ներկայացված են ստորև՝

Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտները, վերջնական սպառման ծախսերն ու խնայողությունները



Գծապատկերից երևում է, որ տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը բոլոր տարիներին առաջին եռամսյակում գերազանցում են նրանց համախառն տնօրինվող եկամուտները՝ խնայողություններին տալով բացասական արժեք:

Բացահայտված օրինաչափության արժանահավատությունը փորձարկելու համար մենք փորձեցինք առաջ քաշել մի վարկած, ըստ որի՝ տնային տնտեսությունները ծախսում են ոչ թե ընթացիկ, այլ նախորդ ժամանակահատվածի եկամուտները՝ կուտակումների ձևով: Այս վարկածի համաձայն՝ մենք պետք է դիտարկենք ոչ թե ընթացիկ եկամուտների և ընթացիկ ծախսերի, այլ նախորդ ժամանակահատվածի եկամուտների և ընթացիկ ծախսերի տարբերությունը: Այն վարկածը, որ տնային տնտեսությունների սպառողական վարքագծի վրա բացի ընթացիկ եկամտից, ազդեցություն ունեն մասնախորդ ժամանակահատվածի եկամուտները, հանդիսանում է բնակչության տնտեսական վարքագիծը մեկնաբանող տնտեսությունների շրջանակներում առաջարկված ամենահիմնական կանխավարկածներից մեկը: Բայց տվյալ պարագայում մենք առաջ ենք քաշում ոչ թե այդ վարկածը, այլ այն, որ ընթացիկ եկամուտներն ընդհանրապես պետք չէ համեմատել ընթացիկ ծախսերի հետ: Փոխարենը պետք է համեմատել նախորդ ժամանակահատվածի եկամուտները: Նման վարկած առաջ քաշելու համար հիմք է հանդիսանում այն փաստը, որ մարդիկ հաճախ տվյալ ժամանակահատվածի եկամուտները ստանում են ժամանակահատվածի վերջում՝ այն ծախսելով հաջորդ ժամանակահատվածում: Այսինքն, եկամուտների և ծախսերի մեջ կա **ժամանակային լագ**, ինչը պետք է հաշվի առնել վերլուծություններում:

Այս վարկածը զարգացնելու համար առաջին հերթին խոչընդոտ էր հանդիսանում այն փաստը, որ տնային տնտեսությունների եռամսյակային եկամուտները, ծախսերը, կամ խնայողությունները գումարելիս, պետք է ստանանք տարեկան թվերը՝ որոնք հրապարակվում են պաշտոնապես: Իսկ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի ազգային հաշիվները» վիճակագրական ժողովածուում ամեն տարվա համար տարեկան եկամուտները տրոհված են ծախսերի և խնայողությունների միջև¹: Ուստի, եթե խնայողությունների հաշվարկման համար դիտարկենք նախորդ ժամանակահատվածի համախառն տնօրինվող եկամտի և ընթացիկ ժամանակահատվածի վերջնական սպառման ծախսերի տարբերությունը, ապա ստացված եռամսյակային թվերի գումարը կշեղվի պաշտոնապես հրապարակված տարեկան ցուցանիշից:

Բացի նշված հանգամանքից, մենք կարող ենք մասնաշաղկապակապ վերլուծության օգնությամբ ստուգել, թե կոնկրետ այս վերլուծության շրջանակներում որքանով է ճիշտ իրար հետ

¹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԸ, 2004-2008, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, ք. Երևան 2010թ., էջ 97:

համադրել ընթացիկ ժամանակահատվածի համախառն տնօրինվող եկամուտն ու վերջնական սպառման ծախսերը: Անելով էկոնոմետրիկ վերլուծություն և տնային տնտեսությունների ծախսերը դնելով կախվածության մեջ ընթացիկ և նախորդ ժամանակահատվածների համախառն տնօրինվող եկամտից՝ մենք կարող ենք ստուգել, թե ընթացիկ ժամանակահատվածում վերջնական սպառման ծախսերի վրա հատկապես որ փոփոխականի ազդեցությունն է առավել մեծ: Առաջարկում ենք հետևյալ մոդելը՝

$$(1) \ln C_t = c_0 + c_1 \ln INC_t + c_2 \ln INC_{t-1} + \varepsilon_t$$

Որտեղ՝ $\ln C_t$ –ն տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերն են, $\ln INC$ և $\ln INC(-1)$ –ը տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամուտն է համապատասխանաբար տվյալ և նախորդ ժամանակահատվածում, c_0, c_1, c_2 - ը մոդելի անհայտ պարամետրներն են, ε_t - ն մոդելի սխալն է տվյալ ժամանակահատվածում, t - ն այն ժամանակահատվածն է, որի կտրվածքով իրականացվել է վերլուծությունը: Վերջինս ընդգրկում է մոդելում առկա բոլոր տնտեսական ցուցանիշների եռամսյակային տվյալները 2005-2008 թվականների համար:

Գնահատենք մոդել 1-ը փոքրագույն քառակուսիների եղանակով՝ ներառելով նաև սահող միջին պրոցեսը: Կատանանք հետևյալ արդյունքները՝

$$\ln C_t = 3.71 + 0.61 \ln INC_t + 0.11 \ln INC_{t-1}$$

(0.26)
(0.02)
(0.03)
[14.41]
[27.21]
[4..30]

Adjusted R-squared: 0.992
 Durbin-Watson stat: 1.709
 F-statistic: 571.461
 Prob(F-statistic): 0.000

Նշենք, որ մոդելում ընդգրկված բոլոր բացատրող փոփոխականները, բացի հաստատուն գործակցից վիճակագրորեն նշանակալի են, իսկ ստացված որակական չափանիշները թույլ են տալիս պնդել, որ ստացված արդյունքներն արժանահավատ են: Հաստատուն գործակցի նշանակալի շիճմերը կարելի է բացատրել նրանով, որ եթե տնային տնտեսությունները չունենան եկամուտ, չեն կարող ունենալ նաև սպառում: Նշված հանգամանքը կարող է հանգեցնել հաստատուն գործակցի նշանակալիության նվազմանը:

Ստացված արդյունքներից երևում է, որ ընթացիկ սպառման համար որպես ազդեցիկ գործոն հանդես են գալիս ոչ թե նախորդ ժամանակահատվածի, այլ տվյալ ժամանակահատվածի ծախսերը: Ստացված արդյունքները ևս վկայում են այն մասին, որ տնային տնտեսությունների խնայողությունները հաշվելիս պետք է տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը հանել ընթացիկ, ոչ թե նախորդ ժամանակահատվածի համախառն տնօրինվող եկամտից:

Ամփոփելով վերլուծությունը՝ արձանագրենք.

- Տնային տնտեսությունների ծախսերի ծավալները տարիների կտրվածքով դրսևորում են աճի միտում՝ եկամուտների աճին զուգընթաց, մինչ խնայողությունների ծավալները համեմատաբար հաստատուն են՝ չհաշված սեզոնայնությունը:
- Չնայած որ տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերում նույնպես առկա է սեզոնայնություն, կարելի է պնդել, որ տնային տնտեսություններն անում են սպառման որոշակի համահարթեցում՝ տարվա վերջում անելով խնայողություններ, իսկ սկզբում օգտագործելով առկա խնայողությունները՝ ընթացիկ ժամանակահատվածում եկամուտները գերազանցող ծախսերը հոգալու համար:
- Տարվա ընթացքում տնային տնտեսությունների թե՛ եկամուտները, թե՛ ծախսերը տատանողական են և էապես աճում են վերջին երկու եռամսյակներում: Մասնավորապես եկամուտները վերջին եռամսյակում շուրջ երկու անգամ գերազանցում են առաջին եռամսյակի եկամուտներին:

ՈՒՂԱԿԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տնտեսական համակարգը օրեցօր ընդլայնվում և ստանում է վիթխարի չափեր. ավելանում է գործարարների թիվը, մեծանում է թողարկվող արտադրանքի անվանացանկը, աճում են արտադրողների կապերը միմյանց և սպառողների միջև: Ձևավորված տնտեսական իրավիճակը նոր խնդիրներ և պահանջներ է առաջադրում, այդ թվում՝ գործարարության ոլորտում:

Ամեն օր գործարարության տարբեր ոլորտներին վերաբերող բազմաթիվ որոշումներ են ընդունվում, որոնցից շատերն առնչվում են մարքեթինգին: Հայ գործարարները ոչ վաղ անցյալում մարքեթինգ ասելով հասկանում էին ինչ-որ բարդ գործընթաց՝ կապված առևտրի հետ: Բայց տնտեսական բնագավառում իրավիճակն այնքան հաճախ է փոփոխվում, որ նույնիսկ տասը տարի չանցած հայ գործարարները սկսեցին գիտակցել բիզնեսի վարման նոր մեթոդների կիրառման անհրաժեշտությունը, որոնք քսաներորդ դարի ընթացքում արդեն տեղ էին գտել զարգացած երկրներում: Գործարարության նոր մեթոդներից է, անկասկած, նաև մարքեթինգը՝ իր սկզբունքներով և մոտեցումներով:

Ֆիրմաներն ուղղակի մարքեթինգի օգնությամբ դիմում են այն ժամանակ, երբ, ավանդական մարքեթինգի հնարավորությունները սպառված են համարում: Դրանով իր դիրքերն է ամրապնդում ուղղակի մարքեթինգը՝ բազմակողմանիորեն ուսումնասիրելով ֆիրմայի ներքին և արտաքին միջավայրերը, առկա խնդիրները, բացահայտելով լուծման այլընտրանքային տարբերակներ, գնահատելով դրանցից յուրաքանչյուրի արդյունավետությունը և կիրառման հնարավորությունները: ՀՀ-ում ուղղակի մարքեթինգը զարգացման մեծ թափ է առնում, որի մասին է վկայում վերջինիս գործիքների առավել լայն կիրառությունը՝ կատալոգով առևտուր, հեռախոսով վաճառք, էլեկտրոնային վաճառք, անհատական վաճառք, փոստային առաքմամբ վաճառք և այլն: Ներկայումս աշխարհում նկատվում է ուղղակի վաճառքի գծով ֆիրմաների մասնագիտացման միտում և սեփական խանութների ցանցի զարգացման ձգտում: Իրենց հերթին խոշոր խանութները դիմում են ուղղակի վաճառքի օգնությանը: Ուղղակի մարքեթինգի գծով ՀՀ-ում միակ մասնագիտացված կազմակերպությունը «Magic Sale»-ն է: Ընկերությունը համագործակցում է մոտ 150 կազմակերպությունների հետ՝ իր վրա վերցնելով այդ կազմակերպությունների ուղղակի մարքեթինգի միջոցառումների իրականացումը¹: Կազմակերպությունը հիմնականում մասնագիտացել է ուղղակի վաճառքի խթանման մեթոդների կիրառության ուղղությամբ, որի հիմքում նպատակային զեղչերի տրամադրումն է սպառողական մեծ ակտիվություն ու գնողունակություն ունեցող հաճախորդների որոշակի շրջանակներին: Նմանատիպ զեղչերի շնորհիվ տվյալ կազմակերպությունը ձեռք է բերում մշտական և, ամենակարևորը, հավատարիմ հաճախորդներ՝ ակնկալելով, որ նրանք իրենց հերթին կներառեն նաև իրենց ընկերներին, ծանոթներին ու բարեկամներին: Այլ կերպ ասած՝ ընկերությունն առաջնորդվում է ուղղակի մարքեթինգում լայն տարածում գտած «վիրուսային էֆեկտի» ազդեցության գործադրմամբ:

ՀՀ-ում լայն կիրառություն է ստացել նաև SMS մարքեթինգը, որը ուղղակի մարքեթինգի տարատեսակներից մեկն է: Այս ոլորտում մեծ դերակատարություն ունեն «Viva Cell» MTS, «Beeline», «Orange» բջջային կապի օպերատորները, ինչպես նաև «Sprint MMS» ՍՊԸ-ն: Վերջինս առաջարկում է տեղեկատվական համակարգերի կիրառմամբ ֆիրմաների՝ հասարակության հետ շփումը կազմակերպել իրենց SMS և E-mail-ների միջոցով: Ընկերությունը, գրանցելով կայքում իր հաճախորդներին, ուղարկում է SMS հաղորդագրություններ ընկերությունում կատարվող իրադարձությունների, նորամուծությունների մասին, ինչպես նաև շնորհավորանքներ, մաղթանքներ և այլն: Այլ է պատկերը բջջային կապի օպերատորների պարագայում, որոնք հիմնականում որոշակի ծառայություններ են մատուցում տվյալ ֆիրմայի պատվերով, սակայն լսարանն այս դեպքում «ընտրված է» բջջային կապի օպերատորի

¹ www.bonus.am/articles/php.13

կողմից: Այսպես օրինակ՝ եթե տնային տնտեսուհին ստանում է SMS հաղորդագրություն շինանյութի խանութում ընթացող ակցիաների մասին, ապա սա ոչ արդյունավետ ուղղակի մարքեթինգ է, այլ կերպ ասած՝ այս դեպքում SMS հաղորդագրությունը չի հասել թիրախային սպառողին: Հետևաբար՝ առավել արդյունավետ կլինի, եթե ընկերությունները դիմեն այս ոլորտում մասնագիտացած կազմակերպություններին՝ վերջիններիս դրդելով անձամբ համագործակցել բջջային կապի օպերատորների հետ:

Աղյուսակ 1

Կապի տարբեր միջոցներով հաղորդագրությունների ուղարկման տարբերությունը¹

	<i>Կայքի միջոցով</i>	<i>Բջջային հեռախոսի միջոցով</i>
Ուղարկման արագություն	1000 հատ/րոպե	12 հատ/րոպե
Հայերեն-ռուսերեն տեքստ ուղարկելու հնարավորություն	+	-
Արժեքն առաջին վարձ	-	+
Գնային տարբերություն	համեմատաբար էժան	թանկ

Առավել արդյունավետ կլինի, եթե տվյալ ոլորտում մասնագիտացած ընկերություններին դիմեն հետևյալ կազմակերպությունները՝

- բանկերը, վարկային կազմակերպությունները՝ հաճախորդներին քարտային հաշվի շարժերի, վարկի մարման ժամկետների հիշեցումների վերաբերյալ հաղորդագրություն ուղարկելու նպատակով, ինչպես նաև շնորհավորելու նրանց տարբեր առիթներով,
- առևտրային կազմակերպությունները (խանութներ, սուպերմարքեթներ և այլն)՝ նոր ապրանքների ստացման, զեղչերի, ակցիաների կազմակերպման մասին տեղեկացնելու նպատակով,
- սպահովագրական ընկերությունները՝ հաճախորդներին վճարման հիշեցումներ և այլ տեղեկություններ հաղորդելու նպատակով,
- ռեստորանները, խաղատները, ակումբները՝ մենյուի նորույթների, հրավիրված երաժիշտների, խաղարկությունների և այլնի մասին հաճախորդներին տեղեկություններ հաղորդելու նպատակով,
- տուրիստական գործակալությունները՝ հաճախորդներին նոր առաջարկների, չվերթներում եղած փոփոխությունների մասին տեղեկություններ հաղորդելու նպատակով,
- ծառայություններ մատուցող կազմակերպությունները՝ իրենց ծառայությունների ավելացման, փոփոխման և այլ տեղեկություններ հաղորդելու համար:

Ուղղակի մարքեթինգի զարգացման կարևոր պայմաններից մեկն էլ Call-կենտրոնների առկայությունն է: Այս ոլորտում ՀՀ-ում մասնագիտացել է «Նիկիտա մոբայլ» ընկերությունը՝ իր հեռախոսակապի կենտրոնի համակարգով, որը հնարավորություն է ընձեռում իրականացնելու հեռուստամարքեթինգ, այսինքն՝ վաճառք և նպատակային լսարանի մոնիթորինգ հեռախոսակապի միջոցով: Ընկերությունն իրականացնում է ոչ միայն հեռուստամարքեթինգ, այլև ուղղակի մարքեթինգ, որում ներառվում են այնպիսի գործիքներ, ինչպիսիք են թեժ գիծը և բազմատեսակ առաքումները²: Նշենք, որ Call-կենտրոնը ընկերության համար կորպորատիվ կապի կենտրոնի այլընտրանք է համարվում: Նպատակահարմար կլինի սույն ոլորտի կայացման և զարգացման համար Call-կենտրոնների ներդրումը կրի զանգվածային բնույթ: Նպատակահարմար է, որպեսզի պետությունը ստանձնի սույն համակարգում «ակտիվ գործընկերոջ» դերը: Միջազգային փորձի համադրումները ցույց են տվել, որ զարգացած երկրներում սպառողները նախապատվությունը տալիս են ոչ թե ապրանքների ցածր գնային գործոններին, այլև գնման որոշումներ ընդունելուց առաջ գնահատում են սպառողական շահերի պաշտպանության և աջակցության միջոցառումները: Call-կենտրոնների դերակա-

¹ <http://www.sprint-mms.com/sms-marketing>
² www.call-center.am/arm/index.php

տարումը կայանում է բողոք-հայտերի հավաքագրման, դրանց տեսակավորման, բուն նպատակների ուսումնասիրության և այդ հիմքով վերջիններիս նվազեցմանն ուղղված միջոցառումների ձեռնարկմանը (support delivery): Call-կենտրոնի հիմնումը կաջակցի տվյալների բազայի ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են նաև հեռախոսով վաճառք իրականացնելու համար: Մեր հանրապետությունում հեռախոսով վաճառք իրականացնելու գլխավոր խոչընդոտը բնակչության անվստահությունն է և րոպեավճարի համար սահմանված դեռևս բարձր սակագները: Այսօր մեր երկրում առաջարկվում է 0.800... բազմաալիքային հեռախոսակապի ծառայություն, որի միջոցով հաճախորդները, գործընկերները և այլ շահագրգիռ անձինք կապ են հաստատում ընկերության հետ: Նշենք, որ «0.800...»-ը ՀՀ ողջ տարածքում գործող հեռախոսահամար է, որի օգնությամբ հնարավոր է կազմել հեռախոսագների վիճակագրությունը, ըստ այդմ պարզել, թե որ քաղաքում կամ շրջանում է առավելագույնս սպառվում տվյալ ընկերության ապրանքը (ծառայությունը): Մյուս առավելությունն այն է, որ հաճախորդները հնարավորություն են ստանում անվճար կապ հաստատելու ընկերության հետ ՀՀ ցանկացած վայրից:

Ուղղակի մարքեթինգի զարգացման համար հզոր գործիք է նաև ինտերակտիվ TV-ին (*հետադարձ կապով հեռուստացույց*), որն արդեն իրականություն է դարձել նաև ՀՀ-ում: Ինտերակտիվ TV-ին լայն հնարավորություններ է բացում ուղղակի մարքեթինգի և սպառողների առջև: Այս համակարգում գլխավոր խոչընդոտն ինտերակտիվ TV-ի ընդգրկման սահմանափակությունն է. այն այսօր հասանելի է միայն քաղաքի կենտրոնական թաղամասերի բնակիչներին: Չնայած այս ամենին՝ ՀՀ-ն նպատակ ունի առաջիկա երկու տարվա ընթացքում ամբողջովին անցում կատարելու թվային հեռուստատեսության, որը, որպես այդպիսին, նոր որակ կհաղորդի հեռահաղորդակցության շուկային, քանի որ, ըստ էության, թվային հեռահաղորդակցության շուկայում կառաջարկվեն ոչ թե նոր տեխնոլոգիաներ, այլ կյանքի նոր ոճ:

Այսօր նոր զարգացում է ապրում կատալոգով առևտուրը (առաքումային առևտուրը), որը բնութագրվում է որպես քաղաքակիրթ առևտրի ձև: Առաքումային առևտուրը դարձել է արտասահմանյան ֆիրմաների էքսպանսիայի ուղիներից մեկը հայաստանյան շուկայում, ընդ որում՝ շահավետ պայմաններում: ՀՀ-ում այս համակարգով աշխատող կազմակերպությունները բավական շատ են. ընդգրկված են ինչպես շինանյութի, կահույքի, հագուստի, այնպես էլ կոսմետիկայի և դեղորայքի ոլորտները: Կատալոգով առևտուրը մեր երկրում կիրառվում է առավելապես հագուստի ու կոսմետիկայի վաճառք իրականացնելիս: Առաքումային առևտրի ոլորտում մասնագիտացած՝ աշխարհի առաջատար «OTTO» (գերմանական) և «3Suisse» (ֆրանսիական) ընկերություններն իրենց գործունեությունն են ծավալում նաև ՀՀ-ում: Նշենք, որ «3Suisse»-ը Ֆրանսիայում իր մեծությամբ երկրորդ ընկերությունն է՝ մասնագիտացած հեռահար վաճառքում (կատալոգ, ինտերնետ, առաքումներ), որի կապիտալը կազմում է 4015053 եվրո¹: Ի տարբերություն «3Suisse»-ի, «OTTO»-ն չունի խստորէ ՀՀ տարածքում: Այսինքն՝ տվյալ դեպքում ապրանքը առարկայորեն չի ցուցադրված, միայն ներկայացված է կատալոգում, ինչը ստեղծում է հոգեբանական պատճեն²՝ «Մինչև աչքովդ չտեսնես, չես գնի»: Չնայած այս ամենին՝ «OTTO»-ն արդեն 10 տարի է, ինչ ՀՀ-ում է և ունի զգալի թվով սպառողներ: Ընկերությունը հիմնականում օգտվում է հեռախոսային մարքեթինգից և պատվերների ստացման էլեկտրոնային տարբերակից՝ պատվիրելով կայքի համեմատաբար էժան ապրանքները պայմանավորված բնակչության վճարունակությամբ: Աղյուսակ 2-ում ներկայացված է ՀՀ-ում «OTTO» ընկերության զանգերի միջին քանակի սանդղակն ըստ շաբաթվա օրերի²:

Ինչպես տեսնում ենք սանդղակի տվյալներից, ընկերության համար շաբաթվա օրերի առումով արդյունավետ է երեքշաբթիից ուրբաթ, իսկ ըստ ժամերի՝ 12⁰⁰-15⁰⁰-ն ընկած ժամանակահատվածը: Նշենք նաև, որ ամեն զանգ չէ, որ որոշակի պատվերի նպատակով է

¹ www.3Suisse.by/ru/mentions-legales.html

² Ըստ «OTTO» ընկերության տրամադրած տվյալների:

կատարվում. դա կարող է լինել նաև գուտ տեղեկատվական բնույթի: Սանդղակի տվյալները վկայում են զանգերի պասիվության մակարդակի մասին:

Աղյուսակ 2

«OTTO» ընկերության զանգերի միջին քանակի սանդղակն ըստ շաբաթվա օրերի

	<i>Չանգերի քանակը</i>			<i>Ընդամենը</i>
	<i>9⁰⁰-12⁰⁰</i>	<i>12⁰⁰-15⁰⁰</i>	<i>15⁰⁰-18⁰⁰</i>	
Երկուշաբթի	2	1	0	3
Երեքշաբթի	1	8	2	11
Չորեքշաբթի	3	7	1	11
Հինգշաբթի	2	4	5	11
Ուրբաթ	3	6	2	11
Շաբաթ	1	0	1	2
Կիրակի	-	-	-	-
Ընդամենը	12	16	11	

Այլ է պատկերը կոսմետիկական միջոցների իրացման ոլորտում: ՀՀ-ում կատալոգային առևտրով մասնագիտացել են հիմնականում «Faberlic», «Avon», «Mery Key», «Oriflame» ընկերությունները: Վերջինս ներկայացուցչություններ ունի աշխարհի 61 երկրում, որոնցից 13-ում աշխատում է ֆրանչայզինգի հիմունքով, իսկ ընկերության տարեկան վաճառքի ծավալները կազմում են 1.3 մլրդ եվրո¹: Ներկայացված ընկերությունները հանդես են գալիս դիստրիբուտորական ցանցերի միջոցով՝ իրականացնելով վաճառք տնային պայմաններում կամ, այսպես կոչված, սպառողի նախընտրած միջավայրում: Այս ընկերություններն իրենց կատալոգները տրամադրում են դիստրիբուտորներին, որոնք էլ իրենց հերթին ստեղծում են համապատասխան ցանց: Վերջիններիս յուրաքանչյուր օղակն էլ ձևավորում է իր սպառողական խումբը:

Բնակչության ակտիվությունը տարբեր շրջաններում տարբեր է՝ կապված առաքումային առևտրի միջոցով ապրանքների ձեռքբերման հետ: Դրա պատճառն այն է, որ շրջանները տարբերվում են մանրածախ առևտրի ցանցի զարգացման մակարդակով, բնակչության դրամական եկամուտների չափերով և տեղեկատվական ու գովազդային սպասարկման տարբերությամբ: Ռուսաստանում, օրինակ, ապրանքների պատվերների մեծ մասը ստացվում է խոշոր քաղաքներից և ծայրամասերից, ինչը չի կարելի ասել ՀՀ-ի մասին, որտեղ պատվերների մեծ մասը Երևանի կենտրոնից է:

Առաքումային առևտրի հայկական ֆիրմաները հաճախ աշխատում են մի քանի արտասահմանյան ֆիրմաների հետ պայմանագրային սկզբունքով: Առաքումային առևտրի շատ հայրենական ֆիրմաներ չունեն տարածքներ՝ ապրանքների հետ գործողություններ իրականացնելու համար, պատվերների կատարման համար էլեկտրոնային սարքավորումներ և այդ գործողությունները պայմանագրային հիմունքներով վերահանձնարարում են փոստային կապի ձեռնարկություններին: Իրենց ուժերով այդ ֆիրմաներն իրականացնում են հիմնականում մարքեթինգային գործառնություններ՝ արտասահմանյան ֆիրմաների, հայրենական մատակարարների հետ աշխատանք, սպառողական շուկայի ուսումնասիրություն և այլն: Ապրանքների պատվերներն ընդունվում են նախապես վճարման կամ վերադիր վճարի պայմանով:

Կատալոգով ապրանքների վաճառքի ռազմավարությունն ընկած է ուղղակի մարքեթինգի գործընթացի հիմքում, այլապես այդ ոլորտում ոչինչ հնարավոր չէ վաճառել: Իսկապես, կատալոգ ստեղծելու համար պետք է հստակ պատկերացնել շուկան, քանի որ հակառակ դեպքում կատալոգը լրացված կլինի «դատարկ» և եկամուտ չբերող տողերով: Անհրաժեշտ է ստեղծել տվյալների, հասցեների բազա, որոնք լիովին կհամապատասխանեն կատալոգի

¹ [http:// oriflame.com/about-oriflame/index](http://oriflame.com/about-oriflame/index)

խնդիրներին: Կատալոգով վաճառք կազմակերպելու համար անհրաժեշտ է հավաքագրել պատվերները, մշակել դրանք և պատվերն ուղարկել պատվիրատուին (հասցեատիրոջը):

Մեր շուկային բնորոշ է ևս մեկ կարևոր բնութագիր՝ կողմնորոշում դեպի ապրանքի պակասուրդ (դեֆիցիտ), այլ ոչ թե դեպի ծառայություն: Եթե արտերկրում կատալոգը գնումներ կատարելու հարմարավետ ձև է, և կարելի է ապրանքը պատվիրել հեռախոսով կամ կրեդիտային քարտի համարը հաղորդելով, այնուհետև պատվերը ստանալ տանը՝ սուրհանդակի կամ փոստատարի միջոցով, ապա մեր շուկայի դեպքում այդ շղթան՝ հեռախոսի պատվերից մինչև կրեդիտային քարտի վճարում, դեռևս երազանք է: Իսկ նրանք, ովքեր երբևէ փորձել են օգտվել հեռուստախանութների ծառայություններից, Էկրանից հնչող «քաղցր» խոստումներին հակառակ՝ հոգնել են սպասելով սուրհանդակին: Այլ կերպ ասած՝ մեր շուկայում առկա է պակասուրդ, ծառայություն կոչվածը չի աշխատում:

Ամբողջ աշխարհում առաքումային առևտուրն ուղեկցվում է փոստային առաքմամբ, ինչը ենթադրում է փոստային ծառայությունների զարգացման անհրաժեշտություն: Օրեցօր աճում է վերազգային էքսպրես առաքման կազմակերպությունների թիվը ՀՀ-ում: Մեր երկրում այդպիսիք են DHL, TNT, UPS, FedEx ընկերությունները: Այսօր փոստային ծառայությունների մատուցման բնագավառում մենաշնորհային դիրք ունեցող «Հայփոստ» ընկերության կառավարումը հավատարմագրային հիմունքով վստահված է հոլանդական «HayPost Trast Management»-ին, ինչը նշանակում է, որ այն առայժմ մնում է որպես պետության սեփականություն, սակայն կառավարումն իրականացնում են պրոֆեսիոնալները: Այս գործընթացից հետո համակարգում էական բարեփոխումներ են նկատվում, ինչը նպաստում է մեր երկրում առաքումային առևտրի զարգացմանը: Ընդհանրապես, փոստային համակարգերը սովորաբար տարածքային առումով լինում են ամենաընդգրկունը: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանը, որի բնակչությունը 50 անգամ գերազանցում է ՀՀ բնակչությանը, փոստային բաժանմունքների քանակով գերազանցում է ՀՀ-ին գրեթե նույնքան անգամ¹: Աշխարհում շատ փոստային համակարգեր, որոնք իրականացնում են ուղղակի մարքեթինգ, այսպես օրինակ, Մեծ Բրիտանիայում՝ «Royal Mail»-ը, Գերմանիայում՝ «Deutsche Post»-ը, գնում են մասնավորեցման, սակայն նույնը չի կարելի ասել «Հայփոստի» պարագայում: Ավելին, Շվեդիայում փոստային բաժանմունքներն ամբողջովին փակվել են, և դրանց փոխարեն ստեղծվել են կոմպակտ և տնտեսող փոստային կրպակներ, որոնք տեղակայված են սուպերմարքեթներում և ավտոկայանատեղիներում: «Հայփոստի» եկամուտներում DM (direct marketing) ծառայությունից ստացված հասույթը 2006թ. փաստացի կազմել է 19162 հազ. ՀՀ դրամ, իսկ 2007թ.՝ 20755 հազ. ՀՀ դրամ²: 2006թ. «Հայփոստն» ապահովել է 1 մլն դրամից մի փոքր ավելի շահույթ, բայց այս ցուցանիշը զգալիորեն աճել է՝ 2009թ. կազմելով 1.2 մլրդ ՀՀ դրամ³:

Մեկ այլ առաջընթաց է նկատվում ուղղակի մարքեթինգի համակարգում՝ ի հայտ է եկել «զեղչային բիզնես»: Սպառողի հիմնական բնագոյը տվյալ ապրանքը էժան ձեռք բերելու ցանկությունն է, ինչը նրան պարզում է յուրատեսակ հոգեկան բավարարվածություն: Հաշվի առնելով սպառողի՝ քիչ վճարելու բնածին և ֆիրմայի շահույթը առավելագույնի հասցնելու տրամաբանական ցանկությունները՝ այսօր հայկական շուկայում գործում են մի շարք ընկերություններ, ինչպես օրինակ՝ Paradox, Econom365, որոնք խոստանում են սպառողին գին սակարկել առևտրի կետերում, իսկ առևտրի կետերին՝ ապահովել հաճախորդներ: Ձեղչային համակարգով զբաղվող ընկերությունները քարտատերերի տվյալների բազաների միջոցով հնարավորություն են ստանում գովազդային տեղեկատվությունը հասցնել թիրախային սպառողներին: Վճարելով 1 SMS-ի համար ընդամենը 13 դրամ՝ խանութը հնարավորություն է ստանում գովազդային տեղեկատվություն հաղորդելու իրեն հետաքրքրող սպառողների հատվածին: Որպեսզի ուղղակի մարքեթինգային նման քաղաքականությունն արդյունավետ

¹ «Հոլանդական «Հայփոստի» հետքերով», Բիզնես ամսագիր Business Class, #3, նոյեմբեր 2007, էջ 19:

² Ըստ «Հայփոստ» ՓԲԸ տրամադրած տեղեկատվության տվյալների:

³ <http://www.ambanks.am/hy/2010/02/04/7225/>

լինի, ընկերությունը ժամանակ առ ժամանակ թարմացնում է քարտատերերի բազան՝ դուրս թողնելով այնտեղից նրանց, ովքեր ակտիվ գնորդներ չեն համարվում: Ընկերության կողմից թողարկվում են հատուկ եռամսյակային սեզոնային կատալոգներ Երևանի խանութների, նրանց կողմից նախատեսվող ակցիաների մասին: Համակարգում ընդգրկված բոլոր խանութները անվճար ներառվում են ընկերության կատալոգների մեջ: Կատալոգներն իրենց հերթին անվճար տրամադրվում են բոլոր ակտիվ քարտապաններին: Բացի վերոնշյալ ընկերություններից, Հայաստանում այսօր գործում է միջազգային Euro<26 գեղչային քարտերի համակարգը, որը հնարավորություն է տալիս քարտատերերին գեղչով գնումներ կատարելու Հայաստանի և Եվրոպայի մինչև 100000 խանութներում: Քարտն արժե շուրջ 3500 դրամ և տրամադրվում է մինչև 30 տարեկան անձանց:

Եթե մշտական հաճախորդը խանութի գեղչային քարտը ստանալու համար ստիպված է որոշակի գնումներ կատարել, իսկ մյուսը նույն գեղչերը ստանում է անվճար կամ զգալիորեն ավելի ցածր ծախսերով, ապա առաջինների համար ձևավորում է անարդար պայման: Անշուշտ, մյուսներին գեղչային քարտերի վաճառքը չի կարող փոխհատուցել մշտական հաճախորդների ծախսերը, սակայն դա կարող է վերականգնել վերջիններիս արդարության զգացումը: Մյուս լուծումը կլինի այն, որ խանութն իր մշտական հաճախորդներին տրամադրի ավելի մեծ գեղչեր, քան քարտային համակարգերից յուրաքանչյուրին: Հակառակ դեպքում խանութների գեղչային քարտեր ստանալու ակնկալիքով գնումներ կատարելը սպառողի համար կդառնա անիմաստ:

Չեղչային քարտերի համակարգի լիարժեք կայացման համար Հայաստանում դեռևս առկա են մի շարք խնդիրներ: Սակայն դրանց լուծմամբ մեծ մասամբ պետք է զբաղվեն ծառայություններ մատուցողները, իսկ խանութները պետք է ապահովվեն հաճախորդներով, վերջիններս էլ՝ գեղչերով:

Ներկայացնենք այն հիմնական կազմակերպությունները, որոնք կիրառում են ուղղակի մարքեթինգ¹:

Աղյուսակ 3

Ուղղակի մարքեթինգ իրականացնող կազմակերպություններ

	<i>Աշխարհ, %</i>	<i>Հայաստան, %</i>
Ավտոմոբիլային ընկերություններ	8.4	3.0
Գրախանութներ	3.1	1.2
Մանրածախ առևտրականներ	0.6	5.7
Մեծածախ առևտրականներ	12	-
Լրացուցիչ կրթական դասընթացներ	4.6	7
Ավիաընկերություններ	6.7	3.2
Ռեստորաններ, հյուրանոցներ	1.4	2.3
Անշարժ գույքի գործակալություններ	0.5	1.5
Հանրախանութներ	3.9	1.1
Եկեղեցական կառույցներ	1.4	12
Վարկային կազմակերպություններ	13.2	2
Լոտո խաղարկող կազմակերպություններ	3.5	0.3
Կուսակցություններ	7.2	30
Տուրիստական գործակալություններ	11	5
Բարեգործական կազմակերպություններ	3.4	-
Հրատարակչություններ	1.2	-
Ապահովագրական ընկերություններ	13.1	0.7
Կապի ծառայություններ	4.8	25
Ընդամենը	100	100

¹ Direct Marketing Assotation, www.DMA.org.uk

ՀՀ-ի համար նույն կազմակերպությունների շրջանակում անցկացրել ենք հարցում¹ և հանգել հետևյալին. ՀՀ-ում ներկայումս ուղղակի մարքեթինգ կիրառում են հիմնականում կապի ծառայություններ մատուցող կազմակերպությունները՝ 25%. քանի որ այս ոլորտը գերշահութաբեր է, և ազատ շուկայական տնտեսական հարաբերությունների համակարգում առաջ են եկել սույն ոլորտում գործող մրցակիցներ, կուսակցությունները՝ 30%. այս ոլորտում գերակշռում են քաղաքական ներդրումները, որը կաշկանդում է բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումն ու զարգացումը, սակայն, ի տարբերություն ՀՀ-ի, աշխարհում այս ցուցանիշը բավական ցածր է, փոխարենը բարձր են վարկային կազմակերպությունների՝ 13.2% և ապահովագրական ընկերությունների՝ 13.1% ցուցանիշները, որը ՀՀ-ում շատ ցածր է՝ 0.7% և խոսում է այս ոլորտի դեռևս կայացած չլինելու մասին: Ուղղակի մարքեթինգի կիրառման առումով ՀՀ-ում բարձր են մաս եկեղեցական կառույցների և մանրածախ առևտրի ցուցանիշները:

¹ Հետազոտության մեթոդը հեռախոսային հարցումն է:

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԻՆԵ ԱՂՈՆՑ

*Մ. Գ. Ա. Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ.*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՈՆՑԵՊՏԻԱՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհի ձևավորման պատմական գործընթացը արտացոլող ամենատարածված կոնցեպցիաները կարելի է համարել ֆորմացիոն մոտեցումը (որն ավելի ամբողջական է ձևակերպված Մարքսի ու Էնգելսի կողմից), տնտեսական աճի փուլերի տեսությունը (Ու. Ռոստոուի «Տնտեսական աճի փուլերը: Ոչ կոմունիստական մանիֆեստը»¹), արդյունաբերական (ինդուստրիալ) հասարակության բազմադեմ տեսությունը և կազմությամբ ու հայացքներով նույնքան խայտաբղետ հետադյունաբերականության (պոստինդուստրիալիզմի) տեսությունը:

Փորձենք գնահատել այս կոնցեպցիաները:

Սկզբում պատմական գործընթացը պատկերացնենք որպես արտադրության գործընթացում փոփոխությունների հետ կապված գործընթաց:

	Նախնադարյան-համայնական	Ստրկատիրական	Ֆեոդալիզմ
1. Հումքի տեսակները	Քար, փայտ	Քար, փայտ	Երկաթ, բրոնզ
2. Էներգիայի տեսակները	Կրակ, մարդկային ուժ	Կրակ, մարդկային ուժ, կենդանիների ուժ, քամի	Մարդկային ուժ, կենդանիների ուժ, քամի
3. Աշխատանքի բնույթը	Ձեռքի (ինքնակամ)	Ձեռքի (հարկադրական)	Ձեռքի (հարկադրական)
4. Աշխատանքի կազմակերպումը	Կոլեկտիվ	Անհատական	Անհատական
5. Մեփականությունը	Կոլեկտիվ	Մասնավոր	Մասնավոր
6. Աշխատանքի բաժանումը	Հողագործություն, անասնապահություն	Հողագործություն, անասնապահություն, արհեստ, մտավոր գործունեություն	Հողագործություն անասնապահություն, արհեստ, մտավոր գործունեություն
7. Արտադրական կազմակերպումը		Արհեստանոցներ	Արտադրամասային կազմակերպություններ
8. Անցումային ենթակառուցվածքները	Դասակարգեր, մասնավոր սեփականություն	Գաղութատիրություն	Մանուֆակտուրաներ

Կոմունիստական ֆորմացիան, նրա սկզբնական փուլը՝ սոցիալիզմը ժառանգում է այն ամենը, ինչ ստեղծվել է նախորդ զարգացմամբ:

	Կապիտալիզմ	Սոցիալիզմ
1. Հումքի տեսակները	Գիտությանը հայտնի բոլոր տեսակները	Նույնը
2. Էներգիայի տեսակները	Գիտության կողմից հայտնաբերված բոլոր տեսակները	Նույնը
3. Աշխատանքի բնույթը	Մեխանիզացված, ինքնակամ	Նույնը
4. Աշխատանքի կազմակերպումը	Կոլեկտիվ	Նույնը
5. Մեփականությունը	Մասնավոր	Հասարակակա՞ն

¹ http://ru.wikipedia.org/wiki/Ростой,_Уолт_Уитмен

	<i>Կապիտալիզմ</i>	<i>Սոցիալիզմ</i>
6. Աշխատանքի բաժանումը	Գյուղատնտեսական գործունեություն, արդյունաբերական գործունեություն, մտավոր գործունեություն	Նույնը
7. Արտադրական կազմակերպում	Ֆաբրիկագործարանային կազմակերպություններ	Նույնը
8. Անցումային կառույցներ	Բազմադեմ տնտեսություն, սեփականության հանրային ձև: Պետական միջամտությունը տնտեսական կյանքին: Սոցիալական պաշտպանվածություն: Ժողովրդավարություն: Իրավական պետություն:	

Հասարակական-տնտեսական ֆորմացիաների հերթափոխի վրա թռուցիկ հայացքը թույլ է տալիս եզրակացություն կատարել, որ հաջորդող ֆորմացիան հաղթում էր նախորդին, ստեղծելով արտադրության կազմակերպման ավելի բարձր ձևեր, խթաններ և աշխատանքի արտադրողականության ավելի բարձր մակարդակներ:

Կապիտալիզմը կայուն չի եղել. մանուֆակտուրան փոխարինվեց ֆաբրիկագործարանային արտադրությամբ, համալիր աշխատանքի բաժանումը պարզ գործողությունների վրա նախապատրաստեց հաստոցային պարկի հայտնվելուն: Առաջին մեքենան, գալով արտադրության հաստոցային կազմակերպման մեջ, օգնեց ֆաբրիկաների ու գործարանների կայացմանը, կապիտալիզմը սկսեց զարգանալ սեփական հիմքի վրա: Բայց կապիտալիզմը բացի դրանից ուներ նաև երանգավորում. կապիտալիզմի առաջին փուլը՝ ազատ մրցակցությունն է, որն անցավ մենաշնորհային (մոնոպոլիստական) փուլ:

Մենաշնորհային փուլի մասին գրել են շատերը: Այդ թեման 19 և 20-րդ դարերի սահմանագծին շատ նորաձե էր: Ավելի ամբողջական այս պրոբլեմը վերլուծվեց Վ.Ի. Լենինի «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն փուլը»¹ հայտնի աշխատանքում: Մարքսը կանխատեսում էր, որ մրցակցությունից աճում է մենաշնորհը, և այդ ժամանակ գալիս է կապիտալիստական մասնավոր սեփականության ժամը՝ շահագործողներին սեփականագրելու՝ են: Լենինը զարգացրեց այդ միտքը իրեն ժամանակակից նյութերի վերլուծության հիման վրա և առանձնացրեց իմպերիալիզմի բնութագրական հետևյալ գծերը. մենաշնորհների գերիշխանությունը, բանկային և արդյունաբերական կապիտալի միաձուլումը՝ օլիգարխիայի առաջացումը, կապիտալի արտահանումը, աշխարհի տնտեսական բաժանումը մենաշնորհների միջև, աշխարհի քաղաքական բաժանումը երկրների միջև: Լենինի կարծիքով, իմպերիալիզմը նեխող, մահացող կապիտալիզմն է: Ինչու²: Ցանկացած մենաշնորհ տանում է նեխման: Նրան հարկավոր չէ արտադրության կատարելագործում, որակի բարելավում: Գերիշխանությունը թույլ է տալիս նրան վերևում մնալ մենաշնորհային գներով: Այն շահագրգռված չէ տարողունակ ներքին շուկայի մեջ: Կերակրելով բանվոր դասակարգի վերին շերտերին, մոնոպոլիստական կառույցները հասարակությունը տանում էին դեզրադացման: Արտահանվող կապիտալը և արտասահմանում բարձր շահույթները պահանջում էին պաշտպանություն, այստեղից էլ և գալիս է սպառազինության մրցավազքը և իմպերիալիզմի մշտական ուղեկիցը՝ աշխարհի բաժանման համար մղվող պատերազմները: Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմները դրա վկայությունն են: Պատերազմները բերում են հասարակական համակարգերի գերլարվածությանը՝ սոցիալական պայթյուններն անխուսափելի են: Ռուսաստանում և եվրոպական երկրներում իրադարձությունները ասես հաստատեցին Լենինի և նրա հետևորդների եզրահանգումների արդարացիությունը, առավել ևս, որ եվրոպական երկրները չէին շրջվում կործանարար ճանապարհից, իսկ համաշխարհային տնտեսական ճգնաժամը և ԱՄՆ-ում Մեծ դեպրեսիան հեռու էին և՛ ժամանակով, և՛ տեղով:

Սակայն, ինչպես ցույց տվեց պատմությունը, կապիտալիզմի մոտ տարբերակներ կային: Առաջին ուղին՝ ուղղված մոնոպոլացմանը և պետմենաշնորհին փակուղային դարձավ: Այդ ուղու այլընտրանքը դարձավ զարգացման ամերիկյան ուղին: Ռուզվելտի «Նոր կուրսը (ուղղությունը)»² ամերիկյան մտավորականությունը լուրջ չէր ընդունում: Պատահական չէ որ փիլիսոփա պրագմատիկ Դեյվիդը «նոր կուրսը» բնութագրեց որպես «սխալների և փորձերի

¹ http://www.esperanto.mv.ru/Marksismo/Lenin_Imperialism/imp.html

² http://ru.wikipedia.org/wiki/Новый_курс_Рузвельта

ուղի, համեմված շատախոսության զգալի չափաբաժնով»: Սակայն Ռուզվելտի քաղաքականությունը հետզհետե երկիրը դուրս էր բերում ճգնաժամից, ստեղծելով նոր տնտեսություն՝ սպառման տնտեսություն տարողունակ ներքին շուկայով (հետպատերազմյան ԱՄՆ-ում արտահանում էին արտադրվող արտադրանքի 9%-ից ոչ ավելին):

Ռուսաստանի հետհեղափոխական զարգացումը իրականացվում և խորացվում էր քաղաքացիական պատերազմի արդյունքում ավերված տնտեսության կառուցվածքով, որն էլ իշխանության գալով ստացան բոլշևիկները: Իսկ մինչպատերազմական Ռուսաստանում գտնվում էին ամենախոշոր մենաշնորհները, դրանց հետ կարող էին համեմատվել միայն ԱՄՆ-ի մենաշնորհները: Մանր ձեռնարկությունների բռնագրավումը դժվար իրականացվելի էր, ռազմական կոմունիզմի քաղաքականությունը բացահայտեց այդ մոտեցման բարդությունը: Սակայն խոշոր ձեռնարկությունների բռնագրավումը հեշտությամբ էր կատարվում: Տեսականորեն դա Լենինի կողմից ասված էր և գործնականում իրականացվում էր:

Պետական մոնոպոլիզմը ստեղծում է տնտեսության կառավարման կատարյալ մեխանիզմ: Բավարար է միայն իշխանությանը տապալել և հաստատվել նրա տեղում: Հոկտեմբերյան հեղաշրջումը ցույց տվեց, որ հնարավոր է նաև և՛ մեկը, և՛ մյուսը: Երկիրը շարունակում էր առաջ շարժվել պետական մենաշնորհային ճանապարհով, որը խորանում էր կուսակցական-պետական ցենտրալիզմով: Հետևանքները հայտնի են:

Տնտեսագիտության պատմության մասնագետ Ու. Ռոստոուի կողմից մշակված «Տնտեսական աճի փուլերը» տեսության հայտնվելը, նկատելի իրադարձություն էր 1950-ական թվականների երկրորդ կեսին: Նրա աշխատանքը երկրորդ շունչ տվեց 1960-ական թվականներին տարածում գտած միասնական արդյունաբերական հասարակության տեսությանը, իսկ դրա հիման վրա էլ և հետարդյունաբերական հասարակության կոնցեպցիաներին:

Համաձայն Ու. Ռոստոուի մարդկային հասարակության զարգացման ուղին կարելի է պատկերացնել այսպես.

1. Ավանդական հասարակություն	2. Հասունացման փուլ	3. Տեղաշարժ	4. Հասարակության շարժումը դեպի հասունություն	5. Բարձր զանգվածային սպառման փուլ
-----------------------------	---------------------	-------------	--	-----------------------------------

Միասնական արդյունաբերական հասարակության տեսությունը էական տարբերություններ չէր դնում կապիտալիզմի և սոցիալիզմի միջև: «Ոչ թե կոմունիզմի, այլ արդյունաբերականացման ուրվականն է թափառում մոլորակով մեկ: Դրան են գնում և՛ Արևելքը, և՛ Արևմուտքը»: Համաձայն տվյալ տեսության, զարգացած արդյունաբերական հասարակությունը ունի հետևյալ գծերը. զարգացած արդյունաբերություն, քաղաքներ և աճող քաղաքային բնակչություն, գյուղատնտեսական արտադրության մեջ փոքրացնող զբաղվածություն և գյուղական բնակչության աննշան քանակություն, մտավոր գործունեությամբ զբաղվածների մեծ քանակություն, բարձր զանգվածային սպառում, աշխատանքի արտադրողականության արագ աճ:

Հետարդյունաբերականների մոտ հասարակության զարգացման փուլերը ունեն հետևյալ տեսքը.

1. Մինչարդյունաբերական փուլ	2. Անցում	3. Արդյունաբերական փուլ	4. Բարձր զանգվածային սպառման փուլ	5. Հետարդյունաբերական փուլ
-----------------------------	-----------	-------------------------	-----------------------------------	----------------------------

Եթե հաշվարկման կետ վերցնենք բարձր զանգվածային սպառման փուլը, գործընթացը ձեռք կբերի հետևյալ տեսքը՝

Մինչարդյունաբերական հասարակություն	Արդյունաբերական բարձր զանգվածային սպառման փուլով հասարակություն	Հետարդյունաբերական հասարակություն
------------------------------------	---	-----------------------------------

Փորձենք այս սխեմայի հետ համատեղել նախկին ԽՍՀՄ-ի զարգացման ուղին: Մինչարդյունաբերականությունը ավարտվեց 1930-ական թվականներին: Երկիրը առավելապես ձեռքի աշխատանքից անցավ մեքենայացված, մեխանիզացված աշխատանքին: Այդ տարիներին ստեղծված արդյունաբերական կառույցները ըստ էության հետագա տարիներին չարդիականացվեցին: ԽՍՀՄ զարգացմանը հետևող արտասահմանյան մասնագետների կարծիքով, մինչև 1960-ական թվականների վերջը մեր երկիրը տնտեսական մակարդակով, տեխնոլոգիաներով, գիտության մեջ առկա ձեռքբերումներով հետ չէր մնում գլխավոր մրցակիցներից, իսկ որոշ դեպքերում նույնիսկ գերազանցում էր: Կտրուկ հետընթացը նկատվեց 1970-80-ական թվականներին: Գիտատեխնիկական հեղափոխության ձեռքբերումները նախկին ԽՍՀՄ-ում չդարձան արտադրական հեղափոխություն: Տնտեսության կառուցվածքը, տեխնոլոգիաները մնում էին նախկինը: Մենք, հավանաբար, մոտեցանք բարձր զանգվածային սպառման փուլին, բայց պահանջմունքները ոչ թե բավարարվում էին սեփական արտադրության ապրանքներով, այլ «նավթափողերի», հումքի վաճառքի հաշվին ներկրվող ապրանքներով և այլն: Խնդիրը սրվեց պաշտպանության վրա կատարվող անհամաչափ ծախսերով, երբ զենքը մի քանի անգամ ավելի շատ էր ստեղծվում, քան պահանջվում էր, քայքայելով առանց այն էլ թույլ ժողովրդական տնտեսությունը: Արդյունքում մենք չստացանք ոչ հուսալի պաշտպանություն, ոչ էլ համապատասխան անվտանգություն, այլ միայն խեղված տնտեսություն:

Իսկ ինչ վերաբերում է «իմպերիալիզմի տեսությանը», ապա այն «չի աշխատում»: Աշխարհի քաղաքական բաժանումը գաղութային կայսրությունների արդեն անցյալի գիրկն է անցել: Մենաշնորհների միջև տնտեսական բաժանումը հին տեսքով արդեն գոյություն չունի: Կան խոշոր ազգային և տրանսազգային կորպորացիաներ, բայց դրանք չունեն մենաշնորհային «իրավունքներ»: Կապիտալը արտահանում են (զարգացող երկրները ունեն պարտքեր, որը նրանք, հավանաբար, երբեք չեն կարողանա վճարել), բայց ԱՄՆ-ի և Ճապոնիայի կողմից արտահանվող ապրանքների արժեքը մի քանի անգամ գերազանցում է նրանց կողմից արտահանվող կապիտալը: Ավելին, զարգացած երկրները իրենց արտահանման հիմնական բաժինը ուղղում են ոչ թե զարգացող, այլ զարգացած երկրներ (ԳՖՀ-ն, օրինակ, արտահանման մինչև 86%-ը): Հարուստ երկրներում՝ տարողունակ ներքին շուկա կա: Օլիգարխիան ևս առկա է: Արդյունաբերողները իրենց շահերը ունեն բանկերում և հակառակը: Ֆրանսիայում գոյություն ունեն 200 ընտանիք, որոնց կապիտալները գերիշխում են, պահպանվել են ընտանեկան կլաններ ԱՄՆ-ում՝ 0,1%, բնակչությունը տիրապետում է երկրի ազգային հարստության 20%-ը: Շատ հարուստներ կան նաև Անգլիայում, Գերմանիայում, Ճապոնիայում, Իտալիայում: Սակայն տնտեսության մեջ գերիշխող մենաշնորհները արդեն անցյալում են: Մենաշնորհները, և ավելին՝ պետական մենաշնորհը, գոյություն են ունեցել միայն սոցիալիստական երկրներում: Ինչպես պարզվել է, «նեխած կապիտալիզմը» համեղ հոտ ունի, մահանալ չի պատրաստվում և օգնություն է ցույց տալիս սոցիալիզմին: Հեղափոխություններ տեղի են ունեցել, բայց զարգացող երկրներում: Հակասություններ կան և բավականին սուր, բայց դրանք չեն լուծվում սոցիալական տեղաշարժերով, այլ լիովին ընդունելի դեմոկրատական միջոցներով, համակարգը ամբողջությամբ չփոխելով:

Իսկ ի՞նչ է մնացել իմպերիալիզմի լենինյան կոնցեպցիայից: Հարցը այդպիսի տեսքով, հավանաբար, անիրավաչափ է: Փոխվել են պայմանները, պետք է փոխվի նաև տեսությունը: Ինչը ճիշտ էր որոշակի պայմաններում, արդեն չի աշխատում այլ պայմաններում:

Երկրորդ համաշխարհային պատերազմը սահմանագիծ անցկացրեց իմպերիալիզմի գոյության և, բնականաբար, լենինյան տեսության ներքո: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո զարգացման ամերիկյան ուղղությամբ գնացին և՛ եվրոպական երկրները, և՛ Ճապոնիան: Նրանք չկրկնեցին ամերիկյան մոդելը, այլ գնացին ապամենաշնորհացման, տնտեսության կառուցվածքի փոփոխության, բարձր որակավորում պահանջող արտադրությունների ստեղծման ճանապարհով, ինչը և իր հետևից ձգեց ներքին շուկայի ընդլայնումը, միջին դասի ձևավորումը, որը և հանդիսանում է հենց այն բարձր վճարվող դասը, հիմնական հարկատուն, սպառողը և դեմոկրատիայի կայունացուցիչը:

Մի բան ակնհայտ է՝ սոցիալական արդարության, հավասարության, ժողովրդավարության հասարակությունը, հավանաբար, որպես հույս դեռ շարունակում է գոյատևել:

**ԲԱԶՄԱԿՈՂՄ ԳԻՏԱԿՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.
ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Գիտելիքի հասարակությունը միջազգայնորեն արդեն ընդունված է որպես մարդկության ապագա (հետարդյունաբերական) հասարակության տիպար-գաղափար: Այն որպես աճող ինտենսիվությամբ շարունակաբար զարգացող հասարակություն է դիտվում և, ենթադրվում է, ձևավորվելու է աշխարհի համարյա բոլոր տարածաշրջաններում ու երկրներում՝ յուրաքանչյուրի առանձնահատկություններին համապատասխանող կոնկրետ ձևեր ընդունելով: Զարգացած շատ երկրներում այդ հասարակության որոշ տարրեր արդեն ներդրվել են, սակայն դրա էության, բնութագրերի, ձևավորման մոտեցումների ու գործընթացների և շատ այլ կողմերին առնչվող ոչ բոլոր խնդիրները, նաև ոչ պահանջվող մանրամասնությամբ ու խորությամբ են հետազոտված կամ լուծումներ ստացած: Առավել ևս տարածաշրջանային առանձնահատկությունների և զարգացման աստիճաններում եղած տարբերությունների հաշվառման և դրանց համապատասխան լուծումներ ստանալու տեսանկյունից: Բացի այդ, գոյություն ունի գիտելիքի հասարակության ձևավորմանն ու զարգացմանն առնչվող նորանոր խնդիրների առաջացման կամ ի հայտ գալու մեծ հավանականություն՝ պայմանավորված իրադրության փոփոխությամբ, գիտելիքի զարգացումով, տեսությունից գիտելիքի հասարակության ձևավորման գործընթացների տարատեսակ շեղումների կամ խեղաթյուրումների և շատ այլ պատճառներով, որոնց գիտագործնական գնահատումը և հաշվառումը նոր հետազոտություններ են պահանջում: Ուստի գիտելիքի հասարակության ձևավորման, բնականոն գործունեության և զարգացման խնդիրներ կլինեն մշտապես և կպահանջվի դրանց ինչպես ընդհանրական, այնպես և՛ տարածաշրջանային, և՛ ժամանակաշրջանային շարունակական հետազոտություններ:

Այն փաստորեն վեր է ածվելու գիտագործնական գործունեության յուրատեսակ ոլորտի, այդ թվում նաև տարածաշրջանային առումով, ուստի և կունենա իրականացման և զարգացման իր առանձնահատկությունները, լուրջ կարիք կունենա պետական աջակցության, մասնավորապես ֆինանսական և կադրային բավարար ապահովում ունենալու տեսանկյունից:

Այդպիսի աջակցության ուղղությունները, չափը և սուբյեկտները որոշելու համար, կարծում ենք, օգտակար կլինի հատուկ նպատակային ծրագրի մշակումը, ապա և լայն քննարկումը երկրի մտավորականության շրջանում:

Գիտելիքի հասարակության հիմնական բնութագրերը՝ ցանկացած գործունեության հիմքում գիտելիք ունենալը, պահանջում է ունենալ նաև հնարավորինս բարձր որակի պահանջվող գիտելիք, այսինքն՝ ձևավորել տվյալ գործունեության **բարձրորակ գիտելիքային ապահովում**: Այն կարող է իրականացվել կազմակերպական և կառավարչական տարրեր ձևերով, ուստի պահանջում է իր կարևորությանը համապատասխան մարմնի առկայություն և արդյունավետ գործունեություն: Այդ գործառույթների ամբողջության իրականացումը ճիշտ կլինի անվանել գիտելիքային ապահովում, իսկ մարմինը՝ **գիտելիքային ապահովման ստորաբաժանում**, ուստի նպատակահարմար կլինի տնտեսագիտությունում ներմուծել այս տերմին-հասկացությունները: Կարծում ենք, այդպիսի մարմինների և դրանց բնականոն գործունեությունն ապահովող պայմանների ստեղծումն օգտակար կլինի գիտելիքի հասարակության հիերարխիայի համարյա բոլոր մակարդակներում, առավել ևս հանրային կառավարման ոլորտում: Կախված կառավարման հիերարխիայում գրաված դիրքից (մակարդակից) և մասշտաբից, այդ ստորաբաժանումները կունենան տարբեր իրավասություններ ու դրանց իրականացման համապատասխան իշխանություն ու պատասխանատվություն: Այդ իրավա-

սությունների թվում է լինելու նաև տվյալ գործունեության գիտելիքային ապահովման խնդիրների լուծումը՝ սեփական ուժերով կամ այլ մասնագիտացված կազմակերպությունների օգնությամբ ու մասնակցությամբ: Նկատի ունենալով գիտելիքային ապահովման առանձնակի կարևորությունը գիտելիքի հասարակությունում, կարծում ենք, նպատակահարմար կլինի այդ գործառույթներն իրականացնող մարմնի ստեղծումը հանրային կառավարման ոլորտում ամրագրել օրենսդրորեն: Գործունեության մասնակիցների կամ խորհրդատուների թվում հիմնական տեղը, կարծում ենք, տրվելու է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտին՝ նկատի ունենալով այդ բնագավառում նրա գործունեության մեծ փորձն ու արդյունքները:

Գիտելիքի հասարակության էության, բնութագրերի, սոցիալ-տնտեսական հիմքի, ձևավորման ու հետագա զարգացման խնդիրներին, ինչպես և անվանումին առնչվող հետազոտությունների տրամաբանության ու արդյունքների վերլուծությունը բերել է այն եզրակացության, որ ապագա հասարակության բնութագրերը ձևակերպելու հիմք է ընդունվելու մարդկային հասարակության սուբյեկտի՝ մարդու և դրանց խմբերի ընդհանրական բնութագիրը: Վերջինը մարդու մտածելու և գործելու՝ բնության կողմից շնորհված հնարավորությունն է, որի հիմքի վրա մարդն ընդունակ է իրականացնել գիտակցված գործունեություն: Հենց այս հատկությունն ու դրա լայն օգտագործումն է, որ ապահովել է մարդկային հասարակության զարգացման պատմականորեն ապացուցված օրինաչափությունն ու տնտեսագիտական օրենքը: **Այն եղել է և մնալու է մարդկության զարգացման հիմնական միջոցն ու գործոնը:** Ուստի առաջարկվում է մարդկային հասարակության էության և բնութագրի պարզորոշման հիմքում դնել մարդու գիտակցված գործունեություն իրականացնելու հատկությունը, անվանելով այն գիտակցված գործունեության հասարակություն (ԳԳՀ): Այս անվանում-տերմինը համահունչ է նաև **մարդկային ապագա հասարակության** էությանը և, կարծում ենք, լայն օգտագործում պետք է ստանա գիտական գրականությունում: Իր բովանդակության և բնութագրային անփոփոխության հետ մեկտեղ մարդկային հասարակությունը շարունակական փոփոխություններ է ունենում իրականացվող գործունեության գիտակցվածության աստիճանի և ազդեցությունների ընդգրկման տեսանկյուններից, ուստի առաջարկում ենք ապագա մարդկային հասարակությունը անվանել **բազմակողմ գիտակցված գործունեության հասարակություն** (ԲԳԳՀ):

Նպատակահարմար է տնտեսագիտությունում ներմուծել **գործունեության գիտակցվածության և հաշվառվող գործոնների բազմակողմության աստիճան** բնութագրերը, պաշտոնապես նորմավորվել և սահմանել այդ աստիճանների՝ տվյալ հասարակության համար նվազագույն ընդունելի համարվող մեծությունները, և ըստ դրա գնահատել նաև գիտակցված գործունեություն իրականացնելու մարդու հնարավորությունները ու դրանց փոփոխությունները ժամանակի մեջ: Այդ նորմերը հասարակության զարգացման աստիճանի փոփոխության հետ պետք է պարբերաբար վերանայվեն և ճշգրտվեն: Այս առաջարկությունների գործնական կիրառությունն ապահովվելու համար անհրաժեշտ է որպես գիտության ճյուղ առանձնացնել և ըստ ամենայնի ինտենսիվ զարգացնել **գիտակցված գործունեության տեսությունը** կամ **մարդկային գիտակցված գործունեության գիտությունը** (ՄԳԳԳ): Մշակել անհատի ու մարդկանց խմբերի համար գործունեության գիտակցվածության աստիճանի գնահատման մեթոդաբանություն և մեթոդական մոտեցումներ, ինչին ևս անհրաժեշտ է ցուցաբերել պետական նպատակային աջակցություն:

Ապագա հասարակության ձևավորման հիմնադրույթի վերը առաջարկված փոփոխությունն ինչ-որ չափով պայմանավորում է նաև այդ հասարակության էության բնութագրման, ձևավորման մոտեցումների, լուծում պահանջող խնդիրների ցանկի և լուծման առաջնայնությունների որոշման ու այլ խնդիրների հետազոտությունների բովանդակությունն ու մոտեցումները: Այդ հետազոտությունների նորովի իրականացումը հանդիսանալու է առաջարկված **գիտակցված գործունեության տեսության** (գիտության) ճյուղի կարևոր գործառույթը: Դրանում

կարևորվելու և առաջնայնություն է ունենալու այդ գիտության հիմքում դրվելիք գաղափարների առաջարկումը, ապա և դրանց մանրամասնեցված ու կոնկրետացված հետազոտության արդյունքների կիրառման խնդիրների լուծումների ձևավորումը: Հետևաբար անհրաժեշտ է դառնում այդ գիտության զոնե **հիմնարար դրույթները** ներառել համապատասխան մասնագիտությունների կրթական ծրագրերում:

Գիտելիքի կարևորությունը բազմակողմ մասնագիտացված գործունեության հասարակություն ձևավորելու և ինտենսիվ զարգացումն ապահովելու գործում պահանջում է նաև գիտելիքի մասնագիտացում: Նկատի ունենալով գիտության բնագավառում կառուցվածքավորման, գիտության ճյուղերի առանձնացման, ճյուղերի ու գիտելիքի մասնագիտացման գործում որոշ անորոշությունների գոյությունը, անհրաժեշտ դարձնել գիտության ոլորտի նորովի կառուցվածքավորումը: Այն իրագործելու մոտեցման կիրառումը հնարավորություն է ընձեռել հիմնավորել որոշ **նոր գիտությունների առանձնացման նպատակահարմարությունը**: Դրանց թվում մասնավորապես կարևորվել է **գիտակցված գործունեության տեսության, գիտելիքաստեղծ գործունեության տեսության, գործունեությունների բազմակողմ զնահատման գիտության, մարդկային կապիտալի ձևավորման և օգտագործման գիտության, սկզբունքագիտության, ճգնաժամագիտության առանձնացումը**: Դրանց ձևավորումը նկատելի կբարձրացնի ՀՀ գիտության բնագավառի վարկանիշը համաշխարհային գիտական հանրությունում, ուստի այս բնագավառում պետության կողմից օժանդակությունն օգտակար կլինի:

Տնտեսագիտությունը զգալի չափով տարածաշրջանային գիտություն է, քանի որ դրա տեսական դրույթների կիրառումը տարածաշրջանի կոնկրետ պայմաններին համապատասխանեցնելու կարիք ունի: Մյուս կողմից, տնտեսագիտությունը համընդհանուր գիտություն է, քանի որ ցանկացած երևույթում կա նաև տնտեսական, ուստի և տնտեսագիտական հետազոտության կողմ, որը հաշվի պետք է առնվի ցանկացած երևույթի խնդիրների լուծման ժամանակ: Հետևաբար կարևորվում է տնտեսագիտության նաև ոլորտային կամ գործառութային կոնկրետ դեպքերի համար կիրառման մոտեցումների մշակման խնդիրը: Այս դեպքում առկա է դիտարկվող երևույթի ոլորտային կամ գործառութային գիտության և տնտեսագիտական ընդհանրական դրույթների (**ընդհանրական կամ տեսական տնտեսագիտության**) համատեղ կիրառման, այսինքն՝ տվյալ կոնկրետ դեպքի համար դրանց ինտեգրման խնդիր: Նկատի ունենալով ոլորտային-գործառութային գիտությունների բազմազանությունն ու մեծ թիվը, յուրաքանչյուրում իր առանձնահատկությունների գոյությունը, կարծում ենք, նպատակահարմար է այդ համատեղումը կամ ինտեգրումը իրականացնել հենց դրանց հիմքի վրա, ստանալով այդ **ոլորտային-գործառութային գիտության կողմից** խնդրի լուծումը՝ տնտեսագիտական կողմի հաշվառումով: Նշենք, որ այսպիսի համատեղման անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև այլ ոլորտային-գործառութային գիտություններում, եթե դիտարկվող խնդիրն առնչվում է մեկից ավելի այդպիսի գիտությունների: Այս մոտեցումը գիտելիքի ապահովման ստորաբաժիններում կիրառվելու համար պետք է ավելի մանրամասնեցված մեթոդական մշակում ստանա: Դա անհրաժեշտ է դարձնում նաև այդպիսի համալիր հետազոտություններ կամ մեկից ավելի գիտությունների մոտեցումների համատեղ օգտագործում կատարելու **կարող մասնագետ կադրերի** պատրաստումը, որոնք ստանալու են այդպիսի համատեղված մասնագիտությունների գծով միացյալ որակային աստիճաններ: Այս դեպքում համապատասխան փոփոխություններ պետք է կատարվեն նաև բուհական և հետբուհական կրթության և պաշտոնական աստիճանների շնորհման կանոնակարգերում:

Աշխարհում մեծ տարածում ստացած այժմյան ֆինանսական, ապա և սոցիալ-տնտեսական ճգնաժամային իրավիճակը, տնտեսության զարգացման դանդաղումն ու նույնիսկ հետընթացը, շատերին հիմք է տալիս եզրակացնելու, որ այս պայմաններում խոսել նոր հասարակության ձևավորման խնդրի շուրջ անիմաստ է: Մակայն իրողությունը, կարծում ենք, այլ է: Նախ, այս իրավիճակը ստիպում է մտածել, թե ինչպիսին կլինի ճգնաժամերի առաջացման հնարավորություններն ապագա հասարակությունում, ուղիներ փնտրել խու-

ասփելու ճգնաժամով պատճառվող հնարավոր վնասներից ինչպես այժմ, այնպես և հետագայում: Մյուս կողմը վերաբերում է ճգնաժամերի օգտակարության հարցին՝ հետագա ինտենսիվ զարգացում ապահովելու հնարավորությանը հենց ճգնաժամի արդյունքում: Պետք է հիմնավորված կարծիք ձևավորել այն մասին, թե ճգնաժամերի կանխատեսումը, ուստի և դրանց իրողություն դառնալու հնարավորության կանխատեսումները, արդյոք ավելի նպատակահարմար է այդ ուղղությամբ ջանքեր և ծախսումներ կատարելու համեմատությամբ: Այս հարցերի հետազոտությունը թույլ է տվել հիմնավորել այն դրույթը, որ **բազմակողմ գիտակցված գործունեության հասարակությունում իրականացվող գործունեությամբ պայմանավորված ճգնաժամերի գոյության կամ առաջացման հնարավորությունն իսկ հակասում է գիտակցված գործունեության էությանը, ուստի և դրա հիման վրա ձևավորված հասարակության բովանդակությանը:** Այս հասարակության բոլոր մակարդակներում անկանխարգելի (արտաքին պատճառներով պայմանավորված) ճգնաժամերի համար կանխատեսումները և դրանց հիման վրա բացասական ազդեցությունների մեղմացման միջոցառումների նախապես մշակումը և տեղին կիրառությունն ավելի արդյունավետ կլինեն, քան ճգնաժամի ենթադրվող դրական ազդեցությունը հետճգնաժամային զարգացման բարձր ինտենսիվության ձևով: Հետևաբար, ճգնաժամերի ի հայտ գալու հնարավորության կանխատեսումը, դրա կանխարգելման կամ վնասների մեղմացման միջոցառումների նախապատրաստումը և ճգնաժամի բացասական ու դրական ազդեցությունների համեմատական գնահատումը գիտակցված գործունեության հասարակության **գիտելիքային ապահովման կարևոր գործառույթ են, ուստի և ներառվելու են այդ ապահովումն իրականացնող ստորաբաժանումների աշխատացանկում:**

Այժմյան ճգնաժամի հաղթահարմանն ուղղված միջոցառումների թվում հանրապետության կառավարության կողմից կարևորվել է փոքր և միջին ձեռնարկատիրությանը ցուցաբերվող օժանդակությունը՝ տրամադրվող արտոնությունների ձևով: Դրանք, կարծում ենք, կարևոր միջոցառում պետք է համարվեն նաև ճգնաժամերին նախորդող ժամանակահատվածներում: Նպատակահարմար պետք է համարվի արտոնությունները ոչ միայն ֆինանսական ապահովման առումով տրամադրելու, այլ նաև նյութական, ապրանքային, տարածքային, հիմնական ֆոնդերի և այլ միջոցների ձևով: Այս առումով կարևոր է հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծմանն ու զարգացմանն ուղղված ինկուբատորային գործունեությունը, լիզինգային օժանդակությունը իրականացնել ոչ միայն վարկային հատվածով, այլ նաև կլաստերացմամբ՝ սպասարկվող խոշոր կազմակերպությունների շուրջ ձևավորվող կլաստերների կազմ դրանք ներառելու միջոցով: Այս դեպքում այդ կլաստերները փաստորեն կկատարեն նաև ինկուբատորային գործառույթներ, կարծում ենք, ավելի ընդունելի պայմաններով, քան մասնագիտացված ինկուբատորների կողմից է դա կատարվում: Դա դրականորեն կարող է ազդել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման, ուստի և ճգնաժամի հաղթահարման գործընթացների վրա:

**ԱՆԴՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ**

Այն, որ հանրապետությունն իր տնտեսական զարգացման համար կապիտալ ներդրումների կարիք ունի, անվիճարկելի է: Տեղական խոշոր ձեռնարկությունները հիմնականում զբաղված են իրենց կապիտալի վերարտադրության (գուցե և ընդլայնված) խնդիրներով: Նկատի ունենալով նրանց մենաշնորհային կարգավիճակը հանրապետությունում, այսինքն, իրական մրցակցության բացակայությունը, կարելի է ենթադրել, որ նույնիսկ իրենց ձեռնարկությունները նորագույն տեխնոլոգիաներով ապահովելու շահագրգռվածություն չունեն: Այս պայմաններում, գիտատար կամ նոր տեխնոլոգիաների արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների ստեղծման, առավել ևս, գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման հարցերով նրանց հետաքրքրվածության շրջանակը շատ նեղ է: Սակայն, միայն գիտական նոր հայտնագործությունների ու կոնստրուկտորական նորագույն մշակումների հիման վրա է հնարավոր հանրապետությունում կազմակերպել միջազգային չափանիշներին համապատասխան նորագույն տեխնոլոգիաների և նոր արտադրատեսակների արտադրությունը և դրանց շնորհիվ ապահովել երկրի տնտեսության առաջանցիկ զարգացումը, դուրս գալ միջազգային շուկա ու այնտեղ ունենալ մեր խորշը:

Իրավիճակից ելքի առաջին քայլը օտարերկրյա կապիտալի ներգրավումն է: Պետք է հատուկ տարբերակել պորտֆելային և ուղղակի ներդրումները: Պորտֆելային ներդրումները լուծում են տնտեսության մոնետարության խնդիրը, բայց նաև նպաստում են սղաճի աճին, ֆինանսական «փուչիկի» ձևավորմանը: Բայց նույնիսկ այս թերություններով հանդերձ պորտֆելային ներդրումները «չեն շտապի» Հայաստան, հաշվի առնելով երկրի տարածաշրջանային ոչ բարենպաստ պայմանները, տնտեսության հիմնականում մենաշնորհային բնութագիրը, արժեթղթային շուկայի թույլ զարգացածությունը:

Ինչպես զարգացած տնտեսությամբ երկրների, այնպես էլ զարգացող երկրների փորձի վերլուծությունը վկայում է ընդունող երկրի տնտեսության վրա օտարերկրյա ներդրումների դրական ազդեցության մասին, սակայն հաշվի առնելով օտարերկրյա կապիտալի համար մի շարք սահմանափակությունները: Նոու-հայուի և տեխնոլոգիաների ներկրումը հատկապես կարևոր է անցումային շրջանում, երբ երկրի նպատակը ինչ-որ չափով զարգացած երկրներին հասնելն է: Միաժամանակ, օտարերկրյա ներդրումների չկարգավորվող հոսքը կարող է բերել արժեզրկման, հնացած տեխնոլոգիաների ներհոսքի, երկրի տնտեսական զարգացման ուղղության վրա վերահսկման կորստի:

Ամեն դեպքում, մեր երկրի տնտեսության համար ՕՈՒՆ-երի հոսքը անհրաժեշտ է: Սակայն, ինչպես վերևում նշեցինք, մեր երկրում առկա են դրան խոչընդոտող արտաքին և ներքին գործոններ: Մյուս կողմից, ինչպես վկայում է համաշխարհային փորձը, նորագույն տեխնոլոգիաների վրա բազավորված ՕՈՒՆ-երը գնում են դեպի տնտեսապես զարգացած երկրներ, որտեղ առկա է անհրաժեշտ որակյալ աշխատուժը: Նույնիսկ, եթե զան էլ մեր երկրի, ապա որպես օրինաչափություն, դրանք իրենց հետ բերելու են հնացած տեխնոլոգիաներ, և դրանով իսկ երկիր տանելով դեպի, այսպես կոչված, տեխնոլոգիական խնամառուականության թակարդն իր բոլոր բացասական դրսևորումներով՝ երկրի տնտեսության համար¹: Այդ դեպքում գուցե տնտեսությունն ինչ-որ չափով կաշխուժանա, կստեղծվեն նոր աշխատատեղեր, սակայն հեռանկարում այն տնտեսության լճացման կրեթի, էլ չենք խոսում տնտեսության առաջանցիկ զարգացման մասին, որը միայն նորամուծությունների վրա հիմնված կարող է լինել, իսկ նորամուծություններն իրենց հերթին գիտահետազոտական աշխատանքների

¹ Дементьев В.Е. "Догоняющая постиндустриализация и промышленная политика". Препринт #WP/2006/199. М, 2006, с. 26-292.

արդյունք կարող են լինել: Խնդրին իրատեսորեն նայելով պետք է արձանագրել, որ դրսից մեզ ոչ ոք չի տրամադրի նորագույն տեխնոլոգիա և գիտական արտադրանք: Հույսներս մենք պետք է մեր վրա դնենք: Ինչպես նկատում է ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահը, որ Իսրայելը 1960-ական թվականներին նույնպիսի իրավիճակում էր, 1962-ին աշխարհի հրեաների համախմբմամբ ստեղծվեց համագալիս հիմնադրամ, և գիտության մեջ ներդրված մոտ 500 մլն ԱՄՆ դոլարը 7 տարի անց իր դրական արդյունքները տվեց: Եթե ընդունենք, որ 7 տարին հաստատագրված և անփոփոխ ժամանակահատված չէ և ներկայումս այն կարող է և փոքր լինել, այնուամենայնիվ հարց է ծագում, որ եթե ենթադրենք, որ գիտահետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ միջոցներ հայթայթվել են, ապա հարց է առաջանում, թե գիտահետազոտական աշխատանքների իրականացման և դրանց արդյունքների կապիտալացման (ապրանքայնացման) միջև ընկած ժամանակահատվածում պետությունը ինչ միջոցներով է լուծելու այսօր արդեն նրա առջև ծառայած մյուս սոցիալ-տնտեսական խնդիրները: Այս հարցը նույնպես լուրջ քննարկման կարիք ունի: Այսինքն, հանրապետության կառավարությունը երկրի տնտեսության զարգացման ուղիների և միջոցների հարցերում կողմնորոշման լուրջ մարտահրավերներ ունի: Ինչպես նորից նշում է Ա.Հարությունյանը, հանրապետությունում միայն մեկ ամիս առաջ է ընդունվել առաջիկա 5 տարվա ռազմավարական ծրագիրը, նաև գերակայությունները և այսօր անհնար է ակնկալել արագ արդյունքներ:

Երկրի տնտեսական զարգացման ուղիների ընտրության հարցերում տարակարծություններ կան նաև ռուս տնտեսագետների մոտ: Արդյունաբերական քաղաքականության վերաբերյալ սկզբունքային տարբերությունը կայանում է դրա ընտրանքայնության կամ սելեկտիվության անհրաժեշտ աստիճանի գնահատման մեջ: Վերջին տարիներս շրջանառվում է նաև հորիզոնական և ուղղահայաց, փափուկ և կոշտ արդյունաբերական քաղաքականության հասկացությունները: Ունիվերսալ միջոցները նույնացվում են փափուկ (հորիզոնական), իսկ ակտիվ միջոցները՝ կոշտ (ուղղահայաց) արդյունաբերական քաղաքականության հետ: Քաղաքականության վերջին տեսակը կապված է առանձին ճյուղերին և գործունեության տեսակներին աջակցության՝ նրանց պլանավորման, բյուջետային ֆինանսավորման, հարկային արտոնությունների, հովանավորչության և այլնի հետ:

Առաջին տեսակը՝ առաջին հերթին, դա ինստիտուտների ձևավորումն ու աջակցությունն է, որոնք ապահովում են շուկայական մեխանիզմների գործունեությունը, ներառյալ՝ հակամենաշնորհային կարգավորումը, ստանդարտացումը և պատենտավորումը: Սրան են վերաբերում հարկերի ընդհանուր մակարդակի կարգավորումը, դրամական քաղաքականությունը, աշխատանքային հարաբերությունների կարգավորումը և այլն: Ինչպես ասում են, «Ճշմարտությունը երկու կարծիքների արանքում է»: Նշված կարծիքների ու մոտեցումների համադրումը փաստորեն նշանակում է հեռանալ փափուկ և կոշտ քաղաքականությունների ռացիոնալ համադրման փորձերից, ի նկատի ունենալով ինչպես մրցակիցների գործողությունները, այնպես էլ հայրենական տնտեսության պատրաստվածությունը այդ գործողություններին: Պետք է նշել, որ տնտեսական ազատականության քաղաքականության հետագա զարգացման հնարավորությունները երկրի մրցունակության բարձրացման մեջ, կասկածներ է առաջանում նույնիսկ այս քաղաքականության կողմնակիցների մոտ: Վտանգ կա, որ այս գաղափարը, որը միտված է տնտեսական ազատականության քաղաքականության երկրորդ շնչառություն տալուն, հեշտությամբ կարող է դառնալ դրա գերեզմանափորը, հաշվի առնելով անքակտելի կապը դիրիժիզմի և ազգային մրցունակության համար պայքարի միջև¹:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա մեր երկրում տնտեսական ազատականության քաղաքականության և շուկայական տնտեսությանն հատուկ ինստիտուտների ձևավորման հարցերում, բավականին առաջընթաց արձանագրվել է: Զննարկման այլ նյութ են այդ ինստիտուտների գործունեության մակարդակների հարցերը:

Այսպիսով, որ հանրապետության գերխնդիրը սեփական նորարարական (ինովացիոն) քաղաքականության մշակումն ու իրականացումն է, որի համար էլ անհրաժեշտ է հիմնավոր

¹ Юдаева К. "Конкурентоспособность? Спасибо, не надо// Россия в глобальной политике", том 2, N4, июнь-август, 2004.

որոշումներ ընդունել գիտության զարգացման գերակա ուղղությունների վերաբերյալ և դրանց ֆինանսավորման խնդիրները լուծել: Այս խնդրում ուսանելի է Հարավային Կորեայի օրինակը, որն իր գիտահետազոտական ու կոնստրուկտորական մշակումների ներուժի զարգացման համար օտարերկրյա կապիտալ չի ներգրավել, այլ հիմնվել է պետության և մասնավոր կապիտալի միջև համագործակցության արդյունավետորեն մշակված մեխանիզմի վրա: Իր էությանը այդ համագործակցությունը ձեռնառու էր երկու կողմերին էլ, մասնավոր ոլորտն իր կապիտալ ներդրումների ռիսկերը կիսում էր պետության հետ, իսկ պետությունն էլ լրացուցիչ ֆինանսական միջոցներ էր ձեռք բերում երկրի գիտական ներուժը զարգացնելու համար:

Ամփոփելով նշենք, որ համաշխարհային տնտեսության գլոբալացման պայմաններում, նրանում մեր ուրույն տեղն ունենալու խնդրում ՕՈՒՆ-երի ներգրավումը գուցե և անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է:

Անհրաժեշտ է երկրում ձևավորել նորագույն տեխնոլոգիական մշակումների և գիտական արտադրանք տալու սեփական կարողություններ, որոնք համաշխարհային շուկայում պահանջարկ կվայելեն: Իսկ այս խնդրի լուծման առաջնահերթ նախապայման պետք է գնահատել, մի կողմից, երկրի տնտեսության մենաշնորհային բնույթի բացառումը, մյուս կողմից, տնտեսության պետական կարգավորման գործուն մեխանիզմների մշակումն ու գործարկումը: Ինչպես վերևում նշվեց, շուկայական ազատականության աստիճանի բարձրացումն ամենևին էլ երկրի տնտեսության մրցունակության բարձրացման միարժեք գրավական չի կարող լինել: Իսկ այստեղ մենք, կարծես թե, ինչպես ասում են «Հռոմի պապից ավելի կաթոլիկ երևալու պահվածք ենք որդեգրել»:

ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ՆՄ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, տ. գ. թ.*

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Էլեկտրոնային ձեռնարկատիրությունը ինտենսիվ զարգացման գրեթե երկու տասնամյակի պատմություն ունի, ինչը, տնտեսության այլ ճյուղերի պատմության հետ համեմատելիս, թվում է ոչ նշանակալից ժամանակամիջոց: Էլեկտրոնային ձեռնարկատիրության ժամանակակից պատկերացմամբ այն ներկայացվում է որպես ձեռնարկատիրական գործունեության այնպիսի ոլորտ, որը կապված է գլոբալ հեռահաղորդակցական համակարգերի միջոցով այնպիսի գործարքների կնքման հետ, ինչպիսիք են առքուվաճառքը, մատակարարումը, ծառայությունների մատուցումը, փոխադրումը, փոխառությունը և վարկը, դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորումը, բանկային ավանդը, բանկային հաշիվների վարումը, հաշվարկների իրականացումը, տեղեկատվության արխիվային պահպանումը, ապահովագրությունը, հավատարմագրային կառավարումը, առևտրային կոնցեսիան, հասարակական մրցույթների կազմակերպումը, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ այլ իրավունքների և պարտականությունների ձեռքբերումը:

Էլեկտրոնային ձեռնարկատիրության ժամանակակից համակարգի ձևավորումը պայմանավորված է պատմական մի շարք իրադարձությունների հետ: Էլեկտրոնային ձեռնարկատիրության առաջին համակարգերը և մեթոդները իրենց ծննդով պարտավոր են ավիատոմսերի վաճառքի ավտոմատացման տեխնոլոգիային, բանկային գործունեությանը, պլաստիկ քարտերի և ձեռնարկության ռեսուրսների կառավարման ավտոմատացման համակարգերի ստեղծմանը: Որպես պատմական առաջին իրադարձությունը՝ էլեկտրոնային ձեռնարկատիրության սկիզբը կարելի է համարել 1960թ., երբ «American Airlines» և «IBM» ընկերություն-

ները ստեղծեցին օդային փոխադրումների տեղերի նախնական պատվիրման ավտոմատացման համակարգ՝ «SABRE» (Semi-Automatic Business Research Environment), ինչը կարելի է ներկայացնել որպես էլեկտրոնային ձեռնարկատիրության համակարգերի ստեղծման առաջին փորձը: «SABRE» համակարգը շարքային քաղաքացիների համար օդային փոխադրումները դարձրեց ավելի հասանելի՝ օգնելով նրանց կողմնորոշվել անընդհատ ավելացող չվերթներում և սակագներում:

Ներդրված համակարգը թույլ էր տալիս ավտոմատացնել սակագների հաշվարկների գործընթացները և ծառայությունների գները: Համակարգը հնարավորություն էր տալիս նաև իրականացնել եկամտաբերության համալիր կառավարում՝ թույլ տալով օդային փոխադրումներ իրականացնող ընկերություններին առավելագույն շահույթ ստանալ: Արդեն 1964թ. մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգը թույլ էր տալիս պատվիրել 26 հազար տեղեր:

1988թ. SABRE վերափոխվեց GDS-ի (Global Distribution System), որը նախատեսված էր ճանփորդողներին տեղեկատվական ծառայություն մատուցելու, նախօրոք պատվիրված տեղերի, տեղափոխումների մշակման համար: Համակարգը միմյանց էր կապում ավելի քան 30 հազար տուրիստական կազմակերպություններ, 300 ավիաընկերությունների, մեքենաների վարձակալության 50 ընկերություններ, 35 հազար հյուրանոցներ և 3 մլն հաճախորդներ:

Էլեկտրոնային ձեռնարկատիրության ձևավորման երկրորդ կարևոր խթանը պայմանավորված էր կառավարման ավտոմատացված համակարգերի ընձեռած հնարավորություններով: 60-ական թվականների սկզբում ԱՄՆ-ում սկսվեցին պահուստների կառավարման ավտոմատացման աշխատանքները: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, զանգվածային արտադրության ակտիվ աճի պայմաններում ակնհայտ դարձավ, որ պահանջարկի պլանավորման և պաշարների կառավարման մաթեմատիկական մոդելները հանգեցնում են միջոցների էական տնտեսմանը՝ նվազեցնելով պահուստների և անավարտ արտադրանքի ծավալները: Արդեն իսկ ակնհայտ էր, որ պատվերների օպտիմալ ծավալի ընտրությունը ձեռնարկության գործունեության արդյունավետության բարձրացման կարևոր պայմաններից մեկն է, քանի որ բազմակի պատվերները հանգեցնում են տրանսակցիոն ծախսերի մեծացմանը, իսկ ավելցուկային՝ միջոցների սառեցմանը:

60-ական թվականների վերջում Օլիվեր Ուայթի և այլոց հրատարակություններում ներկայացվում են պաշարների և արտադրության կառավարման և պլանավորման ալգորիթմներ: Օլիվեր Ուայթն առաջարկում էր համալիր ուսումնասիրել արտադրական, մատակարարման, իրացման գործընթացները: Տեխնիկայի կիրառման հիման այս մոտեցման գործնական իրականացումն առաջին անգամ թույլ է տվել արտադրության գործընթացում գործնականորեն շտկել պլանային առաջադրանքները (պահանջների փոփոխության, պատվերների շտկում, ռեսուրսների անբավարարության, սարքավորումների խափանման դեպքեր, և այլն):

70-ական թվականների վերջում Օլիվեր Ուայթը և Ջորջ Պլոսլը զարգացրեցին այս հայեցակարգը, որում, մոդելավորման մաթեմատիկական մեթոդներով նյութական ռեսուրսների պլանավորման հետ մեկտեղ, արտադրության տեխնոլոգիայի նկարագրության միջոցով, իրականացվում էր արտադրական պահանջումների պլանավորում:

Էլեկտրոնային ձեռնարկատիրության գլոբալացման գործընթացում բեկումնային նշանակություն ունեին տեղեկատվության փոխանցման վստահելի, անխափան և մատչելի տեխնոլոգիաների մշակման գործընթացները: 1961թ. Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտից Լեոնարդ Կլեյնրոքը, մշակեց տվյալների «փաթեթներով» փոխանցման տեսական հիմքերը: Կարելի է պնդել, որ Կլեյնրոքը կանխագուշակեց ժամանակակից գլոբալ տեղեկատվական ցանցերի ստեղծման տեսլականը: Մեկ տարի անց՝ 1962թ. Լիկլայդերի հրապարակած «Galantic Network» աշխատությունում ներկայացված էր ապագայում մարդկանց միջև գլոբալ համակարգչային կապերի առկայության հնարավորությունը, որն երկրագնդի ցանկացած կետից ակնթարթային մուտք է ապահովում ծրագրերին և տվյալների բազային: Նրա կանխատեսումները արտացոլում են Ինտերնետի ժամանակակից կառուցվածքը:

Գլոբալ համակարգչային ցանցերի նախագծման և ստեղծման գործում բեկումնային կարելի է համարել 1966թ., երբ Բոբ Թեյլորը պետական ֆինանսական աջակցությամբ հանձն առավ «ARPA» փորձարարական համակարգչային ցանցի ստեղծման ծրագրերի իրականացմանը ԱՄՆ-ում: Սկզբնապես գլոբալ ցանցի ստեղծման և կատարելագործման ոլորտում շատ հետազոտություններ աջակցվում էին ԱՄՆ պաշտպանության նախարարության կողմից, քանի որ մշակումների սկզբնական նպատակը այնպիսի ցանցի ստեղծումն էր, որը կարող էր գործել անգամ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև միջուկային պատերազմի ի հայտ գալու ժամանակ: Այսինքն՝ ստեղծվող ցանցում չպետք է լինեին անփոխարինելի կենտրոնական օղակ, որի ոչնչացումը կհանգեցներ ամբողջ ցանցի անաշխատունակությանը:

1977թ. Վիտոն Սերֆը՝ SATNET ընկերության ծրագրային տնօրենը, առաջին անգամ ցուցադրեց երեք առանձին ցանցերում TCP արձանագրության հիման վրա տվյալների փոխանակումը: Փոխանցվող տեղեկատվությունը ուղղորդվեց Սան Ֆրանցիսկո-Լոնդոն-Հարավային Կալիֆոռնիայի համալսարան երթուղով՝ անցնելով 150 հազ կմ ճանապարհ և ամբողջ ճանապարհին չկորցնելով և ոչ մի բայթ տեղեկատվություն: 1983թ. հունվարի 1-ին ARPANET ցանցը ամբողջությամբ անցավ տեղեկատվության փոխանցման TCP/IP արձանագրության: Հենց այդ օրն էլ ընդունված է համարել ինտերնետի ծննդի պաշտոնական օր:

Մինչև 1990թ. ինտերնետի առևտրային կիրառում թույլատրված չէր, իսկ համակարգի կառավարումը վստահված էր ԱՄՆ-ի Ազգային գիտական ֆոնդին (National Science Foundation, NSF): Հետագայում ԱՄՆ-ի կառավարությունը համակարգի կառավարման լիազորությունները փոխանցեց մասնավոր կազմակերպությունների, ինչը նպաստեց առևտրային մատակարարների շրջանակի և ինտերնետից օգտվողների թվի ավելացմանը: 1992թ. ԱՄՆ-ի կառավարությունը հավանություն տվեց ինտերնետ ցանցի առևտրայնացմանը, որը շատ շուտով ամբողջ աշխարհում իրար միացրեց միլիոնավոր մարդկանց և համակարգիչներ:

Էլեկտրոնային ձեռնարկատիրության զարգացման մյուս կարևոր խթանը էլեկտրոնային վճարային համակարգերի և բանկային համակարգում էլեկտրոնային տեխնոլոգիաների ներդրումն էր: 60-ական թվականների կեսերին առաջին անգամ ի հայտ եկան վարկային քարտերը, որոնք պատրաստվել էին պլաստիկից՝ մագնիսական շերտով և ապահովում են վճարահաշվարկային գործընթացների ավտոմատացման հնարավորություն:

1968թ. Մեծ Բրիտանիայում առևտրային անկանխիկ շրջանառության սպասարկման համար ստեղծվեց «BACS» (Bankers Automated Clearing Services) փոխանցումների և անկանխիկ հաշվարկների էլեկտրոնային համակարգը: Տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար ԱՄՆ-ում նման համակարգ ստեղծվեց միայն 2 տարի անց՝ 1970թ. և կոչվում էր CHIPS (Clearing House Interbank System): Այն ստեղծվեց Նյու Յորքի անկանխիկ հաշվարկների պալատի կողմից:

60-ական թվականների վերջում պլաստիկ քարտերի սպասարկման ամերիկյան գլոբալ համակարգերի երկու հիմնադիրները՝ «Bank of America» և «Interbank Cards Association» ընկերությունները վճարային քարտերի տարածումը խթանելու նպատակով ներդրեցին փոստի միջոցով պլաստիկ քարտերի առաքման համակարգ, ինչը գերազանցեց սպասվող արդյունքը: Միաժամանակ աճում էր նաև տվյալ քարտով աշխատող ձեռնարկությունների թվաքանակը: Նման զարգացումները ստիպեցին լոկալ քարտային համակարգեր ունեցող ամերիկյան բանկերին միանալ գլոբալ համակարգերից մեկին, ինչն էլ ավելի արագացրեց տարբեր համակարգերի ինտեգրման գործընթացը: Ներկայումս լայն տարածում ունեցող «VISA» պլաստիկ քարտերի ծնունդը կապվում է 1976թ. հետ, երբ «Bank of America» քարտային ընկերությունը, միջազգային շուկա հեշտ մուտք գործելու նպատակով, փոխեց իր «Americard» անվանումը «Visa International»-ի: 1980թ. համանման պատճառներով «MasterCharge» վճարային քարտերը վերանվանվեցին «MasterCard International»: Արդյունքում՝ արդեն ավելի քան 30 տարի «MasterCard» և «Visa» վճարային համակարգերը պլաստիկ քարտերի հիման վրա էլեկտրոնային վճարման համակարգի ոլորտում բացահայտ առաջատարներն են:

Այս տարիներին տեղեկատվական տեխնոլոգիաների համատարած կիրառմանն ինչ-որ կերպ արգելակում էին գաղտնագրման ոչ այնքան հուսալի եղանակները: Այս խնդրի լուծման գործում բեկումնային կարելի է համարել 1976թ. Ստենդֆորդի համալսարանի ամերիկյան երկու երիտասարդ մաթեմատիկոսների՝ Ուիտֆիլդ Դիֆֆինի և Մարտին Հելմանի հրապարակումները, որոնցում առավել ամբողջական ներկայացված են էլեկտրոնային փաստաթղթի հաստատման համար թվային ստորագրության օգտագործման հնարավորությունները:

1973թ. ԱՄՆ-ում ընդունվեց օրենք, որը ապահովում էր պլաստիկ քարտերի տերերի պաշտպանությունը՝ քարտերի տեղեկատվության և հաշիվների ոչ արտոնյալ օգտագործումից: 70-ական թվականներին առաջին անգամ սկսեցին օգտագործել էլեկտրոնային տվյալների փոխանակման (EDI-Electronic Data Interchange) և ֆինանսական միջոցների էլեկտրոնային փոխանցման (EFT- Electronic Funds Transfer) մեթոդները: Առաջին համակարգերի թերությունը կայանում էր նրանց բարձր արժեքի և ծրագրային ու սարքային բաղկացուցիչների ոչ ստանդարտ լինելու մեջ: Սարքավորումների ձեռքբերման և մասնավոր ցանցերի շահագործման համար նախատեսված ծախսերը իրենց կարող էին թույլ տալ ոչ բոլոր բանկերն ու ձեռնարկությունները:

1977թ. տեղի ունեցավ միջբանկային ցանցերում «SWIFT» (Society for World-wide) ֆինանսական հաղորդագրությունների փոխանակման համակարգի պաշտոնական բացումը: Ցանցի գոյության սկզբում նրանում ընդգրկված էին 239 բանկեր Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի 15 երկրներից՝ ապահովելով ամենօրյա փոխադրումներ շուրջ 500 հազար հաղորդագրություններ ծավալով: SWIFT համակարգը դարձավ նման տեսակի առաջին միջազգային համակարգը: Ներկայումս SWIFT-ի կազմում ընդգրկված են հազարավոր ֆինանսական հաստատություններ աշխարհի գրեթե բոլոր երկրներից, իսկ համակարգով փոխանցվող հաղորդագրությունների տարեկան ծավալը գերազանցում է 4 մլրդը:

1980-ական թվականների սկզբին ԱՄՆ-ում ի հայտ են գալիս փակ էլեկտրոնային ցանցերում հաճախորդների բանկային գործողությունների իրականացման առաջին համակարգերը: 1984թ. վերջում Սիթիբանկը թողարկեց առաջին «Հաճախորդ-բանկ» համակարգը, որից, սկզբնական շրջանում, կարող էին օգտվել միայն Նյու Յորքի բնակիչները: 1990-ականներից վճարային համակարգերի զարգացման միտումներում պարզորոշ նկատվում է ինտերնետի միջոցով նոր ծառայությունների մատուցման ընկերությունների ձգտումը: Արդեն 1995թ. ԱՄՆ-ում բացվեց առաջին ինտերնետ-բանկը՝ «Security First Network Bank»-ը: Գոյության առաջին տարվա ընթացքում նրա ակտիվները կազմում էին 110 մլն դոլար, ամենամսյա կապիտալի աճը գերազանցում էր 20%-ը:

1993թ. հոլանդացի մաթեմատիկոս Գեվիլդ Չաունոմի կողմից ստեղծվեցին էլեկտրոնային փողերի գործնական իրացման համար մեխանիզմներ: 1994թ. իր ծառայություններն առաջարկեց «First Virtual» ընկերությունը՝ Ինտերնետում առաջին էլեկտրոնային վճարային համակարգը: Նույն թվականին ստեղծվեց նաև «NetCash» էլեկտրոնային վճարային համակարգը: Հետագա տարիներին դրանց թիվն ավելացավ: 1998թ. ԱՄՆ-ում ստեղծվեց «PayPal» համակարգը, որը թույլ էր տալիս համակարգչից օգտվողներին միմյանց փոխանցել փողեր էլեկտրոնային փոստի միջոցով: Եվրոպայում ստեղծվեց «PhonePaid» վճարային համակարգը, որը թույլ է տալիս իրականացնել փոխանցումներ՝ բջջային հեռախոսների միջոցով: 2000թ. հուլիսին «FranceTelecom» ընկերությունը ներկայացրեց «Piement CB sur mobile» վճարումների համակարգը, որտեղ վճարումներն իրականացվում էին բջջային հեռախոսի և պլաստիկ քարտի միջոցով:

Հայաստանում էլեկտրոնային վճարային առաջին և միակ համակարգն «iDram» համակարգն է, որը համաձայն պաշտոնական կայքում տեղադրված տեղեկությունների, հիմնադրվել է 2008թ.: Ռուսական շուկայում 1998թ. հիմնադրվեց «WebMoney» էլեկտրոնային փողերի համակարգը: Արդեն 2004թ. «WebMoney» համակարգի օգտվողների թվաքանակը կազմեց ավելի քան 1 մլն մարդ:

Էլեկտրոնային ձեռնարկատիրության զարգացման գործում կարևոր նշանակություն ունի անհատական համակարգիչների լայն տարածումը: Չցանկանալով մանրամասնել այս գործում կարևոր նշանակություն ունեցող տեխնոլոգիական տարբեր հայտնագործությունների ժամանակացույցը՝ նշենք միայն, որ 1981թ. «IBM» կորպորացիան պաշտոնապես ներկայացրեց իր առաջին անձնական համակարգիչը՝ «IBM Personal Computer» (IBM PC), իսկ 1985թ. «Toshiba» կորպորացիան վաճառքի հանեց աշխարհում առաջին IBM համատեղելի նոթբուքը: 2009թ. նոր համակարգիչների տարեկան վաճառքի ծավալն արդեն կազմում էր ավելի քան 300 մլն անհատական համակարգիչ:

Ինտերնետից օգտվելու առաջին գործիքները որևէ կերպ համեմատելի չէին ներկայիս գործիքների հետ: Սկզբնական շրջանում ինտերնետը կարելի էր համեմատել կապուդու հետ, որի միջոցով յուրաքանչյուր ծառայության կազմակերպման համար անհրաժեշտ էր տիրապետել առանձին ծրագրից օգտվելու հմտությունների: Այս առումով ինտերնետի հասանելիության և տարածման գործում անվիճելի է ինտերնետային էջի թվային ներկայացման և այդ էջի ունիվերսալ դիտարկիչի ստեղծման աշխատանքները: 1989թ. Թիմ Բերնեքս-Լին, աշխատելով ֆիզիկայի տարրական մասնիկների Եվրոպական կենտրոնում, մշակում է World Wide Web (WWW) ստանդարտը՝ գլոբալ հիպերտեքստային համակարգը: Այս ուղղությամբ աշխատանքները հանգեցրեցին «http» արձանագրության ստեղծմանը: Արձանագրության արտոնագրումը կարող էր հեղինակին դարձնել աշխարհի ամենահարուստ մարդկանցից մեկը, սակայն միակ միջազգային ստանդարտի փոխարեն ներկայումս կմրցեին տարբեր արձանագրություններ:

Ինտերնետի առաջին դիտարկիչը ստեղծվեց 1990թ. և ունակ էր ցուցադրել միայն մաքուր տեքստ: 1992թ. Մարկ Անդերսենի կողմից դեկավարվող համախոհների խմբի կողմից սկսվեց դիտարկիչի մշակումը, որը թույլ էր տալիս տեղաշարժել Ինտերնետով բացառապես մկնիկի օգնությամբ: Նոր դիտարկիչն արմատապես վերափոխեց ցանցի հետ մարդկանց շփման եղանակը՝ դարձնելով այն հասանելի ցանկացած մարդու համար: Հետագայում ստեղծվեցին ավելի մեծ հնարավորություններով դիտարկիչներ, որոնք ոչ միայն ցուցադրում են, այլև հնարավորություն են տալիս ինտերակտիվ կապ հաստատել տարբեր օգտագործողների միջև: Այս առումով արժանահիշատակ է 1994թ. Մարկ Էնդերսոնի և Ջեյմս Կլարկի կողմից ներկայացված «Netscape» նոր դիտարկիչը:

Ինտերնետի տարածման գործում կարևոր նշանակություն ուներ սպառողի տեսանկյունից անճար ինտերնետ ռեսուրսների ստեղծման գործընթացը: Որպես ռեսուրսների ստեղծման խթան ներկայումս լայնորեն տարածված է գովազդային վահանակների տեղադրումը, որի առաջին դրսևորումները կապվում են 1994թ. հետ: Այդ թվականին «Infoseek» որոնման համակարգում առաջին անգամ գովազդ տեղադրելու հնարավորություն առաջարկվեց: Հետագայում այդ տեսակի գովազդից ստացվող շրջանառությունը վերածվեց որոնող համակարգերի եկամտի հիմնական աղբյուրը:

Տեղեկատվության որոնման համակարգերը սկզբնական շրջանում առաջարկում էին բացառապես տեղեկատվության որոնման գործառույթ, և շատ քչերն էին կանխագգում, որ ապագայում դրանք վերածվելու են մեզա-պորտալների, որոնք, գործնականում, ոչ միայն առաջարկում են ամենատարբեր ծառայություններ, այլև կենտրոնացնում են հսկա ֆինանսական միջոցներ և թելադրում են ինտերնետ միջավայրի զարգացման ռիթմը:

Առաջին որոնողական համակարգերից մեկը՝ «Yahoo!» ծառայությունը ստեղծվեց 1994թ., Ստենֆորդի համալսարանի ասպիրանտներ Ջերի Յանգի և Դեյվիդ Ֆիլոնի կողմից: Այն իրենից ներկայացնում էր Ինտերնետային ռեսուրսների ցուցակ, քանի որ դեռևս գոյություն չուներ որոնման և ռեսուրսների դասակարգման գործող համակարգ: 1994թ. վերջում «Yahoo!»-ն այս ոլորտում վերածվեց բացարձակ առաջատարի:

Նույն թվականին Ջեֆ Բիգոսը հիմնադրեց Amazon ընկերությունը: 1995թ. հուլիսի 16-ին «Amazon» ինտերնետ-խանութը բացեց իր վեբ-կայքը: Սկզբում Բիգոսը անձամբ էր փաթեթավորում և ուղարկում գրքերը: Առաջին աշխատանքային շաբաթում խանութի շրջանառու-

թյունը կազմեց 5 հազ դոլար: Ընդամենը մեկ ամիս հետո Amazon.com-ից գրքեր էին գնում ոչ միայն ամերիկացիները, այլև աշխարհի 45 երկրների բնակիչները: Հատկանշական է, որ նույն թվականի Սուրբ Ծննդի տոների ժամանակ վաճառքի ծավալը կազմեց ավելի քանի 1 մլն դոլար, իսկ արդեն 1998թ. դեկտեմբերին ամերիկացիների օնլայն նախատոնական գնումները «Amazon»-ից կազմեցին 1 մլրդ դոլար:

1998թ. կրկին Ստենֆորդի համալսարանի շրջանավարտներ Սերգեյ Բրինի և Յրի Փեյջի կողմից ստեղծվեց «Google» որոնման համակարգը: Աշխատելով գիտական ծրագրի վրա՝ նրանք հայտնաբերեցին, որ ինչքան շատ կայքեր են հղում կատարում 3-րդ կայքին, այնքան ավելի մեծ է հղվող կայքի արժեքը: Կառուցելով բավականին բարդ և մինչ այժմ գաղտնի պահվող ալգորիթմ՝ նրանք դասակարգեցին ինտերնետ ռեսուրսները ըստ բանալի բառերի, ինչը հնարավորություն տվեց մինչ այժմ չգերազանցված ճշգրտությամբ պատասխանել հաճախորդների փնտրած արտահայտություններին: Իր գործունեությունը «Google»-ը սկսել է ավտոտնակում: Երեք տարուց հետո «Google» արդեն սպասարկում էր Ինտերնետում կատարվող հարցումների մեծամասնությանը: Այսօր «Google»-ը ծառայությունների առավել լայն շրջանակ սպահովող ծառայություն է, որում աշխատում են հազարավոր մարդիկ աշխարհի տասնյակ երկրներից:

Այսպիսով, սկիզբ առնելով ավիատոմսերի վաճառքի և ռեսուրսների կառավարման ավտոմատացման գործընթացներում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ընդամենը կես դարում անցել է հսկայական ճանապարհ: Այս գործընթացում կարևորագույն նշանակություն ունեցող իրադարձությունները, մեր կարծիքով, տեղեկատվության փոխանակման միասնական տեխնոլոգիաների հաստատում է, որը հիմք հանդիսացավ բազմաթիվ ստեղծագործ ու նախաձեռնող մարդկանց իրենց ջանքերը մեկ ընդհանուր գործին՝ տեղեկատվական հասարակության ձևավորմանը նպատակաուղղելու համար: Նման միասնական խաղի կանոնների բացակայության դեպքում տեղեկատվական միջավայրը կվերածվեր բազմակենտրոն մի քառսի, որտեղ գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ կլիներ սակավ ռեսուրսները բաժանել միաժամանակ տարբեր համակարգերում ներկայանալու համար: Մյուս բոլոր գործընթացները մարդկային մտքի, ներուժի և երևակայության արդյունք են, և վաղ թե ուշ՝ տեղի էին ունենալու այս կամ լայն հաջողակ ձեռներեցի նախաձեռնությամբ:

Վերը ներկայացված իրադարձությունները ամենաարժանահիշատակն են այն առումով, որ ներկայացնում են էլեկտրոնային ձեռնարկատիրության զարգացման հայեցակարգը: Շատ վատատեսներ պնդում են, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հաստատված խոշորագույն ընկերությունները պարզապես հայտնվեցին ճիշտ պահին ճիշտ տեղում, և ներկայումս այլևս թատերաբեմ չի մնացել նորահայտ ընկերությունների զարգացման համար: Սակայն պատմության ուսումնասիրությունը թույլ է տալիս, որ նման տեսակետը զուրկ է հիմնավորումներից. քիչ չեն դեպքերը, երբ արդեն իսկ ձևավորված շուկայում նորահայտ ձեռնարկատերերը իրական հեղափոխություն են իրականացրել: Այսպես, էլեկտրոնային հաղորդագրությունների «ICQ» համակարգը դարասկզբին անվիճելի մենատեր էր, իսկ այսօր դրան փոխարինել են սոցիալական ցանցերը:

Անվիճելի է, որ Հայաստանի տեսանկյունից էլեկտրոնային ձեռնարկատիրության բնագավառում համաշխարհային առաջատարի վերաճելու բոլոր պնդումները այս պահին զուրկ են հիմնավոր տրամաբանությունից: Սակայն պետք չէ հուսահատվել, այլ պետք է գործել ներքին շուկայի, ներքին սպառողի համար, ինչը, նպաստելով տեղեկատվական հասարակության ձևավորմանը, թույլ կտա ավելի շատ օգուտներ քաղել գլոբալ աշխարհի ընձեռած հնարավորություններից:

БЕНИАМИН ЕГИАЗАРЯН

*Ведущий научный сотрудник институт экономики
им. М. Котаняна НАН РА, д.э.н., профессор*

БЕЛЛА ГАБРИЕЛЯН

*Старший научный сотрудник институт экономики
им. М. Котаняна НАН РА, к.э.н., доцент*

САМООЦЕНКА ЛИЧНОСТИ И ЕЕ ВЛИЯНИЕ НА ВИДЫ МОТИВАЦИИ

Мотивация является сложным психофизиологическим состоянием, которое характеризуется совокупностью динамически иерархизированных побуждений человека к той или иной деятельности. Сложность в рассмотрении данной проблемы состоит в том, что любая деятельность – будь то труд, познание, общение и т.д. – полимотивирована. Она побуждается не одним-единственным мотивом, а их совокупностью.

Некоторые мотивы взаимно дополняют друг друга, некоторые находятся в конфликте. Они то усиливают друг друга, то искажают деятельность человека, отчего он, в конце концов, затрудняется определить, почему он поступил так, а не иначе. Мало того, многие мотивы человеком не осознаются. Поэтому бессмысленно строить мотивационный процесс в организации, опираясь лишь на отдельные составляющие сложного мотивационного комплекса. Воздействие мотивации на личность зависит также и от его характера.

Характер – это индивидуальное сочетание существенных свойств личности, выражающих отношение человека к действительности и проявляющихся в его поведении, в его поступках. С характером неразрывно связаны и способности человека. Высокий уровень способностей связан с такими чертами характера, как коллективизм, т.е. чувство неразрывной связи с коллективом, желание работать для его блага, вера в свои силы и возможности, соединенная с постоянной неудовлетворенностью своими достижениями, высокой требовательностью к себе, умением критически относиться к своему делу. Связь характера и способностей выражается в том, что формирование таких черт характера, как трудолюбие, инициативность, решительность, организованность, настойчивость, происходит в той же деятельности ребенка, в которой формируются и его способности. Например, в процессе труда, как одного из основных видов деятельности, развивается, с одной стороны, способность к труду, а с другой – трудолюбие, как черта характера. Характер – это неразрывное целое. Но изучить и понять такое сложное целое, как характер, нельзя, не выделив в нем отдельных сторон или типичных проявлений черт характера. Общие черты характера проявляются в отношениях личности к общественным обязанностям, к людям, к самому себе. Отношение к общественным обязанностям прежде всего проявляется в отношении личности к общественному труду. В этой связи выявляются такие черты характера, как трудолюбие, добросовестность, настойчивость, бережливость, и противоположные им – ленность, небрежность, пассивность, расточительство. Отношение человека к труду оказывает решающее влияние на формирование его других личностных качеств. Характер закаляется трудом, и кто никогда не добывал себе собственным трудом насущного пропитания, тот в большей части остается навсегда слабым, вялым и бесхарактерным человеком. Отношение к людям наглядно выступает в таких чертах характера, как общительность, вежливость, доброжелательность и т. п. Антиподами этих черт являются замкнутость, бестактность, недоброжелательность. Как утверждал В. Гюго, "у каждого человека три характера: тот, который ему приписывают; тот, который он сам себе приписывает; и, наконец, тот, который есть в действительности". В целях выяснения сути своего характера человеку полезно знать мнение коллектива о себе, в котором он работает и

проводит значительную часть своей жизни. И прежде всего то, насколько упорядочены у него отношения с людьми, насколько он нужен людям, насколько он авторитетен среди них. Отношение к самому себе проявляется в самооценке своих действий. Трезвая самооценка – это одно из условий совершенствования личности, помогающих выработать такие черты характера, как скромность, принципиальность, самодисциплина. Отрицательными чертами характера являются повышенное самомнение, высокомерие и хвастовство. Человек, обладающий этими чертами, обычно неуживчив в коллективе, невольно создает в нем предконфликтные и конфликтные ситуации.

Самооценка – оценка человеком самого себя, своих достоинств и недостатков, возможностей, качеств, своего места среди других людей. Это наиболее существенная и наиболее изучаемая в психологии сторона самосознания личности, черта характера индивида. С помощью самооценки происходит регуляция поведения личности. Самооценка связана с одной из центральных потребностей в самоутверждении, со стремлением человека найти свое место в жизни, утвердить себя как члена общества в глазах окружающих и в своем собственном мнении, то есть обрести уверенность в себе.

Под влиянием оценки окружающих у личности постепенно складывается собственное отношение к себе и самооценка своей личности, а также отдельных форм своей активности: общения, поведения, деятельности, переживания.

Как же личностью осуществляется самооценка? Человек становится личностью в процессе совместной деятельности и общения. Существенно важные ориентиры для своего поведения, все время сверяет то, что он делает, с тем, что ожидают от него окружающие, справляется с их мнениями, чувствами и требованиями. Посредством познания качеств другого человека, личность получает необходимые сведения, которые позволяют выработать собственную оценку. Уже сложившиеся оценки собственного “Я” есть результат постоянного сопоставления того, что личность наблюдает в себе, с тем, что видит в других людях. Человек, уже зная кое-что о себе, присматривается к другому человеку, сравнивает себя с ним, предполагает, что и тот небезразличен к его личностным качествам, поступкам, проявлениям; все это входит в самооценку личности и определяет ее психологическое самочувствие. Самооценка может быть *оптимальной* и *неоптимальной*. При оптимальной самооценке личность правильно соотносит свои возможности и способности, достаточно критически относится к себе, стремится реально смотреть на свои неудачи и успехи, старается ставить перед собой достижимые цели, которые можно осуществить на деле. И к оценке достигнутого он подходит не только со своими мерами, но и старается предвидеть, как к этому отнесутся другие люди: товарищи по работе и близкие. Иными словами, оптимальная самооценка является итогом постоянного поиска реальной меры, т. е. без слишком большой переоценки, но и без излишней критичности к своему общению, деятельности, переживаниям. Такая самооценка является наилучшей для конкретных условий и ситуаций. К оптимальной самооценке относятся “высокий уровень” и “выше среднего уровня” (человек заслуженно ценит, уважает себя, но знает свои слабые стороны и стремится к самосовершенствованию, саморазвитию). Но самооценка может быть и неоптимальной – чрезмерно завышенной или слишком заниженной. На основе неадекватно завышенной самооценки у человека возникает неправильное представление о себе, идеализированный образ своей личности и возможностей, своей ценности для окружающих, для общего дела. В таких случаях человек идет на игнорирование неудач ради сохранения привычной высокой оценки самого себя, своих поступков и дел. Завышенная самооценка приводит и к тому, что человек переоценивает себя в ситуациях, которые не дают для этого повода. В результате он нередко сталкивается с противодействиями окружающих, отвергающих его претензии, озлобляется, проявляет подозрительность, мнительность или нарочитое высокомерие, агрессию и, в конце концов, может утратить необходимые межличностные контакты, замкнуться в себе.

Происходит острое эмоциональное “отталкивание” всего, что нарушает представление о себе. Восприятие реальной действительности искажается, отношение к ней становится неадекватным – чисто эмоциональным. Рациональное звено оценки выпадает полностью. Поэтому справедливое замечание начинает восприниматься как придирка, а объективная оценка результатов работы – как несправедливо заниженная. Неудача предстает как следствие чьих-то козней или неблагоприятно сложившихся обстоятельств, ни в коей мере не зависящих от действий самой личности. Человек с завышенной неадекватной самооценкой не желает признавать, что все это – следствие собственных ошибок, лени, недостатка знаний, способностей или неправильного поведения. Возникает тяжелое эмоциональное состояние – эффект неадекватности, главной причиной которого является стойкость сложившегося стереотипа завышенной оценки самой личности. Если же высокая самооценка пластична, меняется в соответствии с реальным положением дел – увеличивается при успехе и снижается при неудачах, то это может способствовать развитию личности, т. к. ей приходится прикладывать максимум усилий для достижения поставленных целей, развивать свои способности и волю.

Самооценка может быть и заниженной, т. е. ниже реальных возможностей личности. Обычно это приводит к неуверенности в себе, робости и отсутствию дерзаний, невозможности реализовать свои способности. Чрезмерно низкая самооценка может свидетельствовать о развитии комплекса неполноценности, устойчивости, неуверенности в себе, отказа от инициативы, безразличия, самообвинения и тревожности. Такие люди не ставят перед собой труднодостижимые цели, ограничиваются решением обыденных задач, слишком критичны к себе.

Слишком высокая или слишком низкая самооценка нарушают процесс самоуправления, исполняют самоконтроль. Особенно это заметно происходит в общении, где лица с завышенной и заниженной самооценкой выступают причиной конфликтов. При завышенной самооценке конфликты возникают из-за пренебрежительного отношения к другим людям и неуважительного обращения с ними, слишком резких и необоснованных высказываний в их адрес, нетерпимости к чужому мнению, проявлению высокомерия и зазнайства. Низкая критичность к себе мешает им даже заметить, как они оскорбляют других высокомерием и непрерываемостью суждений.

При заниженной самооценке конфликты могут возникать из-за чрезмерной критичности этих людей. Они очень требовательны к другим, не прощают ни одного промаха или ошибки, склонны постоянно подчеркивать недостатки других. И хотя это делается из самых лучших побуждений, все же становится причиной конфликтов в силу того, что не многие могут терпеть систематическое “пиление”. Когда в тебе видят только плохое и постоянно указывают на это, то возникает неприязнь к источнику таких оценок, мыслей и действий. Выше упоминалось об эффекте неадекватности. Это психологическое состояние возникает, как попытка лиц с завышенной самооценкой оградить себя от реальных обстоятельств и сохранить привычную самооценку. К сожалению, это приводит к нарушению отношений с другими людьми. Переживание обиды и несправедливости позволяет чувствовать себя хорошо, оставаться на должной высоте в собственных глазах, считать себя пострадавшим или обиженным. Это возвышает человека в его собственных глазах и исключает недовольство собой. Потребность в завышенной самооценке удовлетворяется, и отпадает необходимость изменить ее, т. е. вплотную заняться самоуправлением. Это не самый лучший способ поведения, и слабость подобной позиции обнаруживается незамедлительно или спустя некоторое время. Неизбежно возникают конфликты с людьми, которые имеют иные представления о данной личности, ее способностях, возможностях и ценности для общества. Эффект неадекватности – это психологическая защита, она является временной мерой, поскольку не решает главной задачи, а именно: коренного изменения неоптимальной самооценки, выступающей причиной возникновения неблагоприятных межличностных отношений.

Поскольку самооценка складывается под влиянием оценки окружающих и, став устойчивой, меняется с большим трудом, то изменить ее можно, изменив отношение окружающих (сверстников, сотрудников по работе, преподавателей, родных). Поэтому формирование оптимальной самооценки сильно зависит от справедливости оценки всех этих людей. Особенно важно помочь человеку поднять неадекватно заниженную самооценку, поверить в себя, в свои возможности, в свою ценность. Для нас человек определяется, прежде всего, не его отношением к собственности, а его отношением к его труду. Поэтому и его самооценка определяется тем, что он как общественный индивид делает для общества. Это сознательное, общественное отношение к труду является стержнем, на котором перестраивается вся психология личности, оно же становится основой и стержнем ее сознания.

Самооценка человека существенно обусловлена мировоззрением, определяющим нормы оценки. Говоря о свойствах личности, отмечая при этом фактор самооценки, невозможно не обратить внимание на мотивацию достижения.

Мотивация, как движущая сила человеческого поведения, безусловно, занимает ведущее место в структуре личности, пронизывая ее основные структурные образования: направленность личности, характер, эмоции, способности, деятельность и психические процессы. Мотивация – это внутренняя детерминация поведения и деятельности, которая, конечно же, может быть обусловлена и внешними раздражителями, окружающей человека средой. Но внешняя среда воздействует на человека физически, в то время как мотивация – процесс психический, преобразовывающий внешние воздействия во внутреннее побуждение.

Все определения мотивации можно отнести к двум направлениям. Первое рассматривает мотивацию со структурных позиций, как совокупность факторов или мотивов. Например, согласно схеме В.Д. Шадрикова, мотивация обусловлена потребностями и целями личности, уровнем притязаний и идеалами, условиями деятельности (как объективными, внешними, так и субъективными, внутренними – знаниями, умениями, способностями, характером) и мировоззрением, убеждениями и направленностью личности и т.д. С учетом этих факторов происходит принятие решения, формирование намерения. Второе направление рассматривает мотивацию не как статичное, а как динамичное образование, как процесс, механизм.

Во многих работах потребность рассматривается как побудитель действий, деятельности, поведения человека. Потребность – это отражение нужды в сознании человека (осознание ее и переживание). Кроме того, в потребности содержится активное отношение (стремление), направляющее человека на преобразование условий с целью удовлетворения нужды. Таким образом, потребность объясняет, откуда берется энергия для проявления человеческой активности.

Соотношения между потребностями и мотивами, исходя из высказанных в психологической литературе точек зрения, можно систематизировать следующим образом:

1. между потребностью и мотивом возможны далекие и опосредствованные отношения;
2. потребность дает толчок к возникновению мотива;
3. потребность преобразуется в мотив после опредмечивания, т.е. после нахождения предмета, могущего ее удовлетворить;
4. потребность – часть мотива (если побуждение принять за мотив, то частью этого побуждения является потребность).

Признавая, что потребность имеет отношение к мотиву, нельзя пройти мимо ряда моментов, мешающих отождествить потребность с мотивом.

Во-первых, потребность не полностью объясняет причину конкретного действия или поступка. Во-вторых, мотив-потребность отделяется от идеальной (представляемой человеком) цели, поэтому не ясно, почему мотив имеет целенаправленность. Действительно, в случае принятия потребности за мотив нельзя ответить на вопросы "зачем", "для чего" человек проявляет данную активность, т.е. не ясны цель и смысл активности. В-третьих, принятие

потребности за мотив ведет к тому, что говорят об удовлетворении мотива, а не потребности, о цели как средстве удовлетворения мотива, а не потребности, о наследственных и приобретенных мотивах, что не совсем корректно.

Таким образом, при принятии потребности за мотив остается много вопросов, неясностей и появляется некорректность в использовании терминов и словосочетаний. Поэтому закономерны попытки ряда психологов подойти к пониманию мотива с других позиций. Очень важно провести параллель между мотивами достижения успеха и мотива избегания. В принципе, мотив достижения связан с продуктивным выполнением деятельности, а мотивами избегания неудачи – с тревожностью и защитным поведением.

Преобладание той или иной мотивационной тенденции всегда сопровождается выбором трудности цели.

Имеются определенные различия в объяснениях своих успехов и неудач людьми, с выраженными мотивами достижения успеха и избежания неудачи. В то время, как, стремящиеся к успеху чаще приписывают свой успех имеющимся у них способностям, избегающие неудач обращаются к анализу способностей как раз в противоположном случае. Уровень самооценки в значительной степени связан с удовлетворенностью или неудовлетворенностью человеком собой, своей деятельностью, возникающими в результате достижения успеха или появления неудачи. Сочетание жизненных успехов и неудач, преобладание одного над другим, постепенно формируют самооценку личности. В свою очередь, особенности самооценки личности выражаются в целях и общей направленности деятельности человека, поскольку в практической деятельности он, как правило, стремится к достижению таких результатов, которые согласуются с его самооценкой, способствуют ее укреплению.

Важным является то, что мотивация является основой любой деятельности, т.к. именно в ней заключён механизм личной активности, заинтересованности человека в деятельности. В нашей работе мы будем рассматривать мотивацию, как процесс побуждения к деятельности определенным мотивом для достижения поставленной цели.

Также как и понятие мотивации, понятие мотив, в отечественной и зарубежной литературе, трактуется по-разному. В отечественной литературе мотив понимается и как осознанная потребность, и как предмет потребности, и отождествляется с потребностью. В зарубежной психологии мотив рассматривают как силу, движущую нами из глубин бессознательного, как устойчивые и переменные факторы мотивации; как функциональные переменные; как личностные и ситуационные детерминанты поведения, как потребности и влечения, побуждения и склонности; как установки.

Наиболее универсальным, на наш взгляд, является представление о мотиве, как сложном психологическом образовании, включающим в себя и потребность, и идеальную цель, и побуждение, и намерение.

Большое внимание в данной статье уделяется анализу основных подходов к исследованию мотивации достижения. Мотивация достижения является одним из видов мотивации, определяющих творческое, инициативное отношение человека к делу и влияющих как на характер, так и на качество выполнения труда.

Мотивация достижения будет пониматься нами как психическая регуляция деятельности в ситуациях достижения, в которых имеется возможность реализовать мотив достижения. Мотив достижения, в свою очередь, мы будем понимать как обобщенную, относительно устойчивую диспозицию личности, стремление человека выполнить дело на высоком уровне качества везде, где есть возможность проявить свое мастерство и способности.

Таким образом, можно сделать вывод, что существует связь между выраженным мотивом достижения успеха и личностными особенностями людей, их уровнем самооценки. В наше время очень остро стоит проблема мотивации достижения успеха.

При индивидуальном действии мотив достижения и соответственно чувство успеха постепенно вступает в связь с естественным по генезису чувством самолюбия, более того, чувство успеха подпитывает это ведущее отношение человека к самому себе, и оно становится ядром личности, центром его образа "Я". Мотивация работников повышается, если они видят, как достижение целей подразделения и организации помогает им в достижении их собственных целей.

Чувство же самолюбия непременно культивирует сильные стремления человека к превосходству, власти над человеком, к славе и непомерным материальным целям. В результате личность становится индивидуалистически направленной с соответствующими смыслоценностными ориентациями и смыслом жизни.

Исходя из вышеизложенного необходимо выявить определенные виды мотивации, характерные для каждой нации, в данном случае армянского народа, согласно его характера и национальных традиций.

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ԳԻՐՔ 2

Հրատ. խմբագիրներ՝

Ա. Հովակիմյան, Ա. Սահակյան

Նյութերի հավաքագրող՝

Ա. Չատիկյան

Համակարգչային ձևավորումը՝

Մ. Համբարձումյանի

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ
Հասցեն՝ 0037, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փ. 15

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60×84 1/8:
Ծավալը՝ 49 պայմ. տպ. մասնով: Տպաքանակը՝ 200 օրինակ:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում: